Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ৰুমি

А. И. КУПРИН

Избранные произведения

ПОВЕСТИ, РАССКАЗЫ

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ» ЕРЕВАН—1985

Ա. Ի. ԿՈՒՊՐԻՆ

Ընտիր գրքեր

ՎԻՊԱՍԱՆՔՆԵՐ, ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1985

ԳՄԴ 84 Ռ1
Կ—166

Կազմեց Ար. Գրիգորյանը

Կուպրին, Ա. Ի.
Կ—966 Ընտիր երկեր։ Ռուս. թարգմ. Ա. Վարդապետյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Խաչատրյանը։ Կազմեց Ար. Գրիգորյանը.— Եր.։ Սովետ. գրող, 1985.— 696 էջ։
Ժողովածուն ընդգրկում է Ա. Ի. Կուպրինի վիպակների ու պատմվածքների ընտրանին։

Կ 4702010100 (44) / 705 (01) 85 — 85 «Ս»

ԳՄԴ 84Ռ1

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1985

ՎԻՊԱԿՆԵՐ

ՄՈԼՈՔ

1

Գործարանի շչակը ոռնում էր երկարաձիգ, աղդարարելով աշխատանքային օրվա սկիզբը։ Թվում էր, թե այդ թանձր, իրարպոտ, չընդմիջվող հնչյունը ելնում է գետնի տակից ու սփռվում գետնի երեսին։ Օգոստոսյան անձրևոտ օրվա մշուշոտ այդպարացը տրտմության ու սպառնալիքի խստաշունչ երանգ էր հաղորդում դրան։

Շչակը հնչեց, երբ ինժեներ Բորբովը թեյ էր խմում։ Վերջին օրերը Անդրեյ Իլյիչն առանձնապես շատ էր տառապում անքնությունից։ Երեկոյան անկողին մտնելով ծանր գլխով ու բոպեն մեկ ցնցվելով կարծես հանկարծակի հրումներից, համենայն դեպս բավական շուտ անհանգիստ, նյարդային քուն էր մտնում, բայց արթնանում էր լուսաբացից շատ առաջ, բոլորովին ջարդված, ուժասպառ ու բորբոքված։

Դրա պատճառն, անկասկած, բարոյական ու ֆիզիկական դերհոգնածությունն էր, ինչպես նաև մորֆիի ենթամաշկային սրսկումների վաղեմի սովորությունը, որի դեմ Բորբովը համառ պայքար էր սկսել օրերս։

Հիմա պատուհանի մոտ նստած, նա փոքրիկ կումերով թեյ էր խմում, որը նրան խոտաբույր ու անհամ էր թվում։ Ապակիների վրայով զիգզագաձև կաթիլներ էին իջնում։ Բակի ջրափոսերը չեչոտվում ու փուչիկներով էին պատվում անձրևից։ Պատուհանից երևում էր քառակուսի ոչ մեծ լիճը, որն ասես շրջանակի մեջ էր առնված փրչոտ, ցածր, մերկ բներով ու գորշասաղարթ ուռենիներով։ Երբ քամի էր բարձրանում, լճի երեսին ուռչում և, ասես շտապելով, մանրիկ ու կարճ ալիքներ էին գոյանում, իսկ ուռենիների տերևները հանկարծ արծաթավուն քողով պատվում։ Թոչ-

նած խոտն անձրևի տակ անզոր հակվում էր ուղղակի գետնին։ Մոտակա գյուղակի տները, հորիզոնի վրա սեպաձև մուգ ժապավենի նման ձգվող անտառի ծառերը, սև ու դեղին կարկատաններով պաշտ՝ ամեն ինչ գորշ ու տարտամ էր գծագրվում, ճիշտ ինչպես մշուշի մեջ։

Ժամը յոթն էր, երբ հագնելով կնգուղավոր մոմլաթե անձրևանոցը, Բոբրովը ելավ տնից։ Ինչպես նյարդային մարդկանցից շատերը, նա իրեն սաստիկ վատ էր զգում առավոտները. մարմինը թույլ էր, աչքերի մեջ բութ ցավ էր լինում, ինչ-որ մեկն ասես դրսից ուժով սեղմում էր կոպերը՝ բերանի մեջ տհաճ համ կար։ Սակայն ամենից շատ նրա վրա ազդում էր ներքին, հոգեկան այն երկվությունը, որն իր մեջ նկատել էր վերջերս։ Բոբրովի ինժեներ ընկերները, որոնք կյանքին նայում էին ամենապարզ, զվարթ ու գործնական հայացքով, հավատարար կծաղրեին այն, ինչը նրան այդքան թաքուն տանջանք էր պատճառում։ Օրըստօրե նրա մեջ ավելի ու ավելի էր աճում նողկանքը, համարյա թե սարսափը՝ գործարանում իր ծառայության նկատմամբ։

Ըստ իր ուղեղի կառուցվածքի, ըստ սովորությունների ու ճաշակի, նրա համար ամենալավը նստակյաց զբաղմունքի, պրոֆեսորական գործունեության կամ գյուղատնտեսության նվիրվելը կլիներ։ Ինժեներական գործը չէր բավարարում նրան ու եթե մոր ստիպողական ցանկությունը չլիներ, նա դեռևս երրորդ կուրսում կթողներ ինստիտուտը։

Նրա փոխար, համարյա կանացի բնավորությունը դաժան տառապանքներ էր կրում իրականությանը շփվելիս, դրա առօրեական, սակայն խիստ կարիքներին բախվելիս։ Այդ առումով նա իրեն համեմատում էր մի մարդու հետ, որի մաշկը պլոկել են ողջողջ։ Երբեմն այլոց չնկատած մանրուքները խորունկ ու տևական դառնություններ էին պատճառում նրան։

Բոբրովը համեստ, դժգույն արտաքին ուներ... Բարձրահասակ չէր ու բավականին նիհար, բայց նրա մեջ նյարդային, պոռթկուն ուժ էր զգացվում։ Դեմքի վրա ամենից առաջ ուշադրություն էր գրավում լայն ու ճերմակ, գեղեցիկ ճակատը։ Լայնացած, ընդ որում ոչ հավասար մեծության բիբերն այնքան մեծ էին, որ մոխրագույն աչքերը սև էին թվում։ Թավ, անհամաչափ հոնքերը քթարմատի մոտ միանում էին և այդ աչքերին հաղորդում խիստ, սևեռ ու ճիշտ ճգնավորական արտահայտություն։ Անդրեյ Իլյիչը նյարդային, բարակ, սակայն ոչ չար ու մի քիչ անհամաչափ շրթունքներ ուներ, բերանի աջ անկյունը քիչ վեր էր ձախից, բեղ ու մորուքը կարճ էր, ցանցառ, սպիտակավուն, շատ տղայական։ Ըստ էության ոչ գեղեցիկ նրա դեմքի հմայքը լոկ ժպիտի մեջ էր։ Երբ Բոբրովը ծիծաղում էր, աչքերը դառնում էին քնքուշ և ուրախ, ամբողջ դեմքը՝ գրավիչ։

Կես վերստ անցնելուց հետո, Բոբրովը հասավ բլրի կատարին։ Ուղիղ ոտքերի տակ բացվեց գործարանի հսկայական համալնապատկերը, հիսուն քառակուսի վերստի վրա սփռված։ Դա մի իսկական քաղաք էր, կարմիր աղյուսից, օդի մեջ բարձր կանգնած մրոտ ծխնելույզների անտառով, քաղաք, որը ծայրեծայր տոգորված էր ծծմբի հոտով ու երկաթի շմոլքով, խլացած հավերժական ու անկանգ դղրդյունով։ Դոմնային չորս վառարան իրենց հրեշավոր խողովակներով իշխում էին գործարանի վրա։ Դրանց կողքին բարձրանում էին ութ կառուպեր՝ տաքացած օդի շրջանառության համար. երկաթյա ութ վիթխարի աշտարակ, պսակված կլոր գմբեթներով։ Դոմնային վառարանների շուրջը այլևայլ շենքեր էին սփռված. նորոգման արհեստանոցներ, ձուլարանը, լվացման տեղամասը, շոգեքարշային տեղամասը, ռելսագլանման տեղամասը, մարտենյան, պուդլինգացման վառարանները և այլն։

Գործարանը ցած էր իջնում բնական երեք վիթխարի հարթություններով։ Բոլոր ուղղություններով գնում-գալիս էին փոքրիկ շոգեքարշեր։ Հայտնվելով ամենացածրում, խլացուցիչ սուլոցով դրանք թռչում էին վեր, մի քանի վայրկյան անհետանում թունելների մեջ, որտեղից դուրս էին պրծնում ճերմակ գոլորշիով պատված, դղրդալով անցնում կամուրջների վրայով և վերջապես, ասես օդի միջով, սլանում էին քարաշեն էստակադների վրայով, հանքաքարն ու կոքսը դոմնային վառարանի ուղիղ խողովակը նետելու համար։

Ավելի հեռվում, բնական այդ դարատափից այն կողմ, մարդու աչքերը կարող էին շաղվել այն քառսին ի տես, որն իրենից ներկայացնում էր դոմնային հինգերորդ և վեցերորդ վառարանների բարձրացման համար նախատեսված տեղանքը։ Թվում էր, թե ստորգետնյա մի զարհուրելի շրջապտույտ է դուրս շպրտել խճի, տարբեր չափսի ու գույնի աղյուսների այդ անհամար կիտուկները, ավազի բուրգերը, կրաքարի սարերը, երկաթի և շինափայտի դարսակույտերը։ Այդ ամենն իրար վրա էր խռնված կարծես թե ոչ բանիմաց ձեռանակով, պատահական։ Հարյու-

բավոր սայլեր ու հազարավոր մարդիկ իրար էին անցած այստեղ, ինչպես մրջյունները ավերված մրջնանոցում։ Կրի սպիտակ, մանր ու խեղդիչ փոշին մշուշի պես կանգնած էր օդի մեջ։

Էլ ավելի հեռվում, հորիզոնի համարյա ծայրին, ապրանքատար երկար գնացքի մոտ բանվորներ էին հավաքված, որոնք բեռնաթափում էին գնացքը։ Վագոններից իջեցված թեք տախտակների վրայով, անընդմեջ հոսքով գետնին էր թափվում աղյուսը, զրնգոցով ու կրճտոցով ընկնում էր երկաթը, բարակ տախտակներ էին թռչում օդում, կորանալով ու զսպանակվելով։ Որոշ սայլեր դեպի գնացքն էին գալիս դատարկ, մյուսները դառնում էին շարվեշար՝ բերնեբերան բարձված։ Հազարավոր հընչյուններ խառնվել և երկարուձիգ, ընդհատ թնդյունի էին վերածվել. քարտաշների հատիչների բարակ, մաքուր և հատու հընչյունները, կաթսաների գամերը խփողների զրնգուն հարվածները, շոգեմուրճերի ծանր դղիրդը, շոգեքարշերի խողովակների հուժկու տնքոցներն ու շչոցները և ստորգետնյա սոկավաթիվ խուլ պայթյունները, որոնք գետինն էին ցնցում։

Դա մի սարսափելի և հափշտակիչ պատկեր էր։ Մարդկային աշխատանքը եռում էր այստեղ, որպես հսկայական, բարդ ու ճշգրիտ մեխանիզմ։ Հազարավոր մարդիկ՝ ինժեներներ, քարհատներ, մեխանիկներ, հյուսներ, փականագործներ, հողփոր մշակներ, ատաղձագործներ ու դպրիններ երկրի տարբեր ծայրերից այստեղ էին հավաքվել, որպեսզի, գոյության պայքարի երկաթյա օրենքին ապավինած, իրենց ուժերը, առողջությունը, խելքն ու եռանդը տային արդյունաբերական առաջընթացի մեկ քայլին։

Այդ օրը Բոբրովը հատկապես վատ էր զգում իրեն։ Երբեմն, թեև շատ հազվագեպ՝ տարեկան երեք թե չորս անգամ, բավական տարօրինակ, մելամաղձոտ ու դրա հետ մեկտեղ դյուրագրգիռ տրամադրության մեջ էր ընկնում։ Սովորաբար դա լինում էր աշնանային մառախլապատ առավոտներին կամ ձնհալի երեկոներին։ Նրա աչքին ամեն ինչ տաղտկալի և անգույն տեսք էր ընդունում, մարդկային դեմքերը թվում էին աղճատված, տգեղ կամ հիվանդագին, բառերը հնչում էին մի տեսակ հեռվից, ձանձրույթից զատ ոչինչ չհարուցելով։ Այսօր, երբ շրջում էր ռելսագլանման տեղամասում, առանձնապես նյարդայնացնում էին նրան բանվորների գունատ, ածխից սևացած ու կրակից չորացած դեմքերը։ Նրանց տքնաջան աշխատանքին հետևելով այն ժամանակ, երբ բանվորների մարմինները խանձում էր երկաթյա շիկացած զանգվածների կրակը, իսկ լայն դռներից փչում էր աշնանային ծակող քամին, նա կարծես ինքն էր զգում նրանց ֆիզիկական տանջանքի մի մասը։ Այդժամ նա ամաչում էր թե իր խնամված տեսքի, թե իր նուրբ սպիտակեղենի, թե նաև իր տարեկան երեք հազար ռուբլի համար...

2

Նա կանգնած էր զոդիչ վառարանի մոտ, աշխատանքին էր հետևում։ Ամեն բոպե վառարանի վիթխարի, բոցակոլոլ երախը լայն բացվում էր, մեկը մյուսի ետևից բոցեղեն վառարաններից հենց նոր ելած ու շիկացումից սպիտակած պողպատի քսան փթանոց «ծրարները» կուլ տալու համար։ Քառորդ ժամ անց, տասնյակ հաստոցների միջով ահավոր դղրդյունով անցնելուց հետո դրանք երկար, հարթ ու փայլուն ռելսեր դարձած, շարվում էին արհեստանոցի մյուս ծայրում։

Ետևից ինչ-որ մեկը հպվեց Բոբրովի վերարկուին։ Նա բարկացած շրջվեց ու տեսավ պաշտոնակիցներից մեկին՝ Սվեժևսկուն։

Այդ Սվեժևսկին մշտապես փոքր-ինչ կորացած իր կազմվածքով, որ չէիր հասկանում ուզում է աննկատ մնալ, թե գլուխ է տալիս, իր մշտական քրքջոցով ու սառը, թաց ձեռքերի շփումով հանդերձ բոլորովին դուր չէր գալիս Բոբրովին։ Նրա մեջ հաճոյացող, նեղացած ու չարացած մի բան կար։ Նա միշտ բոլորից շուտ էր իմանում գործարանային բամբասանքներն ու առանձնահատուկ մի հաճույքով պատմում էր նրանց, ում համար դրանք առավել տհաճ էին, իսկ խոսելիս նյարդային շարժումներ էր անում և բոպեն մեկ ձեռք տալիս զրուցակցի կողերին, ուսերին, ձեռքերին կամ կոճակներին։

— Վաղուց չեք երևում, սիրելիս, ի՞նչ կա,—հարցրեց Սվեժևսկին, նա քրքջում էր և իր ձեռքերի մեջ տրորում Անդրեյ Իլյիչի ձեռքը։ —Էլի նստած գրքե՞ր եք կարդում։ Շարունակ կարդո՞ւմ եք։

— Բարև ձեզ,—դժկամությամբ պատասխանեց Բոբրովը, ձեռքը ետ քաշելով։— Ուղղակի հիվանդ էի այսքան ժամանակ։

— Զինենկոյենց տանը բոլորը կարոտել են ձեզ,—նշանակալից տոնով շարունակեց Սվեժևսկին։ —Ինչո՞ւ չեք լինում նրանց մոտ։ Նախանցյալ օրը տնօրենն էր այնտեղ ու ձեր մասին

էր հարցնում։ Դոմնային աշխատանքների մասին խոսք բացվեց, և նա ձեր մասին մեծ գովեստով արտահայտվեց։

— Անչափ շոյված եմ, —ծաղրաբար խոնարհվեց Բոբրովը։

— Չէ, լուրջ... Ասաց, որ վարչությունը ձեզ շատ է գնահատում որպես խոշոր գիտելիքների տեր ինժեների և որ դուք, եթե ուզենայիք, շատ առաջ կարող էիք գնալ։ Նրա կարծիքով, մեզ ամենևին հարկավոր չէր ֆրանսիացիներին տալ գործարանի նախագիծը մշակելը, եթե ինքներս այնպիսի տեղյակ մարդիկ ունենք, ինչպիսին Անդրեյ Իլյիչն է։ Միայն թե...

«Հիմա մի տհաճ բան կասի», —մտածեց Բոբրովը։

— Միայն թե, ասաց, լավ չէ, որ այդպես Գեռանում եք հասարակությունից և ինքնամփոփ մարդու տպավորություն թողնում։ Ոչ մի կերպ հասկանալ չի լինում, թե իրոք ինչպիսին եք դուք ու ինչպես պահել ձեր նկատմամբ։ Ա՜հ, հա՜,— հանկարծ իր ճակատին խփեց Սվեժևսկին,— խոսում, խոսում եմ ու մոռացա ամենակարևորն ասել ձեզ... Տնօրենը խնդրեց բոլորին վաղն անպայման կայարանում լինել՝ ժամը տասներկուսի գնացքը դիմավորելու։

— Էլի դիմավորելո՞ւ ենք որևէ մեկին։

— Միանգամայն ճիշտ է։ Կարո՞ղ եք կռահել, թե ո՞ւմ։

Սվեժևսկու դեմքը խորամանկ ու ցնծագին արտահայտություն ստացավ։ Նա շփում էր ձեռքերը և, ըստ երևույթին, մեծ հաճույք էր զգում պատրաստվելով հայտնել հետաքրքրական նորությունը։

— Իրոք, չգիտեմ... Եվ բոլորովին էլ կռահելու վարպետ չեմ, —ասաց Բոբրովը։

— Ոչ, սիրելիս, խնդրում եմ կռահեք... է՜հ, թեկուզ այնպես, մեկնումեկի անունը տվեք...

Բոբրովը լռեց և սկսեց չափազանցված ուշադրությամբ հետևել շոգեամբարձիչի աշխատանքին։ Սվեժևսկին դա նկատեց ու առաջվանից ավելի իրար անցավ։

— Ոչ մի կերպ չեք կարող ասել... Լավ, էլ ձեզ չեմ հարչարի։ Անձամբ Կվաշնինին են սպասում։

Ազգանունը նա արտասանեց այնպիսի բացահայտ շողոքորթությամբ, որ Բոբրովը նույնիսկ նողկանք զգաց։

— Ի՞նչ մի արտակարգ կարևոր բան եք գտնում դրա մեջ,— անփութորեն հարցրեց Անդրեյ Իլյիչը։

— Ինչպե՞ս թե՝ «արտակարգ կարևոր»։ Ի սե՛ր աստծո։ Չէ որ նա վարչության կազմում է, ինչ ուզենա, այն էլ կանի։ Ինչպես

գուշակի՝ լսում են նրան։ Հիմա ահա, վարչությունը լիազորել է նրան արագացնել աշխատանքները, այլ խոսքով ասած, նա ինքն է իրեն լիազորել։ Կտեսնեք, թե ինչ շանթ ու որոտ կլինի այստեղ, երբ նա գա։ Անցյալ տարի նա կառույցն էր նայում, կարծեմ մինչ ձեր գա՞լն էր... Եվ տնօրենն ու չորս ինժեներ թռան իրենց տեղերից գրողի ծոցը։ Ձեր գործարկումը[1] շո՞ւտ կվերջանա։

— Այո, արդեն համարյա պատրաստ է։

— Դա լավ է։ Ուրեմն, նրա ներկայությամբ թե՛ բացումը կնշենք, թե՛ քարային աշխատանքների սկիզբը։ Երևէ հանդիպե՞լ եք Կվաշնինին։

— Ոչ մի անգամ։ Ազգանունն, անշուշտ, լսել եմ...

— Իսկ ես հաճույքն ունեցել եմ։ Ձեզ ասեմ, այնպիսի մի տիպ է, ինչպիսին երբեք չեք տեսնի։ Ամբողջ Պետերբուրգն է նրան ճանաչում։ Նախ և առաջ, այնքան գեր է, որ ձեռքերը փորին չեն հասնում։ Ջե՞ք հավատում։ Ազնիվ խոսք։ Մի հատուկ կառք ունի, որի աջ կողմն ամբողջովին բացվում է ծղխնիների վրա։ Դրա հետ միասին վիթխարի հասակ ունի, շիկամազ, ու ձայնը՝ ոնց որ երիքովի փող։ Բայց ի՞նչ խելքի տեր է։ Ախ, տեր աստված... Բաժնետիրական բոլոր ընկերություններում վարչության անդամ է... երկու հարյուր հազար միայն տարեկան յոթ նիստի համար է ստանում։ Իսկ դրա փոխարեն, երբ ընդհանուր ժողովներին հարկ է դրությունը փրկել՝ նրանից լավը չկա։ Ամենակասկածելի տարեկան հաշվետվությունը այնպես կզեկուցի, որ բաժնետերերին սեր սպիտակ կերևա, դրանից հետո էլ չեն իմանա, թե իրենց երախտագիտությունն ինչպես հայտնեն վարչությանը։ Գլխավորը. նա երբեք գործին, որի մասին խոսում է, ծանոթ չի լինում բոլորովին, ուղղակի ինքնավստահությամբ է գործում։ Վաղը նրան կլսեք ու երևի կմտածեք, թե ամբողջ կյանքում ուրիշ գործ չի ունեցել, բացի դոմնային վառարանների շուրջը պտտվելուց, իսկ նա դրանցից նույնքան է հասկանում, ինչքան ես սանսկրիտից։

— Նա-ռա-ռա-ռա-ռա՜մ,— շինծու և դիտավորյալ անփութությամբ երգեց Բոբրովը, շրջվելով։

— Էլ ինչ ասեմ... Գիտե՞ք, թե նա ինչպես է ընդունում Գե-

---

1 Դոմնային վառարանի գործարկում է կոչվում դրա տաքացումը աշխատանքը սկսելուց առաջ, մինչև հանքաքարի հալեցման ջերմաստիճանը, մոտավորապես 1600°C։ Վառարանի գործողությունն ինքնին կոչվում է «կամպանիա»։ Գործարկումը երբեմն մի քանի ամիս է տևում (ծան. հեղ.)։

տերբուրգում։ Լոգարանի մեջ տկլոր նստած, մենակ շեկ գլուխն է ջրի վրա փայլում, ու լսում է։ Ոմն գաղտնի խորհրդական էլ հարգալիր խոնարհված, կողքը կանգնած զեկուցում է... Մարսափելի շատակեր է... և, իրոք, ուտել գիտե, լավագույն բոլոր ռեստորաններում հայտնի են à la Կվաշնին բիտկիները։ Իսկ կանանց մասին էլ չխոսենք։ Երեք տարի առաջ շատ կոմիկական մի դեպք կատարվեց նրա հետ...

Եվ տեսնելով, որ Բոբրովը պատրաստվում է հեռանալ, Սվեժևսկին բռնեց նրա կոճակն ու աղերսագին շշնջաց.

— Թույլ տվեք... այնքան ծիծաղելի է... Թույլ տվեք, հիմա... երկու խոսքով։ Գիտե՞ք բանն ինչպես է եղել։ Երեք տարի առաջ, աշնանը, Պետերբուրգ է գալիս մի չքավոր երիտասարդ՝ ինչ-որ չինովնիկ... նույնիսկ ազգանունը գիտեմ, միայն թե հիմա հիշել չեմ կարող։ Այդ երիտասարդը վիճելի ժառանգության գործ է ունենում և ամեն առավոտ, ատյաններից վերադառնալիս, Ամառային այգի է մտնում, մի քառորդ ժամով նստելու... Է՛հ, լա՛վ։ Երեք օր է նստում, չորս օր, հինգ օր ու նկատում է, որ ամեն օր իր հետ այգում զբոսնում է արտասովոր գեր մի շիկամազ պարոն... ծանոթանում են։ Շիկամազը, որը Կվաշնինն է լինում, երիտասարդից իմանում է նրա գործի բոլոր հանգամանքները, կարեկցություն է հանդես բերում, խղճում է... Սակայն իր ազգանունը նրան չի հայտնում։ Է՛հ, լա՛վ։ Վերջապես մի անգամ շիկամազը երիտասարդին առաջարկում է. «Իսկ դուք կհամաձայնեի՞ք ամուսնանալ մի կնոջ հետ, բայց պայմանով, որ հարսանիքից անմիջապես հետո հեռանաք ու այլևս չտեսնվեք»։ Իսկ երիտասարդն այդ ժամանակ համարյա մեռնում է քաղցից։ «Համաձայն եմ, ասում է, միայն թե նայած ինչ վարձատրություն է լինելու և փողը սկզբից պիտի տաք»։ Նկատի ունեցեք, որ երիտասարդն էլ այնքան ապուշ չի լինում։ Է՛հ, լա՛վ... Համաձայնության են գալիս։ Մեկ շաբաթ անց շիկամազը երիտասարդին ֆրակ է հագցնում և լուսումութով տանում քաղաքից դուրս, մի եկեղեցի։ Ոչ ոք չի լինում, հարսնացուն սպասելիս է լինում, ամբողջովին շղարշի տակ ծածկված, բայց երևում է, որ լավիկն է ու բոլորովին ջահել։ Սկսվում է պսակադրությունը։ Միայն թե երիտասարդը նկատում է, որ իր հարսնացուն մի տեսակ տխուր է կանգնած։ Շրջելով հարցնում է. «Կարծես թե ձեր կամքին հակառա՞կ եք այստեղ եկել»։ Իսկ հարսնացուն ասում է. «Երևում է, թե դո՞ւք էլ»։ Այդպես էլ բացատրվում են նրանք։ Պարզվում է, որ աղջկան

ամուսնանալ է ստիպել մայրը։ Ուղղակիորեն աղջկանը Կվաշնինին տալը մայրիկի խիղճը տանջել է... Է՛հ, լա՛վ... Կանգնել են նրանք, կանգնել... երիտասարդը մեկ էլ ասել է. «Եկեք այսպիսի մի խաղ խաղանք. երկուսս էլ ջահել ենք, դեռ շատ լավ բաներ կարող են լինել մեզ համար. եկեք Կվաշնինի գլխին խաղ խաղանք»։ Սրտոտ աղջիկ է լինում, շուտ գլխի ընկնող։ «Լավ, ասում է, եկեք»։ Պսակադրությունը վերջանում է, բոլորը եկեղեցուց դուրս են գալիս, Կվաշնինը հո չի՞ փայլում։ Իսկ երիտասարդը նրանից փողը սկզբից է վերցրած եղել, փողն էլ քիչ չի եղել, որովհետև Կվաշնինը նման դեպքերում ոչ մի կապիտալ խնայողը չի։ Մոտենում է նա ջահելներին ու շնորհավորում ամենահեգնական տեսքով։ Սրանք լսում են, շնորհակալություն հայտնում, հարսանքահայր կոչում, ու հանկարծ երկուսն էլ ցատկում են կառքի մեջ։ «Սա՞ ինչ բան է։ Ո՞ւր»։ «Ինչպե՞ս թե՝ ուր։ Կայարան, հարսանեկան ուղևորության։ Կառապան, քշիր...»։ Վասիլի Տերենտևիչն այդպես էլ մնում է տեղում, բերանը բաց... Կամ մի անգամ էլ... Ինչ է, դուք արդեն գնո՞ւմ եք, Անդրեյ Իլյիչ,— իր շաղակրատանքն ընդհատեց Սվեժևսկին, տեսնելով, որ Բոբրովը վճռական տեսքով շլյապան ուղղում է և կոճկում վերարկուի կոճակները։

— Ներեցեք, ժամանակ չունեմ,— չոր պատասխանեց Բոբրովը։ —Իսկ ինչ վերաբերում է ձեր անեկդոտին, ապա ես դա վաղուց եմ լսել կամ կարդացել... Հարգանքներս։

Եվ մեջքով դառնալով Սվեժևսկուն, որ շփոթված էր այդ չորությունից, նա արագ դուրս եկավ արհեստանոցից։

3

Գործարանից վերադառնալով ու հապճեպ ճաշելով, Բոբրովը առմուտք ելավ։ Կառապան Միտրոֆանը, որ նախօրոք հրահանգ էր ստացել թամբել Ֆարվատերին՝ դոնյան աշխետ ձիուն, ճիգ գործադրելով անգլիական թամբի փորքաշն էր ձգում։ Ֆարվատերը ուռեցրել էր փորը և մի քանի անգամ արագ թեքեց վիզը, ատամներով որսալով Միտրոֆանի շապկի թևքը։ Այդ ժամանակ Միտրոֆանը բղավում էր նրա վրա բարկացած ու ոչ բնական բասով. «Փը՛ռռ։ Ջարություն չանես, անհավա՛ատ», ու լարումից տնքտնքալով ավելացնում. «Սրան մի տես, անասո՛ւն»։

Ֆարվատերը միջին հասակի հովատակ էր, լայն կրծքով,

երկարուկ մարմնով և նիհար, մի քիչ կախ գավակով, ամուր, թավամազ ոտքեր ուներ, հաստալի սմբակներով ու նուրբ հոդերով, որոնց վրա կանգնած էր թեթև ու ձիգ։ Գիտակ մեկը դժգոհ կըմնար նրա կոր մռութից և դուրս ընկած, սուր ադամախնձորով երկարուկ վզից։ Սակայն Բոբրովը գտնում էր, որ դոնյան ամեն մի ձիուն բնորոշ այդ հատկանիշները Ֆարվատերի գեղեցկության բաղադրիչներն են ճիշտ այնպես, ինչպես գորշուկաշան ծուռ ոտքերն ու սետտերի երկար ականջները։ Համենայն դեպս, ամբողջ գործարանում Ֆարվատերից անցնող ձի չկար։

Թեև Միտրոֆանը, ինչպես յուրաքանչյուր ռուս կարգին ձիապան, անհրաժեշտ էր համարում խիստ վարվել ձիու հետ, ոչ իրեն, ոչ կենդանուն քնքշության որևէ արտահայտություն թույլ չէր տալիս ամենևին, այդ իսկ պատճառով էլ նրան թե «ավազակ», թե «լեշ», թե «մարդասպան» էր ասում, նույնիսկ «խամլետ», այդուհանդերձ հոգու խորքում շատ-շատ էր սիրում Ֆարվատերին։ Այդ սերն արտահայտվում էր նրանով, որ դոնյան հովատակը և ավելի լավ էր մաքրված լինում, և վարսակ էր շատ ստանում, քան Բոբրովի մյուս երկու պետական ձիերը՝ Լաստոչկան ու Ջենոմորեցը։

— Միտրոֆան, ջրե՞լ ես,— հարցրեց Բոբրովը։

Միտրոֆանը միանգամից չպատասխանեց։ Լավ ձիապանի մեկ ուրիշ սովորություն էլ ուներ՝ դանդաղ էր խոսում, ծանրամեծ։

— Ջրել եմ, Անդրեյ Իլյիչ, առանց ջրել ոնց կլինի։ Դե, դե, գլուխդ մի դարձրու, սատանա։ Ես քեզ ցույց կտամ, —բարկացած բղավեց նա ձիու վրա։ —Պարոն, էսօր ո՞նց է ուզում թամբի տակ մտնել։ Չի դիմանում։

Հազիվ էր Բոբրովը մոտեցել Ֆարվատերին և սանձը ձախ ձեռքն առնելով փաթաթել մատների շուրջը, սկսվեց համարյա ամեն օր կրկնվող պատմությունը։ Ֆարվատերը, որ վաղուց արդեն բարկացած խոշոր աչքը խեթել էր մոտեցող Բոբրովի վրա, սկսեց պար գալ տեղում, վիզը ծռելով ու ետևի ոտքերով ցեխի գնդեր շպրտելով։ Բոբրովը թուչկոտում էր նրա շուրջը մի ոտքի վրա, ջանալով ոտքը մտցնել ասպանդակի մեջ։

— Թող, Միտրոֆան, սանձերը թող, —բղավեց նա, վերջապես որսալով ասպանդակը և նույն պահին, ոտքը գցելով գավակի վրայից, հայտնվեց թամբի վրա։

Զգալով հեծյալի սրունքների սեղմումը, Ֆարվատերն անմիջապես զգաստացավ և մի քանի անգամ ոտքերը փոխելով,

ֆոթացնելով ու գլուխը թափահարելով, լայն ու ձիգ վարգով ելավ դարպասից...

Արագ ընթացքը, ականջների մեջ սուլող նաբը քամին, աշնանային, թեթևակի թաց դաշտի թարմ բույրը շատ շուտով հանգստացրեցին ու կենդանացրին Բոբրովի խոնջացած նյարդերը։ Բացի դրանից, ամեն անգամ ճամփա ընկնելով Զինենկոյենց տուն, նա հոգեկան հաճելի ու խռովալի վերելք էր ունենում։

Զինենկո ընտանիքը բաղկացած էր հորից, մորից և հինգ դուստրերից։ Հայրը ծառայում էր գործարանում, պահեստի վարիչն էր։ Այդ ծույլ և արտաքինից բարեհոգի ածդահան, ըստ էության, խիստ-խորամանկ ու նենգ մի պարոն էր։ Այն մարդկանց թվին էր պատկանում, որոնք յուրաքանչյուրի ճակատին «զուտ ճշմարտություն» ասելու անվան տակ, կոպտորեն, բայց հաճելի կերպով քծնում են ղեկավարությանը, բացահայտորեն շարախոսում են պաշտոնակիցներին, իսկ ենթարկյալների հետ վարվում ամենաայլանդակ բռնակալական ձևով։ Նա կվիճեր ամեն մի մանրուքի համար, առարկություններ չլսելով ու խոպոտաձայն բղավելով, սիրում էր ուտել և թուլություն ուներ մալոռուսական խմբական երգեցողության նկատմամբ, ընդ որում շարունակ սխալ էր երգում։ Իր համար աննկատելիորեն, կնոջ կրնկի տակ էր, իսկ կինը՝ փոքրամարմին, վատառողջ ու սեթևեթ մեկն էր, մանրիկ ու մոխրագույն աչքերով, որոնք ծիծաղելիորեն մոտ էին քթարմատին։

Աղջիկների անուններն էին՝ Մակա, Բետա, Շուրոչկա, Նինա և Կասյա։

Ընտանիքում նրանցից յուրաքանչյուրին իր ամպլուան էր առանձնացված։ Մական՝ ձկան կիսադեմով այդ օրիորդը, հրեշտակային բնավորության համբավն էր վայելում։ «Այս Մական տեղո՞վը պարզություն է», —նրա մասին ասում էին ծեղները, երբ նա զբոսանքների և երեկույթների ժամանակ ետին պլան էր քաշվում, ի շահ կրտսեր քույրերի։ Մակայի երեսունն արդեն անց էր։

Բետան համարվում էր խելացի, քթակնոց էր կրում և ինչպես ասում էին՝ ժամանակին նույնիսկ կամեցել էր դասընթացներ ընդունվել։ Նրա գլուխը թեքված էր լինում ու ցած հակած, ինչպես ծերացած կողաձիու գլուխը, քայլում էր մի տեսակ սուզվելով, ամեն քայլափոխին մեկ ելնելով, մեկ իջնելով։ Նոր հյուրերի բկին էր շոքում վիճաբանությամբ առ ամն, որ կանայք տղա-

մարդկանցից ավելի լավն են ու ազնիվ, կամ միամիտ ծեքծեքունությամբ խնդրում. «Դուք այնքան խորաթափանց եք... դե, ուրեմն բնորոշեք իմ խառնվածքը»։ Երբ խոսակցությունը դառնում էր տնական դասական թեմաներից մեկին. «Ո՞վ է ավելի բարձր՝ Պուշկինը, թե՞ Լերմոնտովը» կամ «նպաստո՞ւմ է արդյոք բնությունը բարքերի մեղմացմանը», Բետային մարտական փղի պես առաջ էին մղում։

Երրորդ դուստրը՝ Շուրոչկան, ամուսնի բոլոր ինժեներների հետ հերթով «դուռաչկի» խաղալու մասնագիտությունն էր ընտրել։ Հենց իմանում էր, որ իր հին խաղընկերը պատրաստվում է ամուսնանալ, դառնությունն ու զայրույթը զսպելով, նորին էր ընտրում։ Անշուշտ, խաղն ընթանում էր սիրալիր կատակներով և աննշան գերիչ խորամանկությունով, ընդ որում խաղընկերոջը կոչում էր «զզվելի» և խաղաթղթերով խփում ձեռքին։

Ընտանիքում Նինան համարվում էր բոլորի սիրելին, երես առած, բայց սքանչելի երեխա։ Զանգվածեղ մարմիններով և կոպտավուն, գռեհիկ դեմքերով իր քույրերից նա առանձնանում էր։ Թերևս միմիայն m-me Զիններկոն կարող էր բավարար բացատրություն տալ, թե որտեղից է Նինայի այդ նուրբ, փխրուն կազմվածքը, այդ համարյա արիստոկրատական ձեռքերը, մանրիկ խալերով սիրունիկ թխավուն դեմքը, վարդագույն փոքրիկ ականջները և փարթամ, նուրբ, թեթևակի ալիքվող մազերը։ Մնողները նրա հետ մեծ հույսեր էին կապում, ուստի նրան թույլատրվում էր ամեն ինչ. թե շատ անուշեղեն ուտել, թե դուրեկան զատասել, թե նույնիսկ մյուս քույրերից ավելի լավ հագնվել։

Ամենակրտսերի՝ Կասյայի տասնչորսը վերջերս էր լրացել, բայց այդ արտասովոր երեխան մի ամբողջ գլուխ բարձր էր մորից, ու ձեռքի հուժկու ցցունությամբ վաղուց էր գերազանցել ավագ քույրերին։ Նրա կազմվածքը երբվանի՞ց՝ արդեն քաղաքից կտրվածության պատճառով կանացի հասարակությունից զրկված գործարանային երիտասարդության ակնապիշ հայացքներն էր հարուցում, և Կասյան ընդունում էր այդ հայացքները վաղ հասունացած աղջնակի միամիտ անպատկառությամբ։

Ընտանեկան սքանչելիքների այդ ստորաբաժանումը լավ հայտնի էր գործարանում, և կատակաբանի մեկը ժամանակին ասել էր, որ Զիններկոների հետ ամուսնանալիս անպայման պետք է հինգի հետ էլ ամուսնանալ։ Ինժեներները և պրակտիկանտուսանողները Զիններկոյենց տանը նայում էին որպես հյուրանոցի,

խնվում էին այդտեղ առավոտից երեկո, շատ ուտում էին, ավելի շատ խմում, բայց զարմանալի ճարպկությամբ խուսափում ամուսնական ցանցերից։

Այդ ընտանիքում Բոբրովին չէին սիրում։ Անդրեյ Իլյիչի վարմունքը վիրավորում էր քաղքենիական հաշակները m-me Զիններկոյի, որը ձգտում էր ամեն ինչ հարմարեցնել ճոճիմ ու հիմնավոր տաղտկալի գավառական բարեպատշաճությանը։ Նրա թունոտ սրամտությունները, երբ տրամադիր էր լինում, ընդունվում էին լայն բացված աչքերով, և, ընդհակառակն, երբ ամբողջ երեկո հոգնածության և գրգռվածության պատճառով լռում էր, նրան կասկածում էին գաղտնամտության, գոռոզության, լռելյայն հեգնանքի, անգամ, օ՜, դա ամենասարսափելին էր, կասկածում էին նույնիսկ, որ նա «վիպակներ է գրում ամսագրերի համար և դրանց համար կերպարներ է հավաքում»։

Բոբրովն այդ խուլ թշնամանքը զգում էր, որն արտահայտվում էր սեղանի շուրջ անուշադրությամբ, ընտանիքի մոր ուսերի զարմացական թոթվումով, այնուամենայնիվ, շարունակում էր լինել նրանց տանը։ Սիրո՞ւմ էր արդյոք Նինային։ Դրան ինքն էլ չէր կարող պատասխանել։ Երբ երեք կամ չորս օր չէր լինում այնտեղ, Նինային հիշելիս սիրտը զարկում էր անուշ ու տագնապոտ տրրտմությամբ։ Նա պատկերացնում էր աղջկա բարեկազմ, նազանի կազմվածքը, նրա քնքուշ, ստվերված աչքերի ժպիտը և նրա մարմնի բուրմունքը, որը չգիտես ինչու, նրան հիշեցնում էր բարդու կպչան բողբոջների բուրմունքը։

Բայց բավական էր երեք երեկո անընդմեջ լիներ այնտեղ, և նրան սկսում էր նեղել նրանց հասարակությունը, նույնանման դեպքերում միշտ միևնույն դաջվածքով խոսքերը և նրանց դեմքերի անբնական սրտահայտությունը։ Հինգ «օրիորդների» և նրանց «սիրահետող» «կավալերների» (զիններկոյական առտնին բառեր են) միջև ընդմիշտ հաստատվել էին տափակ սեթևեթ փոխհարաբերություններ։ Թե՛ նրանք, թե՛ մյուսները ձևացնում էին, թե երկու թշնամական բանակներ են կազմում։ Կավալերներից մեկնումեկը կատակով, այն էլ հաճախ, որևիցե իր էր թռցնում օրիորդներից և հավատացնում, որ չի տալու։ Օրիորդները նեղանում էին, փսփսում միմյանց ականջի, կատակողին կոչում էին «զզվելի» և ամբողջ ժամանակ քրքջում չոր, բարձր ու տհաճ քրքիջով։ Ու դա կրկնվում էր ամեն օր, այսօր բացարձակապես նույն բառերով ու նույն շարժուձևով, ինչպես երեկ։ Զի-

Զինենկոյենց տնից Բոբրովը վերադառնում էր գլխացավով, գավառական այդ ջարդուկոտորումից հոգնած նյարդերով։

Այսպիսով, Բոբրովի հոգում զուգորդվում էին կարոտը Նինայի, նրա մշտապես տաք ձեռքերի սեղմումի նկատմամբ և խորշանքը նրա ընտանիքում տիրող ձանձրույթի և շինծուությանն հանդեպ։ Լինում էին րոպեներ, երբ նա միանգամայն պատրաստ էր լինում առաջարկություն անել նրան։ Այդ ժամանակ նրան չէր կանգնեցնի նույնիսկ գիտակցումը, որ Նինան, վատ կարգի իր պչրանքով ու հոգեկան դատարկությամբ, ընտանեկան կյանքը կդարձնի դժոխք, որ ինքն ու նա մտածում ու խոսում են տարբեր լեզուներով։ Սակայն նա սիրտ չէր անում և լռում էր։

Հիմա, մոտենալով Շեպետովկային, արդեն վաղօրոք գիտեր, թե այնտեղ ինչ և ինչպես են խոսելու այս կամ այն դեպքի մասին, նույնիսկ դեմքերի արտահայտությունն էր պատկերացնում։ Գիտեր, որ հենց սանդղեվանդից իրեն տեսնեն ձիու վրա, նախ շարունակ «հաճելի կավալերների» սպասող օրիորդների միջև երկար վեճ ծայր կառնի, թե այս ո՞վ է գալիս։ Իսկ երբ ինքը մոտենա, ապա կոահողը կսկսի թռչկոտել, ծափ զարկել, լեզուն ճոտացնել ու ոգևորությամբ բացականչել. «Տեսա՞ք։ Տեսա՞ք։ Ե՛ս ճանաչեցի, ե՛ս ճանաչեցի»։ Դրանից հետո կվազի Աննա Աֆանասևնայի մոտ. «Մամա, Բոբրովն է գալիս, առաջինը ես ճանաչեցի»։ Իսկ մայրը, ծուլորեն սրբելով թեյի գավաթները, կդիմի Նինային մի տոնով, կարծես ծիծաղելի ու անսպասելի ինչ-որ բան է հաղորդում. «Նինոչկա, գիտե՞ս, Բոբրովն է գալիս»։ Եվ արդեն դրանից հետո բոլորը մեկտեղ շափազանց ու շատ բարձրաձայն կզարմանան, տեսնելով ներս մտնող Անդրեյ Իլյիչին։

4

Ֆարվատերը գնում էր հնչեղ փոնչոցով, ձիգ երասան պահանջելով։ Հեռվում երևաց Շեպետովկայի տնտեսության տունը։ Եղրևանիների ու ակացիաների թանձր սաղարթի միջից հազիվ էին երևում դրա սպիտակ պատերն ու կարմիր տանիքը։ Սարի ստորոտին փոքրիկ մի լճակ ուռուցիկ ելել էր շրջապատող կանաչ ափերից։

Կանացի կերպարանք էր երևում՝ առմուտքին կանգնած։ Բոբրովը հեռվից ճանաչեց Նինային՝ վառ դեղին կոֆտայից, որն այնպես գեղեցիկ էր ընդգծում նրա դեմքի թուխ գույնը, և տեղնուտեղը ձգելով Ֆարվատերի սանձերը, ուղղվեց ու ասպանդակների մեջ թաղված ոտքերի թաթերն ազատեց։

— Նորի՞ց ձեր այդ գանձն եք հիծնել։ Այո, պարզապես տեսնել չեմ կարողանում այդ այլանդակին, — առմուտքից երեսառած երեխայի ուրախ ու քմահաճ ձայնով բղավեց Նինան։ Վաղուց արդեն սովորություն էր դարձրել Բոբրովի հոգու հետ խաղալ Ֆարվատերի պատճառով, որին այնքան կապված էր նա։ Ընդհանրապես, Զինենկոյենց տանը որևէ մեկին որևէ բանով բարկացնում էին։

Սանձերը նետելով վազելով մոտ եկած գործարանային ձիապանին, Բոբրովը թափթփացրեց ձիու կոր, քրտինքից մգացած պարանոցը և Նինայի ետևից հյուրասենյակ մտավ։ Ինքնաեռի մոտ նստած Աննա Աֆանասևնան ձևացրեց, թե արտակարգ զարմացած է Բոբրովի գալստյամբ։

— Ա-ա-ա՜, Անդրեյ Իլյիչ։ Վերջապես բարեհաճեցիք մեզ մոտ գալ...— երգեցիկ բացականչեց նա։

Եվ երբ Բոբրովը ողջունում էր, ձեռքը խոթեց ուղիղ նրա շրթունքներին ու իր բարձր, ռնգային ձայնով հարցրեց.

— Թե՞յ։ Կա՞թ։ Խնձո՞ր։ Ինչ ուզում եք, ասեք։

— Mersi[1], Աննա Աֆանասևնա։

— Merci oui, ou merci non?[2]

Ֆրանսերեն նման դարձվածքներն անփոփոխ էին Զինենկո ընտանիքում։ Բոբրովը հրաժարվեց ամեն ինչից։

— Դե ուրեմն, գնացեք պատշգամբ, երիտասարդներն այնտեղ ֆանտի պես մի բան են սկսել խաղալ, — ողորմածաբար թույլ տվեց m-me Զինենկոն։

Երբ նա պատշգամբ ելավ, բոլոր չորս օրիորդներն էլ բացարձակապես նույն տոնով և ճիշտ նույնպես քթի մեջ, ինչպես իրենց մայրը. բացականչեցին.

— Ա-ա-ա՜. Անդրեյ Իլյի՛չ։ Ահա թե ով էր, որ վաղուց չէր երևում։ Ի՞նչ բերենք ձեզ։ Թե՞յ։ Խնձո՞ր։ Կա՞թ։ Ջե՞ք ուզում։ Ջէ, իսկապե՞ս։ Իսկ գուցե ուզո՞ւմ եք։ Դե լավ, այդ դեպքում նստեք այստեղ ու մասնակցեք։

Խաղում էին «տիկինն ուղարկեց հարյուր ռուբլի», «ձեր կարծիքով» և էլի ինչ-որ խաղ, որը սվսվախոս Կասյան անվանում էր

---

[1] Շնորհակալ եմ (ֆրանս.)։

[2] Շնորհակալ եմ՝ այո՞, թե չնորհակալ եմ՝ ոչ (ֆրանս.)։

«կուզ ու կծուծ»։ Հյուրերից ներկա էին երեք պրակտիկանտ-ուսանող, որոնք շարունակ ուռեցնում էին կրծքավանդակները և պլաստիկ կեցվածքներ ընդունում, մի ոտքն առաջ մեկնելով ու ձեռքը մացնելով սերթուկի ետևի գրպանը, այստեղ էր տեխնիկ Միլլերը, որն աչքի էր ընկնում գեղեցկությամբ, հիմարությամբ և սքանչելի բարիտոնով, ի վերջո, մոխրագույն կոստյումով մի լռակյաց պարոն, որը ոչ մեկի ուշադրությունն իր վրա չէր գրավում։

Խաղը չէր սացվում։ Տղամարդիկ իրենց վիճակները կատարում էին ներողամտորեն ու ձանձրացած տեսքով, օրիորդները չէին ընդունում դրանք ամենևին, փսփսում էին միմյանց միջև ու լարված քրքջում։

Մութն ընկնում էր։ Մոտակա գյուղի տանիքների ետևից դանդաղորեն հայտնվեց վիթխարի կարմիր լուսինը։

— Երեխաներ, ներս եկեք,— ճաշասենյակից բղավեց Աննա Աֆանասևնան։— Միլլերին խնդրեք, մի բան երգի մեզ համար։

Մեկ բոպե անց օրիորդների ձայներն արդեն սենյակներից էին հայիս։

— Այնքան ուրա՜խ էինք,— ծլվլում էին նրանք մոր շուրջը,— այնքան ծիծաղեցի՜նք, այնքան ծիծաղեցի՜նք...

Պատշգամբում մնացել էին միայն Նինան ու Բոբրովը։ Նա նստած էր բազրիքի վրա, ձախ ձեռքով գրկել էր սյունը և չգիտակցված գեղանի կեցվածքով հպվել սյանը։ Բոբրովը այգու ցածրիկ նստարանին էր նստած, ճիշտ նրա ոտքերի մոտ և ներքևից վերև նայելով նրա դեմքին, տեսնում էր աղջկա պարանոցի և ծնոտի քնքուշ գծագրությունը։

— Դե, մի հետաքրքիր բան պատմեք, Անդրեյ Իլյիչ, —անհամբերությամբ հրամայեց Նինան։

— Ճիշտն ասած, չգիտեմ, թե ինչ պատմեմ ձեզ, —առարկեց Բոբրովը։ —Սարսափելի դժվար է պատվերով խոսելը։ Դրա համար էլ մտածում եմ. խոսակցական այդպիսի ժողովածու չկա՞, զանազան թեմաներով...

— Ֆու-ո՜։ Ի՜նչ ձանձրալի եք,— ձգեց Նինան։— Ասացեք, ե՞րբ եք դուք տրամադիր լինում։

— Իսկ դուք ինձ ասացեք, ինչո՞ւ եք այդպես վախենում լռությունից։ Հենց որ հյուրը մի թեթև մարում է, դուք ձեզ կորցնում եք... Իսկ մի՞թե վատ բան է լուռ խոսելը...

— «Ես ու դու կլը-ռե-ե՜նք...», —ծաղրաբար երգեց Նինան։

— Իհարկե, կլռենք։ Նայեք. երկինքը պարզ է, լուսինը դեղին, հսկայական, պատշգամբում այնպես խաղաղ է... է՞լ ինչ է պետք...

— «Եվ այս տխմար լուսինն այս տխմար երկնակամարում»,— արտասանեց Նինան։ —A propos[1], լսե՞լ եք, որ Զինոչկա Մակովան ամուսնանում է Պրոտոպոպովի հետ։ Վերջն ամուսնացավ։ Զարմանալի մարդ է այդ Պրոտոպոպովը։— Նա թթվեց ուսերը։— Զինան երեք անգամ նրան մերժեց, և նա, այնուամենայնիվ, չկարողացավ հանգստանալ, չորրորդ անգամ առաջարկություն արեց։ Թող էլ ոչ ոքի չմեղադրի։ Զինան գոյն նրան հարգի, բայց որ սիրի՝ երբե՜ք։

Այս խոսքերը բավական էին Բոբրովի սրտի մաղձն իրար բերելու համար։ Նրան միշտ հավասարակշռությունից հանում էր Զիննեկոների նեղ, քաղքենիական բառապաշարը՝ «նա նրան սիրում է, բայց չի հարգում», «նա նրան հարգում է, բայց չի սիրում» ու նման արտահայտություններով։ Նրանց ըմբռնմամբ այդ բառերով էին սահմանափակվում ամենաբարդ փոխհարաբերությունները տղամարդու և կնոջ միջև, ճիշտ այնպես, ինչպես ցանկացած անհատականության բարոյական, մտավոր և ֆիզիկական առանձնահատկությունների բնորոշման համար նրանք ունեին սոսկ երկու արտահայտություն՝ «շիկահեր» և «սևահեր»։

Եվ Բոբրովը, իր շարությունը բորբոքելու անորոշ ցանկությունից դրդված, հարցրեց.

— Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում այդ Պրոտոպոպովը...

— Պրոտոպոպո՞վը,— մի պահ մտածեց Նինան։— Նա... ինչպես ասեմ ձեզ... բավական բարձրահասակ է... շագանակագույն մազերով...

— Ուրիշ ոչի՞նչ։

— Է՞լ ինչ։ Ահ, այո, ակցիզային վարչությունում է աշխատում...

— Միայն այդքա՞նը։ Նինա Գրիգորևնա, մի՞թե մարդուն բնորոշելու համար էլ ոչինչ չգտաք, բացի նրանից, որ շագանակահեր է և աշխատում է ակցիզում։ Մտածեք հապա. կյանքում մեզ որքան են հանդիպում հետաքրքիր, տաղանդավոր ու խելացի մարդիկ։ Մի՞թե նրանք սոսկ «շագանակահեր» են ու «ակցիզի

---

1 Ի դեպ (ֆրանս.)։

ստիճանավոր։ Տեսեք, թե ինչպես անհագ հետաքրքրությամբ են կյանքին հետևում գյուղացի երեխաները և որքան դիպուկ են իրենց դատողություններում։ Իսկ դուք, խելացի և զգայուն մի աղջիկ, ամեն ինչի կողքով անցնում եք անտարբեր, որովհետև մեկ տասնյակ սենյակային, ծեծված դարձվածքներ եք օգտագործում։ Ես գիտեմ. եթե մեկնումեկը խոսքի մեջ լուսինը հիշատակի, խսկույն կասեք. «Ինչպես լուսինն այս տխմար» ու նման բաներ։ Եթե ես, ենթադրենք, որևիցե արտասովոր դեպք նկարագրեմ, վաղօրոք գիտեմ, որ ասելու եք. «Պատմելը հեշտ է, հավատալը՝ դժվար»։ Եվ այսպես ամեն ինչում, ամեն ինչում... Ի սեր աստծո, հավատացեք ինձ, որ ամենայն ինքնատիպ, ինքնօրինակ...

— Ես ձեզ խնդրում եմ ինձ խրատներ չկարդալ, —կտրուկ պատասխանեց Նինան։

Բոբրովը լռեց, բերանում՝ դառնության համ, և երկուսն էլ մի հինգ րոպե նստած էին լուռ ու անշարժ։ Հանկարծ հյուրասենյակից հնչեց ակորդներ լսվեցին, և Միլլերի թեթևակի խեղված, բայց խորունկ արտահայտությամբ լի ձայնը երգեց.

Պարահանդեսում շքեղ, աղմկոտ,
Տագնապների մեջ առօրյա ու սին,
Տեսա քեզ հանկարծ, բայց խորհրդավոր
Գաղտնիքն էր փարվել քո դեմքի լույսին։

Բոբրովի չարացած տրամադրությունը շուտով մեղմվեց, և նա հիմա ափսոսում էր, որ դառնացրել է Նինային։ «Խելքիս ի՞նչ փչեց նրա միամիտ, թարմ, մանկական ուղեղից ինքնատիպ համարձակություն պահանջել, —մտածում էր նա։ —Չէ որ նա թռչնակի նման է, միտքն եկած առաջին բանը ծլվլացնում է, և, ով գիտե, գուցե այդ ծլվլոցը նույնիսկ շատ ավելի լավ է, քան խոսակցությունները կանանց իրավահավասարության, Նիցշեի ու դեկադենտների մասին»։

— Նինա Գրիգորևնա, մի զայրացեք իմ վրա։ Ես մտքով ընկա ու հիմարություններ դուրս տվեցի, —կիսաձայն ասաց նա։

Նինան լռում էր, մեջքը նրան դարձրած ու ելնող լուսնին նայելով։ Մթության մեջ Բոբրովը փնտրեց նրա կախված ձեռքը և քնքշորեն սեղմելով շշնջաց.

— Նինա Գրիգորևնա... խնդրում եմ...

Նինան հանկարծ արագ շրջվեց դեպի նա, և ձեռքի արագ,

նյարդային սեղմումով պատասխանելով, ներման ու հանդիմանանքի տոնով բացականչեց.

— Չար սիրտ ունեք։ Միշտ ինձ նեղացնում եք... օգտվում եք, որ չեմ կարողանում ձեր վրա բարկանալ...

Եվ, հրելով Բոբրովի հանկարծակի դողացող ձեռքը, համարյա պոկվելով նրանից, Նինան վազեց պատշգամբով ու անհետացավ դռան ետևում։

...Հիմա արթմեի թե խորունկ ներհում,
Տաք անուրջներն են իմ սրտին տիրում,
Սիրո՞ւմ եմ արդյոք,— սիրում եմ, սիրում,—

կրքոտ ու տրտմագին արտահայտությամբ երգում էր Միլլերը։

— Բայց ինձ թվում է, որ սիրում եմ, —հուզախառն շշնջացով կրկնեց Բոբրովը, խորը շունչ քաշելով և ձեռքը սեղմելով բաբախող սրտին։

«Ինչի՞ համար եմ ինքս ինձ տանջում ինչ-որ անհայտ, վսեմ երջանկության անպտուղ անուրջներով, —խռովված մտածում էր նա, — երբ այստեղ, իմ կողքին է հասարակ, բայց խորունկ երջանկությունը։ Էլ ի՞նչ է պետք կին արարածից, կնոջից, եթե նրա մեջ այդքան քնքշություն, հեզություն, նրբազեղություն և ուշադրություն կա։ Մենք խեղճ, նյարդային, հիվանդ մարդիկ ենք, չենք կարողանում կյանքից պարզապես վերցնել նրա բերկրանքները, մենք դիտավորյալ թունավորում ենք դրանք՝ յուրաքանչյուր զգացմունքի, մեր կամ ուրիշի յուրաքանչյուր մտածմունքի մեջ փորփրելու մեր անխոնջ պահանջի թույնով... Խաղաղ գիշեր, սիրած աղջկա մոտիկությունը, անմեղ, սովորական խոսքեր, զայրույթի բոպեական բռնկում, ապա հանկարծակի քնքշություն՝ տե՜ր աստված։ Մի՞թե սրա մեջ չէ գոյության ամբողջ սքանչելիքը»։

Նա հյուրասենյակ մտավ ուրախացած, առույգ, համարյա ցնծալով։ Աչքերը հանդիպեցին Նինայի աչքերին, աղջկա երկարատև հայացքի մեջ իր մտքերի քնքուշ պատասխանը ստացավ նա։ «Նա իմ կինը կլինի», —մտածեց Բոբրովը, հանգիստ մի բերկրանք ղդալով հոգու խորքում։

Խոսում էին Կվաշնինի մասին։ Աննա Աֆանասևնան, իր վստահ ձայնով սենյակը լցրած, ասում էր, որ մտադիր է վաղը «իր աղջիկներին» նույնպես կայարան տանել։

— Շատ հնարավոր է, որ Վասիլի Տերենտևիչը ուզենա մեզ այցելել։ Համենայն դեպս նրա գալստյան մասին դեռ մի ամիս առաջ ինձ գրել էր մորաքրոջս աղջկա ամուսնու ազգականուհին՝ Լիզա Բելոկոնսկայան...

— Դա կարծեմ այն Բելոկոնսկայան է, որի եղբայրն ամուսնացած է խշխանուհի Մուխովեցկայայի հետ, —սերտած ռեպլիկը հնազանդորեն մեջբերեց պարոն Զիններկոն։

— Այո, նա է որ կա, —ներողամտորեն նրա կողմը գլխով արեց Աննա Աֆանասևնան։— Նա տատի կողմից հեռավոր ազգական է գալիս նաև Ստրեմոուխովներին, որոնց դու ճանաչում ես։ Եվ ահա Լիզա Բելոկոնսկայան ինձ գրել էր, որ մի հասարակության մեջ հանդիպել է Վասիլի Տերենտևիչին ու հանձնարարել է հյուր գալ մեզ, եթե երբևէ մտքով անցնի գործարան գալ։

— Նյուսյա, իսկ մենք կկարողանա՞նք ընդունել, —մտահոգված հարցրեց Զիններկոն։

— Ի՞նչ ծիծաղելի ես խոսում։ Ինչ կարող ենք, կանենք։ Չէ որ ինչ էլ ուզում է լինի, ոչնչով չենք զարմացնի մի մարդու, որը տարեկան երեք հարյուր հազար եկամուտ ունի։

— Տե՞ր աստված։ Երեք հարյուր հազա՞ր, —տնքաց Զիններկոն։ —Պարզապես սարսափելի է մտածելը։

— Երեք հարյուր հազա՞ր, —ճիշտ արձագանքի պես հոգոց հանեց Նինան։

— Երեք հարյուր հազա՞ր, —ոգևորված ու խմբովի բացականչեցին օրիորդները։

— Այո, և այդ ամենը նա ծախսում է մինչև վերջին կոպեկը, —ասաց Աննա Աֆանասևնան։ Ապա, պատասխանելով դուստրերի չարտահայտած մտքին, ավելացրեց. —Ամուսնացած է։ Միայն թե, ասում են, շատ անհաջող է ամուսնացել։ Կինը անգույն մի անձնավորություն է ու բոլորովին ոչ ներկայանալի։ Ինչ ուզում եք ասեք, կինը պետք է ամուսնու գործերի համար ցուցանակ լինի։

— Երեք հարյուր հազա՞ր, —ասես զառանցելով մեկ անգամ էլ կրկնեց Նինան։ —Ինչեր ասես չեն անի այդքան փողով...

Աննա Աֆանասևնան ձեռքը տարավ նրա փարթամ մազերի վրայով։

— Ա՛յ, այդպիսի մի ամուսին լիներ քեզ համար, փոքրիկս։ Հը՞։

Ուրիշ մեկի տարեկան երեք հարյուր հազար եկամուտը կարծես էլեկտրականացրեց ամբողջ հասարակությանը։ Փայլող աչքերով ու շառագունած դեմքերով անեկդոտներ էին պատմվում և ունկնդրվում մեքենատերերի կյանքից, պատմություններ՝ հնքիաթային ճաշացանկերի, հոյակապ ձիերի, պալատանդեսների և դրամ վատնելու պատմականորեն խելահեղ փաստերի մասին։

Բոբրովի սիրտը սառեց ու ցավագին սեղմվեց։ Նա սուսուփուս գտավ իր շլյապան ու զգուշորեն ելավ առանց։ Ասենք, նրա հեռանալը այնպես էլ ոչ ոք չէր նկատի։

Եվ երբ արագ վարգով տուն էր գնում ու պատկերացնում Նինայի քնքուշ, երազկոտ աչքերը, որը համարյա ինքնամոռաց վիճակում կրկնում էր «Երեք հարյուր հազա՞ր», հանկարծ միտն եկավ Սվեժևսկու առավոտյան անեկդոտը։

— Նա... նույնպես կարող է իրեն վաճառել, —շշնջաց նա, ջղաձգորեն սեղմելով ատամները և մտրակով կատաղորեն հարվածելով Ֆարվատերի վզին։

5

Մոտենալով իր բնակարանին, Բոբրովը պատուհանների մեջ լույս տեսավ։ «Հավանորեն բժիշկն է եկել առանց ինձ ու հիմա բազմոցին փռված իմ գալուն է սպասում», — մտածեց նա՝ զսպելով քրտնամխած ձիուն։ Բոբրովի ներկա տրամադրության պարագային բժիշկ Գոլդբերգը միակ մարդն էր, որի ներկայությունը նա կարող էր տանել։ առանց հիվանդագին բորբոքվածության։

Նա անկեղծորեն սիրում էր այդ անհոգ, հեզահամբույր հրեային, բազմակողմանի զարգացած խելքի, բնավորության պատանեկան աշխուժության և վերացական բնույթի վիճաբանությունների նկատմամբ ունեցած բարեմիտ մոլության համար։ Ինչ հարց էլ շոշափեր Բոբրովը, բժիշկ Գոլդբերգը նրան կառարկեր խնդրո նկատմամբ միատեսակ հետաքրքրությամբ ու անփոփոխ կրքոտությամբ։ Ու թեև նրանց միջև միայն հակասություններ էին առաջանում անվերջանալի այդ վիճաբանությունների ընթացքում, այդուհանդերձ նրանք կարոտում էին միմյանց ու տխնվում էին համարյա ամեն օր։

Բժիշկն իրոք պառկած էր բազմոցին, ոտքերը գցած թիկնակի վրայով և ինչ-որ գրքույկ էր կարդում, ընդհուպ մոտեցրած կարճատես աչքերին։ Արագ սահեցնելով հայացքը կաղմի վրայով,

Բոբրովը ճանաչեց Մեվիուսի «Մետալուրգիայի ուսումնական ձեռնարկը» և ժպտաց։ Նա լավ գիտեր բժշկի սովորությունը՝ միատեսակ հափշտակությամբ և անպայման մեջտեղից կարդալ այն ամենը, ինչ ընկնում է ձեռքի տակ։

— Առանց ձեզ կարգադրել եմ թեյ բերեն,— ասաց բժիշկը, գրքույկը մի կողմ գցելով և ակնոցի վրայից Բոբրովին նայելով։ —է, ինչ կա, ինչ չկա, սիրելիդ իմ Անդրեյ Իլյիչ։ Ու-ու, զայրացած եք երևում։ Ի՞նչ է։ Նորի՞ց ուրախ մելամաղձություն։

— Ահ, բժիշկ, շատ վատ է այս աշխարհում ապրելը, —հոգնած ասաց Բոբրովը։

— Ինչի՞ համար, սիրելիս։

— Այնպես... ընդհանրապես... ամեն բան վատ է։ Իսկ ինչպե՞ս է ձեր հիվանդանոցը, բժիշկ։

— Մեր հիվանդանոցը ոչինչ... կա։ Այսօր շատ հետաքրքիր վիրաբուժական դեպք եղավ։ Աստված վկա, թե՛ ծիծաղալի է, թե՛ հուզիչ։ Պատկերացրեք, առավոտյան մի երիտասարդ եկավ, մասալցի քարհատներից։ Մասալցի այդ տղաները, որին էլ վերցնես, ածդահա են, մե՛կ է։ «Ի՞նչ է եղել»,— հարցնում եմ։ «Ինչ ասեմ, պարոն բժիշկ, մերոնց համար հաց էի կտրում, մատս մի թեթև փչացրի։ Քարը բռնել չեմ կարում»։ Նայեցի ձեռքը, թեթև քերծվածք էր, բայց թարախակալել էր, բուժակին կարգադրեցի սպեզանի դնել։ Միայն թե տեսնեմ, մեր երիտասարդը չի գնում։ «Հը՞, է՞լ ինչ է պետք։ Ձեռքդ կպցրեցինք, գնա»։ «Ճիշտ որ կպցրիք, ասաց, աստված քեզ առողջություն տա, մի բան էլ կա, գլուխս շատ փիս տրաքում է, ասում եմ մի բան էլ գլխիս համար չե՞ս տա»։ «Գլխի՞դ ինչ է եղել։ Մեկնումեկը հասցրել է, չէ՞»։ Այնպես ուրախացա՜վ, սկսեց քրքջալ։ «Էդ է որ կա, ասաց։ Քաթանօրհնեքի տոնին (ասել է, թե երեք օր առաջ) մերոնցով քեֆ էինք անում, մեկուկես դույլ խմեցինք, հա՛, տղերքն սկսին իրար մեջ հանաք անել... Ես էլ հետները։ Հետո էլ... կռվի մեջ ի՞նչ ջոկես... էրկաթով մ-մի՛ հատ հո չհասցրեց կատարիս... Սկզբից ոնց որ թե բան չկար, չէր ցավում, հիմի սկսել է շատ փիս ցավելը»։ Նայեցի նրա «կատարը», և ի՞նչ եք կարծում՝ ուղղակի սարսափեցի։ Գանգրն ամբողջովին ջարդված, հինգ կոպեկանոցի մեծության մի ծակ, ոսկրի կտորները խրված ուղեղի մեջ... Հիմա գիտակցությունը կորցրած պառկած է հիվանդանոցում։ Զարմանալի ժողովուրդ է, ես կասեի, մանուկներ ու հերոսներ՝ միաժամանակ։ Աստված վկա, առանց կատակի մտածում եմ, որ միայն ռուս

համբերատար մուժիկը կարող էր դիմանալ կատարի նման նորոգմանը։ Մեկ ուրիշը հենց տեղում կփչեր շանչը։ Հետո, ինչպիսի պարզամիտ անչարություն. «Կռվի մեջ ի՞նչ ջոկես»... Սատանան գիտե, թե ինչ է սա։

Բոբրովը ետուառաջ էր քայլում սենյակում, մտրակով խրփելով բարձրաձիտք սապոգներին և ցրված լսում էր բժշկին։ Դառնությունը, որ հոգում էր մնացել դեռ Զինենկոյենց տանը, մինչև այժմ չէր մեղմվում։

Բժիշկը մի քիչ լռեց և, տեսնելով, որ զրուցակիցը տրամադիր չէ խոսակցության, ասաց կարեկցանքով.

— Գիտե՞ք ինչ, Անդրեյ Իլյիչ։ Եկեք փորձենք մի բոպե պառկել ու մի-մի գդալ էլ բրոմ ընդունենք։ Մեր տրամադրության համար դա օգտակար է, ոչ մի վնաս էլ չի լինի դրանից...

Երկուսն էլ պառկեցին մի սենյակում. Բոբրովը՝ մահճակալին, բժիշկը՝ նույն այդ բազմոցին։ Բայց ոչ մեկի քունը չէր տանում։ Գոլդբերգը մթության մեջ երկար ժամանակ լսում էր, թե ինչպես կողից կող է շուռ գալիս և տնքտնքում Բոբրովը, և վերջապես առաջինը խոսեց.

— Ձեզ ի՞նչ է եղել, սիրելիս։ Ի՞նչ եք ձեզ տանջում։ Ավելի լավ է, ուղղակի ասեք, ի՞նչ է մտել ձեր գլուխը։ Կթեթևանաք։ Այնուամենայնիվ, օտար մարդ չեմ ձեզ համար, պարապ հետաքրքրասիրությունից չէ, որ հարցնում եմ։

Այս պարզ խոսքերը հուզեցին Բոբրովին։ Չնայած բժշկի հետ նրան կապում էին համարյա ընկերական փոխհարաբերություններ, սակայն նրանցից ոչ մեկը ոչ մի խոսքով չէր հաստատել դա բարձրաձայն. երկուսն էլ զգայուն մարդիկ էին և վախենում էին փոխադարձ խոստովանությունների այրող ամոթից։ Բժիշկն առաջինն իր սիրտը բացեց։ Գիշերվա խավարն ու խղճահարությունն Անդրեյ Իլյիչի նկատմամբ՝ նպաստեց դրան։

— Ինձ համար ամեն ինչ ծանր է ու նողկալի, Օսիպ Օսիպովիչ, —մեղմաձայն պատասխանեց Բոբրովը։ —Առաջինը. ինձ համար նողկալի է այն, որ ծառայում եմ գործարանում ու ահագին փող ստանում դրա համար, իսկ գործարանի աշխատանքը նողկալի է, նողկալի։ Ես ինձ ազնիվ մարդ եմ համարում, ուստիև ինձ հարց եմ տալիս ուղղակի. «Ի՞նչ ես անում։ Ո՞ւմ ես օգուտ բերում»։ Սկսում եմ կողմնորոշվել այդ հարցերում ու տեսնում, որ իմ աշխատանքի շնորհիվ ֆրանսիացի հարյուրավոր խանութպան-ռանտյեներ և մեկ տասնյակ ռուս խաբեբաներ ժամանակի

ընթացքում միլիոններ կգրպանեն։ Իսկ այլ նպատակ, այլ իմաստ չկա այն աշխատանքի մեջ, որի նախապատրաստման վրա ես սպանեցի կյանքիս լավագույն կեսը...

— Է՜, այդ մենն արդեն ծիծաղելի է նույնիսկ, Անդրեյ Իլյիչ, —առարկեց բժիշկը, մթության մեջ դեմքով դառնալով Բոբրովի կողմը։— Դուք պահանջում եք, որ ոմն բուրժույներ մարդասիրական շահերով համակվեն։ Սիրելիս, այն ժամանակից ի վեր, ինչ կանգուն է աշխարհը, ամեն ինչ առաջ է գնում փորով, այլ կերպ չի եղել ու չի լինի։ Սակայն բանը հենց այն է, որ դուք թքած ունեք բուրժույների վրա, քանի որ շատ ավելի բարձր եք նրանցից։ Մի՞թե ձեզ բավական չէ անվեհեր ու հպարտ այն գիտակցությունը, որ դուք առաջնորդող հոդվածների լեզվով ասած, առաջ եք մղում «առաջընթացի հաղթակառքը»։ Գրողը տանի։ Շոգենավային ընկերությունների արժեթղթերը վիթխարի շահ են բերում, բայց մի՞թե դա խանգարում է Ֆուլտոնին համարվել մարդկության բարերարներից մեկը։

— Ա՜խ, բժի՛շկ, բժի՛շկ, —Բոբրովը բարկացած կնճռոտեց դեմքը։ —Կարծեմ այսօր Ջիննկոյենց տանը չեք եղել, իսկ ձեր շուրթերով հանկարծ խոսել սկսեց նրանց կենցաղային իմաստությունը։ Փառք աստծո, առարկությունների համար հեռուն գնալու պետք չունեմ, որովհետև հիմա ձեզ կջախջախեմ հենց ձեր սիրած տեսությամբ։

— Այսինքն այդ ո՞ր տեսությամբ... Ներեցեք... ես կարծեմ ոչ մի տեսություն չեմ հիշում... իրոք, սիրելիս, չեմ հիշում... մոռացել եմ...

— Մոռացե՞լ եք։ Իսկ ո՞վ էր հենց այստեղ, այս նույն բազմոցի վրա փրփուր ի բերան բղավում, որ մենք՝ ինժեներներս ու գյուտարարներս, մեր հայտնագործություններով հասարակական կյանքի զարկերակն արագացնում ենք տենդային վիճակի աստիճան։ Այս կյանքն ո՞վ էր համեմատում թթվածնի ամանի մեջ բանտարկված կենդանու վիճակի հետ։ Օ՜, ես շատ լավ հիշում եմ, թե քսաներորդ դարի զավակների՝ ջղագարների, խելագարների, հոգնատանջների, ինքնասպանների ինչ զարհուրելի թվարկում էիք շպրտում մարդկային ցեղի այդ բարերարների երեսին։ Հեռագիրը, հեռախոսը, ժամում հարյուր քսան վերստ արագությամբ գնացքները, ասում էիք, տարածությունը հասցրել են minimum-ի, ոչնչացրել են... ժամանակն այնքան է թանկացել, որ շուտով կսկսեն գիշերը ցերեկ դարձնել, քանի որ նման

կրկնապատկված կյանքի պահանջն արդեն զգացվում է։ Նախկինում ամբողջ ամիսներ պահանջող գործարքը հիմա բոպեում ավարտվում է։ Սակայն այս դիվական արագությունն էլ արդեն չի բավարարում մեր անհամբերությանը... Շուտով մենք միմյանց կտեսնենք լարի միջոցով հարյուր ու հազարավոր վերստերի վրա ... Այնինչ, ընդամենը հիսուն տարի առաջ մեր նախնիները գյուղից նահանգի կենտրոն գնալուց առաջ ողոթքներ էին անում անշտապ և ճամփա էին ընկնում բլեռային արշավախմբի բավականացնող պաշարով... Եվ մենք գլխապատառ առաջ ու առաջ ենք սուրում, խլացած հրեշավոր մեքենաների դղրդյունից ու ճռնչոցից, այս խելացնոր վազքից գժված, բորբոքված նյարդերով, այլասերված ճաշակներով ու հազարավոր նոր հիվանդություններով... Հիշո՞ւմ եք, բժիշկ։ Այս բոլորը ձեր սեփական խոսքերն են, բարերար առաջընթացի շատագո՛վ։

Բժիշկը, որ մի քանի անգամ արդեն ապարդյուն փորձում էր առարկել, օգտվեց Բոբրովի բոպեական դադարից։

— Լավ, դե լավ, սիրելիս, այդ ամենը ես ասել եմ, —շտապ շտապ ասաց նա, ոչ այնքան վստահ սակայն։ —Ես հիմա էլ եմ դա հաստատում։ Բայց սիրելիս, պետք է, չէ՞, այսպես ասած, հարմարվել։ Այլ կերպ՝ իսկ ինչպե՞ս ապրել։ Ցանկացած մասնագիտության մեջ կան այդ սայթաքուն կետերը։ Օրինակի համար, վերցնենք թեկուզ մեզ՝ բժիշկներիս... Կարծում եք, մեզ համար այս ամենը շատ հստակ ու լա՞վ է, ինչպես գրքում։ Չէ որ մենք վիրաբուժությունից այն կողմ ուղղակիորեն ո՛-չի՛նչ հաստատ չգիտենք։ Նոր դեղամիջոցներ ու սիստեմներ ենք հորինում, սակայն բոլորովին մոռանում ենք, որ հազար օրգանիզմի մեջ արյան բաղադրությամբ, սրտի գործունեությամբ, ժառանգականության՝ պայմաններով ու սատանան գիտի թե էլ ինչով թեկուզ փոքր-ինչ նման երկուսը չկան։ Մենք հեռացել ենք բուժական միակ ճշմարիտ ճանապարհից՝ գազանների և հեքիմների բժշկությունից, դեղաբանությունը հեղեղել ենք զանազան կոկաիններով, ատրոպիններով, ֆենացետիններով, բայց աշքաթող ենք արել, որ եթե հասարակ մարդուն մաքուր ջուր տաս ու մի լավ վստահեցնես նրան, որ դա ուժեղ դեղամիջոց է, ապա նա կառողջանա։ Այնինչ հարյուրից իննսուն դեպքում մեր պրակտիկայում օգնում է հենց այդ վստահությունը, որ ներշնչում ենք մեր մասնագիտական քրմական ապլոմբով։ Կհավատա՞ք արդյոք։ Մի լավ բժիշկ, միաժամանակ խելացի և ազնիվ մարդ, խոս-

տովանել է ինձ, որ շներին որսորդները շատ ավելի արդյունավետ են բուժում, քան մենք՝ մարդկանք։ Այնտեղ միջոցը մեկն է՝ ծծումբը, որն առանձին վնաս չի հասցնում, իսկ երբեմն այնուամենայնիվ օգնում է... Դուրեկան պատկեր է, չէ՞, սիրելիս։ Սակայն մենք էլ ենք անում, ինչ կարողանում ենք... Այլ կերպ չի կարելի, թանկագին. կյանքը փոխզիջումներ է պահանջում... Մեկ-մեկ թեկուզ ամենագետ ավգուրի քո տեսքով այնուամենայնիվ թեթևացնում ես մերձավորիդ տառապանքները։ Դա էլ է բավական։

— Այո, փոխզիջումները՝ փոխզիջում,— մռայլ տոնով առարկեց Բորրովը,— Բայց և այնպես մասալցի քարհատի գանգից այսօր հանել եք ոսկորները...

— Ախ, սիրելիս, ինչ է նշանակում կարգի բերված մեկ գանգը։ Մտածեք հապա, թե քանի բերան եք կերակրում և քանի ձեռքերի եք աշխատանք տալիս։ Դեռևս Իլովայսկու պատմության մեջ է ասված, որ «Բորիս արքան, ցանկանալով վաստակել ժողովրդական զանգվածների բարեհաճությունը, սովի տարիներին ձեռնարկեց հասարակական շինարարության։ Նման մի բան... Ահա և հաշվեք, թե ինչ հսկայական գումարի օգուտ եք...

Վերջին բառերն ասես վեր շպրտեցին Բորրովին մահճակալի վրայից, նա արագ նստեց, մերկ ոտքերը կախելով ցած։

— Օգո՞ւտ, —մոլեգնած բղավեց նա։ —Դուք ի՞նձ եք ասում օգուտի մասին։ Այդ դեպքում, եթե օգուտն ու վնասը հանրագումարի բերենք, ապա թույլ տվեք մի փոքրիկ էջ մեջբերեմ վիճակագրությունից։ —Եվ նա սկսեց համաչափ ու կտրուկ տոնով, ասես ամբիոնից էր խոսում. —Վաղուց հայտնի է, որ աշխատանքը հանքերում, հանքահորերում, մետալուրգիական գործարաններում և մեծ ֆաբրիկաներում բանվորի կյանքը կրճատում է մոտավորապես մեկ քառորդով։ Էլ չեմ խոսում դժբախտ պատահարների և ուժից վեր աշխատանքի մասին։ Որպես բժիշկ ձեզ ավելի լավ հայտնի պետք է լինի, թե ինչ տոկոս է ընկնում սիֆիլիսին, հարբեցողությանը և այս նզովյալ բարաքներում ու գետնափոսերում գոյություն քարշ տալու հրեշավոր պայմաններին... Նախքան առարկելը, սպասեք, բժիշկ, հիշեք, ֆաբրիկաներում դուք շա՞տ եք տեսել քառասուն-քառասունհինգից ավելի տարիք ունեցող բանվորների։ Ես որ երբեք չեմ տեսել։ Այլ խոսքով ասած, սա նշանակում է, որ բանվորը ձեռնարկատիրոջն

է տալիս մի տարվա իր կյանքի երեք ամիսը, ամսվա մեկ շաբաթը կամ ավելի կարճ, օրվա վեց ժամը... Հիմա շարունակությունը լսեք... Մեզ մոտ, դոմնային վեց վառարանների դեպքում, զբաղված կլինեն մինչև երեսուն հազար մարդ՝ Բորիս արքան երազում էլ չէր տեսնի նման թիվ։ Երեսուն հազար մարդ, որոնք բոլորը մեկտեղ, օրվա ընթացքում, այսպես ասած, վառում են իրենց կյանքի հարյուր ութսուն հազար ժամը, այն է՝ յոթ ու կես հազար օր, այն է՝ քանի՞ տարի կլինի դա ի վերջո։

— Շուրջ քսան տարի, — փոքր-ինչ լռելուց՝ հետո հուշեց բժիշկը։

— Օրական շուրջ քսան տարի, —բղավեց Բորրովը։ —Աշխատանքի երկու օրը մեկ ամբողջ մարդ է խժռում։ Գրողը տանի։ Հիշո՞ւմ եք Աստվածաշնչից, որ ասորացիք կամ թե չէ մոաբիտացիք իրենց աստվածներին մարդկային զոհեր էին մատուցում։ Բայց չէ՞ որ պղնձյա այդ պարոնայք՝ Մոլոքը և Դագոնը, ամոթից կկարմրեին քիչ առաջ իմ բերած թվերի առաջ...

Ինքնօրինակ այդ մաթեմատիկան հենց նոր մտավ Բորրովի գլուխը (ինչպես դյուրազգաց շատ մարդիկ, նա նոր մտքեր էր գտնում միայն խոսակցության ընթացքում)։ Այդուհանդերձ, թե՛ նրան, թե Գոլդբերգին ապշեցրեց հաշվարկի ինքնատիպությունը։

— Գրողը տանի, դուք ինձ ցնցեցիք, —բազմոցի վրայից ձայն տվեց բժիշկը— Ջնայած թվերը կարող են այնքան էլ ստույգ չլինել...

— Իսկ հայտնի՞ է ձեզ, —առավել բորբոքվածությամբ շարունակեց Բորրովը։ —Ձեզ հայտնի՞ է վիճակագրական մեկ ուրիշ աղյուսակ, ըստ որի դիվական ճշգրտությամբ կարող եք հաշվարկել, թե մարդկային քանի կյանք կարժենա ձեր սատանայական հաղթակառքի յուրաքանչյուր առաջընթաց քայլը, ինչ-որ քոսոտ քամհար կամ սերմնացան մեքենայի, ռելսագլանման յուրաքանչյուր հայտնագործությունը։ Խոսք չկա, շատ լավն է ձեր քաղաքակրթությունը, եթե նրա պտուղները հաշվվում են թվերով, ուր միավորների տեսքով կանգնած են երկաթյա մեքենաները, իսկ զրոների տեսքով՝ մարդկային էակների մի ամբողջ շարք։

— Բայց լսեք, սիրելիս, —առարկեց բժիշկը, Բորրովի կրակոտ տոնից շփոթված, — այդ դեպքում, ձեր կարծիքով, ավելի լավ կլինի վերադառնալ նախնադարյան աշխատանքի՞ն, ինչ է։ Ինչի՞ համար եք վերցնում բոլոր սև կողմերը։ Չէ՞ որ մեզ մոտ,

չնայած ձեր մաթեմատիկային, թե՛ դպրոց կա գործարանին կից, թե՛ եկեղեցի, թե՛ լավ հիվանդանոց, թե՛ բանվորների համար էժան ապառիկի ընկերություն...

Բոբրովը դուրս պրծավ անկողնուց և ոտաբոբիկ սկսեց գնալ-գալ սենյակում՝

— Թե ձեր հիվանդանոցը, թե ձեր դպրոցը դատարկ բաներ են։ Երեխայական կակա են դրանք այնպիսի հումանիստների համար, ինչպիսին դուք եք, զիջում է դա՝ հասարակական կարծիքին... Եթե ուզում եք, ես ձեզ կասեմ, թե իրականում մենք ինչպես ենք նստում... Գիտե՞ք, թե ինչ ասել է ֆինիշ։

— Ֆինի՞շ։ Կարծեմ, ձիերին առնչվող բան է, չէ՞։ Ձիարշավների ժամանակ, չէ՞։

— Այո, ձիարշավի։ Ֆինիշ կոչվում է վերջին հարյուր սաժենը վերստացուց սյունից առաջ։ Ձին դա պիտի անցնի առավել արագությամբ՝ սյունից այն կողմ կարող է անգամ սատկել։ Ֆինիշը ուժերի կատարելագույն, առավելագույն լարումն է և ձիուց այդ ֆինիշը քամելու համար մտրակով քրքրում են նրան, արնակոլոլ անելու աստիճան... Այդպես էլ մենք։ Իսկ երբ քամված է ֆինիշը և ձին ընկած է՝ մեջքը՝ ջարդած ու ոտքերը փշրված, ուրեմն, գրոդի ծոցը թող կորչի, այլևս ոչնչի պետք չէ նա։ Ահա այն ժամանակ էլ բարի եղեք ֆինիշին տապալված ձիուն մխիթարել ձեր դպրոցներով ու հիվանդանոցներով... Բժիշկ, դուք երբևիցե տեսե՞լ եք ձուլման կամ գլանման գործը։ Եթե տեսել եք, ապա պետք է որ իմանաք, թե նյարդերի ինչպիսի դժոխային ամրություն, պողպատյա մկաններ ու կրկեսի աստիճի ճարպկություն է պահանջում դա... Պետք է իմանաք, որ ամեն մի վարպետ օրական մի քանի անգամ մահացու վտանգից խուսափում է լոկ հոգու զարմանալի ամրության շնորհիվ... Եվ այդ աշխատանքի դիմաց ինչ է ստանում բանվորը, ուզո՞ւմ եք իմանալ։

— Այդուհանդերձ, քանի դեռ կա գործարանը, այդ բանվորի աշխատանքն ապահովված է,— համառորեն ասաց Գոլդբերգը։

— Միամիտ բաներ մի ասեք, բժիշկ,— բացականչեց Բոբրովը, նստելով լուսամտագոգին։ —Հիմա առավել քան երբևէ բանվորը կախում ունի շուկայական պահանջարկից, բորսայի խաղերից, անդրկովիրյան զանազան խարդավանքներից։ Վիթխարի յուրաքանչյուր ձեռնարկություն, նախքան ընթացքի մեջ մտնելը,

երեքից-չորս հանգուցյալ պետեր է ունենում։ Ձեզ հայտնի՞ է, թե ինչպես է ստեղծվել մեր ընկերությունը։ Կանխիկ գումարով հիմնադրել է կապիտալիստների ոչ մեծ մի խումբ։ Սկզբում ենթադրվել է գործը կազմակերպել փոքր չափերով։ Սակայն ինժեներների, տնօրենների և կապալառուների մի ամբողջ ավազակախումբ կապիտալն այնքան շուտ են ցնդեցրել, որ ձեռնարկատերերը չեն էլ հասցրել ուշքի գալ։ Հսկայական շինություններ են կանգնեցվել, որոնք հետագայում ոչ պիտանի են դուրս եկել... Կապիտալ շինությունները, ինչպես մենք ենք ասում, դարձել են «Թնդանոթի միս», այսինքն պայթեցրել են գինամիտով։ Եվ երբ վերջիվերջո ձեռնարկությունը վաճառվել է ռուբլին տասը կոպեկով, այդ ժամանակ է սոսկ հասկանալի դարձել, որ այդ ամբողջ ավազակախումբը գործել է վաղօրոք մտածված սիստեմով և իր ստոր գործելակերպի համար որոշակի ոճիկ է ստացել մեկ ուրիշ, ավելի հարուստ ու ճարպիկ ընկերությունից։ Ներկայումս գործը գնում է շատ ավելի մեծ ծավալներով, բայց ինձ լավ հայտնի է, որ առաջին հանգուցյալի խորտակման ժամանակ ութ հարյուր բանվորներ երկու ամսվա աշխատավարձ չստացան։ Սա էլ ձեզ՝ ապահովված աշխատանք։ Ախր բավական է միայն բորսայում ընկնեն արժեթղթերը, իսկույն ևեթ դա կազդի աշխատավարձի վրա։ Իսկ ձեզ, կարծում եմ, հայտնի՞ է, թե բորսայում ինչպես են բարձրանում ու ընկնում արժեթղթերը։ Դրա համար ինձ բավական է Պետերբուրգ գնալ, միջնորդի ականջին փսփսալ, թե իբր, ուզում եմ մի երեք հարյուր հազարի արժեթուղթ վաճառել, «միայն թե, ի սեր աստծո, մեր մեջ մնա, ավելի լավ է ես ձեզ լավ միջնորդավարձ տամ, միայն սուս մնացեք...»։ Հետո մեկ ուրիշին ու երրորդի ականջին փսփսամ նույն բանը գաղտնի, և արժեթղթերը վայրկենապես կընկնեն մի քանի տասնյակ ռուբլով։ Եվ որքան շատ լինի գաղտնիքը, այնքան ավելի շուտ ու հաստատ կընկնեն արժեթղթերը... Լավ ապահովվածություն է...

Ձեռքի ուժեղ շարժումով Բոբրովը միանգամից բացեց լուսամուտը։ Սառը օդը սենյակ խուժեց։

— Հապա նայեք, այստեղ նայեք, բժիշկ,— բղավեց Անդրեյ Իլյիչը, մատը պարզելով գործարանի ուղղությամբ։

Գոլդբերգը հենվեց արմունկին ու նայեց պատուհանից դուրս տարածվող գիշերային խավարին։ Հեռվում սփռված վիթխարի ամբողջ տարածության վրա կարմրատակում էին շիկացած կրա-

քարի դեսուդեն ցրված անհամար քանակությամբ շեղջեր, որոնց մակերևույթին ստեպ-ստեպ ծծմբային երկնագույն ու կանաչ կրակներ էին բռնկվում... Կրաքարի վառարաններն էին վառվում[1]: Գործարանի վրա հսկայական կարմիր ու ալիքվող հրացոլք էր կանգնած։ Դրա արևաներկ ֆոնի վրա սլացիկ ու հստակ գծագրվում էին բարձր ծխնելույզների մթին կատարները, մինչդեռ դրանց ստորին մասերը ողողված էին գետնից ելնող մոխրագույն մշուշի մեջ։ Այդ հսկաների բաց երախները ծխի թանձր քուլաներ էին ժայթքում շարունակ, որոնք խառնվելով դառնում էին դեպի արևելք սողացող համատարած, քառասային, դանդաղընթաց ամպ՝ տեղ-տեղ բամբակի քուլաների պես ճերմակ, տեղ-տեղ կեղտոտ մոխրագույն, տեղ-տեղ էլ երկաթի ժանգի պես դեղնավուն։ Բարակ ու երկարուկ ծխատար խողովակների վրա վառվող գազի վառ խրձերն էին թպրտում ու ցրիվ գալիս, ահռելի ջահերի տեսք տալով դրանց։ Խողովակների խաբուսիկ անդրադարձումից գործարանի վրա կախված ծխե ամպը մերթ բոցավառվելով, մերթ հանգչելով, տարօրինակ և ահարկու երանգներ էր ստանում։ Ժամանակ առ ժամանակ, երբ ազդանշանային մուրճի հատու զրնգոցով ցած էր իջնում դոմնային վառարանի կափույրը, դրա ելանցքից, հեռավոր ամպրոպ հիշեցնող թնդյունով, դեպի երկինք էր դուրս պրծնում բոցի և մրի մի ամբողջ հողմ։ Այդ ժամանակ մի քանի վայրկյանով գործարանը հստակ ու ահարկու ելնում էր խավարից, իսկ սև ու կլոր կառուցերների խիտ շարքը առասպելական երկաթյա ամրոցի պարիսպ էր թվում։ Կոքսային վառարանների կրակները ձգված էին երկար ուղիղ շարքերով։ Երբեմն դրանցից մեկնումեկը հանկարծ բոցավառվում էր ու բորբոքվում, ճիշտ որպես ահռելի կարմիր մի աչք։ Էլեկտրական լույսերը շիկացած երկաթի ծիրանեգույն կրակին էին խառնում իրենց կապտավուն մեռած փայլը... Երկաթի անլռելի շաչյուն ու դղրդյուն էր գալիս այնտեղից։

Գործարանային կրակների հրացոլքից Բոբրովի դեմքը մթության մեջ ընդունել էր պղնձյա շարագույժ երանգ, աչքերի մեջ վառ կարմիր ցոլքեր էին փայլում, գզգզված մազերը խառնիխուռն թափված էին ճակատին։ Եվ նրա ձայնը հնչում էր սուր ու շարացած։

— Ահա նա՝ Մոլոքը, որ մարդկային տաք արյուն է պահանջում,— բղավում էր Բոբրովը, լուսամուտից դուրս պարզելով իր բարակ դաստակը։ —Օ՜, իհարկե, այստեղ առաջընթաց կա, մեքենայական աշխատանք, մշակույթի հաջողություն... Բայց, ի սեր աստծո, մտածեք հապա՝ քսա՜ն տարի։ Օրական՝ մարդկային կյանքի քսա՜ն տարի... Երդվում եմ ձեզ, բոպեներ են լինում, երբ ինքս ինձ մարդասպան՞ եմ զգում...

«Տե՜ր աստված։ Սա հո խելագա՜ր է»,— մտածեց բժիշկը, որի մարմնով սարսուռ անցավ, և նա սկսեց հանգստացնել Բոբրովին։

— Անդրեյ Իլյիչ, սիրելիս, դե, վերջ տվեք, մի՞թե արժե հիմար բաների համար հուզվել այդպես։ Տեսեք, լուսամուտը բաց է, իսկ դուրսը խոնավ է... Պառկեք, սա էլ ձեզ՝ մի քիչ բրոմ։ «Մոլագար է, կատարյալ մոլագար»,— մտածում էր նա, միաժամանակ համակված խղճահարությամբ ու սարսափով։

Բոբրովը թույլ դիմադրում էր, ուժասպառ եղած քիչ առաջվա բռնկումից։ Բայց երբ անկողին մտավ, հանկարծ սկսեց ջղաձգորեն հեծկլտալ։ Եվ բժիշկը երկար ժամանակ նստած էր նրա կողքին, երեխայի պես գլուխը շոյելով ու գլուխն եկած առաջին իսկ փաղաքուշ, հանգստացնող խոսքերն ասելով։

6

Հաջորդ օրը կայացավ Վասիլի Տերենտևիչ Կվաշնինի հանդիսավոր դիմավորումը Իվանկովո կայարանում։ Ժամը տասնմեկին մոտ գործարանային ամբողջ վարչությունը հավաքվել էր այնտեղ։ Թվում էր, թե ոչ ոք իրեն հանգիստ չի զգում։ Տնօրենը՝ Սերգեյ Վալերիանովիչ Շելկովնիկովը, բաժակ բաժակի վրա զելթերյան ջուր էր խմում, բոպեն մեկ ժամացույցն էր հանում և, չհասցնելով թվացույցին նայել, իսկույն ևթ մեքենայաբար գրպանն էր դնում։ Սոսկ այդ ցրված շարժումն էր մատնում նրա անհանգստությունը։ Իսկ տնօրենի դեմքը՝ աշխարհիկ մարդու գեղեցիկ, խնամված, ինքնավստահ դեմքը, մնում էր անթափանց։ Շատ քչերը գիտեին սոսկ, որ տնօրենը միայն պաշտոնականորեն, ինչպես ասում են՝ թղթի վրա է շինարարության տնօրեն համարվում։ Բոլոր գործերն, ըստ էության, կառավարում էր

1 Կրաքարի վառարաններն այսպես են սարքվում. կրաքարի շեղջ է կիտվում մարդու հասակի բարձրության և կրակ է տրվում քարածխով կամ վառելափայտով։ Այդ շեղջը շուրջ մի շաբաթ շիկացվում է, մինչև որ քարից չհանգած կիր է ստացվում (ծան. հեղ.)։

բելգիացի ինժեներ Անդրեան, ազգությամբ կիսալեհ, կիսաշվեդ, որի դերը գործարանում անիրազեկ մարդիկ ոչ մի կերպ չէին կարողանում հասկանալ։ Երկու տնօրենների աշխատասենյակները կողք-կողքի էին և միացված դռնով։ Շելկովնիկովը չէր կարող որևէ կարևոր թղթի վրա մակագրություն անել, վաղօրոք չտեսնելով Անդրեայի ձեռքով էջի մի անկյունում, մատիտով գրած պայմանական նշանը։ Իսկ արտակարգ դեպքերում, երբ բացառվում էր խորհրդակցելու հնարավորությունը, Շելկովնիկովը մտահոգ տեսք էր ընդունում և անփույթ տոնով ասում այցելուին.

— Ներեցեք... տառացիորեն ոչ մի րոպե չեմ կարող ձեզ հատկացնել... մինչև կոկորդս թաղված եմ... Բարի եղեք ձեր գործը բացատրել պարոն Անդրեային, իսկ նա հետո ինձ կներկայացնի առանձին գրությամբ։

Վարչության առաջ Անդրեայի ծառայությունները անհամար էին։ Նրա ուղեղից էր, որ ամբողջությամբ ելավ ձեռնարկատերերի առաջին խմբի սնանկացման հանճարեղորեն խարդախ ծրագիրը և հենց նրա՝ ամուր ու անտեսանելի ձեռքն էր, որ մեքենայությունը հասցրեց ավարտին։ Զարմանալի պարզությամբ ու կանոնավորությամբ աչքի ընկնող նրա նախագծերը միևնույն ժամանակ համարվում էին լեռնագործարանային գիտության վերջին խոսքը։ Նա տիրապետում էր եվրոպական բոլոր լեզուներին և, բացի իր մասնագիտությունից, ամենաբազմազան գիտելիքների տեր էր՝ հազվադեպ երևույթ ինժեներների մեջ։

Կայարանում հավաքված բոլոր մարդկանց մեջ թոքախտավորի կազմվածքով ու ծեր կապկի դեմքով այդ մեկն էր, որ պատկանում էր իր սովորական անհաղորդությունը։ Նա բոլորից ուշ եկավ և հիմա դանդաղ ետուառաջ էր քայլում կառամատույցում, ձեռքերը մինչև արմունկները մտցրած լայն, կախ ընկած շալվարի գրպանները, իր հավերժական սիգարը ծամծմելով։ Նրա բացգույն աչքերը, որոնց մեջ զգացվում էր գիտնականի մեծ խելքն ու բախտախնդրի ուժեղ կամքը, ինչպես միշտ, անշարժ ու անտարբեր նայում էին ուռած, հոգնած կոպերի տակից։

Զիններկո ընտանիքի գալուստը ոչ ոքի չզարմացրեց։ Բոլորը վաղուց չգիտես ինչու վարժվել էին նրանց համարել գործարանային կյանքի անբաժանելի պատկանելիություն։ Աղջիկներն իրենց հետ կայարանի մոտալ դահլիճ, ուր ցուրտ էր ու ձանձրալի, բերեցին բոնազբոսիկ աշխուժություն և անբնական քրքջոց։ Նրանց շրջապատեցին երկարատև սպասումից հոգնած ավելի ջահել ինժեներները։ Աղջիկները, տեղնուտեղը պաշտպանական սովորական դիրքն ընդունելով, սկսեցին աջուձախ սփռել իրենց սիրալիր, բայց վաղուց արդեն բոլորին ձանձրացրած միամտությունները։ Իրար անցած դուստերների արանքում փոքրամարմին, փութկոտ, շարժուն Աննա Աֆանասևնան անդադրում թխսկան էր հիշեցնում։

Հոգնած, երեկվա բոնկումից համարյա հիվանդ Բոբրովը միայնակ նստած էր կայարանային դահլիճի մի անկյունում և վրա-վրա ծխում էր։ Երբ ներս մտավ և բարձրաձայն կչկոցով կլոր սեղանի շուրջ տեղավորվեց Զիններկո ընտանիքը, Անդրեյ Իլյիչը երկու միանգամայն աղոտ զգացումներ ունեցավ միաժամանակ։ Մի կողմից ամոթ ապրեց այդ ընտանիքի, ինչպես ինքն էր մտածում, անտակտ գալստյամբ, այրող, ճնշող ամոթ էր դա՝ ուրիշի համար։ Մյուս կողմից ուրախացավ, տեսնելով արագ ընթացքից շառագունած, հուզված ու փայլփլող աչքերով, շատ գեղեցիկ հագնված Նինային, և ինչպես միշտ լինում է, շատ ավելի գեղեցիկ էր նա, քան Բոբրովի երևակայությունն էր պատկերում։ Նրա հիվանդ, բզկտված հոգում հանկարծ աղջկական քնքուշ, բուրավետ սիրո անդիմադրելի ցանկություն, կանացի սովորական ու ամոքող քնքշանքի ծարավ արթնացավ։

Նա առիթ էր փնտրում Նինային մոտենալու, բայց աղջիկը շարունակ զբաղված էր լեռնային երկու ուսանողների հետ շաղակրատելով, որոնք փոխնիփոխ ջանում էին ծիծաղեցնել նրան։ Եվ նա ծիծաղում էր, փայլեցնելով սպիտակ ու մանրիկ ատամները, առավել սեթևեթ ու զվարթ, քան երբևէ։ Սակայն երկու քի երեք անգամ նրանց աչքերը հանդիպեցին, և Բոբրովին թվաց, որ նրա թեթևակի բարձրացրած հոնքերը լռին, բայց և ոչ թշնամական հարց են արտահայտում։

Կառամատույցի վրա երկարատև զանգ հնչեց, որն ազդարարում էր գնացքի դուրս գալը մոտակա կայարանից։ Ինժեներների մեջ իրարանցում ընկավ։ Անդրեյ Իլյիչն իր անկյունից, քմծիծաղը շուրթերին, հետևում էր, թե ինչպես միևնույն երկչոտ միտքը վայրկենապես տիրեց ավելի քան քսան մարդու, թե ինչպես նրանց դեմքերը մեկին դարձան լուրջ ու մտահոգ, ձեռքերը ակամա փութկոտ շարժումով անցան սերթուկների կոճակների վրա-

յով, փողկապների և գլխարկների վրայով, աչքերը դարձան զանգի կողմը։ Շուտով դահլիճում ոչ ոք չմնաց։

Անդրեյ Իլյիչը կառամատույց ելավ։ Իրենց զբաղեցնող տղամարդկանցից լքված՝ աղջիկները անօգնականորեն խռնվել էին դռան մոտ, Աննա Աֆանասևնայի շուրջը։ Բոբրովի սևեռուն, համառ հայացքի վրա Նինան շրջվեց և իր հետ առանձին խոսելու նրա ցանկությունը ստույգ կռահելով, ընդառաջ եկավ։

— Բարև ձեզ։ Ինչո՞ւ եք այդպես գունատ այսօր։ Հիվա՞նդ եք,— հարցրեց նա, ամուր ու քնքշությամբ սեղմելով Անդրեյ Իլյիչի ձեռքը և լրջությամբ ու սիրալիր աչքերին նայելով։ — Երեկ ինչո՞ւ այդքան շուտ գնացիք և անգամ չկամեցաք հրաժեշտ տալ։ Ինչ-որ բանի վրա բարկացե՞լ էիք։

— Եվ այո, և ոչ,— պատասխանեց Բոբրովը ժպտալով։ —Ոչ, որովհետև՝ չէ որ ես ոչ մի իրավունք չունեմ բարկանալու։

— Ընդունեք, որ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի բարկանալու։ Հատկապես, եթե գիտե, որ իր կարծիքը գնահատում են։ Իսկ ինչո՞ւ՝ այո։

— Որովհետև... Գիտեք ինչ, Նինա Գրիգորևնա,— ասաց Բոբրովը, համարձակության հանկարծակի զգացումով։ —Երեկ, երբ երկուսով նստած էինք պատշգամբում, հիշո՞ւմ եք, ձեր շնորհիվ ես մի քանի երանելի վայրկյաններ ապրեցի։ Եվ ես հասկացա, որ դուք, եթե ուզենաք, ամենաերջանիկ մարդը կարող եք դարձնել ինձ աշխարհում... Ախ, ինչ եմ վախենում ու հապաղում... Չէ որ դուք գիտեք, դուք կռահել եք, դուք վաղուց գիտեք, որ ես...

Նա խոսքը չվերջացրեց... Հորդաբուխ համարձակությունը հանկարծ չքացավ։

— Ի՞նչ եք... ասում,— շինծու անտարբերությամբ հարցրեց Նինան, սակայն ձայնը, կամքին հակառակ, հանկարծ դողաց, և նա աչքերը ցած հառեց։

Նա սպասում էր սիրո խոստովանության, որ միշտ էլ սաստիկ ու դուրեկան խռովում է ջահել աղջիկների սիրտը, անկախ նրանից՝ իրենց իսկ սիրտը փոխադարձաբար պատասխանո՞ւմ է դրան, թե՝ ոչ։ Նրա այտերը թեթևակի գունատվեցին։

— Հիմա չէ... հետո, ուրիշ անգամ,— կմկմաց Բոբրովը։— Երբևիցե, մեկ ուրիշ պայմաններում ես ձեզ կասեմ... Ի սեր աստծո, հիմա չէ,— ավելացրեց նա աղերսագին։

— Դե, լավ։ Այնուամենայնիվ, իսկ ինչո՞ւ էիք բարկացել։

— Որովհետև այդ մի քանի բոպեից հետո ես սեղանատուն մտա ամենա, ինչպես ասեմ ձեզ, ամենազգացմունքային վիճակում... Եվ երբ մտա...

— Ձեզ տհաճորեն զարմացրեց Կվաշնինի եկամուտների մասին խոսակցությո՞ւնը,— կռահեց Նինան հանկարծական, բնազդական այն խորաթափանցությամբ, որը երբեմն համակում է նույնիսկ ամենասահմանափակ կանանց։ —Այո՞։ Կռահեցի՞։

— Նա շրջվեց դեպի Բոբրովը ու նորից նրան նայեց խորունկ, փաղաքուշ հայացքով։ —Դե, անկեղծ ասեք։ Դուք ոչինչ չպետք է թաքցնեք ձեր բարեկամից։

Ժամանակին, երեք թե չորս ամիս առաջ, մեծ խմբով գետի վրա նավակով զբոսնելիս, ամառային տաք գիշերի գեղեցկությամբ զմայլված ու քնքշացած Նինան իր բարեկամությունն առաջարկեց Բոբրովին հուր հավիտենական, Բոբրովն այդ հրավերն ընդունեց շատ լրջորեն և մի ամբողջ շաբաթ շարունակ նրան իր բարեկամն էր անվանում, ինչպես Նինան։ Եվ երբ աղջիկն իր սովորական նվաղուն տոնով, դանդաղ ու նշանակալից ասում էր «իմ բարեկամ», այս երկու կարճ բառերը ստիպում էին նրա սրտին արագ ու անուշ բաբախել։ Բոբրովը հիմա հիշեց այդ կատակը և պատասխանեց հոգոց հանելով.

— Լավ, «իմ բարեկամ», ձեզ ճշմարիտը կասեմ, չնայած մի քիչ ծանր է դա ինձ համար։ Ձեր հանդեպ ես մշտապես գտնվում եմ մի տեսակ տանջալից երկվության մեջ։ Մեր զրույցների մեջ լինում են բոպեներ, երբ դուք մի խոսքով, մի շարժումով, անգամ մի հայացքով հանկարծ ինձ այնքան երջանիկ եք դարձնում... Ախ, մի՞թե հնարավոր է բառերով արտահայտել այդ զգացողությունները...Ասացեք միայն նկատե՞լ եք արդյոք դա։

— Նկատել եմ, —պատասխանեց աղջիկը համարյա շշնջալով և, արտևանունքները խաղացկուն շարժելով, ցած հառեց աչքերը։

— Իսկ հետո... հետո հանկարծ, իսկույն ևեթ, աչքիս առաջ դառնում եք գավառական օրիորդ, ծեծված դարձվածքներ օգտագործելով և բոլոր արարքների մի տեսակ սերտած անբնականությամբ... Մի բարկացեք անկեղծության վրա։ Եթե դա ինձ այսքան սարսափելի չտանջեր, ես չէի ասի...

— Դա նույնպես նկատել եմ...

— Ահա, տեսնում եք... Չէ որ ես միշտ վստահ՝ եմ եղել, որ

դուք կարեկից, նուրբ ու զգայուն հոգի ունեք։ Իսկ ինչո՞ւ չեք ուզում միշտ լինել այնպիսին, ինչպիսին հիմա եք...

Նա դարձյալ շրջվեց Բոբրովի կողմը և նույնիսկ ձեռքով այնպիսի մի շարժում արեց, կարծես ուզում էր հպվել նրա ձեռքին։ Այդ ժամանակ նրանք ետուառաջ էին՝ քայլում կառամատույցի ազատ ծայրին։

— Դուք երբեք չեք ուզեցել ինձ հասկանալ, Անդրեյ Իլյիչ,— ասաց Նինան հանդիմանանքով։ —Դուք նյարդային եք ու անհամբեր։ Դուք չափազանցնում եք իմ մեջ եղած ամենայն լավը, և փոխարենն ինձ չեք ներում այն, որ ես չեմ կարող ուրիշ կերպ լինել իմ ապրած միջավայրում։ Դա ծիծաղելի կլինի. մեր ընտանիքում դա անհամաձայնություն կմտցներ։ Ես չափազանց թույլ եմ և պետք է ճշմարիտն ասել՝ չափազանց խղճուկ եմ պայքարի և ինքնուրույնության համար... Ես գնում եմ այնտեղ, ուր գնում են բոլորը, իրերին նայում ու դրանց մասին դատում եմ այնպես, ինչպես բոլորը։ Եվ մի կարծեք, թե ես չեմ գիտակցում իմ սովորականությունը... Բայց ուրիշների հետ չեմ զգում դրա ծանրությունը, իսկ ձեզ հետ... Ձեզ հետ ամեն մի չափ կորցնում եմ, որովհետև... —նա կարկամեց,— է՛, միևնույն է... որովհետև դուք բոլորովին ուրիշ եք, որովհետև ձեզ նման մարդ ես երբեք չեմ հանդիպել կյանքում։

Նինային թվում էր, թե ինքն անկեղծ է խոսում։ Աշնանային օդի թարմացնող պարզությունը, կայարանային իրարանցումը, սեփական գեղեցկության գիտակցումը, իր վրա Բոբրովի սիրահարված հայացքը զգալու հաճույքը՝ այս ամենը նրան էլեկտրաէանացրել էր այն աստիճան, երբ հիստերիկ անհատականությունները ստում են այնքան ոգեշունչ, այնքան գերիշ և իրենց համար այնքան աննկատելի։ Բավականությամբ հիանալով հոգեկան աշակցության ծարավի օրիորդի իր նոր դերով, նա պահանջ էր զգում հաճելի բաներ ասել Բոբրովին։

— Ես գիտեմ, որ դուք ինձ պշրուհի եք համարում... Խնդրում եմ, մի արդարացեք... Ես էլ եմ համաձայն, առիթ տալիս եմ այդպես մտածելու... Օրինակ, ես հաճախ ծիծաղում ու շատախոսում եմ Միլլերի հետ։ Բայց եթե իմանայիք, թե որքան նողկալի է այդ ծաղկազարդի հրեշտակն ինձ համար։ Կամ այդ երկու ուսանողները... Գեղեցիկ տղամարդը հենց նրանով է գարշելի, որ շարունակ սքանչանում է ինքն իրենով... Կհավատա՞ք արդ-

յոք, թեև տարօրինակ է դա գուցե, բայց ես միշտ առանձնապես համակրել եմ տգեղ տղամարդկանց։

Ամենանուրբ տոնով ասված այս սիրալիր դարձվածքը լսելով, Բոբրովը տխուր հոգոց հանեց։ Ավաղ, կանացի շուրթերից մեկ անգամ չէ, որ լսել էր այդ դաժան սփոփանքը, որը կանայք երբեք չեն զլանում հայտնել իրենց տգեղ երկրպագուներին։

— Ուրեմն, ես նույնպե՞ս կարող եմ հուսալ երբևէ ձեր համակրանքին արժանանալ,— հարցրեց նա կատակով, որի մեջ սակայն ինքն իրեն ծաղրելու դառնությունը հստակորեն հնչեց։

Նինան արագ ուշքի եկավ։

— Ահա՛, ինչ տեսակն եք, ճիշտ եմ ասում։ Ձեզ հետ խոսել չի կարելի... Հաճոյախոսությո՞ւն եք կամենում լսել, ողորմած պարոն։ Ամոթ է...

Նինան ինքն էլ թեթևակի շփոթվեց և խոսակցությունը փոխելու համար հարցրեց խաղացկուն հրամայական տոնով.

— Դե-հ, իսկ ի՞նչ էիք պատրաստվում ինձ ասել մեկ ուրիշ անգամ։ Բարի եղեք անմիջապես պատասխանել.

— Ես չգիտեմ... չեմ հիշում,— կմկմաց ոգևորությունը կորցրած Բոբրովը։

— Ես ձեզ կհիշեցնեմ, իմ գաղտնապահ բարեկամ։ Դուք սկսեցիք խոսել երեկվա օրվա մասին, ապա ինչ-որ սքանչելի ակնթարթների մասին, հետո ասացիք, որ հավանաբար վաղուց արդեն ես նկատել եմ... բայց ի՞նչ։ Դուք չավարտեցիք... Բարի եղեք ասել հիմա։ Ես պահանջում եմ, լսո՞ւմ եք...

Նինան նրան էր նայում, աչքերի մեջ թե՛ շարաճճի, թե՛ խոստումնալից, թե՛ միաժամանակ քնքուշ ժպիտ շողացնելով... Բոբրովի սիրտը նվաղեց կրծքում, և նա նորից նախկին քաջության հորդումն զգաց։ «Նա գիտե, նա ինքն է ուզում, որ ես խոսեմ»,— մտածեց նա, իրեն սիրտ տալով։

Նրանք կանգ առան կառամատույցի պոնկին, ուր բոլորովին մարդ չկար։ Երկուսն էլ հուզված էին։ Նինան սպասում էր պատասխանի, վայելելով իր սկսած խաղի սրությունը, Բոբրովը բառեր էր փնտրում, ծանր էր շնչում ու հուզվում էր։ Բայց այդ ժամանակ լսվեցին ազդանշանային շչակների հատու հնչյունները, և կայարանում իրարանցում սկսվեց։

— Ուրեմն, լսեցիք... Ես սպասում եմ,— շշնջաց Նինան, արագ հեռանալով Բոբրովից։ — Ինձ համար դա շատ ավելի կարևոր է, քան դուք կարծում եք...

Երկաթուղու շրջադարձի ետևից դուրս պրծավ սև ծխի մեջ կորած ճեպընթացը։ Մի քանի բոպե անց, ուղեսլաքների վրա դիկդիկալով, սահուն և արագ դանդաղեցրեց ընթացքը և կանգ առավ կառամատույցի մոտ... Ամենավերջում կցված էր երկարուկ, թարմ կապույտ գույնով փայլող պաշտոնական վագոնը, դեպի ուր սուրացին բոլոր դիմավորողները։ Վագոնի ուղեկցորդները խոնարհանքով նետվեցին բացելու վագոնի դռները։ Անմիջապես, աղմուկով բացվելով, վագոնից դուրս ընկավ ծալովի սանդուղքը։ Կայարանի պետը, հուզմունքից ու վազվզոցից կարմրատակած, այլայլված դեմքով շտապեցնում էր պաշտոնական վագոնը անջատելով զբաղված բանվորներին։ Կվաշնինը N երկաթուղու գլխավոր բաժնետերերից մեկն էր, ու դրա ճյուղերով երթևեկում էր այնպիսի մեծարանքով, որին ոչ միշտ էր արժանանում երկաթուղային թեկուզ ամենաբարձրագույն ղեկավարությունը։

Վագոն մտան միայն Շելկովնիկովը, Անդրեան և երկու ազդեցիկ բելգիացի ինժեներներ։ Կվաշնինը նստած էր բագկաթոռի մեջ, իր վիթխարի ոտքերը չոած ու փորը դուրս գցած։ Կլոր ֆետրե շլյապա էր դրել, որի տակից փայլում էին հրաշեկ մազերը, դերասանի պես սափրած դեմքը՝ թուերը կախ, եռածալ ծնոտով, խոշոր պենսներով ծածկված դեմքը թվում էր քնատ ու դժգոհ։ Շրթունքներին արհամարհական, թթու արտահայտություն կար։

Ինժեներներին տեսնելով, վեր կացավ ճիգ գործադրելով։

— Բարև ձեզ, պարոնայք,— ասաց նա խռպոտ բասով, իր ահռելի, թմփլիկ ձեռքը հերթով մեկնելով նրանց, հարգալիր հպումների համար։ —Դե-հ, ի՞նչ կա ձեր գործարանում։

Շելկովնիկովն սկսեց զեկուցել պաշտոնական փաստաթղթի լեզվով։ Գործարանում ամեն ինչ բարեհաջող է։ Սպասում են միայն Վասիլի Տերենտևիչի գալստյանը, որպեսզի նրա ներկայությամբ թողարկեն դոմնային վառարանը և նոր շինությունների հիմքը դնեն...Բանվորներ և վարպետներ են վարձված լավ գներով։ Պատվերների հոսքն այնքան մեծ է, որ դրդում է հնարավորին չափ շուտ ձեռնամուխ լինել աշխատանքներին։

Կվաշնինը լսում էր, դեմքով դարձած դեպի լուսամուտը և ցրված զննում էր վագոնի մոտ հավաքված ամբոխին։ Նրա դեմքը, խորշագին հոգնածությունից զատ, ոչինչ չէր արտահայտում։

Հանկարծ նա ընդհատեց տնօրենին, անսպասելի հարցով..

— Է՞... լսեք... Ո՞վ է այդ աղջիկը։

Շելկովնիկովը դուրս նայեց լուսամուտից։

— Այ, նա... գլխարկի վրա դեղին փետուրով,— անհամբերությամբ, մատով ցույց տվեց Կվաշնինը։

— Ախ, նա՞,— ցնցվեց տնօրենը և թեքվելով Կվաշնինի ականջին, խորհրդավոր շշնջոցով ասաց ֆրանսերեն։ —Մեր պահեստի վարիչի աղջիկն է։ Ազգանունը Զիննեկո է։

Կվաշնինը ծանր-ծանր գլխով արեց։ Շելկովնիկովը շարունակեց զեկույցը, բայց գլխավորը կրկին ընդհատեց նրան.

— Զիննեկո... Զիննեկո... —ձգեց նա մտազբաղ, առանց աչքը լուսամուտից կտրելու— Զիննեկո... Իսկ ո՞վ է այդ Զիննեկոն... Որտե՞ղ եմ այդ ազգանունը լսել... Զիննեկո՞...

— Նա մեր պահեստի վարիչն է,— հարգալիր և դիտավորյալ անտարբեր կրկնեց Շելկովնիկովը։

— Ախ, հիշեցի,— կռահեց հանկարծ Վասիլի Տերենտևիչը։— Նրա մասին ինձ Պետերբուրգում են ասել... Դե-հ, շարունակեք, խնդրեմ։

Նինան կանացի անսխալ զգացողությամբ հասկացավ, որ հենց իրեն է նայում Կվաշնինը և իր մասին է խոսում տվյալ պահին։ Նա թեթևակի շրջվեց, բայց սեթևեթ հաճույքից շառագունած նրա դեմքը, իր սիրունիկ բոլոր խալերով հանդերձ, լավ երևում էր Վասիլի Տերենտևիչին։

Վերջապես զեկույցը վերջացավ, և Կվաշնինը ելավ հարթակ, որը ապակյա ընդարձակ տաղավարի տեսքով կառուցված էր վագոնի ետևում։

Դա մի պահ էր, որի հավերժացման համար, ինչպես մտածեց Բոբրովը, լուսանկարչական մի լավ ապարատ էր միայն պակասում։ Կվաշնինը չգիտես ինչու հապաղում էր ցած իջնել և կանգնած էր ապակյա պատի ետևում, իր զանգվածեղ կազմվածքով բարձրանալով վագոնի մոտ խռնված խմբի վրա, ոտքերը լայն չոած և խորշանքի արտահայտությունը՝ դեմքի վրա, որը նման էր վատ քանդակած ճապոնական կուռքի դեմքի։ Գործատիրոջ այդ անշարժությունը, հավանորեն, շփոթեցրել էր դիմավորողներին. վաղօրոք նախապատրաստած ժպիտները քարացել էին նրանց ծռմռված շրթունքներին, այնինչ վեր հառած աչքերը Կվաշնինին էին նայում ստորաքարշությամբ, համարյա վախով։ Դռնակի երկու կողմերում զինվորի կեցվածքներով քարացել էին

վագոնի կտրիճ ուղեկցորդները։ Պատահմամբ, ավելի շուտ նայելով Նինայի դեմքին, Բոբրովը դառնությամբ միևնույն ժպիտը և իր կուռքին նայող վայրենու միևնույն տագնապալի սարսափը նկատեց նրա դեմքին։

«Մի՞թե սա լոկ անշահախնդիր, հարգալից զարմանք է տարեկան երեք հարյուր հազար եկամուտի առաջ,— մտածեց Անդրեյ Իլյիչը։ —Իսկ ի՞նչն է ստիպում բոլոր այս մարդկանց այսպես ստորացած ծռմռվել մի մարդու առաջ, որը նույնիսկ ուշադիր չի էլ նայի նրանց վրա երբեք։ Թե՞ քծնանքի հոգեբանական ինչ-որ անբմբռնելի օրենք է առկա»։

Մի քիչ կանգնելով, Կվաշնինը վճռեց շարժվել և, փորն առաջ գցած, գնացքի սպասավորների հոգածու օգնությամբ, աստիճաններով կառամատույց իջավ։

Արագորեն աջ ու ձախ ետ քաշվող ամբոխի հարգալիր խոնարհումներին ի պատասխան, անտարբերությամբ թափահարեց գլուխը, ներքևի շրթունքն առաջ պարզած, և քթի մեջ ասաց.

— Պարոնայք, դուք ազատ եք մինչև վաղը։

Չհասած գնացքին, նշանով իր մոտ կանչեց տնօրենին։

— Ուրեմն, Սերգեյ Վալերիանովիչ, ինձ կներկայացնեք նրան,— կիսաձայն ասաց նա։

— Չինենկոյի՞ն,— պատրաստակամ կռահեց Շելկովնիկովը։

— Դե հա, գրողը տանի,— հանկարծակի բորբոքվելով, թնդաց Կվաշնինը։ —Մենակ թե ոչ այստեղ, ոչ այստեղ,— թևքից բռնած կանգնեցրեց արդեն առաջ նետված տնօրենին։ —Երբ գործարանում կլինեմ...

7

Ջարի աշխատանքների սկիզբը և նոր դոմնային կամպանիայի բացումը տեղի ունեցավ Կվաշնինի գալուց չորս օր հետո։ Ենթադրվում էր այդ երկու իրադարձությունները նշել հնարավորին չափ մեծ հանդիսավորությամբ, որի համար էլ հարևան Կրուտոգորսկի, Վորոնինսկի և Լվովի մետալուրգիական գործարաններին վաղօրոք տպագիր հրավիրատոմսեր էին ուղարկել։

Վասիլի Տերենտևիչից հետո Պետերբուրգից եկան վարչության ևս երկու անդամներ, բելգիացի չորս ինժեներներ և մի քանի խոշոր բաժնետերեր։ Գործարանի ծառայողների միջև լուրեր էին պտտվում, որ շքահանդեսի ճաշկերույթի համար վարչությունն իբր երկու հազար ռուբլի է բաց թողել, սակայն այդ լուրերը առայժմ ոչնչով չէին արդարացել, խմիչքների ու մթերքի գնումը ծանր տուրքի պես ընկավ կապալառուների վրա։

Շատ հաջող օր բաժին ընկավ հանդիսությանը. մեկը վաղ աշնան այն վառ, թափանցիկ օրերից, երբ երկինքն այնքան թանձր, կապույտ ու խորունկ է թվում, իսկ զով օդից նուրբ, թունդ գինու բույր է տարածվում։ Օգամուղ նոր մեքենայի և բեսսեմերյան վառարանի հիմքերի համար փորված քառակուսի փոսերը «Ո»-աձև շրջապատված էին բանվորների խիտ ամբոխով։ Կենդանի այդ պարսպի կենտրոնում, ուղիղ փոսի պռնկին հասարակ չներկած սեղան էր դրված, ճերմակ սփռոցով ծածկված, որի վրա դրված էին խաչն ու ավետարանը, սուրբ ջրի համար մետաղյա գավաթի ու ցողիչի կողքին։ Կանաչ, ոսկեկար խաչերով շուրջառն արդեն հագած հոգևորականը կանգնած էր քիչ հեռվում, երգչաց դաս դառնալու ցանկություն հայտնած տասնհինգ բանվորների առջևում։ «Ո»-ի բաց մասը գրավել էին ինժեներները, կապալառուները, ավագ տասնապետները, գրասենյակային աշխատողները՝ ավելի քան երկու հարյուր հոգանոց խայտաբղետ, աշխույժ մի խումբ։ Հողաթմբի վրա տեղ էր գրավել լուսանկարիչը, որը սև ծածկոցով իրեն ու ապարատը ծածկած, վաղուց էր ջանում հարմար կետ ընտրել։

Տասը րոպե անց մոխրագույն հոյակապ եռաձիով Կվաշնինը արագ մոտեցավ հրապարակին։ Կառքի մեջ նա մենակ էր նստած, որովհետև, ամենայն ցանկությամբ, ոչ ոք չէր կարող նրա կողքին տեղավորվել։ Կվաշնինից հետո հինգ թե վեց կառք էլ եկան։ Վասիլի Տերենտևիչին տեսնելով, բանվորները բնազդով զգացին, որ «ամենամեծը» նա է, և տեղնուտեղը, մի մարդու պես հանեցին գլխարկները։ Կվաշնինը վեհապանծորեն առաջ անցավ ու գլխով արեց հոգևորականին։

— Օրհնյալ է աստված, այժմ և միշտ, և հավիտյանս հավիտենից,— մեկեն տիրած լռության մեջ հնչեց հոգևորականի դողդոջուն, խոնարհ ու ռնգային տենորը։

— Ամե՜ն,— բավական ներդաշնակ միացավ հանպատրաստից երգչախումբը։

Բանվորները, որ շուրջ երեք հազար մարդ կլինեին, ճիշտ նույնքան համատեղ, ինչպես Կվաշնինին, խոնարհվեցին, լայնլայն խաչակնքեցին, խոնարհեցին գլուխները և հետո, վեր բարձրացնելուց հետո, թափահարեցին մազերը... Բոբրովն սկսեց

ակամա նրանց հետևել։ Առջևում երկու շարքով կանգնած էին ռուս ծանրումեծ քարհատները, բոլորն անխտիր՝ սպիտակ գոգնոցներով, համարյա բոլորը վուշե մազերով ու շեկ մորուքներով, նրանց ետևում ձուլողներն ու դարբիններն էին ֆրանսիական ու անգլիական բանվորներից փոխառնած մուգ ու լայն բլուզներով, երկաթի մրից երբեք չվայլվող դեմքերով, նրանց արանքներում երևում էին նաև օտարերկրացի ուվրիերների[1] կորաքիթ կիսադեմերը, ետևում, ձուլողներից հետո, գլուխները բարձրացրած նայում էին կրե վառարանների բանվորները, որոնց հեռվից կարելի էր ճանաչել դեմքերից, որ ասես ալրաթաթախ լինեին, և բորբոքված, ուռած, կարմիր աչքերից...

Ամեն անգամ, երբ երգչախումբը ներդաշնակ, թեև փոքրինչ քթի մեջ, երգում էր «Փրկյա ծառային քո փորձությունից, տիրամայր», բոլոր երեք հազարն էլ միանման կամացուկ խշխշոցով իրենց մոլեռանդ խաչակնքումներն էին անում և խոր գլուխ տալիս։ Տարերային, հուժկու, միաժամանակ մանկական ու հուզիչ ինչ-որ բան թվաց Բոբրովին մոխրագույն հսկայական զանգվածի այդ ընդհանուր աղոթքի մեջ։ Վաղը բոլոր բանվորները կանգնեն իրենց ծանր, դժվարին, տասներկուժամյա աշխատանքին։ Ով գիտե, նրանցից որի՞ն է ճակատագրով վիճակված այդ աշխատանքում կյանքով հատուցել. պոկվել-ընկնել բարձր փայտամածներից, խանձվել հալած մետաղով, թաղվել խճի կամ աղյուսի տակ։ Եվ արդյոք ճակատագրի այդ անխախտ վճռի մասին չե՞ն մտածում նրանք հիմա, մինչև գոտկատեղը խոնարհվելով ու շեկ գանգուրները թափահարելով, այն ժամանակ, երբ երգչախումբը խնդրում է տիրամորը փրկել յուր ծառային... Եվ ո՞ւմ, եթե ոչ միայն աստվածամորը կարող են ապավինել քաջարի ու պարզ սրտի տեր այս մեծ երեխաները, այս խոնարհ զինվորները, որոնք ամեն օր ելնում են իրենց խոնավ ու ցուրտ գետնափորներից՝ համբերության ու խիզախության սովորական սխրանքի։

Այսպես կամ համարյա այսպես էր մտածում մշտապես լայն, բանաստեղծական պատկերների հակված Բոբրովը, ու թեև վաղուց արդեն նա ետ էր վարժվել աղոթելուց, բայց ամեն անգամ, երբ հոգևորականի դողդոջ, հեռավոր ձայնին հաջորդում էր երգչախմբի միահամուռ բացականչությունը, Անդրեյ Իլյիչ

[1] Բանվորների (ֆրանս.)։

մեջքի և ծոծրակի վրայով նյարդային գրգռման սառն ալիք էր բարձրանում։ Ինչ-որ ուժեղ, հնազանդ ու անձնազոհ բան կար այս մոխրագույն աշխատավորների միամիտ աղոթքի մեջ, որոնք հավաքվել էին աստված գիտե, որտեղից, հեռավոր նահանգներից, ծանր ու վտանգավոր աշխատանքի համար կտրված հարազատ, սովոր անկյունից...

Մաղթանքն ավարտվեց։ Կվաշնինն անփույթ տեսքով փոսի մեջ նետեց ոսկեդրամը, բայց բահը ձեռքին կռանալ ոչ մի կերպ չկարողացավ, նրա փոխարեն դա արեց Շելկովնիկովը։ Հետո ամբողջ խումբն ուղղվեց դոմնային վառարանների կողմը, որոնք իրենց կլոր ու սև, զանգվածեղ աշտարակներով ելնում էին քարե հիմքերի վրա։

Հինգերորդ, նոր կառուցած վառարանը, ինչպես տեխնիկական ժարգոնով են ասում, «հասած» էր աշխատում։ Ներքևում, մեկ արշին բարձրության վրա բացված անցքից հրեղեն-սպիտակ, խլթխլթացող լայն հորձանքով խփում էր հալած խարամը, որից չորս կողմ էին թռչում ծծմբի երկնագույն կրակներ։ Թեք փողրակով խարամը հոսում էր հիմքի եզրին ուղղաձիգ դրված կաթսաների մեջ և քարանալով դառնում կանաչավուն թանձր զանգված, սառնաշաքարի նման։ Վառարանի ամենաբարձր կատարին գտնվող բանվորները շարունակում էին առանց դադարի վառարանի մեջ հանքաքար ու քարածուխ լցնել, որոնք վեր էին հանվում երկաթյա վագոնիկներով։

Քահանան բոլոր կողմերից վառարանը ցողեց սուրբ ջրով և վախեցած շտապելով, ծերունական սայթաքուն քայլերով մի կողմ քաշվեց։ Մետաղահալման վարպետը, ջղուտ, սևադեմ մի ծերունի, խաչակնքեց ու թքեց ձեռքերի մեջ։ Նույնն արեցին նաև նրա չորս օժանդակ բանվորները։ Հետո նրանք գետնից շատ երկար պողպատյա մի ձող առան, երկար ճոճեցին և միաժամանակ կռնչալով, ձողով խփեցին վառարանի ամենատակին։ Ձողը զրնգոցով դիպավ կավե խցուկին։ Նայողները վախեցած-նյարդային սպասումով կկոցեցին աչքերը, մի քանիսը ետ քաշվեցին։ Բանվորները մի անգամ էլ խփեցին, հետո երրորդ, չորրորդ անգամ... ու հանկարծ ձողի ծուռ ծայրի տուկից անասելի վառ հեղուկ մետաղի շատրվանը խփեց։ Այդ ժամանակ մետաղահալման վարպետը ձողի շրջանաձև շարժումներով լայնացրեց անցքը, թուջը դանդաղորեն հոսեց ավազե ակոսով, կրակե դեղին երանգ ընդունելով։ Փայլուն, խոշոր աստղերի ամբողջ խրձեր

գեսուդեն էին թռչում վառարանի անցքից, հնչեղ ճռճռոցով անհետանում օդի մեջ։ Այդ դանդաղ, ասես ծուլորեն հոսող մետաղից այնպիսի սարսափելի ջերմություն էր բարձրանում, որ անընտել հյուրերն ամբողջ ժամանակ ետ-ետ էին քաշվում ու ձեռքերով ծածկում այտերը։

Դոմնային վառարանների մոտից ինժեներներն ուղղվեցին դեպի օդամուղ մեքենաների բաժինը։ Կվաշնինը նախօրոք կարգադրել էր այնպես, որ իր հետ եկած բաշնետերերը գործարանը տեսնեն իր ամբողջ վիթխարի մեծությամբ և եռուզեռի մեջ։ Նա կատարելապես ստույգ էր հաշվի առել, որ իրենց համար ուժեղ և բացարձակապես նոր բազում տպավորություններից ապշահար այդ պարոնները հետո հրաշքներ են պատմելու իրենց լիազորած ընդհանուր ժողովին։ Եվ խորապես գիտենալով գործարար մարդկանց հոգեբանությունը, Վասիլի Տերենտևիչն արդեն վճռված գործ էր համարում նոր և անձամբ իր համար շահավետ արժեթղթերի բացթողումը, ինչին մինչ այժմ համաձայնություն չէր տալիս ընդհանուր ժողովը։

Եվ բաշնետերերն իրոք ապշահար էին գլխացավի աստիճան, ոտքերը դողալու աստիճան... Օդամուղ մեքենաների շենքում նրանք, հուզմունքից գունատված, լսեցին, թե ինչպես հորիզոնական չորս երկսաժենանոց մխոցներով կուտակված օդը սուրում է դրանցով այնպիսի ոռնոցով, որը ստիպում է ցնցվել շինության քարե պատերը։ Թուջե, զանգվածեղ, երկու գրկաչափ այդ խողովակներով օդն անցնում էր կաուպերների միջով, դրանց մեջ այրվող գազով տաքանում մինչև վեց հարյուր աստիճան և այդտեղից արդեն թափանցում դոմնային վառարանի մեջ, հանքաքարն ու ածուխը հալեցնելով իր այրող հոսանքով։ Օդամուղ բաժինը ղեկավարող ինժեները բացատրություն՝ էր տալիս։ Ու թեև նա հերթով կռանում էր բաշնետերերի ականջներին ու բղավում՝ էր կոկորդով մեկ, մեքենաների զարհուրելի գվվոցի մեջ նրա բառերը չէին լսվում, թվում էր միայն, որ նա անձայն ու լարված շրթունքներն է շարժում։

Հետո Շելկովնիկովը հյուրերին տարավ պուդլինգային վառարանների սրահը՝ երկաթյա բարձր այս շինությունն այնքան երկար էր, որ մի ծայրից մյուս ծայրը հազիվ-հազ դիտվող լուսաշերտ էր թվում։ Սրահի պատերից մեկի երկարությամբ քարաշեն հարթակ էր ձգվում, որի վրա տեղավորված էին պուդլինգային քսան վառարան՝ անիվների վրայից հանած վագոնի ձև

ունեին սրանք։ Այս վառարանների մեջ հեղուկ թուջը խառնվում էր հանքաքարին ու վերափոխվում պողպատի։ Պատրաստի մետաղը, խողովակներով ցած հոսելով, լցվում էր երկաթյա բարձր կաղապարների մեջ, որոնք նման էին անտակ տուփերի, բայց վերևից բռնիչներ ունեին, և քարանում դրանց մեջ ամբողջական կտորներով, ամեն մեկը՝ քառասուն փութ։ Սրահի աղատ կողմը զբաղված էր ռելսուղիով, որի վրայով փնչացնելով, թըշշացնելով ու դիկդիկալով գնում-գալիս էին շոգեամբարձիչները, ճկուն կնճիթներ ունեցող հնազանդ և ճարպիկ կենդանիներնման։ Մի ամբարձիչը կեռիկով բռնում էր կաղապարի բռնիչից, վեր բարձրացնում, ու դրանից ծանրորեն ցած էր ընկնում պողպատի կտորը երկար, ուղիղ հեսանի տեսքով, կուրացուցիչ կարմրությամբ։ Բայց մինչ այդ կտորը կհասցներ գետին ընկնել, բանվորը, անսովոր ճարպկությամբ, ձեռքի հաստության շղթայով փաթաթում էր կտորը։ Երկրորդ ամբարձիչը, կեռով այդ շղթան բռնելով, սահուն կերպով «ապրանքը» օդի միջով տանում ու դնում էր մյուսների կողքին, հարթակի վրա, որն ամբացված էր երրորդ ամբարձիչին։ Երրորդն այդ բեռը քարշ էր տալիս սրահի մյուս ծայրը, որտեղ չորրորդը՝ կեռի փոխարեն աքցաններ ունեցող ամբարձիչը, վագոնի վրայից հանում էր «ապրանքները» և իջեցնում հատակի տակ գտնվող գազի վառարանների բացված անցքերից ներս։ Ի վերջո, հինգերորդ ամբարձիչը հանում էր դրանք նույն այդ անցքերից, ջերմությունից լիովին սպիտակած, հերթով դնում էր հորիզոնական լիսեռի վրա՝ չափազանց արագ պտտվող, սրատամ, կլոր անվի տակ, և քառասուն փթանոց պողպատե «ապրանքը» հինգ վայրկյանում երկու կես էր լինում, ինչպես փափուկ պրյանիկի մի կտոր։ Յուրաքանչյուր կեսն ընկնում էր շոգեմուրճի յոթհարյուր փթանոց մամլիչի տակ, որը սեղմում էր պողպատն այնպիսի ուժով ու թեթևությամբ, կարծես դա մոմի կտոր լիներ։ Բանվորներն անմիջապես վերցնում էին դրանց ձեռնասայլերի վրա ու վազելով քարշ տալիս-տանում, դիմացից եկող բոլորին ողողելով շիկացած երկաթի փայլով ու տաքությամբ։

Ապա Շելկովնիկովն իր հյուրերին ցույց տվեց ռելսագլանման տեղամասը։ Շիկացած մետաղի հսկայական ձողը մի ամբողջ շարք հաստոցների միջով անցնելով, մեկից մյուսն էր անցնում գլանիկների վրայով, որոնք պտտվում էին հատակի տակ, և մակերևույթին միայն դրանց ամենավերևի մասն էր

երեում։ Զողը մտնում էր մի անցքի մեջ, որը գոյացնում էին մետաղյա, տարբեր կողմեր պտտվող երկու գլաններ, և առաջանում էր դրանց արանքով, ստիպելով լայնանալ ու ցնցվել լարուցից։ Հետո ձողը մեկ ուրիշ հաստոց էր ընդունում, գլանների միջև եղած ավելի փոքր անցքով։ Ամեն մի հաստոցից հետո մետաղի կտորը դառնում էր ավելի բարակ ու երկար, մի քանի ենգամ ռելսագլանման հոսքով ետուառաջ շարժվելով, կամաց-կամաց տասը սաժենանոց կարմիր ռելսի ձև էր ընդունում։ Տասնհինգ հաստոցների բարդ շարժումը ղեկավարում էր ընդամենը մեկ մարդ, որը տեղավորված էր շոգեմեքենայի վերևում, նավապետի կամրջակ հիշեցնող մի տեղում։ Նա բռնակն առաջ էր մղում, և բոլոր գլաններն ու գլանիկները սկսում էին պտտվել մի կողմի վրա, ետ էր քաշում՝ գլաններն ու գլանիկներն սկսում էին հակառակ ուղղությամբ պտտվել։ Երբ ռելսը ձգվում էր վերջնականապես, կլոր սղոցը, խլացուցիչ վնգոցով և ոսկե կայծերի շատրվան սփռելով, երեք մասի էր բաժանում ռելսը։

Ապա բոլորն անցան խառատային արտադրամաս, ուր գըլխավորապես վագոնների և շոգեքարշերի անիվներ էին պատրաստվում։ Այստեղ, ամբողջ սրահով մեկ անցնող, առաստաղից կախ պողպատյա հաստ առանցքից կաշվե փոկեր էին իջնում ու շարժման մեջ դնում ամենատարբեր մեծության ու ձևի երկու թե երեք հարյուր հաստոցներ։ Այդ փոկերն այնքան շատ էին և խաչաձևվում էին այնքան ուղղություններով, որ թողնում էին ամբողջական, խճճված և դողդողացող փոկային ցանցի տպավորություն։ Որոշ հաստոցների անիվներ պտտվում էին վայրկյանում քսան պտույտ արագությամբ, մի քանիսի արագությունն էլ այնքան դանդաղ էր, որ համարյա չէր նկատվում աչքով։ Պողպատյա, երկաթյա մետաղյա տաշեղները, երկար ու գեղեցիկ պարուրակների տեսքով, խիտ շերտով ծածկել էին հատակը։ Հյուրերին հենց այդտեղ էլ ցուցադրվեց պտուտակամերներ արտադրող մեքենան՝ պողպատյա երկու հսկայական, պարբերաբար ճպպացնող ծնոտների պես մի բան։ Երկու բանվոր այդ երախն էին մտցնում շիկացած երկարուկ ձողիկի ծայրը, մեքենան, հավասարաչափ կրծելով մետաղի կտորները, դրանք թքում էր գետնի վրա կատարելապես պատրաստ պտուտակամերների տեսքով։

Երբ, խառատային արտադրամասից ելնելիս, Շելկովնիկովը բաժնետերերին առաջարկեց նայել գործարանի հպարտությունը՝ ինչհարյուր ուժանոց «Քոմփաունդը» (ամբողջ ժամանակ բացառապես նրանց էր դիմում իր բացատրություններով), ապա պետերբուրգցի պարոնայք արդեն բավականաչափ շշմած ու այլայլված էին տեսած ու լսած ամեն ինչից։ Նոր տպավորություններն այլևս ոչ մի հետաքրքրություն չէին ներշնչում, այլ ավելի սաստիկ էին հոգնեցնում նրանց։ Դեմքերը կրակվում էին ռելսագլանման արտադրամասի տաքությունից, ձեռքերն ու կոստյումները կեղտոտվել էին խծխի մրից։ Տնօրենի առաջարկությանը նրանք համաձայնեցին, ըստ երևույթին, մի կերպ, որպեսզի միայն իրենց լիազորած ժողովի արժանապատվությունը չզցեն։

Ինչհարյուր ուժանոց «Քոմփաունդը» տեղավորված էր առանձին շենքում, որը շատ մաքուր էր ու չքեղ, լուսավոր պատուհաններով և խճանկար հատակով։ Չնայած մեքենայի վիթխարությանը, համարյա թիկոց չէր լսվում։ Յուրաքանչյուրը՝ չորս սաժենանոց երկու մխոց, սահուն ու արագ ելնում-իջնում էին տախտակապատ գլանների մեջ։ Քսան ֆունտանոց անիվը, որի վրայով տասներկու ճոպան էր սահում, նույնպես անձայն ու արագ էր պտտվում, դրա լայն շարժումից մեքենայական բաժնի չորավուն, տաք օդը տատանվում էր ուժեղ, համաչափ հորձանքներով։ Այս մեքենան շարժման մեջ էր դնում թե՛ օդամուղները, թե՛ գլանման հաստոցները և թե՛ խառատային արտադրամասի բոլոր մեքենաները։

«Քոմփաունդը» դիտելուց հետո բաժնետերերը կատարելապես համոզված էին արդեն, որ փորձություններն ավարտվել են, սակայն անխոնջ Շելկովնիկովը հանկարծ նրանց գիմեց սիրալիր մի նոր առաջարկությամբ։

— Հիմա, պարոնայք, ես ձեզ ցույց կտամ ամբողջ գործարանի սիրտը, այն կետը, որտեղից նա կյանք է ստանում։

Նա ոչ թե տարավ, այլ համարյա քարշ տվեց նրանց շոգեկաթսաների բաժանմունքը։ Սակայն տեսած ամեն ինչից հետո «գործարանի սիրտը»՝ հինգ սաժեն երկարությամբ և մեկուկես սաժեն բարձրությամբ կոնաձև տասներկու կաթսաները, հոգնած բաժնետերերի վրա առանձնապես ազդու տպավորություն չգործեց։ Նրանց մտքերը վաղուց արդեն դառնում էին սպասվող ճաշկերույթի շուրջ, և նրանք այլևս ոչինչ չէին հարցնում առ։ ղվա պես, այլ միայն ցրված ու անտարբեր գլխով էին անում՝ Շելկովնիկովի բոլոր բացատրություններին ի պատաս-

խան։ Երբ տնօրենը վերջացրեց, բաժնետերերը թեթևացած շունչ քաշեցին և շատ անկեղծորեն, չթաքցրած հաճույքով սկսեցին սեղմել նրա ձեռքը։

Հիմա միայն Անդրեյ Իլյիչն էր մնացել շոգեկաթսաների մոտ։ Խորն ու կիսամութ, քարաշեն հորի եզրին կանգնած, ուր տեղավորված էին հնոցները, նա երկար նայում էր ցած, մինչև գոտկատեղը մերկ վեց մարդկանց ծանր աշխատանքին։ Նրանց պարտականությունն էր անընդմեջ, գիշեր թե ցերեկ, ածուխ շպրտել հնոցների բաց անցքերը։ Ստեպ-ստեպ զրնգոցով բացվում էին թուջե կլոր բերանակալները և այդ ժամանակ երևում էր, թե հնոցների մեջ ինչպես է գվվոց-ոռնոցով խլթխլթում վառ սպիտակ մոլեգնած բոցը։ Բանվորների՝ կրակից շորացած, ներծծված ածխափոշուց սևացած մերկ մարմինները ստեպ-ստեպ ցած էին կռանում, ընդ որում նրանց մեջքերի վրա ցայտուն կերպով գծագրվում էին բոլոր մկանները և ողնաշարի բոլոր ողները։ Ստեպ-ստեպ նիհար, ջղուտ ձեռքերը լիքը թի ածուխ էին վերցնում, ապա արագ, ճարպիկ շարժումով մտցնում դա բոցավառվող բաց երախը։ Երկու ուրիշ բանվոր, վերևում կանգնած ու նույնպես ոչ մի վայրկյան դադար չտալով, ցած էին շպրտում ածխի նորանոր շեղջեր, որ հսկայական սև պատնեշների պես կիտված էր կաթսայական բաժանմունքի շուրջը։ Ինչ-որ ճնշող, անմարդկային բան պատկերվեց Բոբրովին՝ հնոցապանների անվերջանալի աշխատանքի մեջ։ Թվաց, թե գերբնական մի ուժ ամբողջ կյանքում գամել է նրանց այդ բաց երախներին, և-ներբանք, սարսափելի մահվան սպառնալիքի տակ, պետք է առանց հոգնության կերակրեն ու կերակրեն անկշտում ու ագահ հրեշին...

— Ի՞նչ է, կոլեգա, նայում եք, թե ձեր Մոլոքին ինչպե՞ս են պարարտեցնում,— իր ետևում ուրախ և բարեհոգի ձայն լսեց Բոբրովը։

Անդրեյ Իլյիչը ցնցվեց և քիչ էր մնացել ընկներ հնոցի փոսը։ Նրան ապշեցրեց, համարյա ցնցեց բժշկի կատակային բացականչության և իր սեփական մտքերի այդ անսպասելի համապատասխանությունը։ Նույնիսկ ինքն իրեն տիրապետելուց հետո, երկար ժամանակ չէր կարողանում ձերբազատվել նման զուգադիպության տարօրինակությունից։ Նրան մշտապես հետաքրքրում և հանելուկային էին թվում այն դեպքերը, երբ մտածելով որևիցե նյութի շուրջ կամ որևիցե բան կարդալով գրքում, տեղնուտեղը նույնի մասին խոսակցություն էր լսում իր կողքին։

— Կարծես թե ձեզ վախեցրի՞, թանկագինս,— հարցրեց բժիշկը, ուշադրությամբ նայելով Բոբրովի դեմքին։— Ներողություն եմ խնդրում։

— Այո, մի քիչ... այնքան անլսելի մոտեցաք... ես ամենևին չէի սպասում։

— Է՛հ, սիրելիդ իմ Անդրեյ Իլյիչ, եկեք բուժենք մեր նյարդերը։ Բանի պետք չեն... Լսեք իմ խորհուրդը. արձակուրդ վերցրեք ու մի տեղ գնացեք՝ արտասահման... Ի՞նչ ունեք այստեղ ձեզ բորբոքելու։ Մի կես տարի ձեր քեֆին ապրեք. լավ գինիներ խմեք, ինչքան կարող եք ձիավարեք, սեր անելն էլ՝ իր հերթին...

Բժիշկը մոտեցավ հնոցարանի եզրին։

— Այ քեզ գեհե՛ն,— բացականչեց նա, ցած նայելով։— Այս ինքնաեռներից յուրաքանչյուրն ինչքա՞ն պիտի կշռի։ Կարծում եմ, մի ութ հարյուր փո՞ւթ։

— Ոչ, ավելի շատ։ Մեկուկես հազար։

— Օյ, օյ, օյ... Իսկ թե սրա մտքով անցնի... պայթե՛լ... Տպավորիչ տեսարան կլինի, հը՞։

— Շա՜տ տպավորիչ, բժիշկ։ Հավանորեն, այս բոլոր շինություններից քարը քարի վրա չի մնա...

Գոլդբերգը գլուխն օրորեց և բազմանշանակ սուլեց։

— Իսկ ինչի՞ց կարող է դա կատարվել։

— Պատճառները տարբեր են լինում... բայց ավելի հաճախ կատարվում է այսպես. երբ կաթսայի մեջ շատ քիչ ջուր է մնում, ապա պատերն ավելի ու ավելի են շիկանում, համարյա կարմրում են։ Այդ ժամանակ եթե կաթսայի մեջ ջուր լցնես, ապա իսկույն հսկայական քանակության գոլորշի է ստացվում, պատերը չեն դիմանում ճնշմանը, և կաթսան պայթում է։

— Այնպես որ դիտավորյալ կարելի՞ է դա անել։

— Ինչքան ուզենաք... Ձե՞ք ուզում արդյոք փորձել։ Երբ ջուրը լրիվ կընկնի ջրաչափի մեջ, պետք է միայն դարձնել կափույրը... տեսնո՞ւմ եք, փոքրիկ կլոր լծակը... Եվ վերջ։

Բոբրովը կատակում էր, սակայն նրա ձայնը տարօրինակ լուրջ էր, իսկ աչքերը սևեռ էին ու տրտում։ «Սատանան գիտե նրան,— մտածեց բժիշկը,— լավ մարդ է, բայց և այնպես... խելառ է...»։

— Իսկ դուք ինչո՞ւ ճաշկերույթի չգնացիք, Անդրեյ Իլյիչ,— հարցրեց Գոլդբերգը, հեռանալով հնոցարանից,— գոնե կնայեիք, թե լաբորատորիայից ինչ ձմեռային այգի են սարքել։ Իսկ սպասքավորումը ուղղակի զարմանք բան է։

— Ահ, դրանց... Տանել չեմ . կարողանում ինժեներական ճաշկերույթները,— դեմքը կնճռոտեց Բոբրովը։— Գլուխ են գովում, բղավում են, այլանդակ կերպով քծնում մեկը մյուսին, հետո էլ՝ այդ անփոփոխ հարբած կենացները, որոնք արտասանելիս հռետորներն իրենց ու հարևանների վրա գինի են լցնում... Զզվելի է...

— Այո, այո, միանգամայն ճիշտ է,— ծիծաղեց բժիշկը։— Սկզբին ես հասա։ Կվաշնինը ոտից գլուխ հոյակապ էր. «Ողորմած պարոնայք, ինժեների կոչումը բարձր ու պատասխանատու կոչում է։ Ռելսե ճանապարհի, դոմնային վառարանի և հանքահորի հետ նա երկրի խորքն է տանում լուսավորության հունդերը, քաղաքակրթության ծաղիկները և...» էլի ինչ-որ պտուղներ, շարունակությունը լավ չեմ հիշում... Բայց ի՞նչ օրեր-խարդախն է... «Ուրեմն, համախմբվենք, պարոնայք, ու բարձր պահենք մեր բարերար արվեստի սրբազան դրոշը...»։ Դե, իհարկե, խելահեղ ծափահարություններ։

Մի քանի քայլ նրանք լուռ անցան։ Բժշկի դեմքը հանկարծ մռայլվեց, և նա սկսեց՝ ձայնի մեջ շարություն.

— Այո։ Բարերար արվեստ։ Իսկ բանվորների բարաքները տաշեղներից են պատրաստված։ Հիվանդներին թիվ չկա... երեխաները ճանճերի պես կոտորվում են։ Սա էլ քեզ լուսավորության հունդեր։ Տեսնես ինչ պիտի երգեն, երբ որովայնային տիֆը մոլեգնի Իվանկովոյում։

— Ի՞նչ եք ասում, բժիշկ։ Մի՞թե արդեն հիվանդներ կան։ Դա անասելի սարսափելի բան կլիներ նման խտության դեպքում։

Բժիշկը կանգ առավ, դժվարությամբ շունչը տեղը բերելով։

— Ինչպե՞ս կարող էր չլինել,— ասաց նա դառնությամբ։— Երեկ երկու հոգու բերեցին։ Մեկն այսօր առավոտյան մահացավ, իսկ մյուսը եթե չի մեռել, ապա երեկոյան անպայման կմեռնի... Իսկ մենք ոչ դեղորայք ունենք, ոչ շենք, ոչ փորձառու բուժակներ... Համբերեք, ի՞նչ փորձանքի են գալու նրանք...

— ավելացրեց Գոլդբերգը զայրացած և ինչ-որ մեկին բռունցքով սպառնաց օդի մեջ։

8

Չար լեզուներն սկսեցին իրենց գործը։ Կվաշնինի մասին, դեռևս մինչ նրա գալը, գործարանում այնքան անպարկեշտ անեկդոտներ էին պատմում, որ հիմա ոչ ոք չէր կասկածում, թե որն է Զիններկո ընտանիքի հետ նրա հանկարծակի մերձեցման իսկական պատճառը։ Տիկնայք այդ մասին էին խոսում երկիմաստ ժպիտներով, տղամարդիկ իրենց շրջապատում ցինիկ բացահայտությամբ իրերը կոչում էին իրենց անուններով։ Սակայն հաստատապես ոչ ոք ոչինչ չգիտեր։ Բոլորը հաճույքով սպասում էին գայթակղիչ սկանդալի։

Բամբասանքի մեջ ճշմարտության բաժին կար։ Այցելելով Զիններկո ընտանիքին, Կվաշնինը սկսեց ամեն օր երեկոներն այնտեղ անցկացնել։ Առավոտները, ժամը տասնմեկի մոտ, Շեպետովկայի տնտեսություն էր գալիս նրա մոխրագույն սքանչելի եռաձին, և կառապանն անփոփոխ զեկուցում էր, որ «պարոնը խնդրում է տիկնոջն ու օրիորդներին իր մոտ բարեհաճել նախաճաշի»։ Այդ նախաճաշերին կողմնակի մարդիկ չէին հրավիրվում։ Ուտեստեղենը պատրաստում էր ֆրանսիացի խոհարարը, որին Վասիլի Տերենտևիչն իր հետ էր մանում ծծում ամենուրեք, նույնիսկ նաև արտասահմանյան ուղևորությունների ժամանակ։

Կվաշնինի ուշադրությունն իր նոր ծանոթների հանդեպ շատ ինքնատիպ էր արտահայտվում։ Բոլոր հինգ օրիորդների նկատմամբ էլ անմիջապես ամուրի և զվարթ քեռու պես առանց ձևականությունների սկսեց պահել իրեն։ Երեք օր անց արդեն նրանց փաղաքշական անուններով էր կանչում, հայրանունն ավելացնելով՝ Շուրա Գրիգորևնա, Նինոչկա Գրիգորևնա, իսկ ամենափոքրի՝ Կասյայի Թմփլիկ, փոսիկով կզակը հաճախ էր բռնում ու հոգու հետ խաղում «ճստլիկ» ու «ճուտիկ» ասելով, որից աղջիկը կարմրում էր՝ արցունքն աչքին, բայց չէր ընդդիմանում։

Աննա Աֆանասևնան շինծու փնթփնթանությամբ կշտամբում էր նրան, որ լիովին երես կտա իր դստերերին։ Իսկապես, բավական էր նրանցից մեկնումեկը որևիցե թուցիկ ցանկություն հայտներ, որ տեղնուտեղը կատարվեր։ Մական մի կարգին չէր էլ ասել, ի դեպ, առանց որևիցե ետին մտքի, որ կկամենար հեծանիվ քշել սովորել, հաջորդ օրն իսկ ցրիչը Խարկովից մի սքանչելի մեքենա բերեց, որն ամենաքիչը երեք հար-

յուր ուրջի կարժենար... Ուստային, ինչ-որ դատարկ բանի վրա գրազ գալով, մի փութ կոնֆետ տարվեց, իսկ Կասյային կրծքազարդ, որի քարերը միմյանց հաջորդելով, նրա անվան տառերն էին[1]։ Նա մի անգամ լսեց, որ Նինան ձիավարություն ու ձիեր սիրում է։ Երկու օր անց նրա համար անգլիական զտարյուն զամբիկ բերեցին, որը կատարելապես ընտելացած էր կանացի թամբին։ Օրիորդները հմայված էին։ Նրանց տանը հեքիաթների բարի ոգի էր բնակություն հաստատել, որը կոահում ու իսկույն կատարում էր իրենց նվազագույն քմահաճույքը։ Աննա Աֆանասևնան աղոտ կերպով այդ առատաձեռնության մեջ օրինավոր ընտանիքի համար անպատշաճ մի բան զգում էր, բայց ոչ համարձակությունը, ոչ տակտը չէին բավականացնում, որ աննկատելիորեն հասկացնել տար Կվաշնինին։ Աննա Աֆանասևնայի շողոքորթ նկատողություններին ի պատասխան, նա միայն ձեռքն էր թափ տալիս և իր կոպտավուն, վճռական բասով պատասխանում էր.

— Էլ ինչ կասեք, թանկագինս... դատարկ բաներ եք հնարել...

Սակայն դուստրերից ոչ մեկին բացահայտորեն առավելություն չէր տալիս նա, բոլորին միանման սիրաշահելով, բոլորի հոգու հետ խաղ անելով՝ առանց ձևականությունների։ Երիտասարդները, որոնք մինչ այդ այցելում էին Զիններկոյենց տուն, պատրաստակամորեն ու անհետ չքացել էին։ Այնինչ մշտական հյուր էր դարձել Սվեժևսկին, որ նախկինում ընդամենը երկու թե երեք անգամ էր այդտեղ եղել։ Նրան ոչ ոք չէր հրավիրել, ինքն էր հայտնվել, ասես ինչ-որ մեկի գաղտնի հրավերով, և միանգամից կարողացել էր անհրաժեշտ դառնալ ընտանիքի բոլոր անդամների համար։

Ի դեպ, Զիններկո ընտանիքում նրա հայտնվելուն մի փոքրիկ անեկդոտ է նախորդում։ Մի անգամ, հինգ ամիս առաջ, Սվեժևսկին իր պաշտոնակիցների շրջանում խոսք էր թողել, թե իր կյանքի երազանքը ժամանակի ընթացքում միլիոնատեր դառնալն է և որ քառասունի մատույցներում անպայման կդառնա։

— Ինչպե՞ս եք դրան հասնելու, Ստանիսլավ Կսավերևիչ,— հարցրել էին նրան։

[1] Ըստ բնագրի՝ (коралл, амметист, сапфир и яшма-Кася-մարջան, մեղեսիկ, շափյուղա և հասպիս (ծան. թարգ.)։

Սվեժևսկին ֆրքշացել էր և խորհրդավոր տեսքով շփելով իր խոնավ ձեռքերը, պատասխանել էր.

— Բոլոր ճանապարհները տանում են Հռոմ։

Հոտառությունը նրան հուշել էր, որ այժմ Շեպետովկայի տնտեսությունում հանգամանքները խիստ հարմար են դասավորվում իր հետագա կարիերայի համար։ Այսպես թե այնպես, ինքը կարող է պետք գալ ամենազոր գործատիրոջը։ Եվ Սվեժևսկին, ամեն ինչ բախտախաղի դնելով, համարձակորեն Կվաշնինի աչքն էր մտնում, հաճոյակատար իր քրքջոցով։ Խաղ էր բռնում նրա հետ, ինչպես բակապահ զվարթ թուլան կատաղած արջորս շան հետ, թե՛ դեմքով, թե՛ ձայնով արտահայտելով ամեն պահի պատրաստակամություն՝ ինչ ստորություն ասես կատարել Վասիլի Տերենտևիչի մեկ հատիկ նշանով։

Տերը չէր խոչընդոտում։ Նույն այն Կվաշնինը, որը ծառայությունից առանց պատճառաբանության վռնդում էր գործարանների տնօրենների և կառավարիչների, այդ նույն Կվաշնինը ոմն Սվեժևսկու ներկայությունն էր տանում իր կողքին... Կարևոր մի ծառայության հոտ էր գալիս, և ապագա միլիոնատերը լարված սպասում էր իր պահին։

Այս ամենը, բերնեբերան անցնելով, հայտնի դարձավ Բոբրովին ևս։ Նա չզարմացավ։ Զիններկո ընտանիքի վերաբերյալ իր կայուն ու ճշգրիտ տեսակետն ուներ։ Նրան հուզում էր լոկ այն, որ բամբասանքն անպայման իր աղտոտ պոչով Նինային էլ է քսվելու... Կայարանի խոսակցությունից հետո այդ աղջիկը նրա համար ավելի սիրելի ու թանկ էր դարձել։ Միայն իրեն էր Նինան դյուրահավատորեն սիրտը բացել, անգամ տատանումների ու թուլությունների մեջ սքանչելի սիրտը։ Մնացած բոլորը, մտածում էր Բոբրովը, միայն նրա զգեստն ու արտաքինը գիտեն։ Իսկ խանդը, իր անպարկեշտ կասկածանքներով, հավերժորեն բորբոքված ինքնասիրությամբ, իր մանրախնդրությամբ և կոպտությամբ հանդերձ, խորթ էր Բոբրովի դյուրահավատ ու նուրբ խառնվածքին։

Կանացի լավ, անկեղծ սերը դեռ երբեք չէր ժպտացել Անդրեյ Իլյիչին։ Նա չափազանց ամոթխած էր, իր վրա անվստահ, որպեսզի կյանքից վերցներ այն, ինչ գուցե իրեն էր պատկանում իրավամբ։ Զարմանալի չէ, որ հիմա նրա հոգին բերկրանքով ձգտում էր նոր, ուժգին զգացմունքին։

Բոլոր այդ օրերը Բոբրովը զտնվում էր կայարանի խոսակ-

ցության հմայքի տակ։ Հարյուրավոր անգամներ հիշում էր դա նվազագույն մանրամասնություններով և ամեն անգամ Նինայի խոսքերի մեջ առավել խոր նշանակություն էր գտնում։ Առավոտները նա արթնանում էր ինչ-որ մեծ ու լուսավոր բանի անորոշ գիտակցությամբ, որը տող է գրավել նրա հոգում և ապագայում բազում երանություններ է խոստանում իրեն։

Անասելի կերպով քաշում էր Զինենկոյենց տունը. ցանկություն ուներ մեկ անգամ ևս համոզվել իր երջանկության մեջ, մեկ անգամ ևս Նինայից լսել մերթ երկչոտ, մերթ միամտորեն համարձակ կիսախոստովանությունները։ Սակայն նրան նեղում էր Կվաշնինի ներկայությունը, և նա իրեն մխիթարում էր լոկ նրանով, որ գործատերը երկու շաբաթից ավել ոչ մի դեպքում չի կարող մնալ Իվանկովոյում։

Բայց մի դեպք օգնեց նրան հանդիպել Նինային՝ Կվաշնինի մեկնումից առաջ։ Դա կատարվեց կիրակի օրը, դոմնային վառարանի կամպանիայի հանդիսավոր բացումից երեք օր անց։ Բոբրովը, Ֆարվատերին հեծած, գնում էր գործարանից դայլարան տանող լավ հարթեցրած ճանապարհով։ Զով ու անամպ ցերեկվա ժամը երկուսը կլիներ։ Ականջները խլշտած ու փոչոտ գլուխը թափահարելով, Ֆարվատերը վազում էր կայտառ։ Պահեստի մոտի շրջադարձի վրա Բոբրովը նկատեց ամազոնուհու զգեստով մի կնոջ, խոշոր աշխատ ձիու վրա, որն իջնում էր սարից, նրա ետևից մի հեծյալի ևս, փոքր կիրգիզական սպիտակ ձիու վրա։ Շուտով նա համոզվեց, որ դա Նինան է՝ մուգ կանաչ, երկար, ալիքվող շրջազգեստով, դեղին, բազկապաններով ձեռնոցներով, տափակ ու փայլուն ցիլինդրը գլխին։ Նա վստահ ու գեղեցիկ էր նստած թամբին։ Անգլիական վայելչակազմ զամբիկը ճկուն ու լայն վարգով էր գնում, վիզը ցից բռնած, բարակ և չոր ոտքերը բարձր-բարձր գցելով։ Նինային ուղեկցող Սվեժևսկին շատ ետ էր մնացել և արմունկները թափահարելով, ցընցվելով ու կռանալով, աշխատում էր ոտնաթաթով որսալ դուրս պրծած ասպանդակը։

Բոբրովին նկատելով, Նինան քառատրոփի թողեց ձին։ Հանդիպակաց քամին ստիպում էր նրան աջ ձեռքով բռնել շլյապայի ծայրը և գլուխը կռացնել։ Հավասարվելով Անդրեյ Իլյիչին, նա իսկույն կանգնեցրեց ձին, ու սա կանգնեց, անհամբերությամբ գցելով ոտքերը, ուռեցնելով լայն, ցեղական ռունգները և ատամներով հնչեղ ծամելով լկամը, որից կտոր-կտոր փրփուր էր թափ-

վում։ Նինայի դեմքը վազքից շառագունել էր և գլխարկի տակից քունքերի մոտ դուրս պրծած մազերը երկար ու բարակ գալարներով ետ էին ծածանվում։

— Ձեզ որտեղի՞ց այս սքանչելիքը,— հարցրեց Բոբրովը, երբ՝ վերջապես հաջողվեց տեղում կանգնեցնել պար եկող Ֆարվատերին ու թամբի վրայից կռանալով սեղմել Նինայի մատների ծայրերը։

— Իսկապես գեղեցկուհի է, չէ՞։ Կվաշնինի նվերն է։

— Ես կհրաժարվեի նման ընծայից,— կոպտորեն ասաց Անդրեյ Իլյիչը, հանկարծակի զայրացած Նինայի անհոգ պատասխանից։

Նինան բռնկվեց։

— Ի՞նչ հիման վրա։

— Այն հիման վրա, որ... իսկ ո՞վ է ձեզ համար Կվաշնինը, իրոք... Ազգակա՞ն... Փեսացո՞ւ...

— Ախ, տեր աստված, ինչ նրբանկատ եք ուրիշների փոխարեն,— բացականչեց Նինան խայթելով։

Սակայն, տեսնելով Բոբրովի տառապանքով լի հայացքը, տեղնուտեղը մեղմացավ։

— Չէ որ սա նրա համար ոչինչ է... Նա այնքան հարուստ է որ...

Սվեժևսկին արդեն տասը քայլի վրա էր։ Նինան հանկարծ կռացավ դեպի Բոբրովը, մտրակի պոչով քնքշորեն դիպավ նրա ձեռքին և կիսաձայն, փոքր աղջկա տոնով, որն իր մեղքը գիտակցում է, ասաց.

— Դե, լավ... լավ, մի բարկացեք... Ես ետ կտամ ձին իրեն, չարաստի մեկը... Տեսնում եք, ինչ է նշանակում ձեր կարծիքն ինձ համար։

Անդրեյ Իլյիչի աչքերը փայլեցին երջանկությունից, և ձեռքերն ակամա մեկնվեցին Նինայի կողմը։ Բայց ոչինչ չասաց, այլ միայն խորը, ամբողջ կրծքով շունչ քաշեց։ Սվեժևսկին մոտեցավ նրան, գլուխ տալով ու ջանալով անփույթ կեցվածք ընդունել։

— Դուք, իհարկե, գիտե՞ք մեր պիկնիկի մասին,— դեռ հեռվից բղավեց Սվեժևսկին։

— Առաջին անգամ եմ լսում,— պատասխանեց Անդրեյ Իլյիչը։

— Վասիլի Տերենտևիչի նախաձեռնությամբ պիկնիկի մասին չգիտե՞ք։ Վայրի ձորակում...

— Չեմ լսել։

— Այո, այո։ Խնդրում եմ, եկեք, Անդրեյ Իլյիչ,— միջամտեց Նինան։— Զորեքշաբթի, երեկոյան ժամը հինգին... հավաքատեղին կայարանն է ..

— Պիկնիկը հանգանակությա՞մբ է։

— Կարծեմ թե։ Հաստատ չգիտեմ։

Նինան հարցական ու շփոթված նայեց Սվեժևսկուն։

— Հանգանակությամբ,— հաստատեց Սվեժևսկին։— Վասիլի Տերենտևիչն ինձ հանձնարարել է իր մի քանի կարգադրությունները կատարել։ Եվ ես ձեզ կասեմ, վիթխարի՜ պիկնիկ է լինելու։ Գերշքե՜ղ մի բան... Միայն թե այդ ամենն առայժմ գաղտնիք է։ Դուք կապշեք անսպասելիությունից...

Նինան չհամբերեց և սկթևեցանքով ավելացրեց.

— Չէ՞ որ այս ամենն իմ պատճառով եղավ։ Նախանցյալ օրն ասացի, թե լավ կլիներ խմբով մի տեղ գնայինք, անտառ, իսկ Վասիլի Տերենտևիչը...

— Ես չեմ գա,— կտրուկ ասաց Բոբրովը։

— Ոչ, կգաք,— աչքերը փայլեցրեց Նինան։— Պարոնայք, մա՛րշ, մա՛րշ,— բղավեց նա, քառատրոփով տեղից պոկելով ձին։ — Անդրեյ Իլյիչ։ Լսեք, ինչ եմ ասում։

Սվեժևսկին ետ մնաց։ Նինան ու Բոբրովը արշավում էին կողք-կողքի, Նինան ժպտալով ու նրա աչքերի մեջ նայելով, Բոբրովը՝ խժռոված և դժգոհ։

— Չէ՞ որ ես ձեզ համար եմ հորինել պիկնիկը, իմ վատ, կասկածամիտ բարեկամ,— ասաց նա, ձայնի մեջ մի խորունկ քնքշություն։— Ես ուզում եմ անպայման իմանալ այն, ինչ չասացիք այն ժամանակ, կայարանում... Մեզ ոչ ոք չի խանգարի պիկնիկի ժամանակ։

Ու նորից ակնթարթային փոփոխություն կատարվեց Բոբրովի հոգում։ Խանդաղատանքի արցունքներ զգալով դեմքի վրա, նա կրքոտ բացականչեց.

— Օ՜, Նինա։ Ինչպե՜ս եմ սիրում ձեզ։

Սակայն Նինան ասես չլսեց այդ հանկարծակի խոստովանությունը։ Նա ձգեց սանձերը, ձիուն ստիպեց քայլի անցնել և հարցրեց.

— Ուրեմն, կգա՞ք։ Այո՞։

— Անպայման։ Անպայման կգամ։

— Տեսեք-հա՜... Իսկ հիմա սպասենք իմ կավալերին, և՛ ցտեսություն։ Ես տուն եմ շտապում...

Հրաժեշտ տալիս, Բոբրովը ձեռնոցի տակից զգաց նրա ձեռքի ջերմությունը, որը պատասխանեց իրեն երկար ու պինդ սեղմումով։ Նինայի մուգ աչքերը սիրահարված էին նայում։

9

Զորեքշաբթի, արդեն ժամը չորսից, կայարանը լեփ-լեցուն էր պիկնիկի մասնակիցներով։ Բոլորն իրենց ուրախ ու անբրոնազբոսիկ էին զգում։ Վասիլի Տերենտևիչի գալուստն այս անգամ այնքան բարեհաջող ավարտվեց, որ ոչ ոք սպասել անգամ չէր կարող։ Ձեղավ ոչ շանթ, ոչ որոտ, ոչ մեկին չխնդրեցին թողնել ծառայությունը, նույնիսկ ընդհակառակն, լուրեր էին պտտվում մոտ ապագայում ծառայողների մեծամասնության ռոճիկների ավելացման մասին։ Բացի դրանից, պիկնիկը շատ հետաքրքրական էր խոստանում լինել։ Մինչև Վայրի ձորակ, ոտք պայմանավորվել էին գնալ, ձիերով գնալու դեպքում մոտ տասը վերստ շատ գեղեցիկ ճանապարհ էր համարվում... Պարզ ու տաք եղանակը, որ կայունացել էր վերջին շաբաթվա ընթացքում, ոչ մի կերպ չէր կարող խանգարել ուղևորությանը։

Իննսունին մոտ մարդ էր հրավիրված, աշխույժ խմբերով խոնվել էին կառամատույցում, ծիծաղ և բարձրաձայն բացականչություններ էին լսվում։ Ռուսերենին էին խառնվում ֆրանսերեն, գերմաներեն և լեհերեն դարձվածքներ։ Երեք բելգիացի իրենց հետ վերցրել էին լուսանկարչական ապարատներ՝ նպատակ ունենալով մագնիումի լույսի տակ ակնթարթային լուսանկարներ անել... Բոլորին հետաքրքրում էր պիկնիկի մանրամասնությունների վերաբերյալ կատարյալ անհայտությունը։ Սվեժևսկին խորհրդավոր ու նշանակալի տեսքով ինչ-որ «անակընկալներ» էր ակնարկում, բայց ըստ ամենայնի խուսափում էր բացատրություններից։

Առաջին անակնկալը արտակարգ գնացքն էր։ Ճիշտ ժամը հինգին շոգեքարշային դեպոյից ելավ ամերիկյան նոր տասնանիվ շոգեքարշը։ Տիկնայք չկարողացան զսպել զարմանքի և հիացմունքի բացականչությունները. ամբողջ վիթխարի մեքենան զարդարված էր դրոշակներով ու թարմ ծաղիկներով։ Կաղ-

նետերևների կանաչ շղթաները, աստղածաղիկների, գեորգինների, շահրակների և մեխակների փնջերով ընդմիջված, պարուրել էին մեքենայի մետաղյա իրանը, խողովակի վրայով գալարվել վեր, այնտեղից կախվել ցած՝ շշակի մոտ, ու նորից վեր բարձրացել, ծաղկուն պատով ծածկելով մեքենավարի խցիկը։ Կանաչի և ծաղիկների տակից մեքենայի մետաղյա ու պողպատյա մասերը տպավորիչ փայլ էին արձակում աշնանային մայր մտնող արևի ոսկե շողերի տակ։ Առաջին կարգի վեց վագոն, կառամատույցի երկայնքով ձգված, պիկնիկի մասնակիցներին պիտի տաներին մինչ 303-րդ վերստ, որտեղից մինչև Վայրի ձորակ ընդամենը հինգ հարյուր քայլ ճանապարհ էր մնում։

— Պարոնայք, Վասիլի Տերենտևիչը խնդրեց ինձ հայտնել ձեզ, որ պիկնիկի բոլոր ծախսերը նա իր վրա է վերցնում.— ասում էր Սվեժևսկին, շտապ-շտապ մի խմբից մյուսին անցնելով։— Պարոնայք, Վասիլի Տերենտևիչը խնդրեց ինձ բոլոր հրավիրվածներին հայտնել...

Նրա շուրջը ոչ մեծ մի խումբ հավաքվեց, նա բացատրում էր, թե բանն ինչ է։

— Վասիլի Տերենտևիչը չափազանց գոհ է մնացել այն ընդունելությունից, որ հասարակությունն է հանդես բերել իր նկատմամբ, և նրա համար շատ հաճելի է սիրալիրությանը սիրալիրությամբ պատասխանել։ Բոլոր ծախսերը նա վերցնում է իր վրա...

Եվ չդիմանալով, առաջնորդվելով այն զգացումով, որը սպասավորին ստիպում է պարծենալ իր պարոնի առատաձեռնությամբ, նա ծանրակշիռ ավելացրեց.

— Այս պիկնիկի վրա մենք երեք հազար հինգ հարյուր իններսուն ռուբլի ենք ծախսել։

— Պարոն Կվաշնինի հետ կիսովի՞,— ետևից ծաղրական մի ձայն լսվեց։ Սվեժևսկին արագ շրջվեց ու համոզվեց, որ թունալից այդ հարցը տվեց Անդրեան, որն իրեն էր նայում սովորական իր անվրդով տեսքով, ձեռքերը խոր մտցրած շալվարի գրպանները։

— Դուք ի՞նչ բարեհաճեցիք հարցնել,— տեղեկացավ Սվեժևսկին, խիստ կարմրած։

— Ոչ, այդ դուք բարեհաճեցիք ասել. «Մենք ծախսել ենք երեք հազար», և ես կատարյալ հիմք ունեմ կարծելու, որ դուք նկատի ունեք ձեզ և պարոն Կվաշնինին այդ «մենքի» տակ...

այդ դեպքում ես իմ հաճելի պարտքն եմ համարում ձեզ հայտնել, որ եթե ես ընդունում եմ այդ սիրալիրությունը պարոն Կվաշնինի կողմից, ապա պարոն Սվեժևսկու կողմից կարող եմ և չընդունել...

— Ախ, ոչ, ոչ... Դուք ինձ այնպես չհասկացաք,— կմկմաց անչափ շփոթված Սվեժևսկին։— Այս ամենը Վասիլի Տերենտևիչն է արել։ Ես պարզապես միայն որպես հավատարմատար անձ... Դե, կառավարչի պես մի բան,— ավելացրեց նա թքու քմծիծաղով։

Արտակարգ գնացքի հետ համարյա միաժամանակ եկան Զիններկոյենք, Կվաշնինի և Շելկովնիկովի ուղեկցությամբ։ Բայց դեռ չէր հասցրել Վասիլի Տերենտևիչն իջնել կառքից, երբ տեղի ունեցավ ոչ մեկի կողմից չնախատեսված տրագիկոմիկական բնույթի մի դեպք։ Դեռևս առավոտից գործարանային բանվորների կանայք, մայրերն ու քույրերը, լսելով առաջիկա պիկնիկի մասին, սկսել էին հավաքվել կայարանում։ Շատերն իրենց հետ կրծքի երեխաներ էլ էին բերել։ Գեղջկական համբերատարությունը արևառ, տանջահար դեմքներին, արդեն մի քանի ժամ նրանք նստած էին կայարանի մուտքի աստիճաններին և գետնի վրա, երկարուկ ստվեր նետող պատերի տակ։ Երկու հարյուրից ավելի կլինեին։ Կայարանի ղեկավարության հարցուփորձին նրանք պատասխանել էին, թե իրենց պետք է «շեկ ու շաղ պետը»։ Պահակը փորձել էր նրանց քշել, բայց այնպիսի խլացուցիչ ժխոր էր բարձրացել, որ նա միայն ձեռքն էր թափ տվել ու հանգիստ թողել կանանց։

Մոտեցող յուրաքանչյուր կառք նրանց մեջ բոպեական խբարանություն էր առաջացնում, բայց քանի որ «շեկ ու շաղ պետը» դեռևս չկար, նրանք իսկույն հանգստանում էին։

Վասիլի Տերենտևիչը ձեռքերով նստիքից բռնած, տրնքտրնքալով ու ամբողջ կառքը թեքած, նոր էր ոտքը դրել ոտնակին, երբ կանայք արագորեն բոլոր կողմերից շրջապատեցին նրան և ծնկի եկան։ Ամբոխի աղմուկից վախեցած ջահել, տաքարյուն ձիերը խրխնջացին ու սկսեցին դեսուդեն նետվել, կառապանը, սանձերը հավաքելով ձեռքն ու ամբողջ մարմնով ետ ընկած, հազիվ էր նրանց տեղում զսպում։ Սկզբից Կվաշնինը ոչինչ չէր կարողանում լսել. կանայք բղավում էին բոլորով միասին և նրան մեկնում կրծքի երեխաներին։ Բրոնզե դեմքերի վրայով հանկարծ առատ արցունքներ հոսեցին...

Կվաշնինը տեսավ, որ այս կենդանի, բոլոր կողմերից շրջապատած օղակից ինքը դուրս եկող չի։

— Սպասե՛ք, կնանիք։ Ձեն չհանեք,—բղավեց նա, իր բասով անմիջապես ծածկելով նրանց ձայները։—Ձեններդ գլուխներդ եք գցել, կարծես շուկա լինի։ Բան չեմ լսում։ Թող մեկնումեկդ խոսի. ի՞նչ է եղել։

Բայց ամենքն էլ ուզում էին մենակ խոսել։ Բղավոցներն ավելի սաստկացան. և արցունքներն ավելի առատ հոսեցին։

— Մեր պահապան...հարազատ... մի լավ նայի մեզ... էլ դիմանալու տեղ չկա ..Մի կաշի, մի ոսկոր ենք դառել...Մեռնում ենք...երեխեքն էլ հետներս...Որ ասենք. ցրտից սատկում ենք։

— Իսկ ի՞նչ է ձեզ պետք։ Ինչի՞ց եք մեռնում,—նորից բղավեց Կվաշնինը։— Բոլորդ միասին մի գոռացեք։ Այ, դու, ջահե՛լ, ասա՛,—նա մատը տնկեց մի հաղթանդամ և չնայած հոգնած դեմքի գունատությանը, կալուգացի գեղեցիկ կնոջ վրա։—Մնացածներդ՝ սու՛ս։

Մեծամասնությունը լռեց, միայն շարունակում էին հեծկլտալ ու կամացուկ վնգալ, աչքներն ու քթները սրբելով կեղտոտ փեշերով...

Այնուամենայնիվ, միանգամից խոսել սկսեցին քսանից ոչ պակաս կին.

— Ցրտից ենք մեռնում, մեր պահապան...խղճա մեզ, մի բան մտածի... էլ ճար հնար չունենք .. Զմռան գլուխ մեզ քշել են բարաքները, դրանց մեջ ապրե՞լ կլինի։ Մենակ անունն է բարաք, տաշեղից են սարքած...Հիմի էլ գիշերները չենք դիմանում ցրտից...ատամ ատամի չի գալիս...Բա ձմեռն ի՞նչ ենք անելու։ Գոնե մեր էրեխեքին խղճա, մի ճար արա, քեզ մատաղ, գոնե ասա վառարան թող դնեն...ճաշ եփելու տեղ չունենք...Դրսում ենք ճաշ եփում...Մեր մարդիկ ամբողջ օրը գործի են...Սառած... թրջված...Գալիս են տուն, չորանալու տեղ չկա։

Կվաշնինը ծուղակն էր ընկել։ Որ կողմը շրջվում էր, ճամփան կտրում էին գետնին փռված ու ծնկաչոք կանայք։ Երբ փորձում էր անցնել նրանց միջով, բռնում էին նրա ոտքերից ու երկար մոխրագույն վերարկուի փեշերից։ Տեսնելով իր անուժությունը, Կվաշնինը ձեռքի շարժումով իր մոտ կանչեց Շելկովնիկովին, և երբ սպ ճեղքելով անցնում էր կանանց հոծ բազմության միջով, Վասիլի Տերենտևիչը, ձայնի զայրագին արտահայտությամբ հարցրեց նրան ֆրանսերեն.

— Դուք լսեցի՞ք։ Ի՞նչ է նշանակում այս ամենը։

Շելկովնիկովն անօգնական տարածեց ձեռքերը և մրթմրթաց.

— Ես գրել եմ վարչություն, զեկուցել եմ...Բանվորական ձեռքի խիստ սահմանափակ թիվ է... ամառային շրջանը... հունձը... բարձր գները... վարչությունը թույլ չտվեց... ի՞նչ կարող ենք անել....

— Իսկ ե՞րբ եք սկսելու վերակառուցել բանվորական բարաքները,—խստորեն հարցրեց Կվաշնինը։

— Միանգամայն անհայտ է... Թող մի կերպ դիմանան... Մենք ավելի շուտ պիտի արագացնենք ծառայողների շենքի վերակառուցումը։

— Սատանան գիտե, թե ինչ այլանդակություն է կատարվում ձեր ղեկավարության ներքո,—մրթմրթաց Կվաշնինը։ Եվ նորից դառնալով կանանց կողմը, բարձրաձայն ասաց.—Ինձ լսեք, կնանիք։ Վաղվանից ձեզ համար վառարաններ կսարքեն ու բարաքները կտախտակեն։ Լսեցի՞ք։

— Լսեցինք, հարազատ... Շնորհակալ ենք... Ո՞նց չլսեցինք,— հնչեցին ուրախացած ձայներ։—Սրանից էլ լավ բա՞ն, երբ որ պետն է հրաման տալիս... շնորհակալ ենք... մեկ էլ թող շինարարությունից տաշեղ հավաքենք, հոգի...

— Լավ, լավ, տաշեղ էլ եմ թույլ տալիս հավաքել։

— Թե չէ, ուր ասես, չերքեզներին[1] դրել են, գնում ենք տաշեղի, մտրակը քաշում են մեջքներիս։

— Լավ, լավ... Ազատ կգաք տաշեղ հավաքելու, ձեզ ոչ ոք ձեռք չի տա,— հանգստացնում էր նրանց Կվաշնինը։—Իսկ հիմա, կնանիք, մա՛րշ ձեր տները, շշի եփելու։ Տեսեք, հա՛, արա՛գ,— բղավեց նա քաջալերող, կտրիճ ձայնով։— Կարգադրեք,— կիսաձայն ասաց նա Շելկովնիկովին,— որ վաղը բարաքների մոտ մի երկու բեռ աղյուս շարեն... Դա երկար ժամանակով կըմխիթարի նրանց։ Թող ուրախանան։

Կանայք սկսեցին ցրվել կատարելապես հրջանկացած։

— Տես հա՛, թե վառարան չդրեցին մեզ համար, անժիներներին ենք կանչելու, որ գան մեզ տաքացնեն,— բղավեց նույն այն կալուգացի կինը, որին Կվաշնինը հրամայեց խոսել բոլորի փոխարեն։

---

1 Հարավում գործարաններում և տնտեսություններում ավելի շուտ չերքեզներին էին պահակ վարձում, որոնք աչքի էին ընկնում հավատարմությամբ և սարսափ ներշնչում բնակչությունը. (ծան. հեղ.)։

— Թե չէ ուրիշ ո՞նց,— առույգ-առույգ արձագանքեց մեկ ուրիշը,— էդ ժամանակ թող մեզ հենց ինքը գեներալը տաքացնի։ Տես, ինչ չաղլիկն է, սոթլիկ... Նրա հետ ավելի տաք կլինի, քան վառարանի վրա։

Անսպասելի այս դիպվածը, որ այսպես բարեհաջող վերջացավ, իսկույն ուրախացրեց բոլորին։ Նույնիսկ Կվաշնինը, որ սկզբում խոժոռվել էր տնօրենի վրա, ծիծաղեց կանանց տաքացնելու հրավերն ստանալով և հաշտվողաբար բռնեց Շելկովնիկովի արմունկը։

— Գիտեք ինչ կա, թանկագինս,— ասում էր նա տնօրենին, ծանրությամբ նրա հետ բարձրանալով կայարանի աստիճաններով,— պետք է այս ժողովրդի հետ բացատրվել կարողանալ։ Դուք կարող եք նրանց խոստանալ ինչ ասես՝ ալյումինե բնակարաններ, ութժամյա աշխատանքային օր և բիֆշտեքս նախաճաշին, սակայն դա արեք շատ վստահորեն։ Երդվում եմ ձեզ. քառորդ ժամվա ընթացքում ես միայն խոստումներով կհանգցնեմ ժողովրդական ամենաբուռն տեսարանը...

Հիշելով հենց նոր հանգցրած կանացի խռովության մանրամասներն ու բարձրաձայն ծիծաղելով, Կվաշնինը վագոն նստեց։ Երեք րոպե անց գնացքը ելավ կայարանից։ Կառապաններին կարգադրվել էր ուղղակի գնալ Վայրի ձորակ, որովհետև ենթադրվում էր ետ դառնալ կառքերով ու ջահերով։

Նինայի վարմունքը շփոթեցրեց Անդրեյ Իլյիչին։ Կայարանում նրա գալուստյանն էր սպասում անհամբեր հուզմունքով, որ դեռ երեկ երեկոյան էր ծայր առել։ Նախկին երկմտություններն անհետացել էին նրա հոգուց, նա հավատում էր իր մոտալուտ երջանկությանը, դեռ երբեք աշխարհը այդպես գեղեցիկ, մարդիկ այդքան բարի, կյանքն այդպես թեթև ու բերկրալից չէր թվացել նրան։ Մտածելով Նինայի հետ տեսակցության մասին, նա չանում էր վաղօրոք դա պատկերացնել, ակամա պատրաստում էր քնքուշ, կրքոտ ու պերճախոս դարձվածքներ, հետո ինքն իր վրա ծիծաղում... Ինչի՞ համար հորինել սիրո խոսքեր։ Երբ պետք լինի, դրանք իրենք կգան և առավել գեղեցիկ, առավել ջերմ կլինեն։ Եվ Բոբրովը հիշեց ինչ-որ ամսագրում կարդացած բանաստեղծությունները, ուր բանաստեղծը ասում է իր սիրեցյալին, որ իրենք չեն երդվի մեկը մյուսին, որովհետև երդումները կվիրավորեին իրենց դյուրահավատ ու ջերմ սերը։

Բոբրովը տեսավ, թե Կվաշնինի եռաձիուց հետո ինչպես

մոտեցան Զինենկոների երկու կառքերը։ Նինան առաջինի մեջ էր նստած։ Բաց դեղնագույն, սեղմիրանի կիսակլոր կտրվածքի մոտ լայն, բացգույն, միևնույն երանգի ժանյակներով վրակարված թեթև զգեստ էր հագել, թեյավարդի փնջով զարդարված իտալական լայն ու սպիտակ գլխարկ դրել, և սովորականից ավելի գունատ ու լուրջ թվաց Բոբրովին։ Նինան հեռվից տեսավ նրան, մուտքի մոտ կանգնած, բայց ինչպես սպասում էր, երկար ու բազմանշանակ հայացքը չուղարկեց իրեն։ Ընդհակառակն, Բոբրովին թվաց նույնիսկ, որ ասես դիտմամբ երեսը դարձրեց իրենից։ Իսկ երբ Անդրեյ Իլյիչը մոտ վազեց նրա կառքին, որպեսզի ձգնի նրան փշնել, Նինան, կարծես կանխելով նրան, արագ ու թեթև ցած թռավ կառքի մյուս կողմից։ Վատ, չարագույժ մի զգացում խոցեց Անդրեյ Իլյիչի սիրտը, սակայն նա անմիջապես շտապեց ինքն իրեն հանգստացնել։ «Խեղճ աղջիկ, նա ամաչում է իր որոշումից և իր սիրուց։ Նրան թվում է, թե հիմա յուրաքանչյուր ոք ազատ կերպով կարող է իր աչքերի մեջ կարդալ ամենանվիրական մտքերը... Օ՜, սուրբ, սքանչելի միամտություն»։

Անդրեյ Իլյիչը վստահ էր, որ Նինան, ինչպես նախորդ անգամ, կայարանում, առիթն ինքը կգտնի մոտենալու, դեմառդեմ մի քանի նախադասություն փոխանակելու։ Սակայն Նինան, ըստ երևույթին, ամբողջովին կլանված կանանց հետ Կվաշնինի խոսակցությամբ, չէր շտապում դա անել... նա ոչ մի անգամ նույնիսկ ծածուկ ետ չշրջվեց՝ Բոբրովին տեսնելու համար։ Անդրեյ Իլյիչի սիրտը հանկարծ տագնապալից ու տրտմագին զարկեց։ Նա վճռեց մոտենալ Զինենկոներին, որոնք սեղմ խմբով էին կանգնած՝ մյուս կանանց, հավանորեն խուսափում էին նրանցից, և բոլորի ուշադրությունը շեղած աղմուկի միջից Լեթե ոչ բառերով, գոնե հայացքով հարցնել Նինայից նրա անուշադրության պատճառը։

Աննա Աֆ. Նասևային խոնարհվելով ու նրա ձեռքը համբուրելով, Բոբրովը նրա դեմքին նայեց և աշխատեց կարդալ՝ որևիցե բան գիտե՞ նա արդյոք։ Այո, անկասկած գիտեր. անկյուն կապած բարակ հոնքերը՝ խաբեբա խառնվածքի նշան, ինչպես հաճախ մտածում էր Բոբրովը, դժգոհությամբ իրար եկան, իսկ շրթունքները գոռոզ արտահայտություն ընդունեցին։ Հավանաբար, Նինան ամեն ինչ պատմել է մորը, նրանից դիտողություն ստացել՝ ենթադրեց Բոբրովը և մոտեցավ Նինային։

Բայց Նինան նրան չնայեց անգամ։ Անշարժ ու սառը ձեռքը Բոբրովի ձեռքի մեջ մնաց, երբ նրանք ողջունեցին իրար։ Անդրեյ Իլիչի ողջույնին պատասխանելու փոխարեն, նա գլուխն անմիջապես դարձրեց Բետայի կողմն ու ինչ-որ դատարկ բաներից սկսեց խոսել... Այդ հապշտապ գործողության մեջ Բոբրովը մի տեսակ մեղավոր, մի տեսակ վախկոտ, ուղղակի պատասխանից խույս տվող բան զգաց... Նա զգաց, որ ոտքերն իսկույն թուլացան, իսկ բերանում սառնություն առաջացավ ... Նա չգիտեր, ինչ մտածեր։ Եթե անգամ Նինան բերանից թոցրել էր մոր մոտ, մի՞թե չէր կարող այն արագ, խոսուն հայացքով, որ բնազդով ունենում են կանայք, ասել իրեն. «Այո, դու կռահել ես, մեր խոսակցությունը հայտնի է ... բայց ես էլի այն եմ, սիրելիս, էլի նույնն եմ, մի անհանգստացիր»։ Այնինչ Նինան գերադասեց շրջվել։ «Միևնույն է, ինչ ուզում է լինի, պիկնիկի ժամանակ նրանից պատասխան կստանամ,— մտածեց Բոբրովը, անորոշ տրամության մեջ ինչ-որ ծանր ու կեղտոտ բան կանխազգալով։— Այսպես, թե այնպես, նա պետք է որ պատասխանի»։

10

303-րդ վերստի վրա հասարակությունը դուրս եկավ վագոններից և երկար ու խայտաբղետ շարանով. պահատնակի կողքով ձգվեց Վայրի ձորակ տանող նեղ արահետով ... Դեռ հեռվից աշնանային անտառի թարմությունն ու բույրը փչեց նրանց բորբոքված դեմքերին ... Արահետն, ավելի ու ավելի զառիվեր դառնալով, անհետանում էր կաղնուտի և վայրի ցախկեռասի խիտ թփուտների մեջ, որոնք հյուսվել էին արահետի վրա, համատարած մութ կամար դարձած։ Ոտքերի տակ արդեն խշրտում էին դեղին, չորացած, շուտ թափված տերևները։ Հեռվում, թավուտի խիտ ցանցի միջից կարմրին էր տալիս վերջալույսը։

Թփուտները վերջացան։ Հյուրերի աչքի առաջ անսպասելիորեն բացվեց անտառով շրջապատված մի լայն հրապարակ, հարթեցված, մանր ավազով ծածկված։ Մի ծայրին ութանկյուն տաղավար էր կանգնած, ծայրեծայր զարդարված դրոշակներով ու կանաչով, մյուս ծայրին փակ բեմն էր՝ երաժիշտների համար։ Թավուտից առաջին զույգերի հայտնվելուն պես, զինվորական նվագախումբը բեմի վրայից՝ մի զվարթ քայլերգ հնչեցրեց։

Հատու, պղնձյա գեղեցիկ հնչյունները կայտառությամբ ցրիվ եկան անտառում, անդրադարձվելով ծառերից և հեռուներում միաձուլվելով մեկ ուրիշ նվագախմբի, որը թվում էր, թե մեկ առաջ է ընկնում, մեկ ետ մնում առաջինից։ Ութանիստ տաղավարում, «ո»-աձև շարված սեղանների շուրջը, որոնք արդեն ծածկված էին նոր ճերմակ սփռոցներով, ամանեղենը չխկչխկացնելով, իրար էին անցել սպասավորները...

Հենց որ Երաժիշտները ավարտեցին քայլերգը, բոլոր հրավիրվածները միահամուռ ծափահարեցին։ Նրանք իսկապես զարմացած էին, քանի որ համարյա երկու շաբաթ առաջ այս հրապարակն իրենից ներկայացնում էր ցանցառ թփուտներով պատած մի սարալանջ...

Նվագախումբը վալս նվագեց։

Բոբրովը տեսավ, թե ինչպես Սվեժևսկին, որ կանգնած էր Նինայի կողքին, անմիջապես, առանց հրավերի, դրկեց նրա իրանը, և նրանք արագ պտտվելով սուրացին հրապարակում։

Սվեժևսկին նոր էր թողել Նինային, երբ մոտ վազեց լեռնային մի ուսանող, նրանից հետո մեկ ուրիշը։ Բոբրովը վատ էր պարում, չէր էլ սիրում պարել։ Սակայն նրա մտքով անցավ Նինային հրավիրել կադրիլի։ «Գուցե,— մտածեց նա,— ինձ հաջողվի մի բոպե գտնել բացատրվելու համար»։ Նա մոտեցավ Նինային, երբ վերջինս, երկու պարաշրջանը հենց նոր վերջացրած, նստել և հովհարը արագ-արագ թափահարում էր այրվող դեմքի վրա։

— Նինա Գրիգորևնա, հուսով եմ, որ ինձ համար մի կադրիլ թողե՞լ եք։

— Ախ, աստված իմ ... Որքան ցավալի է։ Բոլոր կադրիլներս բաժանված են,— պատասխանեց նա, առանց Բոբրովին նայելու։

— Մի՞թե։ Այդքան շո՞ւտ,— խուլ ձայնով հարցրեց Բոբրովը։

— Այո, այո,— Նինան անհամբերությամբ ու ծաղրաբար վերքաշեց ուսերը։— Իսկ ինչո՞ւ ուշացաք։ Ես դեռ վագոնում եմ խոստացել բոլոր կադրիլները...

— Դուք, ուրեմն, բոլորովին մոռացել եք իմ մասին,— ասաց նա տխուր։

Նրա ձայնի հնչյունը հուզեց Նինային։ Նա ջղայնացած ծալեց ու նորից բացեց հովհարը, բայց աչքերը չբարձրացրեց։

— Ինքներդ եք մեղավոր։ Ինչո՞ւ չմոտեցաք...

— Բայց չէ որ հենց նրա համար եմ պիկնիկ եկել, որպեսզի ձեզ տեսնեմ... Մի՞թե դուք ինձ հետ կատակում էիք, Նինա Գրիգորևնա։

Նա լռում էր, շփոթված տանել-բերելով հովհարը։ Նիններին չարկեց երիտասարդ մի ինժեներ, որը վազեվազ նրան մոտեցավ։ Աղջիկն արագ վեր կացավ և, նույնիսկ չշրջվելով Բոբրովի կողմը, երկար սպիտակ ձեռնոցով իր բարակ ձեռքը դրեց ինժեների ուսին։ Անդրեյ Իլյիչն աչքերով թեռնում էր նրան... Մի պարաշրջան անելով, նա նստեց հրապարակի հակառակ ծայրին՝ իհարկե, դիտավորյալ, մտածեց Անդրեյ Իլյիչը։ Աղջիկը համարյա վախենում կամ ամաչում էր նրանից։

Նախկին, վաղուց ծանոթ, բութ ու անտարբեր մի տրտմություն պարուրեց Բոբրովին։ Բոլոր դեմքերը նրան սկսեցին տափակ, ողորմելի, համարյա կոմիկական թվալ։ Երաժշտության սահուն հնչյունները անընդմեջ խուլ հարվածներով արձագանքում էին նրա գլխի մեջ, բորբոքուն ցավ պատճառելով։ Սակայն նա դեռ հույսը չէր կորցրել և աշխատում էր իրեն սփոփել զանազան ենթադրություններով. «Չի՞ բարկացել արդյոք, որ ծաղկեփունջ չեմ ուղարկել իրեն։ Կամ գուցե չի՞ ուզում պարել այնպիսի մի ջվալի հետ, ինչպիսին ես եմ,— կռահեց նա։— Է՛, ինչ, թերևս իրավացի է։ Չէ որ աղջիկների համար նման մանրուքները շատ կարևոր են... Մի՞թե դրանք չեն կազմում նրանց ուրախությունն ու դառնությունները, նրանց կյանքի ամբողջ պոեզիան»։

Երբ սկսեց մթնել, տաղավարի շուրջը վառեցին չինական գույնզգույն լապտերների երկարուկ շղթաները։ Բայց դա քիչ էր. հրապարակը համարյա լուսավորված չէր։ Հանկարծ դրա երկու ծայրերից կուրացուցիչ երկնագույն լույսով էլեկտրական երկու արև բռնկվեցին, որոնք մինչ այդ խնամքով քողարկված էին ծառերի սաղարթի մեջ։ Հրապարակը եղերող կեչիներն ու բոխիները իսկույն առաջ եկան։ Դրանց անշարժ, գանգրասաղարթ ճյուղերը՝ վառ ու անբնական լուսավորության տակ նմանվեցին առաջին պլանի թատերական դեկորների։ Դրանց ետևում, մութ-կանաչ մշուշով պարուրված, լիովին սև երկնքի վրա աղոտ գծագրվում էին թավուտի կլոր ու ատամնավոր ծառերը։ Անտառի ծղրիդները, որոնց ձայնը երաժշտությունը չէր խլացնում, այնքան տարօրինակ, հնչեղ ու համերաշխ էին ճռճռում, որ թվում էր, թե մի ծղրիդ է կանչում, բայց կանչում է բոլոր կողմերից. թե աջից, թե ձախից, թե վերևից։

Ավելի ու ավելի աշխույժ և աղմկալից դառնալով, ճգվում էր պարահանդեսը։ Պարերը հաջորդում էին միմյանց։ Նվագախումբը համարյա չէր հանգստանում... Կանայք հարբել էին երաժշտությունից ու երեկոյի հեքիաթային պայմաններից, ինչպես գինուց են հարբում։

Օծանելիքների ու բորբոքված մարմինների բույրը տարօրինակ կերպով խառնվել էր տափաստանային օշինդրի, թառամող սաղարթի, անտառային խոնավության և աշնանային հնձած խոտի հեռավոր նոտրը հոտերին։ Ամենուրեք, մերթ դանդաղ, մերթ արագ ծածանվում էին հովհարները, որոնք առես թռչելու պատրաստվող գույնզգույն գեղեցիկ թռչունների թևեր լինեին... Բարձրաձայն խոսակցությունը, ծիծաղը, ոտքերի քստքստոցը հրապարակի ավազի վրա միախառնված, միալար ու զվարթ ժխոր էր դարձել, որը հանկարծ առանձնակի ուժգնությամբ էր առաջ մղվում, երբ երաժշտությունը դադարում էր։

Բոբրովն ամբողջ ժամանակ անդադրում հետևում էր Նիններին։ Մեկ-երկու անգամ նրա աչքերը համարյա քսվեց իրեն։ Նույնիսկ քամին երեսին զարկեց, երբ սուրաց կողքով։ Պարելիս նա գեղեցիկ և կարծես թե անօգնականորեն ձեռքը հենում էր պարընկերոջ ուսին ու գլուխն այնպես էր թեքում, կարծես ուզում էր հենվել այդ ուսին... Երբեմն, արագ շարժումից բացվելով, երևում էր նրա ծանեկազարդ սպիտակ ներքնազգեստի եզրը, սև գուլպա հագած ոտքերը, փոքրիկ ոտնաթաթերով, բարալիկ կոճերով, սրնքամկանի լայնացման մասերով։ Այդ ժամանակ Բոբրովը, չգիտես ինչու, ամաչում էր և հոգու խորքում չարանում բոլոր նրանց վրա, ովքեր կարող էին տեսնել Նիններին՝ այդ պահերին։

Սկսեցին մազուրկա պարել։ Արդեն ժամը իններին մոտ էր։ Նինան, որ պարում էր Սվեժևսկու հետ, օգտվեց այն միջոցից, երբ մազուրկան ղեկավարող պարընկերը ինչ-որ բարդ պարաքայլ էր կազմում, և թեթև ու արագ սահեցնելով ոտքերը երաժշտության տակտով, արձակված մազերը երկու ձեռքերով բռնած, վազեց զուգարան։ Հրապարակի մյուս ծայրից Բոբրովը տեսավ դա և անմիջապես շտապեց նրա ետևից ու կանգնեց դռան մոտ... Այստեղ համարյա մութ էր։ Տաղավարի ետևում սարքված փոքրիկ, փայտաշեն մի սենյակ էր այդ զուգարանը և գտնվում էր թանձր ստվերի մեջ։ Բոբրովը որոշեց սպասել Նինային և ինչ գնով էլ լինի ստիպել նրան բացատրվել։ Սիրտը խփում էր

հաճախակի, ցավում էր, մատները, որ սեղմել էր ջղաձգորեն, խոնավացան ու սառեցին։

Հինգ րոպե անց դուրս եկավ Նինան։ Բոբրովը ելավ սավերից ու կտրեց նրա ճանապարհը։ Նինան թույլ ճիչ արձակեց և ընկրկեց։

— Նինա Գրիգորևնա, ինչի՞ համար եք ինձ այսպես տանջում,— ասաց Անդրեյ Իլյիչը, իր համար անկատելիորեն ձեռքերին աղերսագին դիրք տալով։— Միթե չեք տեսնում, թե որքան ցավալի է ինձ համար։ Օ՜, դուք զվարճանում եք իմ վշտով... Դուք ծիծաղում եք ինձ վրա...

— Ես չեմ հասկանում, ձեզ ինչ է պետք։ Մտքովս էլ չի անցել ծիծաղել ձեզ վրա,— կամակոր ու գոռոզ պատասխանեց Նինան։

Նրա մեջ արթնացել էր իր ընտանիքի ոգին։

— Չե՞ք հասկանում,— վհատված հարցրեց Բոբրովը։— Իսկ ի՞նչ է նշանակում ձեր այսօրվա վերաբերմունքն իմ նկատմամբ։

— Ի՞նչ վերաբերմունք։

— Դուք սառն եք իմ նկատմամբ, համարյա թշնամական։ Դուք երես եք դարձնում ինձնից... Ձեզ համար տհաճ է անգամ իմ ներկայությունն այս երեկոյին...

— Ինձ համար բոլորովին միևնույն է...

— Դա ավելի վատ է... Ձեր մեջ ինձ համար մի տեսակ անբմբռնելի սարսափելի փոփոխություն եմ զգում... Դե, անկեղծ եղեք, Նինա, եղեք ճշմարտացի, ինչպիսին դեռևս այսօր համարում էի ձեզ... Որքան էլ սարսափելի լինի ճշմարտությունը, ասացեք ինձ։ Ավելի լավ է թե ձեզ համար, թե ինձ համար միանգամից վերջացնել...

— Ի՞նչը վերջացնել։ Ես ձեզ չեմ հասկանում...

Բոբրովը ձեռքերով սեղմեց քունքերը, որոնց մեջ տենդայնորեն բաբախում էր արյունը։

— Ոչ, դուք հասկանում եք։ Մի ձևացրեք։ Մենք վերջացնելու բան ունե՞նք։ Համարյա խոստովանության հասնող քնքուշ խոսքեր ենք ունեցել, սքանչելի րոպեներ ենք ունեցել, որոնք մեր մեջ ինչ-որ քնքուշ ու նուրբ կապեր են հյուսել... Ես գիտեմ, ուզում եք ասել, որ ես մոլորության մեջ եմ... Թերևս, թերևս... Բայց մի՞թե դուք չէիք, որ հրամայեցիք ինձ այս պիկնիկին գալ, որպեսզի հնարավորություն ունենանք առանց կողմնակի մարդկանց զրուցելու։

Նինան հանկարծ խղճաց նրան։

— Այո... Ես խնդրեցի ձեզ գալ...— ասաց նա, գլուխը կախելով։— Ես ուզում էի ձեզ ասել... Ես ուզում էի... որ մենք պիտի ընդմիշտ հրաժեշտ տանք միմյանց։

Բոբրովը ճոճվեց, ասես մեկը հրեց նրա կրծքին։ Անգամ մթության մեջ նկատելի էր, թե ինչպես գունատվեց դեմքը։

— Հրաժեշտ տանք...— արտասանեց նա խեղդվելով։— Նինա Գրիգորևնա... հրաժեշտի բառը ծանր, դառը բառ է... Մի ասեք...

— Ես պետք է ասեմ։

— Պե՞տք է։

— Այո, պետք է։ Սա իմ կամքը չէ։

— Իսկ ո՞ւմն է։

Ինչ-որ մեկը մոտենում էր նրանց։ Նինան նայեց մթության մեջ ու շշնջաց.

— Ահա, թե դում։

Եկողն Աննա Աֆանասևնան էր։ Նա կասկածանքով զննեց Բոբրովին և Նինային ու բռնեց դստեր ձեռքը։

— Նինա, իսկ ինչո՞ւ ես փախել պարերից,— ասաց նա նկատողության տոնով,— ինչ-որ մութ տեղ կանգնել ու խոսում ես զուր տեղը... Լավ զբաղմունք է, խոսք չունեմ... Ես էլ քեզ փնտրում եմ բոլոր անկյուններում։ Իսկ դուք, պարոն,— նախատինքով ու բարձրաձայն նա հանկարծ դիմեց Բոբրովին,— դուք, պարոն, եթե ինքներդ չգիտեք կամ չեք սիրում պարել, գոնե չխանգարեք օրիորդներին ու չվարկաբեկեք նրանց tête-à-tête[1] զրույցով... մութ անկյուններում...

Նա գնաց ու իր հետ քարշ տվեց Նինային։

— Օ՜, մի անհանգստացեք, տիկին. ձեր օրիորդին ոչինչ չի վարկաբեկի,— նրա ետևից բղավեց Բոբրովը և հանկարծ քրքջաց այնպիսի մի տարօրինակ, վշտալի քրքիջով, որ մայր ու աղջիկ ակամա շրջվեցին։

— Հը, քեզ չէի՞ ասում, որ սա հիմարի ու լկտիի մեկն է,— Աննա Աֆանասևնան քաշեց Նինայի ձեռքից։— Կուզես թքիր երեսին, իսկ նա քրքջում է... ինքն իրեն մխիթարում է... Հիմա կանայք են կավալերներ ընտրելու,— ավելացրեց նա ուրիշ, ավելի հանգիստ տոնով։— Կգնաս ու կհրավիրես Կվաշնինին։ Քիչ առաջ է վերջացրել խաղալը։ Տեսնում ես, կանգնած է տաղավարի դռան մոտ։

1 Դեմ-դիմաց (ֆրանս.)։

— Մամա։ Ախր նա ինչպե՞ս պիտի պարի։ Հազիվհազ շրջվում, է տեղում։

— Իսկ ես քեզ ասում եմ՝ գնա։ Ժամանակին լավագույն պարողներից մեկն էր համարվում Մոսկվայում... Համենայն դեպս, նրա համար հաճելի կլինի։

Ասես հեռավոր, մոխրագույն ու ալիքվող մշուշի մեջ Բոբրովը տեսավ, թե ինչպես Նինան արագ վազեց-անցավ հրապարակը և ժպտուն, սեթևեթ ու թեթև կանգ առավ Կվաշնինի առաջ, նազանքով ու խնդրական կողք թեքած գլուխը։ Վասիլի Տերենտևիչը լսում էր նրան, փոքր-ինչ հակված նրա վրա։ Հանկարծ նա քրքջաց, ինչից նրա հսկայական մարմինը ցնցվեց, և ժխտաբար թափահարեց գլուխը։ Նինան երկար համառում էր, հանկարծ նեղացած դեմք ընդունեց ու քմահաճորեն դարձավ, որ գնա։ Սակայն Կվաշնինը իրեն ամենևին ոչ հատուկ աշխուժությամբ հասավ նրան, ուսերը թոթվեց այնպիսի տեսքով, կարծես ուզում էր ասել. «Է՛, ինչ կարող ես անել... հարկավոր է երես տալ երեխաներին...», և ձեռքը պարզեց նրան։ Բոլոր պարողները կանգ առան և հետաքրքրությամբ աչքերը հառեցին նոր զույգի վրա։ Մազուրկա պարող Կվաշնինը արտակարգ զվարճալի տեսարան էր խոստանում ներկայացնել։

Վասիլի Տերենտևիչը տակտը որսաց ու հանկարծ պարընկերուհուն դառնալով մի ծանր, սակայն ինքնատիպ վեհապանծ գեղեցկությամբ տոգորված շարժումով, այնքան ինքնավստահ ու ճարպկորեն արեց առաջին pas-ն. որ բ...որն իսկույն ի դեմս նրա նախկին գերազանց պարողին ճանաչեցին։ Նինային նայելով վերևից ներքև, գլխի հպարտ, հանդուգն ու զվարթ դարձումով, նա սկզբում չէր պարում, այլ երաժշտության տակ քայլում էր ճկուն, թեթևակի օրորվող քայլքով։ Թե՛ վիթխարի հասակը, թե՛ գիրությունը թվում էր ոչ միայն չէին խանգարում, այլ ընդհակառակն, այդ բոպեին մեծացնում էին նրա կազմվածքի ծանրաքաշ նազանքը։ Հասնելով շրջադարձին, Կվաշնինը մի ակնթարթ կանգ առավ, հանկարծ կրունկը խփեց կրնկին, արագ պտտեցրեց Նինային տեղում և սահուն, ներողամտորեն ժպտացող դեմքով սուրաց մինչև հրապարակի կենտրոնը՝ հաստլիկ, ձիգ ոտքերի վրա։ Այն տեղում, ուր Կվաշնինը վերցրել էր Նինային, նա կրկին պտտեցրեց պարընկերուհուն արագ ու գեղեցիկ շարժումով և անսպասելիորեն նստեցնելով աթոռին, կանգ առավ նրա դիմաց, գլուխը խոր խոնարհած։

Անմիջապես բոլոր կողմերից նրան շրջապատեցին տիկնայք, ինդրելով մի պարաշրջան ևս անել։ Բայց նա, անսովոր շարժումներից հոգնած, ծանր էր շնչում ու թաշկինակն էր թափահարում։

— Բավական է, mesdames ... խնայեցեք ծերուկիս...— ասում էր նա, ծիծաղելով և դժվարությամբ շունչը տեղը բերելով։— Իմ տարիքին ի՞նչ պար գալու ժամանակ է։ Ավելի լավ է, գնանք ընթրելու...

Հասարակությունը սեղան նստեց, դղրդացնելով տեղաշարժվող աթոռները ... Բոբրովը շարունակում էր կանգնած մնալ այն տեղում, ուր նրան լքել էր Նինան։ Ստորացման, վիրավորանքի, հուսաբեկ, վհատ թախծի զգացումները փոխնիփոխ տանջում էին նրան։ Արցունք չկար, բայց ինչ-որ բան մրմուռ էր տալիս աչքերին, չոր ու ծաղկող գունդ էր կանգնած կոկորդին...Երաժշտությունը շարունակում էր հիվանդագին ու միապաղաղ արձագանքել նրա գլխում։

— Այ քեզ բա՜ն։ Իսկ ես ձեզ եմ փնտրում, փնտրում ու ոչ մի կերպ չեմ կարողանում գտնել։ Սա ի՞նչ բան է, ո՞ւր եք կորել,— Անդրեյ Իլյիչն իր կողքին լսեց բժշկի ուրախ ձայնը։— Եկա թե չէ, ինձ նստեցրին վինտ խաղալու, հաղիվ եմ պոկվել ... Գնանք ընթրելու։ Երկու տեղ եմ զբաղեցրել, որ միասին...

— Ախ, բժիշկ։ Մենակ գնացեք՝ ես չեմ։ գա, չեմ ուզում,— իրեն ստիպելով պատասխանեց Բոբրովը։

— Ձե՞ք գա։ Այ քեզ պատմությո՜ւն։— Բժիշկն ուշադրությամբ նայեց Բոբրովի դեմքին։— Ձեզ ի՞նչ է պատահել, սիրելիս։ Բոլորովի՞ն եք թթվել,— ասաց նա լրջորեն և կարեկցանքով։— Չէ՛, ինչ ուզում եք արեք, ես ձեզ մենակ չեմ թողնի։ Գնանք, գնանք, էլ ոչ մի խոսք։

— Ծանր է ինձ համար, բժիշկ։ Նողկալի է,— ցածրաձայն պատասխանեց Բոբրովը, մեքենայաբար հետևելով իրեն քարշ տվող բժշկին։

— Դատարկ բան է, փո՛ւչ, գնացինք։ Տղամարդ եղեք, թքեք... «Թե՞ ձեր սիրտն է ցավում։ Կամ ամպե՞լ է խիղճը ձեր»,— անսպասելիորեն արտասանեց Գոլդբերգը, քնքշորեն ու ամուր գրկած Բոբրովի գոտկատեղն ու խանդաղատանքով նրա դեմքին նայելով։— Հիմա ես ձեզ ունիվերսալ դեղ դուրս կգրեմ. «Վանյա, չխմե՞նք ցրտից ու վշտից...»։ Ճիշտ է, ես ու այդ Անդրեան արդեն բավականին կոնյակ ենք ընդունել... Ա՜հ, հո չի խմում շան որդին։ Ասես դատարկ տակառի մեջ լցնի... Դե, տղամարդ

— Այո, ունեմ,— վհատությամբ գլուխն օրորեց Անդրեյ Իլյիչը։

— Սրտի մե՞ջ։

— Այո։

— Հրմ... Ուրեմն, էլի՞ եք ուզում։

— Լցրեք,— ասաց Բոբրովը հնազանդ ու տրտում։

Նա ագահորեն և զզվանքով խմում էր կոնյակը, ջանալով ինքնամոռացության մեջ ընկել։ Բայց տարօրինակ է, խմիչքը նրա վրա ոչ մի ազդեցություն չէր գործում։ Ընդհակառակն, ավելի էր տրտմում, և արցունքներն ավելի շատ էին կսկծացնում աչքերը։

Մինչ այդ սպասավորները շամպայն բերեցին, Կվաշնինը ելավ աթոռից, երկու մատներով բռնած իր ըմպանակը ու դրա միջից բարձր մոմակալի կրակին նայելով։ Բոլորը սկսվեցին։ Լսվում էր միայն, թե ինչպես է թշշում ածուխը էլեկտրական ջահերի մեջ և զրնգուն ճռճռում անխոնջ ծղրիդը։

Կվաշնինը հազաց։

— Ողորմած տիկնայք և ողորմած պարոնայք,— սկսեց նա և մի ազդու դադար տվեց։— Ես կարծում եմ, որ մեզնից ոչ ոք կասկածի չի ենթարկի երախտագիտության այն անկեղծ զգացումը, որով ես բարձրացնում եմ այս գավաթը։ Ես երբեք չեմ մոռանա Իվանկովոյում ինձ ցուցաբերած սրտաբաց ընդունելությունը, և այսօրվա փոքրիկ պիկնիկը, շնորհիվ մասնակից տիկնանց հմայիչ սիրալիրության, ինձ համար ընդմիշտ կմնա որպես ամենահաճելի հիշողություն։ Խմում եմ ձեր կենացը։

Նա վեր բարձրացրեց իր ըմպանակը, օդի մեջ մի չան կիսաշրջան արեց, մի քիչ խմեց և շարունակեց.

— Իմ խոսքը ձեզ եմ ուղղում, իմ մերձավորագույն աշխատակիցներ և ընկերներ։ Հդատապարտեք, եթե խրատի բառ կրի, տարիքով ես ձեր մարդ եմ ներկաներից մեծամասնության համեմատ, իսկ ծերունուց խրատի համար կարելի է և չնեղանալ։

Անդրեան հակվեց Բոբրովի ականջին ու շշնջաց.

— Տեսեք, թե ինչպես է ծամածռվում այդ սրիկա Սվեժևսկին։

Սվեժևսկին, իրոք, իր դեմքով սամենաշողոքորթ ու արտակարգ ուշադրություն էր արտահայտում։ Երբ Վասիլի Տերենտիչը հիշատակեց իր ծերությունը, նա և գլխով, և ձեռքերով բողոքի շարժումներ արեց։

— Ես համենայն դեպս կկրկնեմ լրագրային առաջնորդող-

եղեք, սիրելիս... Գիտեք ինչ, Անդրեան շատ է հետաքրքրվում ձեզանով։ Գնանք, գնանք...

Այսպես խոսելով, բժիշկը Բոբրովին քարշ տվեց տաղավար։ Նրանք նստեցին կողք-կողքի։ Անդրեյ Իլյիչի հարևանը մյուս կողմից Անդրեան էր։

Անդրեան, որ հեռվից ժպտում էր Բոբրովին, մի կողմ քաշվեց տեղ տալու համար և սիրով շոյեց նրա մեջքը։

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ, նստեք մեզ մոտ,— բարեկամաբար ասաց նա։— Դուք համակրելի մարդ եք... սիրում եմ այդպիսի մարդկանց... լավ մարդ եք... կոնյակ խմո՞ւմ եք։

Անդրեան հարբած էր։ Նրա ապակյա աչքերը տարօրինակ կերպով կենդանացել էին և փայլում էին գունատված դեմքի վրա (միայն կես տարի անց հայտնի դարձավ, որ այդ անթերի, զուսպ, աշխատասեր, տաղանդավոր մարդը ամեն երեկո բացարձակապես միայնակ հարբում էր գիտակցությունը կորցնելու աստիճան)...

«Եվ իսկապես, գուցե թեթևանամ, եթե խմեմ,— մտածեց Բոբրովը,— պետք է փորձել, գրողը տանի»։

Անդրեան սպասում էր, թեքած շիշը ձեռքին։ Բոբրովը դեմ արեց բաժակը։

— Այսպե՞ս,— ձգեց Անդրեան, հոնքերը վեր բարձրացնելով։

— Այդպե՛ս,— պատասխանեց Բոբրովը, տխուր ու հեզ ժպիտով։

— Լավ։ Մինչև որտե՞ղ։

— Բաժակն ինքը կասի։

— Շատ լավ։ Կարելի է կարծել, թե դուք ծառայել եք շվեդական նավատորմում։ Բավակա՞ն է։

— Լցրեք, լցրեք։

— Բարեկամս, բայց դուք, հավանորեն, նկատի չեք առնում, որ սա VSOP մակնիշի Martel է, իսկական, թունդ, հին կոնյակ։

— Լցրեք, մի անհանգստացեք։

Եվ Բոբրովը մտածեց չարախնդությամբ.

«Է, ինչ արած, կոշկակարի պես կհարբեմ։ Թող հիանա...»։

Բաժակը լիքն էր։ Անդրեան շիշը դրեց սեղանին և սկսեց հետաքրքրությամբ հետևել հարևանին։ Բոբրովը միանգամից խմեց կոնյակն ու ամբողջ մարմնով ցնցվեց անսովորությունից։

— Փոքրիկս, կրծող ո՞ւրդ ունեք,— հարցրեց Անդրեան, լրջորեն նայելով Բոբրովի աչքերին։

ների հին, ծեծված արտահայտությունը,— շարունակեց Կվաշնինը։— Բա՞ծր պահեք մեր դրոշը։ Մի մոռացեք, որ մենք երկրի աղն ենք, որ մեզ է պատկանում ապագան... Մի՞թե մենք չենք ամբողջ երկրագունդը պատել երկաթուղիների ցանցով։ Մի՞թե մենք չենք բաց անում երկրի ընդերքն ու դրա գանձերը դարձնում թնդանոթներ, կամուրջներ, շոգեքարշեր, ռելսեր և վիթխարի մեքենաներ։ Մենք չե՞նք արդյոք մեր հանճարի ուժով, համարյա անհավանական ձեռնարկումներ իրականացնելով, շարժման մեջ դնում հազարմիլիոնանոց կապիտալներ... Գիտցեք, պարոնայք, որ ամենագետ բնությունն իր ստեղծագործական ուժերը ծախսում է ամբողջ ազգություն ստեղծելու վրա սոսկ նրա համար, որ դրանից երկու կամ երեք տասնյակ ընտրյալներ կերտի։ Համարձակություն և ուժ ունեցեք այդ ընտրյալները լինել, պարոնա՛յք։ Ուռա՛։

— Ուռա՛։ Ուռա՛,— բղավեցին հյուրերը, և բոլորից բարձր Սվեժևսկու ձայնն էր լսվում։

Բոլորը վեր կացան տեղերից ու գնացին Վասիլի Տերենտևիչի հետ բաժակ զարկելու։

— Նողկալի ճառ էր,— կիսաձայն ասաց բժիշկը։

Կվաշնինից հետո վեր կացավ Շելկովնիկովը և բղավեց.

— Պարոնա՛յք։ Մեր հարգարժան-գործատիրոջ, մեր թանկագին ուսուցչի և ներկայումս մեր հյուրասեր տանտիրոջ կենացը, Վասիլի Տերենտևիչ Կվաշնինի կենացը։ Ուռա՛։

— Ուռա՛,— միահամուռ ձայնակցեցին բոլոր հյուրերը և նորից գնացին բաժակ զարկելու Կվաշնինի հետ։

Հետո պերճախոսության մի զեխություն սկսվեց։ Կենացներ էին ասվում թե՛ ձեռնարկության հաջողության, թե՛ բացակա բաժնետերերի, թե՛ պիկնիկի մասնակից տիկնանց, թե՛ ընդհանրապես բոլոր տիկնանց համար։ Որոշ կենացներ երկիմաստ էին ու անպարկեշտ։

Երկտանյակներով ոչնչացվող շամպայնն իր գործը տեսավ. տաղավարում համատարած ժխոր էր կանգնած, և ամեն անգամ կենաց ասողը ստիպված էր լինում, նախքան սկսելը, երկար ու ապարդյուն՝ դանակով խփել բաժակին։ Քիչ հեռվում, առանձին սեղանիկի վրա, պատկերք Միլլերը արծաթյա մեծ ամանի մեջ փունջ էր պատրաստում... Հանկարծ նորից վեր կացավ Կվաշնինը, նրա դեմքին բարեհոգի, խորամանկ ժպիտ էր խաղում։

— Ինձ համար շատ հաճելի է, պարոնայք, որ մեր տոնախմբությունը համընկել է ընտանեկան բնույթի մի հանդիսության հետ,— ասաց նա հմայիչ սիրալիրությամբ։— Ամբողջ հոգով շնորհավորենք ու երջանկություն մաղթենք նշանված փեսացուին և հարսնացուին. Նինա Գրիգորևնա Զիններկոյի...— Նա կարկամեց, որովհետև մոռացել էր Սվեժևսկու անուն հայրանունը...— և մեր ընկերոջ, պարոն Սվեժևսկու կենացը...

Կվաշնինի խոսքերին ի պատասխան բղավոցներն ավելի բարձրաձայն էին, քանի որ նրա հայտնած նորությունը միանգամայն անսպասելի էր։ Անդրեան, որն իր կողքին ավելի շատ տանջալից տնքոցի նմանվող մի բացականչություն լսեց, շրջվեց ու տեսավ, որ Բոբրովի գունատ դեմքը ծամածռվել է ներքին տառապանքից։

— Կոլեգա, դուք դեռ բոլորը չգիտեք,— շշնջաց Անդրեան։— Հապա լսեք, հիմա ես մի երկու ջերմ խոսք կասեմ։

Նա վստահ ոտքի կանգնեց, ընդ որում շուռ տալով իր աթոռը և գավաթի կեսը թափելով, ու բացականչեց.

— Ողորմած պարոնայք. Մեր մեծարգո գործատերը միանգամայն հասկանալի մեծահոգի համեստությունից դրդված իր կենացը չավարտեց... Մենք պիտի շնորհավորենք մեր թանկագին ընկերոջը՝ Ստանիսլավ Կսավերևիչ Սվեժևսկուն, նոր նշանակման կապակցությամբ. հաջորդ ամսվանից նա ընկերության վարչության գործերի կառավարչի պատասխանատու պաշտոնն է ստանձնելու ... Այդ նշանակումը կլինի, այսպես ասած, նորապսակների հարսանեկան նվերը խորապես հարգելի Վասիլի Տերենտևիչի կողմից ... Ես մեր գերապատիվ գործատիրոջ դեմքին դժգոհություն եմ տեսնում ... Հավանորեն, ես ոչ դիտավորյալ հրամցրեցի նրա նախապատրաստած անակնկալը և դրա համար ներողություն եմ խնդրում։ Սակայն բարեկամության ու հարգանքի զգացումից դրդված, ես չեմ կարող չցանկանալ, որպեսզի մեր թանկագին ընկերը՝ Ստանիսլավ Կսավերևիչ Սվեժևսկին, Պետերբուրգում, իր այդ նոր ասպարեզում նույնպես, մնա նույնպիսի գործունյա աշխատող և նույնպիսի սիրված ընկեր, ինչպես և այստեղ... Բայց ես գիտեմ, պարոնայք, մեզնից ոչ ոք չի նախանձի Ստանիսլավ Կսավերևիչին (նա կանգ առավ և թունոտ ծաղրանքով Սվեժևսկուն նայեց) ... որովհետև մենք բոլորս այնպես միահամուռ ենք նրան ամենայն բարիք ցանկանում, որ...

Նրա ճառը հանկարծակի ընդհատվեց ձիու բարձրաձայն

դոփյունով։ Թավուտից ճիշտ կարծես դուրս լողաց քրտնամխած ձիու վրա գլխաբաց մի մարդ, որի այլայլված դեմքին քարացել էր սարսափի արտահայտությունը։ Կապալառու Դեխտերյովի մոտ աշխատող տասնապետն էր։ Հրապարակի մեջտեղում թողնելով հոգնածությունից դողդողացող ձին, նա մոտ վազեց Վասիլի Տերենտևիչին և, մտերմաբար կռանալով նրա ականջին, սկսեց ինչ-որ բաներ շշնջալ... Տաղավարում հանկարծ սարսափելի լռություն տիրեց, և, ինչպես առաջ, սոսկ ածխի թշշոցն էր լսվում ու ծղրիդի միալար ճռճռոցը։

Կվաշնինի գինուց կարմրած դեմքը գունատվեց։ Նա նյարդայնացած սեղանին դրեց ըմպանակը, որը ձեռքին էր բռնել, և գինին թափվեց սփռոցին։

— Իսկ բելգիացինե՞րը,— հարցրեց նա խռպոտաձայն ու կերկեր։

Տասնապետը բացասաբար թափահարեց գլուխը և նորից ինչ-որ բաներ շշնջաց Կվաշնինի ուղիղ ականջի մեջ։

— Ա՛, գրողը տանի,— հանկարծ բացականչեց Կվաշնինը, տեղից վեր կենալով ու ձեռքերի մեջ ճմռելով անձեռոցիկը։— Ով կմտածեր... Սպասիր, հենց հիմա հեռագիր կտանես կայարան, նահանգապետին։ Պարոնայք,— բարձրաձայն ու հուզված դիմեց նա ներկաներին,— գործարանում խռովություն է... Պետք է միջոցներ ձեռնարկել, և... կարծում եմ, ամենալավը մեզ համար անհապաղ այստեղից գնալը կլինի...

— Այդպես էլ գիտեի,— արհամարհանքով, հանգիստ շարությամբ ասաց Անդրեան։

Եվ այն ժամանակ, երբ բոլորն իրար անցան, նա դանդաղորեն նոր սիգար հանեց, շոշափելով զրպանից լուցկի հանեց և կոնյակ լցրեց իր բաժակը։

11

Խառնիփնթոր, անհեթեթ մի իրարանցում ծայր առավ։ Բոլորը վեր կացան տեղներից ու սկսեցին վազվզել տաղավարում, դրդմըշտվելով, բղավելով և սայթաքելով շրջված աթոռների վրա։ Կանայք դողդողացող ձեռքերով շտապ-շտապ գլխարկներն էին դնում։ Ինչ-որ մեկն էլ դեռ կարգադրեց հանգցնել էլեկտրական ջահերը, և դա էլ ավելի սաստկացրեց համընդհանուր շփոթությունը։ Մթության մեջ կանացի հիստերիկ ծղրտոցներ լսվեցին։

Ժամը հինգին մոտ էր։ Արևը դեռ չէր ծագել, բայց երկինքը նկատելիորեն լուսավորվել էր, իր մոխրագույն, միապաղաղ երանգով ամպամած օրվա սկիզբը կանխագուշակելով։ Բացվող առավոտի դալուկ, աղոտ, միապաղաղ կիսալույսը, որ այնքան արագ ու անսպասելի փոխարինել էր էլեկտրականության վառ փայլին, ընդհանուր իրարանցման պատկերին սարսափելի, ճնշող, համարյա ֆանտաստիկ բնույթ էր հաղորդում։ Մարդկային կերպարանքները ֆանտաստիկ զառանցագին մի երազից հայտնված ուրվականներ էին թվում։ Անքուն գիշերից հոգնած, հուզված դեմքերը սարսափելի էին։ Ճաշկերույթի սեղանը, վրան թափված խմիչքով և խառնիխուռն կիտված ամանեղենով մի տեսակ հրեշավոր, մեկեն ընդհատված խրախճանք էր հիշեցնում։

Կառքերի մոտ խառնաշփոթությունը ավելի այլանդակ էր։ վախեցած ձիերը փռնչացնում էին, ծառս լինում ու թույլ չէին տալիս սանձել, անիվները լսվում էին անիվների մեջ ու լսվում էր ջարդվող սոնիների ճռռոցը, ինժեներներն անուններով կանչում էին իրենց կառապաններին, որոնք չարացած կռվշտվում էին իրար հետ։ Ընդհանուր առմամբ, շվարեցնող այն քաոսի տպավորությունն էր, որ միայն գիշերային մեծ հրդեհների ժամանակ է լինում։ Ինչ-որ մեկի վրայով անցան, գուցեև ճզմեցին։ Վայնասուն էր լսվում։

Բոբրովը ոչ մի կերպ չէր կարողանում գտնել Միտրոֆանին։ Երկու թե երեք անգամ նրան թվաց, թե լսում է միմյանց խառնված կառքերի հենց կենտրոնից իր բղավոցներին պատասխանող կառապանի պատասխանը։ Բայց այնտեղ թափանցելու որևէ հնարավորություն չկար, որովհետև հրմշտոցը բոպե առ բոպե սաստկանում էր։

Հանկարծ մթության մեջ, ամբոխից շատ բարձր կարմիր բոցով բոցավառվեց նավթի մի մեծ ջահ։ Բղավոցներ լսվեցին. «Ճանապա՞րհ։ Ճանապա՞րհ։ Մի կողմ քաշվեք, պարոնայք։ Ճանապա՞րհ»։ Ուժգին ճնշումով քշված մարդկային սուրացող ալիքը Անդրեյ Իլյիչին առավ, իր հետ տարավ, հազիվհաղ ոտնատակ չտալով և ամուր սեղմեց կառքերից մեկի եռևի ու մյուսի առեղի արանքում։ Այդտեղից Բոբրովը տեսավ, թե ինչպես կառքերի միջև արագորեն մի լայն ճանապարհ բացվեց և ինչպես այդ ճանապարհով իր մոխրագույն եռաձիով անցավ Կվաշնինը։

Կառքի վերևում տարուբերվող ջահը Վասիլի Տերենտևիչի ծանրակույտ մարմինը չարագույժ, ասես արնաներկ, թրթռացող լույսով էր ողողել։

Նրա կառքի շուրջ ցավից, սարսափից ու բոլոր կողմերից սեղմված լինելուց չարացած, խելագարված ամբոխն էր ոռնում... Բոբրովի քունքերն սկսեցին բաբախել։ Մի պահ նրան թվաց, թե գնացողն ամենևին էլ Կվաշնինը չէ, այլ արնաթաթախ, անմոռնի և սարսափազդու մի կուռք, նման արևելյան պաշտամունքների այն կուռքերին, որոնց հաղթակառքերի տակ կրոնական թափորների ժամանակ նետվում են զմայլանքից արբեցած ֆանատիկոսները։ Եվ նա դողաց անուժ կատաղությունից։

Կվաշնինի անցնելուց հետո անմիջապես նեղվածքը թեթևակի բացվեց, և Բոբրովը ետ շրջվելով տեսավ, որ մեջքին սեղմված առեղը իր սեփական կառքինն է։ Միտրոֆանը կանգնած էր նստիքի մոտ և ջահն էր վառում։

— Միտրոֆան, արագ քշիր գործարան,— նստելով բղավեց Անդրեյ Իլյիչը։— Տասը բոպեից այնտեղ լինենք, լսեցի՞ր։

— Լսեցի,— մռայլված պատասխանեց Միտրոֆանը։

Նա շրջանցեց կառքը, որպեսզի, ինչպես վայել է լավ կառապանին, աջ կողմից բարձրանա նստիքին, սանձերը դասավորեց և կիսով ետ դարձած ավելացրեց.

— Մենակ թե որ ձիանիք կոտորվեն, չնեղանաք, պարոն։

— Ախ, միևնույն է...

Զգուշությամբ, հսկայական դժվարությամբ դուրս գալով ի մի խռնված ձիերի և կառքերի միջից ու ելնելով անտառային նեղ ճանապարհը, Միտրոֆանը թողեց սանձերը։ Երկար կանգնած, բորբոքված ձիերը չափ ընկան, և սկսվեց խելահեղ արշավը։ Կառքը թռչկոտում էր ճանապարհի երկայնքով ձգված արմատների վրայով, գլորվում էր փոսերի մեջ և ուժեղ թեքվում մեկ ձախ, մեկ աջ էրդի վրա, ստիպելով թե՛ կառապանին, թե՛ Բոբրովին՝ հավասարակշռություն պահպանել։

Ջահի կարմիր բոցը այս ու այն կողմ էր շպրտվում ուժեղ բրոռոցով։ Դրա հետ մեկտեղ կառքի շուրջ ծառերի երկարուկ, արտասովոր ստվերներն էին ետ-ետ նետվում... Թվում էր, թե բարձր, երկար ու ճապաղ տեսիլքների հոծ ամբոխը սուրում էր կառքի կողքով, անհեթեթ մի պար բռնած։ Տեսիլքները մեկ անցնում էին ձիերից, վիթխարի չափերի հասնելով, մեկ հանկարծ տապալվում էին գետին և արագորեն փոքրանալով, անհետանում էին Բոբրովի թիկունքում, մեկ մի քանի վայրկյանով խորանում էին թավուտի մեջ ու հանկարծակի նորից երևում կառքին կիպ կպած, մեկ հոծ շարքերով խմբվում ու ճոճվում, ցնցվում էին, ասես ինչ-որ բան շշնջալով միմյանց... Մի քանի անգամ ճանապարհը եզերող խիտ մացառների ճյուղերը մտրակեցին Միտրոֆանի և Բոբրովի դեմքերին, ինչ-որ մեկի կառուն, բարակ, առաջ մեկնած ձեռքերի նման։

Անտառը վերջացավ։ Ձիերի ոտքերը շլմփացին ինչ-որ ջրափոսի մեջ, ուր թրթռաց և կոտորակվեց ջահի արնակարմիր, փայլուն բոցը, և հանկարծ համաչափ քառատրոփով դուրս բերեցին մի զառիթափ բլրակ։ Առջևում տարածվում էր սև, հավասար դաշտը։

— Դե քշի՛ր, Միտրոֆան, այսպես քշելով երբեք տեղ չենք հասնի,— անհամբեր բղավեց Բոբրովը, չնայած կառքն առանց այդ էլ սլանում էր այնպես, որ շունչները կտրվում էր հանդիպակաց քամուց։ Միտրոֆանն ինչ-որ բան մրթմրթաց իր դժգոհ բասով ու մտրակեց Ֆարվատերին, որը օղակի պես կորացած, սլանում էր կողքից։ Կառապանը շվարած էր, թե ինչ է կատարվում իր պարոնի հետ, որը միշտ սիրել ու խնայել է իր ձիերին։

Հորիզոնի վրա հսկայական հրացոլքը անհավասար թրթռումով անդրադարձվում էր երկնքով սողացող ամպերի մեջ։ Բոբրովը նայեց հրավառվող երկնքին, և ցնծացող ու գեշ չարախնդություն արթնացավ նրա սրտում։ Անդրեայի հանդուգն, դաժան կենացը հանկարծ բաց արեց նրա աչքերն ամեն ինչի վրա. թե՛ Նինայի սառն անտարբերությունն ամբողջ երեկոյի ընթացքում, թե՛ նրա մայրիկի զայրույթը մազուրկայի ժամանակ, թե՛ Սվեժևսկու մտերմությունը Վասիլի Տերենտևիչի հետ, թե բոլոր լուրերն ու բամբասանքները, որ պտտվում էին գործարանում, հենց իր Կվաշնինի կողմից Նինային սիրահետելու մասին, հասկանալի դարձան... «Այդպես էլ պետք էր նրան, այդպես էլ պետք էր շեկ հրեշին,— շշնջում էր Բոբրովը, չարության այնպիսի հորձանք և սեփական ստորացման այնպիսի խորունկ գիտակցություն ապրելով, որ նույնիսկ բերանն էր չորացել։— Օ՜, եթե հիմա դեմ առ դեմ հանդիպեի նրան, երկար ժամանակով կխանգարեի կենդանի մսի այդ գնորդի, այդ կեղտոտ, ճարպակալած, պոկեպոռնկ ոսկով լցված այդ-ջվալի ինքնագոհ անդորրը։ Ես մի լավ կնիք կդնեի նրա պղնձե ճակատին...»։

Այսօր խմածի անչափ քանակությունը չէր հարբեցրել

Անդրեյ Իլիչին, բայց ազդեցությունն արտահայտվում էր եռանդի արտասովոր ավելացումով, գործելու, շարժվելու անհամբեր ու հիվանդագին ծարավով... Սաստիկ դողը ցնցում էր նրա մարմինը, ատամներն այնպես էին իրար զարկվում, որ ստիպված էր սեղմել ծնոտները, միտքն աշխատում էր արագ, վառ ու խառնիխուռն, ինչպես տենդի ժամանակ։ Իր իսկ համար աննկատելի, Անդրեյ Իլյիչը կամ բարձրաձայն էր խոսում, կամ տնքում, կամ ընդհատ-ընդհատ ու բարձր ծիծաղում էր, այն ժամանակ, երբ մատներն իրենք իրենց սեղմվում, բռունցք էին դառնում։

— Պարոն, հիվանդ հո չե՞ք։ Տուն գնայինք, հա՞,— անհամարձակ ասաց Միտրոֆանը։

Այս բառերը հանկարծ խիստ կատաղեցրին Բոբրովին, և նա բղավեց խռպոտ ձայնով.

— Շատ մի խոսիր, հիմա՛ր... Քշի՛ր...

Շուտով բլրի վրայից երևաց ամբողջ գործարանը՝ կաթնավարդագույն ծխով պարուրված։ Ետևում, ահռելի մի խարույկի պես վառվում էր շինափայտի պահեստը։ Կրակի վառ ֆոնի վրա մարդկային փոքրիկ ու սև կերպարանքների բազմությունը էր եռում խառնիփնթոր։ Հեռվից իսկ լսվում էր, թե բոցի մեջ ինչպես է ճարճատում չոր փայտը։ Կառուցերների և զոմնային վառարանների կլոր աշտարակները մերթ հատու և հստակ դուրս էին պրծնում խավարից, մերթ կրկին թաղվում խավարի մեջ։ Հրդեհի կարմիր հրացոլքը վառ ու ահարկու փայլով անդրադարձվում էր մեծ, քառանկյուն լճի գորշ ջրերի մեջ։ Այդ լճի բարձր ամբարտակը ծայրեծայր, անթափանց ծածկված էր հակայական սև ամբոխով, որը դանդաղորեն առաջ էր շարժվում ու թվում էր, թե եռում է։ Եվ արտասովոր անորոշ ու չարագույժ մի աղմուկ, նման հեռավոր ծովի ոռնոցի, գալիս-հասնում էր այդ զարհուրելի, հոծ, նեղ տարածության մեջ սեղմված մարդկային զանգվածից։

— Ո՞ւր ես քշում, սատանա։ Չե՞ս տեսնում, մարդկանց վրա ես քշում, սրիկա,— առջևից կոպիտ մի բղավոց լսեց Բոբրովը, և ճանապարհի վրա, ասես ձիերի տակից դուրս գալով, հաղթանդամ, գլխաբաց, գլուխն ամբողջովին սպիտակ լաթերով փաթաթված, մորուքավոր մի մուժիկ երևաց։

— Միտրոֆան, քշի՛ր,— բղավեց Բոբրովը։

— Պարոն։ Կրակ են տվել,— լսեց նա Միտրոֆանի դողդոջ ձայնը։

Բայց և իսկույն լսեց ետևից նետած քարի սուլոցը, աջ բունքից քիչ վերև հարվածի սուր ցավ զգաց։ Վնասված տեղին տարած ձեռքի վրա տաք կպչուն արյուն երևաց։

Կառքը նորից սլացավ նախկին արագությամբ։ Հրացոլքն ավելի էր ուժեղանում։ Ձիերի երկարուկ ստվերները ճանապարհի մի կողմից մյուսն էին նետվում։ Բոբրովին մեկ-մեկ սկսում էր թվալ, թե սուրում է ինչ-որ զառիթափով և ուր որ է կառքի ու ձիերի հետ միասին թեք լանջից գահավիժելու է անդունդը։ Կատարելապես կորցրել էր ճանաչելու ունակությունը և ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե որտեղով են գնում։ Հանկարծ ձիերը կանգ առան։

— Էլի ինչո՞ւ կանգնեցիր, Միտրոֆան,— բորբոքված բղավեց Բոբրովը։

— Բա ո՞ւր գնամ, թե որ առաջս մարդիկ են,— պատասխանեց Միտրոֆանը, մռայլ ու շարացած ձայնով։

Որքան էլ նայում էր Բոբրովը վաղորդյան մոխրագույն կիսախավարի մեջ, ոչինչ չէր տեսնում, բացի ինչ-որ սև անհամաչափ պատից, որի վրա հուրհրատում էր երկինքը։

— Ո՞ւր են քո տեսած մարդիկ, գրողը տանի,— հայհոյեց նա և իջավ կառքից, շրջանցելով փրփուրի սպիտակ փերթերով պատած ձիերին։

Բայց ձիերից հինգ քայլ էլ չհեռացած, համոզվեց, որ այն, ինչ ինքը սև պատի տեղ էր դնում, բանվորների մի մեծ, հոծ ամբոխ էր, որը փակել էր ճանապարհը և դանդաղ ու լուռ առաջ էր շարժվում։ Մեքենայաբար նրանց ետևից մի հիսուն քայլ գնալուց հետո, Անդրեյ Իլյիչը ետ դարձավ, որ գտնի Միտրոֆանին և գործարանը շրջանցի մյուս կողմից։ Բայց ճանապարհի վրա ոչ Միտրոֆանը կար, ոչ ձիերը։ Միտրոֆանն էր հակառակ կողմը գնացել պարոնին փնտրելու, թե ինքը Բոբրովն էր մոլորվել՝ այդ մեկն Անդրեյ Իլյիչը չկարողացավ հասկանալ։ Սկսեց ձայն տալ կառապանին, ոչ ոք չպատասխանեց։ Այդ ժամանակ Բոբրովը վճռեց հասնել հենց նոր թողած բանվորներին և այդ նպատակով շրջվեց ու վազեց, ինչպես իրեն թվաց, նախկին ուղղությամբ։ Բայց տարօրինակ էր՝ բանվորներն ասես գետնի տակն էին անցել, ու նրանց փոխարեն Բոբրովը վազեվազ դեմ ընկավ փայտյա ոչ բարձր մի ցանկապատի։

Այդ ցանկապատը վերջ չուներ ոչ ձախից, ոչ էլ աջից։ Բոբրովը դրա վրայով անցավ ու սկսեց բարձրանալ մոլեխտով

պատած երկար ու թեք բլուրն ի վեր։ Սառը քրտինք էր պատել նրա դեմքը, լեզուն չորացել ու անշարժացել էր բերանի մեջ, ինչպես փայտի կտոր, կրծքի տակ, ամեն շունչ առնելիս սուր ցավ էր զգում, արյունը ուժեղ, արագ հարվածներով խփում էր լատարին, վնասված քունքը անտանելի ցավում էր...

Նրան թվում էր, թե վերջ չունի վերելքը, և բուռ հուսալքություն պարուրեց նրա հոգին։ Սակայն շարունակում էր վեր մագլցել, բոպին մեկ ընկնելով, ծնկները խոցոտելով, ձեռքերով լաքելով ծակծկող թփերից։ Ժամանակ առ ժամանակ նրան թվում էր, թե քնած է ու տեսնում է մեկն իր տենդագին, հիվանդագին երազներից։ Թե՛ խուճապահար իրարանցումը պիկնիկից հետո, թե՛ երկար թափառումը ճանապարհով, թե՛ անվերջանալի մագլցումը բլուրն ի վեր՝ այս ամենը նույնքան ծանր էին, անհեթեթ, անսպասելի և սարսափելի, ինչպես այդ մղձավանջները։

Վերջապես զառիթափը վերջացավ, և Բոբրովն անմիջապես ճանաչեց երկաթուղային հողաթումբը։ Այս տեղից, նախորդ օրը, մաղթանքի ժամանակ լուսանկարիչը նկարում էր ինժեներների և բանվորների խմբին։ Բոլորովին ուժասպառ, նստեց հողաթմբին, և հենց այդ պահին նրա հետ տարօրինակ մի բան կատարվեց. ոտքերը հանկարծ հիվանդագին կերպով թուլացան, կրծքի տակ որովայնի շրջանում ծանր, կսկծացնող, նողկալի մի գրգիռ առաջացավ, ճակատն ու այտերը միանգամից սառեցին։ Ապա ամեն ինչ շրջվեց նրա աչքերի առաջ ու հողմի պես սուրաց-անցավ դեպի անհատակ խորքերը։

Անդրեյ Իլյիչն ուշքի եկավ ամենաքիչը կես ժամ անց։ Ներքևում, հողաթմբի ստորոտին, այնտեղ, ուր անլռելի դղրդյունով օրուգիշեր աշխատում էր վիթխարի գործարանը, անսովոր, զարհուրելի լռություն էր տիրում։ Բոբրովը դժվարությամբ ոտքի ելավ ու քայլեց դոմնային վառարանների կողմը։ Գլուխն այնքան ծանր էր, որ դժվարությամբ էր պահում ուսերի վրա, վիրավոր քունքը յուրաքանչյուր շարժման հետ անտանելի ցավ էր պատճառում։ Վերքը շոշափելով, մատների վրա կրկին զգաց արյան կպչուն ու տաք առկայությունը։ Արյունոտ էին նաև բերանն ու շրթունքները. զգում էր դրա աղի, մետաղական համը։ Գիտակցությունը դեռ լրիվ տեղը չէր, կատարվածը հիշելու, պարզելու ջանքերը նաստիկ գլխացավ էին առաջացնում։ Հոգին լի էր սուր թախիծով, հուսալքված աննյութ չարությամբ...

Լուսաբացն արդեն նկատելիորեն մոտ էր։ Ամեն ինչ մութ-

բագույն էր, ցուրտ էր ու խոնավ, թե՛ հողը, թե՛ երկինքը, թե՛ նվազ դեղին խոտը, թե՛ ճանապարհի եզրերին թափված քարերի տձև կիտուկները։ Բոբրովն աննպատակ թափառում էր գործարանի ամայացած շենքերի մեջ, ու ինչպես երբեմն պատահում է հատկապես հոգեկան ուժեղ ցնցումների ժամանակ, բարձրաձայն խոսում էր ինքն իր հետ։ Նա ցանկանում էր հավաքել, կարգի բերել ցաքուցրիվ մտքերը։

— Դե, ասա, ասա տեսնեմ, ես ի՞նչ անեմ։ Ի սեր աստծո, ասա,— բորբոքված շշնջում էր նա, դիմելով մեկ այլ, կողմնակի մարդու, որն ասես իր ներսում էր նստած։— Ա՜խ, ինչ ծանր է ինձ համար։ Ախ, ի՜նչ ցավալի է... Անչափ ցավալի է... Ինձ թվում է, թե ինքնասպան կլինեմ... Այս տանջանքին չեմ դիմանա...

Իսկ մյուսը՝ կողմնակին, հոգու խորքից առարկում էր, նույնպես բարձրաձայն, սակայն ծաղրաբար ու կոպիտ.

— Ոչ, ինքնասպան չես լինի։ Ի՞նչ կարիք կա ձևանալ ինքդ քո առաջ... Դու շատ ես սիրում կյանքի զգացողությունը, որպեսզի ինքդ քեզ սպանես։ Դրա համար հոգով շատ ես տկար։ Դու շատ ես վախենում ֆիզիկական ցավից։ Դու չափազանց շատ ես խորհում։

— Իսկ ի՞նչ անեմ։ Իսկ ի՞նչ անեմ,— դարձյալ շշնջում էր Անդրեյ Իլյիչը, ձեռքերը կոտրատելով։— Նա այնքան քնքուշ է, այնքան մաքուր է իմ Նինան։ Ինձ համար նա միակն էր ամբողջ աշխարհում։ Եվ հանկարծ, օ՜, ինչպիսի նողկանք, վաճառել իր ջահելությունը, իր կուսական մարմինը...

— Մի կոտրատվիր, մի կոտրատվիր, ո՞ւմ են պետք հին մելոդրամաների այդ փքուն խոսքերը,— ծաղրաբար ասում էր ուրիշը։— Եթե այդքան ատում ես Կվաշնինին, գնա սպանիր նրան։

— Եվ կսպանեմ,— բղավեց Բոբրովը, կանգ առնելով և բռունցքները կատաղած վեր բարձրացնելով։— Եվ կսպանե՜մ։ Թող այլևս ազնիվ մարդկանց չվարակի իր զազրելի շնչով։ Եվ կսպանե՜մ։

Սակայն կողմնակին թունոտ ծաղրանքով նկատեց.

— Եվ չես սպանի... Ու շատ լավ գիտես դա։ Դրա համար ո՜չ վճռականություն ունես, ո՜չ ուժ... Վաղն ևեթ նորից կլինես ողջամիտ ու թույլ...

Ներքին երկվության այդ սարսափելի վիճակում բոպեական

պայծառացումներ էին լինում, երբ Բոբրովը տարակուսած ինքն իրեն հարց էր տալիս. ի՞նչ է կատարվել իր հետ, ինչպե՞ս է այստեղ ընկել և ի՞նչ պետք է անի։ Իսկ ինչ-որ բան անել անպայման պետք էր, մեծ ու կարևոր մի բան, բայց թե հատկապես ինչ՝ Բոբրովը մոռացել էր և կնճռոտվում էր ցավից, երբ ջանում էր հիշել։ Պայծառացման այդ դադարներից մեկի պահին ինքն իրեն տեսավ հնոցարանի եզրին կանգնած։ Տեղնուտեղը արտասովոր հստակությամբ հիշեց խոսակցությունը բժշկի հետ, նույն այդ տեղում։

Ներքևում հնոցապաններից ոչ ոք չկար՝ բոլորը փախել էին։ Կաթսաները վաղուց հասցրել էին սառչել։ Միայն ծայրի երկու հնոցների մեջ հազիվհազ կարմրին էր տալիս քարածուխը... Անդրեյ Իլյիչի ուղեղում հանկարծ կայծակի նման խելացնոր մի միտք առկայծեց։ Նա արագ կռացավ, ոտքերը ցած կախեց, ապա ձեռքերով կառչեց հորի պռնկին ու ցած թռավ հնոցարան։

Ածխի կիտուկի մեջ թի կար խրված։ Բոբրովն ասավ ու փութկոտ շարժումներով սկսեց ածուխը լցնել հնոցի երկու անցքերից ներս։ Երկու բոպե անց սպիտակ ու մոլեգնած բոցն արդեն թնդում էր հնոցներում, իսկ կաթսայի մեջ խուլ ձայնով քլթքլթալ սկսեց ջուրը։ Բոբրովը շարունակ նետում ու նետում էր ածուխը, թի առ թի, միաժամանակ խորամանկորեն ժպտում էր, անտեսանելի ինչ-որ մեկին գլխով անում և հատու, անիմաստ բացականչություններ արձակում։ Հիվանդագին, վրեժխնդիր սարսափելի միտքը, որ առկայծել էր դեռևս այնտեղ, ճանապարհին, ավելի ու ավելի էր համակում նրան։ Նա նայում էր կաթսայի վիթխարի մարմնին, որն սկսել էր թնդալ ու լուսավորվել կրակի ցոլքերով, և այդ մարմինն ավելի ու ավելի էր նրան թվում կենդանի և ատելի։

Ոչ ոք չէր խանգարում։ Ջուրն արագ պակասում էր ջրաչափի վրա։ Կաթսայի քլթքլթոցն ու հնոցների գվվոցը գնալով ավելի ահարկու և բարձրաձայն էր դառնում։

Սակայն անսովոր աշխատանքը շուտով հոգնեցրեց Բոբրովին։ Քունքերի երակներն սկսեցին խփել տենդագին արագությամբ ու լարվածությամբ, վերքի արյունը տաք հոսանքով ծորաց այտի վրայով։ Եռանդի խելահեղ պոռթկումն անցավ, իսկ ներքին, կոդմնակի ձայնը խոսում էր բարձրաձայն ու ծաղրարար.

— Դե, էլ ի՞նչ, մնում է ևս մի շարժում անել։ Բայց դու չես անի... Basta... Չէ որ այս ամենը ծիծաղելի է, և վաղը չես համարձակվի նույնիսկ խոստովանել, որ ջիղերը կամեցել ես պայթեցնել շոգեկաթսաները։

Արևն արդեն երևաց հորիզոնի վրա, մաղոտ ու մեծ կետի պես, երբ Անդրեյ Իլյիչը եկավ գործարանի հիվանդանոց։

Բժիշկը, որ հենց նոր, մի բոպեով ընդհատել էր վիրավոր և խեղանդամված մարդկանց վիրակապումը, պղնձյա լվացարանի տակ ձեռքերն էր լվանում։ Տեսնելով ներս մտնող Բոբրովին, բժիշկը զարմանքից ետ-ետ գնաց։

— Ձեզ ի՞նչ է եղել, Անդրեյ Իլյիչ, երեսիդ գույն չկա,— վախեցած ասաց նա։

Իսկապես, Բոբրովի տեսքը սարսափելի էր։ Աբյունը սև թանձրուկներով շորացել էր նրա գունատ դեմքին, որը նաև կեղտոտված էր քարածխի փոշով։ Թաց հագուստը պատառպատառ կախկխված էր թևքերի ու ծնկների վրա, խառնիխուռն մազերը ճակատին էին ընկած։

— Մի բան ասեք, Անդրեյ Իլյիչ, աստծու սիրուն, ձեզ հետ ի՞նչ է կատարվել,— ասաց Գոլդբերգը, շտապ-շտապ ձեռքերը սրբելով ու մոտենալով Բոբրովին։

— Ախ, այս ամենը դատարկ բաներ են...— տնքաց Բոբրովը։ — Ի սեր աստծո, բժիշկ, մորֆի տվեք... Շուտ մորֆի տվեք, կամ ես կխելագարվեմ... Անտանելի եմ տառապում...

Գոլդբերգը բռնեց Անդրեյ Իլյիչի ձեռքը, շտապ տարավ մյուս սենյակ և, դուռն ամուր ծածկելով, ասաց.

— Լսեք, ես կռահում եմ, թե ձեզ ինչն է տանջում... Հավատացեք, խորապես խղճում եմ ձեզ և պատրաստ եմ ձեզ օգնել... Բայց... սիրելիս,— բժշկի ձայնը դողաց լացակումած,— սիրելիդ իմ Անդրեյ Իլյիչ... որևէ կերպ չե՞ք կարող դիմանալ։ Հիշեցեք հապա, թե ինչ տանջանքների գնով ենք հաղթահարել այդ գարշելի սովորությունը։ Դժբախտություն կլինի, եթե հիմա ձեզ սրսկեմ... դուք այլևս երբեք... հասկանում եք, երբեք չեք դադարեցնի։

Բոբրովը բերանքսիվայր ընկավ մոմլաթապատ լայն բազմոցի վրա և սեղմած ատամների արանքից, ամբողջ մարմնով սրսփալով, մրմնջաց.

— Միևնույն է... ինձ համար մեկ է, բժիշկ... Այլևս չեմ դիմանում։

Բժիշկը հոգոց հանեց և դեղորայքի պահարանից հանեց նեբարկիչ տուփը։ Հինգ րոպե անց Բոբրովն արդեն խոր քնի մեջ պառկած էր մոմլաթապատ բազմոցին։ Անուշ մի ժպիտ էր խաղում նրա դալուկ, գիշերվա ընթացքում նիհարած դեմքի վրա։ Բժիշկը զգուշորեն նրա գլուխն էր լվանում։

1896

ՕԼԵՍՅԱ

1

Անտառի հսկիչ Յարմոլան՝ իմ սպասավորը, խոհարարը և ուղեկիցը որսի գնալիս, մտավ սենյակ, ցախի շալակի տակ կռացած, բեռը դխկդխկոցով հատակին գցեց ու փչեց սառած մատներին։

— Ո՜ւ, դրսում ի՞նչ քամի է, պարոն,— ասաց նա, պպզելով վառարանի առաջ։— Հարկավոր է լավ վառել։ Վառելիքը չե՞ք տա, պարոն։

— Ուրեմն, վաղը չենք գնալու նապաստակի, հը՞։ Ի՞նչ ես կարծում, Յարմոլա։

— Չէ... լինելո՝ բան չի... չե՞ք լսում, ինչ փոթորիկ է։ Նապաստակը հիմա պառկել ու՝ ոչ ձեն, ոչ ծպտուն... էգուց մի հատիկ հետք էլ չեք տեսնի։

Լրիվ վեց ամսով ճակատագիրն ինձ նետել էր Վոլինյան նահանգի մի խուլ գյուղ, Պոլեսյեի խորքերը, և որսը իմ միակ զբաղմունքն ու հաճույքն էր դարձել։ Խոստովանում եմ, այն ժամանակ, երբ ինձ առաջարկեցին գյուղ գնալ, ամենևին չէի մտածում, որ անտանելի ձանձրանալու եմ։ Նույնիսկ ուրախությամբ մեկնեցի։ «Պոլեսյե... խուլ տեղ... բնության գիրկ... հասարակ բարքեր... նախնական բնավորություններ,— մտածում էի ես, վագոնում նստած,— ինձ բոլորովին անծանոթ ժողովուրդ, իր տարօրինակ սովորություններով, ինքնատիպ լեզվով... և՝ այս մեկն արդեն հաստա՜տ, բանաստեղծական առասպելների, ավանդությունների ու երգերի ինչպեսի՜ առատություն»։ Իսկ ես այդ ժամանակ (որ պատմում եմ, ամեն ինչ էլ պատմեմ) արդեն հասցրել էի մի փոքրիկ թերթում պատմվածք տպագրել երկու սպանությամբ և մեկ ինքնասպանությամբ ու տեսա

կանորեն գիտեի, որ գրողների համար օգտակար է բարքեր ուսումնասիրելը։

Սակայն... կամ պերեբրոդցի գյուղացիներն էին աչքի ընկնում ինչ-որ առանձնահատուկ, համառ ինքնամփոփությամբ, կամ ես չէի կարողանում գործը գլուխ բերել. իմ փոխհարաբերությունները նրանց հետ սահմանափակվում էին լոկ նրանով, որ ինձ տեսնելով, դեռևս հեռվից նրանք հանում էին գլխարկները, իսկ ինձ հավասարվելիս մռայլորեն ասում էին. «Աստված... ական», որ պիտի նշանակեր «Աստված օգնական»։ Իսկ երբ փորձում էի խոսքի բռնվել նրանց հետ, ինձ էին նայում զարմանքով, հրաժարվում էին հասկանալ ամենահասարակ հարցերն ու մի գլուխ նեռվում էին ձեռքերս համբուրելու՝ լեհական ճորտատիրությունից մնացած հին սովորություն էր։

Մոտս եղած բոլոր գրքերը շատ շուտով կարդացի։ Ջանձրույթից, թեև սկզբում դա ինձ տհաճ թվաց, փորձեցի ծանոթանալ տեղական մտավորականության հետ, ի դեմ քսենձի, որն ապրում էր տասնհինգ վերստ հեռու, նրա հետ գտնվող «պան երգեհոնահարի», տեղի ուրյադնիկի և հարևան կալվածքի գործավարի, որ պաշտոնաթող ենթասպա էր, սակայն դրանից բան դուրս չեկավ։

Հետո փորձեցի զբաղվել պերեբրոդցիների բուժմամբ։ Իմ տնօրինության տակ կար գերշակի ձեթ, կարբոլաթթու, բորաթթու և յոդ։ Բայց այստեղ էլ, իմ ազքատիկ գիտելիքները չհաշված, դեմ առա ախտորոշման կատարյալ անհնարինությանը, որովհետև իմ բոլոր խնամյալների հիվանդությունների նշանները միշտ նույնն էին. «մեջտեղն է ցավում», «ոչ խմել եմ կարենում, ոչ ուտել»։

Օրինակ, մի ծեր կին եկավ մոտս։ Շփոթված տեսքով, աջ ցուցամատով քիթը սրբելով, ծոցից երկու հավկիթ հանեց, այդ ընթացքում մի վայրկյան տեսա նրա դարշնագույն մաշկը, ու դրեց սեղանին։ Հետո սկսեց ձեռքերս բռնել, որ համբուրի։ Ձեռքերս ետ տարա ու սկսեցի համոզել պառավին. «Հարկավոր չէ, տատիկ... թող... ես տերտեր չեմ... ինձ չի կարելի... Ի՞նչդ է ցավում»։

— Մեջտեղն է ցավում, պարոնս, ամենամեջտեղը, էնպես ոչ ոչ խմել եմ կարենում, ոչ ուտել։

— Վաղո՞ւց է այդպես։

— Բա ես գիտե՞մ,— հարցին հարցով պատասխանեց։—

Հո չի՞ տանջում, հո չի՞ տանջում։ Ոչ խմել եմ կարենում, ոչ ուտել։

Եվ որքան էլ տանջվեցի, հիվանդության ավելի որոշակի նշաններ չգտնվեցին։

— Մի անհանգստացեք,— մի անգամ ինձ խորհուրդ տվեց ենթասպա գործավարը,— իրենք իրենց կբուժվեն։ Շան պես են լավանում։ Ձեզ որ ասեմ, ես միայն մի դեղ եմ օգտագործում՝ անուշադր։ Մի մուժիկ էր եկել մոտս։ «Ի՞նչ է եղել»։ «Հիվանդ եմ»,— ասում է... Տեղնուտեղը անուշադրի սպիրտը դեմ արեցի քթին։ «Շնչիր»։ Շնչեց... «Էլի շնչիր... ավելի ուժեղ»։ Շնչեց... «Հը՞, թեթևացա՞ր»։ «Ոնց որ թե...»։ «Դե, գնա, աստված քեզ հետ»։

Բացի դրանից, ինձ զզվեցրել էր այդ ձեռք համբուրելը, մի քանիսն էլ ուղղակի ոտքերս էին ընկնում և ամեն կերպ աշխատում համբուրել սապոգներս։ Ամենևին էլ նրախտապարտ սրտի մղումից չէր դա, այլ ուղղակի դարավոր ստրկության ու բռնության հետևանքով առաջացած նողկալի սովորություն։ Ու ես զարմանում էի միայն նույն այդ նախկին ենթասպա գործավարի և ուրյադնիկի վրա, տեսնելով, թե ինչպիսի անվրդով ամբարտավանությամբ են նրանք իրենց հսկայական, կարմիր թաթերը պարզում մուժիկներին համբուրելու համար...

Ինձ մնում էր միայն որսը։ Բայց հունվարի վերջին այնպիսի եղանակ սկսվեց, որ որսի գնալն անհնարին դարձավ։ Ամեն օր սարսափելի քամի էր փչում, իսկ գիշերը ձյունը պատում էր ամուր, սառցե շերտով, որի վրայով նապաստակը վազում էր առանց հետք թողնելու։ Սենյակում փակված, քամու ոռնոցին ականջ դնելով, անասելի տխրում էի։ Հասկանալի է, թե ինչպիսի ագահությամբ ձեռնամուխ եղա այնպիսի մի անմեղ զբաղմունքի, ինչպիսին անտառային հսկիչ Յարմոլային գրել-կարդալ սովորեցնելն է։

Ի դեպ, բավական ինքնատիպ սկիզբ ունեցավ դա։ Մի անգամ նամակ էի գրում, հանկարծ զգացի, որ ետևումս ինչ-որ մեկը կանգնած է։ Շրջվեցի և տեսա Յարմոլային, որն, ինչպես միշտ, անձայն մոտեցել էր իր փափուկ տրեխներով։

— Ի՞նչ ես ուզում, Յարմոլա,— հարցրեցի ես։

— Զարմանում եմ, թե ոնց եք գրում։ Այ թե ես էլ կարենայի... Չէ, չէ... ձեր պես չէ,— շփոթված ու արագ ասաց նա, տեսնելով, որ ժպտում եմ։ — Մենակ ազգանունս...

— Ինչի՞դ է պետք,— զարմացա ես... (Հարկ է նկատել, որ Յարմոլան ամենաչքավոր ու ամենածույլ մուժիկն է համարվում ամբողջ Պերեբրոդում, ոռճիկն ու գյուղացու իր վաստակը խմելու է տալիս, նրա եզների պես վատ եզ ամբողջ շրջակայքում չկա։ Իմ կարծիքով, նրան ոչ մի դեպքում գրել-կարդալը պետք չէր կարող գալ)։ Մեկ անգամ էլ հարցրեցի երկմտությամբ.— Քո ինչի՞ն է պետք ազգանունդ գրել կարողանալը։

— Էսպիսի մի բան կա, պարոնա,— անսովոր մեղմությամբ պատասխանեց Յարմոլան,— մեր գյուղում ոչ մի գրաճանաչ մարդ չկա։ Որ մի թուղթ է պետք լինում ստորագրել կամ գործ է պատահում վոլոստում, կամ էլ ուրիշ բան... ոչ ոք չի կարենում... Տանուտերը մենակ կնիքը դնում է, ու ինքն էլ չի իմանում, թե ինչ է գրած։ Ամենքի համար էլ լավ կլիներ, թե մեկնումեկը ստորագրել իմանար։

Նման հոգածությունը Յարմոլայի՝ հայտնի դրսագողի, անհոգ-հրջմոլիկի կողմից, որի կարծիքը գյուղական ժողովի մտքով անգամ չէր անցնի երբևէ հաշվի առնել, հարազատ գյուղի հասարակական շահերի նկատմամբ այդ հոգածությունը, չգիտես ինչու, հուզեց ինձ։ Ինքս առաջարկեցի նրան դասեր տալ։ Եվ ի՞նչ ծանր աշխատանք էր դա՝ նրան գիտակցաբար կարդալ ու գրել սովորեցնելու իմ բոլոր փորձերը։ Յարմոլան, որ կատարելապես գիտեր իր անտառի յուրաքանչյուր կածանը. համարյա թե յուրաքանչյուր ծառը, որ կարողանում էր ցանկացած տեղում կողմնորոշվել գիշեր թե ցերեկ և հետքերով զանազանում էր շրջակա բոլոր գայլերի, նապաստակների ու աղվեսների հետքերը, նույն ինքը Յարմոլան ոչ մի կերպ չէր կարողանում պատկերացնել, թե ինչու, ասենք «մ» և «ա» տառերը միասին դառնում են «մա»։ Սովորաբար նման խնդրի վրա մի տասը բոպե, նաև ավելի, մտածում էր տանջվելով, ըստ որում նրա թուխ, նիհար դեմքը, ներս ընկած սև աչքերով, ամբողջովին կորած չոր, սև մորուքի և մեծ բեղերի մեջ, մտավոր լարման ծայրագույն աստիճանն էր արտահայտում։

— Յարմոլա, դե, ասա «մա»։ Պարզապես՝ մենակ ասա՝ «մա»,— ստիպում էի նրան։— Թղթին մի նայիր, ինձ նայիր, ա՛յ այդպես։ Դե, ասա «մա»...

Այդ ժամանակ Յարմոլան խորը հոգոց էր հանում, ցուցափայտը դնում էր սեղանին և տխուր ու վճռական ասում.

— Չէ... չեմ կարա...

— Ինչպե՞ս թե չես կարող։ Դրանից հեշտ բա՞ն։ Ուղղակի ասա «մա», այնպես, ինչպես ես եմ ասում։

— Չէ... չեմ կարա, պարոնս... մոռացել եմ...

Բոլոր մեթոդները, հնարները ու համեմատությունները ցրիվ էին գալիս հրեշավոր այդ անհասկացողությանը բախվելով։ Սակայն Յարմոլայի ձգտումը լուսավորության հանդեպ ամենևին չէր նվազում։

— Ինձ մենակ ազգանունս է պետք,— ամաչելով խնդրում էր ինձնից։— Ոգիշ էլ բան պետք չի։ Մենակ ազգանունս՝ Յարմոլա Պոպրուժուկ, ու էլ ոչ մի բան։

Վերջնականորեն հրաժարվելով նրան գիտակցաբար կարդալ-գրել սովորեցնելու մտքից, սկսեցի նրան մեքենայաբար ստորագրել սովորեցնել։ Ի մեծ զարմանս իմ, այդ միջոցն առավել մատչելի եղավ Յարմոլայի համար, այնպես, որ երկրորդ ամսվա վերջին համարյա հաղթահարեցինք ազգանունը։ Իսկ ինչ վերաբերում է անվանը, գործը հեշտացնելու նպատակով, որոշեցինք ընդհանրապես մի կողմ թողնել։

Ծրեկոները, վառարանները վառելուց հետո, Յարմոլան անհամբերությամբ սպասում էր, թե երբ եմ կանչելու իրեն։

— Դե, Յարմոլա, արի սովորենք,— ասում էի ես։

Նա կողքանց մոտենում էր սեղանին, արմունկներով հենվում, գրիչը մտցնում իր սև, կոշտացած, շծալվող մատների արանքը և, հոնքերը վեր բարձրացնելով, հարցնում էր ինձ.

— Գրե՞մ։

— Գրիր։

Յարմոլան բավականին վստահ նկարում էր առաջին տառը՝ «Պ» (այս տառն իր անվանումն ուներ մեզ մոտ. «երեք ձող, մեկը մեկից մեծ, վերևից էլ՝ մի ուրիշը»), հետո ինձ էր նայում հարցական։

— Իսկ ինչո՞ւ չես գրում։ Մոռացե՞լ ես։

— Մոռացել եմ...— բարկացած գլուխն էր ճոճում Յարմոլան։

— Էհ, ինչ մարդ ես։ Դե, երկու ոտ, մեկն էլ վրայից։

— Ա-ա՜։ Ոտերը, ոտերը... Իմացա...— աշխուժանում էր Յարմոլան և ջանասիրաբար թղթի վրա վերև ձգված մի բան նկարում, իր գծագրությամբ շատ նման Կասպից ծովին։ Վերջացնելով այդ աշխատանքը, որոշ ժամանակ լուռ հիանում էր

արածով, գլուխը մեկ ձախ, մեկ աջ թեքելով ու աչքերը կեսցելով։

— Ի՞նչ կանգնեցիր։ Շարունակիր գրելը։

Մի երկու բոպե նա մտածում էր, հետո վախենալով հարցնում.

— Առաջինի պե՞ս։

— Ճիշտ է։ Գրիր։

Այսպիսով մենք քիչ-քիչ հասանք վերջին «կ» տառին, որը մեզ մոտ հայտնի էր որպես «բարձր ու ցածր երկու ձող, տակը կապած»։

— Ի՞նչ եք կարծում, պարոնս,— երբեմն ասում էր Յարմոլան, գործն ավարտելով և սիրով, հպարտությամբ դրան նայելով,— թե մի հինգ-վեց ամիս էլ սովորեի, շատ լավ կիմանայի արդեն։ Ի՞նչ կասեք։

2

Վառարանի առաջ պպզած, Յարմոլան ածուխներն էր խառնըշտորում, իսկ ես անկյունագծով ետուառաջ էի քայլում իմ սենյակում։ Կալվածատիրական վիթխարի տան տասներկու սենյակներից միայն մեկն էի զբաղեցնում ես. նախկին հանգստի սենյակը։ Մնացածը փակի տակ էին, այնտեղ անշարժ ու հանդիսավորությամբ բորբոսապատվում էին հնամենի ծանրապաստառ կահույքը, բրոնզե անճոռնի իրերը և XVIII հարյուրամյակի դիմանկարները։

Տան պատերից այն կողմ քամին մոլեգնել էր, ինչպես ծեր, սառած ու մերկ մի սատանա։ Տնքոցներ էին լսվում նրա ոռնոցի մեջ, ծղրտոց ու վայրենի ծիծաղ։ Երեկոյան դեմ բուքն ավելի սաստկացավ։ Ինչ-որ մեկը դրսից մանր ու չոր ձյան բռեր էր կատաղած շպրտում պատուհանների ապակիներին։ Մոտակա անտառը աղմկում ու թնդում էր անընդմեջ, զսպված և խուլ սպառնալիքով...

Քամին ներխուժում էր դատարկ սենյակներն ու վառարանների ոռնացող ծխնելույզները, և հին, ամբողջովին խարխլված, ծակառատ, կիսավեր տունը հանկարծ կենդանանում էր արտառոց ձայներով, որոնց ականջ էի դնում ակամա տագնապով։ Ահա ինչ-որ բան ասես տնքաց սպիտակ դահլիճում, տնքաց խորը, շնչակտուր, թախծալի։ Ահա խորքերում շարժվեցին ու

ճոճոացին հատակի չորացած և փտած տախտակներն ինչ-որ մեկի ծանր ու անձայն քայլերի տակ։ Ապա ինձ թվում էր, թե իմ սենյակի կողքի միջանցքում մեկը զգուշորեն և համառությամբ սեղմում է դռան բռնակը, ապա, մեկեն կատաղելով, սլանում է տնով մեկ, փրփրած ցնցելով բոլոր փեղկերն ու դռները, կամ մտնելով խողովակի մեջ վնգստում է աղիողորմ, ձանձրալի ու անվերջանալի, ձայնը մերթ ավելի ու ավելի բարակեցնելով, հասցնելով աղիողորմ կլանչի, մերթ իջեցնելով, գաղտնի մռնչյուն դարձնելով։ Մեկ-մեկ, աստված գիտե թե որտեղից, այդ սարսափելի հյուրն իմ սենյակն էլ էր խուժում, հանկարծակի սարսուռով մեջքիս վրայով անցնում և տատանում էր լամպի բոցը, որն աղոտ լույս էր արձակում կանաչ ստվարաթղթե, վերևն այրված լուսամփոփի տակից։

Տարօրինակ, անորոշ անհանգստություն պարուրեց ինձ։ Ահա, մտածում էի ես, խորն ու բքառատ ձմռան գիշերով նստած եմ մի հին տան մեջ, անտառների և ձնաթմբերի մեջ կորած գյուղում, հարյուրավոր վերստերով հեռու քաղաքային կյանքից, հասարակությունից, կանացի ծիծաղից, մարդկային խոսակցությունից... Եվ ինձ սկսում էր թվալ, թե տարիներ ու տասնյակ տարիներ պիտի ձգվի այս ցուրտ երեկոն, պիտի ձգվի մինչև իմ մահը, և ճիշտ այսպես կոռնա քամին, այսպես աղոտ կվառվի լամպը կանաչ ու ողորմելի լուսամփոփի տակ, այսպես տագնապած ետուառաջ կքայլեմ իմ սենյակում, վառարանի մոտ հենց այդպես նստած էլ կմնա լուռ, կենտրոնացած Յարմոլան՝ տարօրինակ, ինձ խորթ մի էակ, աշխարհում ամեն ինչի նկատմամբ անտարբեր. թե՛ որ տանն ընտանիքը բան չունի ուտելու, թե՛ որ մոլեգնել է քամին, թե՛ որ անորոշ, սիրտ մաշող թախիծ եմ ապրում։

Հանկարծ անտանելի կերպով ուզեցա այդ տանջալի լռությունը մարդկային ձայն հիշեցնող ինչ-որ բանով խախտել, և հարցրեցի.

— Յարմոլա, ի՞նչ ես կարծում, այսօր որտեղի՞ց է այս ան-սակ քամին։

— Քամի՞ն,— պատասխանեց Յարմոլան, ծուլորեն բարձրացնելով գլուխը։— Բա պարոնը չգիտի՞։

— Իհարկե, չգիտեմ։ Որտեղի՞ց պիտի իմանամ։

— Իսկականի՞ց չեք իմանում,— հանկարծ աշխուժացավ Յարմոլան։— Ասեմ ձեզ,— շարունակեց նա, ձայնի մեջ խոս-

հրդավոր երանգ,— ասեմ ձեզ. կամ աղջիկ կախարդ ծնված կլինի, կամ էլ թե չէ կախարդը քնի է անում։

Անհագությամբ վրա պրծա Յարմոլային։ «Ո՞վ գիտե,— մտածում էի ես,— գուցե հենց հիմա ինձ հաջողվի նրանից մի հետաքրքիր պատմություն կորզել, կապված կախարդության, հորած գանձերի, վհուկների և չարքերի հետ...»։

— Իսկ այստեղ, ձեզ մոտ, վհուկներ կա՞ն,— հարցրեցի ես։

— Չեմ իմանում... Կարող է կան,— պատասխանեց Յարմոլան՝ նախկին անտարբերությամբ և նորից կռացավ վառարանի վրա։— Մերերն ասում են, որ մի ժամանակ եղել են... Կարող է ճիշտ չի...

Իսկույն հիասթափվեցի։ Յարմոլայի բնորոշ գիծը համառ բշախոսությունն էր, և արդեն այդ հետաքրքիր նյութի մասին նրանից ուրիշ որևէ բան սպասելուց հույսս կտրեցի. Սակայն ի զարմանս իմ, նա հանկարծ սկսեց ծույլ անփութությամբ, ասես ոչ թե ինձ դիմելով, այլ՝ թնդացող վառարանին։

— Մի հինգ տարի առաջ էդ տեսակ մի կախարդ կար մեզ մոտ... Մենակ թե տղերքը գյուղից քշեցին։

— Իսկ ո՞ւր քշեցին։

— Ուր պիտի... Անտառ, էլ ո՞ւր... Անտառ։ Խրճիթն էլ քանդեցին, որ էլ մի տաշեղ չմնար էդ անիծված քաւբախից... Իրեն էլ գյուղից հանեցին ու վզակոթին տալով քշեցին։

— Իսկ ինչի՞ համար այդպես արեցին։

— Շատ վնաս էր տալիս. ամենքի հետ կռիվ կաներ. տների տակ կախարդական ջուր կլցներ, թուղթ ու գիր կաներ... Մի անգամ մեր ջահել կնանքանցից մեկից զլոտ էր ուզել (տասնհինգ կոպեկ)։ Սա ասել էր, թե «Զլոտ չունեմ, թող գնա»։ «Դե լավ,— ասել էր,— քեզ կհիշացնեմ, որ ինձ զլոտ չտվիր...»։ Ու ինչ եք կարծում, պարոնս. էդ օրվանից էդ կնկա էրեխեն հիվանդացավ։ Հիվանդացավ ու հիվանդացավ, հետո էլ մեռավ։ Էդ ժամանակ էլ տղերքը կախարդին քշեցին, աչքը դուրս գա, տեղն էր...

— Լավ, իսկ հիմա որտե՞ղ է այդ կախարդը,— շարունակեցի հետաքրքրվելով։

— Կախա՞րդը,— իր սովորության համաձայն դանդաղորեն հարցը կրկնեց Յարմոլան։— Բա ես գիտե՞մ։

— Մի՞թե ոչ մի հարազատ չի մնացել գյուղում։

— Չէ, չի մնացել։ Օտար տեղի կնիկ էր, կացապ՝ էր թե՝

[1] Մալոռուսներն այսպես են կոչել վելիկոռուսներին (ծան. թարգմ.)։

բոշա... Ես սուճուր տղա էի, որ դա մեր գյուղն էր եկել։ Մի աղջիկ էրեխա էլ կար հետը. աղջիկն էր, թե թոռը... Էրկսին էլ քշեցին...

— Իսկ հիմա մի՞թե ոչ ոք նրա մոտ չի գնում. բախտ բացելու կամ դեղ-մեղ ուզելու։

— Կնանիք գնում են,— արհամարհանքով նետեց Յարմոլան։

— Ըհը։ Ուրեմն, այնուամենայնիվ, հայտնի՞ է, թե որտեղ է ապրում։

— Չեմ իմանում... Ասում են, Սատանի ծակի կողմերն է ապրում... Ճահիճը գիտե՞ք, Իրինովկի ճամփի ետևը։ Ուրեմն, էդ ճահճի մեջ էլ նստած է, դրա մերը մեռնի, հա՞։

«Իմ տնից մի տասը վերստի վրա կախարդուհի է ապրում... իսկական, կենդանի, պոլեսյան կախարդուհի»։ Այս միտքն իսկույն հետաքրքրեց, հուզեց ինձ։

— Ինձ լսիր, Յարմոլա,— դիմեցի անտառային հսկիչին,— իսկ ես ինչպե՞ս ծանոթանամ այդ կախարդ կնոջ հետ։

— Թյո՛ւհ,— զայրացած թքեց Յարմոլան։— Համա բան գտաք, հա՞։

— Գտա, թե չգտա, մեկ է, նրա մոտ գնալու եմ։ Հենց մի քիչ տաքացավ, ճամփա եմ ընկնելու։ Դու ինձ կտանես, չէ՞։

Վերջին ասածս այնպես ապշեցրեց Յարմոլային, որ նա նույնիսկ վեր ցատկեց հատակից։

— Ե՞ս,— զայրացած բացականչեց նա։— Մտքովս էլ չի անցնի։ Աստծու տված ձեռքս, ես գնացողը չեմ։

— Հիմար բաներ ես ասում, կգնաս։

— Չէ, պարոնս, չեմ գնա... ինչ էլ տաս, չեմ գնա... Ե՞ս, գնա՞մ,— նորից բացականչեց նա, վրդովմունքի նոր բռնկումով,— որ ես գնամ կախարդի բո՞ւնը։ Աստված աչքերս թող հանի։ Ձեզ էլ խորհուրդ չեմ տա, պարոնս։

— Ինչպես կուզես... իսկ ես գնալու եմ։ Ինձ համար շատ հետաքրքիր կլինի նրան տեսնելը։

— Հետաքրքիր բան չկա էնտեղ,— փնթփնթաց Յարմոլան, բարկացած շրխկացնելով վառարանի դռնակը։

Մեկ ժամ անց, երբ նա ինքնաեռը տեղը դնելուց և մութ հաշտում թեյը խմելուց հետո, պատրաստվում էր տուն գնալ, հարցրեցի.

— Այդ կախարդի անունն ի՞նչ է։

— Մանուլլիխա,— կոպիտ մռայլությամբ պատասխանեց Ցարմոլան։

Թեև նա երբեք իր զգացմունքները չէր արտահայտում, սակայն, թվում էր, թե շատ է կապվել ինձ հետ, կապվել էր որսի հանդեպ մեր ընդհանուր մոլությունից, իմ հասարակ վերաբերմունքից, այն օգնությունից, որ մեկ-մեկ ցուցաբերում էի մշտապես քաղցած նրա ընտանիքին, իսկ գլխավորապես այն պատճառով, որ աշխարհում միակ մարդն էի, որ հարբեցողության համար չէի կշտամբում նրան, ինչը Ցարմոլան տանել չէր կարողանում։ Դրա համար էլ կախարդուհու հետ ծանոթանալու իմ վճռականությունը նրան գարշելի տրամադրության մեջ էր գցել, ինչ նա արտահայտեց սոսկ քիթը վրա-վրա վեր քաշելով, նաև նրանով, որ առմուտք ելնելով, ամբողջ ուժով ոտքով խրփեց իր շան՝ Ռյաբչիկի փորին։ Ռյաբչիկը աղեկտուր վնգստաց ու մի կողմ թռավ, բայց իսկույն վազ տվեց Ցարմոլայի ետևից, վնգստոցը չկտրելով։

3

Երեք օր անց եղանակը մեղմվեց։ Մի անգամ, առավոտյան, շատ վաղ, Ցարմոլան սենյակս մտավ և անփութորեն հայտարարեց.

— Հրացանը մաքրել է հարկավոր, պարոն։

— Իսկ ի՞նչ կա,— հարցրեցի ես, վերմակի տակ ձգմռվելով։

— Գիշերով նապաստակը լավ ման է եկել. ափը հետք կա։ Չգնա՞նք մի քիչ պտույտ տանք...

Տեսնում էի, որ Ցարմոլան անհամբեր սպասում է որքան հնարավոր է շուտ գնալ անտառ, սակայն որսորդի այդ կրքոտ ցանկությունը թաքցնում է շինծու անտարբերությամբ։ Իրոք, նախասենյակում դրված էր նրա միփողանին, որից դեռևս ոչ մի կտցար չէր ազատվել, թեև փողաբերանի մոտ կապարե մի քանի կարկատաններով էր զարդարված, դրված այն տեղերում, ուր ժանգը և վառոդի գազերը քայքայել էին երկաթը։

Դեռ անտառ չմտած, տեղնուտեղը նապաստակի հետքի հանդիպեցինք. երկու թաթ կողք-կողքի, երկուսը ետևից, մեկը մյուսի վրա։ Նապաստակը ելել էր ճամփա, մի երկու հարյուր սաժեն գնացել և ճամփի վրայից հսկայական ցատկ կատարել սոճու մատղաշ անտառը։

— Վա՜յ, հիմի քո դեմը կկտրենք,— ասաց Ցարմոլան։— Ոնց որ թռել ես։ Էնպես էլ կպառկես։ Պարոն, դուք գնացեք...— Նա սկսեց մտածել, միայն իրեն հայտնի ինչ-որ նշաններով հասկանալով, թե որ կողմն ուղարկի ինձ...— Դուք գնացեք մինչև հին պանդոկը։ Ես էլ Զամլինի կողմից դեմ կելնեմ։ Հենց որ շունը քշեց դուրս, ես ձեն կտամ։

Եվ նա անմիջապես անհետացավ, ասես սուզվեց մանր թփուտների խիտ թավուտը։ Ես ականջ դրեցի։ Ոչ մի հնչյուն չմատնեց որսագողի նրա քայլքը, ոչ մի ճյուղ չկոտրվեց քրձենու տրեխներ հագած նրա ոտքերի տակ։

Անշտապ հասա հին պանդոկ՝ ամայի, ավերակ խրճիթ էր, և կանգնեցի փշատերև անտառի եզրին, ուղիղ ու մերկ բնով բարձրը մի սոճենու տակ։ Այնպիսի լռություն էր, ինչպես լինում է միայն ձմռան անքամի օրն անտառում։ Ճյուղերի վրա նստած ձյան փարթամ գնդերը ցած էին հակել ճյուղերը, հրաշալի, տոնական ու սառը տեսք տալով դրանց։ Մերթընդմերթ կատարից մի բարակ ճյուղ էր պոկվում, և չափազանց հստակ լսվում էր, թե ընկնելով ինչպես է ճայթյունով դիպչում մյուս ճյուղերին։ Ձյունը վարդագույն էր դառնում արևի տակ ու կապտում ստվերում։ Այդ հանդիսավոր, ցուրտ անձայնության մեղմիկ հմայքը պարուրեց ինձ, և թվաց, թե զգում եմ ժամանակի դանդաղ ու անաղմուկ անցումն իմ կողքով...

Հանկարծ հեռվում, հենց թավուտում լսվեց Ռյաբչիկի հաչոցը՝ որսի ետևն ընկած շան բնորոշ հաչոցը. բարակ, բեկբեկուն ու նյարդային, որ համարյա ծղրտոցի է հասնում։ Անմիջապես լսեցի Ցարմոլայի ձայնը նույնպես, որ կատաղած բղավում էր շան ետևից. «Կը՛ս-նե՛մ։ Կը՛ս-նե՛մ», առաջին վանկը ձիգ ու հատու ֆալցետով, իսկ երկրորդը կերկեր բասով (երկար ժամանակ հետո միայն իմացա, որ պոլեսյան որսորդական այդ բղավոցն առաջացել է «սպանել» բայից)։

Հաչոցի ուղղությունից դատելով, ինձ թվաց, թե շունը քշում է ինձնից ձախ, և ես շտապ վազեցի բացատով, նապաստակի դեմը կտրելու համար։ Սակայն չէի հասցրել քսան քայլ անել, երբ մոխրագույն խոշոր նապաստակը կոճղի ետևից դուրս ցատկեց և կարծես չշտապելով, երկար ականջները մեջքին ծալած, երկար ու հազվադեպ ցատկերով ճանապարհն անցավ ու

Թաքնվեց մատղաշ անտառում։ Նրա ետևից սրընթաց դուրս թռավ Ռյաբչիկը։ Ինձ տեսնելով, թեթևակի շարժեց պոչը, շտապ-շտապ մի քանի անգամ ձյունը խածեց ու նորից ընկավ նապաստակի ետևից։

Յարմոլան հանկարծ նույնպես անաղմուկ դուրս ելավ թավուտից։

— Պարոն, էդ ինչի՞ ճամփեն չկտրիք,— բղավեց նա և հանդիմանանքով ճպպացրեց լեզուն։

Տեսնելով իմ շփոթմունքը, Յարմոլան մեղմացավ։

— Լավ, բան չկա... Դա մեզնից սրբենողը չի։ Գնացեք Իրինովսկի ճանապարհը, հիմի էնտեղից է դուրս գալու։

Ես գնացի Իրինովսկի ճանապարհի ուղղությամբ և արդեն երկու րոպե անց լսեցի, որ շունը նորից որսի ետևն է ընկել ինձնից ոչ հեռու։ Որսորդական հուզմունքով տարված, հրացանս առաջ բռնած, վազեցի խիտ մացառուտի միջով, ճյուղեր ջարդելով և ուշադրություն չդարձնելով դրանց դաժան հարվածների վրա։ Այդպես բավական երկար վազեցի, և արդեն շունչս կտրվում էր, երբ հանկարծ շան հաչոցն ընդհատվեց։ Ավելի կամաց գնացի։ Ինձ թվաց, որ եթե շարունակ ուղիղ գնամ, ապա անպայման կհանդիպեմ Յարմոլային՝ Իրինովսկի ճանապարհի վրա։ Սակայն շուտով համոզվեցի, որ վազքի ժամանակ, շրջանցելով թփուտներն ու կոճղերը և բոլորովին չմտածելով ճանապարհի մասին, մոլորվել եմ։ Այդ ժամանակ սկսեցի ձայն տալ Յարմոլային։ Նա չէր պատասխանում։

Մինչ այդ մեքենայաբար առաջ էի գնում։ Անտառը փոքր-ինչ նոսրանում էր, հողն իջնում էր և գուղձառատ դառնում։ Ձյան վրա ոտքիս թողած հետքն արագորեն մգանում և ջրով էր լցվում։ Մի քանի անգամ արդեն խրվել էի մինչև ծնկներս։ Ստիպված էի գուղձից գուղձ ցատկել, դրանք ծածկող խիտ, գորշ մամուռի մեջ ոտքերս թաղվում էին, ինչպես փափուկ գորգի վրա։

Մացառուտը շուտով լիովին վերջացավ։ Իմ դիմաց մեծ ու կլոր ճահիճ էր, ձյունով պատված, որի ճերմակ թաղանթի տակից հազվագեպ ճիմաթմբեր էին ցցված։ Ճահճի հակադիր ծայրին, ծառերի արանքում, ինչ-որ խրճիթի սպիտակ պատեր էին երևում։ «Հավանորեն Իրինովսկի անտառապահն է այնտեղ ապրում,— մտածեցի ես։— Պետք է գնալ ու հարցնել ճանապարհը»։

Բայց խրճիթին հասնելն այնքան էլ հեշտ չէր։ Բոպեն մեկ

խրվում էի ճահճի մեջ։ Սապոգներիս մեջ ջուր էր լցվել, և ամեն քայլափոխին բարձրաձայն ճլմփոց էր լսվում, դժվարանում էր քայլափոխը։

Վերջապես ճահիճը կտրեցի անցա, բարձրացա մի փոքրիկ թմբի վրա և հիմա կարող էի լավ զննել խրճիթը։ Նույնիսկ խրճիթ էլ չէր դա, այլ ճիշտ հեքիաթային տնակ, հավի տոտերի վրա։ Դրա հատակը գետնին չէր կպչում, ցցերի վրա էր սարքված, հավանորեն գարնանն ամբողջ Իրինովսկի անտառը ողողող վարարումների պատճառով։ Բայց ժամանակի ընթացքում մի կողմը նստել էր, և դա խրճիթին կաղ ու տխուր տեսք էր տալիս։ Պատուհանների մի քանի ապակիները չկային, դրանց փոխարեն կեղտոտ, ուռուցիկ քրջեր էին դուրս պրծած։

Մղլակը սեղմեցի և բացեցի դուռը։ Խրճիթում շատ մութ էր, ու քանի որ երկար ժամանակ ձյանն էի նայել, աչքերիս առջև մանուշակագույն օղակներ էին լողում, այդ իսկ պատճառով էլ երկար ժամանակ չէի կարողանում պարզել՝ որևէ մեկը կա՞ խրճիթում։

— Էյ, բարի մարդիկ, տանն ո՞վ կա,— բարձրաձայն հարցրեցի ես։

Վառարանի մոտ ինչ-որ բան շարժվեց։ Ես մոտ գնացի ու հատակին նստած մի պառավ տեսա։ Նրա առաջ հավի փետուրների հսկայական մի կիտուկ կար։ Պառավը վերցնում էր մեկմեկ, փետուրը վրայից մաշկում, զամբյուղի մեջ էր դնում, իսկ կոթոնն ուղղակի շպրտում գետին։

«Չէ որ սա Մանուլլիխան է, իրինովսկցի կախարդուհին»,— առկայծեց գլխումս, հենց որ ուշադրությամբ նայեցի պառավին։ Ջադու պառավի բոլոր դիմագծերը, ինչպես ժողովրդական էպոսն է նկարագրում, առկա էին. ներս քաշված նիհար այտերը ներքևում դառնում էին սուր, երկարուկ, թորշոմած կզակ, որը համարյա քսվում էր ցած կախված քթին, ներս ընկած անատամ բերանը շարունակ շարժվում էր, ասես ինչ-որ բան ծամելով, երբեմնի երկնագույն, գունաթափ, սառը, կլոր, ուռած աչքերը, շատ կարճ, կարմիր կոպերով ասես անծանոթ, չարագույժ թռչնի աչքեր լինեին։

— Բարև, տատիկ,— ասացի հնարավորին չափ բարեհամբույր։— Չլինի՞ անունդ Մանուլլիխա է։

Ի պատասխան ինչ-որ բան քլթքլթաց ու խոխոջաց պառավի կրծքում, հետո նրա անատամ, ճմճմացող բերանից տարօրինակ

հնչյուններ դուրս եկան՝ մեկ նման ծեր ագռավի շնչասպառ կռռոցի, մեկ խռպոտ ու կերկեր ֆալցետ դառնալով.

— Կարող է առաջ բարի մարդիկ Մանուլլիխա են ասել... Հիմի էլ ոչ անուն են տալիս, ոչ էլ ունենամ։ Քո ուզա՞ծն ինչ է,— անբարյացակամորեն հարցրեց նա, չդադարեցնելով իր միօրինակ զբաղմունքը։

— Ինչ ասեմ, տատի, մոլորվել եմ։ Կարո՞ղ է կաթ ունենաս։

— Կաթ չկա,— բարկացած վրա բերեց պառավը։— Ջերպես մարդիկ՝ անտառում ինչքան ասես... Ամենքիդ ուտեցնել, խմեցնել չի լինի...

— Է՜, տատի, լավ չես ընդունում հյուրերիդ։

— Ճիշտ ես ասում, որդի. իսկի լավ չեմ ընդունում։ Համեղ բաներ չունեմ ձեզ համար պահած։ Հոգնած ես, նստիր, տնից քեզ հանող չկա։ Էն առածը գիտե՞ս, որ ասում է. «Ծկեք նստեք մեր թախտին, մեր կերուխումի ձենը լսեք, ձեր տուն ճաշի գալու խելքը մենք էլ ունենք»։ Էնպես որ էդպես...

Խոսքի այս դարձվածքներն իսկույն համոզեցին ինձ, որ պառավն, իրոք եկվոր է այս կողմերում, այստեղ չեն սիրում ու չեն հասկանում թունդ, հազվագյուտ բառերով համեմված խոսքը, որով այնպես հաճույքով պարծենալ գիտե լեզվանի հյուսիսցին։ Մինչ այդ պառավը, մեքենայորեն շարունակելով իր գործը, դեռ ինչ-որ բաներ էր մրթմրթում քթի տակ, ավելի ու ավելի ցածրաձայն, անհասկանալի։ Առանձին բառեր էի միայն որսում, որոնք իրար հետ ոչ մի կապ չունեին. «Էդ էլ քեզ՝ Մանուլլիխա տատիկ... Թե դու ով ես՝ ինչ իմանամ... Տարիքս էլ փոքր չի... Ոտքերը դեսուդեն տանում, ճտպտացնում, կշկշում՝ ոնց որ կաչաղակ...»։

Որոշ ժամանակ լուռ ականջ էի դրել, և հանկարծակի մի միտք, որ դիմացս նստածը խելագար կին է, խորշագին վախի զգացում առաջ բերեց։

Սակայն հասցրեցի շորս կողմս նայել։ Խրճիթի մեծ մասը զբաղեցնում էր հսկայական, ծեփը թափած վառարանը։ Դիմացի անկյունում սրբապատկերներ չկային։ Պատերին, կանաչ բեղերով ու մանուշակագույն շներով սովորական որսորդների և բոլորին անհայտ գեներալների դիմանկարների փոխարեն, կախված էին չորացրած խոտերի փնջեր, ճլորած արմտիքի կապուկներ և խոհանոցային աման-չաման։ Ոչ բու, ոչ սև կատու չնկատեցի, սակայն վառարանի վրայից չալպտուրիկ երկու պատկառազդու սարյակ ինձ էին նայում զարմանքով և անվստահությամբ։

— Տատի, իսկ գոնե ջուր կարելի՞ է խմել ձեր տանը,— հարցրեցի ես, ձայնս բարձրացնելով։

— Հրեն ջուրը, ամանի մեջ,— գլխով արեց պառավը։

Ջրից ճահճաժանգի համ էր գալիս։ Պառավին շնորհակալություն հայտնելով (ինչին նվազագույն ուշադրություն անգամ չդարձրեց), հարցրեցի, թե ինչպես դուրս գամ ճանապարհ։

Նա հանկարծ բարձրացրեց գլուխը, սևեռ ինձ նայեց իր սառը ու թռչնային աչքերով և արագ-արագ փնթփնթաց.

— Գնա, գնա.. Գնա, ջահել, ճամփովդ գնա։ Էստեղ անելիք չունես։ Հյուրը հրավերով կլինի... Գնա, որդի. գնա...

Իրոք, այլ անելիք չունեի, գնալուց բացի։ Բայց հանկարծ գլուխս մտավ վերջին միջոցը փորձել՝ այդ խիստ պառավին գոնե մի քիչ փափկեցնելու։ Գրպանիցս արծաթյա նոր քառորդ ռուբլիանոց հանեցի և մեկնեցի Մանուլլիխային։ Չէի սխալվել. փող տեսնելով, պառավն իրար եկավ, աչքերն ավելի լայնացան, և իր կուչուկծիկ, կոշտուկապատ, դողդողացող մատները պարզեց, դրամը վերցնելու։

— Է՜, չէ՜, Մանուլլիխա, հենց էնպես չեմ տա,— դրամը պահելով, հոգու հետ խաղացի։— Բախտս բացի, տատ։

Կախարդուհու դարչնագույն կնճռապատ դեմքին դժգոհ ծամածռություն երևաց։ Ըստ երևույթին, նա տատանվում էր, և անվճռականորեն բռունցքիս էր նայում, ուր դրամն էր։ Բայց ագահությունը հաղթեց։

— Դե լավ, գնանք, գնանք,— ճմճմացրեց նա, դժվարությամբ ելնելով հատակից։— Հիմի էլ ոչ ոքի չեմ բացում, սիրուն տղա... Մոռացել եմ... Պառավել եմ, աչքերս չեն տեսնում։ Կարող է մենակ քեզ համար։

Պատից բռնած, ամեն քայլափոխին ցնցվելով կորացած մարմնով, նա մոտեցավ սեղանին, մի կապուկ սևացած, ժամանակից ուռած խաղաթղթեր հանեց, խառնեց ու մեկնեց ինձ։

— Քաշի տեսնեմ... Զախ ձեռքով քաշի... Սրտից կլինի...

Մատները թքոտելով, նա սկսեց դասավորել գուշակաշարը։ Խաղաթղթերը սեղանին էին ընկնում այնպիսի ձայնով, կարծես խմորից էին պատրաստված և դասավորվեցին ութանիստ ուղիղ աստղի ձևով։ Երբ վերջին խաղաթուղթը, աստառը վեր, պառկեց թագավորի վրա, Մանուլլիխան ձեռքը պարզեց ինձ։

— Ձեռս տաքացրու, սիրուն պարոն... Բախտավոր կլինես, հարուստ կլինես...— երգեցիկ ձգեց մուրացկանական, զուտ գնչուական տոնով։

Դրամը նրան տվեցի։ Պառավը, կապիկի պես ճարպկորեն, դրամն այտի տակ մտցրեց։

—Քեզ մեծ շահ է սպասում երկար ճամփի վրա, — սկսեց սովորական շուտասելուկով։— Կհանդիպես ու մի լավ խոսակցություն կունենաս քարփընջի աղջկա հետ, մի կարևոր տան մեջ։ Շուտով մի լուր կստանաս խաչի թագավորից, որ չէիր սպասում։ Մանր-մունր հոգսեր են եկել, հետո էլ՝ քիչ-քիչ գումարներ կստանաս։ Մի մեծ սեղանի կնստես, հարբած կլինես... Էնքան էլ չէ որ ասեմ, բայց խմելու ես։ Երկար կյանք ես ունենալու։ Թե որ վաթսունյոթ տարեկան չմեռար, ուրեմն...

Հանկարծ նա ընդհատեց, գլուխը բարձրացրեց, ասես ինչ-որ բանի ականջ դնելով։ Ես նույնպես զգուշացա։ Կանացի մի զուլալ, զրնգուն և ուժեղ ձայն էր երգում, խրճիթին մոտենալով։ Ես նույնպես հասկացա մայրենական նրբագեղ երգի բառերը.

Օյ, ծաղիկ էր, թե՝ տերև,
Ծառը իրար տվեցին,
Օյ, քուն էի, թե արթուն,
Գլուխս կախ գցեցին...

— Դե գնա, հիմի գնա, ջահել,— խռովված իրար անցավ պառավը, ձեռքով ինձ հրելով սեղանի մոտից։— Օտար մարդկանց տներում գործ չունես։ Գնա քո ճամփեն...

Նույնիսկ բռնեց բաճկոնիս թևքն ու քաշում էր դռան կողմը։ Նրա դեմքը մի տեսակ գազանային անհանգստություն էր արտահայտում։

Երգող ձայնը հանկարծ շատ մոտիկ կտրվեց, խրճիթի մոտ, բարձր զրնգաց երկաթյա մղլակը, և արագ բացված դռան լույսի մեջ բարձրահասակ, ծիծաղը դեմքին մի աղջիկ երևաց։ Երկու ձեռքերով խնամքով բռնել էր շերտավոր գոգնոցը, որի միջից կարմիր վզիկներով ու սև փայլուն աչքերով երեք ճստլիկ թոչնի գլուխներ էին դուրս նայում։

— Մի տես, տատի, էլի սերինոսների ձեռից պրծում չունեցա,— բացականչեց նա, բարձրաձայն ծիծաղելով,— տես, ինչ ծիծաղելի են... Շատ սոված են։ Ես էլ հաց չէի տարել հետս։

Սակայն ինձ տեսնելով, մեկեն լռեց և թանձր շառագույնը բռնկվեց այտերին։ Բարակ ու սև հոնքերը դժգոհությամբ հավաքվեցին, իսկ աչքերը հարցական նայեցին պառավին։

— Էս պարոնն եկավ... ճամփեն է հարցնում,— բացատրեց պառավը։— Դե, որդի,— վճռական դեմքով դարձավ ինձ,— հերիք ինչքան հանգստացար։ Ջուրդ խմեցիր, խոսքդ խոսեցիր, հարգ ու պատիվն էլ լավ բան է։ Մենք քեզ ի՞նչ ընկեր...

— Լսիր, գեղեցկուհի,— ասացի աղջկան։— Խնդրում եմ, ինձ ցույց տուր Իրինովսկի ճանապարհ տանող կողմը, թե չէ ձեր ճահճից հուր-հավիտենական դուրս գալ չի լինի։

Հավանաբար, նրա վրա ազդեց մեղմ, հայցողական երանգը, որ հաղորդեցի ասածիս։ Նա հոգածությամբ վառարանին դրեց իր սերինոսներին, սարյակների գողը, թախտին գցեց արդեն հանած կարճլիկ բաճկոնը և լուռ դուրս եկավ խրճիթից։

Ես հետևեցի նրան։

— Ջո բոլոր թռչունները ձեռնասո՞ւն են.— հարցրեցի ես, նրան հասնելով։

— Ձեռնասուն են, — հատու պատասխանեց նա և նույնիսկ չնայեց ինձ։— Ուրեմն, նայեք,— ասաց նա, կանգ առնելով ցանկապատի մոտ։— Կածանը տեսնո՞ւմ եք, ա՛յ էն է, է՛ն, սոճիների արանքով։ Տեսա՞ք։

— Տեսա...

— Դրանով գնացեք միշտ ուղիղ։ Հենց հասաք կաղնու կոճղերին, կթեքվեք ձախ։ Էդպես ուղիղ, միշտ անտառի միջով, անտառի միջով կգնաք։ Իրինովսկի ճամփեն կգա ձեր առաջ։

Այն ժամանակ, երբ աջ ձեռքն առաջ պարզած, ճանապարհի ուղղությունն էր ինձ ցույց տալիս, ակամա սքանչանում էի նրանով։ Նա ոչնչով նման չէր տեղացի «ախչկերքին», որոնց դեմքերն անճոռնի, վերևից ճակատը, իսկ ներքևից բերանն ու ծնոտը ծածկող գլխաշորերի մեջ այնքան միանման ու վախեցած արտահայտություն ունեն։ Իմ նոր ծանոթը քսան-քսանհինգ տարեկան բարձրահասակ, սահեր աղջիկ էր, թեթև ու բարեկազմ կեցվածքով։ Լայն ճերմակ շապիկը գրկել էր նրա ջահել, առողջ կուրծքը։ Նրա դեմքի ինքնօրինակ գեղեցկությունը, մեկ անգամ տեսնելուց հետո, չէր լինի մոռանալ, բայց նույնիսկ վարժվելուց հետո դժվար էր նկարագրել։ Հմայքը այդ խոշոր, փայլուն, սևավուն աչքերի մեջ էր, որոնց բարակ ու մեջտեղից կեռ հոնքերը չարաճճիության, տիրականության ու միամտու-

թյան անորսալի երանգ էին հաղորդում, մաշկի թուխ վարդագույն տոնի մեջ, շրթունքների ինքնակամ գծագրության մեջ, ներքևի, առավել լիքը շուրթը, վճռական ու կամավոր տեսքով, քիչ առաջ էր մղված։

— Մի՞թե դուք չեք վախենում այս խուլ տեղում մեն-մենակ ապրելուց։— Հարցրեցի ես, ցանկապատի մոտ կանգ առնելով։

Նա անտարբեր թոթվեց ուսերը։

— Իսկ ինչի՞ց վախենանք։ Էս կողմերը գայլ չի գալիս։

— Մենակ գայլերը հո չեն... Ձյան տակ կարող եք մնալ, հրդեհ կարող է լինել... Քի՞չ բան կա։ Դուք այստեղ մենակ եք, ոչ ոք չի հասցնի ձեզ օգնել։

— Եվ փառք ապտծո,— նա արհամարհանքով թափ տվեց ձեռքը։— Թե որ ինձ ու տատիս լրիվ հանգիստ թողնեին, ավելի լավ կլիներ, թե չէ...

— Թե չէ ի՞նչ։

— Շատ բան իմանաք, շուտ կպառավեք.— ընդհատեց նա։— Իսկ դո՞ւք ով կլինեք,— հարցրեց նա տագնապած։

Ես կռահեցի, որ, հավանորեն, թե՛ պառավը, թե՛ այս գեղեցկուհին վախենում են «բարձր իշխանության» կողմից այս կամ այն ճնշումներից, և շտապեցի հանգստացնել նրան։

— Օ՛, խնդրում եմ մի անհանգստացիր։ Ես ոչ ուրյադնիկ եմ, ոչ գրագիր, ոչ ակցիզի աստիճանավոր, մի խոսքով, ղեկավարություն չեմ։

— Դուք ճի՞շտ եք ասում։

— Ազնիվ խոսք եմ տալիս քեզ։ Աստված վկա, ես ամենակողմնակի մի մարդ եմ։ Պարզապես այստեղ եմ եկել մի քանի ամսով հյուր, իսկ հետո գնալու եմ. եթե ուզում ես, նույնիսկ ոչ ոքի չեմ ասի, որ այստեղ եմ եղել ու տեսել եմ ձեզ։ Դու ինձ հավատո՞ւմ ես։

Աղջկա դեմքը մի քիչ պարզվեց։

— Է, ուրեմն, թե որ սուտ չեք ասում, ուրեմն ճիշտ եք ասում։ Իսկ առաջ մեր մասին լսե՞լ էիք, թե ինքներդ եկաք։

— Ես էլ չգիտեմ, թե քեզ ինչպես ասեմ... Լսելը լսել եմ, ասենք, նույնիսկ ուզում էի մի անգամ գալ ձեզ մոտ, իսկ, այսօր պատահական եղավ՝ մոլորվեցի... Լավ, իսկ հիմա ասա, ինչո՞ւ եք մարդկանցից վախենում։ Ի՞նչ չար բան են անում նրանք ձեզ։

Նա ինձ նայեց քննող անվստահությամբ։ Սակայն իմ խիղճը մաքուր էր, և ես, աչքս անգամ չթարթելով, դիմացա այդ լարված հայացքին։ Այդ ժամանակ նա սկսեց խոսել հետզհետե աճող հուզմունքով.

— Վատ բաներ են գալիս նրանցից մեզ... Հասարակ մարդիկ դեռ ոչինչ, իսկ ղեկավարությունը... Ուրյադնիկը գալիս է՝ պլեշկում է, դավառի պրիստավը գալիս է՝ պլոկում։ Դրանից առաջ էլ տատիս են անպատվում. ասում են՝ դու վհուկ ես, սատանա ես, բանտի ապրանք ես... Էհ, էլ ինչ ասեմ։

— Իսկ քեզ ձեռք չե՞ն տալիս,— բերանիցս անզգույշ մի հարց թռավ։

Գոռող ինքնավստահությամբ գլուխը վեր բարձրացրեց, և նրա նեղացած աչքերի մեջ մի չար ցնծություն առկայծեց...

— Ձեռք չեն տալիս... Մի անգամ հողաչափ էր, ինչ էր, ուզեցավ... Մտքով ուրիշ բաներ էր անցել... Կարծեմ թե մինչև հիմա մոռացած չի լինի, թե իմ մտքով ինչ անցավ։

Այդ ծաղրալի, սակայն ինքնօրինակ հպարտ բառերի մեջ այնպիսի կոպիտ անկախություն հնչեց, որ ակամա մտածեցի. «Բայց զուր չէ, որ հասակ ես առել պոլեսյան անտառում, իրոք, վտանգավոր բան է քեզ հետ կատակ անելը»։

— Ոչ մեկի հետ մենք գործ չունենք,— շարունակեց նա, ավելի ու ավելի վստահությամբ լցվելով իմ հանդեպ։— Մեզ մարդիկ էլ պետք չեն։ Տարեկան մի անգամ եմ գնում քաղաք աղ ու օճառ առնելու... Տատի համար էլ՝ թեյ, մեր տատը թեյ սիրող է, թե չէ ոչ մեկին էլ տեսնել չեմ ուզում։

— Տեսնում եմ, երկուսդ էլ մարդկանց չեք սիրում... Իսկ ինձ կարելի՞ է մի քանի րոպեով ձեզ մոտ գալ մեկ-մեկ։

Նա ծիծաղեց, և որքան տարօրինակ, որքան անսպասելիորեն փոխվեց նրա գեղեցիկ դեմքը։ Նախկին խստահայացության հետքն անգամ չմնաց. դեմքը մեկեն դարձավ պայծառ, ամաչկոտ, մանկական։

— Ի՞նչ ունեք մեզ մոտ անելու։ Ես ոչ տատս անհետաքրքիր մարդիկ ենք... Է, ինչ, եկեք, համեցեք, թե որ իսկականից բարի մարդ եք։ Մենակ թե... որ մեզ մոտ գաք, ավելի լավ կլինի առանց հրացան գաք...

— Դու վախենո՞ւմ ես։

— Ինչի՞ց վախենամ։ Ես ոչնչից էլ չեմ վախենում,— ու նրա ձայնի մեջ վերստին իր ուժի նկատմամբ վստահություն զգացվեց։— Մենակ թե էդ բանը չեմ սիրում։ Ի՞նչ կարիք կա թռչուններին կամ էլ նապաստակներին կոտորել։ Նրանք ոչ ոքի վա-

տություն չեն անում, նրանք էլ մեզ պես ապրել են ուզում։ Ես նրանց սիրում եմ. փոքր են, անհասկացող են... Դե լավ, մնաք բարով,— շտապեց նա,— ձեր անունն էլ չգիտեմ, որ ասեմ... Վախենամ, թե տատս ջղայնանա։

Եվ նա թեթև ու արագ վազեց խրճիթ, գլուխը ցած կախած, ձեռքերով բռնած ծածանվող մազերը։

— Սպասիր, սպասիր,— բղավեցի ես։— Իսկ քո՞ անունն ինչ է։ Ծանոթանանք ինչպես կարգն է։

Նա մի պահ կանգ առավ ու շրջվեց դեպի ինձ։

— Ալյոնա է անունս... Էստեղացիք Օլեսյա են ասում։

Հրացանս ուսեցի և գնացի ցույց տված ուղղությամբ։ Բարձրանալով մի փոքրիկ բլրի գագաթը, որտեղից նեղ, հազիվ նկատելի անտառային կածանն էր ծայր առնում, ետ նայեցի։ Օլեսյայի կարմիր շրջազգեստը, քամուց թեթևակի շարժվելով, դեռ երևում էր խրճիթի մուտքի մոտ, վառ բիծ դարձած ձյան կուրացուցիչ ճերմակ, համատարած ֆոնի վրա։

Ինձնից՝ մեկ ժամ հետո տուն եկավ Յարմոլան։ Հենց այնպես խոսելու նկատմամբ իր սովորական դժկամությամբ, չհարցրեց նույնիսկ, թե ինչպես և որտեղ մոլորվեցի։ Կարծես հարևանցիորեն ասաց միայն.

— Էնտեղ... Նապաստակը տարա խոհանոց... տապակելո՞ւ ենք, թե ուշարկելու եք մեկնումեկին։

— Յարմոլա, իսկ գիտե՞ս թե այսօր որտեղ եմ եղել,— ասացի ես, նախօրոք պատկերացնելով նրա զարմանքը։

— Ինչի՞ պիտի չիմանամ,— կոպտությամբ փնթփնթաց Յարմոլան։— Վհուկների մոտ, էլ ուր...

— Իսկ ինչպե՞ս իմացար։

— Ի՞նչ կար չիմանալու։ Որ լսեցի ձեն չեք տալիս, ձեր հետքերով ետ եկա... Է՛հ, պարո՛ն,— ավելացրեց նա կշտամբալից զայրույթով։— Էդ գործերով զբաղվելու պետք չունեք... Մեղք բան է...

4

Գարունն այդ տարի շուտ եկավ, միանգամից, և ինչպես միշտ Պոլեսյեում՝ անսպասելիորեն։ Գյուղի փողոցներով քշքշան, դարչնագույն, փայլփլող առվակներ վազեցին, բարկացած փրփրելով հանդիպած քարերի շուրջը, արագ պտտեցնելով տա-

շեղներ ու սագի փետուրներ, մեծ ջրափոսերի մեջ արտացոլվեց կապույտ երկինքը՝ լողացող կլոր, ասես գալարվող ճերմակ ամպերով, տանիքներից թափվեցին զրնգուն ու անընդմեջ կաթիլներ։ Ճամփեզրի ուռենիների վրա սփռված ճնճղուկների երամներն այնպես՝ բարձրաձայն ու ոգևորված էին ճռվողում, որ նրանց աղմուկից ոչինչ ուրիշ լսել չէր լինում։ Ամենուրեք զգացվում էր կյանքի բերկրալից, փութկոտ խռովքը։

Ձյունը հալվեց, տեղ-տեղ կեղտոտ ու փոքր պատառիկներով մնալով հովիտներում և ստվերոտ անտառակներում։ Ձյան տակից երևաց մերկացած, թաց, տաք հողը, ձմռանը հանգստացած ու հիմա լի թարմ հյութերով, նոր մայրության ծարավով։ Սև ցեխերի վրա թեթև գոլորշի էր գալարվում, օդը հագեցնելով բացված հողի բույրով՝ գարնան այն թարմ, փաղաքուշ զորեղ արբեցնող բույրով, որը նույնիսկ քաղաքում ես որսում հարյուրավոր այլ հոտերի մեջ։ Ինձ թվում էր, թե այդ բուրմունքի հետ իմ հոգին է լցվում գարնանային թախիծը՝ մեղմ ու անուշ, տոգորված անհանգիստ սպասումներով և տարտամ կանխազգացումներով, բանաստեղծական մի թախիծ, որը մեր աչքերում բոլոր կանանց գեղեցիկ է դարձնում ու միշտ համեմված է անցած գարունների անորոշ ափսոսանքներով։ Գիշերները տաքացան, դրանց թանձր, խոնավ խավարի մեջ բնության անտեսանելի ու հապճեպ արարչական աշխատանքն էր զգացվում...

Գարնան այդ օրերին Օլեսյայի կերպարը գլխից դուրս չէր գալիս։ Ես հաճույք էի զգում, մենակ մնալով, պառկել, աչքերս փակել ավելի լավ կենտրոնանալու համար, և շարունակ երևակայությամբ պատկերացնել նրա մեկ խիստ, մեկ խորամանկ, մեկ քնքուշ ժպիտով փայլող դեմքը, նրա ջահել մարմինը, որ ծեր անտառի ազատության մեջ հասակ էր առել նույնքան բարեկազմ, նույնքան հզոր, ինչպես մատղաշ եղևնիներն են աճում, նրա ջինջ ձայնը, թավշյա անսպասելի ցածր երանգներով... «Նրա բոլոր շարժումների մեջ, նրա խոսքի մեջ,— մտածում էի ես,— աղնվազարմ մի բան կա անշուշտ՝ այդ բավական ճղճիմ բառի լավագույն իմաստով, և մի տեսակ բնածին նրբագեղ շափավորություն....»։ Օլեսյայի մեջ ինձ հափշտակում էր նաև նրան խորհրդավորությամբ պարուրող որոշ համբավը, կախարդի սնահավատ վարկը, կյանքը անտառի թավուտում, ճահիճների մեջ, և հատկապես իր ուժերի նկատմամբ այն հպարտ վստա-

հությունը, որ դրսևորվել էր ինձ ուղղված սակավաթիվ բառերի մեջ։

Զարմանալի ոչինչ չկա, որ հենց մի քիչ չորացան անտառի կածանները, ճամփա ընկա դեպի հավի տոտերով խրճիթը։ Փընթ-փընթան պառավին հանգստացնելու պարագան հաշվի առնելով, հետս կես ֆունտ թեյ էի վերցրել ու մի քանի բուռ կտոր շաքար։

Երկու կանանց էլ տանը գտա։ Պառավը բնբնում էր լավ վառվող վառարանի մոտ, իսկ Օլեսյան վուշ էր մանում, շատ բարձր նստարանին նստած։ Երբ ներս մտնելիս դուռը թրխկացրեցի, նա շրջվեց, թելը կտրվեց ձեռքի մեջ, և իլիկը գլորվեց հատակին։

Պառավը որոշ ժամանակ ուշադրությամբ ու բարկացած ինձ էր զննում, դեմքը կնճռոտած, վառարանի տաքությունից դեմքն ափով ծածկած։

— Բարև, այ տատ,— ասացի ես բարձրաձայն, առույգ։— Ուրեմն, ինձ չճանաչեցի՞ր։ Հիշո՞ւմ ես, անցած ամիս եկել էի ճամփան հարցնելու։ Բախտս էլ բացեցիր։

— Բան չեմ հիշում, որդի,— ճմճմացրեց պառավը, դժգոհությամբ գլուխը տարուբերելով,— բան չեմ հիշում։ Ու ի՞նչ ես մոռացել մեզ մոտ, չեմ կարում հասկանամ։ Մենք քեզ ի՞նչ ընկեր։ Մենք հասարակ, մութ մուրդիկ ենք... Մեր տանն անելիք չունես դու։ Անտառը մե՞ծ, էնքան տեղ կա գնալու... էնպես որ...

Ոչ-սիրալիր ընդունելությունից շշկլված, բոլորովին շփոթվեցի և անհեթեթ այն վիճակի մեջ էի, երբ չգիտես ինչ անես. կոպտությունը կատակի վերածես, կամ ինքդ բարկանաս, կամ, ի վերջո, առանց որևէ բան ասելու, շրջվես ու ետ գնաս։ Ակամայից անօգնական հայացքով դարձա Օլեսյայի կողմը։ Նա թեթևակի ժպտաց անչար ծաղրանքի երանգով, ելավ ճախարակի մոտից ու մոտեցավ պառավին։

— Տատ, մի վախենա,— ասաց նա հաշտեցությամբ,— սա չար մարդ չի, մեզ վատ բան չի անի։ Հրամեցեք, նստեք,— ավելացրեց նա, ցույց տալով դիմացը անկյունում դրված թախտը, այլևս ուշադրություն չդարձնելով պառավի փնթփնթոցին։

Նրա ուշադրությունից քաջալերված, գլխի ընկա ամենավճռական միջոցը երևան հանել։

— Ինչ բարկացկոտն ես, այ տատ... Հյուրը դռնիցդ չմտած, սկսում ես կռիվ անել։ Ես էլ ասի քեզ նվեր բերեմ,— պայուսակից հանելով փաթեթները, ասացի ես։

Պառավն արագ հայացք նետեց փաթեթներին, բայց և իսկույն շրջվեց դեպի վառարանը։

— Ինձ քո նվերները պետք չեն,— մրթմրթաց նա, խաչերկաթով ածուխները խառնելով կատաղած։— Գիտենք քո նման հյուրերին։ Սկզբից առանց սապոն հոգիդ կմտնեն, հետո էլ... էդ ի՞նչ էր կապոցիդ միջինը,— հանկարծ իմ կողմը դարձավ։

Անմիջապես նրան տվեցի թեյն ու շաքարը։ Դա մեղմող ազդեցություն ունեցավ պառավի վրա, ու թեև շարունակում էր փնթփնթալը, բայց արդեն ոչ նախկին, անհաշտ տոնով։

Օլեսյան նորից նստեց մանելու, իսկ ես տեղավորվեցի նրա կողքին, ցածլիկ, կարճ ու շատ խախուտ մի աթոռակի վրա։ Զախ ձեռքով Օլեսյան արագ ոլորում էր սպիտակ, մետաքսի պես փափուկ մալանչը, իսկ աջ ձեռքում թեթևակի բզզոցով պտտվում էր իլիկը, որը նա մեկ թողնում էր ընկնել համարյա գետնին, մեկ էլ ճարպկորեն բռնում ու մատների արագ շարժումով ստիպում էր նորից պտտվել։ Առաջին հայացքից այնքան պարզ այդ աշխատանքը, որ հսկայական, դարավոր հմտություն ու ճարպկություն էր պահանջում, ըստ էության, եռում էր նրա ձեռքերի մեջ։ Ակամա ուշադրություն դարձրեցի այդ ձեռքերին. դրանք կոպտացել ու սևացել էին աշխատանքից, սակայն մեծ չէին և այնպիսի գեղեցիկ ձև ունեին, որ բարեկիրթ շատ օրիորդներ կնախանձեին։

— Էն անգամ ինձ չասացիք, թե տատը ձեր բախտը բաց էր արել,— ասաց Օլեսյան։ Եվ տեսնելով, որ վախվխելով շրջվեցի, ավելացրեց.— Բան չկա, բան չկա, ականջը մի քիչ ծանր է, չի լսի։ Նա մենակ իմ ձենն է լավ ջոկում։

— Այո, բացել է։ Իսկ ի՞նչ։

— Հենց էնպես... Հարցնում եմ, էլի... Իսկ դուք հավատո՞ւմ եք,— գողունի մի արագ հայացք նետեց վրաս։

— Ինչի՞ն։ Նրան, թե տատդ ինձ ինչ ասե՞ց, թե՝ ընդհանրապես։

— Չէ, ընդհանրապես...

— Ինչպես ասեմ, ավելի ճիշտ կլինի, որ չեմ հավատում, բայց և այնպես ի՞նչ իմանաս։ Ասում են, լինում են դեպքեր... Նույնիսկ խելացի գրքերում է դրանց մասին տպված։ Իսկ այն, ինչ տատդ ասեց, բոլորովին չեմ հավատում։ Գյուղացի ամեն մի կնիկ էլ կարող է այդպես բախտ բացել։

Օլեսյան ժպտաց։

— Հա, ճիշտ է, որ հիմի վատ է բացում։ Պառավել է ու շատ է վախենում։ Իսկ ի՞նչ ասացին ձեզ թղթերը։

— Հետաքրքիր բան չկար։ Հիմա չեմ էլ հիշում։ Սովորաբար ինչ են ասում. երկար ճանապարհ, խալից օգուտ... Մոռացել եմ նույնիսկ։

— Հա, հա, վատ է բացում հիմի։ Շատ խոսքեր մոռացել է, պառավել է... էլ ի՞նչ։ Վախենում է՝ մեկ էլ։ Մենակ որ փող տեսնում է, նոր է բացում։

— Իսկ ինչի՞ց է վախենում։

— Էլ ինչի՞ց՝ ղեկավարներից է վախենում... Ո՞ր յադնիկը, որ գալիս է, միշտ ահ է տալիս. «Ես,— ասում է,— ուզածս ժամանակ քեզ կարամ բանտ նստեցնեմ։ Գիտես, չէ՞, կախարդության համար ձերպեսներին ինչ է հասնում։ Մինչև կյանքի վերջը տաժանակիր աշխատանք։ Բազեների կողի»։ Ո՞նց եք կարծում, սուտ է ասո՞ւմ, թե չէ։

— Չէ, ստելը չի ստում, դրա համար իսկապես ինչ-որ բան հասնում է, բայց ոչ այդքան սարսափելի... Լավ, Օլեսյա, իսկ դու բախտ բացել գիտե՞ս։

Կարծես թե նա փոքր-ինչ շփոթվեց, բայց ընդամենը մի ակնթարթ։

— Գիտեմ... Մենակ թե առանց փող,— փութով ավելացրեց նա։

— Գուցե ինձ համա՞ր էլ թուղթ գցես։

— Չէ,— ցածրաձայն, բայց վճռականորեն ասաց նա, գլուխը օրորելով։

— Իսկ ինչո՞ւ չես ուզում։ Լավ, հիմա չէ, մեկ ուրիշ անգամ... Չգիտեմ ինչու, ինձ թվում է, թե ճշմարիտը կասես ինձ։

— Չէ։ Չեմ ասի։ Ինչ էլ լինի, չեմ ասի։

— Դա արդեն լավ բան չէ, Օլեսյա։ Հանուն առաջին ծանոթության չի կարելի մերժել... Ինչո՞ւ չես համաձայնում։

— Որովհետև արդեն ձեզ վրա թուղթ գցել եմ, նորից չի կարելի...

— Չի կարելի՞։ Իսկ ինչո՞ւ։ Ես դա չեմ հասկանում։

— Չէ, չէ, չի կարելի... չի կարելի...— սնոտիապաշտ երկյուղով շշնջաց նա։— Բախտն երկու անգամ չի կարելի փորձել...։ Չի լինի... Ինքը կիմանա, ականջ կդնի... Բախտը չի սիրում, որ իրեն հարցնում են։ Դրա համար էլ բոլոր բախտ բացողներն անբախտ են։

Ուզում էի որևիցե կատակով պատասխանել Օլեսյային և չկարողացա. նրա խոսքերի մեջ չափից ավելի էր անկեղծ համոզումը, այնպես որ նույնիսկ, երբ նա, ճակատագիրը հիշատակելով, տարօրինակ երկչոտությամբ դռանը նայեց, ես քակամա կրկնեցի այդ շարժումը։

— Լավ, եթե չես ուզում բախտս բացել, ուրեմն պատմիր, թե այն անգամ ի՞նչ էր դուրս եկել,— խնդրեցի ես։

Օլեսյան հանկարծ թողեց իլիկն ու ձեռքը դրեց ձեռքիս։

— Չէ... Ավելի լավ է, պետք չի,— ասաց նա, և նրա աչքերը մանկական աղերսող արտահայտություն ստացան։— Ինչ կլինի, մի խնդրեք... Լավ բան դուրս չէր եկել... Լավ կլինի չխնդրեք...

Սակայն ես շարունակում էի պնդել։ Չէի կարողանում պարզել. նրա մերժումն ու մթին ակնարկները ճակատագրի վերաբերյալ գուշակուհու շինծու հնա՞րք էր, թե նա իսկապես հավատում էր իր ասածներին, բայց մի տեսակ գեշ, համարյա զարհուրելի զգացողություն ունեցա։

— Դե լավ, որ էդպես է, կասեմ,— ի վերջո համաձայնեց Օլեսյան։— Մենակ տեսեք հա, պայմանը փողից լավ է. չզայլանանք, թե որ մի բան ձեզ դուր չգա։ Ասեմ ինչ դուրս եկավ ձեզ. չնայած դուք բարի մարդ եք, բայց թույլ եք... Ձեր բարությունը լավը չի, սրտից չի։ Դուք ձեր խոսքի տերը չեք։ Սիրում եք մարդկանց վրա իշխանություն բանացնել, բայց ինքներդ, չնայած չեք ուզում, ուրիշի ենթարկվում եք։ Խմել սիրում եք, ուրիշ բան էլ... Դե լավ, որ ասում եմ, ուրեմն ամեն բան հերթով ասեմ... Մեր ցեղի հետևից շատ եք ընկնում, դրանից էլ կյանքում շատ փորձանք կգա ձեր գլխին։ Փողը խնայող չեք ու դիզել չեք իմանում, ոչ մի անգամ հարուստ չեք լինի... Էլի՞ ասեմ։

— Ասա, ասա։ Ինչ գիտես, ասա։

— Հետո դուրս եկավ, որ ձեր կյանքն ուրախ չի լինի։ Ոչ մեկին սրտով չեք սիրի, որովհետև ձեր սիրտը սառն է, ալարկոտ, նրանց էլ, որ ձեզ կսիրեն, շատ վիշտ կտաք։ Կյանքում չեք պսակվի, էդպես ամուրի էլ կմեռնեք։ Կյանքում մեծ ուրախություն չեք ունենա, դժվար ու տխուր օրեր շատ կլինեն։ Էն տեսակ ժամանակ էլ կլինի, որ կուզենաք վերջ տալ ձեր կյանքին... Էդպիսի մի բան կլինի... Մենակ թե սիրտ չեք անի, կդիմանաք... Ուժեղ կարիքի մեջ կլինեք, բայց կյանքի վերջում ձեր բախտը կփոխվի ձեզ մոտիկ մի մարդու մեռնելուց հետո, ու դուք դրան սպասելիս չեք լինի։ Մենակ թե էդ ամենը կլինի շատ ու շատ

տարիներ հետո, իսկ էս տարի... Չեմ իմանում, հաստատ երբ, թղթերն ասում են, թե շատ ջուտով... Կարող է, էս ամսվա մեջ էլ լինի...

— Իսկ ի՞նչ պիտի լինի այս տարի,— հարցրեցի ես, երբ նա նորից դադար տվեց։

— Վախենում էլ եմ ասել։ Մի մեծ սեր էր ընկել ձեզ՝ խաչի աղջկա կողմից։ Մենակ թե գլխի չընկա, պսակվա՞ծ էր, թե աղջիկ, գիտեմ, որ սեին տվող մազեր ունի...

Ակամա արագ հայացք նետեցի Օլեսյայի գլխին։

— Ի՞նչ նայեցիք,— հանկարծ շիկնեց նա, իմ հայացքը զգալով որոշ կանանց հատուկ ըմբռնողությամբ։— Հա, իմիս պես,— շարունակեց նա, մեքենայաբար շոկելով մազերն ու ավելի շատ շիկնելով։

— Ուրեմն ասում ես խաչի մեծ սե՞ր,— կատակեցի ես։

— Մի ծիծաղեք, պետք չի ծիծաղել,— լրջորեն, համարյա խստորեն ասաց Օլեսյան։— Ես ամեն բան ձեզ մենակ ճիշտն եմ ասում։

— Դե լավ, չեմ ծիծաղի, չեմ ծիծաղի։ Իսկ հետո՞։

— Հետո... է՛հ, լավ բան դուրս չեկավ էդ խաչի աղջկան, մահից էլ վատ։ Ձեր երեսից խայտառակ կլինի, էնպես, որ ամբողջ կյանքում մոռանալ չի լինի, շատ երկար տխրություն կունենա... Բայց ձեզ նրա բախտից եկող ոչ մի վատ բան չի գա։

— Լսիր, Օլեսյա, իսկ չէի՞ն կարող թղթերդ քեզ խաբել։ Ինչի՞ համար պիտի խաչի աղջկան այդքան անդուր բաներ անեմ։ Ես հանգիստ, համեստ մարդ եմ, իսկ դու իմ մասին ինչ սարսափելի բան կար, ասացիր։

— Էդ մեկն արդեն ես չեմ իմանում։ Մեկ էլ դուրս էր եկել, որ դո՛ւք չեք անի էդ բաները, դիտմամբ չի լինի, ուրեմն, մենակ թե ձեր երեսից էդ փորձանքը կգա... Այ, որ ասածներս կատարվեն, էն ժամանակ ինձ կհիշեք։

— Եվ այդ ամենը թղթե՞րը քեզ ասացին, Օլեսյա։

Նա միանգամից չպատասխանեց, խուսափողաբար և կարծես դժկամությամբ ասաց.

— Թղթերն էլ... Առանց դրանց էլ շատ բան կարամ իմանամ, երեսին նայելով էլ։ Օրինակի համար, եթե մի մարդ շուտով պիտի մեռնի գեշ մահով, հենց հիմա նրա երեսին կկարդամ, նրա հետ խոսելու պետք էլ չունեմ։

— Իսկ ի՞նչ ես տեսնում նրա դեմքին։

— Ես ինքս էլ չեմ իմանում։ Հանկարծ սարսափն ինձ բռնում է, ոնց որ կարծես դիմացս մեռած կանգնած լինի։ Ուզում եք, տատին հարցրեք, նա ձեզ կասի, որ ճիշտ եմ ասում։ Ջաղացպան Տրոֆիմը նախանցյալ տարի իր ջաղացում խեղդվեց, դրանից երկու օր առաջ իրեն տեսել էի ու տատիս ասել «Այ, կտեսնես, տատ, էս երկու օրը Տրոֆիմը գեշ մահով պիտի մեռնի»։ Էդպես էլ եղավ։ Անցյալ շրջանքին էլ ձիագող Ցաշկան էր եկել մեզ մոտ, տատից խնդրում էր բախտ բաց անել։ Տատս թղթերը գցեց, սկսեց բացելը։ Ցաշկան հանաքով հարցրեց. «Այ սպառավ, ինձ չե՞ս ասի, թե ինչ մահով եմ մեռնելու»։ Ու ծիծաղում էր։ Օմ հենց որ նայեցի նրան, էլ տեղիցս չկարեցա շարժվեմ, տեսա Ցաշկոյը նստած է, բայց դեմքը մեռած է, կանաչ... Աչքերը փակ են, պռոշները՝ սև... Հետո, մի շաբաթ անց, լսենք, որ մուժիկնեյը բռնել են Ցաշկոյին, երբ ուզեցել է ձիեր քշի տանի... Ամբողջ գիշերը ծեծել են... Էստեղի մեր ժողովուրդը չար ժողովուրդ է, անխիղճ... Կրունկներին մեխեր էին խփել, ցցերով կողերը շարդել, առավոտվա դեմ հոգին փչել էր։

— Իսկ ինչո՞ւ նրան չասացիք, որ իրեն փորձանք է սպասում։

— Ինչի՞ համար ասեի,— առարկեց Օլեսյան։— Բախտով ինչ հասնում է, դրանից փախչե՞լ կլինի։ Մենակ թե իզուր տեղը մարդն իր վերջին օրերը պիտի անհանգստանա... Ինձ համար էլ է ախր վատ, որ էդպես տեսնում եմ, ինքս ինձնից զզվում եմ... Բայց ի՞նչ։ Էդ էլ իմ բախտն է։ Տատս, որ ավելի ջահել է եղել, ինքն էլ է մահն իմացել, իմ մերն էլ, տատիս մերն էլ, էդ մեզնից չի... մեր արյան մեջ է դա։

Նա դադարեց մանել ու նստած էր գլուխը ցած կախած, ձեռքերը դրած ծնկների երկայնքով։ Լայնացած բիբերով նրա անշարժացած աչքերի մեջ ինչ-որ մթին սարսափ էր արտացոլված, մի տեսակ ակամա հնազանդություն խորհրդավոր ուժերին և իր հոգին համակող գերբնական իմացություններին։

Այդ ժամանակ պառավը սեղանին գցեց եզրերն ասեղնակար մաքուր սփոցը և գոլորշի արձակող կճուճը դրեց վրան։

— Օլեսյա, արի ընթրիք անենք,— կանչեց նա թոռանը և, մի բոպե տատանվելուց հետո, ավելացրեց ինձ դիմելով.— գուցե

գո՞ւք էլ մեզ հետ ուտեք, պարոն... Մենակ թե մեր կերածը մի կարգին բան չի, սուպ-բան չենք եփում, դաշտի հատիկ է եղածը...

Չի կարելի ասել, թե նրա հրավերը առանձնապես համառ էր, և ես արդեն հրաժարվել էի ուզում, բայց Օլեսյան իր հերթին խնդրեց ինձ այնպիսի գրավիչ պարզությամբ և այնպիսի մի լեռնքուշ ժպիտով, որ ակամա համաձայնեցի։ Ինքը լցրեց մի լիքը ափսե հատիկ ինձ համար՝ հնդկացորենի ձավարի շփոթ էր ճարպով, սոխով, կարտոֆիլով ու հավի մսով, չափազանց համեղ ու սննդարար ուտելիք։ Սեղան նստելով ոչ տատը, ոչ թոռը չխաչակնքեցին։ Ընթրիքի ժամանակ անդադար հետևում էի երկու կանանց էլ, որովհետև իմ խորին համոզմամբ, որ մինչ այժմ էլ պահպանում եմ, ոչ մի տեղ մարդն այնպես հստակ չի դրսևորվում, որքան ուտելու ժամանակ։ Պառավը շփոթն ուտում էր փութկոտ նագահությամբ, բարձրաձայն ճպճպացնելով և հացի հսկայական կտորներ մտցնելով բերանը, այնպես որ նրա թոռշոմած այտերի տակ մեծ գնդեր էին փքվում ու շարժվում։ Օլեսյայի նույնիսկ ուտելու եղանակի մեջ բնածին մի օրինավորություն կար։

Ընթրիքից մեկ ժամ անց ես հրաժեշտ տվեցի հավի տոտերով խրճիթի տիրուհիներին։

— Ուզո՞ւմ եք, մի քիչ գամ ձեզ հետ,— առաջարկեց Օլեսյան։

— Է՞լ ինչեր հնարեցիր,— բարկացած շմշմացրեց պառավը։— Տեղդ սիտիկ չես անում, ճպուռ...

Բայց Օլեսյան արդեն գլխին էր գցել քիշմիրե կարմիր գլխաշորը և հանկարծ, մոտ վազելով տատին, գրկեց ու ձայնեղ համբուրեց։

— Տատիկ։ Սիրուն, անգին, ոսկի տատիկ... մի բոպեով, էս է, եմ կգամ։

— Դե լավ, լավ, վերվերիկ,— թույլ-թույլ ետ էր մղվում նրանից պառավը։— Չմեղադրեք, պարոն. անխելքի մեկն է, էլի։

Նեղ կածանով անցնելով ելանք անտառի ճանապարհը՝ սև ցեխ էր ամբողջովին ակոսված սմբակների ու անիվների հետքերով և ջրով լի, որի մեջ արտացոլվում էր վերջալույսի հրդեհը։ Մենք քայլում էինք ճանապարհի եզրով, որը ծայրեծայր ծածկված էր անցյալ տարվա գորշ տերևներով, դեռևս չչորացած ծյունից հետո։ Դրանց մեռած դեղնության արանքից տեղ-տեղ իրենց մանուշակագույն գլխիկներն էին բարձրացրել Պոլեսյեի առաջին ծաղկի՝ «երազիկի» խոշոր զանգակիկները։

— Լսիր, Օլեսյա,— սկսեցի ես,— ես շատ եմ ուզում քեզ մի բան հարցնել, բայց վախենում եմ բարկանաս... Ասա ինձ, ճի՞շտ են ասում, որ տատիկդ... ինչպե՞ս ասեմ...

— Կախա՞րդ է,— հանգիստ օգնեց ինձ Օլեսյան։

— Չէ... Ոչ թե կախարդ...— կմկմացի ես։— Այո, եթե ուզում ես՝ կախարդ... Իհարկե, ինչ ասես, կխոսեն։ Ինչի՞ համար, ասենք, նա չպիտի իմանար ինչ-որ դեղախոտեր, հնարներ, հմայություններ... Հետո, եթե քեզ համար դա տհաճ է, կարող ես չպատասխանել։

— Չէ, ինչի,— ուղղակի պատասխանեց նա,— ի՞նչ տհաճ բան կա։ Ճիշտ է, նա կախարդ է։ Մենակ թե հիմի պառավել է ու չի կարող էն բաներն անել, ինչ առաջ էր անում։

— Իսկ ի՞նչ էր կարողանում անել,— հետաքրքրվեցի ես։

— Զանազան։ Բուժում էր, ատամնացավից էր փրկում, արյուն էր կանգնեցնում, հմայում էր, թե կատաղած շունը կամ էլ օձը մեկնումեկին կծում էր, պահած գանձերի հատուկ խոսքերն էր ասում... էնքան բան, ո՞ր մեկն ասեմ։

— Գիտե՞ս ինչ, Օլեսյա... Դու ինձ կներես, բայց այդ ամենին ես չեմ հավատում։ Ինձ հետ անկեղծ եղիր, ոչ ոքի չեմ ասի. չէ՞ որ այդ ամենը կեղծիք է, մարդկանց խաբելու համար միայն։

Նա անտարբեր թոթվեց ուսերը։

— Ոնց ուզում եք, մտածեք։ Ինչ ասեմ, գյուղացի կնկան խաբելը դժվար բան չի, բայց ձեզ, օրինակ, ես չէի խաբի։

— Ուրեմն, հաստա՞տ հավատում ես կախարդությանը։

— Ախր, ո՞նց չհավատամ։ Կախարդությունը մեր ցեղի մեջ է, չէ՞... Ես ինքս էլ՝ շատ բան կարող եմ։

— Օլեսյա, սիրելիս... Եթե միայն իմանայիր, թե որքան հետաքրքիր է դա ինձ համար... Մի՞թե ոչ մի բան ինձ ցույց չես տա։

— Ինչի՞ չէ, թե ուզում եք, ցույց կտամ,— պատրաստակամությամբ համաձայնեց Օլեսյան։— Հիմա՞ եք ուզում։

— Այո, եթե կարելի է, հիմա։

— Իսկ չե՞ք վախենա։

— Այ քեզ հիմարություն։ Գիշերով գուցեև վախենայի, իսկ հիմա դեռ լույս է։

— Լավ։ Տվեք ձեր ձեռքը։

Ես ենթարկվեցի։ Օլեսյան արագ քշտեց վերարկուիս թևքը,

արձակեց թեվանիքի ճարմանդը, հետո իր գրպանից ոչ մեծ, երեք վերշոկանոց ֆիննական դանակ հանեց, կաշվե պատյանով։

— Ի՞նչ ես ուզում անել,— հարցրեցի, զգալով, թե ինչպես ոզորմելի մի երկյուղ շարժվեց ներսումս։

— Ոչինչ, հիմի... Ասացիք, չէ՞, որ չեք վախենալու։

Հանկարծ նրա ձեռքը հազիվ նկատելի թեթև մի շարժում արեց, և ես ձեռքիս փափուկ տեղի վրա, քիչ ավելի վեր զարկեբակը լսելու տեղից, սուր սայրի գրգռիչ հպումն զգացի։ Արյունն անմիջապես հոսեց կտրվածքի ամբողջ լայնությամբ, հոսեց ձեռքիս վրայով ու կաթկթեց գետնին։ Հազիվ զսպեցի ինձ, որ չբղավեմ, բայց, կարծեմ, գունատվեցի։

— Մի վախեցեք, ողջ եք մնալու,— քմծիծաղ տվեց Օլեսյան։

Նա ամուր բռնեց ձեռքս, վերքից վեր, և դեմքը ցած կռացնելով վերքի վրա, արագ-արագ ինչ-որ բաներ շշնջաց, տաք, ընդհատ շնչառությամբ մաշկս տաքացնելով։ Իսկ երբ Օլեսյան շտկվեց ու թուլացրեց մատները, վիրավորված տեղում միայն կարմիր քերծվածք էր մնացել։

— Հը՞։ Հերի՞ք է,— խորամանկ ժպիտով հարցրեց նա, պահելով իր դանակը։— Էլի՞ եք ուզում։

— Իհարկե, ուզում եմ։ Միայն եթե հնարավոր է, որ այդքան սարսափելի, և առանց արյունահեղության, խնդրում եմ։

— Է՞լ ինչ ցույց տամ ձեզ,— մտածում էր նա։— Լավ, ասենք էս մեկը. ինձնից առաջ ընկեք ճամփով... Մենակ տեսեք հա, ետ չշրջվեք։

— Իսկ դա սարսափելի չէ՞, —հարցրեցի ես, անհոգ ժպիտով աշխատելով քողարկել տհաճ անակնկալի վեհերոտ սպասումը։

— Չէ, չէ... Դատարկ բան է... Գնացեք։

Ես առաջ ընկա, խիստ հետաքրքրված փորձով, ետևում զգալով Օլեսյայի լարված հայացքը։ Սակայն մի քսան քայլ անցնելուց հետո, հանկարծ սայթաքեցի միանգամայն հարթ տեղի վրա ու բերանքսիվայր ընկա։

— Գնացեք, գնացեք,— բղավեց Օլեսյան։— Մի շրջվեք։ Էդ մեկը՝ ոչինչ, կմեծանաք, կմոռանաք... Ընկնելու ժամանակ պինդ պահեք ձեզ։

Շարունակեցի գնալ։ Եվս տասը քայլ, ու երկրորդ անգամ փովեցի հասակովս մեկ։

Օլեսյան բարձրաձայն քրքջաց ու ծափ զարկեց։

— Էհ՞, զո՞հ եք,— բացականչեց նա, ճերմակ ատամները փայլեցնելով։— Հիմա հավատո՞ւմ եք։ Բան չկա, բան չկա... Վերև հո չթռաք, ցած ընկաք։

— Ինչպե՞ս արեցիր,— զարմացած հարցրեցի ես, թափ տալով հագուստիս կպած ճյուղերն ու չոր խոտերը։— Գաղտնիք չէ՞։

— Իսկի էլ գաղտնիք չի։ Սիրով կպատմեմ։ Մենակ վախենամ թե չհասկանաք... Բացատրել չեմ կարենում...

Իսկապես, այնքան էլ լավ չհասկացա նրան։ Բայց եթե չեմ սխալվում, ինքնօրինակ այդ ֆոկուսը կայանում էր նրանում, որ քայլ առ քայլ, ոտքը ոտքիս իմ ետևից քայլելով և ակնապիշ ինձ նայելով, միաժամանակ աշխատում էր նմանեցնել իմ յուրաքանչյուր, ամենանվազագույն շարժմանը, այսպես ասած, իրեն նույնացնում էր ինձ հետ։ Այսպիսով, մի քանի քայլ անելուց հետո, սկսում էր մտովի պատկերացնել իմ դիմաց որոշակի տարածության վրա ճանապարհի երկայնքով, գետնից մեկ արշին բարձրության վրա ձգված պարան։ Այն պահին, երբ ես ոտքով պիտի հպվեի երևակայական այդ պարանին, Օլեսյան հանկարծ ընկնելու շարժում էր անում, և այդ ժամանակ, ըստ նրա, ամենապինդ մարդն էլ պիտի ընկներ անպայման... Միայն երկար ժամանակ անց հիշեցի Օլեսյայի կցկտուր բացատրությունը, երբ կարդացի բժիշկ Շարկոյի հաշվետվությունը՝ Սալպետրիերի երկու խնամարկյալների՝ հիստերիայով տառապող պրոֆեսիոնալ կախարդուհիների վրա կատարած փորձերի մասին։ Եվ ես շատ էի զարմացած, իմանալով, որ ֆրանսիացի կախարդուհիները՝ հասարակ ժողովրդից, նման դեպքերում դիմել են բացարձակապես նույն հմտությանը, որը գործի դրեց պոլեսյան սիրունիկ կախարդուհին։

— Օ՜, ես դեռ էնքան բաներ գիտեմ,— ինքնավստահ հայտարարեց Օլեսյան։— Օրինակ, կարող եմ ձեր վրա սարսափ իջեցնել։

— Դա ի՞նչ է նշանակում։

— Էնպես կանեմ, որ սկսեք սարսափել։ Ասենք, նստած եք ձեր տան մեջ, իրիկունը, ու հանկարծ էն տեսակ սարսափ կունենաք, որ կդողացնեք ու սիրտ չեք անի ետ նայել։ Մենակ թե դրա համար պետք է, որ իմանամ, թե որտեղ եք ապրում ու ձեր սենյակը տեսած լինեմ։

— Է՜, այդ մեկն արդեն շատ հասարակ է,— կասկածեցի ես։

— Կմոտենաս լուսամուտին, կծեծես, մի բան կրզավես։

— Օ՜, չէ, չէ... էդ ժամանակ ես անտառում կլինեմ, տնից ոչ մի տեղ չեմ դուրս գա... Բայց կնստեմ ու կմտածեմ, որ ըհը՛; գնում եմ փողոցով, մտնում եմ ձեր տունը, դռները բացում եմ, մտնում եմ ձեր սենյակը... Մի տեղ նստած եք լինում... ասենք, սեղանի մոտ... կամացուկ մոտենում եմ ձեզ ետևից... դուք ինձ չեք լսում... ձեռքերս դնում եմ ձեր ուսերին ու սկսում եմ սեղմել... պինդ-պինդ սեղմում եմ, ավելի պինդ... ինքս էլ նայում եմ ձեզ... այ էսպես, նայե՛ք...

Նրա բարակ հոնքերը հանկարծ հավաքվեցին, աչքերը վրաս հառվեցին սարսափազդու և քաշող արտահայտությամբ, բիբերը խոշորացան ու կապտեցին։ Իսկույն հիշեցի Մոսկվայում, Տրետյակովյան պատկերասրահում իմ տեսած Մեդուզայի գլուխը, չեմ հիշում ինչ նկարչի աշխատանք էր։ Այդ ակնդետ, արտառոց հայացքի տակ գերբնականի սառը սարսափն ինձ պատեց։

— Դե լավ, լավ, Օլեսյա... հերիք է,— շինծու ծիծաղով ասացի ես։— Ինձ ավելի շատ դուր է գալիս, երբ դու ժպտում ես, այդ ժամանակ այնքան գրավիչ, մանկական է դառնում դեմքդ։

Շարունակեցինք ճանապարհը։ Հանկարծ հիշեցի Օլեսյայի խոսակցության մեջ առկա արտահայտչականությունն ու անգամ հասարակ աղջկա համար դարձվածքների նրբությունը և հարցրեցի.

— Գիտե՞ս, Օլեսյա, քո մեջ ինչն է ինձ զարմացնում։ Այ, դու հասակ ես առել անտառում, ոչ ոքի չես տեսել... Կարդալ, ինչ խոսք, նույնպես շատ չես կարողացել...

— Ախր ես իսկի չգիտեմ կարդալ։

— է, առավել ևս... Այնինչ այնքան լավ ես խոսում, ֆակական օրիորդից ոչ վատ։ Ասա ինձ, քեզ որտեղի՞ց դա։ Հասկանո՞ւմ ես, ինչ նմ հարցնում։

— Հասկանում եմ։ էդ ամենը տատիկից է... Ջնայեք, որ արտաքինից էդպես է։ Ո՜ւ, էնքան խելացի է։ Կարող է պատահել, որ ձեր մոտ էլ սկսի խոսել, մի քիչ շատ որ վարժվեց... Ամեն ինչ գիտի, աշխարհիս վրա ամեն ինչ, ինչ կուզես հարցրու։ Ճիշտ է, հիմա պառավել է։

— Ուրեմն, շա՞տ բան է տեսել իր կյանքում։ Որտեղացի՞ է նա։ Առաջ որտե՞ղ է ապրել։

Կարծես թե այս հարցերը դուր չեկան Օլեսյային։ Նա պատասխանեց ոչ միանգամից, խուսափողաբար և դժկամությամբ.

— Չեմ իմանում... Ինքն էլ չի սիրում էդ մասին խոսել։ Մեկ-մեկ էլ թե մի բան ասեց, միշտ կխնդրի մոռանալ ու էլ չհիշել... Դե, ես գնամ,— շտապեց Օլեսյան,— տատիկս կբարկանա։ Ցտեսություն... Կներեք, ձեր անունը չեմ իմանում։

Ասացի։

— Իվան Տիմոֆեևի՞չ։ Շատ լավ է։ Ուրեմն, ցտեսություն, Իվան Տիմոֆեևիչ։ Մի քաշվեք մեր խրճիթից, համեցեք։

Հրաժեշտին ձեռքս նրան մեկնեցի և նրա փոքրիկ, ամուր ձեռքը ուժեղ, բարեկամական սեղմումով պատասխանեց ինձ։

6

Այդ օրվանից ես հաճախակի հյուր էի հավի տոտերով խրճիթում։ Ամեն անգամ, երբ գալիս էի, Օլեսյան ինձ դիմավորում էր իր սովորական զուսպ արժանապատվությամբ։ Սակայն միշտ, ակամա առաջին իսկ շարժումից, որ անում էր ինձ տեսնելիս, նկատում էի, որ ուրախանում է իմ գալստյամբ։ Պառավն առաջվա պես շարունակում էր քթի տակ ինչ-որ բաներ փնթփնթալ, սակայն բացահայտ անբարյացակամություն չէր դրսևորում, շնորհիվ թոռան՝ ինձ համար անտեսանելի, բայց անկասկած հովանավորության. ինձ համար բարերար իմաստով քիչ ազդեցություն չէին գործում նաև բերածս այս կամ այն նվերները. մեկ մի տաք գլխաշոր, մեկ մի ման մուրաբա, մեկ մի շիշ բալի թրմոզի։ Ասես երկկողմանի լռելյայն համաձայնությամբ Օլեսյայի հետ սովորություն էինք դարձրել, որ նա ինձ ուղեկցում էր մինչև Իրինովսկի ճանապարհը, երբ տուն էի վերադառնում։ Եվ միշտ այդ ժամանակ այնքան աշխույժ, հետաքրքիր խոսակցություն էր բացվում, որ երկուսս էլ ակամա աշխատում էինք երկարացնել ճանապարհը, որքան հնարավոր է դանդաղ քայլելով անտառային լուռ ու խաղաղ բացատներով։ Իրինովսկի ճանապարհ հասնելուց հետո, ես նրան ետ էի ուղեկցում մի կես վերստ էլ, այդուհանդերձ, նախքան հրաժեշտ տալը, դեռ երկար զրուցում էինք, սոճու ճյուղերի բուրավետ հովանու տակ։

Օլեսյայի մեջ շատ գեղեցիկ բաներ կային ինձ հմայող, բայց նաև նրա ամբողջական, ինքնատիպ, ազատ խառնվածքը, նրա խելքը՝ հստակ և ժառանգական անհողդողդ սնոտիապաշտությամբ համակված միաժամանակ, որը սակայն զուրկ չէր գեղեցիկ կնոջ խորամանկ սեթևեթանքից։ Անդադար և մանրամասնո-

բեն ինձ հարցուփորձ էր անում այն ամենի մասին, ինչ հուզում էր նրա նախնական վառ երևակայությունը. երկրների և ժողովուրդների մասին, բնության երևույթների մասին, երկրի և տիեզերքի կառուցվածքի մասին, գիտնական մարդկանց մասին, մեծ քաղաքների մասին... Շատ բան նրան զարմանալի էր թվում, հեքիաթային, ոչ-ճշմարտանման։ Բայց ես մեր ծանոթության հենց սկզբից այնպիսի լուրջ, անկեղծ ու պարզ տոն էի ընտրել, որ նա հաճույքով ու անվերապահորեն հավատում էր իմ բոլոր պատմություններին։ Երբեմն, դժվարանալով նրան այս կամ այն բանը բացատրել, ինչ, իմ կարծիքով չափազանց անհասկանալի կլիներ նրա կիսավայրենի գլխի համար, երբեմն էլ ինձ համար ես ոչ այնքան հասկանալի, նրա անհագ հարցերին ի պատասխան, առարկում էի. «Գիտես ինչ... Ես չեմ կարող դա քեզ պատմել... Դու ինձ չես հասկանա»։

Այդ ժամանակ նա սկսում էր ինձ աղերսել.

— Չէ, խնդրում եմ, ես կաշխատեմ... Գոնե մի կերպ ասեք... չնայած անհասկանալի է...

Նա ինձ ստիպում էր դիմել հրեշավոր համեմատությունների, ամենահանդուգն օրինակների, ու եթե ես դժվարանում էի արտահայտություններ գտնել, ինքն էր ինձ օգնության հասնում անհամբեր հարցերի ամբողջ տեղատարափով, նման այն հարցերին, որոնք մենք առաջարկում ենք կակազներին, երբ նրանք տանջալի կերպով դեմ են առնում մի բառի։ Եվ իսկապես, վերջիվերջո, նրա ճկուն, շարժուն ուղեղը և թարմ երևակայությունը հաղթում էին մանկավարժական իմ անուժությունը։ Ես ակամա համոզվում էի, որ իր միջավայրի, իր դաստիարակության, ավելի ճիշտ, դրա բացակայության համար նա ապշեցուցիչ ընդունակությունների տեր էր։

Մի անգամ թռուցիկ կերպով ինչ-որ բան հիշատակեցի Պետերբուրգի մասին։ Օլեսյան իսկույն հետաքրքրվեց.

— Ի՞նչ է Պետերբուրգը։ Գյո՞ղ է։

— Ոչ, դա գյուղ չէ, դա ամենամեծ ռուսական քաղաքն է։

— Ամենամե՞ծ։ Ամենա, ամենա, եղածներից ամենա՞։ Ու դրանից մեծ էլ չկա՞,— միամտորեն ձեռ չքաշեց ինձնից։

— Այո... Բոլոր գլխավոր պետերն այնտեղ են ապրում։ Բոլոր տները քարից են, փայտաշեն տուն չկա։

— Մեր Ստեպանիի տներից էլ մեծ, չէ՞,— վստահ հարցրեց Օլեսյան։

— Օ՜, այո... մի քիչ մեծ... մի հինգ հարյուր անգամ։ Այնտեղ այնպիսի տներ կան, որոնցից յուրաքանչյուրում երկու անգամ ավելի շատ մարդ է ապրում, քան ամբողջ Ստեպանիում։

— Ահ, աստված իմ։ Էդ ի՞նչ տեսակ տներ են— վախեցած հարցրեց Օլեսյան։

Ստիպված էի, սովորականի պես, համեմատության դիմել։

— Սարսափելի տներ են։ Հինգ, վեց, մեկ-մեկ էլ յոթ հարկանի։ Ա՛յ, այն սոճին տեսնո՞ւմ ես։

— Ամենամե՞ծը։ Տեսնում եմ։

— Ահա այդպիսի բարձր տներ։ Ու վերևից ներքև մարդկանցով լիքը։ Այդ մարդիկ ապրում են փոքրիկ բների մեջ, ինչպես թռչունները վանդակում, ամեն մեկի մեջ տասական մարդ, այնպես որ օդն էլ չի բավականացնում բոլորին։ Մյուսներն էլ ներքևում են ապրում, հենց գետնի տակ, խոնավության ու ցրտի մեջ։ Պատահում է, որ կլոր տարին արևի երես չեն տեսնում սենյակում։

— Ես որ իմ անտառը չէի փոխի ձեր քաղաքի հետ, ինչ էլ տային,— ասաց Օլեսյան, գլուխն օրորելով։— Շուկա էլ որ գնում եմ՝ Ստեպանի, սիրտս խառնում է։ Հրհրում են իրար, ձեները գլուխը գցում, կովշտում... Անտառից դուրս էն տեսակ տխրություն է գալիս վրաս, որ ամեն ինչ թող ու առանց ետ նայելու փախի... Աստված ձեր էդ քաղաքի հետ, ոչ մի անգամ չէի ապրի քաղաքում։

— Լավ, իսկ եթե ամուսինդ քաղաքից լինի՞,— թեթև ժպիտով հարցրեցի ես։

Նրա հոնքերը խոժոռվեցին, և նուրբ ռունգերը թրթռացին։

— Է՞լ ինչ,— ասաց նա արհամարհանքով։— Ինձ ոչ մի ամուսին էլ պետք չի։

— Հիմա ես այդպես ասում, Օլեսյա։ Համարյա բոլոր աղջիկներն էլ նույնն են ասում ու էլի ամուսնանում են։ Մի քիչ համբերիր. կհանդիպես մեկին, կսիրես, այն ժամանակ ոչ թե քաղաք, աշխարհի ծայրն էլ կգնաս նրա հետ։

— Ախ, չէ, չէ... խնդրում եմ դրա մասին չխոսենք,— բարկացած ընդդիմանում էր նա։ —Լավ, ինչի՞ համար էր էս խոսակցությունը... Խնդրում եմ, հարկավոր չի։

— Ի՞նչ ծիծաղելի ես, Օլեսյա։ Մի՞թե կարծում ես, որ կյանքումդ երբեք տղամարդ չեն սիրելու։ Այնքան երիտասարդ ես,

գեղեցիկ, ուժեղ։ Արյունդ որ եռաց, էլ ոչ մի խոստում չի օգնի։

— Հետո ինչ, ու կսիրե՞մ,— աչքերը շողացնելով, մարտահրավերով պատասխանեց Օլեսյան։— Ոչ մեկից էլ չեմ հարցնի...

— Ուրեմն կամուսնանա՞ս էլ,— բորբոքեցի ես։

— Գուցե դուք եկեղեցու մասի՞ն ասացիք,— կռահեց նա։

— Իհարկե, եկեղեցու մասին... Տերտերը գրակալի շուրջ կպտտեցնի, սարկավագը կերգի «Ցնծա Իսահակ», գլխիդ պսակ կդնեն...

Օլեսյան կոպերն իջեցրեց ու թույլ ժպտալով գլուխն օրորեց ժխտաբար։

— Չէ, հոգիս... Գուցե ձեզ դուր չգա ասածս, բայց մեր ցեղում ոչ ոք չի պսակվել, մերս էլ, տատս էլ առանց դրա են ապրել... Ասենք, մեզ եկեղեցի չի էլ կարելի մտնել...

— Էլի ձեր կախարդության պատճառո՞վ։

— Հա, մեր կախարդության պատճառով,— հանդարտ լրջությամբ պատասխանեց Օլեսյան։— Ինչ սիրտ կանեմ եկեղեցի մտնել, եթե ծնվածս օրից արդեն հոգիս ծախված է նրան։

— Օլե՞սյա... Սիրելի՞ս... Հավատա ինձ, որ ինքդ քեզ խաբում ես... Չէ որ ասածդ անհեթեթ, ծիծաղելի բան է։

Օլեսյայի դեմքի վրա վերստին հայտնվեց իր խորհրդավոր ճակատագրին համոզված ու տխրամած հնազանդության մեկ անգամ արդեն նկատածս տարօրինակ արտահայտությունը։

— Չէ, չէ... Դուք դա չեք կարող հասկանալ, իսկ ես զգում եմ... Այ, էստեղ,— նա ձեռքն ամուր սեղմեց կրծքին,— հոգուս մեջ եմ զգում։ Մեր ամբողջ տոհմը անիծված է հուր հավիտենական։ Ինքներդ մտածեք. իսկ ո՞վ է մեզ օգնում, թե նա չի օգնում։ Սովորական մարդը կկարենա՞ անել էն, ինչ ես եմ անում։ Մեր ամբողջ ուժը նրանից է գալիս։

Եվ ամեն անգամ մեր խոսակցությունը այդ անսովոր թեմային բախվելուն պես, ավարտվում էր այդպես։ Զուր տեղն էի սպառում Օլեսյայի ըմբռնողությանը մատչելի բոլոր փաստարկները, զուր էի հասարակ ձևով խոսում հիպնոտիզմի, ներշնչման մասին, հոգեբույժ-բժիշկների և հնդիկ ֆակիրների մասին, զուր տեղն էի աշխատում ֆիզիոլոգիական ճանապարհով նրան բացատրել նրա մի քանի փորձերը, թեկուզ, օրինակ, արյուն կանգնեցնելը, որ այնպես դյուրությամբ ձեռք է բերվում երակը հմտորեն սեղմելով։ Օլեսյան, որ մնացած ամեն

ինչում այնքան դյուրահավատ էր, համառամտորեն հերքում էր իմ բոլոր ապացույցներն ու բացատրությունները... «Դե լավ, լավ, արյուն կանգնեցնելը՝ ոչինչ, ինձնից ձեզ նվեր,— ասում էր նա, վեճով տարված, ձայնը բարձրացնելով,— իսկ մնացած բանե՞րը որտեղից են գալիս։ Թե՞ ես մենակ արյուն կանգնեցնել եմ կարենում։ Կուզե՞ք, մի օրվա մեջ ձեր տան բոլոր մկներին ու բզեզներին քշեմ դուրս։ Կուզե՞ք երկու օրվա մեջ հասարակ ջրով ամենաուժեղ ջերմը բուժեմ, թեկուզ ձեր բժիշկները հիվանդից արդեն ձեռ քաշած լինեն։ Կուզե՞ք էնպես անեմ, որ մի հատիկ բառ լրիվ մտահան անեք։ Իսկ երազնե՞րն ինչի եմ կարենում բացել։ Ապագա՞ն ինչի եմ իմանում»։

Այդ վեճը միշտ վերջանում էր նրանով, որ թե ես, թե Օլեսյան լռում էինք ոչ առանց ներքին բորբոքվածության՝ միմյանց նկատմամբ։ Իսկապես, նրա սև արվեստի մեջ շատ բաների բացատրությունը ես չէի կարողանում գտնել իմ նվազ գիտելիքներով։ Ես չգիտեմ ու չեմ կարող ասել՝ տիրապետո՞ւմ էր արդյոք Օլեսյան այն գաղտնիքների կեսին, որոնց մասին խոսում էր նման միամիտ հավատով, բայց այն, ինչի ականատես եմ եղել հաճախ, անկոտրում համոզում էին տվել ինձ, որ Օլեսյային մատչելի էին չգիտակցված, բնազդական, մշուշոտ, պատահական փորձով ձեռք բերված տարօրինակ այն գիտելիքները, որոնք ամբողջ հարյուրամյակներ առաջ անցնելով ճշգրիտ գիտությանը, ապրում են, միախառնված ծիծաղելի ու վայրենի հավատալիքներին, խավար, ժողովրդական ինքնամփոփ զանգվածի մեջ, սերնդե սերունդ փոխանցվելով որպես մեծագույն գաղտնիք։

Չնայած միակ այս կետում եղած կտրուկ տարաձայնությանը, ավելի ու ավելի ուժեղ ու ամուր էինք կապվում միմյանց։ Սիրո մասին մեր միջև ոչ մի խոսք դեռևս չէր ասվել, բայց մեկտեղ լինելն արդեն մեզ համար պահանջ էր դարձել, ու հաճախ լռին րոպեներին, երբ մեր հայացքները անակնկալ ու միաժամանակ հանդիպում էին, տեսնում էի, թե ինչպես են խոնավանում Օլեսյայի աչքերը, և ինչպես է խփում նրա քունքի բարակ, երկնագույն երակը...

Դրա փոխարեն կատարելապես փչացել էին իմ և Յարմոլայի փոխհարաբերությունները։ Հավանորեն, նրա համար գաղտնիք չէին իմ այցելությունները հավի տոտերով խրճիթ և երեկոյան զրոսանքներն Օլեսյայի հետ. նա միշտ զարմանալի ճշգրտու-

թյամբ էր իմանում այն ամենն, ինչ կատարվում էր նրա անտառում։ Որոշ ժամանակ անց նկատեցի, որ նա սկսում է խուսափել ինձնից։ Նրա սև աչքերն ամեն անգամ հանդիմանանքով ու դժգոհությամբ հետևում էին ինձ հեռվից, երբ պատրաստվում էի անտառ գնալ, չնայած իր կշտամբանքը ոչ մի խոսքով չարտահայտեց։ Գրաճանաչության մեր կոմիկական լուրջ պարապմունքներն ընդհատվեցին։ Իսկ եթե երեկոները երբեմն կանչում էի Յարմոլային պարապելու, նա միայն ձեռքն էր թափահարում։

— Էլ ի՞նչ։ Փուչ գործ է, պարոն,— ասում էր նա ալարկոտ արհամարհանքով։

Որսի նույնպես դադարեցինք գնալ։ Ամեն անգամ, երբ խոսք էի բացում այդ մասին, Յարմոլան մերժելու մի պատրվակ ունենում էր. կամ հրացանը սարքին չէր լինում, կամ շունն էր հիվանդ, կամ ինքը ժամանակ չուներ։ «Ժամ չկա, պարոն... էսօր արտն է պետք հերկել»,— ամենից հաճախ պատասխանում էր նա իմ հրավերին, իսկ ես շատ լավ գիտեի, որ ամենևին էլ «արտ չի հերկելու», այլ ամբողջ օրը մլուկ է տալու օղու խանութի մոտ, որևէ մեկից հյուրասիրվելու կասկածելի հույսով։ Այդ լռելյայն, թաքուն թշնամանքը սկսել էր ինձ հոգնեցնել, և ես արդեն մտածում էի Յարմոլայի ծառայություններից հրաժարվելու մասին, դրա համար առաջին իսկ հարմար առիթից օգտվելով... Ինձ կանգնեցնում էր լոկ նրա հսկայական, չքավոր ընտանիքի նկատմամբ խղճահարության զգացումը, որին Յարմոլայի չորս ռուբլի ռոճիկը օգնում էր շմեռնել քաղցից։

7

Մի անգամ, երբ սովորության համաձայն, իրիկնադեմին եկա հավի տոտերով խրճիթը, իսկույն աչքիս զարնեց բնակչուհիների ընկճված հոգեվիճակը։ Պառավը, ոտքերը տակը դրած, նստած էր անկողնուն, և կռացած, գլուխը ձեռքերով բռնած, ետուառաջ էր ճոճվում, անհասկանալի ինչ-որ բաներ մրթմրթալով։ Իմ ողջույնին ոչ մի ուշադրություն չդարձրեց։ Օլեսյան բարևեց ինձ, ինչպես միշտ՝ քնքշությամբ, սակայն մեր խոսակցությունը չէր ստացվում։ Ըստ երևույթին նա ինձ ցրված էր լսում ու պատասխանում էր անպատեհ։ Նրա գեղեցիկ դեմքին ներքին անդադրում մի հոգսի ստվերը կար։

— Ես տեսնում եմ, ձեր տանը մի վատ բան է կատարվել,

Օլեսյա,— ասացի ես, զգուշորեն հպվելով նստարանին դրած նրա ձեռքին։

Օլեսյան արագ դարձավ դեպի պատուհանը, կարծես ինչ-որ բան զննելով այնտեղ։ Նա ջանում էր հանգիստ երևալ, բայց հոնքերը կիտվել ու դողում էին, իսկ ատամները ամուր սեղմել էին ցածի շրթունքը։

— Չէ... առանձին ի՞նչ կարող էր մեր տանը լինել,— խուլ ձայնով ասաց նա։— Ամեն բան ոնց որ կար, էդպես էլ մնացել է։

— Օլեսյա, ինչո՞ւ ես ինձ խաբում։ Լավ չես անում։ Ես էլ կարծում էի, թե արդեն լրիվ ընկերներ ենք դարձել։

— Ճիշտ, ոչինչ չկա... էնպես... հոգսեր են, էլի... դատարկ բաներ...

— Չէ, Օլեսյա, պետք է որ դատարկ չլինեն։ Հապա տես, ինքդ քեզ նման չես։

— Դա ձեզ է թվում մենակ։

— Անկեղծ եղիր ինձ հետ, Օլեսյա։ Չգիտեմ, կարո՞ղ եմ արդյոք քեզ օգնել, բայց գոնե մի խորհուրդ կտամ... Լավ, վերջապես, ուղղակի կթեթևանաս, մտածմունքդ ինձ հետ կիսելով։

— Ա՛հ, չէ, դրա մասին խոսել էլ շարժե,— անհամբերությամբ առարկեց Օլեսյան։— Էստեղ մեզ ոչնչով չեք կարող օգնել։

Պառավը հանկարծ անսպասելի հախուռնությամբ խառնվեց մեր խոսակցությանը.

— Ի՞նչ ես չեմուշում անում, անխելք։ Քեզ բան են ասում, դու էլ քիթդ ես ցցել։ Ոնց որ թե քեզանից խելոք՝ էս աշխարքում էլ մարդ չկա։ Պարոն, թողեք ամբողջ պատմությունը ես ձեզ հերթով պատմեմ,— դարձավ նա դեպի ինձ։

Տհաճության չափերը շատ ավելի նշանակալից էին, քան կարող էի ենթադրել հպարտ Օլեսյայի խոսքերից։ Երեկ երեկոյան հավի տոտերով խրճիթ էր եկել տեղական ուրյադնիկը։

— Սկզբից առոք-փառոք նստեց ու օղի ուզեց,— ասաց Մանուլլիխան,— հետո էլ՝ սկսեց ու սկսեց։ «Քսանչորս ժամվա մեջ, ասեց, ջուլուփալասդ հավաքի ու խրճիթից ռադ եղի։ Մեկել անգամ թե որ եկա, ասեց, ու քեզ էստեղ տեսա, աքսորի ճամփեն աչքիդ առաջ առ։ Երկու զինվորով, ասեց, անհավատ արարած, կուղարկեմ հայրենիքդ»։ Հայրենիքս էլ, որդի, հեռու տեղ է, Ամչինսկ քաղաք... Մի շունչ ծանոթ չունեմ մնացած էնտեղ.

մեր պաշպորտների ժամանակն էլ անցած ու անցած, ու սարքին էլ չեն։ Ախ, տեր աստված, էս ինչ փորձանք եկավ։

— Իսկ ինչո՞ւ առաջ թույլ էր տալիս քեզ ապրել, նո՞ր է մըտքով անցել,— հարցրեցի ես։

— Դե գնա ու իմացի... Տեսակ-տեսակ բաներ ասեց, ճիշտն ասեմ, չհասկացա։ Գիտես ինչ կա. էս մեր քամբախը, որ ապրում ենք, մերը չի, կալվածատիրոջն է։ Ախր ես ու Օլեսյան առաջ գյուղում էինք ապրում, հետո...

— Գիտեմ, գիտեմ, տատի, լսել եմ այդ մասին... Գյուղացիք բարկացել են քեզ վրա...

— Հա, էդ է որ կա։ Էն ժամանակ, հին կալվածատիրոջից, ալարոն Աբրոսիմովից, էս ավերակը գնացի խնդրեցի։ Հիմի էլ իբր նոր կալվածատեր է առել անտառն ու իբր ուզում է ճահճները չորացնի, թե ինչ։ Մենակ թե նրանց ինչո՞վ եմ ես խանգարում։

— Տատի, իսկ գուցե այդ ամենը փչո՞ց է մենակ,— նկատեցի ես։— Ընդամենը ուրյադնիկին մի հատ «կարմի՞ր» է պետք եկել։

— Տվեցի, որդի, տվեցի։ Չվերցրե՞ց։ Թե ինչ հաշիվ էր... Քսանհինգանոց տվեցի, չվերցրեց... էլ ու-ո՞ւր։ Գազան կտրած էլ պես վրա պրծավ, որ չիմացա, թե որտեղ եմ։ Մի ձենի գոռում էր. «Դուրս կորեք ու դուրս կորեք»։ Հիմի ի՞նչ պիտի անենք, մեր խեղճ ու որբ գլուխը ո՞ր քարին տանք։ Որդի, հարազատ, դոնե դու մեզ մի բանով օգնեիր, խղճի բերեիր դրան, էդ անկըշտում գազանին։ Ամբողջ կյանքս քեզ շնորհակալ կլինեի։

— Տատ,— կշտամբանքով, ընդհատ բացականչեց Օլեսյան։

— Ի՞նչ տատ, ի՞նչ տատ,— բարկացավ պառավը։ —Քսանհինգ տարի է տատ եմ ու տատ։ Ի՞նչ ես մտածում, ավելի լավ է, տոպրակներս առնենք ու գնա՞նք։ Չէ, պարոն, դուք դրան մի լսեք։ Խղճացեք մեզ, թե մի բան կարող եք անել, արեք։

Անորոշ արտահայտություններով խոստացա զբաղվել, թեև, ճշմարիտն ասած հույսը նվազ էր։ Թթե մեր ուրյադնիկը հրաժարվել է «վերցնել», նշանակում է գործը չափազանց լուրջ է։ Այդ Լոեկո Օլեսյան ինձ սառը հրաժեշտ տվեց և, հակառակ սովորության, չեկավ ինձ ուղեկցելու։ Եստեսնում էի, որ ինքնասեր աղջիկը բարկացել է իմ միջամտության պատճառով և մի քիչ ամաչում է տատի լալկանությունից։

8

Գորշ ու տաք առավոտ էր։ Մի քանի անգամ արդեն պիտի թափվեր խոշոր կարճատև, բարեբեր անձրևը, որից հետո աչքիդ առաջ բարձրանում է նոր խոտը և ելնում են նոր ընձյուղները։ Անձրևից հետո մի րոպե երևում էր արևը, բերկրալի շողերով ողողելով թաց, եղրևանու դեռևս նուրբ կանաչը, որն ամբողջությամբ բռնել էր իմ նախապարտեզը։ Ավելի էր ուժգնանում ճնճղուկների աշխույժ ճռվողյունը բանջարանոցի փխրուն ածուների վրա, ավելի թունդ էին բուրում կաղամախիների կպչուն, դարչնագույն բողբոջները։ Սեղանի մոտ նստած, անտառային ամառանոցի հատակագիծն էի նկարում, երբ սենյակ մտավ Յարմոլան։

— Վրյադնիկն էկել է,— մռայլ ասաց նա։

Այդ պահին ամենևին մոռացել էի երկու օր առաջ նրան տված հրամանս՝ ուրյադնիկի գալու դեպքում ինձ իմաց անելու մասին, և ոչ մի կերպ չէի կարողանում հասկանալ, թե տվյալ րոպեին ինձ հետ ինչ առնչություն կարող է ունենալ իշխանության ներկայացուցիչը։

— Ի՞նչ է եղել,— հարցրեցի տարակուսած։

— Ասում եմ՝ վրյադնիկն էկել է,— կրկնեց Յարմոլան անբարյացակամ նույն տոնով, որն ընդհանրապես ձեռք էր բերել վերջին օրերս։— Նոր տեսա ամբարտակի վրա։ Էստեղ է գալիս։

Դրսում անիվների ճռճռոց լսվեց։ Ես շտապ մոտեցա պատուհանին ու բաց արեցի։ Երկարամարմին, նիհար, շոկոլադագույն ձին, ներքևի պռոշը կախ, մռութն էլ նեղացածի պես, ծանրումեծ վարգով քաշում էր բարձր, ցնցվող, ճյուղահյուս թափքով կառքը, որին միայն մի քեղով էր կապված, մյուս քեղիին մի հաստ պարան էր փոխարինում, և նահանգի շար լեզուները հավատացնում էին, որ ուրյադնիկը դիտավորյալ է նման խղճուկ կառքով շրջում, անցանկալի զանազան ասեկոսեները կանխելու համար։ Ուրյադնիկն ինքն էր քշում կառքը, սպայական ընտիր մահուդից մոխրագույն շինելի մեջ ամփոփված իր հրեշավոր մարմնով զբաղեցնելով երկու նստելատեղը։

— Հարգանքներս, Եվպսիխիյ Աֆրիկանովիչ,— բղավեցի, պատուհանից գլուխս դուրս հանելով։

— Ա-ա՜, հարգանքներս։ Ինչպե՞ս է ձեր ողջությունը,—

պատասխանեց նա սիրալիր, ղեկավարական որոտալից բարի-
տոնով։

Նա զոպեց ձիուն և ուղղած ափը շքոցին դիպցնելով, ծանրա-
մարմին վայելչությամբ իրանն առաջ թեքեց։

— Մի բոպեով համեցեք։ Մի փոքր գործ ունեմ ձեզ հետ։

Ուրյադնիկը լայն բաց արեց ձեռքերը և տարուբերեց գլուխը։

— Չեմ կարող։ Պաշտոնական պարտականությունների մեջ
եմ։ Վոլոշա եմ գնում՝ դիակի գործով, ջրահեղձ կա։

Բայց ես արդեն գիտեի Եվպսիխիյ Աֆրիկանովիչի թույլ
կողմերն ու դրա համար էլ ասացի շինծու անտարբերությամբ.

— Ափսոս, ափսոս... Իսկ ես կոմս Վորցելի մոտից երկու
այնպիսի շիշ եմ ձեռք գցել...

— Չեմ կարող։ Ծառայական պարտքս...

— Բուֆետապանը ծանոթությամբ վաճառեց ինձ։ Նկուղում
հարազատ երեխաների պես է դրանց դաստիարակել... Գայիք
մի բոպեով... Ձեր ձիուն էլ կկարգադրեմ վարսակ կտան։

— Ինչ մարդ եք, հա՜,— կշտամբանքով ասաց ուրյադնիկը։
— Մի՞թե չեք իմանում, որ ծառայությունն առաջին հերթին է...
Իսկ ի՞նչ կա այդ շշերի մեջ։ Սալորոդի՞։

— Ի՞նչ սալորոդի,— թափ տվեցի ձեռքս։— Ստարկա է, բա-
բեկամս, ստա՜րկա։

— Ճշմարիտն ասած, արդեն մի թեթև կերել եմ,— ափսո-
սանքով այտը քորեց ուրյադնիկը, դրա հետ մեկտեղ խիստ
կնճռոտելով դեմքը։

Ես շարունակեցի նախկին հանգստությամբ.

— Չգիտեմ, ճիշտ է, թե չէ, բայց բուֆետապանը երդվում էր,
որ երկու հարյուր տարեկան են։ Բուրմունքը՝ իսկը կոնյակի,
ամենաթունդ սաթի դեղնությունն էլ հետը։

— Է՛հ, էս ի՞նչ եք անում ինձ հետ,— կոմիկական հուսահա-
տությամբ բացականչեց ուրյադնիկը։— Ձին ո՞վ պիտի վերցնի։

Իսկապես մի քանի շիշ ստարկա ունեի, թեև ոչ այն հնու-
թյան, ինչպես պարծեցել էի, բայց նկատի ունեի, որ ներշընչ-
ման ուժը մի քանի տասնյակ տարի կավելացնի օղու տարիքի
վրա... Համենայն դեպս, դա իրոք տնական, ապշեցուցիչ
ստարկա էր, սնանկացած մագնատի նկուղի պարծանքը։ Եվպսի-
խիյ Աֆրիկանովիչը, որը հոգևորականներից էր սերում, անմի-
ջապես մի շիշ խնդրեց, ինչպես ինքն արտահայտվեց, մրսածու-
թյան հիվանդություն լինելու դեպքերի համար... Համադամ

աղանդեր էլ գտնվեց. թարմ բողկ, հենց նոր հարած կարա-
գով։

— Դե-հ, իսկ ի՞նչ տեսակ գործ է ձեր գործը,— հինգերորդ
բաժակից հետո հարցրեց ուրյադնիկը, ետ ընկնելով ծանրու-
թյան տակ ճռռացող հին բազկաթոռի թիկնակին։

Ես սկսեցի նրան շարադրել խեղճ պառավի վիճակը, հիշա-
տակեցի նրա անօգնականությունն ու հուսալքումը, թոռուցիկ
ակնարկեցի անհարկի ձևապաշտության մասին։ Ուրյադնիկն
ինձ էր լսում գլուխը կախած, պարբերաբար փրերից մաքրելով
տուռուզ, կարմիր ու պինդ բողկը և ախորժալի շրխկոցով ծամելով
դրանք։ Մեկ-մեկ շատ արագ վրաս էր հառում անտարբեր,
պղտոր, ծիծաղելիության աստիճան մանրիկ ու երկնագույն աչ-
քերը, սակայն նրա կարմիր ու առհելի դեմքին ոչինչ չէի կա-
րողանում կարդալ. ո՛չ կարեկցանք, ո՛չ դիմադրություն։ Երբ
ես, ի վերջո, լռեցի, նոր միայն հարցրեց.

— Լավ, իսկ ինձնի՞ց ինչ եք ուզում։

— Ինչպե՞ս թե ինչ,— իրար անցա ես։— Խնդրում եմ, մտեք
նրանց դրության մեջ։ Ապրում են երկու խեղճ, անպաշտպան
կանայք...

— Նրանցից մեկն էլ՝ իսկը պարտեզի կոկոն,— խայթելով
վրա բերեց ուրյադնիկը։

— Կոկոն է, թե կոկոն չէ, ամենևին կարևոր չէ։ Բայց ասա-
ցեք, ինչի համար չպետք է նրանց կարեկցեք։ Կարծես թե ձեզ
շատ շտապ պետք է նրանց տեղահա՞ն անել։ Գոնե մի քիչ համ-
բերեք, մինչև ինքս կխնդրեմ կալվածատիրոջը։ Ի՞նչ վտանգ
կլինի ձեզ, եթե մի ամսի չափ սպասեք։

— Ինչպե՞ս թե ինչ վտանգ,— բազկաթոռից վեր թռավ ուր-
յադնիկը։— Ներեցեք, շատ վտանգ ու ամենից առաջ գործիս
հետ կապված։ Աստված գիտե, թե ինչ տեսակ մարդ է այդ պա-
րոն Իլյաշևիչը, նոր կալվածատերը։ Իսկ գուցե բանսարկո՞ւ է...
Նրանցից, որ բան չեղած, թուղթ ու գրիչը կառնեն ու մի գիր
կուղարկեն՝ ո՞ւր, Պետերբուրգ։ Այդ տեսակ մարդի՞կ էլ կան
մեզ մոտ։

Ես փորձեցի հանգստացնել տաքացած ուրյադնիկին։

— Դե լավ, լավ, Եվպսիխիյ Աֆրիկանովիչ։ Չափազանցում
եք այդ գործը։ Ի վերջո, ի՞նչ է պատահել։ Վտանգը՝ վտանգ,
իսկ երախտագիտությունն էլ երախտագիտություն, չէ՞։

— Փու-ու-ո՞ւ,— երկարաձիգ սուլեց ուրյադնիկը և ձեռքերը

իրոր թաղեց շալվարի գրպանների մեջ։— Երախտագիտություն էլ մի երախտագիտություն լիներ։ Դուք ի՞նչ եք կարծում, մի քառատ քսանհինգանոցի համար ես իմ պաշտոնական դրությունը վտանգի տա՞կ կդնեմ։ Չէ-է՛, իմ մասին վատ եք մտածում։

— Ի՞նչ եք տաքանում, Եվպսիխիյ Աֆրիկանովիչ։ Ամենևին էլ բանն այստեղ գումարը չէ, այլ ուղղակի... է, ասենք, մարդկայնությունը...

— Մարդ-կայ-նու-թյո՞ւն,— հեգնաբար դրոշմեց նա յուրաքանչյուր վանկը։— Ներեցեք, ձեր ասած այդ մարդիկ ա՛յ թե որտեղ են նստած։

Նա թափով խփեց իր լայն, բրոնզե ծոծրակին, որը կախված էր օձիքի վրա, անմազ ու ճարպոտ.շերտով։

— Լավ, այդ մեկը, կարծում եմ, չափազանցում եք, Եվպսիխիյ Աֆրիկանովիչ։

— Մի կաթիլ էլ չեմ չափազանցնում։ «Դա խոցն է այս կողմերի», ինչպես ասել է նշանավոր առակագիր պարոն Կռիլովը։ Ահա Բե ովքեր են այդ երկու կանայք։ Նորին պայծառափայլություն իշխան Ուռուսովի սքանչելի ստեղծագործությունը՝ «Ոստիկանական ուրյադնիկը» վերնագրով չե՞ք բարեհաճել կարդալ։

— Չե՛, ձեռքս չի ընկել։

— Եվ շատ իզուր։ Սքանչելի և բարձր բարոյական գործ է։ Խորհուրդ եմ տալիս ազատ ժամանակ ծանոթանալ...

— Լավ, լավ, հաճույքով կծանոթանամ։ Բայց և այնպես չեմ հասկանում, թե այդ գրքույկն ի՞նչ կապ ունի այդ երկու խեղճ կանանց հետ։

— Ի՞նչ։ Շատ ուղղակի։ Կետ առաջին (Եվպսիխիյ Աֆրիկանովիչը ծալեց ձախ ձեռքի հաստիկ, մազապատ ցուցամատը). «Ուրյադնիկն աշալուրջ պիտի հսկի, որպեսզի բոլորն աստծո տաճարը գնան ջերմեռանդորեն, սակայն այնտեղ գտնվեն առանց ուժ գործադրելու...»։ Թույլ տվեք իմանալ, գնո՞ւմ է արդյոք այդ... անունն ինչ էր... Մանույլիխա՞ն... Երբևէ գնո՞ւմ է նա եկեղեցի։

Ես լուռ էի, զարմացած՝ խոսքի անսպասելի դարձվածքով։ Նա ինձ նայեց ցնծալով ու ծալեց միջնամատը.

— Կետ երկրորդ. «Արգելվում է ամենուրեք կեղծ-գուշակություններն ու կեղծ-նախանշաններ հայտնելը...»։ Զգացի՞ք։ Արդա՝ կետ երրորդ. «Արգելվում է իրեն կախարդի կամ հմայողի

տեղ դնելն ու նման խաբեություններից օգտվելը»։ Իսկ սրա՞ն ինչ կասեք։ Իսկ եթե հանկարծ այս ամենը պարզվի կամ կողմնակի կերպով հասնի ղեկավարությա՞նը։ Ո՞վ պիտի պատասխան տա։ Ե՛ս։ Ո՞ւմ վզակոթին կտան, գործից հանելով։ Ի՞մ։ Տեսնում եք, ինչ բան է։

Նա նորից նստեց բազկաթոռին։ Նրա չվեր բարձրացրած աչքերը ցրված թափառում էին սենյակի պատերի վրա, իսկ մատները բարձրաձայն սեղանն էին թմբկահարում։

— Լավ, իսկ եթե ես ձեզ խնդրեմ, Եվպսիխիյ Աֆրիկանովիչ,— դարձյալ սկսեցի գթասիրտ տոնով։— Ինչ խոսք, ձեր պարտականությունները բարդ են ու հոգսաշատ, բայց չէ որ ձեր սիրտը, ես գիտեմ, շատ բարի է, ոսկի սիրտ ունեք։ Ձեզ ի՞նչ կլինի, եթե ինձ խոստանաք այդ կանանց ձեռք չտալ։

Ուրյադնիկի աչքերը հանկարծ կանգ առան իմ գլխավերևում։

— Լավն է ձեր հրացանը,— անփութորեն նետեց նա, շարունակելով մատներով թխկթխկացնելը։— Փառավոր հրացան է։ Անցյալ անգամ, որ եկել էի ու դուք տանը չէիք, մի գլուխ դրանով էի հիանում... Հրաշալի հրացան է։

Ես նույնպես գլուխս դարձրեցի և հրացանին նայեցի։

— Այո, վատ հրացան չէ,— գովեցի ես։— Հին աշխատանք է, Գաստին-Ռեննետի ֆաբրիկայի. անցյալ տարի եմ վերափոխել՝ ետևից լցնելու։ Դուք փողերին ուշադրություն դարձրեք։

— Ինչպե՞ս չէ, ինչպե՞ս չէ... գլխավորապես հենց փողերով էլ հիանում էի։ Հոյակա՞պ ապրանք է... Ուղղակի կարելի է ասել՝ գա՞նձ է։

Մեր աչքերը հանդիպեցին, և ես տեսա, որ ուրյադնիկի շրթունքների անկյուններում թույլ, սակայն բազմանշանակ ժպիտ թրթռաց։ Ես բարձրացա տեղիցս, պատից իջեցրի հրացանը և մոտեցա Եվպսիխիյ Աֆրիկանովիչին։

— Ձերքնեները շատ գեղեցիկ մի սովորություն ունեն՝ հյուրին նվիրել այն ամենն, ինչ նա կգովի,— ասացի ես սիրալիր։ — Ցնայած ես ու դուք չերքեզ չենք, Եվպսիխիյ Աֆրիկանովիչ, բայց ես ձեզ խնդրում եմ ընդունել իմ կողմից սա, որպես հիշատակ։

Ուրյադնիկը ձևի համար ամաչեց։

— Աստված սիրեք, այսպիսի հրաշալիքը։ Չէ, չէ, դա արդեն չափից դուրս շռայլ սովորություն է։

Սակայն ստիպված չեղա երկար համոզել նրան։ Ուրյադնիկն ընդունեց ընծան, խնամքով դրեց հրացանը ծնկների արանքում և մաքուր թաշկինակով սիրով սրբեց ձգանի պահանգի վրա նստած փոշին։ Փոքր-ինչ հանգստացա, տեսնելով, որ հրացանը համենայն դեպս սիրող ու գիտակ մարդու ձեռքն անցավ։ Համարյա իսկույն Եվպսիխիյ Աֆրիկանովիչը վեր կացավ ու շտապեց գնալ։

— Գործը սպասում է, իսկ ես այստեղ խոսքով ընկա ձեզ հետ,— ասաց նա, ոտքին նեղ կրկնակոշիկները բարձր-բարձր թմփթմփացնելով հատակին։— Մեր կողմերում լինելիս, խնդրում եմ համեցեք ինձ մոտ։

— Իսկ Մանուլլիխայի մասի՞ն ինչ կասեք, պարոն պետ,— փափկանկատորեն հիշեցրի ես։

— Կտեսնենք, կտեսնենք...— անորոշ մրթմրթաց Եվպսիխիյ Աֆրիկանովիչը։— Մի բան էլ էի ուզում ձեզնից խնդրել... Հոյակապ բողկ ունեք...

— Ինքս եմ աճեցրել։

— Զարմանալի բողկ է։ Իսկ իմ կողակիցը, գիտեք, ամեն տեսակ բանջարեղենի սարսափելի սիրահար է։ Ու գիտեք, եթե, ինչ ասեմ... մի կապ։

— Հաճույքով, Եվպսիխիյ Աֆրիկանովիչ։ Պարտքս լինի... Այսօր ևեթ մեկնումեկի հետ մի զամբյուղ կուղարկեմ։ Կարագ էլ, եթե թույլ կտաք... Հազվագյուտ կարագ ունեմ։

— Լավ, կարագ էլ... — ողորմածաբար թույլ տվեց ուրյադնիկը։— Իսկ այդ կնանքանց իմաց տվեք, որ առայժմ իրենց ձեռք չեմ տա։ Մենակ թող իմանան, որ չոր շնորհակալությամբ ինձնից չեն պրծնի։ Ողջույն եմ ցանկանում։ Մեկ անգամ էլ՝ մերսի, նվերի և հյուրասիրության համար։

Զինվորականի պես նա շխկացրեց կրունկներն ու ծանր-ծանրը, կուշտ ու կարևոր մարդու քայլվածքով գնաց դեպի իր կալոքը, որի մոտ ակնածալից կեցվածքներով, գլխաբաց կանգնած էին արդեն գյուղական պահնորդը, տանուտերը և Ցարմոլան։

9

Եվպսիխիյ Աֆրիկանովիչն իր խոստման տերը գտնվեց ու անորոշ ժամանակով հանգիստ թողեց անտառային հյուղակի բնակչուհիներին։ Սակայն իմ փոխհարաբերություններն Օլեսյայի հետ կտրուկ ու սարսափելի փոխվեցին։ Իմ նկատմամբ նրա վերաբերմունքի մեջ նախկին վստահող ու միամիտ քնքշության, նախկին կենդանության հետքն անգամ չէր մնացել, որի մեջ այնքան սիրուն միախառնված էր գեղեցիկ աղջկա սեթևեթանքն ու մանկական շարաճճիությունը։ Մեր խոսակցության մեջ երևան եկավ մի տեսակ անհաղթահարելի անհարմար բռնազբոսիկություն... Հապճեպ վախվորածությամբ Օլեսյան խուսափում էր կենդանի թեմաներից, որոնք նախկինում անսահման ասպարեզ էին տալիս մեր հետաքրքրասիրությանը։

Իմ ներկայությամբ նա աշխատանքին էր տրվում լարված, խիստ գործնականությամբ, բայց հաճախ նկատում էի, որ աշխատանքի ընթացքում նրա ձեռքերը հանկարծ անուժ ընկնում էին ծնկների երկայնքով, իսկ աչքերը անշարժ ու անորոշ հառվում էին ցած, հատակին։ Եթե այդ պահերին Օլեսյայի անունն էի տալիս կամ որևիցե հարց առաջարկում, նա ցնցվում էր ու դանդաղորեն ինձ դարձնում իր դեմքը, որի վրա վախ էր գծագրվում և իմ խոսքի իմաստը հասկանալու ճիգ։ Երբեմն ինձ թվում էր, թե նրան ճնշում ու նեղում է իմ ներկայությունը, սակայն այդ ենթադրությունը ամենևին չէր բռնում վիթխարի այն հետաքրքրությանը, որ ընդամենը մի քանի օր առաջ ծագում էր նրա մեջ իմ յուրաքանչյուր փիտղությամբ, յուրաքանչյուր դարձվածքով... Մնում էր մտածել սոսկ, որ Օլեսյան չի կամենում ինձ ներել իմ հովանավորությունն ուրյադնիկի առիթով, ինչ այդպես բարկացրել էր նրա անկախ բնավորությունը։ Բայց այս ենթադրությունն էլ չէր գոհացնում ինձ. ի վերջո, հասարակ, անտառում հասակ առած աղջկա մեջ որտեղի՞ց նման չափազանց երբանկատ հպարտություն։

Այս ամենը բացատրություն էր պահանջում, իսկ Օլեսյան համառորեն խուսափում էր որևէ խոսակցության յուրաքանչյուր բարեպատեհ առիթից։ Մեր երեկոյան զրոսանքները դադարեցին։ Զուր տեղն էի ամեն օր, գնալուց առաջ խոռոն ու աղերսական հայացքներ նետում Օլեսյայի վրա, նա ձևացնում էր, թե չի հասկանում դրանց նշանակությունը։ Իսկ պառավի ներկայությունը, չնայած նրա խլությանը, անհանգստացնում էր ինձ։

Երբեմն ես զայրանում էի սեփական անուժությանս և ամեն օր Օլեսյայի մոտ քաշող սովորությանս վրա։ Ինքս էլ չէի կասկածում, թե ինչպիսի նուրբ, ամուր, անտեսանելի թելերով է կապված սիրտս այդ հմայիչ, ինձ համար անհասկանալի աղջը-

կա հետ։ Դեռևս սիրո մասին չէի մտածում, սակայն խռովահույզ, սիրուն նախորդող շրջանն էի ապրում, լի տարտամ, սրտմաշող թախծալի զգացողություններով։ Ուր էլ լինեի, ինչով էլ ջանայի զբաղվել, բոլոր մտքերս զբաղված էին լինում Օլեսյայի կերպարով, ամբողջ էությունս ձգտում էր դեպի նա, երբեմն նրա ամենաաննշան խոսքերի, նրա շարժումների և ժպիտների ամեն մի հիշողություն մեղմ ու անուշ ցավով սիրտս էր սեղմում։ Սակայն վրա էր հասնում երեկոն, ու ես երկար նրսնում էի նրա կողքին, ցածլիկ ու խախուտ աթոռակին, զայրույթով զգալով, որ հետզհետե ավելի երկչոտ, անճարպիկ ու անհնարամիտ եմ դառնում։

Մի անգամ Օլեսյայի կողքին մի ամբողջ այդպիսի օր անցկացրեցի։ Առավոտից ինձ վատ էի զգում, թեև դեռ չէի կարող հստակ որոշել, թե որն է տկարությունս։ Երեկոյան դեմ վիճակս վատացավ։ Գլուխս ծանրացավ, ականջներս խշշում էին, գագաթոսկրիս շրջանում բութ, անդադար ցավ էի զգում, ասես ինչոր մեկը փափուկ, բայց ուժեղ ձեռքով սեղմում էր ինձ։ Բերանս չորացավ և ամբողջ մարմնովս մի տեսակ ալարկոտ, ծանր թուլություն տարածվեց, որից բոպեն մեկ հորանջել ու ձգմգվել էի ուզում։ Աչքերս այնպես էին ցավում, կարծես հենց նոր ակնապիշ ու մոտիկից փայլուն մի կետի էի նայել։

Իսկ երբ ուշ երեկոյան տուն էի վերադառնում, ճամփի կեսին դողի մի բուռն նոպա հանկարծ բռնեց ու ցնցեց ինձ։ Ես քայլում էի համարյա չտեսնելով ճանապարհը, համարյա չգիտակցելով, թե ուր եմ գնում և ճոճվում էի հարբածի պես, իսկ ծնոտներս միմյանց էին զարնվում բարձրաձայն ու վրա-վրա։

Մինչև հիմա չգիտեմ, թե ինձ ով հասցրեց տուն... Ուղիղ վեց օր պոլեսյան անընդմեջ, սարսափելի դողէրոցքը ցնցում էր ինձ։ Ցերեկը հիվանդությունը կարծես թե մեղմվում էր, և գիտակցությունս տեղն էր գալիս։ Այդ ժամանակ, հիվանդությունից կատարելապես թուլացած, հազիվհազ ման էի գալիս սենյակում, ցավ ու թուլություն զգալով ծնկներիս մեջ։ Ցուրաքանչյուր, քիչ ավելի արագ շարժումից արյունը տաք հորձանքով գլուխս էր խուժում և աչքերիս առաջ բոլոր առարկաները խավարով վարագուրում։ Իսկ երեկոյան, սովորաբար ժամը յոթի մոտ, փոթորկի պես վրա էր պրծնում հիվանդության նոպան, և ես անկողնում անց էի կացնում սարսափելի, հարյուրամյակի պես երկար մի գիշեր, մերթ վերմակի տակ սրթսրթալով

ցրտից, մերթ անտանելի ջերմից վառվելով։ Հազիվ էր նիրհը թեթևակի հպվում ինձ, երբ տարօրինակ, անհեթեթ, տանջալիորեն խայտաբղետ երազներն սկսում էին խաղալ իմ բորբոքված ուղեղի հետ։ Իմ բոլոր անուրջները լի էին մանր, նվազագույն մասնիկներով, որոնք անճոռնի խառնաշփոթությամբ կուտակվում ու կառչում էին միմյանցից։ Մերթ թվում էր ինձ, թե գույնզգույն, արտառոց ձևի արկղեր եմ ջոկչկում, փոքրերը հանելով մեծերի միջից, այդ փոքրերից՝ էլ ավելի փոքրերը, ու ոչ մի կերպ չեմ կարողանում դադարեցնել այդ անվերջանալի աշխատանքը, որ վաղուց ինձ նողկալի էր թվում։ Մերթ շշմեցնող արագությամբ աչքերիս առջևով ցոլցլում-անցնում էին պաստառների վառվռուն շերտեր, ու դրանց վրա նախշերի փոխարեն զարմանալի հստակությամբ տեսնում էի մարդկային դեմքերի ամբողջ դրասանգներ, երբեմն գեղեցիկ, բարի ու ժպտուն, երբեմն զարհուրելի ծամածռություններ անող, լեզու հանող, ատամները մերկացնող ու աչքերը հսկայական սպիտակուցները պտտող դեմքեր։ Հետո խճճված, արտաքարգ բարդ ու վերացական վեճի մեջ էի մտնում Ցարմոլայի հետ։ Բոպե առ բոպե միմյանց ներկայացված մեր փաստարկներն ավելի ու ավելի նրբին և խորունկ էին դառնում, առանձին բառեր և նույնիսկ տառեր հանկարծ ձեռք էին բերում խորհրդավոր, անչափելի նշանակություն, ու դրա հետ մեկտեղ ինձ ավելի ու ավելի ուժեղ էր համակում նողկալի սարսափ։ Անծանոթ, հակաբնական ուժի հանդեպ, որն իրար վրա այլանդակ տրփեստություններ էր քամում գլխիցս ու չէր թողնում ընդհատել վաղուց արդեն զզվելի դարձած վեճը...

Դա ինչ-որ փոթորկվող մրրիկ էր, կազմված մարդկային ու կենդանական մարմիններից, բուսատեսակներից, ամենազարմանալի ձևերի ու գույների առարկաներից, բառերից ու դարձվածքներից, որոնց նշանակությունն ընկալվում էր՝ բոլոր զգայարաններով... Բայց տարօրինակ մի բան. նույն այդ ժամանակ առաստաղի վրա անդադար տեսնում էի լուսավոր հավասար շրջանը, որ գցում էր կանաչ ու այրված լուսամփոփով լամպը։ Եվ չգիտես ինչու, ես գիտեի, որ անհարթ եզրերով այդ հանգիստ շրջանի մեջ դարան է մտել անխոս, միապաղաղ, խորհրդավոր ու ահեղ կյանքը, շատ ավելի զարհուրելի ու ճնշող, քան երազներիս խելահեղ քաոսը։

Հետո արթնանում էի, կամ, ավելի ճիշտ՝ չէի արթնանում,

հանկարծ արթուն էի գտնում ինձ։ Գիտակցությունս համարյա տեղն էր գալիս։ Ես հասկանում էի, որ պառկած եմ անկողնում, որ հիվանդ եմ, որ հենց նոր զառանցում էի, սակայն լուսավոր շրջանը մութ առաստաղի վրա այնուամենայնիվ վախեցնում էր ինձ դարանակալ շարագույժ սպառնալիքով։ Թույլ ձեռքս մեկնում էի ժամացույցի կողմը, նայում ու տխրամած տարակուսանքով համոզվում, որ այլանդակ երազներիս անվերջանալի ամբողջ շարանը երկու-երեք րոպեից ավելի չի զբաղեցրել։ «Տեր աստված, երբ է լույսը բացվելու»,— հուսահատված մտածում էի ես, գլուխս դեսուդեն տանելով տաք բարձերի վրայով ու զգալով, որ շրթունքներս խանձում է իմ իսկ ծանր ու կարճ շընչառությունը... Բայց ահա նորից ինձ պարուրեց թեթև նիրհը, և նորից ուղեղս պեսպիսի մղձավանջի խաղալիքը դարձավ, ու երկու րոպե անց նորից արթնանում էի, մահացու թախիծով համակված...

Վեց օր անց իմ ամուր կառուցվածքը, խինինի և եզնալեզվի օգնությամբ, հաղթեց հիվանդությունը։ Անկողնուց վեր կացա ամբողջովին ջարդված, ոտքերիս վրա հազիվ էի կանգնում։ Ապաքինումն ընթանում էր անկանգ արագությամբ։ Վեցօրյա դողէրոցքային զառանցանքից հոգնած գլխիս մեջ հիմա մտքերի ծույլ ու դուրեկան բացակայություն էր զգացվում։ Ախորժակս կրկնակի բացվեց, և մարմինս կազդուրվում էր ժամ առ ժամ, իր յուրաքանչյուր մասնիկով ըմպելով կյանքի առողջությունն ու բերկրանքը։ Դրա հետ մեկտեղ, ինձ նոր ուժով ձգեց անտառը, միայնակ ու կողք թեքված հյուղակը։ Նյարդերս դեռ չէին ամրացել, և ամեն անգամ, հիշողությանս մեջ վերականգնելով Օլեսյայի դեմքն ու ձայնը, այնպիսի նուրբ խանդաղատանք էի զգում, որ ուզում էի լաց լինել։

10

Հինգ օր էլ անցավ, և այնքան կազդուրվեցի, որ ոտքով, առանց նվազագույն հոգնության հասա հավի տոտերով խրճիթը։ Երբ հասա շեմին, սիրտս տագնապալի վախով զարկեց։ Համարյա երկու շաբաթ չէի տեսել Օլեսյային ու հիմա հատկապես հստակ էի հասկանում, թե որքան մոտ ու սիրելի է նա ինձ համար։ Դռան շրջանակը բռնած, հապաղեցի մի քանի վայրկյան ու շունչս հազիվ էի տեղը բերում։ Նախքան դուռը

հրելը, մի քանի վայրկյան նույնիսկ աչքերս փակեցի անվճռականությամբ...

Երբեք հնարավոր չէ բացատրել այն տպավորությունները, որոնք հաջորդեցին իմ ներս մտնելուն... Մի՞թե հնարավոր է հիշել խոսքերը, որոնք արտասանվում են մոր և որդու, ամուսնու և կնոջ կամ երկու սիրահարների հանդիպման առաջին պահերին։ Ասվում են ամենահասարակ, ամենաառօրեական դարձվածքները, անգամ ծիծաղելի, եթե բառ առ բառ գրանցես դրանք թղթի վրա։ Սակայն այս դեպքում յուրաքանչյուր բառը տեղին է և անսահման գեղեցիկ հենց միայն նրա համար, որ արտասանվում է աշխարհի ամենաթանկագին ձայնով։

Ես հիշում եմ, շատ հստակ եմ հիշում լոկ այն, որ Օլեսյայի գունատ դեմքն արագորեն իմ կողմը շրջվեց և որ այդ սքանչելի, ինձ համար նոր դեմքի վրա մի ակնթարթում, միմյանց փոխարինելով արտացոլվեց տարակուսանք, երկյուղ, տագնապ և սիրո քնքույշ, շողշողուն ժպիտ... Պառավն ինչ-որ բաներ մրթմրթաց, կողքս մլուլ տալով, սակայն ես չլսեցի նրա բարևը։ Օլեսյայի ձայնն ինձ հասավ, որպես սքանչելի մի երաժշտություն.

— Ձեզ ի՞նչ էր պատահել։ Դուք հիվա՞նդ էիք։ Օ՜հ, ինչպես եք նիհարել, ինչ մե՜ղք եք։

Երկար ժամանակ ոչինչ չէի կարողանում պատասխանել, և մենք լուռ կանգնած էինք միմյանց դիմաց, ձեռք ձեռքի, իրար աչքերի մեջ նայելով խորն ու բերկրալից։ Այդ մի քանի լուռ վայրկյանները ես միշտ ամենաերջանիկն եմ համարում իմ կյանքում, երբեք, երբեք ոչ նախկինում, ոչ ավելի ուշ, նման անբիծ, լիակատար, ամենակուլ զմայլանք ես չեմ զգացել։ Եվ ինչքան շատ բան կարդացի ես Օլեսյայի խոշոր ու մթին աչքերի մեջ. թե՛ հանդիպման հուզմունք, թե՛ հանդիմանանք իմ երկար բացակայության համար, թե՛ սիրո ջերմ խոստովանություն... Ես զգացի, որ այդ հայացքի հետ մեկտեղ, առանց որևիցե պայմանի ու տատանման, Օլեսյան ուրախությամբ ինձ է տալիս իր ամբողջ էությունը։

Առաջինը նա ընդհատեց այդ զմայլանքը, կոպերի դանդաղ շարժումով ինձ ցույց տալով Մանուլլիխային։ Մենք նստեցինք կողք-կողքի, և Օլեսյան սկսեց մանրամասն ու հոգածությամբ հարցափորձ անել իմ հիվանդության ընթացքի, ընդունածս դեղերի, բժշկի ասածների ու կարծիքի մասին (բժիշկը երկու անգամ այցելել էր ինձ)։ Բժշկի մասին ստիպեց մի քանի անգամ

պատմել, և ես մեկ-մեկ նրա շուրթերին թռուցիկ, հեգնական ժպիտ նկատեցի։

— Ա՜խ, ինչի՞ չգիտեի, որ հիվանդացել եք,— բացականչեց նա անհամբեր ափսոսանքով։— Մի օրում ես ձեզ ոտքի կկանգնեցնեի... Ախր, ինչպե՞ս կարելի է նրանց վստահել, երբ նրանք ոչինչ, ո՜չի՜նչ չեն հասկանում։ Ինչի՞ մեկին չուղարկեցիք, որ ինձ կանչեն։

Ես կմկմացի.

— Գիտես ինչ, Օլեսյա... այնքան հանկարծակի ստացվեց... ու, բացի դրանից, վախեցա քեզ անհանգստացնել։ Վերջին ժամանակներս ինձ հետ մի տեսակ տարօրինակ էիր, կարծես միշտ բարկացած էիր իմ վրա կամ ձանձրացրել էի ես քեզ... Լսիր, Օլեսյա,— ավելացրի ես, ձայնս իջեցնելով,— ես ու դու շատ, շատ բան ունենք խոսելու... միայն թե մենակ... հասկանո՞ւմ ես։

Նա լուռ իջեցրեց կոպերը, ի նշան համաձայնության, ապա վեհերոտ հայացք գցեց տատի վրա ու արագ շշնջաց.

— Հա... ես էլ էի ուզում... հետո... սպասեք...

Արևը դեռ նոր էր գնում մայրամուտ, երբ Օլեսյան սկսեց ինձ շտապեցնել, որ տուն գնամ։

— Վեր կացեք, վեր կացեք շուտ,— ասում էր նա, ձեռքիցս բռնած, աթոռակից վեր կացնելով ինձ։— Հիմա թե որ խոնավություն առնեք, հիվանդությունը էլի կկրկնվի։

— Բա դո՞ւ ուր ես գնում, Օլեսյա,— հանկարծ հարցրեց Մանուլլիխան, տեսնելով, որ թոռը շտապ գլխին է գցում մեծ ու մոխրագույն բրդյա գլխաշորը։

— Գնամ... ճամփու դնեմ մի քիչ,— պատասխանեց Օլեսյան։

Նա դա ասաց անտարբեր տոնով, նայելով ոչ թե տատին, այլ պատուհանին, սակայն նրա ձայնի մեջ անբավականության հազիվ որսալի երանգ զգացի։

— Վերջը գնացի՞ր,— շեշտելով հարցրեց պառավը։

Օլեսյայի աչքերը փայլատակեցին ու հառվեցին Մանուլլիխայի դեմքի վրա։

— Հա՜, ու կգնամ,— հանդուգն առարկեց նա։— Վաղուց խոսել ու խոսքը պրծել ենք... Ես եմ գնացողը, ես էլ պատասխանը կտամ։

— Է՜հ, ինչ ասեմ...— բարկացած ու կշտամբալից բացականչեց պառավը։

Նա ուզում էր էլի ինչ-որ բան ավելացնել, բայց միայն ձեռքը թափ տվեց, իր երերուն քայլքով գնաց դեպի խրճիթի անկյունը և սկսեց զամբյուղի մեջ ինչ-որ բան փնտրել։

Ես հասկացա, որ արագընթաց ու դժկամ այս խոսակցությունը, որին հենց նոր ներկա գտնվեցի, շարունակությունն է մի ամբողջ շարք վեճերի և բռնկումների։ Օլեսյայի կողքով անտարակ իջնելով, հարցրեցի.

— Տատիկը չի՞ ուզում, որ ինձ հետ զբոսնելու գաս։ Այո՞։

Օլեսյան զայրացած ուսերը ցնցեց։

— Խնդրում եմ, նրա վրա ուշադրություն մի դարձրեք։ Հա, չի ուզում... Հետո ինչ... թե՞ ես իրավունք չունեմ սրտիս ուզածն անելու։

Ներսումս հանկարծ անզսպելի ցանկություն առաջացավ կշտամբել Օլեսյային, իր նախկին խստության համար։

— Ուրեմն, նաև առաջ, դեռ նախքան իմ հիվանդությունը, դու կարող էիր, միայն թե չէիր ուզում ինձ հետ մենակ մնալ... Ախ, Օլեսյա, եթե իմանայիր, թե ինչ ցավ ես պատճառում ինձ... Ես այնպես, այնպես էի սպասում ամեն երեկո, որ նորից կգաս ինձ հետ... Իսկ դու, պատահում էր, միշտ այնպես անուշադիր էիր, ձանձրացած, բարկացած... Օ՜, ինչպես էիր ինձ տանջում, Օլեսյա...

— Լավ, վերջ տվեք, սիրելիս... Մոռացեք դա,— ձայնի մեջ մեղմ ներողությամբ խնդրեց Օլեսյան։

— Չէ, որպես նախատինք չեմ ասում, այլ այնպես, խոսքը տեղը եկավ... Հիմա հասկանում եմ, թե ինչու էր այդպես... Իսկ առաջ, ճիշտն ասած, նույնիսկ հիշելն է ծիծաղելի, կարծում էի, թե ուրյադնիկի պատճառով ես ինձնից նեղացել։ Եվ այդ միտքն ինձ շատ էր դառնացնում։ Թվում էր, թե դու այնքան հեռու, օտար մարդ ես համարում ինձ, որ նույնիսկ բարեկամական հասարակ օգնությունը քեզ համար դժվար է ընդունելը... Շատ ցավալի էր դա ինձ համար... Չէ որ ես չէի մտածում, Օլեսյա, որ այդ ամենը տատիկից է գալիս...

Օլեսյայի դեմքը հանկարծ թունդ շառագունեց։

— Իսկի էլ տատիկից չէր... Ես ինքս չէի ուզում,— ջերմորեն, կրակոտ բացականչեց նա։

Ես կողքից նայեցի նրան, այնպես, որ տեսա նրա թեթևակի թեքած գլխի հստակ ու նուրբ կիսադեմը։ Միայն հիմա նկատեցի, որ Օլեսյան նույնպես նիհարել է այդ ընթացքում ու նրա աչքերի շուրջ կապտավուն ստվերներ են առաջացել։ Զգալով իմ

հայացքը, Օլեսյան վրաս հառեց իր աչքերը, ապա իսկույն իջեցրեց և շրջվեց ամոթխած ժպտալով։

— Ինչո՞ւ չէիր ուզում, Օլեսյա։ Ինչո՞ւ,— հարցրեցի ես հուզմունքից խզված ձայնով և բռնելով Օլեսյայի ձեռքը, ստիպեցի կանգնել։

Այդ ժամանակ մենք գտնվում էինք անտառային երկար, նեղ ու նետի պես ուղիղ կածանի հենց մեջտեղում։ Բարձր, սլացիկ սոճիները երկու կողմից շրջապատել էին մեզ, վիթխարի, հեռուն ձգվող միջանցք ստեղծելով, միահյուսված բուրավետ ճյուղերի կամարով։ Մերկ, կեղևաթափ բները ներկված էին վերջացող մայրամուտի բոսորագույն փայլով...

— Ինչո՞ւ։ Ինչո՞ւ, Օլեսյա,— կրկնում էի շշնջաձայն և ավելի ուժեղ սեղմում նրա ձեռքը։

— Չէի կարենում... Վախենում էի,— հազիվ լսելի ասաց Օլեսյան։— Կարծում էի, թե բախտից կարելի է փախչել... Իսկ հիմա... հիմա...

Նա շնչասպառ էր լինում, ասես օդը չէր բավականացնում, ու հանկարծ նրա ձեռքերը արագ և ամուր դղակեցին վիզս, և շրթունքներս քաղցրությամբ այրեց Օլեսյայի փութկոտ, դողդոջ շշունջը.

— Հիմա ինձ համար մեկ է, մեկ է... Որովհետև ես քեզ սիրում եմ, իմ թանկագինս, բախտս, սիրունս...

Նա ավելի ու ավելի էր սեղմվում ինձ, և ես զգում էի, թե ձեռքերիս մեջ ինչպես է թրթռում նրա ուժեղ, պիրկ, տաք մարմինը, կրծքիս մոտ ինչ հաճախակի է զարկում նրա սիրտը։ Նրա կրքոտ համբույրները արբեցնող գինու պես խուժում էին հիվանդությունից դեռ չպնդացած գլուխս, և ես սկսեցի կորցնել ինքնատիրապետումը։

— Օլեսյա, ի՞ր ասածդ, պետք չէ... Թող ինձ,— ասում էի ես, ջանալով բացել նրա ձեռքերը։— Հիմա ես էլ եմ վախենում... ինքս ինձնից եմ վախենում... Թող ինձ, Օլեսյա։

Նա վեր բարձրացրեց գլուխը, և դեմքն ամբողջությամբ լուսավորվեց նվաղուն, դանդաղ ժպիտով։

— Մի վախենա, սիրունս,— ասաց նա մեղմ քնքշության և հուզիչ համարձակության աննկարագրելի արտահայտությամբ։ — Ես քեզ ոչ մի անգամ չեմ նախատի, ոչ մեկին չեմ խանդի... Մենակ թե ասա, սիրո՞ւմ ես։

— Սիրում եմ, Օլեսյա։ Վաղուց եմ սիրում ու շատ եմ սիրում։ Բայց... էլ մի համբուրիր ինձ... Ես թուլանում եմ, գլուխս պտտվում է, ինքս ինձ չեմ կարող տիրապետել...

Նրա շուրթերը կրկին երկար ու տանջալիորեն քաղցր հպվեցին շրթունքներիս, ու ես լսեցի, ավելի շուտ կռահեցի նրա ասածը.

— Ուրեմն, մի էլ վախենա ու էլ ոչ մի բանի մասին մի մտածիր... Ես մեր օրն է, ու ոչ ոք մեզնից խլել չի կարող...

. . . . . .

Եվ այդ ամբողջ գիշերը կախարդական ու թովիչ մի հեքիաթ դարձավ։ Ելավ լուսինը, և նրա շողերը անսովոր, պերճ ու խորհրդավոր լուսավորեցին անտառը, խավարի մեջ անհավասար, կապտադալուկ բծերով ոփովեցին ծուռումուռ բների, կեռ ոստերի, թավշյա գորգի պես փափուկ մամուռների վրա։ Կեչիների բարակ բները սպիտակին էին տալիս ցայտուն ու հստակ, իսկ նրանց ցանցառ սաղարթի վրա ասես արծաթյա, թափանցիկ, շղարշե քողեր էին գցված։ Տեղ-տեղ լույսն ամենևին չէր թափանցում սոճիների խիտ ճյուղերի ծածկը։ Կատարյալ, անթափանց խավար էր այդտեղ, ու միայն հենց կենտրոնից սպրդած, հայտնի չէ թե որտեղից անցած ճառագայթը հանկարծ վառ լուսավորում էր ծառերի երկար շարքը, գետնի վրա թողնելով նեղ և ուղիղ արահետ՝ այնքան լուսավոր, շքեղ ու սքանչելի, ճիշտ որպես մի ծառուղի, որ բարի ոգիներն էին զարդարել Օբերոնի և Տիտանիայի հանդիսավոր երթի համար։ Եվ մենք, գրկախառնված, քայլում էինք այդ ժպտուն ու կենդանի առասպելի միջով, առանց մեկ հատիկ բառի, մեր երջանկությամբ ու անտառի զարհուրելի լռությամբ ընդարմացած։

— Թանկագինս, լրիվ մոռացել եմ, որ տուն պիտի գնաս,— հանկարծ սթափվեց Օլեսյան։— Ինչքան վատն եմ։ Նոր ես առողջացել, ու ես քեզ մինչև հիմա պահել եմ անտառում։

Ես գրկեցի նրան և գլխաշորը ետ տարա նրա փարթամ, սևավուն մազերի վրայից, և թեքվելով նրա ականջին, հազիվ լսելի հարցրեցի.

— Չե՞ս զղջում, Օլեսյա։ Չե՞ս ափսոսում։

Նա դանդաղ օրորեց գլուխը։

— Չէ, չէ... Ինչ էլ լինի հետո, չեմ ափսոսի։ Էնքան լավ եմ...

Նրա աչքերի մեջ առկայծեց ինձ ծանոթ միստիկ սարսափի արտացոլումը։

— Իսկ մի՞թե անպայման ինչ-որ բան պիտի կատարվի։

— Օ՜, անպայման... Հիշո՞ւմ ես, քեզ ասել եմ խաչի աղջիկա մասին։ Ախր էդ խաչի աղջիկը ես եմ, փորձանքը, որ թղթերն ասել էին, իմ գլխին է գալու... Գիտես, ախր ես քեզ ուզում էի խնդրել, որ էլ չգաս մեզ մոտ։ Էդ ժամանակ էլ դու հիվանդացար, ու ես քեզ կես ամսվա չափ չտեսա... Ու էն տեսակ կարոտ բռնեց ինձ, էն տեսակ տխրություն, որ վայ թե ամեն ինչ աշխարհում տայի, մենակ թե քեզ հետ էլի մի րոպե մնայի... Հենց էդ ժամանակ էլ որոշեցի։ Ինչ լինելու է, թող լինի, մտածեցի, ես իմ ուրախությունը ոչ ոքի չեմ տա...

— Դա ճիշտ է, Օլեսյա։ Ինձ հետ էլ նույնն էր,— ասացի ես, շրթունքներս հպելով նրա քունքին։— Ես այնքան ժամանակ չէի իմանում, որ սիրում եմ քեզ, մինչև որ չբաժանվեցի։ Ըստ երևույթին, ինչ-որ մեկը զուր չի ասել, որ սիրո համար բաժանումը նույնն է, ինչ քամին կրակի համար. փոքր սերը հանգցնում է, իսկ մեծն ավելի ուժեղ է բորբոքում։

— Ոնց ասացի՞ր։ Մեկ էլ ասա, մեկ էլ, խնդրում եմ,— հեռաքրքրվեց Օլեսյան։

Մեկ անգամ էլ կրկնեցի չգիտեմ, թե ում պատկանող այդ ասույթը։ Օլեսյան մտքերի մեջ ընկավ, և նրա շրթունքների շարժումից տեսա, որ նա կրկնում է իմ բառերը։

Ես մոտիկից նայում էի նրա գունատ, ետ գցած դեմքին, նրա խոշոր ու սև աչքերին, որոնց մեջ լուսնի վառ ցոլքեր էին փայլում, և մոտալուտ դժբախտության տարտամ կանխազգացումը հանկարծ անսպասելի սառնությամբ սիրտս սողոսկեց։

11

Համարյա մի ամբողջ ամիս շարունակվեց մեր սիրո միամիտ, դյութիչ հեքիաթը, և մինչ այժմ Օլեսյայի սքանչելի կերպարանքի հետ անթառամ ուժով հոգուս մեջ են այն բոցավառ վերջալույսերը, այն շաղառատ, հովտաշուշանների ու մեղրի բույրով տոգորված, առույգ թարմությամբ և թռչունների զրընգուն կանչերով լի առավոտները, հունիսյան այն տաք, գորովալից և ալարկոտ օրերը... Ոչ ձանձրույթը, ոչ հոգնությունը, ոչ թափառական կյանքի իմ մշտնջենական մոլուցքն այդ ընթացքում և ոչ մի անգամ գլուխ չբարձրացրեց իմ հոգում։ Որպես հեթանոս աստված կամ ինչպես երիտասարդ, ուժեղ կենդանի, ես վայելում էի լույսը, ջերմությունը, կյանքի գլուխգործված բերկրանքը և հանգիստ, առողջ, զգայական սերը։

Պառավ Մանուլլիխան իմ ապաքինումից հետո այնքան անտանելի փնթփնթան դարձավ, ինձ այնպիսի բացահայտ թշնամանքով էր դիմավորում ու քանի դեռ հյուղակում էի լինում, այնպիսի աղմկոտ կատաղությամբ էր իրար տալիս կճուճները վառարանի մեջ, որ Օլեսյայի հետ գերադասեցինք ամեն երեկո անտառում հանդիպել... Եվ անտառակի վեհապանծ կանաչ հիասքանչությունը թանկարժեք շրջանակի պես զարդարում էր մեր անխոով սերը։

Ամեն օր ավելի ու ավելի մեծ զարմանքով էի գտնում, որ Օլեսյան՝ անտառում հասակ առած, նույնիսկ կարդալ չիմացող այդ աղջիկը, կյանքի շատ դեպքերում երևան է բերում նրբազգաց փափկանկատություն և առանձնահատուկ, բնածին տակտ։ Սիրո, նրա ուղղակի, կոպիտ իմաստի մեջ միշտ կան սարսափելի կողմեր, որոնք նյարդային, գեղարվեստական խառնվածքի տեր մարդկանց համար տանջանք և ամոթ են դառնում։ Սակայն Օլեսյան կարողանում էր խուսափել դրանցից միամիտ մի այնպիսի ողջախոհությամբ, որ ոչ մի անգամ և ոչ մի գեշ համեմատություն, ոչ մի անպատկառ պահ չվիրավորեցին մեր կապը։

Մինչ այդ մոտենում էր իմ մեկնելու ժամանակը։ Ճշմարիտն ասած, իմ բոլոր պաշտոնական պարտականությունները Պետերբուրգում արդեն ավարտված էին, և ես գիտակցաբար ձգձգում էի քաղաք վերադառնալուս ժամկետը։ Ես դեռ ոչ մի խոսք չէի ասել Օլեսյային, վախենալով պատկերացնել նույնիսկ, թե ինչպես կընդունի իմ մեկնելու անհրաժեշտության լուրը։ Ընդհանրապես դժվարին կացության մեջ էի։ Սովորությունն իմ մեջ չափազանց խորն արմատներ էր ձգել։ Ամեն օր Օլեսյային տեսնելը, նրա անուշ ձայնը և զրնգուն ծիծաղը լսելը, նրա քնքշանքի նուրբ սքանչելիքը զգալն ինձ համար ավելին էր դարձել, քան անհրաժեշտությունը։ Հազվադեպ օրերին, երբ վատ եղանակը խանգարում էր մեզ հանդիպել, ես ինձ կատարյալ կորսված մի պես էի զգում, իմ կյանքում ամենագլխավոր, ամենակարևոր մի բանից զրկված։ Ամենայն զբաղմունք ինձ ձանձրալի էր թվում, ավելորդ, և իմ ամբողջ էությունը ձգվում էր անտառ, դեպի լույսը, դեպի տաքությունը, Օլեսյայի սիրելի, սովորական դարձած դեմքը։

Օլեսյայի հետ ամուսնանալու գաղափարն ավելի ու ավելի հաճախ էր միտքս գրաղեցնում։ Սկզբում դա ինձ հազվադեպ էր պատկերանում որպես մեր հարաբերությունների հնարավոր ազնիվ ելք, ծայրահեղ դեպքում։ Լոկ մի հանգամանք էր վախեցնում ու կանգնեցնում ինձ. պատկերացնել անգամ չէի կարողանում, թե ինչպիսին կլինի մոդայիկ զգեստ հագած, առասպելներով ու խորհրդավոր ուժերով լի այս ծեր անտառի հմայիչ շրջանակից դուրս քաշված Օլեսյան, որը հյուրասենյակում խոսում է իմ պաշտոնակիցների կանանց հետ։

Բայց որքան մոտենում էր իմ մեկնման ժամը, այնքան ավելի էր ինձ տիրում միայնության սարսափը և ահագնացող կարոտը։ Ամուսնանալու վճիռն օրըստօրե ամրանում էր իմ հոգում, և ի վերջո ես դադարեցի դրա մեջ հասարակությանն ուղղված հանդուգն մարտահրավեր տեսնելը։ «Չէ որ կարգին և ուսյալ մարդիկ ամուսնանում են դերձակուհիների, աղախինների՝ հետ,— մխիթարում էի ինքս ինձ,— և հիանալի ապրում են, ու մինչև կյանքի վերջը օրհնում ճակատագիրը, որ իրենց այդ որոշմանը հանգեցրեց։ Ուրիշներից ավելի գժբախտ հո չե՞մ լինի իրոք»։

Մի անգամ, հունիսի կեսերին, իրիկնադեմին, սովորության համաձայն Օլեսյային էի սպասում անտառի նեղ կածանի շրջադարձի վրա, ծաղկած ալոճենու թփերի արանքում։ Դեռ հեռվից ճանաչեցի նրա քայլերի թեթև, արագ ձայնը։

— Բարև, հարազատս,— ասաց Օլեսյան, գրկելով ինձ ու ծանր շնչելով։— Վայ թե շա՞տ ես սպասել։ Հազիվհազ դուրս պրծա... Տատի հետ էի կռիվ տալիս։

— Մինչև հիմա չի՞ հանգստացել։

— Ի՞նչ հանգստանալ։ «Նրա երեսից, ասում է, գլուխդ կուտես... Իր քեֆը կքաշի ու կթողնի քեզ։ Իսկի էլ չի սիրում նա քեզ...»։

— Իմ մասի՞ն էր այդպես ասում։

— Քո մասին, սիրելիս... Մեկ է, ես նրա ոչ մի խոսքին չեմ հավատում։

— Իսկ նա ամեն ինչ գիտե՞։

— Հաստատ չեմ ասի... կարծեմ թե գիտի։ Մեր մասին նրա հետ ես ոչ մի բան չեմ խոսում, ինքն է գլխի ընկնում։ Էհ, ինչի մասին ենք մտածում... Գնանք։

Ճերմակ ծաղիկների փարթամ փնջով ալոճենու մի ճյուղ պոկեց ու խրեց մազերի մեջ։ Մենք դանդաղ քայլեցինք կածանով, որ թեթևակի վարդագունել էր իրիկնամուտի արևից։

Դեռ նախորդ գիշեր էի վճռել ամեն գնով ասելիքս ասել այդ երեկո։ Սակայն տարօրինակ երկչոտությունը բանտել էր լեզուս։ Մտածում էի. եթե Օլեսյային ասեմ իմ մեկնելու և ամուսնության մասին, կհավատա՞ արդյոք ինձ։ Չի՞ թվա արդյոք նրան, որ իմ առաջարկությամբ սոսկ նվազեցնում, մեղմում եմ հասցնելիք վերքի առաջին ցավը։ «Հենց հասնենք կեղևը պոկած բնով այն թխկիին, իսկույն կսկսեմ»,— մտովի նշանակեցի պահը։ Հավասարվում էինք թխկիին, և ես, հուզմունքից գունատված, շունչ էի առնում արդեն, խոսել սկսելու համար, սակայն համարձակությունս հանկարծակի թուլացավ, պարպվելով սրտի նյարդային, հիվանդագին խփոցով ու բերանիս մեջ առաջացած սառնությամբ։ «Քսանյոթն իմ թիվն է,— մտածում էի մի քանի րոպե անց,— կհաշվեմ մինչև քսանյոթ, և այն ժամանակ...»։ Սկսում էի մինչև քսանյոթ հաշվել մտքիս մեջ, բայց զգում էի, որ վճռականությունը դեռ չի հասունացել իմ մեջ։ «Ոչ,— ասում էի ինքս ինձ,— ավելի լավ է մինչև վաթսուն հաշվեմ, դա ճիշտ մի՛ րոպե կլինի, և այդ ժամանակ անպայման, անպայմա՛ն...»։

— Քեզ ի՞նչ է եղել էսօր,— հանկարծ հարցրեց Օլեսյան։— Մի վատ բանի մասին ես մտածում։ Քեզ հետ ի՞նչ է պատահել։

Այդժամ ես խոսեցի, բայց սկսեցի նույնիսկ ինձ համար ղղվելի տոնով, շինծու, անբնական անփութությամբ, կարծես խոսքն ամենափուչ մի բանի մասին էր։

— Իսկապես, մի փոքրիկ անդուր բան կա... կռահեցիր, Օլեսյա... Գիտես ինչ, գործս այստեղ վերջացել է, և ղեկավարությունն ինձ քաղաք է կանչում։

Թռուցիկ, կողքանց նայեցի Օլեսյային ու տեսա, թե ինչպես գույնը թռավ նրա երեսից ու ինչպես դողդողացին շուրթերը։ Բայց ոչ մի բառ չպատասխանեց։ Մի քանի րոպե լուռ քայլում էի նրա կողքով։ Խոտերի մեջ բարձր ճռռում էին ծղրիդները, և հեռուներից մեզ էր հասնում մարգալորի միապաղաղ, լարված սվսվոցը։

— Իհարկե, ինքդ էլ ես հասկանում, Օլեսյա,— նորից սկսեցի ես,— որ այստեղ մնալն ինձ համար չէ, տեղ էլ չունեմ մնալու, վերջապես, գործը թողնել չի կարելի...

— Չէ... ինչ որ... ասելու բան չի,— պատասխանեց Օլեսյան, կարծես թե հանգիստ, բայց այնպիսի խուլ, անկենդան ձայնով, որ սարսռացի։— Թե որ գործն է, խոսք չկա... գնալ է պետք...

Նա կանգ առավ ծառի մոտ ու մեջքով հենվեց բնին, ամբողջովին գունատված, ձեռքերն անուժ կախ ընկած, խղճալի, տանջալի ժպիտը շուրթերին։ Նրա գունատությունն ինձ վախեցրեց։ Մոտ վազեցի ու ամուր սեղմեցի ձեռքերը։

— Օլեսյա... ի՞նչ եղավ։ Օլեսյա... սիրելիս...

— Ոչինչ... ինձ կներեք... կանցնի։ Էնպես... գլուխս պտտվեց...

Ուժ գործադրելով նա առաջ անցավ, ձեռքը չհանելով ձեռքիս միջից։

— Օլեսյա, հիմա վատ բաներ մտածեցիր իմ մասին,— ասացի կշտամբանքով։— Ամոթ քեզ։ Մի՞թե մտածում ես, որ կարող եմ գնալ, քեզ թողնելով։ Չէ, թանկագինս։ Հենց նրա համար սկսեցի խոսակցությունը, որ ուզում եմ այսօր կեթ գալ տատիկիդ մոտ ու ասել նրան, որ իմ կինն ես դառնալու։

Ինձ համար միանգամայն անսպասելիորեն, Օլեսյային համարյա չզարմացրեց իմ ասածը։

— Քո կի՞նը։— Նա դանդաղ ու տրտում տարուբերեց գլուխը։— Չէ, Վանեչկա, սիրելիս, հնարավոր բան չի։

— Իսկ ինչո՞ւ, Օլեսյա։ Ինչո՞ւ։

— Չէ, չէ... Ինքդ էլ գիտես, որ դրա մասին ծիծաղելի է մտածելը։ Լավ, ես քեզ ի՞նչ կին։ Դու մի պարոն մարդ, խելոք, ուսումնական, իսկ ե՞ս։ Ես իսկի կարդալ էլ չգիտեմ, ինչ անելս չգիտեմ... Իմ երեսից ամոթախեղդ կլինես...

— Այդ ամենը հիմարություն է, Օլեսյա,— ջերմորեն առարկեցի ես։— Կես տարի անց ինքդ քեզ չես ճանաչի։ Ինքդ նույնիսկ չես էլ կասկածում, թե բնածին ինչ խելքի ու դիտողունակության տեր ես։ Իրար հետ շատուշատ լավ գրքեր կկարդանք, կծանոթանանք բարի, խելացի մարդկանց հետ, քեզ հետ միասին ամբողջ ընդարձակ աշխարհը կտեսնենք, Օլեսյա... Մինչև խոր ծերություն, մինչև մահ կքայլենք ձեռք-ձեռքի, ինչպես հիմա ենք քայլում, ու ոչ թե կամաչմ, այլ կհպարտանամ քեզնով ու շնորհակալ կլինեմ քեզ...

Իմ խանդավառ ճառին ի պատասխան, Օլեսյան երախտագիտությամբ սեղմեց ձեռքս, սակայն շարունակեց իրենը պընդել։

— Մենակ հո դա՞ չի... Կարող է դու դեռ չես իմանում... Ես քեզ ոչ մի անգամ չեմ ասել... Ախր ես հեր չունեմ... Ես օրինական չեմ...

— Վերջ տուր, Օլեսյա... Ամենից քիչ դա է ինձ կանգնեցնում։ Ի՞նչ գործ ունեմ քո ազգուտակի հետ, եթե դու ինձ համար հորից ու մորից թանկ ես, արար աշխարհից թանկ ես։ Չէ, այդ բոլորը մանրուք է, դատարկ պատրվակ...

Օլեսյան մեղմ ու հլու քնքշությամբ ուսն ուսիս սեղմեց։

— Սիրելիս... Ավելի լավ կլիներ էդ խոսքը չբացեիր... Դու ջահել ես, ազատ... Ես ի՞նչ հոգով պիտի ձեռ ու ոտդ կապեմ ամբողջ կյանքում... Իսկ թե մի ուրիշին հետո հավանեցի՞ր։ Ախր էն ժամանակ ինձ կատես, կանիծես էն օրն ու ժամը, որ ես համաձայն եղա պսակվել հետդ։ Մի ջղայնացի, թանկագինս,— աղերսագին բացականչեց նա, տեսնելով, որ այդ խոսքերն ինձ տհաճ են։— Չեմ ուզում քեզ նեղացնեմ։ Ես մենակ քո երջանկության մասին եմ մտածում։ Հետո տատի մասին ես մոռացել։ Լավ, դու դատի, իմ կողմից լա՞վ կլինի նրան մենակ թողնելը։

— Հետո ինչ... տատի համար էլ տեղ կգտնենք։ (Խոստովանեմ, տատի մասին միտքն ինձ սաստիկ տհաճություն պատճառեց)։ Թե չուզեցավ մեզ մոտ ապրել, ամեն քաղաքում առանձին տներ կան... ծերանոց են կոչվում... որտեղ նրա նման պառավներին հանգիստ պահում են, ուշադիր հետևում...

— Չէ, ինչ ես ասում։ Նա անտառից տեղ չի գնա։ Նա մարդկանցից վախենում է։

— Դե, ուրեմն ինքդ մի բան մտածիր, Օլեսյա, ինչպես ավելի լավ կլինի։ Ստիպված կլինես կամ ինձ ընտրել, կամ տատիդ։ Միայն թե մի բան իմացիր. առանց քեզ կյանքն ինձ համար անտանելի կլինի։

— Արևս,— խորունկ քնքշությամբ ասաց Օլեսյան։— Մենակ քո խոսքերի համար եմ քեզ շնորհակալ... Սիրտս տաքացրիր... Մենակ թե ես քեզ հետ չեմ պսակվի... Ավելի լավ է էսպես գամ հետդ, թե որ չես քշի... Մենակ թե մի շտապիր, խնդրում եմ, ինձ մի վռազացրու։ Մի երկու օր տուր, ամեն բան լավ ծանրութեթև անեմ... Տատի հետ էլ է պետք խոսել։

— Լսիր, Օլեսյա,— հարցրեցի ես, երբ նոր կռահում առկայծեց իմ գլխում։— Իսկ գո՞ւցե դու նորի՞ց... վախենում ես եկեղեցուց։

Թերևս հենց այդ հարցից էր պետք սկսել։ Համարյա ամեն օր ես վիճում էի Օլեսյայի հետ, աշխատելով ետ համոզել նրան իր տեսքի վրա կախված կարծեցյալ նզովքից, կախարդական ուժերին տիրապետմամբ հանդերձ։ Ըստ էության, յուրաքանչյուր ռուս մտավորականի մեջ մի քիչ դաստիարակիչ է նստած։ Դա մեր արյան մեջ է, դա սերմանված է մեր մեջ վերջին տասնամյակների ամբողջ ռուս բելետրիստիկայով։ Ո՞վ գիտե, եթե Օլեսյան թունդ հավատացյալ լիներ, խստորեն հետևեր ծոմ պահելուն ու ոչ մի ժամերգություն բաց չթողներ, շատ հնարավոր է, որ այդ դեպքում սկսեի հեգնել (միայն թեթևակի, քանի որ միշտ էլ հավատացյալ եմ եղել) նրա մոլեռանդությունը և նրա մեջ զարգացնել մտքի քննադատական իմացասիրությունը։ Բայց նա կայուն ու միամիտ համոզվածությամբ դավանում էր մութ ուժերի հետ իր շփմանն ու իր խորթացմանն աստծուց, որի մասին անգամ խոսել էր վախենում։

Իզուր էի ճգնում սասանել Օլեսյայի սնոտիապաշտությունը։ Իմ բոլոր տրամաբանական փաստարկները, երբեմն կոպիտ ու չար իմ բոլոր ծաղրանքները ջարդուփշուր էին լինում՝ իր խորհրդավոր ճակատագրական կոչմանը հլու համոզվածությանը բախվելով։

— Դու վախենո՞ւմ ես եկեղեցուց, Օլեսյա,— կրկնեցի ես։

Նա լուռ կախեց գլուխը։

— Կարծում ես, թե աստված չի՞ ընդունի քեզ,— շարունակեցի ես ավելի ոգևորվելով։— Որ քեզ համար գթասրտություն չի՞ ունենա նա։ Նա, ով միլիոնավոր հրեշտակների վրա իշխելով, այնուամենայնիվ երկիր իջավ ու սարսափելի, խայտառակ մահ ընդունեց, հանուն բոլոր մարդկանց փրկության։ Նա, որ չարհամարհեց ամենավերջին կնոջ զղջումն ու մարդասպանավազակին խոստացավ, որ այսօր ևեթ իր հետ դրախտում կլինի...

Այդ ամենը Օլեսյայի համար նոր չէր իմ մեկնությամբ, սակայն այս անգամ նա լսել անգամ չուզեցավ։ Արագ շարժումով վրայից պոկեց գլխաշորը և ճմռելով շպրտեց դեմքիս։ Սկսեցինք խաղ անել, քաշքշվելով։ Ես աշխատում էի նրանից խլել ալոճենու ծաղիկը։ Դիմադրելով, նա ընկավ գետին ու ինձ էլ քարշ տվեց իր հետ, ուրախ ծիծաղելով և ինձ պարզելով արագ շնչառությունից բացված, խոնավ ու սիրելի շուրթերը...

Ուշ գիշերով, երբ հրաժեշտ էինք տվել և բավականաչափ հեռացել միմյանցից, հանկարծ իմ ետևում լսեցի Օլեսյայի ձայնը.

— Վանեչկա, մի բոպե սպասիր... Բան ունեմ քեզ ասելու։

Ես շրջվեցի ու ընդառաջ գնացի նրան։ Օլեսյան շտապելով մոտ վազեց ինձ։ Երկնքում նորալուսնի բարակ ու արծաթյա, անհարթ մանգազն էր կանգնած արդեն, և դրա դժգույն լույսի տակ տեսա, որ Օլեսյայի աչքերը լի են խոշոր, չթափված արցունքներով։

— Օլեսյա, ի՞նչ ես ուզում ասել,— տագնապած հարցրեցի ես։

Նա բռնեց ձեռքերս ու սկսեց հերթով համբուրել։

— Սիրելիս... ի՞նչ լավն ես դու։ Ինչքա՞ն բարի ես,— ասում էր նա դողդոջ ձայնով։— Նոր գնում ու մտածում էի. ինչքա՞ն ես ինձ սիրում... Ու գիտես, ես շատ շատ եմ ուզում մի հաճելի, շատ հաճելի բան անել քեզ համար։

— Օլեսյա... Հրաշալի իմ աղջիկ, հանգստացիր...

— Լսի, ինձ ասա,— շարունակեց նա.— դու շա՞տ գոհ կմնայիր, եթե ես մի անգամ եկեղեցի գնայի։ Մենակ թե ճիշտն ասա, լրիվ ճիշտը։

Ես մտածեցի։ Գլխումս հանկարծ սնահավատ մի միտք ծագեց. իսկ դրանից որևիցե դժբախտություն չի՞ կատարվի։

— Ինչի՞ ես սուս մնացել։ Դե, շուտ ասա, դրանից կուրախանայի՞ր, թե քեզ համար մեկ է։

— Քեզ ինչպի՞ս ասեմ, Օլեսյա,— սկսեցի ես կմկմալով։— Այո, կարծում եմ հաճելի կլիներ ինձ համար։ Չէ որ ես քեզ շատ անգամներ եմ ասել, որ տոամարդը կարող է չհավատալ, կասկածել, նույնիսկ ծիծաղել վերջապես։ Սակայն կինը... կինն աստվածավախ պիտի լինի առանց դատողությունների։ Սովորական ու նուրբ այն դյուրավստահությամբ, որով նա իրեն դնում է աստծո պաշտպանության ներքո, ես միշտ ինչ-որ հուզիչ, կանացի և սքանչելի բան եմ տեսնում դրա մեջ։

Ես լռեցի։ Օլեսյան նույնպես չէր պատասխանում, գլուխը թաքցրած կրծքիս վրա։

— Իսկ ինչո՞ւ հարցրեցիր այդ մասին,— հետաքրքրվեցի ես։

Նա հանկարծ սրսփաց։

— Հենց էնպես... Ուղղակի հարցրեցի... Ուշադրություն մի դարձրու։ Դե, ցտեսություն, սիրելիս։ Վաղն արի։

Նա անհետացավ։ Ես դեռ երկար նայում էի մթության մեջ։

ականջ դրած ինձնից արագ-արագ հեռացող քայլերին։ Հանկարծ կանխազգացման անսպասելի սարսափ տիրեց ինձ։ Անզսպելիորեն՝ ցանկացա վազել Օլեսյայի ետևից, հասնել նրան ու խնդրել, աղաչել, նույնիսկ պահանջել, եթե հարկ լիներ, որպեսզի նա եկեղեցի չգնա։ Սակայն զսպեցի իմ անսպասելի պոռթկումը, և նույնիսկ, հիշում եմ, ճամփա ընկնելով, բարձրաձայն ասացի.

— Չլինի թե ինքներդ եք վարակվել սնոտիապաշտությամբ, իմ թանկագին Վանեչկա։

Օ՜, աստված իմ։ Այն ժամանակ ինչո՞ւ չլսեցի սրտիս տարտամ ձգտմանը, որը երբեք չի սխալվում իր արագընթաց խորհրդավոր կանխազգացումներով. այժմ անպայմանորեն հավատում եմ դրան։

12

Այդ տեսակցության հաջորդ օրը հենց հոգեգալստյան տոնն էր, որն այդ տարի մեծ նահատակ Տիմոֆեյի օրվան էր համընկել, երբ, ժողովրդական ավանդությունների համաձայն, նախանշանակներ են լինում անբերրիությունից առաջ։ Պերեբրոդ գյուղը եկեղեցու առումով կցովի էր, այսինքն թեև իր եկեղեցին ուներ, բայց առանձին հոգևորական այդ եկեղեցուն չէր հասնում, այլ՝ հազվադեպ գալիս էր Վոլչի գյուղի քահանան մեծ պասի ու տոների ժամանակ։

Այդ օրը պաշտոնական գործերով պիտի գնայի հարևան գյուղը, և ես ճանապարհ ընկա ձիով, առավոտյան ժամը ութին, երբ դեռ զով էր։ Շրջագայելու համար վաղուց արդեն վեց-յոթ տարեկան մի փոքրամարմին հովատակ էի գնել, որ սերում էր տեղական ոչ հրապուրիչ ցեղից, որին սակայն նախկին տերը՝ նահանգային հողաչափը, շատ սիրով ու բծախնդրությամբ խնամել էր։ Ձիու անունը Տարանչիկ էր։ Ես շատ էի կապվել այդ աքանչելի կենդանուն, որն ամուր, բարալիկ, նրբատաշ ոտքեր ուներ, բրդոտ մազափունջ, որի տակից բարկացած ու անվստահ նայում էին կրակվող աչքերը, ամուր, պինդ սեղմած պռոշներ։ Բավական հազվադեպ ու ծիծաղելի գույն ուներ. ամբողջովին մոխրագույն էր, մկնագույն և միայն գավակի վրա խայտաբղետ, սև ու սպիտակ պտեր էին սփռված։

Ստիպված էի անցնել ամբողջ գյուղի միջով։ Մեծ ու կանաչ

հրապարակը, որ եկեղեցուց պանդոկ էր հասնում, ծայրեծայր բռնված էր սայլերի շարաններով, որոնց մեջ հարևան գյուղերից՝ Վոլոշիից, Զուլնիից և Պեչալովկայից, կանանց և երեխաների հետ, տոնի էին եկել գյուղացիները։ Սայլերի արանքներով մարդիկ էին գնում-գալիս։ Ջնայած վաղ ժամին ու խստիվ որոշումներին, նրանց մեջ արդեն հարբածներ էլ կային (տոն օրերին և գիշերները գաղտնի կերպով օղի էր վաճառում նախկին պանդոկապան Սուլը)։ Անքամի, հեղձուկ առավոտ էր։ Օդը խաշող էր, և օրն անտանելի շոգ էր խոստանում լինել։ Ճիկացած և ասես աղծաթյա փոշով պատած երկնքի վրա մի հատիկ ամպ չէր երևում։

Ավարտելով այն ամենն, ինչ ինձ պետք էր ավանում, ոտի վրա հրեական լցոնած ձուկ կերա իշևանատանը, շատ վատ, պղտոր գարեջուր խմեցի ու ճանապարհ ընկա տուն։ Բայց դարբնոցի մոտով անցնելիս, հիշեցի, որ Տարանչիկի առջևի ձախ պայտը վաղուց թուլացել է, և կանգ առա՝ ձին պայտելու համար։ Դա ինձնից ևս մեկուկես ժամ ժամանակ խլեց, այնպես որ, երբ մոտենում էի պերեբրոդյան ցանկապատին, կեսօրվա ժամը չորսի և հինգի արանքը կլիներ։

Ամբողջ հրապարակը ծայրեծայր լցված էր հարբած, գոռգոռացող ժողովրդով։ Գնորդները տառացիորեն պատնեշել էին պանդոկի ցանկապատն ու մուտքը, հրմշտելով ու սեղմելով միմյանց, պերեբրոդցի գյուղացիները խառնվել էին եկվորների հետ, որոնք նստոտած էին խոտի վրա, սայլերի ստվերների տակ։ Ամենուրեք երևում էին ետ գցած գլուխներ ու վեր ցցած շշեր։ Արդեն ոչ մի լուրջ մարդ չկար։ Ընդհանուր հարբածությունն այն սահմանին էր հասել, երբ մուժիկն սկսում է բուռն կերպով ու պարծենալով չափազանցել իր հարբածությունը, երբ նրա բոլոր շարժումները ձեռք են բերում թուլացած ու ծանր թափ, երբ փոխանակ, ասենք, հաստատաբար գլխով անի, ամբողջ մարմնով նստում է, ծալում ծնկները և հանկարծ կորցնելով հավասարակշռությունը, անօգնականորեն ետ-ետ է ընկնում։ Երեխաները խաղում ու ղժղժում էին հենց այդտեղ, անտարբեր խոտ ծամող ձիերի ոտների արանքում։ Մի տեղ այլանդակ հարբած ամուսնուն թևքից քարշ տալով, լացով ու հայհոյանքով տուն էր տանում կինը, որը նույնպես հազիվ էր կանգնում ոտքերի վրա... Ցանկապատի ստվերում մի հոծ խումբ, շուրջ քսան մուժիկ ու կին, խիտ շրջապատել էին կույր

քնարահարին, և նրա բեկբեկուն ռնգային տենորը, նվագարանի միալար զրնգացող դղրդոցով ուղեկցվելով, ցայտունորեն ջոկվում էր ամբոխի համընդհանուր ժխորից։ Դեռևս հեռվից լսեցի «դումկայի» ծանոթ խոսքերը.

Օյ, արևն իջավ,
Կանգնեց Պոչևի վրա,
Օյ, թուրքի զորքն եկավ
Էն սև ամպի նման...

Ապա այդ դումկայում պատմվում է, թե ինչպես թուրքերը, գրոհով չկարողանալով գրավել Պոչևի մայրավանքը, որոշում են խորամանկության դիմել։ Այդ նպատակով, իբր ընծա մենաստանին, մի հսկա մոմ են ուղարկում, վառոդով լցված։ Այդ մոմը բերում են տասներկու զույգ եզ, և ուրախացած վանականներն արդեն ուզում են վառել մոմը Պոչևի աստվածամոր պատկերի առաջ, սակայն աստված թույլ չի տալիս, որ կատարվի չարագործ մտադրությունը։

Ծեր քահանան երազ տեսավ,
Որ էն մոմը ներս չառնեն,
Տանեն դաշտը, մի արձակ տեղ
Թրերով կտոր-կտոր անեն։

Եվ ահա աբեղաները

Տարան դաշտը, մի արձակ տեղ
Կտոր-կտոր արեցին,
Վառոդ ու ռումբ չորս բոլորը
Շաղ տվեցին, ցրեցին...,

Անտանելի տաք օրը կարծես ամբողջովին հագեցած էր թրթռված օդու, սոխի, ոչխարենու քուրքերի, թունդ մախորկայի և մարդկային կեղտոտ մարմիններից ելնող նողկալի ու խառն հոտով։ Զգուշորեն շարժվելով մարդկանց միջով և դժվարությամբ զսպելով գլուխը թափահարող Տարանչիկին, ես չէի կարող չնկատել, որ բոլոր կողմերից ինձ են հետևում անպատկառ, հետաքրքրված ու թշնամական հայացքներ։ Հակառակ սովորության,

ոչ մեկը գլխարկը չհանեց, սակայն աղմուկը կարծես թե մեղմացավ իմ հայտնվելուց հետո։ Հանկարծ ամբոխի մեջտեղներից մի հարբած, խռպոտ բղավոց լսվեց, որը սակայն հստակ չլսեցի, բայց, ի պատասխան դրան՝ զսպված քրքջոց լսվեց։ Կանացի մի ձայն սկսեց վախեցած հանդիմանել կոկորդ պատռողին.

— Կամաց, ախմախ... Ի՞նչ ես գոռում։ Կլսի...

— Ինձ ինչ, որ կլսի,— տաքացած շարունակեց մուժիկը։— Պե՞տ է գլխիս, ինչ է։ Նա մենակ անտառում իր...

. . . . . .

Նողկալի, երկար, սասափելի նախադասությունը կախվեց օդի մեջ, անզուսպ քրքջոցի պոռթկման հետ միասին։ Ես արագ դարձրեցի ձին և ջղաձգորեն սեղմեցի մտրակի կոթը, համակված այն խելահեղ կատաղությամբ, որ ոչինչ չի տեսնում, ոչ մի բանի մասին չի մտածում և ոչնչից չի վախենում։ Եվ հանկարծ տարօրինակ, հիվանդագին, սրտմաշուկ մի միտք առկայծեց գլխիս մեջ. «Այս ամենն արդեն կատարվել է ժամանակին, շատ տարիներ առաջ իմ կյանքում... Հենց այսպես աղմկող, գրգռված ամբոխով էր լցված հսկայական հրապարակը... Հենց այսպես շրջվեցի ես՝ կատաղի զայրույթի նոպայով բռնված... Բայց որտե՞ղ էր դա։ Ե՞րբ էր։ Ե՞րբ...»։ Ես իջեցրի մտրակս, և քառատրոփ տուն գնացի։

Ցարմոլան, դանդաղորեն դուրս գալով խոհանոցից, ձին վերցրեց ինձնից և կոպտությամբ ասաց.

— Պարոն, էնտեղ, ձեր սենյակում Մարինովսկի կալվածքի գործակատարն է նստած։

Սենյակում ես տեսա հարևան կալվածքի գործավար Նիկիտա Նազարիչ Միշչենկին։ Դեղին հսկայական վանդակներով մոխրագույն բաճկոնակ էր հագել, բաց կապույտ նեղ տաբատ, կապել վառ կարմիր փողկապ, մազերը յուղած ու գլխի մեջտեղից հավասար բաժանած էր, վրայից պարսկական հասմիկի թունդ բույր էր տարածվում։ Ինձ տեսնելով, նա վեր թռավ աթոռի վրայից ու սկսեց ոտքերը շխկացնելով գլուխ տալ, ոչ թե խոնարհվելով, այլ մի տեսակ կոտրվելով գոտկատեղից, ժպտալիս մերկացնելով երկու ծնոտների գունատ լնդերը։

— Պատիվ ունեմ ողջունելու,— սիրալիր բլբլացնում էր Նիկիտա Նազարիչը։— Շատ հաճելի է տեսակցելը... Իսկ ես ձեզ սպասում եմ այստեղ՝ ժամերգությունից հետո։ Վաղուց է չեմ տեսել ձեզ, նույնիսկ կարոտել եմ։ Ինչի՞ համար մեզ մոտ չեք

գալիս ոչ մի անգամ։ Ստեպանիի մեր օրիորդները նույնիսկ ձեռ են առնում։

Եվ հանկարծ, հիշած մի բանից ոգևորված, նա անզուսպ քրքիջ արձակեց։

— Ա՜հ, պատմեմ ձեզ, թե ինչ զվարճալի բան եղավ այսօր,— բացականչեց նա խեղդվելով ու փոթկացնելով։— Հա-հա-հա-հա... Կողերս ցավեցին, այնքան ծիծաղեցի...

— Ի՞նչ է եղել։ Ի՞նչ ծիծաղելի բան,— կոպտորեն հարցրեցի ես, չթաքցնելով դժգոհությունս։

— Ժամերգությունից հետո սկանդալ եղավ այստեղ,— շարունակեց Նիկիտա Նազարիչը, իր խոսքն ընդհատելով քրքիջի պոռթկումներով։— Պերեբրոդցի աղջկերքը... Չէ, աստված վկա, չեմ դիմանա... Պերեբրոդցի աղջկերքը հրապարակի վրա կախարդ էին բռնել... Այսինքն, ինչ խոսք, իրենց գյուղական անկրթությունից են նրան կախարդ համարում... Հո տուրը չտվեցի՞ն... Ուզում էին կուպր քսել վրան, բայց մի կերպ պոկվեց ու փախավ...

Սարսափելի ենթադրությունը շամփրեց ուղեղս։ Վրա պրծա գործավարին և, հուզմունքից ինձ կորցրած, պինդ բռնեցի նրա ուսը։

— Ի՞նչ եք ասում,— բղավեցի մոլեգնած ձայնով։— Դե, վերջ տվեք քրքջալ, գրողը ձեզ տանի։ Ի՞նչ կախարդի մասին եք ասում։

Նա հանկարծ դադարից ծիծաղել և կլոր, վախեցած աչքերը հառեց վրաս։

— Ես.. ես.. ճիշտն ասած, չգիտեմ,— շփոթված կմկմաց նա։—Կարծեմ, ինչ-որ Սամուլլիխա... Մանուլլիխա... կամ... Ներեցեք... Ինչ-որ Մանուլլիխայի աղջիկ էին ասում... Ինչ-որ բաներ էին դուրս տալիս մուժիկները, բայց ես, ճիշտն ասած, չեմ հիշում։

Ես նրան ստիպեցի ամեն ինչ պատմել հերթով, տեսածն ու լսածը։ Նա խոսում էր անիմաստ, անկապ, շփոթելով մանրամասները, և բոպեն մեկ ես ընդհատում էի նրան հարցերով ու բացականչություններով, համարյա հայհոյելով։ Նրա պատմածից ես քիչ բան հասկացա և միայն երկու ամիս անց վերականգնեցի այդ անիծյալ դիպվածի ամբողջ հաջորդականությունը, պետական անտառապահի կնոջ խոսքերից, որը նույնպես ժամերգության էր եղել այդ օրը։

Իմ կանխազգացումն ինձ չէր խաբել։ Օլեսյան հաղթահարել էր իր վախն ու եկեղեցի էր եկել, չնայած կեսից էր եկել ու կանգնել էր եկեղեցու նախասրահում, բայց նրա գալուստն անմիջապես նկատվել էր եկեղեցում գտնվող բոլոր գյուղացիների կողմից։ Ամբողջ ժամերգության ընթացքում կանայք փսփսացել ու ետ էին նայել։

Սակայն Օլեսյան իր մեջ բավականաչափ ուժ էր գտել մինչև վերջ մնալու։ Գուցե նա չէր հասկացել այդ թշնամական հայացքների իսկական նշանակությունը, գուցե հպարտորեն արհամարհել էր դրանք։ Բայց երբ դուրս էր եկել եկեղեցուց, ցանկապատի մոտ նրան բոլոր կողմերից շրջապատել էին կանանց խմբեր, որոնք բոպե առ բոպե շատացել ու ավելի էին սեղմել օղակը՝ Օլեսյայի շուրջը։ Սկզբում նրանք սոսկ լուռ ու անպատկառ զննել էին անօգնական, վախեցած չորս կողմը նայող աղջկան։ Հետո կոպիտ ծաղրանք էր տեղացել, թունդ խոսքեր, հայհոյանք, քրքիջ, հետո առանձին բացականչությունները խառնվել ու մի ընդհանուր կանացի խլացուցիչ ճվճվոց էին դարձել, որից ոչինչ հասկանալ չէր լինի ու որը մոլեգնած ամբոխի նյարդերն ավելի էր գրգռել։ Մի քանի անգամ Օլեսյան փորձել էր ճեղքել այդ կենդանի սարսափելի օղակը, բայց նրան ամեն անգամ էլ ետ էին հրել կենտրոն։ Հանկարծ պառավական մի ծղրտան ձայն ամբոխի ետևներից ձայնել էր. «Կուպր քսեք դրա վրա, լրբի մեկը»։ (Հայտնի է, որ Մալոռուսիայում նույնիսկ դռանը կուպր քսելը, ուր աղջիկ է ապրում, այդ աղջկա համար մեծագույն, անջնջելի խայտառակություն է համարվում)։ Համարյա նույն բոպեին մոլեգնած կանանց գլխավերևում կուպրի ման ու վրձին էր հայտնվել, որը ձեռքից ձեռք էին փոխանցել։

Այդ ժամանակ Օլեսյան, չարացածության, սարսափի և հուսալքության մոլուցքի մեջ նետվել էր իրեն տանջող կանանցից մեկի վրա այնպես, որ ցած էր գլորել։ Տեղնուտեղը գետնի վրա խառնակռիվ էր առաջացել, և տասնյակ մարմիններ վերածվել էին գոռացող-ճվացող մեկ ընդհանուր զանգվածի։ Սակայն Օլեսյային ինչ-որ հրաշքով հաջողվել էր դուրս պրծնել այդ կույտի միջից և նա գլխապատառ վազել էր ճանապարհով առանց գլխաշորի, ծվեն-ծվեն եղած հագուստով, որի տակից մերկ մարմին էր երևացել շատ տեղերում։ Նրա ետևից հայհոյանքի, քրքջոցի ու ծաղրուծանակի հետ մեկտեղ քարեր էին տե-

զացել։ Սակայն հետապնդել էին շատ քչերը, այն էլ շուտով ետ էին մնացել... Հիսուն քայլի չափ պոկվելով, Օլեսյան կանգ էր առել, գաղան կտրած ամբոխին էր դարձրել իր գունատ, ճանկոտված, արյունաթաթախ դեմքը և բղավել էր այնքան բարձր, որ յուրաքանչյուր բառը լսվել էր հրապարակում.

— Դե, լա՛վ... Դուք դեռ կհիշե՞ք սա։ Դեռ շա՜տ լաց կլինեք։

Այս սպառնալիքը, ինչպես հետագայում ինձ հաղորդեց դեպքին ականատես նույն կինը, ասվել էր այնպիսի կրքոտ ատելությամբ, այնպիսի վճռական, մարգարեական տոնով, որ մի պահ ամբոխը կարծես քարացել էր, բայց միայն մի պահ, որովհետև անմիջապես հայհոյանքի նոր պոռթկում էր տեղացել։

Կրկնում եմ, որ այդ դիպվածի շատ մանրամասներ ես իմացա շատ ավելի ուշ։ Ուժ ու համբերություն չունեցա մինչև վերջ լսել Միշչենկի պատմածը։ Հանկարծ հիշեցի, որ Յարմոլան, հավանորեն, դեռ չի հասցրել լծարձակել ձին, և ոչ մի բառ չասելով զարմացած գործավարին, շտապ բակ դուրս եկա։ Յարմոլան իրոք դեռ տանում էր Տարանչիկին ցանկապատի մոտով։ Ես արագ սանձեցի ձին, ձգեցի փոքրաշները, և շրջանցելով, որպեսզի հարբած ամբոխի միջով նորից չանցնեմ, անտառ սլացա։

13

Անհնարին է նկարագրել այն վիճակը, որի մեջ էի իմ խելահեղ արշավի ամբողջ ընթացքում։ Մեկ-մեկ բոլորովին մոռանում էի, թե ուր եմ գնում և ինչու, մի տարտամ զգացում էր մնում լոկ, որ ինչ-որ անուղղելի, անհեթեթ ու սարսափելի բան է կատարվել, մի գիտակցություն, որ նման է ծանր, անառիթ տագնապի, որ երբեմն դողէրոցքի մղձավանջի մեջ պարուրում է մարդուն։ Եվ միևնույն ժամանակ, որքան տարօրինակ է, գլխիս մեջ չէր դադարում դողդողալ կույր քնարահարի ոնգային, խեղված ձայնը, ձիու քառատրոփին համաչափ.

Օյ, թուրքի զորքն փակվ
էն սև ամպի նման...

Հասնելով նեղ կածանին, որն ուղիղ Մանուլլիխայի հյուղակն էր տանում, ես իջա Տարանչիկից, որի մարմնի վրա, փորքաշի

եզրերով ու այն տեղերում, ուր մաշկը լծասարքին էր քսվել, սպիտակ փաթիլներով թանձր փրփուր էր կանգնած, և սանձը բռնած առաջ գնացի։ Ցերեկվա խիստ շոգից ու արագ ընթացքից արյունս խշշում էր գլխիս մեջ, ասես մղվելով մի հսկայական, անդադար գործող պոմպից։

Ձին կապելով ճյուղահյուս ցանկապատից, ներս մտա։ Սկզբում ինձ թվաց, թե Օլեսյան տանը չէ, սիրտս ու բերանս նույնիսկ սառեցին սարսափից, բայց մեկ րոպե անց տեսա նրան, անկողնում պառկած, դեմքով դեպի պատը, գլուխը թաղած բարձերի մեջ։ Նա նույնիսկ չշրջվեց բացվող դռան ձայնի վրա։

Մանուլլիխան, որ կողքն էր նստած, գետնի վրա, դժվարությամբ ոտքի ելավ ու ձեռքերը թափ տվեց վրաս։

— Կամա՛ց։ Ձեն չհանես, անիծված լինես դու,— սպառնագին ֆշշացրեց նա, ընդհուպ մոտենալով ինձ։ Եվ ուղիղ աչքերիս նայելով իր խամրած, սառն աչքերով, շարացած փնչացրեց.— Հը՞։ Ուզածիդ հասա՞ր, աղավնյակս։

— Լսիր, պառավ,— խստորեն առարկեցի ես,— հիմա հաշիվ պարզելու և կշտամբելու ժամանակը չէ։ Ի՞նչ է պատահել Օլեսյային։

— Սը՞սս... կամաց։ Ուշքն անցած պառկած է Օլեսյան, ինչ պիտի լիներ Օլեսյային... Թե որ քիթդ չխոթեիր, ուր պետք չէր ու աղջկա գլուխը փուչ բաներով չլցնեիր, ոչ մի վատ բան էլ չէր լինի։ Բա ե՞ս, բա ե՞ս, տխմար քամ գլուխը, նայում էի, թող տալիս... Ախր սիրտս մի վատ բան էր գուշակում... Էն օրվանից, երբ համարյա զոռով մեր տունը մտար, փորձանքն աչքիս առաջ էր։ Հը՞, թե կասես դու չես նրան համոզել, որ եկեղեցի գնա,— հանկարծ ատելությունից այլայլված դեմքով վրա պրծավ պառավը։— Դու չես արե՞լ, անիծված պարոն։ Սուտ չասես ու աղվեսի նման պոչդ թափ չտաս, խայտառակ։ Ինչի՞դ էր պետք նրան եկեղեցի քարշ տալը։

— Ես նրան քարշ չեմ տվել, պառավ... Քեզ ազնիվ խոսք եմ ասում։ Ինքն է ուզել։

— Ա՜խ, իմ ցա՜վը, իմ ցա՜վը,— ձեռքերն իրար զարկեց Մանուլլիխան։— Վազեվազ եկավ էնտեղից, էրեսին կույն չկար, շապիկը պատառ-պատառ արած... Գլխաբաց... Պատմում էր, թե ոնց եղավ, ու մեկ քրքջում էր, մեկ լաց լինում... Ոնց որ ընկնավոր... Պառկեց տեղաշորի մեջ... լացեց, լացե՛ց,

հետո տեսնեմ, ոնց որ թե քնեց։ Ես էլ, ախմախ իմ գլուխը, ուրախացել էի, ասի էս է, կքնի, կանցնի։ Տեսնեմ, թևը ցած է կախվել, ասեցի հանեմ վեր, չթմրի... Ձեռը բռնեցի, սիրունիս ձեռը, տեսնեմ տաքությունից վառվում է... Դողէրոցք էր բռնել, ուրեմն... Մի ժամի չափ խոսեց, խոսեց վրա-վրա, էնքան տխուր... Մի քիչ առաջ սուսացավ։ Էս ի՞նչ արեցիր։ Էս ի՞նչ արեցիր նրա գլխին,— հգուսալքության նոր պոռթկումով բացականչեց պառավը։

Եվ հանկարծ նրա դարչնագույն դեմքը՝ հրեշավոր ու նողկալի, ծամածռվեց լացից. շրթունքները ձգվեցին ու ցած կախվեցին, դեմքի բոլոր մկանները լարվեցին ու դողացին, հոնքերը վեր բարձրացան, ճակատի վրա խոր կնճիռներ գոյացնելով, իսկ աչքերից անսովոր առատությամբ թափվեցին սիսեռի պես խոշոր արցունքները։ Գլուխը ձեռքերի մեջ առած, արմունկները հենած սեղանին, ամբողջ մարմնով սկսեց ետուառաջ ճոճվել և երգեցիկ ու կիսաձայն ողբաց.

— Իմ խե-ե՜ղճ աղջիկը՜ս։ Փոքրի-ի՜կ թոռնի-իկը՜ս... Ա՜խ, էս ինչ ցա-ա՜վ էր, ինչ ցա-ա՜վ էր...

— Դե, ձենդ կտրի, պառավ,— կոպտորեն ընդհատեցի Մանուլլիխային։— Կարթնացնես։

Պառավը լռեց, բայց նույն սարսափելի ծամածռված դեմքով շարունակեց ետուառաջ ճոճվել, իսկ խոշոր արցունքները թափվում էին սեղանին... Այդպես մի տասը րոպե անցավ։ Մանուլլիխայի կողքը նստած, տրտմությամբ լսում էի, թե ինչպես միապաղաղ ու կերկեր տզզալով, պատուհանի ապակուն է խփվում ճանճը։

— Տատի,— հանկարծ լսվեց Օլեսյայի թույլ, հազիվ լսելի ձայնը։

Մանուլլիխան շտապ մոտեցավ մահճակալին ու իսկույն ողբը դրեց նորից.

— Ա՜խ, հարազա՜-ա-ա՜տ թոռնի-իկը՜ս։ Ա՜խ, էս ի-ի՜նչ եկավ պառա-ա՜վ գլխի-ի՜ս...

— Ահ, տատի, վերջ տուր, էլի,— սրտաճմլիկ աղերսանքով ու տառապագին ասաց Օլեսյան։— Ո՞վ կա մեր տանը։

Ես զգուշությամբ, ոտնաթաթերիս վրա մոտեցա մահճակալին, սեփական առողջության ու կոպտության այն մեղավոր գիտակցությամբ, որը միշտ ունենում ես հիվանդի-մոտ։

— Ես եմ, Օլեսյա,— ասացի ես, ձայնս իջեցնելով։— Հենց

նոր ձիով եկա գյուղից... Առավոտից քաղաքում էի... Քեզ վա՞տ ես զգում, Օլեսյա։

Դեմքը բարձերից չկտրելով, նա ետ պարզեց մերկ ձեռքը, ասես ինչ-որ բան փնտրելով օդի մեջ։ Ես հասկացա այդ շարժումը և նրա այրվող ձեռքն առա ափերիս մեջ։ Երկու մեծ, կապույտ ճմլվածք, մեկը՝ դաստակից վեր, մյուսն արմունկի վրա, ցայտուն գծագրվում էին ճերմակ, նուրբ մաշկի վրա։

— Սիրելիս,— խոսեց Օլեսյան, դանդաղորեն, դժվարությամբ արտասանելով բառը բառի ետևից։— Ուզում եմ... նայեմ երեսիդ... բայց չեմ կարող... Դեմքս... լրիվ այլանդակել են... Հիշում ես... իմ դեմքը... քեզ դուր էր գալիս... ճիշտ է, չէ՞, դուր էր գալիս, հարազատս... Ու ոնց էի միշտ ուրախանում... Հիմի կզզվես... դեմքիս որ նայես... Ես էլ... ես էլ... չեմ ուզում...

— Օլեսյա, ներիր ինձ,— շշնջացի ես, թեքվելով նրա ականջին։

Նրա կրակվող ձեռքը պինդ ու երկար սեղմում էր իմ ձեռքը։

— Ի՞նչ ես ասում... Ի՞նչ ես ասում, սիրելիս... Չե՞ս ամաչում, որ էդպես ես մտածում։ Ինչո՞վ ես մեղավոր դու։ Մենակ ես, անխելքս եմ... Ինչ ունեի էնտեղ... ի՞նչ։ Չէ, արևս, քեզ մեղավոր մի արա...

— Օլեսյա, թույլ տուր ինձ... Միայն թե խոստացիր սկզբից, որ թույլ կտաս...

— Խոստանում եմ, հարազատս... ինչ որ ուզես...

— Խնդրում եմ, թույլ տուր, բժիշկ կանչել տամ... Խնդրում եմ քեզ։ Լավ, եթե կուզես, կարող ես նրա ասածներից ոչ մի բան չանել։ Բայց գոնե մենակ ինձ համար համաձայնիր, Օլեսյա։

— Ախ, սիրելիս... Ինչ խոսքի վրա բռնեցրիր։ Չէ, էս անգամ դո՛ւ թույլ տուր, որ խոստումս չկատարեմ։ Թե որ իսկականից հիվանդ լինեի, մահն աչքիս առաջ պառկած լինեի, մեկ է, բժիշկ չէի թողնի ինձ մոտենար։ Իսկ հիմի բա ես հիվա՞նդ եմ։ Վախենալուց է էսպես եղել, իրիկունը կանցնի։ Զանցավ էլ, տատը շուշանի թրմուկ կտա, կամ էլ մորի կեփի թեյնիկի մեջ։ էլ ի՞նչ բժիշկ։ Դու ես իմ ամենալավ բժիշկը։ Ա՜յ, եկար թե չէ, իսկույն թեթևացա... Ախ, մենակ մի բան է վատ, ուզում եմ գոնե մի աչքով քեզ նայեմ, բայց վախենում եմ...

Նրբությամբ ուժ գործադրելով, նրա գլուխը պոկեցի բարձից։ Տենդի կարմրությամբ էր վառվում Օլեսյայի դեմքը, սև

աչքերը փայլում էին անբնականորեն վառ, չոր շուրթերը ցընցվում էին նյարդայնորեն։ Երկար ու կարմիր քերծվածքներ էին ակոսում ճակատը, այտերը և պարանոցը։ Մուգ կապտուկներ կային ճակատին ու աչքերի տակ։

— Վրաս մի նայիր... Խնդրում եմ քեզ... Հիմա զզվելի եմ ես,— աղերսաձայն շշնջում էր Օլեսյան, աշխատելով ափով ծածկել աչքերս։

Սիրտս տակնուվրա եղավ խղճահարությունից։ Շրթունքներս հպեցի Օլեսյայի ձեռքին, որ անշարժ ընկած էր վերմակի վրա, և սկսեցի մեղմ ու երկար համբուրել։ Ես առաջ էլ էի երբեմն համբուրում նրա ձեռքերը, բայց նա միշտ փութկոտ, ամաչկոտ երկյուղով խլում էր ինձնից ձեռքերը։ Իսկ հիմա չէր դիմադրում, և մյուս, ազատ ձեռքով կամացուկ շոյում էր մազերս։

— Ամեն ինչ գիտե՞ս,— շշնջալով հարցրեց նա։

Ես լուռ կախեցի գլուխս։ Ճիշտ է, Նիկիտա Նազարիչի պատմածից շատ բան չէի հասկացել։ Չէի ուզում միայն, որ Օլեսյան հուզվի, վերհիշելով առավոտյան դեպքը։ Բայց հանկարծ անզսպելի կատաղության ալիքն ինձ համակեց նրան հասցված վիրավորանքի մտքից։

— Օ, ինչի համար այնտեղ չէի այդ ժամանակ,— բղավեցի ես, ուղղվելով և բռունցքներս սեղմելով։— Ես... ես...

— Դե, լավ... լավ... Մի ջղայնացի, սիրելիս,— հեզությամբ ինձ ընդհատեց Օլեսյան։

Այլևս չկարողացա զսպել վաղուց արդեն ինձ խեղդող ու աչքերս կսկծացնող արցունքները։ Դեմքս դնելով Օլեսյայի ուսին, անձայն ու դառնագին հեկեկացի, ամբողջ մարմնով ցնցվելով։

— Դու լա՞ց ես լինում։ Դու լա՞ց ես լինում։— Նրա ձայնի մեջ զարմանք կար, քնքշություն ու կարեկցանք։— Սիրելիս... Դե, վերջ տուր, վերջ տուր... Քեզ մի տանջի, սիրունս... Ինձ համար էնքան լավ է քեզ հետ։ Քանի իրար հետ ենք, լաց չլինենք։ Արի գոնե վերջին օրերն ուրախ անցկացնենք, որ շատ ծանր չլինի բաժանվելը։

Ես զարմացած բարձրացրեցի գլուխս։ Անորոշ կանխազգացումը հանկարծ դանդաղորեն սեղմեց սիրտս։

— Օլեսյա, վերջին օրե՞րը։ Ինչո՞ւ վերջին։ Իսկ ինչո՞ւ պետք է բաժանվենք։

Օլեսյան փակեց աչքերը, մի քանի վայրկյան լուռ էր։

— Մենք պետք է հրաժեշտ տանք իրար, Վանեչկա,— սկսեց

նա վճռական։— Հենց մի քիչ լավանանք, ես ու տատս կգնանք էստեղից։ Մեզ էլ չի կարելի էստեղ մնալ...

— Դու վախենո՞ւմ ես ինչ-որ բանից։

— Չէ, թանկագինս, որ տեղն եկավ, ոչնչից էլ չեմ վախենա։ Մենակ թե ինչի՞ համար մարդկանց մեղքի տակ գցենք։ Գուցե դու չես իմանում... Ախր ես էնտեղ... Պերեբրոդում... ջղայնությունից, մեկ էլ ամոթից... ահ տվեցի... Հիմի էլ հանկարծ մի բան լինի, անասունն սկսի կոտորվել, կամ մեկի խրճիթը վառվի, միշտ մենք ենք մեղավոր լինելու։ Տատ,— ձայնը բարձրացնելով, դիմեց նա Մանուլլիխային,— ճիշտ եմ ասում, չէ՞։

— Բան ասի՞ր, թոռնիկս։ Չլսեցի, ճիշտն ասեմ,— սվսվացրեց պառավը, մոտենալով ու ափն ականջին դնելով։

— Ասում եմ, որ հիմի, Պերեբրոդում ինչ փորձանք էլ պատահի, ամեն բան իմ ու քո վրա պիտի գցեն։

— Օ՜խ, ճիշտ է, ճիշտ, Օլեսյա, ամեն ինչ մեր խեղճ գլխին կթափեն... էլ կյանք չունենք աշխարքիս երեսին, հոգիներս կհանեն, իմ ու քո, անիծածները... Բա էն ժամանակ, որ ինձ գյուղից հանեցին... Ի՞նչ էր... էլի էս չէ՞ր։ Ահ տվեցի... էլի ջղայնությունից... մի ախմախ կնկա, մեկ էլ դրա երեխեն մեռավ... Որ ասեմ, ա՛յ էսքան մեղք չունեի, բայց քիչ մնաց ինձ սպանեն, նեղովք գա դրանց գլխին... Սկսեցին քարեր շպրտել... Փախչում էի դրանցից, մենակ քեզ էի պաշտպանում, շատ փոքր էիր... Թող, ասում էի, ինձ կպչի, անմեղ երեխին ի՞նչ ունեք նեղացնելու... Ինչ ասեմ՝ վայրենի են, կախաղանի ապրանք։

— Իսկ ո՞ւր պիտի գնաք։ Չէ որ ոչ մի տեղ ոչ ազգական ունեք, ոչ ծանոթ... Վերջապես նոր տեղում տնավորվելու համար փող էլ է պետք։

— Մի կերպ կանենք,— անփութորեն ասաց Օլեսյան։— Տատի մոտ փող էլ կա, պահած բան ունի։

— Էլ չասած փողը,— դժգոհությամբ առարկեց պառավը, հեռանալով մահճակալից։— Արյուն-արցունքով հավաքած, որբի փող...

— Օլեսյա... Հապա ե՞ս։ Իմ մասին դու մտածել անգամ չես ուզում,— բացականչեցի ես, զգալով, թե ներսումս ինչպես է գլուխ բարձրացնում դառն ու ցավագին, մի վատ կշտամբանք Օլեսյայի հանդեպ։

Նա փոքր-ինչ բարձրացավ տեղից և, չքաշվելով տատի ներ-

կայությունից, ձեռքերով բռնեց գլուխս ու մի քանի անգամ իրար ետևից համբուրեց ճակատս ու այտերս։

— Քո մասին ամենից շատ եմ մտածում, հարազատս։ Մենակ թե... գիտես... մեր ճակատին գրված չի միասին լինել... Այպես... Հիշո՞ւմ ես, թուղթ էի գցել վրադ։ Չէ որ էնպես ստացվեց, ինչպես թղթերն էին ասել։ Ուրեմն, բախտը չի ուզում մեր երկուսի երջանկությունը... Թե դա չլիներ, կարծում ես մի բանից կվախենայի՞։

— Օլեսյա, էլի՞ սկսեցիր քո ճակատագրից,— անհամբեր բացականչեցի ես։— Չեմ ուզում դրան հավատալ... և երբեք էլ չեմ հավատա...

— Ախ, չէ՛, չէ՛... էդպես մի ասա,— վախեցած շշնջաց Օլեսյան։— Ինձ համար չէ, քեզ համար եմ վախենում, սիրունս։ Չէ, ավելի լավ կլինի դրա մասին խոսք էլ չխոսես։

Իզուր էի ջանում համոզել Օլեսյային, իզուր էի նրա առաջ անխռով երջանկության պատկերներ նկարագրում, որին չեն խանգարի ոչ քինոտ ճակատագիրը, ոչ կոպիտ, չար մարդիկ։ Օլեսյան միայն ձեռքերս էր համբուրում և ժխտաբար օրորում գլուխը։

— Չէ... չէ... չէ... ես գիտեմ, ես տեսնում եմ,— համառորեն պնդում էր նա։— Վշտից բացի ուրիշ ոչինչ չենք ունենա... ոչինչ... ոչինչ...

Շվարած, սնահավատ այդ համառությունից ինձ կորցրած, ի վերջո, հարցրեցի.

— Բայց, համենայն դեպս, գնալուդ օրվա մասին ինձ կասե՞ս։

Օլեսյան մտքերի մեջ ընկավ։ Հանկարծ մի թույլ ժպիտ անցավ նրա շուրթերի վրայով։

— Դրա վրա ես քեզ մի փոքր հեքիաթ կպատմեմ... Մի անգամ, գայլը վազում է անտառով, նապաստակին տեսնում ու ասում է. «Նապաստակ, այ նապաստակ, ախր քեզ ուտելու եմ»։ Նապաստակն սկսում է աղաչանք անել. «Արի դու ինձ խղճա, գայլ, ապրել եմ ուզում, տունը լիքը երեխեք ունեմ»։ Գայլը՝ չէ՞ որ չէ՞։ Էդ ժամանակ նապաստակն ասում է. «Լավ, գոնե երեք օր թող ապրեմ էս աշխարքում, հետո կեր։ Մեռնելը հեշտ կլինի ինձ համար էդպես»։ Գայլն էդ երեք օրը տալիս է նապաստակին, չի ուտում, մենակ նայում է, որ չփախչի։ Մի օր է անցնում, երկու օր է անցնում, երրորդն էլ է վերջանում։ «Դե,

հիմի պատրաստվիր,— ասում է գայլը,— հիմի կսկսեմ՝ քեզ ուտելը»։ Էստեղ մեր նապաստակն սկսում է դառն արցունք թափել։ «Ախ, ինչի՞ համար էս երեք օրն ինձ տվիր, գայլ։ Ավելի լավ կլիներ միանգամից ուտեիր, հենց որ տեսար։ Թե չէ էս երեք օրը ես չեմ ապրել, մենակ տանջվել եմ»։ Սիրելիս, նապաստակը ճիշտ է ասել, չէ՞։ Ո՞նց ես կարծում։

Մոտալուտ միայնության թախծալի կանխազգացումով համակված, լռել էի։ Օլեսյան հանկարծ ելավ ու նստեց անկողնում։ Նրա դեմքը մեկեն լրջացավ։

— Վանյա, լսիր...— ասաց նա, դադարներ տալով։— Ասա ինձ. քանի ինձ հետ ես եղել, երջանի՞կ ես եղել։ Լա՞վ էր քեզ համար։

— Օլեսյա։ Դու դեռ հարցնում ես։

— Համբերիր... Ափսոսացե՞լ ես, որ ինձ ճանաչեցիր։ Ուրիշ կնոջ մասին մտածե՞լ ես ինձ հետ հանդիպելուց։

— Ոչ մի վայրկյան։ Ոչ միայն քո ներկայությամբ, այլ նաև մենակ մնալով, քեզնից բացի ոչ մեկի մասին չեմ մտածել։

— Խանգե՞լ ես ինձ։ Ինձնից դժգոհ եղե՞լ ես որևէ անգամ։

— Երբեք, Օլեսյա։ Երբեք։

Նա երկու ձեռքը դրեց ուսերիս և աննկարագրելի սիրով նայեց աչքերիս մեջ։

— Ուրեմն, իմացած եղիր, թանկագինս, որ երբեք իմ մասին վատ կամ չար չես հիշի,— ասաց նա այնքան համոզիչ, ասես ապագան էր կարդում աչքերիս մեջ։— Հենց բաժանվենք ես ու դու, առաջին ժամանակները քեզ համար դժվար կլինի, ա՞խ, չա՞տ դժվար... Լաց կլինես, տեղ չես գտնի քեզ։ Իսկ հետո ամեն բան կանցնի, ամեն բան կհարթվի։ Ու առանց տխրության կհիշես իմ մասին, թեև, ուրախ կհիշես։

Նա նորից ընկավ բարձերի վրա, թուլացած ձայնով շշնջաց.

— Իսկ հիմի գնա, թանկագինս... Տուն գնա, սիրունս... Մի քիչ հոգնեցի։ Սպասիր... համբուրիր ինձ... Տատից մի վախենա... նա կթողնի։ Կթողնես, չէ՞, տատի։

— Դե լավ, մնաս բարով արա, ոնց որ կարգն է, մնաս բարով արա,— դժգոհ փնթփնթաց պառավը։— Ինձնից թաքուն պահելու ի՞նչ ունեք... Վաղուց եմ իմանում...

— Համբուրիր էստեղս, էստեղս էլ... ու էստեղս,— ասում էր Օլեսյան, մատը դիպցնելով իր աչքերին, այտերին ու շուրթերին։

— Օլեսյա։ Այնպես ես հրաժեշտ տալիս, կարծես էլ երբեք չենք տեսնվելու,— վախեցած բացականչեցի ես։

— Ցեմ իմանում, չեմ իմանում, սիրելիս։ Ոչ մի բան չեմ իմանում։ Դե, գնա, աստված քեզ հետ։ Չէ, սպասիր... մի բոպե էլ... Ակնկդ բեր, ասեմ... Գիտե՞ս, ինչի համար եմ ափսոսում,— շշնջաց նա, շրթունքները դիպցնելով այտիս։— Որ քեզանից մի երեխա չունեցա։ Ախ, ինչքան ուրախ կլինեի։

Մանուլիխայի ուղեկցությամբ դուրս եկա։ Երկնքի կեսը մի սև ամպ էր ծածկել, ցայտուն գանգուր եզրերով, բայց արևը դեռ լուսավորում էր, դեպի արևմուտք գնալով, և լույսի ու վրահաս խավարի այդ միաձուլման մեջ չարագույժ մի բան կար։ Պառավը նայեց վեր, ափը հովանոցի պես աչքերին դրած, և նշանակալից տարուբերեց գլուխը։

— Պերեբրոդի վրա էսօր հաստատ ամպրոպ կլինի,— ասաց նա համոզիչ տոնով։— Չասած, որ կարկուտն էլ հետը։

14

Ես արդեն Պերեբրոդին էի մոտենում, երբ հանկարծակի հողմապտույտն առավ ու ճանապարհով գլորեց փոշու սյուներ։ Ընկան անձրևի առաջին հատ-հատ ու ծանր կաթիլները։

Մանուլիխան չէր սխալվել։ Ամպրոպը, որ դանդաղորեն կուտակվել էր ամբողջ այդ շոգ, անտանելի հեղձուցիչ օրվա ընթացքում, արտակարգ ուժով պարպվեց Պերեբրոդի վրա։ Կայծակը համարյա անընդմեջ էր փայլատակում, և որոտի դղրդյուններից դողում ու զնգզնգում էին իմ սենյակի պատուհանների ապակիները։ Երեկոյան ութին մոտ ամպրոպը մի քանի բոպեով մեղմվեց, բայց, սոսկ նրա համար, որ հետո սկսվի նոր մոլեգնությամբ։ Հանկարծ խլացուցիչ շրխկոցով ինչ-որ բան թափվեց հին տան տանիքի և պատերի վրա։ Նետվեցի դեպի պատուհանը։ Խոշոր, ընկույզի մեծության կարկուտը շեշտակի թափվում էր գետնին, ապա ետ թռչում բարձր-բարձր։ Նայեցի ուղիղ տան մոտ աճած թթի ծառին, որը բոլորովին մերկացել էր, կարկուտի սարսափելի հարվածներից թափվել էին բոլոր տերևները... Պատուհանի տակ երևաց մթության մեջ հազիվ նկատվող Յարմոլայի կերպարանքը, որը բաճկոնակը գլխին գցած, դուրս վազեց խոհանոցից՝ փակոցափեղկերը ծածկելու։ Սակայն ուշացավ։ Ապակիներից մեկին հանկարծ այնպիսի ուժով հարվածեց սառցի մի հսկայական կտոր, որ փշուր-փշուր արեց, և ապակու կտորտանքը զրնգոցով ցրիվ եկավ սենյակի հատակին։

Ես ինձ հոգնած էի զգում ու առանց հանվելու պառկեցի մահճակալին։ Կարծում էի, որ այդ գիշեր ինձ ամենևին չի հաջողվի քնել և որ մինչև լույս, ուժասպառ արտմության մեջ, շուռումուռ պիտի գամ տեղումս։ ուստի որոշեցի չհանվել, որպեսզի հետո թեկուզ փոքր-ինչ ինձ շշմեցնել կարողանամ սենյակում միապաղաղ ետուառաջ անելով։ Բայց տարօրինակ բան կատարվեց ինձ հետ. թվաց, թե լոկ մի բոպեով եմ փակել աչքերս, իսկ երբ բացեցի։ փակոցափեղկերի արանքներից արդեն ծգվել էին-արևի երկար ոսկե հառագայթները, որոնց մեջ փոշու անհամար ոսկե հատիկներ էին պտտվում։

Մահճակալիս մոտ կանգնած էր Յարմոլան։ Նրա դեմքն արտահայտում էր սպառնագին տագնապ ու անհամբեր սպասում. հավանորեն վաղուց արդեն այստեղ կանգնած, սպասում էր արթնանալուս։

— Պարոն,— ասաց նա իր խուլ ձայնով, որի մեջ անհանգստություն էր զգացվում։— Պարոն, ձեզ պետք է էստեղից գնալ...

Ոտքերս կախեցի ցած ու զարմացած Յարմոլային նայեցի։

— Գնա՞լ։ Ո՞ւր գնալ։ Ինչի՞ համար։ Խելքդ իսկականի՞ց թոցրել ես։

— Խելքս չեմ թոցրել,— կոպտորեն գոմռաց Յարմոլան։— Զիմացա՞ք, թե էրեկվա կարկուտն ինչեր է արել։ Գյուղի կեսի արտերը՝ ոնց որ ոտատակ տված։ Միաչքանի Մաքսիմինը, Կոզյոլինը, Մուտինը, Պրոկոպչուկներինը, Գորդիյ Օլեֆիրինը... Իր արածն արեց էլի սատանի կախարդը... սատկի դա։

Հանկարծ ակնթարթորեն վերհիշեցի երեկվա ամբողջ օրը, եկեղեցու մոտ Օլեսյայի ասած սպառնալիքը և նրա անհանգիստ կասկածները։

— Հիմի գյուղը լրիվ իրար է անցել,— շարունակեց Յարմոլան։— Առավոտից էլի խմել են ու գոռգոռում են... Ձեր մասին էլ են վատ բաներ ասում, պարոն... Գիտե՞ք, մեր գյուղն ինչ գյուղ է... Ինչ էլ անեն կախարդներին, տեղն է դրանց, արդար գործ կլինի, ձեզ էլ, պարոն, մենակ մի բան կասեմ՝ փախեք, քանի շուտ է։

Այսպիսով, Օլեսյայի երկյուղն արդարացավ։ Հարկ էր անհապաղ իմաց անել նրան ու Մանուլիխային, սպառնացող աղե-

տի մասին։ Ես շտապ-շտապ հագնվեցի, ոտի վրա ջուր շփեցի երեսիս և կես ժամ անց արդեն արագ վարգով սլանում էի Սատանի ծակի ուղղությամբ։

Որքան ավելի էի մոտենում հավի տոտերով խրճիթին, այնքան ավելի էր ներսումս բարձրանում անորոշ, տրամագին անհանգստությունը։ Ինքս ինձ համոզվածությամբ ասում էի, որ հենց հիմա մի նոր, անսպասելի վիշտ եմ ունենալու։

Համարյա վազելով բարձրացա ավազե թմբով ելնող կածանով։ Հյուղակի պատուհանները բաց էին, դռնակը՝ կրնկի վրա ետ արած։

— Տեր աստված։ Այս ի՞նչ է կատարվել,— շշնջացի ես, սիրտս քարացած մտնելով հաշտը։

Խրճիթը դատարկ էր։ Այստեղ իշխում էր այն տխրալի, կեղտաշատ խառնաշփոթությունը, որ միշտ հետևում է հապշտապ մեկնումին։ Աղբի և լաթերի կույտեր էին ընկած հատակին, մեկ էլ անկյունում ընկած էր մահճակալի փայտյա շրջանակը...

Նեղված, արցունքախեղդ սրտով արդեն ուզում էի ելնել խրճիթից, երբ հանկարծ ուշադրությունս գրավեց պատուհանի շրջանակից հավանաբար դիտավորյալ կախ արած մի փայլուն առարկա։ Էժանագին կարմիր ուլունքների շարան էր, որ Պոլեսյեում հայտնի է իբրև «մարջան»՝ միակ իրը, որն ինձ մնաց Օլեսյայից ու նրա քնքուշ, մեծահոգի սիրուց, որպես հիշատակ։

1898

ՄԵՆԱՄԱՐՏ

I

Վեցերորդ վաշտում հետճաշյա պարապմունքները ավարտվելու վրա էին, և կրտսեր սպաները ավելի հաճախակի ու անհամբերությամբ էին նայում ժամացույցին։ Ուսումնասիրվում էր կայազորային ծառայության կանոնադրությունը գործնականում։ Զինվորները ցիրուցան կանգնած էին սմբողջ հրապարակում՝ խճուղին երիզող բարդիների մոտ, մայմնամարզական գործիքների, վաշտային դպրոցի դռների, նշանառության հաստոցների մոտ։ Դրանք բոլորը երևակայական պահակակետեր էին, ինչպես օրինակ վառոդի նկուղի, դրոշի, պահակատան, դրամարկղի մոտի պահակակետերը։ Նրանք միջև շրջում էին պահակադիրները և ժամապահներ կայզում, կատարվում էր պահակների փոխում. ենթասպաները ստուգում էին պահակակետերը և փորձում իրենց զինվորների գիտելիքները, ջանալով մեկ խորամանկությամբ ժամապահի ձեռքից կորզել նրա հրացանը, մեկ ստիպել, որ իր տեղից հեռանա, մեկ պահ տալ որևէ իր, մեծ մասամբ սեփական գլխարկը։ Խաղի տեսք ընդունած այդ կեղծ փաստաբանությունը լավ իմացող հին զինվորները այդպիսի դեպքում պատասխանում էին չափազանցրած խիստ տոնով. «Հեռացի՛ր։ Ես լիովին իրավունք ունեմ հրացանս տալու որևէ մեկին, մինչև հրաման չստանամ անձամբ տեր թագավորից»։ Բայց ջահելները շփոթվում էին։ Նրանք դեռ չէին կարողանում զանազանել կատակը, օրինակը ծառայության իսկական պահանջից և ընկնում էին մերթ մեկ, մերթ մյուս ծայրահեղության մեջ։

— Խլե՛ր նիկով, չոլախ սատանա,— բղավում էր փոքրամարմին, կլորիկ ու ճարպիկ եֆրեյտոր Շապովալենկոն, և նրա ձայնի

մեջ զգացվում էր պետի տառապանք։— Ախր քեզ, այ սարսաղ, ինչքա՞ն եմ սովորեցրել։ Իսկ դու հիմա ո՞ւմ հրամանը կատարեցիր։ Ջերբակալվածի՞։ Ա՜հ, գրողը քեզ տանի ... Պատասխանի՛ր, ինչի՞ համար ես ժամապահ կարգված։

Երրորդ դասակում լուրջ իրարանցում առաջացավ։ Երիտասարդ թաթար զինվոր Մուհամեդչինովը, որ հազիվ էր ռուսերեն հասկանում ու խոսում, վերջնականապես շշկլվել էր իր և՛ իսկական, և՛ երևակայական պետերի խորամանկությունից։ Նա հանկարծ մոլեգնեց, հրացանը ձեռքն առավ և բոլոր հորդորներին ու հրամաններին պատասխանում էր մի վճռական բառով.

— Կծա-ակե՛մ։

— Կա՛ց ախր, դու, տխմար ...— համոզում էր նրան ենթասպան Բորիլևը։— Ես ո՞վ եմ։ Ախր ես քո պահակապետն եմ, կնշանակե ...

— Կծակե՛մ,— բղավում էր թաթարը՝ վախեցած ու գազազած և, աչքերն արնակալած, ջղաձգորեն սվինն ուղղում էր բոլորին, ով մոտենում էր նրան։ Նրա շուրջը հավաքվեց զինվորների մի խումբ, որոնք ուրախացել էին ծիծաղելի պատահարի և ձանձրալի ուսուցումից բոպեական հանգստի համար։

Վաշտի հրամանատար կապիտան Սլիվան գնաց գործը պարզելու։ Մինչ նա գնում էր ալարկոտ քայլվածքով, կռացած ու ոտքերը քարշ տալով, հրապարակի մյուս ծայրում հավաքվեցին կրտսեր սպաները իրար հետ մի քիչ զրուցելու և ծխելու։ Նրանք երեք հոգի էին. պորուչիկ Վետկինը՝ ճաղատ, բեղավոր, ասողխոսող, երգել սիրող, հարբեցող, երեսուներեք տարեկան մի մարդ, պոդպորուչիկ Ռոմաշովը, որն ընդամենը երկրորդ տարին էր, ինչ աշխատում էր գնդում, և պոդպրապորշչիկ Լբովը՝ խորամանկ-փաղաքուշ-հիմար աչքերով, մշտական ժպիտը հաստ ու միամիտ շրթունքներին, աշխույժ, բարեկազմ մի պատանյակ, որ կարծես ամբողջովին սպայական հին անեկդոտների տոպրակ էր։

— Խոզությո՛ւն է,— ասաց Վետկինը, նայելով իր մելխիորե ժամացույցին և զայրացած շրխկացնելով կափարիչը։— Ինչո՞ւ է մինչև հիմա վաշտը պահում։ Խափշի՛կ։

— Լավ կլիներ դա բացատրեիք նրան, Պավել Պավլիչ,— խորամանկ դեմքով խորհուրդ տվեց Լբովը։

— Ո՞նց չէ։ Գնացեք, ինքներդ բացատրեցեք։ Գլխավորն ի՛նչն է։ Գլխավորն այն է, որ ախր այս բոլորը զուր բան է։

Նրանք միշտ զորատեսից առաջ իրար են անցնում։ Եվ միշտ էլ չափն անցնում են։ Զինվորին տանջում են, հոգին հանում ծեծ ու հայհոյանքով, իսկ զորատեսի ժամանակ նա կկանգնի փետի պես։ Գիտե՞ք այն հայտնի դեպքը, թե ինչպես երկու վաշտի հրամանատար գրաղ են գալիս, թե ում զինվորը ավելի շատ հաց կուտի։ Երկուսն էլ ընտրում են սարսափելի շառակերների։ Գրաղը մեծ գրաղ է լինում, հարյուր ռուբլու մոտ մի բան։ Եվ ահա մի զինվորը ուտում է յոթ գրվանքա հաց ու ևս է քաշվում, էլ չի կարողանում ուտել։ Վաշտի հրամանատարը հաշձակվում է ֆելդֆեբելի վրա. «Էս ի՞նչ է, քո էսենցն ու էնենցը, խաբեցի՞ր ինձ»։ Իսկ ֆելդֆեբելը աչքերն է ճկճկացնում։ «Էնպես որ չեմ կարող գիտենալ, ձերդ բարեծնություն, թե ինչ է պատահել դրան։ Առավոտյան փորձեցինք, միանգամից ութ գրվանքա զխտվեց ...» Ահա այդպես էլ մերոնք ... Զուր տեղը փորձում են, իսկ զորատեսի ժամանակ անհամբեր վիճակի մեջ են ընկնում։

— Երեկ...— Լբովը հանկարծ փոթկաց ծիծաղից։— Երեկ արդեն բոլոր վաշտերում ավարտել էին պարապմունքները, ես տուն էի վերադառնում, երևի ժամը ութը կլիներ, բոլորովին մութն էր։ Տեսնեմ, տասնմեկերորդ վաշտում աղդանշաններն են սովորեցնում խմբովին։ «Զը՛-գի՛ր, մին-չև կո՛ւրծք, կրա՛-կի՛ր»։ Պորուչիկ Անդրուսևիչին հարցնում եմ. «Էս ինչո՞ւ ձեզ մոտ մինչև հիմա շարունակվում է էս սազ ու պարը»։ Նա էլ թե՝ «Մենք, ոնց որ շունը, լուսնի վրա ենք ոռնում»։

— Ամեն ինչից ձանձրացել եմ, Կուկա,— ասաց Վետկինը և հորանջեց։— Սպասեք, այդ ո՞վ է գալիս ձիով։ Կարծես թե Բե՞կը է։

— Այո, Բեկ-Աղամալովն է,— հաստատեց սրատես Լբովը։— Ինչ գեղեցիկ է նստել։

— Շատ գեղեցիկ է,— համաձայնեց Ռոմաշովը։— Իմ կարծիքով նա ուզածդ հեծյալից էլ լավ է ձի նստում։ Օ-օ-օ՜։ Ձին պարել սկսեց։ Կոկետություն է անում Բեկը։

Խճուղով դանդաղ գալիս էր մի ձիավոր սպա՝ սպիտակ ձեռնոցներով ու համհարզի համազգեստով։ Նրա տակինը մի ոսկեթույր, բարձրահասակ, երկար ձի էր, անգլիավարի կարճ խուզած պոչով։ Ձին տաքանում էր, անհամբեր թափահարում երախակալով զսպված կոր վիզը և հաճախակի փոխում բարակ ոտները։

— Պավել Պավլիչ, ճի՞շտ է, որ նա իսկական չերքեզ է,— հարցրեց Ռոմաշովը Վետկինին։

— Կարծում եմ, որ ճիշտ է։ Երբեմն, իրոք, հայերը իրենց չերքեզ կամ լեզգի են ձևացնում, բայց Բեկն առհասարակ, կարծես, չի ստում։ Դե ինքներդ տեսեք, ինչպիսին է նա ձի նստած։

— Սպասեք, ձայն տամ նրան,— ասաց Լբովը։

Նա ձեռքերը բերանին դրեց և խեղդված ձայնով կանչեց, այնպես, որ վաշտի հրամանատարը չլսի։

— Պորուչիկ Աղամալո՛վ, Բե՛կ։

Ձիավոր սպան սանձը ձգեց, մի վայրկյան կանգ առավ և շրջվեց դեպի աջ։ Ապա, ձին շրջելով այդ կողմը և թեթևակի կռանալով թամբի վրա, ձիուն ստիպեց ճկուն շարժումներով ցատկել արխի վրայով և զսպված քառատրոփով սլացավ դեպի սպաները։

Նա միջահասակից ցածր էր, չորչորուկ, ջղուտ, շատ ուժեղ։ Դեպի ետ թեքված ճակատով, նուրբ ու սապատավոր քթով և վճռական, պինդ շրթունքներով դեմքը առնական էր ու գեղեցիկ և մինչև հիմա չէր կորցրել արևելյան բնորոշ գունատությունը՝ միաժամանակ թուխ և փայլատ։

— Բարև, Բեկ,— ասաց Վետկինը։— Դու էնտեղ էդ ո՞ւմ առաջ էիր պոչ խաղացնում։ Կուսա՞նք կային։

Բեկ-Աղամալովը սեղմեց սպաների ձեռքը, ցած ու անփույթ խոնարհվելով թամբից։ Նա ժպտաց, և կարծես նրա՝ սպիտակ սեղմած ատամները անդրադարձ լույս սփռեցին իր դեմքի ամբողջ ստորին մասի ու փոքրիկ, սև, հարդարած բեղերի վրա...

— Այնտեղ երկու սիրունիկ ջհուդ աղջիկ էին անցնում։ Բայց ինչի՞ս են պետք։ Իմ կողմից ոչ մի ուշադրություն։

— Գիտենք, թե դուք որքան վատ եք տամա խաղում,— գլուխը թափահարեց Վետկինը։

— Լսեցեք, պարոնայք,— ասաց Լբովը և դարձյալ վաղօրոք ծիծաղեց։— Գիտե՞ք, թե գեներալ Դոխտուրովն ինչ է ասել հետևակի համհարզների մասին։ Դա քեզ է վերաբերում, Բեկ։ Որ նրանք ամենախիզախ հեծյալներն են ամբողջ աշխարհում...

— Մի՛ փչիր, ֆենդրիկ[1],— ասաց Բեկ-Աղամալովը։

[1] Երիտասարդ սպա, պրապորշչիկ (մինչհեղափոխական զինվորական ծածկալեզու) (ծան. թարգմ.)։

Նա սրունքներով խթեց ձիուն, ձևացնելով, թե ուզում է քշել պոդպրապորշչիկի վրա։

— Աստված վկա։ Նրանց բոլորփնն էլ, ասում է, ոչ թե ձի են, այլ ինչ-որ կիթառ, խնոցի, շնչարգելությունից տառապող, քոռ, թոփալ, շատ շրելուց ուռած։ Բայց երբ հրաման ես տալիս, գլուխը տնկած քշում են, առանց նայելու։ Ցանկապատ է՝ ցանկապատ լինի, հեղեղատ է՝ հեղեղատ լինի։ Թփերի միջով կքշի։ Սանձերը բաց է թողել, ասպանդակները կորցրել, գլխարկը գլխից թռե՞լ է։ Ջտեսնվա՛ծ հեծյալներ են։

— Ի՞նչ նորություն կա, Բեկ,— հարցրեց Վետկինը։

— Ինչ նորությո՞ւն։ Ո՛չ մի նորություն։ Հիմա, այ հենց նոր, գնդի հրամանատարը ակումբում հանդիպեց փոխգնդապետ Լեխին։ Նրա վրա էնպես գոռգոռաց, որ մայր եկեղեցու գավթում լսվում էր։ Իսկ Լեխը լուլ խմած էր, հայրիկ-մայրիկ ասելն էլ էր մոռացել։ Տեղում կանգնել ու օրորվում է, ձեռքերը հետևն է դրել։ Շուլգովիչը որ չգոռա՞ց նրա վրա. «Երբ խոսում եք գնդի հրամանատարի հետ, հաճեցեք ձեռքերդ հետույքիդ չդնել»։ Եվ սպասավորներն էլ այդտեղ էին։

— Պի՛նդ է ոլորել,— ասաց Վետկինը քմծիծաղով՝ չգիտես իրոնիկ թե խրախուսական։— Ասում են, երեկ չորրորդ վաշտում նա բղավում էր. «Ի՞նչ եք կանոնադրությունը քիթս խոթում։ Ես եմ ձեր կանոնադրությունը, և ուրիշ ո՛չ մի խոսք։ Ես եմ այստեղ թագավոր ու աստված»։

Լբովը հանկարծ նորից ծիծաղեց իր մտքերի վրա։

— Մի այսպիսի դեպք էլ է պատահել, պարոնայք, N գնդի համհարզի հետ...

— Սակվեցեք, Լբով,— լրջորեն նկատեց Վետկինը։— Այ թե բռնել է այսօր ձեր խոսելացավը։

— Մի ուրիշ նորություն էլ կա,— շարունակեց Բեկ-Աղամալովը։ Նա նորից ձիու գլուխը դարձրեց Լբովի կողմը և կատակով քշեց նրա վրա։ Ձին թափահարում էր գլուխը և փռնչում, փրփուր ցայտելով իր շուրջը։— Մի ուրիշ նորություն էլ կա։ Բոլոր վաշտերում հրամանատարը սպաներից պահանջում է խրտվիլակների թրատում։ Իններորդ վաշտում մի այնպիսի փոթորիկ է բարձրացրել, որ աստված հեռու պահի։ Եպիֆանովին ձերբակալել է նրա համար, որ թուրը սրած չի եղել... Ի՞նչ ես վախենում, ֆենդրիկ,— հանկարծ բղավեց Բեկ-Աղամալովը պոդպրապորշչիկի վրա։— Վարժվի՛ր։ Ախր ինքդ էլ երբևէ համ-

հարդ ես լինելու։ Ձիու վրա նստելու ես ինչպես խորոված ծիտը սկուտեղին։

— Է, դու, ասիացի՛...Զքվիր քո քնձոտ ձիով,— ձեռքերը թափ էր տալիս Լբովը ձիու դնչի առաջ։— Դու լսե՞լ ես, Բեկ, թե ինչպես N գնդում համհարզը ձի է գնել կրկեսից։ Այդ ձիով նա զորատեսի է գնում, մեկ էլ ձին հենց զորահրամանատարի առաջ հանկարծ սկսում է իսպանական քայլքով շքանցել։ Գիտե՞ս, այսպես, ոտքերը դեպի վեր և կողքից կողք։ Վերջապես մխրճվում է գլխամասի վաշտը։ աղմո՛ւկ, իրարանցո՛ւմ, խայտառակություն։ Իսկ ձին՝ ո՛չ մի ուշադրություն, իր գիտցածի պես կաքավում է։ Դե, Դրագոմիրովն էլ ձեռքերը խոսափողի պես բերանին է դնում, ահա այսպես ու բղավում. «Պո-ռո՛ւ-չիկ, նույն քայլքով դեպի հաուպտվախտ, քսանմեկ օրով, մա-ա՛րշ...»

— Է, դատարկ բաներ են.— կնճռոտվեց Վետկինը։— Լսիր, Բեկ, այդ թրատումով դու մեզ հսկապես որ սյուրպրիզ արիր։ Էդ ուրեմն ի՞նչ է ստացվում։ Բոլշևիկնե՞ն ազատ ժամանակ չի մնա։ Ահա մեզ էլ նրեկ բերեցին ալտ այլանդակին։

Նա ցույց տվեց հրապարակի կենտրոնը, որտեղ թաց կավից պատրաստած մի խրտվիլակ էր կանգնած, որն իրենից ներկայացնում էր մարդու մարմին հիշեցնող մի բան, միայն թե առանց ձեռքերի ու ոտքերի։

— Իսկ ինչ, թրատեցի՞ք,— հետաքրքրությամբ հարցրեց Բեկ-Աղամալովը։— Ռոմաշով, չե՞ք փորձել։

— Դեռ ոչ։

— Էդ էր պակաս։ Շատ պետքս է դատարկ բանով զբաղվեմ,— փնթփնթաց Վետկինը։ — Ոտեղի՞ց ժամանակ ունեմ, որ թրատեմ։ Առավոտվա իններից մինչև երեկոյան վեցը հենց մի գլուխ ցցված ես այստեղ։ Հազիվ ես հասցնում մի բան լափել ու օդի խմել։ Փառք աստծու, նս լակոտ չեմ նրանց համար...

— Ցնդած։ Ախր սպան պետք չ որ թրին տիրապետել իմանա։

— Այդ ինչո՞ւ։ Հարց է առաջանում։ Պատերազմի ժամանա՞կ։ Հիմիկվա հրազենի առկայության պայմաններում քեզ հարյուր քայլի վրա էլ մոտիկ չեն թողնի։ Ո՞ր ցավիս է պետք քո թուրը։ Ես հեծելակ չեմ։ Իսկ որ տեղն ուկավ, ավելի լավ է վերցնեմ հրաշքի խզակոթն ու թրըխկ-թրըխկ, հասցնեմ գլուխներին։ Դա ավելի հաստատ բան է։

— Դե լավ, իսկ խաղաղ ժամանա՞կ։ Քի՞չ դեպքեր կարող են պատահել։ Խռովություն, հուզումներ, կամ ով գիտի ինչ...

— Է, հետո՛ ինչ։ Այնուամենայնիվ, ի՞նչ գործ ունի այստեղ թուրը։ Ես հոսսև աշխատանքով չե՞մ զբաղվելու, մարդկանց գլուխը կտրելու։ Վա՛շտ, կրա-կի՛ր, պրծավ-գնաց...

Բեկ-Աղամալովի դեմքին դժգոհություն խաղաց։

— Է, դու շարունակ ցնդաբանում ես, Պավել Պավլիչ։ Չէ, դու լուրջ պատասխանիր։ Ենթադրենք որևէ տեղ զբոսանքի ես գնացել, կամ թատրոն, կամ, ասենք, ռեստորանում քեզ վիրավորեց որևէ շպակ[1]... ծայրահեղ դեպքը վերցնենք, ասենք մի ոչ զինվորական քեզ ապտակ հասցրեց։ Դու ի՞նչ ես անելու։

Վետկինը ուսերը վեր քաշեց և արհամարհաբար սեղմեց շրթունքները։

— Չէ մի՛։ Նախ և առաջ, ինձ ոչ մի շպակ չի խփի, որովհետև ծեծում են նրան, ով վախենում է, թե իրեն կծեծեն։ Իսկ երկրորդը... դե, ինչ կանեմ ե՞ս։ Ատրճանակս կթրխկացնեմ նրա վրա։

— Իսկ եթե ատրճանակը տանն է մնացե՞լ,— հարցրեց Լբովը։

— Է, գրողը տանի... դե կգնամ բերելու...Այ քեզ հիմարություն։ Չէ՞ որ մի այդպիսի դեպք եղել էր, որ կաֆեշանտանում վիրավորել էին մի կոմնետի։ Եվ նա կառքով գնացել էր տուն, ատրճանակը բերել ու ինչ-որ երկու աղավնյակի գետին փռել։ Պրծավ-գնաց...

Բեկ-Աղամալովը սրդոհած տարուբերեց գլուխը։

— Գիտեմ։ Լսել եմ։ Սակայն, դատարանը գտավ, որ նա գործել է վաղօրոք մտածված նպատակով և նրան դատապարտեց։ Դրանում ի՞նչ լավ բան կա։ Չէ, ես, եթե մեկն ու մեկը ինձ վիրավորեր կամ խփեր...

Նա խոսքը չավարտեց, բայց այնպես ամուր սեղմեց սանձը բռնած իր փոքրիկ բռունցքը, որ ձեռքը դողաց։ Լբովը հանկարծ ցնցվեց ծիծաղից ու փոթկացրեց։

— Դարձյա՛լ,— խստորեն նկատեց Վետկինը։

— Պարոնայք... խնդրում եմ... Հա՛-հա՛-հա՛։ N գնդում մի այսպիսի դեպք է եղել։ Պոդպրապորշչիկ Կրաուզեն ազնվական ակումբում սկանդալ է սարքել։ Այն ժամանակ բուֆետապանը քաշել է նրա ուսադիրից ու համարյա պոկել։ Դրա վրա Կրաուզեն հանել է ատրճանակն ու շրը՛խկ, ուղիղ նրա գլխին։ Տեղնուտեղը։ Այդտեղ նրան ինչ-որ փաստաբանիկ էլ է պատահում, նա

[1] Ոչ զինվորական մարդ (արհամարհական, խոսակցական)։ Ծ. Բ.։

սրան էլ՝ թրը՛խկ։ Դե, հասկանալի է, բոլորը դես ու դեն են փախչում։ Դրանից հետո Կրաուզեն հանգիստ գնում է իր ճամբարը, առաջին տողաշարը, դրոշի մոտ։ Ժամապահը ձայն է տալիս. «Ո՞վ է գալիս».— «Պոդպրապորշչիկ Կրաուզեն, դրոշի տակ մեռնելու»։ Պառկում է ու կրակում իր ձեռքին։ Հետո դատարանը նրան արդարացրեց։

— Ա՛յ զոչաղ,— ասաց Բեկ-Աղամալովը։

Սկսվեց երիտասարդ սպաների սիրած սովորական խոսակցությունը տեղն ու տեղը անսպասելիորեն կատարած արյունալի դատաստանի դեպքերի մասին և այն, թե ինչպես գրեթե միշտ այդ դեպքերն անցնում էին անպատիժ։ Մի փոքրիկ անհնշան քաղաքում անբեղ, հարբած մի կոռնետ թուրը ձեռքին խուժել է հրեաների ամբոխի մեջ, որոնց «զատկական կույտը» նախապես «ցիրուցան էր արել»։ Կիևում հետևազորի մի պոդպորուչիկ պարասրահում թրի մահացու հարված է հասցրել մի ուսանողի նրա համար, որ սա բուֆետի մոտ արմունկով հրել է նրան։ Ինչ-որ մեծ քաղաքում, Մոսկվայում է թե Պետերբուրգում, մի սպա «շան պես» գնդակահար է արել մի ոչ զինվորական քաղաքացու, որը ռեստորանում սպային դիտողություն է արել, թե օրինավոր մարդիկ անծանոթ տիկնոջ օձիքից չեն կպչում։

Ռոմաշովը, որ մինչև այժմ լուռ էր, հանկարծ, շփոթությունից կարմրելով, անհարկի ուղղելով ակնոցը և կոկորդը մաքրելով խառնվեց խոսակցությանը։

— Ահա թե ինչ կասեմ իմ կողմից, պարոնայք։ Բուֆետապանին, ասենք, ես չեմ հաշվում... Հա...Բայց եթե ոչ զինվորական մարդը... Ինչպե՞ս ասեմ...Հա... Դե, եթե նա օրինավոր մարդ է, ազնվական և այլն... Ինչո՞ւ պիտի ես այդ անզեն մարդու վրա հարձակվեմ թրով, ինչո՞ւ չեմ կարող նրանից բավարարում պահանջել։ Չէ՞ որ մենք, այնուամենայնիվ, կուլտուրական մարդիկ ենք, այսպես ասած...

— Է, անմիտ բան եք դուրս տալիս, Ռոմաշով,— ընդմիջեց նրան Վետկինը։— Դուք բավարարում կպահանջեք, իսկ նա կասի. «Ոչ... ը-ը-ը... ես, գիտե՞ք ինչ, ը-ը-ընդհանրապես... ը-ը... մենամարտը չեմ ընդունում։ Ես արյունահեղության հակառակորդ եմ... Եվ բացի այդ, ը-ը...մենք հաշտարար դատավոր ունենք...» Դե, ուրեմն, ամբողջ կյանքներդ անցկացրեք ծեծված ռեխով։

Բեկ-Աղամալովը լայն ժպտաց իր շողշողուն ժպիտով։

— Ի՞նչ է։ Հը՛։ Համաձայնո՞ւմ ես ինձ հետ։ Ես քեզ, Վետկին, ասում եմ՝ սովորիր թրատել։ Մեր Կովկասում բոլորը մանկուց սովորում են։ Վարժվում են դալար ճյուղերի, ոչխարի մսեղիքի, ջրի վրա...

— Իսկ մարդկանց վրա՞,— միջամտեց Լբովը։

— Մարդկանց վրա էլ,— հանգիստ պատասխանեց Բեկ-Աղամալովը։— Եվ էն էլ ո՞նց են թրատում։ Մի հարվածով մարդուն շեղակի երկու կես են անում ուսից մինչև աղդրը։ Այ դա հարվա՞ծ է։ Թե չէ, ձեռները կեղտոտելն էլ չարժի։

— Իսկ դու, Բեկ, այդպես կարո՞ղ ես։

Բեկ-Աղամալովն ափսոսանքով հառաչեց։

— Ոչ, չեմ կարող... Մատղաշ ոչխարը երկու կես կանեմ... Փորձել եմ նույնիսկ հորթի մսեղիքը...Իսկ մարդ, հազիվ թե... չեմ կարողանա։ Գլուխը գրողի փայ կդարձնեմ, այդ գիտեմ, իսկ էնպես, որ շեղակի... չէ։ Հայրս դա հեշտությամբ էր անում...

— Հապա՛, պարոնայք, գնանք փորձենք,— ասաց Լբովը աղաչական եղանակով, վառվռող աչքերով։— Բեկ, սիրելիս, խնդրում եմ, գնանք...

Սպաները մոտեցան կավե խրտվիլակին։ Առաջինը խփեց Վետկինը։ Իր բարի, պարզավուն դեմքին կատաղած արտահայտություն տալով, նա ամբողջ ուժով, լայն, անշնորհք թափահարումով խփեց կավին։ Միաժամանակ կոկորդից ակամա արձակեց այն բնորոշ հնչյունը— ըխհը՛— որ անում են մսագործները տավարի միսը կոտորելիս։ Շեղբը քառորդ արշինաչափ խրվեց կավի մեջ, և Վետկինը դժվարությամբ դուրս քաշեց այդտեղից։

— Վա՛տ է,— նկատեց, գլուխն օրորելով, Բեկ-Աղամալովը։— Դուք, Ռոմաշով...

Ռոմաշովը թուրը պատյանից դուրս քաշեց և ձեռքով շփոթված ուղղեց ակնոցը։ Նա միջահասակ էր, նիհարուտ, և թեպետ իր կազմվածքի համար բավական ուժեղ էր, բայց սաստիկ ամոթխածությունից՝ անճարպիկ. էսպադրոնով՝ սուսերամարտել նա չէր իմանում նույնիսկ ուսումնարանում, իսկ ծառայության մեկ և կես տարվա ընթացքում իսպառ մոռացել էր այդ

---

1 Բուֆ սուսեր (սպորտ։ Գործածվում է սուսերամարտի ժամանակ)։ Ս. Թ.։

արվեստը։ Գլխից վեր բարձրացնելով գլուխը, նա միաժամանակ բնազդաբար առաջ մեկնեց ձախ ձեռքը։

— Ձե՛ռքդ,— բղավեց Բեկ-Աղամալովը։

Բայց արդեն ուշ էր։ Թրի ծայրը միայն թեթևակի խազեց կավը։ Ռոմաշովը, որ ավելի մեծ դիմադրության էր սպասում, հավասարակշռությունը կորցրեց ու երերաց։ Թրի շեղբը, կպչելով նրա առաջ պարզած ձեռքին, մի պատառ կաշի պոկեց ցուցամատի հիմքի վրա։ Արյունը ցայտեց։

— Է՛խ։ Դե տեսնո՞ւմ եք,— բարկացած բացականչեց Բեկ-Աղամալովը, ձիուց ցած գալով։— Այդպես հեշտությամբ կարելի է ձեռքն էլ կտրել։ Մի՞թե կարելի է զենքի հետ այդպես վարվել։ Բայց ոչինչ, դատարկ բան է, թաշկինակով մի պինդ կապեք։ Փափկասուն օրիորդ։ Ձիս բռնիր, ֆենդրիկ։ Ահա, նայեք։ Հարվածի հիմնական էությունը ոչ ուսի, ոչ էլ արմունկի մեջ է, այլ ահա այստեղ, դաստակի խաղի։— Նա աջ ձեռքի դաստակով մի քանի արագ շրջանաձև շարժում կատարեց, և թրի շեղբը նրա գլխավերևում դարձավ մի համատարած շողշողուն շրջան։— Հիմա նայեցեք, ձախ ձեռքս քաշում եմ ետ, կոնակիս հետև... Երբ հարվածը հասցնում եք, ապա ոչ թե խփեցեք կամ ջարդեցեք առարկան, այլ կտրեք, ոնց որ թե սղոցեք, խուրը քաշեք դեպի ետ... Հասկանո՞ւմ եք։ Ըստ որում, լավ հիշեցեք՝ թրի հարթությունը պետք է անպայման թեք լինի հարվածի հարթությանը, անպայման։ Դրանից անկյունն ավելի սուր է լինում։ Ահա, նայեք։

Բեկ-Աղամալովը երկու քայլ ետ գնաց կավե խրտվիլակից, սուր, նշանառու հայացքը մխրճեց նրա մեջ և հանկարծ, բարձր ոռում շողացնելով թուրը սարսափելի, աչքի համար անորսալի շարժումով ամբողջովին առաջ թեքվելով, մի արագ հարված հասցրեց։ Ռոմաշովը միայն լսեց, թե ինչպես սուր սվսվաց հատվող օդը, և նույն րոպեին խրտվիլակի վերին կեսը ծանր ու փափուկ շրմփաց գետնին։ Հատույթի մակերեսը ողորկ էր, կարծես հղված լիներ։

— Ախ գի՛ողդ տանի։ Այ սա հարվա՞ծ է,— բացականչեց հիացած Լբովը։— Բեկ, աղավնյակս, խնդրում եմ, մի անգամ էլ։

— Հապա, Բեկ մի անգամ էլ,— խնդրեց Վեսկինը։

Բայց Բեկ-Աղամալովը կարծես վախենալով փչացնել գործած սպասվորությունը, ժպտալով թուրը դնում էր պատյան։ Նա ծանր էր շնչում, և այդ ոռոպեին ամբողջովին, լայն բացած շարաչքերով, սապատավոր բթով ու կրճտացող ատամներով նման էր ինչ-որ գիշատիչ, չար և հպարտ թռչնի։

— Սա ի՞նչ է որ։ Սա մի՞թե հարված է,— ասաց նա շինծու արհամարհանքով։— Իմ հայրը, Կովկասում, վաթսուն տարեկան էր, բայց ձիու վիզ էր թռցնում։ Երկու կես էր անում։ Պետք է, զավակներս, շարունակ մարզվել։ Մեզ մոտ ահա ինչպես են անում. ուռի շյուղը դնում են պրկոցի մեջ ու թրատում, կամ վերևից բարակ շիթով ջուր են բաց թողնում ու թրատում։ Եթե ցայտերը չեն լինում, ուրեմն հարվածը ճիշտ է։ Դե Լբով, հիմա՝ դու։

Վեսկինի մոտ վազեց վախեցած դեմքով ենթասպա Բոբիլյովը։

— Ձերդ բարձրություն... Գնդի հրամանատարը գալիս է։

— Ձգա՜-աստ,— երկարաձիգ, խիստ ու գրգռված բղավեց կապիտան Սլիվան հրապարակի մյուս ծայրից։

Սպաներն շտապ ցրվեցին դեպի իրենց դասակները։

Մեծ, անճոռնի սայլակառքը խճուղուց դանդաղ մտավ հրապարակ ու կանգ առավ։ Սայլակառքի մի կողմից, ամբողջ թափքը կողքի թեքելով, ծանրորեն ցած իջավ գնդի հրամանատարը, իսկ մյուս կողմից թեթև գետին ցատկեց գնդի համհարզը՝ շտաբս-կապիտան Ֆյոդորովսկին, բարձրահասակ, պճնագեղ մի սպա։

— Բարև, վեցերորդ,— լսվեց գնդապետի թավ, հանդարտ ձայնը։

Զինվորները բարձրաձայն ու խառնիխուռն բղավեցին հրապարակի տարբեր անկյուններից։

— Առողջություն ենք ցանկանում, ձե-ր-ը՜-ը՜դ...

Սպաները ձեռքերը տարան դեպի գլխարկների շքոցը։

— Խնդրում եմ շարունակեք պարապմունքները,— ասաց գնդի հրամանատարը և մոտեցավ մերձավոր դասակին։

Գնդապետ Շուլգովիչի քեֆը տեղը չէր։ Նա շրջագայում էր դասակները, զինվորներին կայազորային ծառայությանը վերաբերող հարցեր էր առաջադրում և ժամանակ առ ժամանակ թոնդ հայհոյում այն բացառիկ կտրիճավարի վիրտուոզությամբ, որն այդպիսի դեպքերում հատուկ է ճակատային հին զինվորականներին։ Զինվորներին կարծես հիպնոսացնում էր նրա ծերունական-դժգույն, խունացած, խիստ աչքերի սառեռուն, համառ հայացքը, և նրանք գնդապետին էին նայում անթարթ, շնչները պահած, ամբողջ մարմնով ձգված։ Գնդապետը հեկա, ծանր-

մարմին, վեհատես ծերունի էր։ Մնոտների մոտ չափազանց լայն, մսեղ նրա դեմքը նեղանում էր դեպի վեր՝ ճակատի կողմում, իսկ ցածի կողմում վեր էր ածվում թիաձև խիտ արծաթավուն մորուքի և այդպիսով մեծ շեղանկյան ձև ուներ։ Հոնքերը ալեխառն էին, թավամազ, խոժոռ։ Նա խոսում էր գրեթե առանց ձայնը բարձրացնելու, բայց նրա՝ դիվիզիայում հռչակված արտասովոր ձայնի ամեն մի հնչյունը,— մի ձայն, որով նա, ի դեպ ասած, արել էր իր ողջ պաշտոնական կարիերան,— պարզ լսելի էր ընդարձակ հրապարակի ամենահեռավոր անկյուններում և նույնիսկ խճուղու վրա։

— Դու ո՞վ ես,— կտրուկ հարցրեց գնդապետը, հանկարծակի կանգ առնելով երիտասարդ զինվոր Շարաֆուտդինովի առաջ, որը կանգնած էր մարմնամարզական ցանկապատի մոտ։

— Վեցերորդ վաշտի շարքային Շարաֆուտդինովը, ձերիդ բարձր բարեծնութեն,— ջանադրությամբ, խոպոտ բղավեց թաթարը։

— Դմբո՛։ Ես քեզ հարցնում եմ՝ ի՞նչ պահակակետում ես կարգված։

Զինվորը, շշկլվելով սաստոցից ու հրամանատարի խիստ տեսքից, լռեց և միայն կոպերն էր թարթում։

— Հը՛-ը,— ձայնը բարձրացրեց Շուլգովիչը։

— Որի դեմք ժամապահի... անձեռնմխելի...— առանց մտածելու թոթովեց թաթարը։— Ջեմ կարող գիտենալ, ձերիդ բարձր բարեծնութեն՝,— ավարտեց նա հանկարծ ցածրաձայն ու վճռական։

Հրամանատարի գեր դեմքը կարմրատակեց ծերունական թանձր աղյուսագույն կարմրությամբ, իսկ թփակալած հոնքերը ցասկոտ խոժոռվեցին։ Նա դարձավ իր շուրջը և կտրուկ հարցրեց.

— Ո՞վ է այստեղ կրտսեր սպան։

Ռոմաշովը առաջ անցավ և ձեռքը տարավ դեպի շքոցը։

— Ես եմ, պարոն գնդապետ։

— Ա-ա՜։ Պոդպորուչիկ Ռոմաշով։ Երևում է, լավ եք պարապում մարդկանց հետ։ Մնկներդ միացրե՛ք,— ծղրտաց հանկարծ Շուլգովիչը, աչքերը չռելով։— Ինչպե՞ս եք կանգնել ձեր գնդի հրամանատարի ներկայությամբ։ Կապիտան Սլիվա, ձեզ ի ցույց եմ դնում, որ ձեր ենթակայության սպան իրեն պահել չգիտի պետերի առաջ պաշտոնական պարտականությունները կատարելիս... Դու, շան ծնունդ,— շուռ եկավ Շուլգովիչը դեպի Շարաֆուտդինովը,— ո՞վ է քո գնդի հրամանատարը։

— Ջեմ կարող գիտենալ,— վհատությամբ, բայց հապճեպ ու հաստատ պատասխանեց թաթարը։

— Ու-ո՜ւ... ...Ես քեզ հարցնում եմ, ո՞վ է քո գնդի հրամանատարը։ Ես ո՞վ եմ։ Հասկանում ես՝ ե՛ս, ե՛ս, ե՛ս, ե՜ս...

— Եվ Շուլգովիչը մի քանի անգամ ձեռքի ափով ուժգին խբփեց կրծքին։

— Ջեմ կարող գիտենալ...

— ...—... հայհոյեց գնդապետը քսան բառանոց երկար, խառնաշփոթ ու ցինիկ մի նախադասությամբ։— Կապիտան Սլիվա, հաճեցեք այս շան որդուն պատժել հրացանն ուսին, լրիվ հանդերձանքով։ Թող սատկի անասունը հրացանն ուսին։ Դուք, պոդպորուչիկ, ավելի շատ կանանց պոչերի մասին եք մտածում, քան թե ծառայության։ Վալսե՞ր եք պարում։ Պոլ դե Կոկերի՞ն եք կարդում... Ի՞նչ է, ձեր կարծիքով սա զինվո՞ր է,— մատով բզեց նա Շարաֆուտդինովի շրթունքները։— Սա՝ ամոթ, խայտառակություն, նողկանք է և ոչ թե զինվոր։ Իր գնդի հրամանատարի ազգանունը չգիտի... Զար-մանո՛ւմ եմ ձեզ վրա, պոդպորո՛ւչիկ...

Ռոմաշովը նայում էր գնդապետի ալեխառն, կարմրատակած, գրգռված դեմքին և զգում, թե ինչպես վիրավորանքից և հուզմունքից բաբախում է սիրտը և աչքերի առաջ մթնում... Եվ հանկարծ, գրեթե իր իսկ համար անսպասելի, նա խուլ ձայնով ասաց.

— Սա թաթար է, պարոն գնդապետ։ Նա ռուսերեն ոչինչ չի հասկանում և բացի այդ...

Շուլգովիչի դեմքը վայրկենապես գունատվեց, թորշոմած այտերը ցնցվեցին, և աչքերը գարձան բոլորովին ամայի ու սարսափելի։

— Ի՞-ի՞նչ,— որոտաց նա այնպիսի անբնական իլացուցիչ ձայնով, որ խճուղու մոտ ցանկապատին նստած հրեա երեխաները ծառերի պես ցած թափվեցին այս ու այն կողմը։— Ի՞նչ։ Խոսո՞ւմ եք։ Էր-ռե՛լ։ Կաթնակեր, պրապորշչիկը իրեն թույլ է տալիս... Պորուչիկ Ֆյոդորովսկի, այսօրվա հրամանում հայտարարեցեք, որ պոդպորուչիկ Ռոմաշովին չորս օրով տնային բանտարկության եմ ենթարկում զինվորական կարգապահությունը չհասկանալու համար։ Իսկ կապիտան Սլիվային նկա-

տողություն եմ անում նրա համար, որ չի կարող իր կրտսեր սպանելին իսկույն պատկերացում պատվաստել պաշտոնական պարտականության մասին։

Համհարը հարգալիր անտարբերությամբ պատվի առավ։ Սլիվան կլցած, կանգնել էր ոչինչ չարտահայտող քարացած դեմքով և ցնցվող ձեռքը շարունակ պահում էր գլխարկի շքոցի մոտ։

— Ամոթ է ձեզ, կապիտան Սլիվա,— փնթփնթում էր Շուլգովիչը, հետզհետև հանդարտվելով։— Գնդում լավագույն սպաներից մեկն եք, հին զինվորական, և այդպես բաց եք թողնում երիտասարդներին։ Հո՛ւպ տվեք դրանց, մարվեք առանց քաշվելու։ Հարկ չկա նրանցից քաշվելու։ Օրիորդ չեն, չեն կակղի...

Նա կտրուկ շուռ եկավ և, համհարզի ուղեկցությամբ, գնաց դեպի սայլակառք։ Եվ մինչ նա նստում էր, մինչ սայլակառքը շրջվեց դեպի խճուղին և ծածկվեց վաշտային դպրոցի շենքի հետև, հրապարակում տիրում էր երկչոտ, տարակուսած լռություն։

— Է՛հ, ախ-պե-բրս,— արհամարհանքով, չոր ու անբարյացակամ ասաց Սլիվան մի քանի րոպե անց, երբ սպաները ցրվում էին տները։— Ո՞վ էր քաշում ձեր լեզվից, որ խոսեիք։ Կանգնեիք ու լռեիք, թե որ ասված մահ էր ուղարկել։ Հիմա սես, ձեր պատճառով հրամանի մեջ ինձ նկատողություն կլինի։ Եվ ո՞ր ցավիս համար ձեզ իմ դասակն ուղարկեցին։ Դուք ինձ պետք եք ոնց որ շանը հինգերորդ ոտը։ Լավ կանեիք ծիծ ծծեիք, և ոչ թե...

Նա խոսքը կիսատ թողեց, հոգնած թափահարեց ձեռքը և, մեջքը շուռ տալով դեպի երիտասարդ սպան, ամբողջովին կքած, խոնարհված, ոտները քարշ տալով գնաց դեպի տուն, իր կեղտոտ, ծերունական ամուրի բնակարանը։ Ռոմաշովը նայեց նրա հետևից, նրա վհատ, նեղ ու երկար կռնակին, և հանկարծ զգաց, որ իր սրտում, նորվա վիրավորանքի դառնության ու հրապարակային նախատինքի միջով շարժվում էր խղճահարությունը այդ միայնակ, կոշտացած, ոչ ոքի կողմից չսիրված մարդու նկատմամբ, որի համար ամբողջ աշխարհում մնացել էր միայն երկու սեր՝ իր վաշտի շարային գեղեցկությունը և ամենօրյա խաղաղ, մեկուսի հարբեցողությունը երեկոյան՝ «մինչև բարձին հասնելը», ինչպես արտահայտվում էին գնդում հին հարբեցող գոռհիկները։ Եվ քանի որ Ռոմաշովը հաճախ շատ երիտասարդ

մարդկանց հատուկ՝ փոքր-ինչ ծիծաղելի, միամիտ սովորությունն ուներ իր մասին մտածել երրորդ դեմքով, շարլոն վեպերի բառերով, ապա հիմա էլ նա մտքում արտասանեց.

«Նրա բարի, արտահայտիչ աչքերին իջավ թախծի ամպը...»

2

Զինվորները դասակ առ դասակ ցրվեցին իրենց կացարանները։ Վարժական հրապարակն ամայացավ։ Ռոմաշովը տատանման մեջ միառժամանակ կանգնել էր խճուղու վրա։ Իր սպայական ծառայության մեկ և կես տարվա ընթացքում արդեն առաջին անգամ չէր, որ ունենում էր իր միայնակության, օտար, անտարբեր կամ անբարյացակամ մարդկանց մեջ կորսված լինելու այդ տանջալից գիտակցությունը, այդ թախծալի զգացումը, թե ուր կորցնի այսօրվա երեկոն։ Իր բնակարանի, սպայական ակումբի մասին մտածելը նրա համար զզվելի էր։ Ակումբը հիմա դատարկ է. երևի, երկու պոդպրապորշչիկ խաղում են փոքրիկ, անպետք բիլիարդը, գարեջուր են խմում, ծխում և բիլիարդի ամեն մի գնդակի վրա անխնա երդվում ու հիշոցներ են տալիս. սենյակներում բռնել է վատ ճաշարանային ճաշերի հնացած հոտը՝ ձանձրալի է..

«Կայարան կգնամ,— ասաց Ռոմաշովն ինքն իրեն,— միևնույն է»։

Հրեական աղքատիկ ավանում ոչ մի ճաշարան չկար։ Ակումբները, ինչպես զինվորականը, այնպես էլ քաղաքացիականը, գտնվում էին ամենախղճուկ, բարձիթողի արված վիճակում, ուստի կայարանը միակ տեղն էր, ուր հաճախ ավանի բնակիչները գնում էին քեֆ անելու և իրենց թափ տալու և նույնիսկ թուղթ խաղալու։ Մարդատար գնացքների ժամանման պահին այնտեղ էին գնում նաև տիկնայք, որը մի փոքր բազմազանություն էր մտցնում գավառական կյանքի անասելի ձանձրույթի մեջ։

Ռոմաշովը սիրում էր երեկոները գնալ կայարան, ճեպընթաց գնացքի գալու պահին, որը այստեղ վերջին անգամ կանգ էր առնում նախքան կանցներ պրուսական սահմանը։ Տարօրինակ հմայվածությամբ, հուզված, նա հետևում էր, թե ինչպես դուրս պրծնելով ոլորանի հետևից, ընդամենը հինգ նոր, փայլուն վագոններից բաղկացած այդ գնացքը սրընթաց թռչում էր դեպի կայարան, ինչպես արագ մեծանում և բռնկվում էին նրա կրակե աչքերը, որոնք իրենց առջև, ռելսերի վրա լուսավոր բծեր էին

նետում, և ինչպես նա, արդեն պատրաստ կտրել-անցնելու կայարանը, վայրկենաբար, թշշոցով ու դղրդոցով, կանգ էր առնում— «ինչպես հսկան, որ վազքի թափից պինդ կառչում է ժայռին», մտածում էր Ռոմաշովը։ Ամբողջովին ուրախ տոնական լույսերով ողողված վագոններից դուրս էին գալիս գեղեցիկ, պճնազարդ ու լավ ապրած տիկնայք վարմանալի գլխարկներով, արտասովոր նրբագեղ զգեստներով, դուրս էին գալիս ոչ զինվորական պարոններ, սքանչելի հագնված, անփութորեն ինքնավստահ, բարձր, աղայական ձայներով, ֆրանսերեն ու գերմաներեն խոսակցությամբ, ազատ շարժուձևով, ալարկոտ ծիծաղով։ Նրանցից ոչ ոք երբեք, նույնիսկ հարևանցի, ուշադրություն չէր դարձնում Ռոմաշովի վրա, բայց սա նրանց մեջ տեսնում էր ինչ-որ անհասանելի, նուրբընտիր, հոյակապ աշխարհի մի կտորը, աշխարհ, որտեղ կյանքը մշտական տոն ու ցնծություն է։

Անցնում էր ութ րոպե։ Զանգը զրնգում էր, շոգեքարշը սուլում, և շողշողուն գնացքը մեկնում էր կայարանից։ Կառամատույցում և բուֆետում հապճեպ հանգցնում էին կրակները։ Անմիջապես վրա էր հասնում մթամած առօրյան։ Եվ Ռոմաշովը միշտ մեղմ երազուն թախիծով երկար հետևում էր կարմիր լապտերին, որը սահուն օրորվում էր վերջին վագոնի հետևում, սուզվելով գիշերվա խավարի մեջ և դառնալով հազիվ նշմարելի մի կայծ։

«Կայարան կգնամ»,— մտածեց Ռոմաշովը։ Բայց իսկույն նայեց իր կրկնակոշիկներին և շիկնեց ծակող ամոթից։ Դրանք մեկ ու կես քառորդ խորությամբ ծանր ռետինե կրկնակոշիկներ էին, ամբողջովին ծեփված խմորի պես թանձր, սև ցեխով։ Գնդի բոլոր սպաները այդպիսի կրկնակոշիկներ էին հագնում։ Հետո նա նայեց իր շինելին, որը նույնպես ցեխի պատճառով կտրված էր մինչև ծնկները, ներքևում կախ ընկած ծոպերով, օղակներն աղտոտված ու լայնացած, և հոգոց հանեց։ Անցյալ շաբաթ, երբ նա անցնում էր կառամատույցով նույն ճեպընթացի մոտից, նկատեց սև զգեստ հագած բարձրահասակ, բարեկազմ, շատ գեղեցիկ մի տիկնոջ, որը կանգնել էր առաջին կարգի վագոնի դռան մեջ։ Նա գլխաբաց էր, և Ռոմաշովը արագ, բայց որոշակի կարողացավ տեսնել նրա նուրբ, ուղիղ քիթը, սքանչելի փոքրիկ ու լիքը շրթունքները և փայլուն սև գանգուր մազերը, որոնք մեջտեղից բացած մազբաժանից ցած էին թափվում այտերին,

ծածկելով քունքերը, հոնքերի ծայրերն ու ականջները։ Տիկնոջ թիկունքում, նրա ուսերի հետևից նայում էր մի մարմնեղ երիտասարդ՝ բաց գույնի հագուստով, գոռոզ դեմքով և Վիլհելմ կայսեր նման վեր ոլորած բեղերով, նույնիսկ մի քիչ նման Վիլհելմին։ Տիկինն էլ նայեց Ռոմաշովին և, ինչպես սրան թվաց, նայեց սևեռուն, ուշադիր, և, տիկնոջ մոտով անցնելիս, պոդպորուչիկն ըստ իր սովորության մտածեց. «Զքնաղ անծանոթուհու աչքերը հաճույքով կանգ առան երիտասարդ սպայի բարեկազմ, փոքր-ինչ նիհար, կերպարանքի վրա»։ Բայց երբ, մի տասը քայլ անցնելով, Ռոմաշովը հանկարծ ետ շրջվեց, որպեսզի մի անգամ էլ հանդիպի գեղեցիկ տիկնոջ հայացքին, տեսավ, որ թե՛ նա, թե՛ նրա ուղեկիցը հափշտակված ծիծաղում են, նայելով իր հետևից։ Այն ժամանակ հանկարծ Ռոմաշովը զարմանալի պարզությամբ և կարծես կողքից դիտողի պես պատկերացրեց ինքն իրեն, իր կրկնակոշիկները, շինելը, գունատ դեմքը, կարճատեսությունը, իր սովորական շփոթվածությունն ու ամոթխածությունը, հիշեց հենց նոր մտածած իր գեղեցիկ նախադասությունը և անտանելի ամոթից կարմրեց տանջալիորեն, սուր դավ զգալու աստիճան։ Եվ նույնիսկ հիմա, գարնանային իրիկվա կիսախավարում միայնակ քայլելիս, նա դարձյալ մի անգամ էլ կարմրեց այդ անցած ամոթի ամոթից։

— Չէ, ի՜նչ կայարան գնալ,— դառն անհուսությամբ շշնջաց Ռոմաշովը։— Մի քիչ կզբոսնեմ, իսկ հետո՝ տուն...

Ապրիլի սկիզբն էր։ Խավարը թանձրանում էր աչքի համար անընկատելի։ Խճուղին երիզող բարդիները, ճանապարհի երկու կողմերում կանգնած կղմինդրածածկ սպիտակ, ցածրիկ տնակները, հազվադեպ անցորդների կերպարանքները—ամեն ինչ սևացավ ու կորցրեց գույներն ու հեռանկարը. բոլոր առարկաները դարձան սև, տափակ ուրվանկարներ, բայց նրանց գծագրությունը սքանչելի որոշակիությամբ երևում էր մթնած օդում։ Արևմուտքում քաղաքի հետև վառվում էր վերջալույսը։ Ասես շիկացած, հալած ոսկու պես բոցավառվող հրաբխի խառնարանն էին ընկնում ծանր, գորշ ամպերը և շառագունում արնակարմիր, դեղնասաթի, մանիշակագույն կրակների պես։ Իսկ հրաբխի վերև կանաչ փիրուզի ու ծովաբյուրեղի պես, գմբեթաձև բարձրանում էր գարնանային հեզ իրիկնային երկինքը։

Դանդաղ քայլելով խճուղով, դժվարությամբ քարշ տալով հսկայական կրկնակոշիկներ հագած ոտքերը, Ռոմաշովն անդադ-

րում նայում էր այդ կախարդական հրդեհին։ Ինչպես և միշտ, գեռ վաղ մանկուց, վերջալույսի ցոլքերի հետևում նրան պատկերանում էր ինչ-որ խորհրդավոր, լուսաշող կյանք։ Ասես այնտեղ, հեռու-հեռու ամպերից ու հորիզոնից այն կողմ, այստեղից անտեսանելի արևի ներքո բոցավառվում էր մի սքանչելի, շլացուցիչ-գեղեցիկ քաղաք, որ մեր աչքից թաքցնում էին ներքին կրակով բռնկված ամպերը։ Այնտեղ անասելի փայլով պսպղում էին ոսկեկոպիճ սալարկները, վեր էին խոյանում ծիրանավառ տանիքներով զարմանահրաշ գմբեթներ ու աշտարակներ, լուսամուտներում շողում էին աղամանդներ, օդում փողփողում վառ, խայտաբղետ դրոշակներ։ Եվ թվում էր, թե այդ հեռավոր ու հեքիաթային քաղաքում ապրում են զվարթ, ցնծուն մարդիկ, որոնց ամբողջ կյանքը նման է քաղցր երաժշտության, որոնց նույնիսկ մտախոհությունը, նույնիսկ թախիծը դյութականորեն քնքուշ ու սքանչելի են։ Նրանք շրջում են շողշողուն հրապարակներում, ստվերախիտ պարտեզներում, ծաղիկների ու շատրվանների մեջ, շրջում հն աստվածանման, լուսավոր, լի անկարագրելի ուրախությամբ, չգիտեն, թե ինչ բան է երջանկությունն ու ցանկությունների արգելքը. նրանց հոգին մոայլված չէ ո՛չ վշտից, ո՛չ ամոթից, ո՛չ հոգսից...

Ռոմաշովը հանկարծ հիշեց քիչ առաջվա դեպքը վարժական հրապարակում, գնդի հրամանատարի կոպիտ բղավոցները, ապրած վիրավորանքի զգացումը, զինվորների առաջ ունեցած տուր և միաժամանակ տղայական ամոթխածության զգացումը։ Նրա համար ամենից ցավատանջն այն էր, որ իր վրա բղավել էին ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես ինքը երբեմն բղավում էր իր այսօրվա անարգանքի այդ լուռ վկաների վրա, և այդ գիտակցության մեջ կար դիրքերի տարբերությունը ոչնչացնող, նրա սպայական և, ինչպես ինքն էր կարծում, մարդկային արժանապատվությունը ստորացնող ինչ-որ բան։

Եվ նրա մեջ իսկույն, ինչպես տղայի մեջ (նրանում իսկապես էլ տղայական շատ բան էր մնացել դեռևս) եռացին քինոտ, ֆանտաստիկ, արբեցնող երազանքները։ «Դատարկ բաներ են։ Ամբողջ կյանքս դեռ առջևումս է,— մտածում էր Ռոմաշովը, և, իր մտքերով տարված, նա քայլեց ավելի առույգ և ավելի խոր շնչեց։— Այ, հենց նրանց բոլորի ջգրու, վաղվանից ևթ գրքերը ձեռքս կառնեմ, կնախապատրաստվեմ և կմտնեմ ակադեմիա։ Աշխատա՜նք։ Օ, աշխատանքով ինչ ուզես կարելի է անել։ Միայն

թե մարդ ինքն իրեն հավաքի։ Կսերտեմ խենթի պես... Եվ ահա, բոլորի համար անասելի, փայլուն քննություն կբռնեմ։ Եվ այն ժամանակ երևի նրանք բոլորը կասեն. «Այստեղ ի՞նչ մի զարմանալու բան կա։ Մենք առաջուց համոզված էինք դրան։ Այնպիսի ընդունակ, հաճելի, տաղանդավոր երիտասարդ է»։

Եվ Ռոմաշովը զարմանալիորեն պարզ տեսավ իրեն որպես գերագույն շտաբի՝ մեծ հույսեր ներշնչող ուսյալ սպա... Նրա անունը ակադեմիայում գրված է ոսկե տախտակին։ Պրոֆեսորները նրան փայլուն ապագա են խոստանում, առաջարկում են մնալ ակադեմիայում, բայց ոչ, նա գնում է զորաշար։ Պետք է լրացնել վաշտի հրամանատարության ծառայության ժամկետը։ Եվ անպայման իր գնդում։ Ահա նա ժամանում է այստեղ՝ նրբագեղ, ներողամիտ անփույթ, զուսպ և հանդուգն-քաղաքավարի, ինչպես գլխավոր շտաբի այն սպաները, որոնց նա տեսել էր անցյալ տարվա մեծ զորաշարժերի և նկարահանումների ժամանակ։ Սպաների ընկերակցությունից նա խուսափում է։ Բանակային կոպիտ սովորությունները, տնավարությունը, թղթախաղը, հարբեցողությունը, ոչ, դա նրա համար չէ. նա չի մոռանում, որ այստեղ լոկ հանգրվան է իր հետագա կարիերայի և փառքի ճանապարհին։

Ահա սկսվեցին զորաշարժերը։ Երկկողմանի մեծ մարտ է։ Գնդապետ Շուլգովիչը գլուխ չի հանում զորադասավորումից, շփոթվում է, մարդկանց իրարանցման մեջ գցում, ինքն էլ իրար է անցնում։ Հանձնակատարների միջոցով նրան արդեն երկու անգամ նկատողություն է արել կորպուսի հրամանատարը։ «Դե, կապիտան, փրկեցեք,— դիմում է նա Ռոմաշովին։— Գիտե՞ք, հանուն մեր հին բարեկամության։ Հիշո՞ւմ եք, հա՛-հա՛-հա՛, ինչպես էինք գժվում իրար հետ։ Շատ եմ խնդրում»։ Դեմքը շփոթված ու շողոքորթ է։ Բայց Ռոմաշովը, անբասիր կերպով պատվի առնելով և թամբի վրա առաջ թեքվելով, պատասխանում է հանդարտ-մեծամիտ տեսքով. «Ներեցեք, պարոն գնդապետ... Դա ձեր պարտականությունն է գնդի տեղաշարժը տնօրինելը։ Իմ գործը հրամանն ընդունելը և այն կատարելն է...»։ Իսկ կորպուսի հրամանատարի մոտից արդեն սլանում է երրորդ հանձնակատարը նոր նկատողությամբ։

Գլխավոր շտաբի փայլուն սպա Ռոմաշովը շարունակ վեր ու վեր է բարձրանում պաշտոնական ծառայության կարիերայի

սանդուղքով... Ահա բանվորների խռովություն է բռնկվում՝ պողպատաձուլական մի մեծ գործարանում։ Արագ պահանջված է, որ ներկայանա Ռոմաշովի վաշտը։ Դիշեր է, հրդեհի հրացոլք, հսկայական ոռնացող ամբոխ, քարեր են թռչում... Բարեկազմ, գեղեցիկ կապիտանը դուրս է գալիս վաշտի առաջ։ Դա Ռոմաշովն է։ «Եղբայրներ,—դիմում է նա բանվորներին,—երրորդ և վերջին անգամ զգուշացնում եմ, որ կկրակեմ...»։ Ճիշեր, սուլոց, քրքիջ... Մի քար է կպչում Ռոմաշովի ուսին, բայց նրա առնացի, շիտակ դեմքը մնում է հանգիստ։ Նա շուռ է գալիս դեպի զինվորները, որոնց աչքերը զայրույթից բոցավառվում են, որովհետև վիրավորել են իրենց պաշտելի հրամանատարին։ «Ուղիղ ամբոխի վրա ամբողջ վաշտով... Վա-ա՜շտ, կրակի՛ր»։ Հարյուր կրակոցը ֆուլվում է ի մի... Սարսափի մռնչյուն։ Տասնյակ սպանվածներ ու վիրավորներ թափված են իրար վրա... Մնացածները անկանոն փախչում են, մի քանիսը ծունկի են գալիս, աղերսելով խնայել։ Խռովությունը ճնշված է։ Ռոմաշովին առաջիկայում սպասում է հրամանատարության շնորհակալությունն ու պարգևը օրինակելի արիության համար։

Հետո պատերազմ է սկսվում... Ոչ, նախքան պատերազմը, Ռոմաշովը ավելի լավ է գնա Գերմանիա, որպես զինվորական լրտես։ Կուսումնասիրի գերմաններենը լրիվ կատարելությամբ ու կգնա։ Ինչպիսի՜ արբեցուցիչ խիզախություն։ Մենակ, բոլորովին մենակ, գերմանական անցագիրը գրպանում, երգեհոնիկը ուսը գցած։ Անպայման երգեհոնիկով։ Շրջում է քաղաքից քաղաք, պտտում է երգեհոնիկի կոթը, պֆենիգներ է հավաքում, իրեն հիմար է ձևացնում և միաժամանակ սուսիկ-փուսիկ նկարահանում է ամրությունների, պահեստների, զորանոցների, ճամբարների հատակագծերը։ Շուրջը մշտական վտանգն է։ Իր կառավարությունը հրաժարվել է նրանից, ինքը օրենքից դուրս է։ Թե իրեն հաջողվի արժեքավոր տեղեկություններ ձեռք բերել, նա ունի փող, աստիճաններ, դիրք, հռչակ, այլապես՝ նրան կըգնդակահարեն առանց դատի, առանց որևէ ձևականության, առավոտյան վաղ որևէ շեղ կապոնիրի[1] խանդակում։ Ահա կարեկցաբար նրան առաջարկում են աչքերը կապել թաշկինակով, բայց ինքը հպարտությամբ դեն է շպրտում թաշկինակը։ «Մի՞թե դուք կարծում եք, թե իսկական սպան վախենում է մահվանից աչքերին նայելուց»։ Մեր գնդապետը կարեկցանքով ասում է. «Լսեք, դուք չահել եք, իմ որդին ձեզ հասակակից է։ Ասացեք ձեր ազգանունը, ասացեք միայն ինչ ազգության եք պատկանում, և մահապատիժը մենք կփոխարինենք բանտարկությամբ»։ Բայց Ռոմաշովը սառը քաղաքավարությամբ ընդհատում է նրան. «Այդ զուր է, գնդապետ, շնորհակալ եմ ձեզանից։ Արեք ձեր գործը»։ Ապա նա դիմում է հրաձիգների դասակին։ «Զինվորներ,—ասում է նա հաստատուն ձայնով, իհարկե, գերմաներեն,— խնդրում եմ ձեզ մի ընկերական ծառայություն մատուցել։ Նշան բռնեք սրտիս»։ Մի դյուրազգաց լեյտենանտ, արցունքները հազիվ զսպելով, թափահարում է սպիտակ թաշկինակը։ Համազարկ...

...Երևակայության մեջ այդ պատկերը այնքան կենդանի ու վառ ստացվեց, որ Ռոմաշովը, որը վաղուց արդեն քայլում էր արագ, լայն քայլերով և խորը շնչելով, հանկարծ ցնցվեց և սարսափահար կանգ առավ տեղում ջղաձգաբար սեղմած բռունցքներով և բաբախող սրտով։ Բայց իսկույն էլ, խավարում թույլ ու մեղավոր ժպտալով ինքն իրեն, կծկվեց ու շարունակեց ճանապարհը։

Բայց շուտով հորձանքի պես արագ, անզուսպ երազանքները նորից տիրեցին նրան։ Սկսվեց դաժան, արյունահեղ մի պատերազմ Պրուսիայի և Ավստրիայի դեմ։ Հսկայական ռազմադաշտ, դիակներ, նռնակներ, արյուն, մահ։ Դա ամբողջ պատերազմի բախտը որոշող գլխավոր ճակատամարտն է։ Մոտենում են վերջին ռեզերվները, բոպի առ բոպի սպասում են թշնամու թիկունքում ռուսական շրջանցող զորասյան հայտնվելուն։ Պետք է դիմանալ թշնամու սարսափելի ճնշմանը, պետք է տոկալ ինչ գնով էլ լինի։ Եվ ամենասարսափելի կրակը, հակառակորդի ամենակատաղի ջանքերը ուղղված են Կերենսկյան գնդի կողմը։ Զինվորները կռվում են առյուծի պես, նրանք ոչ մի անգամ չըտատանվեցին, թեև նրանց շարքերը ամեն վայրկյան հալչում են թշնամու կրակոցների տարափի տակ։ Պատմակա՜ն պահ։ Դիմանան գոնե մի երկու բոպե ևս և հաղթանակը կխլեն հակառակորդից։ Բայց գնդապետ Շուլգովիչը շփոթության մեջ է. նա քաջ է, դա անվիճելի է, բայց նրա նյարդերը չեն դիմանում այդ սարսափին։ Նա փակում է աչքերը, ցնցվում է, գունատվում... Ահա նա արդեն նշան է անում շեփորահարին նահանջի շեփորը

[1] Ամրությունների առաջ որպես անցուղի ծառայող ծածկած խրամատ (ծան. հեղ.)։

հնչեցնելու, ահա զինվորը արդեն եղջերափողը դրեց շրթունքներին, բայց այդ ակնթարթին բլրի հետևից փրփրակալած արաբական երիվարին նստած առաջ է նետվում դիվիզիոնի շտաբի պետ գնդապետ Ռոմաշովը։ «Գնդապետ, չհամարձակվե՛ք նահանջել։ Այստեղ Ռուսաստանի բա՞խտն է որոշվում...»։ Շուլգովիչը բռնկվում է. «Գնդապետ, այստեղ ե՛ս եմ հրամայում և ե՛ս եմ պատասխանատու աստծու և թագավորի առաջ։ Շեփորահա՛ր, նահա՛նջ»։ Բայց Ռոմաշովը շեփորահարի ձեռքից արդեն խլել է եղջերափողը։ Տղե՛րք, առաջ։ Թագավորն ու հայրենիքը ձեզ են նայում։ Ուռա՛»։ Մոլեգին, ցնցող աղաղակով զինվորները առաջ նետվեցին Ռոմաշովի հետևից։ Ամեն ինչ իրար խառնվեց, ծխով պատվեց, գլորվեց դեպի ինչ-որ անդունդ։ Հակառակորդի շարքերը ցնցվեցին և անկանոն նահանջում են։ Իսկ նրանց հետևում, հեռուն, բլուրներից այն կողմ, արդեն շողշողում են շրջանց կատարած թարմ զորասյան սվինները։ «Ուռա՛, եղբայրնե՛ր, հաղթանա՛կ...»։

Ռոմաշովը, որ այժմ ոչ թե քայլում, այլ վազում էր, աշխուժացած թափահարելով թևերը. հանկարծ կանգ առավ և դժվարությամբ ուշքի եկավ։ Նրա հագուստի տակ, մեջքի, ձեռքերի, ոտքերի մերկ մարմնի վրայով կարծես արագ շարժվում էին մեկի սառը մատները, մազերը գլխին բիզ-բիզ էին կանգնել, աչքերը կսկծում էին ոգևորության արցունքներից։ Նա ինքն էլ չէր նկատել, թե ինչպես հասել է տուն, և հիմա, սթափվելով վառ երազներից, զարմանքով նայում էր իրեն լավ ծանոթ դարպասին, նրա հետևում թաքնված նոսր պտղատու այգուն և այգու խորքում գտնվող սպիտակ պստլիկ կողմնաշենքին։

— Բայց ի՞նչ հիմարություններ են անցնում մտքովս,— շըշընջաց նա շփոթված։ Եվ նրա գլուխը երկչոտությամբ թաքվեց վեր քաշած ուսերի մեջ։

3

Տուն գալով, Ռոմաշովը, ինչպես կար, վերարկուով, նույնիսկ առանց թուրն արձակելու, պառկեց մահճակալին և երկար մնաց այդպես, անշարժ, բութ ու սևեռուն նայելով առաստաղին։ Նրա գլուխը ցավում էր և մեջքը կոտրատվում, իսկ հոգում այնպիսի ամայություն էր, կարծես այնտեղ երբեք չէր ծնվել ոչ որևէ միտք, ոչ հիշողություն, ոչ զգացմունք. չկար նույնիսկ ոչ

դրգռվածություն, ոչ ձանձրույթի զգացում, այլ ուղղակի պառկել էր ինչ-որ մեծ, մուգ ու անտարբեր մի բան։

Լուսամուտից դուրս հանգչում էր ապրիլյան թախծոտ ու քնքուշ կանաչավուն աղջամուղջը։ Հաշտում կամացուկ գործ էր անում սպասյակը, զգուշությամբ ղնգղնգացնելով ինչ-որ մետաղյա իր։

«Այ, տարօրինակ է,— մտքում ասում էր Ռոմաշովը,— մի տեղ ես կարդացել եմ, որ մարդ չի կարող ոչ մի վայրկյան չմտածել։ Իսկ ես ահա պառկել եմ և ոչ մի բանի մասին չեմ մտածում։ Այդպե՞ս է արդյոք։ Ոչ՝ ես նոր մտածում էի այն մասին, որ ոչինչ չեմ մտածում, նշանակում է, այնուհանդերձ, ուղեղումս ինչ-որ անիվ պտտվում էր։ Եվ ահա հիմա նորից ստուգում եմ ինձ, ուրեմն դարձյալ մտածում եմ»։

Եվ նա այնքան երկար քրքրեց այդ տաղտկալի, խառնաշփոթ մտքերը, մինչև որ հանկարծ գրեթե ֆիզիկական զգվանք զգաց. կարծես թե գանգի տակ տարածվել էր մի դորշ, կեղտոտ սարդոստայն, որից ոչ մի կերպ ազատվել չէր լինում։ Նա բարձրացրեց գլուխը բարձից ու կանչեց.

— Գայնա՛ն...

Հաշտում ինչ-որ բան դղրդաց ու գլորվեց, երևի ինքնաեռի խողովակն էր։ Սենյակ խուժեց սպասյակը, այնպես արագ և այնպիսի աղմուկով թացելով ու փակելով դուռը, կարծես նրան հետապնդելիս լինեին։

— Այստե՛ղ եմ, ձերդ բարեծնություն,— բղավեց Գայնանը վախեցած ձայնով։

— Պորուչիկ Նիկոլաևի կողմից ոչ ոք չի՞ եկել։

— Ոչ ոք, ձերդ բարեծնություն,— բղավեց Գայնանը։

Սպայի և սպասյակի միջև վաղուց ի վեր հաստատվել էին պարզ, դյուրավստահ, նույնիսկ փոքր-ինչ սիրագորով-տնավարի հարաբերությունները։ Բայց երբ բանը հասնում էր ծառայության պաշտոնական պատասխաններին, ինչպիսիք են՝ «ճիշտ այդպես», «բնավ ոչ», «առողջություն եմ ցանկանում», «չեմ կարող գիտենալ», ապա Գայնանը դրանք ակամա բղավում էր այն պարզ ու անարտահայտիչ, խուլ, անիմաստ ձայնով, որով միշտ զորաշարքում զինվորները խոսում են սպաների հետ։ Դա չգիտակցված սովորություն էր, որը նրա մեջ արմատացել էր նորակոչիկության առաջին օրերից և հավանաբար ամուր նստել մինչև կյանքի վերջը։

Գայնանը ծագումով չերեմիս էր, իսկ կրոնով՝ կռապաշտ։ Վերջին հանգամանքը, չգիտես ինչու, շատ էր շոյում Ռոմաշովին։ Գնդում երիտասարդ սպաների մեջ տարածված էր բավական միամիտ, տղայական, ծիծաղաշարժ մի խաղ՝ սպասյակներին զանազան արտասովոր, տարօրինակ բաներ սովորեցնելը։ Վեսկինն, օրինակ, երբ նրա մոտ հյուր էին գալիս ընկերները, սովորաբար հարց էր տալիս իր մոլդավացի սպասյակին. «Ի՞նչ է, Բուլեսկուլ, մեր նկուղում էլի շամպայն մնացե՞լ է»։ Բուլեսկուլը դրան ամենայն լրջությամբ պատասխանում էր. «Բնավ ոչ, ձերդ բարեծնություն, երեկ հաճեցիք խմել վերջին մի դյուժինը». Մի ուրիշ սպա՝ Եպիֆանովը, իր սպասյակին սիրում էր մանվածապատ, հազիվ թե իր իսկ համար հասկանալի հարցեր տալ։ «Բարեկամս, դու ի՞նչ կարծիքի ես,— հարցնում էր նա,— ժամանակակից Ֆրանսիայում միապետական սկզբունքի վերականգնման մասին»։ Եվ սպասյակը, առանց աչքը թարթելու, պատասխանում էր. «Ճիշտ այդպես, ձերդ բարեծնություն, դա շատ լավ է ստացվում»։ Պորուչիկ Բոբետինսկին իր սպասյակին սովորեցնում էր կատեխիզիսը, և նա առանց կմկմալու պատասխանում էր ամենազարմանալի, ամեն ինչից կտրված հարցերին. «Ինչո՞ւ, երրորդ՝ սույնը կարևոր է»։— «Սույնը երրորդ, կարևոր չէ», կամ՝ «Ի՞նչ կարծիքի է սույնի մասին սուրբ եկեղեցին»։— «Սուրբ եկեղեցին սույնի մասին լռում է»։ Նույն այդ սպասյակը անհեթեթ ողբերգական շարժուձևով արտասանում էր Պիմենի մենախոսությունը «Բորիս Գոդունովից»։ Տարածված էր նաև սպասյակներին ֆրանսերեն խոսել հարկադրելու սովորությունը՝ բոնժուր, մուսյո, բոն նյուիտ, մուսյո, վուլե վու դյու տե, մուսյո,— և այսպես նույն ոգով, որ հնարում էին ձանձրույթը փարատելու համար, փակ կյանքի անձկությունից, բացի պաշտոնականից՝ այլ հետաքրքրությունների բացակայությունից դրդված։

Ռոմաշովը հաճախ էր խոսում Գայնանի հետ սրա աստվածներից, որոնց մասին, ի դեպ, չերեմիսն ինքը բավական աղոտ ու աղքատիկ պատկերացում ուներ, ինչպես նաև այն մասին, թե սպասյակն ինչպես էր գահին ու հայրենիքին հավատարիմ լինելու երդում տվել։ Իսկ երդումն, իրոք որ, շատ յուրօրինակ ձևով էր տվել։ Մինչդեռ երդման բանաձևը ուղղափառների համար կարդում էր քահանան, կաթոլիկների համար՝ քյոնոնը, հրեաների համար՝ ռաբբին, բողոքականների համար՝ պաստոր չլինելու պատճառով՝ շտաբս-կապիտան Դիցը, իսկ մահմեդականների համար՝ պորուչիկ Բեկ-Աղամալովը. Գայնանի համար մի բոլորովին առանձնահատուկ պատմություն էր եղել։ Գնդի համհարզը հերթով նրան ու նրա երկու հայրենակից հավատակիցներին մեկական կտոր աղ ու հաց էր մեկնել սվինի ծայրին, և սրանք առանց հացին ձեռք տալու, շրթունքներով վերցրել և տեղն ու տեղը կերել էին։ Այդ ծիսակատարության խորհրդանշական իմաստը կարծես թե հետևյալն էր՝ ահա ես աղ ու հաց կերա նոր տիրոջ մոտ ծառայության մտնելով, թող, ուրեմն, ինձ պատժե երկաթը, եթե ես անհավատարիմ գտնվեմ։ Գայնանն, ըստ երևույթին, փոքր-ինչ պարծենում էր այդ բացառիկ ծիսակատարությամբ և հաճույքով էր պատմում դրա մասին։ Իսկ քանի որ ամեն անգամվա հետ նա պատմության մեջ մտցնում էր նորանոր մանրամասնություններ, ապա վերջ ի վերջո ստացվել էր ինչ-որ ֆանտաստիկ, անհավատալիորեն անհեթեթ և իրոք որ ծիծաղելի մի հեքիաթ, որը շափազանց զբաղեցնում էր Ռոմաշովին և նրան այցելող պոդպորուչիկներին։

Գայնանը՝ հիմա էլ կարծում էր, թե պորուչիկն իսկույն իր հետ կսկսի սովորական խոսակցությունը աստվածների և երդման մասին, ուստի կանգնել և խորամանկ ժպտում էր սպասողաբար։ Բայց Ռոմաշովը այարկոտ ասաց.

— Դե լավ... գնա բանիդ...

— Նոր սուրթուկդ պատրաստե՞մ, ձերդ բարեծնություն,— հոգատարությամբ հարցրեց Գայնանը։

Ռոմաշովը լուռ էր և տատանվում էր։ Նա ուզում էր ասել՝ այո... ապա՝ ոչ, հետո նորից այո։ Նա խոր, մանկան պես, ընդհատ-ընդհատ հոգոց հանեց և վհատ պատասխանեց.

— Էհ, չէ, Գայնան... Ինչի՞ս պետք է... աստված նրանց հետ... Արի, ախպերս, ինքնաեռը դիր, իսկ հետո վազ կտաս ակումբ ընթրիք բերելու։ Էլ ի՞նչ։

«Այսօր դիտմամբ չեմ գնա,— համառ, բայց անզոր մտածեց նա։— Անհնար է ամեն օր մարդկանց զահլան տանել և... կարծես այնտեղ իսկի ուրախ էլ չեն իմ այցելությունների համար»։

Մտքում այդ որոշումը կարծես թե հաստատ էր, բայց հոգում, գաղտնի ու խոր մի տեղ, գրեթե առանց գիտակցության մեջ թափանցելու, խլրտում էր այն համոզմունքը, որ ինքը այսօր, ինչպես և երեկ, ինչպես այդ անում էր գրեթե ամեն օր վերջին երեք ամսվա ընթացքում, այնուամենայնիվ կգնա Նիկոլաևների տուն։ Ամեն օր նրանց տնից դուրս գալով գիշերվա

ժամը տասներկուսին, ամաչելով ու զայրանալով սեփական թուլամտության վրա, նա իրեն ազնիվ խոսք էր տալիս բաց թողնել մի կամ երկու շաբաթ, կամ նույնիսկ բոլորովին դադարել նրանց հաճախելուց։ Եվ մինչ նա գնում էր իր տուն, մինչ անկողին էր մտնում, մինչ քնում էր, նա հավատում էր, որ իր համար հեշտ կլինի իր խոսքին հաստատ մնալը։ Բայց գիշերն անցնում էր, դանդաղ ու զզվելիորեն ձգվում էր օրը, իջնում էր երեկոն, և դարձյալ անդիմադրելի մի ուժ նրան ձգում էր դեպի այդ մաքուր, լուսավոր տունը, հարմարավետ սենյակները, դեպի այդ հանդարտաբարո և ուրախ մարդիկ և, գլխավորը, դեպի կանացի գեղեցկության, փաղաքշանքի ու կոկետության քաղցր թովչանքը։

Ռոմաշովը նստեց մահճակալին։ Մթնում էր, բայց նա դեռ շատ լավ տեսնում էր իր ամբողջ սենյակը։ Օ, ինչպե՜ս նա ձանձրացել էր ամեն օր իր «կահավորանքի» նույն աղքատիկ սակավաթիվ իրերը տեսնելուց։ Պստիկ գրասեղանին՝ վարդագույն կակաչաձև թասակ-լուսամփոփով լամպ, որ դրված էր կլոր, արագ թրկթրկացող զարթուցիչի և շնիկաձև թանաքամանի կողքին, մահճակալի երկայնքով թաղիքե գորգ, որի վրա պատկերված է մի վագր և նիզակով զինված հեծյալ մի արաբ. սենյակի մի անկյունում խարխով մի գրքակալ՝ վրան գրքեր, մյուս անկյունում՝ թավջութակի պատյանի ֆանտաստիկ ուրվագիծը. միակ լուսամուտի վերև գլանաձև փաթաթած ծղոտե վարագույր, դռան մոտ՝ մի սավան, որ ծածկել է կախարանը զգեստներով հանդերձ։ Ամեն մի ամուրի սպա, ամեն մի պոդպրապորշչիկ անփոփոխ կերպով ուներ ճիշտ նույնպիսի իրեր, թավջութակի բացառությամբ միայն. Ռոմաշովը դա վերցրել էր գնդի նվագախմբից, որտեղ բոլորովին դրա կարիքը չէր զգացվում, բայց առանց գոնե մի մաժոր գամմա սերտելու, մի կողմ թողեց և՛ թավջութակը, և՛ երաժշտությունը դեռևս մի տարի առաջ։

Մի տարուց քիչ ավելի առաջ Ռոմաշովը, հենց նոր դուրս գալով զինվորական ուսումնարանից, հաճույքով ու հպարտությամբ էր ձեռք բերում այդ գռեհկաճաշակ իրերը։ Իհարկե, իր բնակարանը, սեփական իրերը իր հայեցողությամբ գնելու, ընտրելու, իր ճաշակով սարքվելու հնարավորությունը, այդ ամենը ինքնասեր խանդավառությամբ էր լցնում քսանամյա պատանու հոգին, պատանի, որ դեռ երեկ աշակերտական սեղանի առաջ էր նստում և ընկերների հետ շարք կանգնած էր գնում թեյի ու

նախաճաշի։ Եվ որքա՜ն շատ ծրագրեր ու հույսեր ուներ այն ժամանակ, երբ գնվում էին պերճանքի այդ խղճուկ առարկաները... Կյանքի ինչպիսի՜ խիստ ծրագիր էր նախանշվում։ Առաջին երկու տարում հիմնավոր ծանոթացում դասական գրականության հետ, ֆրանսերեն ու գերմաներեն լեզուների սիստեմատիկ ուսումնասիրություն, երաժշտությամբ զբաղվելը։ Վերջին տարին նախապատրաստվել ակադեմիայի համար։ Անհրաժեշտ էր հետևել հասարակական կյանքին, գրականությանը և գիտությանը, դրա համար էլ Ռոմաշովը բաժանորդագրվեց թերթի և հանրամատչելի ամսագրի։ Ինքնազարգացման համար ձեռք էին բերվել՝ Վունդտի «Հոգեբանությունը», Լյուիսի «Ֆիզիոլոգիան», Սմայլսի «Ինքնագործունեությունը»....

Եվ ահա արդեն ինը ամիս է գրքերը դարսված են գրքակալին, և Գայնանը մոռանում է սրբել նրանց վրայի փոշին, լրագրերը չբացած փաթեթներով թափված են գրասեղանի տակ, ամսագիրը այլևս չեն ուղարկում հերթական կիսամյա վճարը չմուծելու պատճառով, իսկ պոդպորուչիկ Ռոմաշովն ինքը շատ օրի է խմում ակումբում, երկարատև, կեղտոտ ու ձանձրալի կապ ունի գնդի մի տիկնոջ հետ, որի հետ միասին խաբում է նրա թոքախտավոր ամուսնուն, շտոս է խաղում և ավելի ու ավելի շատ է նեղվում ծառայությունից, ընկերներից. ու սեփական կյանքից։

— Ներեցեք, ձերդ բարեծնություն,— բղավեց սպասյակը, հանկարծ աղմուկով ներս ընկնելով հաշտից։ Բայց իսկույն էլ սկսեց խոսել բոլորովին այլ, հասարակ, բարեհոգի եղանակով.— Մոռացա ասել։ Քեզ տիրուհի Պետերսոնից նամակ է եկել։ Սպասյակը բերեց, պատվիրեց, որ պատասխան գրես։

Ռոմաշովը կնճռոտվելով պատռեց երկար, նեղ վարդագույն ծրարը, որի անկյունում թռչում էր կտուցին նամակ բռնած մի աղավնի։

— Լամպը վառիր, Գայնան,— հրամայեց նա սպասյակին։

«Սիրելի, թանկագին, բեղիկավոր ծորժիկ,— կարդում էր Ռոմաշովը իրեն լավ ծանոթ ցած սահող, փնթի տողերը։— Ահա արդեն մի ամբողջ շաբաթ է դու մեզ մոտ չես եղել, և ես քեզ էնպես եմ կարոտել, որ անցյալ ամբողջ գիշեր լաց լինելով եմ անցկացրել։ Հիշիր մի բան, որ եթե ուզում ես վրես ծիծաղես, ես էդ դավաճանությանդ չեմ դիմանա. Մորֆիի սրվակից մի կում և ես հավիտյան կդադարեմ տանջվելուց, իսկ քեզ խիղճդ կկրծի։ Ան-

պայման եկ այսօր երեկոյան 7½-ին։ Նա տանը չի լինի, գնացել է տակտիկական պարապմունքների և ես քեզ պինդ, պինդ, պինդ կպաչպչեմ, ինչ որ կարողանամ։ Դե արի։ Համբուրում եմ քեզ 1 000 000 000... անգամ։

Ամբողջովին քո Ֆաֆա։

P. S. Սիրելիս, ասա, հիշո՞ւմ ես արդյոք
Ճյուղերն ուռենու՝ թափված այս շրին,
Դու համբույր էիր ինձ տալիս անհոգ,
Իմն էի թողնում ես քո շրթներին։

P. P. S. Դուք անպայման, անպայման պետք է լինեք ակումբում հաջորդ շաբաթ օրվա երեկույթին։ Ես ձեզ վաղօրոք հրավիրում եմ երրորդ կադրիլին։ Հատուկ նշանակությա՞մբ...

R. P.»

Եվ վերջապես չորրորդ էջի ամենաներքևում պատկերված էր հետևյալը՝

Ես այստեղ համբուրել եմ

Նամակից ծանոթ օծանելիքի՝ պարսկական եղրևանու հոտ էր գալիս. այդ օծանելիքի կաթիլները թղթի վրա տեղ-տեղ չորացել էին դեղին բծերով, և դրանց տակ շատ տառեր ճապաղել էին։ Այդ քաղցր-մեղցր հոտը նամակի գռեհկավարի-խաղլիկ տոնի, երևակայության մեջ ծագած շիկամազ, փոքրիկ, կեղծ դեմքի հետ միասին Ռոմաշովի մեջ հանկարծ անտանելի զզվանք առաջացրեց։ Նա չար վայելքով նամակը երկու կես արեց, ապա ծալեց և պատռեց չորս մասի, և ապա նորից ու նորից, երբ վերջապես մատների համար դժվար դարձավ պատառոտելը, թղթի մանր պատառները նետեց սեղանի տակ, ատամները պինդ սեղմելով ու կրճտացնելով։ Եվ այկուամենայնիվ Ռոմաշովը այդ վայրկյանին հասցրեց իր սովորության համաձայն իր մասին մտածել պատկերավոր, երրորդ դեմքով.

«Եվ նա քրքջաց դառն, արհամարհական ծիծաղով»։

Դրա հետ մեկտեղ նա անմիջապես հասկացավ, որ անպայման կգնա Նիկոլաևների տուն։ «Բայց սա արդեն ամենա, ամենավերջին անգամ»,— փորձում էր խաբել նա ինքն իրեն։ Եվ անմիջապես ուրախացավ ու հանդարտվեց։

— Գայնան, շորերս։

Նա անհամբեր լվացվեց, հագավ նոր բաճկոնը, մաքուր թաշկինակն օծեց ծաղկաջրի օծանելիքով։ Բայց երբ նա արդեն բոլորովին հագնված, պատրաստվում էր դուրս գալու, նրան անսպասելիորեն կանգնեցրեց Գայնանը։

— Ձերդ բարեծնություն,— ասաց չերեմիսը արտասովոր փափուկ ու աղաչական եղանակով և հանկարծ սկսեց տեղում պարել։

Նա միշտ այդպես պարում էր, երբ խիստ հուզվում կամ ամաչում էր որևէ բանից, առաջ՝ էր տանում մերթ մի, մերթ մյուս ծունկը, շարժում ուսերը, ձգում և ուղղում էր վիզը և ջղայնորեն շարժում ցած թողած ձեռքերի մատները։

— Ի՞նչ ես ուզում։

— Ձերդ բարեծնություն, ուզում՝ եմ քեզ, խնդրվում եմ, շատ աղաչել։ Ինձ նվիրիր սպիտակ պարոն։

— Ի՞նչ։ Ի՞նչ սպիտակ պարոն։

— Էն որ հրամայեցիր դուրս գցել։ Հրես սա, հրես...

Նա մատով ցույց տվեց վառարանի ետևը, որտեղ հատակին դրված էր Պուշկինի կիսանդրին, որ Ռոմաշովը մի անգամ գնել էր այստեղ եկած գրավաճառից։ Այդ կիսանդրին, որ, ի դեպ, հակառակ իր վրայի մակագրությանը, պատկերում էր ոչ թե ռուս մեծ բանաստեղծին, այլ մի ծեր հրեա մակլերի, այնպես այլանդակ էր քանդակված, այնպես էր ծածկված ճանճերի կեղտով և այնքան էր Ռոմաշովի զահլան տարել, որ նա իրոք օրերս կարգադրել էր դուրս գցել դա։

— Քո ինչի՞ն է պետք,— հարցրեց պոդպորուչիկը ծիծաղելով։— է, վերցրու, խնդրեմ, վերցրու։ Ես շատ ուրախ եմ։ Ինձ հարկավոր չէ։ Միայն թե քո ինչի՞ն է պետք։

Գայնանը լուռ էր և ոտքերն էր փոխում։

— Դե լավ, աստված քեզ հետ,— ասաց Ռոմաշովը։— Բայց դու գիտե՞ս, թե ով է սա։

Գայնանը փաղաքշորեն ու ամոթխած ժպտաց և սկսեց առաջվանից ուժեղ պարել։

— Ես չգիտես...— Եվ թևքով սրբեց շրթունքները։

— Չգիտես, դե ուրեմն գիտցիր։ Սա Պուշկինն է։ Ալեքսանդր

Սերգեևիչ Պուշկինը։ Հասկացա՞ր։ Կրկնիր իմ հետևից Ալեքսանդր Սերգեևիչ...

— Բեսիև,— վճռականորեն կրկնեց Գայնանը։

— Բե՞սիև. դե, թող լինի Բեսիև,— համաձայնեց Ռոմաշովը։— Բայց ես գնացի։ Եթե Պետերսոններից մարդ կգա, կասես, որ պոդպորուչիկը գնաց, բայց թե ուր՝ հայտնի չէ։ Հասկացա՞ր։ Իսկ եթե պաշտոնական մի բան կլինի, վազ տուր իմ հետևից պորուչիկ Նիկոլաևի տուն։ Ցտեսություն, ախպերս... Ակումբից վերցրու իմ ընթրիքը և կարող ես ուտել։

Նա մտերմաբար խփեց չերեմիսի ուսին, որը ի պատասխան լուռ ժպտաց Ռոմաշովին սրտաբաց, ուրախ ու ընտանեվարի։

4

Դուրսը բոլորովին սև, անթափանց գիշեր էր, այնպես որ սկզբում Ռոմաշովը ստիպված էր կույրի նման շոշափել ճանապարհը։ Հսկայական կրկնակոշիկները հագած նրա ոտքերը խոր խրվում էին ռահաթլոխումի պես թանձր ցեխի մեջ և այնտեղից դուրս գալիս սուլոցով ու շլմփոցով։ Երբեմն կրկնակոշիկներից մեկը այնքան խորն էր խրվում, որ ոտքը նրանից դուրս էր թռչում, և այդ ժամանակ Ռոմաշովը ստիպված էր, մի ոտքի վրա հավասարակշռությունը պահպանելով, մյուս ոտքով խավարում ենթադրաբար որոնել անհայտացած կրկնակոշիկը։

Ավանը ասես մեռած լիներ, նույնիսկ շները չէին հաչում։ Ցածրիկ սպիտակ տների լուսամուտներից տեղ-տեղ մշուշոտ ուղիղ շերտերով ցոլում էր լույսը և երկար շեղ զոլերով ընկնում դեղնաթուխ փայլուն հողի վրա։ Բայց թաց ու լպրծուն ցանկապատերից, որոնց երկայնքով ամբողջ ժամանակ անցնում էր Ռոմաշովը, բարդիների խոնավ բներից, ճանապարհի ցեխից փչում էր ինչ-որ գարնանային, սուր, երջանիկ բույր, ինչ-որ ուրախ և անգիտակցաբար գրգռող բան։ Նույնիսկ ուժեղ քամին, որ սուրում էր փողոցներով, փչում էր անհավասար, պոռթկումներով, ասես ցնցվելով, շշկվելով ու կատակելով, ինչպես լինում է գարնանը։

Նիկոլաևների զբաղեցրած տան առաջ պոդպորուչիկը կանգ առավ՝ համախված վայրկենական թուլությամբ ու երկընտրանքով։ Փոքրիկ լուսամուտները ծածկված էին դարչնագույն թանձր վարագույրներով, բայց նրանց հետև զգացվում էր հավասար

պայծառ լույսը։ Մի տեղ վարագույրը ծալվել էր, գոյացնելով երկար, նեղ մի ճեղք։ Ռոմաշովը գլուխը կպցրեց ապակուն, հուզվելով ու ջանալով որքան կարելի է կամաց շնչել, կարծես նրան կարող էին լսել սենյակում։

Պոդպորուչիկը տեսավ Ալեքսանդրա Պետրովնայի դեմքն ու ուսերը. նա խոր և փոքր-ինչ կռացած նստել էր կանաչ ոիպսով պատած ծանոթ գահավորակին։ Այդ դիրքից, մարմնի թեթև շարժումներից, ցած խոնարհած գլխից երևում էր, որ նա ձեռագործով է զբաղված։

Ահա նա հանկարծ շտկվեց, գլուխը բարձրացրեց և խոր շունչ քաշեց... Նրա շրթունքները շարժվում են... «Ի՞նչ է ասում,— մտածեց Ռոմաշովը։— Ահա ժպտաց։ Ինչ տարօրինակ բան է, լուսամուտից նայել խոսող մարդուն, և չլսել, թե նա ինչ է ասում»։

Ժպիտը հանկարծ չքացավ Ալեքսանդրա Պետրովնայի դեմքից, ճակատը մռայլվեց։ Նորից արագ, համառ արտահայտությամբ շարժվեցին շրթունքները, և հանկարծ նորից ժպիտ՝ շարաճճի ու ծաղրական։ Ահա գլուխը տարուբերեց դանդաղ ու բացասաբար։ «Գուցե այդ ի՞մ մասին է»,— անվստահ մտածեց Ռոմաշովը։ Ինչ-որ խաղաղ, մաքուր, անհոգ հանդարտություն էր բուրում այդ երիտասարդ կնոջից, որին ինքը ուշադիր դիտում էր հիմա, որ կարծես նկարված լիներ ինչ-որ կենդանի, սիրելի, վաղուց ծանոթ պատկերի վրա։ «Շուրոչկա»,— քնքշորեն շշնջաց Ռոմաշովը։

Ալեքսանդրա Պետրովնան դեսքը անակնկալ բարձրացրեց աշխատանքից և արագ, տագնապալի արտահայտությամբ շրջեց դեպի լուսամուտը։ Ռոմաշովին թվաց, թե նա ուղիղ իր աչքերին է նայում։ Վախից նրա սիրտը կծկվեց ու սառեց, և նա արագ ետ ցատկեց ու թաքնվեց պատի ցցվածքի հետև։ Մի րոպե նա ամաչեց։ Արդեն գրեթե պատրաստ էր տուն վերադառնալու, բայց հաղթահարեց ինքն իրեն ու պարտեզի դռնակն անցնելով, մտավ խոհանոց։

Մինչ Նիկոլաևների սպասյակը հանում էր նրա ցեխոտ կրկնակոշիկները և խոհանոցի լաթով կոշիկները մաքրում, իսկ ինքը թաշկինակով սրբում էր շոգից քրտնած ակնոցի ապակիները, կիպ մոտեցնելով կարճատես աչքերին, հյուրասենյակից լսվեց Ալեքսանդրա Պետրովնայի զրնգուն ձայնը.

— Ստեպան, հրամա՞ն են բերել։

«Այդ նա դիտմամբ է ասում,— կարծես ինքն իրեն պատժելով, մտածեց պոդպորուչիկը։— Ախր գիտե, որ ես միշտ այս ժամանակ եմ գալիս»։

— Ոչ, այդ ես եմ, Ալեքսանդրա Պետրովնա,— կեղծ ձայնով բղավեց նա դեպի դուռը։

— Ա՜, Ռոմաշովն է։ Դե, մտեք։ Ի՞նչ եք կպել-մնացել այդտեղ։ Վոլոդյա, Ռոմաշովն է եկել։

Ռոմաշովը մտավ, շփոթված ու ամոթխած կծկվելով և ձեռքերը անհարկի շփելով։

— Պատկերացնում եմ, թե ինչպես եմ ձեզ ձանձրացրել, Ալեքսանդրա Պետրովնա։

Նա այդ ասաց, ենթադրելով, որ կստացվի ուրախ և անփույթ, բայց ստացվեց անհարմար և, ինչպես նրան անմիջապես թվաց, սարսափելի անբնական։

—Էլի՛ հիմարություններ եք ասում,— բացականչեց Ալեքսանդրա Պետրովնան։— Նստեք, թեյ խմենք։

Ուշադիր ու պարզ նայելով նրա աչքերին, սովորականի պես, Ալեքսանդրա Պետրովնան իր փոքրիկ, տաք ու փափուկ ձեռքով եռանդուն սեղմեց նրա սառը ձեռքը։

Նիկոլաևը նստել էր մեջքը նրանց կողմն արած՝ գրքերով, ատլասներով ու ծծաղրերով ծանրաբեռնված սեղանի առաջ։ Նա այս տարի պետք է քննություն հանձներ գլխավոր շտաբի ակադեմիան մտնելու համար և ամբողջ տարին համառորեն, առանց հանգստի պատրաստվում էր դրան։ Դա արդեն երրորդ քննությունն էր, քանի որ երկու տարի իրար հետևից կտրվել էր։

Առանց ետ շրջվելու, նայելով իր առջևի բաց գրքին, Նիկոլաևը ուսը վրայով ձեռքը մեկնեց Ռոմաշովին և հանդարտ, թավ ձայնով ասաց.

— Բարև ձեզ, Յուրի Ալեքսեևիչ։ Նորություն չկա՞։ Շուրոչկա, թեյ տուր նրան։ Ինձ ներեցեք, ես զբաղված եմ։

«Իհարկե, զուր տեղը եկա,— նորից հուսահատությամբ մտածեց Ռոմաշովը։— Օ, հիմար եմ ես»։

— Չէ, ի՞նչ նորություն... Յենտավրը[1] ակումբում փոխգնդապետ Լեխի գլուխը մի լավ լվացել է։ Ասում են սա բոլորովին հարբած է եղել։ Ամենուրեք վաշտերում պահանջում են խրտվիլակների թրատում... Եպիֆանին ձերբակալել հրամայեց։

— Հա՞, — ցրված ասաց Նիկոլաևը։— Ասացե՛ք խնդրեմ։

— Ինձ էլ բաժին ընկավ, չորս օրով... Մի խոսքով, հին նորություններ են։

Ռոմաշովին թվում էր, թե իր ձայնն այնքան օտար է և այնպես ընկճված, կարծես կոկորդին մի բան դեմ առած լինի։ «Ո՞վ գիտի որքան խղճուկ եմ թվում»,— մտածեց նա, բայց իսկույն էլ ինքն իրեն հանգստացրեց սովորական եղանակով, որին հաճախ դիմում են ամաչկոտ մարդիկ. «Ախր միշտ, երբ շփոթվում ես, կարծում ես, թե բոլորը տեսնում են այդ, այնինչ իսկապես միայն դու ես նկատում, իսկ ուրիշները իսկի էլ չէ»։

Նա նստեց բազկաթոռին Շուրոչկայի մոտ, որը, արագ շարժելով հելունը, ինչ-որ ժանյակ էր գործում։ Նա երբեք անգործ չէր նստում. տանը բոլոր սփոռոցները, անձեռոցիկները, լուսամփոփներն ու վարագույրները գործված էին նրա ձեռքով։

Ռոմաշովը մատներով զգուշությամբ բռնեց կծիկից դեպի Շուրոչկայի ձեռքը ձգվող թելը և հարցրեց.

— Ինչպե՞ս է կոչվում այս գործվածքը։

— Գիպյուր։ Դուք տասներորդ անգամն եք հարցնում։

Շուրոչկան հանկարծ արագ, ուշադիր նայեց պոդպորուչիկին և նույնպես արագ աչքերը ցած թողեց ձեռագործին։ Բայց անմիջապես նորից բարձրացրեց ու ծիծաղեց։

— Դե ոչինչ, Յուրի Ալեքսեևիչ... Նստեցեք և մի քիչ կարգի ընկեք։ «Կա՛ր-գի՛»— ինչպես հրաման են արձակում ձեզ մոտ։

Ռոմաշովը հոգոց հանեց և խեթ նայեց Նիկոլաևի հուժկու վզին, որը շեշտված սպիտակին էր տալիս նրա գորշ բաճկոնի օձիքի վրա։

— Երջանիկ մարդ է Վլադիմիր Եֆիմիչը,— ասաց նա։— Ամառը Պետերբուրգ կգնա .. Ակադեմիա կընդունվի։

— Էհ, այդ դեռ կտեսնենք,— ամուսնու հասցեին հանդուգն չարաճճիությամբ բացականչեց Շուրոչկան։— Երկու անգամ խայտառակված վերադարձել ենք գունդ։ Սա արդեն վերջին անգամը կլինի։

Նիկոլաևը ետ շրջվեց։ Նրա թավ բեղերով մարտաշունչ ու բարի դեմքը կարմրեց, իսկ խոշոր, մուգ, եզան աչքերը բարկացած փայլատակեցին։

— Հիմար բաներ դուրս մի տուր, Շուրոչկա։ Ես ասացի՝

[1] Յենտավր—կենտավր— հեքիաթային արարած, կիսամարդ, կիսաձի (անտիկ դից.)։

քննություն կբռնեմ, և կբռնեմ։— Նա ափի եզրով ուժեղ թրխկացրեց սեղանին։— Դու հենց նստել ու կռավում ես։ Ես ասե՛լ եմ...

— Ես ասե՛լ եմ,— տնազ արեց կինը և նույնպես, ինչպես ամուսինը, իր փոքրիկ, թուխ ձեռքի ափը խփեց ծնկանը։— Իսկ դու ավելի լավ է ասես՝ ի՞նչ պայմանների պետք է բավարարի զորամասի մարտական կարգը։ Գիտե՞ք,— նա աչքերով ժիր ու խորամանկ ժպտաց Ռոմաշովին,— ախր ես նրանից լավ գիտեմ տակտիկան։ Դե ասա՛, Վոլոդյա՝ գլխավոր շտաբի սպա, ի՞նչ պայմանների։

— Հիմար բաներ ես ասում, Շուրոչկա, վերջ տուր,— դժգոհ փնթփնթաց Նիկոլաևը։

Բայց հանկարծ աթոռի հետ միասին նա շրջվեց դեպի կինը, և նրա լայն բացված գեղեցիկ ու հիմարավուն աչքերում երևաց շփոթված տարակուսանք, գրեթե վախ։

— Կաց, առջիկ, բայց ախր իսկապես էլ ես ամեն ինչ չեմ հիշում։ Մարտական կա՞րգը։ Մարտակարգը այնպես պետք է դասավորված լինի, որ հնարավորին չափ քիչ կորուստ տա կրակից, հետո, որ հարմար լինի հրաման տալը... հետո... կաց...

— Նենալու համար փող են վճարում,— հաղթականորեն ընդհատեց Շուրոչկան։

Եվ նա սկսեց արագախոսությամբ, ինչպես առաջին աշակերտուհի, կոպերը ցած թողնելով ու տարուբերվելով։

— Մարտական կարգը պետք է բավարարի հետևյալ պայմաններին. դյուրադարձությանը, շարժունակությանը, ճկունությանը, հրամանատվությանը, տեղանքին հարմարվելուն... Նա հնարավորին չափ քիչ պետք է տուժի կրակից, հեշտությամբ ամփոփվի ու բացազատվի և արագ անցնի երթային կարգի... Ահա բոլորը...

Նա աչքերը բացեց, դժվարությամբ շունչը ետ բերեց և, ծիծաղկոտ, աշխույժ դեմքը շրջելով դեպի Ռոմաշովը, հարցրեց.

— Լա՞վ էր։

— Գրո՛ղը տանի, ի՞նչ հիշողություն է,— նախանձով, բայց և հիացած ասաց Նիկոլաևը, խորասուզվելով իր տեսերների մեջ։

—Ախր մենք ամեն ինչ միասին ենք անում,— պարզաբանեց Շուրոչկան։— Ես թեկուզ հենց հիմա քննություն կբռնեի։ Ամենագլխավորը,— նա հելունով հատեց օդը,— ամենագլխավորը սիստեմն է։ Մեր սիստեմը իմ գյուտն է, իմ հպարտությունը։ Ամեն օր մենք անցնում ենք մի հատված մաթեմատիկայից, մի

հատված ռազմական գիտելիքներից. հրետանին, ճիշտ է, ինձ չի հաջողվում, ամբողջը ինչ-որ զզվելի բանաձևեր են, առանձնապես բալլիստիկայում,— հետո մի փոքրիկ հատված կանոնագրություններից։ Ապա մի օր անց երկու լեզուները, իսկ մի օր էլ անց՝ աշխարհագրությունն ու պատմությունը։

— Իսկ ռուսերե՞նը,— քաղաքավարությունից դրդված հարցրեց Ռոմաշովը։

— Ռուսերե՞նը։ Այդ դատարկ բան է։ Գրոտի ուղղագրությունը մենք արդեն հաղթահարել ենք։ Իսկ շարադրությունները, ախր հայտնի է, թե ինչ են։ Ամեն տարի միևնույն բաները։ «Para pacem, para bellum»[1]։ «Օնեգինի բնութագիրը, կապված նրա ժամանակաշրջանի հետ»...

Եվ հանկարծ, աշխուժանալով, պոդպորուչիկի ձեռքից խլելով թելը, կարծես նրա համար, որ վերջինիս ուշադրությունը ոչ մի բան չցրեր, Շուրոչկան կրքոտությամբ սկսեց խոսել այն մասին, թե ինչն էր կազմում իր ներկա կյանքի ամբողջ շահագրգռությունը, ողջ էությունը։

— Ես չե՞մ կարող, չեմ կարող այստեղ մնալ, Ռոմոչկա։ Հասկացե՛ք ինձ։ Այստեղ մնալ, նշանակում է հետադիմել, դառնալ գնդի տիկին, հաճախել ձեր վայրենի երեկույթները, բամբասել, ինտրիգներ լարել ու շարանալ՝ զանազան օրապարենների, փոխադրավարձերի... ինչ-որ կոպեկների համար... բրոռ... բարեկամուհիների հետ հերթով սարքել այդ գռեհկաճաշակ «պարահանդեսիկները», վինտ խաղալ... Ահա, դուք ասում եք, թե մեզ մոտ հաճելի է։ Բայց ախր նայեցեք, ի սեր աստծո, այս քաղքենիական բարեկեցությանը։ Այս ֆիլեներն ու գիպյուրները՝ սրանք ես ինքս եմ գործել, այս զգեստը, որ ինքս եմ ձևափոխել, այս գարշելի, կտորտանքից պատրաստած խավոտ գորգը... այս ամենը նողկանք է, նողկանք։ Հասկացեք ախր, սիրելի Ռոմոչկա, որ ինձ պետք է հասարակություն, մեծ, իսկական հասարակություն, լույս, երաժշտություն, երկրպագություն, նուրբ շողոքորթություն, խելացի զրուցակիցներ։ Դուք գիտեք, Վոլոդյան հանճարեղ գյուտարար չէ, բայց նա ազնիվ, համարձակ, աշխատասեր մարդ է։ Թող միայն նա անցնի գլխավոր շտաբ և, երդվում եմ, ես նրա համար փայլուն կարիերա կապահովեմ։ Ես լեզուներ գիտեմ, ես կարող եմ ինձ պահել ինչպիսի հասարակության մեջ

[1] Եթե ուզում ես խաղաղություն, պատրաստվիր պատերազմի (լատ.)։

կուղեք, իմ մեջ կա, չգիտեմ ինչպես արտահայտվեմ, կա հոգու այնպիսի ճկունություն, որ ամեն տեղ կկարողանամ ինձ պահել, ամեն ինչի հարմարվել... Վերջապես, Ռոմոչկա, նայեցեք ինձ, ուշադիր նայեցեք։ Մի՞թե ես այնքան անհետաքրքիր եմ որպես մարդ և կնոջ պես որպես կին, որ ամբողջ կյանքս թթվեմ այս ետ ընկած անկյունում, այս զզվելի ավանում, որը չի նշված ոչ մի աշխարհագրական քարտեզի վրա։

Եվ նա, դեմքը հապճեպ ծածկելով թաշկինակով, հանկարծ լաց եղավ շար, ինքնասեր, հպարտ արցունքներով։

Ամուսինն անհանգստացած, տարակուսած ու շփոթված դեմքով անմիջապես վազեց դեպի նա։ Բայց Շուրոչկան արդեն կարողացել էր ինքն իրեն տիրապետել և թաշկինակը ետ տարավ դեմքից։ Արցունքներ այլևս չկային, թեև աչքերը դեռ փայլատակում էին շար, մոլի կրակով։

— Ոչինչ, Վոլոդյա, ոչինչ, սիրելիս,— ձեռքով ետ վանեց նա ամուսնուն։

Եվ, արդեն ծիծաղկոտ դիմելով Ռոմաշովին ու նորից թելը խլելով նրա ձեռքից, հարցրեց քմահաճ ու նազանի ծիծաղով.

— Դե պատասխանեք, անճարակ Ռոմոչկա, ես սիրո՞ւն եմ, թե ոչ։ Եթե կինն ինքը աշխատում է հաճոյախոսություն կորզել, նրան չպատասխանելը ծայրահեղ անքաղաքավարություն է։

— Շուրոչկա, ինչպե՞ս չես ամաչում,— իր տեղից խելամտորեն ասաց Նիկոլաևը։

Ռոմաշովը տառապալից-ամոթխած ժպտաց, բայց հանկարծ պատասխանեց մի քիչ դողացող ձայնով, լուրջ ու տխրագին.

— Շա՜տ գեղեցիկ եք...

Շուրոչկան ամուր փակեց աչքերը և չարաճճի ցնցեց գլուխը, այնպես որ քանդված մազերը ցատկոտեցին նրա ճակատին։

— Ռո՜մոչկա, ինչ ծիծաղելին եք,— երգեց նա մանկական բարալիկ ձայնով։

Իսկ պոդպորուչիկը, կարմրելով, ըստ սովորականի մտածեց իր մասին. «Նրա սիրտը դառնորեն խոցվեց...»։

Բոլորը լռեցին։ Շուրոչկայի ձեռքին արագ փայլփլում էր հելունը։ Վլադիմիր Եֆիմովիչը, որ Տուսսենի և Լանգենշեյդտի ինքնուսույցից նախադասություններ էր թարգմանում գերմաներեն, քթի տակ կամացուկ մրմնջում էր բառերը։ Լսվում էր, թե ինչպես էր ճարճատում ու ֆշշում կրակը վրանաձև դեղին մետաքսե լուսամփոփով ծածկած լամպի մեջ։ Ռոմաշովը նորից ձեռքն առավ թելը և կամացուկ, իր համար իսկ հազիվ նկատելի ձգում էր դա ջահել կնոջ ձեռքից։ Նրան նրբին ու քնքուշ հաճույք էր պատճառում զգալ, թե ինչպես Շուրոչկայի ձեռքերը անգիտակցաբար դիմադրում էին իր զգույշ ջանքերին։ Թվում էր, թե մի խորհրդավոր, կապող և հուզող հոսանք էր անցնում այդ թելի միջով։

Միաժամանակ նա կողքանց, աննկատելի, բայց աննահանջ նայում էր Շուրոչկայի ցած խոնարհված գլխին և մտածում, հազիվ շարժելով շրթունքները, բառերն արտասանելով մտքում, անձայն շշուկով, ասես Շուրոչկայի հետ մտերմիկ և զգայական զրույց վարելիս լիներ.

«Որքա՜ն համարձակ հարցրեց նա՝ արդյոք սիրո՞ւն եմ ես։ Օ՜, դու սքանչելի ես։ Սիրելի՜ս։ Ահա ես նստել ու նայում եմ քեզ՝ ինչպիսի՜ երջանկություն։ Լսիր, ուրեմն. ես քեզ կպատմեմ, թե ինչպես գեղեցիկ ես դու։ Լսիր։ Գունատ ու թուխ է քո դեմքը։ Կրքոտ դեմքը։ Եվ այդ դեմքիդ կարմիր, վառվող շուրթեր կան. ինչպե՞ս համբուրելիս կլինեն այդ շուրթերը, և աչքերը՝ դեղնավուն ստվերով շրջանակված... Երբ դու նայում ես ուղիղ, աչքերիդ սպիտակուցները մի փոքր կապտավուն են, իսկ խոշոր բիբերումդ պղտոր, խորունկ կապուտակն է։ Դու սևահեր չես, բայց քո մեջ ինչ-որ գնչուական բան կա։ Բայց, փոխարենը, քո մազերն այնքան մաքուր են ու բարակ և ծուծրակիդ վրա այնքան կանոնավոր, միամիտ ու գործնական արտահայտությամբ են հավաքված, որ մարդ ուզում է մատներով կամացուկ դիպչել դրանց։ Դու փոքրիկ ես, թեթև. ես քեզ մանկան պես կառնեի ձեռքերիս։ Բայց դու ճկուն և ուժեղ ես, քո կուրծքը կուսական է, դու ամբողջովին պոռթկուն ես, շարժուն։ Զախ ականջիդ, ցածում, մի փոքրիկ սև խալ ունես, կարծես ականջօղի հետք լինի. դա սքանչելի է...»։

— Դուք լրագրում չե՞ք կարդացել սպաների մենամարտի մասին,— հանկարծ հարցրեց Շուրոչկան։

Ռոմաշովը ցնցվեց, դժվարությամբ աչքերը կտրելով նրանից։

— Ոչ, չեմ կարդացել։ Բայց լսել եմ։ Ի՞նչ կա որ։

— Իհարկե, սովորության համաձայն, դուք ոչինչ չեք կարդում։ Ճշմարիտ, Ցուրի Ալեքսեևիչ, դուք փնթիանում եք։ Իմ կարծիքով, մի անհեթեթ բան է ստացվել։ Ես հասկանում եմ՝ մենամարտը սպաների միջև անհրաժեշտ ու խելամիտ բան է,— Շուրոչկան համոզված՝ կրծքին սեղմեց ձեռագործը։— Բայց

այդպիսի անտակտության ի՞նչ հարկ կա։ Հապա մտածեր. մի պորուչիկ-վիրավորել է մյուսին։ Վիրավորանքը ծանր է, և սպաների միությունը մենամարտի որոշում է կայացնում։ Բայց դրանից հետո ստացվում է մի կատարյալ հիմարություն։ Պայմաններն ուղղակի մահապատժի նման մի բան են՝ տաուհինգ քայլ հեռավորություն և մենամարտել մինչև ծանր վերք ստանալը... Եթե երկու հակառակորդն էլ ոտքի վրա են մնում, կրակոցները վերսկսվում են։ Բայց ախր դա սպանդ է, դա... ես չգիտեմ, թե ինչ է։ Բայց, սպասեցեք, դա դեռ սկիզբն է։ Մենամարտի վայրն են գալիս գնդի բոլոր սպաները, քիչ է մնում՝ նույնիսկ գնդի տիկնայք, և նույնիսկ թփերում մի տեղ թաքնվում է լուսանկարիչը։ Ախր դա սարսափելի է, Ռոմոչկա։ Եվ թշվառ պոդպորուչիկը, ձեզ նման մի ֆենդրիկ, ինչպես ասում է Վոլոդյան, և ի լրումն՝ վիրավորվածը, և ոչ վիրավորողը, երրորդ կրակոցից հետո սարսափելի վերք է ստանում փորին և երեկոյան դեմ մեռնում է տանջալի մահով։ Իսկ նա, բանից պարզվում է, պառավ մայր և մի քույր ուներ՝ պառաված օրիորդ, որ ապրում էին նրա հետ, մեր Միխինի նման... Դե լսեցեք ախր, ինչի՞ համար, ո՞ւմ էր պետք մենամարտը վեր ածել այդպիսի արյունալի խեղկատակության։ Եվ այդ, նկատի առեք, հենց սկզբից ևեթ, մենամարտի թույլտվությունից անմիջապես հետո։ Եվ ահա, հավատացեք ինձ, հավատացե՛ք,— բացականչեց Շուրոչկան, փայլեցնելով վառվող աչքերը,— սպայական մենամարտի սենտիմենտալ հակառակորդները անմիջապես, օ՜, ես գիտեմ այդ արգահատելի լիբերալ վախկոտներին, նրանք անմիջապես աղմուկ կբարձրացնեն. «Ա՜խ, բարբարոսությո՛ւն է։ Ա՜խ, վայրենի ժամանակների վերապրո՛ւկ է։ Ա՜խ, եղբայրասպանությո՛ւն է»։

— Բայց դուք արյունարբու եք, Ալեքսանդրա Պետրովնա,— միջամտեց Ռոմաշովը։

— Արյունարբու չեմ, ոչ,— կտրուկ առարկեց նա։— Ես խղճահարվող եմ։ Ես աշխատում եմ վիզս խտուտ ածող բլոճին էլ բռնել ցավ չպատճառելով։ Բայց, փորձեցեք հասկանալ, Ռոմաշով, այստեղ հասարակ տրամաբանություն է։ Սպաներն ինչի՞ համար են։ Պատերազմի։ Պատերազմի համար ամենից առաջ ի՞նչ է պահանջվում։ Խիզախություն, հպարտություն, մահվան առաջ աչքը չթարթելու կարողություն։ Խաղաղ ժամանակ այդ հատկությունները որտե՞ղ են առավել ցայտուն դրսևորվում։ Մենամարտերում։ Պրծավ գնաց։ Կարծեմ պարզ է։ Ոչ թե ֆրանսիացի սպաներին են անհրաժեշտ մենամարտերը, որովհետև պատվի հասկացողությունը, այն էլ չափազանցված, ամեն մի ֆրանսիացու արյան մեջ է, ոչ թե գերմանացի սպաներին, որովհետև բոլոր գերմանացիները ի ծնե օրինավոր ու կարգապահ են, այլ մեզ, մե՛զ, մե՛զ։ Այն ժամանակ մեր սպաների միջավայրում չեն լինի Արչակովսկու պես խաբեբա խաղամոլներ, կամ ձեր Նազանսկու պես թունդ հարբեցողներ. այն ժամանակ ինքնին կվերանա ակումբում, սպասավորների ներկայությամբ մտերմավարությունը, տնավարի ծանակումը, ձեր այդ փոխադարձ զազրախոսությունը, իրար գլխի ջրաման շպրտելը, այնուամենայնիվ լդիպցնելու, այլ վրիպելու մտադրությամբ։ Այն ժամանակ դուք իրար բացակայությամբ այդպես չեք պախարակի միմյանց։ Սպայի ամեն մի խոսքը պետք է կշռադատված լինի։ Սպան քաղաքավարության օրինակ է։ Եվ հետո, այդ ի՞նչ քնքշություն է՝ կրակելուց վախենալ։ Ձեր մասնագիտությունը կյանքը վտանգի ենթարկելն է։ Է՛հ, ինչ խոսեմ։

Նա քմահաճորեն ընդհատեց իր խոսքը և գլխովին խորասուզվեց աշխատանքի մեջ։ Նորից լռություն տիրեց։

— Շուրոչկա, գերմաներեն ինչպե՞ս թարգմանեմ ախոյան,— հարցրեց Նիկոլաևը, գլուխը գրքից բարձրացնելով։

— Ախոյա՞ն,— Շուրոչկան հելունով մտածկոտ քորեց իր փափուկ մազերի մազաբաժանը։— Հապա ամբողջ նախադասությունն ասա։

— Այստեղ ասված է... հիմա, հիմա... Մեր արտասահմանյան ախոյանը...

— Unser ausländischer Nebenbuhler,— արագ, անմիջապես թարգմանեց Շուրոչկան։

— Ունզեր,— շշուկով կրկնեց Ռոմաշովը, երազուն հայացքը հառած լամպի կրակին։ «Երբ նրան որևէ բան հուզում է,— մտածեց նա,— ապա բառերը նրա բերանից դուրս են թռչում այնպես շեշտակի, զրնգուն ու որոշակի, կարծես արծաթե սկուտեղի վրա կոտորակ է թափվում»։ Ունզեր. ինչ ծիծաղելի բառ է... Ունզեր, ունզեր, ունզեր...

— Ի՞նչ եք մրմնջում, Ռոմոչկա,— հանկարծ խստորեն հարցրեց Ալեքսանդրա Պետրովնան։— Չհամարձակվեք զառանցել իմ ներկայությամբ։

Ռոմաշովը ժպտաց ցրված ժպիտով։

— Ես չեմ զառանցում... Ես շարունակ ինձ համար կրկնում էի ունզեր, ունզեր։ Ինչ ծիծաղելի բառ է...

— Ի՞նչ հիմարություն... Ունզե՞ր։ Ինչո՞ւ է ծիծաղելի։

— Գիտեք ինչ...— Նա դժվարանում էր իր միտքը բացատրել։— Եթե երկար կրկնես միևնույն բառը և խորամուխ լինես դրա իմաստին, ապա նա հանկարծ կկորցնի իմաստը և կդառնա մի տեսակ... ինչպե՞ս ասեմ...

— Ախ, գիտեմ, գիտեմ,— հապճեպ և ուրախ ընդհատեց նրան Շուրոչկան։— Միայն թե հիմա դա այնքան էլ հեշտ չէ անելը, իսկ առաջ, փոքր ժամանակ, ա՜խ, ի՜նչ զվարճալի էր դա...

— Այո, այո, հատկապես փոքր ժամանակ։ Այո։

— Ինչպես չէ, հրաշալի հիշում եմ։ Նույնիսկ հիշում եմ այն բառը, որն առանձնապես ինձ զարմացնում էր. «գուցե թե»։ Ես շարունակ օրորվում էի փակ աչքերով ու կրկնում. «Գուցե թե, գուցե թե» և հանկարծ բոլորովին մոռանում էի, թե ինչ է նշանակում դա, հետո ճգնում էի ու չէի կարողանում հիշել։ Ինձ շարունակ թվում էր, թե դա իբր ինչ-որ դարչնագույն, կարմրավուն բիծ է երկու պոչիկներով։ Ճիշտ չէ՞։

Ռոմաշովը քնքշանքով նայեց նրան։

— Ինչ տարօրինակ է, որ մենք միևնույն մտքերն ունենք,— ասաց նա կամացուկ։— Իսկ ունզերը, հասկանո՞ւմ եք, մի տեսակ բոյով-բոյով, նիհար և խայթ ունեցող ինչ-որ բան է։ Մի տեսակ երկար, բարակ միջատ և շատ չար։

— Ունզե՞ր։— Շուրոչկան գլուխը բարձրացրեց և, աչքերը կկոցած, նայեց հեռուն, սենյակի մութ անկյունին, ջանալով պատկերացնել այն, ինչի մասին խոսում էր Ռոմաշովը։— Ոչ, կացեք, դա ինչ-որ կանաչ ու սուր բան է։ Դե հա, դե հա, ախր իհարկե, միջատ է, ծղրիդի պես, միայն ավելի զզվելի ու չար... Ֆո՛ւ, ինչ հիմարն ենք մենք, Ռոմոչկա։

— Կամ թե չէ այսպես էլ է լինում,— խորհրդավոր ձայնով սկսեց Ռոմաշովը,— և դարձյալ փոքր ժամանակս դա շատ ավելի վառ էր։ Մի որևէ բառ եմ արտասանում և աշխատում որքան կարելի է երկար ձգել։ Անվերջ ձգում եմ ամեն մի տառը։ Եվ հանկարծ մի րոպե ինձ այնքան, այնքան տարօրինակ է թվում, կարծես շուրջս ամեն ինչ անհայտացել է։ Եվ այն ժամանակ ինձ համար զարմանալի է դառնում, որ այդ ես եմ խոսում, ես եմ ապրում, ես եմ մտածում։

— Օ՜, ես էլ գիտեմ այդ,— ուրախ վրա բերեց Շուրոչկան։— Միայն թե ոչ այդպես։ Պատահում էր, շունչս պահում էի ինչքան ուժս պատում էր, ու մտածում՝ ահա ես չեմ շնչում, հիմա էլ դեռ չեմ շնչում, ահա մի էսքան էլ, մի էսքան էլ, մի էսքան էլ... Եվ այն ժամանակ վրա էր հասնում այդ տարօրինակ բանը։ Ես զգում էի, թե ինչպես իմ կողքով սլանում էր ժամանակը։ Ոչ, դա ուրիշ բան էր. գուցե ժամանակ իսկի չկար էլ։ Դա բացատրել չի լինի։

Ռոմաշովը նրան էր նայում հափշտակված աչքերով և կրկնում էր խուլ, երջանիկ, կամացուկ ձայնով.

— Այո, այո... դա բացատրել չի լինի... Դա տարօրինակ է... Դա անբացատրելի է...

— Բայց և այնպես, պարոնայք հոգեբաններ, կամ թե ուրիշ կերպ ինչպես է ձեր անունը, ընթրելու ժամանակն է,— ասաց Նիկոլաևը, ամբոխից վեր կենալով։

Երկար նստելուց նրա ոտքերն ընդարմացել էին և մեջքը ցավել։ Ամբողջ հասակով մեկ ձգվելով, նա ձեռքերը խիստ վեր բարձրացրեց և կուրծքը դուրս ցցեց, և նրա ամբողջ խոշոր, մկանուտ մարմնի հոդերը ճքրտացին այդ հզոր շարժումից։

Շատ փոքրիկ, բայց հաճելի ճաշասենյակում, որ պայծառ լուսավորված էր փայլատ-սպիտակ ճենապակե կախովի լամպով, սառը խորտիկներով սեղան էր բացած։ Նիկոլաևը չէր խմում, բայց Ռոմաշովի համար օղով լի մի փոքրիկ անոթ էր դրված։ Իր սիրունիկ դեմքը զզվանքով ծամածռելով, Շուրոչկան անփութորեն հարցրեց, ինչպես հաճախ հարցնում էր.

— Դուք, իհարկե, չե՞ք կարող առանց այդ գարշելի բանի յոլա գնալ։

Ռոմաշովը մեղավոր ժպտաց, և շփոթվելուց օղին խեղդ գնաց, ու նա հազաց։

— Ամոթ չէ՞ ձեզ,— խրատական տոնով նկատեց տանտիրուհին։— Դեռ խմել էլ չգիտեք, բայց էլի... Ես հասկանում եմ, ձեր սիրեցյալ Նազանսկուն ներելի է, նա կորած մարդ է, իսկ դո՞ւք ինչու եք խմում։ Այդքան ջահել, այդքան լավ, ընդունակ տղա եք, իսկ առանց օղու սեղան չեք նստում... Ախր ինչո՞ւ։ Այդ Նազանսկին է ձեզ փչացնում։

Նրա ամուսինը, որ այդ ժամանակ կարդում էր հենց նոր բերած մի հրաման, հանկարծ բացականչեց.

— Ախ, ի դեպ, Նազանսկին մի ամսով արձակուրդ է գնում

ընտանեկան հանգամանքների պատճառով։ Է-հե՞։ Այդ նշանակում է՝ սկսել է թունդ խմել։ Դուք, Յուրի Ալեքսեևիչ, հավանաբար, տեսե՞լ եք նրան։ Ինչ է, խմե՞լ է սկսել։

Ռոմաշովը շփոթված թարթեց կոպերը։

— Ո՛չ, ես չեմ նկատել։ Ասենք, կարծես, խմում է...

— Ձեր Նազանսկին զզվելի է,— սրդողած, զուսպ ցածր ձայնով ասաց Շուրոչկան։— Եթե ինձնից կախված լիներ, ես այդ մարդկանց կգնդակահարեի, ինչպես կատաղած շների։ Այդպիսի սպաները նախատինք են գնդի համար, գարշանք։

Ընթրիքից անմիջապես հետո Նիկոլաևը, որ ուտում էր նույնպես շատ ու ջանադիր, ինչպես զբաղվում էր իր գիտություններով, սկսեց հորանջել, և վերջապես, անկեղծորեն հայտարարեց.

— Պարոնայք, ի՞նչ կլինի, եթե մի բոպեով գնամ քնեմ։ «Ննջեմ», ինչպես ասվում էր հին լավ վեպերում։

— Միանգամայն իրավացի եք, Վլադիմիր Եֆիմիչ,— հարեց Ռոմաշովը, ինչպես իրեն թվաց, ինչ-որ շտապողական ու հաճոյական սանձարձակությամբ։ Միևնույն ժամանակ, վեր կենալով ընթրիքի սեղանից, նա վճռորեն մտածեց. «Այո, այստեղ նձ հետ նազ չեն անում։ Ասա, թե ո՞ր եմ մեջ ընկնում»։

Նա այնպիսի տպավորություն ուներ, կարծես Նիկոլաևը նրան բավականությամբ վռնդում է տնից։ Բայց և այնպես, դիտմամբ Նիկոլաևին Շուրոչկայից առաջ հրաժեշտ տալով, Ռոմաշովը հաճույքով մտածում էր, որ ահա այս բոպեիս ինքը կզգա սիրելի կանացի ձեռքի ամուր և փաղաքշող սեղմումը։ Ամեն անգամ այստեղից գնալիս նա մտածում էր այդ մասին։ Եվ երբ վրա հասավ այդ բոպեն, նրան ամբողջ հոգով այնպես կլանեց այդ հմայիչ սեղմումը, որ չլսեց, թե ինչպես Շուրոչկան ասաց.

— Տեսեք, չմոռանաք մեզ։ Այստեղ միշտ ուրախ ենք ձեզ տեսնել։ Փոխանակ ձեր Նազանսկու հետ հարբեցողությամբ զբաղվելու, ավելի լավ է նստեք մեզ մոտ։ Միայն մտքներդ պահեք՝ մենք ձեզ հետ նազ չենք անում։

Նա այդ բառերը լսեց իր գիտակցության մեջ և հասկացավ միայն փողոց դուրս գալուց հետո։

— Այո, ինձ հետ նազ չեն անում,— շշնջաց նա այն զառն նեղացկոտությամբ, որին այնպես հիվանդագին հակված են նրա տարիքի երիտասարդ ու ինքնասեր մարդիկ։

5

Ռոմաշովը դուրս եկավ անդաստակ։ Գիշերը դարձել էր կարծես ավելի թանձր, ավելի խավար ու տաք։ Պոդպորուչիկը խարխափելով գնում էր ցանկապատի երկայնքով, բռնելով նրանից և սպասելով, որ աչքերը վարժվեն խավարին։ Այդ ժամանակ Նիկոլաևների խոհանոց տանող դուռը հանկարծ բացվեց՝ մի վայրկյան խավարի մեջ նետելով դեղին մշուշոտ լույսի մի մեծ շերտ։ Մեկն անցավ ցեխը չմփացնելով, և Ռոմաշովը լսեց Նիկոլաևների սպասյակ Ստեպանի բարկացկոտ ձայնը.

— Գալիս, հա գալիս է ամեն օր։ Թե խի է գալիս, սատանան գիտե...

Իսկ պոդպորուչիկին անծանոթ մի ուրիշ զինվորի ձայն պատասխանեց անտարբեր, միաժամանակ երկար, ծույլ հորանջելով.

— Էտենց բաներ, ախպերս... Անգործությունից է էդ բոլորը։ Է, կեցիր բարով, Ստեպան։

— Գնաս բարով, Բաուլին։ Անցիր մեկ-մեկ։

Ռոմաշովը պինդ կպավ ցանկապատին։ Սուր ամոթից նա կարմրեց, չնայած խավարին. նրա ամբողջ մարմինը քրտնակալեց, և կարծես հազարավոր ասեղներ ծակծկեցին ոտքերի ու մեջքի մաշկը։ «Ի՞հարկե։ Նույնիսկ սպասյակները ծիծաղում են»,— մտածեց նա հուսահատությամբ։ Անմիջապես նրա միտքն եկավ այսօրվա երեկոն, և զանազան բառերի, նախադասությունների տոնի, այն հայացքների մեջ, որ փոխանակում էին տանտերերը, նա իսկույն տեսավ շատ այնպիսի մանրուքներ, որոնք նա առաջ չէր նկատում և որոնք, ինչպես հիմա թվում էր իրեն, ապացույց էին անուշադրության և ծաղրի, ձանձրալի հյուրի դեմ ունեցած անհամբեր ջղագրգռության։

— Ինչպիսի՜ խայտառակություն, ինչպիսի՜ խայտառակություն,— շշնջում էր պոդպորուչիկը՝ առանց տեղից շարժվելու։— Այն աստիճանի հասնել, որ քեզ հազիվ են հանդուրժում, երբ գալիս ես... Ոչ, բավակա՜ն է։ Հիմա ես արդեն հաստատ գիտեմ, որ բավական է։

Նիկոլաևների հյուրասենյակում լույսը մարեց։ «Ահա նրանք արդեն ննջարանում են»,— մտածեց Ռոմաշովը և արտասովոր պարզ պատկերացրեց, թե ինչպես Նիկոլաևները պատրաստվելով քնելու, հանվում են իրար մոտ՝ վաղուց ամուսնացած մարդ-

Լանց սովորական անտարբերությամբ ու անամոթությամբ և խոսում են իր մասին։ Կինը միայն շրջազգեստով է, հայելու առջև մազերն է սանրում քնելուց առաջ։ Վլադիմիր Եֆիմիչը տակի սպիտակեղենով անկողնին նստած՝ սապոգն է հանում և, զոռից կսրմբելով, բարկացկոտ ու քնկոտ ասում է. «Գիտե՞ս, Շուրոչկա, քո այդ Ռոմաշովը ինձ ձանձրացրել է ահա մինչև այստեղս։ Զարմանում եմ, թե ինչ ես նրա հետ այդքան գլուխ դնում»։ Իսկ Շուրոչկան առանց հերակալը բերանից հանելու և առանց շրջվելու, հայելու միջից պատասխանում է դժգոհ եղանակով. «Նա իսկի էլ իմը չէ, այլ քոնն է...»

Անցավ ևս հինգ րոպե, մինչև Ռոմաշովը, այդ դառն ու տանջալից մտքերով բզկտված, սիրտ արեց տեղից շարժվել։ Նիկոլաևների տունը շրջապատող ամբողջ երկար ցանկապատի մոտով նա անցավ գողեգող, ոտքերն զգուշությամբ դուրս քաշելով ցեխից, կարծես կարող էին նրան լսել և բռնել ինչ-որ վատ արարքի մեջ։ Տուն գնալ չէր ուզում, նույնիսկ սարսափելի ու զզվելի էր հիշել նողկանքի աստիճան ձանձրացրած իրերով մի լուսամուտանոց երկար ոչ նեղ իր սենյակը։

«Հենց նրա ջգրու լդնամ Նազանսկու մոտ,— վճռեց Ռոմաշովը հանկարծ և միանգամից դրա մեջ ինչ-որ վրիժառու բավարարվածություն զգաց։— Նա ինձ դիտողություն էր անում Նազանսկու հետ ընկերություն անելուս համար, դե, հենց նրա ջգրու։ Թո՛ղ լինի...»

Աչքերը երկինք բարձրացնելով և ձեռքը ամուր սեղմելով կրծքին, նա եռանդով ասաց ինքն իրեն. «Երդվում եմ, երդվում եմ, որ վերջին անգամն է, որ եկա նրանց տուն։ Էլ չեմ ուզում այդպիսի ստորացում զգալ։ Երդվո՛ւմ եմ»։

Եվ իսկույն էլ, իր սովորության համաձայն, մտքում ավելացրեց.

«Նրա արտահայտիչ սև աչքերը շողում էին վճռականությամբ և արհամարհանքով»։

Թեև նրա աչքերը բնավ էլ սև չէին, այլ ամենասովորական դեղնավուն աչքեր՝ կանաչ շրջանակով։

Նազանսկին սենյակ էր վարձել իր ընկեր պորուչիկ Զեգրժտի տանը։ Այդ Զեգրժտը, հավանաբար, ամենահին պորուչիկն էր ամբողջ ռուսական բանակում, չնայած իր անբասիր ծառայությանը և մասնակցությանը Թուրքական կամպանիային, ինչ-որ հակատագրական և անբացատրելի ձևով նրա բախտը չէր բանում աստիճանը բարձրացնելու հարցում։ Նա այրի էր, չորս մանկահասակ երեխաներով, և այնուհանդերձ մի կերպ յոլա էր գնում իր քառասունութ ռուբլի ռոճիկով։ Նա վարձում էր մեծ բնակարաններ և սենյակները դատ-դատ վարձով տալիս ամուսնացած սպաներին, ճաշօթիկներ էր պահում, հով ու հնդկահավ աճեցնում, կարողանում էր ինչ-որ ձևով առանձնապես լժան ու ժամանակից շուտ վառելափայտ գնել։ Իր երեխաներին նա ինքն էր լողացնում տաշտակների մեջ, ինքն էր բուժում տանն ունեցած դեղերով, և կարի մեքենայով ինքն էր նրանց հագուստ կրծկալներ, շապիկներ ու վարտիքներ կարում։ Դեռ ամուսնանալուց առաջ Զեգրժտը, ինչպես և ամուրի սպաներից շատերը, վարժվել էր կանացի մանր-մունր ձեռքի աշխատանքներին, իսկ հիմա դրանով զբաղվելու նրան ստիպում էր ծանր կարիքը։ Զար լեզուները նրա մասին ասում էին, թե նա գաղտնի, փեշի տակ իր ձեռագործներն ուղարկում է ինչ-որ տեղ ծախելու։

Բայց բոլոր այդ տնտեսական մանր խորամանկություններն վատ էին օգնում Զեգրժտին։ Ընտանի թռչունները սատկում էին համաճարակ հիվանդություններից, սենյակները դատարկ էին մնում, ճաշօթիկները դժգոհում էին վատ ճաշերից և փող չէին վճարում, և պարբերաբար, տարեկան մի չորս անգամ, կարելի էր տեսնել, թե ինչպես նիհար, երկարահասակ, մորուքավոր Զեգրժտը շվարած, քրտնած երեսով չափչփում էր քաղաքը, որևէ տեղից փող գտնելու հույսով, ըստ որում, նրա բլիթանման գլխարկի հովարը թեքված էր լինում մի կողքի, իսկ դեռ պատերազմից առաջ կարված նիկոլաևյան հինավուրց շինելը թևերի պես փողփողում ու թրթռում էր ուսերի հետև։

Հիմա նրա սենյակներում լույս էր վառվում, և, մոտենալով լուսամուտին, Ռոմաշովը տեսավ Զեգրժտին իրեն։ Նա նստած էր կախովի լամպի տակ դրած կլոր սեղանի առաջ և ցած խոնարհած տրորված, կնճռոտ ու հեզ դեմքով ճաղատ գլուխը, կարմիր թելով ինչ-որ քաթանե բան էր ասեղնագործում, ըստ երևույթին մալոռուսական վերնաշապկի կուրծք։ Ռոմաշովը թմբկահարեց ապակին։ Զեգրժտը ցնցվեց, աշխատանքը մի կողմ դրեց և մոտեցավ լուսամուտին։

— Այդ ես եմ, Ադամ Իվանովիչ։ Բացեք մի վայրկյանով— ասաց Ռոմաշովը։

Զեգրժտը բարձրացավ լուսամուտի գոգը, օդանցքից դուրս

հանեց ճաղատ գլուխն ու մի կողմի վրա թափված ցանցառ մորուքը։

— Այդ դո՞ւք եք, պոդպորուչիկ Ռոմաշով։ Իսկ ի՞նչ կա։

— Նազանսկին տա՞նն է։

— Տանն է, տանը, ո՞ւր պիտի գնա։ Ախ, աստված,— Զեգրժտի մորուքը ցցվեց օդանցքում։— Գլուխս թլսորում է ձեր Նազանսկին։ Արդեն երկրորդ ամիսն է նրան ճաշ եմ ուղարկում, իսկ նա շարունակ միայն խոստանում է վճարել։ Երբ նա փոխադրվում էր, ես նրան հատուկ խնդրեցի, որ թյուրիմացություններից խուսափելու համար...

— Այո, այո, այո...դա... իսկապես որ... — մտացրիվ ընդհատեց Ռոմաշովը։— Ասացեք, իսկ ինչպե՞ս է նա։ Կարելի՞ է նրան տեսնել։

— Կարծում եմ, կարելի է... Շարունակ շրջում է սենյակում։ —Զեգրժտը մի պահ ականջ դրեց։ — Ահա հիմա էլ շրջում է։ Հասկանո՞ւմ եք, ես նրան պարզ ասել էի՝ թյուրիմացությունից խուսափելու համար պայմանավորվենք, որ վարձը...

— Ներեցեք, Ադամ Իվանովիչ, ես իսկույն, — ընդհատեց նրան Ռոմաշովը։ — Եթե թույլ կտաք, մի ուրիշ անգամ կանցնեմ։ Շատ շտապ գործ է...

Նա առաջ անցավ և շրջվեց անկյունի մյուս կողմը։ Նախապարտեզի խորքում, Նազանսկու տանը ճրագ էր վառվում։ Լուսամուտներից մեկը լայն բաց էր։ Ինքը Նազանսկին, առանց սերթուկի, շապկանց, օձիքն արձակած, արագ քայլերով անցուդարձ էր անում սենյակում. նրա սպիտակ կերպարանքը և ոսկեհեր գլուխը մերթ երևում էին լուսամուտներից, մերթ չքանում միջնապատերի հետևում։ Ռոմաշովն անցավ նախապարտեզի ցանկապատի վրայով և ձայն տվեց նրան։

— Այդ ո՞վ է, — հանդարտ, ասես այդ ձայնին սպասելիս լիներ, հարցրեց Նազանսկին, լուսամուտի դոգից դուրս կախվելով։— Ա, այդ դուք եք, Գեորգի Ալեքսեևիչ։ Սպասեցեք, դրոնով հեռու կլինի և մութ է։ Լուսամուտից մտեք։ Տվեք ձեր ձեռքը։

Նազանսկու սենյակն ավելի աղքատիկ էր, քան Ռոմաշովինը։ Պատուհանի մոտ պատի երկայնքով դրված էր մի նեղ, ցածլիկ, ամբողջովին աղեղնաձև կորացած մահճակալ, այնքան լղարիկ, որ կարծես նրա երկաթների վրա փռված էր միայն վարդագույն պիկեի ծածկոցը. մյուս պատի մոտ՝ մի հասարակ չներկած սեղան և երկու աթոռ։ Սենյակի անկյուններից մեկում կիպ, տապանակի ձևով ամրացված էր մի փայտե պահարանիկ։ Մահճակալի ոտների մոտ դրված էր մի կաշվե շեկ ճամպրուկ, ամբողջովին ծածկված երկաթուղային թղթիկներով։ Բացի այդ իրերից, չհաշված սեղանի վրայի լամպը, սենյակում ոչ մի բան չկար։

— Բարև՛ ձեզ, իմ թանկագին,— ասաց Նազանսկին, ամուր սեղմելով ու թափահարելով Ռոմաշովի ձեռքը և ուղիղ նրա աչքերին նայելով մտածկոտ, երկնագույն սքանչելի աչքերով։ — Նստեք ահա այստեղ՝ մահճակալին։ Լսե՞լ եք, որ ես զեկույց եմ տվել հիվանդությանս մասին։

— Այո։ Այդ մասին նոր ինձ ասաց Նիկոլաևը։

Ռոմաշովը վերստին հիշեց սպասյակ Ստեպանի սարսափելի խոսքերը, և նրա դեմքը տառապալից կնճռոտվեց։

— Ա՜, դուք Նիկոլաևների մո՞տ էիք,— հանկարծ աշխուժությամբ և նկատելի հետաքրքրությամբ հարցրեց Նազանսկին։ —Դուք հաճա՞խ եք լինում այնտեղ։

Այդ հարցի անսովոր եղանակից բխած զգուշավորության ինչ-որ տարտամ մի բնազդ Ռոմաշովին հարկադրեց ստել, և նա պատասխանեց անփութորեն։

— Ոչ, բոլորովին ոչ հաճախ. այնպես, պատահաբար անցա։

Նազանսկին, որ սենյակում ետ ու առաջ էր քայլում, կանգ առավ պահարանի առջև ու բաց արեց։ Այնտեղ դարակին դրված էր օղու մի անոթ և բարակ, կանոնավոր դիլիմներով կտրատած խնձոր։ Մեջքը հյուրի կողմն դարձած, նա արագ լցրեց մի ըմպանակ և խմեց։ Ռոմաշովը տեսավ, թե ինչպես քաթանե նուրբ շապիկի տակ ջղաձգորեն ցնցվեց նրա մեջքը։

— Ջէի՞ք կամենա։ — առաջարկեց Նազանսկին, ցույց տալով դարակի կողմը։ — Ակրատը հարուստ չէ, բայց եթե սոված եք, կարելի է ձվածեղ սարքել։ Կարելի է ներգործել Ադամի, այդ զառամ մարդու վրա։

— Շնորհակալություն։ Հետո։

Նազանսկին քայլեց սենյակով, ձեռքերը գրպանները խոթած։ Երկու անգամ ծայրից ծայր անցնելով սենյակը, նա սկսեց խոսել, կարծես շարունակելով հենց նոր ընդհատված զրույցը.

— Հա՛։ Եվ ահա ես շարունակ պտտվում եմ ու մտածում։ Եվ, գիտե՞ք, Ռոմաշով, ես երջանիկ եմ։ Վաղը գնդում բոլորը կասեն, որ սկսվել է իմ թունդ հարբեցության շրջանը։ Ի՞նչ կա որ, դա թերևս ճիշտ էլ է, բայց այնքան էլ այդպես չէ։ Ես

հիմա երջանիկ եմ, և բնավ էլ հիվանդ չեմ և չեմ տառապում։ Սովորական ժամանակ իմ միտքը և կամքը ճնշված են լինում։ Ես այն ժամանակ ձուլվում եմ քաղցած, վախկոտ միջակությունների հետ և լինում եմ գռեհիկ, ինքս ինձ համար ձանձրալի, լրջմիտ ու շրջահայաց։ Ես, օրինակ, ատում եմ զինվորական ծառայությունը, բայց ծառայում եմ։ Ինչո՞ւ եմ ծառայում։ Սատանան գիտե, թե ինչու։ Երա համար, որ մանկուց իմ ականջը լցրել են և հիմա էլ շուրջս բոլորն ասում են, թե կյանքում ամենագլխավորը ծառայելն է, կուշտ լինելն ու լավ հագնված լինելը։ Իսկ փիլիսոփայությունը, ասում են նրանք, դատարկ բան է, դա լավ է նրա համար, ով բան ու գործ չունի, ում որ մայրիկը ժառանգություն է թողել։ Եվ ահա ես այնպիսի բաներ եմ անում, որոնց վրա սիրտս բոլորովին տաք չէ, կյանքի անասնական վախից կատարում եմ այնպիսի հրամաններ, որոնք երբեմն ինձ թվում են դաժան, երբեմն էլ անիմաստ։ Իմ գոյությունը միօրինակ է, ինչպես ցանկապատը և գորշ՝ ինչպես զինվորական մահուդը։ Ես չեմ համարձակվում մտածել, ուր թե բարձրաձայն խոսել սիրո մասին, գեղեցկության մասին, իմ վերաբերմունքի մասին դեպի մարդկությունը, բնության մասին, մարդկանց հավասարության ու երջանկության մասին, պոեզիայի մասին, աստծու մասին։ Նրանք ծիծաղում են՝ հա՜-հա՜-հա՜, այդ բոլորը փիլիսոփայությո՞ւն է... Ծիծաղելի ու տարօրինակ է և բանակի հետևակի սպայի համար անթույլատրելի՝ վերամբարձ նյութերի մասին մտածելը։ Դա փիլիսոփայություն է, գրողը տանի, հետևաբար՝ դատարկ բան, դատարկ ու անհեթեթ խոսակցություն։

— Բայց դա գլխավոր բանն է կյանքում, — մտածկոտ ասաց Ռոմաշովը։

— Եվ ահա ինձ համար վրա է հասնում այդ պահը, որին նրանք այդպիսի կոշտ անուն են տալիս,— առանց Ռոմաշովին լսելու, շարունակեց Նազանսկին։ Նա շարունակ ետ ու առաջ էր քայլում և երբեմնակի համոզիչ շարժումներ անում, դիմելով, ի դեպ, ոչ թե Ռոմաշովին, այլ երկու հակադիր անկյուններին, որոնց հասնում էր հերթով։— Դա իմ ազատության ժամանակն է, Ռոմաշով, ոգու, կամքի ու մտքի ազատության։ Ես այդ ժամանակ ապրում եմ գուցե և տարօրինակ, բայց խո՞ր, սքանչելի՜ ներքին կյանքով։ Այնպիսի՜ լիակատար կյանքով։ Այն ամենը, ինչ ես տեսել եմ, ինչի մասին կարդացել կամ լսել եմ, ամեն ինչ զարթնում է իմ մեջ, ամեն ինչ ստանում է արտասովոր պայծառ

լույս և խոր, անհուն իմաստ։ Այն ժամանակ իմ հիշողությունը կարծես հազվագյուտ հայտնությունների թանգարան լինի։ Հասկանո՞ւմ եք, ես Ռոտշիլդն եմ։ Վերցնում եմ առաջին պատահած բանը, խորհում եմ դրա մասին՝ երկար, խելամտորեն. վայելքով։ Դեմքերի, հանդիպումների, բնավորությունների, գրքերի, կանանց մասին— ա՜խ, հատկապես կանանց և կնոջ սիրո մասին... Երբեմն ես մտածում եմ աշխարհից հեռացած մեծ մարդկանց մասին, գիտության մարտիրոսների մասին, իմաստունների ու հերոսների և նրանց զարմանալի ասույթների մասին։ Ես աստծուն չեմ հավատում, Ռոմաշով, բայց երբեմն մտածում եմ սուրբ աստվածահաճոների, ճգնավորների և նահատակների մասին և հիշողությանս մեջ թարմացնում եմ կանոններն ու խանդաղատանք առաջացնող օրհներգությունները։ Չէ՞ որ ես, սիրելիս, բուրսայում եմ սովորել և հրեշավոր հիշողություն ունեմ։ Մտածում եմ այդ ամենի մասին և, պատահում է, երբեմն հանկարծ այնպես ջերմորեն եմ ապրում ուրիշի ուրախությունը կամ ուրիշի վիշտը, կամ որևէ արարքի անմահ գեղեցկությունը, որ քայլում եմ ահա այսպես, մենակ... և լալիս եմ, սրտաբուխ, ջերմորեն լալիս եմ...

Ռոմաշովը կամացուկ վեր կացավ մահճակալից և ոտքը վեր քաշած նստեց բաց լուսամուտին, այնպես, որ նրա մեջքը և ներբանները հենվում էին շրջանակի հանդիպակաց կողմերին։ Այստեղից, լուսավորված սենյակից, գիշերը թվում էր ավելի խավար, ավելի խոր, խորհրդավոր։ Տաք, պոռթկուն, բայց սակայն քամին ներքևում, լուսամուտի տակ շարժում էր ինչ-որ ցածրիկ թփերի տերևները։ Եվ գարնանային տարօրինակ բույրերով լի այդ մեղմ օդում, այդ լռության, խավարի, այդ չափ սառնացված պայծառ և կարծես տաք աստղերի մեջ զգացվում էր թաքուն ու բուռն խմորում, կռահվում էր հողի, բույսերի՝ ամբողջ աշխարհի մայրության ծարավը և շռայլ պագշտությունը։

Իսկ Նազանսկին շարունակ քայլում և խոսում էր, առանց Ռոմաշովին նայելու, կարծես դիմելով սենյակի պատերին և անկյուններին.

— Այդ ժամերին միտքս հոսում է այնպե՜ս քմահաճ, այնպես խայտաբղետ և այնպե՜ս անսպասելի։ Թելքս դառնում է սուր և պայծառ, երևակայությունս՝ ասես հորձանք լինի։ Բոլոր իրերն ու դեմքերը, որոնց ես ոգեկոչում եմ, իմ առջև կանգնում են այնքան ցայտուն և այնպիսի՜ հմայիչ պարզությամբ, կարծես նրանց տեսնում եմ մթնախցիկում։ Ես գիտեմ, ես գիտեմ, սիրելիս, որ

զգացումների այդ սրումը, հոգեկան այդ ողջ պայծառացումը, ավա՜ղ, ոչ այլ ինչ է, քան եթե ալկոհոլի ֆիզիոլոգիական ներգործությունը ներվային համակարգիս վրա։ Սկզբում, երբ ես առաջին անգամ զգացի ներքին կյանքի այդ սքանչելի վերելքը, կարծում էի, թե դա ինքը ոգեշնչումն է։ Բայց՝ ոչ. դրանում չկա ոչ մի ստեղծագործական, նույնիսկ ոչ մի կայուն բան։ Դա ուղղակի հիվանդագին պրոցես է։ Դրանք ուղղակի անակնկալ հորդումներ են, որոնք ամեն անգամ ավելի ու ավելի են մաշում հունը։ Բայց և այնպես այդ խելահեղությունը քաղցր է ինձ համար, և... գրողի ծո՜ցը փրկարար խնայողությունը և դրա հետ մեկտեղ գրողի ծոցը մինչև հարյուր տասը տարի ապրելու և որպես երկարակեցության հազվագյուտ նմուշ լրագրային շիլա-շփոթի մեջ ընկնելու հիմար հույսը... Ես երջանիկ եմ, և այս է ամենը։

Նազանսկին դարձյալ մոտեցավ պահարանին և, խմելով, խնամքով փակեց դռնակները։ Ռոմաշովը ծուլորեն, գրեթե անգիտակցաբար, վեր կացավ և նույնն արավ։

— Իսկ իմ գալուց առաջ դուք ինչի՞ մասին էիք մտածում, Վասիլի Նիլիչ — հարցրեց նա, առաջվա պես նստելով լուսամուտին։

Բայց Նազանսկին գրեթե չլսեց նրա հարցը։

— Օրինակ, ինչպիսի՞ վայելք է կանանց մասին երազելը, — բացականչեց նա, հասնելով հեռավոր անկյանը և դիմելով այդ անկյանը լայն, համոզիչ շարժումով։— Ոչ, ոչ թե կեղտոտ մտածել։ Ինչո՞ւ։ Երբեք, նույնիսկ մտքում, մարդուն չպետք է չարիքի, առավել ևս կեղտոտության մասնակից դարձնել։ Ես մտածում եմ հաճախ քնքուշ, մաքուր, նրբագեղ կանանց մասին, նրանց պայծառ արցունքների և սքանչելի ժպիտների մասին, մտածում եմ երիտասարդ, ողջախոհ մայրերի մասին, սիրուհիների մասին, որոնք հանուն սիրո գնում են դեպի մահ, ձյունասպիտակ հոգով հիասքանչ, անմեղ ու հպարտ ջահել աղջիկների մասին, որոնք ամեն ինչ գիտեն և ոչնչից չեն վախենում։ Այդպիսի կանայք չկան։ Ասենք, ես իրավացի չեմ։ Հավանաբար, Ռոմաշով, կան այդպիսի կանայք, բայց ես և դուք նրանց երբեք չենք տեսնի։ Դուք էլի, գուցե թե տեսնեք, բայց ես՝ ոչ։

Նա հիմա կանգնել էր Ռոմաշովի առաջ և նայում էր ուղիղ նրա երեսին, բայց իր աչքերի երազուն արտահայտությունից, շրթունքների շուրջը թափառող անորոշ ժպիտից նկատելի էր, որ նա չի տեսնում իր զրուցակցին։ Դեռ երբեք Նազանսկու դեմքը, նույնիսկ նրա լավագույն, սթափ րոպեներին, Ռոմաշովին չէր թվացել այնքան գեղեցիկ ու հետաքրքիր։ Ոսկե մազերը ամբողջական խոշոր գանգուրներով թափվում էին նրա բարձր, մաքուր ճակատի շուրջը, թավ, քառանկյունաձև, փոքրիկ շիկամազ մորուքը փռված էր կանոնավոր ալիքներով, կարծես ծալապարդված լիներ, և ամբողջ նրա խոշոր ու գեղեցիկ գլուխը, աղնիվ գծված մերկ պարանոցով հանդերձ, նման էր հունական այն հերոսներից կամ իմաստուններից մեկի գլխին, որոնց կիսանդրիները Ռոմաշովը տեսել էր ինչ-որ գրավյուրներում։ Պայծառ, փոքր-ինչ տամուկ ծավի աչքերը նայում էին աշխույժ, խելացի ու հեզ։ Նույնիսկ այդ գեղեցիկ, կանոնավոր գծերով դեմքի գույնը զարմացնում էր իր հավասար, նուրբ վարդագույն երանգով, և միայն խիստ փորձված աչքը այդ առերևույթ թարմության մեջ դիմագծերի որոշ այտուցվածության հետ մեկտեղ կնկատեր արյան ալկոհոլային բորբոքման արդյունքը։

— Սե՜ր։ Դեպի կի՜նը։ Ինչպիսի՜ անհուն գաղտնիք։ Ինչպի՜սի՜ վայելք և ինչպիսի՜ սուր, քաղցր տառապանք,— հանկարծ ոգևորված բացականչեց Նազանսկին։

Նա հուզված բռնեց իր մազերը և նորից նետվեց դեպի անկյունը, բայց հասնելով այդտեղ, դեմքը շրջեց դեպի Ռոմաշովը և ուրախ քրքջաց։ Ոոդպորուչիկը տագնապած հետևում էր նրան։

— Մի ծիծաղելի պատմություն միտս եկավ,— բարեսրտորեն ու պարզ ասաց Նազանսկին։— Է՛հ, տեսեք, թե մտքերս ինչպես են թռչկոտում... Մի անգամ նստած էի Ռյազանի «Օկա» կայարանում և շոգենավի էի սպասում։ Ստիպված էինք սպասել համարյա մի ամբողջ օր, դա գարնանային վարարման ժամանակ էր, և ես, դուք իհարկե հասկանում եք, իմ բույնը հյուսեցի բուֆետում, իսկ բուֆետի հետև կանգնած էր մի աղջիկ, կլիներ մի տասնութ տարեկան, գիտե՞ք, այնպիսի մի տգեղ աղջիկ, ծաղկատար դեմքով, բայց այնպես ժիր, սևաչվի, սքանչելի ժպիտով և վերջ ի վերջո շատ լավիկը։ Եվ կայարանում ընդամենը երեք հոգի էինք. նա, ես և փոքրամարմին, խարտյաշ հեռագրիչը։ Ասենք, աղջկա հայրն էլ այնտեղ էր, գելխեղդ շուն հիշեցնող, կարմրագորշ, հաստ, կապալառուի մի մռութ։ Բայց հայրը ասես կուլիսների հետևում լիներ։ Մի երկու րոպեով դուրս էր գալիս, կանգնում վաճառասեղանի հետևում ու շարունակ հորանջում էր, շարունակ ժիլետի տակից քորում հաստ փորը, ոչ մի կերպ չէր կարողանում

աչքերը կարգին բաց անել. հետո նորից գնում էր քնելու։ Բայց պստիկ հեռադրիչը միշտ գալիս էր։ Հիշում եմ, արմունկներով հենվում էր վաճառասեղանին ու լռում։ Աղջիկն էլ էր լռում, նայում էր լուսամուտից դուրս, վարարած գետին։ Մեկ էլ տեսար՝ պատանին սկսում էր երգել խոսելու ձևով.

Արդյոք ս-սերը, սերը ի՞նչ է,
Ի՞նչ է, ասա, արդյոք սերը.
Զգացմունքն այդ երկնային է
Որ հուզում է մեր սրտերը։

Ու նորից լռում էր։ Իսկ հինգ րոպե անց աղջիկն սկսում էր մրմրալ՝ «Արդյոք ս-սերը, սերը ի՞նչ է...»։ Գիտե՞ք, մի այնպիսի գոհհկաճաշակ, գոհհկաճաշակ մեղեդի էր։ Երևի երկուսն էլ դա լսել էին որևէ օպերետկայում կամ էստրադայից... ով գիտե, հատուկ դրա համար ոտքով գնացել էին քաղաք։ Հա։ Երգում էին ու երգին լռում։ Հետո աղջիկը, կարծեք աննկատելի, շարունակ լուսամուտից դուրս նայելով, մեկ էլ տեսար, մոռանում էր ձեռքը վաճառասեղանից հեռացնել, իսկ տղան բռնում էր ու սկսում իրար հետևից նրա մատները տնտղել։ Եվ նորից՝ «Արդյոք ս-սերը, սերը ի՞նչ է...» Դուրսը գարուն է, վարարում, խոնջանք։ Եվ այդպես ամբողջ օրը։ Այն ժամանակ այդ «սերը» ինձ կարգին ձանձրացրեց, իսկ հիմա, գիտե՞ք, հուզվում եմ հիշելիս։ Ախր այդ ձևով նրանք, երևի, սիրաբանում էին իմ գալուց մի երկու շաբաթ առաջ և, գուցե, իմ դնալուց հետո էլի մոտ մեկ ամիս։ Եվ ես միայն հետո զգացի, թե ինչ երջանկություն էր դա, լուսո ինչպիսի շող նրանց խղճուկ, անձուկ-անձուկ կյանքում, շատ ավելի սահմանափակ, քան մեր անհեթեթ կյանքը, օ՜, ինչ եմ ասում, հարյուրապատիկ անձուկ... Ասենք... Կացնե՞ք, Ռոմաշով։ Մտքերս խառնըվում են։ Ինչո՞ւ հիշեցի հեռագրիչի մասին։

Նազանսկին կրկին մոտեցավ պահարանին։ Բայց նա չէր խմում, այլ մեջքը Ռոմաշովի կողմը շուռ տված, տանջալիորեն շփում էր ճակատը և ամուր սեղմում քունքերը աջ ձեռքի մատներով։ Եվ այդ ջղային շարժման մեջ ինչ-որ խղճուկ, անզոր, ստորացած բան կար։

— Դուք խոսում էիք կնոջ սիրո մասին՝ անդունդի, գաղտնիքի, ուրախության մասին, — հիշեցրեց Ռոմաշովը։

— Այո, սե՞ր,— բացականչեց Նազանսկին ցնծագին։ Նա արագ պարպեց գավաթը, վառվող աչքերով շրջվեց պահարանից

և շտապ սրբեց շրթունքները շապկի թևքով։— Սե՞ր։ Ո՞վ է հասկանում նրան։ Դա դարձրել են կեղտաջրի պես կեղտոտ օպերետկաների, լկտի նկարների, պժգալի անեկդոտների, զազիր-զազիր ոտնավորների թեմա։ Այդ մենք, սպաներս ենք դարձրել։ Երեկ ինձ մոտ էր Դիցը։ Նա նստած էր հենց նույն տեղում, որտեղ նստած եք այժմ դուք։ Նա խաղում էր իր ոսկե պենսնեով ու խոսում էր կանանց մասին։ Ռոմաշով, սիրելիս, եթե կենդանիները, օրինակ շները, մարդու խոսքերը հասկանալու շնորհք ունենային և եթե նրանցից մեկն ու մեկը երեկ լսեր Դիցին, աստված վկա, ամոթից կհեռանար սենյակից։ Դուք գիտեք, Դիցը լավ մարդ է, և բոլորն էլ լավ են, Ռոմաշով, վատ մարդիկ չկան։ Բայց նա՞ համաչում է կանանց մասին այլ կերպ խոսել, վախենում է ցինիկի, անառակի և հաղթողի իր համբավը կորցնելուց։ Այստեղ ինչ-որ ընդհանուր խաբեություն, ինչ-որ տղամարդկային շինծու կտրիճություն, ինչ-որ պարծենկոտ արհամարհանք կա դեպի կինը։ Եվ այս բոլորը նրանից է, որ մեծամասնության համար սիրո մեջ, կնոջը տիրանալու, հասկանո՞ւմ եք, վիրջնականապես տիրանալու մեջ, թաքնված է ինչ-որ կոպիտ-անասնական, ինչ-որ եսասիրական, միմիայն իր համար, ինչ-որ թաքուն-ստոր, շնական ու ամոթալի մի բան, գրողը տանի, ես չեմ կարողանում դա արտահայտել։ Եվ՝ հենց դրանից է, որ մեծամասնության մեջ տիրանալուց հետո առաջանում է սառնություն, զզվանք, թըշնամանք։ Դրա համար էլ մարդիկ սիրո համար հատկացրել են գիշերը, նույնպես, ինչպես և գողության և մարդասպանության համար... Այստեղ, սիրելիս, բնությունը մարդկանց համար ինչ-որ թակարդ է լարել խայծով ու վզին գցելու օղակով։

— Այդ ճշմարիտ է, —կամացուկ ու թախծալի համաձայնեց Ռոմաշովը։

— Ո՛չ, ճիշտ չէ՛,— բարձրաձայն բղավեց Նազանսկին։— Ես ձեզ ասում եմ՝ ճիշտ չէ։ Բնությունը, ինչպես և ամեն բանում, տնօրինել է հանճարեղորեն։ Բանն էլ այն է, որ պորուլիկ Դիցի համար սիրուց հետո գալիս է զզվանք և հագեցում, իսկ Դանթեի համար ամբողջ սերը հիացում է, դյութանք, գարո՞ւն։ Ոչ, ոչ, մի կարծեք, ես խոսում եմ սիրո մասին ամենաուղղակի, մարմնական իմաստով։ Բայց սերը ընտրյալների բաժինն է։ Ահա ձեզ մի օրինակ. բոլոր մարդիկ երաժշտական լսողություն ունեն, բայց միլիոնավորների մեջ դա ձողաձկան կամ շտաբս-կապիտան Վասիլչենկոյի լսողության նման է, այդ միլիոնից մեկը Բեթհովեն

է... Այդպես է ամեն ինչում՝ պոեզիայի, նկարչության, իմաստության մեջ... Եվ սերն էլ, ասում եմ ձեզ, ունի իր բարձունքները, որ մատչելի են այդ միլիոններից հազվագյուտ մարդկանց միայն։

Նա մոտեցավ լուսամուտին, ճակատը հենեց պատի անկյունին՝ Ռոմաշովի մոտ և, մտախոհ նայելով գարնանային գիշերվա տաքուկ խավարին, խորունկ, սրտալի ձայնով ասաց.

— Օ՛, ինչպես մենք չենք կարողանում գնահատել սիրո նրբին, անորսալի հրապույրները, մենք՝ կոպիտ, ծույլ անհեռատես մարդիկս։ Հասկանո՞ւմ եք արդյոք, թե որքան բազմապիսի երջանկություն և հմայիչ տանջանքներ է պարունակում իր մեջ ոչ փոխադարձ սերը։ Երբ ես ավելի երիտասարդ էի, իմ մեջ ապրում էր մի ցնորք՝ սիրահարվել մի անհասանելի, արտասովոր կնոջ, գիտե՞ք, մի այնպիսի կնոջ, որի հետ երբեք և ոչ մի ընդհանուր բան չեմ կարող ունենալ։ Սիրահարվել, և ամբողջ կյանքս, բոլոր խոհերս նվիրել նրան։ Միևնույն է՝ օրավարձու մշակ դառնալ, լակեյության, կառապանության մտնել, զգեստափոխվել, խորամանկել, որպեսզի տարեկան գեթ մեկ անգամ տեսնեմ նրան, համբուրեմ նրա ոտքի հետքերը սանդուղքի վրա, որպեսզի,— օ՛, խելահեղ երանություն,— կյանքումս մեկ անգամ դիպչեմ նրա զգեստին։

— Եվ վերջացնեք խելագարությամբ,— մռայլ ասաց Ռոմաշովը։

— Ա՛խ, սիրելիս, միևնույն չէ՞ միթե,— բորբոքված առարկեց Նազանսկին և նորից սկսեց ջղայնորեն վազվզել սենյակում։— Թերևս, ո՞վ գիտե, հենց այդ ժամանակ կմտնեք երանելի, հեքիաթային կյանք։ Դե լավ՝ դուք կխելագարվեք այդ զարմանալի, անհավատալի սիրուց, իսկ պորուչիկ Դիցը կխելագարվի պրոգրեսիվ կաթվածից և զզվելի հիվանդություններից։ Ո՞րն է լավը։ Բայց մի մտածեցե՛ք, ի՞նչ երջանկություն է՝ ամբողջ գիշերը կանգնել փողոցի հակառակ կողմում, ստվերի մեջ և նայել սյաշտելի կնոջ լուսամուտից ներս։ Ահա ներսը լուսավորվեց, վարագույրի վրա շարժվում է մի ստվեր։ Նա չէ՞ արդյոք։ Ի՞նչ է անում նա։ Ի՞նչ է մտածում։ Լույսը հանգավ։ Քնի՞ր հանգիստ, իմ ուրախություն, քնի՛ր, իմ սիրեցյա՛լ... Եվ օրդ արդեն լեցուն է, դա հաղթանակ է։ Օրեր, ամիսներ, տարիներ շարունակ գործադրել հնարամտության ու համառության ողջ ուժերդ, ահա՝ մեծ, մտացնորիչ հիացք՝ քո ձեռքին է նրա թաշկինակը, քաղցրավենիքի

թղթիկը, ձեռքից գցած հայտագիրը։ Նա ոչինչ չգիտե քո մասին, երբեք չի իմանա քո մասին, նրա աչքերը սահում են քո վրայով առանց տեսնելու, բայց դու այդտեղ ես, մոտիկ, միշտ պաշտող, միշտ պատրաստ նրա համար, ո՛չ, ինչո՞ւ նրա համար, նրա քմահաճույքի, նրա ամուսնու, նրա սիրեկանի, նրա սիրելի շնիկի համար տալ և՛ կյանքդ, և՛ պատիվդ, և՛ ամեն ինչ, ինչ միայն հնարավոր է տալ։ Ռոմաշով, գեղեցիկներն ու հաղթողներն այդ ուրախությունները չգիտեն։

— Օ՛, որքան ճիշտ է այդ։ Որքա՞ն լավ է այն ամենը, ինչ ասում եք, — բացականչեց հուզված Ռոմաշովը։ Նա վաղուց արդեն վեր էր կացել լուսամուտի գոգից և նույնպես, ինչպես Նազանսկին, անց ու դարձ էր անում նեղ ու երկար սենյակում, ամեն րոպե ընդհարվելով նրան և կանգ առնելով։— Ի՞նչ մտքեր են գալիս ձեր գլուխը։ Ես ձեզ կպատմեմ իմ մասին։ Ես սիրահարված էի մի... կնոջ։ Դա այստեղ չէր, այստեղ չէր... դեռ Մոսկվայում... ես... յունկեր էի։ Բայց նա չգիտեր այդ մասին։ Եվ ինձ սքանչելի բավականություն էր պատճառում նստել նրա կողքին և, երբ նա որևէ բան էր գործում, թելից բռնել և կամացուկ ձգել գեպի ինձ։ Եվ միմիայն այսքան։ Նա այդ չէր նկատում, բոլորովին չէր նկատում, իսկ իմ գլուխը երջանկությունից պտտվում էր։

— Այո, այո, ես հասկանում եմ,— գլխով էր անում Նազանսկին ուրախ ու փաղաքուշ ժպտալով։ — Ես ձեզ հասկանում եմ։ Դա կարծես հաղորդալար, ասես էլեկտրական հոսա՞նք լինի։ Այո՞։ Ինչ-որ նուրբ, քնքուշ հաղորդակցությո՞ւն։ Ա՛խ, սիրելիս, կյանքն այնքա՞ն հրաշալի է...

Նազանսկին լուսց իր մտքերից սրտաշարժված, և արցունքով լցված նրա կապույտ աչքերը փայլեցին։ Ռոմաշովին նույնպես համակեց ինչ-որ անորոշ, մեղմ խղճահարություն և փոքր-ինչ հիստերիկ սրտաշարժություն։ Այդ զգացմունքները միանման վերաբերվում էին թե՛ Նազանսկուն, թե՛ իրեն։

— Վասիլի Նիլիչ, ես զարմանում եմ ձեզ վրա, —ասաց նա, բռնելով Նազանսկու զույգ ձեռքերը և պինդ սեղմելով։— Դուք այնպես տաղանդավոր, զգայուն, լայնախոհ մարդ եք, և ահա... Կարծեք գիտավորյալ կործանում եք ձեզ։ Օ, ո՛չ, ո՛չ, ես չեմ համարձակվում ձեզ ճոռոմ բարոյախոսություն կարդալ... Ես ինքս... Բայց ի՞նչ կլիներ, եթե ձեր կյանքում հանդիպեիք մի

կնոջ, որը կարողանար ձեզ գնահատել և որը ձեզ արժանի լիներ։ Ես հաճախ եմ այդ մասին մտածում...

Նազանսկին կանգ առավ և երկար ժամանակ նայում էր պատուհանից դուրս։

— Կի՜ն...— մտախոհ ծոր տվեց նա...— Այո՜։ Ես ձեզ կպատմեմ,— հանկարծ բացականչեց նա վճռաբար։— Ես կյանքումս մի եզակի անգամ հանդիպեցի մի հրաշալի, արտասովոր կնոջ։ Մի աղջկա... Բայց դիտե՞ք, ինչպես Հայնեն է ասում. «Աղջիկը արժանի էր սիրո, և տղան սիրում էր նրան, բայց տղան արժանի չէր սիրո և աղջիկը չէր սիրում նրան»։ Նա դադարեց ինձ սիրել նրա համար, որ ես խմում եմ... ասենք, ես չգիտեմ, գուցե ես խմում եմ այն պատճառով, որ նա դադարեց ինձ սիրելուց։ Նա... նույնպես այստեղ չէ... դա վաղուց էր։ Չէ՞ որ դուք գիտեք, ես նախ երեք տարի ծառայեցի, հետո չորս տարի պահեստում էի, իսկ հետո երեք տարի առաջ նորից մտա գունդ։ Մեր մեջ սիրավեպ չկար։ Ընդամենը տասը-տասնհինգ հանդիպում, հինգ-վեց մտերիմ խոսակցություն։ Բայց երբևէ մտածե՞լ եք դուք անցյալի անդիմադրելի հմայիչ իշխանության մասին։ Եվ ահա, այդ անմեղ մանրուքներն են իմ ողջ հարստությունը։ Ես նրան մինչև հիմա սիրում եմ։ Կացեք, Ռոմաշով... Դուք արժանի եք դրան։ Ես ձեզ համար կկարդամ նրա միակ նամակը՝ առաջին և վերջին նամակը, որ նա գրել է ինձ։

Նա պզզեց ճամպրուկի առաջ և առանց շտապելու սկսեց այնտեղ շուռ ու մուռ տալ ինչ-որ թղթեր. միևնույն ժամանակ շարունակում էր խոսել։

— Թերևս, նա երբեք և ոչ ոքի չի սիրել բացի իրենից։ Նրա մեջ անսահման իշխանասիրություն կա, ինչ-որ չար ու հպարտ ուժ։ Եվ, միևնույն ժամանակ, նա այնքան բարի է, կանացի, անսահմանորեն սիրելի։ Ասես նրա մեջ երկու մարդ կա. մեկը՝ չոր, եսասիրական խելքով, մյուսը՝ քնքուշ և սիրավառ սրտով։ Ահա նամակը, Ռոմաշով, կարդացեք։ Վերևի մասում եղածն ավելորդ է։— Նազանսկին ետ ծալեց վերևից մի քանի տող։— Ահա այստեղից։ Կարդացեք։

Կարծեք թե ինչ-որ կողմնակի բան Ռոմաշովի գլուխը խփեց, և ամբողջ սենյակը երերաց նրա աչքերի առաջ։ Նամակը գրված էր խոշոր, ջղային, բարակ ձեռագրով, որը կարող էր պատկանել միայն Ալեքսանդրա Պետրովնային՝ այնքան այդ ձեռագիրը յուրահատուկ էր, անկանոն և նրբագեղ։ Ռոմաշովը, որ հաճախ էր

տոմսակներ ստանում, որոնցով հրավիրվում էր ճաշի և մի ձեռք վինտ խաղալու, կարող էր այդ ձեռագրերը ճանաչել հազարավոր տարբեր գրությունների մեջ։

«...և դառն է և ծանր ասել դա,— կարդում էր Ռոմաշովը Նազանսկու ձեռքի-տակից։— Բայց դուք ինքներդ արիք ամեն բան, որպեսզի մեր ծանոթությունը հանգեցնեինք այսպիսի տխուր վախճանի։ Կյանքում ամենից առավել ես ամաչում եմ ստից, որը միշտ գալիս է վախկոտությունից և թուլությունից, ուստի և չեմ ստի ձեզ։ Ես սիրում էի ձեզ և մինչև հիմա էլ սիրում եմ, և գիտեմ, որ շուտով ու հեշտությամբ չեմ ազատվի այդ զգացմունքից։ Բայց, վերջիվերջո, ես կհաղթահարեմ։ Ի՞նչ կլիներ, եթե ես այլ կերպ վարվեի։ Իմ մեջ, իրավ է, կգտնվեր բավականաչափ ուժ և անձնուրացություն՝ ուղեցույց, դայակ, գթության քույր լինելու կամազուրկ, վհատված, բարոյապես քայքայվող մարդու կողքին, բայց ես ատում եմ խղճահարության և մշտական ստորացուցիչ համաներման զգացմունքը և չեմ ուզում, որ դուք իմ մեջ արթնացնեք այդպիսի զգացմունքներ։ Ես չեմ ուզում, որ դուք անվերջ կարեկցության և շան հավատարմության ողորմությամբ։ Իսկ այլ մարդ լինել դուք չեք կարող, չնայած ձեր խելքին և սքանչելի հոգուն։ Ասացեք ազնվորեն, անկեղծորեն, չէ՞ որ չեք կարող։ Ախ, թանկագին Վասիլի Նիլիչ, երանի՜ կարողանայիք։ Երանի՜։ Դեպի ձեզ է ձգտում իմ ամբողջ սիրտը, իմ բոլոր ցանկությունները, ես սիրում եմ ձեզ։ Բայց դուք ինքներդ չցանկացաք ինձ։ Չէ՞ որ սիրած մարդու համար կարելի է շուռ տալ ամբողջ աշխարհը, իսկ ես ձեզանից այնքա՜ն քիչ բան էի խնդրում։ Դուք չե՞ք կարող։

Մնաք բարով... Մտովի համբուրում եմ ձեր ճակատը... Ինչպես հանգուցյալի, որովհետև դուք մեռաք ինձ համար։ Խորհուրդ եմ տալիս ոչնչացնել այս նամակը։ Ոչ թե նրա համար, որ ես որևէ բանից վախենում եմ, այլ, որովհետև ժամանակի ընթացքում դա ձեզ համար կլինի թախծի ու տանջալից հիշողությունների աղբյուրը։ Մեկ անգամ էլ եմ կրկնում...»։

— Շարունակությունը ձեզ համար հետաքրքիր չէ, —ասաց Նազանսկին, Ռոմաշովի ձեռքից քաշելով նամակը։ —Սա նրա միակ նամակն էր ինձ։

— Իսկ հետո ի՞նչ եղավ, — դժվարությամբ հարցրեց Ռոմաշովը։

— Հետո՞։ Հետո մենք այլևս չէինք տեսնվում։ Նա... նա մեկ-

նեց չգիտեմ ուր և, կարծեմ, ամուսնացավ... մի ինժեների հետ։ Դա երկրորդական է։

— Եվ դուք բոլորովի՞ն չեք լինում Ալեքսանդրա Պետրովնայի մոտ։

Այդ բառերը Ռոմաշովն ասաց բոլորովին շշուկով, բայց երկու սպաներն էլ ցնցվեցին դրանցից և երկար ժամանակ չէին կարողանում աչքներն իրարից հեռացնել։ Այդ մի քանի վայրկյանում ասես հեռու քաշվեցին նրանց միջև կանգնած մարդկային խորամանկության, կեղծիքի և անթափանցելիության բոլոր պատնեշները, և նրանք ազատորեն կարդում էին միմյանց հոգում։ Նրանք միանգամից հասկացան հարյուրավոր բաներ, որ մինչև այժմ թաքուն պահում էին իրենց մեջ, և նրանց այսօրվա ամբողջ խոսակցությունը հանկարծ ընդունեց ինչ-որ առանձնահատուկ խորունկ, ասես ողբերգական իմաստ։

— Ինչպե՞ս։ Դուք է՞լ,— կամացուկ, խելահեղ սարսափի արտահայտությունն աչքերին, վերջապես արտասանեց Նազանսկին։

Բայց նա անմիջապես ուշքի եկավ և շինծու ծիծաղով բացականչեց.

— Թյո՛ւ, ինչպիսի թյուրիմացություն։ Մենք բոլորովին հեռացանք թեմայից։ Այդ նամակը, որ ես ցույց տվի, գրված է հարյուր տարի առաջ, և այդ կինը հիմա ապրում է հեռու, կարծեմ, Անդրկովկասում... Այսպես, ուրեմն, ինչի՞ վրա կանգ առանք։

— Իմ տուն գնալու ժամանակն է, Վասիլի Նիլիչ։ Ուշ է,— ասաց Ռոմաշովը վեր կենալով։

Նազանսկին նրան ետ չպահեց։ Նրանք միմյանց հրաժեշտ տվին ոչ սառը, ոչ էլ շոր, բայց կարծեք ամաչելով միմյանցից։ Ռոմաշովը հիմա ավելի ևս համոզված էր, որ նամակը գրել էր Շուրոչկան։ Տան ճանապարհին նա շարունակ մտածում էր այդ նամակի մասին և ինքն էլ չէր կարողանում հասկանալ, թե իր մեջ դա ինչպիսի զգացմունքներ էր հարուցում։ Այդտեղ կար և խանդոտ նախանձ դեպի Նազանսկին՝ խանդ դեպի անցյալը, և ինչ-որ հաղթանակած չար խղճահարություն Նիկոլաևի նկատմամբ, բայց միաժամանակ կար ինչ-որ նոր հույս՝ տարտամ, մշուշոտ, բայց քաղցր ու հրապուրիչ։ Կարծես այդ նամակը նրա ձեռքն էլ տալիս էր ինչ-որ խորհրդավոր, աներևույթ թել, որ ձգվում էր դեպի ապագան։

Քամին հանդարտվեց։

Գիշերը լի էր խոր լռությամբ, և նրա խավարը թվում էր թավշյա ու տաք։ Բայց թաքուն, ստեղծարար կյանքն զգացվում էր անքուն օդի մեջ, անտեսանելի ծառերի անդորրի, հողի բույրի մեջ։ Ռոմաշովը գնում էր առանց ճանապարհը տեսնելու և նրան շարունակ պատկերանում էր, թե ահա ուր որ է ինչ-որ հզոր, տիրական ու փաղաքուշ մեկը նրա երեսին կփչի իր տաք շունչը։ Եվ նրա հոգում մի խանդոտ թախիծ կար իր առաջվա, մանկական, այդքան պայծառ ու անդառնալի գարունների համար, կար մեղմիկ, անչար նախանձ իր անբիծ, քնքուշ անցյալի համար։

Տուն հասնելով, նա գտավ երկրորդ տոմսակը Ռախա Ալեքսանդրովնա Պետերսոնից։ Նա անհեթեթ ու վերամբարձ ոճով գրում էր խարդախ խաբեության և այն մասին, որ ինքը ամեն բան հասկանում է, և ահավոր վրիժառության մասին, որին ընդունակ է կնոջ փշրված սիրտը։

«Ես գիտեմ, թե հիմա ինչ եմ անելու, — ասվում էր նամակում։ — Եթե միայն չմեռնեմ թոքախտի վրա ձեր ստոր վարքից, ապա, հավատացեք, դաժանորեն կհատուցեմ ձեզ։ Գուցե դուք կարծում եք, թե ոչ ոք չգիտի՞ որտեղ եք լինում ամեն երեկո։ Կո՛ւյր։ Պատերն էլ ականջ ունեն։ Ինձ հայտնի է ձեր ամեն մի քայլը։ Բայց միևնույն է, ձեր արտաքինով ու պերճախոսությամբ դուք այնտեղ ոչ մի բանի չեք հասնի, բացի նրանից, որ N-ը ձեզ շան լակոտի պես դռնից դուրս կնետի։ Իսկ ինձ հետ՝ խորհուրդ եմ տալիս ավելի զգույշ լինել։ Ես այն կանանցից չեմ, որոնք ներում են հասցրած վիրավորանքները։

Ես լավ գիտեմ գաղտնի բանեցնել,
Կովկասի մոտ եմ ես ծնվե՛լ...

Առաջ ձեր՝ այժմ ոչ ոքի Ռախա։

P. S. Հաջորդ շաբաթ օրը անպայման եղեք ակումբում։ Մենք պետք է բացատրվենք։ Ես ձեզ համար կպահեմ երրորդ կադրիլը, բայց հիմա արդեն առանց նշանակության։

Ռ. Պ.

Հիմարության, գռեհկության, գավառական ճահճի և չար բամբասանքի հոտ փչեց Ռոմաշովի վրա այդ անգրագետ ու ան-

միտ նամակից։ Եվ նրան թվաց, թե ինքը ոտից գլուխ աղտոտված է կպչուն, շմաքրվող կեղտով, որ նրան քսել էր չսիրած կնոջ հետ ունեցած այդ կապը, մի կապ, որ ձգձգվում էր գրեթե՝ կես տարի։ Նա անկողին մտավ, ասես ճզմված ամբողջ այսօրվա օրով և, արդեն քուն մտնելով, իր մասին մտածեց այն բառերով, որ երեկոյան լսել էր Նազանսկուց.

«Նրա մտքերը գորշ էին զինվորական մահուդի պես»։

Նա քնեց շուտ, ծանր քնով։ Եվ ինչպես միշտ պատահում էր նրան վերջերս խոշոր դառնություններից հետո, երազում տեսավ, որ ինքը մանուկ է։ Ջկար կյանքի կեղտը, թախիծը, միօրինակությունը, մարմնում զգացվում էր առույգություն, հոգին պայծառ էր ու մաքուր, և խայտում էր անգիտակից խնդությամբ։ Եվ ամբողջ աշխարհն էր պայծառ ու մաքուր, իսկ նրա կենտրոնում՝ Մոսկվայի սիրելի, ծանոթ փողոցները շողում էին այն ըսքանչելի փայլով, որ կարելի է տեսնել միայն երազում։ Բայց այդ ցնծալի աշխարհի ինչ-որ ծայրում, հեռու հորիզոնի վրա, մնում էր մի խավար, շարագուշակ բիծ՝ այնտեղ թաքնված էր գորշ, վհատ, խղճուկ մի քաղաք՝ ծանր ու տաղտկալի ծառայությամբ, վաշտային դպրոցներով, ակումբում տեղի ունեցող հարբեցողությամբ, ծանր ու նողկալի սիրային կապով, թախիծով ու միայնությամբ։ Ամբողջ կյանքը զրնգում ու շողում էր ուրախությամբ, բայց խավար թշնամական բիծը գաղտագողի, ինչպես սև ուրվական, դարանամուտ հետևում էր Ռոմաշովին և սպասում իր հերթին։ Եվ մի փոքրիկ Ռոմաշով՝ մաքուր, անհոգ, անմեղ, ջերմորեն լալիս էր իր ավագ կրկնորդի վրա, որը հեռանում, ասես լուծվում էր այդ չար խավարում։

Գիշերվա կեսին նա արթնացավ և նկատեց, որ բարձը թաց է արցունքներից։ Նա չէր կարողանում զսպել դրանք, և արցունքները դեռ երկար հոսում էին նրա այտերից տաք, թաց, արագահոս կայլակներով։

6

Բացառությամբ մի քանի փառասերների ու կարիերիստների, բոլոր սպաները պաշտոնը վարում էին որպես հարկադիր, ազահաճ, զզվեցրած կոռ, նեղվելով նրանից և չսիրելով։ Կրտսեր սպաները, բոլորովին աշակերտավարի, ուշանում էին պարապմունքներից և կամացուկ ծլկում էին այդտեղից, եթե գիտեին,

որ դրա համար չեն պատժվի։ Վաշտի հրամանատարները, մեծ մասամբ բազմանդամ ընտանիքով ծանրաբեռնված մարդիկ, ընտանեկան անհամաձայնությունների և իրենց կանանց սիրավեպերի մեջ ընկղմված, դաժան աղքատության և հնարավորություններից վեր ապրուստի տակ ճզմված տնքում էին ուժից վեր ծախսերի և մուրհակների բեռան տակ։ Նրանք կարկատան կարկատանի վրա էին գցում, մի տեղից փող ճանկելով, որպեսզի ծածկեն պարտքը մի այլ տեղ, նրանցից շատերը սիրտ էին անում և մեծ մասամբ իրենց կանանց դրդմամբ փող պարտք առնել վաշտի գումարներից կամ զինվորներին ազատ աշխատանքների համար վճարելիք գումարներից, ոմանք ամիսներով, նույնիսկ տարիներով ետ էին պահում զինվորների դրամական նամակները, որոնք, ըստ կանոնների, պետք է բաց անեին։ Մի քանիսը ապրում էին հենց միայն վինտ, շտոս և լանդսկնեխտ խաղալով. ոմանք խարդախ էին խաղում, այդ մասին գիտեին, բայց մատների արանքով էին նայում։ Ընդսմին բոլորը խիստ հարբում էին ինչպես ակումբում, այնպես էլ իրար մոտ հյուր գնալիս, իսկ ոմանք էլ, ինչպես Ալիվան, հարբեցողությամբ էին զբաղվում միայնակ։

Այսպիսով, սպաները նույնիսկ ժամանակ չէին ունենում լուրջ վերաբերվելու իրենց պարտականություններին։ Սովորաբար վաշտի ողջ ներքին մեխանիզմը շարժման մեջ էր դնում ֆելդֆեբելը. հենց նա էլ վարում էր գրասենյակային ամբողջ հաշվետվությունը և վաշտի հրամանատարին աննկատելի, բայց ամուր պահում էր իր ջլուտ, բազմափորձ ձեռքերում։ Վաշտի սպաները նույնպիսի խորշանքով էին ներկայանում ծառայության, ինչպես և ենթասպաները և «ֆենդրիկներին հուշ էին տալիս» միայն իրենց հեղինակությունը պահպանելու համար, իսկ ավելի սակավ՝ կամակոր իշխելասիրությունից։

Գումարտակների հրամանատարները պարզապես ոչինչ չէին անում, մանավանդ ձմեռները։ Բանակում կա երկու այդպիսի միջանկյալ օղակ՝ գումարտակի և բրիգադի հրամանատարները. այդ պետերը միշտ գտնվում են ամենաանորոշ և անգործունյա վիճակում։ Ամառը այսպես թե այնպես նրանք ստիպված էին լինում գումարտակային վարժություններ անցկացնել, մասնակցել գնդային և դիվիզիոն պարապմունքներին և կրել զորաշարժերի դժվարությունները։ Իսկ ազատ ժամանակ նրանք նստում էին ակումբում, ջանասիրությամբ կարդում էին «Ինվալիդ»-ը և վիճում աստիճանատվության մասին, թուղթ էին

խաղում, հաճույքով թույլ էին տալիս, որ կրտսեր սպաներն իրենց հյուրասիրեն, երեկույթներ էին կազմակերպում իրենց տներում և աշխատում մարդու տալ իրենց բազմաթիվ աղջիկներին։

Սակայն մեծ զորատեսերից առաջ բոլորը, փոքրից մեծ, ձգվում էին և առաջ մղում միմյանց։ Այն ժամանակ արդեն չէին իմանում ինչ է հանգիստը, պարապմունքների հավելյալ ժամերով և լարված, թեպետև անմիտ եռանդով լրացնում էին բաց թողածը։ Զինվորների ուժերը հաշվի չէին առնում՝ մարդկանց հասցնելով ուժասպառության։ Վաշտի հրամանատարները խստորեն զսպում և լռեցնում էին կրտսեր սպաներին, կրտսեր սպաները զայրախոսում էին՝ անբնական, անհարակ ու այլանդակ. ենթասպաները, հիշողներից խոպոտած, չարաչար ծեծում էին մարդկանց։ Ասենք, ծեծում էին ո՛չ միայն ենթասպաները։

Դրանք լինում էին իսկական թեժ աշխատանքի օրեր, և ամբողջ գունդը՝ հրամանատարից սկսած մինչև վերջին քրքրված ու գզլոտած սպասյակը, երազում էր կիրակնօրյա հանգստի մասին, որպես դրախտային երանության մասին, երբ կկարողանային մի քանի ժամ ավել քնել։

Այդ գարնանը եռանդուն կերպով պատրաստվում էին մայիսյան զորատեսին։ Հաստատապես հայտնի դարձավ, որ ըստուգումն անցկացնելու է կորպուսի հրամանատար, խստապահանջ մարտական գեներալը, որը համաշխարհային ռազմական գրականության մեջ հայտնի էր իր նոթերով կարլիստների պատերազմի և 1870 թվի ֆրանս-պրուսական կամպանիայի մասին, որոնց նա մասնակցել էր որպես կամավոր։ Ավելի մեծ հռչակ էին վայելում կարճուկտրուկ սուվորովյան ոճով գրված նրա հրամանները։ Այդ հրամաններում զանցառու ստորադրյալներին նա շշպռում էր իրեն հատուկ կոպիտ ու կծու սարկազմով, որից սպաները վախենում էին ավելի, քան կարգապահական որևէ պատժից։ Այդ պատճառով էլ ահա արդեն երկու շաբաթ էր, ինչ վաշտերում գնում էր հապճեպ, տենդագին աշխատանք, և կիրակի օրվան միատեսակ անհամբերությամբ սպասում էին ինչպես հոգնած սպաները, այնպես էլ ծեծկված, խենթացած զինվորները։

Բայց Ռոմաշովի համար կալանքի պատճառով կորավ այդ քաղցր հանգստի ամբողջ հմայքը։ Նա վեր կացավ շատ վաղ և հետո որքան փորձեց, չկարողացավ քնել։ Նա թմրած հագնվեց, զզվանքով սկսեց թեյ խմել և նույնիսկ մի անգամ կոպիտ բղավեց Գայնանի վրա, որը, ինչպես միշտ, ուրախ էր, շարժուն ու անշնորհք, ինչպես ջահել քոթոթը։

Կոճակներն արձակած գորշագույն բաճկոնը հագին Ռոմաշովը պտտվում էր իր պստլիկ սենյակում, ոտքերը դիպցնելով մահճակալի ոտքերին, իսկ արմունկները՝ խախուտ, փոշոտ գրքակալին։ Մեկ ու կես տարվա ընթացքում առաջին անգամ, այն էլ դժբախտ և պատահական դիպվածի շնորհիվ, նա միայնակ մնաց ինքն իր հետ։ Առաջ դրան խանգարում էին պաշտոնավարությունը, հերթապահությունները, երեկոները ակումբում, թղթախաղը, Պետերսոնին սիրահետելը, Նիկոլաևների մոտ անցկացրած երեկոները։ Երբեմն, եթե պատահում էլ էր ազատ, ոչնչով չզբաղված մի ժամ, ապա Ռոմաշովը, ձանձրույթից ու անգործությունից նեղվելով, ասես ինքն իրենից վախենալով, ճեպով վազում էր ակումբ, կամ ծանոթների մոտ, կամ ուղղակի փողոց, մինչև իր ամուրի ընկերներից որևէ մեկին պատահելը, որը միշտ ավարտվում էր խմելով։ Իսկ հիմա նա թախիծով մտածում էր, որ առջևում միայնության մի ամբողջ օր կա, և շարունակ նրա գլուխն էին գալիս այնպիսի՜ տարօրինակ, անհարմար ու անհարկի մտքեր։

Քաղաքում ղողանջեցին ցերեկվա պատարագի զանգերը։ Դեռևս չհանած կրկնակի շրջանակի միջով Ռոմաշովին էին հասնում զանգահարության դողդոջուն, ասես մեկը մյուսից ծնվող, գարնան պես հմայիչ, թախծալուր հնչյունները։ Հենց լուսամուտի տակից սկսվում էր այգին, որտեղ աճում էին բազմաթիվ կեռասենիներ, ծաղիկներից ամբողջովին սպիտակ, կլոր ու գանգրագիսակ, ասես ձյունասպիտակ ոչխարների հոտ, ասես սպիտակազգեստ աղջիկների ամբոխ։ Նրանց մեջ այս ու այնտեղ բարձրանում էին սլացիկ, ուղղաձիգ բարդիներ, աղոթվորի պես վեր, դեպի երկինք պարզած ճյուղերով, և ծառախումբ հիշեցնող իրենց հզոր կատարներն էին լայնորեն տարածում հինավուրց շաքանակենիները. ծառերը դեռևս դատարկ էին և սևին էին տալիս մերկ ճյուղերով, բայց արդեն սկսել էին, աչքի համար հազիվ նշմարելի, դեղնել առաջին, թավոտ, խնդում կանաչությամբ։ Առավոտը պարզ էր, պայծառ, խոնավ։ Ծառերը մեղմ ցնցվում էին և դանդաղ օրորվում։ Զգացվում էր, որ նրանց միջև Բափառում է փաղաքուշ զով զեփյուռը, և սիրաբանում է ու շարություն անում և, ցած թեքելով ծաղիկները, համբուրում նրանց։

Լուսամուտից դեպի աջ դարպասի միջով երևում էր կեղտոտ, սև փողոցի մի մասը, որի հակառակ կողմում ինչ-որ մեկի ցանկապատն էր։ Այդ ցանկապատի երկայնքով, ոտքերը խնամքով շոր տեղերը դնելով, դանդաղաքայլ անցնում էին մարդիկ։ «Նրանք դեռ ամբողջ օրն ունեն առջևում, —մտածում էր Ռոմաշովը, նախանձոտ աչքերով հետևելով նրանց,— դրա համար էլ նրանք չեն շտապում։ Մի ամբո՞ղջ ազատ օր»։

Եվ նա հանկարծ անհամբեր, բուռն, արտասվելու աստիճան ուզեց իսկույն ևեթ հագնվել և դուրս գալ սենյակից։ Նրան ձգում էր ոչ թե ակումբը, ինչպես միշտ, այլ ուղղակի փողոցը, բաց օդը։ Նա կարծես առաջ չգիտեր ազատության արժեքը, և հիմա ինքն էլ էր զարմանում, թե որքան երջանկություն կարող է լինել՝ ուր ուզում ես գնալու, որ նրբանցքն ուզես թեքվելու, հրապարակ դուրս գալու, եկեղեցի մտնելու հասարակ հնարավորության մեջ և այդ անելու առանց վախի, առանց հետևանքների մասին մտածելու։ Այդ հնարավորությունը հանկարծ նրան ներկայացավ որպես հոգու ինչ-որ մեծ տոն։

Եվ միաժամանակ նա հիշեց, թե ինչպես վաղ մանկության օրերին, դեռ մինչև կորպուս մտնելը, մայրը պատժում էր նրանով, որ բարակ թելով նրա ոտքը կապում էր մահճակալից, իսկ ինքը տնից գնում էր։ Եվ փոքրիկ Ռոմաշովը հլու նստում էր ամբողջ ժամերով։ Ուրիշ ժամանակ նա մի վայրկյան իսկ չէր վարանի, որ տնից փախչեր ամբողջ օրով, թեկուզ դրա համար ստիպված լիներ երկրորդ հարկի լուսամուտից իջնել ջրհորդանի խողովակով ցած սողալով։ Նա հաճախ այդ ձևով դուրս պրծնելով, ռազմական երաժշտության կամ թաղման թափորի պոչն ընկած հասնում էր Մոսկվայի մյուս ծայրը, խիզախորեն մորից գողանում էր շաքար, մուրաբա և ծխախոտ ավագ ընկերների համար, բայց թե՞լը, թելը նրա վրա տարօրինակ, հիպնոսացնող ներգործություն էր ունենում։ Նա նույնիսկ վախենում էր փոքր-ինչ ուժեղ ձգել, որ հանկարծ չկտրվեր։ Այստեղ պատժի սարսափը չէր և, իհարկե, ոչ էլ բարեխղճությունը, ոչ իսկ զղջումը, այլ հենց հիպնոսը, ինչ-որ սնոտի վախ մեծերի հզոր ու անհասկանալի գործողությունների հանդեպ, վայրենու ինչ-որ հարգալիր-սարսափ շամանի քաշած շրջագծից։

«Եվ ահա ես հիմա նստած եմ որպես աշակերտ, որպես ոտքը թելով կապած փոքրիկ տղա,— մտածում էր Ռոմաշովը,

քարշ գալով սենյակում։ — Դուռը բաց է, ես ուզում եմ գնալ ուր կուզեմ, անել այն, ինչ կուզեմ, խոսել, ծիծաղել, բայց նստել եմ թելակապ։ Այդ ես եմ նստած։ Ես։ Չէ՞ որ այդ ե՞ս եմ։ Բայց ախր միայն նա՛ որոշեց, որ ես պետք է նստեմ։ Ես իմ համաձայնությունը չեմ տվել։

— Ե՛ս։ — Ռոմաշովը ոտքերը չոռած կանգ առավ սենյակի մեջտեղում և, գլուխը կախ, խոր մտածմունքի մեջ ընկավ։ — Ե՛ս։ Ե՛ս։ Ե՛ս,— հանկարծ բացականչեց նա բարձրաձայն, զարմանքով, ասես առաջին անգամ հասկանալով այդ կարճ բառը։ — Այդ ո՞վ է, որ կանգնել է այստեղ և նայում է ցած, հատակի սև ճեղքին։ Այդ ե՞ս եմ։ Օ՜, ինչ տարօրինա՛կ է... Ե-ե՞ս,— ծոր տվեց նա դանդաղ, ողջ գիտակցությամբ խորամուխ լինելով այդ հնչյունին։

Նա մտացրիվ ու շփոթված ժպտաց, բայց իւկույն խոժոռվեց և գունատվեց մտքի լարումից։ Նման բան նրա հետ հաճախ էր պատահում վերջին հինգ-վեց տարվա ընթացքում, ինչպես այդ պատահում է գրեթե բոլոր երիտասարդներին հոգու հասունացման շրջանում։ Մի պարզ ճշմարտություն, առակ, հանրահայտ ասացվածք, որոնց իմաստը նա վաղուց մեքենաբար գիտեր, հանկարծ շնորհիվ ինչ-որ ներքին անակնկալ լուսավորման ստանում էր խոր փիլիսոփայական իմաստ, և այժմ նրան թվում էր, թե առաջին անգամն է լսում դրանք, գրեթե ինքն է հայտնագործել։ Նա նույնիսկ հիշում էր, թե առաջին անգամ ինչպես պատահեց դա իրեն։ Կորպուսում, կրոնի դասին, քահանան բացատրում էր քար փոխադրող բանվորների առակը։ Մեկը առաջ կրում էր մանր քարերը, հետո անցավ ծանրերին և վերջին քարերն արդեն չէր կարող տեղ հասցնել. իսկ մյուսը վարվեց ընդհակառակը, և բարեհաջող ավարտեց իր աշխատանքը։ Ռոմաշովի համար հանկարծ բացվեց այդ պարզունակ առակի մեջ թաքնված գործնական իմաստության մի անհուն շտեմարան, առակ, որ նա գիտեր և հասկանում էր սկսած այն օրից, երբ սովորել էր կարդալ։ Շուտով նույնը պատահեց նաև «Յոթը չափիր՝ մեկ ձևիր» ծանոթ ասացվածքի հետ։ Մի ինչ-որ երջանիկ, խորաթափանց ակնթարթում նա հասկացավ դրա մեջ ամեն ինչ՝ ողջամտություն, հեռատեսություն, զգուշավոր խնայողություն, հաշվենկատություն։ Կենսական հսկայական փորձ էր պարփակված այդ երեք-չորս բառում։ Այդպես էլ հիմա նրան հանկարծ շշմեց-

րից իր անհատականության անսպասելիորեն պայծառ գիտակցությունը...

«Ես այդ ներսում է, —մտածում էր Ռոմաշովը, — իսկ մնացած ամենայն ինչ՝ կողմնակի է, ես չեմ։ Ահա այս սենյակը, փողոցը, ծառերը, գնդի հրամանատարը, պորուչիկ Անդրուսևիչը, ծառայությունը, դրոշը, զինվորները, այդ բոլորը ես չեմ։ Ոչ, այդ ես չեմ։ Ահա իմ ձեռքերն ու ոտքերը,— Ռոմաշովը զարմանքով նայեց իր ձեռքերին, մոտեցնելով դրանք դեմքին և ասես առաջին անգամ ուշադիր տնտղելով,— ոչ, այդ ամենը ես չեմ։ Իսկ ահա կսմթեմ ձեռքս... այո, ահա այսպես... սա ես եմ։ Ես տեսնում եմ ձեռքս, բարձրացնում վերև՝ այդ ես եմ։ Այն, որ հիմա մտածում եմ, այդ էլ ես եմ։ Եվ եթե ուզենամ գնալ՝ այդ ես եմ։ Եվ ահա ես կանգ առա՝ ես եմ։

Օ՜, ինչ տարօրինակ է այդ, որքան պարզ և որքան զարմանալի։ Գուցե բոլո՞ն էլ ունեն այդ ես։ Իսկ գուցե ո՞չ բոլորը։ Գուցե բացի ինձնից ոչ ո՞ք չունի։ Իսկ եթե ունե՞ն։ Ահա իմ առաջ կանգնում են հարյուր զինվոր, և ես նրանց բղավում եմ՝ «Աչքներդ դնար ա՞չ», — և հարյուր մարդ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ես, և որոնք հանձին իմ տեսնում են ինչ-որ օտար, կողմնակի, ոչ ես, նրանք բոլորը միանգամից գլուխները թեքում են դեպի աջ։ Բայց ես նրանց իրարից չեմ զանազանում, նրանք զանգված են։ Իսկ գնդապետ Շուլգովիչի համար, գուցե, ես էլ, Վետկինն էլ, Լբովն էլ, բոլոր պորուչիկները և կապիտաններն էլ միաձուլվում ենք որպես մի դեմք և մենք նրան նույնպես օտար ենք և նա մեզ չի՞ զանազանում միմյանցից»։

Դուռը դղրդաց, և սենյակ ընկավ Գայնանը։ Ոտքից ոտք ընկնելով և ուսերը ցնցելով, կարծես պար գալիս լիներ, նա բղավեց.

— Ձերդ բարեծնություն, բուֆենչիկը էլ ծխախոտ չի տալում, ասում է, պորուչիկ Սկրյաբինը չհրամայել է քեզ պարտքով տալ։

— Ախ, գրո՜ղ, — դուրս թռավ Ռոմաշովի բերանից։ — Դե լավ, լավ, գնա՝ բանիդ... Բա ես ի՞նչ եմ անելու առանց ծխախոտի... Դե, միևնույն է, կարող ես գնալ, Գայնան։

«Նոր ինչի՞ մասին էի մտածում, — մենակ մնալով, ինքն իրեն հարցրեց Ռոմաշովը։ Նա մտքի թելը կորցրեց և հետևողականորեն մտածելու անսովորությունից չկարողացավ իսկույն գտնել։ — Նոր ինչի՞ մասին էի մտածում։ Ինչ-որ կարևոր ու

պես քաղաքական բանի մասին... Սպասիր, պետք է ես վերադառնալ ... Նստած եմ կալանքի տակ... փողոցով... մարդիկ են անցնում ... Փոքր ժամանակս մայրս կապում էր... ինձ կապում էր... Այո, այո... Ջինվորն էլ ես ունի... Գնդապետ Շուլգովիչը... Հիշեցի... Դե, հիմա շարունակենք, շարունակենք...

Ես նստած եմ սենյակում։ Փակված չեմ։ Ուզում եմ, բայց չեմ համարձակվում դուրս գալ այստեղից։ Ինչի՞ց է, որ չեմ համարձակվում։ Որևէ հանցանք գործե՞լ եմ արդյոք։ Գողությո՞ւն։ Մարդասպանությո՞ւն։ Ոչ. ուրիշ, ինձ համար կողմնակի մի մարդու հետ խոսելիս, ես ոտքերս իրար կիպ չեմ պահել և ինչ-որ բան եմ ասել։ Գուցե ես ոտքերս իրար կի՞պ պիտի պահեի։ Ինչո՞ւ։ Մի՞թե դա կարևոր է։ Մի՞թե կյանքում գլխավորը դա է։ Ահա կանգնի ևս քսան-երեսուն տարի՝ մի վայրկյան այն ժամանակում, որը եղել է մինչև իմ լինելը և կլինի ինձնից հետո։ Մի վայրկյան։ Իմ ես-ը կհանգչի, ինչպես լամպը, որի պատրույգը ցած են քաշել։ Բայց լամպը կվառեն նորից ու նորից, իսկ ես արդեն չեմ լինի։ Եվ չի լինի ո՛չ այս սենյակը, ո՛չ երկինքը, ո՛չ գունդը, ո՛չ ամբողջ զորքը, ո՛չ աստղերը, ո՛չ երկրագունդը, ո՛չ իմ ձեռքերն ու ոտքերը... Որովհետև չեմ լինի ես...

Այո, այո... Այդ այդպես է... Դե լավ... սպասիր... պետք է աստիճանաբար... դե, հետո՞... Ես չեմ լինի։ Մութ էր, ինչ-որ մեկը վառեց իմ կյանքը և անմիջապես էլ հանգցրեց, և նորից մթնեց առմիշտ, հավիտյանս հավիտենից... Իսկ ես ի՞նչ եմ արել այդ կարճ ակնթարթում։ Ես կանգնել եմ զգաստ, կրունկներս իրար կցած, շքերթի ժամանակ թաթերս ձգել եմ ներքև, կոկորդով մեկ գոռացել եմ՝ «Հրացանն ո՜ւ-սի՜դ», հայհոյել ու չարացել եմ «դեպի քեզ լրիվ չշրջած» խզակոթի համար, դողացել եմ հարյուրավոր մարդկանց առաջ... Ինչո՞ւ։ Այդ ուրվականները, որոնք կմեռնեն իմ ես-ի հետ, հարկադրել են հարյուրավոր ինձ համար անպետք ու տհաճ բաներ անել և դրա համար վիրավորել ու ստորացրել են ինձ։ Ի՞նձ։ Իսկ ինչո՞ւ է իմ ես-ը հպատակվել այդ ուրվականներին»։

Ռոմաշովը նստեց սեղանի մոտ, արմունկներով հենվեց նրան ու գլուխը սեղմեց ափերի մեջ։ Նա դժվարությամբ էր պահում իր համար արտասովոր, խուսափուկ այդ մտքերը։

«Հը՛մ... Իսկ դու մոռացե՞լ ես։ Հայրենիքը։ Օրրանը։ Հայրերիդ աճյունը։ Սրբասեղանները։ Իսկ զինվորական պատիվն ու կարգապահությո՞ւնը։ Ո՞վ կպաշտպանի քո հայրենիքը, եթե

այնտեղ ներխուժեն օտարերկրյա թշնամիները... Այո, բայց ես կմեռնեմ, և այլևս չի լինի ո՛չ հայրենիք, ո՛չ թշնամի, ո՛չ պատիվ։ Դրանք ապրում են, քանի ապրում է իմ գիտակցությունը։ Բայց եթե չքանա հայրենիքը և պատիվը, և համազգեստը, և բոլոր մեծամեծ խոսքերը, իմ ես կմնա անձեռնմխելի։ Կնշանակե, այնուհանդերձ իմ ես ավելի՞ կարևոր է պարտքի, պատվի, սիրո մասին եղած այդ բոլոր հասկացողություններից։ Ահա ես ծառայում եմ... Բայց հանկարծ ու իմ ես կասի. չեմ ուզում։ Ո՛չ, ոչ թե իմ ես, այլ ավելի... Բանակը կազմող մի ամբողջ միլիոն ես, ոչ, է՛լ ավելին, հողագնդում ապրող բոլոր ես երը հանկարծ ասեն՝ «Չե՛մ ուզում»։ Եվ անմիջապես պատերազմը կդառնա անիմաստ, և այլևս երբեք, երբեք չեն լինի այդ «երկու շարք կա՛ղ-մի՛ր» և «կիսաշրջան դեպի՛ ա՛ջ»-երը, որովհետև դրանց կարիքը չի լինի։ Այո, այո, այո։ Այդ ճշմարիտ է, այդ ճշմարի՛տ է,— բացականչեց Ռոմաշովի ներսում ինչ-որ հաղթանակած ձայն։ — Այդ ողջ ռազմական արվեստը, և կարգապահությունը, և աստիճանահարգությունը, և համազգեստի պատիվը, և ողջ ռազմական գիտությունը, այդ ամենը հաստատում է լոկ այն բանի վրա, որ մարդկությունը չի ուզում, կամ չի կարող, կամ չի համարձակվում ասել՝ «չե՛մ ուզում»։

Իսկ ի՞նչ բան է խորամանկորեն կառուցված այդ ռազմական արհեստը։ Ոչինչ։ Փչոց, օդից կախված մի շենք, հիմնված նույնիսկ ոչ թե երկու կարճառոտ բառի վրա՝ «չե՛մ ուզում», այլ այն բանի վրա, որ այդ բառերը չգիտես ինչու մինչև հիմա չեն արտասանել մարդիկ։ Չէ՞ որ իմ ես երբեք չի ասի. «Չեմ ուզում ուտել, չեմ ուզում շնչել, չեմ ուզում տեսնել»։ Բայց եթե նրան առաջարկեն մեռնել, նա անպայման, անպայման կասի՝ «չեմ ուզում»։ Հապա ուրեմն ի՞նչ բան է պատերազմը իր անխուսափելի մահերով, և սպանելու լավագույն ձևերն ուսումնասիրող ողջ պատերազմական արվեստը։ Համաշխարհային սխա՞լ։ Կուրացո՞ւմ։

Ոչ, դու կաց, սպասիր... Երևի ես ինքս եմ սխալվում։ Չի կարող պատահել, որ ես չսխալվեմ, որովհետև այդ «չեմ ուզում»-ը այնքան պարզ է, այնքան բնական, որ ամեն մեկի մտքով պետք է անցներ։ Դե լավ. դե, պպզենք։ Ենթադրենք, վաղը, ենթադրենք, այս վայրկյանին այդ միտքն անցավ բոլորի գլխով՝ ռուսների, գերմանացիների, անգլիացիների, ճապոնացիների... Եվ ահա արդեն այլևս պատերազմ չկա, սպաներ ու զինվորներ չկան, բոլորը ցրվեցին իրենց տները։ Ի՞նչ կլինի։ Այո, ի՞նչ կլինի այն ժամանակ։ Ես գիտեմ, Շուլգովիչն իմ այդ հարցին կպատասխանի՝ «Այն ժամանակ անսպասելիորեն կգան մեզ մոտ և մեզանից կխլեն հողերն ու տները, ոտնակոխ կանեն ցանքերը, կառևանգեն մեր կանանց ու քույրերին»։ Իսկ խոովարարնե՞րը։ Սոցիալիստնե՞րը։ Հեղափոխականնե՞րը... Բայց ոչ ախր։ Դա ճիշտ չէ։ Չէ՞ որ բոլորը, ամբողջ մարդկությունն է ասել՝ չեմ ուզում արյունահեղություն։ Այն ժամանակ էլ ո՞վ պիտի գա զենքով ու բռնությամբ։ Ոչ ոք։ Ուրեմն ի՞նչ կպատահի։ Թե՞ գուցե այն ժամանակ բոլորը կհաշտվեն։ Կգիջե՞ն միմյանց։ Կկիսե՞ն եղածը։ Կներե՞ն։ Տեր իմ, տեր իմ, ախր ի՞նչ կլինի»։

Ռոմաշովը, իր մտքերով տարված, չնկատեց, թե ինչպես Գայնանը կամացուկ մոտեցավ հետևից և հանկարծ ձեռքը մեկնեց նրա ուսի վրայով։ Ռոմաշովը ցնցվեց և թույլ ճչաց վախից.

— Ի՞նչ ես ուզում, գրողի՛ տարած...

Գայնանը սեղանին դրեց դարչնագույն թղթե մի կապոց։

— Քեզ,— ասաց Գայնանը տնավարի և քաղցր, և Ռոմաշովն զգաց, որ նա մտերմաբար ժպտում է իր թիկունքի հետևում։ — Քեզ ծխախոտները։ Ծխի։

Ռոմաշովը նայեց կապոցին։ Դրա վրա տպված էր՝ ծխախոտ «Տրուբաչ», գինը 3 կոպ. 20 հատ։

— Ի՞նչ է սա։ Ինչո՞ւ, —հարցրեց նա զարմացած։ — Որտեղի՞ց վերցրիր։

— Տեսնում եմ, ծխախոտ չկա քեզ։ Գնել իմ փողով։ Ծխի, խնդրես եմ, ծխի։ Բան չկա։ Քեզ նվիրես։

Գայնանը շփոթվեց և գլխակորույս դուրս թռավ սենյակից՝ դուռն ուժգին շրխկացնելով։ Պոդպորուչիկը մի ծխախոտ վառեց։ Սենյակում զմուռսի և այրված փետուրների հոտ տարածվեց։

«Օ՛, սիրելիս, — մտածեց սրտաշարժված Ռոմաշովը։ —Ես նրա վրա բարկանում եմ, բղավում, հարկադրում եմ երեկոները ոտքերիցս հանել ոչ միայն կոշիկներս, այլև գուլպաներս ու շալվարս։ Իսկ նա ահա ինձ համար ծխախոտ է գնել իր խղճուկ վերջին զինվորական կոպեկներով։ «Ծխի՛, խնդրես եմ»։ Ախր ինչի՞ համար...»։

Նա նորից վեր կացավ և, ձեռքերը հետևը դրած, սկսեց անց ու դարձ անել սենյակում։

«Ահա նրանք հարյուր հոգի են մեր վաշտում։ Եվ նրանցից յուրաքանչյուրը իր մտքերով, իր զգացմունքներով, իր առանձնահատուկ բնավորությամբ, կենսափորձով, անձնական կապվածությամբ և հակակրանքներով մի մարդ է։ Նրանց մասին որևէ բան գիտե՞մ ես արդյոք։ Ոչ, ոչինչ, բացի նրանց դեմքերից։ Ահա նրանք աջ թևից՝ Սոլտիսը, Ռյաբոշապկան, Վեղենեևը, Եգորովը, Ցաշչիշինը... Գորշ, միօրինակ դեմքեր։ Ի՞նչ եմ արել ես, որպեսզի շոշափեմ իմ հոգով նրանց հոգին, իմ Եսով նրանց Եսը։— Ոչինչ»։

Ռոմաշովը հանկարծ հիշեց ուշ աշնան մի ամպամած երեկո։ Մի քանի սպա, նրանց հետ նաև Ռոմաշովը, նստել էին ակումբում և օղի էին խմում, երբ ներս վազեց իններորդ վաշտի ֆելդֆեբելը և, շնչակտուր, բղավեց իր վաշտի հրամանատարին.

— Ձերդ բարձր բարեծնություն, նորակոչիկներ են քշելբերել...

Այո, հենց քշել-բերել։ Նրանք կանգնել էին գնդի բակում, անձրևի տակ, իրար գլխի հավաքված, ասես վախեցած և հլու անասունների նախիր, նայում էին անվստահ, աչքի տակով։ Բայց նրանց բոլորի դեմքերն առանձնահատուկ էին։ Գուցե դա այդպես էր թվում մագուստների այլազանությունի՞ց։ «Ահա սա երևի հյուսն է եղել, — մտածում էր այն ժամանակ Ռոմաշովը, նրանց կողքով անցնելով և ուշադիր նայելով դեմքերին, — իսկ այս մեկը, հավանաբար, զվարճասեր է և հարմոն նվագելու վարպետ։ Սա գրագետ է, ճարպիկ և խարդախոտ, արագ, ճարտար լեզվով։ Արդյոք առաջ սպասավոր չի՞ եղել»։ Երևում էր նաև, որ իրոք նրանց քշել-բերել էին, որ դեռ մի քանի օր առաջ լաց ու կոծով նրանց ճանապարհ են դրել կանայք ու երեխաները և որ նրանք իրենք սրտոտություն են բանեցրել ու զսպել իրենց, որ լաց չլինեն նորակոչիկի գինովցած դառն արցունքներով... Բայց անցավ մի տարի, և ահա նրանք կանգնած են երկար, մեռած շարքով, գորշ, դիմազրկված, փայտանման զինվորնե՛ր։ Նրանք չէին ուզում գալ։ Նրանց Եսը չէր ուզում։ Աստված իմ, ախր ո՞րտեղ են այդ սարսափելի թյուրիմացության պատճառները։ Ո՞րտեղ է այդ հանգույցի սկիզբը։ Թե՞ այդ բոլորը նույնն է, ինչ որ աքաղաղի հետ կատարած հայտնի փորձը։ Աքաղաղի գլուխը թեքում են, դեպի սեղանը, և նա թպրտում է։ Բայց կավիճով գծում են նրա կտուցին և ապա գիծը շարունակում են սեղանի վրա, և նա արդեն

կարծում է, թե իրեն կապել են և անշարժ նստում է, աչքերը չռած, ինչ-որ գերբնական սարսափի մեջ։

Ռոմաշովը հասավ մահճակալին և փռվեց նրա վրա։

«Ինձ ի՞նչ է մնում անել այս դեպքում, — խստորեն, գրեթե չարացած հարցրեց նա ինքն իրեն։ — Այո, ի՞նչ անեմ։ Հեռանա՞մ ծառայությունից։ Բայց դու ի՞նչ գիտես։ Ի՞նչ կարող ես անել։ Նախ՝ պանսիոն, ապա կադետական կորպուս, զինվորական ուսումնարան, ինքնամփոփ սպայական կյանք... Իմացե՞լ ես՝ ինչ է պայքարը։ Կարիքը։ Ոչ, դու ապրել ես ամեն ինչ պատրաստի ունենալով, փափկասուն օրիորդի նման կարծելով, թե ֆրանսիական բուկիները ծառի վրա են բուսնում։ Հապա մի փորձի՛ր, հեռացիր։ Քեզ կկտցահարեն, դու քեզ հարբեցողության կտաս, վայր կընկնես ինքնուրույն կյանքիդ առաջին իսկ քայլափոխին։ Կաց։ Քո գիտեցած սպաներից ո՞վ է կամավոր հեռացել ծառայությունից։ Ոչ ոք։ Նրանք բոլորը կառչում են իրենց սպայությունից, նրա համար, որ ախր նրանք էլ ուրիշ ոչ մի բանի պետք չեն, ոչինչ չգիտեն։ Իսկ եթե գնում էլ են, ապա հետո ման են գալիս բոլորքավոր կեղտոտված գլխարկով. «էյե լա բոնտե... ազնվածին ռուս սպա... կոմպրենե վու...» Ախ, ինչ անեմ ես։ Ախր ի՞նչ անեմ...»

— Կալանավորիկ, կալանավորի՛կ,— լուսամուտի տակ ղոռանչեց մի ջինջ կանացի ձայն։

Ռոմաշովը վեր թռավ մահճակալից և մոտ վազեց լուսամուտին։ Բակում կանգնած էր Շուրոչկան։ Նա ձեռքի ափերով կողքերից պաշտպանելով աչքերը լույսից, ծիծաղկոտ, թարմ դեմքով կիպ կպավ լուսամուտին և երգեցիկ ձայնով ասաց.

— Ողոր- մացե՛ք խեղճ բանտարկյալին...

Ռոմաշովը ձեռքը տարավ դեպի բռնակը, բայց՝ հիշեց, որ լուսամուտը դեռ բացած չի։ Այնժամ, զվարթ վճռականության անակնկալ տենդով բռնված, նա ամբողջ ուժով դեպի իրեն քաշեց շրջանակը։ Շրջանակը տեղի տվեց և ճարճատյունով բացվեց։ Ռոմաշովի գլխին թափելով կրի ու չորացած մածիկի կտորտանք։ Սպիտակ ծաղիկների քնքուշ, նուրբ ու զվարթ բուրմունքով հագեցած զով հորձանքը խուժեց սենյակ։

«Ահա այսպե՛ս։ Ահա այսպես պետք է ելք փնտրել», — ճչաց Ռոմաշովի հոգում ծիծաղկուն, ցնծացող մի ձայն։

— Ռո՛մոչկա։ Խե՛նթ։ Ի՞նչ եք անում։

Ռոմաշովը բռնեց Շուրոչկայի՝ լուսամուտից ներս պարզած փոքրիկ դարչնագույն ձեռնոցի մեջ պինդ կազապարված ձեռքը և համարձակ համբուրեց նախ վերևի, ապա հակառակ կողմից, խաղի վրա՝ կոճակների մոտի կլորիկ անցքից։ Նա առաջ երբեք այդպիսի բան չէր անում, բայց Շուրոչկան անգիտակցաբար, ասես ենթարկվելով հիացական խիզախության այն ալիքին, որն այնպես անակնկալ բարձրացել էր Ռոմաշովի մեջ, չէր ընդդիմանում նրա համբույրներին և միայն նայում էր նրան ամոթխած զարմանքով ու ժպտում։

— Ալեքսանդրա Պետրովնա։ Ինչպե՞ս շնորհակալ լինեմ ձեզանից։ Սիրելի՞ս։

— Ռոմոչկա, այդ ի՞նչ է պատահել ձեզ։ Ինչի՞ համար ուրախացաք, —ասաց Շուրոչկան ծիծաղելով, բայց դեռ շարունակ սևեռուն և հետաքրքրությամբ նայելով Ռոմաշովին։ —Ձեր աչքերը փայլում են։ Կացեք, ես ձեզ համար, որպես բանտարկյալի, թխվածք եմ բերել։ Այսօր մենք սքանչելի խնձորի կարկանդակ ունենք, քաղցր... Ստեպան, դե բերեք զամբյուղը։

Ռոմաշովը Շուրոչկային նայում էր շողուն, սիրահարված աչքերով, առանց նրա ձեռքը բաց թողնելու իր ափից,— Շուրոչկան դարձյալ չէր ընդդիմանում դրան, — և հապճեպ ասում էր.

— Ա՜խ, եթե իմանայիք, ինչի՞ մասին էի մտածում այսօր ամբողջ առավոտ... Եթե միայն իմանայի՞ք։ Բայց դա հետո...

— Այո, հետո... Ահա գալիս է իմ ամուսինն ու տիրակալը։ Ձեռքս բաց թողեք։ Ինչ զարմանալին եք այսօր, Ցուրի Ալեքսեևիչ։ Նույնիսկ սիրունացել եք։

Լուսամուտին մոտեցավ Նիկոլաևը։ Նա խոժոռվում էր և այնքան էլ սիրալիր չբարևեց Ռոմաշովին։

— Եկ, Շուրոչկա, եկ, — շտապեցնում էր նա կնոջը։ — Աստված գիտի, թե սա ինչ բան է։ Ճշմարիտ, դուք երկուսդ էլ խելագարներ եք։ Հրամանատարի ականջը կընկնի՝ ի՞նչ մի լավ բան կա դրանում։ Չէ՞ որ նա կալանքի տակ է առնված։ Մնաք բարով, Ռոմաշով։ Անցեք։

— Անցեք, Ցուրի Ալեքսեևիչ, —կրկնեց նաև Շուրոչկան։

Նա հեռացավ լուսամուտից, բայց իսկույն էլ վերադարձավ ու ասաց արագ շշունջով.

— Լսեք, Ռոմոչկա, չէ, իսկապես, մեզ մի մոռացեք։ Իմ միակ մարդը, որի հետ ես ընկերոջ պես եմ, այդ դուք եք։ Լսո՞ւմ

եք։ Միայն չհամարձակվեք ինձ վրա այդպիսի ոչխարի աչքերով նայել։ Թե չէ՝ տեսնել իսկ չեմ ուզում ձեզ։ Խնդրեմ, Ռոմոչկա, չերեակայեք ձեզ ու ձեզ։ Դուք իսկի տղամարդ էլ չեք։

7

Երեք անց կեսին Ռոմաշովի մոտ եկավ գնդի հրամանատարը պորուչիկ Ֆյոդորովսկին։ Դա մի բարձրահասակ և ինչպես գնդի տիկնայք էին ասում, վայելչատես երիտասարդ էր, սառն աչքերով և մինչև ուսերը շարունակվող բեղերի թանձր մազերով։ Նա կրտսեր սպաների հետ իրեն պահում էր չափազանցրած քաղաքավարի, ոչ ոքի հետ ընկերություն չէր անում և մեծ կարծիք ուներ իր պաշտոնական դիրքի մասին։ Վաշտերի հրամանատարները քծնում էին նրան։

Սենյակ մտնելով, նա կկոցած աչքերով թռուցիկ ակնարկ ածեց Ռոմաշովի ամբողջ խղճուկ սարք ու կարգին։ Պոդպորուչիկը, որն այդ ժամանակ պառկած էր մահճակալին, արագ վեր ցատկեց և շիկնելով, սկսեց արագ կոճկել բաճկոնի կոճակները։

— Ես ձեզ մոտ եկել եմ գնդի հրամանատարի հանձնարարությամբ, — ասաց Ֆյոդորովսկին չոր տոնով, — նեղություն քաշեք հագնվելու և ինձ հետ մեկնելու։

— Ներեցեք... ես իսկույն... Սովորական հագուստո՞վ։ Ներեցեք, ես տանու հագուստով եմ։

— Խնդրեմ, մի քաշվեք։ Սերթուկ հագեք։ Եթե թույլ կտաք, ես կնստեի։

— Ախ, ներեցեք։ Խնդրեմ։ Թեյ չեի՞ք կամենա,— իրար անցավ Ռոմաշովը։

— Ոչ, շնորհակալ եմ։ Խնդրեմ, շտապեք։

Նա առանց վերարկուն և ձեռնոցները հանելու նստեց աթոռին, և մինչ Ռոմաշովը հագնվում էր, հուզվելով, անհարկի դեսդեն ընկնելով և շփոթվելով իր ոչ այնքան մաքուր վերնաշապկի համար, նա նստել էր ուղիղ ու անշարժ, քարացած դեմքով, ձեռքերը պահած սրի երախակալին։

— Դուք չգիտե՞ք ինձ ինչու են կանչում։

Համհարզը ուսերը թոթվեց։

— Ցարօրինակ հարց։ Ես որտեղի՞ց կարող եմ իմանալ։ Այդ ձեզ, անտարակույս, ավելի պետք է հայտնի լինի, քան ինձ... Պատրա՞ստ եք։ Խորհուրդ եմ տալիս սուաերակալն անցկացնել

ուսադիրի տակից, և ոչ թե վրայից։ Դուք գիտեք, թե գնդի հրամանատարն ինչպես չի սիրում այդ։ Ահա այդպես... Դե, գնանք։

Դարպասի մոտ մի կառք էր կանգնել, որին լծված էր գնդի մի զույգ խոշոր, պարարտ ձի։ Սպաները նստեցին ու մեկնեցին։ Ռոմաշովը քաղաքավարությունից դրդված աշխատում էր կողքանց նստել, որպեսզի համհարզին չնեղեր, իսկ սա կարծես ամենևին էլ չէր նկատում այդ։ Ճանապարհին նրանց հանդիպեց Վետկինը։ Նա համհարզի հետ պատվի ողջույն փոխանակեց, բայց իսկույն էլ, նրա հետևից, շուռ եկած Ռոմաշովին մի անարտահայտելի երգիծական ծամածռություն արեց, որը կարծես ասում էր. «Ի՞նչ է, եղբայրս, քեզ քարշ են տվել դատաստանի՞»։ Հանդիպում էին էլի սպաներ։ Նրանցից ոմանք ուշադիր, մյուսները զարմանքով, իսկ մի քանիսն էլ ծաղրանքով նայում էին Ռոմաշովին, և սա ակամայից կծկվում էր այդ հայացքների տակ։

Գնդապետ Շուլգովիչն անմիջապես չճանաչեց Ռոմաշովին. նրա առանձնասենյակում ինչ-որ մարդ կար։ Հարկ եղավ սպասել կիսախավար նախասենյակում, որտեղ բուրում էր խնձորի, նավթալինի, թարմ լաքած կահկարասու և էլի ինչ-որ առանձնահատուկ ոչ տհաճ հոտ, ինչպիսի հոտ գալիս է կարգ ու սարքին գերմանական ունևոր տների հագուստներից ու իրերից։ Նախասենյակում դեսուդեն անելով, Ռոմաշովը մի քանի անգամ իրեն նայեց պատի հայելու մեջ, որը բաց գույնի հացենու շրջանակ ուներ, և ամեն անգամ իր սեփական դեմքը նրան թվում էր զզվելիորեն գունատ, տգեղ և մի տեսակ անբնական, սերթուկը՝ չափից ավելի մաշված, իսկ ուսադիրները՝ չափազանց ճմռթված։

Սկզբում առանձնասենյակից լսվում էր միայն հրամանատարի ցածր, թավ ձայնի միալար հնչյունը։ Բառերը չէին լսվում, բայց զայրալից, որոտընդոստ շեշտերից կարելի էր կռահել, որ գնդապետը մեկին շշպռում է համառ և անկոտրում զայրույթով։ Դա շարունակվեց մոտ հինգ րոպե։ Հետո Շուլգովիչը հանկարծ լռեց. լսվեց ինչ-որ մեկի դողդոջուն, աղերսական ձայնը, և հանկարծ, վայրկենական լռությունից հետո Ռոմաշովը պարզորոշ, մինչև վերջին նրբերանգը, լսեց սարսափելի ամբարտավան, ցասումնալից և արհամարհական արտահայտությամբ արտասանած բառերը.

— Ի՞նչ եք աչքիս թոզ փչում։ Երեխանե՞ր։ Կի՞ն։ Ես թքել եմ ձեր երեխաների վրա։ Նախքան երեխաները շարելը, թող մտածեք, թե ինչով պիտի կերակրեք։ Ի՞նչ։ Լռե՛ հիմա՝ մեղավոր եմ, պարոն գնդապետ։ Պարոն գնդապետը ձեր գործում ոչնչով մեղավոր չէ։ Դուք, կապիտան, գիտեք, որ եթե պարոն գնդապետը հիմա ձեզ դատի չի տալիս, ապա դրանով ես հանցանք եմ կատարում պաշտոնիս գծով։ Ի՞նչ։ Հաճեցեք լը-ըռե՛լ։ Ոչ թե սխալ է, այլ հանցագործություն։ Ձեր տեղը ոչ թե գունդն է, այլ դուք գիտեք, թե որտեղ։ Ի՞նչ։

Նորից կերկերաց երկչոտ, աղերսական ձայնը, այնքան խրդճուկ, որ նրանում կարծես ոչինչ մարդկային չկար։

«Տեր իմ, այս ի՞նչ բան է,— մտածեց Ռոմաշովը, որը կարծես սոսնձվել էր հայելու առաջ, նայելով ուղիղ իր սփրթնած դեմքին և չտեսնելով այն, զգալով, թե ինչպես ծուլ եղավ ու ցավագնորեն թրթռաց սիրտը։— Տե՛ր իմ, ի՞նչ սարսափ...»։

Եղճալի ձայնը խոսում էր բավական երկար։ Երբ նա վերջացրեց, նորից թնդաց հրամանատարի բամբ ձայնը, բայց հիմա ավելի հանդարտ և փափկած, ասես Շուլգովիչը արդեն թափել էր իր զայրույթը աղաղակի մեջ և բավարարել իշխանության իր ծարավը ի տես ուրիշի ստորացման։

Նա խոսում էր ընդհատ.

— Լավ։ Վերջին անգամ։ Բայց հի-շե-ցե՛ք, սա վերջին անգամն է։ Լսո՞ւմ եք։ Սա օր արեք ձեր կաբմիր, հարբեցողի քթին։ Եթե ականջիս մի անգամ էլ հասնի, որ դուք հարբում եք... Ի՞նչ։ Լավ, լավ, գիտեմ ես ձեր խոստումները։ Վաշտը պատրաստ լինի զորատեսին։ Վաշտ չէ, այլ բ... է։ Մի շաբաթից կգամ ինքս կնայեմ... Դե, իսկ հետո ահա ձեզ իմ խորհուրդը. նախ և առաջ մաքրեցեք զինվորների փողերի և հաշվետվության հաշիվը։ Լսո՞ւմ եք։ Հենց վաղը արած լինեք դա։ Ի՞նչ։ Իսկ իմ ի՞նչ գործն է։ Թեկուզ ծնեք... Եվ ապա, կապիտան, ես ձեզ չեմ պահում։ Պատիվ ունեմ հրաժեշտ տալու։

Ինչ-որ մեկը անվստահ քստքստացրեց առանձնասենյակում, և թաթերի ծայրին, կոշիկները ճռճռացնելով, գնաց դեպի ելքը։ Բայց նրան իսկույն կանգնեցրեց հրամանատարի ձայնը, որը հանկարծ դարձավ չափազանց դաժան, որպեսզի չինծու չլիներ.

— Մի կա՛ց, եկ այստեղ, գրողի տարած կամակոր։ Ինչ խոսք, որ վազ ես տալու ջհուդների մոտ։ Հը՞։ Մուրհակնե՞ր գրելու էիր դու, հիմար, հիմար, հիմարի՛ գլուխ... Դե հա, առ քեզ, գրողը ջիգյարիդ կպչի։ Մեկ, երկու...մեկ, երկու, երեք, չորս... Երեք հարյուր։ Ավելին չեմ կարող։ Կվերադարձնես, երբ կարողանաս։

Թո՛ւ, գրողը տանի, այդ ինչ զզվելի բան եք անում, կապիտան,— գոռաց գնդապետը, ձայնը բարձրացնելով վերջինիցս գամմայով։— Չհամարձակվե՛ք երբեք այդպիսի բան անել։ Դա ստորությո՛ւն է... Բայց մարշ, մարշ, մա՛րշ։ Գրողի ծո՛ցը, գրողի ծո՛ցը։ Հարգանքնե՛րս...

Նախասենյակ ելավ կաս-կարմիր, քրտինքի կաթիլները քթին ու քունքերին և փոխված, այլայլված դեմքով, փոքրամարմին կապիտան Սվետովիդովը։ Նրա աջ ձեռքը գրպանում էր և ջղաձգորեն խշխշացնում էր բոլորովին նոր թղթադրամները։ Ռոմաշովին տեսնելով, նա մանրաքայլ փոխեց ոտքերը, ծաղրածուի պես անբնական քրքջաց և իր խոնավ, տաք, ցնցվող ձեռքով պինդ բռնեց պոդպորուչիկի ձեռքը։ Նրա աչքերը լարված ու շփոթված վազվզում էին և միաժամանակ կարծես շոշափում Ռոմաշովին՝ արդյոք լսե՞լ է սա, թե ոչ։

— Կատաղի՞ է։ Ոնց որ վա՞գր,— սանձարձակ և ստորացած շշնջաց նա, գլխով անելով առանձնասենյակի կողմը։— Բայց ոչի՞նչ։— Սվետովիդովն արագ և ջղային խաչակնքեց երկու անգամ։— Ոչինչ։ Փա՛ռք քեզ, տեր, փառք քեզ, տեր։

— Բոն-դա-ռե՛ն-կո,— պատի հետևից բղավեց գնդապետը, և նրա ահագին ձայնի հնչյունը միանգամից լցրեց տան բոլոր ծակուծեղերը և կարծես տատանեց նախասենյակի բարակ միջնորմները։ Նա երբեք գործի չէր դնում զանգը, վստահելով իր արտասովոր կոկորդին։— Բոնդարե՛նկո։ Ո՞վ կա այդտեղ էլի։ Ներս խնդրիր։

— Ահեղ հրեշտակապետ,— շշնջաց Սվետովիդովը ծուռ ժպիտով։— Մենք բարով, պորուչիկ։ Ցանկանում եմ անուշ բաղնիք։

Դռնից դուրս վստաց սպասյակը՝ հրամանատարի տիպիկ մի սպասյակ, վայելչատես-անպատկառ դեմքով, յուղած մազերը կողքից մազբաժան արած, սպիտակ դերձան ձեռնոցներով։ Նա ասաց հարգալիր եղանակով, բայց միևնույն ժամանակ հանգուգն, նույնիսկ մի փոքր աչքերը կկոցած, նայելով ուղիղ պոդպորուչիկի աչքերի մեջ.

— Նորին բարձր բարեծնությունը խնդրում է ձերդ բարեծնությանը։

Նա բացեց առանձնասենյակի դուռը, կողքանց կանգնելով, և ինքը ետ-ետ գնաց, ճանապարհ տալով։ Ռոմաշովը ներս մտավ։

Գնդապետ Շուլգովիչը նստել էր մուտքից դեպի ձախ գտնվող անկյունում՝ սեղանի առաջ։ Նա հագել էր գորշ բաճկոնակ, որի տակից երևում էր սքանչելի փայլուն սպիտակեղենը։ Ստոր կարմիր ձեռքերը դրել էր փայտե բազկաթոռի արմունկներին։ Գլխի ալեզարդ, կարճ կոշտամազով և ճերմակ սեպաձև մորուքով նրա հսկայական ծերունական դեմքը խստահայաց էր և սառն։ Խամրած բաց գույնի աչքերը նայում էին անբարյացակամ։ Պոդպորուչիկի ողջույնին նա թեթևակի գլխով արեց։ Ռոմաշովը հանկարծ նրա ականջին նկատեց արծաթե մի կիսալուսնաձև օղ՝ խաչի հետ և մտածեց. «Բայց ես այս օղը չեմ տեսել»։

— Լավ չէ,— սկսեց հրամանատարը մոնչալի թավ ձայնով, որ կարծես գալիս էր նրա որովայնի խորքից, և մի երկար դադար տվեց։— Ամո՛թ է,— շարունակեց նա, ձայնը բարձրացնելով։— Ծառայում եք երեկ չէ մեկել օրվանից, բայց արդեն սկսել եք պոչ թափ տալ։ Շատ հիմքեր ունեմ ձեզանից դժգոհ լինելու։ Ասացեք խնդրեմ, այս ի՞նչ բան է։ Գնդի հրամանատարը նրան դիտողություն է անում, իսկ նա, այս ողորմելի պրապորշչիկը, ֆենդրիկը իրեն թույլ է տալիս առարկելու, ինչ-որ հիմարություններ դուրս տալով։ Խայտառակությո՛ւն է,— հանկարծ որոտաց գնդապետը այնպես խլացուցիչ, որ Ռոմաշովը ցնցվեց։— Անմիտ բան է։ Անառակությո՛ւն։

Ռոմաշովը մոայլ մի կողմ էր նայում, և նրան թվում էր, որ աշխարհում ոչ մի ուժ նրան չի հարկադրի աչքերը շուռ տալ և նայել գնդապետի երեսին։ «Ո՞ւր է իմ Եսը,— հանկարծ ծաղրալի անցավ նրա մտքով։— Ահա դու պետք է ձգված կանգնես և լռես»։

— Թե ինչ ճանապարհներով է ինձ հասել, ես այդ ձեզ չեմ հաղորդի, բայց ինձ ստուգապես հայտնի է, որ դուք խմում եք։ Դա նողկալի է։ Երեխա, դեղնակտուց թռչնակ, որ հենց նոր է դուրս եկել դպրոցից, և ակումբում հարբում է, ինչպես վերջին կոշկակարի աշակերտ։ Ես, սիրելիս, ամեն ինչ գիտեմ, ինձնից ոչինչ թաքուն չի մնա։ Ինձ հայտնի է շատ բան, որ ձեր մտքովն էլ չի անցնի։ Ինչ կա որ, եթե ուզում եք թեք հարթությամբ ցած գլորվել՝ ձեր կամքն է։ Բայց ձեզ ասում եմ վերջին անգամ. խորամուխ եղեք իմ խոսքերին։ Միշտ այդպես է լինում, բարեկամս. սկսում են մի գավաթով, հետո երկրորդով, իսկ հետո, մեկ էլ տեսար, կյանքն ավարտում են ցանկապատի տակ։ Ձեր գլուխը մտցրեք սա։ Իսկ բացի այդ՝ գիտցեք. մենք համբերատար ենք, բայց սխր հրեշտակի համբերությունն էլ կարող է հատել... Տեսեք, ծայրահեղությունի մի հասցրեք մեզ։ Դուք մեկն եք, իսկ

սպանների ընկերությունը մի ամբողջ ընտանիք է։ Կնշանակե, միշտ կարելի է էն իքը... պոչից բռնել և ընկերությունից դուրս շպրտել։

«Ես կանգնել եմ, ես լռում եմ,— անձկությամբ մտածում էր Ռոմաշովը, անհանգիստ նայելով գնդապետի ականջի օղին,— մինչդեռ պետք է ասեի, որ հենց ինքս էլ թանկ չեմ գնահատում այդ ընտանիքը և թեկուզ հիմա պատրաստ եմ դուրս պրծնել նրանից, գնալ պահեստ։ Ասե՞մ։ Կհամարձակվե՞մ արդյոք»։

Ռոմաշովի սիրտը նորից դողաց ու բաբախեց, նա նույնիսկ ինչ-որ անզոր շարժում արեց շրթունքներով և թուքը կուլ տվեց, բայց առաջվա պես մնում էր անշարժ։

— Եվ առհասարակ ձեր վարքը...— խիստ եղանակով շարունակում էր Շուլգովիչը։— Ահա անցյալ տարի դուք, դեռ մի տարի չծառայած, օրինակ, արձակուրդ խնդրեցիք։ Ինչ-որ բան էիք ասում ձեր մայրիկի հիվանդության մասին, նրանից ստացած ինչ-որ մի նամակ էիք ցույց տալիս... ինչ կա որ, ես չեմ համարձակվում, հասկանո՞ւմ եք, չեմ համարձակվում չհավատալ իմ սպային։ Եթե դուք ասում եք մայրիկը, ուրեմն թող լինի մայրիկը։ Ինչ կա որ, ինչ ասես լինում է։ Բայց գիտե՞ք, մի տեսակ այդ բոլորը մեկը մյուսի վրա է բարդվում, և, հասկանո՞ւմ եք...

Ռոմաշովը վաղուց արդեն զգում էր, թե ինչպես սկսեց նախ հազիվ նկատելի, իսկ ապա ավելի ու ավելի ուժեղ դողալ իր աջ ոտքի ծունկը։ Վերջապես այդ ակամա ջղային շարժումն այնքան նկատելի դարձավ, որ դրանից ցնցվեց ամբողջ մարմինը։ Դա շատ անհարմար էր և շատ տհաճ, և Ռոմաշովն ամոթով մտածում էր, որ Շուլգովիչն այդ դողը կարող է ընդունել որպես վախի արտահայտություն իր առաջ։ Բայց երբ գնդապետը խոսեց նրա մոր մասին, արյունը հանկարծ տաք, արբեցնող հոսանքով լցվեց Ռոմաշովի գլուխը, և դողը վայրկենապես դադարեց։ Առաջին անգամ նա աչքերը վեր բարձրացրեց և շեշտակի նայեց ուղիղ Շուլգովիչի քթարմատին, ատելությամբ, հաստատուն և, այդ նա ինքն էլ զգում էր իր դեմքի վրա, հանդուգն արտահայտությամբ, որը կարծես միանգամից ոչնչացրեց փոքրիկ ստորադրյալին ահեղ պետից բաժանող հսկայական սանդուղքը։ Ամբողջ սենյակը հանկարծ մթնեց, կարծես այնտեղ վարագույրներ քաշեցին։ Հրամանատարի թավ ձայնն ընկավ ինչ-որ անձայն խորություն։ Վրա հասավ հրեշավոր խավարի ու լռության մի միջոց՝ առանց մոքերի, առանց կամքի, առանց որևէ արտաքին

տպավորությունների, գրեթե առանց գիտակցության, բացի մի սարսափելի համոզմունքից, որ հիմա, ահա այս րոպեիս, տեղի կունենա ինչ-որ անհեթեթ, անուղղելի, զարհուրելի բան։ Մի տարօրինակ, ասես օտար ձայն հանկարծ շշնջաց դրսից նրա ականջին. «Հիմա ես նրան կխփեմ»,— և Ռոմաշովը դանդաղ հայացքը դարձրեց ծերունական մսոտ, խոշոր այտին ու ականջի կիսալուսնով և խաչով արծաթե օղին։

Ապա, ինչպես երազում, նա տեսավ, դեռևս չհասկանալով այդ, որ Շուլգովիչի աչքերում փոխնիփոխ արտահայտվեցին զարմանք, սարսափ, տագնապ, խղճահարություն... Ռոմաշովի հոգին այդպես ահեղ և այդպես տարերայնորեն համակած խելահեղ, անխուսափելի հորձանքը հանկարծ տեղի տվեց հալվեց, հեռու նահանջեց։ Ռոմաշովը, ասես արթնանալով, խորունկ և ուժեղ հոգոց հանեց։ Միանգամից ամեն ինչ նրա աչքին դարձավ պարզ ու առօրյա։ Շուլգովիչը իրար անցած նրան ցույց տվեց աթոռը և ասաց անսպասելի, կոպտավուն փաղաքշանքով.

— Թո՛ւ, գրողը տանի... այ թե խոովկանն եք... Դե նստեցե՛ք մի, սատանան ձեզ տանի։ Դե, այո... Դուք բոլորդ ահա այդպես եք։ Ինձ նայում եք որպես գազանի։ Իբր՝ գոռգոռում է քավթառը շունը, անմիտ, անիմաստ, զուտ տեղը, գրողը նրան տանի։ Իսկ ես,— թավ ձայնը երերաց ջերմ, հուզված շեշտերով,— իսկ ես, աստված վկա, սիրելիս, ձեզ բոլորիդ սիրում եմ, ինչպես իմ զավակներին։ Ինչ է, դուք կարծում եք ես ձեզ համար չե՞մ տանջվում։ Ջե՞մ ցավում։ Է՛խ, պարոնայք, պարոնայք, չեք հասկանում դուք ինձ։ Դե լավ, ասենք թե ես տաքացա, չափն անցկացրի, բայց մի՞թե կարելի է բարկանալ ծերունուս վրա։ Է՛խ, ջահելություն։ Դե՛, հաշտություն, վերջացավ։ Տվեք ձեր ձեռքը։ Եվ գնանք ճաշելու։

Ռոմաշովը լուռ գլուխ տվեց և սեղմեց իրեն մեկնած ձեռքը, մեծ, թմբլիկ ու սառն ձեռքը։ Վիրավորանքի զգացումը անցավ, բայց նրա դրությունը չթեթևացավ։ Այսօր առավոտվա կարկտոտ ու հպարտ մտքերից հետո այժմ նա իրեն զգում էր փոքրիկ, խղճուկ, դժգույն աշակերտ, մի տեսակ չսիրված, երկչոտ ու անուշադրության մատնված երեխա, և այդ անցումը ամոթալի էր։ Եվ դրա համար էլ, գնդապետի հետևից սեղանատուն գնալով, նա, ըստ սովորության, ինքն իր մասին մտածեց երրորդ դեմքով.

«Մոռայլ խոկն ակոսում էր նրա ճակատը»։

Շուլգովիչն անջավակ էր։ Ճաշի սեղանին ներկայացավ նրա

կինը, գեր, խոշոր, ծանրաբարո և լռակյաց մի տիկին, առանց վզի, բազմաթիվ կրկնակզակներով։ Ջնայած պենսնեին և գոռոզ հայացքին, նրա դեմքը հասարակավուն էր և այնպիսի տպավորություն էր գործում, կարծես թե հապճեպ, ծուռտիկ, թխել էին խմորից, աչքերի տեղ չամչի հատիկներ խրելով։ Նրա հետևից ոտքերը մանրիկ քստքստացնելով մտավ գնդապետի զառամյալ մայրը, փոքրամարմին, խուլ, բայց դեռ առույգ, թունոտ և տիրական մի պառավ։ Սևեռուն ու առանց քաշվելու տնտղելով Ռոմաշովին վարից վեր, ակնոցի վերևից, նա Ռոմաշովին մեկնեց և ուղղակի նրա շրթունքները խոթեց իր շատ փոքրիկ, թուխ, նշխարի մի կտորի նմանվող, ամբողջովին կնճռոտված ձեռքը։ Ապա դարձավ գնդապետին և հարցրեց այնպիսի եղանակով, կարծես բացի իրենց երկուսից, ճաշասենյակում ոչ ոք չկար.

— Իսկ ո՞վ է սա։ Ինչ-որ չեմ հիշում։

Շուլգովիչը ձեռքերը խողովակաձև դարսեց բերանի մոտ և բղավեց պառավի ուղիղ ականջին.

— Պոդպորուչիկ Ռոմաշովն է, մայրիկ։ Սքանչելի սպա... ճակատային և կատարյալ կտրիճ... Կադետական կորպուսից... Ա՜խ, հա,— հանկարծ հիշեց նա,— Չէ՞ որ դուք պոդպորուչիկ, կարծեմ մերոնցից եք, պենզացի։

— Ճիշտ այդպես, պարոն գնդապետ, պենզացի եմ։

— Իհա՜րկե, իհա՜րկե... Ես հիմա հիշեցի։ Չէ՞ որ ես ու դուք հայրենակիցներ ենք։ Նարովչատի գավառի՞ց եք կարծեմ։

— Ճիշտ այդպես, Նարովչատի։

— Իհա՜րկե... Այդ ինչպե՞ս էի մոռացել։ Նարովչատ՝ միայն բակեր ցցապատ։ Իսկ մենք ինսարցիներ ենք։ Մայրիկ,— նորից թնդացրեց նա մոր ականջին։— Պոդպորուչիկ Ռոմաշովը մերոնցից է, պենզացի... Նարովչատցի՞ է... Հայրենակի՞ց...

— Ա-ա՜,— պառավը բազմանշանակալից շարժեց հոնքերը։— Այդպես, այդպես, այդպես... էն է, որ մտածում եմ... Ուրեմն, բանից դուրս է գալիս, դուք Սերգեյ Պետրովիչ Շիշկինի որդյակն եք։

— Մայրի՜կ։ Սխալվեցիք։ Պոդպորուչիկի ազգանունը Ռոմաշով է, և ոչ թե Շիշկին...

— Այո, այո, այո... Դե ես էլ ասում եմ... Սերգեյ Պետրովիչին ես չէի ճանաչում... Ուրիշների ասելով գիտեի միայն։ Իսկ Պյոտր Պետրովիչին, այ նրան, նույնիսկ շատ հաճախ էի տեսնում։

Մեր կալվածքները համարյա կողք-կողքի էին։ Շատ, շա-ա՜տ հաճելի է, երիտասարդ... Գովելի է ձեր կողմից։

— Է՜, հիմա կսկսի ճռճռալ խարխլված սարեկաբությունը,— ասաց գնդապետը կիսաձայն, կոպիտ բարեհոգությամբ։— Նստեցեք, պոդպորուչիկ... Պորուչիկ Ֆյոդորովսկի,— բղավեց նա դեպի դուռը։— Վերջացրեք այդտեղ և եկեք օդի խմելու...

Արագ ճաշասենյակ մտավ համհարզը, որը, շատ գնդերում եղած սովորության համաձայն, միշտ ճաշում էր հրամանատարի մոտ։ Մեղմ ու սանձարձակ զնգացնելով խթանները, նա մոտեցավ մայրիկ փոքրիկ սեղանին, որի վրա աղանդեր էր դարսած, իր համար օդի լցրեց, առաջ շտապելու խմեց ու վրան մի բան կերավ։ Ռոմաշովը նրա նկատմամբ նախանձ զգաց և մի տեսակ ծիծաղելի, մանր հարգանք։

— Իսկ ձեզ ովքի՞,— հարցրեց Նուլգովիչը։— Չէ՞ որ խմում եք։

— Ոչ։ Խոնարհաբար չնորհակալ եմ։ Ինչ-որ չեմ ուզում,— խոպոտ ձայնով պատասխանեց Ռոմաշովը և հազաց։

— Եվ հրա-շալի՜ է։ Ամենալավը դա է։ Սրանից հետո էլ նույնն եմ ցանկանում։

Ճաշը սննդարար ու համեղ էր։ Երևում էր, որ անզավակ գնդապետն ու իր կինը մի անմեղ մոլություն ունեին՝ լավ ուտել։ Մատուցեցին թարմ արմտիքով ու կանաչիով պատրաստած բուրավետ արգանակ, տապակած ձուկ՝ շոլայով, շատ լավ գիրացրած տանու բադ և ծնեբեկ։ Սեղանին դրված էր երեք շիշ՝ սպիտակ և կարմիր գինով և մադերայով, ճիշտ է, արդեն բացած և արծաթե ձևավոր խցաններով խցած, բայց թանկագին, արտասահմանյան ընտիր տեսակներ։ Գնդապետը, ասես քիչ առաջվա ցասումը հրաշալի ազդել էր նրա ախորժակի վրա, ուտում էր առանձնապես համով և այնպես գեղեցիկ, որ հաճելի էր նայել նրան։ Նա շարունակ սիրալիր ու կոպիտ կատակում էր։ Երբ ծնեբեկը մատուցեցին, նա, ավելի խորը խրելով շլացուցիչ սպիտակ ու կոշտ անձեռոցիկը բաճկոնակի օձիքի տակ, ուրախ ասաց.

— Եթե ես թագավոր լինեի, միշտ ծնեբեկ կուտեի։

Բայց առաջ, ձուկն ուտելիս, նա չհամբերեց և Ռոմաշովի վրա բղավեց պետավարի.

— Պոդպորո՜ւչիկ։ Հաճեցեք դանակը ցած դնել։ Ձուկն ու կոտլետն ուտում են բացառապես պատառաքաղով։ Լավ չէ։ Սպան պետք է ուտել իմանա։ Ամեն մի սպա կարող է հրավիրվել բարձրագույն սեղանին։ Հիշեցեք այդ։

Ռոմաշովը ճաշի ընթացքում նստել էր անճարակ, նեղված, չիմանալով՝ ինչպես պահի ձեռքերը, մեծ մասամբ դրանք պահելով սեղանի տակ և ծամիկներ հյուսելով սփոռոցի ծոպերից։ Նա վաղուց արդեն ետ էր վարժվել ընտանեկան լավ կարգ ու սարքից, վայելուչ և հարմարավետ կահկարասուց, սեղան նստելու կարգից։ Եվ ամբողջ ժամանակ նրան կրծում էր նույն միտքը. «Ախր սա զզվելի է, սա այնպիսի թուլություն ու վախկոտություն է իմ կողմից, որ ես չէի կարող, չհամարձակվեցի հրաժարվել այս ստորացուցիչ ճաշկերույթից։ Դե ես հիմա վեր կկենամ, ընդհանուր հրաժեշտ կտամ ու կգնամ։ Ինչ ուզում են, թող մտածեն։ Նա ինձ հո չի՞ ուտի։ Չի՞ խլի իմ հոգին, մտքերը, գիտակցությունը։ Արդյո՞ք կգնամ»։ Եվ նորից, երկչոտ նվաղող սրտով, ներքին հուզմունքից դժգոհելով, ինքն իր վրա զայրանալով, նա զգում էր, որ ի վիճակի չէ այդ անել։

Արդեն երեկոն իջել էր, երբ սուրճ մատուցեցին։ Արևի կարմիր, շեղ ճառագայթները լուսամուտներից ներս խուժեցին և պայծառ, պղնձագույն բծերով թրթռացին պատերի մուգ պաստառների, սփոռոցի, բյուրեղապակու, ճաշողների դեմքերի վրա։ Բոլորը սկսվեցին իրիկնային այդ ժամի ինչ-որ թախծոտ հմայքից։

— Երբ ես դեռ պրապորշչիկ էի,— հանկարծ խոսեց Շուլգովիչը,— մենք մի բրիգադի հրամանատար ունեինք, գեներալ Ֆոֆանովը։ Այնքան հաճելի ծերուկ էր, մարտական սպա, բայց կարծեմ թե կանտոնիստ[1] էր։ Հիշում եմ, պատահում էր, որ զորատեսի ժամանակ մոտենում էր թմբկահարին,— զարմանալի սիրում էր թմբուկը,— մոտենում էր՝ ու ասում. «Հապա՛, ախպերշ, ինչ համար մի մելամաղջոտ բան նվագիր»։ Հա։ Ուրեմն այդ գեներալը, երբ նրա մոտ հյուրեր էին հավաքվում, միշտ ճշտապահորեն ուղիղ ժամը տասնմեկին գնում էր քնելու։ Պատահում էր, որ հյուրերին դիմելով, ասում էր. «Դե, պարոնայք, կերեք, խմեցեք, ժվարճաչեք, իշկ ես գնում եմ Նեպտունի գիրկը»։ Նրան ասում են՝ «Մորփեոսի՞, ձերդ գերազանցություն»։— «Է, մեկ է, նույն հանգաստանությունիչ է...» Այդպես էլ հիմա ես, պարոնայք,— Շուլգովիչը վեր կացավ և անձեռոցիկը դրեց աթոռի թիկնակին,— նույնպես գնում եմ Նեպտունի գիրկը։ Դուք ազատ եք, պարոնայք սպաներ։

Սպաները վեր կացան և ձգվեցին։

[1] Զինվորի զինապարտ որդի (ծննդյան օրից)։ Ս. Բ.։

«Մի հեգնական դառն ժպիտ երևաց նրա բարակ շրթունքներին»,— մտածեց Ռոմաշովը, բայց միայն մտածեց, որովհետև այդ րոպեին նրա դեմքը խղճալի էր, գունատ և տգեղ-հարգալիր։

Նորից Ռոմաշովը տուն էր գնում, իրեն զգալով միայնակ, տխուր, ինչ-որ օտար, խավար ու թշնամական տեղում կորած։ Արևմուտքում գորշակուտակ ծանր ամպերի մեջ նորից վառվում էր կարմիր-դեղնասաթ վերջալույսը, և նորից հորիզոնի գծից հեռու այն կողմ, տներից ու մարգագետիններից այն կողմ Ռոմաշովին պատկերանում էր գեղեցկությամբ, նրբագեղությամբ ու երջանկությամբ լի կյանքով սքանչելի ֆանտաստիկ քաղաքը։

Փողոցներն արագ մթնում էին։ Խճուղու վրա ճղճղոցով վազվզում էին հրեա երեխաները։ Ինչ-որ տեղ, պատատակերին, գարպասների մոտ, դռնակների մոտ, այգիներում զրնգում էր կանացի ծիծաղը, զրնգում էր անընդմեջ և բորբոքուն, ինչ-որ թեժ, անասնական, զվարթագին թրթիռով, ինչպես զնգում է նա միայն վաղ գարնանը։ Եվ խաղաղ, մտախոհ թախծի հետ Ռոմաշովի հոգում ծնվում էին տարօրինակ, տարտամ հուշեր ու ափսոսանք երբեք չեղած երջանկության և անցած է՛լ ավելի սքանչելի գարունների մասին, իսկ սրտում շարժվում էր գալիք սիրո անորոշ ու քաղցր նախազգացումը...

Երբ տուն եկավ, Գայանին գտավ նրա մութ խորդանոցում, Պուշկինի կիսանդրու առաջ։ Մեծ պոետը ամբողջովին յուղով էր օծված, և նրա առջև վառվող մոմը փայլուն բծեր էր գցում նրա քթի, հաստ շրթունքների և ջղուտ պարանոցի վրա։ Իսկ Գայանն ինքը թուրքավարի նստած երեք տախտակի վրա, որոնք փոխարինում էին մահճակալին, ետ ու առաջ էր ճոճվում և երգեցիկ ձայնով մրմնջում ինչ-որ երկարաձիգ ու միապաղաղ բան։

— Գայան,— ձայն տվեց նրան Ռոմաշովը։

Սպասյակը ցնցվեց և, մահճակալից վեր ցատկելով, ձգվեց։ Նրա դեմքին արտացոլվեց վախ և շփոթմունք։

— Ալլա՞ է,— հարցրեց Ռոմաշովը բարեկամաբար։

Ջերմիսի անբեղ, տղայական բերանը ամբողջովին ձգվեց լայն ժպիտից, որից մոմի լույսի տակ փայլատակեցին նրա սքանչելի սպիտակ ատամները։

— Ալլա է, ձերդ ազնվություն։

— Դե, դե, դե.... Նստիր քեզ համար, նստիր։

Ռոմաշովը սիրալիր շոյեց սպասյակի ուսը։— Միևնույն է, Գայնան, քո ալլան իմ ալլան։ Բոլորի ալլան էլ մեկ է, ախպերս։

«Լավն է Գայնանը,— մտածեց պոդպորուչիկը, սենյակ մըտնելով։— Իսկ ես ահա չեմ համարձակվում նրա ձեռքը սեղմել։ Այո, չեմ կարող, չեմ համարձակվում։ Օ՛, գրողը տանի։ Այսօրվանից պետք է ինքս հանվեմ ու հագնվեմ։ Խոզություն է ստիպել, որ քո փոխարեն ուրիշն անի դա»։

Այդ երեկո նա ակումբ չգնաց, այլ արկղից հանեց մանր, անհավասարաչ ձեռագրով գրված, տողած հաստ տետրը և մինչև խոր գիշեր գրում էր։ Դա Ռոմաշովի հորինած թվով երրորդ վիպակն էր, որ կրում էր «Վերջին ճակատագրական դերյուտը» խորագիրը։ Պոդպորուչիկն ինքը համաշում էր իր գրական պարապմունքներից և աշխարհում ոչ մեկին ոչ մի գնով չէր խոստովանի այդ մասին։

8

Գունդը տեղավորելու համար նոր էին սկսել զորանոցներ կառուցել ավանի ծայրամասում, երկաթուղու գծից այն կողմ, այսպես կոչված՝ արոտատեղում, իսկ մինչ այդ գունդը իր բոլոր հիմնարկներով բնակեցված էր մասնավոր բնակարաններում։ Սպայական ակումբը գրավում էր «Г» տառի ձևով միհարկանի ոչ շատ մեծ մի շենք. փողոցի երկայնությամբ ձգվող երկար կողմում զետեղված էին պարապարանը ու հյուրասենյակը, իսկ կարճ կողմում, որը ձգվում էր դեպի կեղտոտ բակի խորքը, գտնվում էին ճաշարանը, խոհանոցը և «համարները» եկվոր սպաների համար։ Շենքի այդ երկու մասերը իրար հետ միացած էին ինչ-որ խճճված նեղ, ծնկաձև միջանցքով. յուրաքանչյուր ծունկը մյուսի հետ միանում էր դռներով, և այդպիսով ստացվել էր շատ փոքրիկ սենյակների մի շարք, որոնք ծառայում էին որպես բուֆետ, բիլիարդանոց, թղթախաղի սենյակ, նախասենյակ և կանանց զարդասենյակ։ Քանի որ այդ բոլոր սենյակները, բացի ճաշարանից, սովորաբար դատարկ էին լինում և երբեք չէին օդափոխվում, ուստի օդն այդտեղ խոնավ էր, թթվաշ, անմարդաբնակ, և դրան խառնվում էր կահկարասին պատած հին գորգապատառների առանձնահատուկ հոտը։

Ռոմաշովը ակումբ եկավ ժամը իններին։ Հինգ-վեց ամուրի սպաներ արդեն հավաքվել էին երեկույթին, բայց տիկնայք դեռ չէին եկել։ Նրանց միջև վաղուց հետե գոյություն ուներ բարեկրթության կանոններն իմանալու մի տարօրինակ մրցություն, իսկ այդ բարեկրթությունը կնոջ համար ամոթաբեր էր համարում առաջիններից մեկը ներկայանալ պարահանդեսի։ Երաժիշտներն արդեն նստել էին իրենց տեղերում՝ ապակեպատ սրահում, որը մի մեծ բազմապակի լուսամուտով միանում էր դահլիճի հետ։ Դահլիճում լուսամուտների միջնապատերի վրա վառվում էին եռալամպ աշտանակներ, իսկ առաստաղից կախված էր բյուրեղապակյա դողդողացող կախազարդերով շահը։ Պիտակ պաստառ քաշած մերկ պատերով այդ մեծ սենյակը, որի պատերի տակ շարված էին վիեննական աթոռներ և լուսամուտներին շղարշե վարագույրներ էին կախված, պայծառ լուսավորության շնորհիվ առանձնապես դատարկ էր թվում։

Բիլիարդանոցում երկու գումարտակային համհարզ, պորուչիկներ Բեկ-Աղամալովը և Օլիզարը, որին գնդում բոլորը կոմս Օլիզար էին կոչում, հինգ գնդակով խաղում էին գարեջրի վրա։ Օլիզարը—լողլող, բարակ, սղալած, օծանված— մի երիտասարդ ծերունի, անմազ, բայց կնճռոտ, մի քիչ թեթևսոլիկ դեմքով, շարունակ բիլիարդային սուրասելուկներ էր շաղ տալիս։ Բեկ-Աղամալովը տարվում էր ու զայրանում։ Լուսամուտի գոգին նստած, նրանց խաղին էր հետևում շտաբս-կապիտան Լեշչենկոն, վհատ տեսքով քառասունհինգամյա մի մարդ, որն ընդունակ էր լոկ իր տեսքով թախիծ բերել մարդու վրա։ Նրա դեմքի ու կերպարանքի վրա ամեն ինչ ցած էր կախված ամենաանհույս մելամաղձոտությամբ. պղպեղի պատիճի պես ցած էր կախված, երկար, մսեղ, կարմիր ու թորշոմած քիթը. երկու բարակ գորշ թելերի պես մինչև կզակը կախված էին բեղերը. հոնքերը քրթարմատից դեպի քունքերը ցած էին կախվում, նրա աչքերին տալով մշտապես լալկան արտահայտություն. նույնիսկ հին բաճկոնը նրա թեք ուսերի ու ներս ընկած կրծքի վրա լխկլխկում էր ինչպես կախարանի վրա։ Լեշչենկոն ոչինչ չէր խմում, թուղթ չէր խաղում և նույնիսկ չէր ծխում։ Բայց նրան տարօրինակ, ուրիշներին անհասկանալի բավականություն էր պատճառում ցցվել թղթախաղի սենյակում կամ բիլիարդանոցում խաղացողների թիկունքի հետևում, կամ ճաշարանում, երբ այնտեղ սպասիկ քեֆ էին անում։ Ամբողջ ժամերով նա նստում էր այնտեղ լուռ ու վհատ, առանց մի բառ արտասանելու։ Գնդում բոլորը վարժվել էին դրան, և նույնիսկ խաղն ու կերուխումը մի տե-

սակ չէր ստացվում, եթե ակումբում չէր լինում լռակյաց Լեշչենկոն։

Երեք սպաներին ողջունելով, Ռոմաշովը նստեց Լեշչենկոյի կողքին, որը քաղաքավարությամբ մի կողմ քաշվեց, հոգոց հանեց ու երիտասարդ սպային նայեց տխուր, հավատարիմ շան աչքերով։

— Ինչպե՞ս է Մարյա Վիկտորովնայի առողջությունը,— հարցրեց Ռոմաշովը այն սանձարձակ և դիտավորյալ բարձր ձայնով, որով խոսում են խուլերի ու դժվար հասկացող մարդկանց հետ, և որով գնդում Լեշչենկոյի հետ խոսում էին բոլորը, նույնիսկ պրապորշչիկները։

— Շնորհակալ եմ, աղավնյակս,— ծանր հոգոցով պատասխանեց Լեշչենկոն։— Իհարկե, նրա ներվերը... Այնպիսի ժամանակ է հիմա։

— Իսկ ինչո՞ւ դուք ձեր տիկնոջ հետ չեք։ Թե՞ գուցե Մարյա Վիկտորովնան այսօր չի պատրաստվում այստեղ գալու։

— Ոչ։ Հապա ինչպես։ Կգա։ Նա կգա, աղավնյակս։ Միայն գիտե՞ք ինչ, տեղ չկա ֆայտոնում։ Նա ու Ուսիսա Ալեքսանդրովնան կիսովի վերցրին կառքը, և, հասկանո՞ւմ եք, աղավնյակս, ինձ ասում են. «Քո հսկա կոշիկները կեղտոտ են, դու մեր շորերը կփչացնես»։

— Կրաուզեն մեջտեղը։ Նուրբ կտրում։ Գնդակը հանիր լուզայից, Բե՛կ,— բացականչեց Օլիզարը։

— Դու նախ գնդակը գցիր, հետո ես կհանեմ,— բարկացած պատասխանեց Բեկ-Աղամալովը։

Լեշչենկոն բեղերի գորշ ծայրերը բերանն առավ և սկսեց կենտրոնացած ծամել։

— Ես ձեզ մի խնդիրք ունեմ, հոգյակս, Յուրի Ալեքսեյիչ,— ասաց նա խնդրելով ու կմկմալով,— այսօր պարերի կարգադրիչը դուք եք, չէ՞։

— Այո։ Գրողը տանի դրանց։ Նշանակեցին։ Ես հազար տեսակ ֆոռացի գնդի համհարզի առաջ, ուզում էի նույնիսկ զեկուցագիր գրել, որ հիվանդ եմ։ Բայց նրա հետ լեզո՞ւ կգտնես։ «Ներկայացրեք, ասում է, բժշկի վկայաթուղթ»։

— Ես էլ ահա ուզում եմ ձեզ խնդրել, աղավնյակս,— շարունակեց Լեշչենկոն գորովանքով։— Աստված նրա հետ, այնպես արեք, որ նա շատ նստած չմնա։ Գիտե՞ք, ձեզ խնդրում եմ ինկերաբար։

— Մարյա Վիկտորովնա՞ն։

— Հա, էլի՛։ Խնդրում եմ։

— Դեղին դուպլետը անկյունը,— պատվիրեց Բեկ-Աղամալովը։— Կլինի ճիշտ, ոնց որ դեղատանը։

Կարճ հասակի պատճառով նրա համար անհարմար էր խաղալը և նա պետք է փորի վրա ձգվեր բիլիարդի սեղանին։ Լարումից նրա դեմքը կարմրեց և ճակատին փքվեցին քթարմատի մոտ իրար միացող երկու երակ։

— Ժամանի՛ս,— վստահ գրգռում էր նրան Օլիզարը,— Այդ նույնիսկ ես չեմ կարող։

Աղամալովի կիյը չոր շխկոցով սահեց գնդակի վրայով, բայց գնդակը տեղից չշարժվեց։

— Կի՛կս,— զվարթ բացականչեց Օլիզարը և սկսեց բիլիարդի շուրջը կանկան պարել։— Ե՞րբ քնյում ես, խոմփացնյում ես, հոգիս։

Աղամալովը կիյի հաստ ծայրը թխկացրեց հատակին։

— Իսկ դու չհամարձակվե՛ս թեխս տակ խոսել,— բղավեց նա, փայլեցնելով սև աչքերը։— Ես չեմ խաղա։

— Մի՛ եռա, հոգիս, արյունդ փչացնես։ Անկյո՛ւնը...

Ժամանող տիկնանց վերարկուները հանելու համար նախասենյակում հերթապահ կարգված բանբերներից մեկը մոտ վազեց Ռոմաշովին.

— Ձե՛րդ ազնվություն, ձեզ մի տիկին խնդրում է դահլիճ։

Այնտեղ արդեն դանդաղաքայլ ետ ու առաջ էին շրջում հենց նոր եկած երեք տիկին, երեքն էլ տարեց։ Նրանցից ամենաավագը, տնտեսության կառավարչի կինը՝ Աննա Իվանովնա Միգունովան Ռոմաշովին դիմեց խիստ և ծեքծեքուն տոնով, քմահաճորեն ծոր տալով ու երկարացնելով բառերի վերջավորությունները և բարձրաշխարհիկ արժանավայելչությամբ շարժելով գլուխը.

— Պոդպորուչիկ Ռոմաշո-ով, հրամայեցեք որևէ բան նվագել ունկնդրությ-ա-ան համար։ Խնդրե-ե՛մ...

— Լսո՛ւմ եմ։— Ռոմաշովը գլուխ տվեց և մոտեցավ երաժիշտների լուսամուտին։— Ջիսերման,— բղավեց նա նվագախմբի ավագին,— հուպ տուր ունկնդրության համա՞ր։

Սրահի բաց լուսամուտի միջով թնդացին «Կյանքը հանուն թագավորա»-ի նախանվագի առաջին որոտները, և դրանց տակտով վեր ու վար օրորվեցին մոմերի կրակե լեզուները։

Տիկնայք կամաց-կամաց հավաքվում էին։ Անցյալում, մի տարի առաջ, Ռոմաշովը չափազանց սիրում էր այդ բոպենները պարահանդեսից առաջ, երբ, ըստ իր դիրիժորական պարտականությունների, նախասենյակում նա դիմավորում էր ներս մտնող տիկնանց։ Որքա՜ն խորհրդավոր ու սքանչելի էին թվում նրանք Ռոմաշովին, երբ լույսից, երաժշտությունից ու պարերի սպասումից հուզված, զվարթ իրարանցումով ազատվում էին իրենց գլխանոցներից, մորթիներից ու մուշտակներից։ Կանացի ծիծաղի ու զրնգուն բլբլոցի հետ փոքրիկ նախասենյակը հանկարծ լցվում էր սառնամանիքի, օծանելիքի, շպարի ու կաշվե ձեռնոցների հոտով, պարահանդեսից առաջ զուգված, գեղեցիկ կանանց անորսալի, խորապես հուզող բույրով։ Ինչպես փայլուն ու սիրահարված էին թվում Ռոմաշովին նրանց աչքերը հայելիների մեջ, որոնց առաջ նրանք շտապ ուղղում էին իրենց սանրվածքը։ Ինչպիսի՜ երաժշտություն էր թվում նրանց շրջազգեստի շրշյունն ու խշխշոցը։ Ինչպիսի՜ փաղաքշանք էր զգացվում նրանց փոքրիկ ձեռքերի, շարֆերի ու հովհարների հպումից...

Հիմա այդ հմայքն անցել էր, և Ռոմաշովը գիտեր, որ առմիշտ։ Նա հիմա, մի քիչ ամաչելով, հասկանում էր, որ այդ հմայքում շատ բան քաղված էր ֆրանսիական վատ վեպերի ընթերցումից, վեպեր, որոնց մեջ անփոփոխ կերպով նկարագրվում է, թե ինչպես Գուստավն ու Արմանը պարահանդեսի գալով ռուսական հյուպատոսություն, անցնում էին վեստիբյուլով։ Նա գիտեր նաև, որ գնդի տիկնայք տարիներ շարունակ հագնում են միևնույն «պերճաշուք» զգեստը, խղճուկ փորձեր անելով վերանորոգել դրանք առանձնապես շքեղ երեկույթների համար, իսկ ձեռնոցները մաքրում են բենզինով։ Նրան ծիծաղելի ու հավակնոտ էր թվում այդ տիկնանց ընդհանուր մոլությունը զանազան փետրափնջերի, շարֆիկների, հսկայական կեղծ ակների, փետուրների և ժապավենների առատության նկատմամբ. դրանում արտահայտվում էր ինչ-որ փալասային, անճաշակ, տնագործ շքեղություն։ Նրանք ճարպոտ սպիտակ շպար էին գործածում, բայց միամտության աստիճան անհմուտ ու կոպիտ ձևով այդ գործադրած միջոցներից ոմանց դեմքը շարագուշակ կապտավուն երանգ էր ստանում։ Բայց Ռոմաշովի համար ամենատհաճն այն էր, որ նա, ինչպես և գնդում բոլորը, գիտեր յուրաքանչյուր պարահանդեսի, յուրաքանչյուր զգեստի, գրեթե յուրաքանչյուր ծեքծեքուն ֆրազի անդրկուլիսյան պատմությունը. նա

գիտեր, թե դրանց տակ ինչպես են թաքնվում խղճուկ աղքատությունը, ճիգերը, հնարամտությունը, բամբասանքները, ժոխաղարձ ատելությունը, բարձրաշխարհիկ երևալու անզոր գավառական խաղը և, վերջապես, ձանձրալի, դռեհիկ կապերը...

Եկավ կապիտան Տալմանը կնոջ հետ. երկուսն էլ շատ բարձրահասակ, պնդակազմ. կինը՝ մի քնքուշ, գեր, փխրուն շիկահեր, ամուսինը՝ թուխ, ավազակային դեմքով, անընդհատ հազով ու խռպոտ ձայնով մի մարդ։ Ռոմաշովն արդեն վաղօրոք գիտեր, որ Տալմանը հիմա կասի իր սովորական ֆրազը, և իրոք, նա իր գնչուական աչքերը շուռ ու մուռ տալով, խռպոտ ձայնով ասաց.

— Ինչ է, պոդպորուչիկ, խաղասենյակում արդեն վինտու՞մ են։

— Դեռ ոչ, բոլորը ճաշարանում են։

— Դեռ ո՞չ։ Գիտե՞ս, Սոնեչկա, ես էն իքը... կգնամ ճաշարան «Ինվալիդը» աչքի անցկացնելու։ Դուք, սիրելի Ռոմաշով, մի քիչ արածացրեք նրան... Դե մի որևէ կադրիլենցիա, մի բան։

Հետո նախասենյակ ճախրեց Լիկաչովների ընտանիքը՝ սիրունիկ, ծիծաղկոտ, թլվատ օրիորդների մի ամբողջ երամ, մոր գլխավորությամբ, մի փոքրիկ, աշխույժ կնոջ, որը քառասուն տարեկան հասակում պարում էր անդադրում և շարունակ երեխաներ էր ծնում «երկրորդ և երրորդ կադրիլների արանքում», ինչպես նրա մասին ասում էր գնդի սրախոս Արշակովսկին։

Օրիորդները տարբեր ձևերով թլվատելով, ծիծաղելով ու միմյանց ընդմիջելով, հարձակվեցին Ռոմաշովի վրա.

— Ինչո՞ւ մեզ մոտ չէիք գալիս։

— Չայ, չայ, չայ մայդ։

— Վատ, վատ, վատ մալդ։

— Չայ, չայ։

— Հլավիլում եմ ձեզ ալաջին կադրիլին։

— Mesdames!... Mesdames!...— ասում էր Ռոմաշովը, հակառակ իր կամքի սիրալիր կավալեր ձևանալով և ոտների քըստքըստոցով ողջունելով չորս բոլորը հավաքված տիկնանց։

Այդ ժամանակ նա պատահաբար նայեց մուտքի դռանը և ապակու հետևում տեսավ Ռաիսա Ալեքսանդրովնա Պետերսոնի նիհար ու հաստաշուրթ դեմքը սպիտակ գլխաշորի տակ, որ տուփի պես կապել էր գլխարկի վրայից։ Ռոմաշովը հապճեպ, բոլորովին տղայավարի ծլկեց հյուրասենյակից։ Բայց, որքան էլ

կարճատև լիներ այդ ակնթարթը և որքան էլ պոդպորուչիկը ջանում էր ինքն իրեն համոզել, թե Ռախսան նրան չնկատեց, այնուամենայնիվ տագնապ էր զգում. սիրուհու մանրիկ աչքերում ինչ-որ նոր ու անհանգիստ, ինչ-որ դաժան, չար ու հասատատ սպառնալիք զգաց։

Նա մտավ ճաշասենյակ։ Այնտեղ արդեն շատ մարդ էր հավաքվել՝ մոմլաթով ծածկած երկար սեղանի շուրջը գրեթե բոլոր տեղերն արդեն զբաղված էին։ Ծխախոտի կապույտ ծուխը ալեկոծվում էր օդում։ Խոհանոցից այրված յուղի հոտ էր գալիս։ Սպաների երկու թե երեք խումբ արդեն սկսում էին խմել և ուտել։ Ոմանք լրագիր էին կարդում։ Ձայների թանձր ու խայտաբղետ աղմուկը միաձուլվում էր դանակների չխկչխկոցի, բիլիարդի գնդակների շրխկոցի, խոհանոցի դռների թրխկոցի հետ։ Հաշտից մարդկանց ոտներին ցուրտ էր փչում։

Ռոմաշովը փնտրեց-գտավ պորուչիկ Բոբետինսկուն և մոտեցավ նրան։ Բոբետինսկին կանգնել էր սեղանի մոտ ձեռքերը տաբատի գրպանները խոթած, թաթերից դեպի կրունկները ճոճվելով և աչքերը կկոցելով ծխախոտի ծխից։ Ռոմաշովը քաշեց նրա թևքից։

—Է՞նչ,— շուռ եկավ նա և, մի ձեռքը գրպանից հանելով, աչքերը շարունակ կկոցած, նուրբ շարժումով ոլորեց երկար շեկ բեղը, աչքերը Ռոմաշովի վրա շլելով և արմունկը վեր ցցելով։— Ա՜, այդ դո՞ւք եք։ Շատ հեճելի է...

Նա միշտ խոսում էր այդպիսի կոտրատված ճոռոմ տոնով, ընդօրինակելով, ինչպես ինքն էր կարծում, գվարդիական ոսկե երիտասարդությանը։ Նա իր մասին բարձր կարծիքի էր, իրեն համարելով ձիերի ու կանանց գիտակ, սքանչելի պարող, ըստ որում՝ նրբադեղ, բարձրաշխարհիկ, բայց հակառակ իր քսանչորս տարվան, արդեն ապրած ու հիասթափված մարդ։ Ուստի նա ուսերը միշտ պահում էր պատկերավոր ձևով վեր բարձրացրած, գարշելի ֆրանսիաբանում էր, ման էր գալիս ուժասպառ քայլվածքով և, երբ խոսում էր, հոգնած, անփույթ շարժումներ էր անում։

— Պյոտր Ֆադեևիչ, սիրելիս, խնդրում եմ, դիրիժորություն արեք այսօր իմ փոխարեն,— խնդրեց Ռոմաշովը։

— Մե, մոն ամի՜,— Բոբետինսկին վեր քաշեց ուսերն ու հոնքերը և աչքերին հիմար արտահայտություն տվեց։— Բայց... բարյակամս,— թարգմանեց նա ռուսերեն։— Հանուն ինչի՞։

Գուրկուա՞։ Ճշմարիտ, դուք ինձ... ինչպես են ասո՞ւմ... Դուք ինձ զերմեցնում եք։

— Սիրելիս, խնդրում եմ։

— Կացեք... նախ՝ առանց էնտե-նեվարության։ Ա՜յս ինչ է՝ սիրելիս, այսպեսս ու այնպեսս ե ցետերա...

— Դե, աղաչում եմ ձեզ, Պյոտր Ֆադեիչ... Գլուխս ցավում է... կոկորդս էլ... ուղղակի չեմ կարող։

Ռոմաշովը երկար ու թախանձագին խնդրում էր ընկերոջը։ Վերջապես նա որոշեց գործի դնել նաև շողոքորթությունը։

Ախր գնդում ոչ ոք չի կարող այդպես գեղեցիկ ու բազմաղան վարել պարերը, ինչպես Պյոտր Ֆադեևիչը։ Եվ բացի այդ, դրա մասին խնդրել է նաև մի տիկին...

— Տիկի՞ն...—Բոբետինսկին դեմքին ցրված ու մելամաղձոտ արտահայտություն տվեց։— Տիկի՞ն։ Բարյակամս, ի՜մ տարիքում...— Նա ծիծաղեց շինծու դառնությամբ և հիասթափությամբ։— Ի՞նչ բան է կինը։ Հա՜-հա՜-հա՜... Յունենիգմ[1]։ Դե լավ, թող այդպես լինի... ես համաձայն եմ։

Եվ նույնպիսի հիասթափված ձայնով նա հանկարծ ավելացրեց.

— Մոն շեր ամի[2], իսկ դուք... ինչպես են ասում... երեք ռուբլի չունե՞ք։

— Դժբախտաբար...—հոգոց հանեց Ռոմաշովը։

— Իսկ մի ռուբլի՞։

— Ըմմ...

— Դեզագրեաբլ-ս[3]... Ի՞նչ արած։ Դե, այդ դեպքում գնանք օդի խմենք։

— Ավա՜ղ։ Վարկ էլ չունեմ. Պյոտր Ֆադեևիչ։

— Հա-ա՞։ Օ, պովր անֆան[4]... Միևնույն է, գնանք։—Բոբետինսկին մեծահոդության մի լայն ու անփույթ շարժում կատարեց։— Ես ձեզ ողջունում եմ։

Այնինչ ճաշարանում խոսակցությունն ավելի բարձրաձայն ու միաժամանակ ավելի հետաքրքրական էր դառնում բոլոր ներկա գտնվողների համար։ Խոսում էին այն ժամանակ նոր միայն

---

1 Հանելուկ (Ֆր.)։
2 Սիրելի բարեկամս (Ֆր.)։
3 Ի՞նչ ցավալի է (Ֆր.)։
4 Խեղճ մանկիկ (Ֆր.)։

թույլատրված սպայական մենամարտերի մասին, և կարծիքները տարբեր էին։

Զրույցն ամենից շատ իր ձեռքն էր վերցրել պորուչիկ Արշակովսկին, բավական մութ մի անձնավորություն, գրեթե շուլեր։ Նրա մասին գաղտնի պատմում էին, որ դեռ նախքան գունդ մտնելը, պահեստում եղած ժամանակ, նա ծառայում էր որպես փոստակայանի վերակացու և դատի էր տրված նրա համար, որ բռունցքի հարվածով սպանել էր ինչ-որ ձիապանի։

— Մենամարտը լավ է գվարդիայում՝ զանազան տխմարների ու ցանցառների համար,— ասում էր Արշակովսկին կոպիտ,— իսկ մեզ մոտ... Դե լավ, ես ամուրի եմ... ասենք, ես Վասիլ Վասիլիչ Լիպսկու հետ ակումբում խմեցի ու հարբած վիճակում հասցրի նրա ականջի կոթին։ Ի՞նչ պիտի անենք։ Եթե նա չի ուզենա, որ իրար վրա կրակենք, հա՛յդե գնդից, հարց է առաջ գալիս՝ նրա երեխաները ի՞նչ են լափելու։ Իսկ թե մենամարտի դուրս գա, ես գնդակը նրա փորը կշրմփացնեմ, և էլի երեխաները ծամելու բան չեն ունենա... Դատարկ բան է այս ամենը։

— Էդ... դու կաց... Դու սպասիր,— ընդհատեց նրան ծեր ու հարբած փոխգնդապետ Լեխը, մի ձեռքում գավաթը բռնած, մյուս ձեռքի դաստակով օդում թույլ շարժումներ անելով.— դու հասկանու՞մ ես ինչ է մունդիրի պատիվը... էդ, ախպերս, ա-այնպիսի՜ բան է... Պատիվը, դա... Ահա ես հիշում եմ, մի դեպք պատահեց մեր Տեմրյուկյան գնդում հազար ութ հարյուր վաթսուներկու թվականին։

— Է, գիտե՞ք ինչ, ձեր բոլոր դեպքերը հնարավոր չէ լսել,— սանձարձակ ընդմիջեց նրան Արշակովսկին,— մեկ էլ տեսար, մի բան կպատմեք, թե ինչ է եղել Նոյի տարին։

— Էդ, ախպերս... ախ, դու, հանդուգն... Դու դեռ խոխա ես, իսկ ես, էդ... Ասում եմ, այսպիսի մի դեպք պատահեց...

— Միայն արյունը կարող է լվանալ վիրավորանքի բիծը,— փքուն տոնով խոսակցությանը խառնվեց պորուչիկ Բորետինսկին և աքլորի պես վեր բարձրացրեց ուսերը։

— Էդ, մեզ մոտ մի պրապորշչիկ Սոլուխա կար,— ճգնում էր շարունակել Լեխը։

Բուֆետից դուրս գալով, սեղանին մոտեցավ առաջին վաշտի հրամանատար կապիտան Օսադչին։

— Ես լսում եմ, որ ձեր խոսակցությունը մենամարտերի մասին է։ Հետաքրքիր է լսել,— ասաց նա թավ, թնդացող ձայնով,

միանգամից խլացնելով բոլոր ձայները։— Առողջություն եմ ցանկանում, պարոն գնդապետ։ Բարև ձեզ, պարոնայք։

— Ա՜, ռոդոսյան հսկա,— սիրալիր ողջունեց նրան Լեխը։— էդ... նստիր իմ կողքին, այ դու հուշարձան... Ինձ հետ օղի կըխմե՞ս։

— Էն էլ ո՞նց,— ցածր օկտավայով պատասխանեց Օսադչին։

Այդ սպան միշտ տարօրինակ և գրգռիչ տպավորություն էր գործում Ռոմաշովի վրա, նրա մեջ արթնացնելով վախի և հետաքրքրասիրության նման մի զգացում։ Օսադչին, ինչպես և գնդապետ Շուլգովիչը, ոչ միայն գնդում, այլև ամբողջ դիվիզիայում հռչակված էր իր չափերով ու գեղեցկությամբ, արտասովոր ձայնով, այլև հսկա հասակով ու սարսափելի ֆիզիկական ուժով։ Նա հայտնի էր նաև շարային ծառայությունը հրաշալի իմանալով. նրան երբեմն, ծառայության օգուտի համար, մի վաշտից մյուսն էին փոխադրում, և նա կես տարվա ընթացքում ամենասանձարձակ, ետ ընկած զորախմբերից կարողանում էր ներդաշնակությամբ ու ճշտակատարությամբ հսկա մեքենայի նմանվող մի բան ստեղծել, մի մեքենա, որ իր հրամանատարի նկատմամբ լցված էր անմարդկային սարսուռով։ Նրա հմայքն ու իշխանությունը առավել ևս անհասկանալի էին իր ընկերներին, քանի որ նա ոչ միայն երբեք չէր ծեծում մարդկանց, այլև նույնիսկ հայհոյում էր լոկ հազվագյուտ, բացառիկ դեպքերում։ Նրա սքանչելի մռայլ դեմքի վրա, որի տարօրինակ դժգոհությունն ավելի ուժեղ էր ընդգծվում սև, գրեթե կապտին տվող մազերի շնորհիվ, Ռոմաշովը միշտ զգում էր ինչ-որ լարված, զուսպ և դաժան բան, ինչ-որ մի բան, որ հատուկ է ոչ թե մարդուն, այլ հսկայական, ուժեղ գազանին։ Հաճախ, հետևելով նրան մի որևէ տեղից, հեռվից, Ռոմաշովը պատկերացնում էր, թե ինչպիսին պետք է որ լինի այդ մարդը ցասման պահին և, այդ մասին մտածելիս սարսափից գունատվում էր ու ճմլում սառչող մատները։ Եվ հիմա նա, առանց աչքը կտրելու, նայում էր, թե ինչպես այդ ինքնավստահ, ուժեղ մարդը հանգիստ նստում է պատի մոտ, պատրաստակամորեն նրան մատուցված աթոռին։

Օսադչին օղի խմեց, խրթխրթացնելով կրծեց մի բողկ, և անտարբեր հարցրեց.

— Հը, ուրեմն ինչպե՞ս է հարգելի ժողովականների եզրակացությունը։

— Էդ, ախպերս, ես հիմա պատմում եմ... Մեզ մոտ մի դեպք պատահեց, երբ ես ծառայում էի Տիմբրյուկյան գնդում։ Պորուչիկ Ֆոն Զոնը,— զինվորները նրան «Պոդ-Զվոն» էին անվանում— երբեմն նա էլ մի անգամ ակումբում...

Բայց նրան ընդմիջեց Վիպսկին, կարմրադեմ ու հաստ քառասնամյա մի շտաբս-կապիտան, որը, չնայած իր տարիքին, սպաների հասարակության մեջ իրեն պահում էր ծաղրածուի պես և չգիտես ինչու յուրացրել էր երես առած, բայց բոլորի կողմից սիրված երեխայի տարօրինակ և ծիծաղելի տոնը։

— Թույլ տվեք, պարոն կապիտան, ես կարճ կասեմ։ Ահա պորուչիկ Արչակովսկին ասում է, թե մենամարտը դատարկ բան է։ «Պետք է, ասում է, ոնց որ մեր բուրսայումն էր, մի հատ հասցրիր ռեխին և քվիտ»։ Ապա վիճաբանում էր պորուչիկ Բոբետինսկին, որն արյուն էր պահանջում։ Հետո պարոն գնդապետը ապարդյուն տքնում էին իրենց առաջվա կյանքից մի անեկդոտ պատմել, բայց դա նրանց մինչև հիմա էլ, կարծեմ, չհաջողվեց։ Ապա, պատմության ամենասկզբում պոդպորուչիկ Միխինը աղմուկի տակ հայտնեցին իրենց սեփական կարծիքը, բայց ձայնական տվյալների անբավարարության և նրանց հատուկ ողջախոհ ամոթխածության պատճառով այդ կարծիքը չլսվեց։

Պոդպորուչիկ Միխինը, փոքրամարմին, թուլակուրծք, ծաղկատար ու պեպենոտ թուխ դեմքով մի պատանի, որի քնքուշ մուգ աչքերը նայում էին երկչոտ, գրեթե վախեցած, հանկարծ արտասվելու աստիճան շիկնեց։

— Ես միայն, պարոնայք... ես, պարոնայք, գուցե սխալվում եմ,—սկսեց խոսել նա կակազելով և շփոթված ճմռելով անմորուք դեմքը։— Բայց իմ կարծիքով, այսինքն ես այդպես եմ կարծում...պետք է ամեն մի առանձին դեպքը հասկանալ։ Երբեմն մենամարտն օգտակար է, դա անպայման, և մեզանից յուրաքանչյուրը, իհարկե, դուրս կգա արգելագծի առաջ։ Անպայման։ Բայց երբեմն, գիտե՞ք այդ... գուցե բարձրագույն պատիվը կայանում է նրանում, որ... էն... անպայման ներես... Դե, ես չգիտեմ, էլի ինչպիսի դեպքեր կարող են լինել... ահա...

— Էխ, դուք, Դեկադենտ Իվանովիչ,— կոպտաբար ձեռքը թափ տվեց նրա վրա Արչակովսկին,—դուք պետք է փալաս ծծեիք։

— Էդ, ախր թույլ տվեք, եղբայրներ, արտահայտվելու։

Իր ձայնի հուժկու հնչյունով միանգամից խլացնելով բոլոր ձայները, խոսեց Օսադչին.

— Մենամարտը, պարոնայք, անպայման պետք է ծանր վախճան ունենա, այլապես դա անհեթեթություն է։ Այլապես դա կլինի հիմար խղճահարություն, զիջում, ներողամտություն, կոմեդիա։ Հիսուն քայլ տարածություն և մեկական կրակոց։ Ես ձեզ ասում եմ. դրանից դուրս կգա միայն գոռհկություն, այ հենց նույն ֆրանսիական մենամարտերի նման, որոնց մասին մենք կարդում ենք լրագրերում։ Գալիս են, ատրճանակ կրակում, իսկ հետո լրագրերում հաղորդում են մենամարտի արձանագրությունը... «Մենամարտը, բարեբախտաբար, բարեհաջող վերջացավ։ Հակառակորդները կրակոցները փոխանակեցին, միմյանց վնաս չպատճառելով, բայց ընդսմին ցուցաբերելով պատվական արիություն։ Ընթրիքի ժամանակ քիչ առաջվա թշնամիները բարեկամաբար սեղմեցին միմյանց ձեռքը»։ Այդպիսի մենամարտը, պարոնայք, դատարկ բան է։ Եվ նա մեր հասարակության մեջ ոչ մի բարելավում չի մտցնի։

Նրան միանգամից պատասխանեցին մի քանի ձայն։ Լեխը, որը նրա խոսքի ժամանակ մի քանի անգամ իր պատմությունը վերջացնելու նկրտումներ ունեցավ, նորից փորձեց սկսել. «Եվ ահա, էդ, ես, ախպերս... դն, ախր լսեք, քուռակներ»։ Բայց նրան չէին լսում, և նա փոխանակ աչքը գցում էր մի սպայից մյուսին, համակրական հայացք որոնելով։ Վեճով տարված, բոլորը անտարբեր շրջվում էին նրանից, և Լեխը վշտալի պատեցնում էր ծանրացած գլուխը։ Վերջապես նա հայացքով որսաց Ռոմաշովի աչքերը։ Նրա սարդ սպան փորձով գիտեր, թե որքան ծանր է նման ոսպենել. ապրելը, երբ շատ անգամ կրկնված բառերը կարծես օդում կախվում են առանց նեցուկի, և երբ ինչ-որ ծակող ամոթ հարկադրում է համառ ու անհուսորեն վերադառնա այդ բառերին։ Դրա համար էլ նա խույս չտվեց փոխգնդապետից, և սա, ուրախացած, Ռոմաշովի թևից քաշեց սեղանի մոտ։

— Էդ... գոնե դո՛, ինձ ականջ արա, պրապոր,—ասաց Լեխը վշտագին,—նստիր, մի օրի խմիր...Նրանք բոլորը, ախպերս, ծուռ են։— Լեխը դաստակը թույլ թափահարեց վիճող սպաների վրա։— Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ, իսկ փորձ չունեն։ Ես ուզում էի պատմել, թե մեզ մոտ ինչպիսի դեպք էր պատահել...

Մի ձեռքում օղու գավաթը բռնած, իսկ ազատ ձեռքը թափահարելով այնպես, որ կարծես թե երգչախումբ էր կառավարում, և իոնարհած գլուխը տարուբերելով, լեխն սկսեց պատմել մեկն իր անհամար պատմություններից, որոնցով նա լցոնված էր, ինչպես երշիկը լյարդութոքով, և որոնք նա երբեք չէր կարողանում վախճանին հասցնել անընդհատ շեղումների, միջարկումների, համեմատությունների և հանելուկների շնորհիվ։ Նրա հիմիկվա անեկդոտի միտքն այն էր, որ մի սպա մյուսին առաջարկել էր, դա, իհարկե, անհիշելի ժամանակներում էր եղել, ամերիկյան մենամարտ, ըստ որում նրանց համար որպես վիճակ ծառայում էր ռուբլիանոց թղթադրամի զույգը թե կենտը։ Եվ ահա նրանցից մեկը,— դժվար էր հասկանալ, թե որ մեկը՝ Պադ-Զվոնը, թե Սոլուխան,—դիմել է խարդախության. «էդ, ախպերս, վերցրել ու երկու թղթադրամը իրար է սոսնձել, և այնպես է ստացվել, որ մի կողմում զույգ է, իսկ մյուս կողմում՝ կենտ։ Սկսել են նրանք, ախպերս, քաշել... Եվ էս մեկը մյուսին ասել է...»

Բայց այս անգամ էլ, ըստ սովորականի, գնդապետը չըհասցրեց ավարտել իր անեկդոտը, որովհետև աշխուժորեն բուֆետ սահեց Ռաիսա Ալեքսանդրովնա Պետերսոնը։ Ճաշարանի դռանը կանգնած, բայց առանց ներս մտնելու (որ ընդհանրապես ընդունված չէր), նա բղավեց ուրախ և քմահաճ ձայնով, ինչպիսի ձայնով բղավում են երես առած, բայց բոլորի կողմից սիրված փոքրիկ աղջիկները.

— Պարոնայք, սա ի՞նչ բան է։ Տիկինները վաղուց արդեն հավաքվել են, իսկ դուք նստել, հյուրասիրվում եք։ Մենք պարել ենք ուզում։

Երկու-երեք երիտասարդ սպա վեր կացան, որ գնան դահլիճ, մնացածները շարունակեցին նստած մնալ և ծխում ու զրուցում էին, ոչ մի ուշադրություն չդարձնելով կոտրատվող տիկնոջ վրա. դրա փոխարեն ծերունի լեխը շեղակի մանրիկ քայլերով մոտեցավ նրան և, ձեռքերը կրծքին խաչած և գավաթի օղին կրծքին թափելով, հարբածի խանդաղատանքով բացականչեց.

— Աստվածայի՜նդ։ Եվ ինչպես է հրամանատարությունը թեղնում, որ գոյություն ունենա այսպիսի գեղեցկություն։ Թ-թաթի՜կդ... պաչելո՜ւ...

— Ցուրի Ալեքսեևիչ,—շարունակում էր ճավողել Պետերսոնը,— ախր կարծեմ դո՞ւք եք նշանակված այսօր։ Խոսք չունեմ ասելու, լավ դիրիժոր եք։

— Միլ պարդոն, մադամ։ Սե մա ֆոտ... Այդ իմ մե՜ղքն է,— բացականչեց Բոբետինսկին, մոտ թռչելով։ Նույն միջոցին նա արագ քստքստացնում էր ոտքերը, ուներանս անում, հավասարակշիռ ճոճում էր իրանը և տարուբերում ցած կախած թևերը այնպես, որ կաթեթ ինչ-որ ուրախ բալետի նախապատրաստական պարաքայլեր էր անում։— Ձե-եր ձեռքը։ Վոտրը մեն, մադամ։ Պարոնայք, դահլի՜ճ, դահլի՜ճ։

Նա Պետերսոնին թևանցուկ արած սլացավ, գլուխը հպարտորեն ետ գցած, և արդեն մյուս սենյակից հնչում էր նրա ձայնը, ինչպես ինքն էր երևակայում՝ բարձրաշխարհիկ դիրիժորի ձայնը.

— Մսյո, տիկնանց հրավիրեցեք վալսի։ Երաժիշտնե՛ր, վա՜լս։

— Ներեցեք, պարոն գնդապետ, իմ պարտականությունները կանչում են ինձ,— ասաց Ռոմաշովը։

— Էխ, ախպերս,— վշտաբեկ գլուխը կախ գցեց Լեխը։— Դու էլ նույնպիսի պղպեղ ես, ինչպես որ նրանք բոլորը... էդ... Կաց, կաց, պրապորշչիկ... Դու լսե՞լ ես Մոլտկեի մասին։ Մեծն լոակյաց, ֆելդմարշալ... էդ... և ստրատեգ Մոլտկեի մասին։

— Պարոն գնդապետ, ճշմարիտ...

— Դե, դու դես-դեն մի ընկնի... Այս առակը կարճ է... Մեծն լոակյացը հաճախում էր սպայական հավաքույթներին և, երբ ճաշում էր... հէդ... իր առաջ սեղանին էր դնում, ախպերս, ոսկով լի քսակը։ Նա մտքում որոշել էր այդ քսակը տալ այն սպային, որից գոնե մի անգամ ակումբում մի խելացի խոսք կլսի։ Բայց այդպես էլ մեռավ ծերունին, աշխարհում հարյուր իննսուն տարի ապրելով, իսկ նրա քսակը, ախպերս, այդպես էլ մնաց անվնաս։ Հը։ Գլխի ընկա՞ր։ Դե, հիմա գնա բանիդ, ախպերս։ Գնա, գնա, ծիտիկ... թովռա...

9

Դահլիճում, որը կարծես ամբողջովին դողում էր վալսի խլացուցիչ հնչյուններից, պտտվում էին երկու զույգ։ Բոբետինսկին, արմունկները թռչնի թևերի պես տարածած, ոտքերն արագ ու մանրիկ փոխում էր բարձրահասակ Տալմանի շուրջը,

որը պարում էր քարե մոնումենտի վեհ հանգստությամբ։ Հաղթանդամ, փրշոտ Արշակովսկին իր շուրջը պտտեցնում էր փոքրիկ, վարդերես, կրտսեր Վիկաշովային, թեթևակի թեքված նրա վրա և հայացքը նրա մազաբաժանին գցած, առանց պարաքայլերը կատարելու, նա լոկ ծուլորեն ու անփույթ փոխում էր ոտները, ինչպես սովորաբար պարում են երեխաների հետ։ Մյուս տասնհինգ տիկնայք պատերի տակ նստել էին լիակատար միայնության մեջ և աշխատում էին ցույց տալ, թե դա իրենց համար բոլորովին մեկ է։ Ինչպես և միշտ լինում էր գնդի հավաքույթներին, կավալերները շորս անգամ պակաս էին դամաներից, և երեկույթի սկիզբը խոստանում էր ձանձրալի լինել։

Պետերսոնը, որ հենց նոր բաց էր արել պարահանդեսը, որ միշտ տիկնանց համար առանձին հպարտության առարկա էր, այժմ պարի մեջ մտավ բարակ, վայելչակազմ Օլիզարի հետ։ Սա բռնել էր Պետերսոնի ձեռքը կարծես իր ազդրին գամած. իսկ Պետերսոնը կզակը նվազկոտ հենել էր մյուս ձեռքին, որը հանգչում էր Օլիզարի ուսին, իսկ գլուխը շրջել էր դեպի դահլիճը՝ սեթևեթ և անբնական դիրքով։ Տուրն ավարտելով, նա դիտմամբ նստեց ոչ հեռու Ռոմաշովից, որը կանգնել էր կանանց զարդասենյակի դռների մոտ։ Պետերսոնը արագ հովհարում էր իրեն և, նայելով իր առաջ խոնարհված Օլիզարին, երգեցիկ նվազկոտությամբ ասում էր.

— Ոչ, ասացե՛ք, կոմս, ինչի՞ց է, որ միշտ այսպես շոգում եմ։ Աղաչում եմ ձեզ, ասացե՛ք...

Օլիզարը կես խոնարհում արեց, խթանները զնգզնգացրեց և բեղերը սղալեց դեպի մեկ և դեպի մյուս կողմը։

— Տիկին, դա նույնիսկ Մարտին Զադեկան չի ասի։

Եվ քանի որ այդ ժամանակ Օլիզարը նայում էր նրա տափակ դեկոլտեին, Պետերսոնն սկսեց հաճախակի և անբնական խոր շնչել։

— Ախ, ես միշտ բարձր ջերմություն եմ ունենում,— շարունակեց Ռախսա Ալեքսանդրովնան, ժպիտով ակնարկելով, որ իր խոսքերի տակ թաքնված է հատուկ, անպարկեշտ միտք։— Այնպիսի տաք խառնվածք ունեմ։...

Օլիզարը կարճ ու անորոշ խրխնջաց։

Ռոմաշովը կանգնել, շեղակի նայում էր Պետերսոնին ու գարշանքով մտածում. «Օ, որքա՜ն զզվելին է նա»։ Եվ նախ-

կինում այդ կնոջ հետ ունեցած ֆիզիկական մոտիկության միտքը նրա մեջ ծնում էր այնպիսի զգացողություն, կարծես ինքը մի քանի ամիս չէր լողացել և սպիտակեղենը չէր փոխել։

— Այո, այո, այո, մի ծիծաղեք, կոմս։ Դուք չգիտեք, որ իմ մայրը հո՞ն է։

«Եվ որքան էլ զզվելի է խոսում,— մտածում էր Ռոմաշովը։— Տարօրինակ է, որ մինչև հիմա ես այդ չեմ նկատում։ Նա այնպես է խոսում, կարծես իրոնիկական հարբուխ ունի. կամ քթում ավելորդ միս կա՝ «իբ բայրը հույդ է»։

Այդ ժամանակ Պետերսոնը շրջվեց դեպի Ռոմաշովը և աչքերը կկոցած, մարտահրավերի հայացքով նայեց նրան։

Սովորության համաձայն, Ռոմաշովը մտովի ասաց.

«Նրա դեմքը դիմակի պես անթափանց դարձավ»։

— Բարև՜ ձեզ, Յուրի Ալեքսեևիչ։ Այդ ի՜նչ է, չեք մոտենում բարևելու,— երգեց Ռախսա Ալեքսանդրովնան։

Ռոմաշովը մոտեցավ։ Պետերսոնը՝ աչքերի չար բիբերով, որոնք հանկարծ անսովոր փոքրացան ու ծակող դարձան, ամուր սեղմեց Ռոմաշովի ձեռքը։

— Ես ձեր խնդրանքի համաձայն ձեզ համար պահել եմ երրորդ կադրիլը։ Հուսով եմ, չե՞ք մոռացել։

Ռոմաշովը գլուխ տվեց։

— Ինչ անսիրալիրն եք,—շարունակում էր ծռմռվել Պետերսոնը։— Դուք պետք է որ ասեիք՝ անշանտե, մադամ[1] («աղշադտե, բադաբ»,— լսեց Ռոմաշովը)։

— Ինչպես չէ... Ես հիշում եմ,— անհաստատ քրթմնջաց Ռոմաշովը։— Շնորհակալ եմ պատվի համար։

Բոբետինսկին քիչ էր նպաստում երեկույթի աշխուժացմանը։ Նա դիրիժորություն էր անում հիասթափված ու հոգնած-հովանավորող տեսքով, ասես կատարում էր իրեն սոսկալի ձանձրացրած, բայց մյուս բոլորի համար շատ կարևոր մի պարտականություն։ Բայց երրորդ կադրիլից առաջ նա աշխուժացավ և, դահլիճում սլանալով, ասես սառցի վրա չմշկելիս լիներ, արագ, սլկուն քայլերով, առանձնապես բարձրաձայն կանչեց.

— Կադրիլ-մո՜նստր։ Կավալյե, անգաժե վո դամ[2]։

---

1 Ես հիացած եմ, տիկին (ֆրանս.)։

2 Կավալերներ, հրավիրեցե՛ք դամաներին (ֆրանս.)։

Ռոմաշովն ու Ռաիսա Ալեքսանդրովնան կանգնեցին երաժիշտների լուսամուտից ոչ հեռու, vis-à-vis[1] ունենալով Միխինին և Լեշչենկոյի կնոջը, որը հագիվ էր հասնում իր կավալերի ուսին։ Երրորդ կադրիլի ժամանակ պարողներն զգալիորեն ավելացան, այնպես որ զույգերը պետք է դասավորվեին դահլիճի երկայնքով ու լայնքով։ Թե՛ սրանք, թե՛ մյուսները ստիպված էին պարել հերթով, այնպես որ յուրաքանչյուր ֆիգուրա նվագում էին երկու անգամ։

«Պետք է բացատրվել, պետք է վե՛րջ դնել,— մտածում էր Ռոմաշովը, թմբուկի թնդյունից ու լուսամուտից դուրս ժայթքող պղնձե հնչյուններից խլանալով։— Բավակա՛ն է»։— «Նրա դեմքին գծագրված էր անհողդողդ վճռականություն»։

Գնդի դիրիժորների մոտ վաղուց ի վեր հաստատվել էին մի քանի առանձնահատուկ պրիոմներ և հաճելի կատակներ։ Այսպես, երրորդ կադրիլի ժամանակ միշտ անհրաժեշտ էր համարվում շփոթել ֆիգուրները և, կարծես թե ոչ դիտավորյալ, ուրախ սխալներ անել, որոնք միշտ անփոփոխ խառնաշփոթություն և քրքիջ էին հարուցում։ Եվ Բոբետինսկին, կադրիլ-մոնստրը անսպասելիորեն տեսնելով երկրորդ ֆիգուրից, մեկ ստիպում էր, որ կավալերները սոլո անեն, և իսկույն էլ, ասես գլխի ընկնելով, նրանց վերադարձնում էր դամաների մոտ, մեկ սարքում էր grand-rond[2] և, խառնելով շրջանը, կավալերներին հարկադրում էր որոնել դամաներին։

— Մեդամ, ավանսե... ներեցեք, ռեկուլե՛, կավալյե, սոլո՛։ Պարդոն, ետ, բալյանսե ավեկ վո դամ[3]։ Բայց ախր ե՞տ։

Այդ ընթացքում Ռաիսա Ալեքսանդրովնան խոսում էր Թունոտ, շարությունից խեղդվելով, բայց այնպիսի ժպիտ ձևացնելով, կարծես խոսակցությունը ամենաուրախ և հաճելի բաների մասին էր.

— Ես թույլ չե՛մ տա ինձ հետ այդպես վարվելու։ Լսո՞ւմ եք։ Ես ձեզ հետաքրքիր խոխա չեմ։ Այո։ Եվ օրինավոր մարդիկ այդպես չեն վարվում։ Այո։

— Զբարկանանք, Ռաիսա Ալեքսանդրովնա,— համոզկեր ու մեղմ խնդրեց Ռոմաշովը։

1 Դեմ առ դեմ (ֆրանս.)։

2 Մեծ շրջան (ֆրանս.)։

3 Դամաներ, առաջ... Լոտ։ Կավալերներ, մենակ։ Ներեցեք, առաջնորդեցեք ձեր դամաներին (ֆրանս.)։

— Օ՛, շատ մեծ պատիվ է՝ բարկանա՞լ։ Ես կարող եմ միայն արհամարհել ձեզ։ Բայց ինձ ձեռ առնել՝ ոչ ոքի թույլ չեմ տա։ Ինչո՞ւ նեղություն չքաշեցիք պատասխանելու իմ նամակին։

— Բայց ձեր նամակն ինձ տանը չգտավ, երդվում եմ ձեզ։

— Հա՛։ Դուք իմ աչքերին թոզ եք փչո՞ւմ։ Կարծեք ես չգիտեմ, թե որտեղ եք լինում... բայց համոզված եղեք...

— Կավալյե, ան ավա՞ն։ Ռոն, դե կավալյե[1]։ Ա գո՞շ։ Զա՞խ, ձա՞խ։ Դե ախր ձա՞խ, պարոնայք։ Է՛խ, ոչինչ չեն հասկանում։ Պլյու դե լյա վի, մեսյո[2],— բղավում էր Բոբետինսկին, պարողներին արագ շրջապտույտի մեջ քաշելով և սաստիկ դոփելով։

— Ես գիտեմ այդ կնոջը, այդ գաջաջի բոլոր ինտրիգները,— շարունակեց Ռաիսան, երբ Ռոմաշովը վերադարձավ իր տեղը։— Միայն թե զուր է նա այդքան երևակայում իր մասին։ Որ նա գողության մեջ բռնված նոտարիուսի աղջիկ է...

— Ես կխնդրեի իմ ներկայությամբ այդպես չարտահայտվել իմ ծանոթների մասին,— խստորեն կանգնեցրեց Ռոմաշովը։

Այն ժամանակ տեղի ունեցավ մի կոպիտ տեսարան։ Պետերսոնը պայթելով, այլանդակ հայհոյանք արձակեց Շուրոչկայի հասցեին։ Նա արդեն մոռացել էր իր շինծու ժպիտների մասին և, ամբողջովին կարմրատակած, աշխատում էր իր հարբուխային ձայնով խլացնել երաժշտությունը։ Իսկ Ռոմաշովը շառագունում էր իսկական արտասվելու աստիճան՝ իր անզորության ու շփոթվածության համար, և վիրավորանքի ենթարկվող Շուրոչկայի համար, և նրա համար, որ կադրիլի խլացուցիչ հնչյունների տակ նրան չէր հաջողվում ոչ մի խոսք ասել, իսկ որ գլխավորն է, նրա համար, որ իրենց վրա արդեն սկսել էին ուշադրություն դարձնել։

— Այո, այո, նրա հայրը բռնվել է գողության մեջ, նա քիթը վեր պահելու տեղ չունի,— բղավում էր Պետերսոնը։— Ասացե՛ք խնդրեմ, նա մեզ արհամարհո՞ւմ է։ Մենք նրա մասին էլ որոշ բաներ գիտենք։ Այո՛։

— Ես ձեզ խնդրում եմ,— թոթովում էր Ռոմաշովը։

— Սպասեցեք, դուք և նա դեռ կտեսնեք իմ ճիրանները։ Ես կբացեմ այդ հիմար Նիկոլաևի աչքերը, որին նա երրորդ տարին է չի կարողանում ակադեմիա խցկել։ Եվ որտեղի՞ց պիտի մտնի,

1 Կավալերներ, առա՞ջ։ Կավալերներ շրջա՞ն (ֆրանս.)։

2 Ավելի աշխույժ, պարոնայք (ֆրանս.)։

Երբ նա էդ հիմարը, չի տեսնում, թե իր քթի տակ ինչ է կատարվում։ Դե, էն էլ ասենք, համա՞ թե երկրպագու ունի նրա կինը...

— Մազուրկա ժեներալ։ Պրոմենադ[1],—բղավում էր Բոբետինսկին, թռչող հրեշտակապետի կեցվածքով ամբողջովին առաջ թեքված, սլանալով դահլիճի երկայնությամբ։

Հատակն սկսեց դողդողալ և չափականորեն տատանվել ոտների ծանր դոփյունի տակ, մազուրկայի տակտով զրնգացին երփներանգ լույսերով վետվետացող ջահի կախազարդերը, և համաչափորեն ծփացին շղարշե վարագույրները։

— Ինչո՞ւ չբաժանվենք խաղաղ, հանգիստ,— հեզորեն հարցրեց Ռոմաշովը։ Նա հոգու խորքում զգում էր, որ զզվանքի հետ այդ կինը նրան ներշնչում է ինչ-որ մանր, նողկալի, բայց անհաղթահարելի երկչոտություն։— Դուք ինձ այլևս չեք սիրում... Ուրեմն, բաժանվենք որպես լավ բարեկամներ։

— Ա-ա՜։ Դուք ուզում եք խոսքը կոտո՞րը գցել։ Մի անհանգստացեք, բարեկամս,— նա արտասանեց՝ «բի՛ անհանգստացեք, բարեկաբս»,— ես նրանցից չեմ, որոնց թողնում են։ Ես ինքս եմ թողնում, երբ ուզում եմ։ Բայց ես չեմ կարող բավականաչափ զարմանալ ձեր ստորությանը...

— Դե շուտ վերջացնենք,—անհամբեր, խուլ ձայնով, ատամների սեղմած, ասաց Ռոմաշովը։

— Ընդմիջում հինգ րոպե։ Կավալ օկկյուպե՛ վո դամ[2]։

— Այո՝ երբ որ ես ուզենամ։ Դուք ստորաբար խաբում էիք ինձ։ Ես ձեզ համար զոհաբերեցի ամեն ինչ, ձեզ տվեցի ամեն բան, ինչ կարող է տալ ազնիվ կինը... Ես չէի կարող նայել իմ ամուսնու, այդ իդեալական սքանչելի մարդու աչքերին։ Ձեզ համար ես մոռացա կնոջ և մոր իմ պարտականությունները։ Օ՜, ինչո՞ւ, ինչո՞ւ հավատարիմ չմնացի ես նրան։

— Մի՞-ի-թե՞։

Ռոմաշովը կարողացավ զսպել ժպիտը։ Ծառայության եկած բոլոր երիտասարդ սպաների հետ Ռախսայի բազմաթիվ սիրավեպերը լավ հայտնի էին գնդում, ինչպես որ, ի դեպ, բոլոր յոթանասունհինգ սպաների և նրանց կանանց ու ազգականուհիների միջև տեղի ունեցող սիրավեպերը։ Նա հիմա մտաբերեց այնպիսի արտահայտություններ, ինչպես՝ «իմ հիմարը», «այդ արհամարհելի մարդը», «այդ անտաշը, որ շարունակ ցցված է» և ուրիշ ոչ նվազ ուժեղ արտահայտություններ, որոնք Ռախսան ջոայլում էր ամուսնու հասցեին իր նամակներում և բանավոր։

— Ա՜։ Դուք դեռ լրբություն էլ ունեք ծիծաղելո՞ւ։ Դե լա՜վ,— բռնկվեց Ռախսան։—Պետք է սկսենք,—սթափվեց նա և, բռնելով իր կավալերի ձեռքը, մանրաքայլ առաջ շարժվեց, նազելիորեն իրանը ճոճելով ազդրերի վրա և լարված ժպտալով։

Երբ նրանք ֆիգուրն ավարտեցին, Ռախսայի դեմքը նորից անմիջապես բարկացած արտահայտություն ստացավ, «իսկը չարացած միջատի դեմք»,— մտածեց Ռոմաշովը։

— Ես այդ բանը չեմ ների ձեզ։ Լսո՞ւմ եք, երբեք։ Ես գիտեմ, թե ինչու դուք այդքան անարգ, այդքան ստոր ձևով ուզում եք հեռանալ ինձանից։ Բայց չի՛ լինի ձեր մտածածը, չի՛ լինի, չի՛ լինի։ Փոխանակ ուղղակի և ազնվաբար ասեիք, թե այլևս չեք սիրում ինձ, դուք գերադասեցիք ինձ խաբել և օգտվել ինձանից որպես կնոջից, որպես էգից... ամեն պարագայում եթե այնտեղ չհաջողվի։ Հա՛-հա՛-հա՛...

— Դե լավ, եկեք պարզ խոսենք,— զուսպ կատաղությամբ ասաց Ռոմաշովը։ Նա ավելի ու ավելի էր գունատվում և շրթունքները կրծոտում։— Դուք ինքներդ ուզեցիք այդ։ Այո, դա ճիշտ է, ես ձեզ չեմ սիրում։

— Ա՜խ, ասա-ցե՛ք, որքա՞ն ցավալի է դա ինձ համար։

— Եվ երբեք չեմ սիրել։ Ի դեպ, ինչպես և դուք ինձ։ Մենք երկուսս էլ խաղում էինք ինչ-որ նողկալի, կեղծ և կեղտոտ խաղ, ինչ-որ գռեհիկ սիրային ֆարս։ Ես հրաշալի, շատ լավ հասկացա ձեզ, Ռախսա Ալեքսանդրովնա։ Ձեզ հարկավոր չէր ոչ քնքշանք, ոչ սեր, ոչ էլ պարզ մտերմություն։ Դուք չափազանց մանր ու չնչին եք դրա համար։ Որովհետև,— Ռոմաշովը հանկարծ հիշեց Նազանսկու խոսքերը,— սիրել կարող են միայն ընտրյալները, միայն նրբին խառնվածքները։

— Հա՛-հա՛, իհարկե, այդ դուք եք ընտրյալ խառնվածքը։

Նորից որոտաց երաժշտությունը։ Ռոմաշովը ատելությամբ լուսամուտից ներս նայեց տրոմբոնի պղնձափայլ փողաբերանին, որը կատաղի անտարբերությամբ կարծես դեպի դահլիճ էր թքում խուլ հաղացող ու խռպոտ հնչյունները։ Եվ զինվորն էլ, որ թշերն ուռցրած, ապակիացած աչքերը չռած և լարումից կապտած, նվագում էր այդ տրոմբոնը, ատելի էր Ռոմաշովին։

1 Զբոսանք (ֆրանս.)։

2 Կավալերներ, զբաղեցրեք ձեր դամաներին (ֆրանս.)։

— Չվիճենք։ Գուցե և ես արժանի չեմ իսկական սիրո, բայց բանն այդ չէ։ Բանն այն է, որ ձեզ, ձեր նեղ գավառական հայացքներով ու գավառական փառասիրությամբ, անպայման պետք է, որ որևէ մեկը «շրջապատի» և որպեսզի ուրիշները տեսնեն այդ։ Եվ կամ, դուք կարծում եք, ես չէ՞ի հասկանում երեկույթների ժամանակ ձեր այդ տնավարության, այդ քնքուշ հայացքների, իմ նկատմամբ այդ հրամայական և մտերիմ տոնի իմաստը, երբ ուրիշները նայում էին մեզ։ Այո, այո, որպեսզի անշայման նայեն։ Այլապես այդ ամբողջ խաղը ձեզ համար իմաստ չունի։ Ձեզ ոչ թե սեր էր պետք ինձանից, այլ այն, որ բոլորը ձեզ մի ավելորդ անգամ անվանարկված տեսնեին։

— Դրա համար ես կարող էի ընտրել ձեզանից ավելի լավ և ավելի հետաքրքիր մեկին,— փքուն հպարտությամբ առարկեց Պետերսոնը։

— Մի՛ անհանգստացեք, դրանով դուք ինձ չեք խոցի։ Այո, ես կրկնում եմ, ձեզ միայն հարկավոր է, որ որևէ մեկին համարեն ձեր ստրուկը, ձեր անդիմադրելի հմայքի նոր ստրուկը։ Իսկ ժամանակն անցնում է, և ստրուկներն ավելի ու ավելի պակասում են։ Եվ որպեսզի չկորցնեք վերջին սիրահարին, դուք, սառն, անկիրք կինդ, զոհաբերում եք ձեր ընտանեկան պարտականությունները և հավատարմությունը ամուսնական սրբասեղանին։

— Ո՞չ, դուք դեռ կլսեք իմ մասին,— չար ու բազմախորհուրդ շշնջաց Ռախսան։

Ամբողջ դահլիճի երկայնքով, ընկրկելով ու ետ ցատկելով պարող զույգերից, նրանց մոտեցավ Ռախսայի ամուսին՝ կապիտան Պետերսոնը։ Դա մի նիհար, թոքախտավոր մարդ էր, Հաղատ, դեղին գանգով և տամուկ ու փաղաքուշ սև աչքերով, որոնց մեջ սակայն թաքցրած չար կրակ կար։ Նրա մասին ասում էին, թե նա խենթի պես սիրահարված է իր կնոջը, սիրահարված այն աստիճան, որ ջերմ, քաղցրամեղցր ու կեղծ բարեկամություն էր անում նրա բոլոր երկրպագուների հետ։ Հայտնի էր նաև, որ նա նրանց հատուցում էր ատելությամբ, ուխտադրժությամբ և ամեն տեսակ նենգություններով, հենց որ երկրպագուները թեթևացած և ուրախությամբ հեռանում էին նրա կնոջից։

Նա դեռ հեռվից անբնական ժպտում էր բերանի շուրջը ծեփված իր կապույտ շրթունքներով։

— Պարո՞ն ես, Ռաեչկա։ Բարև ձեզ, թանկագին ժորժի։ Այդ ի՞նչ է, վաղուց չեք երևում։ Մենք ձեզ այնպես ենք վարժվել, որ, իսկապես, արդեն կարոտել էինք ձեզ։

— Այնպես... մի տեսակ... շարունակ զբաղված եմ,— քրքիջընջաց Ռոմաշովը։

— Գիտե՞նք ձեր զբաղմունքները,— մատով սպառնաց Պետերսոնը և ծիծաղեց, ասես կաղկանձեց։ Բայց նրա դեղին սպիտակուցներով սև աչքերը քննախույզ և տագնապով սահում էին կնոջ դեմքից դեպի Ռոմաշովի դեմքը։

— Իսկ ես, ճիշտը խոստովանած, կարծում էի, թե դուք գժտվել եք։ Տեսնեմ՝ նստել ինչ-որ տաք-տաք խոսում եք։ Ի՞նչ կա ձեր մեջ։

Ռոմաշովը լռել էր, շփոթված նայելով Պետերսոնի լղար, թուխ ու կնճռոտ վզին։ Բայց Ռախսան ասաց այն լրբենի վստահությամբ, որը նա միշտ դրսևորում էր ստելիս.

— Յուրի Ալեքսեևիչը հա փիլիսոփայում է։ Ասում է, թե պարերն իրենց դարն ապրել են և որ պարելը հիմար և ծիծաղելի բան է։

— Բայց ինքը պարում է,— նենգ բարեհոգությամբ նկատեց Պետերսոնը։— Դե, պարեցեք, բալիկներս, ես ձեզ չեմ խանգարի։

Հազիվ էր նա հեռացել, որ Ռախսան շինծու զգացմունքով ասաց.

— Եվ այդ սուրբ, արտասովոր մարդուն ես խաբո՞ւմ էի... Եվ ի սեր ո՞ւմ։ Օ, եթե նա գիտենա՞ր, եթե միայն նա գիտենա՞ր...

— Մազ-զո՛ւրկա ժեներա՞լ,— բղավեց Բոբետինսկին։— Կավալերները խլում են դամաների՞ն։

Տաքացած մարմինների երկարատև շարժումից և պարկետից բարձրացած փոշուց դահլիճի օդը հեղձուցիչ դարձավ, և մոմերի լույսերը փոխվեցին դեղին մշուշոտ բծերի։ Հիմա շատ զույգեր էին պարում, և որովհետև տեղը չէր բավականացնում, ապա ամեն մի զույգը դոփդոփում էր սահմանափակ տարածության վրա. պարողները խռնվում և հրհրում էին իրար։ Դիրիժորի առաջարկած ֆիգուրի իմաստն այն էր, որ ազատ կավալերը հետապնդում է որևէ պարող զույգի։ Նրա շուրջը պտտվելով և միաժամանակ կատարելով մազուրկայի պարաքայլերը, որ ստացվում է ծիծաղելի ու անհեթեթ, նա աշխատում է որսալ դրպեն, երբ դաման կկանգնի երեսը իր կողմը շրջած։ Ան-

ժամանակ կավալերն արագ ծափ է զարկում, որ նշանակում է, թե նա խլել է դամային։ Բայց մյուս կավալերն աշխատում է խանգարել նրան այդ բանն անելու և ամեն կերպ շուռումուռ է տալիս ու քաշքշում իր դամային մի կողմից մյուսը. իսկ ինքը մերթ ընկրկում է, մերթ ցատկում կողքանց և նույնիսկ գործի դնում ազատ ձախ արմունկը, նշան բռնելով հակառակորդի կրծքին։ Այդ ֆիգուրի ժամանակ դահլիճում միշտ առաջանում էր անհարմար, կոպիտ և տգեղ իրարանցում։

— Դերասանուհի՜,— խոպոտ ֆշշացրեց Ռոմաշովը, մոտիկ թեքվելով դեպի Ռախսան։— Ծիծաղելի ու խղճալի է ձեզ լսելը։

— Դուք, ինչպես երևում է, հարբած եք,— զզվանքով բացականչեց Ռախսան և Ռոմաշովի վրա նետեց այն հայացքը, որով վնպի հերոսուհիները ոտից գլուխ չափում են չարագործներին։

— Ոչ, ասացեք, ինչո՞ւ խաբեցիք ինձ,— չար բացականչում էր Ռոմաշովը։— Դուք ինձ հանձնվեցիք լոկ նրա համար, որ ես չհեռանամ ձեզանից։ Օ՜, եթե դուք այդ արած լինեիք սիրուց, դե, գոնե ոչ թե սիրուց, այլ լոկ զգայականությունից։ Ես կըհասկանայի դա։ Բայց ախր դուք արեցիք միայն ցոփությունից, ստոր սնափառությունից։ Մի՞թե ձեզ չի սարսափեցնում այն միտքը, թե որքան գարշելի էինք մենք երկուսս էլ, երբ իրար էինք պատկանում առանց սիրո, ձանձրույթից, որպես ժամանց, նույնիսկ առանց հետաքրքրության, այլ այնպես... Ինչպես տոն օրերին աղախինները արևածաղկի սերմ են շրթում։ Հասկացեք ախր, դա ավելի վատ է, քան երբ կինը հանձնվում է փողով։ Այնտեղ կարիքն է, գայթակղությունը։ Հասկացեք, ես ամաչում եմ մտածել այդ սառն, աննպատակ, այդ աններելի անառակության մասին։

Պաղ քրտինքը ճակատին, նա մարած, ձանձրացող աչքերով նայում էր պարողներին։ Ահա առանց իր կավալերին նայելու, ոտքերը հազիվ շարժելով, անշարժ ուսերով և անմատչելի կնոջ խստաբարո տեսքով սահեց-անցավ վեհաշուք Տալմանը և նրա կողքին՝ զվարթ, այծի պես թռչկոտուն Եպիֆանովը։ Ահա փոքրիկ Լիկաչովան ամբողջովին թունդ կարմրած, շողշողուն աչքերով, սպիտակ, մերկ, անմեղ, կուսական պարանոցով... Ահա Օլիղարը կարկինի ոտքերի պես բարակ, ուղիղ ու վայելչակազմ սրունքներով։ Ռոմաշովը դիտում էր և գլխացավ ու լաց լինելու ցանկություն էր զգում։ Իսկ նրա կողքին չարությունից գունատված Ռախսան չափազանցրած թատերական սարկազմով ասում էր.

— Սքանչելի՜ է։ Հետևակի սպան Հովսեփ Գեղեցիկի դերո՜ւմ։

— Այո, այո, հենց դրանում...— բռնկվեց Ռոմաշովը։— Ինքս էլ գիտեմ, որ դա ծիծաղելի և գռեհիկ բան է... Բայց ես չեմ ամաչում իմ կորցրած մաքրության, հասարակ ֆիզիկական մաքրության համար թախծելուց։ Մենք երկուսս էլ կամավոր մտանք կեղտաջրի փոսը, և ես զգում եմ, որ հիմա երբեք չեմ համարձակվի սիրել լավ, թարմ սիրով։ Եվ մեղավորը դուք եք, լսո՞ւմ եք, դո՜ւք, դո՜ւք, դո՜ւք։ Դուք ինձնից մեծ և փորձառու եք։ Դուք արդեն բավականաչափ փորձ ունեք սիրո գործում։

Պետերսոնը վեհապանծ վրդովմունքով վեր կացավ աթոռից։

— Բավակա՜ն է,— ասաց նա դրամատիկ շեշտով։— Դուք հասաք ձեր ուզածին։ Ես ատում եմ ձեզ։ Հուսով եմ, որ այսօրվանից կդադարեցնեք ձեր այցելությունները մեր տուն, որտեղ ձեզ ընդունում էին հարազատի պես, կերակրում ու խմեցնում էին, բայց դուք այդպիսի անպիտանը դուրս եկաք։ Որքան ափսոսում եմ, որ ամեն ինչ չեմ կարող բաց անել ամուսնուս։ Նա սուրբ մարդ է, ես աղոթում եմ նրա անունով, և ամեն ինչ հայտնելը նրան սպանել կնշանակեր։ Բայց հավատացեք, նա կկարողանար վրեժ լուծել վիրավորված, անպաշտպան կնոջ դիմաբերեն։

Ռոմաշովը կանգնել էր նրա դիմաց և, ցավագնորեն աչքերը կկոցելով ակնոցի հետև, նայում էր նրա մեծ, բարակ, թուլացած, չարությունից ծամածռված բերանին։ Լուսամուտից գալիս էին երաժշտության խլացուցիչ հնչյունները, համառ հարատևությամբ հազում էր ատելի տրոմբոնը, իսկ թուրքական թմբուկի հաստատակամ հարվածները հնչում էին կարծես Ռոմաշովի հենց գլխում։ Նա Ռախսայի բառերը լսում էր ընդհատումներով և չէր հասկանում։ Բայց նրան թվում էր, թե դրանք էլ, ինչպես որ թմբուկի թնդյունները, խփում են ուղիղ նրա գլխին և ցնցում են ուղեղը։

Ռախսան չրթոցով ծալեց հովհարը։

— Օ, սրիկա-խաբեբա,— շշնջաց նա ողբերգորեն և դահլիճով արագ գնաց կանացի զարդասենյակը։

Ամեն ինչ վերջացած էր, բայց Ռոմաշովը չէր զգում սպասած բավարարումը, և նրա հոգուց անսպասելիորեն չընկավ կեղտոտ

և կոպիտ ծանրությունը, ինչպես նա առաջ պատկերացնում էր։ Ոչ, նա հիմա զգում էր, որ վատ վարվեց, վախկոտաբար և ոչ անկեղծ, բարոյական ամբողջ մեղքը բարդելով սահմանափակ ու խղճուկ մի կնոջ վրա, և պատկերացնում էր իրեն նրա դառնությունը, շփոթվածությունն ու անզոր չարությունը, պատկերացնում էր նրա աղի արցունքները և ուռած, կարմրած աչքերը այնտեղ, զարդասենյակում։

«Ես ընկնում եմ, ես ընկնում եմ,—մտածում էր նա զզվանքով ու տաղտկությամբ։— Այս ի՞նչ կյանք է։ Ինչ-որ անձուկ, դորշ ու կեղտոտ մի բան... Այս անբարոյական և անպետք կապը, հարբեցողությունը, ձանձրույթը, ծառայության սպանիչ միօրինակությունը, և գեթ մի կենդանի խոսք, անբիծ ուրախության գեթ մի՛ բոպե լիներ։ Գրքեր, երաժշտություն, գիտություն՝ ո՞ւր են այդ ամենը»։

Նա նորից ճաշարան գնաց։ Այնտեղ Օսադչին և Ռոմաշովի գնդակից ընկեր Վետկինը, թևատակերից բռնած, դեպի ելքի դուռն էին ուղեկցում բոլորովին հարբած Լեխին, որը թույլ ու անզոր տարուբերում էր գլուխը և հավատացնում, որ ինքը գահերեց է։ Օսադչին լուրջ դեմքով և թնդացող օկտավայով, տիրացուի պես ասում էր.

— Օրհնյա՛, սրբազան տեր-հայր։ Ժ-ժ-ա՛մ է պատարագն սկսելու։

Որքան պարերեկոն մոտենում էր վախճանին, այնքան ճաշարանն աղմկոտ էր դառնում։ Օդն այնպես էր ծխով լցված, որ սեղանի տարբեր ծայրերում նստած մարդիկ հազիվ էին կարողանում տեսնել իրար։ Մի անկյունում երգում էին, լուսամուտի մոտ հավաքված, անվայելուչ անեկդոտներ էին պատմում, որոնք ծառայում էին որպես բոլոր ընթրիքների ու ճաշերի սովորական համեմունք։

— Ոչ, ոչ, պարոնայք... թույլ տվեք, ահա ես ձեզ կպատմե՛մ,— բղավում էր Արչակովսկին։—Մի անգամ մի զինվոր գալիս է մի խախուլի մոտ բնակության։ Իսկ էդ խախուլը մի սիրունի՛կ կնիկ է ունենում։ Եվ զինվորը մտածում է, ինչպես անեմ որ...

Հազիվ էր նա վերջացնում, նրան ընդհատում էր անհամբեր իր հերթին սպասող Վասիլի Վասիլևիչ Լիպսկին։

— Չէ, դա ի՞նչ է որ, պարոնայք... Ահա ես մի անեկդոտ գիտեմ։

Եվ նա դեռ վերջացրած չէր լինում, երբ հաջորդն էր շտապում իր պատմությունն անելու։

— Ահա մի էսպիսի բան էլ, պարոնայք։ Սա եղել է Օդեսայում, ըստ որում այս դեպքը...

Բոլոր անեկդոտները գարշելի էին, լպիրշ և ոչ սրամիտ և, ինչպես միշտ լինում է, ծիծաղ հարուցում էր պատմողներից միայն մեկը, ամենավստահն ու ցինիկը։

Վետկինը վերադառնալով բակից, որտեղ նա Լեխին կառք էր նստեցրել, Ռոմաշովին հրավիրեց սեղանի մոտ։

— Հապա՛ մի նստեցեք, ժորժինկա... Մի հատ գցենք։ Ես այսօր ջհուդի պես հարուստ եմ։ Երեկ տարել եմ և այսօր նորից պետք է բանկը բռնեմ։

Ռոմաշովն ուզում էր մտերիմ խոսակցություն սկսել, մեկի առաջ բաց անել իր թախիծն ու նողկանքը կյանքից։ Գայթ գավաթի ետևից խմելով, նա Վետկինին էր նայում աղերսող աչքերով և խոսում էր համոզիչ, ջերմ, դողդոջուն ձայնով.

— Մենք բոլորս, Պավել Պավլիչ, բոլորս մոռացել ենք, որ կա մի ուրիշ կյանք։ Ինչ-որ մի տեղ, ես չգիտեմ թե որտեղ, ապրում են բոլորովին, բոլորովին այլ մարդիկ, և նրանց կյանքը այնպես լիարյուն է, այնպես բերկրալի, այնպե՞ս իսկական։ Ինչ-որ տեղ մարդիկ պայքարում են, տառապում, լայնահուն և ուժեղ սիրում են... Բարեկամս, ինչպես ենք մե՛նք ապրում։ Ինչպե՞ս ենք ապրում։

— Ը-ը՞մ հա, եղբայրս, ի՞նչ ասես, կյանք է,— ալարկոտ պատասխանեց Պավել Պավլիչը։— Բայց ընդհանրապես... դա, ախպերս, լոկ բնափիլիսոփայություն է և էներգետիկա։ Լսիր, աղավնյակս, այդ ի-ի՞նչ բան է էներգետիկան։

— Օ, ի՞նչ ենք անում մենք,— հուզվում էր Ռոմաշովը։— Այսօր հարբելու չափ խմում ենք, վաղը, վաշտում՝ մեկ-երկու, ձախ, աջ, երեկոյան նորից կխմենք, իսկ վաղը չէ մյուս օրը՝ նորից վաշտ։ Մի՞թե ամբողջ կյանքն այդ է։ Չէ, հապա մի մտածեցե՛ք, ամբողջ, ամբողջ կյանքը։

Վետկինը նրան նայեց պղտոր աչքերով, ասես ինչ-որ փառի միջով, զկոտաց և հանկարծ սկսեց երգել բարակ, ճռճռան տենորով։

Անդորրում եմ ապրել,
Անտառում եմ ապրել
Եվ իլիկս եմ պտտել...

— Թքի՛ր ամեն ինչի վրա, հրեշտակս, և պահպանիր առողջությունդ։

Եվ ամբողջ իմ հոգով
Ձախարակս եմ սիրել։

Կենանք խաղանք, Ռոմաշևիչ-Ռոմաշովսկի, ես քեզ պարտք կտամ մի կարմիր։

«Ոչ ոքի սա հասկանալի չէ։ Մի մոտիկ մարդ չունեմ»,— վշտագին մտածեց Ռոմաշովը։ Մի ակնթարթ միտն եկավ Շուրուչկան, այնպես ուժեղ, այնպես հպարտ, գեղեցիկ, և ինչոր նվաղուն, քաղցր ու անհուսալի բան տնքաց նրա սրտի մոտ։

Նա մինչև լույս մնաց ակումբում, նայեց, թե ինչպես են շտոս խաղում, ինքն էլ մասնակցեց խաղին, բայց առանց բավականության և առանց տարվելու։ Մի անգամ նա տեսավ, թե ինչպես երկու անբեղ պրապորշչիկների հետ առանձին սեղան գրված Արչակովսկին բավական անշնորհք կերպով խարդախություն արեց, միանգամից երկու խաղաթուղթ գցելով իր կողմը։ Ռոմաշովն ուզեց միջամտել, նկատողություն անել, բայց իսկույն էլ անտարբերությամբ կանգ առավ ու մտածեց. «Է՜խ, միևնույն է։ Դրանով ոչինչ չեմ ուզղի»։

Վետկինը, հինգ րոպեում տանուլ տալով իր միլիոնները, նրստարանին նստած քնել էր բերանը բաց։ Ռոմաշովի կողքին վհատորեն խաղին էր նայում Լեշչենկոն, և դժվար էր հասկանալ, թե այդ ինչ ուժ է նրան հարկադրում ժամերով նստել այստեղ դեմքի այդպիսի թախծալի արտահայտությամբ։ Լույսը բացվեց։ Հալված մոմերը վառվում էին դեղին, երկար կրակներով և թարթում էին։ Խաղացող սպաների դեմքերը դժգույն էին և տանջված էին թվում։ Իսկ Ռոմաշովը շարունակ նայում էր խաղաթղթերին, արծաթի և թղթադրամների կույտերին, կավիճով վրան գրոտած կանաչ մահուդին և նրա ծանրացած, մշուշված գլխում դանդաղ թափառում էին շարունակ միևնույն մտքերը՝ իր անկման և միօրինակ, ձանձրալի կյանքի անմաքրության մասին։

10

Ոսկե, բայց ցուրտ, իսկական գարնանային առավոտ էր։ Ծաղկում էր թխենին։

Ռոմաշովը, որ մինչև հիմա չէր վարժվել հաղթահարելու իր ջահել քունը, ըստ սովորականի ուշացավ առավոտյան պարապմունքներից և ամոթի ու տագնապի տհաճ զգացումով մոտենում էր այն հրապարակին, որտեղ պարապում էր իր վաշտը։ Նրան ծանոթ այդ զգացմունքների մեջ երիտասարդ սպայի համար միշտ ստորացուցիչ շատ բան կար, իսկ վաշտի հրամանատարը՝ կապիտան Սլիվան, գիտեր դրանք ավելի սուր և վիրավորական դարձնել։

Այդ մարդն իրենից ներկայացնում էր առաջվա, ավանդության գիրկն անցած, դաժան կարգապահության կոպիտ ու ծանր մի բեկորը, կարգապահության՝ համատարած ծեծով, մանրախնդիր ձևամոլությամբ, եռատեմպ համաքայլվածքով և բռնցքային դատաստանով հանդերձ։ Նույնիսկ գնդում, որը վայրենի գավառական կյանքի շնորհիվ առանձնապես աչքի չէր ընկնում իր մարդասիրական ուղղությամբ, նա այդ դաժան զինվորական հին օրերի արտասովոր մի հուշարձան էր, և նրա մասին բազմաթիվ տարօրինակ, գրեթե անհավատալի անեկդոտներ էին պատմում։ Այն ամենը, ինչ դուրս էր գալիս զորաշարքի, կանոնադրության ու վաշտի սահմաններից և ինչ նա արհամարհանքով անվանում էր դատարկ բան և մանդրագորիա, անշուշտ նրա համար գոյություն չուներ։ Իր ամբողջ կյանքում քաշելով ծառայության դաժան բեռը, նա չէր կարդացել ոչ մի գիրք, ոչ մի լրագիր, բացի «Ինվալիդի» պաշտոնական մասից։ Ամեն տեսակ զվարճությունը, ինչպես, օրինակ, պարերը, սիրողների ներկայացումները և այլն նա արհամարհում էր իր ամբողջ կոպտացած հոգուց, և չկային այնպիսի կեղտոտ և պիղծ արտահայտություններ, որոնք չկպցներ դրանց իր զինվորական բառապաշարից։ Նրա մասին պատմում էին, և դա կարող էր ճիշտ լինել, որ մի գարնանային գեղեցիկ գիշեր, երբ նա բաց լուսամուտի առաջ նստած ստուգում էր վաշտի հաշվետվությունը, նրան մոտիկ թփերում երգեց սոխակը։ Սլիվան լսել-լսել և հանկարծ գոռացել էր սպասյակին.

— Զ-զախարչո՛ւկ։ Ք-քշիր այդ թռ-չունը քա-քարով։ Խ-խանգարում է...

Այդ թմրած, արտաքուստ փնթի մարդը սարսափելի դաժան էր լինում զինվորների հետ և ոչ միայն թույլ էր տալիս, որ ենթասպաները ծեծեն նրանց, այլ ինքն էլ ծեծում էր անգթաբար, մինչև արյունոտելը, մինչև այն աստիճան, որ զանցառուն նրա հարվածների տակ գետին էր ընկնում։ Դրա փոխարեն զինվորների կարիքների նկատմամբ նա ուշադիր էր վերին աստիճանի.

գյուղից եկած փողերը չէր ուշացնում և ամեն օր անձամբ հետևում էր վաշտի կաթսային, թեև ազատ աշխատանքներից ստացվող գումարները տնօրինում էր իր հայեցողությամբ։ Միայն Հինգերորդ վաշտում էին մարդիկ ավելի կուշտ ու զվարթ, քան նրա մոտ։

Բայց երիտասարդ սպաներին Սլիվան խիստ վերաբերմունքով տանջում և հուպ էր տալիս, գործադրելով անպատկառ ու թունդ միջոցներ, որոնց նրա խախուտական հումորը առանձնահատուկ կծվություն էր տալիս։ Եթե, օրինակ, պարապմունքի ժամանակ սուբալտերն-սպան ոտքը շփոթում էր, Սլիվան բղավում էր, սովորության համաձայն թեթևակի կակազելով.

— Այ, համ-համեցե՛ք. ամբողջ վաշտը, գ-գրողը տանի նրան, քայլում է անհամաչափ։ Միայն պոդպորուչիկն է քայլում համաչափ։

Երբեմն էլ, ամբողջ վաշտին թունդ հայհոյելով, նա հապճեպ, բայց կծու ավելացնում էր.

— Բացառությամբ պարոնայք սպաների և պոդպրապորշչիկի։

Բայց նա առանձնապես անգութ և նեղող էր լինում այն դեպքում, երբ կրտսեր սպան ուշանում էր վաշտ գալուց, և դա ամենից հաճախակի իր վրա զգում էր Ռոմաշովը։ Դեռ հեռվից նկատելով պոդպորուչիկին, Սլիվան վաշտին հրամայում էր՝ «զգա՜ստ», ասես ուշացողին ծաղրական պատվավոր դիմավորում սարքելով, իսկ ինքն անշարժ, ժամացույցը ձեռքին, հետևում էր, թե ինչպես Ռոմաշովը ամոթից սայթաքելով և ոտքերը թրի հետ խճճելով, երկար ժամանակ չէր կարողանում գտնել իր տեղը։ Երբեմն էլ կատաղի քաղաքավարությամբ հարցնում էր, չքաշվելով այն բանից, որ զինվորները լսում են այդ. «Ես կարծում եմ, պոդպորուչիկ, թույլ կտաք շարունակելու՞»։ Մի ուրիշ անգամ սիրալիր հոգատարությամբ, բայց դիտավորյալ բարձրաձայն տեղեկանում էր, թե ինչպես է քնել պոդպորուչիկը և երազում ինչ է տեսել։ Եվ այդ օրիններից մեկը խաղալուց անմիջապես հետո նա մի կողմ էր կանչում Ռոմաշովին և, շեշտակի նայելով նրան իր կլոր՝ ձկան աչքերով, կոպիտ նկատողություն էր անում։

«Է՜խ, միևնույն է,— հուսահատ մտածում էր Ռոմաշովը, վաշտին մոտենալով։ — Այստեղ էլ վատ է, այնտեղ էլ վատ է՝ իրար արժեն։ Կորավ կյանքս»։

Վաշտի հրամանատարը, պորուչիկ Վետկինը, Լբովը և ֆելդֆեբելը կանգնել էին հրապարակի մեջտեղում և բոլորը միասին շրջվեցին դեպի մոտեցող Ռոմաշովը։ Զինվորներն էլ գլուխները շուռ տվին դեպի նա։ Այդ րոպեին Ռոմաշովը պատկերացրեց ինքն իրեն՝ իր վրա հառած հայացքների ներքո շփոթված, անշնորհք քայլերով մոտենալիս, և ավելի մեծ տհաճություն զգաց։

«Բայց գուցե սա իսկի էլ այնքան ամոթալի չէ՞,— մտովի փորձում էր ինքն իրեն մխիթարել, ամաչկոտ մարդկանց շատերի սովորությամբ։— Գուցե դա միայն ինձ է այսպես սուր թվում, իսկ ուրիշների համար, իսկապես, միևնույն է։ Ահա, օրինակ, ես պատկերացնում եմ, որ ուշացել եմ ոչ թե ես, այլ Լբովը, իսկ ես կանգնած եմ իմ տեղում և նայում եմ, թե ինչպես է նա մոտենում։ Դե ոչ մի առանձին բան էլ չկա. Լբովը Լբով է... Ողջը դատարկ բաներ են, — վճռեց նա վերջապես և միանգամից հանգստացավ։ — Ասենք, ամոթ է... Բայց ախր դա մի ամիս չի տևելու, և նույնիսկ ոչ էլ մի շաբաթ, մի օր։ Եվ ամբողջ կյանքն էլ այնքան կարճ է, որ ամեն ինչ մոռացվում է»։

Հակառակ սովորականի, Սլիվան գրեթե ուշադրություն չդարձրեց նրա վրա և իր օրիններից ոչ մեկը չբ՝ներեցրեց։ Միայն երբ Ռոմաշովը կանգ առավ նրանից մի քայլ հեռու, ձեռքը հարդանքով շքոցին մոտեցրած և ոտքերը միացրա՜ իրար, նա ասաց, նրան մեկնելով իր թորշոմած մատները, որոնք նման էին հինգ սառը նրբերշիկների։

— Խնդրում եմ հիշել, պոդպորուչիկ, որ դուք պարտավոր եք վաշտում լինել ավագ սուբալտերն սպայից հինգ րոպե և վաշտի հրամանատարից տասը րոպե առաջ։

— Մեղավոր եմ, պարոն կապիտան, — անարտահայտիչ ձայնով պատասխանեց Ռոմաշովը։

— Ահա, հաճեցեք, մեղավո՞ր է... Շարունակ քնում եք։ Քնելով բան դուրս չի գա։ Խնդրում եմ պարոնայք սպաներին գնալ իրենց դասակները։

Ամբողջ վաշտը մաս առ մաս ցրված էր հրապարակում։ Դասակներով կատարում էին առավոտյան մարմնամարզությունը։ Զինվորները կանգնած էին շարքերով միմյանցից մեկական քայլ հեռավորության վրա, շարժումներն ազատ լինելու համար մունդիրներն արձակած։ Ռոմաշովի կիսավաշտի ենթասպա ժիր Բոբիլյովը, աչքի տակով հարգալիր նայելով մոտեցող սպային, զիլ ձայնով հրաման էր արձակում, առաջ ձգելով ստորին ծնոտը և աչքերը շլելով.

— Բարձրանալ թաթերին և սահուն կքանիստ անել։ Ձեռներդ... ազդ-րե-ռի՛դ։

Եվ ապա ցածր ձայնով երկարաձիգ ծոր տվեց.

— Ըսկը՛-սե՛լ։

— Մե-ե՛կ — միաձայն երգեցին զինվորները և դանդաղ կքանիստ կատարեցին, իսկ Բոբիլյովը, նույնիսկ կքանիստ արած, խիստ, կտրիճավարի հայացքով չափում էր զինվորների շարքը։

Իսկ դրանց կողքին փոքրամարմին արագաշարժ եֆրեյտոր Սերոշտանը ճղավում էր բարակ, հատու և ջահել աքլորի ձայնի պես կտրվող ձայնով.

— Ընկնել ձախ և աջ ոտքի վրա, առաջ նետելով համապատասխան ձեռքը։ —Պատ-ռա՛ստ։ Սկսի՛ր։ Մե՛կ-երկո՛։, մե՛կ-երկու՛,— և տասը երիտասարդ առողջ ձայներ ընդհատ ու ջանադիր բղավում էին. — հա՛ու, հա՛ու, հա՛ու, հա՛ու։

— Նա՛ց, —սուր ձայնով բղավեց Սերոշտանը։ — Լա՛-ապշին։ Էդ ի՞նչ ես էդպես սեմետրիկ հիմարություն անում։ Բռունցքներդ խոթում ես, անց որ ոյազանցի կնիկը ունելիքը. խո՛ու... խո՛ու... Շարժումներդ մաքո՛ւր կատարի, գրո՛ղը քու մորը։

Հետո ենդաս գաները վազքի քայլով դասակները տարան գործիքների մոտ, որոնք դրված էին հրապարակի զանազան ծայրերում։ Պոդպրապորշչիկ Լբովը, մի ուժեղ, ճարպիկ տղա և գերազանց մարմնամարզիկ, արագ հանեց շինելն ու մունդիրը և, մնալով մի կապույտ թե վերնաշապկով, առաջինը մոտ վազեց զուգափայտերին։ Ձեռքերով հենվելով նրանց ծայրերին, նա երեք անգամ ճոճվելով թափ առավ, և հանկարծ, ամբողջ մարմնով լրիվ շրջան գծելով, այնպես որ մի բոպե նրա ոտքերը գտնվում էին ուղիղ գլխի վերևում, ուժով ետ մղվեց զուգափայտերից, ճկուն աղեղի պես մեկուկես սաժեն առաջ նետվեց, օդում շուռ եկավ և ճարպիկ կատվի պես պզեց գետնին։

— Պոդպրապորշչիկ Լբով։ Էլի ֆոկուսներ եք անում,— շինծու խստությամբ ձայն տվեց Սլիվան։ Ձեր «բուրբոնը» հոգու խորքում թուլություն էր տածում դեպի պոդպրապորշչիկը, որպես գերազանց ճակատային և կանոնադրության քաջ գիտակի։ — Ցույց տվեք այն, ինչ պահանջվում է հրահանգով։ Այստեղ ձեզ համար Զատիկ օրվա բալագան չէ։

— Լսո՛ւմ եմ, պարոն կապիտան,— զվարթ ծղրտաց Լբովը։— Լսում եմ, բայց չեմ կատարում,— ավելացրեց նա կիսաձայն, աչքով անելով Ռոմաշովին։

Չորրորդ դասակը մարզանք էր անում թեք սանդուղքի վրա։ Զինվորները մեկը մյուսի հետևից մոտենում էին, բռնում ձողափայտից, մկանները պրկելով ձգվում և ձեռքերով կախվելով բարձրանում վերև։ Ենթասպա Շապովալենկոն ներքևում կանգնած նկատողություն էր անում։

— Ոտներդ մի՛ ճոճի։ Թաթերդ վիրև։

Հերթը հասավ ձախաթևի զինվորիկ Խլեբնիկովին, որը վաշտում բոլորի ծաղրի առարկան էր։ Հաճախ, նրան նայելով, Ռոմաշովը զարմանում էր, թե ինչպես կարող էին զինվորական ծառայության վերցնել մի բունցքաչափ կեղտոտ, անբեղ երեսով այդ խղճուկ, հալից ընկած մարդուն, գրեթե գաճաճին։ Եվ երբ պոդպորուչիկը հանդիպում էր նրա անիմաստ աչքերին, որոնց մեջ կարծես մեկընդմիշտ, ծնված իսկ օրից, սառել էր բութ, հլու սարսափը, նրա սրտում շարժվում էր ինչ-որ տարօրինակ՝ անձկության ու խղճի խայթի նման մի բան։

Խլեբնիկովը կախվել էր ձեռքերով՝ այլանդակ, անճարակ, կարծես խեղդամահ եղած։

— Ձգվի՛ր, շան մոութ, ձգվի՛ր,— բղավում էր կրտսեր սպան։ —Դե, վիրև՛։

Խլեբնիկովը ճիգ էր գործադրում բարձրանալու, բայց լոկ ոտքերն էր անօգնական ցնցում և տարուբերվում էր մի կողմից մյուսը։ Մի ակնթարթ նա մի կողմ ու դեպի ցած շրջեց իր գորշ փոքրիկ դեմքը, որի վրա խղճալի ու անհեթեթ տնկվել էր դեպի վեր ցցված կեղտոտ քիթը։ Եվ հանկարծ, պոկ գալով ձողափայտից, պարկի պես ընկավ գետին։

— Ա-ա՛։ Ձե՞ս ուզում մարմնամարզական վարժություններ անել ,— գոռաց ենթասպան։— Դու, սրիկա, իմ ամբողջ դասակը խանգարում ես։ Ես ք-քե՛զ։

— Շապովալենկո, չհամարձակվես խփել, — բղավեց Ռոմաշովը, ամբողջովին բռնկվելով ամոթից ու զայրույթից։ — Երբե՛ք չհամարձակվես անել այդ, — բղավեց նա, մոտ վազելով ենթասպային և բռնելով նրա ուսը։

Շապովալենկոն լարի պես ձգվեց և ձեռքը տարավ շքոցին։ Անմիջապես զինվորավարի անիմաստ դարձած աչքերում, սակայն, թրթռում էր հազիվ նկատելի ծաղրական մի ժպիտ։

— Լսում եմ, ձերդ ազնվություն։ Միայն թույլ տվեք ձեզ զեկուցել՝ ոչ մի հնարավորություն չկա սրա հետ։

Ալեքսիկովը կանգնել էր նրանց կողքին, կռացած. նա բութ հայացքով նայում էր սպային և ափի եզրով սրբում քիթը։ Սուր և անօգուտ խղճահարության զգացումով Ռոմաշովը շրջվեց և գնաց դեպի երրորդ դասակը։

Մարմնամարզությունից հետո, երբ մարդկանց տասը բոպե հանգիստ տրվեց, սպաները նորից իրար մոտ հավաքվեցին հրապարակի կենտրոնում, զուգահեռափայտի մոտ։ Անմիջապես խոսակցություն սկսվեց առաջիկա մայիսյան շքահանդեսի մասին։

— Ահա, հահեցեք կռահել, թե որտեղ դեմ կառնեն,— ասում էր Սլիվան ձեռքերը տարածելով և անգույն աչքերը զարմացած շռելով։ — Այսինքն, ես ձեզ կասեմ. էն է որ ամեն մի գեներալ իր ֆանտազիան ունի։ Հիշում եմ, մենք մի գեներալ-լեյտենանտ Լվովիչ ունեինք, կորպուսի հրամանատար։ Նա մեզ մոտ ընկնելուց առաջ ինժեներ էր եղել։ Եվ նրա օրոք մենք զբաղվում էինք միայն խրամատավորվելով։ Կանոնադրություն, պրիոմներ, քայլվածք՝ բոլորը մի կողմ։ Առավոտից մինչև իրիկուն կառուցում էինք ամեն տեսակ լոժեմենտներ[1], գրողը տանի դրանց։ Ամառը՝ հողից, ձմեռը՝ ձյունից։ Ամբողջ գունդը ման էր գալիս ոտից գլուխ կավով կեղտոտված։ Տասներորդ վաշտի հրամանատարը, կապիտան Ալեյնիկովը ասված հոգին լուսավորի, Աննայի շքանշանով պարգևատրվեց նրա համար, որ երկու ժամվա ընթացքում կառուցեց ինչ-որ լյունետ էր, թե բարբետ։

— Ճարտա՞ր բան,— միջարկեց Լբովը։

— Հետո, դա արդեն դուք պետք է որ հիշեք, Պավել Պավլիչ՝ հրաձգությունը գեներալ Արագոնսկու ժամանակ։

— Ա՜։ Պատրաստվեց կրակելո՞ւն, — ծիծաղեց Վետկինը։

— Այդ ի՞նչ բան է,— հարցրեց Ռոմաշովը։

Սլիվան արհամարհանքով ձեռքը թափ տվեց։

— Դա էն է, որ այն ժամանակ սեր խելքն ու միտքը՝ հրաձգություն սովորեցնելու խրատներն էին։ Չորատեսի ժամանակ մի զինվոր պատասխանում էր «Հավատամքը», փոխանակ ասելու «Պոնտացի Պիղատոսի ժամանակ», նա հենց այդպես էլ ասաց «պատրաստվեց կրակելու»։ Այդ աստիճան լցրել էին

1 Լոժեմենտ— Ոչ մեծ հրաձգային կամ առանձին հրետանային խրամատ։ Այս տերմինը դուրս է եկել գործածությունից։

բոլորի գլուխները։ Ցուցամատը ոչ թե ցուցամատ էին կոչում, այլ ձգանի մատ, իսկ աջ աչքի փոխարեն նշանառու աչք էր։

— Իսկ հիշո՞ւմ եք, Աֆանասի Կիրիլլիչ, ինչպես էինք անգիր անում տեսությունը,— ասաց Վետկինը։— Տրաեկտորիա, դերիվացիա... Աստված վկա, ես ինքս ոչինչ չէի հասկանում։ Պատահում էր, որ զինվորին ասում էինք. ահա քեզ հրացանը, նայիր փողի մեջ։ Ի՞նչ ես տեսնում։ «Տենում եմ այն երևակայական գիծը, որը կոչվում է հրացանափողի առանցք»։ Բայց այ թե կրակում էին։ Հիշո՞ւմ եք, Աֆանասի Կիրիլլիչ։

— Հապա ոնց։ Հրաձգության համար մեր դիվիզիան արտասահմանյան լրագրերն ընկավ։ Տասը տոկոսը գերազանցից բարձր, ահա՛, խնդրեմ։ Բայց մենք էլ համա թե խաբեբայություն էինք անում, հա՜։ Մի գնդից մյուսը փոխարինաբար վերցնում էինք լավ հրաձիգներին։ Եվ կամ, պատահում էր, որ վաշտը կրակում էր ինքն իր համար։ Իսկ բլինդաժներից կրտսեր սպաները վրա էին տալիս ատրճանակներով։ Մի վաշտ այնպես աչքի ընկավ, որ սկսեցին հաշվել, և թիրախի վրա հինգ գնդակ ավելի ստացվեց, քան կրակել էին։ Հարյուր հինգ տոկոսով դիպցրել էին նշանին։ Լավ էր, որ ֆելդֆեբելը ժամանակին կարողացավ շրեշով ծածկել հետքերը։

— Իսկ Սլեսարևի ժամանակ, հիշո՞ւմ եք շրեյբերյան մարմնամարզությունը։

— Ինչպե՞ս կարող եմ չհիշել։ Այ թե դա որտեղս էր հասել։ Բալետ էինք պարում։ Է՜, քի՞չ կային այդպիսի գեներալներ, գրողը տաներ դրանց։ Բայց այդ բոլորը, պարոնա՛յք, ես ձեզ կասեմ, որ հիմիկվա համեմատությամբ դատարկ բան է ու մանդրագորիա։ Դա արդեն, այսպես ասած՝ ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան։ Առաջ գոնե գիտեիր, թե ինչ են պահանջում քեզնից, իսկ հիմա՞։ Ա՜խ, ողորմացեք, զինվորիկը մերձավորդ է, մարդասիրություն է պետք։ Քոթակե՞լ է պետք այդ ապ-պիրատին։ Ա՜խ, մտավոր ընդունակությունների զարգացում, արագություն և ըմբռնողություն։ Սովորովականնե՞ր։ Չգիտես էլ, թե ինչ սովորեցնես զինվորին։ Ահա, հաճեցեք, նոր բան են հնարել, միջանցիկ գրոհ...

— Այո, քաղցր կյանք չէ, — հավանությամբ գլուխը շարժեց Վետկինը։

— Հիմարի պես կանգնում ես, իսկ կազակները սարշավ քշում են վրադ։ Ու խրվում շարքը։ Հապա մի փորձիր, կողքի

քաշվիր։ Անմիջապես հրաման կլինի. «Կապիտան այսինչը թույլ ներվեր ունի։ Թող հիշի, որ ոչ ոք նրան զոռով չի պահում ծառայության մեջ»։

— Նենգ ծերուկ է, —ասաց Վետկինը։ — Նա Կ-յան գնդում ի՞նչ օլին է խաղացել։ Վաշտը տարել է մի հսկայական ջրափոսի մոտ և վաշտապետին պատվիրում է հրամայել՝ «պառկի՛ր»։ Սա մի քիչ տատանվում է, բայց հրամայում է «պառկի՛ր»։ Զինվորները շփոթվում են, կարծելով, թե սխալ են լսել։ Իսկ գեներալը ստորին աստիճանավորների ներկայությամբ սկսում է շշպռել հրամանատարին. «Ինչպե՞ս եք կառավարում վաշտը։ Օրիորդներ։ Փափկասունե՛ր։ Եթե այստեղ վախենում են ջրափոսի մեջ պառկել, պատերազմի ժամանակ ինչպե՞ս պիտի սրանց ոտքի հանեք, երբ հակառակորդի կրակի տակ սրանք պառկեն-մնան որևէ խրամատում։ Ձեր զինվորները ոչ թե զինվորներ են, այլ կնիկներ, հրամանատարն էլ կնիկ է։ Դեպի պահնո՛ց»։

— Իսկ ի՞նչ օգուտ։ Մարդկանց ներկայությամբ խայտառակում են հրամանատարին, հետո էլ կարգապահության մասին են խոսում։ Էլ ո՞ր գրողի ծոցը կմնա կարգապահությունը։ Իսկ այդ անպիտանին խփել՝ չհամարձակվես։ Չէ-է-է՞... Բարի՛ եղեք, նա անձ է, նա մարդ է։ Ոչ, առաջվա ժամանակ ոչ մի անձ էլ չկար, և դնքսում էին այդ անասուններին անխնա կերպով, բայց մենք ունեցել ենք և՛ Սևաստոպոլ, և իտալական արշավանք, և նման բաներ։ Ուզում ես ինձ պաշտոնից արձակիր, բայց համենայն դեպս, երբ սրիկան արժանի է դրան, ես կքորեմ նրա որտեղը որ պետք է։

— Զինվորին ծեծելը անազնիվ բան է, — խուլ ձայնով առարկեց/ մինչ այդ լուռ Ռոմաշովը։ — Չի կարելի ծեծել մի մարդու, որը ոչ միայն չի կարող քեզ պատասխանել, այլ նույնիսկ իրավունք չունի ձեռքը երեսին բարձրացնելու, որպեսզի պաշտպանվի հարվածից։ Չի համարձակվում նույնիսկ գլուխը մի կողմ թեքել։ Դա ամո՛թ է։

Սլիվան ոչնչացնող հայացքով աչքերը կկոցեց և կողքանց, վերից վար՝ սպիտակող բեղերի տակից առաջ ցցելով ներքևի շրթունքը, ոտից գլուխ չափեց Ռոմաշովին։

— Ի-ի՛-ի՞նչ, — ծոր տվեց նա ծայրահեղ արհամարհական եղանակով։

Ռոմաշովը գունատվեց։ Նրա կուրծքն ու փորը սառեցին,

իսկ սիրտն ասես սկսեց բաբախել միաժամանակ ամբողջ մարմնի մեջ։

— Ես ասացի, որ դա լավ չէ... Այո, և կրկնում եմ... ահա թե ինչ, — ասաց նա անկապ, բայց հաստատուն։

— Ասա-ցե՛ք խնդ-րե-ե՛մ, — ասես երգեց Սլիվան։ — Տեսել ենք մենք այդպիսի քաղցրաբարոներին, մի անհանգստացեք։ Դուք ինքներդ մի տարի հետո, եթե ձեզ գնդից դուրս չանեն, կսկսեք ռեխներին շրխկացնել։ Հրա-աշալի՛ ձևով։ Ինձնից ոչ պակաս։

Ռոմաշովը ատելությամբ շեշտակի նայեց նրան և գրեթե շշնջալով ասաց.

— Եթե դուք զինվորներին ծեծեք, ես ձեր դեմ զեկուցագիր կգրեմ գնդի հրամանատարին։

— Ի-ի՞նչ, — ահեղ գոռաց Սլիվան, բայց իսկույն էլ ձայնը կտրեց։ — Սակայն, հերիք է այս դատարկաբանությունը. — ասաց նա չոր։— Դուք, պոդպորուչիկ, դեռ ջահել եք քսանհինգ տարի իր թագավորին պատվով ծառայած մարտական հին սպաներին սովորեցնելու համար։ Խնդրում եմ պարոնայք սպաներին գնալ վաշտի դպրոցը, — ավարտեց նա՝ բարկացած։

Նա մեջքը կտրուկ շրջեց դեպի սպաները։

— Հավե՞ս ունեք խառնվելու,— հաշտարար եղանակով խոսել սկսեց Վետկինը, քայլելով Ռոմաշովի կողքից։ — Ինքներդ էլ տեսնում եք, որ այդ սալորը[1] քաղցր չէ։ Դուք նրան դեռ այնպես չեք ճանաչում, ինչպես ես։ Նա ձեզ այնպիսի բաներ կասի, որ չեք իմանա, թե ուր կորչեք։ Իսկ եթե առարկեք՝ կալանքի տակ կառնի։

— Բայց լսեցեք, Պավել Պավլիչ, ախր սա ծառայություն չէ, ինչ-որ մոլագարություն է, — ձայնի մեջ ցասման ու վիրավորանքի արցունքներ՝ բացականչեց Ռոմաշովը։— Այդ ծեր թրմբուկի կաշիները ծաղրում են մեզ։ Նրանք դիտմամբ աշխատում են սպաների փոխհարաբերությունների մեջ պահպանել կոպտությունը, բռիությունը, մի տեսակ ցինիկ կտրիճությունը։

— Այո, իհարկե, այդպես է, — անտարբերությամբ հաստատեց Վետկինը և հորանջեց։

Իսկ Ռոմաշովը շարունակում էր բորբոքված.

---

1 Բառախաղ է։ Սլիվա, որ կապիտանի ազգանունն է, ռուսերեն նշանակում է սալոր (ծան. թարգմ.)։

— Դե, ո՞ւմ են պետք, ինչի՞ համար են այդ ձիգ տալը, գոռոցը, կոպիտ բղավոցները։ Ա՛խ, ես բոլորովին ուրիշ բան էի սպասում, երբ սպա դարձա։ Երբեք չեմ մոռանա առաջին տպավորությունս։ Ընդամենը երեք օր էր, ինչ գնդում էի և ինձ խեթեց այդ շեկ տիրացու Արշակովսկին։ Ակումբում խոսակցության ժամանակ ես նրան անվանեցի պորուչիկ, որովհետև նա էլ ինձ պոդպորուչիկ էր անվանում։ Եվ, նա թեպետ նստած էր իմ կողքին և միասին գարեջուր էինք խմում, ինձ վրա բղավեց. «Նախ՝ ես ձեզ համար ոչ թե պորուչիկ եմ, այլ պարոն պորուչիկ, իսկ երկրորդ... երկրորդ, հաճեցեք ոտքի կանգնել, երբ ձեզ նկատողություն է անում աստիճանով ավագը»։ Եվ ես վեր կացա ու կանգնեցի նրա առաջ արհամարհված, մինչև որ փոխգնդապետ Լեխը նրան զսպեց։ Ոչ, ոչ, ոչինչ մի ասեք, Պավել Պավլիչ։ Այս բոլորն ինձ այն աստիճան է ձանձրացրել, զզվեցրել...

11

Վաշտի դպրոցում «բանավոր պարապմունք» էին անցկացնում։ Մի նեղ սենյակում, քառանկյունաձև շարած նստարանների վրա երևանները դեպի ներս, նստել էին երրորդ դասակի գինվորները։ Այդ քառանկյունու մեջտեղում ետ ու առաջ էր քայլում եֆրեյտոր Սերոշտանը։ Կողքին, մի նույնպիսի քառանկյունու մեջ նույնպես ետ ու առաջ էր շրջում կիսավաշտի մի այլ ենթասպա՝ Շապովալենկոն։

— Բոնդարե՛նկո,— սաստկաձայն բղավեց Սերոշտանը։

Բոնդարենկոն, զույգ ոտքերը հատակին խփելով, լարած վայտե խաղատիկնիկի պես ուղիղ ու արագ վեր թռավ։

— Եթե դու, Բոնդարենկո, խոսքի օրինակ, կանգնում ես շարքում թվանքը ձեռքիդ, իսկ քեզ մոտենում է մեծավորը և հարցնում է. «Ձեռքիդ ի՞նչ է, Բոնդարենկո»։ Ի՞նչ պիտի պատասխանես։

— Թվանք է, քեռի ջան,— գլխի է ընկնում Բոնդարենկոն։

— Դու՛րս ես տալիս։ Բա սա թվանք է՞։ Դու հլա գեղավարի փշտով ասեիր։ Էն տանն էր որ թվանք էր. իսկ ծառայության մեջ պարզ ասում են, բերդանի սիստեմի փոքրակալիբր արագաձիգ հետևակային հրացան։ Կրկնի՛ր, շուն-շան որդի։

Բոնդարենկոն արագախոսությամբ կրկնում է այդ բառերը, որոնք, իհարկե, առաջուց էլ գիտեր։

— Նստի՛ր,— ողորմածաբար հրամայում է Սերոշտանը։ — Իսկ ինչի՞ համար է դա քեզ տրված։ Այդ հարցին ինձ կպատասխանի... — Նա խիստ հայացքը հերթով պտտեցնում է բոլոր ստորադրյալների վրա. —Շեչո՛ւկը։

Շեչուկը վեր է կենում մռայլ տեսքով և պատասխանում է խուլ, թավ ձայնով, դանդաղ ու քթին գցելով և նախադասությունները այնպես կտրատելով, կարծես դրանցից հետո վերջակետեր է դնում։

— Էդի ընձի տրված է ընդրա համար։ Որ խաղաղ վախտը ընդրանով անեմ հրացանի պրիոմները։ Իսկ պատերազմի վախտը, պաշտպանեմ գահը և հայրենիքը թշնամիներից։— Նա փոքր-ինչ լռեց, քիթը ֆստֆստացրեց ու մռայլ ավելացրեց.— Ինչպես նեքսեի, էնպես էլ դրսի։

— Այդպես։ Դու լավ գիտես, Շեչուկ, միայն թե ծամծըմում ես։ Զինվորն իր մեջ ուրախություն պիտի ունենա, ոնց որ արծիվ։ Նստիր։ Հիմա ասա, Օվեչկին. ո՞ւմ ենք դրսի թշնամիներ ասում։

Ճարպիկ օռլովցի Օվեչկինը, որի ձայնի մեջ լսվում է նախկին մանրավաճառ գործակատարի քաղցրավուն արագախոսությունը, պատասխանում է արագ և ցուցամոլաբար, բավականությունից շնչասպառ լինելով։

— Արտաքին թշնամիներ ասում ենք այն բոլոր պետությանցը, որոնց հետ մենք ստիպված ենք պատերազմել։ Ֆրանցյուզները, նեմեցները, ատալացիները, թուրքերը, իևրոպացիները, հնդկա...

— Կաց,— ընդհատում է նրան Սերոշտանը, — դա արդեն չկա կանոնադրության մեջ։ Նստիր, Օվեչկին։ Իսկ հիմա ինձ կասի... Արխիպովը։ Ո՞ւմ ենք մենք ասում նեք-սե-ի թշնամիներ։

Վերջին երկու բառը նա արտասանում է առանձնապես բարձրաձայն և ծանրակշիռ, ասես ընդգծելով դրանք, և բազմանշանակ հայացք նետելով կամավոր զինվոր Մարկուսոնի կողմը։

Անշնորհք, չեչոտ Արխիպովը համառորեն լռում է, վաշտի դպրոցի ուսամուտից դուրս նայելով։ Ծառայությունից դուրս բանիմաց, խելացի ու ճարպիկ այդ տղան պարապմունքների ժամանակ իրեն պահում է կատարյալ ապուշի պես։ Ըստ երևույթին

վությունն, դա տեղի է ունենում այն պատճառով, որ գյուղական առօրյայի սարդ ու հասարակ երևույթները դիտելու և կըշռադատելու սովոր նրա առողջ խելքը և ոչ մի կերպ չի կարողանում բբեալ իրեն դասավանդվող «բանավոր պարապմունքի» և իրական կյանքի կապը։ Այդ պատճառով էլ նա չի հասկանում և չի կարողանում սովորել ամենահասարակ բաները, ի մեծ զարմանս և ի զայրույթ իր դասակապետի։

— Հը՛-ը։ Երկա՞ր պիտի սպասեմ քեզ, մինչև որ պատրաստվես, — սկսում է բարկանալ Սերոշտանը։

— Նեքսևի թշնամիներ... թշնամիներ...

— Չգիտե՞ս, — ահասաստ գոչեց Սերոշտանը և ուզեց շարժվել Արխիպովի կողմը, բայց շեղ նայելով սպային, միայն ղլուխը թափահարեց և սարսափելի աչքերով նայեց Արխիպովին։— Դե լսա՛։ Նեքսևի թշնամիները մենք ասում ենք օրենքին բոլոր հակառակվողներին։ Խոսքի օրինակ ո՞ւմ... — Նա հանդիպում է Օվեչկինի ոլոռնող աչքերին։ — Ասա հենց թեկուզ դու, Օվեչկին։

Օվեչկինը վեր է թռչում և ուրախ բղավում.

— Էնպես որ խոովարարները, յուսանողները, ձիագողերը, ջհուդներն ու լեհերը։

Կողքին իր դասակի հետ պարապում է Շապովալենկոն։ Ճեմելով նստարանների միջև, բարակ, երգեցիկ ձայնով հարցեր է տալիս զինվորական հուշաթերթով, որ բռնել է ձեռքին։

— Սոլտիս, ի՞նչ բան է ժամապահը։

Սոլտիսը, մի լիտվացի, շնչահեղձ լինելով ու ջանադրությունից աչքերը չռելով բացականչում է.

— Ժամապահը անձեռնմխելի անձնավորություն է։

— Դե լավ, այդպես է, էլի՞ ինչ։

— Ժամապահը հրացանը ձեռքին որևէ պոստի կարգված զինվոր է։

— Ճիշտ է։ Տեսնում եմ, Սոլտիս, որ դու արդեն սկսում ես ջանք թափել։ Իսկ դու ինչի՞ համար ես պոստի կարգված, Պախոռուկով։

— Որպեսզի չքնեմ, չննջեմ, չծխեմ և ոչ ոքից ոչ մի իր և նվեր չընդունեմ։

— Իսկ պատի՞վը։

— Եվ որպեսզի սահմանված պատիվը տամ մոտակա անցնող պարոնայք սպաներին։

— Այդպես, նստիր։

Շապովալենկոն արդեն վաղուց նկատել է կամավոր զինվոր Ֆոկինի ծաղրական ժպիտը, ուստի բղավում է առանձնահատուկ խստությամբ.

— Կամավոր զինվո՛ր։ Բայց ո՞վ է այդպես վեր կենում։ Եթե մեծավորը հարցնում է, պետք է վռազ վեր կենալ, ոնց որ զսպանակ։ Ի՞նչ է դրոշը։

Կրծքին համալսարանական կրծքանշան խփած կամավոր Ֆոկինը ենթասպայի առաջ կանգնել է հարգալիր դիրքով։ Բայց նրա ջահել, գորշ աչքերը կայծկլտում են ուրախ ծաղրով։

— Դրոշը զորական սրբազան խաչվառ է, որի ներքո...

— Փչո՞ւմ եք, — բարկացած կտրում է նրա խոսքը Շապովալենկոն և հուշաթերթերը խփում է ձեռքի ափին։

— Ոչ, ես ճիշտ եմ ասում, — համառ, բայց հանդիսաստ ասում է Ֆոկինը։

— Ի՞-ի՞նչ։ Եթե պետն ասում է ոչ, ուրեմն ոչ։

— Ինքներդ նայեցեք կանոնադրության մեջ։

— Ես իբրև ենթասպա եմ, ուրեմն կանոնադրությունն էլ ձեզնից լավ գիտեմ։ Տեսեք-տեսե՞ք։ Ամեն մի կամավոր ջաղդ ու կտոր է գալիս։ Գուցե հենց ես ինքս էլ կուզենամ յունկերական ուսումնարան ընկնել սովորելու։ Ինչի՞ց գիտեք։ Էդ ի՞նչ խաչվառ է։ Խա-չե-վա՛ռ։ Եվ բոլորովին ոչ թե խաչվառ։ Սուրբազան զորական խաչեվառ, ոնց որ սրբապատկեր։

— Շապովալենկո, մի վիճիր,— միջամտում է Ռոմաշովը —Շարունակիր պարապմունքը։

— Լսում եմ, ձերդ ազնվություն, — ձգվում է Շապովալենկոն։— Միայն թույլ տվեք ձերդ ազնվությանը զեկուցել՝ էս կամավորը շարունակ խելքին զոռ է տալիս։

— Լավ, լավ, շարունակիր։

— Լսում եմ, ձերդ ազնվթն... Խլեբնիկով։ Ո՞վ է մեր կորպուսի հրամանատարը։

Խլեբնիկովը շշկլված աչքերով նայում է ենթասպային։ Նրա բաց բերանից, ինչպես խոպոտ ագռավի բերանից, դուրս է թռչում մի շշացող հնչյուն։

— Ժա՛ժ արի,— չարացած բղավում է նրա վրա ենթասպան։

— Նորին...

— Դե, նորին... հետո ի՞նչ կլինի։

Ռոմաշովը, որն այդ րոպեին մի կողմ է շրջվել, լսում է, թե ինչպես Շապովալենկոն ցածրաձայն, խռպոտ ավելացնում է.

— Այ սպասի, ես պարապմունքից հետո քո մոութը կփշրեմ։

Եվ քանի որ այդ վայրկյանին Ռոմաշովը շրջվում է նրա կողմը, Շապովալենկոն բարձրաձայն ու անտարբեր ասում է.

— Նորին բարձր գերազանցություն... Դե, ի՞նչ ես լռել, Խլեբնիկով, հետո՞...

— Նորին ինֆանտերիայի... լենտինանտ,— վախեցած ու կցկտուր մրմնջում է Խլեբնիկովը։

— Ա-ա՜-ա՜,— աստանները սեղմած, խորդում է Շապովալենկոն։— Դե, քեզ հետ ո՞նց վարվեմ, Խլեբնիկով։ Հոգիս դուրս է գալիս, իսկ դու՝ ոնց որ ուղտ լինես, մենակ թե պոզեր չունես։ Ոչ մի ջանք չես թափում։ Գերանի պես կանգնիր էդպես մինչև պարապմունքի վերջը։ Իսկ ճաշից հետո կներկայանաս ինձ, քեզ հետ առանձին կպարապեմ։ Գրեչենկո։ Ո՞վ է մեր կորպուսի հրամանատարը։

«Այսպես է այսօր, այսպես կլինի վաղը և մյուս օրը։ Շարունակ նույնը, մինչև կյանքիս վերջը,— մտածում էր Ռոմաշովը՝ դասակից դասակ շրջելով։— Թողնեմ ամեն ինչ, հեռանա՞մ... Այսպես էլ տանջա՞նք»։

Բանավոր պարապմունքից հետո մարդիկ բակում զբաղվում էին հրաձգության նախապատրաստական վարժություններով։ Մինչ մի մասում մարդիկ նշան էին բռնում հայելու վրա, իսկ մյուսում մանրագնդակով խփում էին թիրախին, երրորդում հրացանը Լիվշաիի գործիքով ուղղում էին նշանին։ Երկրորդ դասակում ամբողջ հրապարակով մեկ ուրախ, զրնգուն տենորով գեղգեղում էր պոդպրապորշչիկ Լբովը.

— Ու-դի՜դ... սյունին... կրակոց ամբողջ վաշտով... մե՛կ-երկո՛։ Վա-ա՜շտ...— նա ձգում էր վերջին վանկը, մի պահ դադար առնում և ապա կտրուկ նետում.— կրա՜կ։

Ճրխկում էին զարկանները։ Իսկ Լբովը ձայնի զվարթագին սեթևեթանքով նորից էր գեղգեղում.

— Ո՜-ռ-ռա-ի՜դ...

Սլիվան անցնում էր դասակից դասակ, կքված, թմրած, ուղղում էր զինվորների կեցվածքը և կարճ, կոպիտ նկատողություններ անում.

— Փորդ քաշիր։ Կանչնել ես, ոնց որ հղի կնիկ։ Ինչպե՞ս ես բռնել հրացանդ։ Տիրացու հո չես մոմը ձեռքիդ։ Ի՞նչ ես բնդանդ բացել, Կարտաշով։ Սիրտդ փլավ ուզե՞ց։ Ո՞ւր է սիրիմդ։ Ֆիզֆեբել, պարապմունքից հետո Կարտաշովին մի ժամ կանգնեցնել հրացանն ուսին՝ իբրև պատիժ։ Ան-նպի-տա՜ն։ Շինելդ ինչպե՞ս ես փաթաթել, Վեդենեև։ Ոչ սկիզբն է հասկացվում, ոչ վերջը։ Դմբո՜։

Հրաձգությունից հետո մարդիկ հրացաններով բուրգեր կազմեցին և պառկեցին նրանց մոտ գարնանային դալար խոտի վրա, որ տեղ-տեղ արդեն տրորված էր զինվորական կոշիկներով։ Տաք ու պայծառ օր էր։ Օդում տարածված էր խճուղու երկարությամբ երկու շարքով բուսած բարդիների մատղաշ տերևների բույրը։ Վետկինը նորից մոտեցավ Ռոմաշովին։

— Վա՜զ անցեք, Յուրի Ալեքսեևիչ,— ասաց նա Ռոմաշովին, թևանցուկ անելով նրան։— Մի՞թե արժե։ Ահա պարապմունքը վերջացնենք, կգնանք ակումբ, մեկական թաս կպարպենք, ամեն ինչ կանցնի։ Հը՞։

— Տաղտուկ եմ զգում, սիրելի Պավել Պավլիչ,— անձկությամբ ասաց Ռոմաշովը։

— Ինչ ասել կուզե, ուրախ չէ,— ասաց Վետկինը։— Բայց ինչպե՞ս կլինի այլ կերպ։ Չէ՞ որ մարդկանց պնտք է սովորեցնել գործը։ Հանկարծ որ պատերազմ լինի՞։

— Որ պատերազմ լինի, հա,— վհատ համաձայնեց Ռոմաշովը։— Իսկ ինչո՞ւ լինի պատերազմ։ Գուցե այս բոլորը ինչ-որ ընդհանուր սխա՞լ է, ինչ-որ համաշխարհային մոլորություն, խելագարություն։ Մի՞թե բնական է սպանելը։

— Է-է՜, սկսեցիք փիլիսոփայությունը։ Ո՞ր գրողն է։ Իսկ եթե հանկարծ մեր վրա գերմանացիք հարձակվե՞ն։ Ո՞վ պիտի պաշտպանի Ռուսաստանը։

— Ես ախր ոչինչ չգիտեմ և չեմ ասում, Պավել Պավլիչ,— խղճալի ու հեզ առարկեց Ռոմաշովը,— ես ոչինչ, ոչինչ չգիտեմ։ Բայց ահա, օրինակ, Հյուսիս-ամերիկյան պատերազմը, կամ էլ ահա Իտալիայի ազատագրումը, իսկ Նապոլեոնի ժամանակ՝ գվերիլյասները... և մեկ էլ շուանները հեղափոխության ժամանակ... Չէ՞ որ կռվում էին, երբ հարկ էր լինում։ Հասարակ երկրագործները, հովիվները...

— Դրանք ամերիկացիներ էին... Այ թե համեմատեցիր... Դա տասներորդական բան է։ Իսկ իմ կարծիքով, եթե այդպես մտածենք, ավելի լավ է չծառայենք։ Եվ առհասարակ էլ, մեր գոր-

ծում մտածել չի թույլատրվում։ Միայն մի հարց. ի՞նչ ենք անելու ես ու դուք, եթե չծառայենք։ Ինչի՞ ենք պետք, երբ մենք ընդամբնը գիտենք՝ ձախ, աջ, էլ ուրիշ այբի կտոր չգիտենք։ Մեռնել գիտենք, այդ ճիշտ է։ Եվ կմեռնենք, գրողը մեզ տանի, երբ պահանջեն։ Համենայն դեպս զուր տեղը չենք հաց կերել։ Ահա այսպես, պարոն ֆիլոզո՛ֆ։ Պարապմունքից հետո միասին գնա՞նք ակումբ։

— Ինչ կա որ, գնանք,— անտարբեր համաձայնեց Ռոմաշովը։— Իսկապես ասած, խոզություն է ամեն օր ժամանակն այսպես անցկացնելը։ Իսկ դուք ճիշտ եք ասում, որ եթե այդպես մտածելու լինենք, ավելի լավ է չծառայենք։

Խոսակցելով, նրանք ետ ու առաջ էին քայլում վարժական հրապարակում և կանգ առան չորրորդ դասակի մոտ. Զինվորները նստել ու պառկել էին գետնին, բրգաձև կանգնեցրած հրացանների մոտ։ Մի քանիսը հաց էին ուտում, որը զինվորներն ուտում են ամբողջ օրը, առավոտից մինչև իրիկուն և բոլոր հանգամանքներում՝ զորատեսների ժամանակ, զորաշարժերի դադարների ժամանակ, եկեղեցում՝ խոստովանությունից առաջ և նույնիսկ մարմնական պատիժներից առաջ։

Ռոմաշովը լսեց, թե ինչպես մեկի անտարբեր-վիրավորիչ ձայնը կանչեց.

— Խլեբնիկով, այ Խլե՛բնիկով...

— Հը՞,— քթին դցելով մոայլ արձագանքեց Խլեբնիկովը։

— Դու տանն ի՞նչ էիր անում։

— Բանում էի,— քնկոտ պատասխանեց Խլեբնիկովը։

— Բայց ի՞նչ գործ էիր անում, դդումի գլուխ։

— Ամեն ինչ։ Հող էի վարում, անասուններին էի նայում։

— Ի՞նչ ես կպել նրան,— խոսակցությանը խառնվեց հին ծառայող զինվոր քեռի Շպինյովը։— Հայտնի է ինչ էր անում, երեխեքին ծիծ էր տալիս։

Ռոմաշովը հարևանցի նայեց Խլեբնիկովի մոխրագույն, խղճալի, լերկ դեմքին, և նորից նրա հոգում ինչ-որ անհարմար, հիվանդագին դգացում խլրտաց։

— Ի զե՞ն,— վարժական հրապարակի կենտրոնից բղավեց Սլիվան։— Պարոնայք սպաներն անցնեն տեղերը։

Հրացանները շրխկացին, սվին-սվինի կպչելով։ Զինվորները իրար անցած, շորերն ուղղելով, կանգնում էին իրենց տեղերը։

— Հավ-սա՛ռ,— հրաման արձակեց Սլիվան։— Զգա՛ստ։

Ապա, մոտ գալով վաշտին, նա երգաձայն բղավեց.

— Հրացանային ձևերը, տրոհումներով, հաշիվը բարձրաձայն... Վաշտ, լսի-ի՛ր... Պատվի՛ ա՛ռ։

— Մմե՛կ,— թնդացին զինվորները և հրացանները կտրուկ վեր նետեցին։

Սլիվան դանդաղ շրջանցեց զորաշարքը, կցկտուր դիտողություններ անելով. «Կոթը քիչ էլ շրջիր», «սվինդ բա՛րձր», «կոթը դեպի քե՛զ»։ Հետո նա նորից վերադարձավ վաշտի առաջ և հրաման արձակեց.

— Ա-ռա՛.. երկո՛ւ։

— Երկո՛ւ,— բղավեցին զինվորները։

Եվ նորից Սլիվան շրջելով անցավ զորաշարքը, ստուգելու կատարած ձևի մաքրությունը և ճշտությունը։

Տրոհումներով հրացանային ձևերից հետո գալիս էին առանց տրոհումների ձևերը, հետո դարձումները, քայլակներ կազմելը, բացազատվելը, միանալը. և այլ զանազան շարվածքները։ Ռոմաշովը ավտոմատի պես կատարում էր այն ամենը, ինչ իրենից պահանջվում էր կանոնադրությամբ, բայց նրա գլխից դուրս չէին գալիս Վետկինի անփութորեն նետած բառերը՝ «եթե այդպես մտածենք, էլ չպետք է ծառայենք։ Պետք է հեռանալ ծառայությունից»։ Եվ ռազմական կանոնադրության այդ բոլոր խոր-յամանկությունները՝ դարձումների ճարպկությունը, հրացանային ձևերի ճարտարությունը, երթի ժամանակ ոտքի հաստատ դնելը, իսկ դրանց հետ մեկտեղ այդ բոլոր տակտիկաներն ու ֆորտիֆիկացիաները, որոնց համար նա սպանեց իր կյանքի ինը լավագույն տարիները, որոնք պետք է լցնեին նաև նրա մնացած ողջ կյանքը և որոնք դեռ այնքան նորերս նրան թվում էին այնպիսի կարևոր ու իմաստուն գործ, այդ բոլորը հանկարծ նրան ներկայացավ որպես ինչ-որ ձանձրալի, անբնական, հնարովի, ինչ-որ աննպատակ ու պարապ բան, համընդհանուր համաշխարհային ինքնախաբեությամբ ծնված ինչ-որ անհեթեթ զառանցանքի նմանող մի բան։

Իսկ երբ պարապմունքը վերջացավ, նա Վետկինի հետ գնաց ակումբ, և երկուսով շատ մեծ քանակությամբ օղի խմեցին։ Ռոմաշովը գրեթե գիտակցությունը կորցրած, համբուրվում էր Վետկինի հետ, գլուխը նրա ուսին դրած լալիս էր բարձրաձայն հիստերիկ արցունքներով, գանգատվելով կյանքի դատարկությունից ու տաղտկությունից և այն բանից, որ իրեն ոչ ոք չի հաս-

կանում, և այն բանից, որ իրեն չի սիրում «մի կին», իսկ թե ով է նա, ոչ ոք երբեք չի իմանա. իսկ Վետկինը գավաթ գավաթի հետևից էր պարպում և միայն ժամանակ առ ժամանակ արհամարհական խղճահարությամբ ասում էր.

— Մի բան վատ է, Ռոմաշով, խմել չեք իմանում։ Մի թաս խմեցիք ու լիկեցիք։

Հետո հանկարծ բռունցքը խփում էր սեղանին և ահեղ գոչում.

— Իսկ թե հրամայեն մեռնել՝ կմեռնե՞նք։

— Կմեռնենք,— խղճալի պատասխանում էր Ռոմաշովը։

— Մեռնելն ինչ է որ... Դատարկ բան է մեռնելը... Իմ սիրտն է ցավում...

Ռոմաշովը չէր հիշում, թե ինչպես է տուն հասել և ով է իրեն անկողին դրել։ Նրան թվում էր. թե փնքը լողում է կապույտ, թանձր մշուշի մեջ, որի վրա սփռված են միլիարդ միլիարդավոր միկրոսկոպիկ կայծիկներ։ Այդ մշուշը դանդաղ ճոճվում էր վեր ու վար, իր շարժումների մեջ բարձրացնելով ու իջեցնելով Ռոմաշովի մարմինը, և այդ չափաբերական օրորումից պոդպորուչիկի սիրտը թուլանում, նվաղում էր սրտխառնուքի նողկալի, գրգռիչ զգացումից։ Գլուխը թվում էր ուռած, ահագին չափերի հասած, և նրա մեջ ինչ-որ մեկի աննահանջ, անգութ ձայնը բղավում էր, Ռոմաշովին սարսափելի ցավ պատճառելով.

— Արա՜-ա՜ մմե՛կ... Արա՜-ա՜ երկո՛։

12

Ապրիլի 23-ի օրը Ռոմաշովի համար չափազանց հոգսաշատ և խիստ տարօրինակ օր էր։ Ժամը տասին մոտ, երբ պոդպորուչիկը դեռ պառկած էր անկողնում, եկավ Ստեպանը՝ Նիկոլաևնեերի սպասյակը, Ալեքսանդրա Պետրովնայից մի երկտող բերելով։

«Սիրելի Ռոմուչկա,— գրում էր նա,— ես բոլորովին չէի զարմանա, եթե իմանայի, որ մոռացել եք, թե այսօր մեր ընդհանուր անվանակոչության օրն է։ Դե ուրեմն ձեզ հիշեցնում եմ այդ։ Անկախ որևէ բանից, ես այնուամենայնիվ ուզում եմ այսօր ձեզ տեսնել։ Միայն ցերեկը չգաք շնորհավորելու, այլ ուղղակի ժամը հինգի մոտ։ Զբոսախնջույքի ենք գնալու Դուբեչնայա։

Ձեր Ա. Ն.»:

Նամակը դողում էր Ռոմաշովի ձեռքում, երբ նա կարդում էր։ Արդեն մի ամբողջ շաբաթ նա չէր տեսել Շուրոչկայի սիրելի, մերթ փաղաքուշ, մերթ ծաղրական, մերթ բարեկամական-ուշադիր դեմքը, իր վրա չէր զգացել նրա քնքուշ ու սիրական հմայքը։ «Այսո՜ր»,— զվարթագին ասաց նրա մեջ ցնծալի ջղուկը։

— Այսո՜ր,— բարձրաձայն կանչեց Ռոմաշովը և ոտաբորիկ ցած թռավ մահճակալից հատակին։— Գայնան, լվացվե՛լ։

Ներս մտավ Գայնանը։

— Ձերդ ազնվություն, այնտեղ սպասյակը կանգնել։ Հարցնում է՝ պատասխան պիտի գրե՞ս։

— Այ քեզ բա՜ն։— Ռոմաշովը աչքերը շռեց և թեթևակի պպզեց։— Սսս... պետք էր նրան մի քիչ փող տալ, բայց ես ոչինչ չունեմ։— Նա տարակուսանքով նայեց սպասյակին։

Գայնանը լայն և ուրախ ժպտաց։

— Ինձ էլ իսկի բան չկա... Քեզ չկա, ինձ չկա։ Է, ինչ անենք։ Առանց էդ էլ նա կերթա։

Ռոմաշովի հիշողության մեջ արագ փայլատակեց գարնանային մութ գիշերը, ցեխը, թաց, լպրծուն ցանկապատը և Ստեպանի անտարբեր ձայնը խավարի միջից. «Գալիս է, գալիս է ամեն օր...» Նա հիշեց նաև սեփական անտանելի ամոթը։ Օ, ապագա ի՜նչ երանություններ չէր տա հիմա պոդպորուչիկը մի տասկոպեկանոցի, մի հատիկ տասկոպեկանոցի դիմաց։

Ռոմաշովը ջղաձգաբար ու ամուր տրորեց երեսը ձեռքերով և հուզմունքից նույնիսկ տնքաց։

— Գայնան,— ասաց նա ջղուկով, վախվորած դեպի դուռը շլելով հայացքը։— Գայնան, դու գնա նրան ասա, որ պոդպորուչիկը Ե-եկոյան նրան անպայման փող կընծայի։ Լսո՞ւմ ես, անպայման։

Ռոմաշովը հիմա փողի սուր կարիք էր զգում։ Նրա վարկը փակվել էր ամեն տեղ՝ բուֆետում, սպայական տնտեսական կրպակում, սպայական դրամագլխում... Կարելի էր միայն հաշ և ընթրիք վերցնել ակումբում, այն էլ առանց օղու և աղանդերի։ Նա նույնիսկ ոչ թեյ ուներ, ոչ շաքար։ Դիպվածի ինչ-որ ծաղրական խաղով մնացել էր միայն մի հսկայական թիթեղե առափով սուրճ։ Ռոմաշովը արիաբար առավոտները խմում էր դա առանց շաքարի, իսկ նրանից հետո ճակատագրին նույնքան հնազանդ, խմում-վերջացնում էր Գայնանը։

Եվ հիմա, զզվանքի ծամածռությամբ կում-կում խմելով սև,

թանձր, դառն խառնուչքը, պոդպորուչիկը խոր մտածմունքի մեջ ընկավ, խորհելով իր վիճակի մասին։ «Հըմ... նախ՝ ինչպե՞ս ներկայանամ առանց նվերի։ Քաղցրավենի՞ք, թե ձեռնոցներ։ Ասենք, հայտնի չէ, թե նա որ համարն է հագնում։ Քաղցրավենի՞ք։ Ամենից լավ կլիներ օծանելիք. այստեղի քաղցրավենիքը զզվելի է... Հովհա՞ր։ Հըմ... Այո, իհարկե, ավելի լավ է օծանելիք։ Նա սիրում է էսս-բուկե։ Հետո պիկնիկի ծախսերի համար՝ կառքը այնտեղ ու ետ, ասենք՝ հինգ, Ստեպանին ընծա՝ մի ռուբլի։ Այո, պարոն պոդպորուչիկ Ռոմաշով, առանց տասը ռուբլու յոլա չեք գնա»։

Եվ նա մտքում սկսեց տնտղել բոլոր միջոցները։ Ռոճի՞կը։ Բայց ոչ ավելի վաղ, քան երեկ նա ստացական ստորագրեց տեղեկագրում՝ «Հաշվարկը ճիշտ է։ Պոդպորուչիկ Ռոմաշով»։ Նրա ամբողջ ռոճիկը խնամքով անց էր կացված համապատասխան սյունակներում, որոնց թվում նշված էր նաև վճարումները մանավոր մուրհակների դիմաց, պոդպորուչիկին չվիճակվեց ստանալ ոչ մի կոպեկ։ Գուցե խնդրի նախօրո՞ք։ Այդ միջոցը նրա կողմից փորձված էր առնվազն մի երեսուն անգամ, բայց միշտ էլ անհաջող։ Գանձապահը շտաբս-կապիտան Դորոշենկոն էր, մի մռայլ ու խստասիրտ մարդ, մանավանդ «ֆենդրիկների» նկատմամբ։ Թուրքական պատերազմում նա վիրավորվել էր, բայց ամենաանհարմար և անպատիվ տեղից՝ կրնկից։ Մըշտական ծաղրանքներն ու սրախոսությունները նրա վերքի մասին (որը ասում էին, նա ստացել էր ոչ թե փախչելիս, այլ այն պահին, երբ շրջվելով դեպի իր դասակը, հարձակվելու հրաման էր տալիս) հասցրին այն բանին, որ կռիվ մեկնելով որպես կենսուրախ պրապորշչիկ, նա այնտեղից վերադարձավ որպես մաղձոտ ու դյուրագրգիռ հիպոխոնդրիկ։ Ոչ, Դորոշենկոն փող չի տա, առավել ևս մի պոդպորուչիկի, որը երրորդ ամիսն է, ինչ դրում է՝ «Հաշվարկը ճիշտ է»։

«Բայց չվհատենք,— ինքն իրեն ասում էր Ռոմաշովը։— Մտքներումս վերհիշենք բոլոր սպաներին։ Սկսենք վաշտայիններից։ Հերթով։ Առաջին վաշտ՝ Օսադչի»։

Ռոմաշովի առաջ կանգնեց Օսադչու զարմանալի, գեղեցիկ, գազանային ծանր հայացքով դեմքը։ «Ոչ, ով կուզի, միայն ոչ նա։ Միայն ոչ նա։ Երկրորդ վաշտ՝ Տալման։ Սիրելի Տալման. նա միշտ ու ամենուր ռուբլիներ է չանթում, նույնիսկ պոդպրապորշչիկներից։ Խուտի՞նսկին»։

Ռոմաշովը մտածմունքի մեջ ընկավ։ Նրա գլխով անցավ մի խելառ, տղայական միտք՝ գնա ու գնդի հրամանատարից պարտք խնդրի։ Պատկերացնում եմ։ Հավանաբար, նախ սարսափից կկարկամի, հետո կատաղությունից կդողա, իսկ հետո կկրակի ինչպես հրասանդը՝ «Ի-ի՞-ի՞նչ։ Էր՞-ռե-ռ՛լ։ Զորս օրով հանպատվախտ»։

Պոդպորուչիկը քրքջաց։ Ոչ, միևնույն է, մի բան կմտածվի։ Այսպես ուրախ սկսված օրը չի կարող անհաջող լինել։ Դա անորսալի է, դա անհասկանալի է, բայց դա անսխալորեն զգացվում է ինչ-որ խորքում, գիտակցության հետև։

«Կապիտան Դյուվեռնուա՞։ Նրան զինվորները ծիծաղելի անունով են կանչում՝ Դուվեռնի-նոդա՞։ Կամ թե, ահա, ասում են, եղել է ինչ-որ գեներալ Բուգբերգ ֆոն Շաուֆոս, սրան էլ զինվորները մկրտել են Բուդկա կա ցեխաուզոմ[2]։ Ոչ, Դյուվեռնուան ժլատ է և ինձ չի սիրում, ես այդ գիտեմ»։

Այսպես նա հիշեց բոլոր վաշտի հրամանատարներին առաջին վաշտից մինչև տասնվեցերորդը և նույնիսկ ապաշարքային, հետո հոգոցով անցավ կրտսեր սպաներին։ Նա դեռ չէր կորցրել հաջողության համոզմունքը, բայց արդեն սկսում էր տարտամ անհանգստություն զգալ, երբ հանկարծ մի անուն փայլատակեց նրա մտքում. «Փոխգնդապետ Ռաֆա՞լսկին»։

— Ռաֆալսկին։ Իսկ ես գլուխ էի կոտրո՞ւմ... Գայնա՞ն, սերթուկս, ձեռնոցներս, վերարկուս, շուտ։

Փոխգնդապետ Ռաֆալսկին, չորրորդ գումարտակի հրամանատարը, մի ծեր տարօրինակ ամուրի էր, որին գնդում, կատակով և, իհարկե, իրենից թաքուն, գնդապետ Բրեմ էին կոչում։ Նա ընկերներից ոչ մեկի մոտ չէր ինում, գլուխ պրծացնելով միայն Զատկի ու Նոր տարվա պաշտոնական այցելություններով, իսկ ծառայությանը վերաբերվում էր այնքան անփույթ, որ շարունակ հրամանով նկատողություններ էր ստանում և դաժան հանդիմանություններ՝ պարապմունքների ժամանակ։ Իր ամբողջ ժամանակը, ամբողջ հոգացողությունը և սրտի սիրելու և կապվելու ամբողջ չօգտագործած ընդունակությունը նա նվիրում էր իր սիրելի գազաններին՝ թռչուններին, ձկներին ու

---

[1] Բառախաղ է — доверни нога նշանակում է՝ ոտքդ լրիվ շրջիր։

[2] Զինարանի հետևի տնակ (ծան. թարգմ.)։

չորքոտանիներին, որոնցից մի ամբողջ մեծ ու յուրօրինակ գազանանոց ուներ։ Գնդի տիկնայք, սրտի խորքում խոցված նրա անուշադրությունից, ասում էին, որ իրենք չեն հասկանում, թե ինչպես կարելի է լինել Ռաֆալսկու տանը. «Ախ, դա այնպես սարսափելի՜ է, այդ գազանե՜ր։ Եվ հետո, ներեցեք արտահայտության համար, հնո՜տ։ Փո՛ւ»։

Իր ամբողջ խնայողությունը գնդապետը ծախսում էր գազանանոցի վրա։ Այդ խենթուկը իր պահանջները սահմանափակել էր անհրաժեշտության ծայր աստիճանով. հագնում էր աստված գիտի որ տարվա շինելն ու մունդիրը, քնում էր մի կերպ, ուտում էր տասնհինգերորդ վաշտի կաթսայից, ըստ որում այնուամենայնիվ այդ կաթսան էր մուծում զինվորական կերակրաբաժնի համար ավելի քան զգալի գումար։ Բայց ընկերներին, մանավանդ կրտսեր սպաներին, երբ փող էր ունենում, հազվադեպ էր մերժում փոքրիկ պարտքերը։ Արդարությունը պահանջում է ավելացնել, որ պարտքերը նրան վերադարձնելը համարվում էր մի տեսակ չընդունված, նույնիսկ ծիծաղելի բան, զուր չէր, որ նա խենթուկի, գնդապետ Բրեմի համբավն ուներ։

Լբովի նման անառակ պրապորշչիկները, երկու ռուբլի պարտք առնելու համար նրա մոտ գնալիս, այդպես էլ ասում էին. «Գնում եմ գազանանոցը նայելու»։ Դա ծեր ամուրու սրտին և գրպանին մոտենալու միջոց էր։ «Իվան Անտոնիչ, նոր գազանիկներ չունե՞ք։ Ցույց տվեք, խնդրեմ։ Դուք այդ բոլորը այնքա՜ն հետաքրքիր եք պատմում...»

Ռոմաշովն էլ նրա մոտ հաճախ էր լինում, բայց առայժմ առանց շահադիտական նպատակների. նա իրոք որ կենդանիներին սիրում էր ինչ-որ առանձնահատուկ, քնքուշ և զգայական սիրով։ Մոսկվայում կադետ, իսկ հետո յունկեր եղած ժամանակ, նա շատ ավելի մեծ հաճույքով գնում էր կրկես, քան թատրոն, իսկ է՛լ ավելի մեծ հաճույքով՝ կենդանաբանական այգի և բոլոր գազանանոցները։ Նրա մանկության երազանքը սեն-բեռնար ունենալն էր. իսկ հիմա թաքուն երազում էր գումարտակի համհարզի պաշտոնի մասին, որպեսզի ձի ձեռք բերեր։ Բայց երազանքներից երկուսին էլ վիճակված չէր իրականանալ. մանկության օրերին՝ այն չքավորության պատճառով, որում ապրում էր նրա ընտանիքը, իսկ համհարզ նրան հազիվ թե կարողանային նշանակել, քանի որ նա «վայելչատես կազմվածք» չուներ։

Նա տնից դուրս եկավ։ Գարնանային տաք օդը մեղմ փաղաքշանքով շոյում էր նրա այտերը։ Անձրևից հետո նոր շորացած գետինը ոտքերի տակ տեղի էր տալիս հաճելի առաձգականությամբ։ Ցանկապատերի հետևից խիտ ու ցածր դեպի փողոց էին կախվում թխկենու սպիտակ և եղրևանու կապույտ գլխարկները։ Հանկարծ ինչ-որ մի բան արտասովոր ուժով ուռճացավ Ռոմաշովի կրծքում, կարծես թե նա պատրաստվում էր թռչելու։ Շուրջը նայելով և տեսնելով, որ փողոցում ոչ ոք չկա, նա գրպանից հանեց Շուրոչկայի նամակը, նորից կարդաց և շրթունքներն ամուր հպեց նրա ստորագրությանը։

— Սիրելի՛ երկինք։ Սիրելի՜ ծառեր,— շշնջաց նա տամուկ աչքերով։

Գնդապետ Բրեմն ապրում էր կանաչ, բարձր որմնացանցով պատած բակի խորքում։ Դռնակին կար մի հակիրճ մակագրություն. «Առանց զանգահարելու չմտնել։ Շներ կան»։ Ռոմաշովը զանգահարեց։ Դռնակից դուրս եկավ գանգրահեր, ծույլ, քնահարբ սպասյակը։

— Գնդապետը տա՞նն է։

— Համեցեք, ձերդ ազնվություն։

— Դու նախ գնա զեկուցիր։

— Ոչինչ, համեցեք այսպես։— Սպասյակը քնեած քորեց ղիստը։— Նրանք այդ չեն սիրում, որպեսզի, օրինակ, զեկուցեմ։

Ռոմաշովը աղյուսապատ արահետով գնաց դեպի տունը։ Անկյունի հետևից դուրս պրծան երկու հսկա, ջահել ականջատ մոխրագույն դոգեր։ Նրանցից մեկը բարձր, բայց բարեհոգի հաչեց։ Ռոմաշովը մատները շրխկացրեց նրա վրա, և դոգն սկսեց աշխուժորեն մերթ աջ, մերթ ձախ նետվել և ավելի բարձր հաչել։ Իսկ նրա ընկերը կրնկակոխ հետևում էր պոդպորուչիկին և, դունչը պարզած, հետաքրքրությամբ հոտոտում էր նրա շինելի փեշերը։ Բակի խորքում, կանաչ դալար խոտի վրա, կանգնած էր մի փոքրիկ իշուկ։ Նա խաղաղ նիրհում էր գարնանային արևի տակ, աչքերը կկոցելով և գոհունակությունից ականջները շարժելով։ Նույն տեղում դես ու դեն էին ընկնում հավերն ու չալ աքլորները, բադերն ու ելունդավոր կտուցներով չինական սագերը. ականջ ծակող ձայնով կչկչում էին խայտահավերը, իսկ հոյակապ հնդու աքլորը պոչի փետուրները բաց արած և թևերով գետինը խազմզելով, գոռոզ ու վավաշոտ պտույտ էր

գալիս բարակավիզ հնդկահավերի շուրջը։ Տաշտակի մոտ, գետնին կողքի վրա մի հսկայական վարդագույն յորկշիրյան խոզ էր պառկած։

Գնդապետ Բրեմը, շվեդական կաշվե բաճկոն հագած, կանգնել էր լուսամուտի մոտ, մեջքով դեպի դուռը, և շնկատեց, թե Ռոմաշովն ինչպես ներս մտավ։ Նա զբաղված էր ապակե ակվարիումի մոտ, ձեռքը մինչև արմունկը նրա մեջ խրած։ Ռոմաշովն ստիպվեց մի երկու անգամ բարձրաձայն հազալ, մինչև որ Բրեմը ետ շրջեց իր նիհար, մորուքավոր, կրիայի ոսկրե շրջանակ ունեցող ակնոցավոր երկարուկ դեմքը։

— Ա-ա՜, պոդպորուչիկ Ռոմաշով։ Շնորհ արեք, շնորհ արեք...— սիրալիր ասաց Ռաֆալսկին։— Ներեցեք, ձեռքս չեմ տալիս, թաց է։ Իսկ ես, տեսնո՞ւմ եք, որոշ իմաստով, նոր սիֆոն եմ հարմարեցնում։ Նախկինը պարզացրի և Գրաշալի ստացվեց։ Թեյ ուզո՞ւմ եք։

— Խոնարհաբար շնորհակալ եմ։ Արդեն խմել եմ։ Ես, պարոն գնդապետ, եկել եմ...

— Լսե՞լ եք, լուրեր են պտտվում, որ գունդը փոխադրում են ուրիշ քաղաք,— ասաց Ռաֆալսկին, ասես շարունակելով հենց նոր ընդհատված խոսակցությունը։— Հասկանո՞ւմ եք, ես, որոշ իմաստով, ուղղակի հուսահատության մեջ եմ։ Դե պատկերացրեք, ինչպե՞ս պիտի փոխադրեմ իմ ձկները։ Ախր կեսը կսատկի։ Իսկ ակվարիո՞ւմը։ Ապակիները, ինքներդ նայեցեք, մեկուկես սաժեն երկարություն ունեն։ Ախ, տեր իմ,— հանկարծ թռավ նա ուրիշ նյութի,— ի՞նչ ակվարիում եմ տեսել Սևաստոպոլում։ Ջրամբա՜ր... որոշ իմաստով... աստված վկա, ահա այս սենյակի չափ, քարե, ծովի հոսող ջրով։ Էլեկտրականությո՞ւն։ Կանգնում ու վերևից նայում ես, թե ինչպես է ապրում այդ ձկնեղենը։ Թառափները, շնաձկները, կատվաձկները, ծովաքլորները, ախ, սիրելինե՜ր։ Կամ, որոշ իմաստով, ծովարջը. պատկերացրեք մի էստեսակ բլիթ, մեկ ու կես արշին տրամագծով, և շարժում է եզրերը, հասկանո՞ւմ եք, այսպես ալիքաձև, իսկ հետևից պոչը, նետի պես... Ես մոտ երկու ժամ կանգնել էի... Ի՞նչ եք ծիծաղում։

— Ներեցեք... Ես նոր նկատեցի՝ ձեր ուսին մի սպիտակ մազ է նստել...

— Ախ դու, ավազակ, ո՞ւր է բարձրացել։— Ռաֆալսկին

գլուխը շրջեց և շրթունքներով համբույրի նման, բայց արտասովոր բարակ, մկան ծվծվոց հիշեցնող ձայն արձակեց։ Փոքրիկ սպիտակ, կարմրաչք գազանիկը իջավ մինչև նրա դեմքը և, ամբողջ մարմնով ցնցվելով, սկսեց դնչիկն անհանգիստ խցկել մարդու մորուքը և բերանը։

— Ինչպես են նրանք ձեզ ճանաչում,— ասաց Ռոմաշովը։

— Այո... ճանաչում են,— Ռաֆալսկին հոգոց հանեց ու գլուխն օրորեց։— Իսկ տեսեք, ցավն այն է, որ մենք նրանց չենք ճանաչում։ Մարդիկ ընտելացրել են շանը, վարժեցրել են, որոշ իմաստով, ձիուն, սովորեցրել են կատվին, իսկ թե ինչ էակներ են դրանք, մենք այդ չենք էլ ուզում իմանալ։ Որոշ գիտնականներ իրենց ամբողջ կյանքը, որոշ իմաստով, զրողը տանի նրանց, նվիրում են մի անմիտ, նոյի տարվա բառի բացատրությանը, և դրա համար նրան այնպիսի պատիվ են տալիս, որ ողջ ի ողջ սրբերի շարք են դասում։ Իսկ այստեղ... Վերցրեք հենց թեկուզ նույն շներին։ Մեզ հետ կողք-կողքի ապրում են կենդանի, խորհող, բանիմաց կենդանիներ, և թեկուզ մի պրիվատ-դոցենտ արժանի համարեր զբաղվել նրանց հոգեբանությամբ։

— Գուցե կան ինչ-որ աշխատություններ, բայց մենք ծանոթ չենք,— երկչոտ ենթադրեց Ռոմաշովը։

— Աշխատությունն՞ե՞ր։ Հը՛մ... Իհարկե, կան, և այն էլ ամենակապիտալ աշխատություններ։ Ահա, նայեցեք. նույնիսկ ես մի ամբողջ գրադարան ունեմ։— Փոխգնդապետը ձեռքով դույց տվեց պատի երկայնքով դրած պահարանների շարքը։— Խելացի են գրում և խորամուխ լինելով։ Գիտելիքներն ահագին են։ Ի՞նչ սարքեր, ի՞նչ սրամիտ եղանակներ... Բայց այն չէ, բոլորովին այն չէ, ինչի մասին ես ասում եմ։ Նրանցից ոչ ոք, որոշ իմաստով, գլխի չի ընկել նպատակ դնելու, դե, թեկուզ ուշադիր հետևելու շան կամ կատվի գեթ մի՛ օրվան։ Այ, դու գնա, մի հետևիր, տես, թե շունն ինչպես է ապրում, ինչ է մտածում, ինչպես է խորամանկում, ինչպես է տառապում, ինչպես է ուրախանում։ Լսեցեք. ես տեսել եմ, թե ինչ արդյունքների են հասնում ծաղրածուները կենդանիներ վարժեցնելիս։ Ապշեցուցի՞չ է... Պատկերացրեք հիպնոսը, մի տեսակ, իսկական, անխարդախ հիպնոսը։ Թե ինձ Կիևում, հյուրանոցում, ինչ ցույց տվեց մի ծաղրածու, դա զարմանալի է, ուղղակի անհավատալի՞։ Բայց ախր մտածեք,

ծաղրածուն, ծաղրածո՞ւն։ Իսկ ինչ կլիներ, եթե դրանով զբաղվեր լուրջ բնագետը, գիտելիքներով զինված, փորձեր դնելու իր հրաշալի կարողությամբ, իր գիտական միջոցներով հանդերձ։ Ս, ի՞նչ զարմանալի բաներ կիմանայինք շան մտավոր կարողությունների, նրա բնավորության, թվերի իմացության մասին և էլի ինչի մասին ասես։ Մի ամբողջ աշխարհ է, հսկայական, հետաքրքիր աշխարհ։ Ահա, ինչպես ուզում եք, իսկ ես, օրինակ, համոզված եմ, որ շներն իրենց լեզուն ունեն և մի տեսակ շափազանց ընդարձակ լեզուն։

— Հապա ինչո՞ւ նրանք մինչև հիմա դրանով չեն զբաղվել, Իվան Անտոնովիչ,— հարցրեց Ռոմաշովը,— չէ՞ որ դա այնքան պարզ է։

Ռաֆալսկին խայթող ծիծաղեց։

— Հենց նրա համար, հի՛-հի՛-հի՛, որ պարզ է։ Հենց դրա համար։ Պարանը հասարակ թոկ է։ Նրա համար, նախ, շունը ի՞նչ բան է։ Ողնաշարավոր, կաթնասուն, գիշատիչ, շնազգիների ցեղից է և այլն։ Այդ բոլորը ճիշտ է։ Ոչ, բայց դու շանը մոտեցիր, ինչպես մարդու, ինչպես երեխայի, ինչպես մտածող էակի։ Ճշմարիտ, նրանք իրենց գիտական հպարտությամբ հեռու չեն գեղջուկից, որը ենթադրում է, թե շունը, որոշ իմաստով, հոդու փոխարեն գոլորշի ունի։

Նա լռեց ու սկսեց, բարկացած ֆսֆսալով ու տնքալով, չարչարվել գուտապերչե փոքրիկ խողովակի վրա, որ հարմարացնում էր ակվարիումի հատակին։ Ռոմաշովը սիրտ արեց։

— Իվան Անտոնովիչ, ես մի մեծ, մեծ խնդիրք ունեմ ձեզ...

— Փո՞ղ։

— Իսկապես, ամաչում եմ ձեզ անհանգստացնել։ Բայց ինձ շատ պետք չի։ Մի տասը ռուբլի։ Շուտով վերադարձնել չեմ խոստանում, բայց...

Իվան Անտոնովիչը ձեռքերը ջրից հանեց ու սկսեց սրբիչով սրբել։

— Տասը կարող եմ։ Ավելի չեմ կարող, բայց տասը մեծագույն հաճույքով։ Ձեզ, երևի, հիմարությունների համա՞ր է պետք։ Դե, դե, դե, կատակ եմ անում։ Գնանք։

Նա Ռոմաշովին իր հետևից տարավ ամբողջ բնակարանով, որ բաղկացած էր հինգ-վեց սենյակից։ Դրանց մեջ չկային ոչ կահկարասի, ոչ վարագույրներ։ Օդը հաղեցած էր մանր գիշատիչների բնակատեղին հատուկ սուր հոտով։ Հատակներն այն աստիճան աղտոտված էին, որ նրանց վրա քայլելիս ոտքերը սայթաքում էին։

Բոլոր անկյուններում փոքրիկ արկղերից, սնամեջ կոճղերից, անտակ տակառներից բներ ու որջեր էին սարքած։ Երկու սենյակում կանգնած էին արհեստական փչակներով ու բներով ճյուղաբաշխ ծառեր. մեկը՝ թռչունների, մյուսը՝ կզաքիսների և սկյուռների համար։ Այն բանում, թե ինչպես էին հարմարեցված գաղանների այդ բները, զգացվում էր հոգածու մտածվածություն, սեր դեպի կենդանիները և մեծ դիտողականություն։

— Տեսնո՞ւմ եք այս գազանին։— Ռաֆալսկին մատով ցույց տվեց խիտ փշալարով ցանկապատած մի բույն։ Բաժակի հատակի մեծությամբ նրա կիսաշրջանաձև անցքից պսպղում էին երկու սև պայծառ կետ։— Դա ամենագիշատիչ, որոշ իմաստով ամենակատաղի կենդանին է ամբողջ աշխարհում։ Ժանտաքիսը։ Ոչ, դուք մի կարծեք, նրա առաջ բոլոր այդ հովազներն ու առյուծները հեզ հորթուկներ են։ Առյուծը որ իր մի փութ միսը կերավ, տոգեց, բարեհոգի նայում է, թե ինչպես մնացածը վերջացնում են չախկալները։ Իսկ այս սիրելի ստահակը, եթե հավանոց մտավ, անպայման ամեն մի հավի կկծի ահա այստեղ, հետևից, փոքր ուղեղը։ Դրանից շուտ չի հանգստանա սրիկան։ Ըստ որում բոլոր գազաններից ամենավայրին, ձեռնասուն դարձնելու համար ամենաանմատչելին է։ Ո՞ւ, դու, չարագո՛ղծ։

Նա ձեռքը ցանկապատից ներս տարավ։ Կլոր դռնակից անմիջապես դուրս պարզվեց կատաղի դնչիկը, լայն բաց արած երախով, որի մեջ փայլում էին սպիտակ սուր ատամները։ Ժանտաքիսը մերթ երևում, մերթ թաքնվում էր, դա ղուղակցելով բարկացած հազ հիշեցնող հնչյուններով։

— Տեսնո՞ւմ եք, ինչպիսին է։ Բայց ախր մի ամբողջ տարի է կերակրում եմ սրան...

Փոխգնդապետն ըստ երևույթին բոլորովին մոռացել էր Ռոմաշովի խնդիրքը։ Նա մի բնից դեպի մյուսն էր տանում նրան և ցույց էր տալիս իր սիրեցյալներին, նրանց մասին խոսելիս այնպես տարված և այնպիսի քնքշանքով, նրանց սովորությունների ու բնավորության այնպիսի իմացությամբ, ասես խոսում էր նրա լավ, սիրելի ծանոթների մասին։ Իրոք որ, սիրողի, այդ էլ այդպիսի ետ ընկած քաղաքում ապրողի համար, նրա հետաքրքրասիրությունն կարգին բան էր, սպիտակ մկներ, ճագարներ, ծովախոզուկներ, ոզնիներ, արջուկներ, մի քանի թունավոր օձ ապրում

ծաղրածուն, ծաղրածո՞ւն։ Իսկ ինչ կլիներ, եթե դրանով զբաղվեր լուրջ բնագետը, գիտելիքներով զինված, փորձեր դնելու իր հրաշալի կարողությամբ, իր գիտական միջոցներով հանդերձ։ Օ, ի՞նչ զարմանալի բաներ կիմանայինք շան մտավոր կարողությունների, նրա բնավորության, թվերի իմացության մասին և էլի ինչի մասին ասես։ Մի ամբողջ աշխարհ է, հսկայական, հետաքրքիր աշխարհ։ Ահա, ինչպես ուզում եք, իսկ ես, օրինակ, համոզված եմ, որ շներն իրենց լեզուն ունեն և մի տեսակ շափազանց ընդարձակ լեզուն։

— Հապա ինչո՞ւ նրանք մինչև հիմա դրանով չեն զբաղվել, Իվան Անտոնովիչ,— հարցրեց Ռոմաշովը,— չէ՞ որ դա այնքան պարզ է։

Ռաֆալսկին խայթող ծիծաղեց։

— Հենց նրա համար, հի՛-հի՛-հի՛, որ պարզ է։ Հենց դրա համար։ Պարանը հասարակ թոկ է։ Նրա համար, նախ, շունը ի՞նչ բան է։ Ողնաշարավոր, կաթնասուն, գիշատիչ, շնազգիների ցեղից է և այլն։ Այդ բոլորը ճիշտ է։ Ոչ, բայց դու շանը մոտեցիր, ինչպես մարդու, ինչպես երեխայի, ինչպես մտածող էակի։ Ճշմարիտ, նրանք իրենց գիտական հպարտությամբ հեռու չեն գեղջուկից, որը ենթադրում է, թե շունը, որոշ իմաստով, հոգու փոխարեն գոլորշի ունի։

Նա լռեց ու սկսեց, բարկացած ֆսֆսալով ու տնքալով, շարշարվել գուտապերչե փոքրիկ խողովակի վրա, որ հարմարեցնում էր ակվարիումի հատակին։ Ռոմաշովը սիրտ արեց։

— Իվան Անտոնովիչ, ես մի մեծ, մեծ խնդիրք ունեմ ձեզ...

— Փո՞ղ։

— Իսկապես, ամաչում եմ ձեզ անհանգստացնել։ Բայց ինձ շատ պետք չի։ Մի տասը ռուբլի։ Շուտով վերադարձնել չեմ խոստանում, բայց...

Իվան Անտոնովիչը ձեռքերը ջրից հանեց ու սկսեց սրբիչով սրբել։

— Տասը կարող եմ։ Ավելի չեմ կարող, բայց տասը մեծադույն հաճույքով։ Ձեզ, երևի, հիմարությունների համա՞ր է պետք։ Դե, դե, դե, կատակ եմ անում։ Գնանք։

Նա Ռոմաշովին իր հետևից տարավ ամբողջ բնակարանով, որ բաղկացած էր հինգ-վեց սենյակից։ Դրանց մեջ չկային ոչ կահկարասի, ոչ վարագույրներ։ Օդը հաղեցած էր մանր գիշատիչների բնակատեղին հատուկ սուր հոտով։ Հատակներն այն աստիճան աղտոտված էին, որ նրանց վրա քայլելիս ոտքերը սայթաքում էին։

Բոլոր անկյուններում փոքրիկ արկղերից, սնամեջ կոճղերից, անտակ տակառներից բներ ու որջեր էին սարքած։ Երկու սենյակում կանգնած էին արհեստական փշակներով ու բներով ճյուղաբաշխ ծառեր. մեկը՝ թռչունների, մյուսը՝ կզաքիսների և սկյուռների համար։ Այն բանում, թե ինչպես էին հարմարեցված գազանների այդ բները, զգացվում էր հոգածու մտածվածություն, սեր դեպի կենդանիները և մեծ դիտողականություն։

— Տեսնո՞ւմ եք այս գազանին։— Ռաֆալսկին մատով ցույց տվեց խիտ փշալարով ցանկապատած մի բույն։ Բաժակի հատակի մեծությամբ նրա կիսաշրջանաձև անցքից պսպղում էին երկու սև պայծառ կետ։— Դա ամենագիշատիչ, որոշ իմաստով ամենակատաղի կենդանին է ամբողջ աշխարհում։ Ժանտաքիսը։ Ոչ, դուք մի կարծեք, նրա առաջ բոլոր այդ հովազներն ու առյուծները հեզ հորթուկներ են։ Առյուծը որ իր մի փութ միսը կերավ, տոզեց, բարեհոգի նայում է, թե ինչպես մնացածը վերջացնում են չախկալները։ Իսկ այս սիրելի ստահակը, եթե հավանոց մտավ, անպայման ամեն մի հավի կկծի ահա այստեղ, հետևից, փոքր ուղեղը։ Դրանից շուտ չի հանգստանա սրիկան։ Ըստ որում բոլոր գազաններից ամենավայրին, ձեռնասուն դարձնելու համար ամենաանմատչելին է։ Ո՞ւ, դու, շարագո՛ղծ։

Նա ձեռքը ցանկապատից ներս տարավ։ Կլոր դռնակից անմիջապես դուրս պարզվեց կատաղի դնչիկը, լայն բաց արած երախով, որի մեջ փայլում էին սպիտակ սուր ատամները։ Ժանտաքիսը մերթ երևում, մերթ թաքնվում էր, դա ղուպակցելով բարկացած հազ հիշեցնող հնչյուններով։

— Տեսնո՞ւմ եք, ինչպիսին է։ Բայց ախր մի ամբողջ տարի է կերակրում եմ սրան...

Փոխգնդապետն ըստ երևույթին բոլորովին մոռացել էր Ռոմաշովի խնդիրքը։ Նա մի բնից դեպի մյուսն էր տանում նրան և ցույց էր տալիս իր սիրեցյալներին, նրանց մասին խոսելիս այնպես տարված և այնպիսի քնքշանքով, նրանց սովորություններ ու բնավորության այնպիսի իմացությամբ, ասես խոսում էր նրա լավ, սիրելի ծանոթների մասին։ Իրոք որ, սիրողի, այո՝ էլ այդպիսի ետ ընկած քաղաքում ապրողի համար, նրա հավաքածուն կարգին բան էր, սպիտակ մկներ, ճագարներ, ծովախոզուկներ, ոզնիներ, արջուկներ, մի քանի թունավոր օձ [illegible]

արկղերում, մոդեսների մի քանի տեսակ, երկու մակակա կապիկ, ավստրալիական մի սև նապաստակ և անգորական կատվի մի հազվագյուտ, սքանչելի նմուշ։

— Հը՛, լա՞վն է,— հարցրեց Ռաֆալսկին, ցույց տալով կատուն։— Ճիշտ չէ՞, որ, որոշ իմաստով, սքանչելի է։ Բայց չեմ հարգում։ Հիմար է։ Ամենահիմարն է բոլոր կատուներից։ Ահա նորից,— հանկարծ աշխուժացավ նա։— Նորից ձեզ ապացույց, թե մենք որքան անփույթ ենք դեպի մեր ընտանի կենդանիների հոգեբանությունը։ Մենք ի՞նչ գիտենք կատվի մասին։ Իսկ ձիերը։ Իսկ կովերը։ Իսկ խոզերը։ Գիտե՞ք, թե էլի ով է զարմանալի խելոք։ Դա խոզն է։ Այո, այո, մի ծիծաղեք,— Ռոմաշովն իսկի չէր էլ մտածում ծիծաղել,— խոզերը զարմանալի խելոք են։ Անցյալ տարի իմ վարազը ինչ օրին հնարեց։ Ինձ համար շաքարի գործարանից տկուցք էին բերում, որոշ իմաստով, բանջարանոցի և խոզերի համար։ Ուրեմն, էս խոզս, տեսեք որ, համբերություն չուներ սպասելու։ Սայլապանը գնում էր իմ սպասյակին կանչելու, իսկ խոզը ատամներով բռնում ու դուրս էր քաշում տակառի խցանը։ Տկուցքը թափվում էր, իսկ խոզս երանության մեջ էր։ Դա դեռ ինչ է որ. մի անգամ, երբ նրան բռնեցին այդ գողության մեջ, նա ոչ միայն խցանը հանեց, այլ տաբավ բանջարանոց և մարգի մեջ թաղեց։ Ահա ձեզ և խոզ։ Խոստովանում եմ,— Ռաֆալսկին մի աչքը կկոցեց և դեմքին խորամանկ արտահայտություն տվեց,— խոստովանում եմ, ես իմ խոզերի մասին մի փոքրիկ հոդված եմ գրում... Միայն թե սա՛ գաղտնիք է... ո՛չ ոքի։ Մի տեսակ անհարմար է. ռուսական փառապանծ բանակի փոխգնդապետ և հանկարծ՝ խոզերի մասին։ Հիմա ես ահա յորկշիրներ ունեմ։ Տեսա՞ք։ Ուզո՞ւմ եք, գնանք նայենք։ Այնտեղ բակում մի ջահել գորշուկ էլ կա, մի հրաշալի գորշուկ... Գնա՞նք։

— Ներեցեք, Իվան Անտոնովիչ,— կմկմաց Ռոմաշովը։— Ես մեծ ուրախությամբ։ Միայն թե, աստված վկա, ժամանակ չունեմ։

Ռաֆալսկին ձեռքի ափը խփեց ճակատին։

— Ա՛խ, տեր իմ։ Ներեցեք ինձ, ի սեր աստծու։ Այ թե շատախոսեցի, ծերուկս... Դե, դե, դե, գնանք շուտով։

Նրանք մտան մի փոքրիկ մերկ սենյակ, որտեղ տառացիորեն ոչինչ չկար, բացի մի ցածր շարժական մահճակալից, որի քթանը կախվել էր նավակի հատակի պես, և գիշերային փոքրիկ սեղանից ու մի աթոռից։ Ռաֆալսկին սեղանի արկղը դուրս քաշեց և փող հանեց։

— Շատ ուրախ եմ ձեզ ծառայելու, պոդպորուչիկ, շատ ուրախ եմ։ Դե լավ... էլ շնորհակալություն չունս որն է... Դատարկ բան է... Ես ուրախ եմ... Անցնենք, երբ ժամանակ ունենաք։ Կխոսենք։

Փողոց դուրս գալով, Ռոմաշովն անմիջապես դեմ դիմավ Վետկինին։ Պավել Պավլիչի բեղերը քաջաբար տնկված էին, իսկ աչքերը կողքերից տափակացրած եզրերով գլխարկը կտրիճավարի թեք նստել էր գլխին։

— Ա՜, արքայազն Համլե՜տ,— ուրախ բացականչեց Վետկինը։— Որտեղից և ո՞ւր։ Թո՛ւ, գրողը տանի, դուք անվանակոչիկի պես շողում եք։

— Ես հենց անվանակոչիկ եմ որ կամ,— ժպտաց Ռոմաշովը։

— Հա՞։ Բայց իսկապես էլ, Գեորգի և Ալեքսանդրա։ Աստվածային է։ Թույլ տվեք ձեզ ջերմորեն գրկել։

Նրանք հենց այդտեղ, փողոցում էլ համբուրվեցին։

— Գուցե այդ առթիվ ակո՞ւմբ անցնենք։ Կոնծենք միայն մեկական, ինչպես ասում է մեր բարձրաշխարհիկ բարեկամ Արշակովսկին,— առաջարկեց Վետկինը։

— Չեմ կարող, Պավել Պավլիչ։ Շտապում եմ։ Ի դեպ, կարծես թե այսօր դուք արդեն մի քիչ զվարճացել եք։

— Օ-օ-օ՜։— Վետկինը հպարտ ու նշանակալից վեր ցցեց կզակը։— Ես այսօր այնպիսի մի կոմբինացիա եմ սարքել, որ ֆինանսների ամեն մի մինիստրի փորը կցավեր նախանձից։

— Այսի՞նքն։

Պարզվեց, որ Վետկինի կոմբինացիան չափազանց հասարակ էր, բայց զուրկ չէր սրամտությունից, ըստ որում դրա մեջ գլխավոր մասնակցություն էր ունեցել գնդի դերձակ Խաիմը։ Նա Վետկինից ստորագրություն էր վերցրել համազգեստը ստանալու մասին, բայց իրականում հնարամիտ Պավել Պավլիչը դերձակից ստացել էր ոչ թե համազգեստ, այլ երեսուն ռուբլի կանխիկ դրամ։

— Եվ վերջ ի վերջո մենք երկուսս էլ գոհ մնացինք,— ասում էր Վետկինը ցնծագին,— թե՛ շհուդն է գոհ, որովհետև իր երեսուն ռուբլու փոխարեն զգեստավորման դրամարկղից կստանա քառասունհինգ ռուբլի, թե՛ ես եմ գոհ, որովհետև այսօր

ակումբում կդաղեմ այդ բոլոր թղթախաղացներին։ Հը, ճարպիկ չի՞ սարքված։

— Ճարպիկ է,— համաձայնեց Ռոմաշովը։— Կընդունեմ ի գիտություն հաջորդ անգամ։ Սակայն, մնաք բարով, Պավել Պավլիչ։ Ցանկանում եմ հաջող թղթախաղ։

Նրանք բաժանվեցին։ Բայց մի րոպե անց Վետկինը ձայն տվեց ընկերոջը։ Ռոմաշովը շուռ եկավ։

— Գազանանոցը նայեցի՞ք,— խորամանկորեն հարցրեց Վետկինը և ուսի վրայով բթամատով ցույց տվեց Ռաֆալսկու տունը։

Ռոմաշովը գլխով արավ և համոզված ասաց.

— Մեր Բրեմը հրաշալի մարդ է։ Այնքան լա՜վն է։

— Ինչ ասել կուզի,— համաձայնեց Վետկինը։— Միայն թե պսիխ է։

13

Ժամը հինգի մոտ Նիկոլաևների զբաղեցրած տանը մոտենալով, Ռոմաշովը զարմանքով զգաց, որ այսօրվա հաջողության վրա ունեցած վստահությունը իր մեջ փոխվեց ինչ-որ տարօրինակ, պատճառազուրկ անհանգստության։ Նա զգում էր, որ դա տեղի ունեցավ ոչ հանկարծ, ոչ հիմա, այլ շատ ավելի վաղ. ըստ երևույթին, տագնապը նրա մեջ աճում էր աստիճանաբար և աննկատելի, ուշադրությունից սպրդած մի ինչ-որ վայրկյանից սկսած։ Ի՞նչ կարող էր լինել դա։ Նման երևույթներ նրա հետ տեղի էին ունենում և առաջ. ամենավաղ մանկությունից, և նա գիտեր, որ հանգստանալու համար պետք է որոնել-գտնել այդ անորոշ տագնապի սկզբնապատճառը։ Մի անգամ այդ ձևով ամբողջ օրը տանջվելուց հետո միայն երեկոյան կողմ հիշեց, որ կեսօրին կայարանում երկաթգծից անցնելիս նրան խլացրել էր շոգեքարշի անսպասելի սուլոցը, վախեցել էր և, ինքն էլ այդ չնկատելով, վատ տրամադրության մեջ էր ընկել. բայց հիշեց և միանգամից թեթևություն զգաց և նույնիսկ ուրախացավ։

Եվ նա սկսեց հիշողության մեջ արագությամբ հակառակ կարգով վերականգնել այդ օրվա տպավորությունները։ Սվիդերսկու խանութը, օծանելիքը. վարձեց կառապան Լեյբային՝ նա հիանալի է քշում, փոստում հարցրեց, թե ժամը քանիսն է, հոգալի առավոտը. Ստեպանը... Մի՞թե իսկապես որ Ստեպանը։

Բայց ոչ, Ստեպանի համար գրպանում առանձին պատրաստի դրված է մի ռուբլին։ Հապա ի՞նչ, այս ի՞նչ է։

Ցանկապատի մոտ արդեն կանգնած էին զույգ ձիով երեք կառք։ Երկու սպասյակ բռնել էին թամբած ձիերի սանձերը. ծերացած գորշ մի ձիու, որ Օլիզարը վերջերս էր գնել հեծելազորի խոտանած ձիերից և Բեկ-Աղամալովի վայելչակազմ, կրակոտ, բարկացկոտ հրացայտ աչքով, ոսկեգույն հովատակին։

«Ախ, նամա՜կը,— հանկարծ բռնկվեց Ռոմաշովի հիշողության մեջ։ Այդ տարօրինակ ֆրազը՝ Անկախ որևէ բանից... Եվ ընդգծված է... Նշանակում է, մի բա՞ն կա։ Գուցե Նիկոլաևը բարկանում է ինձ վրա։ Խանդո՞ւմ է։ Գուցե որևէ բամբասա՞նք կա։ Վերջին օրերս Նիկոլաևն այնպես սառն էր ինձ հետ։ Ոչ, ոչ, կքշեմ-կգնամ»։

— Քշի՜ր,— բղավեց նա կառապանին։

Բայց նույն պահին ոչ թե լսեց կամ տեսավ, այլ ավելի շուտ զգաց իր սրտի քաղցր ու բուռն բաբախումից, թե ինչպես բացվեց տան դուռը։

— Ռո՜մոչկա։ Այդ ո՞ւր,— հնչեց նրա հետևից Ալեքսանդրա Պետրովնայի ուրախ, զրնգուն ձայնը։

Ռոմաշովը ձիգ տվեց Լեյբայի գոտիկից ու կառքից ցած թռավ։ Շուրոչկան կանգնել էր բաց դռան սև շրջանակի մեջ։ Նա հագել էր աջ կողմից գոտու տակ խրած կարմիր ծաղիկներով սպիտակ պարզ զգեստ։ Նույն ծաղիկները վառ ու ջերմ կարմրին էին տալիս նրա մազերի մեջ։ Տարօրինակ բան. Ռոմաշովն անսխալ գիտեր, որ դա նա է, և, համենայն դեպս, կարծես թե չէր ճանաչում նրան։ Նրա մեջ զգացվում էր ինչ-որ նոր, տոնական ու լուսաշող բան։

Մինչ Ռոմաշովը իր շնորհավորանքն էր մրմնջում, Շուրոչկան առանց նրա ձեռքը բաց թողնելու, քնքուշ և մտերմական ջանքով հարկադրեց, որ Ռոմաշովը իր հետ մտնի խավար նախասենյակը։ Եվ այդ ժամանակ նա խոսում էր արագ ու կիսաձայն։

— Շնորհակալություն, Ռոմոչկա, որ եկաք։ Ա՜խ, ես այնպես վախենում էի, որ կմերժեք։ Լսեցեք, այսօր եղեք սիրալիր և ուրախ։ Ոչ մի բանի վրա ուշադրություն մի դարձրեք։ Դուք ծիծաղելի եք, հենց որ ձեզ մի փոքր դիպչեն, թառամում եք։ Սպիպսի ամոթխած միմոզա եք դուք։

— Ալեքսանդրա Պետրովնա... այսօր ձեր նամակը ինձ ահռելի շփոթեցրեց։ Այնտեղ մի ֆրազ կա։

— Սիրելիս, սիրելիս, պետք չէ՞...— Նա բռնեց Ռոմաշովի զույգ ձեռքը և ամուր սեղմում էր, նայելով ուղիղ նրա աչքերին։ Այդ հայացքի մեջ Ռոմաշովի համար նորից ինչ-որ բոլորովին անծանոթ բան կար, ինչ-որ փաղաքշող քնքշություն, և սևեռուն, և անհանգիստ, իսկ ավելի ներսում, կապույտ բիբերի առեղծվածային խորքում, ինչ-որ տարօրինակ, անըմբռնելի, անմատչելի, հոգու ամենագաղտնի, մութ լեզվով խոսող մի բան կար...

— Խնդրում եմ, պետք չէ։ Այսօր դրա մասին մի՛ մտածեք... Մի՞թե ձեզ հերիք չէ, որ ես ամբողջ ժամանակ հսկում էի, թե ինչպես կանցնեք այստեղով։ Ախր ես գիտեմ, թե դուք ինչպեսի վախկոտն եք։ Չհամարձակվեք ինձ վրա այդպես նայել։

Շուրջկան շփոթված ծիծաղեց և գլուխն օրորեց։

— Դե բավական է... Ռոմոչկա, անճարակ, դուք նորից չեք համբուրում ձեռքս։ Ահա այդպես։ Հիմա մյուսը։ Այդպես։ Հելոքս։ Գնանք։ Ուրեմն չմոռանաք,— ասաց նա շտապ, ջերմ շշնջունով,— այսօր մեր օրն է։ Այեքսանդրա թագուհին և նրա ասպետ Գեորգին։ Լսո՞ւմ եք։ Գնանք։

— Ահա, թույլ տվեք ձեզ.. Մի համեստ նվեր...

— Այս ինչ է։ Օծանելի՞ք։ Ի՞նչ հիմարություններ եք անում։ Ոչ, ոչ, ես կատակ եմ անում։ Շնորհակալություն, սիրելի Ռոմոչկա։ Վոլոդյա,— ասաց նա բարձրաձայն ու անկաշկանդ, հյուրասենյակ մտնելով։— Ահա մեզ ևս մի ընկերակից խնջույքի համար։ Եվ ի լրումն՝ անվանակոչիկ էլ է։

Հյուրասենյակում աղմուկ ու իրարանցում էր, ինչպես միշտ լինում է ընդհանուր մեկնումից առաջ։ Միախոտի թանձր ծուխը երկնա-կապտագույն էր թվում այն տեղում, որտեղ լուսամուտներից խուժելով, դա կտրում էին գարնանային արևի խրձերը։ Հյուրասենյակի մեջտեղում կանգնած, աշխույժ զրուցում էին յոթ թե ութ սպա, և նրանց մեջ, ամեն վայրկյան հազալով իր խռպոտ ձայնով, ամենից բարձր բղավում էր բարձրահասակ Տալմանը։ Այստեղ էին կապիտան Օսադչին և անբաժան համհարզներ Օլիզարն ու Բեկ-Աղամալովը, և պորուչիկ Անդրուսևիչը, առնետի սուր դեմքով փոքրամարմին ժիր մի մարդ, և էլի ինչ-որ մեկը, որին Ռոմաշովը անմիջապես չկարողացավ ճանաչել։ Ժպտացող, շպարված, ներկված, զուգված մեծ տիկնիկի նմանվող Սոֆիա Պավլովնա Տալմանը նստել էր բազմոցին ադյուտանտ Միխինի երկու քույրերի հետ։ Երկու օրիորդն էլ սեփական ձեռքով կարված պարզ, բայց սիրուն սպիտակ շորեր էին հագել կանաչ ժապավեններով. երկուսն էլ վարդագույն էին, սևահեր, թխաշվի և պեպենոտ. երկուսն էլ շլացուցիչ-սպիտակ, բայց ոչ ուղիղ դասավորված ատամներ ունեին, որոնք սակայն նրանց թարմ բերաններին յուրահատուկ հմայք էին տալիս, երկուսն էլ լավիկն էին ու զվարթ, չափազանց նման մեկը մյուսին և իրենց շատ տգեղ եղբորը։ Գնդի տիկնանցից էլի հրավիրված էր պորուչիկ Անդրուսևիչի կինը, մի փոքրիկ սպիտակադեմ հաստլիկ կին, հիմար ու ծաղրասեր, ամեն տեսակ երկդիմությունների և անպարկեշտ անեկդոտների սիրահար, ինչպես նաև սիրունիկ, շատախոս և թլվատ Լիկաչովա օրիորդները։

Ինչպես և միշտ սպաների հասարակության մեջ, կանայք իրենց պահում էին տղամարդկանցից մեկուսի, առանձին խմբով։ Թեթևակի անփութությամբ բազկաթոռում փռված, նրանց մոտ նստել էր միայն շտաբս-կապիտան Դիցը։ Այդ սպան, որ իր ձգված կազմվածքով և իր մաշված ու ինքնավստահ դեմքով նման էր պրուսական սպաներին, ինչպես նրանց նկարում են գերմանական ծաղրանկարներում, հետևակ գունդ էր փոխադրված գվարդիայից, ինչ-որ մութ, խայտառակ պատմության պատճառով։ Նա տղամարդկանց հետ ունեցած հարաբերություններում աչքի էր ընկնում անհողդողդ անձնավստահությամբ, իսկ կանանց հետ լրբենի ձեռներեցությամբ, և զբաղվում էր մեծ, միշտ հաջողակ թղթախաղով, բայց ոչ թե սպայական ակումբում, այլ քաղաքացիական ակումբում, քաղաքի աստիճանավորների տներում և շրջակա լեհ կալվածատերերի մոտ։ Գնդում նրան չէին սիրում, բայց մի քիչ վախենում էին, և բոլորը ինչ-որ անորոշ կերպով նրանից ապագայում մի որևէ կեղտոտ և մեծադղորդ արարք էին սպասում։ Ասում էին, թե նա կապ ունի բրիգադի զառամյալ հրամանատարի ջահել կնոջ հետ, որն ապրում էր նույն քաղաքում։ Հավանաբար նույնպես հայտնի էր նրա մոտիկությունը m-me Տալմանի հետ. ի սեր սրա էլ սովորաբար Դիցին հյուր էին կանչում. այդ էին պահանջում գնդի քաղաքավարական և ուշադրության յուրահատուկ օրենքները։

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, — ասաց Նիկոլաևը, ընդառաջ գնալով Ռոմաշովին,— ավելի լավ։ Ինչո՞ւ առավոտյան կարկանդակին չեկաք։

Նա այդ ասում էր սրտաբաց, սիրալիր ժպիտով, բայց նրա ձայնի և աչքերի մեջ Ռոմաշովը պարզ որսաց նույն խորթու-

թյունը, կեղծ և չոր արտահայտությունը, որը նա գրեթե անգիտակցաբար զգում էր Նիկոլաևին հանդիպելիս, ամբողջ վերջին ժամանակներս։

«Նա ինձ չի սիրում,— արագ ինքն իր համար վճռեց Ռոմաշովը։— Նա ի՞նչ է։ Բարկանո՞ւմ է։ Խանդո՞ւմ։ Ես նրան ձանձրացրե՞լ եմ»։

— Գիտե՞ք... մեր վաշտում զենքի ստուգում է գնում,— քաջաբար ասեց Ռոմաշովը։— Զորատեսի ենք պատրաստվում, նույնիսկ տոներին հանգիստ չունենք... Բայց ես ուղղակի անհարմար եմ զգում... բոլորովին մտքովս չէր անցնում, թե դուք զբոսախնջույք ունեք, և այնպես ստացվեց, որ ես երեսի զոռով եմ եկել։ Ճշմարիտ, ես ամաչում եմ...

Նիկոլաևը լայն ժպտաց և վիրավորական սիրալիրությամբ թոթվեց Ռոմաշովի ուսը։

— Օ՛, ոչ, ինչ եք ասում, սիրելիս... Ինչքան շատ մարդ լինի, այնքան ավելի ուրախ կլինի... այդ ի՞նչ չինական ձևականություններ են... Այ, մենակ չգիտեմ, թե ինչպես է տեղերի բանը կառքերում։ Դե լավ, մի կերպ կտեղավորվենք։

— Ես կառք ունեմ,— հանգստացրեց նրան Ռոմաշովը, հազիվ նկատելի ուսը փախցնելով Նիկոլաևի ձեռքից։— Ընդհակառակը, ես ուրախությամբ պատրաստ եմ այն ձեր տրամադրության տակ դնելու։

Նա շուրջը նայեց և հայացքով հանդիպեց Շուրոչկային։

«Շնորհակալություն, սիրելի՞ս»,— ասաց Շուրոչկայի ջերմ, առաջվա պես տարօրինակ-ուշադիր հայացքը։

«Ի՞նչ զարմանալին է նա այսօր»,— մտածեց Ռոմաշովը։

— Դե, ուրեմն հրաշալի է։— Նիկոլաևը նայեց ժամացույցին։— Դե ինչ, պարոնայք,— ասաց նա հարցական,— թերևս արդեն կարելի է մեկնե՞լ։

— Թե գնալ է՝ գնանք, ասաց թութակը, երբ Վասկա կատուն նրա պոչից բռնած վանդակից դուրս էր քաշում,— ծաղրածուի պես բացականչեց Օլիզարը։

Բոլորը վեր կացան բացականչություններով ու ծիծաղով. կանայք իրենց գլխարկներն ու հովանոցներն էին որոնում ու ձեռնոցները հագնում, բրոնխիտով տառապող Տալմանը ամբողջ սենյակով մեկ բղավում էր, որ չմոռանան տաք շալեր վերցնել, աշխույժ թբարանցում բարձրացավ։

Փոքրիկ Միխին Ռոմաշովին մի կողմ տարավ։

— Յուրի Ալեքսեևիչ, ես մի խնդիրք ունեմ ձեզ,— ասաց նա։— Շատ եմ խնդրում։ Նստեցեք իմ քույրերի հետ, խնդրում եմ, այլապես նրանց հետ կնստի Դիցը, իսկ դա ինձ համար շափազանց տհաճ է։ Նա միշտ այնպես զզվելի բաներ է ասում աղջիկներին, որ նրանք ուղղակի պատրաստ են լաց լինել։ Ճշմարիտ, ես թշնամի եմ ամենայն բռնության, բայց, աստված վկա, մի անգամ կտամ նրա քիթ ու մռութին...

Ռոմաշովը շատ էր ուզում Շուրոչկայի հետ նստել, բայց քանի որ Միխինը միշտ հաճելի էր նրան, և քանի որ այդ հրաշալի տղայի մաքուր, պայծառ աչքերը նայում էին աղաչական արտահայտությամբ, այլև նրա համար, որ Ռոմաշովի հոգին այդ րոպեին ամբողջովին լի էր մեծ ուրախագին զգացմունքով, նա չէր կարող մերժել և համաձայնեց։

Արտասանդուղքի մոտ երկար ու աղմկալի տեղավորվում էին կառքերում։ Ռոմաշովը տեղավորվեց երկու Միխինա օրիորդների հետ։ Կառքերի ետանքում սովորական ճնշված անհույս-վհատ դեմքով դոփդոփում էին շտաբս-կապիտան Լեշչենկոն, որին Ռոմաշովն առաջ չէր նկատել և որին ոչ ոք չէր ուզում վերցնել իր կառքը։ Ռոմաշովը ձայն տվեց նրան և տեղ առաջարկեց իր կողքին, առջևի նստարանի վրա։ Լեշչենկոն շան հավատարիմ, բարի աչքերով նայեց պոդպորուչիկին և հոգոց հանելով կառք բարձրացավ։

Վերջապես բոլորը տեղավորվեցին։ Ուր-որ առջևում Օլիզարը, ծաղրածություն անելով և պտույտ տալով իր ծեր, ծույլ ձիու վրա, սկսեց երգել մի օպերետկայից.

Նստենք փոստակառքը շուտով,
Նստենք փոստակառքը դե շուտո-ո-ով

— Վարգով մա-ա-ա՞ըրշ,— որոտալից ձայնով հրաման արձակեց Օսադչին։

Կառքերը շարժվեցին։

14

Զբոսախնջույքն անցավ ոչ այնքան ուրախ, որքան աղմկալից և անկանոն իրարանցումով։ Եկան երեք վերստ հեռու գտնվող Դուբեչնայա պուրակը։ Այդպես էր կոչվում ոչ մեծ, մոտ

տասնհինգ դեսյատին տարածությամբ պուրակը, որ փռված էր երկար, թեք մի զառիվայրի լանջին, որի ստորոտին պտույտ էր գործում մի նեղլիկ, զուլալ գետակ։ Պուրակը կազմված էր նոսր, բայց սքանչելի, հարյուրամյա հզոր կաղնիներից։ Նրանց ստորոտին խիտ աճել էր համատարած թփուտը, բայց տեղ-տեղ մնացել էին սքանչելի ընդարձակ բացատներ, թարմ, զվարթ, ծածկված առաջին ընձյուղ ու վառ կանաչով։ Մի այդպիսի բացատում արդեն սպասում էին նախօրոք ուղարկված սպասյակները ինքնաեռներով ու զամբյուղներով։

Սփոռցները փռեցին ուղղակի գետնին և սկսեցին նստոտել։ Կանայք դասավորում էին աղանդերն ու ափսեները, տղամարդիկ օգնում էին նրանց չարտահայտին շնչազանցված-սիրալիր տեսքով։ Օլիզարը գոգնոցի ձևով մի սնձեռոցիկ կապեց առաջը, մի ուրիշ անձեռոցիկ թաշակ շինեց ու դրեց գլխին և սկսեց ներկայացնել սպասական ակումբի խոհարար Լուսիչին։ Երկար ժամանակ վերադասավորում էին տեղերը, որպեսզի կանայք անպայման նստեին տղամարդկանց հետ մեկտեղմեջ։ Ստիպված էին կիսապառկել, կիսանստել անհարմար դիրքերով, դա նոր էր և հետաքրքրական, և այդ առթիվ լռակյաց Լեշչենկոն հանկարծ, ընդհանուրին զարմանք ու զվարճություն պատճառելով, փքուն և հիմար տեսքով ասաց.

— Մենք հիմա ընկողմանել ենք, ինչպես հին հռոմեացի հույներ։

Շուրոչկան իր կողքին նստեցրել էր մի կողմից Տալմանին, իսկ մյուս կողմից՝ Ռոմաշովին։ Նա արտակարգ շատախոս էր, ուրախ և այնպես հուզախոսով, որ դա շատերի աչքին խփեց։ Ռոմաշովը նրան երբեք այդքան հմայիչ-գեղեցիկ չէր գտել։ Նա տեսնում էր, որ Շուրոչկայի մեջ հորդում, թրթռում և ուզում է դուրս թափվել ինչ-որ մեծ, նոր, տենդագին զգացմունք։ Երբեմն նա անխոս շրջվում էր դեպի Ռոմաշովը և նայում էր նրան լուռ, գուցե միայն կես վայրկյան ավելի, քան պահանջում էր հարկը, մի քիչ ավելի, քան միշտ, բայց ամեն անգամ Ռոմաշովը նրա հայացքի մեջ զգում էր իրեն անհասկանալի միևնույն ջերմ, ձգողական ուժը։

Օսադչին, որ մենակ նստել էր սեղանի գլուխ, փոքր-ինչ բարձրացավ և ծնկի ելավ։ Դանակով զնգզնգացնելով բաժակը և լռություն հաստատելով, նա սկսեց խոսել ցածր կրծքային

ձայնով, որը հյուսիսլ ալիքներով տարածվեց անտառային մաքուր օդում.

— Դե-ե՛, պարոնայք... Խմենք առաջին բաժակը մեր չքնաղ տիրուհու և թանկագին անվանակոչիկի կենացը։ Տա աստված նրան ամենայն երջանկություն և գեներալի կնոջ աստիճան։

Եվ, բարձր բռնելով իր մեծ գավաթը, նա որոտաց իր սարսափելի կոկորդի ամբողջ ուժով.

— Ուռռա՜։

Թվում էր, թե ամբողջ պուրակը թնդաց այդ առյուծի մռնչյունից, և դղրդալի արձագանքը տարածվեց ծառերի մեջ։ Օսադչու կողքին նստած Անդրուսևիչը կոմիկական սարսափով ընկավ մեջքի վրա, խլացած ձևանալով։ Մյուսները միահամուռ բացականչեցին։ Տղամարդիկ մոտեցան Շուրոչկային՝ բաժակ-բաժակի խփելու։ Ռոմաշովը դիտմամբ մնաց վերջինը, և Շուրոչկան նկատեց այդ։ Շրջվելով դեպի նա, Շուրոչկան լուռ և կրքոտ ժպտալով, պարզեց սպիտակ գինի լցրած իր բաժակը։ Նրա աչքերն այդ րոպեին հանկարծ լայնացան, մուգ գույն ստացան, իսկ շրթունքները արտահայտիչ, բայց անձայն շարժվեցին, արտասանելով ինչ-որ բառ։ Բայց անմիջապես նա շուռ եկավ և ծիծաղելով սկսեց խոսել Տալմանի հետ։ «Նա ի՞նչ ասաց,— մտածում էր Ռոմաշովը,— ախ, ի՞նչ ասաց արդյոք»։ Դա հուզում և անհանգստացնում էր նրան։ Նա ձեռքերով աննկատելի ծածկեց երեսը և աշխատում էր շրթունքներով վերարտադրել նույն շարժումները, որ արել էր Շուրոչկան. նա ուզում էր այդ ձևով բռնել իր երևակայության մեջ այդ բառերը, բայց դրանից ոչինչ չէր ստացվում։ «Սիրելի՞ս»։ «Սիրո՞ւմ եմ»։ «Ռո՞մոչկա»։ Ոչ, այն չէ։ Մի բան լավ գիտեր, որ ասվածը պարփակվում էր երեք վանկով։

Հետո խմեցին Նիկոլաևի կենացը և գլխավոր շտաբում նրա ապագա ծառայության հաջողության կենացը, խմում էին այն ոգով, որ կարծես երբեք և ոչ ոք չէր կասկածել, որ նրան, ի վերջո իրոք կհաջողվի ակադեմիա մտնել։ Հետո Շուրոչկայի առաջարկությամբ, բավական թմրած, խմեցին անվանակոչիկ Ռոմաշովի կենացը։ Խմեցին ներկա գտնվող կանանց և բոլոր ներկաների կենացը, և առհասարակ բոլոր կանանց կենացը, և ի փառս հարազատ գնդի դրոշների, և ռուսաց անհաղթ բանակի կենացը...

Արդեն բավականաչափ հարբած Տալմանը բարձրացավ և բղավեց խոպոտ, բայց սրտաշարժված.

— Պարոնայք, ես առաջարկում եմ խմել մեր սիրելի, մեր պաշտելի միապետի կենացը, հանուն որի մեզանից յուրաքանչյուրը պատրաստ է հեղել իր արյունը, մինչև՛ արյան վերջին կաթիլը։

Վերջին բառերը նա իրենից քամեց անսպասելի բարակ, սուլող ճղավոցով, որովհետև նրա կրծքում օդը չհերիքեց։ Նրա դեղին սպիտակուցներով գնչուական ավազակային սև աչքերը հանկարծ անօգնական ու խղճալի սկսեցին թարթել, և արցունքները հոսեցին թուխ այտերով։

— Հի՛մն, հի՛մն,— ոգևորված պահանջեց փոքրիկ հաստլիկ Անդրուսևիչը։

Բոլորը ոտքի կանգնեցին։ Սպաները ձեռքերը տարան դեպի շքոցները։ Աննկարագրելի, բայց ոգեշնչող հնչյունները տարածվեցին պուրակում, և բոլորից բարձր, բոլորից սխալ և սովորականից ավելի ևս Քախծալի դեմքով երգում էր դյուրազգաց շտաբս-կապիտան Լեշչենկոն։

Առհասարակ խմում էին չափազանց շատ, ի դեպ, ինչպես և միշտ, ակումբում, հանդիսաւոր ճաշկերույթների և զբոսախնջույքների ժամանակ։ Արդեն խոսում էին բոլորը միասին և առանձին ձայները չէր կարելի ջոկել։ Շուրոչկան, որ շատ ըսպիտակ գինի էր խմել, ամբողջովին շառագունած. լայնացած բիբերի պատճառով բոլորովին սև աչքերով, խոնավ կարմիր շրթունքներով, հանկարծ մոտիկ թեքվեց Ռոմաշովի կողմը։

— Ես չեմ սիրում այս գավառական զբոսախնջույքները. նրանց մեջ ինչ-որ մանրախնդիր և գռեհիկ բան կա,— ասաց նա։— Ճիշտ է, սա պետք էր անել ամուսնուս համար, մեկնելուց առաջ, բայց, տեր իմ, որքան հիմար է այս բոլորը։ Չէ՞ որ այս բոլորը կարելի էր սարքել մեր տանը, այգում, դուք գիտեք, թե ինչ սքանչելի այգի ունենք, հին, ստվերախիտ։ Եվ, համենայն դեպս, չգիտեմ ինչու, ես այսօր խելահեղորեն երջանիկ եմ։ Աստված իմ, որքա՜ն երջանիկ եմ։ Ոչ, Ռոմոչկա, սիրելիս, ես գիտեմ ինչու, և ես հետո ձեզ կասեմ, ես հետո կասեմ ձեզ... Ես կասեմ... Ա՜խ, ոչ, ոչ, Ռոմոչկա, ես ոչինչ, ոչինչ չգիտեմ։

Նրա սքանչելի աչքերը կիսափակվեցին, իսկ ամբողջ դեմքին ինչ-որ հրապուրիչ ու խոստումնալից և տանջալից անհամբերություն կար։ Այդ դեմքը դարձավ անամոթ-չքնաղ, և Ռոմաշովը

դեռևս չհասկանալով, թաքուն բնազդով իր վրա զգում էր Շուրոչկային տիրապետած հուզմունքը, զգում էր այն քաղցր դողից, որ անցնում էր նրա ձեռքերով, ոտքերով, կրծքով։

— Դուք այսօր արտասովոր եք։ Ձեզ ի՞նչ է պատահել,— հարցրեց նա շշուկով։

Շուրոչկան հանկարծ պատասխանեց ինչ-որ միամիտ ու հեղ զարմանքով.

— Ես ձեզ ասում եմ, որ չգիտեմ։ Չգիտեմ։ Նայեցեք. երկինքը կապույտ է, լույսը կապույտ է... Ես էլ ինչ-որ հրաշալի երկնագույն տրամադրության, երկնագույն ուրախության մեջ եմ։ Ինձ էլի գինի լցրեք, Ռոմոչկա, իմ սիրելի տղա...

Սփոռցի մյուս ծայրին խոսակցություն բացվեց Գերմանիայի հետ ունենալիք ենթադրյալ պատերազմի մասին, որն այն ժամանակ շատերը գրեթե վճռված բան էին համարում։ Սկսվեց աղմկալի, միաժամանակ մի քանի հոգու խոսելով, խառնաշփոթ մի վեճ։ Հանկարծ լսվեց Օսադչու բարկացած, վճռական ձայնը. նա գրեթե հարբած էր, բայց դա արտահայտվում էր միայն նրանով, որ նրա գեղեցիկ դեմքը սարսափելի գունատվել էր, իսկ մեծ սև աչքերի ծանր հայացքը ավելի մռայլ էր դարձել։

— Դատարկ բան է, — կտրուկ բացականչեց նա։— Ես պնդում եմ, որ այդ ամենը դատարկ բան է։ Պատերազմն այլասերվել է։ Աշխարհում ամեն ինչ այլասերվել է։ Երեխաները ծնվում են ապուշ, կանայք դարձել են ծուռկողանի, տղամարդիկ՝ ներվային։ «Ախ, արյո՞ւն։ Ախ, ես ուշաթա՜ց եմ լինում», — ոնգախոսությամբ տնազ արեց նա ինչ-որ մեկին։— Եվ այդ բոլորը նրանից է, որ անցել է իսկական, մոլեգին, անողոք պատերազմի ժամանակը։ Մի՞թե սա պատերազմ է։ Տասնհինգ վերստից քեզ վրա թրրրխկ, և դու տուն ես վերադառնում որպես հերոս։ Աստված իմ, տես, թե ինչ մի արիությո՞ւն է։ Քեզ գերի վերցրին։ «Ախ, սիրելիս, ախ, հոգյակս, ծխախոտ ծխել չե՞ս ուզում։ Թե՞ միգուցե թեյ։ Հո չե՞ս մրսում, խղճուկս։ Տակդ փափո՞ւկ է»։ Ու-ո՞ւ։— Օսադչին ահեղ մռնչաց և գլուխը ցած թեքեց, եղան պես պատրաստ հարված հասցնելու։— Միջին դարերում կռվում էին, այ դա՛ հասկանում եմ։ Գիշերային գրոհ։ Ամբողջ քաղաքը կրակի մեջ է։ Ներս խուժեցին։ Արյուն և կրակ։ Գինու տակառների հատակները ջարդվում են։ Փողոցներում արյուն և գինի։ Օ՛, որքա՜ն են եղել այդ խնջույքները ավերակների վրա։ Կանանց՝ մերկ, գեղանի, արտասվող, քարշ էին տալիս

մազերից։ Խղճահարություն չկար։ Նրանք խիղախների քաղցր ավա՜րն էին...

— Բայց դուք այնքան էլ մի ծավալվեք,— կատակով նկատեց Սոֆիա Պավլովնա Տալմանը։

— Գիշերները այրվում էին տները, և քամին էր փչում, և քամուց կախաղանների վրա ճոճվում էին սև մարմինները, և նրանց վերև կռավում էին ագռավները։ Իսկ կախաղանների տակ խարույկներ էին վառվում և խրախճանք էին անում հաղթողները։ Գերիներ չկային։ Գերիներն ինչի՞ պետք էին։ Նրանց համար ինչո՞ւ ավելորդ ուժեր զատեին։— Ա-ա՜խ,— ատամները սեղմած կատաղորեն հառաչեց Օսադչին։— Այդ ինչ խիզախ, այդ ի՜նչ սքանչելի ժամանակ էր։ Իսկ ճակատամարտե՜րը։ Երբ հանդիպում էին կուրծք-կրծքի և կռվում ժամերով, սառնարյուն ու կատաղի, գազանացած և զարմանալի արվեստով։ Այդ ի՜նչ մարդիկ էին, ինչպիսի՜ սարսափելի ֆիզիկական ուժ։ Պարոնա՜յք։— Նա ոտքի կանգնեց և շտկվեց իր ողջ հսկա հասակով մեկ, և նրա ձայնի մեջ հիացմունք ու հանդգնություն զրնգաց։ —Պարոնայք, ես գիտեմ, որ ռազմական ուսումնարաններից դուք ձեզ հետ բերել եք հիվանդոտ, թուլամորթ հասկացություններ ժամանակակից մարդասիրական պատերազմի մասին։ Բայց ես խմում եմ... Եթե նույնիսկ ոչ ոք ինձ չմիանա, ես մենակ խմում եմ առաջվա պատերազմների ուրախության, զվարթ և արյունալի դաժանության կենացը։

Բոլորը լռել էին՝ կարծես ճնշված այդ սովորաբար մռայլ, քչախոս մարդու անսպասելի էքստազից, և նրան էին նայում հետաքրքրությամբ ու վախով։ Բայց հանկարծ իր տեղից վեր թռավ Բեկ-Աղամալովը։ Նա այդ արավ այնքան անակնկալ և այնքան արագ, որ շատերը ցնցվեցին, իսկ մի կին վախից ճչաց։ Բեկ-Աղամալովի աչքերը շռվել և վայրի փայլատակում էին, ամուր սեղմած սպիտակ ատամները գիշատչորեն կրճտում էին։ Նա շնչահեղձ էր լինում և բառեր չէր գտնում։

—Օ-օ՜... Այ սա... այ, ես հասկանո՜ւմ եմ։ Ա՜...— Նա ջղացունց ուժով, ասես չարությամբ սեղմեց ու թափահարեց Օսադչու ձեռքը։— Գրողի ծո՜ցը նվնվոցը։ Գրողի ծո՜ցը խղճահարությունը։ Ա՜։ Թրատի՜ր։

Նրան պետք էր ինչ-որ ձևով թեթևացնել իր բարբարոս հոգին, որում սովորական ժամանակ թաքուն նիրհում էր հինավուրց, ցեղին հատուկ արյունռուշտությունը։ Նա արյունակալած աչքերով նայեց շուրջը և, հանկարծ պատյանից սուրը դուրս քաշելով, կատաղորեն հարվածեց կաղնու մի թփի։ Ճյուղերն ու դալար տերևները թռան սփռոցին՝ անձրևի պես մաղվելով բոլոր նստածների վրա։

— Բե՜կ։ Խելա՜ռ։ Վայրենի՜,— բղավեցին կանայք։ Բեկ-Աղամալովն անմիջապես կարծես ուշքի եկավ և նստեց։ Նա նկատելիորեն շփոթված էր թվում իր մոլեգին պոռթկումի համար, բայց նրա նուրբ ռունգերը, որոնցից աղմկալի դուրս էր պրծնում շնչառությունը, լայնանում էին ու թրթռում, իսկ զայրույթից այլանդակված սև աչքերը, խեթ, բայց մարտահրավերով նայում էին ներկա գտնվողներին։

Ռոմաշովը լսում էր և չէր լսում Օսադչուն։ Նա ապրում էր մի տարօրինակ վիճակ, որ նման էր քնի, քաղցր արբեցության՝ ինչ-որ հրաշալի, աշխարհում գոյություն չունեցող խմիչքից։ Նրան թվում էր, թե մի տաք, նուրբ ոստայն փափուկ ու ծուլորեն պարուրում է իր ողջ մարմինը և փաղաքշորեն խտուտ է տալիս ու հոգին լցնում ներքին ցնծուն ծիծաղով։ Նրա ձեռքը հաճախ, կարծես թե իր համար հանկարծակի դիպչում էր Շուրոչկայի ձեռքին, բայց ոչ մեկը, ոչ մյուսը այլևս իրար չէին նայում։ Ռոմաշովն ասես նիրհում էր։ Օսադչու և Բեկ-Աղամալովի ձայները նրան հասնում էին ինչ-որ հեռավոր, ցնորական մշուշից և հասկանալի էին, բայց դատարկ։

«Օսադչին... Նա դաժան մարդ է, ինձ չի սիրում,— մտածում էր Ռոմաշովը, և նա, որի մասին մտածում էր, այժմ առաջվա Օսադչին չէր, այլ մի նոր, սարսափելի հեռավոր և ոչ իսկական, այլ կարծես էկրանի վրա շարժվող կենդանի լուսանկար։— Օսադչու կինը փոքրիկ, նիհարիկ, խղճուկ, միշտ հղի կին է... Նա նրան իր հետ ոչ մի տեղ չի տանում... Անցյալ տարի նրա մի երիտասարդ զինվորը իրեն կախեց... Օսադչին... Այո... Ի՞նչ բան է Օսադչին։ Ահա հիմա էլ Բեկն է բղավում... Ո՞վ է այդ մարդը։ Մի՞թե ես նրան ճանաչում եմ։ Այո, ես նրան ճանաչում եմ, բայց ինչու՞ է նա այդպես տարօրինակ, օտար, ինձ անհասկանալի։ Իսկ ահա իմ կողքին նստած է մեկը... Ո՞վ ես դու։ Քեզանից ուրախություն է բխում, և ես հարբած եմ այդ ուրախությունից։ Երկնագույն ուրախությո՜ւն։ Ահա իմ դիմաց նստել է Նիկոլաևը։ Նա դժգոհ է։ Նա շարունակ լուռ է։ Այստեղ է նայում հարևանցի, ասես աչքերով սահում է։ Ախ, թող բարկանա, միևնույն է։ Օ՜, երկնագույն ուրախությո՜ւն»։

Մթնում էր։ Ծառերից շուշանագույն լոկ ստվերներ բնկան մարգագետնին։ Կրասեր Միխինան հանկարծ սթափվեց.

— Պարոնայք, իսկ մանուշակնե՞րը։ Ասում են այստեղ անչափ շատ մանուշակ կա։ Գնանք հավաքենք։

— Ուշ է,— նկատեց մեկը։ — Հիմա խոտերի մեջ բան չես տեսնի։

— Հիմա խոտերի մեջ ավելի հեշտ է կորցնելը, քան թե գտնելը,— ասաց Դիցը, զզվելի ծիծաղելով։

— Դե որ այդպես է, եկեք խարույկ վառենք,— առաջարկեց Անդրուսեիչը։

Խոիվի ու անցյալ տարվա չոր տերևների մի հսկայական կույտ հավաքեցին և խարույկ վառեցին։ Դեպի երկինք բարձրացավ ուրախ կրակի մի լայն շերտ։ Ասես խրտնելով՝ միանգամից չքացան օրվա վերջին մնացորդները, տեղը զիջելով խավարին, որը պուրակից դուրս գալով, շարժվեց դեպի խարույկը։ Բոսոր բծերը երկչոտ թրթռացին կաղնիների կատարներին և թվում էր, թե ծառերը շարժվեցին, օրորվեցին, մերթ երևալով լույսի կարմիր տարածության մեջ, մերթ նորից թաքնվելով խավարում։

Բոլորը սեղանից վեր կացան։ Սպասյակները վառեցին ապակե լապտերների մոմերը։ Ջահել սպաները աշակերտների պես շարություն էին անում։ Օլիզարը կոխ էր բռնում Միխինի հետ և, ի զարմանս բոլորի, փոքրամարմին, ոչ ճարպիկ Միխինը իրար հետևից երկու անգամ գետին խփեց իր ավելի բարձրահասակ և բարեկազմ հակառակորդին։ Հետո սկսեցին կրակի վրայից թռչել։ Անդրուսեիչը ներկայացնում էր, թե ինչպես է ճանճը բախվում ապակուն և ինչպես է պառավ թռչնապանուհին հավ բռնում՝ թփերի հետև թաքնվելով, սրոցի վրա սրվող դանակի ու սղոցի ձայն էր հանում, նա այդ բանի մեծ վարպետ էր։ Նույնիսկ Դիցը բավական ճարպիկ ձեռնածություն էր անում դատարկ շշերով։

— Թույլ տվեք, պարոնայք, տեսեք, ես ձեզ մի հրաշալի ֆոկուս ցույց տամ,— հանկարծ բղավեց Տալմանը։— Այստեղ չկան ոչ մի հրաշքներ կամ կախարդություն, այլ ոչ այլ ինչեր, բան ձեռքերի ճարպիկությունից։ Խնդրում եմ, հարգելի պուբլիկում, ուշադրություն դարձնել, որ թևքերիս մեջ ոչ մի առարկա չմնա։ Սկսում եմ։ Այն, ցվայ, դրայ... ալլե՞ հո՛պ...

Ընդհանուր քրքիջի տակ նա սրբանից արագ դուրս գալով երկու ձեռք նոր խաղաթուղթ և խշխշոցով մեկը մյուսի հետևվից բացեց։

— Վինտ խաղա՞նք, պարոնայք,— առաջարկեց նա։— Մաքուր օդում, հը՞։

Օսադչին, Նիկոլաևը և Անդրուսեիչը նստեցին խաղալուն, Լեշչենկոն իրար հոգոց հանելով, ապրելու դեպք նրանց հետևում։ Նիկոլաևը երբեմն ժամանակ փախցնելու զբաղմունքով զբաղվում էր, բայց նրան այնուամենայնիվ հետաքրքրում էր։ Նա հանգիստ անհանգստությամբ էր նայում, ուշադրությամբ Շուրոչկային որոնելով, բայց քանի որ խաղալիս լուսի պատճառով նրա համար դժվար էր ուշադրություն դարձնել, ուստի ամեն անգամ նրա դեմքը լարված ինքնատիրում էր և խրտնում, ամենքից և ամենից արտահայտության սառնություն։

Մթնացածները աստիճանաբար ցրվեցին։ Բոլորս տամ, խարույկից ոչ հեռու։ Ուզեցին բռնոցի խաղալ, բայց այդ զվարճությունը շատով ավարտվեց այն բանից հետո, երբ ապակի Միխինան, որին բռնեց Դիցը, հանկարծ արտասվելու աստիճան շատագունեց և կտրականապես հրաժարվեց խաղալուց։ Երբ նա խոսում էր, նրա ձայնը դողում էր վիրավորանքից ու վերամբարձությունից, բայց այնուամենայնիվ պատճառը չբացատրեց։

Ռոմաշովը նեղ արահետով գնաց պուրակի խորքը։ Նա ինքն էլ չէր հասկանում, թե ինչի է սպասում, բայց նրա սիրտը դողդղ ու նվազուն ճմլվում էր անորոշ երանելի նախազգացումից։ Նա կանգ առավ։ Նրա հետևում լսվեց ճյուղերի թույլ ճռճռոցություն, ապա արագ քայլերի ձայն և մետաքսե շրջազգեստի շրշյուն։ Շուրոչկան շտապ գնում էր դեպի նա՝ թեթև ու սլացիկ, ասես անտառի լուսավոր ոգի, իր սպիտակ զգեստով փայլփլելով հսկա ծառերի մուգ բների միջև։ Ռոմաշովը գնաց ընդառաջ և անձայն գրկեց նրան։ Շուրոչկան ծանր էր շնչում արագ քայլելուց։ Նրա շունչը տաք ու հաճախակի դիպչում էր Ռոմաշովի այտին, շրթունքներին, և նա զգում էր, թե ինչպես իր ձեռքի տակ բաբախում է Շուրոչկայի սիրտը։

— Նստենք,— ասաց Շուրոչկան։

Նա նստեց կանաչին և սկսեց երկու ձեռքով ուղղել մաղերը ծոծրակի վրա։ Ռոմաշովը պառկեց նրա ոտքերի մոտ, և քանի որ գետինն այդտեղ նկատելիորեն թեքվում էր դեպի, ապա նա Շուրոչ-

կայֆն նայելիս տեսնում էր միայն նրա պարանոցի և կզակի նուրբ և անորոշ գծագրությունը։

Հանկարծ նա հարցրեց ցած, դղրդացող ձայնով.

— Ռոմուշկա, լա՞վ է ձեզ համար։

— Լավ է,— պատասխանեց նա։ Հետո մի վայրկյան մտածեց, վերհիշեց այսօրվա ամբողջ օրը և ջերմորեն կրկնեց.— Օ՛, այո, ինձ համար այնպե՛ս լավ է, այնպե՛ս լավ։ Ասացեք, ինչո՞ւ դուք այսօր այդպես եք։

— Ինչպե՞ս։

Նա խոնարհվեց դեպի Ռոմաշովը, ուշադիր նայելով նրա աչքերի մեջ, և Շուրոչկայի դեմքը միանգամից տեսանելի դարձավ Ռոմաշովին։

— Դուք հրաշալի եք, արտասովոր։ Այսքան հիասքանչ դեռ երբեք չեք եղել։ Ձեր մեջ ինչ-որ բան երգում ու շողում է։ Ձեր մեջ ինչ-որ նոր, ասելիվածային բան կա, ես չեմ հասկանում, թե ինչ... Բայց... Մի բարկանաք ինձ վրա, Ալեքսանդրա Պետրովնա... Դուք չե՞ք վախենում, որ հանկարծ կնկատեն ձեր բացակայությունը։

Շուրոչկան կամացուկ ծիծաղեց, և այդ ցածր, փաղաքշող ծիծաղը ուրախագին դողով արձագանքեց Ռոմաշովի կրծքում։

— Սիրելի՜ Ռոմուշկա։ Սիրելի, բարի, վախկոտ, սիրելի Ռոմուշկա։ Ախր ես ձեզ ասացի, որ այս օրը մերն է։ Ոչ մի բանի մասին մի մտածեք, Ռոմուշկա։ Գիտե՞ք ինչու ես այսօր այսպես խիզախ եմ։ Ո՞չ։ Չգիտե՞ք։ Ես այսօր սիրահարված եմ ձեզ։ Ոչ, ոչ, չերևակայեք, դա վաղնևթ կանցնի...

Ռոմաշովը դեպի նա մեկնեց ձեռքերը, որոնելով նրա մարմինը։

— Ալեքսանդրա Պետրովնա... Շուրոչկա... Սաշա... — արտասանեց նա աղաչական։

— Ինձ Շուրոչկա մի անվանեք. ես այդ չեմ ուզում։ Ուրիշ ինչ ասես, միայն ոչ այդ... Ի դեպ, — կարծես հանկարծ հիշեց նա,— ի՜նչ հրաշալի անուն ունեք դուք՝ Գեորգի։ Շատ ավելի լավ է, քան Յուրի... Գեո՜-ր-գի,— ծոր տվեց նա դանդաղ, կարծես ունկնդիր լինելով այդ բառի հնչյուններին։— Այդ հպարտ է։

— Օ՛, սիրելիս,— կրքոտ ասաց Ռոմաշովը։

— Սպասեցեք... Դե լսեցեք ախր։ Դա ամենակարևորն է։ Ես ձեզ այսօր տեսել եմ երազում։ Դա զարմանալի, սքանչելի էր։

Երազում տեսնում էի, թե իբր ձեզ հետ վալս ենք պարում ինչ-որ արտասովոր սենյակում։ Օ, ես անմիջապես կճանաչեի այդ սենյակը ամենայն մանրամասնությամբ։ Շատ գորգեր կային, բայց վառվում էր միայն մի կարմիր լապտեր, նոր դաշնամուրը փայլում էր, երկու լուսամուտ կար՝ կարմիր վարագույրներով, ամեն ինչ կարմիր էր։ Մի տեղից երաժշտության ձայն էր գալիս, չէր երևում, թե որտեղից, և մենք պարում էինք... Ոչ, ոչ, միայն երազում կարող է լինել այդպիսի քաղցր, այդպիսի զգայական մոտիկություն։ Մենք պտտվում էինք արագ-արագ, բայց ոտներով գետնին չէինք կպչում, այլ ասես լողում էինք օդում և պտտվում էինք, պտտվում, պտտվում։ Ախ, դա շարունակվում էր այնքա՜ն երկար և այնպե՜ս անասելի հիասքանչ-հաճելի էր... Լսեցեք, Ռոմուշկա, դուք թռչո՞ւմ եք երազում։

Ռոմաշովն իսկույն չպատասխանեց։ Նա կարծես ընկել էր տարօրինակ, հրապուրիչ, միաժամանակ իրական և կախարդական մի հեքիաթի մեջ։ Եվ իսկապես էլ հեքիաթ էր այդ դարձնային զիշերվա չերմությունն ու խավարը, և չորս կողմի ուշադիր, հանդարտված ծառերը, և իր կողքին, այդքան մոտիկ երևցած տարօրինակ, սիրելի, սպիտակազգեստ կինը։ Եվ այդ թռչանքից սթափվելու համար նա պետք է ճիգ գործադրեր իր վրա։

— Իհարկե, թռչում եմ,— պատասխանեց նա։ — Բայց տարեցտարի ավելի ու ավելի ցած։ Առաջ, մանուկ օրերիս, ես թռչում էի առաստաղի տակ։ Չտեսնված ծիծաղելի էր վերևից նայելը, կարծես թե նրանք գլխիվայր էին քայլում։ Նրանք աշխատում էին ինձ ցած բերել հատակի խոզանակով, բայց չէին կարողանում։ Իսկ ես շարունակ թռչում եմ և շարունակ ծիծաղում։ Հիմա այդ արդեն չկա, հիմա ես միայն ցատկում եմ,— ասաց Ռոմաշովը հոգոցով։— Ոտներով ետ եմ մղվում և թռչում եմ գետնի վերևով։ Այսպես մի քսան քայլի չափ, և ցածրանց, մի արշինից ոչ բարձր։

Շուրոչկան բոլորովին ընկավ գետնին, արմունկը հենեց հողին և գլուխը ափին դրեց։ Փոքր ինչ լռելով՝ նա մտախոհ շարունակեց.

— Եվ ահա այդ երազից հետո, առավոտյան ես ուզեցի ձեզ տեսնել։ Սոսկալի, սոսկալի ուզեցի։ Եթե չգայիք, չգիտեմ, թե ինչ կանեի։ Երևի ես ինքս վազ տայի ձեզ մոտ։ Դրա համար էլ ես

ձ!ղ խնդրել էի չարսից առաջ չգալ։ Ես վախենում էի ինքս ինձ-նից։ Թանկագինս, դուք ինձ հասկանո՞ւմ եք։

Ռոմաշովի դեմքից կես արշին հեռավորությամբ ձգված էին Շուրոչկայի ոտքերը, մեկը մյուսի վրա խաչաձևած, երկու փոքրիկ տուտիկներ՝ ցածրակրունկ կոշիկներով և ինչ-որ սլաքաձև սպիտակ նայլոն ունեցող սև գուլպաներով։ Մշուշված գլխով, ուկանջներում ադմուկ, Ռոմաշովը հանկարծ ատամներով պինդ հպվեց այդ կենդանի, ձիգ, գուլպայի տակից սառը մարմնին։

— Ռոմաշկա... պետք չէ,— իր գլխավերևում լսեց Շուրոչկայի թույլ, երկարաձիգ և ասես ծույլ ձայնը։

Նա գլուխը բարձրացրեց։ Եվ նորից նրան այդ վայրկյանին ամեն ինչ հրաշալի, խորհրդավոր անտառային հեքիաթ թվաց։ Ջառիթափով ուղիղ վեր էր ձգվում պուրակը՝ մուգ դալարով ու սև, նոսր, լուսկյաց ծառերով հանդերձ, որոնք նիրհի միջից անշարժ ու դղայուն ականջ էին դնում ինչ-որ ձայնի։ Իսկ ամենավերևում կատարների խիտ թավուտի և հեռավոր ծառաբների միջով, հորիզոնին հավասար, բարձր դծի վերև վառվում էր ոչ կարմիր և ոչ էլ բոսոր, այլ մուգ ծիրանեգույն, արտասովոր, թանձր կարմիր գինու միջով բեկված մարմրող ածուխի կամ բոցի նման վերջալույսի մի նեղ շերտ։ Եվ այդ լեռան վրա, սև ծառերի մեջ, բուրավետ մուգ դալարի վրա, ինչպես հանգրստացող անտառային աստվածուհի, պառկել էր մի անհասկանալի, գեղանի սպիտակ կին։

Ռոմաշովը ավելի մոտեցավ կնոջը։ Նրան թվում էր, թե Շուրոչկայի դեմքը մի դալուկ շող էր արձակում։ Նրա աչքերը չէին երևում, դրանց փոխարեն երկու խոշոր մուգ բծեր էին, բայց Ռոմաշովն զգում էր, որ նա իրեն է նայում։

— Սա հեքիաթ է,— կամացուկ շշնջաց Ռոմաշովը միայն բերանի շարժումով։

— Այո, սիրելիս, հեքիաթ է...

Ռոմաշովն սկսեց համբուրել նրա զգեստը, գտավ նրա ձեռքը և դեմքը հպեց նեղ, տաք, բուրավետ ափին, և միաժամանակ խոսում էր շնչահեղձ լինելով, կերկերաձայն.

— Սաշա... Ես ձեզ սիրում եմ... Ես սիրում եմ...

Հիմա, ավելի վեր բարձրանալով, նա պարզ տեսնում էր նրա աչքերը, որոնք դարձել էին հսկայական, սև ու մերթ նեղանում էին, մերթ լայնանում և դրանց խավարում քմահաճորեն փոխվում էր նրա ամբողջ ծանոթ-անծանոթ դեմքը։ Ռոմաշովը

ուգահ, չորացած շուրթերով որոնում էր նրա բերանը, բայց Շուրոչկան խուսափում էր նրանից, կամացուկ օրորելով գլուխը և կրկնում էր դանդաղ շշուկով.

— Ոչ, ոչ, ոչ... Սիրելիդ իմ, ոչ...

— Թանկագինս... Ինչպիսի՜ երջանկություն... Ես սիրում եմ քեզ...— պնդում էր Ռոմաշովը ինչ-որ երանավետ զառանցանքների մեջ։ —Ես սիրում եմ քեզ։ Նայիր, այս գիշերն ու բուրությունը, և ոչ ոք բացի մեզանից։ Օ՜, իմ երջանկություն, ինչպես եմ սիրում քեզ։

Բայց Շուրոչկան ասում էր շշուկով՝ «ոչ, ոչ», ծանր շնչերով, ամբողջ մարմնով դեմնին ջղաձգած։ Վերջապես նա սկսեց խուսել հազիվ լսելի ձայնով, ասես դժվարությամբ։

— Ռոմոչկա, ինչո՞ւ դուք այդպես... Թույլ եք։ Ես չեմ ուզում թաքցնել, դուք ինձ գրավում եք, դուք ինձ սիրելի եք ամեն ինչով, ձեր անհարակությամբ, ձեր մաքրությամբ, ձեր չնչությամբ։ Ես ձեզ չեմ ասի, թե սիրում եմ ձեզ, բայց ես ձեր մասին միշտ մտածում եմ, ձեզ տեսնում եմ երազումս, ես... գրում եմ ձեզ... Ինձ հուզում են ձեր մոտիկությունը և ձեր հպումները։ Բայց ինչո՞ւ դուք այդքան խղճուկ եք։ Չէ՞ որ խղճահարությունը արհամարհանքի քույրն է։ Մտածեցեք, ես չեմ կարող ձեզ հարգել։ Օ՜, եթե դուք ուժեղ լինեիք։ — Նա Ռոմաշովի գլխից հանեց գլխարկը և սկսեց կամացուկ շոյել և խառնել նրա փափուկ մազերը։— Եթե դուք կարողանայիք ձեզ համար մեծ անուն, մեծ դիրք նվաճել...

— Ես կանեմ, ես կանեմ այդ,— կամացուկ բացականչեց Ռոմաշովը։— Միայն իմը եղիր։ Եկեք ինձ մոտ։ Ես ամբողջ կյանքս...

Շուրոչկան ընդհատեց նրան փաղաքուշ և թախծալի ժպիտով, որը Ռոմաշովն զգաց նրա ձայնից.

— Հավատում եմ, որ դուք ուզում եք, հոգյակս, հավատում եմ, բայց դուք ոչինչ չեք անի։ Ես գիտեմ, որ ոչ։ Օ, եթե Ես թեկուզ մի՜ քիչ հույս ունենայի ձեզ վրա, ես կձգեի ամեն ինչ և կգայի ձեր հետևից։ Ա՜խ, Ռոմոչկա, իմ լավիկ։ Ես լսել եմ, մի լեգենդ ասում է, թե ասեված առաջ բոլոր մարդկանց ստեղծել է ամբողջական, իսկ հետո, չգիտես ինչու, ամեն մեկին երկու կես է արել և ցրել աշխարհով մեկ։ Եվ ահա, դարեր շարունակ այդ երկու կեսերը որոնում են իրար և չեն գտնում։ Սիրելիս, ավելի ես և դուք երկու կեսերն ենք. մեր ամեն ինչը ընդհանուր է.

Լ՝ սիրածը, և չսիրածը, և մտքերը, և երազները, և ցանկությունները։ Մենք իրար հասկանում ենք կես ակնարկից, կիսաբերան ասած խոսքից, նույնիսկ առանց խոսքերի, միայն հոգով։ Եվ հիմա, ես սիրտք է հրաժարվեմ քեզանից։ Ախ, սա արդեն երկրորդ անգամն է իմ կյանքում։

— Այո, ես գիտեմ։

— Նա քեզ ասե՞լ է,— արագ հարցրեց Շուրոչկան։

— Ոչ, դա պատահական ստացվեց։ Ես գիտեմ։

Նրանք լռեցին։ Երկնքում դողդոջուն կանաչ կետերով սկսում էին փայլել առաջին աստղերը։ Աջից հաղիվ հասնում էին ձայներ, ծիծաղ և ինչ-որ մեկի երգը։ Պուրակի մնացած մասը, որ լցնված էր մեղմ խավարի մեջ, լի էր սրբաղան մտածկոտ լռությամբ։ Խարույկն այստեղից չէր երևում, բայց երբեմն մերձակա կաղնիների կատարների վրա, ասես հեռավոր փայլակի անդրադարձում, ակնթարթաբար սահում էր մի կարմիր թրթռուն լույս։ Շուրոչկան մեղմ շոյում էր Ռոմաշովի գլուխն ու դեմքը, իսկ երբ սա շրթունքներով դտնում էր նրա ձեռքը, Շուրոչկան ինքը ափը սեղմում էր նրա շրթունքներին։

— Ես իմ ամուսնուն չեմ սիրում,— ասում էր Շուրոչկան դանդաղ, ասես մտածմունքի մեջ։— Նա խոպիտ է. նա զգայուն չէ, անքաղաքավարի է։ Ախ, ամոթ է ասելը, բայց մենք, կանայք, երբեք չենք մոռանում առաջին բռնությունը մեր վրա։ Հետո նա այնպես վայրենաբար խանդոտ է։ Նա մինչև հիմա ինձ տանջում է այդ թշվառ Նազանսկիով, զուռով փորձում է իմանալ ամեն մի մանրուք, այնպիսի հրեշավոր ենթադրություններ է անում, թու՛... Նողկալի հարցեր է ուղիղ։ Տեր իմ, ախր դա անմեղ կիսամանկական սիրավեպ էր։ Բայց նա միայն Նազանսկու անունը լսելուց կատաղում է։

Խոսելու ժամանակ նրա ձայնը բոպեն մեկ դողում էր, դողում էր Ռոմաշովի գլուխը շոյող ձեռքը։

— Դու մրսո՞ւմ ես,— հարցրեց Ռոմաշովը։

— Ոչ, սիրելիս, ես ինձ լավ եմ զգում,— կարճ ասաց նա։

Եվ հանկարծ անսպասելի, անզուսպ կրքով նա բացականչեց.

— Ախ, ինձ այնքա՞ն լավ եմ զգում քեզ հետ, սե՞ր իմ։

Այն ժամանակ Ռոմաշովն սկսեց երկչոտ, անվստահ եղանակով, նրա ձեռքն իր ձեռքի մեջ առնելով և կամացուկ դիպչելով նրա բարակ մատներին.

— Սատ ինձ... ենդրում եմ։ Ձի՞ որ դու ինքդ ես ասում, որ նրան չես սիրում։ Հապա ինչո՞ւ ես դուք իրար հետ...

Բայց Շուրոչկան կտրուկ բաբձրացավ գետնից, նստեց և դալարին շարժումով շփեց ճակատն ու այտերը, ասես արթնանալով։

— Բայց ուշ է։ Գնանք։ Մեկ էլ տեսար կսկսեն որոնել,— ասաց նա փոխված, բոլորովին հանդիստ ձայնով։

Նրանք վեր կացան կանաչից և կանգնել էին դեմ դիմաց լուռ, լսելով միմյանց շնչառությունը, նայելով իրար աչքի, բայց չտեսնելով դրանք։

— Մնաս բարո՞վ,— հանկարծ բացականչեց Շուրոչկան զրնգուն ձայնով։— Մնաս բարով, իմ երջանկություն, իմ կարճատև երջանկությո՞ւն։

Նա ձեռքերը փաթաթեց Ռոմաշովի վզին և տաք խոնավ շրթունքները հպեց նրա շրթունքներին ու ատամները սեղմած, կրքի հառաչով կպավ նրան ամբողջ մարմնով, ոտքերից մինչև կուրծքը։ Ռոմաշովին թվաց, թե կաղնիների սև բները ճոճվեցին մի կողմ, իսկ գետինը լողաց մյուս կողմ, և ժամանակը կանգ առավ։

Հետո Շուրոչկան հիզով ազատվեց նրա ձեռքերից և հաստատուն ասաց.

— Մնաս բարով։ Հերիք է։ Հիմա գնանք։

Ռոմաշովը ընկավ նրա առաջ խոտերի վրա, գրեթե սպառկեց, դրիկեց նրա ոտքերը և սկսեց համբուրել ծնկները երկար, պինդ համբույրներով։

— Սաշա, Սաշենկա,— թոթովում էր նա անիմաստ։— Ինչո՞ւ չես ուզում ինձ հանձնվել։ Ինչո՞ւ։ Հանձնվիր ինձ...

— Գնանք, գնանք,— շտապեցնում էր Շուրոչկան։— Դե վեր կաց էլ, Գեորգի Ալեքսեևիչ։ Կնկատեն մեր բացակայությունը։ Գնանք։

Նրանք գնացին այն ուղղությամբ, որտեղից ձայներ էին լսվում։ Ռոմաշովի ոտքերը ծալվում ու դողում էին, և քունքերը տրոփում։ Քայլելիս նա օրորվում էր։

— Ես խաբեություն չեմ ուզում,— շտապելով և դեռ շընչակտուր լինելով ասում էր Շուրոչկան,— ասենք ոչ, ես վեր եմ խաբեությունից, բայց ես վախկոտություն չեմ ուզում։ Իսկ խաբեության մեջ միշտ վախկոտություն կա։ Ես քեզ ճիշտը կասեմ, ես ամուսնուս երբեք չեմ դավաճանել և չեմ դավաճանի

այնքան ժամանակ, մինչև նրան չթողնեմ որևէ պատճառով։ Բայց նրա փաղաքշանքներն ու համբույրներն ինձ համար սարսափելի են, նրանք իմ մեջ նողկանք են առաջացնում։ Լսիր, ես միայն հիմա, ոչ, ասենք դեռ առաջ էլ, երբ մտածում էի քո մասին, քո շրթունքների մասին, ես միայն հիմա հասկացա, թե ինչ անհավատալի վայելք է, ինչպիսի՜ երանություն է իրեն հանձնել սիրած մարդուն։ Բայց ես չեմ ուզում վախենալ, չեմ ուզում զազանի զգացողություն։ Եվ հետո... սպասիր, թերևս իմ կողմը՝ սիրելիս, ես ակամայիդ կասեմ, դա ոնանի է... հետո՝ ես չեմ ուզում երեխա ունենալ։ Բա, ինչ զզվելի բան է։ Երեր-սպալի կին, քառասունութ ռուբլի, վեց երեխա, խանձարուրներ, աղքատություն... Օ, ի՜նչ սարսափ։

Ռոմաշովը տարակուսանքով նայեց նրան։

— Բայց չէ՞ որ դուք ամուսին ունեք... Ախր դա անխուսափելի է,— ասաց նա անվստահ։

Շուրոչկան բարձրաձայն ծիծաղեց։ Այդ ծիծաղում ինչ-որ ցնդղական տհաճ բան կար, որից Ռոմաշովի հոգուն ցուրտ դիպավ։

— Ռոմոչկա... օյ-օյ-օյ, ինչ հի-իմա-ա՜րն եք,— ծոր տալից նա Ռոմաշովին ծանոթ բարակիկ, մանկական ձայնով։— Մի՞թե դուք այդ բաները չեք հասկանում։ Չէ, ճիշտն ասացեք, չի՞ հասկանում։

Ռոմաշովը շփոթված ուսերը թոթվեց։ Նա կարծես անհարմար էր զգում իր միամտության համար։

— Ներեցեք... բայց ես պետք է խոստովանեմ... ազնի՛վ խոսք...

— Դե, որ այդպես է, աստված ձեզ հետ, պետք էլ չէ։ Ինչ մաքուրն եք, Ռոմոչկա։ Դե, ա՛չա, երբ մեծանաք, հավանաբար կմտաբերեք իմ խոսքերը։ Ինչ հնարավոր է ամուսնու հետ, անհնար է սիրած մարդու հետ։ Ախ, մի՛ մտածեք, խնդրեմ, դրա մասին։ Դա զզվելի է, բայց ի՞նչ արած։

Նրանք արդեն մոտենում էին գբոսայինչուքի վայրին։ Ծառերի հետևից երևում էր խարույկի բոցը։ Կրակը պատնեշող ծուռուտիկ բները թվում էին սև մետաղից ձուլված, և նրանց կողերին առկայծում էր կարմիր հեղհեղուկ լույսը։

— Իսկ եթե ինքս ինձ հավաքե՞մ,— հարցրեց Ռոմաշովը։ —Եթե ես հասնեմ նույն բանին, ինչ որ ուզում է ամուսի՞նդ, կամ ավելի շատ բանի՞։ Այդ ժամանա՞կ։

Շուրոչկան այտը պինդ հպեց նրա ուսին և պատասխանեց Լեանդուն.

— Այն ժամանակ՝ այո։ Այո, այո, այո...

Նրանք արդեն դուրս եկան մարգագետին։ Տեսանելի դարձավ ամբողջ խարույկը և մարդկանց սև կերպարանքները նրա շուրջը։

— Ռոմոչկա, հիմա վերջին բանը,— ասաց Ալեքսանդրա Պետրովնան շտապով, ձայնի մեջ թախիծ ու տագնապ։— Ես չէի ուզում փչացնել ձեր երեկոն և չէի ասում։ Լսեցեք, դուք այլևս չպետք է լինեք մեր տանը։

Ռոմաշովը կանգ առավ զարմացած, շշկլված։

— Իսկ ինչո՞ւ։ Օ, Սաշա՜...

— Գնանք, գնանք... Ես չգիտեմ, թե այդ ով է անում, բայց ամուսնուս պաշարում են անանուն նամակներով։ Նա ինձ ցույց չի տվել, այլ միայն հարևանցի ասել է այդ մասին։ Գրում են ինչ-որ կեղտոտ, գռեհիկ, նողկալի բան իմ և ձեր մասին։ Մի խոսքով, խնդրում եմ ձեզ, մեր տուն չգաք այլևս։

— Սա՜շա,— աղերսագին հառաչեց Ռոմաշովը, նրան պարզելով ձեռքերը։

— Ախ, դա ինձ համար էլ ցավալի է, սիրելիս, թանկագինս, իմ քնքո՜ւշ։ Բայց դա անհրաժեշտ է։ Եվ այսպես, լսեցեք. ես վախենում եմ, որ նա ինքը կխոսի ձեզ հետ այդ մասին։ Աղաչում եմ ձեզ, ի սեր աստծո, զուսպ եղեք։ Խոստացեք ինձ այդ։

— Լավ,— տխուր արտասանեց Ռոմաշովը։

— Դե, ահա և ամենը։ Մնաք բարով, իմ խեղճ, խղճո՜ւկս։ Տվեք ձեր ձեռքը։ Սեղմեցեք ամուր-ամուր, այնպես, որ ցավեցնեք։ Ահա այդպես... Օ՛յ... Հիմա մնաք բարով։ Մնաս բարով, իմ ուրախություն։

Խարույկին չհասած, նրանք բաժանվեցին։ Շուրոչկան գնաց ուղիղ վերև, իսկ Ռոմաշովը ցածից, շրջանց ճանապարհով, գետի երկայնքով։ Վինտը դեռ չէր ավարտվել, բայց նրանց բացակայությունը նկատված էր։ Համենայն դեպս Դիցը այնպես լրջորեն նայեց խարույկին մոտեցող Ռոմաշովին և այնպես անբնական զազրելի հազաց, որ Ռոմաշովն ուզեց նրա վրա մի վառվող ածխակոթ նետել։

Հետո նա տեսավ, թե ինչպես Նիկոլաևը թղթախաղը թողնելով վեր կացավ և, Շուրոչկային մի կողմ տանելով, երկար ինչ-որ բան էր ասում նրան զայրագին շարժումներով և չար դեմքով։ Շուրոչկան հանկարծ շտկվեց և նրան մի քանի խոսք ա-

սաց վրդովմունքի և արհամարհանքի անկրկնելի արտահայտությամբ։ Եվ այդ մեծ, ուժեղ մարդը հանկարծ հնազանդ կծկվեց և նրանից հեռացավ, զսպված, բայց չարությունը թաքցրած վայրի կենդանու տեսքով։

Շուտով զբոսախնջույքն ավարտվեց։ Գիշերը ցրտեց, և գետից խոնավություն փչեց։ Ուրախության պաշարը վաղուց սպառվել էր, և բոլորը ցրվում էին հոգնած, դժգոհ, հորանջները չթաքցնելով։ Ռոմաշովը կառքում նորից նստել էր Միխինա օրիորդների դիմաց և ամբողջ ճանապարհին լռում էր։ Նրա հիշողության մեջ կանգնած էին սև, հանդարտ ծառերը, և մուգ լեռը, և վերջալույսի արնաներկ շերտը նրա գագաթի վերև, և բուրավետ մուգ դալարի մեջ պառկած կնոջ սպիտակ կերպարանքը։ Բայց. համենայն դեպս, անկեղծ, խորունկ և սուր թախիծի միջով նա ժամանակ առ ժամանակ իր մասին մտածում էր պաթոսով.

«Նրա գեղեցիկ դեմքը պատել էր վշտի ամպը»։

15

Մայիսի մեկին գունդը դուրս եկավ ճամբար, որը ամեն տարի գտնվում էր միևնույն տեղում, քաղաքից երկու վերստ հեռու, երկաթուղագծի այն կողմը։ Ըստ կանոնադրության ճամբարային ժամանակաշրջանում կրտսեր սպաները պետք է ապրեին իրենց վաշտերի մոտ՝ փայտե բարաքներում, բայց Ռոմաշովը մնաց քաղաքային բնակարանում, որովհետև վեցերորդ վաշտի սպայական շենքը սարսափելի խարխլվել էր և սպառնում էր փուլ գալ, իսկ նրա վերանորոգման համար անհրաժեշտ գումարը չէր ճարվում։ Ստիպված էր լինում ավելորդ տեղը օրական չորս անգամ գնալ-գալ. առավոտյան պարապմունքին, հետո Նորից ետ, ակումբ՝ ճաշելու, ապա՝ երեկոյան պարապմունքի և դրսնից հետո նորից քաղաք։ Դա ջղայնացնում և հոգնեցնում էր Ռոմաշովին։ Ճամբարային կյանքի առաջին կես ամսում նա նիհարեց, սևացավ, և աչքերը փոս ընկան։

Ասենք, բոլորի համար էլ հեշտ չէր՝ թե՛ սպաների, թե՛ զինվորների։ Պատրաստվում էին մայիսյան զորատեսին և ոչ գութ գիտեին, ոչ հանգիստ։ Վաշտի հրամանատարները հոգնատանջ էին անում իրենց վաշտերը, վարժական հրապարակում երկու երեք ժամ ավելի պահելով։ Պարապմունքների ժամանակ ամեն կողմից, բոլոր վաշտերից ու դասակներից անընդհատ ապտակների շառաչ էր լսվում։ Հաճախ հեռվից, մի երկու հարյուր քայլ այն կողմ, Ռոմաշովը դիտում էր, թե ինչպես որևէ մոլեգնած վաշտապետ հերթով շրխկացնում էր իր բոլոր զինվորների դեմքերին ձախ թևից մինչև աջ։ Նախ՝ ձեռքի անձայն թափահարում և, մի վայրկյան անց միայն, հարվածի շոր ճայթյուն և նորից, ու նորից, ու նորից... Դրանում շատ սարսափելի և նողկալի բան կար։ Ենթասպաները դաժանորեն ծեծում էին իրենց ստորադրյալներին՝ բանավոր պատիժներին մի անհնազանդ սխալի համար, քայլելիս ոտքը սխալ գցելու համար, ծեծում էին արյունոտելու աստիճան, ատամներն էին թափում, ականջները խփելով պատռում էին թմբկաթաղանթները, բռունցքի հարվածներով տապալում էին գետին։ Ոչ ոքի մտքով չէր անցնում գանգատվել. ինչ-որ ընդհանուր հրեշավոր, չարագուշակ մղձավանջ էր վրա հասել. ինչ-որ անհիշելի հիպնոս էր տիրել գնդին։ Եվ այդ ամենը խորացնում էր ահավոր շոգը։ Մայիսն այդ տարի արտակարգ տոթակեզ էր։

Բոլորի նյարդերը լարվել էին ծայր աստիճան։ Սպայական ակումբում ճաշերի և ընթրիքների ժամանակ ավելի ու ավելի հաճախակի էին բռնկվում անհեթեթ վեճեր, պատճառաղուրկ վիրավորանքներ, կռիվներ։ Զինվորները սմքել և ապուշի տեսք էին ստացել։ Հանգստի հաղվադեպ բուպեներին վրաններից չէր լսվում ոչ կատակ, ոչ ծիծաղ։ Բայց և այնպես երեկոները, անուն-անուն կանչելուց հետո, նրանց ստիպում էին ուրախանալ։ Եվ նրանք, խումբ կազմած, անտարբեր դեմքերով՝ անկիրք թնդացնում էին՝

Ռուս զինվորի համար մին է,
Ռումբ և գնդակ ի՞նչ են որ,
Դրանց հետ նա մտերիմ է,
Դրանց նա շատ է սովոր։

Իսկ հետո հրամանով պարեղանակ էին նվագում, և Ֆելդֆեբելը հրամայում էր.

— Գրեգորաշ, Սկվորցով, սրջան մտեք։ Պարե՛ք, շան տղեք... Ուրախացե՛ք։

Նրանք պարում էին, բայց այդ պարի, ինչպես և երգի մեջ ինչ-որ փայտային, մեռած բան կար, որից մարդու լաց էր գալիս։

Միայն հինգերորդ վաշտն էր հնչտ ու ազատ ապրում։ Նա պարապմունքի էր դուրս գալիս մյուսներից մի ժամ ուշ, իսկ վերադառնում էր մի ժամ շուտ։ Այնտեղ բոլորը կարծես ընտրովի մարդիկ էին, կուշտ, ժիր, որոնք ամեն մի պետի աչքերին նայում էին իմաստավորված ու համարձակ հայացքով. նույնիսկ մունդիրներն ու վերնաշապիկները նրանց վրա նըստած էին մի տեսակ ավելի պճնագեղ, քան մյուս վաշտերում։ Նրանց հրամանատարն էր կապիտան Ստելկովսկին՝ մի տարօրինակ մարդ. ամուրի էր, ընդի համար բավական հարուստ, նա ինչ-որ տեղից ամեն ամիս մոտ երկու հարյուր ռուբլի էր ստանում. շատ անկախ բնավորության տեր՝ ընկերների հետ իրեն պահում էր շոր, ինքնամփոփ ու հեռու և ի լրումն՝ անառակ էր։ Նա գրավելով, իբրև աղտեղն իր մոտ էր վերցնում հասարակ ժողովրդից եկած ջահել, հաճախ անչափահաս աղջիկների, և մի ամիս հետո նրանց ճամփու էր դնում տուն, յուրովի առատաձեռն հատուցելով նրանց դրամով, և դա շարունակվում էր տարեցտարի, անհասկանալի կանոնավորությամբ։ Նրա վաշտում տուբերկուլոզից չէին սարքում, նույնիսկ չէին հայհոյում, թեև առանձնապես չէին էլ քնքշաբանում, և այնուհանդերձ նրա վաշտը իր սքանչելի արտաքին տեսքով և վարժվածությամբ չէր զիջի ոչ մի գվարդիական զորամասի։ Նա վերին աստիճանի օժտված էր համբերատար, սառնարյուն և վստահ համառությամբ և կարողանում էր դա հաղորդել իր ենթասպաներին։ Այն, ինչին մյուս վաշտերում ծեծի, պատիժների, գոռոցի ու իրարանցման միջոցով հասնում էին մի շաբաթում, նա հանգիստ կարողանում էր հասնել մեկ օրում։ Ընդամին նա ժլատորեն էր ծախսում բառերը և հազվադեպ էր ձայնը բարձրացնում, բայց երբ խոսում էր, զինվորները քարանում էին։ Ընկերները նրան անբարյացակամ էին վերաբերվում, իսկ զինվորները իսկապես սիրում էին. թերևս դա միակ օրինակն էր ամբողջ ռուսական բանակում։

Վերջապես հասավ մայիսի 15-ը, երբ համաձայն կորպուսի հրամանատարի հրամանի պետք է տեղի ունենար զորատեսը։ Այդ օրը բոլոր վաշտերում, բացի հինգերորդից, ենթասպաները մարդկանց արթնացրին առավոտյան ժամը 4-ին։ Ջնայած տաք առավոտին, քնած, հորանջող զինվորները դողում էին իրենց բաթանե վերնաշապիկների մեջ։ Վարդագույն անամպ առավոտի զվարթագին լույսի մեջ նրանց դեմքերը գորշ, ողորկ ու խղճուկ էին թվում։

Ժամը վեցին վաշտերում հայտնվեցին սպաները։ Գնդի ընդհանուր զորատեսը նշանակված էր ժամը տասին, բայց բացի Ստելկովսկուց ոչ մի հրամանատարի մտքով չանցավ զորատեսից առաջ մարդկանց հնարավորություն տալ, որ քունն առնեն, հանգստանան։ Ընդհակառակը, այդ առավոտ առանձնապես կրքոտ ու իրար անցած՝ գլուխներն էին մտցնում բանավոր գիտելիքները և հրաձգության խրատները, օդում առանձնապես թանձր էր կախված զազրախոս հայհոյանքը, և սովորականից ավելի հաճախակի էին տեղում հրոցներն ու քիթ ու բերանին հասցվող ապտակները։

Ժամը ինին վաշտերը հավաքվեցին ճամբարի առջևում, նրանից հինգ քայլ հեռու գտնվող վարժական հրապարակում։ Այնտեղ արդեն երկար ուղիղ գծով, կես վերստ տարածությամբ ձգված, կանգնել էին տասնվեց վաշտային ժելոններ՝ հրացաններին գույնզգույն դրոշիկներ ամրացրած։ Ժելոնների սպա Պորուչիկ Կովակոն՝ այսօրվա ելույթների հերոսներից մեկը, ձի հեծած ետ ու առաջ էր սլանում այդ գծի երկարությամբ, ուղղում էր այն, արշավում կատաղի բղավոցով, սանձերը բաց թողած, գլխաբաց ծոծրակին, ջանադրությունից ամբողջովին քրտնաթոլոլ և կարմրատակած։ Նրա թուրը սաստիկ բախվում էր ձիու կողերին, իսկ սպիտակ նիհար ձին, որ ծերությունից ամբողջովին խուլերով էր պատած և աչքին հատ ուներ, ցնցումներով շարժում էր կարճ պոչը և իր այլանդակ քառատրոփի տակով կրակոցի պես սուր, կտրուկ ձայներ էր արձակում։ Այսօր պորուչիկ Կովակոյից շատ բան էր կախված, նրա ժելոնների ցույց տված ուղղությամբ պետք է անբասիր ուղիղ շարք կազմեին բոլոր տասնվեց վաշտերը։

Ուղիղ տասից տասը բոպե պակաս ճամբարից դուրս եկավ հինգերորդ վաշտը։ Հաստատուն, արագ, լայն քայլով, որից համաչափ թնդում էր գետինը, ամբողջ գնդի աչքի առաջ անցան այդ հարյուր մարդը, բոլորը կարծես ընտրովի, ճարպիկ, կտրիճավարի, ուղիղ, բոլորը թարմ, մաքուր լվացած երեսներով, անշքոց գլխարկները խիզախորեն աջ ականջներին թեքած։ Կապիտան Ստելկովսկին, չափազանց լայն շալվար հագած փոքրամարմին, նիհարավուն մի մարդ, անփույթ և ոչ համաքայլ գնում էր աջ թևի կողքից, հինգ քայլ հեռավորությամբ, և աչ-

քերն ուրախ կկոցելով, գլուխը մերթ այն կողմը թեքելով, հետևում էր ուղղությանը։ Գումարտակի հրամանատար փոխգնդապետ Լեխը, որը, ինչպես և բոլոր սպաները, առավոտվանից գտնվում էր ջղային և անմիտ գրգռվածության մեջ, բղավոցով ուզեց հարձակվել նրա վրա հրապարակ ուշ դուրս գալու համար, բայց Ստելկովսկին սառնարյուն կերպով ժամացույցը հանեց, նայեց և չոր, գրեթե արհամարհաբար պատասխանեց.

— Հրամանում ասված է հավաքվել տասին։ Հիմա ժամը տասից պակաս է երեք րոպե։ Ես ինձ իրավունք չեմ համարում մարդկանց զուր տեղը հոգնատանջ անել։

— Ջը՛ր-խո-սեե՛լ,— աղաղակեց Լեխը, ձեռքերը թափահարելով և ձին կանգնեցնելով։— Խնդրեմ, էդ, լռել, երբ ձեզ նկատողություն են անում պաշտոնի գծով...

Բայց նա համենայն դեպս հասկացավ, որ իրավացի չէ, ուստի անմիջապես հեռացավ և շարացած հարձակվեց ութերորդ վաշտի վրա, որտեղ սպաները ստուգում էին ուսապարկերի վիճակը։

— Հե-է՛դ ինչ խայտառակություն է։ Էդ շուկա՞ եք սարքել։ Մանրավաճառի կրպա՞կ։ Էդ, որսի եք գնալու, շնե՞րն կերակրեք։ Առաջ ինչի՞ մասին էիք մտածում։ Հա՛-ագ-նը-վե՛լ։

Տասից քսաներորդ անց սկսեցին վաշտերը հավաստարել։ Դա երկարատև, հոգեմաշ և տանջալից զբաղմունք էր։ Մի ժելոնեներից մինչև մյուսը ձողերի վրա պիրկ ձգվեցին երկար պարաններ։ Առաջին շարքի յուրաքանչյուր զինվոր մաթեմատիկական ճշտությամբ թաթերի ծայրը անպայման պետք է կպցներ պարանին։ Դա էր շարային առանձնահատուկ շուքը։ Բայց այդ չեռ քիչ էր. պահանջվում էր, որ երկփեղկված թաթերի արանքում ղետեղվեր հրացանի կոթը և որ բոլոր զինվորների մարմնի թեքությունը միանման լիներ։ Եվ վաշտի հրամանատարները կաշվից դուրս էին գալիս, բղավելով. «Իվանով, տա՛ջ թեքիր իրանդ։ Բուրչենկո, աջ ուսդ քիչ էլ շրջիր դեպի դուրս։ Զախ ոտքդ ե՛տ։ Էլի»...

Տասն անց կես ժամանից գնդի հրամանատարը։ Նրա տակինը մի հսկա, գեղեցիկ, աշխետ ձի էր, ամբողջովին մուգ խալերով, չորս ոտքն էլ մինչև ծնկները սպիտակ։ Գնդապետ Շուլգովիչը ձիու վրա շատ ազդու, գրեթե վեհ տեսք ուներ, և հեծել էր շատ հաստատ, թեև խիստ հետևակավարի, ասպան-

դակները չափազանց կարճ։ Ողջունելով գնդին, նա բղավեց կորիճավարի, շինծու ուրախ տաքարյունությամբ.

— Բարև՛, քաջե-ևր՛...

Ռոմաշովը հիշեց իր շորրորդ դասակը և առանձնապես Ելենիկովի փխրուն, մանկական կազմվածքը և չկարողացավ ժպիտը զսպել. «Խոսք չկա, լա՛վ քաջեր են»։

Դիմավորման եղանակը նվագող երաժշտության հնչյունների ներքո դուրս բերին դրոշները։ Սկսվեց հոգնեցուցիչ սպասումը։ Հեռու առջևում, մինչև կայարան, որտեղից սպասում էին կորպուսի հրամանատարին, ձգվում էր նշանատունների շղթան, որոնք ազդանշաններով պետք է նախազգուշացնեին պետերի ժամանելու մասին։ Մի քանի անգամ կեղծ տագնապ բարձրացավ։ Գետնից արագ դուրս էին քաշում ձողերը պարաններով հանդերձ, գունդը ուղղվում, հավասարվում էր, ձգվում, քարանում սպասողական դրության մեջ, բայց անցնում էր մի քանի ծանր րոպե, և մարդկանց ներից թույլ էին տալիս ազատ կանգնել, միայն չփոխել թաթերի դիրքը։ Առջևում, զորաշարքից մոտ երեք հարյուր քայլի վրա, վառ խայտաբղետ բծերի պես երփնագունում էին կանացի զգեստներ, հովանոցներ ու գլխարկներ. այնտեղ կանգնել էին գնդի տիկնայք, որոնք հավաքվել էին շքերթը դիտելու։ Ռոմաշովը շատ լավ գիտեր, որ Շուրոչկան չկա այդ լուսավոր, ասես տոնական խմբում, բայց երբ նայում էր այնտեղ, ամեն անգամ ինչ-որ մի բան քաղցր տնքում էր սրտի մոտ, և տարօրինակ պատճառաղուրկ հուզմունքից նա ուզում էր հաճախակի շնչել։

Հանկարծ, քամու պես, շարքերով մեկ վախեցած տարածվեց մի հապճեպ, կարճ բառ. «Գալի՞ս է, գալի՞ս է»։ Բոլորի համար հանկարծ մի տեսակ պարզ դարձավ, որ հասել է իսկական, լուրջ բոպին։ Առավոտվանից չարչարված և ընդհանուր ջղայնոտությունից լարված զինվորները իրենք իրենց, առանց հրամանի, աճապարանքով հավասարվում էին, զգեստներն ուղղում և անհանգիստ հազում։

— Ջգա-ա՞ստ։ Ժելոնեները տե՛-ղերո՞ւմ, — հրամայեց Շուլգովիչը։

Աչքերը դեպի աջ շրջելով, Ռոմաշովը հեռվում դաշտի ամենահեռավոր ծայրում տեսավ փոքրիկ հեծյալների փոքրաթիվ խիտ մի խումբ, որոնք դեղնավուն փոշու թեթև քուլաների միջով արագ մոտենում էին զորաշարքին։ Շուլգովիչը խիստ և

ուղեշնչված դեմքով գնդի մեջտեղից հեռացավ առնվազն չորս անգամ ավելի հեռու, քան պահանջվում էր։ Ցուցամոլելով շարժուձևի ծանր գեղեցկությամբ, դեպի վեր ցցելով արծաթե մորուքը, գնդի սև, անշարժ զանգվածը դիտելով ահեղ, ուրախային և հանդուգն հայացքով, ամբողջ դաշտով մեկ տարածվող ձայնով երկարացրեց.

— Գու-ունդ, լը-սի-ի՜ր։ Պատվի՜...

Նա դիտմամբ երկար դադար տվեց, կարծես հրճվելով այդ հարյուրավոր մարդկանց վրա ունեցած իր հսկայական իշխանությամբ և ցանկանալով երկարաձգել այդ վայրկենական հրճվանքը, և հանկարծ, ճիգից ամբողջովին կարմրատակելով, վզի երակներն ուռցնելով, ամբողջ կրծքով թնդաց.

— ...ա՜ռ...

Մե՛կ-երկո՛։ Զեռքերը շրմփացին հրացանների փոկերին, փակաղակները զրնգացին, դիպչելով զոտիների վահանակներին։ Աջ թևից դիլ, ուրախ ու պարզորոշ տարածվեցին զիմավորման քայլերգի հնչյունները։ Ասես չարաճճի, ծիծաղկուն մանուկներ խմբով վազեցին աշխույժ սրնգափողերն ու կլարնետները, հաղթական ցնծությամբ ճչացին ու երգեցին բարձրաղաղակ պղնձափողերը, թմբուկի խուլ հարվածներն շտապեցնում էին նրանց փայլուն վազքը, և նրանց հետևից հասնել չկարողացող ծանր տրոմբոնները փաղաքուշ փնթփնթում էին թավ, հաղիստ, թավշյա ձայներով։ Կայարանում երկար, բարակ ու մաքուր սուլեց շոգեքարշը, և այդ նոր փափուկ հնչյունը ներհյուսվելով նվագախմբի ցնծուն պղնձյա հնչյուններին, միաձուլվեց նրա հետ որպես մի հիասքանչ, զվարթաղին ներդաշնակություն։ Ինչ-որ առույգ, խիզախ մի ալիք հանկարծ գրկեց Ռոմաշովին, թեթև ու քաղցր բարձրացրեց իր վրա։ Խորաթափանց և ուրախ հստակությամբ նա միանգամից տեսավ և՛ տապից գժգունած երկնի կապույտը, և՛ օդում դողացող՝ արևի ոսկե լույսը, և՛ հեռավոր դաշտի տաք կանաչը, ասես նա առաջ չէր նկատել դրանք, և հանկարծ ինքն իրեն զգաց ջահել, ուժեղ, ճարպիկ, հպարտ այն գիտակցությամբ, որ ինքն էլ պատկանում է մարդկանց այդ գեղակառույց, անշարժ, հզոր զանգվածին, որ խորհրդավոր կերպով միմյանց են զոդված մի անտեսանելի կամքով...

Մերկացրած սուրը ուղիղ դեմքի մոտ պահած, Շուլգովիչը ծանր քառատրոփով ընդառաջ արշավեց։

Երաժշտության կոպիտ-ուրախ, ուղղակիորեն հնչյունների միջից լսվեց գեներալի հանդարտ, կլոր ձայնը.

— Ողջո՛ւյն, առաջին վաշտ։

Զինվորները միահամուռ, տքնաջան ու բարձր ողջունեցին։ Եվ նորից կայարանում շոգեքարշը սուլեց, այս անգամ ընդհատ, կարճ և ասես հանդուգն։ Հերթականությամբ ողջունելով վաշտերին, կորպուսի հրամանատարը զանգաղ անցնում էր ճակատի գծով։ Ռոմաշովն արդեն պարզորոշ տեսնում էր նրա ծանր, ճարպակալած մարմինը, կիսակի խոշոր լայնակի ծալքերը կրծքի տակ և հաստ փորի վրա, և գինվորների կողմն ուրած խոշոր քառակուսի դեմքը, և կարմիր գիհանշանները պճնագեղ վալարապը գեղեցիկ մոխրագույն ձիու վրա, և մարտինգալի ոսկրե օղակները, և տոնակրքունի լրջեն սապոգի մեջ ամփոփված փոքրիկ ոտքը։

— Ողջո՛ւյն, վեցերորդ։

Ռոմաշովի շուրջը մարդիկ բղավեցին չափազանցրած բարձրը, ասես շնչակտուր լինելով սնփական ուղղակիից։ Գեներալը վստահ ու անփույթ նստել էր ձիուն, իսկ սա, արյունակալած բարի աչքերով, վիզը գեղեցիկ կորացրած, հյութեղ խրթխրթացնելով սանձի երկաթե զանդանավանդը և գնչից թեթև սպիտակ փրփուր ցայտելով, դնում էր մանրիկ, պարզ, ճկուն քայլով. «Նրա քունքերն ալեխառն են, իսկ բեղերը՝ սև, երևի ներկված են»,— արագ անցավ Ռոմաշովի մտքով։

Ոսկե ակնոցի միջով կորպուսի հրամանատարը իր մուգ, բոլորովին ջահել, խելացի և ծաղրալի աչքերով ուշադիր նայում էր իրեն սեղեռած ամեն մի զույգ աչքի։ Ահա նա հավասարվեց Ռոմաշովին և ձեռքը տարավ դեպի գլխարկի շքոցը։ Ռոմաշովը կանգնել էր ամբողջովին ձգված, ոտքերի մկանները լարված, ցավ զգալու աստիճան ամուր սեղմելով ցած թողած թրի երախակալը։ Անձնվեր, երջանիկ հիացմունքից հանկարծ սարսռացին ու կոշտ փշաքաղվեցին նրա ձեռքերի ու ոտքերի արտաքին մասերը։ Եվ, անքթիթ նայելով կորպուսի հրամանատարի դեմքին, նա ըստ իր միամիտ, մանկական սովորության, ինքն իրեն մտածեց. «Մարտական գեներալի աչքերը զոհունակությամբ կանգ առան երիտասարդ պոդպորուչիկի բարեկազմ, նիհարոտ կերպարանքի վրա»։

Այսպես կորպուսի հրամանատարը հերթով անցավ բոլոր վաշտերը, ողջունելով յուրաքանչյուրին։ Նրա հետևից խառ-

Եվ Ռոմաշովը անորոշ նախանձով ու անբարյացակամությամբ զգաց, որ այդ մեծամիտ մարդիկ ապրում են ինչ-որ առանձնահատուկ, գեղեցիկ, իր համար անհասանելի, բարձր կյանքով։

Ինչ-որ մեկը հեռվից նշան արավ, որ երաժշտությունը լռի։ Կորպուսի հրամանատարը խոշոր վարգով արշավում էր գնդի գծի երկայնությամբ ձախ թևից դեպի աջը, և նրա հետևից այլաղանորեն հոլովող, խայտաբղետ դարդարուն շղթայի պես ձգվել էր նրա շքախումբը։ Գնդապետ Շուլգովիչը ձին քշեց դեպի առաջին վաշտը։ Ջնելով իր աշխատ ձիու սանձերը, ծանր մտքմբեր ետ գցած, նա բղավեց այն անբնական մոլեգին, սարսափած և խուսուս ձայնով, որով հրդեհի ժամանակ բղավում են հրշեջավագները։

— Կապիտան Օսա՛դչի։ Դուրս բերեք վա՛շտը։ Արա՛գ...

Գնդի հրամանատարի և Օսադչու միջև բոլոր պարապմունքների ժամանակ տեղի էր ունենում ձայների սիրային մրցություն։ Եվ հիմա մինչև իսկ տասնվեցերորդ վաշտում լսելի էր Օսադչու պճնամոլ մետաղաձայն հրամանը։

— Վաշտ, հրացանն ո՛ւ-սի՛ն։ Մեջտեղին հավասար, քայլով մա՛րշ։

Նրա վաշտում երկարատև ու համառ աշխատանքի միջոցով համաքայլ գնալիս մշակվել էր մի առանձնահատուկ, չափազանց հավվագյուտ և հաստատուն քայլ, ըստ որում զինվորները խիստ վեր էին բարձրացնում ոտքերը և ուժով նետում գետնին։ Դա ստացվում էր ադմկալի և աղդու և մյուս վաշտերի հրամանատարների նախանձի առարկան էր հանդիսանում։

Բայց առաջին վաշտը դեռ հիսուն քայլ էլ չէր արել, որ հնչեց կորպուսի հրամանատարի անհամբեր աղաղակը.

— Սա ի՞նչ բան է։ Կանգնեցրե՛ք վաշտը։ Կանգնեցրե՛ք։ Վաշտի հրամանատար, համեցեք ինձ մոտ։ Այս ի՞նչ եք ցույց տալիս այստեղ։ Ինչ է սա, թաղման թափո՞ր, կերոններով ե՞րթ, շարժական զինվորիկնե՞ր, երեք տեմպով համաքա՞յլ։ Հիմա, կապիտան, նիկոլայևյան ժամանակները չեն, երբ ծառայում էին քսանհինգական տարի։ Որքան ավելորդ օրեր եք վատնել այս բալետախմբի վրա։ Թանկագի՛ն օրեր։

Օսադչին կանգնել էր նրա առաջ բարձրահասակ, անշարժ, մռայլ, մերկացրած թուրը ցած թողած։ Գեներալը փոքր-ինչ լռեց և շարունակեց ավելի հանգիստ, թախծոտ և ծաղրական արտահայտությամբ։

— Ով գիտե, մարդկանց հոգին հանել եք քարշ ցնելու՞ է՞խ, դուք, Անիկա-ռազմիկներ։ Իսկ եթե ձեզ հարցնելու լինենք... դե ահա, խնդրեմ, ինչպե՞ս է այս կտրիճի ազգանունը։

— Իգնատի Միխայլով, ձերդ գերազանցություն,— անտարբեր, զինվորական անարտահայտիչ թավ ձայնով պատասխանեց Օսադչին։

— Լավ։ Իսկ ի՞նչ գիտեք նրա մասին։ Ամուրի՞ է նա, ամուսնացա՞ծ է, երեխաներ ունի՞։ Գուցե այնտեղ, գյուղում, մի դա՞րդ ունի, դժբախտությո՞ւն, կարի՞ք։ Հը՞։

— Չեմ կարող գիտենալ, ձերդ գերազանցություն։ Հարյուր հոգի են։ Դժվար է միտքը պահել։

— Դժվա՞ր է միտքը պահել,— դառնությամբ կրկնեց գեներալը։— Ա՛խ, պարոնայք, պարոնայք։ Ասված է Բիբլիում՝ ոգին մի՛ մարեք, իսկ դուք ի՞նչ եք անում։ Այսր այս ամենասրբազան. գորշ անասունը, երբ բանը մարտին հասնի, ձեզ իր կրծքով կծածկի, իր ուսերի վրա ձեզ դուրս կբերի կրակի միջից, սառնամանեքին ձեզ իր ծակոտած շինելով կծածկի, իսկ դուք՝ չե՞մ կարող գիտենալ։

Եվ, վայրկենաբար գրգռվելով, ջղայնորեն ու առանց կարիքի սանձը քաշքշելով, գեներալը Օսադչու գլխի վրայով բղավեց գնդի հրամանատարի վրա.

— Գնդապետ, հեռացրե՛ք այս վաշտը։ Իսկի չեմ էլ նայի։ Հեռացրեք, իսկույն հեռացրեք։ Ծաղրածունե՛ր։ Խավաքարտե խեղկատակնե՛ր։ Թուջե ուղեղնե՛ր։

Դրանից էլ սկսվեց գնդի տապալումը։ Զինվորների հոգնածությունն ու վախեցած լինելը, ենթասպաների անիմաստ դաժանությունը, սպաների անհոգի, քարացած ու անփույթ վերաբերմունքը դեպի ծառայությունը, այս ամենը պարզ, բայց ամոթալի կերպով դրսևորվեց զորատեսի ժամանակ։ Երկրորդ վաշտում մարդիկ չգիտեին «Հայր մեր»-ը, երրորդում սպաներն իրենք էին շփոթվում ցրված շարք կազմելիս, չորրորդում՝

հրացանային վարժությունների ժամանակ մի զինվոր ուշագնաց եղավ։ Իսկ որ գլխավորն է, ոչ մի վաշտում գաղափար չունեին հեծելազորի անսպասելի գրոհների դեմ կիրառվող եղանակների մասին, թեև պատրաստվում էին այդ գրոհներին և գիտեին դրանց էությունը։ Այդ եղանակները հնարել և գործածության մեջ էր դրել հենց կորպուսի հրամանատարն ինքը և կայանում էին նրանում, որ պետք է արագ վերադասավորվեին, մի բան, որ ամեն անգամ պետերից պահանջում էր հարամտություն, արագ ըմբռնողություն և անձնական լայն նախաձեռնություն։ Եվ այդ եղանակների ժամանակ հերթով լսվում էին բոլոր վաշտերը, բացի հինգերորդից։

Վաշտը դիտելուց հետո, գեներալը շարքից հեռացնում էր բոլոր սպաներին ու ենթասպաներին և մարդկանց հարցնում, թե արդյոք գո՞հ են ամեն ինչից, ստանո՞ւմ են կանոնադրությամբ նախատեսված ամեն բան, գանգատներ ու բողոքներ չունե՞ն։ Բայց զինվորները միահամուռ թնդացնում էին, թե իրենք «ճիշտ այդպես, ամեն ինչից գոհ են»։ Երբ հարցնում էին առաջին վաշտին, Ռոմաշովը լսեց, թե ինչպես իր հետևում իր վաշտի ֆելդֆեբել Ռիդնան շշացող ու սպառնագին ձայնով ասաց.

— Հլա թող մեկն ու մեկը մի գանգատ հայտնի՞։ Հետո ես երան էնպիսի՞ գանգատ հայտնեմ որ։

Դրա փոխարեն իրեն առավել հիանալի ցույց տվեց հինգերորդ վաշտը։ Կտրիճավարի, թարմ մարդիկ վաշտային վարժություններն անում էին այնպիսի թեթև, առույգ ու աշխույժ քայլով, այնպես ճարպիկ ու ազատ, որ թվում էր զորատեսը նրանց համար ոչ թե սարսափելի քննություն է, այլ ինչ-որ ուրախ և բոլորովին հեշտ զվարճալիք։ Գեներալը դեռ խոժոռվում էր, բայց նրանց նետեց. «լավ է, տղերք»,— այդ առաջին անգամն էր ամբողջ զորատեսի ընթացքում։

Հեծելազորի գրոհների դեմ կիրառվող եղանակներով Ստելկովսկին վերջնականապես նվաճեց կորպուսի հրամանատարին։ Անակնկալ արագ ֆրազներով գեներալն ինքն էր նրան ցույց տալիս հակառակորդին. «Հեծելազորն աջից, ութ հարյուր քայլ», և Ստելկովսկին, առանց մի վայրկյան իսկ շփոթվելու, անմիջապես ճշգրիտ ու հանդարտ կանգնեցնում էր վաշտը, այն շրջում էր դեմքով դեպի սրարշավ սլացող երևակայական հակառակորդը, ժամանակը խնայելով, միակցում էր դասակները.

առաջավոր դասակը ծնկաչոք, երկրորդը՝ [illegible], [illegible] նշանոցը, երկու կամ երեք երևակայական հրամանարկ [illegible] ու ապա հրամայում. «Պատե՛ր»— «[illegible] լավ է, [illegible]ներ։ Շնորհակա՛լ եմ, զվարճալիք,— գոհում էս գեներալը։

Հարցաքննումից հետո վաշտը նորից շարվեց [illegible] ված շարքով։ Բայց գեներալը հապաղում էր ազատ արձակել նրան։ Դանդաղ ձիավարելով ճակատի երկայնությամբ, նա փոքրոզող հայացքով, առանձնահատուկ հետաքրքրությամբ, դիտում էր զինվորների դեմքերը, և նույը, գոհունակ ժպիտը սենյակի տակից փայլում էր ծանրացած, ուռած կոպերով նրա խելացի աչքերում։ Հանկարծ նա ձին դանդիեցրեց և շրջվեց եռ, դեպի իր շտաբի պետը.

— Չէ, հլա մի նայեցե՛ք, գնդապետ, դրանց մուրճերին։ Դրանց կարկանդակո՞վ եք կերակրում, ինչ է, կապիտան։ Ինչ, էլ, դու, հաստամորուք,— եղանի շարժումով ցույց տվեց նա մի զինվորի,— ազդանունդ Դարբի՞ն է։

— Ճիշտ էդպես, ձերդ գերազանցություն, Միխայլա Բորիչյուկ,— մանկական գոհունակ ժպիտով, ուրախ բացականչեց զինվորը։

— Մի տե՛ս, իսկ ես կարծում էի Դարբին է։ Է, ուրեմն սխալվել եմ,— կատակեց գեներալը։— Ինչ արած։ Չհաջողվեց ...— ավելացրեց նա մի ուրախ, ցինիկ նախատաստություն։

Զինվորի դեմքը բոլորովին ճառագեց հիմար և ուրախ ժպիտից։

— Բնավ ոչ, ձերդ գերազանցություն,— ավելի բարձր բղավեց նա։— Էնպես որ մեր գեղում դարբին արհեստ էի բռնեցնում։

— Ա՜, տեսնում ես,— գեներալը բարեկամաբար գլխով արավ։ Նա հպարտանում էր զինվորին ճանաչելու իր կարողությամբ։— Ինչ է, կապիտան, նա լա՞վ զինվոր է։

— Շատ լավ։ Իմ բոլոր զինվորներն էլ լավն են,— պատասխանեց Ստելկովսկին իր սովորական, ինքնավստահ եղանակով։

Գեներալի հոնքերը բարկությամբ ցնցվեցին, բայց շրթունքները ժպտացին, և դրանից նրա ամբողջ դեմքը դարձավ բարի և ծերունավարի սիրուն։

— Է, դուք, արդեն կապիտան, կարծես թե էն իքը... Չէ՞ որ կան առույժի ենթարկվածներ։

— Ո՛չ մեկը, ձերդ գերազանցություն։ Հինգերորդ տարին է՝ ոչ մեկը։

Գեներալը հանդարտորեն թեքվեց թամբի վրա և Ստելկովսկուն մեկնեց չկոճկված սպիտակ ձեռնոցը հագին իր թմբլիկ ձեռքը։

— Ձեզ խարին շնորհակալություն, հարազատս,— ասաց նա դողդոջուն ձայնով, և նրա աչքերը փայլեցին արցունքից։ Նա, ինչպես և բենթավուն մարտական շատ գեներալներ, սիրում էր երբեմն լաց լինել։— Շնորհակալություն, մխիթարեցիք ծերունուս։ Շնորհակալ եմ, զյուցազուններ,— եռանդով գոչեց նա վաշտին։

Ստելկովսկու թողած լավ տպավորության շնորհիվ վեցերորդ վաշտի զորամասն էլ համեմատաբար բարեհաջող անցավ։ Գեներալը չէր գովում, բայց և չէր նախատում։ Սակայն վեցերորդ վաշտն էլ խայտառակվեց, երբ զինվորներն սկսեցին փայտե շրջանակների մեջ դրած ծղոտե խրամիլակները սվինահարել։

— Այդպես չէ, չեղա՛վ, չեղա՛վ, չեղա՛վ,— տաքանում էր կորպուսի հրամանատարը, թամբի վրա կուչ ու ձիգ անելով։ —Ինչպես այդպես չէ։ Եղբայրներ, լսեցեք ինձ։ Խրիր սրանից, ուրիշ մեկանը, սվինը մինչև փողը։ Կատաղի՛ր։ Դու ոչ թե հաց ես դնում փուռը, այլ Բենամուդ ես խոցում...

Մյուս վաշտերը տապալվում էին մեկը մյուսի հետևից։ Կորպուսի հրամանատարը նույնիսկ դադարեց հուզվելուց և իր բնորոշ, դիպուկ նկատողություններն անելուց, և ձիուն նրստել էր լուռ, կքված, ձանձրույթ արտահայտող դեմքով։ Տասնհինգերորդ և տասնվեցերորդ վաշտերը նա չնայեց էլ, այլ միայն ձեռքը հոգնած թափահարելով, զզվանքով ասաց.

— Դե, սրանք... ինչ-որ օրապակասներ են։

Մնում էր շքերթով անցնելը։ Ամբողջ գունդը միացրին որպես մի նեղ կիսավաշտանոց փակ շարասյուն։ Նորից առաջ ցատկեցին ժլատները և ձգվեցին աջ թևի դիմաց, նշելով շարժաերթի գիծը։ Անտանելի շոգ էր։ Մարդիկ ուժասպառ էին լինում ոտքից և փոքր տարածության վրա կուտակված սեփական մարմինների ծանր գոլորշիացումներից, սապոգների, մախորկայի, մարդկային անմաքուր մաշկի և ստամոքսի մարսած սև հացի հոտից։

Բայց շքերթից առաջ բոլորն առույգացան։ Սպաները գրեթե խնդրում էին զինվորներին. «Եղբայրներ, աշխատեցեք կորպուսի հրամանատարի առջևից կտրիճավարի անցնել։ Ձեռայտառակեք։» Եվ ստորաբաժանումներին ուղղված պետերի այդ կոչի մեջ այժմ թափանցում էր ինչ-որ շողոքորթող, անվստահ և մեղավոր շեշտ։ Կարծես թե կորպուսի հրամանատարի պես անհասանելի բարձր անձնավորության ցասումը ընդհանուր ծանրությամբ հանկարծ ճզմել էր թե՛ սպային, թե՛ զինվորին, դիմապրկել և հավասարեցրել էր նրանց և դարձրել միատեսակ վախեցած, շփոթված ու խղճալի։

— Գունդ, զգաա-ա՛ստ... Երաժիշտներ, դեպի դի՞ծը,— հեռվից լսվեց Շուլգովիչի հրամանը։

Եվ մեկ ու կես հազար մարդիկ մի վայրկյան շարժվեցին խուլ, հապճեպ քրմմնջոցով ու հանկարծ անշարժ լռեցին, ջղային ու զգաստ ձգվելով։

Շուլգովիչը չէր երևում։ Նորից զլորվելով հասավ նրա հնչեղ, գեղգեղուն ձայնը.

— Գունդ, հրացանն ո՛ւ-սի՛ն...

Ջորս զումարտակային հրամանատարները, ձիերի վրա շրջվելով դեպի իրենց զորամասերը, խառնիխուռն հրաման տվին.

— Գումարտակ, հրացանն ո՛ւ...— և լարված աչքերը սևեռեցին գնդի հրամանատարի վրա։

Ուր-որ հեռու՝ գնդի առջևում, օդում փայլատակեց ու ցած իջավ մի թուր։ Դա ընդհանուր հրամանի ազդանշան էր, և չորս զումարտակային հրամանատարները միաժամանակ գոչեցին.

— ...սի՛ն։

Գունդը խուլ շրխկոցով, աններդաշնակ, հրացանները նետեց ուսին։ Ինչ-որ տեղ սվիններ շաչեցին։

Այն ժամանակ Շուլգովիչը չափազանցրած ծոր տալով բառերը, հանդիսավոր, խստաշունչ, ղվարթ ու բարձրաձայն, իր հսկա թոքերի ամբողջ կարողությամբ հրաման տվեց.

— Շը- քեր-թով անցնի՛-լու-ո՛ւ...

Հիմա արդեն բոլոր տասնվեց վաշտի հրամանատարները, աններդաշնակ ու կեղծ տարբեր ձայներով երգեցին.

— Շքերթով անցնելո՛ւ։

Եվ ինչ-որ տեղ՝ շարասյան պոչում, մի ետ մնացած վաշտապետ բղավեց արդեն մյուսներից հետո փաթ տվող լեզվով ու ամաչկոտ, կիսատ թողնելով հրամանը։

— Շքային...— և իսկույն երկչոտությամբ ընդհատեց։

— Կիսա-վաշ-տերո՞վ,— որոտաց Շուլգովիչը։

— Կիսավաշտերո՞վ,— անմիջապես խոսքը խլեցին վաշտապետները։

— Երկդասակային տարածո՞ւ-թյա՞մբ,— գեղգեղում էր Շուլգովիչը։

— Երկդասակային տարածությա՞մբ...

— Աջ հավ-սա՞ր։

— Աջ հավսա՞ր— կրկնեց բաղմաձայն խայտաբղետ արձագանքը։

Շուլգովիչն սպասեց երկու-երեք վայրկյան և ընդհատ նետեց.

— Առաջին կիսավաշտ, քայլո՞վ։

Նոր հանելով խիտ շարքերի միջով, ցած փովելով մինչև գետին, առջևում հնչեց Օսադչու թանձրաձայն հրամանը.

— Առա-ջին կիսավաշտ։ Աջ հավսա՞ր։ Քայլո՞վ... մա՛րշ։

Առջևում միահամուռ թնդացրին գնդի թմբկահարները։ Հետևից երևում էր, թե ինչպես սվիններով թեք անտառից զատվեց մի երկար, ուղիղ գիծ և համաչափորեն ճոճվեց օդում։

— Երկրորդ կիսավաշտ, ուղի՞ղ,— լսեց Ռոմաշովը Աբչակովսկու զիլ, կանացի ձայնը։

Եվ սվիններով մի ուրիշ գիծ, հեռանալով, սկսեց ճոճվել։ Թմբուկների ձայնը գնալով դառնում էր ավելի բութ և կամացուկ, ասես իջնում էր ցած, գետնի տակ, և հանկարծ տրորելով ու տապալելով նրան, վրա պրծավ նվագախմբի ուրախ, շուշղողուն, հատու գեղեցիկ ալիքը։ Այդ գնդի երաժշտությունն էր, որ տեմպը բռնել էր, և ամբողջ գունդը միանգամից լենդանացավ ու ձգվեց. գլուխները վեր բարձրացան, մարմինները շրջվեցին վայելչատեսորեն, պայծառացան գորշ, հոգնած դեմքերը։

Մեկը մյուսի հետևից հեռանում էին կիսավաշտերը, և ամեն անգամ ավելի վառ, գրգռված ու զվարթաշին էին դառնում գնդի քայլերգի հնչյունները։ Ահա հեռացավ առաջին գումարտակի վերջին կիսավաշտը։ Փոխգնդապետ Լեխը Օլիզարի ուղեկցությամբ առաջ շարժվեց մի ոսկրոտ աշխետ ձիու վրա։ Երկուսի թրերն էլ ձեռքի դաստակի հետ դեմքի մակարդակին «վեր պահած»։ Լսվում է Ստելկովսկու հանգիստ, և ինչպես միշտ, անփույթ հրամանը։ Սվիններից վեր սահուն շարժվեց դոշի կոթը։ Առաջ անցավ երկայնաբազուկ, խոշոր, ծեր, կրծած, տրտում կապիկի նմանվող, թորշոմած կապիտան Սլիվան, շարասյունը դիտելով ջրակալող չոռած աչքերով։

— Առ-ռաջին կիսավաշտ... ուղ-ղի՞ղ։

Թեթև ու ճարպիկ քայլերով իր կիսավաշտի առաջ է դուրս գալիս Ռոմաշովը։ Ինչ-որ երանելի, գեղեցիկ ու հպարտ բան է աճում նրա հոգում։ Նա աչքերն արագ սահեցնում է առաջին շարքի դեմքերի վրայով։ «Հին թրամարտիկը բազեի հայացքը պտտեցրեց իր վետերանների վրա».— անցնում է նրա մտքով այս փքուն ֆրազը այն ժամանակ, երբ ինքը երգեցիկ ձայնով կտրիճավարի ծոր է տալիս։

— Երկրորդ կիսավա-ա՞շտ...

«Մե՛կ երկո՛»,— մտովի հաշվում է Ռոմաշովը և տակտ է պահում կոշիկների թաթով միաչ։ «Պետք է ձախ ոտքից սկսել։ Ձա՛խ, ա՛ջ»։ Եվ երջանիկ դեմքով, գլուխը ետ դցած, նա բղավում է ամբողջ դաշտով մեկ զրնգացող տենորով.

— Ուղի՞ղ։

Եվ, արդեն շրջվելով մի ոտքի վրա, ասես զսպանակի վրա, նա առանց ետ դառնալու, ավելացնում է երգաձայն, երկու տոնով ցած.

— Աջ հավ-սա՞ր։

Բուպեի գեղեցկությունը արբեցնում է նրան։ Մի վայրկյան նրան թվում է, թե այդ երաժշտությունը նրան խփում է այնպես շանթող, կուրացուցիչ լույսի ալիքներով և որ պղնձե, ցնծալի աղաղակները թափվում են վերևից, երկնքից, արևի միջից։ Ինչպես և քիչ առաջ, հանդիպման ժամանակ մի քաղցր դողդոջուն սարսուռ է անցնում նրա մարմնով և մաշկը դարձնում կոշտ, և մազերը բարձրացնում ու շարժում նրա գլխին։

Միահամուռ, երաժշտության տակտով բղավեց հինգերորդ վաշտը, պատասխանելով գեներալի գովեստին։ Ազատվելով մարդկային մարմիններից կազմված կենդանի պատնեշից, ասես ուրախանալով ազատության համար, ավելի բարձրաձայն ու զվարթ ընդառաջ վազեցին Ռոմաշովին քայլերգի վառ հնչյունները։ Հիմա պոդպորուչիկը բոլորովին որոշակի տեսնում է առջևից և դևալի աջ գորշ ձի հեծած գեներալի ծանր մարմինը, նրա հետևում անշարժ կանգնած շքախումբը, իսկ ավելի հեռվում խայտաբղետ խումբը կանացի զգեստների, որոնք միջօրեի շլացուցիչ լույսի տակ թվում են ինչ-որ հեքիաթային վառվող ծաղիկներ։ Իսկ ձախ կողմում պսպղում են նվագախմբի երգող

ոսկե փողերը, և Ռոմաշովն զգում է, որ գեներալի և երաժշտության միջև ձգվեց անտեսանելի կախարդական մի թել, որի վրայով անցնելը և՛ ուրախալի է, և՛ահազդու։

Բայց առաջին կիսավաշտը արդեն ոտք դրեց գիծը։

— Լա՛վ է, տղերք,— լսվում է կորպուսի հրամանատարի գոհունակ ձայնը։— Ա՜-ա՜-ա՜-ա՜,— բացականչում են զինվորները բարձր, երջանիկ ձայնով։ Ավելի բարձրաձայն են առաջ խուժում երաժշտության հնչյունները։ «Օ, սիրելի՜ս,— խանդաղատանքով մտածում է Ռոմաշովը գեներալի մասին։— Խելո՜ք»։

Հիմա Ռոմաշովը մենակ է։ Սահուն և առաձիգ, ոտները հաղիվ գետնին կպցնելով, նա մոտենում է նվիրական գծին։ Նա գլուխը հանդգնորեն դեպի ետ է գցել, և հպարտ մարտահրավեր շրջել դեպի ձախ։ Նրա ամբողջ մարմնում թեթևության ու ազատության այնպիսի զգացողություն կա, որ կարծես թռչելու անսպասելի ընդունակություն է ստացել։ Եվ, իրեն գիտակցելով ընդհանուր հիացմունքի առարկա, ամբողջ աշխարհի սքանչելի կենտրոն, ինչ-որ վարդագույն, հիասքանչ երազի մեջ նա ինքն իրեն ասում է.

«Նայեցեք, նայեցեք, այդ Ռոմաշովն է գալիս»։ «Կանանց աչքերը փայլում էին հիացմունքից»։ Մե՛կ, երկո՛ւ, ձա՛խ... «Կիսավաշտի առջևից սիգաճեմ քայլվածքով անցնում էր գնդեցիկ ջահել պոդպորուչիկը»։ Ձա՛խ, ա՛ջ։ «Գնդապետ Շուլգովիչ, ձեր Ռոմաշովը ուղղակի հրաշք բան է,— ասաց կորպուսի հրամանատարը։— Ես կուզենայի, որ նա իմ համհարզը լիներ»։ Ձա՛խ...

Եվս մի վայրկյան, ևս մի ակնթարթ, և Ռոմաշովը կտրում-անցնում է հմայված գիծը։ Երաժշտությունը հնչում է խելահեղ, հերոսական, հրաբորբ ցնծությամբ։ «Հիմա կգովի»,— մտածում է Ռոմաշովը, նրա հոգին լի է տոնական շափաղով։ Լսվում է կորպուսի հրամանատարի ձայնը, ահա Շուլգովիչի ձայնը, էլի ինչ-որ մարդկանց ձայներ... «Իհարկե, գեներալը գովեց, բայց ինչո՞ւ զինվորները չէին պատասխանում։ Մեկը բղավում է հետևից, շարքերից... Ի՞նչ է պատահել»։

Ռոմաշովը ետ նայեց և սփրթնեց։ Նրա ամբողջ կիսավաշտը երկու ուղիղ, գեղաշար գծի փոխարեն ներկայացնում էր այլանդակ, դեպի ամեն կողմ ծռմռվող, ոչխարի հոտի պես կուտակված մի ամբոխ։ Դա պատահել էր նրանից, որ պոդ-

պորուչիկը, արբեցած իր ոգևորությամբ և իր խանդավառ երազանքներով, ինքն էլ չէր նկատել, թե ինչպես քայլ առ քայլ մեջտեղից շարժվում էր դեպի աջ, միաժամանակ նեղում էր կիսավաշտին, և, վերջապես, հայտնվեց նրա աջ թևում, տրորելով ու խախտելով ընդհանուր շարժումը։ Այդ բոլորը Ռոմաշովը տեսավ և հասկացավ մտքի պես կարճ մի ակնթարթում, այնպես, ինչպես և տեսավ շարքային զինվոր Խլեբնիկովին, որը միայնակ քարշ էր գալիս քսան քայլ հեռու, շարասյուն հետևից, հենց գեներալի աչքի առաջ։ Նա ընկել էր քայլելիս և հիմա, ամբողջովին փոշեթաթախ, աշխատում էր հասնել իր կիսավաշտին, հանդերձանքի ծանրության տակ ցած խոնարհված, կարծես շորեքթաթ վազելով, մի ձեռքով հրացանի մեջտեղից բռնած, իսկ մյուսով անօգնական կերպով քիթը սրբելով։

Ռոմաշովին հանկարծ թվաց, թե մայիսյան շողշողուն օրը միանգամից խավարեց, որ իր ուսերին ընկավ ավազարջի պես մեռած, օտար մի ծանրություն, և որ երաժշտությունն սկսեց նվագել խուլ ու ձանձրալի։ Եվ ինքն իրեն էլ զգաց փոքրիկ, թույլ, տգեղ, ալարկոտ շարժումներով, ծանր, անշնորհք փաթ եկող ոտներով։

Արդեն սրաբեջավ նրան էր մոտենում գնդի համհարզը։ Տյոդորովսկու դեմքը կարմրատակած և աղճատված էր շարությունից, ներքևի ծնոտը ցնցվում էր։ Նա խեղդվում էր ցասումից և սրագ ծիավարելուց։ Դեռ հեռվից նա սկսեց կատաղի բղավել, շնչասպառ լինելով և բառերից խեղդվելով։

— Պոդպորուչիկ... Ռոմաշով... Գնդի հրամանատարը ձեզ հայտարարում է... ամենախիստ նկատողություն ... Յոթ օրվա հաուպտվախտ... դիվիզիայի շտաբը... Խայտառակություն է, սկանդալ... Ամբողջ գունդը օ՜... ի՜... Լակո՛տ։

Ռոմաշովը նրան չէր պատասխանում, նույնիսկ գլուխը չշրջեց դեպի նա։ Ի՞նչ արած, իհարկե, նա իրավունք ունի նախատելու։ Ահա զինվորներն էլ լսեցին, թե համհարզն ինչպես բղավեց իր վրա։ «Դե, ինչ կա որ, թող լսեն, ինձ այդպես էլ պետք է, թո՛ղ,— ինքն իր նկատմամբ սուր ատելություն զգալով մտածեց Ռոմաշովը։— Հիմա ամեն ինչ կորավ ինձ համար։ Ես ինքնասպանություն կգործեմ։ Ես առհավետ խայտառակված եմ։ Ամեն, ամեն ինչ կորավ ինձ համար։ Ես ծիծաղելի եմ, ես փոքրիկ եմ, ես գունատ, տգեղ դեմք ունեմ, ինչ-որ անհեթեթ դեմք, աշխարհում բոլոր դեմքերից ամենաողբելին։

Ամեն ինչ կորավ։ Զինվորները գալիս են իմ հետևից, նայում են իմ թիկունքին ու ծիծաղում և արմունկով բոթում են միմյանց։ Իսկ դուցե խղճում են ինձ։ Ոչ, ես անպայման, անպայման ինքնասպանություն կգործեմ»։

Կիսավաշտերը, բավականաչափ հեռանալով կորպուսի հրամանատարից, մեկը մյուսի հետևից շրջվում էին ձախ թևի վրա և վերադառնում նախկին տեղը, որտեղից սկսել էին շարժումը։ Այստեղ նրանց վերադասավորում էին բացագատված վաշտային շարասյուններով։ Մինչ մոտենում էին հետևի զորամասերը, մարդկանց թույլ տվին ազատ կանգնել, իսկ սպաները հեռացան իրենց տեղերից, որպեսզի մի քիչ հանգստանան և ծխախոտը թևքերի մեջ պահած ծխեն։ Միայն Ռոմաշովը մնաց ճակատի մեջտեղում, իր կիսավաշտի աջ թևում։ Մերկացրած թրի ծայրով նա էլեկտրոնացած քշփորում էր հողը իր ոտքերի մոտ և թեկուզ խոնարհած գլուխը չէր բարձրացնում, բայց զգում էր, որ բոլոր կողմերից իր վրա են հառած հետաքրքրասեր, ծաղրական և արհամարհական հայացքները։

Կապիտան Գլիվան անցավ Ռոմաշովի կողքով և, առանց կանգ առնելու, առանց նրան նայելու, կարծես ինքն իր հետ խոսելով, սեղմած ատամների արանքից, զուսպ զայրույթով խոպոտ ձայնով փնթփնթաց.

— Հ-հենց այսօր հ-հաճեցեք ռապորտ ներկայացնել ուրիշ վաշտ տ-տեղափոխվելու մասին։

Հետո մոտեցավ Վետկինը։ Նրա բաց դույնի, բարի աչքերում և ցած իջած շրթունքների անկյուններում Ռոմաշովը կարդաց այն խորշանքի և խղճահարության արտահայտությունը, որով մարդիկ նայում են գնացքի տակ ընկած ճխլված շանը։ Եվ միաժամանակ Ռոմաշովը նողկանքով ինքն իր դեմքի վրա զգաց ինչ-որ անիմաստ, խամրած ժպիտ։

— Գնանք ծխենք, Յուրի Աշիքսեիչ,— ասաց Վետկինը։ Եվ լեզուն ճպպացնելով ու գլուխն օրորելով, նա սրտմտությամբ ավելացրեց.

— Է՛խ, աղավնյակս...

Ռոմաշովի ծնոտը ցնցվեց, իսկ ըմպանում դառնություն ու ճնշում զգաց։ Հեծկլտոցը հազիվ զսպելով, նա պատասխանեց վիրավորված մանկան ընդհատվող, խեղդված ձայնով.

— Է, ոչ... էլ ինչ... ես չեմ ուզում...

Վետկինը մի կողմ քաշվեց։ «Այ, հիմա կվերցնեմ, կմոտենամ ու կխփեմ Սլիվայի այտին,— անցավ Ռոմաշովի գլխով հուսահատ մի միտք։— Կամ կմոտենամ կորպուսի հրամանատարին ու կասեմ. «Ամոթ է քեզ, ծերունուդ, զինվոր-զինվոր խաղալ և մարդկանց տանջել։ Արձակիր նրանց հանգստանալու։ Քո պատճառով երկու շաբաթ է ծեծում են մարդկանց»։

Բայց հանկարծ նա հիշեց իր քիչ առաջվա հպարտ երազանքը վայելչատես գեղեցիկ պոդպորուչիկի, կանանց հիացմունքի, մարտական գեներալի աչքերում երևացած գոհունակության մասին, և նա ամաչեց, այնպես ամաչեց, որ վայրկենապես կարմրեց ոչ միայն նրա դեմքը, այլև կուրծքն ու կոնակը։

«Դու ծիծաղելի, արհամարհելի, զզվելի մարդ ես,— մտովի բղավեց նա ինքն իրեն։— Դե իմացեք բոլորդ, որ ես այսօր ինքնասպանություն կգործեմ»։

Զորատեսն ավարտվեց։ Վաշտերն էլի մի քանի անգամ տողանց կատարեցին կորպուսի հրամանատարի առջև. նախ վաշտ առ վաշտ քայլով, հետո վազքով, ապա միակցված շարասյունով, հրացաններն հորիզոնադիր բռնած։ Գեներալը կարծես թե մի քիչ փափկեց և մի քանի անգամ գովեց զինվորներին։ Արդեն ժամը մոտ չորսն էր։ Վերջապես գունդը կանգնեցրին և մարդկանց հրամայեցին ազատ կանգնել։ Շտաբ-շեֆորահարը շեֆորեց «պետերի կանչը»։

— Պարոնայք սպաներ, կորպուսի հրամանատարի մո՞տ,— տարածվեց շարքից շարք։

Սպաները շարքից դուրս եկան և համատարած օղակով շրջապատեցին կորպուսի հրամանատարին։ Նա ձիուն նստել էր կքված, խոնարհված, ըստ երևույթին խիստ հոգնած, բայց նրա խելացի, կկոցած, ուռած աչքերը աշխույժ ու ծաղրաբար նայում էին ոսկե ակնոցի միջից։

— Կարճ կկապեմ,— սկսեց նա ընդհատ և ծանրակշիռ։— Գունդը ոչ մի բանի պետք չէ։ Զինվորներին չեմ նախատում, մեղադրում եմ պետերին։ Եթե կառապանը վատն է, ձիերն էլ չեն քաշի։ Ձեր մեջ չեմ տեսնում սիրտ, մարդկանց մասին հոգ տանելու խելացի ըմբռնողություն։ Լավ հիշեցեք. «Երանի նրան, ով իր անձը կզոհի մերձավորի համար»։ Իսկ դուք մի միտք ունեք՝ այնքան որ զորատեսի ժամանակ գոհացնեք պետերին։ Մարդկանց հոգնատանջ եք արել կառապանի ձիերի պես։ Սպաները թափթփված ու վայրենի տեսք ունեն, ինչ-որ մունդիրավոր տիրացուներ են։ Ասենք, այդ մասին կկարդաք իմ հրամանում։

Մի պրապորշչիկ, կարծեմ, վեցերորդ թե յոթերորդ վաշտի, հավասարությունը կորցրեց և վաշտը շիլա-շփոթ դարձրեց։ Ամո՛թ է։ Երեք տեմպով համաքայլվածք չեմ պահանջում, բայց ամենից առաջ աչքաչափ և հանգստություն։

«Իմ մասին է», — սարսափով մտածեց Ռոմաշովը, և նրան թվաց, թե բոլոր կանգնածները միաժամանակ շրջվեցին նրա կողմը։ Բայց ոչ ոք չշրջվեց։ Բոլորը կանգնել էին լուռ, ընկճված ու անշարժ, աչքերը չկտրելով գեներալի դեմքից։

— Հինգերորդ վաշտի հրամանատարին իմ ջերմ շնորհակալությունը,— շարունակեց կորպուսի հրամանատարը։— Որտե՞ղ եք, կապիտան։ Ա՜, ահա,— գեներալը փոքր-ինչ թատերական ձևով, երկու ձեռքով գլխարկը բարձրացրեց գլխից վեր, մերկացրեց կոնաձև դեպի ճակատն իջնող ճաղատը և խոնարհ գլուխ տվեց Ստելկովսկուն։— Մի անգամ ևս շնորհակալություն եմ հայտնում ձեզ և բավականությամբ սեղմում եմ ձեր ձեռքը։ Եթե աստված տա, որ իմ կորպուսը մարտի բռնվի իմ հրամանատարության ներքո,— գեներալի աչքերը թարթեցին և արցունքից փայլեցին,— ապա հիշեցեք, կապիտան, առաջին վտանգավոր գործը ձեզ կհանձնարարեմ։ Իսկ հիմա, պարոնայք, հարգանքներս։ Դուք ազատ եք, ուրախ կլինեմ ձեզ տեսնել մի ուրիշ անգամ, բայց ուրիշ կարգով։ Խնդրեմ, ճանապարհ տվեք ձիուս։

— Ձերդ գերազանցություն,— առաջ եկավ Շուլգովիչը,— համարձակվում եմ պարոնայք սպաների կողմից ձեզ առաջարկել, որպեսզի ճաշեք մեր ակումբում։ Մենք...

— Չէ, ի՞նչ կարիք կա, —չոր-չոր ընդհատեց նրան գեներալը։ —Շատ և շատ շնորհակալ եմ, ես այսօր կոմս Լեդոխովսկու մոտ եմ հրավիրված։

Սպաների ազատած լայն ճանապարհով նա քառատրոփ արշավեց դեպի գունդը։ Մարդիկ իրենք, առանց հրամանի, թրթփացին, ձգվեցին ու սսկվեցին։

— Շնորհակալություն, N-ցիներ,— հաստատուն և սիրալիր բացականչեց գեներալը։— Ձեզ երկու օր հանգիստ եմ տալիս։ Իսկ հիմա...— նա ուրախ բարձրացրեց ձայնը,— դեպի վրանները վազքով մա՛րշ։ Ուռա՜։

Կարծես թե այդ կարճ աղաղակով՝ նա միանգամից հրեց ամբողջ գունդը։ Խլացուցիչ ուրախ մռնչյունով մեկ ու կես

հազար մարդիկ նետվեցին տարբեր կողմեր, և գետինը թրնդաց ու դողաց նրանց ոտների տակ։

Ռոմաշովն անջատվեց խմբով քաղաք վերադարձող սպաներից և գնաց հեռավոր ճանապարհով, ճամբարի կողմից։ Այդ րոպեին նա իրեն թվում էր գնդի ընտանիքից դուրս շպրտված ինչ-որ խղճալի հերձվածող, ինչ-որ տհաճ, բոլորի համար օտար մեկը և նույնիսկ ոչ թե չափահաս մարդ, այլ գարշելի, արատավոր և այլանդակ մի լակոտ։

Երբ նա սպաների ճանապարհով անցնում էր իր վաշտի վրանների հետևից, ինչ-որ մեկի խեղդված, բայց ցասումնալի բղավոցը գրավեց նրա ուշադրությունը։ Մի րոպե կանգ առավ և վրանների արանքից տեսավ իր ֆելդֆեբել Ռինդային, կարճահասակ, կարմրադեմ, կաթվածի տրամադրությամբ մի մարդու, որը կատաղած և զզվելի հայհոյելիք է, բռունցքներով հարվածում էր Խլեբնիկովի դեմքին։ Խլեբնիկովի դեմքը մթամած էր, շփոթված, իսկ անիմաստ աչքերում անասնական սարսափ էր փայլում։ Նրա գլուխը խղճալիորեն թափահարվում էր մի կողմից մյուսը, և լսվում էր, թե ինչպես ամեն մի հարվածի ժամանակ ծնոտներն ուժգին շրխկում էին իրար։

Ռոմաշովն շտապ, գրեթե վազելով՝ անցավ այդտեղից։ Նա ուժ չուներ Խլեբնիկովին պաշտպան կանգնելու։ Եվ միևնույն ժամանակ հիվանդագին կերպով զգաց, որ այսօրվա օրը իր սեփական վիճակը և այդ դժբախտ, ծեծկված, տանջահար արված խղճուկ զինվորի վիճակը ինչ-որ տարօրինակ, ազգակցորենմոտիկ և զզվելի ձևով միահյուսվեցին։ Ասես նրանք միևնույն հիվանդությամբ տառապող երկու հաշմանդամ լինեին և մարդկանց մեջ արթնացնում էին նույն նողկանքը։ Ու թեև վիճակների միատեսակության այդ գիտակցությունը Ռոմաշովին ներշնչում էր ծակող ամոթ ու գարշանք, բայց դրանում ինչ-որ արտասովոր, խոր, ճշմարիտ մարդկային բան կար։

16

Ճամբարից դեպի քաղաք մի ճանապարհ էր տանում միայն՝ երկաթուղու հողելիրի վրայով, որը այդ տեղում անցնում էր մի դիք և խոր փորվածքի միջով։ Ռոմաշովը նեղ, սինջ, տափանած, գրեթե ուղղաբերձ արահետով արագ ցած վազեց և

դժվարությամբ սկսեց բարձրանալ մյուս զառիվեր լանջով։ Դեռ վերելքի կեսին նա նկատեց, որ մեկը կանգնած է վերևում, կիտելով և շինելը ուսերին գցած։ Մի քանի վայրկյան կանգ առնելով և աչքերը կկոցելով, նա ճանաչեց Նիկոլաևին։

«Ամենատհաճ բանը հիմա կլինի»,— մտածեց Ռոմաշովը։ Տաղնապալի նախազգացումից նրա սիրտը անձկությամբ նվաց։ Բայց նա համենայն դեպս հլու բարձրանում էր դեպի վեր։

Սպաները մոտ հինգ օր է չէին տեսնվել, բայց հիմա հանդիպելիս չգիտես ինչու չբարևեցին իրար, և չգիտես ինչու Ռոմաշովը դրանում ոչ մի արտասովոր բան չտեսավ, կարծես այդ ծանր, դժբախտ օրը այլ կերպ չէր էլ կարող պատահել։ Նրանցից ոչ մեկը նույնիսկ ձեռքը չտարավ դեպի գլխարկը։

— Ես հատուկ սպասում էի ձեզ այստեղ, Յուրի Ալեքսեիչ,— ասաց Նիկոլաևը, Ռոմաշովի ուսի վրայով ուր-որ հեռուն, դեպի ճամբարը նայելով։

— Պատրաստ եմ ծառայելու, Վլադիմիր Եֆիմիչ,— պատասխանեց Ռոմաշովը կեղծ սանձարձակությամբ, բայց դողացող ձայնով։ Նա կռացավ, պոկեց հերվա չորացած, դարշելագույն մի խոտ և մտացրիվ սկսեց ծամել։ Միևնույն ժամանակ նա սևեռուն հայացքով նայում էր, թե ինչպես Նիկոլաևի վերարկուի կոճակների մեջ արտացոլվում էր իր սեփական կերպարանքը, նեղ փոքրիկ գլխով և շատ պստիկ ոտքերով, բայց կողքերը այլանդակորեն փքված։

— Ես ձեզ երկար չեմ պահի, ընդամենը երկու խոսք ունեմ ասելու,— ասաց Նիկոլաևը։

Նա բառերն արտասանում էր առանձնապես մեղմ, դյուրաբորբոք և բարկացած մարդու չափազանցված քաղաքավարությամբ, որը որոշել է զուսպ լինել։ Բայց քանի որ իրար աչքի նայելուց խուսափելով զրուցելը վայրկյան առ վայրկյան ավելի անհարմար էր դառնում, ապա Ռոմաշովը հարցականորեն առաջարկեց.

— Գուցե շարժվե՞նք։

Հեռիոտն անցորդների ոտնահետքերից գոյացած ոլորապտույտ արահետը կտրում-անցնում էր ճակնդեղի մի մեծ դաշտով։ Հեռվում երևում էին քաղաքի սպիտակ տնակներն ու Լղմինդրե կարմիր կտուրները։ Սպաները քայլեցին կողք-կողքի, և միմյանցից խուսափելով կոխում էին հյութեղ, թանձր, ոտների տակ ճռճռացող ցալաթ խոտը։ Մի որոշ ժամանակ երկուսն էլ լուռ էին։ Վերջապես Նիկոլաևը, խոր ու բարձրաձայն, նկատելի դժվարությամբ շունչը ետ բերելով, առաջինն սկսեց խոսել.

— Ես ամենից առաջ պետք է մի հարց տամ՝ արդյոք պատշաճ հարգանք տածո՞ւմ եք դեպի իմ կինը... Ալեքսանդրա Պետրովնան։

— Ես չեմ հասկանում, Վլադիմիր Եֆիմիչ...— առարկեց Ռոմաշովը։— Ես, իմ կողմից, նույնպես պետք է հարցնեմ ձեզ...

— Թույլ տվեք,— հանկարծ տաքացավ Նիկոլաևը։ — Հերթով հարցնենք, նախ ես, հետո դուք։ Այլապես մենք իրար չենք հասկանա։ Խոսենք շիտակ ու անկեղծ։ Ամենից առաջ պատասխանեցեք ինձ. գոնե ինչ-որ չափով ձեզ հետաքրքրո՞ւմ է այն, ինչ-որ խոսում են նրա մասին և բամբասում։ Դե, մի խոսքով... գրո՛ղը տանի... նրա բարի համբավը։ Ոչ, ոչ, սպասեցեք, ինձ մի ընդհատեք... Չէ՞ որ, հուսով եմ, չեք ժխտի, որ դուք նրա և իմ կողմից բացի լավից ուրիշ ոչինչ չեք տեսել և դուք մեր տանը ընդունված եք եղել որպես մոտիկ, տանու մարդ, գրեթե հարազատ։

Ռոմաշովը ոտքը սխալ գցեց փխրուն հողին, անշնորհք սայթաքեց և ամաչկոտ քրթմնջաց.

— Հավատացեք, ես միշտ շնորհակալ կլինեմ ձեզ և Ալեքսանդրա Պետրովնային...

— Ախ, ոչ, բանն իսկի էլ այդ չէ, բոլորովին էլ այդ չէ։ Ես ձեր շնորհակալությունը չեմ փնտրում,— դայլայացավ Նիկոլաևը։— Ես ուզում եմ միայն ասել այն, որ իմ կնոջը կպել է կեղտոտ, կեղծ բամբասանք, որը ... դե, այսինքն որի մեջ...

— Նիկոլաևն սկսեց արագ շնչել և դեմքը սրբեց թաշկինակով։— Դե, մի խոսքով, այստեղ խառնված եք և դուք։ Մենք երկուսս էլ՝ ես ու նա, մենք գրեթե ամեն օր ստանում ենք ինչ-որ ստոր, գյադայական անստորագիր նամակներ։ Գրանք ձեզ ցույց չեմ տա... Ինձ համար դա զզվելի է։ Եվ ահա այդ նամակներում ասվում է, որ...— Նիկոլաևը մի բոպե վարանեցավ է, լավ, գրողի ծո՛ցը... ասվում է, որ դուք Ալեքսանդրա Պետրովնայի սիրեկանն եք և որ... ո՞ւխ, ինչ ստորություն... Դե, և այլն... որ ամեն օր ձեր մեջ ինչ-որ գաղտնի տեսակցություններ են տեղի ունենում, և որ ամբողջ գունդը դիտե այդ մասին։ Զզվելի՛ բան։

Նա շարությամբ ատամները կրճատցրեց ու թքեց։

— Ես գիտեմ, թե ով է գրել,— կամացուկ ասաց Ռոմաշովը, մի կողմ շրջվելով։

— Գիտե՞ք։

Նիկոլաևը կանգ առավ և կոպտորեն բռնեց Ռոմաշովի թևից։ Երևում է, որ զայրույթի սնակնկալ պոռթկումը միանգամից փշրեց նրա արհեստական զսպվածությունը։ Նրա եզան աչքերը լայնացան, դեմքն արյունակալեց, դողացող շրթունքների անկյուններում թանձր թուք երևաց։ Նա մոլեգնաբար բղավեց, ամբողջովին առաջ թեքվելով և իր դեմքը շեշտակի մոտեցնելով Ռոմաշովի դեմքին.

— Ուրեմն ինչպե՞ս եք համարձակվում լռել, եթե գիտեք։ Ձեր վիճակում ամեն մի փոքրիշատե կանոնավոր մարդու պարտականությունն է խեղել ամեն մի սրիկայի բերանը։ Լսո՞ւմ եք... բանակային դոն-ժուան։ Եթե դուք ազնիվ մարդ եք և ոչ թե ինչ-որ...

Ռոմաշովը, սփրթնելով, ատելությամբ նայեց Նիկոլաևի աչքերին։ Հանկարծ նրա ձեռքերն ու ոտքերը սարսափելի ծանրացան, գլուխը թեթևացավ և կարծես դատարկվեց, իսկ սիրտը ցած ընկավ ուր-որ խորունկ տեղ և այնտեղ տրոփում էր հակալական, հիվանդագին հարվածներով, ցնցելով ամբողջ մարմինը։

— Ես կխնդրեի չբղավել ինձ վրա,— խուլ ու հրկարաձիգ արտասանեց Ռոմաշովը։— Խոսեցեք ավելի քաղաքավարի, ես ձեզ թույլ չեմ տա բղավել։

— Ես իսկի էլ չեմ բղավում ձեզ վրա,— դեռևս կոպիտ, բայց ձայնը ցածրացնելով, առարկեց Նիկոլաևը։— Ես ձեզ միայն համոզում եմ, թեև իրավունք ունեմ պահանջելու։ Մեր նախկին հարաբերությունները ինձ տալիս են այդ իրավունքը։ Եթե դուք գոնե ինչ-որ չափով թանկ եք գնահատում Ալեքսանդրա Պետրովնայի անբիծ անունը, դուք պետք է վերջ տաք այդ հալածանքին։

— Լավ, ես կանեմ այն ամենը, ինչ կարող եմ,— չոր պատասխանեց Ռոմաշովը։

Նա շրջվեց և գնաց առջևից, կածանի մեջտեղով։ Նիկոլաևն անմիջապես հասավ նրան։

— Եվ հետո... միայն թե դուք, խնդրեմ, չնեղանաք...— սկսեց խոսել Նիկոլաևը փափկած, շփոթմունքի երանգով։—

Քանի որ սկսել ենք խոսել, ապա լավ է խոսենք մինչև վերջ... Ճիշտ չէ՞։

— Այո՞,— կիսահարցական արտասանեց Ռոմաշովը։

— Դուք ինքներդ տեսնում էիք, թե ինչպիսի համակրանքով լինք վերաբերվում ձեզ մենք, այսինքն ես և Ալեքսանդրա Պետրովնան։ Եվ եթե ես հիմա հարկադրված եմ... Ա՛խ, դուք ինքներդ էլ գիտեք, որ այս գզվելի փոքրիկ քաղաքում բամբասանքից ավելի սարսափելի ոչինչ չկա։

— Լավ,— թախծոտ պատասխանեց Ռոմաշովը։— Ես կդադարեմ ձեր տանը լինել։ Չէ՞ որ դուք էիք ուզում խնդրել ինձնից։ Դե լավ։ Ի դեպ, ես ինքս էլ էի որոշել դադարեցնել իմ այցելությունները։ Մի քանի օր առաջ ես անցա միայն հինգ րոպեով, որպեսզի Ալեքսանդրա Պետրովնային վերադարձնեի նրա գրքերը, և, համարձակվում եմ հավատացնել ձեզ, որ դա վերջին անգամը կլինի։

— Հա... այդպես ուրեմն...— անորոշ ասաց Նիկոլաևը և շփոթված լռեց։

Սպաները այդ րոպեին արահետից թեքվեցին դեպի խճուղին։ Մինչև քաղաքը դեռևս մնում էր մոտ երեք հարյուր քայլ, և քանի որ այլևս խոսելու բան չկար, ապա երկուսն էլ քայլում էին կողք-կողքի լուռ և առանց իրար նայելու։ Ոչ մեկը սիրտ չէր անում ոչ կանգ առնել, ոչ էլ ետ շրջվել։ Դրությունը բոպե առ բոպե դառնում էր ավելի կեղծ և լարված։

Վերջապես քաղաքի առաջին տների մոտ նրանց մի կառապան հանդիպեց։ Նիկոլաևը կանչեց նրան։

— Հա... այդպես ուրեմն...— նորից անհեթեթ ասաց նա, դիմելով Ռոմաշովին։— Ցտեսություն, ուրեմն, Յուրի Ալեքսեևիչ։

Նրանք ձեռք չտվին միմյանց, այլ միայն դիպան գլխարկի շքոցներին։ Բայց երբ Ռոմաշովը նայում էր փոշու մեջ հեռացող Նիկոլաևի սպիտակ, ամուր ծոծրակին, հանկարծ իրեն կգաց ամբողջ աշխարհի կողմից այնպես լքված և անակնկալ այնպես միայնակ, կարծես թե նրա կյանքից հենց նոր կտրեցին ինչ-որ ամենամեծ, ամենակարևոր բան։

Նա դանդաղ գնաց տուն։ Գայնանը նրան դիմավորեց բակում, դեռ հեռվից բարեկամորեն և ուրախ փայլեցնելով ատամները։ Պոդպորուչիկի վերարկուն հանելով, նա բավականությունից շարունակ ժպտում էր և, իր սովորության համաձայն, տեղում թեթևակի պարում։

— Դու չճաշե՞լ ես,— հարցնում էր նա հոգածու տնավորությամբ։— Ով գիտի, քաղցած ես։ Հիմի վազել եմ ակումբ զ ճաշ բերեմ։

— Զքվի գրողի ծոցը,— ծղրտոցով նրա վրա բղավեց Ռոմաշովը։— Կորի՛ր, կորի՛ր, և չհամարձակվես սենյակս մտնել։ Եվ ով էլ որ հարցնի՝ ես տանը չեմ։ Թեկուզ ինքը տեր Թագավորը գա։

Նա պառկեց անկողնին և գլուխը թաղեց բարձի մեջ, ատամները խրելով այնտեղ։ Նրա աչքերը այրվում էին, ինչ-որ ծանր, կողմնակի բան ուռցնում և միաժամանակ սեղմում էր գլուխը, և նա ուզում էր լաց լինել։ Նա ագահորեն որոնում էր այդ ջերմ, քաղցր արցունքները, այդ երկարատև, դառնաթթվեցնող հեծկլտանքը։ Նա նորից ու նորից երևակայության մեջ դիտմամբ արթնացնում էր անցած օրը, խտացնելով այնտեղ բոլոր վիրավորական և ամոթալի դեպքերը, ասես կողմնակի մարդ, ինքն իրեն պատկերացնելով վիրավորված, դրժված, թույլ ու լքված և խղճահարված խանդաղատելով ինքն իր վրա։ Բայց արցունքները չէին գալիս։

Հետո ինչ-որ տարօրինակ բան պատահեց։ Ռոմաշովին թվաց, թե նա իսկի չի քնել, նույնիսկ մի վայրկյան անգամ չի կիսքնել, այլ միայն մի բոպե պառկել է առանց մտքերի, աչքերը փակած։ Եվ հանկարծ նա իրեն գտավ նորից արթուն։ Նախկին թախիծը հոգում։ Բայց սենյակում արդեն մութ էր։ Զարթնվեց, որ մտքի կաշկանդման այդ անհասկանալի վիճակում անցել է ավելի քան հինգ ժամ։

Նա ուտելու պահանջ զգաց։ Վեր կացավ, թուրը կապեց, շինելը գցեց ուսերին և դնաց ակումբ։ Դա հեռու չէր, ընդամենը մի երկու հարյուր քայլ, և միշտ Ռոմաշովը այնտեղ գնում էր ոչ թե փողոցով, այլ ետնամուտքով. ինչ-որ պարապուտներով, բանջարանոցներով ու ցանկապատերի վրայով։

Ճաշարանում, բիլիարդանոցում և խոհանոցում պայծառ վառվում էին լամպերը, և դրանից սպայական ակումբի կեչուտում, խճոդված բակը թվում էր սև, կարծես վրան թանաք թափած։ Ամենուրեք լուսամուտները լայն բաց էին արված, լսվում էր խոսակցություն, ծիծաղ, երգեցողություն, բիլիարդի գնդակների հատու շրխկոց։

Ռոմաշովը արդեն բարձրացել էր հետևի անդաստակը, բայց հանկարծ կանգ առավ, ճաշարանում որսալով կապիտան Սիլվայի ջղային ու ծաղրական ձայնը։ Լուսամուտը երկու քայլի վրա էր և, զգուշությամբ նայելով, Ռոմաշովը տեսավ իր վաշտի հրամանատարի կորացած մեջքը։

— Ամ-բողջ վաշտը քայլում է մ-մեկ մ-մարդու պես՝ մե՛կ, մե՛կ, մե՛կ,— ասում էր Սիլվան, սահուն, բարձրացնելով ու իջեցնելով առաջ մեկնած ափը,— իսկ մենակ նա, տես ծիծաղ շարժելու համար, օ՜, օ՜, ոնց որ էն այծը։— Նա անհանգիստ ու ալլանդակորեն մի բանի անգամ վեր ընկավ ցուցամատը։— Նա նրան ուղ-ղակի ասացի առանց ձևակնոտության. հեռ-ացեք, ս-պատվելիս, ուրիշ-շ վաշտ։ Իսկ ավելի լավ կանեք բոլորովին հեռանաք գ-գնդից։ Ո՞ր գրողիս սպան եք դուք։ Այնպես, մի ինչ-որ ձ-ձայնարկություն...

Ռոմաշովը աչքերը կկոցեց և կծկվեց։ Նրան թվում էր, որ լցեն ինքը հիմա շարժվի, ապա ճաշարանում բոլոր նստածները կնկատեն այդ և լուսամուտներից դուրս կթափվեն։ Աչքերս նա կանգնած մնաց մեկ կամ երկու բոպե։ Հետո, աշխատանքով որքան կարելի է կամաց շնչել, խռնարհվելով ու ոտքերը ոտքի մեջ թաքցնելով, նա թաթերի ծայրերի վրա շարժվեց պատի երկայնքով, քայլերն ավելի արագացնելով, անցավ մինչև դարպասը և, արագ կտրելով լուսնով լուսավորված փողոցը, թաքնվեց հակառակ կողմի ցանկապատի թանձր ստվերի մեջ։

Ռոմաշովն այդ երեկո երկար պտտվում էր քաղաքում, շարունակ իրեն պահելով ստվերում, բայց դրանն չգիտակցելով, թե որ փողոցներով է քայլում։ Մի անգամ նա կանգ առավ Նիկոլաևների տան դիմաց, որը լուսնի լույսի մեջ պայծառ սպիտակին էր տալիս, սառը փայլատ և տարօրինակ պսպղալով իր կանաչ մետաղե տանիքով։ Փողոցը մեռելի պես լուռ էր, ամայի, և թվում էր անծանոթ։ Տների և ցանկապատերի ուղիղ ու պարզորոշ ստվերները սալահատակը կտրուկ բաժանում էին երկու կեսի. մի կեսը բոլորովին սև էր, իսկ մյուսում յուղոտ փայլում էին ողորկ, կլոր կոպեճները։

Մուգ-կարմիր թանձր վարագույրների հետևում մի մոմ, տաքուկ բծի պես լուսավորում էր լամպի լույսը։ «Սիրելիս, մի՞թե դու չես զգում, թե որքան տխուր եմ ես, ինչպես տառապում եմ, ինչպես սիրում եմ քեզ»,— շշնջաց Ռոմաշովն դեմքին լացող արտահայտություն տալով և գույգ ձեռքը ամուր սեղմելով կրծքին։

Հանկարծ նրա մտքով անցավ հարկադրել Շուրոչկային, որ

նա հեռվից, սենյակի պատերի միջով լսի և հասկանա իրեն։ Այն ժամանակ, բռունցքներն այնքան ուժեղ սեղմելով, որ եղունգների տակ ցավ զգաց, ծնոտները ջղաձգորեն սեղմած, ամբողջ մարմնում սարսուռ զգալով, նա սկսեց մտքում պնդել, բուռն կերպով լարելով իր ողջ կամքը.

«Նայիր լուսամուտից... Մոտեցիր վարագույրին։ Բազմոցից վեր կաց և մոտեցիր վարագույրին։ Դուրս նայիր, դուրս նայիր։ Դո՞ւրս նայիր։ Լսո՞ւմ ես, քեզ հրամայում եմ, անմիջապես մոտեցիր լուսամուտին»։

Վարագույրներն անշարժ էին։ «Դու ինձ չես լսում,— դառն հանդիմանությամբ շշնջաց Ռոմաշովը։— Դու հիմա նստել ես երա կողքին, լամպի մոտ, հանդարտ, անտարբեր, գեղեցիկ։ Ա՛խ, աստված իմ, աստված իմ, որքա՞ն դժբախտ եմ ես»։

Նա հոգոց հանեց և հոգնած քայլերով, գլուխը ցած խոնարհած, առաջ շարժվեց։

Նա անցավ նաև Նագանսկու բնակարանի մոտով, բայց այնտեղ մութ էր։ Ճիշտ է, Ռոմաշովին թվաց, թե սպիտակազգեստ մեկը երևում ու կորչում էր լուսավորված սենյակի պատուհանների կողքով, բայց չգիտես ինչու նա սարսափեց և սիրտ չարեց Նագանսկուն ձայն տալ

Մի քանի օր անց Ռոմաշովը մտաբերում էր, ասես հեռավոր, երբեք չմոռացվող երազ, այդ ֆանտաստիկ, գրեթե զառանցական զբոսանքը։ Նա ինքն էլ չէր կարողանում ասել, թե ինչպես հայտնվեց հրեական գերեզմանատան մոտ։ Այն քաղաքի գծից դուրս էր գտնվում և բարձրանում էր սարնիվեր, շրջապատված ցածր, սպիտակ պատով, լռիկ ու խորհրդավոր։ Լուսավոր նիրհած խոտի միջից տրտմաշուք վեր էին բարձրանում մերկ, միօրինակ, սառը քարերը, որոնք միանման բարակ ստվերներ էին գցում։ Իսկ գերեզմանատան վրա անձայն ու խստաշունչ իշխում էր մենության հանդիսավոր պարզությունը։

Հետո նա իրեն տեսավ քաղաքի մյուս ծայրում։ Գուցե խելագա՞ր էլ երազում էր։ Նա կանգնած էր Բուգը լայնորեն հոսող, գլգոնած երկար, փայլուն ամբարտակի մեջտեղում։ Քնեած ջուրը թանձր ու ալարկոտ ծփում էր նրա ոտքերի տակ, ալեոլժալուր շլմփալով հողին, իսկ լուսինը երերուն սյան պես արտացոլվում էր նրա դողդոջուն մակերեսին, և թվում էր, թե միլիոնավոր արծաթե ձկնիկներ են ճղփում ջրի վրա, նեղլիկ ճանապարհով գնալով դեպի հեռավոր, խավար, լուռ ու ամայի

ափը։ Եվ մեկ էլ միտն էր պահել Ռոմաշովը, որ ամենուրեք՝ և՛ փողոցներում, և՛ քաղաքից դուրս նրան հետևում էր ծաղկող սպիտակ ակացիայի քաղցր, նուրբ ու փաղաքուշ բույրը։

Այդ գիշեր տարօրինակ մտքեր էին գալիս նրա գլուխը՝ միայնակ մտքեր, մերթ տրտում, մերթ ահասարսուռ, մերթ մանր, մանկականորեն ծիծաղելի։ Իսկ ամենից հաճախ, ինչպես մի երեկոյի ընթացքում իր ամբողջ կարողությունը տանուլ տված անփորձ խաղամոլի, նրան հանկարծ գայթակղիչ պարզությամբ պատկերանում էր, թե իբր ոչ մի տհաճ բան չէր պատահել, որ գեղեցկատես պոդպորուչիկ Ռոմաշովը շքերթի ժամանակ հրաշալի անցավ գեներալի առջևից, արժանացավ ընդհանուրի գովեստներին, և որ նա ինքը հիմա ընկերների հետ նստած է սպայական ակումբի լուսավոր ճաշարանում և քրքջում է ու կարմիր դինի խմում։ Բայց ամեն անգամ այդ երազանքներն ընդհատվում էին Ֆյոդորովսկու նախատինքի, վաշտի հրամանատարի կծու խոսքերի, Նիկոլաևի հետ ունեցած խոսակցության հիշողությամբ, և Ռոմաշովը իրեն նորից զգում էր անուղղելիորեն խայտառակված ու դժբախտ։

Թաքուն, ներքին բնազդը նրան բերեց այն տեղը, որտեղ նա այսօր բաժանվեց Նիկոլաևից։ Ռոմաշովն այդ ժամանակ մտածում էր ինքնասպանության մասին, բայց մտածում էր առանց վճռականության և առանց սարսափի, ինչ-որ գաղտնի հաճելի-ինքնասեր զգացմունքով։ Սովորական, անդադրում երևակայությունը լուծել էր այդ մտքի ամբողջ սարսափը, գունաղարդելով ու նախշելով դա վառ պատկերներով։

«Ահա Գայնանը դուրս թռավ Ռոմաշովի սենյակից։ Վախից դեմքը ծամածռված։ Սփրթնած, դողդողալով նա ներս է վազում սպայական ճաշարան, որը լիքն է բազմությամբ։ Նրա հայտնվելու վրա բոլորն ակամա վեր են կենում տեղերից։ «Ձերդ բարձր բարեծնություն... պոդպորուչիկը... անձնասպան եղավ», դժվարությամբ արտաբերում է Գայնանը։ Ընդհանուր շփոթություն։ Դեմքերը դժգունում են։ Աչքերում սարսափ է արտացոլվում։ «Ո՞վ անձնասպան եղավ։ Որտե՞ղ։ Ի՞նչ պոդպորուչիկ»։ «Պարոնայք, ախր սա Ռոմաշովի սպասյակն է,— ճանաչում է մեկը Գայնանին։— Սա նրա չերեմիսն է»։ Բոլորը վազում են բնակարան, մի քանիսը առանց գլխարկի են, Ռոմաշովը պառկած է մահճակալին։ Հատակին արյան մի լճակ է գոյացել և նրա մեջ ընկած է պետական նմուշի Սմիտի և Վեսսոնի մի

ատրճանակ... Փոքրիկ սենյակ լցված սպաների բազմությունը ճեղքելով, դժվարությամբ առաջ է գալիս գնդի բժիշկ Զնոյկոն։ «Քունքին է խփել,— ընդհանուր լռության մեջ արտասանում է նա կամացուկ։— Ամեն ինչ վերջացած է»։ Մեկը կիսաձայն նկատում է. «Պարոնայք, հանեցեք գլխարկներդ»։ Շատերը խաչակնքում են երեսները։ Վետկինը սեղանի վրա մատիտով հաստատուն գրված մի տոմսակ է գտնում և բարձրաձայն կարդում է. «Բոլորին ներում եմ, մեռնում եմ կամովին, կյանքն այնքան ծանր է ու տխուր։ Իմ մահվան մասին մորս հայտնեցեք որքան կարելի է զգույշ։ Գեորգի Ռոմաշով»։ Բոլորը հայացքներ են փոխանակում և միմյանց աչքերում կարդում են միևնույն անհանգիստ, չարտահայտված միտքը. «Այդ մենք ենք նրան սպանողները»։

Ոսկեդիպակ ծածկոցի տակ, ութ ընկերների ձեռքերի վրա համաչափ օրորվում է դագաղը։ Բոլոր սպաները գնում են հետևից։ Նրանց հետևից քայլում է վեցերորդ վաշտը։ Կապիտան Սլիվան խստորեն խոժոռվում է։ Վետկինի բարի դեմքը արցունքներից ուռել է, բայց հիմա, փողոցում, ինքն իրեն զսպում է։ Լրովը փղձկալով լալիս է, չթաքցնելով և չամաչելով իր վշտից. սիրելի, բարի պատանյակ։ Գարնանային օդում խոր, վշտակոծ հեկեկանքի պես տարածվում են թաղման քայլերգի հնչյունները։ Այդպանդ են նաև գնդի բոլոր տիկնայք և Շուրոչկան։ «Ես նրան համբուրել եմ,— մտածում է նա հուսաբեկ։— Ես նրան սիրո՞ւմ էի։ Ես կարող էի նրան ետ պահել, փրկել»։— «Շատ ո՞ւշ է»,— ի պատասխան նրա՝ դառն ժպիտով մտածում է Ռոմաշովը։

Դագաղի հետևից գնացող սպաները կամացուկ զրուցում են իրար հետ. «Է՛խ, ինչ ափսոս էր խեղճը։ Ախր ի՞նչ լավ ընկեր էր, ի՞նչ հիանալի, ընդունակ սպա էր... Այո... չէինք հասկանում մենք նրան»։ Ավելի ուժեղ է հնչեցնում թաղման քայլերգը. դա Բեթհովենի երաժշտությունն է՝ «Հերոսի մահը»։ Իսկ Ռոմաշովը պառկած է դագաղում, անշարժ, սառը, հավիտենական ժպիտը շուրթերին։ Նրա կրծքին մանուշակների մի համեստ փունջ կա. ոչ ոք չգիտի, թե ում ձեռքն է դրել այդ ծաղիկները։ Նա բոլորին ներել է՝ և՛ Շուրոչկային, և՛ Սլիվային, և՛ Ֆյոդորովսկուն, և՛ կորպուսի հրամանատարին։ Թո՛ղ ուրեմն լաց չլինեն իր վրա։ Նա չափազանց մաքուր և սքանչելի էր այս կյանքի համար։ Նրա համար այնտեղ ավելի լավ կլինի»։

Ռոմաշովի աչքերից արցունքներ ցայտեցին, բայց նա չէր սրբում։ Այնքա՞ն բերկրալի էր երևակայել, որ իրեն ողբում են, որ ինքը անարդարացի վիրավորված է։

Նա հիմա գնում էր ճակնդեղի դաշտի երկայնքով։ Ցածրիկ, հաստ փուչերը խառնիխուռն սպիտակ ու սև բծերով խայտագունում էին նրա ոտների տակ։ Լուսնով լուսավորված դաշտի լայնարձակությունը կարծես ճնշում էր Ռոմաշովին։ Պոդպորուչիկը բարձրացավ մի փոքր հողաթմբի և կանգ առավ երկաթուղագծի փորվածքի վերև։ Այդ կողմը ամբողջովին սև ստվերի մեջ էր, իսկ մյուս կողմի վրա վառ-դալուկ լույս էր ընկնում. և, թվում էր, թե այն կողմում կարելի էր պարզ տեսնել ամեն մի շյուղ։ Փորվածքը մութ անդունդի պես գնում էր դեպի ցած. նրա հատակում թույլ պսպղում էին ողորկ ռելսերը։ Հեռու, փորվածքի հետևում, դաշտի մեջ, սպիտակին էին տալիս սրածայր վրանների կանոնավոր շարքերը։

Փորվածքի կատարից փոքր-ինչ ներքև, հողերի երկայնությամբ մի նեղ ելուստ էր գնում։ Ռոմաշովն իջավ այդտեղ և նստեց կանաչին։ Քաղցից ու հոգնածությունից նա սրտխառնոց էր զգում, իսկ ոտքերում դող ու թուլություն։ Լայնարձակ ամայի դաշտը, ցածում փորվածքը՝ կիսով չափ ստվերի, կիսով չափ լույսի մեջ, աղոտ թափանցիկ օդը, ցողաշաղ կանաչը, ողջը սուզված էր զգայուն, գաղտագողի լռության մեջ, որից ականջներն աղմկալի խշշում էին։ Լոկ ժամանակ առ ժամանակ կայարանում ճչում էին մանևրող շոգեքարշերը և այդ տարօրինակ գիշերվա լռության մեջ նրանց ընդհատ սուլուցներն ընդունում էին կենդանի, տագնապալի և սպառնալից արտահայտություն։

Ռոմաշովը պառկեց մեջքի վրա։ Սպիտակ, թեթև ամպերն անշարժ էին, և նրանց վերևից արագ սահում էր կլոր լուսինը։ Վերը դատարկ էր, անծիր ու ցուրտ, թվում էր, թե երկրից մինչև երկինք ամբողջ տարածությունը լցված է հավերժական սարսափով և հավերժական թախիծով։ «Այնտեղ աստվածն է»,—մտածեց Ռոմաշովը, և հանկարծ վշտի, վիրավորանքի և ինքն իրեն խղճալու միամիտ պոռթկումով նա սկսեց խոսել բուռն և դառնագին շշուկով.

— Աստվա՛ծ։ Ինչու երեսդ շրջեցիր ինձնից։ Ես փոքրիկ, ես թույլ, ես մի ավազահատիկ, քեզ ի՞նչ վատություն եմ արել, աստվա՛ծ։ Չէ՞ որ դու ամեն ինչ կարող ես, դու բարի ես, դու

ամեն ինչ տեսնում ես, հապա ինչո՞ւ արդարացի չես իմ հանդեպ, աստվա՜ծ։

Բայց նա սաստափեց, հապճեպ ու ջերմորեն շշնջաց.

— Ոչ, ոչ, բարի, սիրելի, ների՜ր ինձ, ների՜ր ինձ։ Ես էլ չ՚մ անի։— Եվ նա ավելացրեց հլու, զինաթափող հնազանդությամբ.— Ինչ ուզում ես արա ինձ։ Ես ամեն ինչի ենթարկվում եմ շնորհակալությամբ։

Այդպես էր ասում նա, ու միևնույն ժամանակ նրա հոգու ամենախոր գաղտնարաններում խլրտում էր խորամանկ-անմեղ մի միտք, որ իր հաստատուն հնազանդությունը կգթաշարժի ու կփափկացնի ամենատես աստծուն, և այն ժամանակ հանկարծ հրաշք կպատահի, որից կպարզվի, որ ամբողջ այսօրվանը՝ լոկ տհաճ ու դժնդակ, վատ երազ էր։

«Ո՞ւր ես դու-ու»,— զայրացկոտ ու շտապ ճչաց շոգեքարշը։

Իսկ մյուսը ձայնակցեց թավաձայն, երկարաձիգ ու սպառնագին։

«Ես ձե-ե՜զ»։

Ինչ-որ բան շրշաց ու առկայծեց փորվածքի այն կողմում, լուսավորված ուղղաբերձ լանջի ամենավերին մասում։ Ավելի լավ տեսնելու համար Ռոմաշովը թեթևակի գլուխը բարձրացրեց։ Ինչ-որ գորշ, տձև, մարդու քիչ հիշեցնող մի բան վերևից ցած էր իջնում, լուսնի ցնորային-պղտոր լույսի տակ հազիվ տարբերվելով կանաչից։ Միայն ստվերի շարժումով ու թափվող հողը թեթև շրշոցով կարելի էր հետևել նրան։

Ահա նա կտրեց-անցավ ռելսերը։ «Կարծես թե զինվո՞ր է, — անհանգիստ կռահում անցավ Ռոմաշովի մտքով։— Համենայն դեպս, դա մարդ է։ Բայց այդպես տարօրինակ կարող է քայլել միայն լուսնոտը կամ հարբածը։ Այդ ո՞վ է»։

Գորշ մարդը ռելսերը հատեց և մտավ ստվերի մեջ։ Հիմա բոլորովին պարզ երևում էր, որ դա զինվոր է։ Նա դանդաղ և անճոռնի բարձրանում էր վերև՝ միաժամանակ ծածկվելով Ռոմաշովի տեսադաշտից։ Բայց անցավ երկու-երեք րոպե, և ներքևից սկսեց դանդաղ բարձրանալ մի խուզած կլոր գլուխ, առանց գլխարկի։

Պղտոր լույսն ընկնում էր ուղիղ այդ մարդու դեմքին, և Ռոմաշովը ճանաչեց իր կիսավաշտի ձախթևային զինվորին՝ Խլեբնիկովին։ Նա գնում էր գլխաբաց, գլխարկը ձեռքին, անկյանք հայացքը առաջ հառած։ Կարծես թե նա շարժվում էր ինչ-որ օտար, ներքին, խորհրդավոր ուժի ազդեցության տակ։ Նա սպայի կողքով այնքան մոտիկ անցավ, որ գրեթե քսվեց նրան իր շինելի փեշով։ Նրա աչքերի բիբերում պայծառ, սուր կետերով անդրադառնում էր լուսնի լույսը։

— Խլեբնիկով, դո՞ւ ես,— ձայն տվեց նրան Ռոմաշովը։

— Ա՜խ,— ճչաց զինվորը և հանկարծ, կանգ առնելով, վախից ամբողջովին թրթռաց տեղում։

Ռոմաշովն արագ վեր կացավ։ Նա իր առաջ տեսավ մեռած, հոշոտված մի դեմք, ջնջված, ուռած արյունալվա շրթունքներով, կապտած աչքով։ Գիշերային աղճատող լույսի տակ ճեծի հետքերը չարաշուք, չափազանցված տեսք ունեին։ Եվ, Խլեբնիկովին նայելով, Ռոմաշովը մտածեց. «Ահա այս մարդն ու ես այսօր ամբողջ գնդին անհաջողություն բերինք։ Մենք միանման դժբախտ ենք»։

— Ո՞ւր ես գնում, աղավնյակս։ Քեզ ի՞նչ է պատահել, — քնքշությամբ հարցրեց Ռոմաշովը և, ինքն էլ չիմանալով թե ինչու, երկու ձեռքը դրեց զինվորի ուսերին։

Խլեբնիկովը նրան նայեց շփոթված, վայրի հայացքով, բայց իսկույն շրջվեց։ Նրա շրթունքները ճպպացին, դանդաղ բացվեցին, և նրանց միջից դուրս թռավ մի կարճ, անիմաստ խոսքում։ Մի բութ, գրգռող զգացում, նման այն բանին, որ նախորդում է **ուշագնացությանը**, անախորժ խառուտի նման առանցքից նվաց Ռոմաշովի փորում և կրծքում։

— Քեզ ծեծե՞լ են։ Հա՞։ Դե ասա ախր։ Այո՞։ Նստիր այստեղ, նստիր ինձ հետ։

Նա Խլեբնիկովի թևքից քաշեց ցած։ Զինվորը ծալովի պուպրիկի պես, մի տեսակ անհեթեթորեն թեթև ու հնազանդ ընկավ թաց խոտի վրա, պոդպորուչիկի կողքին։

— Ո՞ւր էիր գնում,— հարցրեց Ռոմաշովը։

Խլեբնիկովը լուռ էր, անհարմար դիրքով նստած, ոտքերն անբնական ուղիղ մեկնած։ Ռոմաշովը տեսնում էր, թե ինչպես նրա գլուխը աոտիճանաբար, հազիվ նկատելի ցնցումներով էախվում էր կրծքին։ Պոդպորուչիկը նորից լսեց մի կարճ խրոպոտ ձայն, և նրա հոգում շարժվեց մի տհաստարսուտ խղճահարություն։

— Դու ուզում էիր փախչե՞լ։ Դե գլխարկդ դիր։ Լսիր, Խլեբնիկով, ես հիմա քո պետը չեմ, ես ինքս դժբախտ, միայնակ,

սպանված մարդ եմ։ Քեզ համար ծա՞նր է։ Ցա՞վ ես զգում։ Դե խոսիր ինձ հետ անկեղծ։ Գուցե դու ուզում էիր ինքնասպա՞ն լինել,— հարցնում էր Ռոմաշովը անկապ շշուկով։

Մի բան շրթաց ու խլթխլթաց Խլեբնիկովի կոկորդում, բայց նա շարունակում էր լռել։ Նույն միջոցին Ռոմաշովը նկատեց, որ զինվորը դողում է հաճախակի մանր դողով. դողում էր նրա գլուխը, կամաց չխչխկոցով դողում էին ծնոտները։ Մի վայրկյան սպան սարսափեց։ Այդ անքուն տենդոտ գիշերը, միայնության զգացումը, լուսնի հավասար, փայլատ անկյանք լույսը, փորվածքի սեին տվող խորությունը ոտքերի տակ, և իր կողքին լռակյաց, ծեծից խենթացած զինվորը, ամեն-ամեն ինչ նրան թվաց ինչ-որ անհեթեթ տաջալից երազ, նման այն երազներին, որոնք, հավանաբար, տեսնելու էին մարդիկ աշխարհի ամենավերջին օրերը։ Բայց հանկարծ ջերմ, ինքնամոռաց, անսահման կարեկցանքը համակեց նրա հոգին։ Եվ իր վիշտը փոքրիկ ու դատարկ համարելով, այս ծեծկված, հալածված մարդու համեմատությամբ իրեն չափահաս ու խելացի զգալով, նա քընքշորեն ու ամուր փարվեց Խլեբնիկովի վզին, քաշեց դեպի ինքը, և սկսեց խոսել ջերմորեն, կրքոտ համոզչությամբ.

— Խլեբնիկով, քեզ վա՞տ ես զգում։ Ես էլ լավ չեմ, աղավնյակս, ես էլ լավ չեմ, հավատա ինձ։ Ես ոչինչ չեմ հասկանում, թե աշխարհում ինչ է կատարվում։ Ողջը ինչ-որ վայրենի, անմիտ, դաժան անհեթեթություն է։ Բայց պետք է համբերել, սիրելիս, պետք է համբերել... Դա պետք է։

Խլեբնիկովի ցած խոնարհած գլուխը հանկարծ ընկավ Ռոմաշովի ծնկներին։ Եվ զինվորը, ձեռքերն ամուր փաթաթելով սպայի ոտներին, դեմքը հպելով դրանց, ամբողջ մարմնով սկսեց ցնցվել։ Շնչակտուր լինելով և գալարվելով զսպած հեծկլտանքից։

— Էլ չեմ կարող...— թոթովում էր Խլեբնիկովը անկապ,— ես էլ չեմ կարող, աղա... Օխ, տե՛ր աստված... ծեծում են, ծաղրում... դասակապետը փող է ուղում, ջոկապետը բղավում է... որտեղի՞ց տամ։ Փորս պատռված է... Դեռ պստիկ տղա ժամանակս է պատռվել... ճողվածք ունեմ, աղա... Օխ, տե՛ր աստված, տե՛ր աստված։— Ռոմաշովը մոտիկ կռացավ նրա գլխին, որը մոլեգնորեն ճոճվում էր իր ծնկների վրա։ Նա զգաց կեղտոտ, անառողջ մարմնի, չվացված մաշերի ու թթված շինելի հոտ, շինելի, որով ծածկվում էին քնելիս։ Անսահման վիշտը, սարսափը, անհասկացողությունը և խորունկ, մեղավոր խղճահարությունը բերնե-բերան լցրին սպայի սիրտը և ցավելու աստիճան սեղմեցին ու ճմլեցին։ Եվ, մեղմիկ խոնարհվելով դեպի խուզած, ծակծկող, կեղտոտ գլուխը, նա հազիվ լսելի շշնջաց.

— Եղբա՛յր իմ։

Խլեբնիկովը բռնեց սպայի ձեռքը, և Ռոմաշովը տաք արցունքների կաթիլների հետ նրա վրա զգաց օտար շրթունքների պաղ և լպրծուն հպումը. Բայց նա իր ձեռքը չէր խլում և ասում էր պարզ, սրտաուշ, հանգստացնող խոսքեր, ինչպիսի խոսքեր ասում է մեծը վիրավորված երեխային։

Հետո նա ինքը Խլեբնիկովին տարավ ճամբար։ Հարկ եղավ կանչել վաշտի հերթապահ ենթասպա Շապովալենկոյին։ Սա դուրս եկավ միայն սպիտակեղենով, հորանջելով, աչքերը կկոցելով ու քորքրելով մերթ կռնակը, մերթ փորը։

Ռոմաշովը նրան հրամայեց անմիջապես հանել Խլեբնիկովին հերթապահությունից։ Շապովալենկոն փորձեց առարկել.

— Այնպես որ, ձերդ բարեծնություն, նրանց դեռ փոխելու ժամանակը չի եկել...

— Չխոսե՛լ,— նրա վրա բղավեց Ռոմաշովը։— Վաղը վաշտի հրամանատարին կասես, որ ես այդպես հրամայեցի... Ուրեմն, վաղը կգա՞ս ինձ մոտ,— հարցրեց նա Խլեբնիկովին, և սա լուռ պատասխանեց նրան երկչոտ, շնորհակալ հայացքով։ Վրաններից մեկում լսվող շշուկը նրան հարկադրեց կանգ առնել և ականջ դնել։ Մեկը կիսախեղդ, երկարաձիգ ձայնով հեքիաթ էր պատմում.

— Հրե-ես էդ սատանեն սալդաթի մոտ ա դարկըմ իր ամենավեհն կախարդին։ Հրես գալիս ա էդ կախարդն ու ասում ա. «Սալդաթ, այ սալդաթ, ես քեզ կուտե՛մ»։ Իսկ սալդաթը նրան պատասխան ա տալի ու ասում ա. «Չէ՛, դու ընձի չես կարա ուտես, էնենց որ, ես ինքս էլ կախարդ եմ»։

Ռոմաշովը նորից մոտեցավ փորվածքին։ Անհեթեթ, խառնակ, անհասկանալի կյանքի զգացողությունը ճնշում էր նրան։ Կանգ առնելով զառիվայր լանջին, նա աչքերը բարձրացրեց վեր, դեպի երկինք։ Այնտեղ առաջվա պես դուրտ ամայությունն էր ու անվախճան սարսափը։ Եվ գրեթե իր իսկ համար անսպասելի բռունցքները բարձրացնելով գլխի վերև ու թափահարելով՝ Ռոմաշովը կատաղի բղավեց.

— Դո՜ւ Ծեր խաբեբա՜։ Եթե դու կարող ես և կհամարձակվես որևէ բան անել, ապա... ահա. այնպես արա, որ ես հիմա ոտս կոտրեմ։

Նա գլխիվայր, աչքերը փակ, գիրք զառիվայրից ցած նետվեց. երկու ոտայունով կտրեց-անցավ ռելսերը և, առանց կանգ առնելու, մի շնչով բարձրացավ վերը։ Նրա ոտնակները ուռել էին, կուրծքը շնչում էր ուժգին։ Բայց նրա հոգում հանկարծ բռնկվեց մի հպարտ, հանդուգն ու չար խիզախություն։

17

Այդ գիշերվանից Ռոմաշովի մեջ հոգեկան խոր բեկում առաջացավ։ Նա սկսել էր մեկուսանալ սպաների հասարակությունից, մեծ մասամբ ճաշում էր տանը, բոլորովին չէր գնում ակումբի պարերեկոներին և դադարել էր խմել։ Վերջին օրերի ընթացքում նա կարծես հասունացել մեծացել ու լրջացել էր և ինքն էլ նկատում էր դա այն հավասարակշռված հանգստությունից, որով հիմա վերաբերվում էր մարդկանց ու երևույթներին։ Այդ առթիվ նա հաճախ մտաբերում էր վաղուց, շատ վաղուց ինչ-որ մեկից լսած կամ կարդացած այն ծիծաղելի բառերը, թե մարդկային կյանքը բաժանվում է ինչ-որ «լյուստրերի», յուրաքանչյուր լյուստրի մեջ յոթական տարի, և որ մի լյուստրի ընթացքում բոլորովին փոխվում է մարդու մարմնի և արյան բաղադրությունը, նրա մտքերը, զգացմունքներն ու բնավորությունը։ Իսկ վերջերս լրացել էր Ռոմաշովի քսանմեկ տարին։

Զինվոր Խլեբնիկովը նրա մոտ գնաց, բայց միայն երկրորդ հիշեցումից հետո։ Հետո նա սկսեց հաճախակի այցելել։

Սկզբնական շրջանում նա իր տեսքով հիշեցնում էր քաղցած, քոսոտ, շատ ծեծված շան, որը երկչոտ ետ է փախչում փաղաքշանքի համար պարզված ձեռքից։ Բայց սպայի ուշադրությունն ու բարությունը քիչ-քիչ ջերմացրին ու հալեցրին նրա սրտի սառույցը։ Խղճմտալի ու մեղավոր խղճահարությամբ Ռոմաշովն իմանում էր նրա կյանքի մանրամասնությունները։ Տանը՝ մայրն է հարբեցող հոր, կիսապուշ որդու և չորս փոքրահասակ աղջիկների հետ. համայնքը բռնի և անարդարացի կերպով խլել է նրանց հողը. նույն համայնքի ողորմածությամբ նրանք բոլորը ապաստան են գտել մի լքյալ, անտեր խրճիթում. մեծերն աշխատում են օտար մարդկանց մոտ, փոքրերը մուրալու են գնում։ Խլեբնիկովը տնից փող չի ստանում, իսկ ազատ վարձու աշխատանքի նրան չեն թերցնում վատուժ լինելու պատճառով։ Իսկ առանց փողի, գոնե ամենաչնչին գումարի, զինվորի կյանքը դժվար է. ոչ թեյ կա, ոչ շաքար, նույնիսկ օճառ գնելու փող չկա, անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ զինվորական բուֆետում ջոկատի պետին և դասակի պետին օգի հյուրասիրել, ամբողջ զինվորական ոճիկը՝ ամսական քսանմեկ և կես կոպեկ, ծախսվում է այդ պետերին նվերներ առնելու վրա։ Նրան ամեն օր ծեծում են, ծիծաղում են նրա վրա, ծաղրում են, արտահերթ նշանակում ամենադժվար և տհաճ աշխատանքներին։

Ռոմաշովը զարմանքով, թախիծով և սարսափով սկսում էր հասկանալ, որ ճակատագիրը ամեն օր և մոտիկից նրան հանդիպեցնում է այդ հարյուրավոր գորշ խլեբնիկովների հետ, որոնցից յուրաքանչյուրը տառապում է իր վշտով և ուրախանում իր ուրախություններով, բայց որ նրանք բոլորը ճզմված ու դիմազրկված են սեփական տգիտությունից, ընդհանուր ստրկությունից, պետերի անտարբերությունից, կամայականությունից և բռնությունից։ Եվ ամենից սարսափելին այն միտքն էր, որ սպաներից ոչ մեկը, ինչպես մինչև հիմա նաև Ռոմաշովն ինքը, նույնիսկ մտքով չի անցկացնում, որ իրենց միօրինակ-հնազանդ և իմաստազրկված դեմքերով գորշ խլեբնիկովները իրականում կենդանի մարդիկ են, և ոչ թե մեխանիկական մեծություններ, որոնք կոչվում են վաշտ, գումարտակ, գունդ...

Ռոմաշովը որոշ բան արավ խլեբնիկովի համար, որպեսզի նա մի փոքր վաստակ ունենա։ Վաշտում նկատեցին սպայի այդ արտասովոր հովանավորությունը զինվորին։ Ռոմաշովը նկատում էր, որ իր ներկայությամբ ենթասպաները խլեբնիկովի հետ վարվում էին չափազանց ծաղրական քաղաքավարությամբ և դիտմամբ նրա հետ խոսում էին մեղրածոր ձայնով։ Կարծես այդ մասին գիտեր նաև կապիտան Սլիվան։ Համենայն դեպս նա երբեմն փնթփնթում էր, խոսքն ուղղելով անորոշ տարածությանը.

— Ահա, համե-ցեք։ Լիբերալներ են լ-լույս ընկել։ Փչացնում են վաշտը։ Նրանց, սրիկաներին, թ-թաեև է պետք, իսկ սրանք փիշի-փիշի են անում սրանց։

Այժմ, երբ Ռոմաշովն ավելի շատ էր ազատ և մենակ մնում, ավելի ու ավելի հաճախ էին նրա գլխով անսովոր, տարօրինակ և բարդ մտքեր անցնում, նման այն մտքերին, որոնք մի ամիս առաջ այնպես ցնցեցին նրան իր բանտարկության օրը։ Սովորաբար դա պատահում էր ծառայությունից հետո, իրիկնամուտին, երբ նա հանդարտ թափառում էր պարտեզում քուն մտնող խիտ ծառերի տակ, և միայնակ, թախծոտ, ունկնդիր լինում իրիկնային բզեզների բզզոցին և նայում հանգիստ վարդագույն մթագնող երկնքին։

Այդ նոր ներքին կյանքը նրան զարմացնում էր իր բազմազանությամբ։ Առաջ նա նույնիսկ չէր համարձակվում մտքով անցկացնել, թե ինչպիսի ուրախություններ, ինչ ուժ և ինչպիսի խոր հետաքրքրություն է թաքնված այնպիսի մի հասարակ, սովորական բանում, ինչպիսին մարդկային միտքն է։

Նա հիմա արդեն հաստատ գիտեր, որ չի մնա բանակում ծառայելու և անպայման կգնա պահեստ, հենց որ լրանա պարտադիր երեք տարին, որոնք նա պետք է անցկացներ, զինվորական ուսումնարանում կրթություն ստանալու դիմաց։ Բայց նա ոչ մի կերպ չէր կարող պատկերացնել, թե ինքն ինչ է անելու քաղաքացիական պայմաններում։ Նա հերթով կշռադատում էր՝ ակցիզ, երկաթուղի, կոմերցիա, մտածում էր կալվածքի կառավարիչ դառնալ, դեպարտամենտ մտնել։ Եվ այստեղ առաջին անգամ նա զարմանքով իրեն պատկերացրեց զբաղմունքների և մասնագիտությունների այն ողջ բազմազանությունը, որոնց նվիրվում են մարդիկ։ «Որտեղի՞ց են դուրս գալիս,— մտածում էր նա,— զանազան ծիծաղելի, հրեշավոր, անհեթեթ ու կեղտոտ մասնագիտությունները։ Օրինակ, ի՞նչ եղանակով է կյանքը ծնում բանտապահներ, լարախաղացներ, կոշտուկ վիրահատողներ, դահիճներ, արտաքնոց մաքրողներ, շան սափրիչներ, ժանդարմներ, աճպարարներ, պոռնիկներ, բաղնեպաններ, պայտառներ, գերեզմանափորներ, համալսարանի սպասավորներ։ Թե՞, գուցե, չկա մարդկային ոչ մի, նույնիսկ ամենադատարկ, պատահական, քմահաճ, բռնի արատավոր մտահնարանք, որն անմիջապես չգտներ իր կատարողն ու սպասավորը»։

Նրան զարմացնում էր, երբ նա ավելի խորն էր մտածում, և այն, որ ինտելիգենտ մասնագիտությունների հսկայական մեծամասնությունը հիմնված է բացառապես դեպի մարդկային

ազնվությունն ունեցած անվստահության վրա և այդպիսով սպասարկում է մարդկային արատներն ու թերությունները։ Այլապես ամենուրեք ինչի՞ պետք պիտի լինեին գրասենյակային ծառայողները, հաշվապահները, աստիճանավորները, ոստիկանությունը, մաքսատունը, վերահսկիչները, տեսուչները և վերակացուները, եթե մարդկությունը կատարյալ լիներ։

Նա մտածում էր նաև քահանաների, բժիշկների, մանկավարժների, փաստաբանների և դատավորների մասին, բոլոր այդ մարդկանց մասին, որոնք իրենց զբաղմունքի տեսակով առիթ ունեն մշտապես շփվելու ուրիշ մարդկանց հոգու, մտքերի և տառապանքների հետ։ Եվ Ռոմաշովը տարակուսանքով այն եզրակացությանն էր գալիս, որ այդ կարգի մարդիկ մյուսներից ավելի շատ են կոշտանում և ընկնում, ընկղմվելով անփութության, սառն ու անկենդան ձևամոլության, սովորական դարձած և ամոթալի անտարբերության դիրքը։ Նա գիտեր, որ դոյություն ունի ևս մի կարգ՝ արտաքին, երկրային բարօրությունը կառուցողների կարգը. ինժեներներ, ճարտարապետներ, գյուտարարներ, ֆաբրիկատերեր, գործարանատերեր։ Բայց նրանք, որոնք ընդհանուր ջանքերով կարող կլինեին մարդկային կյանքը դարձնել զարմանալի հարմար ու հիասքանչ, նրանք ծառայում են հարստությանը։ Նրանց բոլորի վրա ծանրացած է վախը իրենց կաշվի համար, անասնական սերը դեպի իրենց ձագերը և իրենց որջը, կյանքի վախը, և այստեղից՝ երկչոտ կապվածությունը փողին։ Վերջապես ո՞վ է կարգավորելու ծեծկված խլեբնիկովի ճակատագիրը, ո՞վ է կերակրելու, սովորեցնելու նրան և ասելու. «Տո՛ւր ինձ ձեռքդ, եղբայր»։

Այսպիսով Ռոմաշովը անվստահ, չափազանց դանդաղ, բայց ավելի ու ավելի խորն էր մտասուզվում կյանքի երևույթների մեջ։ Առաջ ամեն ինչ այնպես պարզ էր թվում։ Աշխարհը բաժանվում էր երկու անհավասար մասերի. մեկը՝ փոքր մասը, սպայությունն է, որին շրջապատում է պատիվը, ուժը, իշխանությունը, մունդիրի կախարդական արժանապատվությունը և մունդիրի հետ մեկտեղ չգիտես ինչու արտոնագրված խելքությունը, և ֆիզիկական ուժը, և գոռող հպարտությունը. մյուսը՝ հսկայական և անդեմ մասը, քաղաքացիական ազգաբնակչությունը, այլ կերպ՝ շպակները, շտաֆիրկները, աքարները. նրանց արհամարհում էին. կտրիճություն էր համարվում որևէ ոչ զինվորական մարդու առանց պատճառի անպատվելը կամ

ծեծելը, նրա քթի վրա վառած ծխախոտ հանգցնելը, ցիլինդրը նրա ականջներին քաշելը. այդպիսի քաջագործությունների մասին դեռ ուսումնարանում հիացմունքով միմյանց պատմում էին դենդիակուց յունկերները։ Եվ այժմ ահա, իրականությունից բացի մի կողմ քաշվելով, նրան նայելով ինչ-որ թաքուն անկյունից, մի ճեղքից, Ռոմաշովը քիչ-քիչ սկսում էր հասկանալ, որ ամբողջ ռազմական ծառայությունը նրա խաբուսիկ քաջարիությամբ ստեղծված է դաման, ամոթալի համամարդկային թյուրիմացությամբ։ «Ինչպե՞ս կարող է գոյություն ունենալ մի դաս,— ինքն իրեն հարցնում էր Ռոմաշովը,— որը խաղաղ ժամանակ, մի փշուր անգամ օգուտ չբերելով, ուտում է ուրիշի հացը և ուրիշի միսը, հագնում է ուրիշի հագուստը, ապրում է ուրիշների տանը, իսկ պատերազմի ժամանակ գնում է անիմաստաբար սպանելու և հաշմելու իրենց նման մարդկանց»։

Եվ նրա համար ավելի ու ավելի պարզ էր դառնում այն միտքը, որ գոյություն ունեն մարդու միայն երեք հպարտ կոչում՝ դիտությունը, արվեստը և ազատ ֆիզիկական աշխատանքը։ Նոր ուժով նորոգվեցին նրա զանքները գրական աշխատանքի մասին։ Երբեմն, երբ պատահում էր, որ նա մի լավ, իսկական ոգեշնչությամբ հագեցած գիրք էր կարդում, տանջալիորեն մտածում էր. «Աստված իմ, ախր սա այնքան պարզ է, ես ինքս էլ էի դա մտածում և զգում։ Չէ՞ որ ես ինքս էլ կարող էի նույն բանն անել»։ Նրան գրավում էր մի վիպակ կամ մեծ վեպ գրելու միտքը, որի համար հենք կծառայեին ռազմական կյանքի սարսափն ու տաղտուկը։ Մտքում ամեն ինչ դասավորվում էր հրաշալի, պատկերներն ստացվում էին վառ, կերպարները՝ կենդանի, ֆաբուլան զարգանում և գծագրվում էր քմահաճ կանոնավոր նախշերով, և արտակարգ ուրախ և հետաքրքիր բան էր դրա մասին մտածելը։ Բայց երբ նա անցնում էր գրելուն, ստացվում էր դժգույն, մանկականորեն թույլ, անճարակ, ճոռոմ կամ շարլոն։ Քանի դեռ գրում էր՝ տաքացած և արագ, նա ինքն էլ չէր նկատում այդ թերությունները, բայց բավական էր իր էջերի կողքին կարդալ ռուս մեծ ստեղծագործողներից գեթ մի փոքրիկ հատված, որ նրան տիրեր անզոր հուսահատությունը, ամոթն ու զարշանքը դեպի իր արվեստը։

Այդպիսի մտքերով նա հիմա հաճախ էր թափառում քաղաքում մայիսի վերջի տաք գիշերներին։ Իր իսկ համար աննկատելի՝ նա ընտրում էր միշտ նույն ճանապարհը՝ հրեական գերեզմանատնից մինչև ամբարտակը և ապա դեպի երկաթուղու թումբը։ Երբեմն պատահում էր, տարված իր համար նոր՝ մտքի այդ բուռն աշխատանքով, նա չէր նկատում անցած ուղին, և հանկարծ ուշքի գալով, ասես արթնանալով, զարմացած տեսնում էր, որ գտնվում է քաղաքի մյուս ծայրում։

Եվ ամեն գիշեր նա անցնում էր Շուրոչկայի պատուհանների մոտով, անցնում էր փողոցի հակառակ կողմով, գաղտագողի, շունչը պահած, արագորեն սրտով, իրեն այնպես զգալով, կարծես մի թաքուն, ամոթալի, գողունի գործ է կատարում։ Երբ Նիկոլաևների հյուրասենյակում լամպը հանցնում էին, և լուսնից աղոտ փայլում էին լուսամուտների սև ապակիները, նա թաքնվում էր ցանկապատի մոտ, ձեռքերը պինդ սեղմում էր կրծքին և աղերսական շշուկով ասում.

— Քնի՛ր, իմ հիասքանչ, քնի՛ր, իմ սեր։ Ես քեզ մոտ եմ, ես հսկում եմ քեզ։

Այդ բոպեներին նա իր աչքերին արցունք էր զգում, բայց նրա հոգում քնքշության, խանդաղատանքի և անձուրաց հավատարմության հետ շարժվում էր հասունացած արուի կույր, անասնական խանդը։

Մի անգամ Նիկոլաևը հրավիրված էր գնդի հրամանատարի մոտ վինտ խաղալու։ Ռոմաշովը գիտեր այդ։ Գիշերը, փողոցով անցնելիս, մեկի ցանկապատից ներս՝ նախապարտեզից նարգիզների բարկ ու գրգռիչ հոտ առավ։ Նա ցանկապատի վրայով ներս թռավ, և ձեռքերը խոնավ հողում կեղտոտելով, մարգից մի ամբողջ գիրկ քաղեց այդ սպիտակ, քնքուշ, թաց ծաղիկներից։

Շուրոչկայի ննջարանի պատուհանը բաց էր, նա դեպի բակ էր նայում և լուսավորված չէր։ Մի համարձակությամբ, որն ինքն իրենից չէր սպասում, Ռոմաշովը ներս սողոսկեց, ճռնչացող դռնակով մոտեցավ պատին և ծաղիկները լուսամուտից ներս նետեց։ Ոչինչ չշարժվեց սենյակում։ Մի երեք բոպե Ռոմաշովը կանգնել, սպասում էր, և նրա սրտի տրոփյունը իր թիկթիկոցով լցնում էր ամբողջ փողոցը։ Հետո, կծկվելով, ամոթից կարմրելով, նա թաթերի վրա դուրս եկավ փողոց։

Հաջորդ օրը նա Շուրոչկայից ստացավ մի կարճ, բարկացկոտ տոմսակ։

«Այլևս երբեք չհամարձակվեք այդպիսի բան անել։ Ռոմեոյի և Ջուլիետայի ճաշակի քնքշությունները ծիծաղելի էին,

մանավանդ եթե դրանք տեղի են ունենում բանակի հետևակային գնդում»։

Ցերեկները Ռոմաշովն աշխատում էր գեթ հեռվից տեսնել Նրան, բայց չգիտես ինչու այդ չէր պատահում։ Հաճախ, հեռվից տեսնելով մի կնոջ, որը կազմվածքով, քայլվածքով, գլխարկով հիշեցնում էր Շուրոչկային, Ռոմաշովը վազում էր նրա հետևից սեղմված սրտով, ընդհատվող շնչառությամբ, ղգալով, թե ինչպես հուզմունքից իր ձեռքերը սառչում և խոնավանում են։ Եվ ամեն անգամ, իր սխալը նկատելով, նա հոգում տաղտուկ, միայնություն և ինչ-որ մեռյալ դատարկություն էր զգում։

18

Մայիսի ամենավերջին օրերին կապիտան Օսադչու վաշտում կախվեց մի ջահել զինվոր և, ճակատագրի տարօրինակ բերումով, կախվեց նույն օրը, երբ անցյալ տարի այդ վաշտում կատարվել էր նույնպիսի մի դեպք։ Երբ նրան հերձում էին, Ռոմաշովը գնդի օրապահի օգնականն էր և ակամա ստիպված էր ներկա լինել հերձմանը։ Զինվորի դիակը դեռ չէր քայքայվել։ Ռոմաշովն զգում էր, թե ինչպես նրա կտոր-կտոր արած մարմնից փչում էր հում մսի թունդ հոտ, ինչպես մսի խանութների մուտքի մոտ ցուցադրած մսեղիքից։ Նա տեսնում էր նրա գորշ և կապույտ լորձոտ փայլուն փորոտիքը, տեսնում էր նրա ստամոքսի պարունակությունը, տեսնում էր նրա ուղեղը՝ գորշդեղնագույն, ամբողջովին գալարապատ, որը մարդկանց քայլերից կաղապարի միջից շուռ տված դոնդողի պես ցնցվում էր սեղանի վրա։ Այդ բոլորը նոր էր, սարսափելի ու զզվելի և միաժամանակ նրան ներշնչում էր ինչ-որ գարշողական անհարգալիրություն դեպի մարդը։

Երբեմնակի, ժամանակ առ ժամանակ գնդում տիրում էին ինչ-որ ընդհանուր, համատարած, այլանդակ խրախճանքի օրեր։ Թերևս, դա պատահում էր այն տարօրինակ պահերին, երբ պատահականորեն միմյանց հետ կապված, բայց բոլորը միասին ձանձրանալի անգործունեության և անիմաստ դաժանության դատապարտված մարդիկ, հանկարծ իրար աչքերի մեջ, այնտեղ, ներսում, խառնաշփոթ և ճնշված գիտակցության խորքում, տեսնում էին սարսափի, թախծի և խելահեղության

ինչ-որ խորհրդավոր մի կայծ։ Եվ այն ժամանակ աղնվացեղ ցուլի կյանքի պես հանդարտ կուշտ կյանքը ասես դուրս էր նետվում իր հունից։

Այդպես պատահեց նաև այդ ինքնասպանությունից հետո։ Առաջինն սկսեց Օսադչին։ Այնպես պատահեց, որ հենց այդ ժամանակ մի քանի օր իրար հետևից տոներ էին և այդ օրերի ընթացքում նա ակումբում անասելի տարվեց թղթախաղով և սարսափելի շատ խմում էր։ Տարօրինակ բան. այդ մեծ, ուժեղ և գազանի պես գիշատիչ մարդու հսկայական կամքը իր հետևից տարավ ամբողջ գունդը դեպի ցած պտտվող ինչ-որ ձագարի մեջ, և այդ տարերային, ջղագար խրախճանքի ամբողջ ընթացքում Օսադչին ցինիզմով, անպատկառ մարտահրավերով, ասես դիմադրություն և առարկություն որոնելով, աղտեղի խոսքերով խայտառակում էր անձնասպանի անունը։

Երեկոյան ժամը վեցն էր։ Ռոմաշովը ոտքերը վեր քաշած նստել էր լուսամուտի գոգին և կամացուկ սուլում էր «Ֆաուստի» վալսը։ Այգում ճղճղում էին ճնճղուկները և կաչաղակները կչկչում։ Մութը դեռ չէր ընկել, բայց ծառերի մեջ արդեն թափառում էին թեթև, մտախոհ ստվերները։

Հանկարծ նրա տան արտասանդուղքի մոտ մեկի ձայնը ոգևորությամբ, բայց սխալ տոնով երգեց.

Խրտնել են ձիերը, սանձերն են կրծոտում,
Փրփրել են, դղրդում են փնչոցով...

Շրխկոցով բացվեցին մուտքի զույգ դռները, և սենյակ ընկավ վետկինը։ Դժվարությամբ պահպանելով հավասարակշռությունը, նա շարունակում էր երգել.

Տիկիններ, օրիորդներ հուսահատ հայացքով
Նայում են մարդկանց այն հեռացող։

Նա հարբած էր ծանր, թունդ, երեկվանից։ Աչքերի լոգերը անքուն գիշերվա պատճառով կարմրել և ուռել էին։ Գլխարկը դրել էր ծոծրակին։ Բեղերը, որ դեռ թաց էին, մուգ զույն էին ստացել և երկու հաստ սառցալուլայի պես ցած էին կախվել, ինչպես ծովացուլի բեղերը։

— Ռ-ռոմուա՛լդ։ Անախորետ[1] սիրիարի՜, արի քեզ պա-

[1] Անախորետ — ճգնավոր, անապատական։

չե՞մ,— գոչեց նա ամբողջ սենյակով մեկ։— Դե, ի՞նչ ես թթվել։ Գնանք, ախպերս։ Այնտեղ ուրախ է. խաղում են, երգում։ Գնանք։

Նա պլենդ և երկար համբուրեց Ռոմաշովի շրթունքները, նրա գեմքը թրջելով իր բեղերով։

— Դե, հերիք է, հերիք, Պավել Պավլովիչ,— թույլ դիմադրում էր Ռոմաշովը,— ինչի՞ է պետք այդ հորթի ուրախությունը։

— Բարեկամս, ձեռքդ տուր։ Փափկասուն օրիորդ։ Հանձին քո սիրում եմ ես անցյալ տառապանքն իմ և պատանությունն իմ անդարձ անցած։ Հիմա Օսադչին այնպիսի հավերժ հիշատակ երգեց, որ ապակիները զնգզնգացին։ Ռոմաշովիչ, սիրում եմ քեզ, եղբայրս։ Արի քեզ համբուրեմ, ոնց որ պետքն է, ռուսավարի, ուզիղ շրթունքներդ։

Ռոմաշովի համար զզվելի էր Վետկինի պաղած աչքերով ուռած դեմքը, գարշելի էր նրա բերանից փչող հոտը, նրա թաց շրթունքների և բեղերի հպումը։ Բայց այդպիսի դեպքերում նա միշտ անպաշտպան էր և հիմա միայն շինծու և ալարկոտ ձգտում էր։

— Կաց, ինչի՞ համար էր, որ քեզ մոտ եկա... —բղավում էր Վետկինը զկոտալով և օրորվելով։— Ինչ-որ կարևոր բան կար... Հա, ահա թե ինչու է, ախպերս, համա թե թափ տվեցի Բոբեռինսկուն։ Հասկանո՞ւմ ես, ամբողջը, մինչև տակը, մինչև վերջին կոպեկը։ Այնտեղ հասավ, որ նա սկսեց խնդրել, որ գրանցումով խաղանք։ Դե, էստեղ ես նրան ասում է.. «Չէ՞, ախպերս, այդ արդեն ատա՛նդե. մի ավելի փափուկ բան չի՞ք կամենա»։ Այստեղ նա գնում է ատրճանակը։ Ահա, Ռոմաշենկո, նայիր։— Վետկինը տաբատի գրպանից հանեց, գրպանն էլ հետը դեպի դուրս շուռ տալով, գորշ զամշե պատյանով մի փոքրիկ նուրբ ատրճանակ։— Սա, եղբայրս, Մերվինի սիստեմի է։ Հարցնում եմ՝ «Քանիսո՞վ ես գնում»։— «Քսանհինգ»։ —«Տա՛ սը»։— «Տասնհինգ»։ «Դե՛, սատանան քեզ հետ»։ Նա մի ռուբլի դրեց в цвет и в масть в круглую. Բո՛ւմ, բո՛ւմ, բո՛ւմ, բո՛ւմ։ Հինգերորդ աբցուգի ժամանակ ես նրա դամոչկային՝ շրթ՛խկ։ Բարև՛ ձեզ, հարյուր սագեր։ Նա էլի մի բան պարտք մնաց։ Հիանալի ատրճանակ է, փամփուշտներն էլ հետը։ Ահա քեզ, Ռոմաշովիչ։ Ի հիշատակ և ի նշան քնքուշ բարեկամության նվիրում եմ քեզ ատրճանակն այս, և ջանասիրությամբ միտդ պահիր, թե ինչպիսին է Վետկինը՝ խիզախ սպան։ Ահա։ Սա ոտանավոր է։

— Այդ ինչո՞ւ, Պավել Պավլովիչ։ Պահեցեք։

— Ինչ է, դու կարծում ես վա՞տ ատրճանակ է։ Փիղ կարող ես սպանել։ Սպասիր, մենք հիմա կփորձենք։ Որտե՞ղ է այրում քո ստրուկը։ Ես կգնամ նրանից մի տախտակ կուզեմ։ Էյ, ա-ա-ստրո՛ւկ։ Ջինակի՞ր։

Օրորվող քայլերով նա դուրս ելավ հաշտ, որտեղ սովորաբար լինում էր Գայանը, այնտեղ մի քիչ դես-դեն ընկավ, և մի բոպե անց վերադարձավ, աջ թևի տակ բռնած Պուշկինի կիսանդրին։

— Պետք չէ, Պավել Պավլովիչ, չարժե,— թույլ ետ էր կանգնեցնում նրան Ռոմաշովը։

— Է, դատարկ բան է, ինչ-որ մի շպակ։ Ահա մենք հիմա աթոռին կդնենք սրան։ Հանգիստ կանգնիր, անպիտան,— մպառով սպառնաց Վետկինը կիսանդրուն։— Լսո՞ւմ ես, ես քեզ ցույց կտամ։

Նա մի կողմ քաշվեց, Ռոմաշովի կողքին հենվեց լուսամուտի գոգին և հրահանը վեր քաշեց։ Բայց այդ անելիս նա այնպես անհեթեթ, այնպիսի հարբած շարժումներով էր թափահարում ատրճանակն օդում, որ Ռոմաշովի միայն վախեցած կնճռոտվում էր և աչքերը հաճախակի թարթում, անզգույշ կրակոցի սպասելով։

Տարածությունը ութ քայլից ավելի չէր։ Վետկինը երկար նշան էր բռնում, ատրճանակի փողը դես-դեն պտտեցնելով։ Վերջապես նա կրակեց, և կիսանդրու վրա, աջ այտին, գոյացավ մի մեծ, անկանոն սև ծակ։ Կրակոցից Ռոմաշովի ականջը զրնգացին։

— Տեսա՞ր ոնց էր,— բղավեց Վետկինը։— Դե, ահա ուրեմն, առ քեզ, պահիր ի հիշատակ և հիշիր իմ սերը։ Իսկ հիմա կիտելդ հագիր և հա՛յդե ափումը։ Գցե՛նք ի փառս ռուսական զենքի։

— Պավել Պավլովիչ, երթ չարժե, իսկապես, լավ է՝ պետք չէ,— անզոր ալաչում էր նրան Ռոմաշովը։

Բայց նա չկարողացավ հրաժարվել, դրա համար չէր գտնում ոչ վճռական բառեր, ոչ ձայնի մեջ հաստատուն շեշտեր։ Եվ մտովի իրեն հայհոյելով փալասային կամազրկության համար, նա ալարկոտ քարշ եկավ Վետկինի հետևից, որը անհաս-

տատ, զիգզագներով քայլում էր բանջարանոցների մարգերի երկայնքով, վարունգների ու կաղամբի վրայով։

Դա անկանոն, աղմկալի, գինարբուքի իսկապես որ խելահեղ երեկո էր։ Սկզբում խմում էին ակումբում, հետո գնացին կայարան գլինտվեյն խմելու, հետո նորից վերադարձան ակումբ։ Սկզբում Ռոմաշովն ամաչում էր, ինքն իր վրա բարկանում զիջողության համար և ապրում էր զզվանքի և անհարմարության այն հոգեմաշ զգացումը, որ ունենում է ամեն մի թարմ մարդ հարբածների ընկերակցությամբ։ Ծիծաղը նրան թվում էր անբնական, սրամտությունները՝ տափակ, երգեցողությունը՝ կեղծ։ Բայց կայարանում խմած կարմիր գինին հանկարծ նրա գլուխը պտտեցրեց ու լցրեց աղմկոտ և ինչ-որ ջղաձգական ուրախությամբ։ Միլիոնավոր դողդոջուն ավազահատիկներից մի գորշ շղարշ կանգնեց նրա աչքերի առաջ և ամեն ինչ դարձավ հարմար, ծիծաղելի և հասկանալի։

Ժամ ժամի հետևից անցնում էր ակնթարթի պես, և միայն նրանից, որ ճաշարանում լամպերը վառեցին, Ռոմաշովը աղոտ հասկացավ, որ շատ ժամանակ է անցել, և գիշեր է դարձել։

— Պարոնայք, գնանք աղջիկների մոտ,— առաջարկեց մեկը։— Բոլորս գնանք Շլեյֆերշայի մոտ։

— Շլեյֆերշայի մոտ, Շլեյֆերշայի մոտ։ Ուռա՜։

Եվ բոլորն իրար անցան, գոգացրին աթոռները, սկսեցին ծիծաղել։ Այդ երեկո ամեն ինչ արվում էր ինքն իրեն։ Ակումբի դարպասի մոտ արդեն կանգնել էին զույգ ձի լծած կառքեր, բայց ոչ ոք չգիտեր, թե դրանք որտեղից էին լույս ընկել։ Ռոմաշովի գիտակցության մեջ արդեն վաղուց էին հայտնվել ուշակորույս քնի պահեր, որոնց հաջորդում էին առանձնապես վառ սրված ըմբռնման պահերը։ Նա հանկարծ իրեն տեսավ կառքում՝ Վետկինի կողքին նստած։ Առջևի նստարանին տեղավորվել էր ինչ-որ մի երրորդ անձնավորություն, բայց խավարի մեջ Ռոմաշովը ոչ մի կերպ չէր կարողանում տեսնել նրա դեմքը, թեպետև թեքվում էր դեպի նա, իրանը անզոր թափահարելով աջ ու ձախ։ Այդ դեմքը թվում էր մուգ և մեկ նեղանում, դառնում էր բոնցքաչափ, մեկ ձգվում-երկարում էր թեք ուղղությամբ և զարմանալի ծանոթ էր։ Ռոմաշովը հանկարծ ծիծաղեց և ինքը կարծես դրսից լսեց իր բութ, չոր ծիծաղը։

— Փչում ես, Վետկին, ես գիտեմ, ախպերս, թե ուր ենք

գնում,— ասաց նա հարբած խորամանկությամբ։— Դու, ախպերս, ինձ կանանց մոտ ես տանում։ Ես գիտեմ, ախպերս։

Խլացուցիչ դղրդալով քարերի վրա, նրանցից առաջ անցավ մի ուրիշ կառք։ Արագ ու խառնաշփոթ, լապտերների լույսի տակ երևացին ու աններդաշնակ սրարշավով անցան աշխատ ձիերը, գլխավերևում մոլեգնաբար մտրակը թափահարող կառապանը և չորս սպաներ, որոնք ճիչով ու սուլոցով ճոճվում էին իրենց նստելատեղերում։

Գիտակցությունը մի բոպե արտասովոր պայծառությամբ ու ճշգրտությամբ վերադարձավ Ռոմաշովին։ Այո, ահա նա գնում է այնտեղ, որտեղ մի քանի կանայք ում ուզես տալիս են իրենց մարմինը, իրենց փաղաքշանքներն ու իրենց սիրո մեծ գաղտնիքը։ Փողո՞վ։ Մի բոպեո՞վ։ Ախ, միևնույն չէ արդյոք։ Կանա՜յք։ Կանա՜յք,— ճչում էր Ռոմաշովի մեջ ինչ-որ վայրի և քաղցր, անհամբեր ձայն։ Ինչպես հեռավոր, հազիվ լսելի մի հնչյուն դրան միախառնվում էր խոհը Շուրոչկայի մասին, բայց այդ զուգադիպության մեջ չկար ոչ մի ստոր, վիրավորական բան, այլ, ընդհակառակը, ինչ-որ ուրախության, սպասելի, հուզող բան կար, որից մեղմ ու հաճելի խտուտ էր գալիս նրա սիրտը։

Ահա ինքը հիմա կգա՝ նրանց մոտ, դեռևս անհայտ, դեռևս ոչ մի անգամ չտեսած, այդ տարօրինակ, խորհրդավոր, գերող արարածների՝ կանանց մոտ։ Եվ թաքուն երազանքը իսկույն կդառնա իրականություն, և ինքը կնայի նրանց վրա, կբռնի նրանց ձեռքը, կունկնդրի նրանց քնքուշ ծիծաղն ու երգը, և դա կլինի անհասկանալի, բայց խնդուն մխիթարություն այն բոլորն ծարավի, որով նա ձգտում է աշխարհում դեպի մի կին, դեպի նա, դեպի Շուրոչկան։ Բայց նրա մտքում չկար ոչ մի որոշակի զգայական նպատակ. նրան, մի կնոջ կողմից մերժվածին, տիրաբար, տարերայնորեն ձգում էր այդ անսքող, բացահայտ, պարզունակ սիրո ոլորտը, ինչպես ցուրտ գիշերով հոգնած ու սառած չվող թռչուններին գրավում է փարոսի կրակը։ Եվ ուրիշ ոչինչ։

Ձիերը շրջվեցին դեպի աջ։ Անմիջապես դադարեց անիվների դղրդոցն ու պնդոզակների ճռճռոցը։ Կառքն սկսեց սաստիկ և փափուկ օրորվել աղուրներում ու փոսերում, կտրուկ իջնելով բլուրն ի վար։ Ռոմաշովն աչքերը բացեց։ Խորունկ ներքևում, նրա ոտների տակ, լայնորեն ու անկանոն ցրված էին

փոքրիկ լույսեր։ Նրանք մերթ սուզվում էին ծառերի և անտառանելի տների հետև, մերթ նորից դուրս էին թռչում, և թվում էր, թե այնտեղ, հովտում, թափառում է ցիր ու ցան եղած մի ամբոխ, լապտերները ձեռքերին բռնած ինչ-որ ֆանտաստիկ մի թափոր։ Մի ակնթարթ ինչ-որ տեղից տաքություն և օշինդրի հոտ փչեց, մի մեծ ճյուղ շրշաց գլխավերևներում, և անմիջապես փչեց մի ցուրտ խոնավություն, ասես հին նկուղի շունչ լիներ։

— Ո՞ւր ենք գնում,— նորից հարցրեց Ռոմաշովը։

— Զավալյան,— գոչեց առջևում նստածը, և Ռոմաշովը զարմանքով մտածեց. «Ախ, հա, ախր սա պորուչիկ Եպիֆանովն է։ Մենք գնում ենք Շլեյֆերշայի մոտ»։

— Մի՞թե դուք ոչ մի անգամ չեք եղել,— հարցրեց Վետկինը։

— Կորե՞ք երկուսդ էլ գրողի ծոցը,— բղավեց Ռոմաշովը։ Բայց Եպիֆանովը ծիծաղեց և ասաց.

— Լսեցեք, Յուրի Ալեքսեևիչ, ուզո՞ւմ եք, մենք ականջներին փսփսանք, որ դուք կյանքում առաջին անգամ եք լինում։ Հը՞։ Դե, սիրելիս, դե, հոգյակս։ Նրանք սիրում են այդ։ Ձեզ ի՞նչ արժե։

Ռոմաշովի գիտակցությունը նորից պարուրվեց թանձր, անթափանց խավարով։ Միանգամից, կարծես առանց ամենափոքր խոչ ընդմիջման, նա իրեն տեսավ մանրատախտակ հատակով մի մեծ դահլիճում, որի բոլոր պատերի երկայնքով վիթխարի աթոռներ էին շարած։ Մուտքի դռան և դեպի մութ խցիկներ տանող երեք այլ դռների վերևից կախված էին դեղին ծաղկեփնջերով կարմիր չթե երկար վարագույրներ։ Նույնպիսի վարագույրներ թեթևակի ուռչում և ծփում էին դեպի բակի սև խավարը բացվող լուսամուտների վերևից։ Պատերի վրա լամպեր էին վառվում։ Դահլիճում լույս էր, ծխաշատ և հրեական կերակուրների սուր հոտ էր փչում, բայց ժամանակ առ ժամանակ լուսամուտներից թաց կանաչի, ծաղկող սպիտակ ակացիայի և գարնանային օդի բույր էր գալիս։

Եկել էին մոտ տասը սպա։ Թվում էր, թե նրանցից յուրաքանչյուրը միաժամանակ և՛ երգում էր, և՛ բղավում, և՛ ծիծաղում։ Ռոմաշովը երանելի ու միամիտ ժպտալով թափառում էր մեկից դեպի մյուսը, զարմանքով ու բավականությամբ կարծես առաջին անգամ ճանաչելով Բեկ-Աղամալովին, Լբովին, Վետկինին, Եպիֆանովին, Արշակովսկուն, Օլիզարին և

մյուսներին։ Այդտեղ էր նաև շտաբս-կապիտան Լեշչենկոն. նա նստել էր պատուհանի մոտ իր մշտական հլու և վհատ տեսքով։ Սեղանի վրա, կարծես իրենք իրենց, ինչպես որ այդ երեկո լինում էր ամեն ինչ, հայտնվեցին գարեջրի և թանձր բալոդու շշեր։ Ռոմաշովը խմում էր ինչ-որ մեկի հետ, բաժակ-բաժակի խփում և համբուրվում, և զգում էր, որ իր ձեռքերն ու շրթունքները կպչուն ու քաղցր են դարձել։

Այդտեղ կային հինգ թե վեց կին։ Նրանցից մեկը, արտաքուստ մի տասնչորս տարեկան աղջիկ, որ հագնվել էր մանկլավիկի պես, ոտներին՝ վարդագույն տրիկո, նստել էր Բեկ-Աղամալովի ծնկներին և խաղում էր նրա ակսելբանտների քուղերի հետ։ Մեկ ուրիշը, մետաքսե կարմիր կոֆտայով ու մուգ շրշազգեստով խոշորակազմ շիկահեր մի կին, մեծ, գեղեցիկ շպարված դեմքով և կլոր, սև ու լայն հոնքերով, Ռոմաշովին մոտեցավ։

— Տղամարդ, ինչո՞ւ այդպես տխուր եք։ Գնանք սենյակը,— ասաց նա ցածր ձայնով։

Նա կողքանց, սանձարձակ նստեց սեղանին, ոտքը ոտքին դնելով։ Ռոմաշովը տեսավ, թե ինչպես հագուստի տակ ողորկ գծագրվեց նրա կլոր և հուժկու ազդրը։ Նրա ձեռքերը դողացին, և բերանում սառնություն զգաց։ Նա երկչոտ հարցրեց.

— Ինչպե՞ս է ձեր անունը։

— Ի՞մ։ Մայրինա։— Կինն անտարբեր շուռ եկավ սպայից և սկսեց ոտքերը ճոճել։— Ինձ ծխախոտ հյուրասիրեցեք։

Ինչ-որ տեղից հայտնվեցին երկու հրեա երաժիշտ, մեկը՝ ջութակով, մյուսը՝ դափով։ Պոլկայի ձանձրույթ պատճառող էջեր մեղեդու ներքո, որին ձայնակցում էին խուլ ճարճատուն հարվածները, Օլիզարը և Արշակովսկին սկսեցին կանկան պարել։ Նրանք իրար առաջ ցատկոտում էին մերթ մեկ, մերթ մյուս ոտքի վրա, շրխկացնելով առաջ մեկնած ձեռքերի մատները, ետ-ետ էին գնում, ծալած ծնկները լայն-լայն բաց անում և բթամատները կոնատակերին դրած, կոպիտ-ցինիկ շարժումներով ճոճում էին կոնքերը, անճոռնիաբար մեկ առաջ, մեկ ետ ծռելով իրանները։ Հանկարծ Բեկ-Աղամալովը վեր թռավ աթոռից և բղավեց զիլ, բարձր, մոլեգնած ձայնով.

— Ջվվե՛ն շպակները։ Իսկույն քաշվեն։ Ֆը՛շտ։

Շեմքին կանգնել էին երկու ոչ-զինվորական, նրանց ճանաչում էին գնդի բոլոր սպաները, որովհետև նրանք լինում

էին ակումբում, երեկույթներին. մեկը գանձատան պաշտոնյա էր, մյուսը՝ դատական կատարածուի եղբայրը, մանր կալվածատեր, երկուսն էլ շատ վայելուչ երիտասարդներ։

Պաշտոնյայի դեմքին խաղում էր մի դժգույն բունի ժպիտ, և նա խոսում էր շողոքորթ եղանակով, բայց աշխատելով իրեն սանձարձակ պահել.

— Թո՛ւյլ տվեք, պարոնայք... ընկերակցել։ Ախր դուք ինձ ճանաչում եք, պարոնայք... Ախր ես Դոբեցկին եմ, պարոնայք... Մենք, պարոնայք, ձեզ չենք խանգարի։

— Նեղ արեք, տեղ արեք,— ասաց դատական կատարածուի եղբայրը և լարված ծիծաղեց։

— Դու-ո՛ւրս,— բղավեց Բեկ-Աղամալովը։— Մա՛րշ։

— Պարոնայք, վոնդեք շպակներին,— քրքջաց Արշակովսկին։

Իրարանցում ընկավ։ Սենյակում ամեն ինչ կծիկի պես սկսեց գլորվել, բարձրացավ աղմուկ, ծիծաղ, դոփյուն։ Ծուխ արձակելով, վեր-վեր թռան լամպերի կրակե լեզվակները։ Գիշերային դով օդը լուսամուտներից ներս խուժեց և թրթռալի շնչեց մարդկանց երեսներին։ Ոչ-զինվորականների ձայները, արդեն բակում, բղավում էին անզոր ու շար սարսափով, խղճալի, բարձր ու լացախառն.

— Ես քեզ այսպես չեմ թողնի սա։ Մենք գնդի հրամանատարին կգանգատվենք։ Ես նահանգապետին կգրեմ։ Օպրիչնիկնե՛ր։

— Ո՛ւ-քը՛ս-քը՛ս-քը՛ս։ Հո՛ւյ, հո՛ւյ, վրա՛ տվեք,— բարակ ֆալցետով աղաղակում էր Վետկինը՝ լուսամուտից դուրս կախված։

Ռոմաշովին թվում էր, թե այսօրվա բոլոր դեպքերը մեկը մյուսին հաջորդում են անընդհատ և առանց որևէ կապի, ասես նրա առաջ այլանդակ անհեթեթ, մղձավանջային պատկերներով մի ճչուն ու խայտաբղետ ժապավեն էր բացվում։

Նորից սկսեց միօրինակ ճզվզալ ջութակը, թնդաց ու դղրդաց դափը։ Ինչ-որ մեկը առանց մունդիրի, միայն սպիտակ շապկով, սենյակի մեջտեղում պարում էր կքանիստ անելով և բոպեն մեկ դեպի ետ ընկնելով ու ձեռքը հատակին հենելով։

Արձակած սև մազերով և մերկ վզի տակ ցցված անրակներով մի նիհարիկ գեղեցիկ կին, նրան Ռոմաշովը առաջ չէր նկատել, հոլանի թևերով գրկել էր թախծոտ Լեշչենկոյի վիզը և, աշխատելով խլացնել երաժշտությունն ու աղմուկը, ճղճղան ձայնով երգում էր ուղիղ նրա ականջին.

Երբ հիվանդանաս թոքախտով առմիշտ,
Դալկանաս ինչպես ճերմակ պատը ճիշտ,
Շուրջդ կտեսնես բազմաթիվ բժիշկ։

Բոբետինսկին բաժակից գարեջուր էր շփում միջնորմով անջատած մութ խցիկներից մեկը, իսկ այնտեղից մի դժգոհ, թավ, քնկոտ ձայն փնթփնթալով ասում էր.

— Դե, պարոնայք... դե ախր հերիք է։ Այդ ո՞վ է։ Դա ի՞նչ խոզություն է։

— Լսեցեք, դուք վաղո՞ւց է, որ այստեղ եք,— հարցրեց Ռոմաշովը կարմիր կոֆտա հագած կնոջը և գողունի, կարծես թե իր համար աննկատելի, ձեռքը դրեց նրա ամուր, տաք ոտքին։

Կինը մի բան պատասխանեց, որը Ռոմաշովը չլսեց։ Նրա ուշադրությունը գրավեց մի վայրենի տեսարան։ Պոդպրապորշչիկ Լբովը ընկել էր երաժիշտներից մեկի հետևից և դափով թակում էր նրա գլուխը։ Հրեան բղավում էր արագ ու անհասկանալի և, վախով ետ նայելով, անկյունից անկյուն էր նետվում, հավաքելով սերթուկի երկար փեշերը։ Բոլորը ծիծաղում էին։ Արշակովսկին ծիծաղից ընկավ հատակին և արցունքոտ աչքերով գլորվում էր դես ու դեն։ Հետո լսվեց մյուս երաժշտի ծակող ճիչը։ Ինչ-որ մեկը նրա ձեռքից խլեց ջութակը և ահռելի ուժով զարկեց գետին։ Ջութակի կոթը փշուր-փշուր եղավ երգեցիկ ճարճատյունով, որը տարօրինակ կերպով ձուլվեց հրեայի հուսակտուր աղաղակի հետ։ Հետո Ռոմաշովի համար վրա հասավ խավար մոռացության մի քանի բոպե։ Եվ հանկարծ կարծես տենդային երազի մեջ, նա նորից տեսավ, որ սենյակում ինչքան մարդ կար, բոլորը միանգամից սկսեցին բղավել, դես-դեն ընկնել, ձեռքերը թափահարել։ Մարդիկ արագ և սեղմ շրջապատեցին Բեկ-Աղամալովին, բայց իսկույն էր լայն ետ բացվեցին, ցրվեցին սենյակով մեկ։

— Բոլորդ դուրս այստեղից։ Ո՛չ ոքի չեմ ուզում,— կատաղի բղավում էր Բեկ-Աղամալովը։

Նա կրճատացնում, իր առաջ թափահարում էր բռունցքները և ոտքերը դոփում։ Նրա դեմքը մոռագույն էր դարձել, ճակատի վրա լարերի պես փքվել էին քթի մոտ իրար միացող երկու երակ, գլուխն ահեղ ցած էր կախված, իսկ դուրս պրծած աչ-

քերի մեջ սարսափելի փայլում էին մերկացած կլոր սպիտակուցները։

Նա ասես կորցրել էր մարդկային բառերը և մռնչում էր կատաղած գազանի պես, ահավոր թրթռացող ձայնով.

— Ա-ա՜-ա՜-ա՜։

Հանկարծ նա արագ և անսպասելի ճարպկությամբ, մարմինը դեպի ձախ ճկելով, հանեց թուրը պատյանից։ Թուրը շրխկաց և հատու սուլոցով փայլատակեց նրա գլխավերևում։ Եվ միանգամից բոլորը, որ գտնվում էին սենյակում, նետվեցին դեպի լուսամուտները ու դռները։ Կանայք հիստերիկ ճչում էին։ Տղամարդիկ բոթում էին միմյանց։ Ռոմաշովին թափով քշեցին դեպի դուռը և ինչ-որ մեկը նրա կողքից խցկվելիս արյուն հանելով ու ցավեցնելով, ուսադիրի ծայրով, թե կոճակով խաղեց նրա այտը։ Եվ նույն բոպեին բակում սկսեցին բղավել, իրար ընդհատելով հուզված, աճապարող ձայներ։ Ռոմաշովը դռան մեջ մնաց մենակ։ Նրա սիրտը հաճախակի և ուժգին բաբախում էր, բայց սարսափի հետ մեկտեղ նա ապրում էր մի քաղցր, մոլի և ուրախ նախազգացում։

— Կտոր-կտոր կանեմ,— բղավում էր Բեկ-Աղամալովը՝ ատամները կրճատացնելով։

Ընդհանուր սարսափի տենչը բոլորովին հարբեցրել էր նրան։ Մոլագար ուժով նա մի քանի հարվածով ջարդ ու փշուր արեց սեղանը, հետո թրով կատաղի հարվածեց հայելուն, և նրա բեկորները ծիածանագույն փայլուն անձրևի պես շաղ եկան ամեն կողմ։ Մյուս սեղանից նա մի հարվածով ցած թափեց բոլոր շշերն ու բաժակները։

Բայց հանկարծ լսվեց մեկի սուր, անբնական-լկտի բղավոցը։

— Տխմա՜ր։ Գյադա՜։

Դա բղավում էր նույն այն գլխաբաց, հոլանի թևերով կինը, որը քիչ առաջ փարվում էր Լեշչենկոյին։ Ռոմաշովը առաջ նրան չէր տեսել։ Նա կանգնել էր վառարանի հետևի որմնախորշում և բռունցքները կոնքերին սեղմած, ամբողջովին առաջ թեքված, անդադար բղավում էր շուկայի խաբված վաճառուհու բղավոցով.

— Տխմա՜ր։ Գյադա՜։ Ծառա՜։ Ոչ ոք էլ քեզանից չի վախենում։ Տխմա՜ր, տխմա՜ր, տխմա՜ր, տխմա՜ր...

Բեկ-Աղամալովը հոնքերը կիտեց և, կարծես շփոթվելով,

թուրը ցած թողեց։ Ռոմաշովը տեսնում էր, թե ինչպես աստիճանաբար դժգունում էր նրա դեմքը և ինչպես աչքերում բորբոքվում էր մի չարագուշակ դեղին փայլ։ Եվ միաժամանակ ավելի ու ավելի ցած էր ծալում ոտքերը, ամբողջովին կծկվում և ներս էր քաշում վիզը, ինչպես թռիչք կատարելու պատրաստ գազան։

— Լռի՛ր,— նետեց նա խոպոտ, ասես թքեց։

— Տխմա՜ր։ Ավարա՜։ Չե՛մ լռի։ Տխմա՜ր։ Տխմա՜ր,— բղավում էր կինը, ամեն մի ճիչից ամբողջ մարմնով ցնցվելով։

Ռոմաշովը գիտեր, որ ինքն էլ վայրկյան առ վայրկյան գունատվում է։ Նրա գլխում առաջացավ իրեն ծանոթ անկշռելիության, դատարկության և ազատության զգացումը։ Սարսափի և ուրախության տարօրինակ խառնուրդը արբած, թեթև փրփուրի պես հանկարծ նրա հոգին բարձրացրեց դեպի վեր։ Նա տեսավ, որ Բեկ-Աղամալովը, առանց աչքերը կնոջից կտրելու, թուրը դանդաղ բարձրացնում է վեր։ Եվ հանկարծ խելահեղ հիացմունքի, սարսափի, ֆիզիկական ցրտի, ծիծաղի և խիզախության ալիքը հորդեց Ռոմաշովի վրա։ Առաջ նետվելով, նա դեռ կարողացավ լսել, թե ինչպես Բեկ-Աղամալովը կատաղորեն խռխռացրեց.

— Չես՞ լռի։ Ես քեզ վերջին...

Ռոմաշովը ամուր, մի ուժով, որ ինքն էլ իրենից չէր սպասում, բռնեց Բեկ-Աղամալովի դաստակը։ Մի քանի վայրկյան երկու սպան անթարթ, շեշտակի նայում էին իրար, հինգ կամ վեց վերշոկ հեռավորությունից։ Ռոմաշովը լսում էր Բեկ-Աղամալովի հաճախակի, ձիու պես փնչացնող շնչառությունը։ Նա տեսնում էր նրա աչքերի սարսափելի սպիտակուցները, և սպիտակ, ճարճատող, շարժվող ծնոտները, բայց նա արդեն զգում էր, որ խելահեղ կրակը վայրկյան առ վայրկյան հանգչում է այդ աղճատված դեմքի վրա։ Եվ Ռոմաշովի համար անհազարհոր ու չտեսնված ուրախալի էր կանգնել այդպես, կյանքի ու մահվան միջև, և արդեն գիտենալ, որ ինքը հաղթող է դուրս գալիս այդ խաղից։ Ըստ երևույթին, բոլոր նրանք, ովքեր դրսից դիտում էին այդ տեսարանը, հասկացան նրա վտանգավոր նշանակությունը։ Բակում, լուսամուտների հետև լռություն տիրեց, այնպիսի լռություն, որ մի տեղ, երկու քայլի վրա, խավարում, հանկարծ սոխակը բարձրաձայն ու անհոգ գեղգեղաց։

— Թո՜ղ,— խոպոտ արտաբերեց Բեկ-Աղամալովը։

— Բեկ, դու չես խփի մի կնոջ,— ասաց Ռոմաշովը հան-

գիստ,— Բեկ, հետո ամբողջ կյանքումդ կամաչես։ Դու չես խփի։

Խելահեղության վերջին կայծերը հանգան Բեկ-Աղամալովի աչքերում։ Ռոմաշովն սկսեց արագ թարթել կոպերը և խոր հոգոց հանեց, ինչպես ուշագնացությունից հետո։ Նրա սիրտն սկսեց արագ ու անկանոն բաբախել, ինչպես վախի ժամանակ, իսկ գլուխը նորից ծանրացավ և տաքացավ։

— Թո՛ղ,— մի անգամ էլ բղավեց Բեկ-Աղամալովը ատելությամբ և ձեռքը քաշեց։

Հիմա Ռոմաշովն զգում էր, որ արդեն ի վիճակի չէ նրան դիմադրելու, բայց արդեն նրանից չէր վախենում և ասում էր խղճալով ու փաղաքշանքով, հազիվ նկատելի դիպչելով ընկերոջ ուսին.

— Ներեցեք ինձ... Բայց ախր ինքներդ հետո ինձ շնորհակալություն կասեք։

Բեկ-Աղամալովը կտրուկ, շրխկոցով, թուրը դրեց պատյան։

— Լա՛վ։ Գրողի ծո՛ցը,— բղավեց նա բարկացած, բայց արդեն ձևացնելու և ամոթի մի որոշ զգացումով։— Ես ձեզ հետ դեռ հաշիվ կտեսնեմ։ Դուք իրավունք չունեք...

Բոլոր նրանք, ովքեր բակից դիտում էին այդ տեսարանը, հասկացան, որ ամենասարսափելի պահն անցավ։ Ջափազանցված, լարված քրքիջով նրանք ներս թափվեցին։ Հիմա նրանք բոլորն սկսեցին տնավարի ու մտերմական սանձարձակությամբ հանգստացնել և համոզել Բեկ-Աղամալովին։ Բայց նա արդեն հանգել, ուժասպառ էր եղել և նրա միանգամից մթագնած դեմքը հոգնած ու զզված արտահայտություն ուներ։

Վաղեց-եկավ Շլեյֆերշան, մի հաստամարմին տիկին, կեղտից փայլող կրծքով, առանց արտևանունքների մուգ պարկերով շրջապատված աչքերի կոշտ արտահայտությամբ։ Նա նետվում էր մերթ դեպի մեկ, մերթ մյուս սպան, ձեռքը դնում էր թևքերին կամ կոճակներին և լացակումած աղաղակում.

— Դե, պարոնայք, դե ո՞վ է վճարելու ինձ այս ամենի համար, հայելու, սեղանի, խմիչքների և աղջիկների համար։

Եվ նորից անհայտ մեկը մնաց նրա հետ բացատրվելու։ Մյուս սպաները խմբով դուրս եկան։ Մայիսյան դիշերվա մաքուր, մեղմ օդը թեթև ու հաճելի խուժեց Ռոմաշովի կուրծքը և նրա ամբողջ մարմինը լցրեց թարմ, զվարթ թրթիռով։ Նրան թվաց, թե ասես թաց սպունգի շփումից այսօրվա հարբածության հետքերը միանգամից սրբվեցին նրա ուղեղից։

Նրան մոտեցավ Բեկ-Աղամալովը և թևանցուկ արեց։

— Ռոմաշով, նստեցեք ինձ հետ,— առաջարկեց նա,— լա՞վ։

Եվ երբ նրանք արդեն նստել էին իրար կողք և Ռոմաշովը, աջ թեքվելով, նայում էր, թե ինչպես ձիերը անկանոն քառատրոփով, լայն գավակները վեր-վեր գցելով կառքը քաշում են սարն ի վեր, Բեկ-Աղամալովը շոշափելով գտավ նրա ձեռքը և ամուր, ցավեցնելով ու երկար սեղմեց այն։ Նրանց միջև ուրիշ ոչինչ չասվեց։

19

Բայց հուզումը, որ հենց նոր ապրել էին բոլորը, դրսևորվեց ընդհանուր ջղային անկարգ լարվածությամբ։ Ակումբ վերադառնալու ճանապարհին սպաները շատ անվայելուչ բաներ էին անում։ Կանգնեցնում էին այդտեղով անցնող որևէ հրեայի, մոտ էին կանչում և, նրա գլխից գլխարկը պոկելով, կառապանին առաջ էին քշում. հետո այդ գլխարկը նետում էին որևէ տեղ ցանկապատից ներս, մի ծառի։ Բորետինսկին կառապանին ծեծեց։ Մյուսները բարձրաձայն երգում և անմտորեն բղավում էին։ Միայն Ռոմաշովի կողքին նստած Բեկ-Աղամալովը ամբողջ ճանապարհին բարկացկոտ ու զուսպ ֆոֆսացնելով, լռել էր։

Ակումբը, չնայած ուշ ժամին, պայծառ լուսավորված էր և լի էր բազմությամբ։ Թղթախաղի սենյակում, ճաշարանում, բուֆետում և բիլիարդանոցում անօգնական թրև էին գալիս գինուց, ծխախոտից և մոլեխաղից շշմած, արձակած կիտելնեերով, անշարժ թթված աչքերով և թմրած շարժումներով մարդիկ։ Ռոմաշովը բարևելով մի քանի սպայի, հանկարծ զարմանքով նրանց մեջ նկատեց Նիկոլաևին։ Նա նստել էր Օսադչու մոտ և հարբած ու կարմրատակած էր, բայց իրեն ամուր էր պահում։ Երբ Ռոմաշովը, սեղանը շրջանցելով նրան մոտեցավ, Նիկոլաևն արագ նայեց Ռոմաշովին և իսկույն շրջվեց, որպեսզի ձեռքը չտար նրան, և չափազանցված հետաքրքրությամբ սկսեց խոսել հարևանի հետ։

— Վետկին, եկեք երգենք,— բղավեց Օսադչին ընկերների գլխի վրայով։

— Եր-գե-ե՜նք մի բա-ա՜ն,— երգեց Վետկինը եկեղեցական փոխասացության եղանակով։

— Եր-գե-ե՜նք մի բա-ա՜ն։ Երգե՜նք մի բա-ա՜ն,— բարձր ձայնակցեցին մյուսները։

— Տերտերի տան չափարի քով կուվշտեցին նրանք երեքով,— երգեց Վետկինը եկեղեցական արագախոսությամբ.— տերտերը, տիրացուն, լուսարարը և նահանգի քարտուղարը։ Խցկվի՜ր, Նեչիպորե, խց-կվի՜ր։

— Խցկվի՜ր, Նեչիպորե, խց-կը-վի՜ր,— ցածրաձայն, լիահնչուն ակորդներով պատասխանեց նրան խումբը, ամբողջովին զուսպ և ասես չերմացած Օսադչու փափուկ օկտավայով։

Վետկինը ղեկավարում էր երգչախումբը սեղանի մեջտեղը կանգնած և ձեռքերը երգողների վրա տարածած։ Նա աչքերին տալիս էր մերթ սարսափելի, մերթ փաղաքշական և հավանության արտահայտություն, ֆշշացնում էր սխալ երգողների վրա, և առաջ պարզած ափի հազիվ նկատելի թրթռումով զսպում էր շատ տարվողներին։

— Շտաբս-կապիտան Լեշչենկո, դուք սխալ եք երգում։ Խսպառ զուրկ եք լսողությունից։ Լռեցեք,— բղավեց Օսադչին։ —Պարոնայք, դե ձայներդ կտրեք չորս կողմում։ Չի կարելի աղմկել, երբ երգում են։

— Ոնց էր հարուստ մուժիկը գլյասե փու-ո՜ւնջ խմում... —շարունակեց Վետկինը երգասացությունը։

Ծխախոտի ծուխը աչքերը մռմռացնում էր։ Սեղանի մոմլաթը կպչուն էր, և Ռոմաշովը հիշեց, որ այսօր երեկոյան ձեռքերը չէր լվացել։ Նա բակի միջով գնաց այն սենյակը, որը կոչվում էր «սպայական համարներ». այնտեղ միշտ լվացարան կար։ Դա մի լուսամուտով ցուրտ մի խցիկ էր։ Պատերի տակ երկու մահճակալ կար դրված, հիվանդանոցային ձևով իրարից փոքրիկ պահարանով անջատված։ Այդ անկողինների սպիտակեղենը երբեք չէին փոխում, ճիշտ նույնպես, ինչպես երբեք չէին ավլում այդ սենյակի հատակը և չէին օդափոխում։ Դրանից համարներում միշտ կեղտոտ սպիտակեղենի, հնացած ծխախոտի ծխի և ձիթած կոշիկների նեխած, կեղտոտ հոտ էր գալիս։ Այդ սենյակը նախատեսված էր որպես բնակարան այն սպաների համար, որոնք հեռավոր առանձին զորանիստերից գալիս էին գնդի շտաբ։ Բայց այդտեղ երեկույթների ժամանակ սովորաբար պառկեցնում էին երկուական և

նույնիսկ երեքական հոգի մի մահճակալի վրա առանձնապես հարբած սպաներին։ Այդ պատճառով այն կրում էր նաև «մեռելասենյակ», «դիարան» և «մորգ» անունները։ Այդ անունների մեջ թաքնված էր անգիտակցական, բայց սարսափելի կենսական իրոնիա, որովհետև այն ժամանակից ի վեր, որ գունդը կանգնած էր քաղաքում, հենց նույն այդ երկու մահճակալի վրա ինքնասպանություն էին գործել մի քանի սպա և մի սպասյակ։ Ի դեպ, տարի չէր եղել, որ N գնդում սպաներից որևէ մեկը անձնասպան չլիներ։

Երբ Ռոմաշովը մտավ դիարան, երկու հոգի նստած էին մահճակալների սնարներին, լուսամուտի մոտ։ Նրանք նստել էին առանց կրակի, խավարում, և միայն հազիվ լսելի քաշկրտուքից Ռոմաշովը նկատեց նրանց ներկայությունը և դժվարությամբ ճանաչեց նրանց, ընդհուպ մոտենալով և խոնարհվելով նրանց վրա։ Դրանցից մեկը, ալկոհոլիկ և գող, վաշտի հրամանատարությունից հեռացված շտաբս-կապիտան Կլոդն էր, մյուսը՝ պոդպրապորշչիկ Զոլոտուխինը, լողող, տարբեց, արդեն ճաղատ, խաղամոլ, սկանդալիստ, կազրախոս և նույնպես հարբեցող՝ հավերժական պոդպրապորշչիկների տիպին պատկանող մեկը։ Երկուսի միջև սեղանի վրա աղոտ փայլփլում էր օղու քառորդանոց մի շիշ, դրված էր ինչ-որ ջրիկ խյուսով մի դատարկ ափսե և երկու լիք բաժակ։ Ակրատ՝ ոչ մի հետք չէր երևում։ Բաժակակիցները լսել էին, ասես թաքնվելով ներս մտած ընկերոջից, իսկ երբ սա կոանում էր նրանց վրա, նրանք, խորամանկորեն ժպտալով խավարում, ցած էին նայում։

— Աստված իմ, այստեղ ի՞նչ եք անում,— վախեցած հարցրեց Ռոմաշովը։

— Սը՜-սսս,— Զոլոտուխինը նախազգուշացնող տեսքով մատը վերև բարձրացրեց։— Սպասեցեք։ Մի խանգարեք։

— Կամա՛ց,— կարճ շշուկով ասաց Կլոդը։

Հանկարծ հեռվում մի սայլ դղրդաց։ Այն ժամանակ երկուսն էլ շտապով բարձրացրին բաժակները, իրար շրխկացրին և միաժամանակ խմեցին։

— Դե վերջապես ի՞նչ բան է սա,— տագնապած բացականչեց Ռոմաշովը։

— Սա, հոգիս,— բազմանշանակալից շշուկով պատասխանեց Կլոդը,— սա մեր այսպիսի աղանդերն է։ Սայլի դղրդ-

յունի տակ։ Ֆենդրիկ,— դիմեց նա Զոլոտուխինին,— դե, հիմա՞ ինչի տակ խմենք։ Ուպո՞ւմ ես լուսնի լույսի տակ։

— Արդեն խմել ենք,— լրջորեն առարկեց Զոլոտուխինը և լուսամուտից դուրս նայեց լուսնի բարակ շեղբին, որը ցածր ու ծանձրալի կանգնել էր քաղաքի վրա։— Սպասենք։ Գուցե մի շուն կհաչի։ Մի քիչ լռիր։

Այսպես նրանք շշնջում էին դեպի իրար թեքված, հարբած խնչահեղության մոայլ կատակասիրությամբ համակված։ Իսկ ճաշարանից այդ ժամանակ հասնում էին պատերի շնորհիվ խլացած և դրանից ներդաշնակորեն թախծոտ եկեղեցական երգեցիկի հնչյունները, որ նման էր թաղման հեռավոր երգեցողության։

Ռոմաշովը ձեռքերն իրար զարկեց և գլուխը բռնեց։

— Պարոնայք, ի սեր աստծո, թողեք, դա սարսափելի է, —ասաց նա անձկությամբ։

— Զքվիր գրողի ծո՛ցը,— գոռաց հանկարծ Զոլոտուխինը։

— Չէ, կաց, ախպեր։ Ո՞ւր։ Նախ խմեցեք օրինավոր պարոնների հետ։ Չէ-է, ախպերս, չես խաբի։ Բռնեցե՛ք դրան, շտաբս-կապիտան, իսկ ես դուռը կողպեմ։

Նրանք երկուսն էլ վեր թռան մահճակալից և խելագար խորամանկ ծիծաղով ընկան Ռոմաշովի հետևից, նրան բռնելու։ Եվ այդ բոլորը միասին՝ այդ խավար նեխած սենյակը, այդ գաղտնի ֆանտաստիկ հարբեցողությունը գիշերվա կեսին, առանց լույսի, այդ երկու ցնորված մարդը, այդ բոլորը հանկարծ Ռոմաշովի վրա մահվան ու խելագարության անտանելի սարսափ շնչեց։ Նա սուր ճիչ արձակելով՝ Զոլոտուխինին հեռու մի կողմ հրեց և, ամբողջովին դողալով, դուրս թռավ դիարանից։

Խելքով նա հասկանում էր, որ պետք է տուն գնալ, բայց ինչ-որ անհասկանալի մղումով վերադարձավ ճաշարան։ Այնտեղ արդեն շատերը նիրհում էին աթոռներին ու լուսամուտների գոգերին նստած։ Անտանելի շոգ էր և, չնայած լուսամուտները բաց էին, լամպերն ու մոմերը վառվում էին առանց թարթելու։ Հոգնած, հայից ընկած սպասավորներն ու բուֆետային զինվորները ննջում էին ոտքի վրա և բոպեն մեկ հոլանջում, առանց ծնոտները բաց անելու, միայն ռունդերով։ Բայց համատարած, ծանր, ընդհանուր հարբեցողությունը չէր զգացվում։

Վետկինը կանգնել էր արդեն սեղանին և երգում էր բարձր՝ զգացված տենորով.

Ալ-յաց պես սահում է
Մեր կյան-քը փութանցիկ...

Գնդում շատ սպաներ կային հոգևորական ծագումով, ուստի լավ էին երգում նույնիսկ հարբած ժամերին։ Հասարակ, տխուր, սրտառուչ եղանակը ազնվացնում էր տափակ բառերը։ Եվ մի բոպե բոլորը տրտմություն ու նեղվածք զգացին այդ ցածր առաստաղի տակ, նեխված սենյակում, անձուկ խուլ ու կույր կյանքի մեջ։

Մեռ-նում ես, թաղում են,
Թվում է չես ապրել...

Արտահայտիչ երգում էր Վետկինը, և սեփական բարձր ու սրտաշարժ ձայնի հնչյուններից, և խմբի ընդհանուր ներդաշնակության ֆիզիկական զգացողությունից նրա բարի, հիմարավուն աչքերում արցունքներ էին լճացել։ Արշակովսկին խնամքով ձայնակցում էր նրան։ Որպեսզի ստիպի, որ ձայնը գեղգեղա, նա երկու մատով ցնցում էր իր ադամախնձորը։ Օսադչին թանձր, երկարաձիգ նոտաներով երգակցում էր խմբին, և թվում էր, թե մնացած բոլոր ձայները ասես մութ ալիքներում, լողում էին այդ ցածր երգեհոնային հնչյուններում։

Այդ երգն ավարտեցին, մի քիչ լուռ մնացին։ Ծանր գինարբուքի մեջ բոլորի վրա մի խաղաղ, մտախոհ բոպե իջավ։ Հանկարծ Օսադչին ցած խոնարհած աչքերով սեղանին նայելով, սկսեց կիսաձայն.

«Մտեք ընդ նեղ դուռն, քանզի անձուկ է դուռն, և նեղ ճանապարհն, որ տանի ի կեանս»

— Դե հերիք է,— նկատեց մեկը տաղտկությամբ։— Այ թե կպել եք այդ հոգեհանգստին։ Տասներորդ անգամն է։

Բայց մյուսները ձայնակցեցին եղանակին, և ահա աղբոտած, թքոտած, ծխախոտի ծխով լցված ճաշարանում տարածվեցին Իոհանն Դամասկինի հոգեհանգստի մաքուր, պարզ ակորդները, համակված այնպիսի՞ ջերմ, այնպիսի՞ զգայական տխրությամբ, այնպիսի՞ բուռն թախիծով՝ հեռացող կյանքի համար։

«Եկայք, օրհնեալք հոր իմոյ, ժառանգեցեք զարքայությունն, զոր տեալ է ձեզ ի սկզբանե աշխարհի»,

Եվ Արշակովսկին, որ ծիսակատարությունը ուղածդ սարՀ կավագից լավ գիտեր, անմիջապես շարունակեց.— «Ասեմք բոլորեքեան ի բոլոր սրտէ»...

Այդպես էլ նրանք կատարեցին ամբողջ հոգեհանգիստը։ Իսկ երբ հերթը հասավ վերջին կոչին, ապա Օսադչին, գլուխը ցած կախելով, վիզը լարած, աչքերի տարօրինակ ու սարսափելի, թախծոտ ու չար արտահայտությամբ, կոնտրաբասի լարերի պես թնդուն ցած ձայնով, ծոր տալով ասաց.

«Դթա քո արարչական սիրով ի հոգի հանգուցեալ ծառայի քո Նիկիֆորի...— Օսադչին հանկարծ մի սարսափելի, ցինիկ հայհոյանք արձակեց,— և դաստ ընդ արդարս քո-ո՜-ո՜...»

Ռոմաշովը վեր թռավ և կատաղած, ամբողջ ուժով բռունցքը խփեց սեղանին։

— Թույլ չե՛մ տա։ Լռեցե՛ք,— բղավեց նա սուր, տառապալից ձայնով։— Ինչո՞ւ ծիծաղել։ Կապիտան Օսադչի, ձեզ համար բոլորովին ծիծաղելի չէ, այլ ցավալի ու սարսափելի է։ Ես տեսնում եմ։ Ես գիտեմ, թե ինչ եք զգում ձեր հոգում։

Ընդհանուր վայրկենական լռության մեջ միայն մեկի ձայնը տարակուսանքով ասաց.

— Նա հարբա՞ծ է։

Բայց իսկույն, ինչպես քիչ առաջ Շլեյֆերշայի մոտ, ամեն ինչ բվվաց, տնքաց, վեր թռավ տեղից և դարձավ մի ինչ-որ խայտաբղետ, շարժվող, աղաղակող կծիկ։ Վետկինը, սեղանից թռչելիս, գլուխը կպցրեց կախովի լամպին. լամպը ճոճվեց ահագին սահուն զիգզագներով, և մոլեգնած մարդկանց ստվերները, մերթ մեծանալով, ինչպես հսկաներ, մերթ չքանալով հատակի տակ, շարագուշակ կերպով խառնվեցին և թրթռացին սպիտակ պատերի ու առաստաղի վրա։

Ամեն ինչ, որ այժմ տեղի էր ունենում ակումբում այդ ջղագրգիռ, բորբոքված, հարբած ու դժբախտ մարդկանց հետ, կատարվում էր արագ, անհեթեթ ու անդարձ։ Ասես ինչ-որ չար, խառնամիտ, հիմար, կատաղած ու ծաղրող մի դև էր տիրապետել մարդկանց և նրանց հարկադրում էր զազրելի խոսքեր ասել, այլանդակ, աններդաշնակ շարժումներ անել։

Այդ մոլուցքի մեջ Ռոմաշովը հանկարծ բոլորովին մոտիկ իր կողքին տեսավ ծամածռված բղավող բերանով մեկի դեմքը, որ նա նույնիսկ անմիջապես չճանաչեց, այնքան աղճատվել և այլանդակվել էր այդ դեմքը չարությունից։ Այդ Նիկոլաևն էր

բղավում նրան, թուք շաղ տալով և ջղաձգորեն խաղացնելով այտի մկանները ձախ աչքի տակ։

— Ինքնե՛րդ եք խայտառակում գունդը։ Չհամարձակվեք ոչինչ ասել։ Դուք և զանազան Նազանսկիները։ Երեկ չէ մյուս օրն եք եկել...

Մեկը զգուշությամբ ետ էր քաշում Ռոմաշովին։ Նա շրջվեց և ճանաչեց Բեկ-Աղամալովին, բայց, անմիջապես նրանից շուռ գալով, մոռացավ նրա մասին։ Սփրթնելով այն բանից, ինչ տեղի էր ունենալու այս վայրկյանիս, նա ասաց կամաց ու խռպոտ, չարշարված, խղճուկ ժպիտով.

— Իսկ ի՞նչ գործ ունի այստեղ Նազանսկին։ Թե՞ դուք հատուկ, գաղտնի պատճառներ ունեք նրանից դժգոհ լինելու։

— Ես ձեր ոեխին կտամ։ Ստո՛ր, սրիկա՛,— բղավեց Նիկոլաևը բարձր, հաչող ձայնով։— Գյադա՛։

Նա կտրուկ թափահարեց բռունցքը և աչքերին սարսափելի արտահայտություն տվեց, բայց սիրտ չարեց հարվածել։ Ռոմաշովը կրծքում է փորում թախծալի, զզվելի ուշակորուստության նվաղում զգաց։ Մինչև հիմա նա բոլորովին չէր նկատում, որ աջ ձեռքում շարունակ գտնվում է ինչ-որ կողմնակի առարկա։ Եվ հանկարծ արագ, կարճ մի շարժումով նա Նիկոլաևի երեսին շաղ տվեց իր բաժակի մնացորդ գարեջուրը։

Նույն պահին վայրկենական բութ ցավի հետ սպիտակ վառ կայծեր թափվեցին նրա ձախ աչքից։ Երկարաձիգ, գազանային ոռնոցով նա հարձակվեց Նիկոլաևի վրա, և նրանք երկուսն էլ ցած գլորվեցին, ձեռքերն ու ոտքերն իրար միահյուսեցին և գլորվեցին հատակի վրա, աթոռները տապալելով և կուլ տալով կեղտոտ, նեխահոտ փոշին։ Նրանք ծվատում, տրորում և ճմլում էին իրար, մռնչալով և շնչահեղձ լինելով, Ռոմաշովը հիշում էր, թե ինչպես պատահաբար իր մատներն ընկան Նիկոլաևի բերանը՝ այտի հետևը և ինչպես ինքն աշխատում էր պատառոտել այդ լպրծուն, գարշելի տաք բերանը... Եվ նա արդեն ոչ մի ցավ չէր զգում, երբ գլուխն ու արմունկները խրփվում էին գետնին այդ խեղճահեղ գոտեմարտում։

Նա չգիտեր նաև, թե ինչպես վերջացավ այդ ամենը։ Նա իրեն գտավ անկյունում կանգնած, ուր քշել էին նրան, պոկելով Նիկոլաևից։ Բեկ-Աղամալովը նրան ջուր էր խմեցնում, բայց Ռոմաշովի ատամները ջղաձգորեն շխկշխկում էին բաժակի եզրերին, և նա վախենում էր, թե հանկարծ չկծի մի

կոր ապակի։ Նրա կիտելը պատռվել էր թևատակերին և կրունակի վրա, իսկ մի ուսադիրը, պոկված, կախվել էր երիզակից, Ռոմաշովի ձայնը կտրվել էր, բայց նա բղավում էր անձայն, միայն շրթունքներով.

— Ես նրան... դեռ ցո՛ւց կտա՜մ... Մենամարտի եմ կանչում նրան...

Մերունի լեխը, որ մինչև հիմա քաղցր ննջել էր սեղանի ծայրին, իսկ հիմա բոլորովին սթափված էր, զգաստ և լուրջ, ասում էր անսովոր խիստ հրամայողականությամբ.

— Որպես ավագ, հրամայում եմ ձեզ, պարոնայք, անմիջապես ցրվել։ Լսո՞ւմ եք, պարոնայք, անմիջապե՛ս։ Ամեն ինչի մասին առավոտյան զեկույց կներկայացնեմ գնդի հրամանատարին։

Եվ բոլորը ցրվում էին շփոթված, ճնշված, խուսափելով միմյանց նայելուց։ Ամեն մեկը վախենում էր ուրիշի աչքերում կարդալ իր սեփական սարսափը, իր ստրկական, հանցավոր թախիծը, փոքրիկ, շար և կեղտոտ անասունների սարսափն ու թախիծը, որոնց մութ բանականությունը հանկարծ լուսավորվել էր մարդկային պայծառ գիտակցությամբ,

Լուսաբաց էր, պարզ, մանկան պես մաքուր երկնքով ու անշարժ զով օդով։ Ծառերը, թաց, պարուրված հազիվ տեսանելի գոլորշիով, սուսիկ-փուսիկ արթնանում էին իրենց խավար, առեղծվածային գիշերային երազներից։ Եվ երբ Ռոմաշովը, տուն վերադառնալիս, նայում էր այդ ծառերին, երկնքին և թաց, ցողից ալեխառն կանաչին, ապա իրեն զգում էր ցածրահասակ, զազրելի, այլանդակ և քնից նոր արթնացած ժլատացող առավոտի այդ անմեղ հրաշագեղության մեջ անսահմանորեն խորթ։

20

Նույն օրը, դա չորեքշաբթի օրն էր, Ռոմաշովը մի պաշտոնական կարճ տոմսակ ստացավ.

«N-յան հետևակային գնդի սպայական ընկերության դատարանը պոդպորուչիկ Ռոմաշովին հրավիրում է ժամը 6-ին ներկայանալու սպայական ակումբի դահլիճը։ Համազգեստը՝ սովորական

Դատարանի նախագահ փոխգնդապետ Միգունով»։

Ռոմաշովը չկարողացավ զսպել ակամա տխուր ժպիտը. այդ «սովորական համազգեստը»՝ ուսադիրներով և գունավոր գոտիով մունդիրը հագնվում էր հենց ամենաարտասովոր դեպքերում՝ դատարանում, հասարակական նկատողությունների ժամանակ և ամեն տեսակ տհաճ առիթներով պետերին ներկայանալիս։

Ժամը 6-ին նա ակումբ եկավ և բանբերին հրամայեց իր մասին զեկուցել դատարանի նախագահին։ Նրան խնդրեցին, որ սպասի։ Նա նստեց ճաշարանում, բաց պատուհանի մոտ, լրագիրը վերցրեց և սկսեց կարդալ, առանց որևէ հետաքրքրության, աչքերը մեքենայորեն սահեցնելով տառերի վրայով։ Ճաշարանում գտնվող երեք սպան չոր-չոր բարևեցին նրան և սկսեցին իրար հետ կիսաձայն խոսել, այնպես, որ նա չլսեր։ Միայն պոդպորուչիկ Միխինը, թաց աչքերով, երկար և ամուր սեղմեց նրա ձեռքը, բայց ոչինչ չասաց, շիկնեց, շտապ և անշնորհք հագնվեց ու գնաց։

Շուտով բուֆետից ճաշարան մտավ Նիկոլաևը։ Նա գունատ էր, կոպերը սևացել էին, ձախ այտը շարունակ ջղաձգաբար ցնցվում էր, իսկ դրանից վերև, քունքից մի փոքր ցած, կապտին էր տալիս մի մեծ ուռուցիկ բիծ։ Ռոմաշովը վառ ու տանջալիորեն հիշեց երեկվա կռիվը և, ամբողջովին կքվելով, դեմքը կնճռոտելով, այդ ամոթալի հիշողությունների անտանելի ծանրության ներքո իրեն ճզմված զգալով, թաքնվեց լրագրի հետևում և նույնիսկ աչքերը պինդ կկոցեց նա լսել էր, թե ինչպես Նիկոլաևը բուֆետում մի բաժակ կոնյակ խնդրեց և ինչպես հրաժեշտ տվեց մեկին։ Հետո զգաց իր կողքով անցնող Նիկոլաևի քայլերը։ Դուռը շրխկաց ծանրությամբ։ Եվ հանկարծ մի քանի վայրկյան հետո նա բակից իր թիկունքի հետև լսեց մի զգույշ շշուկ.

— Ետ չնայեք։ Հանգիստ նստեցեք։ Լսեցեք։

Այդ՝ Նիկոլաևն էր խոսողը։ Լրագիրը դողաց Ռոմաշովի ձեռքերում։

— Իսկն ասած, ես իրավունք չունեմ ձեզ հետ խոսելու։ Բայց գրողի ծոցը այդ ֆրանսիական նրբությունները։ Ինչ որ պատահել է, ուղղել չի լինի։ Բայց համենայն դեպս ես ձեզ օրինավոր մարդ եմ համարում։ Խնդրում եմ ձեզ, լսո՞ւմ եք, ես ձեզ խնդրում եմ. ո՛չ մի խոսք կնոջս և անանուն նամակների մասին։ Դուք ինձ հասկացա՞ք։

Ռոմաշովը ընկերներից լրագրով ծածկվելով, դանդաղ խոնարհեց գլուխը։ Բակում ավազը խշրտաց մեկի ոտքերի տակ։ Միայն հինգ րոպե անց Ռոմաշովը շրջվեց և նայեց դեպի բակ։ Նիկոլաևն արդեն չկար։

— Ձերդ բարեծնություն,— հանկարծ նրա առաջ բուսնեց բանբերը,— նորին բարձր բարեծնությունը ձեզ խնդրում են շնորհ բերել։

Դահլիճում, հեռավոր նեղ պատի երկայնքով, թղթախաղի մի քանի սեղան իրար էին միացրած և կանաչ մահուդով ծածկած։ Նրանց հետև նստել էին դատավորները, մեջքերով դեպի լուսամուտները. դրանից նրանց դեմքերը մուգ էին։ Մեջտեղում, բազկաթոռին նստել էր նախագահը՝ փոխգնդապետ Միգունովը, հաստամարմին, գոռող մի մարդ, առանց վզի, վեր բարձրացրած կլոր ուսերով. նրա կողքերին՝ փոխգնդապետներ Ռաֆալսկին և Լեխը, այնուհետև, աջ կողմից, կապիտաններ Օսադչին և Պետերսոնը, իսկ ձախից՝ կապիտան Դյուվեռնուան և շտաբս-կապիտան Դորոշենկոն, գնդի գանձապահը։ Սեղանը բոլորովին դատարկ էր, միայն դատարանի գործավարի՝ Դորոշենկոյի առաջ մի փոքրիկ տրցակ թուղթ էր դրած։ Դատարկ, մեծ դահլիճում զով էր ու մի քիչ խավար, չնայած նրան, որ դուրսը շոգ, պայծառ օր էր։ Հին փայտի, բորբոսի և կահույքի հին պաստառների հոտ էր գալիս։

Նախագահը խոշոր, սպիտակ, գեր ձեռքերի ափերը դեպի վեր շրջած, դրեց սեղանի մահուդին և, հերթով զննելով դրանք, շոր տոնով սկսեց.

— Պոդպորուչիկ Ռոմաշով, սպաների ընկերության դատարանը, որը հավաքվել է գնդի հրամանատարի կարգադրությամբ, պետք է պարզի այն տխուր և սպաների ընկերության մեջ անթույլատրելի ընդհարման հանգամանքները, որ տեղի է ունեցել երեկ ձեր և պորուչիկ Նիկոլաևի միջև։ Խնդրում եմ ձեզ, պատմեք այդ մասին ամենայն հնարավոր մանրամասնությամբ։

Ռոմաշովը կանգնել էր նրանց առաջ, ձեռքերը ցած թողած և գլխարկի բոլորքը քաշքշելով։ Նա իրեն զգում էր այնպես հալածված, անճարակ ու մտացրիվ, ինչպես պատահում էր նրան միայն աշակերտական տարիներին քննությունների ժամանակ, երբ նա կտրվում էր։ Ընդհատվող ձայնով, իճճված և անկապ նախադասություններով, անընդհատ կմկմալով և

անհեթեթ ձայնարկություններ ավելացնելով, նա սկսեց ցուցմունք տալ։ Միաժամանակ, աչքերը պտտեցնելով մեկից մյուսի վրա, նա մտովի գնահատում էր նրանց վերաբերմունքն իր նկատմամբ. «Միգունովը անտարբեր է, նա ասես քար լինի, բայց նրան շոյում է գլխավոր դատավորի անսովոր դերը և այն սարսափելի իշխանությունն ու պատասխանատվությունը, որոնք կապված են դրա հետ։ Փոխգնդապետ Բրեմը նայում էր խղճահարությամբ և մի տեսակ կանացի աչքերով, ա՛խ, իմ սիրելի Բրեմ, արդյոք հիշո՞ւմ ես, ինչպես քեզնից տասը ռուբլի պարտք վերցրի։ Ծերունի Լեխը լրջություն է ձևացնում։ Նա այսօր սթափ վիճակում է, և աչքերի տակը ուռուցքներ կան, ասես սպիներ լինեն։ Նա ինձ թշնամի չէ, բայց նա ինքը տարբեր ժամանակներ այնքան այլանդակություններ է արել սպայական ակումբում, որ հիմա նրան ձեռնտու է սպայական պատվի խիստ և աննկուն նախանձորդի դերը։ Իսկ Օսադչին և Պետերսոնը՝ դրանք արդեն իսկական թշնամիներ են։ Ըստ օրենքի, ես, իհարկե, կարող էի բացարկել Օսադչուն, ամբողջ վեճը սկսվեց նրա հոգեհանգստի պատճառով, բայց, ասենք, միևնույն չէ՞։ Պետերսոնը հազիվ նկատելի ժպտում է միայն բերանի անկյունով. ինչ-որ կեղտոտ, ստոր, օձային բան կա ժպիտում։ Մի՞թե նա գիտեր անանուն նամակների մասին։ Դյուվեռնուայի դեմքը քնկոտ է, իսկ աչքերը կարծես մեծ, պղտոր գնդեր լինեն։ Դյուվեռնուան ինձ չի սիրում։ Ասենք, Դորոշենկոն էլ։ Մի պոդպորուչիկ, որը միայն ստորագրում է ռոճիկը ստանալու մասին բայց երբեք չի ստանում այն։ Վատ են ձեր գործերը, իմ թանկագին Յուրի Ալեքսեևիչ»։

— Ներեցեք, մի րոպե,— հանկարծ ընդհատեց նրան Օսադչին։— Պարոն գնդապետ, ինձ թույլ կտա՞ք մի հարց առաջադրել։

— Խնդրեմ,— ծանր ու մեծ գլխով արեց Միգունովը։

— Ասացեք մեզ, պոդպորուչիկ Ռոմաշով,— սկսեց Օսադչին ծանրակշիռ, երկարաձգելով,— որտե՞ղ էիք բարեհաճել լինել մինչև այդ, երբ եկաք ակումբ այդպիսի անտանելի վիճակում։

Ռոմաշովը շիկնեց և զգաց, թե ինչպես ճակատը միանգամից ծածկվեց քրտինքի խիտ կաթիլներով։

— Ես... ես... դե, մի տեղ էի,— և նա ավելացրեց գրեթե շշուկով.— հասարակաց տուն էի գնացել։

— Ըհը՞, դուք հասարակաց տո՞ւն էիք գնացել,— դիտմամբ բարձրաձայն, չոր շեշտվածությամբ հարցրեց Օսադչին։ —Եվ հավանաբար որևէ բան խմե՞լ եք այդ հաստատությունում։

— Այ-յո, խմել եմ,— ընդհատ պատասխանեց Ռոմաշովը։

— Այդպե՞ս-ս։ Այլևս հարցեր չունեմ,— շուտ եկավ Օսադչին դեպի նախագահը։

— Խնդրում եմ շարունակեք ցուցմունքը,— ասաց Միգունովը։— Այսպես ուրեմն, դուք կանգ առաք այնտեղ, թե ինչպես գարեջուրը շաղ տվիք պորուչիկ Նիկոլաևի երեսին։ Հետո՞։

Ռոմաշովը անկապ, բայց անկեղծ և մանրամասնորեն պատմեց երեկվա դեպքի մասին։ Նա արդեն սկսել էր կոշտ ու բլոշտ և ամոթխածությամբ խոսել այն զզվանքի մասին, որ ինքն զգում է իր երեկվա վարքի առթիվ, բայց նրան ընդհատեց կապիտան Պետերսոնը։ Երկար, մեռած մատներով և կապույտ եղունգներով իր ոսկրոտ ձեռքերը տրորելով, ասես լվացվելիս լիներ, նա չափազանցված քաղաքավարի, գրեթե փաղաքշական, բարակ և շողոքորթ ձայնով ասաց.

— Այո, իհարկե, այդ բոլորը միանգամայն պատիվ է բերում ձեր սքանչելի զգացմունքներին։ Բայց ասացեք մեզ, պոդպորուչիկ Ռոմաշով... Դուք մինչև այդ շարաբաստիկ և ցավալի պատմությունը չէ՞իք լինում պորուչիկ Նիկոլաևի տանը։

Ռոմաշովը ուշադրությունը լարեց և, նայելով ոչ թե Պետերսոնին, այլ նախագահին, փոքր-ինչ կոպիտ պատասխանեց.

— Այո, լինում էի, բայց ես չեմ հասկանում, դա ինչ կապ ունի գործի հետ։

— Սպասեցեք։ Խնդրում եմ պատասխանեք միայն հարցերին,— կանգնեցրեց նրան Պետերսոնը։— Ես ուզում եմ ասել, արդյոք դուք և պորուչիկ Նիկոլաևը փոխադարձ թշնամանքի որևէ հատուկ առիթներ չունեի՞ք, ոչ պաշտոնական բնույթի առիթներ, այլ տնական, այսպես ասած, ընտանեկան։

Ռոմաշովը շտկվեց և ուղիղ, բացահայտ ատելությամբ նայեց Պետերսոնի մուգ, հյուծախտավոր աչքերին։

— Ես Նիկոլաևների տանը լինում էի ոչ ավելի հաճախ, քան իմ մյուս ծանոթների տանը,— ասաց նա բարձրաձայն և կտրուկ։— Եվ առաջ ես նրա հետ ոչ մի թշնամանք չեմ ունեցել։ Ամեն ինչ տեղի ունեցավ պատահաբար և անսպասելի, որովհետև երկուսս էլ հարբած էինք։

— Հի՛-հի՛-հի՛, այդ արդեն մենք լսեցինք ձեր հարբածության մասին,— նորից ընդհատեց նրան Պետերսոնը,— բայց ես միայն ուզում եմ հարցնել, թե արդյոք առաջ մի որևէ այսպիսի ընդհարում չի՞ եղել։ Ոչ, ոչ թե կռիվ, հասկացեք ինձ, այլ ուղղակի մի այսպիսի թյուրիմացություն, լարվածություն ասեմ, թե ինչ, որևէ մասնավոր հողի վրա։ Դե, ասենք, տարաձայնություն հայացքների մեջ կամ մի որևէ ինտրիգ։ Հը՞։

— Պարոն նախագահ, կարո՞ղ եմ ես ինձ առաջարկվող որոշ հարցերի չպատասխանել,— հանկարծ հարցրեց Ռոմաշովը։

— Այո, դուք այդ կարող եք, — սառը պատասխանեց Միգունովը։— Դուք կարող եք, եթե ուզում եք, բոլորովին ցուցմունքներ չտալ կամ տալ գրավոր։ Դա ձեր իրավունքն է։

— Այդ դեպքում ես հայտարարում եմ, կապիտան Պետերսոնի հարցերից ոչ մեկին չեմ պատասխանի,— ասաց Ռոմաշովը։— Այդ ավելի լավ կլինի նրա համար էլ, ինձ համար էլ։

Նրան մի քանի աննշան մանրամասնությունների մասին էլ հարցրին, և ապա նախագահը հայտարարեց, որ նա ազատ է։ Սակայն նրան երկու անգամ էլի կանչեցին լրացուցիչ ցուցմունքներ տալու. մի անգամ նույն օրը երեկոյան, մյուս անգամ՝ հինգշաբթի առավոտյան։ Գործնական տեսակետից նույնիսկ Ռոմաշովի պես անփորձ մարդը հասկանում էր, որ դատարանը գործը վարում է անփույթ, անհմուտ և անկարելիության աստիճան անհոգ, թույլ տալով բազմաթիվ սխալներ և անտակտություններ։ Եվ ամենամեծ վրիպումն այն էր, որ հակառակ կարգապահական կանոնադրության 149-րդ հոդվածի պարզ և ճշգրիտ իմաստի, որը խստիվ արգելում էր դատարանում տեղի ունեցածի հրապարակումը, պատվո դատարանի անդամները ձեռնպահ չմնացին դատարկ շաղակրատանքից։ Նրանք նիստերի արդյունքների մասին պատմեցին իրենց կանանց, կանայք՝ քաղաքի իրենց ծանոթ տիկնանց, իսկ սրանք՝ դերձակուհիներին, մանկաբարձուհիներին և նույնիսկ սպասուհիներին։ Մի օրվա ընթացքում Ռոմաշովը դարձավ քաղաքի զրույցի առարկան և օրվա հերոսը։ Երբ նա անցնում էր փողոցով, նրա վրա նայում էին լուսամուտներից, դռնակներից, նախապարտեզներից, ցանկապա-

տերի ճեղքերից։ Կանայք հեռվից նրան մատով էին ցույց տալիս, և նա շարունակ իր հետևում լսում էր արագ շշնջյունով արտասանված իր ազգանունը։ Քաղաքում ոչ ոք չէր երկմտում, որ նրա և Նիկոլաևի միջև մենամարտ տեղի կունենար։ Նույնիսկ գրազ էին գալիս մենամարտի ելքի մասին։

Հինգշաբթի առավոտյան, Լիկաչովների տան մոտով անցնելիս, նա հանկարծ լսեց, որ մեկը անունով կանչում է իրեն։

— Յուրի Ալեքսեևիչ, Յուրի Ալեքսեևիչ, եկեք այստեղ։

Նա կանգ առավ և գլուխը վեր բարձրացրեց։ Կատյա Լիկաչովան կանգնել էր ցանկապատի այն կողմում, պարտեզի նստարանի վրա։ Նա առավոտյան թեթև ճապոնական խալաթով էր, որի եռանկյունաձև բացվածքը մերկ էր թողնում նրա բարալիկ սքանչելի կուսական պարանոցը։ Եվ նա ամբողջովին այնպես վարդագույն էր, թարմ, համեղ, որ Ռոմաշովը մի բոպե ուրախացավ։

Աղջիկը ցանկապատի վրայով թեքվեց, որպեսզի Ռոմաշովին մեկնի իր սառը և նոր լվացվելուց դեռևս խոնավ ձեռքը։ Եվ միաժամանակ նա բլբլացնում էր թվատելով։

— Ինչու մեյ տանը չեք լինում, ամոթ է բայեկամնիին մոյանալը։ Չայ, չայ, չայ... Սսսս... ես ամեն, ես ամեն, ամեն ինչ գիտեմ։— Նա հանկարծ լայն բացած աչքերին վախեցած արտահայտություն տվեց։— Վեյցյեք ահա սա և ձեր վզից կախեցեք. անպայման, անպայման, անպայման կախեցեք։

Նա իր կերիմոնի տակից, ուղղակի կրծքի վրայից հանեց քուղից կախված կապույտ մետաքսե մի հուռութք և արագ խոթեց Ռոմաշովի ձեռքը։ Հուռութքը դեռ պահպանել էր նրա մարմնի տաքությունը։

— Օգնո՞ւմ է,— հարցրեց Ռոմաշովը կատակով։— Սա ի՞նչ է։

— Դա գաղտնիք է, չհամայձակվեք ծիծաղել։ Անաստվա՜ծ։ Չա՛յ։

«Բայց ես հիմա ուշադրության առարկա եմ։ Լավ աղջիկ է», մտածեց Ռոմաշովը, հրաժեշտ տալով Կատյային։ Բայց նա չկարողացավ իրեն զսպել, որպեսզի այստեղ էլ վերջին անգամ իր մասին չմտածեր երրորդ դեմքով, գեղեցիկ նախադասությամբ. «Մի բարեհոգի ժպիտ սահեց հին բրեյորի խստաշունչ դեմքին»։

Այդ օրը երեկոյան նրան նորից դատարան կանչեցին, բայց Արդեն Նիկոլաևի հետ։ Երկու թշնամիները սեղանի առաջ կանգնել էին գրեթե կողք-կողքի։ Նրանք ոչ մի անգամ իրար երես չնայեցին, բայց նրանցից յուրաքանչյուրը հեռվից զգում էր մյուսի տրամադրությունը և լարված հուզվում էր դրանից։ Նրանք երկուսն էլ համառ ու անշարժ նայում էին նախագահին, երբ վերջինս նրանց համար կարդում էր դատարանի վճիռը.

«N-յան հետևակ գնդի սպայական ընկերության դատարանը, որի կազմի մեջ մտնում են (հետևում էին դատավորների աստիճաններն ու ազգանունները), փոխգնդապետ Միգունովի նախագահությամբ, քննության առնելով սպայական ակումբի ջենքում պորուչիկ Նիկոլաևի և պոդպորուչիկ Ռոմաշովի ընդհարման վերաբերյալ գործը, գտավ, որ նկատի առնելով փոխադարձ վիրավորանքների ծանրությունը, այդ սպաների գժտությունը չի կարող հաշտությամբ վերջանալ և որ նրանց միջև մենամարտը հանդիսանում է վիրավորված պատվի և սպայական արժանապատվության բավարարման միակ միջոցը։ Դատարանի կարծիքը հաստատել է գնդի հրամանատարը»։

Ընթերցումն ավարտելով, փոխգնդապետ Միգունովը ակնոցը հանեց և պահեց պատյանի մեջ։

— Ձեզ մնում է, պարոնայք,— ասաց նա քար հանդիսավորությամբ,— ձեզ համար մարտավիճակներ ընտրել, երկուական հոգի յուրաքանչյուր կողմից, և երեկոյան ժամը իններին նրանց ուղարկել այստեղ, ակումբ, որտեղ նրանք մեզ հետ համատեղ կմշակեն մենամարտի պայմանները։ Սակայն,— ավելացրեց նա՝ տեղից վեր կենալով և ակնոցապանակը հետևի գրպանում թաքցնելով,— սակայն, հիմա ընթերցված դատարանի որոշումը ձեզ համար պարտադիր ուժ չունի։ Ձեզանից յուրաքանչյուրին լիակատար ազատություն է վերապահվում մենամարտել, կամ...— Նա ձեռքերը տարածեց և մի պահ լռեց,— կամ թողնել ծառայությունը։ Եվ ապա... Դուք ազատ եք, պարոնայք... Եվս երկու խոսք։ Արդեն ոչ որպես դատարանի նախագահ, այլ որպես ավագ ընկեր, ձեզ խորհուրդ կտայի, պարոնայք սպաներ, մինչև մենամարտը ձեռնպահ մնալ ակումբ հաճախելուց։ Դա կարող է բարդություններ առաջացնել... Ցտեսություն։

Նիկոլաևը կտրուկ շրջվեց և արագ քայլերով դուրս գնաց դահլիճից։ Նրա հետևից համրաքայլ շարժվեց նաև Ռոմաշովը։ Նա չէր վախենում, բայց հանկարծ իրեն զգաց բացառիկ միայնակ, տարօրեն առանձնացված, կարծես ամբողջ աշխարհից կըտրված։ Դուրս գալով ակումբի անդաստակը, նա տեսավ, հան-

ուշիստ կարմանքով նայում էր երկնքին, ծառերին, դիմացի ցանկապատի մոտ կանգնած կովին, ճանապարհի մեջտեղ՝ փոշու մեջ լողացող ճնճղուկներին, և մտածում էր. «Ահա, ամեն ինչ ապրում է, հոգս քաշում, իրար անցնում, աճում և փայլում, իսկ ինձ արդեն ոչինչ պետք չէ և հետաքրքիր չէ։ Ես դատապարտված եմ։ Ես մենակ եմ»։

Այարկոտ, գրեթե ձանձրույթով նա գնաց որոնելու Բեկ-Աղամալովին և Վետկինին, որոնց վճռել էր խնդրել, որ մարտավկա լինեն։ Երկուսն էլ սիրով համաձայնեցին. Բեկ-Աղամալովը մռայլ զսպվածությամբ, Վետկինը՝ փաղաքուշ և բազմանշանակ ձեռքսեղմումներով։

Ռոմաշովը տուն գնալ չէր ուզում. այնտեղ ահասարսուռ և ձանձրալի էր։ Հոգեկան անզորության, մենության և կյանքի ցլատ անբմբռնողության այդ ծանր բոպեներին նրան հարկավոր էր տեսնել մտերիմ, կարեկից բարեկամի և միաժամանակ նուրբ, հասկացող, քնքշասիրտ մարդու։

Եվ հանկարծ նա հիշեց Նազանսկուն։

21

Նազանսկին, ըստ սովորականի, տանն էր։ Նա հենց նոր էր զարթնել ծանր, արբեցած քնից և հիմա պառկել էր մահճակալին միայն տակի սպիտակեղենով, ձեռքերը գլխի տակ դրած։ Նրա աչքերում անտարբեր, հոգնած պղտորություն կար։ Նրա դեմքը բոլորովին չփոխեց իր քնեած արտահայտությունը, երբ Ռոմաշովը թեքվելով նրա վրա, տագնապած և անվստահ ասաց.

— Բարև ձեզ, Վասիլի Նիլիչ, ձեզ չխանգարեցի՞։

— Բարև ձեզ,—պատասխանեց Նազանսկին խոպոտ թույլ ձայնով։— Ի՞նչ լավ բան կա։ Նստեցեք։

Նա Ռոմաշովին պարզեց տաք, խոնավ ձեռքը, բայց նրա վրա այնպես էր նայում, կարծես իր առաջ կանգնած էր ոչ թե սիրելի, հետաքրքիր ընկերը, այլ վաղուցվա ձանձրալի երազի մի սովորական տեսիլ։

— Դուք անառո՞ղջ եք,— երկչոտ հարցրեց Ռոմաշովը, նստելով մահճակալին, ընկերոջ ոտքերի մոտ։— Ուրեմն ձեզ չեմ խանգարի։ Ես կգնամ։

Նազանսկին մի փոքր բարձրացրեց գլուխը բարձից և, ամբողջովին կնճռոտվելով, ճիգ գործադրելով նայեց Ռոմաշովին։

— Ոչ... Սպասեցեք։ Ա՛խ, ինչպես է ցավում գլուխս։ Լսեցեք, Գեորգի Ալեքսեիչ... դուք ինչ-որ բան ունեք... ունեք... ինչ-որ արտասովոր բան։ Կացեք, ես չեմ կարող մտքերս հավաքել։ Ձեզ ի՞նչ է պատահել։

Ռոմաշովը նրան էր նայում լուռ ցավակցությամբ։ Նազանսկու ամբողջ դեմքը տարօրինակ կերպով փոխվել էր այն ժամանակից ի վեր, ինչ երկու սպան չէին տեսնվել։ Աչքերը խոր կուլ էին գնացել և նրանց շուրջը սևացել էր, քունքերը դեղնել էին, իսկ տնհարթ կեղտոտ մաշկով այտերը ճապաղել ու կախվել էին ցած և տգեղ մազակալել ցանցառ դանգուր մազերով։

— Առանձին ոչինչ, ուղղակի ուզեցի տեսնվել ձեզ հետ,— տնփույթ ասաց Ռոմաշովը։— Վաղը ես մենամարտում եմ Նիկոլաևի հետ։ Ես խորշում եմ տուն գնալուց։ Ասենք, դա միևնույն է։ Ցտեսություն։ Գիտե՞ք, ուղղակի մեկը չկար, որ հետը խոսեի... Սիրտս ծանր է։

Նազանսկին աչքերը ծածկեց, և նրա դեմքը տանջալիորեն ծամածռվեց։ Նկատելի էր, որ նա կամքի անբնական լարումով վերադարձնում էր գիտակցությունը։ Իսկ երբ նա աչքերը բացեց, ապա նրանց մեջ շողում էին ուշադիր ջերմ կայծեր։

— Ոչ, սպասեցեք... մենք ահա թե ինչ կանենք։— Նազանսկին դժվարությամբ շուռ եկավ կողքի և հենվեց արմունկին։— Այն պահարանից բերեք... դուք գիտեք... Ոչ, խնձոր պետք չէ... այնտեղ անանուխի բլիթներ կան։ Շնորհակալ եմ, հոգիս։ Մենք ահա թե ինչ կանենք... Թո՛ւ, ինչ գարշելի բան է... ինձ տարեք որևէ տեղ, թարմ օդ, այստեղ նողկալի է, և այստեղ ես վախենում եմ... Շարունակ այնպիսի սարսափելի հալուցինացիաներ եմ ունենում։ Գնանք նավակով զբոսնենք և խոսենք։ Ուզո՞ւմ եք։

Նա, կնճռոտվելով, ծայրահեղ զզվանքի արտահայտությամբ խմում էր գավաթ գավաթի հետևից, և Ռոմաշովը տեսնում էր, թե ինչպես քիչ-քիչ կյանքով ու փայլով էին բռնկվում և նորից սքանչելի էին դառնում նրա կապույտ աչքերը։

Տնից դուրս գալով, նրանք կառք վերցրին և գնացին քաղաքի ծայրը, գետի մոտ։ Այնտեղ, ամբարտակի մի կողմում, կանգնած էր հրեական տուրբինային մի ալրաղաց՝ մի հսկայական կարմիր շենք, իսկ մյուս կողմում տեղավորված էին լողարանները, և հենց այդտեղ էլ վարձով էին տրվում նավակներ։ Ռոմաշովը նստեց թիերի մոտ, իսկ Նազանսկին շինելը վրան քաշելով, կիսապառկեց նավախելին։

Ամբարտակով բանդված գետը լայն ու անշարժ էր, ինչպես մի մեծ արհեստական լիճ։ Նրա երկու կողմերից տափակ ու հարթ ափերը գնում էին դեպի վեր։ Այդ ափերին կանաչը այնպես հավասար էր, վառ ու հյութեղ, որ հեռվից մարդ ուզում էր ձեռք տալ։ Ափերի տակ ջրի մեջ կանաչում էր եղեգնը և խիտ, մուգ, կլոր սաղարթի մեջ սոլիտակին էին տալիս ջրաշուշանների մեծ գլխիկները։

Ռոմաշովը մանրամասն պատմեց Նիկոլաևի հետ իր ընդհարման պատմությունը։ Նազանսկին մտախոհ լսում էր նրան, գլուխը ցած խոնարհած և նայելով ջրին, որը ջրիկ ապակու պես վեհաշեմացող հույլ ու թանձր կայլակներով նավակի քթից ծավալվում էր լայնակի և դեպի հեռուն։

— Ճիշտն ասացեք, դուք չե՞ք վախենում, Ռոմաշով,— կամացուկ հարցրեց Նազանսկին։

— Մենամարտի՞ց։ Ոչ, չեմ վախենում,— արագ պատասխանեց Ռոմաշովը։ Բայց իսկույն էլ լռեց և մի վայրկյան վառ պատկերացրեց, թե ինքը ինչպես է բոլորովին մոտիկ կանգնելու Նիկոլաևի դեմ և նրա առաջ մեկնած ձեռքում տեսնելու ատրճանակի ցած իջնող սև փողը։— Ոչ, ոչ,— շտապելով ավելացրեց Ռոմաշովը,— ես չեմ խաբի, թե չեմ վախենում։ Իհարկե, սարսափելի է։ Բայց ես գիտեմ, որ չեմ երկնչի, չեմ փախչի, ներողություն չեմ խնդրի։

Նազանսկին մատների ծայրերը ցած թողեց իրիկնային, տաք, մեղմ խոխոջացող ջրի մեջ և սկսեց խոսել դանդաղ, թույլ ձայնով, բոպին մեկ կոկորդը մաքրելով.

— Ա՜խ, սիրելիդ իմ, սիրելի Ռոմաշով, ինչո՞ւ եք ուզում անել այդ բանը։ Մտածեցեք. եթե դուք հաստատ գիտեք, որ չեք երկընչի, եթե բոլորովին հաստատ գիտե՞ք, ապա որքան համարձակ բան կլինի վերցնել ու հրաժարվել։

— Նա ինձ խփեց... դեմքիս,— համառորեն ասաց Ռոմաշովը և այրող շարությունը նորից ծանր ծփաց ներսում։

— Դե, այդպես է, դե, խփել է,— փաղաքշորեն առարկեց Նազանսկին և թախծոտ, քնքուշ աչքերով նայեց Ռոմաշովին։— Բայց մի՞թե բանն այդ է։ Աշխարհում ամեն ինչ անցնում է, կանցնի նաև ձեր ցավը և ձեր ատելությունը։ Եվ դուք ինքներդ էլ կմոռանաք դրա մասին։ Բայց երբեք չեք մոռանա այն մարդուն, որին սպանել եք։ Նա ձեզ հետ կլինի անկողնում, սեղանի առաջ, մենակության պահին և ամբոխի մեջ։ Դատարկաբանները, զարմանքի հիմարները, պղնձե ճակատները, խայտաբղետ թուղթակները հավատացնում են, որ մենամարտի ժամանակ կատարած սպանությունը սպանություն չէ։ Ինչպիսի՞ հիմարություն։ Բայց հենց նրանք էլ սենտիմենտալորեն հավատում են, թե ավազակները երազում տեսնում են իրենց զոհերի ուղեղն ու արյունը։ Ոչ, սպանությունը միշտ էլ սպանություն է։ Եվ այստեղ կարևոր է ոչ թե ցավը, ոչ թե մահը, բռնությունը, ոչ թե նոզկալի զզվանքը արյունից և դիակից, ոչ, ամենից սարսափելին այն է, որ դուք մարդուց խլում եք ապրելու նրա ուրախությունը։ Կյանքի մեծ ուրախությունը,— հանկարծ բարձրաձայն կրկնեց Նազանսկին լացախառն ձայնով։— Ախր ոչ ոք՝ ոչ դուք, ոչ ես, ա՜խ, դե ուզդակի աշխարհում ոչ ոք չի հավատում ոչ մի անդրշիրիմյան կյանքի։ Դրա համար էլ բոլորը սարսափում են մահից, բայց փոքրագի հիմարները իրենց խաբում են լուսաշող այգիների և ամորձատների քաղցր երգեցողության հեռանկարներով, իսկ ուժեղները լռելյայն անցնում են անհրաժեշտության սահմանագիծը։ Մենք ուժեղներ չենք։ Երբ մենք մտածում ենք, թե ինչ է լինելու մեր մահից հետո, ապա մեզ պատկերացնում ենք դատարկ, ցուրտ և խավար մի նկուղ։ Ոչ, աղավնյակս, այդ բոլորը փչոցներ են. նկուղը կլիներ մի երջանիկ խաբեություն, ուրախալի մխիթարություն։ Բայց ձեզ պատկերացրեք այն մտքի ամբողջ սարսափը, որ բոլորովին, բոլորովին ոչինչ չի լինի՝ ո՛չ խավար, ո՛չ դատարկություն, ո՛չ ցուրտ... նույնիսկ միտքը այդ մասին չի լինի, նույնիսկ սարսափը չի մնա։ Գեթ սարսա՜փը։ Մտածեցե՞ք։

Ռոմաշովը թիակները գցեց նավակի կողերին։ Նավակը հաղիվ շարժվում էր ջրի երեսին, և դա նկատելի էր լոկ այն բանից, թե ինչպես դանդաղ հակառակ կողմն էին լողում կանաչ ափերը։

— Այո, ոչինչ չի լինի,—կրկնեց Ռոմաշովը մտածկոտ։

— Բայց նայեցեք, ոչ, նայեցեք միայն, թե որքան հիասքանչ, որքան հրապուրիչ է կյանքը,—բացականչեց Նազանսկին, լայնորեն իր շուրջը տարածելով ձեռքերը։— Օ՜, ուրախություն, օ՜, կյանքի աստվածային գեղեցկությո՜ւն։ Նայեցեք. կապույտ երկինք, իրիկնային արեգակ, հանդարտ ջուր, ախր հիացմունքից դողում ես, երբ նայում ես դրանց, ահա, այնտեղ, հեռվում, հողմաղացներն են թևերը թափահարում, դալար, հեզիկ կանաչն է, ջուրը ափի մոտ վարդագույն, վարդագույն է մայրամուտից։ Ա՜խ, ինչպես ամեն ինչ հիասքանչ է, ինչպես ամեն ինչ նուրբ է ու երջանիկ։

Նաղանսկին հանկարծ ձեռքերով ծածկեց աչքերը և լաց եղավ, բայց իսկույն էլ տիրապետեց ինքն իրեն և խոսել սկսեց, առանց ամաչելու իր արցունքներից, Ռոմաշովին նայելով թաց, շոլշողուն աչքերով։

— Ոչ, եթե ես գնացքի տակ ընկնեմ, և փորս պատռվի ու փորոտիքս խառնվի ավազի հետ և փաթաթվի անիվներին, և եթե այդ վերջին ակնթարթին ինձ հարցնեն. «Ի՞նչ է, հիմա՞ էլ կյանքը հիասքանչ է»,— ես շնորհակալ հիացմունքով. կասեմ. «Ախ, որքա՜ն դեղեցիկ է նա»։ Որքա՜ն ուրախություն է պատճառում մեզ լոկ տեսողությունը։ Բայց կա նաև երաժշտություն, ծաղիկների բուրմունք, կանացի քաղցր սեր։ Եվ կա ամենաանչափելի մի վայելք՝ կյանքի ոսկի արևը՝ մարդկային միտքը։ Հարազատս, Յո՜ւրաչկա... Ներեցեք, որ ձեզ այդպես կոչեցի։— Ասես ներողություն խնդրելով, Նաղանսկին հեռվից նրան պարզեց իր դողդոջուն ձեռքը։— Ենթադրենք, ձեզ առհավետ բանտ են նստեցրել, և Ձեր ամբողջ կյանքի ընթացքում մի ճեղքից դուք տեսնելու եք երկու մաշված քնձոտ աղյուս... ոչ, նույնիսկ, ենթադրենք, որ ձեր բանտում չկա լուսո ոչ մի կայծ, ոչ մի հատիկ ձայն, ոչինչ։ Եվ այնուհանդերձ մի՞թե դա կարելի է համեմատել մահվան հրեշավոր սարսափի հետ։ Ձեզ մնում է միտքը, երևակայությունը, հիշողությունը, ստեղծագործությունը, չէ՞ որ դրանով էլ կարելի է ապրել։ Եվ դուք նույնիսկ կարող եք ցնծության բոպիներ ունենալ կյանքի ուրախությունից։

— Այո, կյանքը հիասքանչ է,— ասաց Ռոմաշովը։

— Հիասքա՜նչ է,— խանդավառ կրկնեց Նաղանսկին։— Եվ ահա երկու մարդ, նրա համար, որ մեկը խփել է մյուսին, կամ համբուրել է նրա կնոջը, կամ ուղղակի նրա կողքով անցնելիս և բեղը ոլորելիս անքաղաքավարի է նայել նրան, այդ երկու մարդը կրակում են միմյանց վրա, սպանում են միմյանց։ Ախ, ոչ, նրանց վերքերը, նրանց տառապանքները, նրանց մահը, բոլորը՝ գրողի ծոցը։ Բայց ախր մի՞թե նա իրեն է սպանում, խղճուկ շարժվող այդ գունդը, որը մարդ է կոչվում։ Նա սպանում է արևը, հրաբորը, սիրելի արևը, պայծառ երկինքը, բնությունը՝ կյանքի ողջ բազմազան գեղեցկությունը, սպանում է մեծագույն վայելքն ու հպարտությունը՝ մարդկային միտքը։ Նա սպանում է մի բան, որն այլևս երբեք, երբեք, երբեք չի վերադառնա։ Ա՜խ, հիմարներ, հիմարներ։

Նաղանսկին տխուր, երկար հոգոցով գլուխն օրորեց ու ցած

կախեց։ Նավակը մտավ եղեգնուտի մեջ։ Ռոմաշովը նորից թիակները ձեռքն առավ։ Երկար կանաչ կոշտ ցողունները, նավակորերին քսվելով, հանդիսավոր ու դանդաղ ողջունում էին։ Այստեղ ավելի մութ ու զով էր, քան բաց ջրի երեսին։

— Հապա ի՞նչ անեմ,— մռայլ ու կոպտավուն հարցրեց Ռոմաշովը։— Գնամ պահե՞ստ։ Ո՞ւր կորչեմ։

Նաղանսկին ժպտաց հեզ ու քնքուշ։

— Սպասեցեք, Ռոմաշով։ Նայեցեք աչքերիս։ Ահա այդպես։ Ոչ, մի շրջվեք, նայեցեք ուղիղ և պատասխանեցեք մաքուր խղճով։ Մի՞թե դուք հավատում եք, որ ծառայում եք հետաքրքիր, լավ, օգտակար գործի։ Ես ձեզ լավ եմ ճանաչում, ավելի լավ, քան մյուսներին, և զգում եմ ձեր հոգին։ Չէ՞ որ դուք բոլորովին չեք հավատում դրան։

— Ոչ,— պատասխանեց Ռոմաշովը հաստատ։— Բայց ո՞ւր եմ գնալու։

— Կացեք, մի շտապեք։ Հապա մի նայեցե՛ք մեր սպաներին։ Օ՜, ես չեմ խոսում գվարդիականների մասին, որոնք պարում են պարահանդեսներում, ֆրանսերեն են խոսում և ապրում են իրենց ծնողների և օրինական կանանց միջոցներով։ Ոչ, դուք մտածեցեք մեր մասին, թշվառական բանակցիներիս, բանակային հետևակի, ռուսական փառապանծ և խիզախ զորքի այդ գլխավոր կորիզի մասին։ Չէ՞ որ այդ բոլորը հնոտի են, ցնցոտիներ, թափթփուկ։ Լավագույն դեպքում՝ խեղված կապիտաններ որդիներ։ Իսկ մեծ մասամբ՝ գերիմաստությունից վախեցած գիմնազիստներ են, ռեալիստներ, նույնիսկ չավարտած սեմինարիստներ։ Ես ձեզ օրինակ կբերեմ մեր գունդը։ Ո՞վ է մեզ մոտ լավ ու երկարատև ծառայում։ Ընտանիքներով ծանրաբեռնված չքավորները, ամեն տեսակ զիջումների, ամեն տեսակ դաժանությունների, նույնիսկ մարդասպանության, զինվորների կոպեկները գողանալու պատրաստ մարդիկ, և այդ ամենը իրենց մի ման ճաշի համար։ Նրան հրամայում են՝ կրակիր, և նա կրակում է, ո՞ւմ, ինչո՞ւ։ Դուքն զուր տե՞ղը։ Նրա համար միևնույն է, նա դատողություններ չի անում։ Նա գիտի, որ տանը ճղավում են իր հյուծված ռախիտավոր երեխաները, և նա անիմաստ կերպով, փայտփորի պես, աչքերը չռած, անգիր է անում միայն մի բառ՝ «երդում»։ Ինչքան որ տաղանդավոր, ընդունակ մարդիկ կան, իրենց հարբեցողության են մատնում։ Մեզ մոտ սպայական կազմի յոթանասունհինգ տոկոսը հիվանդ է սիֆիլիսով։ Մի բախտավորը, և

այն էլ հինգ տարին մեկ անգամ, ակադեմիա է մտնում, նրան ճանապարհ են դնում ատելությամբ։ Ավելի կոկիկները և հովանավորյալները անփոփոխ կերպով ժանդարմ են դառնում կամ երազում մեծ քաղաքում ոստիկանական պրիստավի պաշտոնի մասին։ Նույնիսկ ազնվականները, ովքեր թեկուզ մի փոքր կարողության տեր են, դառնում են զեմստվոների պետեր։ Ենթադրենք, մնում են զգայուն, սիրտ ունեցող մարդիկ, բայց նրա՞նք ինչ են անում։ Նրանց համար ծառայությունը համատարած զզվանք է, բևռ, ատելի լուծ։ Ամեն մեկն աշխատում է իր համար հնարել որևէ կողմնակի հետաքրքրություն, որը նրան կլանում է առանց մնացորդի։ Մեկը հավաքածու է պահում, շատերն անհամբեր սպասում են իրիկվան, երբ կարելի կլինի նստել տանը, լամպի մոտ, ասեղը ձեռքն առնել և փոքրիկ խաչիկներով կանվայի վրա ասեղնագործել մի որևէ քնձոտ, անպետք գորգիկ, կամ նրբասղոցով մի ծակոտկեն շրջանակ սղոցել սեփական դիմանկարի համար։ Ծառայության վայրում նրանք երազում են այդ մասին, որպես թաքուն քաղցր ուրախության մասին։ Խաղաթուղթը, կանանց տիրանալու պարծենկոտ սպորտը՝ դրա մասին ես արդեն չեմ խոսում։ Ամենազազրելին պաշտոնի փառասիրությունն է, մանր, դաժան փառասիրությունը։ Դա Օսադչին և ընկերությունն են, որոնք թափում են իրենց զինվորների ատամներն ու աչքերը։ Գիտե՞ք, որ իմ ներկայությամբ Արչակովսկին այնպես էր ծեծում իր սպասյակին, որ ես հազիվ խլեցի նրա ձեռքից։ Հետո տեսանք, որ արյուն կար ոչ միայն պատերին, այլ նաև առաստաղին։ Իսկ ուզո՞ւմ եք իմանալ, թե դա ինչով վերջացավ։ Նրանով, որ սպասյակը վազեց վաշտի հրամանատարի մոտ, բողոքելու, իսկ վաշտի հրամանատարը մի տոմսակ ձեռքը տալով, նրան ուղարկեց ֆելդֆեբելի մոտ, իսկ ֆելդֆեբելը էլի կես ժամ ծեծեց նրան, հարվածելով կապտած, ուռած, արյունլվա դեմքին։ Այդ զինվորը տեսչական ստուգման ժամանակ երկու անգամ բողոք հայտնեց, բայց առանց որևէ արդյունքի։

Նաղանսկին լռեց և ջղայնաբար սկսեց ափերով քունքերը շփել։

— Կացեք... Ա՛խ, ինչպես մտքերս փախչում են...—ասաց նա անհանգստությամբ։— Ինչ վատ է, երբ ոչ թե դու ես միտքդ վարում, այլ նա է քեզ վարում... Հա, հիշեցի։ Անցնենք առաջ։ Նայեցեք մյուս սպաներին։ Դե, ահա ձեզ, օրինակի համար, շտաբս-կապիտան Պլավսկին։ Սատանան գիտի, թե ինչով է

ենվում, ինքն է իր համար նավթավառի վրա ինչ-որ վոիկ պատրաստում, բայց իր քառասունութ ռուբլիանոց ռոճիկից ամեն ամիս ետ է գցում քսանհինգը։ Օհո-հո՜։ Նա բանկում արդեն մոտ երկու հազար ունի, և գաղտնի վաշխով է տալիս ընկերներին ահռելի տոկոսներով։ Դուք կարծում եք, թե այստեղ բնածին ժլատությո՞ւն է։ Ոչ, ոչ, դա միայն միջոց է որևէ տեղ հեռանալու, թաքնվելու զինվորական ծառայության ծանր և անհասկանալի անհեթեթությունից... Կապիտան Ստելկովսկին խելացի, ուժեղ, խիզախ մարդ է։ Իսկ ի՞նչն է կաղմում նրա կյանքի էությունը։ Նա մոլորեցնում է անփորձ գեղջուկ աղջիկներին։ Վերջապես վերցրեք փոխգնդապետ Բրեմին։ Հաճելի, սիրելի խենթուկ, ամենաբարի հոգի, ուղղակի հրաշալի մարդ, և ահա նա ամբողջովին թաղվել է իր գազանանոցի հոգսերի մեջ։ Նրա համար ի՞նչ են ծառայությունը, շքահանդեսները, դրոշը, նկատողությունները, պատիվը։ Մանր, անպետք մանրամասնություններ կյանքում։

— Բրեմը հիանալի է, ես նրան սիրում եմ,—միջարկեց Ռոմաշովը։

— Այո, իհարկե, համակրելի է,—ալարելով համաձայնեց Նաղանսկին։— Իսկ գիտե՞ք արդյոք,— հանկարծ խոսեց նա խոժոռվելով,— գիտե՞ք, թե ինչպիսի մի բան տեսա ես մի անգամ զորաշարժերի ժամանակ։ Գիշերային չվերթից հետո մենք գրոհի էինք գնում։ Բոլորս այն ժամանակ հալից ընկել էինք, հոգնել, ջղայնացել, բոլորը, և՛ սպաները, և՛ զինվորները։ Բրեմը շեփորահարին հրամայում է հնչեցնել գրոհի եղանակը, իսկ սա, աստված գիտի թե ինչու, շեփորում է ռեզերվի հանքը։ Եվ մեկ, և երկրորդ, և երրորդ անգամ։ Եվ հանկարծ հենց այդ համակրելի, բարի, սքանչելի Բրեմը ձիով մոտ է վազում շեփորահարին, որը շեփորը բռնել էր բերանի մոտ, և ամբողջ ուժով շքը՞ղս բռունցքով շեփորին։ Այո։ Եվ ես ինքս տեսա, թե ինչպես շեփորահարը արյան հետ դուրս թքեց փշրված ատամները։

— Ա՛խ, աստված իմ,— խորշանքով հառաչեց Ռոմաշովը։

— Ահա այդպես էլ նրանք բոլորը, նույնիսկ ամենալավերը, նրանցից ամենաքնքուշները, հիանալի հայրերը և ուշադիր ամուսինները, նրանք բոլորը ծառայության մեջ դառնում են ստոր, չար, հիմար գազաններ։ Դուք կհարցնեք՝ ինչո՞ւ։ Դե հենց այն պատճառով, որ նրանցից ոչ մեկը ծառայությանը չի հավատում, և այդ ծառայության խելացի նպատակը չի տեսնում։ Դուք ախր

գիտեք, թե երեխաներն ինչպես սիրում են պատերազմ խաղալ։ Պատմության մեջ էլ եղել է եռուն մանկության շրջան, խոլ և ուրախ հոլոտասարդ սերունդների ժամանակաշրջան։ Այն ժամանակ մարդիկ շրջում էին ազատ հրոսախմբերով, և պատերազմը ընդհանուր հարբեցնող ուրախություն էր, արյունալի և փառապանծ զվարճություն։ Պետ էր ընտրվում ամենախիզախը, ամենաուժեղն ու խորամանկը, և նրա իշխանությունը, քանի դեռ ստորադրյալները նրան չէին սպանել, բոլորի կողմից ընդունվում էր որպես իսկական աստվածային իշխանություն։ Բայց ահա մարդկությունը հասակ առավ և տարեցտարի դառնում է ավելի իմաստուն, և մանկական աղմկալի խաղերի փոխարեն նրա մրցքերն օրըստօրե դառնում են ավելի լուրջ և խորունկ։ Անվախ արկածախնդիրները դարձան խաբեբաներ։ Զինվորը արդեն զինվորական ծառայության չի գնում որպես ուրախ ու զիշատիչ արհեստի։ Ոչ, նրան քարշ են տալիս վզին օղապարան գցած, իսկ նա դեմ է ընկնում, անիծում ու լալիս է։ Եվ պետերն էլ ահեղ, հմայիչ, անողոք և պաշտելի պարագլուխներից դարձել են չինովնիկներ, որոնք վախկոտաբար ապրում են իրենց՝ աղքատին վայել ոոճիկով։ Նրանց խիզախությունը թրջված խիզախություն է։ Եվ զինվորական կարգապահությունն էլ՝ վախի կարգապահությունը, առնչվում է փոխադարձ ատելությանը։ Գեղեցիկ ֆրազները խունացել են։ Մարդկության պատմության մեջ նման միայն մի օրինակ գիտեմ ես։ Դա վանականությունն է։ Նրա սկիզբը հեզաբարո էր, գեղեցիկ և սրտառուչ։ Կարող է պատահել, ի՞նչ իմանաս, նա ոգեկոչված էր համաշխարհային անհրաժեշտությամբ։ Բայց հարյուրամյակներ անցան, և ի՞նչ ենք տեսնում։ Հարյուր հազարավոր անբարոյականացած, քաջառողջ տխմարների, որոնց ատում են նույնիսկ նրանք, ովքեր ժամանակ առ ժամանակ նրանց հոգևոր կարիքն են զգում։ Եվ այդ ամենը քողարկված է արտաքին ձևով, կաստայի խաբեբայական նշաններով, իրենց դարն ապրած ծիծաղաշարժ ծիսակատարություններով։ Ոչ, ես իզուր տեղը չխոսեցի վանականների մասին, և ուրախ եմ, որ իմ համեմատությունը տրամաբանական է։ Հապա մի մտածեցեք, որքան ընդհանուր բան կա։ Այնտեղ՝ շուրջառ և բուրվառ, այստեղ՝ մոնդիր և շառաչող զենք. այնտեղ՝ խոնարհում, կեղծավոր հոգոցներ, քաղցրությունեղջր խոսակցություն, այստեղ՝ շինծու արիություն, գոռոզ պատվասիրություն, որը շարունակ աչքերը շուռումուռ է տալիս, թե՝ «չլինի՞ հանկարծ մեկն ու

մեկը ինձ վիրավորի», դուրս ցցած կրծքեր, դեպի դուրս շրջած արմունկներ, վեր բարձրացրած ուսեր։ Բայց թե՛ սրանք, թե՛ մյուսները ապրում են որպես մակաբույծներ և գիտեն, ախր գիտեն դա իրենց հոգու խորքում, բայց վախենում են դա բանականությամբ, և որ գլխավորն է՝ ստամոքսով հասկանալուց։ Եվ նրանք նման են պարարտ ոջիլների, որոնք այնքան ավելի խիստ են շաղանում օտար մարմնի վրա, որքան ավելի է քայքայվում այդ մարմինը։

Նազանսկին չար փնչացրեց քիթը և լռեց։

— Խոսեցեք, խոսեցեք,—թախանձագին խնդրեց Ռոմաշովը։

— Այո, կգա ժամանակը, և նա արդեն մոտ է։ Մեծ հիասթափություններ և ահավոր վերազնահատության ժամանակը։ Հիշո՞ւմ եք, ես մի անգամ ձեզ ասել եմ, որ դարերից ի վեր գոյություն ունի մարդկության անտեսանելի և անողորմ ոգի։ Նրա օրենքները ճշգրիտ են և անողոք։ Եվ որքան ավելի իմաստուն է դառնում մարդկությունը, այնքան ավելի խորն է թափանցում նա այդ օրենքների մեջ։ Եվ ահա ես համոզված եմ, որ ըստ այդ անխախտելի օրենքների աշխարհում ամեն բան վաղ թե ուշ գալիս հավասարակշռվում է։ Եթե ստրկությունը դարեր է տևել, ապա նրա քայքայումը սարսափելի կլինի։ Որքան ահագին էր բռնությունը, այնքան արյունալի կլինի դատաստանը։ Եվ ես խորապես, հաստատ համոզված եմ, որ կգա ժամանակը, երբ մեզնից, պատենտավոր գեղեցկատեսներից, անհաղթ գայթակղիչներից, վսեմաշուք պճնամոլներից կանայք կսկսեն ամաչել և, ի վերջո, զինվորները կդադարեն հնթարկվել։ Եվ դա կլինի ոչ նրա համար, որ մենք արյունոտելու աստիճան ծեծում էինք պաշտպանվելու հնարավորությունից զուրկ մարդկանց, և ոչ նրա համար, որ մեզ համար հանուն մունդիրի պատվի, անպատիժ էր մնում կանանց վիրավորելը, և ոչ նրա համար, որ մենք, հարբելով, պանդոկներում բանջարի պես ջարդում էինք ամեն մի պատահողի։ Իհարկե, է՛ նրա, և՛ սրա համար, բայց մենք ավելի սարսափելի և արդեն հիմա իսկ անուղղելի մի հանցանք ունենք։ Այդ այն է, որ մենք կույր ու խուլ ենք ամեն ինչի նկատմամբ։ Վաղուց արդեն, մեր հոտած, կեղտոտ զորակայաններից հեռու, հոսում է ահագին, նոր, լուսաճաճանչ մի կյանք։ Հայտնվել են նոր, խիզախ, հպարտ մարդիկ. գլուխներում բռնկվում են բոցավառ, ազատ մտքեր։ Ինչպես մելոդրամայի վերջին գործողության մեջ, խորտակվում են հին աշտարակներն ու ստորերկրյա ներք-

նատները և նրանց հետևից արդեն երևում է շլացուցիչ շողշողումը։ Իսկ մենք, հնդու աքլորների պես փքված, միայն աչքներս ենք ճպճպացնում և ամբարտավան բրթբրթում. «Ի՞նչ։ Որտե՞ղ։ Լռե՛լ։ Ապտամբությո՞ւն է։ Կգնդակահարե՛մ»։ Եվ ահա դեպի մարդկային ոգու ազատությունն ուղեցած այդ հնդկահավային արհամարհանքը մեզ չեն ների՝ հավիտյանս հավիտենից։

Նավակը մտավ մի խաղաղ, թաքուն ջրային բացատ։ Բարձր և անշարժ եղեգները կլոր կանաչ պատի պես խիտ շրջափակեցին նավակը։ Նա կարծես կտրված, թաքնված էր ամբողջ աշխարհից։ Նավակի վերև ճիչով թռածում էին ճայերը՝ գրեթե թևերը քսելով Ռոմաշովին, երբեմն այնքան մոտիկ, որ նա զգում էր սրանց ուժեղ թռիչքի շունչը։ Ըստ երևույթին այստեղ, մոտիկ, եղեգների թավուտում նրանց բներն էին։ Նազանսկին մեջքի վրա պառկեց նավախելին և երկար նայում էր վեր, դեպի երկինք, որտեղ ոսկեվառ անշարժ ամպերը արդեն կարմիր էին ներկվում։

Ռոմաշովն ամոթխած ասաց.

— Դուք չե՞ք հոգնել։ Էլի խոսեցեք։

Եվ Նազանսկին, ասես բարձրաձայն շարունակելով իր մտքերը, անմիջապես սկսեց խոսել.

— Այո, վրա է հասնում նոր, հրաշալի, սքանչելի ժամանակ։ Չէ՞ որ ես երկար եմ ապրել ազատության մեջ և շատ բան եմ կարդացել, շատ բան եմ զգացել ու տեսել։ Մինչ այդ ժամանակ ծեր ագռավները դեռ դպրոցական նստարանից մեր գլուխներն էին մացնում. «Սիրիր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ, և գիտցիր, որ հեգությունը, հնազանդությունը և վախը մարդու առաջին արժանիքներն են»։ Ավելի ազնիվները, ավելի ուժեղները, ավելի գիշատիչները մեզ ասում էին. «Ձեռք ձեռքի տանք, գնանք և զոհվենք, բայց ապագա սերունդներին պատրաստենք լուսավոր և հեշտ կյանք»։ Բայց ես երբեք չէի հասկանում այդ։ Ո՞վ պարզ համոզչությամբ ինձ կապացուցի, թե ես ինչո՞վ եմ կապված այդ՝ գրողը տանի դրան, իմ մերձավորի, ստոր ստրուկի, վարակվածի, ապուշի հետ։ Օ՜, բոլոր լեգենդներից ամենից ավելի ես ատում եմ ամբողջ սրտով, արհամարհելու ամբողջ կարողությամբ Ողորմած Հուլիանոսի լեգենդը։ Բորոտն ասում է. «Ես դողում եմ, պառկիր ինձ հետ մի անկողնում։ Ես մրսել եմ, մոտեցրու քո շրթունքները իմ գարշահոտ բերանին և շնչիր ինձ վրա»։ Ուխ, ատո՜ւմ եմ։ Ատում եմ բորոտներին և չեմ սիրում մերձավորներին։ Եվ ապա, ի՞նչ շահ կարող է ինձ հարկադրել, որ

գլուխս կոտրեմ երեսուներկուերորդ դարի մարդկանց երջանկության համար։ Օ՜, ես գիտեմ այդ հավի զառանցանքը ինչ-որ համաշխարհային հոգու, սրբազան պարտքի մասին։ Բայց նույնիսկ այն ժամանակ, երբ դրան հավատում էի խելքով, ոչ մի անգամ չէի զգում սրտով։ Դուք հետևո՞ւմ եք ինձ, Ռոմաշով։

Ռոմաշովը ամոթխած շնորհակալությամբ նայեց Նազանսկուն։

— Ես ձեզ լիովին, լիովին հասկանում եմ,— ասաց նա։— Երբ ես չլինեմ, ապա կկործանվի նաև ողջ աշխա՞րհը։ Չէ՞ որ դուք այդ եք ասում։

— Հենց այդ։ Եվ ահա, ասում եմ ես, սերը դեպի մարդկությունը այրվել, ծխացել է մարդկանց սրտերից։ Նրան փոխարինելու է գալիս մի նոր, աստվածային հավատ, որը անմահ կմնա մինչև աշխարհի վերջը։ Դա սերն է դեպի ինքը, իր սքանչելի մարմինը, իր ամենահաղթ միտքը, դեպի իր զգացմունքների անվերջ հարստությունը։ Չէ, խորհեցեք, խորհեցեք, Ռոմաշով. ո՞վ է ձեզ ավելի թանկ ու մոտիկ, քան սեփական անձը։ Ոչ ոք։ Դուք աշխարհի թագավորն եք, նրա հպարտությունն ու գարդը։ Դուք աստվածն եք ամենայն ապրողի։ Այն ամենը, ինչ տեսնում եք, լսում, զգում, պատկանում է միայն ձեզ։ Արեք, ինչ կամենում եք։ Վերցրեք այն ամենը, ինչ ձեզ դուր է գալիս։ Մի վախեցեք ոչ ոքից ամբողջ տիեզերքում, որովհետև ձեր վերև ոչ ոք չկա և ոչ ոք ձեզ հավասար չէ։ Կգա ժամանակը, և մեծ հավատը դեպի սեփական ես-ը կլուսավորի, ինչպես սուրբ հոգու հրեղեն լեզուներ, բոլոր մարդկանց գլուխները, և այն ժամանակ արդեն չեն լինի ո՜չ ստրուկներ, ո՜չ տերեր, հաշմանդամներ, ո՜չ խղճահարություն, ո՜չ արատներ, ո՜չ չարություն, ո՜չ նախանձ։ Այն ժամանակ մարդիկ կդառնան աստվածներ։ Եվ մտածեցեք, ես այն ժամանակ ինչպե՞ս կհամարձակվեմ վիրավորել, հրել, խաբել մարդուն, հանձին որի ես զգում եմ ինձ հավասար պայծառ աստծու։ Այն ժամանակ կյանքը սքանչելի կլինի։ Ամբողջ աշխարհում կկառուցվեն թեթև, լուսավոր շենքեր, ոչ մի գոեհիկ, ստոր բան չի վիրավորի մեր տեսողությունը, կյանքը կդառնա քաղցր աշխատանք, ազատ գիտություն, զարմանալի երաժշտություն, զվարթ, մշտնջենական ու թեթև տոն։ Սեփականության մութ կապանքներից ազատված սերը կդառնա աշխարհի լուսապայծառ կրոնը, և ոչ թե ետ նայելով, զզվելով, մութ անկյունում գործվող գաղտնի ամոթալի մեղք։ Եվ մեր մարմիններն իսկ կդառնան լուսավոր, ուժեղ ու գեղեցիկ՝ հագած վառ, հոյակապ զգեստներ։ Ինչպես որ

հավատում եմ իմ վերև փռվող իրիկնային այս երկնքին,— բացականչեց Նազանսկին, հանդիսավորությամբ ձեռքը վերև բարձրացնելով,— այդպես հաստատ էլ հավատում եմ այդ ապագա աստվածակերպ կյանքին։

Ռոմաշովը հուզված, ցնցված մրմնջաց դալկացած շրթունքներով.

— Նազանսկի, դրանք երազանքներ են, ֆանտազիաներ։ Նազանսկին մեղմ ու ներողամիտ ծիծաղեց։

— Այո,— ասաց նա ժպտուն ձայնով,— դոգմատիկ աստվածաբանության կամ դասական բանասիրության մեջ որևէ պրոֆեսոր ոտքերը կշռի, ձեռքերը կտարածի և գլուխը կողքի թեքելով կասի. «Բայց չէ՞ որ դա ծայրահեղ անհատապաշտության դրսևորումն է»։ Բանը սարսափելի բառերը չեն, իմ սիրելի տղաս, բանն այն է, որ աշխարհում ոչ մի ավելի գործնական բան չկա, քան այն ֆանտազիաները, որոնց մասին հիմա երազում են լոկ քչերը։ Դրանք, այդ ֆանտազիաները մարդկանց միմյանց զոդելու ամենահաստատ և ամենահուսալի միջոցներն են։ Մոռանանք, որ մենք զինվորականներ ենք։ Մենք շպակներ ենք։ Ահա դուրսը կանգնած է մի հրեշ, մի ուրախ, երկգլխանի հրեշ։ Ով էլ նրա կողքից անցնում է, նա իսկույն հասցնում է, իսկույն հասցնում է անցորդի ուխին։ Հրեշը դեռ ինձ չի խփել, բայց լոկ միտքը այն մասին, որ նա կարող է ինձ խփել, վիրավորել իմ սիրած կնոջը, կամայականությամբ ինձ զրկել ազատությունից, այդ միտքը ցնցում և ծառս է անում իմ ողջ հպարտությունը. Ես մենակ չեմ կարող նրան հաղթահարել։ Բայց իմ կողքին կանգնած է նույնպիսի համարձակ և նույնպիսի հպարտ մարդ, ինչպիսին ես եմ, և ես նրան ասում եմ. «Գնանք և երկուսով այնպես անենք, որ նա ոչ քեզ, ոչ ինձ չխփի»։ Եվ մենք գնում ենք։ Օ, իհարկե, սա կոպիտ օրինակ է, սա սխեմա է, բայց ի դեմս այդ երկգլխանի հրեշի ես տեսնում եմ այն ամենը, որ կաշկանդում է իմ ոգին, բռնանում է իմ կամքի վրա, ստորացնում է իմ հարգանքը իմ անձի նկատմամբ։ Եվ հենց այդ ժամանակ ոչ թե հորթային խրոնճահարությունը դեպի մերձավորը, այլ իմ իսկ նկատմամբ տածած աստվածային սերն է իմ ջանքերը միացնում ոգով ինձ հավասար ուրիշ մարդկանց ջանքերի հետ։

Նազանսկին լռեց։ Ըստ երևույթին, նրան հոգնեցրեց անսովոր ջղային վերելքը։ Մի քանի րոպե հետո նա շարունակեց թմրած, ընկճված ձայնով.

— Ահա, այսպես ուրեմն, իմ թանկագին Գեորգի Ալեքսեևիչ։ Մեր կողքով լողում է վիթխարի, բարդ, ամբողջովին եռուն կյանքը, ծնվում են աստվածային, բոցավառ մտքեր, խորտակվում են հին ոսկեզօծ կուռքերը։ Իսկ մենք կանգնում ենք մեր մսուրներում, բռունցքներս կողքներիս հենած և խրխնջում ենք։ «Ախր դուք, ապուշնե՞ր։ Շպակնե՞ր։ Թ-թակե՞լ ձեզ»։ Եվ կյանքը մեզ երբեք չի ների այդ...

Նա կիսով չափ բարձրացավ, կծկվեց իր վերարկուի տակ և հոգնաբեկ ասաց.

— Ցուրտ է... Տուն գնանք...

Ռոմաշովը նավակը եղեգների միջից դուրս հանեց։ Արևը մայր էր մտել քաղաքի հեռավոր տանիքների հետևում, և տանիքները սև ու որոշակի գծագրվում էին վերջալույսի կարմիր շերտի մեջ։ Տեղ-տեղ անդրադարձ պայծառ կրակներով փայլում էին լուսամուտների ապակիները։ Ջուրը դեպի վերջալույսի կողմը նայող մասում վարդագույն էր, ողորկ ու պայծառ, բայց նավակի հետևում նա արդեն թանձրացել էր, կապտել ու կնճռոտվել։

Ռոմաշովն ասաց անակնկալ, պատասխանելով իր մտքերին.

— Դուք իրավացի եք, ես պահեստ կգնամ։ Չգիտեմ, թե ինչպես կանեմ այդ, բայց դրա մասին ես առաջ էլ էի մտածում։

Նազանսկին փաթաթվում էր վերարկուով և ցրտից դողում։

— Գնացեք, գնացեք,— ասաց նա փաղաքշող տխրությամբ։— Ձեր մեջ մի բան կա, ինչ-որ ներքին մի լույս... ես չգիտեմ, ինչ անուն տամ դրան։ Բայց մեր որջում կհանգցնեն այդ լույսը։ Ուղղակի կթքեն դրա վրա ու կմարեն։ Գլխավորը՝ մի վախեցեք, մի վախեցեք կյանքից. ուրախ, հետաքրքիր բան է այդ կյանքը։ Դե լավ, եթե հաջողություն չունեցաք, անկում կապրեք, կհասնեք բոսյակության, հարբեցողության։ Բայց ախր, աստված վկա, հոգյակս, ուզածդ շրջմոլիկը տասը հազար անգամ ավելի լիարյուն և հետաքրքիր է ապրում, քան Ադամ Իվանովիչ Զեգրժոտը կամ կապիտան Սլիվան։ Շրջում ես աշխարհում այս ու այնտեղ, տեսնում ես քաղաքներ ու գյուղեր, ծանոթանում ես բաղմաթիվ տարօրինակ, անհոգ, ծաղրասեր մարդկանց, նայում ես, հոտոտում, լսում, քնում ես ցողաթաթախ կանաչի վրա, մրսում ես սառնամանիքին, ոչնչի կապված չես, ոչ ոքից չես վախենում, պաշտում ես ազատ կյանքը հոգուդ բոլոր մասնիկներով... Է՜խ, առհասարակ որքան քիչ են հասկանում մարդիկ։ Միևնույն չէ՞ վոբլա ուտես, թե ֆետնասնկով պատրաստված

վայրի այծի միս, օղի՞, թե շամպայն խմելով հագենաս, ամպհովանու տա՞կ մեռնես, թե թաղային ոստիկանատանը։ Դրանք բոլորը մանրամասն են, փոքրիկ հարմարություններ, արագ անցնող սովորություններ։ Դրանք միայն ստվերում են, արժեզրկում են կյանքի ամենագլխավոր և հսկայական իմաստը։ Ահա ես հաճախ նայում եմ շքեղ թաղումներին։ Արծաթե արկղի մեջ, հիմար փետրափնջերի տակ պառկած է մի սատկած կապիկ, իսկ մյուս կենդանի կապիկները գնում են նրա հետևից՝ ձգված դընչերով, իրենց վրա առջևից ու հետևից ծիծաղելի աստղեր ու զանգուլակներ կախ տված... Իսկ այդ բոլոր այցերը, զեկույցները, նիստերը... Ոչ, հոգյակս, կա միայն մի անխախտ, սքանչելի, անփոխարինելի բան՝ ազատ հոգին, իսկ նրա հետ ստեղծագործ միտքը և կյանքի ուրախ ծարավը։ Գետնասունկ կարող է լինել և չլինելը, դա դիպվածի քմահաճ և չափազանց խայտաբղետ խաղ է։ Վագոնավարն էլ, եթե միայն բոլորովին հիմար չէ, մի տարուց հետո կանոնավոր և ոչ առանց արժանապատվության թագավորել կսովորի։ Բայց, հաստ փորի վրա պենսնեի ապակիները շողացնող, կառք նստած պարարտ, ծանրաբարո և բութ կապիկը երբեք չի հասկանա ազատության հպարտ հրապույրը, չի զգա ոգեշնչման ուրախությունը, բերկրանքի քաղցր արցունքներով լաց չի լինի, տեսնելով, թե ինչպես ուռենու ճյուղի վրա արծաթին են տալիս աղվամազոտ բողբոջները։

Նազանսկու հազը բռնեց, և նա երկար հազաց։ Հետո, նավեզրից դուրս թքելով, շարունակեց.

— Հեռացեք, Ռոմաշով։ Այդպես եմ ասում ձեզ, որովհետև ես ինքս փորձել եմ ազատությունը, և եթե ետ եմ վերադարձել այս աղբոտած վանդակը, ապա դրա մեղքը... է՞, դե լավ... միևնույն է, դուք հասկանում եք։ Համարձակ սուզվեցեք կյանքի մեջ, նա ձեզ չի խաբի։ Այն նման է մի հսկայական շենքի՝ հազարավոր սենյակներով, որոնցում լույս կա, երգեցողություն, հրաշալի նկարներ, խելացի, նուրբ մարդիկ, ծիծաղ, պարեր, սեր, այն ամենը, ինչ կա արվեստի մեջ՝ մեծ ու ահեղ։ Իսկ դուք այդ պալատում մինչև հիմա տեսել եք միայն մի խավար, նեղ խորդանոց, ամբողջովին աղբի ու սարդոստայնի մեջ կորած, և վախենում եք դուրս գալ այդտեղից։

Ռոմաշովը նավակը կառանեց նավամատույցում և Նազանսկուն օգնեց նավակից դուրս գալու։ Արդեն մթնել էր, երբ նրանք

հասան Նազանսկու բնակարանը։ Ռոմաշովը անկողնում պառկեցրեց ընկերոջը և ինքը ծածկեց նրան վերմակով և շինելով։

Նազանսկին այնպես սաստիկ էր դողում, որ ատամները կափկափում էին։ Գունդ ու կծիկ եղած և գլուխը բարձի մեջ թաղելով, նա խոսում էր խղճալի, անօգնական, մանկական ձայնով.

— Օ՜, ինչպես վախենում եմ իմ սենյակից... ինչպիսի երազներ, ինչպիսի՜ երազներ։

— Ուզում եք, մնամ գիշերելու,— առաջարկեց Ռոմաշովը։

— Ոչ, ոչ, հարկավոր չէ։ Ուղարկեցեք, խնդրեմ, բրոմ բերելու... և... մի քիչ օղի։ Ես փող չունեմ...

Ռոմաշովը նրա մոտ նստեց մինչև ժամը տասնմեկը։ Քիչ-քիչ Նազանսկին դադարեց դողացնելուց։ Նա հանկարծ բացեց խոշոր, փայլուն, տենդոտ աչքերը և ասաց վճռաբար, կտրուկ։

— Հիմա գնացեք։ Գնաք բարով։

— Մնաք բարով,— տխուր ասաց Ռոմաշովը։

Նա ուզում էր ասել. «Մնաք բարով, ուսուցիչ», բայց ամաչեց ֆրազից և միայն ավելացրեց լարված կատակով։

— Ինչո՞ւ մնաք բարով։ Ինչո՞ւ ոչ ցտեսություն։

Նազանսկին ծիծաղեց ահազդու, անմիտ, անսպասելի ծիծաղով։

— Իսկ ինչո՞ւ ոչ ց-ցնցնդություն,— բղավեց նա խելագարի վայրի ձայնով։

Եվ Ռոմաշովը իր ողջ մարմնի վրա սարսափի սարսռալի ալիքներ զգաց։

22

Տանը մոտենալով, Ռոմաշովը զարմանքով տեսավ, որ իր սենյակի փոքրիկ լուսամուտից, ամառային գիշերվա տաք խավարի մեջ նշույլում է հազիվ նկատելի մի լույս։ «Այս ի՞նչ է նշանակում,— մտածեց նա տագնապով և ակամա արագացրեց քայլերը։— Գուցե իմ մարտավկանե՞րն են վերադարձել, բերելով մենամարտի պայմանները»։ Հաշտում նա ընդհարվեց Գայնանի հետ, նրան չնկատեց, վախեցավ, ցնցվեց և բարկացած բացականչեց.

— Ի՞նչ շարքեր են։ Այդ դո՞ւ ես, Գայնան։ Ո՞վ է այստեղ։

Չնայած մթությանը, նա զգաց, որ Գայնանը, ըստ իր սովորության, տեղում կանգնած պարեց։

— Էնտեղ քեզ տիկին եկել է։ Նստել։

Ռոմաշովը դուռը բացեց։ Լամպի մեջ վաղուց արդեն ամբողջ նավթը վերջացել էր, և հիմա լամպը ճարճատելով վառվում էր վերջին ծխոտ բռնկումներով։ Մահճակալին անշարժ նստել էր մի կանացի կերպարանք, անորոշ գծագրվելով ծանր, թրթռացող կիսախավարի մեջ։

— Շո՜ւրոչկա,— շնչակտուր լինելով ասաց Ռոմաշովը և չգիտեր ինչու մատների ծայրերի վրա զգուշությամբ մոտեցավ մահճակալին։ — Շուրոչկա, այդ դո՞ւք եք։

— Կամաց, նստեցեք,— պատասխանեց նա արագ շշուկով։— Լամպը հանգցրեք։

Ռոմաշովը վերևից փչեց լամպի ապակուն։ Երկչոտ կապույտ կրակը մեռավ, և միանգամից սենյակում տիրեց խավարն ու լռությունը, և իսկույն սեղանի վրա շտապ ու բարձրաձայն սկսեց թկթկալ մինչև այդ աննկատելի մնացած զարթուցիչը։ Ռոմաշովը նստեց Ալեքսանդրա Պետրովնայի կողքին, կքված և առանց նրա կողմը նայելու։ Վախի, հուզմունքի և սրտի նվաղման մի տարօրինակ զգացում էր տիրել նրան և խանգարում էր խոսել։

— Ո՞վ է ապրում ձեր կողքին, պատի հետևում,— հարցրեց Շուրոչկան։— Այնտեղից լսվո՞ւմ է։

— Ոչ, այնտեղ դատարկ սենյակ է... հին կահ-կարասիք... Տանտերը հյուսն է։ Կարելի է բարձրաձայն խոսել։

Բայց համենայն դեպս նրանք երկուսն էլ շարունակում էին շշուկով խոսել, և ծանր թանձր խավարի մեջ արտասանված այդ կամացուկ, ընդհատ բառերում երկչոտ, շփոթված և գաղտագողի սողոսկող շատ բան կար։ Նրանք նստել էին գրեթե իրար քսվելով։ Ռոմաշովի ականջներում խուլ հարվածներով աղմկում էր արյունը։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ արիք դուք այդ, —հանկարծ ասաց Շուրոչկան ցածրաձայն, բայց բուռն կշտամբանքով։

Նա ձեռքը դրեց նրա ծնկանը։ Ռոմաշովը զգեստի միջով զգաց Շուրոչկայի կենդանի, նյարդային տաքությունը և, խոր շունչ քաշելով, աչքերը կկոցեց։ Եվ դրանից ավելի չմթնեց, միայն աչքերի առաջ լողացին կապույտ փայլով եզերված հեքիաթային լճերի նման սև ձվածիրներ։

— Հիշո՞ւմ եք, ես ձեզ խնդրել էի նրա հետ զուսպ լինել։ Ոչ, ոչ, ես չեմ կշտամբում։ Դուք դիտմամբ չէիք կռիվ փնտրում, ես այդ գիտեմ։ Բայց մի՞թե այն ժամանակ, երբ ձեր մեջ արթնացավ վայրի գազանը, դուք չէիք կարող գոնե մի բոպե հիշել ինձ և կանգ առնել։ Դուք երբեք չեք սիրել ինձ։

— Ես ձեզ սիրում եմ,— կամաց արտասանեց Ռոմաշովը և երկչոտ, դողացող մատներով թեթևակի կպավ նրա ձեռքին։

Շուրոչկան ձեռքը խլեց, բայց ոչ միանգամից, կամացուկ, կարծես ափսոսալով և վախենալով, որ նրան կվիրավորի։

— Այո, ես գիտեմ, որ ոչ դուք, ոչ նա իմ անունը չեք տվել, բայց ձեր ասպետությունը իզուր է կորել։ Միևնույն է, քաղաքում գլորվում է բամբասանքը։

— Ներեցեք ինձ, ես ինձ չէի տիրապետում։ Խանդը ինձ կուրացրել էր, —դժվարությամբ արտասանեց Ռոմաշովը։

Շուրոչկան ծիծաղեց երկարատև ու շար ծիծաղով։

— Խա՞նդը։ Մի՞թե դուք կարծում եք, թե իմ ամուսինը ձեր կռվից հետո այնքան մեծահոգի է գտնվել, որ իրեն զրկել է բավականությունից և չի պատմել, թե այն ժամանակ որտեղից եք եկել ակումբ։ Նա ինձ Նազանսկու մասին էլ է ասել։

— Ներեցեք,— կրկնեց Ռոմաշովը։— Ես այնտեղ ոչ մի վատ բան չեմ արել։ Ներեցեք։

Շուրոչկան հանկարծ սկսեց խոսել ավելի բարձր, վճռական և խիստ շշուկով.

— Լսեցեք, Գեորգի Ալեքսեևիչ, ինձ համար թանկ է ամեն մի բոպեն։ Ես առանց այն էլ մի ամբողջ ժամ սպասում էի։ Ուստի խոսենք կարճ և միայն գործի մասին։ Դուք գիտեք, թե ինչ է Վոլոդյան ինձ համար։ Ես նրան չեմ սիրում, բայց ես նրա վրա սպանել եմ հոգուս մի մասը։ Եվ ավելի շատ ինքնասիրություն ունեմ, քան նա։ Երկու անգամ նա կտրվել է ակադեմիայում քննություն տալիս։ Դա ինձ շատ ավելի է վիրավորանք և դառնություն պատճառել, քան նրան։ Գլխավոր շտաբի վերաբերյալ այդ ամբողջ միտքը պատկանում է միայն ինձ, ամբողջովին ինձ։ Ես ամուսնուս առաջ եմ քաշել ամբողջ ուժով, խթանել եմ նրան, սերտել եմ նրա հետ, կրկնություններ արել, գրգռել նրա հպարտությունը, քաջալերել վհատության բոպեին։ Դա իմ սեփական, սիրելի, հիվանդոտ գործն է։ Ես այդ մտքից չեմ կարող պոկել իմ սիրտը։ Ինչ էլ որ լինի, նա պետք է մտնի ակադեմիա։

Ռոմաշովը նստել էր, գլուխը ցած խոնարհած իր ափին։ Նա հանկարծ զգաց, որ Շուրոչկան մեղմ ու դանդաղ ձեռքը շփեց նրա մազերին։ Նա դառնագին տարակուսանքով հարցրեց.

— Բայց ի՞նչ կարող եմ անել ես։

Շուրոչկան փարվեց նրա վզին և քնքշորեն նրա գլուխը դրեց իր կրծքին։ Նա առանց կրծկալի էր։ Ռոմաշովը այտով զգաց նրա մարմնի տեղի տվող առաձգականությունը և տաք, բարակ, հեշտասեր բուրմունքը։ Երբ նա խոսում էր, Ռոմաշովն իր մազերի վրա զգում էր նրա ընդհատվող շնչառությունը։

— Դու հիշո՞ւմ ես, այն ժամանակ... երեկոյան... խնջույքին։ Ես քեզ ասացի ողջ ճշմարտությունը։ Ես նրան չեմ սիրում։ Բայց մտածիր. երեք տարի, հույսերի, ֆանտազիաների, ծրագրերի և այդպիսի համառ, զզվելի աշխատանքի ամբողջ երե՛ք տարի։ Դու գիտես, չէ՞, որ ես անասելի ատում եմ այդ քաղքենիական, աղքատ սպայական հասարակությունը։ Ես ուզում եմ լինել միշտ հիանալի հագնված, գեղեցիկ, նրբենի, ուզում եմ երկրպագություն, իշխանությո՛ւն։ Եվ հանկարծ՝ անհեթեթ, հարբած կռիվ, սպայական սկանդալ, և, իհարկե, ամեն, ամեն ինչ հող ու մոխիր դարձավ։ Օ՜, ինչ սարսափելի է դա։ Ես երբեք մայր չեմ եղել, բայց պատկերացնում եմ՝ ահա երեխա եմ մեծացնում, սիրելի, գգվելի, նա է ամբողջ հույսս, նրան եմ նվիրել ողջ հոգածությունս, արցունքներս, անքուն գիշերներս... և հանկարծ՝ անհեթեթություն, դիպված, վայրի, տարերային մի դիպված. նա խաղում է լուսամուտին նստած, դայակը շուռ է գալիս, երեխան ցած է ընկնում քարերին։ Սիրելիս, միայն մայրական այս հուսահատության հետ կարող եմ համեմատել իմ վիշտը և չարությունը։ Բայց ես քեզ չեմ մեղադրում։

Ռոմաշովի համար անհարմար էր նստել կռացած և վախենալով, որ նեղություն կպատճառի Շուրոչկային։ Բայց նա ուրախ կլիներ այդպես նստել ամբողջ ժամեր և ինչ-որ տարօրինակ, հեղձուցիչ արբեցողությամբ լսել նրա փոքրիկ սրտի հաճախակի և ճշգրիտ բաբախումը։

— Դու ինձ լսո՞ւմ ես,— հարցրեց Շուրոչկան, թեքվելով դեպի Ռոմաշովը։

— Այո, այո... խոսիր... Եթե միայն կարող եմ, ես կանեմ ամեն բան, ինչ որ ուզում ես։

— Ոչ, ոչ։ Լսիր ինձ մինչև վերջ։ Եթե դու նրան սպանես կամ եթե նրան ետ տան քննությունից՝ վերջացած է։ Հենց նույն օրը, երբ իմանամ այդ մասին, կթողնեմ նրան և կհեռանամ, միևնույն է թե ուր, Պետերբուրգ, Օդեսա, Կիև։ Չկարծես՝ սա լրագրային վեպից վերցրած կեղծ ֆրազ է։ Ես քեզ չեմ ուզում վախեցնել այսպիսի էժանագին էֆեկտներով։ Բայց ես գիտեմ, որ ջահել եմ,

խելոք, կրթված։ Գեղեցիկ չեմ։ Բայց կկարողանամ ավելի հետաքրքիր լինել շատ գեղեցկուհիներից, որոնք հասարակական պարահանդեսներում գեղեցկության համար որպես մրցանակ մելխիորե մատուցարան կամ երգող ժամացույց են ստանում։ Ես կանարգեմ ինքս ինձ, բայց կայրվեմ մի ակնթարթում և հրաշալորության պես պայծառ։

Ռոմաշովը նայում էր լուսամուտից դուրս։ Հիմա խավարին վարժված նրա աչքերը նշմարում էին լուսամուտի հազիվ նկատելի շրջանակը։

— Այդպես մի ասա... պետք չէ... ես ցավ եմ զգում,— արտասանեց նա տխուր։— Ուզո՞ւմ ես, ես վաղը հրաժարվեմ մենամարտից, ներողություն խնդրեմ նրանից։ Անե՞մ այդպես։

Շուրոչկան մի բոպե լռեց։ Զարթուցիչը իր մետաղական ջաղակրատանքով լցնում էր խավար սենյակի բոլոր անկյունները։ Վերջապես նա արտասանեց հազիվ լսելի, ասես մտածմունքի մեջ, մի արտահայտությամբ, որ Ռոմաշովը չէր կարող որսալ։

— Ես այդպես էլ գիտեի, որ դու կառաջարկես այդ։

Ռոմաշովը գլուխը բարձրացրեց և, չնայած Շուրոչկան նրան պահում էր ձեռքերով վզին փարված, շտկվեց մահճակալի վրա։

— Ես չեմ վախենում,— ասաց նա բարձրաձայն ու խուլ։

— Ոչ, ոչ, ոչ, ոչ,— խոսեց Շուրոչկան տաք, հապճեպ, աղերսական շշուկով։ — Դու ինձ չհասկացար։ Մոտեցիր ինձ... ինչպես քիչ առաջ... դե եկ...

Նա զույգ ձեռքով փարվեց նրան և սկսեց շշնջալ, նրա դեմքը խտուտ ածելով իր բարակ մազերով և տաք շնչելով Ռոմաշովի այտին.

— Դու ինձ չհասկացար։ Իմ մտքինը բոլորովին ուրիշ է։ Բայց ես ամաչում եմ քո առաջ։ Դու այնպես մաքուր ես. բարի, և ես ամաչում եմ ասել քեզ այդ մասին։ Ես հաշվենկատ եմ, ես զզվելի եմ...

— Ոչ, ասա ամեն բան։ Ես քեզ սիրում եմ։

— Լսիր,— ասաց Շուրոչկան, և Ռոմաշովը ավելի շուտ կռահում էր նրա բառերը, քան թե լսում։ — Եթե հրաժարվես, ախր որքան վիրավորանք, անպատվություն ու տառապանք կթափվի քեզ վրա։ Ոչ, ոչ, դարձյալ այն չեմ ասում։ Ա՛խ, աստված իմ, այս բոպեին չեմ ստի քո առաջ։ Թանկագինս, ախր այս բոլորը ես վաղուց եմ մտածել և կշռադատել։ Ենթադրենք, դու հրաժարվեցիր։

Ամուսնուս պատիվը վերականգնված է։ Բայց հասկացիր, հաշտությամբ վերջացած մենամարտի մեջ միշտ մնում է մի ինչ-որ... ինչպե՞ս ասեմ... դե, կասկածելի ասեմ թե ինչ, տարակուսանք, հիասթափություն հարուցող մի բան... Հասկանո՞ւմ ես ինձ,— հարցրեց նա թախծոտ քնքշությամբ և զգուշորեն համբուրեց նրա մազերը։

— Այո։ Ուրեմն ի՞նչ։

— Այն, որ այդ դեպքում ամուսնուս գրեթե հաստատապես թույլ չեն տա քննություններին մասնակցելու։ Գլխավոր շտաբի սպայի վարկը պետք է անբիծ լինի։ Մինչդեռ եթե դուք իսկապես կրակեիք իրար վրա, ինչ-որ հերոսական, ուժեղ մի բան կլիներ։ Մարդկանց, որոնք կրակոցի ներքո կարողանում են արժանապատվությամբ պահել իրենց, շատ, շափազանց շատ բան են ներում։ Հետո... մենամարտից հետո... դու կարող էիր, եթե ուզում ես, նաև ներողություն խնդրել... Դա արդեն քո գործն է։

Ամուր գրկված, նրանք շշնջում էին դավադիրների պես, դեմքերն ու ձեռները դիպցնելով իրար, լսելով միմյանց շնչառությունը։ Բայց Ռոմաշովն զգաց, թե ինչպես իրենց միջև անտեսանելիորեն ինչ-որ գողունի, զզվելի, լպրծուն բան սողոսկեց, որից նրա հոգուն ցուրտ փչեց։ Նա նորից ուզեց ազատվել Շուրոչկայի ձեռքերից, բայց սա նրան չէր թողնում։ Ջանալով թաքցնել անհասկանալի, խուլ ջղագրգռությունը, Ռոմաշովը շոր-շոր ասաց.

— Ի սեր աստծո, բացատրվիր ուղղակի։ Ես քեզ ամեն ինչ խոստանում եմ։

Այն ժամանակ Շուրոչկան հրամայաբար սկսեց խոսել ուղիղ նրա բերանի մոտ, և նրա բառերը կարծես արագ թրթռուն համբույրներ լինեին։

— Դուք վաղը անպայման պետք է կրակեք։ Բայց ձեզանից ոչ մեկը չի վիրավորվի։ Օ, ախր հասկացիր ինձ, հասկացիր, ինձ մի դատապարտի։ Ես ինքս արհամարհում եմ վախկոտներին, ես կին եմ։ Բայց ի սեր ինձ արա այդ բանը, Գեորգի։ Ոչ, մի հարցրու ամուսնուս մասին։ Նա գիտի։ Ես ամեն, ամեն, ամեն ինչ արել եմ։

Հիմա Ռոմաշովին հաջողվեց գլխի համառ շարժումով ազատվել Շուրոչկայի փափուկ և ուժեղ ձեռներից։ Նա մահճակալից վեր կացավ և հաստատ ասաց.

— Լավ, թող այդպես լինի։ Ես համաձայն եմ։

Շուրոչկան էլ վեր կացավ։ Խավարի մեջ, նրա շարժումներից

Ռոմաշովը ոչ թե տեսնում, այլ գլխի էր ընկնում, զգում էր, որ Շուրոչկան հապճեպ ուղղում էր մազերը։

— Դու գնո՞ւմ ես,— հարցրեց Ռոմաշովը։

— Մնաս բարով,— թույլ ձայնով պատասխանեց Շուրոչկան։

—Համբուրիր ինձ վերջին անգամ։

Ռոմաշովի սիրտը ցնցվեց խղճահարությունից և սիրուց։ Մթի մեջ, շոշափելով, նա ձեռքով գտավ Շուրոչկայի գլուխը և սկսեց համբուրել այտերը և աչքերը։ Շուրոչկայի ամբողջ դեմքը թաց էր լուսկ, անլսելի արցունքներից։ Դա հուզեց և սրտաշարժեց նրան։

— Սիրելիս... մի լար... Սաշա... սիրելիս...— պնդում էր նա խղճահարված ու մեղմ։

Շուրոչկան հանկարծ ձեռքերը արագ գցեց նրա վիզը, նվաղուն, կրքոտ և ուժեղ շարժումով ամբողջովին կպավ նրան և, առանց իր հրաբորբոք շրթունքները նրա բերանից կտրելու, շշնջաց ընդհատ, ամբողջովին ցնցվելով և ծանր շնչելով.

— Ես չեմ կարող քեզ այսպես հրաժեշտ տալ... Մենք այլևս չենք տեսնվի։ Ուրեմն ոչնչից չվախենանք... Ես ուզում եմ, ուզում եմ այդ։ Մի անգամ... Վերցնենք մեր երջանկությունը... Սիրելիս, դե եկ ինձ մոտ, եկ...

Եվ ահա նրանք երկուսը, և ամբողջ սենյակը, և ամբողջ աշխարհն էլ միանգամից լցվեցին մի տեսակ անտանելի երանելի տոթակեզ պառանցանքով։ Մի վայրկյան բարձի սպիտակ բծի վրա Ռոմաշովը հեքիաթային պարզորոշությամբ իրեն մոտիկ-մոտիկ տեսավ Շուրոչկայի խելահեղ երջանկությունից շողացող աչքերը և ագահաբար հպվեց նրա շրթունքներին...

— Կարելի՞ է քեզ ուղեկցել,— հարցրեց նա, Շուրոչկայի հետ դռնից դուրս գալով բակ։

— Ոչ, ի սեր աստծո, պետք չէ, սիրելիս... Մի արա այդ։ Ես առանց այդ էլ չգիտեմ, թե ինչքան ժամանակ անցկացրի քեզ մոտ։ Ժամը քանի՞սն է։

— Չգիտեմ, ես ժամացույց չունեմ։ Ուղղակի չգիտեմ։

Շուրոչկան հապաղում էր և կանգնել էր դռանը. հենված։ Հողից ու քարերից օդում բուրում էր շոգ գիշերի չոր, բարկ հոտը։ Մութ էր, բայց խավարի միջից Ռոմաշովը տեսնում էր, ինչպես այն ժամանակ պուրակում, որ Շուրոչկայի դեմքը մարմարե արձանի պես տարօրինակ, սպիտակ լույս է արձակում։

— Դե, մնաս բարով, թանկագին իմ, — վերջապես ասաց նա հոգնաբեկ ձայնով։— Մնաս բարով։

Նրանք համբուրվեցին, և հիմա Շուրոչկայի շրթունքները սառն ու անշարժ էին։ Նա գնաց դեպի դարպաս, և իսկույն գիշերային խավարը կլանեց նրան։

Ռոմաշովը կանգնած լսում էր, մինչև որ ճռնչաց դարպասի դռնակը, և Շուրոչկայի մեղմիկ քայլերը լռեցին։ Այն ժամանակ Ռոմաշովը վերադարձավ սենյակ։

Անակնկալ նրան տիրեց ուժեղ, բայց հաճելի մի խոնջանք։ Նա հազիվ հասցրեց հանվել, այնքան քունը տանում էր։ Եվ քնից առաջ վերջին կենդանի տպավորությունը բարձից փչող թեթև քաղցր բույրն էր, Շուրոչկայի մազերի, նրա օծանելիքի և սքանչելի ջահել մարմնի բույրը։

23

18 թ. 2-ին հունիսի
Քաղաք Z

Նորին բարձր բարեծնություն N-յան
հետևակ գնդի հրամանատարին
Նույն գնդի շտաբս-կապիտան Դիցի.

ԶԵԿՈՒՅՑԸ

Սույնով պատիվ ունեմ իրազեկ դարձնելու Ձերդ Բարձր բարեծնությանը, որ սույն հունիսի 2-ին, համաձայն երդ., հունիսի 1-ին Ձեզ զեկուցած պայմանների, մենամարտ տեղի ունեցավ պորուչիկ Նիկոլաևի և պոդպորուչիկ Ռոմաշովի միջև։ Հակառակորդները իրար հանդիպեցին առավոտյան ժամը 6-ից հինգ րոպե պակաս, քաղաքից $3^1/_2$ վերստ հեռու գտնվող «Դուբեչնայա» կոչված պուրակում։ Մենամարտի տևողությունը, ներառյալ նաև ազդանշանների վրա գործադրած ժամանակը, 1 րոպե 10 վայրկյան էր։ Մենամարտողների գրաված տեղերը սահմանվեցին վիճակահանությամբ։ «Առա՛ջ» հրամանով երկու հակառակորդները միմյանց ընդառաջ գնացին, ըստ որում պորուչիկ Նիկոլաևի արձակած գնդակից պոդպորուչիկ Ռոմաշովը վիրավորվեց փորի աջ կողմի վերևից։ Կրակելու համար պորուչիկ Նիկոլաևը կանգ առավ, ճիշտ այնպես, ինչպես և կանգնած մնաց սպասելով պատասխան կրակոցի։ Պատասխան

կրակոցի համար սահմանված կես րոպեն անցնելուց հետո պարզվեց, որ պոդպորուչիկ Ռոմաշովը հակառակորդին պատասխանել չի կարող։ Դրա հետևանքով պոդպորուչիկ Ռոմաշովի մարտավկաները առաջարկեցին մենամարտն ավարտված համարել։ Ընդհանուր համաձայնությամբ այդպես էլ արվեց։ Պոդպորուչիկ Ռոմաշովին կառք տեղափոխելիս վերջինս ընկավ ծանր ուշակորույս վիճակի մեջ և յոթ րոպե անց մեռավ ներքին արյունազեղությունից։ Պորուչիկ Նիկոլաևի կողմից մարտավկաներ էինք ես և պորուչիկ Վասինը, իսկ պոդպորուչիկ Ռոմաշովի կողմից՝ պորուչիկներ Բեկ-Աղամալովը և Վետկինը։ Մենամարտի տնօրինությունը ընդհանուրի համաձայնությամբ, հանձնարարված էր ինձ։ Կրտսեր բժիշկ կոլ. ասս. Զնոյկոյի ցուցմունքը առդիր ներկայացնում եմ։

Շտաբս-կապիտան Դիցի։

1905

ՍԱԼԱՄԻԹ

Գիր զիս իբրև զկնիք ի սրտի քում, և իբրև զմատանի ի վերայ բազկի քո, զի բուռն է իբրև զմահ սէր, և խիստ՝ իբրև զգժոխս նախանձ. Քոիչք նորա իբրև զՔոիչս բոցոյ հրոյ։

Երգ երգոց։

1

Սողոմոն թագավորը դեռ չէր հասել միջին տարիքին՝ քառասունհինգ տարուն, բայց նրա իմաստնության ու գեղեցկության, նրա հոյակապ կյանքի և նրա արքունիքի ճոխության համբավը տարածվել էր Պաղեստինի սահմաններից շատ հեռու Ասորիքում և Փյունիկեում, Վերին և Ստորին Եգիպտոսներում, հինավուրց Թաբրիզից մինչև Եմեն և Իսմարից մինչև Պերսեպոլիս, Սև ծովի ափին ու Միջերկրական կղզիներում զարմանքով էին արտասանում նրա անունը, որովհետև արքաների մեջ չկար նրա նմանակը նրա կյանքի բոլոր օրերում։

Իսրայելի ելքի 480 թվականին, իր թագավորության չորրորդ տարում Զիֆ ամսին, թագավորը ձեռնարկեց տիրոջ մեծ տաճարի կառուցումը Մորիա սարի վրա և պալատի կառուցումը Երուսաղեմում։ Ութսուն հազար քարտաշ և յոթանասուն հազար բեռնակիր անընդհատ աշխատում էին լեռներում և քաղաքի արվարձաններում, իսկ երեսունութ հազարից տասը հազար փայտահատ հերթով ուղևորվում էին Լիբանան, որտեղ մի ամբողջ ամիս անցկացնում էին այնպիսի ծանր աշխատանքի մեջ, որ դրանից հետո երկու ամիս հանգստանում էին։ Հազարավոր մարդիկ կտրած ծառերից լաստեր էին կապում, իսկ հարյուրավոր ծովայիններ ծովով լուղարկում էին Հոպպե, որտեղ դրանք մշակում էին հյուսնության ու խառատության գործի մեջ հմուտ տյուրոսցիները։ Միայն Գիզեհում Քեֆրենի, Քեոփսի ու Միքերինի բուրգերը կանգնեցնելու վրա էր գործադրվել բանվորների այդպիսի անհաշիվ քանակ։

Երեք հազար վեց հարյուր վերակացու հսկում էին աշխատանքները, իսկ վերակացուների պետն էր Ազարիան, Նաթանի որդին, մի դաժան ու գործունյա մարդ, որի մասին լուր էր տարածված, թե նա երբեք չի քնում՝ տոչորվելով ներքին անբուժելի հիվանդության կրակից։ Իսկ պալատի ու տաճարի բոլոր նախագծերը, սյուների, դաբիրի ու պղնձե ծովի նկարները ստեղծել էր սիդոնցի ճարտարապետ Քիրամ-Աբին, Նաթանայիմի ցեղից սերող պղնձագործի որդին։

Յոթ տարի անց, Բուլ ամսին ավարտվեց տիրոջ տաճարը և տասնչորս տարի անց՝ արքայական պալատը։ Լիբանանի մայրի ծառի գերանների, նոճու և ձիթենու տախտակների, թեղջի փայտի, սիտտիմի ու թարսիսի, տաշած ու հղկած հսկայական թանկագին քարերի դիմաց, ծիրանու և ոսկեկար բեհեզի, երկնագույն ասրյա կտորների, փղոսկրի ու ոշխարի դարմիր կաշվի դիմաց, երկաթի, եղնգնաքարի և մեծաքանակ մարմարի, թանկագին քարերի, ոսկե շղթաների, պսակների, քուղերի, ունելիների, ցանցերի, տաշտակների, կանթեղների, ծաղիկների ոսկե ջահերի դիմաց, դռների ոսկե ծխնիների և յուրաքանչյուրը վաթսուն սիկղ կշռող ոսկե գամերի դիմաց, ոսկեկուռ գավաթների ու սկուտեղների, փորագիր ու խճանկար զարդաքանդակների, առյուծների, քերովբեների, եզների, արմավենիների ու անանասների ձուլածո ու քարակերտ պատկերների դիմաց Սողոմոնը Տյուրոսի թագավոր Քիրամին՝ ճարտարապետի անվանակցին, նվիրեց քսան քաղաք ու գյուղ Գալիլիայի երկրում, և Քիրամը այդ նվերը չնչին գտավ՝ այնպիսի՜ չլսված պերճությամբ էին կառուցված տիրոջ տաճարն ու Սողոմոնի պալատը, և փոքր պալատը Մելոնում՝ թագավորի կնոջ՝ գեղեցկուհի Աստիսի, Եգիպտոսի փարավոն Սուսսակիմի դստեր համար։ Իսկ կարմրրափայտը, որը ավելի ուշ օգտագործվեց վերնասրահների բազրիքների ու սանդուղքների, երաժշտական գործիքների ու սրբազան գրքերի կազմերի վրա, Սողոմոնին նվեր էր բերել Սաբայի թագուհին, իմաստուն ու գեղասքանչ Բաղքիսը, բուրավետ ծխանյութերի, անուշահոտ յուղերի ու թանկարժեք օծանելիքների այնպիսի քանակությամբ հանդերձ, որ մինչ այդ դեռ չէին տեսել Իսրայելում։

Տարեցտարի աճում էին թագավորի հարստությունները։ Տարեկան երեք անգամ նավահանգիստ էին վերադառնում նրա նավերը՝ «Թարսիսը», որը Միջերկրական ծովն էր գնում, և «Քիրամը», որ Սև ծովն էր գնում։ Նրանք Աֆրիկայից բերում

էին փղոսկր, կապիկներ, սիրամարգեր ու քարայծեր. հարուստ զարդարված կառքեր էին բերում Եգիպտոսից, կենդանի վարդեր ու առյուծներ, ինչպես և գազանի մորթիներ ու մուշտակներ՝ Միջագետքից, ձյունաթույր նժույգներ՝ Կուվայթից, տարեկան վեց հազար վեց հարյուր տաղանդի Փարվայիմի ոսկե ավազ, կարմիր, սև ու սանդալի-փայտ Օփեր երկրից, զարմանալի նախշերով ասուրական ու կալախական երփներանգ գորգեր՝ Թիկլատ-Պալասար թագավորի բարեկամական նվերները, գեղարվեստական խճանկարներ Նինվեից, Նիմրուդից ու Սարգոնից. սքանչելի զարդանկար բանվածքներ Խատուարեց. ոսկեկուռ սկահակներ Տյուրոսից, Սիդոնից՝ գունավոր ապակիներ, իսկ Բաբէլ-Մանդեբի մոտ գտնվող Պունտից՝ այն հազվագյուտ անուշահոտ նյութերը՝ նարդոս, հալվե, խնկեղեգն, կինամոն, քրքում, ամպար, մուշկ, ստաշխ, հինա, զմուռս ու խունկ, որոնց տիրանալու համար եգիպտական փարավոնները ՅՃաճախ արյունալի պատերազմներ էին ձեռնարկում։

Իսկ արծաթը Սողոմոնի օրերում հասարակ քարի արժեք էր ստացել և կարմրափայտը ցածրավայրերում աճող հասարակ ժանտաթզենուց թանկ չէր։

Պորփյուրապատ քարե բաղնիքներ, մարմարե ջրավազաններ ու զով շատրվաններ սարքեց թագավորը, հրամայեց ջուր անցկացնել Կեդրոնի հեղեղատը գահավիժող լեռնային աղբյուրներից, իսկ պալատի շուրջը այգիներ ու պուրակներ տնկեց և խաղողի այգի գցեց Բաաղամոնում։

Սողոմոնը քառասուն հազար մսուր ուներ ջորիների ու կառքի լծկան ձիերի համար և տասներկու հազար մսուր՝ հեծելազորի ձիերի համար։ Ամեն օր ձիերի համար գարի ու ծղոտ էին բերում գավառներից։ Տասը պարարտ եզ և քսան եզ արոտատեղից, երեսուն քոռ ցորենի ալյուր և վաթսուն՝ այլ տեսակի, հարյուր մար զանազան գինիներ, երեք հարյուր ոչխար, չհաշված բուած թռչունը, եղջերուները, քարայծները, սայգաները, այդ բոլորը տասներկու հսկիչների միջոցով ամեն օր գնում էր Սողոմոնի սեղանին, ինչպես և նրա արքունիքի, շքախմբի ու պահակազորի սեղանին։ Ամբողջ զորքի հինգ հարյուր ամենաուժեղ ու խիզախ զինվորների թվից վաթսուն հոգի հերթով պահակություն էին անում պալատի ներքին կացարաններում։ Ոսկե թիթեղներով պատված հինգ հարյուր վահան էր հրամայել պատրաստել Սողոմոնը իր թիկնապահների համար։

2

Ինչ որ ցանկային թագավորի աչքերը, նա չէր մերժում նրանց և իր սրտին չէր արգելում ոչ մի ուրախություն։ Յոթ հարյուր կին ուներ թագավորը և երեք հարյուր հարճ, չհաշված ստրկուհիներին ու պարուհիներին։ Եվ նրանց բոլորին իր սիրով գերում էր Սողոմոնը, որովհետև աստված նրան տվել էր բուռն սիրո այնպիսի անսպառ ուժ, որպիսին չունեին սովորական մարդիկ։ Նա սիրում էր սպիտակադեմ, սևաչվի, կարմրաշուրթ խեթուհիներին նրանց վառ, բայց վայրկենական գեղեցկության համար, որը նարգիզ ծաղկի պես վաղ՝ սքանչելի փթթում է և նույնքան արագ թառամում, թխադեմ, բարձրահասակ, կոշտ գանգուր մազերով բոցկլտուն փղշտուհիներին, որոնք ձեռքերի դաստակներին ոսկե զնգզնգուն ապարանջան էին կրում, բազուկներին՝ ոսկե օղակապեր, իսկ երկու ոտքերի կոճիկներին՝ բարակ ոսկեշղթայով միացած լայն ապարանջաններ. քնքուշ, փոքրիկ, ճկուն, անբասիր կազմվածքով ամորհացի աղջիկներին՝ սիրո մեջ նրանց հավատարմությունն ու հնազանդությունը առած էր դարձել. ասորեստանցի կանանց, որոնք ներկերով երկարացնում էին իրենց աչքերը և ճակատին ու այտերին կապույտ աստղեր էին խարում. Սիդոնի կրթված, ուրախ ու սրամիտ դուստրերին, որոնք գիտեին լավ երգել, պարել, ինչպես և դափի ձայնակցությամբ տավիղ, վին ու սրինգ նվագել. դեղնամորթ եգիպտուհիներին, որոնք անխոնջ էին սիրո մեջ և խանդի մեջ խելահեղ. հեշտասեր բաբելուհիներին, որոնց մարմինները հանդերձների տակ մարմարի պես ողորկ էին, որովհետև նրանք հատուկ քսուկով ոչնչացնում էին մարմնի վրայի մազերը. բակտրացի աղջիկներին, որոնք մազերն ու եղունգները կարմիր էին ներկում և շալվար հագնում. լուակյաց, ամոթխած մովաբացի աղջիկներին, որոնց փառահեղ կրծքերը զով էին ամառվա ամենաշոգ դիշերներին. անհոգ ու շռայլող ամմոնացի աղջիկներին, բոցագույն մազերով և այնպիսի սպիտակ մարմնով, որ լույս էր տալիս մթնում. կապուտաչյա, վուշանման մազերով և մաշկի նուրբ հոտով քնքուշ կանանց, որոնց բերում էին հյուսիսից Բաալբեկի վրայով և որոնց լեզուն անհասկանալի էր Պաղեստինում ապրող բոլորի համար. բացի այդ, թագավորը սիրում էր Հրեաստանի ու Իսրայելի շատ դուստրերի։

Նմանապես նա մահիճը կիսում էր Բաղքիս-Մակեդայի, Սաբայի թագուհու հետ, որը աշխարհի բոլոր կանանց գերազանցել էր գեղեցկությամբ, իմաստությամբ, հարստությամբ և սիրո արվեստի բազմազանությամբ. և Աբիսագ սունամացու հետ, որը ջերմացնում էր Դավիթ թագավորի ծերությունը, այդ փաղաքուշ, լռիկ գեղեցկուհու հետ, որի պատճառով Սողոմոնը մահվան մատնեց իր ավագ եղբորը՝ Ադոնիային, Հովդաբի որդի Բանեայի ձեռքով։

Եվ խաղողի այգում հանդիպած Սուլամիթ անունով աղքատ աղջկա հետ, որը միակն էր բոլոր կանանց մեջ, ում սիրում էր թագավորը իր ամբողջ սրտով։

Իր դեսպակը Սողոմոնը սարքել էր լավագույն մայրի փայտից, սյուներն արծաթե, ոսկե արմնկակալները՝ պառկած առյուծի կերպարանքով, ամպհովանին՝ Տյուրոսի ծիրանեգույն գործվածքից։ Իսկ ներսից ողջ ամպհովանին զարդարված էր ոսկե բանվածքով ու թանկագին քարերով՝ երուսաղեմցի կանանց ու աղջիկների սիրո նվերներով։ Եվ երբ բարեկազմ սև ստրուկները մեծ տոնախմբությունների օրերին Սողոմոնին տանում էին ժողովրդի միջով, հիրավի, թագավորը գեղեցիկ էր Սարոնի հովտի շուշանի պես։

Գունատ էր նրա դեմքը, շուրթերը՝ ասես վառ կարմիր երիզ. գանգուր մազերը սև կապտավուն, նրանց մեջ՝ Ահրեմոնի մութ ժայռերի բարձունքից իջնող լեռնային վտակների պես փայլփլում էին իմաստության զարդը՝ ճերմակած մազերը. ճերմակ մազեր էին փայլփլում նաև ասուրական թագավորների սովորության համաձայն մանրիկ ուղիղ շարքերով գանգրացրած նրա սև մորուքի մեջ։

Իսկ թագավորի աչքերը մուգ էին, ինչպես ամենամուգ ագատը, ինչպես ամառային գիշերվա անլուսին երկինքը. սլաքաձև դեպի վեր ու վար բացված թարթիչները նման էին սև աստղերի շուրջը փռվող սև ճառագայթների։ Եվ աշխարհում չկար մի մարդ, որ առանց աչքերը խոնարհելու կարողանար դիմանալ Սողոմոնի հայացքին։ Եվ թագավորի աչքերում փայլատակող ցասման կայծակները մարդկանց տապալում էին գետին։

Բայց լինում էին սրտի բերկրանքի րոպեներ, երբ թագավորն արբենում էր սիրով, կամ գինով, կամ իշխանության քաղցրությամբ, կամ ուրախանում էր տեղին ասած գեղեցիկ խոսքի վրա։ Այն ժամանակ մեղմիվ կիսով չափ ցած էին իջնում նրա երկար արտևանունքները, կապտավուն ստվեր գցելով սպիտակ դեմքին, և թագավորի աչքերում սև ադամանդի կայծերի պես բռնկվում էին փաղաքուշ, քնքուշ ծիծաղի տաք կրակներ, և նրանք, ովքեր տեսել էին այդ ժպիտը, պատրաստ էին դրա համար տալ մարմինն ու հոգին, այնքան աննկարագրելի դյուրիչ էր այդ ժպիտը։ Սողոմոն թագավորի լոկ բարձրաձայն արտասանված անունը հուզում էր կանանց սրտերը, ինչպես սիրո գիշերները հիշեցնող թափված զմուռսի հոտը։

Թագավորի ձեռքերը նուրբ էին, սպիտակ, տաք ու գեղեցիկ, ինչպես կանացի ձեռքերը, բայց նրանց մեջ պարփակված էր կենսական ուժի այնպիսի առատություն, որ ափերը դնելով հիվանդի գլխին, թագավորը բուժում էր գլխացավը, ջղաձգությունները, սև մելամաղձությունը, դիվոտությունը։ Զախ ձեռքի ցուցամատին Սողոմոնը մարգարտագույն վեց ճառագայթ ցայտեցնող արնակարմիր աստերիքսի նկարաքանդակ մատանի էր դնում։ Այդ մատանին հարյուրավոր տարիների վաղեմություն ուներ, և նրա քարի հակառակ երեսին մի հինավուրց, երկրի երեսից չքացած ժողովրդի լեզվով փորագրված էր՝ «Ամեն ինչ անցնում է»։

Եվ այնքան մեծ էր Սողոմոնի հոգու իշխանությունը, որ նրան ենթարկվում էին նույնիսկ կենդանիները. առյուծներն ու վագրերը սողում էի թագավորի ոտքերի առաջ, և դունչները քսում էին նրա ծնկներին, և իրենց կոշտ լեզուներով լիզում էին նրա ձեռքերը, երբ նա մտնում էր նրանց կացարանները։ Եվ նա, որ սրտի զվարճանք էր գտնում թանկագին քարերի փայլփլուն գունախաղի մեջ, եգիպտական անուշահոտ խեժերի բույրի, թեթև գործվածքների նուրբ շփման մեջ, քաղցրալուր երաժշտության, նինվեական քանդակակերտ սկիհի մեջ խաղացող կարմիր կայծկլտուն գինու նուրբ համի մեջ, սիրում էր նաև շոյել առյուծների կոշտ բաշերը, սև հովազների թավշյա մեջքերը, և ջահել ընձառյուծների նուրբ թաթերը, սիրում էր լսել վայրի գազանների մռնչյունը, տեսնել նրանց ուժեղ ու սքանչելի շարժումներն ու զգալ նրանց գիշատիչ շնչառության տաք հոտը։

Այսպես վառ կերպով է նկարագրել Սողոմոն թագավորին Հովսափատը՝ Աքիլուդի որդին, նրա օրերի պատմագիրը։

3

«Որովհետև դու քեզ համար չխնդրեցիր երկար կյանք և քեզ համար չխնդրեցիր հարստություն և չխնդրեցիր քո թշնամիների հոգին, իմաստնություն խնդրեցիր, ահա ես քո խոսքի պես պիտի անեմ, ահա ես քեզ իմաստուն և հանճարեղ սիրտ եմ տալիս, այնպես որ քեզանից առաջ նմանը չի եղել, քեզանից հետո էլ քեզ նմանը չի ելնելու»։

Այսպես ասաց Սողոմոնին աստված, և նրա կամքով թագավորը հասկացավ աշխարհի կազմությունն ու տարերքի գործողությունը, ըմբռնեց ժամանակների սկիզբը, վախճանն ու միջակա ընթացքը, թափանցեց իրադարձությունների հավերժական պարբերական ու բոլորածիր շրջապտույտի գաղտնիքի մեջ, Բիբլոսի, Աքրայի, Սարգոնի, Բորսիպայի և Նինվեի աստղաբաշխներից նա սովորեց հետևել աստղերի դիրքի փոփոխությանը և տարեկան շրջաններին։ Նա գիտեր նմանապես բոլոր կենդանիների բնական էությունը և կռահում էր գազանների ղաղցմունքները, հասկանում էր քամիների ծագումն ու ուղղությունը, բույսերի այլազան հատկություններն ու բուժիչ խոտերի ուժը։

Մտադրությունները մարդու սրտում՝ ասես խոր ծովի տակ են, բայց դրանք էլ կարողանում էր ջրի երես հանել իմաստուն թագավորը։ Մարդկանց խոսքերի ու ձայնի, ձեռքերի շարժումների ու աչքերի մեջ նա նույնքան պարզ կարդում էր հոգիների ամենաթաքուն գաղտնիքները, ինչպես տառերը բաց գրքում։ Եվ դրա համար էլ Պաղեստինի բոլոր ծայրերից նրա մոտ էին գալիս մարդկանց անհամար բազմություններ, խնդրելով դատ ու խորհուրդ, օգնություն, վեճի լուծում, ինչպես և անհասկանալի կանխանշանների ու երազների մեկնություն։ Եվ մարդիկ զարմանում էին Սողոմոնի պատասխանների խորությանն ու նրբությանը։

Երեք հազար առակ էր հորինել Սողոմոնը և հազար հինգ երգ։ Նա դրանք թելադրում էր երկու ճարտար գրիչների՝ Ելիքորեփին ու Աքիային, Սիբայի որդիներին, և հետո համեմատում էր երկուսի գրածները։ Իր մտքերը նա միշտ պարուրում էր նրբագեղ արտահայտություններով, որովհետև թափանցիկ սարդոնեա գավաթի մեջ դրած ոսկե խնձորի է նման հմտորեն ասած խոսքը, նաև նրա համար, որ իմաստունների խոսքերը սուր

են ասեղի պես, ամուր են՝ խփված գամի պես, և բոլոր դրանց կազմողները մի հովվապետից են։ «Խոսքը կայծ է սրտի մղումների մեջ», այդպես էր ասում թագավորը։ Եվ Սողոմոնի իմաստությունը բարձր էր Արևելքի բոլոր ղավակների իմաստությունից և եգիպտացիների ողջ իմաստությունից։ Նա ավելի իմաստուն էր, քան Եզրահեցի Եթանը, քան Եմանը, Քալքոլն ու Դարդան՝ Մավուլի որդիները։ Բայց նա արդեն սկսում էր նեղվել սովորական մարդկային իմաստության գեղեցկությունից և դա նրա աչքին առաջվա արժեքը չուներ։ Նրա անհանգիստ և խուզարկու միտքը ծարավի էր այն բարձրագույն իմաստությանը, որը տերն ուներ իր ճանապարհին ի սկզբանե, իր բոլոր ստեղծածներից առաջ, նախքան երկրի գոյությունը, այն իմաստությանը, որը ասես մեծ նկարիչ էր աստծու համար, երբ նա շրջանագիծ էր քաշում անհունի երեսին։ Եվ Սողոմոնը չէր գտնում այդ իմաստությունը։

Թագավորը ուսումնասիրեց խալդական ու նինվեական մոգերի ուսմունքները, Աբիդոսի, Սաիսի ու Մեմֆիսի աստղագետների գիտությունը, ասուրական գուշակների, խորհրդագետների ու հայեցողների, Բակտրիայի ու Պերսեպոլիսի կանխագետների գաղտնիքները, և համոզվեց, որ նրանց գիտելիքները մարդկային գիտելիքներ են։

Նմանապես նա իմաստություն էր որոնում հեթանոսական հինավուրց հավատալիքների խորհրդավոր սարարողություններում և դրա համար էլ այցելում էր կռատները և զոհ էր մատուցում հզորազոր Բաաղ-Լիբանոնին, որին Տյուրոսում և Սիդոնում պաշտում էին Մելկարտ անունով՝ որպես արարման ու կործանման աստված, ծովագնացության հովանավոր, որին Ամմոն էին կոչում Սիբախ օազիսում, որտեղ նրա կուռքը շարժում էր գլուխը՝ ճանապարհ ցույց տալով տոնական երթերին, որին խալդերը Բել էին կոչում, քանանացիները՝ Մոլոք։ Երկրպագում էր նաև նրա կնոջը՝ ահեղ ու տոփոտ Աստարտեին, որը այլ տաճարներում Իշտար, Իսաար, Բաալտիս, Աշերա, Իստար-Բելթի և Ատարգատիս անուններն ուներ։ Նա ձիթայուղ էր հեղում ու խնկարկում էր եգիպտական Իզիսին ու Օզիրիսին՝ դեռևս իրենց մոր արգանդում ամուսնական կապով միացած և այնտեղ Հոր աստծուն հղացած քույր ու եղբորը, և շնագլուխ Անուբիսին՝ զմռսման աստծուն, և Բաբելոնի Օաննին, և փղշտացիների Դագոնին, և ասուրական Ավդենագոյին, և Նինվեի կուռք

Ուտաբին, և մոայլ Կիրբելային, և Բել-Մարդուկին՝ Բաբելոնի հովանավորին՝ Լուսնթագ մոլորակի աստծուն, և խալդական Օրին՝ հավերժական հրո աստծուն, և խորհրդավոր Օմորոգային՝ աստվածների նախամորը, որին Բելը երկու կես արեց, դրանցից ստեղծելով երկինքն ու երկիրը, իսկ գլխից՝ մարդկանց, և թագավորը երկրպագում էր նաև Աթանային աստվածուհուն, ի պատիվ որի Փյունիկեի, Լիդիայի, Հայաստանի ու Պարսկաստանի աղջիկները տաճարների շեմին իրենց մարմինն էին մատուցում անցորդներին՝ որպես սրբազան զոհ։

Բայց թագավորը ոչինչ չէր գտնում հեթանոսների ծեսերում, բացի հարբեցողությունից, գիշերային ցոփ կերուխումից, անառակությունից, խառնակեցությունից ու հակաբնական կրքերից և նրանց դավանանքներում տեսնում էր դատարկաբանություն ու խաբեություն։ Բայց հպատակներից ոչ ոքի նա չէր արգելում սիրած աստծուն զոհ մատուցել և նույնիսկ ինքը Զիթենյաց սարի վրա մի կռատուն շինեց մովաբացիների գարշելի Քամոսի համար՝ գեղատեսիլ, մտախոհ մովաբուհի Էլաանի խնդրանքով, որն այն ժամանակ թագավորի սիրեցյալ կինն էր։ Միայն մի բան՝ մանուկների զոհաբերումը չէր հանդուրժում Սողոմոնը և արգելում էր մահվան սպառնալիքով։

Եվ իր որոնումների մեջ նա տեսավ, որ մարդկանց որդինների ճակատագիրը և կենդանիների ճակատագիրը մեկ է. ինչպես նրանք, այնպես էլ սրանք մեռնում են, և բոլորի շունչը մեկ է, և մարդը առավելություն չունի անասունի նկատմամբ։ Եվ հասկացավ թագավորը, որ շատ իմաստության մեջ շատ տխրություն կա, և ով բազմապատկում է իմաստությունը, բազմապատկում է վիշտը։ Նա իմացավ նաև, որ երբեմն ծիծաղելիս էլ սիրտը ցավում է, և ուրախության վերջը թախիծ է լինում։ Եվ մի առավոտ առաջին անգամ նա Ելիքորեփին ու Աքիային թելադրեց. «Ունայնություն ունայնության է ամեն ինչ և հոգու տանջանք— այսպես է ասում Ժողովողը»։

Բայց այն ժամանակ դեռ չգիտեր թագավորը, որ շուտով աստված նրան կուղարկի մի այնպիսի քնքուշ ու բոցավառ, անձնվեր ու սքանչելի սեր, որը մենակ ավելի թանկ է հարբստությունից, փառքից ու իմաստությունից, որն ավելի թանկ է բուն իսկ կյանքից, որովհետև նա նույնիսկ կյանքը թանկ չի գնահատում և մահից չի վախենում։

Թագավորի խաղողի այգին Բաաղամոնում էր, Վաթն-էլ-Խավի հարավային լանջին, Մողոքի կռատնից դեպի արևմուտք. այնտեղ էր սիրում արքան մենակուսանալ մեծ խորհրդածությունների ժամերին։ Սարի վրա նռան ծառերը, ձիթենիները ու վայրի խնձորիները մայրու և սոճու հետ մեկընդմեջ, շրջափակում էին այգին երեք կողմից, իսկ չորրորդ կողմը ճանապարհից անջատված էր քարե բարձր պատով։ Շուրջը փրոված խաղողի մյուս այգիները նույնպես Սողոմոնին էին պատկանում. նա դրանք վարձով տալիս էր պահակներին՝ յուրաքանչյուրը հազար արծաթի։

Միայն լուսադեմին ավարտվեց ճոխ խնջույքը պալատում, որ Իսրայելի արքան սարքել էր Ասորեստանի փառապանծ թագավոր Թիկլատ-Պալասարի դեսպանների պատվին։ Չնայած հոգնածությանը, Սողոմոնը չէր կարող քնել այդ առավոտ։ Ոչ գինին, ոչ ցքին չմթագնեցին ասորական պինդ գլուխները և չբացեցին նրանց խորամանկ լեզուները։ Բայց իմաստուն թագավորի խորաթափանց միտքը արդեն կանխել էր նրանց ծրագրերը և արդեն իր հերթին քաղաքական նուրբ ցանց էր հյուսում, որով նա պիտի պարուրեր ամբարտավան աշքերով ու շողոմ լեզվով այդ ծանրումեծ մարդկանց։ Սողոմոնը կարող կլինի պահպանել անհրաժեշտ բարյացակամությունը Ասորեստանի տիրակալի նկատմամբ և միաժամանակ՝ ի սեր հավերժ բարեկամության Տյուրոսի Քիրամի հետ, կողոպուտից փրկել նրա թագավորությունը, որը նեղլիկ փողոցների նեղվածք տների նկուղներում թաքցրած իր անբավ հարստություններով վաղուց արդեն գրավում է արևելյան տիրակալների ագահ հայացքները։

Եվ ահա լուսադեմին Սողոմոնը հրամայեց իրեն տանել Վաթն-էլ-Խավ սարը, պատշարակը թողեց հեռվում ճամփի վրա, և հիմա միայնակ նստել է այգու վերին ծայրում, հասարակ փայտե նստարանին, իրենց ճյուղերում գիշերվա ցողոտ զովությունը դեռևս պահպանած ծառերի ստվերի տակ։ Թագավորի հագին հասարակ սպիտակ թիկնոց է, աջ ուսն ու ձախ կողքն ամրացված կանաչ ոսկուց եգիպտական երկու շքեղ ճարմանդով։ Ճարմանդները Կեբախ աստծու խորհրդանիշը ներկայացնող կրծկրված կոկորդիլոսների տեսք ունեն։ Թագավորի ձեռքերն ան-

շարժ են ծնկներին, իսկ խորունկ մտքից ստվերված աչքերը անքթիթ հառած են դեպի արևելք, Մեռյալ ծովի կողմը, այնտեղ, որտեղ Անգելի կլոր դագաթի հետևից վաղորդայնի բոցերի մեջ ծագում է արևը։

Առավոտյան քամին փչում է արևելքից ու տարածում ծաղկող խաղողի բույրը՝ հափրուկի ու եփած գինու մի նրբին բույր։ Մուգ նոճիները ծանրամեծ օրորում են բարակ կատարները և հեղում իրենց խեժահոտ շունչը։ Հապշտապ իրար հետ խոսք են փոխանակում ձիթենու արծաթականաչ տերևները։

Բայց ահա Սողոմոնը վեր է կենում և ականջ դնում։ Մի կանացի անուշ ձայն այս ցողոտ առավոտվա պես պայծառ ու մաքուր, երգում է ծառերի հետև մոտիկ մի տեղ։ Պարզ ու քընքուշ մեղեդին իր համար հոսում է, հոսում, ինչպես առվակը սարերում, շարունակ կրկնելով միևնույն հինգ-վեց ձայներանգը։ Եվ նրա անպաճույճ նրբագեղ հմայքը խանդաղատանքի մեղմ ժպիտ է առաջացնում թագավորի աչքերում։

Ավելի ու ավելի մոտիկից է լսվում ձայնը։ Ահա նա արդեն այստեղ է, իր կողքին, ճյուղատարած մայրիների, գիհու մուգ կանաչի ետևում։ Այնժամ թագավորը ձեռքերով զգուշությամբ ետ է տանում ճյուղերը, կամացուկ սողոսկում փշոտ թփերի արանքով ու դուրս է գալիս բաց տարածություն։

Նրա առջև, խոշոր դեղին քարերից կոպիտ շարած ցածրիկ պատի հետևում դեպի վեր է տարածվում խաղողի այգին։ Բաց կապույտ թեթև զգեստով մի աղջիկ քայլում է վազերի շարքերի միջով, կռանում է ցածում ինչ-որ բանի վրա և կրկին ուղղվում ու երգում։ Նրա շիկակարմիր մազերը վառվում են արևի տակ։

Ցերեկը հով-գով փչեց,
Փախչում են գիշերվա ստվերները։
Դարձիր շուտով, սիրելիս,
Եղիր քարայծի պես թեթև,
Ջահել եղնիկի պես թեթև՝ լեռնային կիրճերի մեջ...

Այդպես երգում է նա, կապելով խաղողի վազերը, և դանդաղ իջնում է ցած, ավելի ու ավելի մոտիկ քարե պատին, որի հետև կանգնած է թագավորը։ Աղջիկը մենակ է, ոչ ոք չի տեսնում ու չի լսում նրան. ծաղկող խաղողի բույրը, առավոտի զվարթ թարմությունը և սրտի տաք արյունը արբեցնում են նրան, և ահա միամիտ երգի բառերը վայրկենաբար ծնվում են նրա շուրթերին և քշվում քամուց, առմիշտ մոռացված.

Բռնեցեք փոքրիկ աղվեսներին,
Նրանք փչացնում են մեր խաղողի այգիները,
Իսկ մեր այգիները ծաղկած են։

Այդպես նա հասնում է մինչև պատը և առանց թագավորին նկատելու ետ է դառնում ու գնում, թեթև բարձրանալով սարն ի վեր, վազերի մյուս շարքի երկարությամբ։ Հիմա երգն ավելի խուլ է հնչում.

Վազի՜ր, իմ սիրեցյալ,
Նման եղիր քարայծի
Կամ ջահել եղնիկի՝
Զմուռսի սարերում։

Բայց հանկարծ լռում է և այնպես է խոնարհվում գետնին, որ չի երևում խաղողի թփերի ետևից։

Այն ժամանակ Սողոմոնն ականջ շոյող ձայնով արտասանում է.

— Աղջիկ, ցույց տուր ինձ դեմքդ, թույլ տուր էլի լսեմ ձայնդ։

Աղջիկն արագ շտկվում է և դեմքը շրջում թագավորի կողմը։ Այդ վայրկյանին մի ուժեղ քամի է պոռթկում և փոփոխում նրա թեթև հանդերձը և հանկարծ պիրկ փաթաթում աղջկա մարմնի շուրջն ու ոտքերի միջև։ Եվ թագավորը մի ակնթարթ, քանի դեռ նա չէր կանգնել մեջքը քամու կողմն արած, տեսնում է նրան հագուստի տակ ամբողջովին, ասես մերկ լիներ, բարձրահասակ ու բարեկազմ, տասներեք՝ տարու բուռն փթթումի մեջ. տեսնում է նրա փոքրիկ, կլոր ամուր ստինքները և ուռուցիկ պտուկները, որոնցից կտորը ճառագայթաձև տարածվում է դեպի ամեն կողմ, և թասի պես կլոր աղջկական փորը, և խորունկ գիծը, որ նրա ոտքերը երկու մասի է բաժանում ցածից մինչև վեր և այնտեղ բաժանվում է երկուսի, դեպի ուռուցիկ կոնքերը։

— Որովհետև ձայնդ քաղցր է և դեմքդ հաճելի,— ասում է Սողոմոնը։

Աղջիկը մոտ է գալիս և նայում է թագավորին հուզմունքով ու հիացմունքով։ Անասելի գեղեցիկ է նրա թուխ ու պայծառ դեմքը։ Ծանր, խիտ մուգ շիկակարմիր մազերը, որոնց մեջ նա ալ կակաչի երկու ծաղիկ էր խրել, անհամար թրթռուն խոպոպներով ծածկում էին նրա ուսերը և փռվում մեջքի վրա ու արևի ճառագայթներից բոցավառվում ինչպես ոսկե ծիրանի։ Ինչ-որ

կարմիր շոր հատապտղից իր սարքած մանյակը սրտաշարժ ու անմեղորեն երկու անգամ պարուրում է նրա մուգ, բարձր, բարակ վիզը։

— Ես քեզ չնկատեցի՞,— ասում է նա քնքուշ, և նրա ձայնը հնչում է սրնգի երգի նման։ — Որտեղի՞ց եկար դու։

— Դու այնպես լա՞վ էիր երգում, աղջիկ։

Աղջիկն ամոթխած խոնարհում է աչքերը և շիկնում, բայց նրա երկար թարթիչների տակ և շուրթերի անկյուններում դողում է թաքուն ժպիտը։

— Դու երգում էիր քո սիրեցյալի մասին։ Նա թեթև է քաբայծի պես, լեռների ջահել եղնիկի պես։ Շատ է գեղեցիկ քո սիրելին, ճիշտ չէ՞, աղջիկ։

Աղջիկը ծիծաղում է այնպես զրնգուն ու երգեցիկ, ասես արծաթ կարկուտ է թափվում ոսկե սկուտեղին։

— Ես սիրելի չունեմ։ Դա միայն երգ է։ Ես դեռ սիրեցյալ չեմ ունեցել...

Նրանք մի պահ լռում են և խորունկ, առանց ժպիտի նայում են միմյանց։ Թռչունները ծառերի մեջ բարձր ձայնում են իրար։ Աղջկա կուրծքը հաճախակի ելևէջում է հնամաշ քաթանի տակ։

— Ես քեզ չեմ հավատում, գեղեցկուհի։ Դու այնքան գեղեցիկ ես...

— Դու ինձ վրա ծիծաղում ես։ Տես ինչ սև եմ ես...

Նա վեր է բարձրացնում փոքրիկ թուխ ձեռքերը, և լայն թևքերը հեշտությամբ սահում են ցած, դեպի ուսերը, մերկացնելով նրա արմունկները, որոնք այնքան նուրբ ու բոլորակ աղջկական գծագիր ունեն։

Եվ նա ասում է խղճալի.

— Եղբայրներս բարկացան ինձ վրա և ինձ ուղարկեցին այգին հսկելու, և ահա՝ տես արևն ինչպես է ինձ այրել։

— Օ՜, ոչ, արևը քեզ ավելի է գեղեցկացրել, գեղեցկագույնդ կանանցից։ Ահա դու ծիծաղեցիր, և ատամներդ՝ լողարանից դուրս եկած սպիտակ երկվորյակ գառնուկների պես են, և նրանցից ոչ մեկի վրա մի արատ չկա։ Այտերդ կիսած նռան նման են ծամերիդ տակին։ Շուրթերդ ալ են՝ վայելք է նրանց նայելը։ Իսկ մազերդ... Գիտե՞ս ինչի նման են մազերդ։ Տեսե՞լ ես՝ դու, թե երեկոյան Գաղաադից ինչպես է ցած իջնում ոչխարի հոտը։ Նա ծածկում է ողջ սարը, կատարից մինչև ստորոտը և մթնշաղի լույսից ու փոշուց նույնպես կարմիր ու գանգուր է թվում, ինչպես քո խոպոպները։ Աչքերդ խորունկ են, ինչպես Եսեբոնի երկու լճակներ Բաթրաբբիմի դարպասի մոտ։ Օ, ի՞նչ գեղեցիկ ես դու։ Պարանոցդ ուղիղ ու սլացիկ է, ինչպես Դավթի աշտարա՞կը...

— Ինչպես Դավթի աշտարա՞կը,— կրկնում է աղջիկը արբեցած։

— Այո, այո, գեղեցկագույնդ կանանցից։ Հազար վահան է կախված Դավթի աշտարակում, և դրանք բոլորը պարտված զորավարների վահաններ են։ Ահա և իմ վահանը ես կախում եմ քո աշտարակին...

— Օ, խոսիր, խոսիր էլի...

— Իսկ երբ իմ կանչի վրա ետ շրջվեցիր, և քամին փչեց, ես քո հանդերձի տակ տեսա քո զույգ պտուկներն ու մտածեցի. ահա երկու փոքրիկ քարայծ, որոնք արածում են շուշանների մեջ։ Քո իրանը նման էր արմավենու և ստինքներդ խաղողի ողկույզ։

Աղջիկը թույլ ճիչ է արձակում, դեմքը ծածկում է ափերով, իսկ կուրծքը արմունկներով և այնպես է շիկնում, որ նույնիսկ ականջներն ու վիզը բոսորագույն են դառնում։

— Քո կոնքերն էլ տեսա։ Նրանք բարեգեղ են, ինչպես հմուտ արվեստագետի ստեղծած սկահակը։ Ձեռքերդ ետ տար, աղջիկ։ Ցույց տուր ինձ քո դեմքը։

Նա հլու ցած է թողնում ձեռքերը։ Թանձր ոսկե ճաճանչ է հորդում Սողոմոնի աչքերից և գերում է աղջկան, և պտտում նրա գլուխը և քաղցր, տաք սարսուռ է տարածում նրա մարմնի մաշկի վրայով։

— Ասա ինձ, ո՞վ ես դու,— ասում է նա դանդաղ, տարակուսանքով։— Ես երբեք չեմ տեսել քեզ նմանին։

— Ես հովիվ եմ, գեղեցկուհիս։ Ես սպիտակ գառների սքանչելի հոտեր եմ արածեցնում սարերում, որտեղ կանաչ խոտը խատվտում է նարգիզներից։ Ձե՞ս գա ինձ մոտ, իմ արոտատեղը։

Բայց աղջիկը լուռ տարուբերում է գլուխը։

— Մի՞թե կարծում ես, թե ես կհավատամ դրան։ Քո դեմքը չի կոպտացել քամուց և չի այրվել արևից, և քո ձեռքերը սպիտակ են։ Քո հագին թանկարժեք թիկնոց է, և նրա վրայի մի ճարմանդը արժե մեր խաղողի այգու մի տարվա վարձը, որ եղբայրներս մուծում են Ադոնիրամին՝ թագավորի հարկահավաքին։ Դու եկար այնտեղից, պատի ետևից... Դու երկի թա-

դավորին մոտիկ մարդկանցից մեկն ես։ Ինձ թվում է, որ ես մի անգամ քեզ տեսել եմ մեծ տոնախմբության օրը, նույնիսկ հիշում եմ, ես վազում էի քո կառքի ետևից։

— Դու կռահեցիր, աղջիկ։ Քեզանից բան թաքցնելը դժվար է։ Եվ ճիշտ որ, ինչո՞ւ դու թափառական լինես հովիվների հոտերի մոտ։ Այո, ես թագավորի շքախմբի մարդկանցից մեկն եմ։ Ես թագավորի գլխավոր խոհարարն եմ։ Եվ դու ինձ տեսել ես, երբ ես Ջատկի տոնակատարության օրը գնում էի Ամինադաբի կառքով։ Բայց ինչո՞ւ ես ինձնից հեռու կանգնել։ Մոտ եկ, քույր իմ։ Նստիր ահա այստեղ, պատի քարին և ինձ մի բան պատմիր քո մասին։ Ասա ինձ քո անունը։

— Սուլամիթ,— ասում է աղջիկը։

— Իսկ ինչի՞ համար են, Սուլամիթ, քո եղբայրները բարկացել քեզ վրա։

— Ես ամաչում եմ ասել դրա մասին։ Նրանք փող էին ստացել գինու վաճառքից և ինձ քաղաք ուղարկեցին հաց և այծի պանիր գնելու։ Իսկ ես...

— Իսկ դու փողը կորցրի՞ր։

— Ոչ, ավելի վատ բան...

Նա ցած է խոնարհում գլուխը և շշնջում.

— Բացի հաց ու պանրից ես հին քաղաքում եգիպտացիներից մի քիչ, շատ քիչ, վարդի յուղ էլ գնեցի...

— Եվ դու թաքցրի՞ր դա քո եղբայրներից։

— Այո...

Եվ նա արտասանում է հազիվ լսելի.

— Այնպե՜ս լավ հոտ ունի վարդայուղը...

Թագավորը փաղաքշանքով շոյում է նրա փոքրիկ կոշտ ձեռքը։

— Դու երևի մենակ ձանձրանո՞ւմ ես այգում։

— Ոչ, ես աշխատում եմ, երգում... Կեսօրին ինձ ուտելիք են բերում, իսկ երեկոյան ինձ փոխարինում է եղբայրներիցս մեկը։ Երբեմն ես մանրագործի արմատներ եմ հանում, որոնք փոքրիկ մարդուկների են նման... Դրանք մեզանից գնում են խալդ վաճառականները։ Ասում են նրանք դրանից քնադեղ են սարքում... Ասա, ճի՞շտ է, որ մանրագործի հատապտուղներն օգնում են սիրո մեջ։

— Ոչ, Սուլամիթ, սիրո մեջ օգնում է միայն սերը։ Ասա, դու հայր կամ մայր ունե՞ս։

— Միայն մայր։ Հայրս մեռել է երկու տարի առաջ։ Եղբայրներս բոլորն ինձնից մեծ են՝ նրանք առաջին ամուսնությունից են, իսկ երկրորդ ամուսնությունից միայն ես ու քույրս ենք։

— Քույրդ է՞լ քեզ նման գեղեցիկ է։

— Նա դեռ փոքր է։ Նա ընդամենը ինը տարեկան է։

Թագավորը ծիծաղում է, կամացուկ գրկում է Սուլամիթին, մոտեցնում է իրեն և ասում նրա ականջին.

— Ինը տարեկան... Ուրեմն նա դեռ այսպիսի կուրծք չունի՞, ինչպես քոնն է։ Այսպիսի հպարտ, այսպիսի ջերմ կուրծք։

Աղջիկը լռում է, այրվելով ամոթից ու երջանկությունից։ Նրա աչքերը ճառագում ու մթնում են, նրանք մշուշվում են երանելի ժպիտով։ Թագավորը իր ձեռքում զգում է նրա սրտի բուռն բաբախումը։

— Քո զգեստի ջերմությունը ավելի լավ է բուրում, քան զմուռսը, ավելի լավ, քան նարդոսը,— ասում է նա, շրթունքները չեռ հպելով նրա ականջին։— Եվ երբ դու շնչում ես, քո ռունգերից ես խնձորի բույր եմ առնում։ Քույր իմ, սիրեցյալդ իմ, դու իմ սիրտը գերեցիր քո աչքերի մի նայվածքով, քո վզից կախված մի մանյակով։

— Օ, մի՛ նայիր ինձ,— խնդրում է Սուլամիթը։— Քո աչքերը ինձ հուզում են։

Բայց նա ինքը ետ է թեքում մեջքը և գլուխը գնում Սողոմոնի կրծքին։ Նրա շրթունքները կարմրատակում են փայլուն ատամների վերև, արտևանունքները թրթռում են տառապալի երջանկությունից։ Սողոմոնը ագահորեն շուրթերը հպում է նրա կանչող բերանին։ Նա զգում է աղջկա շրթունքների բոցը, և նրա ատամների ողորկությունը և նրա լեզվի քաղցր խոնավությունը և ամբողջովին այրվում է այնպիսի անասելի ցանկությամբ, ինչպիսին դեռ երբեք չէր իմացել իր կյանքում։

Այդպես անցնում է մի րոպե և երկու։

— Ի՞նչ ես անում դու ինձ,— թույլ ասում է Սուլամիթը, աչքերը փակելով։— Ի՞նչ ես անում դու ինձ։

Բայց Սողոմոնը կրքոտ շշնջում է ուղիղ նրա բերանի մոտ։

— Խորսխի մեղր է կաթում քո շուրթերից, հարս, մեղր ու կաթ է քո լեզվի տակ... Օ, արի շուտով ինձ մոտ։ Այստեղ պատի ետևում մութ է ու զով։ Մեզ ոչ ոք չի տեսնի։ Այստեղ փափուկ կանաչ է մայրիների տակ։

— Ոչ, ոչ, թող ինձ, ես չեմ ուզում, չեմ կարող։

— Սուլամիթ... դու ուզում ես, դու ուզում ես... Քույր իմ, սիրեցյալդ իմ, ե՞կ ինձ մոտ։

Ճանապարհի ցածում, Թագավորի այգու պատի մոտ լսվում է մեկի ոտնաձայնը, բայց Սողոմոնը պահում է վախեցած աղջկա ձեռքը։

— Շուտ արա, ասա ինձ, որտե՞ղ ես ապրում։ Այս գիշեր ես կգամ քեզ մոտ,— ասում է նա արագ։

— Ոչ, ոչ, ոչ... Ես դա չեմ ասի քեզ։ Թող ինձ։ Ես քեզ չեմ ասի։

— Ես քեզ չեմ թողնի, Սուլամիթ, մինչև չասես... Ես ուզում եմ քեզ։

— Լավ, ես կասեմ... Բայց սկզբից խոստացիր ինձ, որ այս գիշեր չես գա... Մի գա նաև հաջորդ գիշերը... Եվ դրանից հետո էլ հաջորդը... Թագավորդ իմ։ Երդվեցնում եմ քեզ քարայծներով ու դաշտի եղնիկներով, մի խոռվիր սիրուհուդ հանգիստը, մինչև նա չուզի։

— Այո, ես քեզ խոստանում եմ դա.. Ուրեմն որտե՞ղ է քո տունը, Սուլամիթ։

— Եթե քաղաք տանող ճանապարհին անցնես Սիլոամից վերև Կեդրոնի կամուրջը, դու կտեսնես մեր տունը աղբյուրի մոտ։ Այնտեղ ուրիշ տներ չկան։

— Իսկ այնտեղ ո՞րն է քո լուսամուտը, Սուլամիթ։

— Ինչի՞դ է պետք, որ իմանաս, սիրելիս։ Օ, ոչ, ինձ մի նայիր այդպես։ Քո հայացքը կախարդում է ինձ... ինձ մի համբուրի... Ինձ մի համբուրի... Սիրելիս։ Ինձ էլի համբուրիր։

— Ուրեմն ո՞րն է քո լուսամուտը, իմ միակը։

— Լուսամուտը հարավային կողմում է։ Ախ, ես չպետք է դա ասեմ քեզ... Փոքրիկ, վանդակապատ բարձր լուսամուտ է։

— Եվ վանդակապատը բացվում է ներսի՞ց։

— Ոչ, դա խուլ պատուհան է։ Բայց անկյան ետևում դուռ կա։ Դա ուղղակի տանում է այն սենյակը, որտեղ քնում ենք ես ու քույրս։ Բայց չէ՞ որ դու ինձ խոստացա՞ր... Քույրս խոր չի քնում։ Օ, ինչ գեղեցի՞կ ես, սիրեցյալդ իմ։ Չէ՞ որ դու խոստացար, ճիշտ չէ՞։

Սողոմոնը մեղմ շոյում է նրա մազերն ու այտերը։

— Ես քեզ մոտ կգամ այս գիշեր,— ասում է նա համառ։ —Կեսգիշերին կգամ։ Դա այդպես կլինի, այդպես կլինի։ Ես այդ ուզում եմ։

— Սիրելի՞ս։

— Ոչ։ Դու ինձ կապասես։ Միայն թե մի վախենա և հավատա ինձ։ Ես քեզ վիշտ չեմ պատճառի։ Ես քեզ այնպիսի ուրախություն կտամ, որի մոտ ամեն ինչ չնչին է աշխարհում։ Հիմա մնաս բարով։ Ես լսում եմ, որ գալիս են իմ հետևից։

— Գնաս բարով, սիրեցյալդ իմ... Օ ոչ, դեռ մի գնա։ Ասա ինձ քո անունը, ես չգիտեմ անունդ։

Թագավորը մի ակնթարթ, ասես անվճռական, խոնարհում է արտանունքները, բայց անմիջապես բարձրացնում է։

— Ես ու Թագավորը մի անուն ունենք։ Իմ անունը Սողոմոն է։ Մնաս բարով։ Ես քեզ սիրում եմ։

5

Գայծառ ու զվարթ էր այդ օրը Սողոմոնը, երբ Լիբանանյան տան դահլիճում գահին նստած, դատում էր իր մոտ եկած մարդկանց։

Քառասուն սյուն, ամեն շարքում չորսական, պահում էին դատաստանատան առաստաղը, և նրանք բոլորը պատած էին մայրի փայտով ու ավարտվում էին շուշանաձև խոյակներով։ Հատակը ծածկված էր հատ-հատ նոճետախտակներով, և պատերին ոչ մի տեղ քար չէր երևում, որովհետև դրանք ծածկված էին արմավենիներ, անանասներ ու քերովբեներ պատկերող ոսկեքանդակ մայրափայտե դրվագով։ Եռալույս դահլիճի խորքում վեց աստիճան տանում էին դեպի գահի բարձունքը, ամեն մի աստիճանին կանգնած էին երկուական բրոնզաձույլ առյուծ՝ ամեն կողմից մեկական։ Իսկ գահն ինքը ոսկեդրվագ փղոսկրից էր և պատկած առյուծների կերպարանքով ոսկե արմենակալներ ուներ։ Գահի բարձր թիկնակն ավարտվում էր ոսկե սկավառակով։ Մանիշակագույն և ծիրանեգույն գործվածքից վարագույրները կախված էին հատակից մինչև առաստաղ՝ դահլիճի մուտքի մոտ, անջատելով գավիթը, որտեղ հինգ սյուների միջև խոնվում էին հայցվորները, խնդրատուներն ու վկաները, ինչպես մեղադրյալներն ու հանցագործները ուժեղ հսկողության տակ։

Թագավորի հագին կարմիր պատմուճան էր, իսկ գլխին հասարակ նեղերիզ պսակ՝ ոսկե շրջանակի մեջ ագուցած վաթսուն ազնիվ բյուրեղաքարով։ Աջ կողմից գտնվում էր նրա մոր՝ Բերսաբեի համար դրված գահը, բայց վերջին ժամանակներս, առաջա-

ցած տարիքի պատճառով նա հազվադեպ էր հայտնվում քաղաքում։

Սևամորուք խոժոռ դեմքերով ասորեստանցի հյուրերը նստել էին պատերի երկայնքով դրած հասպիսե նստարաններին. նրանց հագին բաց դեղնականաչ զգեստներ էին՝ եզրերը կարմիր ու սպիտակ նախշերով բանված։ Նրանք իրենց մոտ՝ Ասորեստանում այնքան էին լսել Սողոմոնի արդարադատության մասին, որ ջանում էին բաց չթողնել նրա ոչ մի խոսքը, որպեսզի հետո պատմեն իսրայելացիների թագավորի դատի մասին։ Նրանց միջև նստած էին Սողոմոնի զորահրամանատարները, նրա նախարարները, գավառների պետերն ու արքունի պալատականները։ Այստեղ էր Բանեան, երբեմնի թագավորական դահիճը, Հովաբին, Ադոնիային ու Սեմեին սպանողը, ներկայիս զորքի գլխավոր հրամանատարը՝ ցածրահասակ, ծանրամարմին, ցանցառ ալեխառն երկար մորուքով մի ծերունի. նրա կարմիր, ասես շուտ տված կոպերով խոնացած կապտավուն աչքերը նայում էին ծերունական բութ հայացքով. բերանը բաց էր ու խոնավ, իսկ մսալի կարմիր շրթունքը անզոր կախված էր ցած. նրա գլուխը միշտ հակված էր և թեթևակի դողում էր։ Այդտեղ էր նաև Ազարիան՝ Նաթանի որդին, հիվանդագին դեմքով ու աչքերի տակ մուգ շրջանակներով մի մաղձոտ բարձրահասակ մարդ, և բարեհոգի մտացրիվ Հովսափաթը՝ պատմագիրը, և Աքելարը՝ Սողոմոնի պալատի պետը, և թագավորի բարեկամի բարձր տիտղոսը կրող Զաբութը, և Բեն-Ամինադաբը, որն ամուսնացած էր Սողոմոնի ավագ դուստր Տափաթեի հետ, և Բասանում գտնվող Արգովբի գավառի պետ Բեն-Գևերը, նրա կառավարման ներքո գտնվում էր վաթսուն քաղաք, որոնց պարիսպների պատերը ոլորձե սողնակներով դարպասներ ունեին, և Բաանան՝ Խուշայի որդին, որը ժամանակին հռչակված էր երեսուն փարսախ հեռավորությամբ նիզակ նետելու կարողությամբ, և շատ ուրիշներ։ Վաթսուն զորական, փայլեցնելով ոսկեզօծ սաղավարտներն ու վահանները, շարքով կանգնած էին աջ ու ձախ կողմերում։ Այսօր նրանց վրա ավագ էր կարգված սևագանգուր գեղատեսիլ Ելիաբը՝ Աքիլուդի որդին։

Առաջինը իր գանգատով Սողոմոնի առաջ կանգնեց ոմն Աքիոր՝ արհեստով երեսակիչ։ Փյունիկեի Բելում աշխատելիս նա մի թանկագին քար էր գտել, մշակել էր ու խնդրել Երուսաղեմ մեկնող իր ընկերոջը՝ Զաքարիային, այդ քարը տալ իր՝ Աքիորի կնոջը։ Որոշ ժամանակ անց տուն է վերադառնում նաև

Աքիորը։ Առաջին բանը, ինչ նա հարցնում է կնոջը, քարի մասին էր։ Բայց կինը շատ է զարմանում ամուսնու հարցից և երդումով պնդում, որ ոչ մի քար չի ստացել։ Այն ժամանակ Աքիորը պարզաբանման համար գնում է իր ընկերոջ՝ Զաքարիայի մոտ. բայց սա հավատացնում է, նույնպես երդումով, որ գալուց անմիջապես հետո քարը հանձնել է ըստ պատկանելույն։ Նա նույնիսկ երկու վկա է բերում, որոնք հաստատում են, որ իրենք տեսել են, թե ինչպես Զաքարիան իրենց ներկայությամբ քարը հանձնել է Աքիորի կնոջը։

Եվ ահա հիմա այդ չորսը՝ Աքիորը, Զաքարիան և երկու վկաները կանգնել էին Իսրայելի թագավորի գահի առաջ։

Սողոմոնը հերթով նայեց նրանցից յուրաքանչյուրի աչքերին ու ասաց պահակներին։

— Տարեք նրանց առանձին սենյակներ և ամեն մեկին փակեցեք առանձին։

Եվ երբ դա կատարված էր, նա հրամայեց չորս կտոր հում կավ բերել։

— Թող նրանցից ամեն մեկը կավին տա այն ձևը, որն ուներ քարը։

Որոշ ժամանակ անց ծեփակերտ պատճենները պատրաստ էին։ Բայց վկաներից մեկը իր ծեփածոն արել էր ձիու գլխի ձևով, ինչպես սովորաբար մշակվում էին թանկագին քարերը։ Մյուսը՝ ոչխարի գլխի ձևով, և միայն երկուսի՝ Աքիորի և Զաքարիայի ծեփակերտ պատճեններն էին միատեսակ՝ ձևով նման կանացի կրծքի։

Եվ թագավորն ասաց.

— Հիմա կույրն էլ կտեսնի, որ Զաքարիան կաշառել է վկաներին։ Ուրեմն, թող Զաքարիան քարը վերադարձնի Աքիորին, դրա հետ մեկտեղ նրան վճարի երեսուն աշխարհական սիկղ դատական ծախքերը և տասը սրբազան սիկղ տաճարին տա։ Իսկ իրենք իրենց մերկացրած վկաները կեղծ վկայության համար թող հինգական սիկղ վճարեն պետական գանձարանին։

Ապա Սողոմոնի գահին մոտեցան երեք եղբայր, որոնք դատավեճ ունեին ժառանգության կապակցությամբ։ Մահվանից առաջ հայրը նրանց ասել էր. «Որպեսզի բաժանման ժամանակ չվիճեք, ես ինքս ամեն ինչ ձեր մեջ արդար կբաժանեմ։ Երբ մեռնեմ, գնացեք բլրի հետև, որը տան հետևի պուրակի մեջտեղում է, և փորեցեք։ Այնտեղ դուք կգտնեք երեք բաժանմունքով

մի արկղ. իմացեք, որ վերևինը մեծ եղբոր համար է, մեջտեղինը՝ միջնակի և ներքևինը՝ կրտսերի։ Եվ երբ հոր մահից հետո նրանք գնացին և այնպես արեցին, ինչպես կտակել էր հայրը, գտան, որ վերևի բաժանմունքը լիքն է ոսկի դրամներով, այնինչ մեջտեղի բաժանմունքում միայն հասարակ ոսկորներ կային, իսկ ներքևինում՝ փայտի կտորտանք։ Եվ ահա կրտսեր եղբայրների մեջ նախանձ ու թշնամություն առաջացավ մեծի նկատմամբ, և ի վերջո նրանց կյանքն այնքան անտանելի դարձավ, որ նրանք որոշեցին դիմել թագավորին, խնդրելով խորհուրդ և դատ։ Նույնիսկ այստեղ, գահի առաջ կանգնած, նրանք իրենց չէին զսպում իրար կշտամբելուց ու վիրավորելուց։

Թագավորը գլուխն օրորեց, նրանց լսեց ու ասաց.

— Թողեք վեճերը. ծանր է քարը, ծանրակշիռ է և ավազը, բայց հիմարի զայրույթը այդ երկուսից էլ ծանր է։ Ձեր հայրն ըստ երևույթին իմաստուն ու արդարամիտ մարդ էր, և իր կամքը իր կտակում նա արտահայտել է այնքան պարզ, ասես դա տեղի է ունեցել հարյուր վկայի ներկայությամբ։ Մի՞թե միանգամից գլխի չընկաք, դուք, թշվառ ճղճղաններ, որ մեծ եղբորը նա թողել է ողջ դրամը, միջնակին՝ բոլոր անասուններն ու ստրուկներին, իսկ փոքրին՝ տունն ու վարելահողը։ Ուրեմն գնացեք խաղաղությամբ ու այլևս իրար թշնամություն մի արեք։

Եվ երեք եղբայրները՝ քիչ առաջվա թշնամիները, պայծառացած դեմքերով, մինչև գետին գլուխ տվին թագավորին և, ձեռք ձեռքի տված՝ դուրս եկան դատարանից։

Եվ էլի երեք օր առաջ սկսած մի գործ վճռեց թագավորը ժառանգության մասին։ Մի մարդ մեռնելիս ասել էր, թե իր ողջ կարողությունը թողնում է իր երկու որդիներից նրան, ով ավելի արժանավոր է։ Բայց քանի որ նրանցից ոչ մեկը չէր համաձայնում իրեն անարժան համարել, դիմեցին թագավորին։

Թագավորը նրանց հարցրեց, թե զբաղմունքով ինչ մարդիկ են, և ի պատասխան լսելով, որ երկուսն էլ նետաձիգ որսորդներ են, ասաց.

— Տուն վերադարձեք։ Ես կհրամայեմ ձեր հոր դիակը դնել ծառի մոտ։ Նախ տեսնենք, թե ձեզնից որը ավելի դիպուկ կկրակի նրա կրծքին, իսկ հետո կորոշենք ձեր գործը։

Հիմա երկու եղբայրը ետ էին վերադարձել թագավորի կողմից հսկողության համար ուղարկված մարդու ուղեկցությամբ։ Հենց նրան էլ հարցաքննեց Սողոմոնը մրցության մասին։

— Ես կատարեցի այն ամենը, ինչ հրամայել էիր, թագավոր,— ասաց այդ մարդը։— Ես ծերունու դիակը կանգնեցրի ծառի մոտ և եղբայրներից յուրաքանչյուրին տվի նրանց նետն ու աղեղը։ Առաջինը ավագն արձակեց նետը։ Հարյուր քսան կանգուն հեռավորությունից նա կպավ հենց այն տեղին, որտեղ բաբախում է կենդանի մարդու սիրտը։

— Հրաշալի հարված է,— ասաց Սողոմոնը։— Իսկ կրտսե՞րը։

— Կրտսերը... Ներիր ինձ, արքա, ես չկարողացա պնդել, որ քո հրամանը ճշտիվ կատարվեր... Կրտսերը ձգեց լարը և արդեն նրա վրա էր դրել նետը, բայց հանկարծ աղեղն իջեցրեց ոտքերի մոտ, շուռ եկավ ու լաց լինելով ասաց. «Ոչ, ես չեմ կարող այդ բանն անել... Ես սետ չեմ արձակի իմ հոր դիակին»։

— Ուրեմն թող նրան էլ պատկանի հոր կալվածքը,— վճռեց թագավորը։— Նա ավելի արժանավոր որդի դուրս եկավ։ Իսկ ավագը, եթե ուզում է, կարող է մտնել իմ թիկնապահների շարքը։ Ինձ հարկավոր են դիպուկ ձեռքով, անվրեպ աչքով և մազակալած սրտով ուժեղ ու ագահ մարդիկ։

Այնուհետև թագավորի առաջ կանգնեցին երեք մարդ։ Ընդհանուր առևտրական գործ վարելով, նրանք շատ փող էին վաստակել։ Եվ ահա, երբ Երուսաղեմ գնալու ժամանակը եկավ, նրանք ոսկին կարեցին կաշվե գոտու մեջ և ճամփա ընկան։ Ճանապարհին նրանք գիշերեցին մի անտառում, իսկ գոտին ապահովության համար թաղեցին հողում։ Իսկ երբ առավոտյան արթնացան, գոտին չգտան իրենց թաղած տեղում։

Նրանցից յուրաքանչյուրը մեղադրում էր մյուսին թաքուն հափշտակության համար, և քանի որ երեքն էլ շատ խորամանկ և խոսքի մեջ ճարտար մարդիկ էին թվում, թագավորն ասաց նրանց.

— Նախքան ձեր գործը վճռելս լսեցեք, թե ինչ կպատմեմ ձեզ։ Մի գեղեցիկ աղջիկ ճանապարհորդության մեկնող իր սիրեցյալին խոստանում է սպասել նրա վերադարձին և ոչ ոքի չտալ իր կուսությունը, բացի նրանից։ Բայց մեկնելով, նա մի ուրիշ քաղաքում ամուսնանում է ուրիշ աղջկա հետ, և առաջին սիրածը իմանում է այդ մասին։ Այդ միջոցին այս աղջկան ուզում է իրենց քաղաքի մի բարեսիրտ ու հարուստ երիտասարդ, աղջկա մանկության ընկերը։ Նա ամոթից ու վախից չի կարողանում նրան ասել իր խոստման մասին և ծնողների հարկա-

դրամամբ ամուսնանում է նրա հետ։ Իսկ երբ հարսանեկան խընջույքից հետո երիտասարդը նրան ննջարան է տանում և ուզում է պառկել նրա հետ, աղջիկն սկսում է աղերսել նրան. «Թույլ տուր ինձ գնալ այն քաղաքը, որտեղ իմ նախկին սիրեցյալն է ապրում։ Թող նա իմ վրայից հանի երդումը, այն ժամանակ ես կվերադառնամ և ինչ որ ուզես՝ կանեմ»։ Եվ քանի որ երիտասարդը շատ էր սիրում նրան, համաձայնում է նրա խնդրանքին, թողնում է նրան, և աղջիկը գնում է։ Ճանապարհին նրա վրա մի ավազակ է հարձակվում, կողոպտում է նրան և արդեն ուզում է նրան բռնաբարել, բայց աղջիկը ծունկի է գալիս նրա առաջ և արցունքն աչքերին աղաչում խնայել իր կուսությունը և ավազակին պատմում է այն ամենը, ինչ պատահել էր իրեն և թե ինչու է ինքը գնում օտար քաղաք։ Եվ ավազակը, լսելով նրան, այնպես է զարմանում աղջկա հավատարմությանը իր տված խոսքին և այնպես է գթաշարժվում փեսացուի բարությունից, որ ոչ միայն բաց է թողնում աղջկան խաղաղությամբ, այլև նրան է վերադարձնում խլած թանկարժեք իրերը։ Հիմա ես ձեզ հարցնում եմ, թե այդ երեքից ո՞վ ամենից լավ վարվեց աստծու առաջ՝ աղջի՞կը, փեսացո՞ւն թե՞ ավազակը։

Եվ դատավիճռողներից մեկն ասաց, թե աղջիկն ամենից ավելի է արժանի գովեստի՝ իր երդմանը այնքան հավատարիմ գտնվելու համար։ Մյուսը զարմացավ փեսացուի մեծ սիրո վրա. իսկ երրորդը ամենից ավելի մեծահոգի էր համարում ավազակի արարքը։

— Ուրեմն դու ես գողացել ընդհանուրի ոսկով լի գոտին, որովհետև քո բնությամբ դու ագահ ես և աչքդ ուրիշի ունեցվածքին է

Իսկ այդ մարդը՝ իր ճամփորդական ցուպը տալով ընկերներից մեկին, ասաց, ձեռքերը վեր բարձրացնելով, ասես երդվելու համար.

— Վկայում եմ Եհովայի առաջ, որ ոսկին ինձ մոտ չէ, այլ նրա մոտ է։

Թագավորը ժպտաց ու հրամայեց իր զորականներից մեկին.

— Այդ մարդուց վերցրու գավազանը և երկու կես արա։

Եվ երբ զորականը Սողոմոնի հրամանը կատարեց, հատակին թափվեցին ոսկեդրամները, որովհետև դրանք թաքցրած էին սնամեջ գավազանի ներսում. իսկ գողը, զարմացած թագավորի

իմաստությունից, երեսնիվայր փռվեց գահի առջև ու խոստովանեց իր հանցանքը։

Լիբանանյան տուն եկավ նաև մի կին՝ քարհատի աղջատ այրին, և ասաց.

— Արդարադատություն եմ խնդրում, արքա։ Ինձ մոտ մնացած վերջին երկու դինարով ես ալյուր գնեցի, լցրի ահա այս կավե մեծ թասի մեջ ու տուն էի տանում։ Բայց հանկարծ սաստիկ քամի բարձրացավ ու ցրիվ տվեց իմ ալյուրը։ Ով իմաստուն թագավոր, ո՞վ ինձ կվերադարձնի այդ կորուստը։ Հիմա երեխաներիս կերակրելու բան չունեմ։

— Այդ ե՞րբ է եղել։

— Դա եղավ այսօր առավոտյան, լուսաբացին։

Եվ ահա Սողոմոնը հրամայում է կանչել մի քանի հարուստ վաճառականների, որոնց նավերը այդ օրը ապրանքներով պետք է Հոպպեի վրայով Փյունիկիա ուղևորվեին։ Եվ երբ նրանք անհանգստացած՝ ներկայացան դատական դահլիճ, թագավորը նրանց հարցրեց.

— Արդյոք դուք աղոթե՞լ եք աստծուն կամ աստվածներին ձեր նավերի համար համընթաց քամի տալու մասին։

Եվ նրանք պատասխանեցին.

— Այո՛, արքա։ Այդպես է։ Եվ աստծուն հաճո էին մեր զոհերը, որովհետև նա մեզ լավ քամի ուղարկեց։

— Ես ուրախ եմ ձեզ համար,— ասաց Սողոմոնը։— Բայց նույն քամին շաղ է տվել աղքատ կնոջ ալյուրը, որը նա տուն էր տանում թասով։ Արդյոք դուք արդարացի չե՞ք գտնում, որ պետք է նրան հատուցեք։

Եվ նրանք, ուրախացած, որ միայն դրա համար էր կանչել թագավորը, անմիջապես կնոջ թասը լիքը լցրին մանր ու խոշոր արծաթե դրամներով։ Իսկ երբ կինը արցունքն աչքերին սկսեց շնորհակալություն հայտնել թագավորին, նա պայծառ ժպտաց ու ասաց.

— Սպասիր, էլի բան կա։ Այսօրվա առավոտյան քամին ինձ էլ ուրախություն տվեց, որը ես չէի սպասում։ Տես, այս վաճառականների նվերներին ես կավելացնեմ իմ արքայական նվերը։

Եվ նա հրամայեց Ադոնիրամին, գանձապահին, վաճառականների դրամների վրա այնքան ոսկի դրամ լցնել, որ դրանց տակից արծաթը բոլորովին չերևա։

Այդ օրը Սողոմոնը ոչ ոքի չէր ուզում դժբախտ տեսնել։ Նա

այնքան պարգևներ, թոշակներ ու նվերներ բաժանեց, որքան երբեք չէր բաժանում ամբողջ տարին։ Եվ նա ներեց Աքիմաասին, Ենեթաղիմի կառավարչին, որի դեմ առաջ բուռն զայրույթով էր լցված ապօրինի հարկումների համար, և թողություն տվեց շատ օրինազանցների մեղքերին, և անուշադիր չթողեց իր հպատակների խնդիրքները, բացի մեկից։

Երբ թագավորը դուրս էր գալիս Լիբանանյան տան հարավային փոքր դռներից, նրա ճանապարհին կանգնեց դեղին Կաշվե հանդերձով, ցածլիկ, ամրակազմ, լայնաթիկունք մի մարդ մուգ-կարմիր մռայլ դեմքով, սև խիտ մորուքով, եղան վզով ու խոժոռ հայացքով՝ սև գզուզ հոնքերի տակից։ Դա Մոլոքի կուռատան գլխավոր քուրմն էր։ Նա միայն մի բառ արտասանեց աղերսական ձայնով.

— Արքա՜...

Նրա աստծու բրոնզե որովայնի մեջ յոթ բաժանմունք կար. մեկը ալյուրի համար, մյուսը աղավնիների, երրորդը ոչխարների, չորրորդը խոյերի, հինգերորդը հորթերի, վեցերորդը եզների, իսկ յոթերորդը, որ նշանակված էր մայրերի կողմից բերվող կենդանի մանուկների համար, վաղուց դատարկ էր թագավորի հրամանով։

Սողոմոնը լուռ անցավ քուրմի կողքով, բայց նա պարզեց ձեռքերը թագավորի հետևից և աղերսանքով բացականչեց.

— Արքա՛։ Թախանձում եմ քեզ հանուն քո ուրախության՝ն... Արքա, արա ինձ ողորմածությունը, և ես կհայտնեմ քեզ, թե ինչ վտանգի է ենթարկվում քո կյանքը։

Սողոմոնը չպատասխանեց նրան, և քուրմը, սեղմելով ուժեղ ձեռքերի բռունցքները, կատաղի հայացքով ուղեկցեց նրան մինչև ելքը։

6

Երեկոյան Սուլամիթը գնաց հին քաղաք, այնտեղ, որտեղ երկար շարքերով ձգվում էին դրամափոխների, վաշխառուների ու անուշահոտ շպարանյութեր վաճառողների կրպակները։ Այնտեղ նա երեք դրախմ ու մեկ դինարով ոսկերչին ծախեց իր միակ թանկարժեք իրը՝ ոսկե աստղիկով արծաթե բոլորակ տոնական ականջօղերը։

Հետո նա մտավ անուշահոտ օծանելիքների վաճառականի

մոտ։ Խոր, խավար քարե որմնախորշում, արաբական գորշ համպարի տուփերի, լիբանանյան խունկի ծրարների, բուրավետ խոտերի փնջիկների և օծանելիքների սրվակների միջև նստել էր ոտքերը տակը ծալած ու ծույլ աչքերը կկոցած, անշարժ, ինքն ամբողջովին բուրավետ, ծեր, ճարպոտ, կնճռոտ ամորձատ մի եգիպտացի։ Նա փյունիկյան ապակե սրվակից մի կավե փոքրիկ սրվակի մեջ զգուշությամբ կաթեցրեց ճիշտ այնքան կաթիլ զմուռս, որքան դինար կար Սուլամիթի բոլոր փողերի մեջ, և երբ նա այդ գործն ավարտեց, ապա սրվակի վզիկի շուրջը մնացած յուղը խցանով հավաքելով, խորամանկ ժպտալով ասաց.

— Թուխիկ աղջիկ, սիրուն աղջիկ։ Երբ այսօր քո սիրելին համբուրի քեզ կրծքերիդ միջև ու ասի. «Ի՞նչ լավ է բուրում քո մարմինը, օ՜ իմ սիրեցյալ», դու հիշիր ինձ այդ ակնթարթին։ Ես քեզ երեք կաթիլ ավել եմ լցրել։

Եվ ահա, երբ գիշերն իջավ, և լուսինը ծագեց Սիլոամի վերև, նրա տների կապույտ սպիտակությունը խառնելով ստվերների սև կապտությանը և ծառերի փայլատ կանաչին, վեր կացավ Սուլամիթը այծի բրդից պատրաստած իր աղքատիկ մահճից և ականջ դրեց։ Ամեն ինչ լուռ էր տանը։ Քույրը հանդարտ շնչում էր պատի տակ, հատակին։ Միայն դրսում, ճամփեզրի թփերի մեջ չոր ու կրքոտ ձայնում էին ծղրիդները, և ականջներում սրտի հարվածներից խշշում էր արյունը։ Լուսամուտի վանդակի ստվերը, լուսնի լույսով գծագրված, պարզորոշ ու շեղ ընկած էր հատակին։

Երկյուղից, սպասումից ու երջանկությունից դողալով, Սուլամիթն արձակեց իր զգեստները, ցած իջեցրեց ոտքերի մոտ և վրայից անցնելով, սենյակի մեջ մնաց մերկ, դեմքը լուսամուտին, ճաղերի միջով թափանցող լուսնի լույսով լուսավորված։ Նա թանձր անուշահոտ զմուռսը լցրեց իր ուսերին, կրծքին, փորին և, վախենալով թեկուզ մի թանկագին կաթիլ կորցնել, սկսեց յուղը արագ շփել ուսերին, անութներին և վզի շուրջը։ Եվ իր ափերի ու արմունկների ողորկ հպումը մարմնին նրան հարկադրում էր ցնցվել քաղցր կանխազգացումից։ Եվ, ժպտալով ու դողալով, նայում էր նա լուսամուտին, որտեղ վանդակի հետևում երևում էին երկու կաղամախի, մի կողմից մուգ, մյուս կողմից արծաթազօծված, և ինքն իրեն շշնջում էր.

— Սա քե՛զ համար է, թանկագինս, սա քե՛զ համար է, սիրելի՛ս։ Իմ սիրելին ավելի լավն է տասը հազար ուրիշներից,

նրա գլուխը զուտ ոսկի է, նրա մազերը գանգուր են, սև են ագռավի պես։ Նրա շուրթերը մեղր են, և նա ամբողջովին ցանկալի է։ Ահա թե ո՞վ է իմ սիրելին, ահա ո՞վ է իմ եղբայրը, Երուսաղեմի դուստրեր...

Եվ ահա զմուռս բուրելով, նա պառկեց իր մահճին։ Նրա դեմքն ուղղված է պատուհանին, ձեռքերը երեխայի պես սեղմել է ծնկների արանքում, նրա սրտի զարկը բարձր լսվում է սենյակում։ Շատ ժամանակ է անցնում։ Գրեթե աչքերն առանց փակելու, նա սուզվում է նիրհի մեջ, բայց նրա սիրտն արթուն է։ Նա անրջում է, թե սիրելին պառկած է իր կողքին։ Աջ ձեռքը սիրուհու գլխատակին է, իսկ ձախով փարվել է նրան։ Խնդագին վախով աղջիկը իրենից թոթափում է նիրհը, փնտրում է սիրեցյալին իր կողքին, մահճի վրա, բայց ոչ ոքի չի գտնում։ Լուսնի նախշը շարժվել է պատին ավելի մոտիկ, կարճացել ու ավելի շեղ է դարձել։ Ծղրիդները ծղրում են, միապաղաղ կարկաչում է Կեդրոնի գետակը, լսվում է, թե ինչպես քաղաքում տխրագին երգում է գիշերային պահակը։

«Իսկ եթե նա այսօր չգա՞,— մտածում է Սուլամիթը։— Ես նրան խնդրեցի, և հանկարծ ու նա լսի՞ ինձ... Երդվեցնում եմ ձեզ, Երուսաղեմի դուստրեր, քարայծներով ու դաշտի շուշաններով, սերը մի արթնացրեք, մինչև նա չգա... Բայց ահա սերն ինձ այցի է եկել։ Արի շուտով, իմ սիրեցյա՛լ։ Հարսնացուդ սպասում է քեզ։ Վազիր եկ՝ զմուռսի սարերի ջահել եղնիկի պես»։

Ավազը խշրտաց բակում թեթև քայլերից։ Եվ աղջկա մեջ հոգի չմնաց։ Մի զգուշավոր ձեռք թակում է լուսամուտը։ Մի մութ դեմք է երևում ճաղերի ետևում։ Լսվում է սիրեցյալի կամացուկ ձայնը.

— Բաց արա, քույր իմ, սիրեցյալ իմ, աղավնի իմ, անարատ իմ։ Իմ գլուխը պատած է ցողով։

Բայց հանկարծ Սուլամիթի մարմնին մի կախարդական ընդարմացում է տիրում։ Նա ուզում է վեր կենալ և չի կարողանում, ուզում է ձեռքը շարժել և չի կարողանում։ Եվ չիմանալով, թե ինչ է կատարվում իր հետ, նա շշնջում է, լուսամուտին նայելով.

— Ախ, նրա՛ գանգուրները լիքն են գիշերային խոնավությամբ։ Բայց ես հանել եմ պատմուճանս, ինչպե՞ս նորից հագնեմ։

— Վե՛ր կաց, սիրելիդ իմ։ Սքանչելիդ իմ, դուրս եկ։ Առավոտը մոտենում է, ծաղիկները բացվում են, խաղողը սփռում է իր քաղցր բույրը, հասել է երգի պահը, տատրակի ձայնը հասնում է սարերից։

— Ես լվացել եմ ոտքերս,— շշնջում է Սուլամիթը,— ինչպե՞ս կանգնեմ հատակին։

Մութ գլուխն անհայտանում է լուսամուտի շրջանակից, հնչեղ ոտնաձայները շրջանցում են տունը, լռում դռան մոտ։ Սիրելին զգուշությամբ ձեռքը ներս է մտցնում դռան ճեղքից։ Լսվում է, թե ինչպես մատներով որոնում է ներսի մղիչը։

Այն ժամանակ Սուլամիթը վեր է կենում, ձեռքի ափերը սմուր հպում է ստինքներին և վախով շշնջում.

— Քույրս քնած է, ես վախենում եմ նրան արթնացնեմ։

Նա անվճռական ոտքերն է գցում սանդալները, մերկ մարմնի վրա հագնում է թեթև պատմուճանը, նրա վրայից գցում է ծածկոցը և բացում է դուռը, նրա փականքի վրա զմուռսի հետքեր թողնելով։ Բայց արդեն ոչ ոք չկա ճանապարհի վրա, որ միայնակ ճերմակին է տալիս մութ թփերի միջև, առավոտյան գորշ մշուշի մեջ։ Սիրելին չէր սպասել, գնացել էր, նույնիսկ նրա ոտնաձայնը չէր լսվում։ Լուսինը փոքրացել ու գունատվել է և կանգնած է բարձր։ Արևելքում լեռների ալիքների վերև պաղ վարդագույն է դառնում երկինքը լուսաբացից առաջ։ Հեռվում սպիտակին են տալիս Երուսաղեմի պարիսպներն ու տները։

— Իմ սիրեցյա՛լ, իմ կյանքի թագավո՛ր,— կանչում է Սուլամիթը խոնավ խավարի մեջ։— Ահա ես այստեղ եմ։ Ես սպասում եմ քեզ... Վերադարձի՛ր։

Բայց ոչ ոք չի արձագանքում։

«Վազեմ ճանապարհով, հասնեմ, հասնեմ իմ սիրեցյալին, —ինքն իրեն ասում է Սուլամիթը։— Գնամ քաղաքով մեկ, փողոցներով, որոնեմ նրան, ում սիրում է իմ հոգին։ Օ՜, եթե դու իմ մոր կաթը ծծած իմ եղբա՛յրը լիներիր։ Ես քեզ կհանդիպեի փողոցում և կհամբուրեի քեզ, և ոչ ոք ինձ չէր պարսավի։ Ես կբռնեի քո ձեռքը և կբերեի իմ մոր տունը։ Դու ինձ դաս կտվորեցնեիր, իսկ ես քեզ նռան հյութ կխմեցնեի։ Աղաչում եմ ձեզ, Երուսաղեմի դուստրեր, եթե հանդիպեք իմ սիրեցյալին, ասացեք նրան, որ ես խոցված եմ սիրուց»։

Այսպես է ասում նա ինքն իրեն և թեթև, հլու քայլերով վազում է ճանապարհով դեպի քաղաք։ Գոմաղբի դարպասի մոտ, պատի տակ առավոտվա զովին նստել ու նիրհում են գիշերը

քաղաքում շրջած պահակները։ Նրանք զարթնում են ու զարմանքով նայում վազող աղջկան։ Նրանցից փոքրը վեր է կենում և ձեռքերը բացելով կտրում նրա ճանապարհը։

— Սպասիր, սպասիր, գեղեցկուհի,— բացականչում է նա ծիծաղով։— Ո՞ւր այդքան շուտ։ Դու գիշերը թաքուն անց ես կացրել սիրեկանիդ անկողնում և դեռ տաք ես նրա գրկից, իսկ մենք սառել ենք գիշերվա խոնավությունից։ Ճիշտ կլինի, որ մի քիչ նստես մեզ հետ։

Մեծն էլ է վեր կենում և ուզում է գրկել Սուլամիթին։ Նա չի ծիծաղում։ Նա ծանր, հաճախակի ու սուլոցով շնչում է, լեզվով լպստում է կապույտ շրթունքները։ Անցած բորի մեծ սպիներից այլանդակված նրա դեմքը սարսափելի է թվում աղոտ մշուշում։ Նա խոսում է քթի մեջ խռպոտ ձայնով.

— Ճիշտ որ։ Քո սիրեկանն ինչո՞վ է լավ ուրիշ տղամարդկանցից, անուշ աղջիկ։ Աչքերդ փակիր, և դու ինձ չես տարբերի նրանից։ Ես նույնիսկ ավելի լավն եմ, որովհետև նրանից երևի ավելի փորձված եմ։

Նրանք ճանկում են աղջկա կուրծքը, ուսերը, քաշքշում ձեռքերը, հագուստը։ Բայց Սուլամիթը ճկուն է և ուժեղ, իսկ նրա յուղով օծված մարմինը՝ սլկոն։ Նա դուրս է պրծնում, պահակների ձեռքին թողնելով վրան գցված ծածկոցը, և ավելի արագ ետ է վազում առաջվա ճանապարհով։ Նա չի զգում ոչ վախ, ոչ վիրավորանք. նրա միտքն ամբողջովին կլանել է Սողոմոնը։ Իր տան մոտով անցնելիս նա տեսնում է, որ դուռը, որից ինքը հենց նոր դուրս էր եկել, այդպես բաց էլ մնացել է, քառանկյունու ձևով սևին տալով պատի վրա։ Բայց նա միայն պահում է շունչը, կծկվում ջահել կատվի պես և ոտքերի ծայրին անձայն վազում դռան կողքով։

Նա անցնում է Կեդրոնի կամուրջը, պտույտ է գործում Սիլոամ գյուղի ծայրամասում և քարքարոտ ճանապարհով աստիճանաբար բարձրանում Վաթն-էլ-Խավի հարավային լանջն ի վեր, իր խաղողի այգին։ Եղբայրը դեռ քնած է վազերի միջև, բրդե վերմակով փաթաթված, որն ամբողջովին թրջվել է ցողից։ Սուլամիթն արթնացնում է նրան, բայց նա չի կարողանում զարթնել՝ վաղորդյան ջահել քնով կաշկանդված։

Ինչպես և երեկ, արշալույսը բոցավառվում է Անազեի վերև։ Քամի է բարձրանում։ Ծորում է խաղողի ծաղկման բույրը։

— Գնամ նայեմ պատի մոտ՝ այն տեղին, որտեղ կանգնել

էր իմ սիրեցյալը,— ասում է Սուլամիթը։— Ձեռքերով շոշափեմ քարերը, որոնց նա ձեռք է տվել, համբուրեմ նրա ոտքերի տակի հողը։

Թեթև սահում է նա վազերի միջև։ Ցողը կաթում է դրանց վրայից ու պաղեցնում նրա ոտքերը, ցայտում նրա արմունկներին։ Եվ ահա Սուլամիթի խնդագին ճիչը թնդացնում է խաղողի այգին։ Թագավորը կանգնած է պատի ետևում։ Նա շողշողուն դեմքով նրան ընդառաջ է մեկնում ձեռքը։

Թուլությունից էլ թեթև Սուլամիթը անցնում է ցանկապատի վրայով, և անխոս, երջանկության հառաչանքով փաթաթվում է Սողոմոնին։

Այդպես անցնում է մի քանի րոպե։ Վերջապես պոկվելով նրա բերանից, Սողոմոնն ասում է արբեցած, և նրա ձայնը դողում է.

— Օ, ինչ գեղեցիկ ես, իմ սիրելի, ինչ գեղեցի՜կ ես։

— Օ, ինչ գեղեցիկ ես, իմ սիրեցյա՜լ։

Հիացմունքի ու շնորհակալության արցունքները՝ երանության արցունքներն են շողում Սուլամիթի դալուկ ու սքանչելի դեմքին։ Սիրուց պարտասուն, նա նստում է գետնին և հազիվ լսելի շշնջում է խելահեղ բառեր.

— Մեր մահիճը կանաչն է։ Մայրիները՝ առաստաղ մեր վերև... համբուրիր ինձ քո շուրթերի համբույրով։ Գինուց լավ են քո փաղաքշանքները...

Քիչ անց Սուլամիթը պառկած է գլուխը Սողոմոնի կրծքին։ Նրա ձախ ձեռքը գրկել է աղջկան։

Թեքվելով ուղիղ նրա ականջին, թագավորը ինչ-որ բան է շշնջում նրան, թագավորը քնքշորեն ներողություն է խնդրում, և Սուլամիթը շիկնում է նրա խոսքերից ու փակում աչքերը։ Հետո ամոթխածության անպատմելի չքնաղ ժպիտով նա ասում է.

— Եղբայրներս ինձ կարգել են այգին հսկելու... Իսկ իմ այգին ես չպահեցի։

Բայց Սողոմոնը բռնում է նրա փոքրիկ թուխ ձեռքը և ջերմորեն հպում շրթունքներին։

— Դու չե՞ս ափսոսում դրա համար, Սուլամիթ։

— Օ ո՜չ, իմ թագավոր, իմ սիրեցյալ, ես չեմ ափսոսում։ Եթե դու հենց հիմա վեր կենայիր ու գնայիր իմ մոտից, և եթե ես դատապարտված լինեի հետո երբեք քեզ չտեսնելու, ես մին-

չև կյանքիս վերջը շնորհակալությամբ կարտասանեի քո անունը, Սողոմոն։

— Ասա ինձ էլի մի բան, Սուլամիթ... Միայն խնդրում եմ քեզ, ճիշտն ասա, իմ անարատ... Դու գիտե՞ր, թե ես ով եմ։

— Ոչ, ես հիմա էլ չգիտեմ։ Ես կարծում էի... Բայց ես ամաչում եմ խոստովանել... Ես վախենում եմ վրաս ծիծաղես։ Պատմում են, որ այստեղ, Վաթն-էլ-Խավ սարին երբեմն թափառում են հեթանոս աստվածներ... Նրանցից շատերն, ասում են, հրաշալի գեղեցկություն ունեն... Եվ ես մտածում էի՝ արդյոք դու Հորը չե՞ս, Օզիրիսի որդին, կամ մի ուրիշ աստված։

— Ոչ, ես միայն թագավոր եմ, սիրեցյալս։ Բայց ահա այստեղ ես համբուրում եմ արևից այրված քո անուշիկ ձեռքը և երդվում եմ քեզ, որ դեռ երբեք՝ ոչ պատանության առաջին սիրային տանջանքներիս ժամանակ, ոչ իմ փառքի օրերին իմ սիրտը չի վառվել այնպիսի անհագ ցանկությամբ, որն արթնացնում է իմ մեջ քո մի ժպիտը, քո հուր վարսերի մի հպումը, քո ալ կարմիր շուրթերի մի գիծը։ Դու գեղեցիկ ես, ինչպես Կեդարու վրանները, ինչպես վարագույրները Սողոմոնի տաճարում։ Քո փաղաքշանքներն արբեցնում են ինձ։ Ահա քո ստինքները՝ դրանք բուրավետ են։ Քո պտուկները գինու պես են։

— Օ, այո, նայիր, նայիր ինձ, սիրեցյալդ իմ։ Քո աչքերը հուզում են ինձ։ Օ, ի՞նչ ուրախություն է. չէ՞ որ ինձ, ինձ է ուղղված քո ցանկությունը։ Քո մազերն անուշաբույր են։ Դու պառկած ես ինչպես զմուռսի փնջիկ իմ ստինքների միջև։

Ժամանակը դանդաղեցնում է իր հոսքը և փակվում է նրանց վերև արևի շրջանակով։ Նրանց մահիճը կանաչ է, կտուրը՝ մայրիները, պատերը՝ նոճիները։ Եվ նրանց վրանի վերև սերն է դրոշը։

7

Թագավորի պալատում ավազանն ութանկյունի էր, զով ավազանը՝ սպիտակ մարմարից։ Մուգ կանաչ մալախիտե աստիճաններն իջնում էին դեպի նրա հատակը։ Նրան շրջանակ էր ծառայում հազիվ նկատելի վարդագույն երակներով ձյունասպիտակ եգիպտական հասպիսի երեսպատումը։ Լավագույն սև փայտն էր օգտագործվել պատերի դրվագման վրա։ Վարդագույն սարդիոնե չորս առյուծի գլուխ բարակ շիթերով ջուր էին ցայտում ավազանի մեջ։ Սիդոնյան ընտիր վարպետների ձեռքով հղկած արծաթե մարդահասակ ութ հայելի էր ամրացված պատերին, թեթև սպիտակ սյուների միջև։

Նախքան Սուլամիթը կմտներ ավազան, երիտասարդ սպասուհիները նրա մեջ բուրավետ լուծույթներ լցրին և դրանից ջուրը սպիտակեց, կապտագունեց ու երփին տվեց կաթնագույն արևակնի գունախաղով։ Սուլամիթին հանվեցնող ստրկուհիները հիացմունքով նայում էին նրա մարմնին, և երբ հանվեցրին, հայելուն մոտեցրին նրան։ Ոչ մի արատ չուներ հասուն պտղի պես ոսկե աղվամազով ոսկեզօծված նյա սքանչելի մարմինը։ Իսկ նա, հայելու մեջ նայելով իր մերկ մարմնին, շշնջում էր ու մտածում.

«Այս ամենը քե՞զ համար է, իմ թագավոր»։

Նա ավազանից դուրս եկավ թարմ, սառնուկ, անուշաբույր, ջրի դողդոջուն կաթիլներով պատած։ Ստրկուհիները նրան հագցրին եգիպտական նրբագույն վուշից սպիտակ կարճ շապիկ և այնպիսի փայլուն ոսկեգույն սարդոնյան թանկարժեք բեհեզյա պատմուճան, որ թվում էր, զգեստը արևի ճառագայթներից է հյուսված։ Նրանք Սուլամիթի ոտքերին մատղաշ ուլիկի կաշվից կարած կարմիր սանդալներ հագցրին, չորացրին նրա մուգ հրավառ գանգուրները և դրանց մեջ խոշոր սև մարգարտի թելեր հյուսեցին և նրա ձեռքերը զարդարեցին զրնգուն ապարանջաններով։

Այդպիսի զուգսերով նա ներկայացավ Սողոմոնի առաջ և թագավորը բացականչեց խնդագին.

— Այս ո՞վ է, որ արշալույսի պես շողշողուն է, լուսնի պես գեղեցիկ, արևի պես պայծառ։ Օ Սուլամիթ, քո գեղեցկությունն ավելի ահեղ է, քան պարզած դրոշներով զորագնդերը։ Յոթ հարյուր կին եմ ունեցել ես և երեք հարյուր հարճ ու անհամար աղջիկներ, բայց միակը դու ես, իմ սքանչելի։ Քեզ կտեսնեն թագուհիները և կփառաբանեն քեզ, և քեզ կխոնարհվեն հարճերը, և քեզ կգովաբանեն աշխարհի բոլոր կանայք։ Օ Սուլամիթ, այն օրը, երբ դու դառնաս իմ կինը և թագուհին, իմ սրտի համար ամենաերջանիկ օրը կլինի.

Իսկ Սուլամիթը մոտեցավ ձիթենապատ քանդակազարդ դռանը և, այտը նրան հպելով. ասաց.

— Ես ուզում եմ միայն քո ստրկուհին լինել, Սողոմոն։ Ահա ես իմ ականջը հպել եմ դռանդուն։ Եվ խնդրում եմ քեզ՝

ըստ Մովսեսի Օրենքի, մեխիր ականջս ի նշան իմ կամավոր ստրկության քո առաջ։

Այն ժամանակ Սողոմոնը հրամայեց իր գանձարանից բերել երկարավուն տանձի ձևով մշակված մուգ կարմիր ազնիվ կարկեհանե թանկագին ականջօղերը։ Նա ինքը դրանք անցկացրեց Սուլամիթի ականջներին ու ասաց.

— Իմ սիրածը ինձ է պատկանում, իսկ ես նրան։

Եվ Սուլամիթի ձեռքից բռնած նրան տարավ խրախճանքի դահլիճը, որտեղ արդեն սպասում էին նրա բարեկամներն ու մերձավորները։

8

Յոթ օր էր անցել այն առավոտից, երբ Սուլամիթը ոտք էր դրել թագավորական պալատ։ Յոթ օր նա ու թագավորը վայելում էին սերը և չէին կարող հագենալ սիրուց։

Սողոմոնը սիրում էր իր սիրեցյալին զարդարել թանկարժեք իրերով։ «Ի՞նչ վայելչակազմ են սանդալ հագած քո փոքրիկ ոտքերը»,— բացականչում էր նա հիացմունքով և, ծունկի գալով նրա առաջ, հերթով համբուրում էր նրա ոտքերի մատները և դրանց վրա անցկացնում էր մատանիներ այնպիսի սքանչելի ու հազվագյուտ քարերով, որպիսիք չկային նույնիսկ քահանայապետի եփուտի վրա։ Սուլամիթը լսում էր նրան հափշտակված, երբ Սողոմոնը նրան պատմում էր քարերի ներքին բնության մասին, նրանց կախարդական հատկությունների ու խորհրդավոր նշանակությունների մասին։

— Ահա անթրաքսը՝ Օփեր երկրի սրբազան քարը,— ասում էր թագավորը։— Նա տաք է ու խոնավ, նայիր, նա կարմիր է ինչպես արյուն, ինչպես իրիկնային վերջալույսը, ինչպես նռան բացված ծաղիկը, ինչպես Ենգադդիի խաղողի այգիների թանձր գինին, ինչպես քո շրթունքները, իմ Սուլամիթ, ինչպես քո շրթունքները առավոտյան, սիրո գիշերից հետո։ Սա սիրո, ցասման ու արյան քարն է։ Տենդից տոչորվող կամ ցանկությունից արբեցած մարդու ձեռքին նա ավելի տաք է դառնում ու վառվում է կարմիր բոցով։ Ձեռքդ անցկացրու սա, իմ սիրեցյալ և կտեսնես, թե ինչպես կրոնկվի։ Եթե փշրես, փոշի դարձնես ու ջրով խմես, դեմքին կարմրություն է տալիս, հանգստացնում է ստամոքսը և զվարթացնում հոգին։ Սրա կրողը իշխանություն է ձեռք բերում մարդկանց վրա։ Սա դարմանում է սիրտը, ուղեղն ու հիշողությունը։ Բայց երեխաների ներկայությամբ չպետք է կրել, որովհետև նա իր շուրջը սիրային կրքեր է արթնացնում։

Ահա պղնձականաչ գույնի մի թափանցիկ քար։ Եթովպացիների երկրում, որտեղ արդյունահանում են, դրան Մգնադիս-Ֆզա են ասում։ Դա ինձ նվիրել է իմ կնոջ՝ Աստիս թագուհու հայրը, Եգիպտոսի փարավոն Սուսակիմը, որին սա բաժին էր ընկել մի գերի թագավորից։ Դու տեսնում ես՝ այս քարը գեղեցիկ չէ, բայց գինը անհաշվելի է, որովհետև աշխարհում միայն չորս մարդ են տիրում Մգնադիս-Ֆզա քարին։ Նա արծաթը իրեն ձգելու արտասովոր հատկություն ունի, ասես ագահ ու արծաթասեր մարդ լինի։ Ես քեզ եմ նվիրում սա, իմ սիրեցյալ, որովհետև դու անշահասեր ես։

Նայիր, Սուլամիթ, այս շափյուղաներին։ Դրանցից մի քանիսը գույնով նման են ցորենի արտում բուսնող տերեփուկի, մյուսները՝ աշնանային երկնքի, մի քանիսն էլ ծովին են նման՝ պարզ եղանակին։ Սա կուսության քարն է՝ սառն ու մաքուր։ Հեռավոր ու ծանր ճանապարհորդության ժամանակ սա բերանն են դնում՝ ծարավը հագեցնելու համար։ Նաև բուժում է բորը և ամեն տեսակ չար ուռուցքներ։ Մտքերին պայծառություն է տալիս։ Հռոմում Յուպիտերի քուրմերը դա ցուցամատին են դնում։

Բոլոր քարերի արքան Շամիր քարն է։ Հույները դրան Ադամաս են ասում, որ նշանակում է անհաղթելի։ Նա աշխարհի բոլոր նյութերից կարծր է և անվնաս է մնում ամենաուժեղ կրակի մեջ։ Դա հողի մեջ թանձրացած արևի լույսն է, որ սառեցրել է ժամանակը։ Նայիր ու հիացիր, Սուլամիթ, նա խաղում է բոլոր գույներով, իսկ ինքը մնում է ջրի կաթիլի պես թափանցիկ։ Նա շողում է գիշերվա խավարում, բայց նույնիսկ ցերեկը կորցնում է իր լույսը մարդասպանի ձեռքին։ Շամիրը կապում են երկունքի ծանր ցավերից տանջվող կնոջ ձեռքին, նմանապես իրենց ձախ ձեռքին են դնում զինվորները մարտի գնալիս։ Շամիրը ցրում է դեմքի խայտաբղետ գույնը, մաքրում է շնչառությունը, լուսնոտներին հանգիստ քուն է տալիս և քրտնում է թույնի մոտիկ հարևանությունից։ Շամիր քարերը լինում են արու և էգ, հողում խորունկ թաղված՝ նրանք ընդունակ են բազմանալու։

Լուսնաքարը՝ գունատ ու հեզ, ինչպես լուսնի փայլը, խալդական ու բաբելական մոգերի քարն է։ Գուշակություն անելուց առաջ նրանք այդ քարը դնում են լեզվի տակ, և դա նրանց ապագան գուշակելու ձիրք է հաղորդում։ Այդ քարը խորհրդավոր կապ ունի լուսնի հետ, որովհետև լիալուսնի ժամանակ սառնանում է և ավելի պայծառ է շողում։ Բարենպաստ է կնոջ համար այն տարին, երբ նա երեխայից հասուն աղջիկ է դառնում։

Այս զմրուխտակն մատանին դու շարունակ դրած պահիր, սիրեցյալս, որովհետև զմրուխտը Սողոմոնի, Իսրայելի թագավորի, սիրած քարն է։ Սա կանաչ է, մաքուր, զվարթ ու քնքուշ, ինչպես գարնանային կանաչ խոտը, և երբ երկար նայում ես, սիրտդ պայծառանում է։ Եթե դրան առավոտվանից նայես, ապա ամբողջ օրը քեզ համար թեթև կանցնի։ Քո գիշերային անկողնի վերև եա զմրուխտ կկախեմ, սքանչելիդ իմ, թող նա քեզնից հեռու վանի վատ երազները, մեղմացնի սրտիդ զարկերը և հեռացնի սև մտքերը։ Ով որ զմրուխտ է կրում, նրան չեն մոտենում օձերն ու կարիճները, իսկ եթե զմրուխտը օձի աչքերի առաջ պահես, ապա օձի աչքերից ջուր կգա ու կհոսի այնքան ժամանակ, մինչև որ կուրանա։ Մեծած զմրուխտը ուղտի տաք կաթով տալիս են թույնից թունավորված մարդուն, որպեսզի թույնը դուրս գա քրտինքի հետ. վարդայուղի հետ խառնած զմրուխտը դարմանում է թունավոր օձի կծածը, իսկ զաֆրանի հետ տրորած երբ դնում են հիվանդի աչքերին՝ բուժում է հավկուրությունը. նա օգնում է նաև արյունային լուծի ու սև հաղի ժամանակ, որը բուժելի չէ մարդկային ոչ մի միջոցով։

Թագավորը իր սիրեցյալին նվիրում էր նաև Լիբիայի լեռնափեշերի անտառներում ծաղկող վաղ գարնան մանուշակների գույնին նմանող լիբիական մեղեսիկներ, որոնք քամիներ սանձելու, չարությունը մեղմելու, արբեցումից պաշտպանելու և վայրի գազանների որսին օգնելու հրաշալի հատկություն ունեին. Պերսեպոլսի փիրուզ, որը երջանկություն է բերում սիրո մեջ, դադարեցնում է ամուսինների գժտությունը, վանում է թագավորի ցասումը և օգնում է ձիավարժության ու վաճառքի ժամանակ. և կատվի աչք, որը պաշտպանում է իր տիրոջ կայքը, միտքն ու առողջությունը, և գունատ ափամերձ ջրի պես կապտականաչ բյուրեղ, որը աչքի հատի ու բոլի դեղ է, բարի ուղեկից պանդուխտներին. և բազմերանգ ակաթ՝ դրա կրողը չի

վախենում թշնամիների բանսարկությունների և խուսափում է երկրաշարժի ժամանակ քարի տակ մնալու վտանգից. և կայծակի հարվածը վանող նեֆրիտ՝ երիկամնային քար. և խնձորագույն, պղտոր թափանցիկ եղնգնաքար՝ տիրոջը կրակից ու խելագարությունից պահպանող. և հասպիս, որը հարկադրում է գազաններին վախից դողալ. և պերճախոսություն տվող սև ծիծեռնաքար, և հղի կանանց կողմից հարգված արծվաքար, որ արծիվներն իրենց բույնն են դնում, երբ գալիս է նրանց ճտերի ձվից դուրս գալու ժամանակը. և փոքրիկ արևների պես շողացող զաբերզատ՝ Օփերից. և դեղնականաչ խրիսոլիթ՝ վաճառականների ու ջոջերի բարեկամը. և թագավորների ու թագուհիների կողմից սիրված սարդիոն. և մանուշակագույն լիգիրիոն. ինչպես հայտնի է, այն գտնում են պատերի միջով անցամ տեսնող սրատես լուսանների ստամոքսում, ուստի դրանց տերերը նույնպես աչքի են ընկնում սրատեսությամբ. բացի այդ, նա կանգնեցնում է քթի արյունահոսությունը և բուժում է բոլոր վերքերը, բացառությամբ քարի ու երկաթի հասցրած վերքերի։

Թագավորը Սուլամիթի վրին գցում էր մեծարժեք մանյակներ մարգարտից, որը նրա հպատակները որսում էին Պարսից ծովում, և մարգարիտը նրա մարմնի ջերմությունից կենդանի փայլ ու նուրբ գույն էր ստանում։ Եվ մարջանները ավելի կարմիր էին դառնում նրա թուխ կրծքին, և նրա մատներին կենդանություն էր ստանում փիրուզը, և նրա ձեռքերին ճարճատուն կայծեր էին արձակում այն դեղին սաթե զարդաբանքները, որոնք հեռավոր հյուսիսային ծովերի ափերից Սողոմոնին նվեր էին բերում Տյուրոսի Քիրամ թագավորի խիզախ նավորդները։

Անթառամ ծաղկով ու շուշանով էր պատում Սուլամիթը իր մահիճը, երբ պատրաստվում էր գիշերվան, և, հանգչելով նրա կրծքին, թագավորն ասում էր սրտի ուրախությամբ.

— Դու նման ես արքայական մակույկի Օփեր երկրում, օ՜ իմ սիրեցյալ, ոսկե թեթև մակույկի, որը լողում է օրորվելով, ոպիտակ անուշաբույր ծաղիկների միջով։

Այսպես այցելեց Սողոմոնին՝ թագավորներից մեծագույնին և իմաստուններից իմաստնագույնին նրա առաջին և վերջին սերը։

Շատ դարեր են անցել այդ ժամանակներից։ Եղել են թագավորություններ ու թագավորներ, և նրանցից հետք չի մնացել,

ինչպես անապատի վրայով անցած հողմից։ Եղել են երկարատև ու անխնա պատերազմներ, որոնցից հետո զորահրամանատարների անունները արյունալի աստղերի պես շողացել են դարերում, բայց ժամանակը ջնջել է նույնիսկ բուն հիշողությունը նրանց մասին։

Այնինչ խաղողի այգու աղքատ աղջկա և մեծ թագավորի սերը երբեք չի անցնի և չի մոռացվի, որովհետև մահվան պես զորավոր է սերը, որովհետև ամեն մի կին, որը սիրում է, թագուհի է, որովհետև սերը գեղեցիկ է։

9

Յոթ օր էր անցել այն ժամանակից, երբ Սողոմոնը՝ բանաստեղծ, իմաստուն ու թագավոր Սողոմոնը իր պալատը բերեց լուսաբացին խաղողի այգում իրեն հանդիպած աղքատ աղջկան։ Յոթ օր վայելում էր թագավորը նրա սերը և չէր կարողանում հագենալ։ Եվ մեծ ուրախությունը, ասես արևի ոսկե փայլը, լուսավորում էր նրա դեմքը։

Պայծառ, տաք, լուսնյակ գիշերներ էին՝ սիրո քաղցր գիշերներ։ Վագրի մորթիներից պատրաստված անկողնում պառկում էր մերկ Սուլամիթը, և թագավորը, նրա ոտքերի մոտ հատակին նստած, Մարեռիսից բերած իր զմրուխտե գավաթը ոսկեռն գինի էր լցնում ու խմում իր սիրեցյալի կենացը, ամբողջ սրտով ուրախանալով, և նրան պատմում էր իմաստուն, հնամենի զարմանալի ասքեր։ Եվ Սուլամիթի ձեռքը հանգչում էր նրա գլխին, շոյում էր նրա գանգուր սև մազերը։

— Ասա ինձ, իմ արքա,— մի անգամ հարցրեց Սուլամիթը,—զարմանալի չէ՞ արդյոք, որ ես քեզ սիրեցի այսպես անսպասելի։ Ես հիմա մտաբերում եմ ամեն ինչ, և ինձ թվում է, որ ես սկսեցի քեզ պատկանել առաջին իսկ ակնթարթից, երբ դեռ չէի հասցրել քեզ տեսնել, այլ միայն լսել էի քո ձայնը։ Իմ սիրտը թրթռաց ու բացվեց քեզ ընդառաջ, ինչպես ծաղիկն է բացվում ամառային գիշերվա ժամանակ հարավային քամուց։ Ինչո՞վ գերեցիր դու ինձ, իմ սիրեցյալ։

Եվ թագավորը, գլուխը մեղմիվ թեքելով Սուլամիթի նուրբ ծնկներին, փաղաքուշ ժպտաց ու պատասխանեց։

— Հազարավոր կանայք քեզանից առաջ, օ իմ սքանչելի,

իրենց սիրելիներին տվել են այդ հարցը, և քեզանից հաջորդ բազմաթիվ տարիներ հետո այդ մասին հարցնելու են իրենց սիրելիներին։ Աշխարհում երեք բան կա ինձ համար անիմանալի, և չորրորդ բանն էլ ես չեմ ըմբռնում՝ արծվի ճանապարհը երկնքում, օձինը ժայռի վրա, նավինը ծովի մեջ և տղամարդու ճանապարհը դեպի կնոջ սիրտը։ Սա իմ իմաստությունը չէ, Սուլամիթ, սրանք Ագուրի, Իաքինի որդու խոսքերն են, որ նրանից լսել են աշակերտները։ Բայց հարգենք նաև ուրիշի իմաստությունը։

— Այո,— մտախոհ ասաց Սուլամիթը, —կարող է պատահել իսկապես, որ մարդ երբեք դա չի հասկանա։ Այսօր խնջույքի ժամանակ իմ կրծքին ստաշխի անուշաբույր հյուսվածք կար։ Բայց դու սեղանից հեռացար, և իմ ծաղիկները դադարեցին բուրելուց։ Ինձ թվում է, որ քեզ պետք է սիրեն. օ թագավոր, թե կանայք, թե տղամարդիկ, թե գազանները, թե նույնիսկ ծաղիկները։ Ես հաճախ եմ մտածում ու չեմ կարողանում հասկանալ՝ ինչպե՞ս կարելի է սիրել մեկ ուրիշին բացի քեզնից։

— Եվ բացի քեզնից, բացի քեզնից, Սուլամի՜թ։ Ամեն ժամ ես շնորհակալ եմ լինում աստծուց, որ նա ուղարկել է քեզ իմ ճանապարհին։

— Ես հիշում եմ, ես նստել էի պատի քարին և դու քո ձեռքը դրեցիր իմ ձեռքի վրա։ Կրակ հոսեց իմ երակներով, գլուխս պտտվեց։ Ես ինձ ասացի. «Ահա ով է իմ տեր իշխանը, ահա ով է իմ թագավորը, իմ սիրեցյա՜լը»։

— Ես հիշում եմ, Սուլամիթ, թե դու ինչպես շրջվեցիր իմ կանչի վրա։ Բարակ հանդերձիդ տակին ես տեսա քո մարմինը, քո չքնաղ մարմինը, որը ես սիրում եմ, ինչպես աստծուն ես սիրում եմ քո մարմինը՝ ոսկե աղվամազով ծածկված, ասես արևը նրա վրա թողել է իր համբույրը։ Դու բարեկազմ ես, ինչպես փարավոնի կառքին լծած զամբիկը, դու հիասքանչ ես, ինչպես Ամինադաբի կառքը։ Քո աչքերն ասես երկու աղավնի են ջրերի ակունքի մոտ նստած։

— Օ սիրելիս, քո խոսքերը ալեկոծում են ինձ։ Քո ձեռքն անուշ այրում է ինձ։ Օ իմ թագավոր, քո ոտքերը մարմարե սյուների պես են։ Քո որովայնը ասես շուշաններով պատած ցորենի խուրձ լինի։

Շրջապատված, լուսավորված լուսնի կաթնագույն լույսով, նրանք մոռանում էին տեղն ու ժամանակը, և ահա անցնում

էին ժամերը, և նրանք զարմանքով նայում էին, թե ինչպես ննջարանի վանդակապատ լուսամուտներից նայում է վարդագույն արշալույսը։

Մի անգամ Սուլամիթն ասաց նաև.

— Դու գիտեցել ես, իմ սիրեցյալ, անթիվ կանանց և աղջիկների, և նրանք բոլորը եղել են աշխարհի ամենագեղեցիկ կանայք։ Ես ամաչում եմ, երբ մտածում եմ իմ մասին՝ մի հասարակ, անկիրթ աղջկա, և արևից այրված իմ խեղճ մարմնի մասին։

Բայց, իր շրթունքները կպցնելով նրա շրթունքներին, թագավորը ասում էր անսահման սիրով ու շնորհակալությամբ.

— Դու թագուհի ես, Սուլամիթ։ Դու ծնվել ես որպես իսկական թագուհի։ Դու համարձակ ու շռայլ ես սիրո մեջ։ Ցոթ հարյուր կին ունեմ ես և երեք հարյուր հարճ, և աղջիկներ եմ ճանաչել անհամար, բայց դու իմ միակ, իմ հեզիկ, ամենագեղեցիկն ես կանանցից։ Ես քեզ գտա այնպես, ինչպես ջրասուզակը պարսից ծոցում բազմաթիվ զամբյուղներ է լցնում դատարկ խեցիներով ու էժանագին մարգարիտներով, նախքան ծովի հատակից կգտնի արքայական թագին վայել մի պերճ մարգարիտ։ Մանկիկս, հազար անգամ կարող է սիրել մարդ, բայց միայն մի անգամ է սիրում նա։ Բյուր-բյուրավոր մարդիկ կարծում են, թե իրենք սիրում են, բայց նրանցից միայն երկուսին է աստված սեր ուղարկում։ Եվ երբ դու ինձ տրվեցիր այնտեղ, նոճիների մեջ, մայրի ծառերի ծածկի ներքո, կանաչ անկողնի վրա, ես սրտանց շնորհակալ էի աստծուց, որ այդքան ողորմած էր դեպի ինձ։

Էլի մի անգամ հառցրեց Սուլամիթը.

— Ես գիտեմ, որ նրանք բոլորը սիրում էին քեզ, որովհետև քեզ չսիրել չի կարելի։ Սաբայի թագուհին քեզ մոտ էր գալիս իր երկրից։ Ասում են, որ հա երբևէ աշխարհում եղած բոլոր կանանցից ամենարմաստունն ու ամենագեղեցիկն էր։ Ասես երազի պես հիշում եմ նրա քարավանները։ Չգիտեմ ինչու, բայց ամենավաղ մանկությունից ինձ ձգում էին նշանավոր մարդկանց կառքերը։ Ես այն ժամանակ յոթ կամ ութ տարեկան էի, ես հիշում եմ ոսկե հեծելասարքով ուղտերին, ծիրանեգույն տապճակներով ծածկված, ծանր բեռների տակ կքված. հիշում եմ ականջների միջև ոսկե բոժոժներով ջորիներին, հիշում եմ ծիծաղաշարժ կապիկներին արծաթե վանդակներում և հիասքանչ սիրամարգներին. ծառաների բազմությունն էր գնում սպիտակ ու երկթագույն զգեստներով. նրանք կարմիր ժապավեններից բռնած տանում էին ձեռնասուն վագրերի ու լուսանների։ Ես ընդամենը ութ տարեկան էի։

— Օ մանկիկ, դու այն ժամանակ ընդամենը ութ տարեկան էիր,— թախիծով ասաց Սողոմոնը։

— Դու նրան ավելի՞ էիր սիրում, քան ինձ, Սողոմոն։ Ինձ մի բան պատմիր նրա մասին։

Եվ թագավորը նրան ամեն ինչ պատմեց այդ զարմանալի կնոջ մասին։ Շատ բան լսած լինելով Իսրայելի թագավորի իմաստնության ու գեղեցկության մասին, նա իր երկրից հարուստ պարգևներով ժամանել է նրա մոտ, ցանկանալով փորձել նրա իմաստությունը և նվաճել նրա սիրտը։ Դա մի փարթամ քառասնամյա կին էր, որն արդեն սկսել էր թառամել։ Բայց կախարդական գաղտնի միջոցներով նա հասնում էր այն բանին, որ նրա գիրանալ սկսող մարմինը աղջկա մարմնի պես բարեկազմ ու ճկուն էր թվում, իսկ դեմքը ահավոր, ոչ-մարդկային գեղեցկության կնիք էր կրում։ Բայց նրա իմաստությունը սովորական մարդկային իմաստություն էր, այն էլ մանրախնդիր կանացի իմաստություն։

Ուզենալով թագավորին փորձել հանելուկներով, սկզբում նրա մոտ ուղարկեց հիսուն պատանի ամենաքնքուշ հասակում և հիսուն աղջիկ։ Նրանց բոլորին այնպես հնարամտորեն միանման զգեստներ էին հագցրել, որ ամենասուր աչքն էլ չէր պարզի նրանց սեռը։ «Ես քեզ իմաստուն կանվանեմ, թագավոր,— ասաց Բաղքիսը,— եթե դու ինձ ասես, թե նրանցից որն է աղջիկ, որը տղա»։

Բայց թագավորը ծիծաղեց և հրամայեց ուղարկված ամեն մի տղայի ու աղջկա առանձին-առանձին արծաթե թաս ու սափոր տալ լվացվելու համար։ Եվ մինչդեռ տղաները համարձակորեն ջուրը ձեռքերով շաղ էին տալիս ու բռերով նետում իրենց երեսներին, աղջիկները վարվում էին այնպես, ինչպես միշտ անում են կանայք լվացվելիս։ Նրանք քնքշորեն ու խնամքով ջրով շփում էին ամեն մի ձեռքը, մոտեցնելով աչքերին։

Այդպես հասարակ ձևով լուծեց թագավորը Բաղքիս-Մակեդայի առաջին հանելուկը։

Հետո նա Սողոմոն թագավորին ուղարկեց կաղինի մեծության մի ալմաստ։ Այդ քարի մեջ կար մի բարակ, շատ գալարապտույտ ճեղք, որը նեղլիկ բարդ ճանապարհի նման անց-

նում էր ամբողջ քարի միջով։ Պետք էր այդ ալմաստի միջով մետաքսաթել անցկացնել։ Եվ իմաստուն թագավորը այդ անցքի մեջ բաց է թողնում շերամի որդը, որը անցնելով դեպի դուրս, իր ետևից նրբագույն մետաքսաթել է թողնում։

Գեղեցկուհի Բաղքիսը Սողոմոն թագավորին է ուղարկում նաև սարդոնիքսից քանդակած մի մեծարժեք գավաթ, արվեստի հոյակապ մի գործ։ «Այս գավաթը քոնը կլինի,— հրամայել է նա՝ ասել թագավորին,— եթե դա լցնես ոչ երկրից՝ ոչ երկնքից վերցրած հեղուկով։ Իսկ Սողոմոնը անոթը լցնելով հոգնած ձիու մարմնից թափվող փրփուրով, հրամայում է դա տանել թագուհուն։

Նման շատ հանելուկներ էր առաջարկում թագուհին Սողոմոնին, բայց չէր կարողանում ստորացնել նրա իմաստությունը և գիշերային հեշտասիրության բոլոր գաղտնի հմայքներով չկարողացավ պահպանել նրա սերը։ Եվ երբ վերջապես նա ձանձրացրեց թագավորին, Սողոմոնն անգթորեն, վիրավորական ձևով ծաղրեց նրան։

Բոլորին հայտնի էր, որ Սաբայի թագուհին ոչ ոքի ցույց չէր տալիս իր ոտքերը, դրա համար էլ մինչև գետին հասնող երկար զգեստ էր հագնում։ Նույնիսկ սիրային փաղաքշանքների ժամին նա ոտքերը հագուստով պինդ փաթաթած էր պահում։ Այդ առթիվ շատ տարօրինակ ու ծիծաղաշարժ պատմություններ էին հորինվել։

Ոմանք հավատացնում էին, թե թագուհու ոտքերը այծի մազակալած ոտքեր են, ուրիշներ երդվում էին, որ ներբաններին փոխարեն նա սագի թաղանթավոր թաթեր ունի։ Եվ նույնիսկ պատմում էին այն մասին, որ Բաղքիս թագուհու մայրը մի անգամ լողանալուց հետո նստել է ավազին, որտեղ հենց նոր ժամանակավորապես սագ դարձած ինչ-որ աստված թողել է իր սերմը, և որ այդ պատահականությունից նա հղացել է Սաբայի գեղեցկուհի թագուհուն։

Եվ ահա մի անգամ Սողոմոնը հրամայում է իր սենյակներից մեկում տակը դատարկ տարածությամբ բյուրեղյա թափանցիկ հատակ սարքել, որտեղ ջուր են լցնում ու կենդանի ձկներ բաց թողնում։ Այդ ամենը այնպիսի արտասովոր արվեստով էր արված, որ չնախազգուշացված մարդը ոչ մի դեպքում չէր նկատի ապակին և երդում կտար, որ իր առջև մաքուր թարմ ջրով լի ավազան է։

Եվ երբ ամեն ինչ պատրաստ էր, Սողոմոնը տեսակցության է հրավիրում իր արքայական հյուրին։ Պերճափայլ շքախմբով շրջապատված, նա անցնում է Լիբանանյան տան սենյակներով և հասնում է նենգ ջրավազանին։ Նրա մյուս ծայրին նստած է թագավորը ոսկու և թանկագին քարերի մեջ շողալով ու սև աչքերի սիրալիր հայացքով։ Դուռը բացվում է թագուհու առջև, նա մի քայլ է անում առաջ, բայց ճիշ է արձակում և...

Սուլամիթը ծիծաղում է մանկական զվարթ ծիծաղով ու ծափ տալիս։

— Նա կռանում է ու բարձրացնում շո՞րը,— հարցնում է Սուլամիթը։

— Այո, իմ սիրեցյալ, նա վարվեց այնպես, ինչպես կվարվեր ամեն մի կին։ Նա բարձրացրեց իր զգեստի փեշը, ու թեև դա տևեց ընդամենը մի ակնթարթ, բայց թե ես, թե իմ ողջ արքունիքը տեսավ, որ Սաբայի գեղեցկուհի թագուհի Բաղքիս-Մակեդայի ոտքերը սովորական մարդկային ոտքեր են, բայց ծուռ են ու խիտ մազով ծածկված։ Հաջորդ օրն իսկ նա պատրաստվեց ճանապարհվելու, ինձ հրաժեշտ տվեց ու մեկնեց իր հոյակապ քարավանով։ Ես չէի ուզում նրան վիրավորել։ Նրա հետևից ես մի վստահելի սուրհանդակ ուղարկեցի, որին հրամայեցի թագուհուն հանձնել լեռնային հազվագյուտ խոտի մի տրցակ՝ մարմնի մազերը ոչնչացնելու լավագույն միջոցը։ Բայց նա ինձ վերադարձրեց իմ սուրհանդակի գլուխը թանկագին ծիրանուց կարած պարկի մեջ։

Սողոմոնը իր սիրեցյալին պատմում էր նաև իր կյանքից շատ բաներ, որ ուրիշ մարդկանցից ոչ ոք չգիտեր, և որ իր հետ գերեզման տարավ Սուլամիթը։ Նա նրան պատմում էր թափառումների երկար ու ծանր տարիների մասին, երբ իր եղբայրների ցասումից՝ Աբիսողոմի նախանձից ու Ադոնիայի խանդից փրկվելու համար ստիպված էր ուրիշի անվան տակ թաքնվել օտար երկրներում՝ սարսափելի աղքատություն ու զրկանքներ կրելով։ Նա պատմում էր, թե ինչպես հեռավոր անհայտ երկրում, երբ կանգնած էր շուկայում, սպասելով, որ իրեն վարձեն որևէ տեղ աշխատելու, նրան է մոտենում թագավորի խոհարարն ու ասում.

— Օտարական, օգնիր ինձ ձկներով այս զամբյուղը պալատ հասցնել։

Իր խելքով, ճարպկությամբ ու հմուտ վարվեցողությամբ Սո-

զոմանն այնքան է դուր գալիս պալատականներին, որ շուտով տեղավորվում է պալատում, իսկ երբ ավագ խոհարարը մեռնում է, ինքը գրավում է նրա տեղը։ Ապա Սողոմոնը խոսում է այն մասին, թե ինչպես թագավորի միակ աղջիկը, մի սքանչելի կրակոտ աղջիկ, թաքուն սիրահարվում է նոր խոհարարին, ինչպես ակամա բացում է նրա առաջ իր սերը, ինչպես մի անգամ գիշերը միասին փախչում են պալատից, ինչպես հասնում են նրանց ու նետ բերում, ինչպես Սողոմոնը մահվան է դատապարտվում և ինչպես նրան հրաշքով հաջողվում է զնդանից փախչել։

Ագահորեն լսում էր նրան Սուլամիթը, և երբ թագավորը ձայնը կտրում էր, ապա գիշերային լռության մեջ միանում էին նրանց շրթունքները, միահյուսվում էին ձեռքերը, հպվում կրծքերը։ Եվ երբ վրա էր հասնում առավոտը, և Սուլամիթի մարմինը փրփրավարդագույն էր թվում, և սիրո խոնջանքը կապույտ ստվեր էր գծում նրա սքանչելի աչքերի շուրջը, նա ասում էր քնքուշ ժպիտով.

— Թարմացրեք ինձ խնձորով, զորացրեք ինձ գինով, որովհետև ուժասպառ եմ սիրուց։

10

Վաթն-էլ-Խավ սարին Իզիսի տաճարում հենց նոր էր ավարտվել մեծ խորհրդավոր արարողության առաջին մասը, որին թույլատրվում էր ներկա գտնվել փոքր հաղորդության հավատացյալներին։ Հերթական քուրմը՝ սպիտակ զգեստով, սափրած գլխով անբեղ ու անմորուք մի զառամ ծերունի, տաճարի բեմից շրջվեց դեպի ժողովուրդն ու արտասանեց կամացուկ, հոգնած ձայնով.

— Մնացեք խաղաղությամբ որդիք իմ և դստերք։ Հավատի մեջ չանադիր եղեք ու գործունյա։ Փառաբանեցեք աստվածուհու անունը։ Նրա օրհնությունը ձեզ վրա լինի հավիտյանս հավիտենից։

Նա ձեռքերը տարածեց ժողովրդի վրա՝ օրհնելով նրան։ Եվ անմիջապես փոքր հաղորդության նվիրյալները գետին փռվեցին և ապա, վեր կենալով, կամացուկ, անձայն ուղղվեցին դեպի ելքը։

Այսօր եգիպտական ֆամենոտ ամսվա յոթերորդ օրն էր, նվիրված Օզիրիսի և Իզիսի խորհրդավոր ծիսակատարություններին։

Իրիկվանից հանդիսավոր թափորը ջահերով, արմավենու տերևներով ու մեծ սափորներով, աստվածների խորհրդավոր խորհրդանիշներով ու ֆալլուսի սրբազան պատկերներով երեք անգամ պտույտ էր գործել տաճարի շուրջը։ Թափորի մեջտեղում քրմերի ու երկրորդ մարգարեների ուսերին վեր էր բարձրանում մարգարիտով, փղոսկրով ու ոսկով զարդարած, թանկարժեք փայտից շինած փակ տապանակը։ Այստեղ կենում էր ինքն աստվածուհին, նա՝ Անտեսանելին, Պտղաբերություն տվողը, Խորհրդավորը, Աստվածների Մայրը, Քույրը և Կինը։

Ջարասիրտ Սեթը իր եղբորը՝ աստվածային Օզիրիսին գայթակղելով տարել էր խրախճանքի, խորամանկությամբ նրան հարկադրել էր պառկել շքեղ դագաղի մեջ և, նրա վրա շրխկացնելով կափարիչը, մեծ աստծու մարմնի հետ դագաղը գցել էր Նեղոսը։ Իզիսը, որը նոր էր ծնել Հորին, տխուր ու արցունքն աչքերին, ամբողջ աշխարհում փնտրում է իր ամուսնուն և երկար ժամանակ չի գտնում նրան։ Վերջապես ձկները պատմում են նրան, որ ալիքները դագաղը ծով են քշել ու ափ նետել Բիբլոսի մոտ, որտեղ նրա շուրջը բուսել է մի վիթխարի ծառ և իր ընի մեջ թաքցրել է աստծու դիակը և նրա լողացող տունը։ Այդ երկրի թագավորը հրամայում է այդ վիթխարի ծառից իր համար մի հզոր սյուն շինել, չիմանալով, որ նրա մեջ հանգչում է Օզիրիս աստվածն ինքը՝ մեծ կենսատուն։ Իզիսը գնում է Բիբլոս, այնտեղ է հասնում տապից, ծարավից ու քարքարոտ ճանապարհից ջատ հոգնած։ Նա դագաղն աղատում է ծառի միջուկից, իր հետ տանում ու հողում թաքցնում է քաղաքի պարսպի մոտ։ Բայց Սեթը նորից գաղտնի հափշտակում է Օզիրիսի մարմինը, բաժանում է տասնչորս մասի ու ցրում Վերին ու Ներքին Եգիպտոսի բոլոր քաղաքներում ու գյուղերում։

Ու նորից մեծագույն վշտով ու հեծյունով ճամփա է ընկնում Իզիսը որոնելու իր ամուսնու և եղբոր սրբազան մարմինը։ Նրա լացին իր տրտունջն է խառնում նրա քույրը, աստվածուհի Նեֆտիսը, և հզորազոր Թոտը, և աստվածուհու որդին՝ լուսապայծառ Հորը, Հորիզիտը։

Այսպիսին էր այսօրվա թափորի գաղտնի իմաստը սրբազան արարողության առաջին կեսին։ Հիմա, հասարակ հավատացյալների գնալուց ու մի փոքր հանգստից հետո պետք է կատարվեր խորհրդավոր ծիսակատարության երկրորդ մասը։ Տաճարում մնացին միայն բարձրագույն աստիճաններին ձեռնադրված-

ները՝ խորհրդապետները, հայեցողները, մարգարեներն ու քրմերը։

Սպիտակ զգեստ հագած պատանիները արծաթե սկուտեղների վրա մատուցում էին միս, հաց, չորացրած պտուղներ ու պելուզյան քաղցր գինի։ Ոմանք էլ՝ նեղվիզ տյուրոսյան անոթներից լցնում էին ցքի, որն այն ժամանակները մահապատժից ազատ տալիս էին հանցագործներին, նրանց մեջ արիություն արթնացնելու համար, բայց որը նաև մեծ հատկություն ուներ մարդկանց մեջ արթնացնելու ու պահպանելու սրբազան մոլագարության կրակը։

Հերթական քուրմի նշանով պատանիները հեռացան։ Դռնապան-քուրմը կողպեց բոլոր դռները։ Այնուհետև նա ուշադիր շրջանցեց բոլոր մնացածներին, լավ դիտելով դեմքերը և նրանց հարցաքննելով այս գիշերվա անցաբանը հանդիսացող խորհրդավոր խոսքերով։ Երկու ուրիշ քուրմ տաճարի երկարությամբ ու նրա յուրաքանչյուր սյան շուրջը պտտելով տարան արծաթե անիվավոր բուրվառը։ Կապույտ, թանձր, արբեցուցիչ, բուրավետ խունկով լցվեց տաճարը, և ծխի շերտերի միջով հազիվ էին երևում թափանցիկ քարերից պատրաստած կանթեղների՝ քանդակազարդ ոսկու մեջ ագուցված և արծաթե երկար շղթաներով առաստաղից կախած կանթեղների գույնզգույն լույսերը։ Վաղնջական ժամանակներում Օզիրիսի և Իզիսի այդ տաճարը աշքի էր ընկնում իր փոքր չափերով ու աղքատությամբ և քարանձավի պես փորված էր սարի խորքում։ Դրսից ստորգետնյա մի նեղ միջանցք էր տանում դեպի նա։ Բայց Սողոմոնի թագավորության օրերին, որը իր հովանավորության տակ էր վերցրել բոլոր կրոնները, բացի նրանցից, որոնք թույլ էին տալիս մանուկների զոհաբերությունը, և ծագումով եգիպտացի Աստիս թագուհու ջանադրության շնորհիվ տաճարն ընդարձակվեց դեպի խորքը ու դեպի վեր և զարդարվեց հարուստ ընծաներով։

Նախկին զոհասեղանը այդպես էլ մնացել էր անձեռնմխելի իր նախաստեղծ խստաշունչ պարզությամբ, նրան շրջապատող գանձերը, զոհաբերության առարկաներն ու սրբազան պատկանելիքը պահպանելու ծառայող, ինչպես նաև ամենաթաքուն խորհրդավոր խրախճանքների ժամանակ հատուկ գաղտնի նպատակների ծառայող սենյակներով։

Փոխարենը՝ արդարև հոյակապ էր արտաքին բակը իր մուրքերով՝ ի պատիվ Հաթոր աստվածուհու և քսանչորս սյուներից

բաղկացած քառակողմ սյունաշարով։ Ավելի ևս շքեղ էր կառուցված ներքին ստորգետնյա սյունազարդ դահլիճը աղոթողների համար։ Նրա խճանկար հատակը ամբողջովին զարդարված էր ձկների, գազանների, երկկենցաղների ու սողունների վարպետ պատկերներով։ Իսկ առաստաղը պատած էր երկնագույն ջնարակով, և դրա վրա շողում էր ոսկե արևը, փայլում էր արծաթ լուսինը, առկայծում էին անհամար աստղերը, և սավառնում էին թևատարած թռչունները։ Հատակը երկիրն էր, առաստաղը՝ երկինքը, իսկ հզոր ծառաբների պես կլոր ու բազմանկյուն սյուները դրանք միացնում էին իրար։ Եվ քանի որ բոլոր սյուներն ավարտվում էին լոտոսի քնքուշ ծաղկի կամ պապիրուսի բարակ փթթթների տեսք ունեցող խոյակներով, ապա դրանց վրա հանգչող առաստաղը իրոք թվում էր երկնքի պես թեթև ու օդեղեն։

Պատերը մինչև մարդահասակ բարձրության շարած էին կարմիր գրանիտե սալերով, որ Աստիս թագուհու ցանկությամբ բերված էին Թեբեից, որտեղ վարպետները կարողանում էին գրանիտին հայելանման ողորկություն ու զարմանալի փայլ տալ։ Ավելի բարձր, մինչև բուն առաստաղը, պատերը նույնպես, ինչպես և սյուները, երփին էին տալիս երկու Եգիպտոսների աստվածների խորհրդանիշ փորագիր ու գունազարդ պատկերներով։ Այստեղ էր Ֆայումեում պաշտվող Սեբեխը կոկորդիլոսի տեսքով և Թորը՝ լուսնի աստվածը, որ Խմունու քաղաքում պատկերվում էր եգիպտահավի տեսքով, և արևի աստված Հորը, որին Էդֆուում պոչուկ էր ձոնված, և կատվի տեսքով Բաստը Բուբաստից, Շուն՝ օդի աստվածը՝ առյուծի կերպարանքով, Պտան՝ Ապիսը, Հաթորը՝ զվարճության աստվածուհին՝ կովի կերպարանքով, Անուբիսը՝ զմռսման աստվածը՝ բորենու գլխով, և Հերմոնի Մոնտուն, և ղպտիների Մինուն, և երկնքի աստվածուհի Նեյտը Սաիսից և, վերջապես, խոյի կերպարանքով ահարկու աստվածը, որի անունը չէր արտասանվում և որին Խենտիմենտու էին կոչում, որ նշանակում է «Արևմուտքում ապրող»։

Կիսախավար զոհասեղանը բարձրանում էր ողջ տաճարի վրա և նրա խորքում ոսկու աղոտ փայլով փայլում էին Իզիսի պատկերները թաքցնող սրբավայրի պատերը։ Երեք դարպաս՝ մեծ, միջակ և երկու կողքային փոքրիկ դարպաս, տանում էին դեպի սրբավայր։ Միջին դարպասի առաջ զոհարանն էր, եթովպական օբսիդիան քարից շինած սրբազան դանակով։ Աստիճանները

տանում էին դեպի բեմ, և նրանց վրա տեղավորվել էին կրտսեր քուրմերն ու քրմուհիները՝ ծնծղաներով, քշոցներով, սրինգներով ու դափերով։

Աստիս թագուհին ընկողմանել էր մի փոքրիկ գաղտնի սենյակում։ Ծանր վարագույրներով քողարկված քառակուսի անցքը բացվում էր ուղղակի բեմի վրա և թույլ էր տալիս առանց իր ներկայությունը մատնելու հետևել սրբազան արարողության բոլոր մանրամասներին։ Վուշի շղարշե թեթև նեղ զգեստը պարուրում էր թագուհու մարմինը, մերկ թողնելով թևերը՝ մինչև ուսերը և ոտքերը՝ մինչև սրունքների կեսը։ Թափանցիկ կտորի տակից վարդագույն ցոլանում էր նրա մաշկը և երևում էին նրա բարեկազմ մարմնի բոլոր մաքուր ու գիրգ գծերը, և նա մինչև հիմա, չնայած թագուհու երեսնամյա տարիքին, չէր կորցրել իր ճկունությունը, գեղեցկությունն ու թարմությունը։ Նրա կայտառ ներկած մազերը արձակ թափվում էին ուսերին ու թիկունքին, և դրանց ծայրերը զարդարված էին անհամար անուշաբույր գնդիկներով։ Նրա դեմքը թանձր շպարված էր կարմիր ու սպիտակ, իսկ ծարիրով նրբորեն շրջագծված աչքերը հսկայական էին թվում և խավարում վառվում էին ինչպես կատվագի ուժեղ գազանի աչքեր։ Ոսկե սրբազան ուրեուսը իջնում էր նրա վզից ցած, անցատելով կիսաբաց ստինքները։

Այն ժամանակից ի վեր, երբ Սողոմոնը սառել էր Աստիս թագուհու նկատմամբ, նրա անսանձ զգայականությունից հոգնած, նա հարավային հեշտասիրության ողջ բռնկումով և վիրավորված կանացի իանդի ողջ մոլուցքով տրվել էր այլասերված տրոփանքի այն գաղտնի ցոփ կերուխումերին, որոնք մտնում էին Իզիսին ծառայող ներքինիների աղանդի բարձրագույն պաշտամունքի ծեսի մեջ։ Նա միշտ հայտնվում էր ներքինի քուրմերով շրջապատված և նույնիսկ հիմա, երբ նրանցից մեկը համաչափորեն հովհարում էր նրա գլուխը սիրամարգի փետուրի հովհարով, մյուսները նստել էին հատակին, խելահեղությամբ լի աչքերը թագուհու վրա սևեռած։ Նրանց ռունգները լայնանում ու թրթռում էին թագուհու մարմնից նրանց վրա բուրող անուշահոտությունից, և նրանք դողացող մատներով ջանում էին աննկատելի քսվել նրա հազիվ տարուբերվող թեթև զգեստի ծայրին։ Նրանց չափից ավելի, երբեք չբավարարվող կրքոտությունը ծայր աստիճան սրում էր նրանց երևակայությունը։ Կիբելայի ու Աշերայի վայելքներում նրանց հնարամտությունը անցնում էր մարդկային

բոլոր հնարավորություններից։ Եվ թագուհուն խանդելով իրար նկատմամբ, բոլոր կանանց, տղամարդկանց ու երեխաների նկատմամբ, խանդելով նույնիսկ իր իսկ նկատմամբ, նրանք թագուհուն երկրպագում էին ավելի, քան Իզիսին, և սիրելով, ատում էին նրան, որպես քաղցր ու դաժան տառապանքների անվերջանալի հրե աղբյուրի։

Մութ, չար, սարսափելի ու գերիշ լուրեր էին պտտվում Երուսաղեմում Աստիս թագուհու մասին։ Գեղեցիկ տղաների ու աղջիկների ծնողները նրանց թաքցնում էին թագուհու հայացքից. նրա անունը վախենում էին արտասանել ամուսնական անկողնում, որպես պղծության ու փորձանքի նշան։ Բայց հուզող, արբեցնող հետաքրքրությունը հոգիներ էր քաշում դեպի նա, և նրա կամքին էին հանձնվում մարմինները։ Նրանք, ովքեր թեկուզ մեկ անգամ ճաշակել էին նրա վայրագ արյունալի փաղաքշանքները, արդեն երբեք չէին կարող նրան մոռանալ և դառնում էին նրա հավետ խղճուկ, մերժված ստրուկները։ Նրան նորից տիրանալու համար ամեն մի մեղքի, ամեն մի ստորացման ու հանցանքի պատրաստ, նրանք նման էին դառնում այն դժբախտներին, որոնք մեկ անգամ փորձելով Օփեր եկրից բերած՝ քաղցր անուրջներ տվող կակաչի դառն խմիչքը, արդեն երբեք չեն կտրվում նրանից և միայն դա են պաշտում և միայն դա հարգում, մինչև հյուծումն ու խելահեղությունը կտրում են նրանց կյանքը։

Շոգ օդում դանդաղ ծփում էր հովհարը։ Անձայն հիացմունքով քուրմերը դիտում էին իրենց սարսափելի տիրակալուհուն։ Բայց նա ասես մոռացել էր նրանց ներկայությունը։ Վարագույրը թեթևակի ետ քաշած՝ նա անդադրում նայում էր դիմացը, բեմի այն կողմ, որտեղ մի ժամանակ հինավուրց ոսկեհուռ վարագույրների մուգ կտրվածքների արանքից երևում էր Իսրայելի թագավորի սքանչելի, պայծառ դեմքը։ Իր ողջ բոցավառ ու արատավոր սրտով միայն նրան էր սիրում մերժված թագուհին, դաժան ու հեշտասեր Աստիսը։ Ամենուրեք նա փնտրում էր նրա թռուցիկ հայացքը, սիրալիր խոսքը, նրա ձեռքի հպումը և չէր գտնում։ Հանդիսավոր ընդունելությունների, պալատական ճաշկերույթների և դատերի օրերին Սողոմոնը նրան հարգալից վերաբերմունք էր ցույց տալիս որպես թագուհու և արքայադստեր, բայց նրա հոգին մեռած էր Աստիսի համար։ Եվ հաճախ հպարտ թագուհին հրամայում էր որոշյալ ժամերի իրեն տանել

Լիբանանյան տան մոտով, որպեսզի թեկուզ հեռվից, աննկատելի ծանր վարագույրների միջով պալատական ամբոխի մեջ տեսնի Սողոմոնի հպարտ, անմոռանալի գեղեցիկ դեմքը։ Եվ վաղուց արդեն դեպի թագավորը տածած բոցավառ սերը այնպես էր միահյուսվել այրող ատելության հետ, որ Աստիսն ինքն էլ չէր կարողանում տարբերել դրանք։

Առաջ մեծ տոնակատարությունների օրերին Սողոմոնն ինքն էլ էր այցելում Իզիսի տաճարը և զոհեր մատուցում աստվածուհուն և նույնիսկ ընդունեց եգիպտական փարավոնից հետո նրա երկրորդ գերագույն քրմի տիտղոսը։ Բայց «Պտղավորման արյունալի զոհաբերության» սարսափելի խորհուրդը նրա միտքն ու սիրտը ետ վանեցին աստվածների Մորը ծառայելուց։

— Անգիտությամբ կամ բռնությամբ, կամ պատահմամբ, կամ հիվանդության պատճառով ամորձատվածը ստորացված չէ աստծու առաջ,— ասաց թագավորը,— բայց վայ նրան, ով ինքն է իրեն այլանդակում։

Եվ ահա արդեն մի ամբողջ տարի նրա օթյակը տաճարում դատարկ էր մնում։ Եվ իզուր թագուհու բոցավառ աչքերը հիմա ագահորեն նայում էին անշարժ վարագույրներին։

Այնինչ գինին, ցքին ու թմրեցնող ծխանյութերը արդեն զգալի ազդեցություն էին գործում տաճարում հավաքվածների վրա։ Ավելի հաճախ էր ճիչ, ծիծաղ և քարե հատակին ընկնող արծաթե անոթների զրնգոց լսվում։ Մոտենում էր արյունալի զոհաբերության մեծ, խորհրդավոր պահը։ Մոլուցքը համակում էր հավատացյալներին։

Ցրված հայացքով թագուհին դիտեց տաճարն ու հավատացյալներին։ Այստեղ կային շատ հարգարժան ու նշանավոր մարդիկ Սողոմոնի շքախմբից ու նրա զորահրամանատարներից. Բեն-Գևերը, Արգովբի գավառի տիրակալը, և թագավորի դստեր հետ ամուսնացած Աքիմաասը, և սրամիտ Բեն-Դեկերը, և Զաբութը, որը արևելյան սովորությունների համաձայն կրում էր «թագավորի բարեկամ» բարձր տիտղոսը, և Սողոմոնի եղբայրը Դավթի առաջին ամուսնությունից՝ Դալուիան՝ անժուժկալությունից ու հարբեցողությունից վաղաժամ թուլամտացած, տկլորացած, կիսամեռ մի մարդ։ Նրանք բոլորը՝ ոմանք հավատի բերումով, ոմանք շահադիտական նկատառումներով, ոմանք ընդօրինակման ուժով, իսկ ոմանք էլ հեշտասիրական ձգտումներով՝ Իզիսի երկրպագուներն էին։

Եվ ահա թագուհու աչքերը երկար և ուշադիր, լարված մտքով կանգ առան արքայական թիկնապահների պետերից մեկի՝ Ելիաբի պատանեկան գեղեցիկ դեմքին։

Թագուհին գիտեր, թե ինչու է այդպես վառ գույնով այրվում նրա թուխ դեմքը, ինչու են այդպիսի կրքոտ թախիծով նրա վառվող աչքերը հառած այստեղ՝ վարագույրներին, որոնք հաճիվ շարժվում են թագուհու սքանչելի սպիտակ ձեռքերի հպումից։ Մի անգամ գրեթե կատակով, բոպեական քմահաճույքին ենթարկվելով, նա Ելիաբին հարկադրեց մի ամբողջ երկար երանելի գիշեր անցկացնել իր մոտ։ Առավոտյան թագուհին արձակեց նրան, բայց այդ ժամանակվանից ի վեր շատ օրեր անընդհատ նա ամենուրեք՝ պալատում, տաճարում, փողոցներում տեսնում էր երկու սիրահար, հլու, կարոտակեզ աչքեր, որոնք ամենուրեք ուղեկցում էին թագուհուն։

Թագուհու մուգ հոնքերը շարժվեցին և նրա կանաչ երկարուկ աչքերը հանկարծ մգացան մի սարսափելի մտքից։ Ձեռքի հազիվ նկատելի շարժումով նա ներքինուն հրամայեց ցած իջեցնել հովհարը և կամացուկ ասաց.

— Բոլորդ դուրս գնացեք։ Խուշայ, դու կգնաս ու ինձ մոտ կկանչես Ելիաբին՝ արքայական պահակախմբի պետին։ Թող նա մենակ գա։

11

Կարմիր բծերով ծածկված սպիտակ զգեստներով տասը քուրմ դուրս ելան բեմի կենտրոնը։ Նրանց ետևից դուրս եկան կանացի զգեստներ հագած ևս երկու քուրմ։ Նրանք այսօր պետք է ներկայացնեին Օզիրիսին ողբացող Նեֆտիսին և Իզիսին։ Հետո բեմի խորքից դուրս եկավ մի ոմն, առանց որևէ զարդարանքի սպիտակ պատմուճանով, և բոլոր կանանց ու տղամարդկանց հայացքներն ագահությամբ գամվեցին նրան։ Դա հենց այն ճգնավորն էր, որը Լիբանանի սարերում անցկացրել էր ճգնավորական ծանր փորձությունների տասը տարի և այսօր պետք է կամավոր արյունալի մեծ զոհ մատուցեր Իզիսին։ Քաղցից հյուծված, հողմահար ու արևախանձ նրա դեմքը խիստ էր ու դունատ, աչքերը խոժոռ ցած էին խոնարհված, և նրանից ամբոխի վրա մի անմարդկային սարսափ փչեց։

Վերջապես դուրս եկավ նաև տաճարի գլխավոր քուրմը՝

խուլը գլխին, ուսերին՝ վագրի մորթի, բորենիների պոչերով զարդարված դիպակե զոգնոցով։

Շրջվելով դեպի աղոթողները, նա ծերունական հեզ ու դողդոջուն ձայնով արտասանեց.

— Սուտուն-դի-գոտպու (թագավորը զոհ է մատուցում)։

Եվ ապա, շրջվելով դեպի զոհարանը, նա օգնականի ձեռքից ընդունեց կարմիր թաթիկներով մի սպիտակ աղավնի, կտրեց թռչնի գլուխը, նրա կրծքից հանեց սիրտը և նրա արյամբ ցողեց զոհարանն ու սրբազան դանակը։

Կարճ լռությունից հետո նա ազդարարեց.

— Ողբանք Օզիրիսին, Ամուտու աստծուն, մեծն Ոն-Նոֆեր-Օնուֆրիին, Օն աստծուն։

Կանացի զգեստներ հագած երկու ներքինիներն անմիջապես սկսեցին ողբը ներդաշնակ ձայներով։

«Վերադարձիր քո կացարանը, օ սքանչագեղ պատանի։ Քեզ տեսնելը երանություն է։

Իզիսը պաղատում է քեզ, Իզիսը, որը սաղմնավորվել է քեզ հետ նույն արգանդում, քո կինը և քույրը։

Ցույց տուր նորից քո դեմքը, պայծառ աստված։ Ահա Նեֆտիսը, քո քույրը։ Նա արցունք է հեղում և վշտից փնտում է մազերը։

Մահացու թախիծով մենք որոնում ենք քո գեղասքանչ մարմինը, Օզիրիս։ Վերադարձիր քո տունը»։

Երկու ուրիշ քուրմ իրենց ձայները միացրին առաջիններին։ Դա Հորը և Անուբիսն էին։ Ողբում Օզիրիսին, և ամեն անգամ, երբ նրանք ավարտում էին ոտանավորը, սանդուղքի աստիճաններին տեղավորված երգչախումբը հանդիսավոր ու տխրագին մեղեդիով կրկնում էր այն։

Հետո նույն երգեցողությամբ ավագ քուրմերը տաճար դուրս բերին աստվածուհու արձանը՝ հիմա արդեն առանց տապանակի։ Բայց վրան ոսկե աստղեր սփռված սև քղամիդը աստվածուհուն պարուրում էր ոտից գլուխ, տեսանելի թողնելով միայն վրան օձեր փաթաթած արծաթե ոտքերը, իսկ գլխի վերևում՝ կովի եղջյուրների մեջ մտցրած արծաթե սկավառակը։ Ու դանդաղ, բուրվառների ու քշոցների զրնգոցի տակ, Իզիս աստվածուհու թափորը ողբագին լացով շարժվեց բեմի աստիճաններից ցած, դեպի տաճարը, նրա պատերի երկայնքով, սյուների միջև։

Այսպես աստվածուհին հավաքում էր իր ամուսնու մարմնի

ցրված մասերը, որպեսզի Թոթի և Անուբիսի օգնությամբ կենդանացներ նրան։

«Փառք քո գեղասքանչ գլուխը պահպանած Աբիդոս քաղաքին, Օզիրիս։

Փառք քեզ, Մեմֆիս քաղաք, որտեղ մենք գտանք մեծն աստծու աջ ձեռքը, պատերազմի ու պաշտպանության ձեռքը։

Եվ քեզ, օ Սայիս քաղաք, որ թաքցրել ես պայծառ աստծո ձախ ձեռքը, արդարադատության ձեռքը

Եվ դու օրհնյալ եղիր, Թեբե քաղաք, որտեղ հանգչում էր Ոն-Նոֆեր-Օնուֆրիի սիրտը»։

Այդպես աստվածուհին շրջանցեց ամբողջ տաճարը, վերադարձավ ետ դեպի բեմը, և ավելի ու ավելի կրքոտ ու բարձրաձայն էր դառնում երգչախմբի երգեցողությունը։ Սրբազան ոգևորությունը տիրապետում էր քուրմերին ու աղոթողներին։ Իզիսը գտավ Օզիրիսի մարմնի բոլոր մասերը, բացի մեկից, մայրական արգանդը բեղմնավորող, նոր հավերժական կյանքի ստեղծող սրբազան ֆալլուսից։ Հիմա մոտենում էր Օզիրիսի և Իզիսի խորհրդավոր ծիսակատարության ամենամեծ գործողությունը։

— Այդ դո՞ւ ես, Ելիաբ,— հարցրեց թագուհին պատանուն, որը կամացուկ ներս էր մտել դռնից։

Օթյակի խավարում նա անձայն ծունկի իջավ թագուհու ոտքերի մոտ և շրթունքներին հպեց նրա ղդեստի քղանցքը։ Եվ թագուհին զգաց, որ նա լալիս է հիացմունքից, ամոթից ու ցանկությունից։ Ձեռքը դնելով նրա գանգրահեր կոշտ գլխին, թագուհին արտասանեց.

— Պատմիր ինձ, Ելիաբ, ամեն ինչ, որ գիտես թագավորի ու խաղողի այգուց եկած այդ աղջկա մասին։

— Օ, ինչպե՞ս ես սիրում թագավորին, թագուհի,— ասաց Ելիաբը դառն հեծկլտանքով։

— Խոսի՛ր...— հրամայեց Աստիսը։

— Ի՞նչ կարող եմ ասել քեզ, թագուհի։ Իմ սիրտը կտորկտոր է լինում խանդից։

— Խոսի՛ր։

— Թագավորը դեռ ոչ ոքի այնպես չի սիրել, ինչպես նրան։ Նա ոչ մի ակնթարթ չի բաժանվում նրանից։ Նրա աչքերը շողում են երջանկությունից։ Նա իր շուրջը շնորհներ ու պարգևներ է սփռում։ Նա՛, աբիմելեք և իմաստուն, նա ստրուկի պես

պառկում է նրա ոտքերի մոտ և շան պես իր աչքերը չի հեռացնում նրանից։

— Ասա՛։

— Օ, ինչպես տանջում ես ինձ, Թագուհի՛։ Եվ աղջիկը... աղջիկը համակ սեր է, քնքշություն ու փաղաքշանք։ Նա հեզ է ու ամոթխած, նա ոչինչ չի տեսնում և ոչինչ չգիտի, բացի իր սիրուց։ Նա ոչ ոքի մեջ չի հարուցում ոչ չարություն, ոչ խանդ, ոչ նախանձ։

— Խոսի՛ր,— կատաղությամբ հառաչեց Թագուհին և ճկուն մատներով կառչելով Ելիաբի սև գանգուրներից, նրա գլուխը սեղմեց իր մարմնին, նրա դեմքը քերծելով իր թափանցիկ պատմուճանի արծաթե բանվածքով։

Իսկ այդ ժամանակ բեմում սև ծածկոցով աստվածուհու պատկերի շուրջը, սրբազան մոլուցքով բռնված, հաչոցի նման ճիչեր արձակելով, ծնծղաների կրնգոցի ու ջոջոցների չխկչխկոցի տակ պտույտ էին գործում քուրմերը։

Նրանցից մի քանիսը իրենց մտրակում էին ոնգեղջյուրի կաշվից պատրաստված բազմաճյուղ մտրակներով, մյուսները կարճ դանակով իրենց կրծքերին և ուսերին արյունալի երկար վերքեր էին հասցնում, երրորդները մատներով ծվատում էին բերանները, պատառոտում ականջները և եղունգներով ճանկռոտում երեսները։ Այդ կատաղի շուրջպարի մեջտեղում, աստվածուհու հենց ոտքերի մոտ նույն տեղում անընդմեջ արագությամբ պտտվում էր Լիբանանի սարերից իջած ճգնավորը՝ ձյունթույր ծածկող զգեստով։ Միայն գերագույն քուրմն էր անշարժ մնում։ Նա ձեռքին բռնել էր եթովպիական օբսիդիանից պատրաստած սրբազան զոհաբերական դանակը՝ պատրաստ այն հանձնելու վերջին սարսափելի պահին։

— Ֆա՛լլուս, Ֆա՛լլուս, Ֆա՛լլուս,— հափշտակված բղավում էին խելակորույս քուրմերը։— Ո՞ւր է քո Ֆալլուսը, օ պայծա՛ռ աստված։ Եկ, բեղմնավորիր աստվածուհուն։ Նրա կուրծքը տոչորվում է ցանկությունից։ Նրա արգանդը նման է անապատի՝ ամառային շոգ ամիսներին։

Եվ ահա մի զարհուրելի, խեւահեղ, սուր ճիչ մի ակնթարթ խլացրեց ամբողջ երգչախումբը։ Քուրմերն արագ ետ կանգնեցին, և տաճարում գտնվողները բոլորը տեսան լիբանանյան ճգնավորին բոլորովին մերկ, որ սարսափ էր ազդում իր երկար, ոսկրոտ, դեղին մարմնով։ Գերագույն քուրմը նրան պարզեց

դանակը։ Անտանելի լռություն տիրեց տաճարում։ Եվ նա, արագ կռանալով, ինչ-որ շարժում կատարեց և ցավի ու հիացմունքի աղաղակով հանկարծ աստվածուհու ոտքերի առաջ նետեց տձև, արյունաշաղախ մսի մի կտոր։

Նա երերում էր։ Գերագույն քուրմը զգուշորեն բռնեց նրան, ձեռքը պատեց մեջքին, նրան մոտեցրեց Իզիսի պատկերին, և խնամքով ծածկեց նրան սև ծածկոցով և այդպես թողեց մի քանի ակնթարթ, որպեսզի նա թաքուն, ուրիշներից անտեսանելի, կարողանար բեղմնավորված աստվածուհու շուրթերին դրոշմել իր համբույրը։

Ապա անմիջապես նրան դրին պատգարակի վրա և դուրս տարան բեմից։ Դոնապան քուրմը՝ դուրս եկավ տաճարից։ Նա փայտե մուրճով խփեց պղնձե հսկա սկավառակին, ամբողջ աշխարհին ազդարարելով այն մասին, որ կատարվեց աստվածուհու բեղմնավորման մեծ խորհուրդը։ Եվ պղնձի բարձր երգեցիկ հնչյունը տարածվեց Երուսաղեմի վրա։

Աստիս Թագուհին, դեռ շարունակելով ցնցվել ամբողջ մարմնով, ետ շպրտեց Ելիաբի գլուխը։ Նրա աչքերը վառվում էին լարված կարմիր կրակով։ Եվ նա ասաց դանդաղ, բառ բառի ետևից։

— Ելիաբ, ուզո՞ւմ ես քեզ դարձնեմ Հուդայի և Իսրայելի թագավոր։ Ուզո՞ւմ ես տիրակալ դառնալ քո Սիրիային ու Միջագետքին, Փյունիկիային ու Բաբելոնին։

— Ոչ, Թագուհի, ես ուզում եմ միայն քեզ...

— Այո, դու կլինես իմ տիրակալը։ Իմ բոլոր գիշերները կպատկանեն քեզ։ Իմ ամեն մի խոսքը, մի հայացքը, ամեն մի շունչը քոնը կլինեն։ Դու գիտես անցաբանը։ Դու այսօր կգնաս պալատ և կսպանես նրանց։ Դու կսպանես նրանց երկուսի՛ն էլ։ Դու կսպանես նրանց երկուսի՛ն էլ։

Ելիաբն ուզում էր ինչ-որ բան ասել։ Բայց Թագուհին նրան թաշեց դեպի ինքը և նրա բերանին կպավ իր տոթակեզ շրթունքներով ու լեզվով։ Դա տևում էր տանջալիորեն երկար։ Հետո պատանուն անսպասելի կտրելով իրենից, կարճ ու հրամայական ասաց։

— Գնա՛։

— Գնում եմ,— հնազանդ պատասխանեց Ելիաբը։

12

Եվ Սողոմոնի մեծ սիրո յոթերորդ գիշերն էր։

Տարօրինակ սուսիկ ու խորապես քնքուշ էին այդ գիշեր թագավորի ու Սուլամիթի զուրգուրանքները։ Ասես ինչ-որ մտածկոտ թախիծ, զգուշավոր ամոթխածություն, հեռավոր նախազգացում թեթև ստվերով էին պարուրում նրանց համբույրներն ու գրկախառնությունը։

Լուսամուտից նայելով երկնքին, ուր գիշերն արդեն հաղթում էր սպառվող երեկոյին, Սուլամիթը աչքերը պահեց մի պայծառ կապտավուն աստղի վրա, որը թրթռում էր հեզիկ ու քնքուշ։

— Ինչպե՞ս է կոչվում այդ աստղը, իմ սիրեցյալ,— հարցրեց նա։

— Դա Սոպդիտ աստղն է,— պատասխանեց թագավորը։— Դա սրբազան աստղ է։ Ասորական մոգերը մեզ ասում են, որ բոլոր մարդկանց հոգիները մարմնի մահից հետո ապրում են դրա վրա։

— Դու հավատո՞ւմ ես դրան, թագավոր։

Սողոմոնը չպատասխանեց։ Նրա աջ ձեռքը Սուլամիթի գլխատակին էր, իսկ ձախով գրկել էր նրան, և Սուլամիթն զգում էր նրա բուրումնավետ շնչառությունն իր վրա, մազերին, քունքերին։

— Գուցե մենք այնտեղ տեսնվե՞նք իրար հետ, թագավոր, մեռնելուց հետո, —տագնապով հարցրեց Սուլամիթը։

Թագավորը նորից լռում էր։

— Մի բան պատասխանիր ինձ, սիրեցյալս,— երկչոտ խնդրեց Սուլամիթը։

Այն ժամանակ թագավորն ասաց.

— Մարդկային կյանքը կարճ է, բայց ժամանակն անվախճան է, և նյութն անմահ է։ Մարդը մեռնում է և իր մարմնի փտումով պարարտացնում է հողը, հողը կերակրում է հասկը, հասկը հատիկ է տալիս, մարդն ուտում է հացը և դրանով սնում է իր մարմինը։ Անցնում են բյուր ու բյուրավոր դարեր, աշխարհում ամեն բան կրկնվում է, կրկնվում են մարդիկ, գազանները, քարերը, բույսերը։ Ժամանակի ու նյութի բազմապիսի շրջապտույտի մեջ կրկնվում ենք նաև ես ու դու, իմ սիրեցյալ։ Դա նույնքան ճիշտ է, ինչպես և այն, որ եթե ես ու դու մի մեծ պարկ բերնե-բերան ծովի մանրախիճ լցնենք և դրա մեջ գցենք

ընդամենը մի թանկագին շափյուղա, ապա, պարկի միջից շատ անգամ հանելով խիճը, դու այնուամենայնիվ վաղ թե ուշ կհանես նաև թանկագին քարը։ Մենք քեզ հետ կհանդիպենք, Սուլամիթ, և մենք չենք ճանաչի միմյանց, բայց մեր սրտերը կարոտով ու խանդավառությամբ ընդառաջ կձգտեն, որովհետև մենք արդեն հանդիպել ենք իրար, իմ հեզիկ, իմ սքանչելի Սուլամիթ, բայց մենք դա չենք հիշում։

— Ո՜չ, թագավոր, ո՜չ։ Ես հիշում եմ։ Երբ դու կանգնել էիր իմ լուսամուտի տակ և կանչում էիր ինձ. «Սքանչելիդ իմ, դուրս եկ, իմ մազերը լի են գիշերվա ցողով»,— ես ճանաչեցի քեզ, ես հիշեցի քեզ, և ուրախությունն ու վախը տիրեցին սրտիս։ Ասա ինձ, իմ թագավոր, ասա ինձ, Սողոմոն, ահա եթե ես վաղը մեռնեմ, արդյոք կմտաբերե՞ս խաղողի այգու քո թուխիկ աղջկան, քո Սուլամիթին։

Եվ նրան իր կրծքին սեղմելով, թագավորը հուզված շշնջաց.

— Այդպես մի ասա երբեք... Այդպես մի՛ ասա, Սուլամիթ, ...Դու աստծո ընտրյալն ես, դու իսկականն ես, դու իմ հոգու թագուհին ես... Մահը քեզ չի դիպչի...

Պղնձի սուր ձայնը հանկարծ տարածվեց Երուսաղեմի վրա։ Նա երկար, տխրագին թրթռում ու տարածվում էր օդում և երբ լռեց, ապա դեռ երկար լողում էին նրա դողդոջուն արձագանքները։

— Այդ Իզիսի տաճարում ավարտվեց խորհրդավոր արարողությունը,— ասաց թագավորը։

— Ես վախենում եմ, իմ սքանչելի,— շշնջաց Սուլամիթը։

— Մութ զարհուրանքը թափանցեց իմ հոգին... Ես մահ չեմ ուզում... Ես դեռ չեմ հագեցել քո գրկախառնությունների վայելքից... Ինձ քո գիրկն առ... Ամուր սեղմիր ինձ... Կնիքի պես ինձ դիր քո սրտի վրա, կնիքի պես՝ քո բազկի վրա...

— Մահից մի՛ վախենա, Սուլամիթ։ Մահվան պես ուժեղ է և սերը... Վանիր տխուր մտքերը... Ուզո՞ւմ ես քեզ պատմեմ Դավթի պատերազմի մասին, Սուսակիմ փարավոնի խրախճանքների ու որսորդությունների մասին։ Ուզո՞ւմ ես լսել այն հեքիաթներից մեկը, որ հյուսվում են Օփեր երկրում... Ուզո՞ւմ ես քեզ պատմեմ Վակրամադիտյայի հրաշքների մասին։

— Այո, իմ թագավոր։ Դու ինքդ գիտես, որ երբ լսում եմ քեզ, սիրտս ուրախությունից ուռչում է։ Բայց ես քեզ բան եմ ուզում խնդրել...

— Օ, Սուլամիթ, ամե՛ն բան, ինչ որ ուզում ես։ Ինձնից կյանքս ինդրիր, ես բերկրանքով այն կտամ քեզ։ Ես միայն կափսոսամ, որ չափազանց փոքր գին եմ վճարել քո սիրո համար։

Այնժամ Սուլամիթը՝ մութի մեջ երջանկությունից ժպտալով ու ձեռքերով թագավորի պարանոցը պարուրելով, նրա ականջին շշնջաց.

— Խնդրում եմ քեզ, երբ բացվի առավոտը, միասին գնանք այնտեղ... խաղողի այգին... Այնտեղ, որտեղ կանաչ խոտ է, և նոճիներ ու մայրիներ, այնտեղ, որտեղ քարե պատի մոտ դու ձեռքերովդ վերցրիր իմ հոգին... Այդ եմ խնդրում քեզնից, սիրեցյալս... Այնտեղ նորից ես քեզ կտամ իմ գուրգուրանքը...

Արբեցումով համբուրեց թագավորը իր սիրելիի շրթունքները։

Բայց Սուլամիթը հանկարծ վեր կացավ մահճի մեջ և ականջ դրեց։

— Քեզ ի՞նչ պատահեց, մանկիկս... ինչը՞ վախեցրեց քեզ, —հարցրեց Սողոմոնը։

— Սպասիր, իմ սիրելի... Այստեղ են գալիս... Այո... ես ոտնաձայն եմ լսում...

Նա լռեց։ Եվ այնքան լուռ էր, որ նրանք լսում էին իրենց սրտի զարկերը։

Թեթև շրշյուն լսվեց դռան ետև, ու հանկարծ նա բացվեց արագ ու անձայն։

— Ո՞վ է,— բացականչեց Սողոմոնը։

Բայց Սուլամիթը արդեն ոստնեց մահճից. մի շարժումով ընդառաջ նետվեց շողացող սուրը ձեռքին մարդկային մութ կերպարանքին։ Եվ անմիջապես միջաթափանց խոցված կարճ, արագ հարվածից, նա մի թույլ, ասես զարմացած ճիչով ընկավ գետին։

Սողոմոնը ձեռքով ջարդեց գիշերային կանթեղի լույսը ծածկող սարդիոնե դիմակը։ Նա տեսավ Ելիաբին, որը կանգնած էր դռան մեջ, թեթևակի հակված աղջկա մարմնի վրա, ասես հարբած։ Երիտասարդ զորականը Սողոմոնի հայացքի ներքո բարձրացրեց գլուխը և, աչքերով հանդիպելով թագավորի ցասումնալից, նահարկու աչքերին, գունատվեց ու հառաչեց։ Հուսահատության ու սարսափի արտահայտությունը աղավաղեց

նրա դիմագծերը։ Եվ հանկարծ, կռանալով, գլուխը պահելով թիկնոցի մեջ, նա երկչոտ, վախեցած բորենու պես սկսեց դուրս սողալ սենյակից։ Բայց թագավորը կանգնեցրեց նրան, ընդամենը երեք բառ ասելով.

— Քեզ ո՞վ հարկադրեց։

Ամբողջովին դողալով ու ատամները կափկափելով, վախից սպիտակած աչքերով, երիտասարդ զորականը խուլ նետեց.

— Աստիս թագուհին...

— Դուրս ել,— հրամայեց Սողոմոնը։— Ասա հերթապահ պահակախմբին, որ հսկի քեզ։

Շուտով պալատի անհամար սենյակներում սկսեցին վազվզել մարդիկ կրակները ձեռքներին։ Բոլոր սենյակները լուսավորվեցին։ Եկան բժիշկները, հավաքվեցին զորահրամանատարներն ու թագավորի բարեկամները։

Ավագ բժիշկն ասաց.

— Թագավոր, հիմա չի օգնի ոչ գիտությունը, ոչ աստված։ Երբ նրա կրծքում թողած սուրը հանենք, նա անմիջապես կմեռնի։

Բայց այդ ժամանակ Սուլամիթն ուշքի եկավ և հանգիստ ժպտալով ասաց.

— Ես խմել եմ ուզում։

Եվ երբ ծարավը հագեցրեց, նա մի քնքուշ, սքանչելի ժպիտով աչքերը հառեց թագավորին և արդեն այլևս չէր հեռացնում դրանք. իսկ թագավորը ծունկի էր շոքել նրա մահճի առաջ, ամբողջովին մերկ, ինչպես և Սուլամիթը, չնկատելով, որ իր ծնկները լողում են արյան մեջ, և որ իր ձեռքերը ներկված են ալ արյունով։

Այդպես, նայելով իր սիրեցյալին և հեզիկ ժպտալով, դժվարությամբ ասում էր գեղասքանչ Սուլամիթը.

— Շնորհակալ եմ քեզանից, իմ թագավոր, ամեն ինչի համար. քո սիրո համար, քո գեղեցկության համար, քո իմաստնության համար, որին թույլ տվիր հպվել շրթունքներովս, ինչպես քաղցր աղբյուրի։ Տուր համբուրեմ ձեռքերդ և դրանք մի հեռացնի, մինչև որ վերջին շունչս դուրս չթռչի ինձնից։ Երբեք չի եղել և չի լինի ինձնից երջանիկ կին։ Շնորհակալ եմ քեզանից, իմ թագավոր, իմ սիրեցյալ, իմ սքանչելի։ Մտաբերիր երբեմն քո ստրկուհուն, քո արևախանձ Սուլամիթին։

Եվ թագավորը նրան պատասխանեց խստությամբ, դանդաղ ձայնով.

— Այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ կսիրեն միմյանց, քանի դեռ հոգու և մարմնի գեղեցկությունը կլինեն աշխարհում ամենալավ ու ամենաքաղցր երազանքը, մինչև այդ ժամանակ, երդվում եմ քեզ, Սուլամիթ, քո անունը բազում դարեր կարտասանվի խանդաղատանքով ու շնորհակալությամբ։

Առավոտյան դեմ Սուլամիթը չկար։

Այն ժամանակ թագավորը վեր կացավ, հրամայեց իրեն լվացվելու ջուր տալ և հագավ վրան ոսկե սրբարբեզներ աստղնագործած ամենաշքեղ ծիրանի-պատմուճանը և գլխին դրեց արքունական մի սուտակներով պսակը։ Դրանից հետո նա իր մոտ կանչեց Բանեային և հանգիստ ասաց.

— Բանեա, դու կգնաս ու կմեռցնես Ելիաբին։

Բայց ծերունին երեսը ծածկեց ձեռքերով ու երեսնիվայր ընկավ թագավորի առաջ։

— Թագավոր, Ելիաբը իմ թո՞ռն է։

— Դու ինձ լսեցի՞ր, Բանեա։

— Թագավոր, ների՞ր ինձ, մի՞ սպառնա ինձ քո զայրույթով, հրամայիր որ մեկ ուրիշն անի այդ։ Ելիաբը, պալատից դուրս գալով, վազել է տաճար և բռնել զոհասեղանի եղջյուրներից։ Ես ծեր եմ, իմ մահը մոտ է, ես չեմ համարձակվում հոգուս վրա վերցնել այդ կրկնակի հանցագործությունը։

Բայց թագավորն առարկեց։

— Սակայն, երբ ես քեզ հանձնարարեցի մեռցնել իմ եղբայր Ադոնիային, որը նույնպես բռնել էր զոհասեղանի սրբազան եղջյուրներից, մի՞թե դու ինձ չենթարկվեցիր, Բանեա։

— Ների՞ր ինձ։ Խնայի՞ր ինձ, թագավո՞ր։

— Բարձրացրու դեմքդ,— հրամայեց Սողոմոնը։

Եվ երբ Բանեան գլուխը բարձրացրեց ու տեսավ թագավորի աչքերը, նա արագ վեր կացավ հատակից և հնազանդ ուղղվեց դեպի ելքը։

Ապա դառնալով Աբիսսարին՝ պալատի պետին ու վերակացուին, նա հրամայեց.

— Թագուհուն ես չեմ ուզում մահվան մատնել, թող նա ապրի, ինչպես ուզում է, և մեռնի, որտեղ ուզում է։ Բայց այլևս երբեք նա իմ երեսը չի տեսնի։ Այսօր, Աբիսսար, դու քարտվան կկազմես և թագուհուն կուղեկցես Հոպպե նավահանգիստը, իսկ այնտեղից Եգիպտոս, Սուսսակիմ փարավոնի մոտ։ Հիմա թող բոլորը դուրս գնան։

Եվ երեսս առ երեսս մենակ մնալով Սուլամիթի դիակի հետ, նա երկար նայում էր նրա սքանչելի դիմագծերին։ Նրա դեմքը սպիտակ էր և երբեք այդքան գեղեցիկ չէր կենդանության օրոք։ Կիսաբաց շրթունքները, որոնք ընդամենը մի ժամ առաջ համբուրում էր Սողոմոնը, ժպտում էին խորհրդավոր ու երանավետ, և ատամները, դեռևս խոնավ, հաղիվհազ փայլփլում էին դրանց տակից։

Դեռ երկար նայում էր թագավորը իր մեռած սիրեցյալին, հետո մատներով հուշիկ կպավ արդեն կյանքի ջերմությունը կորցնել սկսող նրա ճակատին և դանդաղ քայլերով դուրս եկավ սենյակից։

Դռան ետև նրան սպասում էր քահանայապետ Ազարիան՝ Սադուկիայի որդին։ Թագավորին մոտենալով՝ նա հարցրեց.

— Ի՞նչ անենք այս կնոջ դիակը։ Հիմա շաբաթ է։

Եվ հիշեց թագավորը, թե ինչպես շատ տարիներ առաջ մեռավ իր հայրը և պառկած էր ավազի վրա և արդեն սկսել էր արագ քայքայվել։ Գեշի հոտից հրապուրված շները արդեն թափառում էին նրա շուրջը, քաղցից ու ագահությունից վառվող աչքերով։ Եվ, ինչպես և այսօր, նրան հարցրեց քահանայապետը՝ Ազարիայի հայրը, մի զառամյալ ծերունի.

— Ահա պառկած է քո հայրը, շները կարող են հոշոտել նրա դիակը... Ի՞նչ անենք։ Արդյոք հարգե՞նք թագավորի հիշատակը և պղծենք շաբաթը, թե պահենք շաբաթը, բայց քո հոր դիակը թողնենք շներին կեր։

Այն ժամանակ Սողոմոնը պատասխանել էր.

— Թողնել։ Կենդանի շունը մեռած առյուծից լավ է։

Եվ երբ հիմա, քահանայապետի խոսքերից հետո, նա հիշեց այդ բանը, նրա սիրտը ճմլվեց տխրությունից ու վախից։

Ոչինչ չպատասխանելով քահանայապետին, նա գնաց առաջ, դատարանի դահլիճը։

Ինչպես և միշտ առավոտները, նրա երկու դպրագիրները՝ Ելիքորեփն ու Աքիան, արդեն պառկել էին գահի երկու կողմերում խսիրների վրա, պատրաստ պահած պապիրուսի փաթեթները, եղեգն ու թանաքը։ Երբ թագավորը ներս մտավ, նրանք վեր կացան ու մինչև գետին խոնարհվեցին նրա առաջ։ Իսկ թագավորը նստեց իր ոսկեզարդ փղոսկրյա գահին, արմունկով հենվեց

վեց ոսկե առյուծի մեջքին և, գլուխն ափին հակելով, հրամայեց.

— Գրեցե՛ք։

«Ինձ կնիքի պես դիր սրտիդ վրա, կնիքի պես՝ քո բազկի վրա, որովհետև մահվան պես զորավոր է սերը, դժոխքի պես դաժան է խանդը, նրա կայծերը բոցավառ կրակի կայծերի պես են»։

Եվ, լռելով այնքան երկար, որ գրագիրները տագնապով շունչները պահեցին, նա ասաց.

— Ինձ մենակ թողեք։

Եվ ամբողջ օրը, մինչև իրիկնային առաջին ստվերները, թագավորը մնաց իր մտքերի հետ մեն-մենակ, և ոչ ոք չհամարձակվեց մտնել դատարանի հսկայական դատարկ դահլիճը։

1907

ԳՆՏՄՎԱԾՔՆԵՐ

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Փոխպորուչիկ Կոզլովսկին մտազբաղ՝ սեղանի սպիտակ մոմլաթի վրա կանացի նուրբ կիսադեմ էր նկարում, վեր սանրած փարթամ մազերով և á la Մարի Ստյուարտ օձիքով։ Ղեկավարության՝ դիմացը դրված հրամանը կարճ ու կտրուկ կարգադրում էր նրան անհապաղ հետաքննություն կատարել մի ղույգ ճտքերի և երեսունյոթ կոպեկ դրամի գողության մասին, կատարված շարքային Մուհամեդ Բայգուզինի կողմից, երիտասարդ զինվոր Վենեդիկտ Եսիպակին պատկանող փակ սնդուկի միջից։ Գործով կանչված վկաները՝ ֆելդֆեբել Օստապչուկը և եֆրեյտոր Պիսկունը, նրանց հետ նաև շարքային Կուչերբաևը՝ որպես թարգմանիչ, նստած էին տանտիրոջ խոհանոցում, որտեղից մեկ-մեկ նրանց սենյակ էր թողնում փոխպորուչիկի սպասյակը, հավուր պատշաճի պատկառելի, նույնիսկ մի քիչ ամբարտավան արտահայտությունը դեմքին։

Առաջինը ներս եկավ ֆելդֆեբել Տարաս Գավրիլովիչ Օստապչուկը և իսկույն զգացնել տվեց իր ներկայությունը քաղաքավարի հազով, ընդ որում գլխարկը մոտեցնելով բերանին։ Տարաս Գավրիլովիչը՝ կանոնադրության գծով մի «քութուկ», անդրդվելի հեղինակություն տրեզավոր ողջ ղեկավարության համար, բավական մեծ համբավ ուներ գնդում։ Նրա փորձառու ղեկավարության ներքո վաշտի համար բարեհաջող էին ավարտվում ստուգատեսերը, շքերթներն ու տեսչական ամեն կարգի ստուգումները, մինչդեռ վաշտի հրամանատարը գիշեր-ցերեկ ֆինանսական միջոցներ էր հորինում կատարողական այն թերթիկների դեմ, որ նրա անունով անընդհատ գնդի գրասենյակ էին ներկայացնում գնդի վաշխառուների թվին պատկանող անթիվ-անհա-

մար պարտապանները։ Արտաքինից ֆելդֆեբելը կարճլիկ, ուժեղ, պնդակազմ, կուշտ, գիրության հակված մարդու տպավորություն էր թողնում, քառակուսի, կարմիր գեմքով, ուշադիր և զգուշորեն նայող նեղ-նեղ աչքերով։ Տարաս Գավրիլովիչն ամուսնացած էր և ճամբարային շրջանում, Երեկոյան ներկա-բացակայից հետո, կաթով թեյ էր խմում ու տաք-տաք բուլկի ուտում, շերտավոր խալաթը հագին, իր վրանի առջև նստած։ Իր վաշտի հոժարականների հետ սիրում էր խոսել քաղաքականությունից, ընդ որում միշտ մնում էր առանձնահատուկ կարծիքի, իսկ չհամաձայնողին երբեմն լրացուցիչ հերթապահության կանգնեցնում։

— Քո.. անունը... ի՞նչ է,— անվճռական հարցրեց Կոզլովսկին։

Դեռևս մի տարի էլ չկար, որ ծառայում էր գնդում ու միշտ կմկմում էր, երբ հարկ էր լինում «դու» ասել վաստակավոր այնպիսի մի մարդու, ինչպիսին Տարաս Գավրիլովիչն էր, որի կրծքին կախված էր «ջանասիրության համար» արծաթյա մեծ մեդալը, իսկ ձախ թևքին ոսկյա և արծաթյա անկյուններ էին զարդակարված։

Փորձված ֆելդֆեբելը շատ նրբորեն ու ճիշտ գնահատեց երիտասարդ սպայի շփոթմունքը և, փոքր-ինչ շոյված դրանից, իրեն ներկայացրեց ամենայն մանրամասնությամբ։

— Պատմեք... պատմեք... ո՞վ է այդ գողությունը կատարել։ Սապոգ է, ինչ է, չգիտեմ։ Գրողը տանի, սա՞ ինչ բան է։

«Գրողը տանի»-ն ավելացրեց, որպեսզի մի քիչ վստահություն հաղորդի իր տոնին։ Ֆելդֆեբելը նրան լսեց ծայր ուշադրություն ձևացնելով, վիզն առաջ ձգած։ Իր ցուցմունքը նա սկսեց անխուսափելի «էնպես որ»-ով։

— Էնպես որ, ձերդ ազնվություն, նստած կարգագիր եմ արտացրում։ Հանկարծ վազեվազ գալիս է հերթապահը, ուրեմն, էդ Պիսկունն ու զեկուցում. «Էսպես, էսպես, պարոն ֆելդֆեբել, վաշտում գործերը կարգին չեն»։ «Ո՞նց թե կարգին չեն»։ «Ճիշտ էդպես, ասում է, ջահել զինվորի սապոգներն են գողացել ու երեսուն կոպեկ փողը»։ «Իսկ նա, հարց եմ տալիս, սնդուկն ինչի՞ չի փակել»։ Որովհետև, ձերդ ազնվություն, նրանց ամեն մեկի սընդուկի վրա փակ պիտի լինի։ «Ճիշտ էդպես, ասում է, նա փակել է, մենակ թե նրա փակը կոտրել են»։ «Ո՞վ է կոտրել։ Ո՞նց են համարձակվել։ Սա ի՞նչ այլանդակություն է»։ «Ի՞նչ իմանամ, պարոն ֆելդֆեբել»։ Էդ ժամանակ ես գնացի հրամանատարի մոտ

ու զեկուցեցի. «Էսպես, էսպես, ձերդ գերազանցություն, էսպիսի մի բան է պատահել, մենակ թե էդ ժամանակ ես վաշտում չեմ եղել, որովհետև գնացել էի զինագործի մոտ»։

— Այդքա՞ն է քեզ հայտնի։

— Ճիշտ էդպես։

— Լավ, իսկ այդ զինվորը, Բայգուզինը, լա՞վ զինվոր է։ Մինչ այդ դեպքը ուրիշ բան նկատվե՞լ է։

Տարաս Գավրիլովիչը ձգեց կղակը, ասես օձիքը կտրում էր նրա վիզը։

— Ճիշտ էդպես, անցած տարի երեք շաբաթ փախած մնաց։ Ես կարծում եմ. որ էդ թաթարները ամենաանհասկացող ազգն են։ Որովհետև աղոթում են լուսնին ու մեր լեզվով բան չեն հասկանում։ Ես կարծում եմ, ձերդ ազնվություն, որ նրանցից, այսինքն՝ էդ թաթարներից, ոչ մի պետության մեջ էլ չկան...

Տարաս Գավրիլովիչը սիրում էր զրուցել կրթված մարդու հետ։ Կոզլովսկին լուռ լսում էր ու կրծոտում գրչակոթը։

Ծառայության անբավարար փորձի պատճառով նա չէր կարողանում ոչ տիրապետել իրեն, ոչ էլ գտնել հարկավոր, հաստատ տոնը՝ խորագետ ֆելդֆեբելին տեղը նստեցնելու համար։ Վերջապես, կմկմալով, որևէ բան ասած լինելու համար ու միաժամանակ զգալով, որ Տարաս Գավրիլովիչը հատկանում է իր ասածի անտեղի լինելը, հարցրեց.

— Լավ, հիմա ի՞նչ պիտի անեն Բայգուզինին։

Տարաս Գավրիլովիչը պատասխանեց ամենաբարյացակամ տեսքով.

— Կարծում եմ, որ Բայգուզինին, ձերդ ազնվություն, հիմա պիտի որ ճիպտեն։ Որովհետև, եթե անցյալ տարի փախած չլիներ, է՛, ուրիշ բան, իսկ հիմա էնպես եմ կարծում, որ անպայման պիտի ճիպտեն։ Որովհետև նա մի անգամ արդեն պատժվել է։

Կոզլովսկին կարդաց հարցաքննությունն ու տվեց նրան ստորագրելու։ Տարաս Գավրիլովիչը ճարպկորեն ու խնամքով գրեց իր կոչումը, անունը, հայրանունն ու ազգանունը, ապա կարդաց գրվածը, մտածեց և ստորագրության տակ անսպասելիորեն մի ոլորապարդ դնելով, խորամանկորեն ու բարեկամաբար նայեց սպային։

Ապա ներս էկավ եֆրեյտոր Պիսկունը։ Նա դեռևս չէր հասել զեկավարության հեղինակության աստիճանները զանազանելուն, դրա համար էլ միատեսակ շռում էր աչքերը բոլորի վրա, ջանա-

լով խոսել «բարձրաձայն, համարձակ, ընդ որում միշտ ճշմարիտն ասելով»։ Այդ պատճառով էլ պետի հարցի մեջ դրական պատասխանի ակնարկ որսալով՝ բղավում էր «ճիշտ էդպես», հակառակ դեպքում՝ «ոչ»։

— Ուրեմն դու չգիտե՞ս, թե ով է գողացել երիտասարդ զինվոր Եսիպակի ճտքերը։

Պիսկունը բղավեց, որ չի իմանում։

— Իսկ գուցե Բայգուզի՞նն է արել։

— Ճիշտ էդպես, ձերդ ազնվություն,— դղրդվեց Պիսկունը ուրախ ու վստահ ձայնով։

— Իսկ ինչու՞ ես այդպես կարծում։

— Չեմ իմանում, ձերդ ազնվություն։

— Ուրեմն, գուցե դու բոլորովին էլ չե՞ս տեսել, թե նա ինչպես է գողացել։

— Չէ, չեմ տեսել։ Զինվորները որ գնացին ընթրիքի, նա մի գլուխ նառերի շուրջն էր պտույտ տալիս։ Հարցրի, թե՝ «ի՞նչ ես թրև գալիս էստեղարենք»։ Նա էլ թե՝ «իմ հացն եմ ման գալիս»։

— Ուրեմն, դու բուն գողությունը չե՞ս տեսել։

— Չեմ տեսել, ձերդ ազնվություն։

— Իսկ գուցե Բայգուզինից բացի մեկ ուրի՞շն էլ կար այնտեղ։ Գուցե ամենևին էլ նա՞ չի գողացել։

— Ճիշտ էդպես, ձերդ ազնվություն։

Եֆրեյտորի նկատմամբ Կոզլովսկին իրեն անհամեմատ սանձարձակ էր զգում, դրա համար էլ նրան ավանակ անվանելով՝ հարցաքննությունը տվեց ստորագրելու։

Պիսկունը երկար ժամանակ հարմարվում էր, աղմուկով ֆրոֆբսացնելով, լարվածությունից լեզվի ծայրը հանած, ու վերջապես ահավոր դժվարությամբ ճանկռոտեց՝ յեփրե Սպիրյիդոյն Պեսկունոու։

Այժմ Կոզլովսկին հասկացավ, որ ամբողջ գործն ի վերջո հանգում է վաշտի հերթապահ Պիսկունի մեկ հատիկ խախուտ ցուցմունքին, որը Բայգուզինին ընթրիքի ժամանակ տեսել է զորանոցում թափառելիս։ Ինչ վերաբերում է երիտասարդ զինվոր Եսիպակին, ապա նրան մինչ այդ ուղարկել էին հոսպիտալ, որովհետև տրախոմայով հիվանդ էր։

Վերջապես սպասյակը ներս թողեց երկու թաթարներին։ Նրանք սենյակ մտան վախվորած, չափազանցված զգուշությամբ հատակին դնելով սապոգները, որոնցից կտոր-կտոր թափվում էր աշ-

նանային ցեխը, և կանգ առան հենց դռան մոտ։ Կոզլովսկին հրամայեց նրանց մոտ գալ, նրանք երեք քայլ ևս արեցին, բարձրաբարձր գցելով ոտքները։

— Ազգանունն՝ե՛ր դ,— նրանց դիմեց սպան։

Կուշերբաևը շատ ժիր ու հստակ արտասանեց իր ազգանունը, որի մեջ և «օղլի» կար, և «գիրեյ» ու «միրզա»։

Բայգուզինը լուռ էր, հայացքը գետնին հառած։

— Թաթարերեն ասա նրան, որ ազգանունն ասի,— հրամայեց Կոզլովսկին թարգմանչին։

Կուշերբաևը շրջվեց մեղադրյալի կողմն ու թաթարերեն ինչ-որ բան ասաց քաշալերող տոնով։

Բայգուզինն աչքերը վեր բարձրացրեց, թարգմանչին նայեց անթարթ և տխուր պչն հայացքով, որով իր տիրոջն է նայում փոքրիկ կապիկը, և արագ, խռպոտ ու անտարբեր ձայնով ասաց.

— Մուհամեդ Բայգուզին։

— Ճիշտ այդպես, ձերդ ազնվություն, Մուհամեդ Բայգուզին,— զեկուցեց թարգմանիչը։

— Հարցրու նրան, Եսիպակի մոտից վերցրե՞լ է ճտքերը։

Փոխպորուչիկը կրկին համոզվեց իր անփորձության և փոքրոգության մեջ, որովհետև, ամաչկոտ ու նրբավար ինչ-որ զգացումից դրդված, չկարողացավ իսկական, «գողանալ» բառն արտասանել։

Կուշերբաևը կրկին շրջվեց ու սկսեց խոսել, այս անգամ հարցական ու կարծես թե խստության երանգով։ Բայգուզինը նրա վրա հառեց աչքերն ու դարձյալ լուռ մնաց։ Բոլոր հարցերին պատասխանում էր միևնույն տրտում լռությամբ։

— Չի ուզում խոսել,— բացատրեց թարգմանիչը։

Սպան վեր կացավ, մտազբաղ ետուառաջ քայլեց սենյակում ու հարցրեց.

— Իսկ ռուսերեն ոչի՞նչ չի հասկանում։

— Հասկանում է, ձերդ ազնվություն։ Նա նույնիսկ խոսում էլ է։ է՛յ, խարանդաշ, կորա՛լի մինգա[1],— դարձյալ դիմեց Բայգուզինին և երկար-բարակ խոսեց թաթարերեն, որին ի պատասխան Բայգուզինը նրա վրա հառեց իր կապկային հայացքը։

— Ոչ, ձերդ ազնվություն, չի ուզում։

---

[1] Խարանդաշ— մտերիմ, կորալի մինգա— ինձ նայիր (թաթ.) (ծան. ճեղ.)։

Լռություն տիրեց։ Փոխպորուչիկը մի անգամ ևս անկյունից անկյուն քայլեց ու հանկարծ զայրացած բղավեց թարգմանչի վրա։

— Գնա՛։ Այլևս պետք չես ինձ... Գնա՛, գնա՛։

Երբ Կուշերբաևը գնաց, Կոզլովսկին դեռ երկար ժամանակ անկյունից անկյուն էր քայլում իր միակ սենյակում։ Կյանքի դժվար բոպեներին նա միշտ դիմում էր այդ փորձված միջոցին։ Ու ամեն անգամ, Բայգուզինի մոտով անցնելիս, նա կողքանց, այնպես, որ աննկատ լինի, զննում էր զինվորին։

Հայրենիքի այդ պաշտպանը նիհար էր ու փոքր՝ տասներկուամյա տղայի նման։ Նրա մանկական, դարչնագույն, ցցված այտոսկրերով բոլորովին անմազ դեմքը ծիծաղելի ու խղճալի դուրս էր ցցված չափազանց լայն, ծնկներին հասնող թևքերով մոխրագույն շինելից, որի մեջ Բայգուզինը լողում էր, ինչպես ոլոռը պատիճի մեջ։ Աչքերը չէին երևում, որովհետև միշտ ցած էին նայում։

— Ինչու՞ չես ուզում պատասխանել,— հարցրեց փոխպորուչիկը, կանգ առնելով զինվորի դիմաց։

Թաթարը լուռ էր, աչքերը չէր բարձրացնում։

— Հը՞, ինչի՞ ես լռում, ախպեր։ Ահա, քո մասին ասում են, որ ճտքեր ես վերցրել։ Գուցե բոլորովին էլ դու՞ չես եղել։ Հը՞... Դե, խոսիր, վերցրե՞լ ես, թե՝ ոչ։ Հը՞...

Պատասխան չստանալով, Կոզլովսկին դարձյալ սկսեց քայլել։ Աշնան երեկոն արագորեն մթնում էր, և սենյակում ամեն ինչ մոխրագույն ու թախծալի երանգ էր ընդունում։ Անկյունները լիովին ընկղմվեցին խավարի մեջ, և Կոզլովսկին դժվարությամբ էր զանազանում գլխիկոր ու անշարժ մարմինը, որի կողքով ամեն անգամ անցնում-դառնում էր։ Փոխպորուչիկը հասկանում էր, որ եթե շարունակեր այդպես քայլել ամբողջ երեկոն ու ամբողջ գիշերը, մինչև լուսաբաց, ապա գլխիկոր մարմինը նույնպես կշարունակեր այդպես անշարժ ու լուռ կանգնել տեղում։ Այդ միտքը հատկապես ծանր ու տհաճ էր նրա համար։

Պատի ժամացույցը արագ ու խուլ ղարկեց տասնմեկ անգամ, ապա խշշաց-թշշաց ու, կարծես մտորելով, ավելացրեց երեք զարկ ևս։

Կոզլովսկին ավելի ու ավելի էր խղճում զինվորական մեծ շինել հագած այդ երեխային։ Իմիջիայլոց, Կոզլովսկու համար դա գրեթե անորսալի, տարօրինակ ու բոլորովին նոր զգացում էր, որից գլուխ հանել չէր կարողանում։ Կարծես թե Բայգուզինի ողորմելի ընկճվածության և անպաշտպանության մեջ մեղավոր էր ոչ այլ ոք, քան ինքը՝ փոխպորուչիկ Կոզլովսկին։ Թե որն էր այդ մեղքը, նա չէր կարող պատասխանել, բայց ամոթահար կլիներ, եթե հիմա մեկնումեկը հիշեցներ նրան, որ ինքը տգեղ չէ և լավ պարում է, որ իրեն խելացի են համարում, որ հաստատուն ամսագիր է ստանում ու կապված է մի սիրունիկ տիկնոջ հետ։

Այնպես մթնեց, որ Կոզլովսկին արդեն չէր զանազանում թաթարին։ Վառարանի վրա փայլփլեցին դուրս եկող նորալուսնի երկար ու աղոտ ցոլքերը։

— Ինձ լսիր, Բայգուզին,— սկսեց Կոզլովսկին անկեղծ, բարեկամական տոնով,— չէ որ մեր բոլորի աստվածն էլ մեկ է։ Ձերով որ լինի, ալլահ է, չէ՞։ Ախր պետք է ճշմարիտն ասել։ Հը՞։ Եթե հիմա չասես, մեկ է, հետո կիմանան, ու ավելի վատ կլինի։ Իսկ եթե խոստովանես, այնքան էլ վատ չի լինի։ Ես էլ քեզ համար կխնդրեմ։ Ագնիվ խոսք, քեզ ասում եմ, որ կխնդրեմ հօգուտ քեզ։ Հասկանում ես, մի խոսք է՝ ալլահ։

Սենյակում կրկին լռություն տիրեց, միայն ժամացույցն էր չխկչխկում համառ ու տխուր միապաղաղությամբ։

— Դե՞, Բայգուզին, որպես մարդ եմ քեզ խնդրում։ Դե՞, պարզապես որպես մարդ, ոչ թե որպես պետ։ Պետ՝ յոկ։ Հասկացա՞ր։ Հայր ունե՞ս։ Հը՞։ Գուցե, ինա՞յ էլ ունես,— ավելացրեց նա, պատահաբար հիշելով, որ թաթարերեն մորը ինայ են ասում։

Թաթարը լուռ էր։ Կոզլովսկին քայլեց սենյակով։ Ժամացույցի շղթան վեր քաշեց և հետո, մոտենալով պատուհանին, տրրտմած սրտով դուրս նայեց՝ աշնանային գիշերվա ցուրտ խավարին։

Ու հանկարծ ցնցվեց, իր ետևում լսելով ոչ բարակ մի ձայն լսելով.

— Ինայ ունեմ։

Կոզլովսկին արագ շրջվեց։ Նա հենց այդ ժամանակ մտածում էր, որ ինքն էլ ինայ ունի, մի անուշիկ, պառավ ինայ, որից ինքը բաժանված է մեկուկես հազար վերստ տարածությամբ։ Հիշեց, որ, ըստ էության, առանց մոր ինքը մեն-մենակ է այստեղ, ուր խոսում են կոտրտված ռուսերենով, և որտեղ միշտ օտարի պես է զգացել իրեն։ Հիշեց նրա ջերմ, փաղաքուշ և նուրբ հոգատարությունը, հիշեց, որ երբեմն, տարված աղմկոտ, հաճախ անփույթ կյանքով, ամիսներով մոռանում է պատասխանել մոր

երկար, հանգամանալից ու քնքուշ նամակներին, որոնց մեջ նա մշտապես որդուն վստահում է երկնային տիրուհու հովանավորությանը։

Փոխպորուչիկի և լռակյաց թաթարի միջև հանկարծ նուրբ ու քնքուշ կապ առաջացավ։ Կոզլովսկին վճռականորեն մոտեցավ զինվորին ու երկու ձեռքը դրեց նրա ուսերին։

— Դե, լսիր, աղավնյակս, ճիշտն ասա, գողացե՞լ, թե չես գողացել այդ ճտքերը։

Բայգուզինը քիթը քաշեց ու կրկնեց արձագանքի պես.

— Գողացել եմ ճտքերը։

— Երեսունյոթ կոպե՞կն էլ ես գողացել։

— Երեսունյոթ կոպեկն էլ եմ գողացել։

Փոխպորուչիկը հոգոց հանեց ու դարձյալ քայլեց սենյակով։ Հիմա արդեն զղջում էր, որ խոսք բացեց «ինայի» մասին ու Բայգուզինին հասցրեց խոստովանության։ Մինչ այդ գոնե ուղղակի ոչ մի հանցանշան չկար։

«Լա՜վ, թրև է եկել զորանոցում, հետո՞ ինչ, որ թրև է եկել։ Ոչ ոք ոչ մի բան չէր կարող ապացուցել։ Իսկ հիմա սոսկ պարտականության գիտակցումից ստիպված ես արձանագրել նրա խոստովանությունը։ Դե լա՜վ, պարտականությո՞ն է դա արդյոք։ Իսկ գուցե հիմա իմ պարտականությունը հենց այն է, որ չարձանագրեմ այդ խոստովանությունը։ Չէ՞ որ նրա հոգու մեջ մի լավ զգացում արթնացավ, գուցե նաև զղջո՞ւմ։ Իսկ նրան հանցագործի նման անպայման, անպայման կճիպոտահարեն։ Մի՞թե դա կօգնի։ Ահա, «ինայ» էլ ունի։ Եվ, բացի դրանից, պարտականությունը չէ՞ որ «առաձգական հասկացություն» է, ինչպես ասում է կապիտան Գրեբբերը։ Լավ, իսկ եթե նրան մեկ անգամ էլ հարցաքննե՞ն։ Հո չե՞մ կարող նրա հետ խոսքս մեկ անել, նրան սովորեցնել խաբել զեկավարությանը։ Ա՜խ, խեղճ տղա, խեղճ տղա։ Իմ կարեկցանքով գլխիդ փորձանք բերեցի»։

Կոզլովսկին թաթարին հրամայեց զորանոց գնալ և իր մոտ գալ վաղն առավոտյան շուտ։ Մինչ այդ հույս ուներ լավ կշռադատել եղած-չեղածն ու կանգ առնել որևէ խելացի որոշման վրա։ Համենայն դեպս, լավագույն ելքը թվում էր հատկապես համակրելի պետերից մեկնումեկին դիմելն ու բոլոր մանրամասնությունները նրան բացատրելը։

Ուշ գիշերով, անկողին մտնելիս, նա հարցրեց իր սպասյակին։ Թե, նրա կարծիքով, Բայգուզինին ի՞նչ կանեն։

— Անպայման կճիպոտեն, ձերդ ազնվություն,— համոզված պատասխանեց սպասյակը։— Ախր ո՞նց չճիպոտես նրան, երբ որ զինվորի վերջին ճտքերն է քաշում տանում։ Զինվորը աստծուն պահ տված մարդ է... էդ որտե՞ղ է տեսնված, որ քո ախպորիցը նրա վերջին ճտքերը գողանաս։ Աս-սացե՞ք, խնդրեմ...

Աշնանային պարզ ու մի քիչ ցուրտ առավոտ էր։ Խոտերը, գետինը, տների տանիքները՝ ամեն ինչ ծածկված էր եղյամի բարակ ու ճերմակ փառով։ Թվում էր, թե ծառերին ջանասիրությամբ դիմափոշի են ցանել։

Զորանոցային ընդարձակ բակը, չորս կողմից պատնեշված փայտյա երկարուկ շինություններով, մրջնանոցի պես լեփ-լեցուն էր զինվորների մոխրագույն շինելներով։ Սկզբում թվում էր, թե մրջնային այդ իրարանցման մեջ որևիցե կարգ չկար, բայց փորձված աչքը կարող էր արդեն նկատել, թե ինչպես դրանցից յուրաքանչյուրն աստիճանաբար ծավալվում էր, կազմելով երկար և ուղիղ շարք։ Վերջին ուշացածները վազեվազ գալիս էին, ոտքի վրա ծամելով հացի կտորը, կոճկելով պայուսակների գոտին։

Մի քանի րոպե անց վաշտերը մեկը մյուսի ետևից փայլեցրին ու զրնգզրնգացրին զենքերը և մեկը մյուսի ետևից քայլեցին դեպի բակի կենտրոն, որտեղ կանգ առան դեմքները դեպի ներս, ուղղանկյուն քառանկյան ձևով, որի մեջտեղում մի փոքր հրապարակ մնաց՝ շուրջ քառասուն քայլ լայնությամբ, այդքան էլ երկարությամբ։

Սպաների մի փոքր խումբ կանգնած էր հեռվում, գումարտակի հրամանատարի շուրջը։ Խոսակցության առարկան շարքային Բայգուզինն էր, որի նկատմամբ այսօր ի կատար պիտի ածվեր գնդի դատարանի դատավճիռը։

Բոլորից շատ խոսողը մի վիթխարի, շիկահեր սպա էր, զինվորական մահուդից կարված, ոչխարենու օձիքով հաստ շինելը հագին։ Այդ շինելն իր պատմությունն ուներ և գնդում հայտնի էր երկու անունով՝ պահակի քուրք և տատիկի խալաթ։ Ի դեպ, տիրոջ ներկայությամբ ոչ ոք այդ անունները չէր տալիս շինելին, որովհետև բոլորը վախենում էին նրա երկար ու կեղտոտ լեզվից։ Ինչպես միշտ, նա խոսում էր կոպիտ, մալոռուսական առոգանությամբ, լայն-լայն շարժումներ անելով, որոնք երբեք չէին համապատասխանում խոսակցության իմաստին, նախադասու-

թյան այն անհեթեթ կառուցմամբ, որը մատնում է նախկին սեմինարիստին։

— Այ, մեր բուրսայում[1] իսկական էին ծեծում։ Ուզած չուզած՝ պատահում էր, բայց շաբաթ օրը շալվարդ հանիր։ Այդպես էլ ասում էին. «Ճիշտ ես ասում, սիրունս, ճիշտ, դե մի պառկիր...» Թե մեղավոր ես՝ պատիժ կլինի, մեղավոր չես՝ պարդև կլինի։

— Է, ոնց որ թե սրան լավ կհասցնեն,— մեջ դցեց գումարտակի հրամանատարը,— զինվորները գողությունը չեն ներում։

Շիկահեր սպան արագ շրջվեց նրա կողմը պատրաստի առարկությամբ, բայց միտքը փոխեց ու չխոսեց։

Գումարտակի հրամանատարին մոտեցավ ֆելդֆեբելը և ինստաձայն զեկուցեց.

— Ձերդ գերազանցություն, բերում են այդ թաթարին։

Բոլորը նոր շրջվեցին։ Կենդանի քառանկյունին հանկարծ իրար անցավ առանց որևէ հրամանի և սկվեց։ Սպաները կամաց-կամաց մոտեցան իրենց վաշտերին, քայլելիս կոճկելով ձեռնոցները։

Վրահաս լռության մեջ հատ-հատ լսվում էր երեք մարդու ծանր ոտնաձայն։ Բայգուզինը քայլում էր երկու պահակների մեջտեղից։ Նրա հագին նույն լենուրոլ շինելն էր, մեջքի վրա բուզմագույն դարկատաններով, թևքերն առաջվա պես ծնկներին էին հասնում։ Գլխին թխմած գլխարկի եզրերն առջևից իջել էին գրդականիշի վրա, իսկ ետևից վեր էր ցցվել, ավելի ողորմելի տեսք տալով թաթարին։ Տարօրինակ տպավորություն թողեց այդ փոքրիկ, կորացած հանցագործը, երբ կանգ առավ երկու պահակների միջև, լորս հարյուր զինված մարդկանց կենտրոնում։

Այն պահից ի վեր, երբ Կոզլովսկին հրամանի մեջ կարդաց Բայգուզինին մարմնական պատիժ նշանակելու մասին, օտարոտի և խառնիխուռն տպավորություններ պաշարեցին նրան։ Կոզլովսկուն չհաջողվեց ոչինչ անել Բայգուզինի համար, որովհետև հաջորդ օրն իսկ ղեկավարությունը շտապեցրեց նրան՝ հետաքննությունն ավարտել։ Ճիշտ է, թաթարին տված խոստումը հիշելով, դիմեց իր վաշտի հրամանատարին՝ խորհրդի համար, բայց լիակատար անհաջողություն կրեց։ Վաշտի հրամանատարը նախ զարմացավ, ապա քրքջաց և, ի վերջո, տեսնելով երիտասարդ սպայի ուժգնացող հուզմունքը, սկսեց կողմնակի բաներից խոսել և շեղեց նրա ուշադրությունը։ Կոզլովսկին այժմ իրեն զգում էլ ոչ որպես դավաճան, բայց նրան թվում էր, թե ինքը խաբեությամբ է Բայգուզինից կորզել գողության խոստովանությունը։ «Բայց ախր սա ավելի վատ է,— մտածում էր նա,— մարդու սիրտը հուզել՝ տունը, մորը հիշեցնելով, հետո էլ իսկույն ոչմել»։ Հիմա, լսելով շիկահեր սպային, նա ավելի խիստ ատեց նրա տհաճ, կեղտոտ մորուքը, նրա ծանր, կոպիտ մարմինը, գլխարկի տակից դուրս պրծած ճարպոտ մազափնջերը։ Ըստ երևույթին, այդ մարդը հաճույքով էր եկել դիտելու այդ տեսարանը, որի մեղքը, այնուամենայնիվ, Կոզլովսկին իր վրա էր վերցնում։

Գումարտակի հրամանատարը դուրս եկավ կենտրոն և, հետևն արած Բայգուզինի կողմը, ձգելով և հատու բղավեց։

— Պատ-վի-ի՜...

Կոզլովսկին կիսով չափ թուրը պատյանից հանեց, ցնցվեց, ասես ցրտից, և հետո ամբողջ ժամանակ անդադար դողացնում էր նյարդային մանր դողով։ Հրամանատարը աչքերը սահեցրեց շարքի վրայով և ընդոստ բղավեց.

— ... ա՜ռ...

Քառանկյունին շարժվեց, երկու անգամ կտրուկ շրխկ-շրխկացրեց զենքերն ու քարացավ։

— Համհարզ, կարդացեք գնդի դատարանի դատավճիռը,— ասաց հրամանատարն իր կոշտ ու հստակ ձայնով։

Համհարզը մեջտեղ եկավ։ Նա բոլորովին չէր կարողանում ձի քշել, բայց ջանում էր նմանեցնել հեծելակի սպաների քայլքին, ճոճվելով և ամեն քայլափոխի իրանն առաջ տալով։

Կարդում էր սխալ շեշտադրությամբ, անհասկանալի, անհարկի ձգելով բառերը։

— N հետևակային գնդի դատարանը հետևյալ կազմով. նախագահ՝ փոխգնդապետ N, անդամներ՝ այսինչ և այնինչ...

Բայգուզինն առաջվա պես գլխիկոր կանգնած էր երկու պահակների միջև և սոսկ հազվադեպ անտարբեր հայացքը սահեցնում էր զինվորների շարքերի վրայով։ Երևում էր, ոչ մի բառ չի լսում կարդացածից, և հազիվ թե կարգին գիտակցում է, հանուն ինչի են պատրաստվում իրեն պատժել։ Միայն մեկ անգամ նա շարժվեց, քիթը վեր քաշեց ու սրբեց շինելի թևքով։

Կոզլովսկին նույնպես չէր հետևում դատավճռի իմաստին և հանկարծ ցնցվեց, լսելով իր ազգանունն այնտեղ, ուր խոսք էր

[1] Հոգևոր դպրոց ցարական Ռուսաստանում (ծան. թարգմ.)։

գնում հետաքննության մասին։ Անմիջապես այնպիսի զգացում ապրեց, ասես բոլորը վայրկենապես գլուխները շրջեցին իր կողմը և տեղնուտեղը երեսները թեքեցին։ Սիրտն սկսեց վախեցած խփել։ Բայց այդ բոլորը թվաց միայն, որովհետև իրենից բացի, ոչ ոք ազգանունը չլսեց, և բոլորը միևնույն անտարբերությամբ էին լսում, թե ինչպես է համհարզն արագ ու միապաղաղ բորբոքացնում դատավճիռը։ Համհարզն ավարտեց նրանով, որ Բայգուզինը դատապարտվում է ճիպոտահարության՝ հարյուր հարվածի չափով։

Գումարտակի հրամանատարը հրամայեց «ոտքի առ» և գլխով նշան արեց բժշկին, որը վախվխելով ու հարցական նայում էր շարքերի ետևից։ Երիտասարդ, լուրջ մարդ էր բժիշկը և կյանքում առաջին անգամ էր ներկա էկզեկուցիայի[1]։ Շփոթվելով ու իրեն ասես կապկված զգալով՝ վրան հառած հարյուրավոր աչքերի հայացքից, մի կերպ եկավ կանգնեց գումարտակի կենտրոնում՝ գունատ կզակը դողդողացնելով։ Երբ Բայգուզինին հրամայեցին հանվել, թաթարը միանգամից չհասկացավ, և երբ արդեն մեկ անգամ էլ կրկնեցին ու նշաններով ցույց տվեցին, թե ինչ պիտի անել, նա դանդաղորեն, անվարժ շարժումներով արձակեց շինելի և մունգիրի կոճակները։ Ետևսափելով նրա աչքերին նայելուց, խորշագին սարսափի արտահայտությունը դեմքին, բժիշկը լսեց սիրտն ու զարկերակը և տարակուսած ցնցեց ուսերը։ Նման դեպքերում սովորական հուզմունքի նվազագույն հետք անգամ չնկատեց նա։ Ակներև էր, որ Բայգուզինը կամ չէր հասկանում, թե ինչ են կամենում իր հետ անել, կամ նրա խավար ուղեղն ու ամուր նյարդերը չէին կարողանում համակվել ոչ ամոթով, ոչ էլ վախով։

Բժիշկը մի քանի բառ ասաց գումարտակի հրամանատարի ականջին և արագ-արագ, միևնույն շփոթ քայլքով գնաց շարքերի կողմը։ Ինչ-որ տեղից դուրս պրծան մի հինգ զինվոր ու շրջապատեցին Բայգուզինին։ Նրանցից մեկը՝ թմբկահարը, մի կողմ կանգնեց և աջ ձեռքն ու փայտիկը վեր ցցած, սպասողական նայում էր գումարտակի հրամանատարին։

Թաթարն սկսեց հանել շինելը, բայց այնքան դանդաղ, որ նրան շրջապատող մարդիկ ստիպված էին օգնել։ Որոշ ժամանակ նա տատանվում էր, չիմանալով ուր դնել շինելը, վերջապես խնամքով փռեց գետնին ու սկսեց հանվել։ Նրա մարմինը սև էր ու զարմանալի նիհար։ Կոզլովսկու մտքով անցավ, որ թաթարը, հավանորեն, շատ է մրսում, և այդ մտքից սպան ավելի ուժեղ դողացրեց։

Թաթարը կանգնած էր անշարժ։ Նրա շուրջն իրար անցած զինվորները սկսեցին նրան ցույց տալ, որ պետք է պառկել։ Նա դանդաղորեն մի կերպ ծնկի եկավ՝ ձեռքերը գետնին կպցնելով, ապա պառկեց փռած շինելին։ Զինվորներից մեկը, պպզելով, բռնեց նրա գլուխը, մյուսը նստեց ոտքերին։ Երրորդը՝ ենթասպան, մի կողմ քաշվեց, հարվածները հաշվելու համար, և միայն այդ ժամանակ Կոզլովսկին նկատեց, որ գետնին Բայգուզինի աջ ու ձախ կողմը կանգնած մյուս երկուսի քթերի մոտ կարմիր ու դալար ճիպոտների խրձեր են ընկած։

Գումարտակի հրամանատարը գլխով արեց, և թմբկահարը արագ ու ուժգին թմբկազարկ սկսեց։ Բայգուզինի երկու կողքերից կանգնած զինվորներն անվճռական միմյանց էին նայում, նրանցից ոչ մեկը չէր ուզում առաջինը հարված հասցնել։ Ենթասպան մոտեցավ նրանց ու ինչ-որ բան ասաց... Այդ ժամանակ աջ կողմում կանգնածը, ատամները սեղմելով, դեմքին անողոք արտահայտություն տալով, ճիպոտն արագ վեր բարձրացրեց ու արագ էլ շրմփացրեց, ամբողջ մարմնով առաջ թեքված։ Կոզլովսկին լսեց ճիպոտի հատու շվվոցը, խուլ հարվածը և ենթասպայի ձայնը, որը բղավեց՝ «մե՛կ»։ Թաթարը թույլ, ասես զարմացած, ճչաց։ Ենթասպան հրամայեց՝ «երկու՛»։ Ձախ կողմը կանգնած զինվորը նույնպես արագ թափ առավ ու առաջ կռացավ։ Թաթարը դարձյալ ճչաց, այս անգամ ավելի բարձր, ու նրա ձայնի մեջ արձագանք տվեց խոշտանգվող ջահել մարմնի տառապանքը։

Կոզլովսկին նայեց նրա շուրջը կանգնած զինվորներին։ Նրանց միօրինակ գորշ դեմքերը նույնքան անշարժ էին և անտարբեր, ինչպես միշտ լինում են շարքի մեջ։ Ոչ կարեկցանք, ոչ հետաքրքրություն, ոչ մի միտք հնարավոր չէր տեսնել այդ արձանացած դեմքերի վրա։ Փոխպորուչիկը ամբողջ ժամանակ դողում էր ցրտից և հուզմունքից։ Նրա համար ամենատանջալին ոչ Բայգուզինի բղավոցներն էին, ոչ իր մասնակցությունն այդ պատժին, այլ այն, որ թաթարն, ըստ երևույթին, իր մեղքը չի հասկացել, և թե ինչի համար են իրեն ծեծում՝ կարգին չի պատկերացնում։ Նա եկել է ծառայության, դեռևս տանը հաղար ու մի բան լսած այստեղի սարսափների մասին, արդեն վաղորդ պատ-

1 *Մարմնական պատիժ* (ծան. բարգմ.)։

բաստ խստության և անարդարության։ Վաշտի, զորանոցի հրամանատարների կոպիտ ընդունելությունից հետո նրա առաջին մղումն է եղել փախչել գնալ բելբեբեյան իր հայրենի արտերը։ Նրան բռնել ու մենախուց են նստեցրել։ Հետո նա վերցրել է այդ ճաքերը։ Թե ինչն է նրան դրդել, ինչի համար է վերցրել, չէր կարող նույնիսկ ամենամոտ մարդուն պատմել, ոչ հորը, ոչ մորը։ Եվ Կոզլովսկին ինքն էլ չէր տանջվի այդպես, եթե պատժեին գիտակցված, հաշվենկատ գողի կամ թեկուզ նույնիսկ բոլորովին մի անմեղ մարդու, որը միայն թե ընդունակ լիներ հասկանալ հասարակական ծեծի ողջ խայտառակությունը։

Հարյուր հարված համրեցին, թմբկահարը դադարեցրեց զարկը, և Բայգուզինի շուրջը դարձյալ իրար անցան միևնույն զինվորները։ Երբ թաթարը ոտքի կանգնեց ու սկսեց անշնորհք ու անվարժ կոճկվել, նրա աչքերն ու Կոզլովսկու աչքերը հանդիպեցին, և նորից, ինչպես հարցաքննության ժամանակ, փոխպորուչիկը իր ու զինվորի միջև հոգեկան տարօրինակ կապ զգաց։

Քառանկյունին ցնցվեց. գորշ պատերը սկսեցին ցրիվ գալ։ Բոլոր սպաները միասին գնում էին զորանոցային դարպասի կողմը։

— Է, ի՞նչ,— ասում էր շիկահեր սպան, ձեռքերով լայն-լայն ու անհեթեթ շարժումներ անելով,— բա սրան ճիպտե՞լ կասեն։ Մեր բուրսայում, երբ որ ճիպոտում էին, առաջուց ճիպոտները քացախի մեջ լավ թրջում էին... Այ թե ձեռս կտային այդ թաթարին, ես նրան ճաքեր ցույց կտայի։ Թե չէ հո չեն ծեծում, հենց էնպես, խուտուտ են տալիս։

Կոզլովսկու գլխի մեջ հանկարծ ինչ-որ բան աղմկեց։ Իսկ աչքերի առջև կարմիր մշուշ լողաց։ Նա կտրեց շիկահեր սպայի ճառապարհը և դողացող ձայնով, այդ բոպեին ինքն իրեն ծիծաղելի զգալով ու էլ ավելի բորբոքվելով նման գիտակցումից, բղավեց բարակ ձայնով.

— Դուք մի անգամ արդեն ասել եք այդ նողկանքը և... և... նեղություն մի կրեք կրկնել... Այն ամենը, ինչ դուք ասում եք, անմարդկային է ու դարշելի։

Շիկահեր սպան, վերից վար նայելով իր անսպասելի հակառակորդին, ուսերը ցնցեց.

— Երիտասարդ, դուք հավանաբար հիվա՞նդ եք։ Ինչի՞ եք կպել ինձնից։

— Ինչու՞,— նույն ձայնով ճչաց Կոզլովսկին։— Ինչու՞... Նրա համար, որ դուք... որ եթե դուք անմիջապես չլռեք...

Անսպասելի վեճից անհանգստացած սպաներն արդեն ետ էին քաշում նրան՝ թևերից բռնած, և Կոզլովսկին, հանկարծ ափերով ծածկելով դեմքը, բարձրաձայն հեկեկաց, արտասվող կնոջ նման ամբողջ մարմնով ցնցվելով, ամաչելով իր արցունքներից՝ չարաչար ու ցավագին...

1894

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

1

Մի քանի տարի առաջ ամռան ամիսները ես անցկացնում էի ամառանոցում, փոշեկոլոլ, հեղձուկ, իրարանցումով ու դղրդյունով լի քաղաքից հեռու, սոճու խիտ անտառի խորքերում ընկած մի գյուղակում, երկաթուղու կայարանից ութ վերստի վրա։ Այն ժամանակ նոր-նոր էին սկսել այդ կողմերում հայտնվել անդրանիկ պիոներները ամառանոցային ապագա գաղութի, որը հիմա այդ հաճելի, հարմար վայրը ծայրեծայր ողողել է ամառանոցային պճնամոլական կոստյումներով, բամբասանքով, սիրողական ներկայացումներով, արևածաղկի կեղևով, դաշնամուրային վարժություններով ու սիրախաղով։ Հիմա արդեն այնտեղ ոչ առաջվա էժանությունը կա, ոչ առաջվա լռությունը, ոչ էլ բարքերի գերիչ պարզությունը։

Առաջ մեկ-մեկ առավոտ ծեգին կարթնանայի արեգակի հետ, երբ դեռ ճերմակին է տալիս շաղոտ խոտը, իսկ անտառից, ծառերի բարձր, մերկ ու կարմիր բներից հատկապես ուժեղ է փչում խեժի թունդ բույրը։ Առանց լվացվելու, սպիտակեղենի վրայից ուսերիս գցելով հին վերարկուն, կվազեի գետափ, արագ-արագ կհանվեի ու թափով կնետվեի սառը, արշալույսից վարդագույն, դեռևս թեթևակի գոլորշիով պատված, հայելու պես ողորկ ջուրը, ի մեծ սարսափ բադերի ամբողջ մի ընտանիքի, որը տագնապալի կռնչյունով ու շլմփոցով խուճապահար դեսուդեն կլողար առափնյա եղեգնուտից։ Լողալուց հետո, ցրտից դողալով, ամբողջ մարմնով առողջություն ու թարմություն զգալով, կշտապեի թեյելու։ Սեղանը գցված կլիներ խիտ թփուտներով պատած նախասրահում, եղրևանու թփերի ստվերում՝ բուրավետ ու կանաչ մի

ծածկ սեղանի վրա։ Փայլուն ինքնաեռի շուրջ սեղանի վրա դրված կլիներ թանձր ու դեղին սերուցքով լի կաթնամանը, գյուղական թարմ հացի խոշոր կողը, տաք, հենց նոր կտրած մեղրահացը կոատուկի տերևի վրա, տոուզ, կապտավուն փառով դեռևամորու մի ափսե։ Ինքնաեռի մոտ կլիներ տանտիրուհու աղջիկ Գաննուսյան՝ սևակն, ամրակազմ, կրակոտ ու չարաճճի մի գեղջկուհի։ Եվ ի՞նչ բերկրալից, ի՞նչ ջահելավարի կհնչեր նրա զվարթ ողջույնը վաղորդյան թարմ օդի մեջ. «Բարև, բարի լույս, պարոնին»։

Ամբողջ օրը հրացանն ուսիս, շան հետ կթափառեի շրջակա անտառներում ու ճահիճներում, շիկահեր երեխաների հետ խեցգետին կբռնեի գետափին, ուռկան կքաշեի ձկնորսների հետ և ուշ գիշերով ձկնապուր կեփեի նրանց հետ կամ կարթը ձեռքիս, կես արշինանոց եղրեր ունեցող ծղոտե գլխարկով գլուխս արևից պաշտպանելով կնստեի և ուշադիր կհետևեի լողանին, որը հազիվ կերևար ղետի հալած ու դողդոջուն արծաթի մեջ։ Տուն կդառնայի հոգնած, ոտից գլուխ ցեխոտված, սակայն առույգ ու զվարթ, գազանի ախորժակով։

Իսկ ուշ երեկոյան, այն բանից հետո, երբ փոշի բարձրացնելով ու խոնվելով, նոր կթած կաթի և խոտի բույրերով օդը լեցնելով, գյուղ կդար նախիրը, ինչպիսի հաճույք էր նստել դռան մոտ և լսել ու նայել, թե աստիճանաբար ինչպես է խաղաղվում գյուղական անխոով կյանքը... Ավելի ու ավելի սակավ, մեղմ ու հեռավոր են հնչում՝ մեկ անիվների ճռռոցը, մեկ մալոուսական քնքուշ երգը, մեկ ձիու հնչեղ վրնջոցը, մեկ թռչունների իրարանցումն ու վերջին ճռվողյունը, ի վերջո, գիշերային հարմոնիայի այն անծանոթ, հանելուկային, սքանչելի ակորդները, որոնք մեզնից յուրաքանչյուրը լսել է և որոնք ոչ ոք չի կարողացել ոչ հասկանալ, ոչ նկարագրել... Հանգչում են լույսերը, մթնակապույտ երկնքում վառվում ու ցոլցլում են արծաթյա ջինջ աստղերը... Անուշ, բայց և տարտամ, թանկ հիշողություններ են պաշարում գլուխդ։ Քեզ զգում ես ջահել, լավ ու բարի, զգում ես, թե ինչպես ես թոթափում ձմռան ընթացքում կուտակված քաղաքային ձանձրույթը, քաղաքային չարացածությունը, քաղաքային բոլոր տկարությունները...

Հիմա արդեն իմ խաղաղ հանգրվանում չկա ոչ անխառն կաթ, ոչ առանց մարգարինի կարագ, ոչ հովվերգական զմայլելի պատկերներ։ Անտառում վճռական ցուցանակներ են մեխված, որոնք

արգելում են որսը, սունկ և հատապտուղ հավաքելը, ճանապարհներով սուրում են երկուտակված, երկարոտն հեծանիվորդներ, գետափին վխտում են կրծքաբաց մարզիկներ՝ զոլավոր ֆուֆայկաներով, իսկ տանտիրուհու աղջիկները գործած ձեռնոցներ են քաշում և համբարակային գրագիրներից վաղուց արդեն ընդօրինակել են «Հավատարիմ իմ շնիկ ֆինգալայի» մասին հանրահայտ անեղութ պատմանը։

2

Երբ հաջորդ ամռանը գյուղ եկա, և Գաննուսյայի օգնությամբ սենյակս էի կարգի բերում, ի թիվս բազմաթիվ այլ նորությունների, Գաննուսյան հայտնեց, որ իրենց տան դիմաց, Կոմարիխայի խրճիթում սենյակ են վարձել «երկու հատ կենվոր»՝ կին և ամուսին։

— Օսիպովնան ասում է, որ տասը տարի կլինի, պսակված են։ Մարդն էնքան էլ սիրուն չի, համա կինն էնքան սիրուն է, էնքան սիրուն, ոնց որ արևի լուս... Էս է, կոտանենը։ Օսիպովնան ասում է, որ պարոնը վարժապետ է քաղաքում։ Օրական քաղաք է գնում երկաթգծով։

Երկու ժամ անց, պատուհանից դուրս նայելիս, տեսա հարևանուհուս։ Քառապատուհան փոքրիկ տնակը, որն իր սպիտակ, զվարթատես պատերով թաղված էր բալի, սալորի, խնձորի ու տանձի խիտ կանաչի մեջ, մեր տան դիմաց էր։ Բաց, մարմաշե թեթև վարագույրները կիսով քաշած պատուհանի մոտ նստած էր նա, սպիտակ կոֆտայով՝ ցանցկեն զարդակարերը թևքերին ու կրծքին, և արմունկները լուսամուտագոգին հենած, գիրք էր կարդում։ Դեմքը նուրբ ու հասարակ այն դեմքերից էր, որոնց կողքով սկզբից անտարբեր ես անցնում, բայց ավելի ուշադիր նայելով ու հասկանալով, ակամա հմայվում ես նրանց բնորոշ քնքշանքի, երազկոտության, գուցեև թաքնված կրքոտության խառն արտահայտությամբ։ Դեմքի բոլոր մանրամասները հեռվից և առաջին անգամից, իհարկե, չկարողացա զննել, բայց հասցրեցի նկատել նրա փարթամ շեկ մազերը, որոնք գանգրացված չէին, այլ ետ էին գցած, այնպես որ նրա ոչ մեծ, կողքերից շիկավուն փայլող աղվամազով պատած ճակատը բաց էր, հոնքերը շատ էին բարակ, մազերից ավելի մուգ, մեջտեղից բեկված ծաղրական, միաժա-

մանակ միամիտ արտահայտությամբ, ականջները փոքր էին ու վարդագույն։ Հետագայում ավելի մոտիկից զննեցի նրան. ամենագեղեցիկը աչքերն էին՝ երկարավուն, մուգ մոխրագույն և շատ փայլուն։

Հինգն անց էր, որ եկավ շիկահեր կնոջ ամուսինը, քառասունին մոտ պարոն էր, ուսուցչի տիպական արտաքինով՝ գզգզված մորուք, սև մազեր, ոսկյա ակնոց, հոգնած ու հաճելի դեմք և նիհար մարմին։ Եկավ գեղջկական հասարակ սայլով, փոշուց պաշտպանված պարուսինե սպիտակ բալախոնով, կնդուղը քաշած գլխին։ Դեռ չէր հասցրել իջնել իր անհարմար կառքից, կինն ընդառաջ վազեց, վազելիս գլխին ցցելով մետաքսե ճերմակ գլխանոցը։ Այստեղ նրա կազմվածքն էլ զննեցի. բարձրահասակ էր, բարեկազմ ու ճապուկ, ճիշտ մեկեն աճած դեռահասի պես, թեև դեմքից կարելի էր ասել, որ քսանյոթ, քսանութ տարեկան է։ Այն ժամանակ, երբ ամուսինն անվարժ շարժումով ընդարմացած ոտքերը սայլի բարձր կողից կախած զգուշորեն ցած էր սահում, կինն աշխույժով ինչ-որ բաներ էր ասում, ծիծաղում ու սայլի միջից զանազան ծրարներ ու փաթեթներ իջեցնում։

Շիկահեր կնոջ ետևից, պարտեզի դռնակից սրընթաց դուրս թռավ յոթնամյա մի տղա, որը շատ էր նման մորը, ու նիհար էր, գունատ, հավանորեն վատառողջ էր։ Ծղրտալով նետվեց դեպի հայրը և կախվեց վզից, մինչև ծնկները բաց ոտքերը թափահարելով օդի մեջ։ Երեքն էլ խրճիթ մտան։

Երեկոյան նորից տեսա նրանց։ Ամուսինը, որի հագին երկար, կապույտ բլուզ կար, առանց գոտու, որպիսին նկարիչներն են աշխատելիս հագնում, պպզել էր տան դիմացի նախապարտեզում տնկած պստլիկ ծաղկաթմբերից մեկի վրա և կենտրոնացած համբերատարությամբ ինչ-որ բան էր անում։ Կռահեցի, որ ծաղկի սերմեր է ցանում։ Տղան կանգնած էր կողքին, ձեռքերը ետևը դրած և ուշադրությամբ հետևում էր հոր արածին։ Եգիպտակազգեստ շիկահերի սլացիկ կերպարանքը մեկ տան էր Երևում, մեկ՝ այգում, և ես ակամա հիացա նրա նազելի, ճկուն շարժումներով։ Մի անգամ նա մոտեցավ ամուսնուն, և սա պպզած տեղից բարձրացրեց իր քրտնած ու ժպտուն դեմքը և մի քանի բառ ասաց, մատնացույց անելով իր աշխատանքը։ Կինը կռացավ, հանեց նրա լայնեզր գլխարկը և թաշկինակով սրբեց քրտնած ճակատը։ Ամուսինն արագ բռնեց նրա ձեռքն ու համբուրեց։

«Չէ,— մտածեցի ես, այդ քնքուշ ու պարզ տեսարանին ի տես,— թեև ամառանոցային հարևանությունն անկաշկանդ ծանոթության որոշ իրավունքներ տալիս է, բայց ես ծանոթություն չեմ փնտրի։ Մի՞թե կհամարձակվեմ այդ համակրելի, տեսքից դատելով՝ բարի մարդուց նրա տնական ուրախությունների թեկուզ նվազագույն մասնիկը խլել անկոչ ներխուժմամբ։ Իր ծաղկաթմբերը հանգիստ փորփրելու փոխարեն ստիպված պիտի լինի ինձ զբաղեցնել խոսակցությամբ՝ վինտի մասին, եղանակի, թերթերի, առողջության մասին, այն ամենի մասին, ինչ, հավանորեն, շատ վաղուց արդեն նրան ձանձրացրել է քաղաքում։ Եվ, բացի դրանից, ո՞վ իմանա, գուցե մոտիկից ծանոթանալուց հետո այդ համակրելի մարդը փոխակերպվի մանրախնդիր ու շարացած ձախողակի, իսկ երաղկոտ շիկահերը պարզվի, որ բամբասասեր է կամ գիներալի դուստր՝ իր արիստոկրատական ազգուտակով ու սեթևեթ շարժուձևով... Այդպիսի կերպարանափոխություններ հաճախ են լինում»։

Այսպիսով, մտքիս մեջ որոշելով չօգտվել հարևանության արտոնություններից, անցա իմ սովորական գործերին՝ որս, ձկնորսություն, լող, ընթերցանություն, արանքներում էլ՝ հայեցողական պարապություն։ Հարևանները նույնպես անձիս հետ ծանոթանալու առանձնապես ուժեղ ցանկության նշաններ ոչնչով չդրսևորեցին, գուցեև իմ ունեցած նույն նկատառումներով։

Այդուհանդերձ, նրանց կյանքի բոլոր մանրուքների ականատեսն էի ես, ու պիտի խոստովանեմ, այդ կյանքը երբեմն-երբեմն սեփական խաղաղ անկյուն և ջերմ, կանացի անփոփոխ քնքշության տարտամ ցանկություններ էր առաջացնում իմ գրլխում։ Եթե ինձ ընտրություն առաջարկեին այդ տեսակետից, ավելի լավ կին, քան հարևանուհիս էր, չէի ցանկանա՝ այնքան կանացիություն կար նրա մեջ, նազանք, շարաճճիություն և հոգատարություն ամուսնու նկատմամբ։ Ճիշտ է, իմ կնոջ պարագային ես գոհ կլինեի բնավորության մի գծի բացակայությամբ, որը շիկահերի դեպքում աչքի զարնեց առաջին իսկ օրերից՝ պարզապես չափից դուրս էր կարդում։ Յուրաքանչյուր ազատ րոպեն, գործը վերջացնելուն պես, նա նվիրում էր գրքերին, և մինչև հիմա, երբ հիշում եմ նրան, աչքերիս առաջ պատկերվում է ոչ այլ կերպ, քան նստած մարմաշե վարագույրներով բաց լուսամուտի մոտ, կամ պառկած ցանցաճոճի մեջ, ծեր խնձորենիների ստվերում, անպայման՝ գիրքը ձեռքին։ Նրա ընթերցման եղանակից և

գրքերի թեթևամիտ կազմերից համոզված էի, որ թարգմանական վեպեր է կարդում։ Ուշ գիշերին, տուն վերադառնալիս, միշտ լույս էի տեսնում նրա պատուհանում։ Նա ուշ էր արթնանում, այն ժամանակ, երբ ամուսինը, թեյ խմելով մենակ, արդեն քաղաք էր գնում, ու կնոջ գունատ, փոքր-ինչ հոգնատանջ դեմքից տեսնում էի, որ քիչ է քնել ու վատ։

3

Շուրջ մեկ ամիս անցավ։ Քաղաքում վերջացան քննությունները, և շիկահերի ամուսինը միշտ ամառանոցում էր մնում։ Օրերը ընթանում էր իր պարտեզում, ջրում էր, փոցխում, բահով հավասարեցնում մարգերը, փայտիկներ էր տաշում և խրում հողի մեջ։ Համարյա յուրաքանչյուր ոք, որտեղ էլ նա աշխատի, ինչով էլ զբաղվի, միշտ մի փոքրիկ կողմնակի թուլություն ունենում է, որը շատ ավելի է սիրում իր «իսկական» գործից։ մեկի համար դա որսն է, մյուսի համար՝ ստվարաթղթի ֆիգուրներ սոսնձելը, երրորդինը՝ ծխափողերի հավաքածոն, չորրորդինը՝ ձեռքի որևիցե գործ։ Երևում էր, որ ուսուցչի մոլությունը ծաղիկներն են, այնպես քնքշորեն էր նա խնամում։ Նրա սենյակում նույնպես մեծ քանակությամբ ծաղկամաններ նկատեցի՝ հազվագյուտ բույսերով, որոնք հաճախ հոգածությամբ մաքրում էր սպունգով, ծխահարում, կտրատում էր մկրատով ու ջրում։

Շաբաթ օրերը քաղաքից հարևաններիս էին այցելում ծանոթները, մի հինգ տղամարդ, տեսքից դատելով՝ նույնպես ուսուցիչներ, կանանց և երեխաների հետ։ Երևում էր, որ հյուրերը և տանտերերը միմյանց վաղուց ընտելացած, միասնական հասարակություն են. այնքան որ պարզ ու անբռնազբոս էին միմյանց նկատմամբ։ Տանտերը սովորական երկու սայլ էր վարձում, բոլորն աղմուկով ու քրքջոցով նստոտում էին ու գնում անտառ, սունկ ու հատապտուղ հավաքելու։ Երեկոյան վինտ էին խաղում, երգում, ծիծաղում և ի վերջո, մնում ամառանոցում գիշերելու, ընդ որում բոլոր տղամարդիկ ելնում էին խոտանոց։

Դա երջանիկ կյանք էր, հասարակ, հարկավ՝ ոչ հարուստ, սակայն բերկրալից, թարմ, աղնիվ, ոչնչով չխռովվող։ Եվ ինչքան շատ էի հետևում այդ կյանքին, այնքան ավելի էի համոզվում, որ իրավացի էի՝ հարևաններիս հետ ծանոթությունից խուսափելով։ Ասենք, ամուսինն ու ես արդեն, միմյանց ողջունում էինք հեռվից։

Դրա առիթը հանդիսացավ մեր երկուստեք միջամտությունը զինված մի ընդհարման, որ տեղի ունեցավ փողոցում նրա տղայի և Գաննուսյայի փոքր եղբոր միջև։ Սակայն մեր փոխհարաբերությունները սոսկ ողջույններով էլ սահմանափակվեցին, չընդարձակվեցան։

Արդեն բավական ժամանակ էր անցել իմ ամառանոց տեղափոխվելուց։ Մեկը մյուսի ետևից ծաղկեցին նախ խնձորենիներն ու բալենիները, հետո՝ թխենին, ապա՝ եղրևանին։ Սոխակները սկսեցին դադարեցնել իրենց գիշերային համերգները։ Շիկահեր կինն առաջվա նման կարդում էր ու տան գործերն անում, ամուսինն ամբողջ օրը բնթնում էր պարտեզում, ես աքերին ու պերկես էի բռնում։ Հարևաններիս հետ ծանոթությունը չէր կայանում։

Մի առավոտ ուսուցչի պարտեզի դռնակին մի սայլ մոտեցավ։ Սայլի մեջ՝ ամրակազմ, բարձրահասակ մի պարոն էր նստած, ես նրան երբեք չէի տեսել հարևանիս հյուրերի թվում, արտաքինից դատելով դերասան էր կամ երգիչ՝ սափրված էր, գանգուր մազերի խուրձը գլխին, քառակուսի մեծ ճակատ ուներ, բերանը եզերող խոշոր կնճիռներ, ներքևի շրթունքը բարձրամտորեն դուրս էր ցցված, Ռուբինշտեյնի նման վերևի առիշեղ կոպերի տակ՝ արհամարհալից աչքեր։ Շուրջը ոչ ոքի չտեսնելով, եկվորը որոշ ժամանակ լուռ նստած էր սայլի մեջ ու չորս կողմն էր նայում։ Տանը մոտեցած սայլի թխկթխկոցի վրա պարտեզից ելավ ուսուցիչն իր կապույտ բլուզով, բահը ձեռքին։ Արևից ձեռքով պաշտպանվելով, երկար ժամանակ գննում էր եկվորին։ Հետո նրանք, հավանորեն ճանաչեցին միմյանց։ Եկվորը ճկուն, ընդոստ շարժումով ցած թռավ սայլից, ուսուցիչը նետվեց նրան ընդառաջ, ու նրանք պաչպչվեցին։

Այդ դեպքից առանձնապես հուզված էր ուսուցիչը։ Նա իրար էր անցել, ընկերոջ մոտից նետվում էր դեպի մուժիկը, որը սայլից եկվորի ճամպրուկն ու այլևայլ իրերն էր իջեցնում և մուժիկից նորից ընկերոջ մոտ էր նետվում։ Ի վերջո երկուսն էլ, իրերն ուսած մուժիկի ուղեկցությամբ, տուն գնացին, ըստ որում ուսուցիչը տանում էր իր ընկերոջը, մեջքը գրկած, ու սիրով նրա աչքերին էր նայում։ Եկվորը մի ամբողջ գլխով բարձր էր ընկերոջից, քայլում էր ձիգ ու թեթև, որ հատուկ է պարկեշտին կամ բեմին վարժված մարդկանց։

Մուտքի մոտ նրանց դիմավորեց կինը։ Ուսուցչի շարժուձևից, եկվորի հանդիսավոր խոնարհումից և փոքր-ինչ ամաչկոտ շարժումից, որով շիկահերը պարզեց ձեռքը, տեսա, որ ուսուցիչը կնոջը ծանոթացնում է իր ընկերոջ հետ։

«Ուրեմն,— մտածեցի ես,— դերասանը և ուսուցիչը առնվազն տասը-տասներկու տարի չեն հանդիպել։ Եթե մեկը որոշում է անակնկալ հյուր գնալ ընտանիքին, նա պետք է որ շատ մոտ հարաբերություններ ունենա ընտանիքից մեկնումեկի հետ։ Մի խոսքով, սա հարևանիս պատանեկության կամ մանկության ընկերն է, այնքան մոտ ու հավատարիմ, որ նրանց մտերմությունը չի սառեցրել անգամ նրանցից մեկի ամուսնությունը։ Միայն թե մինչ այդ որտե՞ղ եմ տեսել նրան՝ այս դերասանին։ Շատ ծանոթ է արտաքինը։ Ասենք, գուցե ամենևին էլ դերասան չէ»։

Սակայն հաջորդ օրն իսկ համոզվեցի, որ առաջին ենթադրությունս հիմնավոր է եղել։ Իրիկնադեմին երեքն էլ՝ թե տանտերերը, թե հյուրը պարտեզում թեյ էին խմում։ Եկվորն ինչ-որ բան էր պատմում շատ ոգևորված, գեղեցիկ, նրբագեղ շարժուձևով։ Հանկարծ պատմության կեսին վեր կացավ, ձեռքերը դանդաղ խաչեց կրծքին և գլուխը ցած իջեցրեց, ըստ որում նրա դեմքը մտախոհ-ողբերգական արտահայտություն ստացավ։ Հավանորեն, նա արտասանում էր, և շարժումների բնույթից դատելով, համլետյան «լինել, թե չլինելու» պես մի բան էր։ Ուսուցիչը և կինը նրան էին նայում լարված ուշադրությամբ։ Երբ նա ավարտեց և շինծու գեղեցիկ ուժասպառությամբ ընկավ նստարանին, ուսուցիչը մի քանի անգամ ափն ափին զարկեց, ասես ծափահարելով։ Շիկահերը չէր շարժվում։ Դժվար էր ասել, թե ինչ տրպավորություն էր թողել նրա վրա մենախոսությունը, սակայն նրա դեմքը, առավել քան երբևէ, երազկոտ արտահայտություն ստացավ, թեև գուցե միայն ինձ այդպես թվաց հեռվից։

Դերասանը բնակություն հաստատեց հարևաններիս մոտ, ըստ երևույթին, երկար ժամանակով, որովհետև իր հետ էր բերել ամառային մի քանի կոստյում և ամենաբազմազան ու ամենամոդայիկ սպիտակեղենի մի ամբողջ պահեստ։ Թե նրա, թե նրա մտերիմների ազգանուններն ինձ անհայտ մնացին։ «Պարոն են, էլի»՝ իմ հարցումներին միամտորեն պատասխանում էին տեղացիները։ Սակայն մինչև հիմա էլ համոզված եմ, որ դերասանին

մինչ այդ տեսել եմ բեմի վրա և որ նա ռուսական արիստոկրատական երկնակամարի խոշորագույն լուսատուների թվին է պատկանում։

4

Երկու օր ուսուցիչը չէր կարողանում լիույի ուրախանալ ընկերոջ գալստյամբ, ոչ մի քայլ չէր հեռանում նրանից, զբաղեցնում էք զրույցով, նախապարտեզում ցույց էր տալիս իր ծաղիկները։ Եվ իսկապես, հոյակապ ծաղիկներ էին աճել, երևում էր, որ ուսուցիչն իր գործի վարպետն է։

Բայց մի քանի օր անց, երբ ընկերոջ գալստյան առիթով ծայր առած ուրախությունը կորցրեց իր նախասկզբնական սրությունը և նրա ներկայությունը տան մեջ սովորական երևույթ դարձավ, ուսուցչի կյանքն իր սովորական հունի մեջ մտավ։ Ճիշտ այնպես, ինչպես և առաջ, արթնանում էր արևածագին, մոտակա ջրհորից ցնցուղով ջուր էր բերում ու մինչև ճաշ իր ամենօրյա լայն բլուզը հագած, ծաղկաթմբերն էր փորփրում։ Գոխարենը՝ դերասանի գալստյամբ նկատելիորեն փոխվեց նրա կնոջ կյանքը։ Նախկին ճերմակ, զարդակար, կարճ կոֆտայի փոխարեն հիմա մշտապես տեսնում էի գունավոր շքեղ, բոլորածալ ու ժանեկազարդ լիֆեր, որոնք նա հագնում էր սեղմիրանի վրայից։ Շեկ ու փարթամ մազերը, որ առաջ սիրուն ետ էր սանրում, հիմա ունելիների հետ գործ ունեցան ու վերածվեցին գանգուր մաղախրձի։ Հիմա նույնիսկ օրական ոչ ավել, քան մեկ ժամ էր կարդում, որովհետև մնացած ամբողջ ժամանակն անցկացնում էր հյուրի հետ։ Կամ քայլում էին նախապարտեզի ոլոր-մոլոր նեղ ծառուղիներով, աշխույժ զրուցելով, կամ նա պառկում էր ցանցաճոճի մեջ, մեղմ օրորվելով ու գլուխը ետ գցած երկնքին նայելով, իսկ դերասանը, կողքին նստած, գիրքը ձեռքին, բարձրաձայն կարդում էր նրա համար, կամ էլ կարթերն առած գետափ էին գնում, և ես նրանց հաճախ էի տեսնում իրար մոտ նստած, խոսակցությամբ տարված, ոչ մի ուշադրություն չդարձնելով լողաններին...

Դերասանի պատմածները և զրույցները պիտի որ հետաքրքրեին երիտասարդ կնոջը։ Ոչինչ այնպես չի հափշտակում հեռվից անիրազեկ մարդկանց, ինչպես դերասանների պատմածները բեմի անդրկուլիսային գաղտնիքների մասին։ Ես հաճախ էի տեսնում, թե ինչպես կնոջ կողքով քայլելով և գեղեցիկ ու ոգե-

վորված շարժուձևով ինչ-որ բաներ ասելով, նա հանկարծ կանգ էր առնում, ստիպելով կնոջը ևս կանգ առնել ու դեմքով իր կողմը շրջվել, ու սկսում էր որևէ մենախոսություն արտասանել, հավանաբար իր ասածը բացատրելու համար։ Ու նման դեպքերում ամեն անգամ, նայելով նրա գեղեցիկ, հուժկու կազմվածքին, նրա շարժուձևի տպավորիչ պլաստիկությանը, ավելի ու ավելի էի համոզվում, որ նա ամենևին էլ սովորական դերասան չէ։

Մի անգամ իրիկնամուտին վարևոր հայտնագործություն արեցի. դերասանը կնոջը բեմական արվեստ էր սովորեցնում։ Նա նստած էր այգում, նստարանը վրա, փայտյա կլոր սեղանի մոտ, որի վրա սովորաբար թեյ էին խմում։ Կինը կանգնած էր նրա առաջ, ճիշտ ինչպես աշակերտուհին ուսուցչի առաջ, շփոթված, հուզված, և ինչ-որ բան էր արտասանում։ Դերասանը լսում էր գլուխը կախած, մարմնով թեթևակի ճոճվելով ու աջ ափի կողով հավասարաչափ խփելով սեղանին։

Երբ շիկահերը վերջացրեց արտասանությունը, նա արագ նետվեց դեպի կինը, բռնեց ձեռքերը և, ջերմագին սեղմելով, ինչ-որ բան սկսեց ասել։ Հավանորեն, իր հիացմունքն էր արտահայտում։ Կինը խուլս էր տալիս ու ետ քաշում ձեռքերը, բայց դերասանը բաց չէր թողնում և շարունակում էր խոսել, ջանալով նայել նրա դեմքին։

Ըստ երևույթին, շիկահերը ճաշակել էր դերասանի հիացական գովեստների քաղցր թույնը, որովհետև այդ օրվանից ամեն երեկո ես ականատես էի պարտեզում կայացող դրամատիկ արտասանության դասերին։ Անկեղծ էր դերասանը, թե՝ ոչ, չգիտեմ, բայց նա ամենավճռական եղանակով էր ձեռնամուխ եղել շիկահերի հետ պարապմունքներին։ Ամուսինը չէր խանգարում նրանց։ Մեկ-մեկ դասի ժամանակ նա մոտենում էր աշակերտուհուն և ուսուցչին, մի հինգ րոպե լսում, ձեռքերը գրպանները դրած, ապա բարեհոգի տեսքով թփթփացնում էր դերասանի մեջքին ու գնում իր ծաղիկների մոտ։

Ամսվա վերջին մեկ այլ հայտնագործություն արեցի, որը սակայն ավելի կարևոր էր, քան առաջինը։ Դա կատարվեց նույնպես երեկոյան, երբ թափանցիկ օդն արդեն նկատելիորեն մթնել էր, և թավ բզզոցով պտտվում էին հունիսյան բզեզները։ Շիկահերը պառկած էր ցանցաճոճի մեջ։ Սովորության համաձայն վեր նայելով, այնքան էր կլանված մտքերով, որ չլսեց զգուշորեն իրեն մոտեցող դերասանի քայլերը։ Դերասանն ընդհուպ մոտեցավ իր աշակերտուհուն, շորս կողմը նայեց, ցանկանալով համոզվել, որ իրեն որևէ մեկը չի հետևում, ապա, արագ կռանալով, համբուրեց կնոջ մազերը։ Վերջինս ցնցվեց, մի քիչ բարձրացավ տեղից և հանկարծ, ի զարմանս իմ, փոխանակ բարկանալու կամ դերասանի վրա բղավելու, քնքուշ շարժումով ձեռքերը գցեց նրա վզով, նրա դեմքը մոտեցրեց իրեն և... երեք րոպե դադար... Ես շտապ շրջվեցի։ Թեև իմ տեսածն ինձ չէր վերաբերում, բայց ես տարօրինակ խանդոտ նախանձ զգացի դերասանի նկատմամբ։

Այդ երեկո ուսուցիչը քաղաք էր մեկնում։ Շիկահերն ու դերասանն ուղեկցում էին նրան։ Ձեռքն էին սեղմում հրաժեշտ տալով, համբուրում ու ծիծաղում էին ամենամտերիմ ու անհոգ տեսքով։ Ուսուցիչը ժպտում էր նրանց և դեռ երկար ժամանակ, հեռացող սայլի վրա նստած, գլխով էր անում դռնակի մոտ կանգնած կնոջն ու մանկության ընկերոջը։

Հաջորդ օրը վաղ առավոտյան արթնանալով և պատուհանից դուրս նայելով, այն աստիճան զարմացա, որ սկզբում չհավատացի աչքերիս։ Հարևանիս դռնակի մոտ իրերով բեռնված մի սայլ էր կանգնած, որոնց մեջ տեսա դերասանի բերած բոլոր ճամպրուկներն ու կապոցները։ Շուտով նա դուրս եկավ տնից շիկահերի հետ միասին։ Երկուսն էլ ճամփորդական զգեստներով էին։ Շիկահերը հոգնած էր երևում, դեմքը դալկացել էր, կոպերը կարմրել էին, երևում էր, որ գիշերը չի քնել, դրա հետ մեկտեղ ինչ-որ ճակատագրական, անդառնալի քայլի դիմող մարդու տեսք ուներ։ Դերասանը, նրա արմունկից բռնած, օգնեց նրան տել սայլի մեջ։ Նրանից հետո սայլ բարձրացավ նաև դերասանն ու ինչ-որ բան ասաց նստիքին նստած սայլապանին։ Սայլապանը մտրակեց ձիերին, սայլը դղրդաց՝ ճանապարհի վրա և... հանկարծ կանգ առավ...

Ոսկե ակնոցով փոքրամարմին ուսուցիչը, որ աստված գիտե, թե որտեղից էր հայտնվել, կանգնած էր ճանապարհի մեջտեղում, ձիերի սանձերից բռնած։ Գզգզված, փոքր-ինչ ծիծաղելի, բայց չափազանց վճռական տեսք ուներ։ Նա ինչ-որ բաներ էր բղավում, լսել չկարողացա։

Եվ հանկարծ գնդակի պես նետվեց դեպի սայլը, բռնեց դերասանի օձիքից ու ցած շպրտեց նրան։ Խոստովանում եմ՝ ապշեցուցիչ տեսարան էր։ Բայց հետո ավելի տարօրինակ էր։ Ես սպասում էի, որ դերասանը՝ այդ խոշոր, թիկնեղ, վեհապանծ ու

հպարտ մարդը կռիվ կանի, կդիմադրի, կամ ծայրահեղ դեպքում թեկուզ բացատրվել կսկսի։ Չէ, նա առաջ վազեց ապշեցուցիչ արագությամբ, ճանապարհին գցելով կլոր շլյապան և՝ ես նկատեցի դա, շարունակ վեր էր քաշում շալվարը։ Աստված վկա, ես ամեն ինչ սպասում էի, նույնիսկ արյունահեղություն, բայց ոչ թատերական այդ էֆեկտը։

Սակայն այս ամբողջ պատմության ավարտն ինձ ոչ միայն զարմացրեց, այլև հուզեց, ցնցեց ու համարյա սարսափեցրեց։

Երկուսով՝ շիկահերը և ուսուցիչը, անցան իմ պատուհանների մոտով, ինձնից հինգ թե վեց քայլ տարածության վրա։ Եվ ես համարյա տեսա, թե ինչպիսի երջանկությամբ էին փայլում կնոջ աչքերը, ես տեսա ու լսեցի, թե կինն ինչպես էր համբուրում նրա ուսուցչական, գզգզված մորուքը, լսեցի նաև, թե ինչպես էր նա ասում շշնջակտուր.

— Չէ, չէ, չէ։ Իմ կյանքում երբեք նման ոչ մի բան չի կարող կրկնվել։ Նա միայն ձևացնում էր, թե տղամարդ է, իսկ դու իսկական, համարձակ ու սիրող տղամարդ ես։

Այդ ժամանակ ես փակեցի պատուհանը և այլևս չէի հետևում հարևաններիս։

1895

ՇՏԱԲՍ-ԿԱՊԻՏԱՆ ՌԻԲՆԻԿՈՎԸ

1

Այն օրը, երբ Ցուսիմա կղզու մոտ ռուսական նավատորմի սարսափելի ջարդը մոտենում էր ավարտին և երբ ճապոնացիների այդ արյունալի ցնծության լոկ առաջին տագնապալի և մշուշոտ լուրերն էին պտտվում Եվրոպայում, նույն այդ օրը Պեսկիի անանուն նրբանցքում ապրող շտաբս-կապիտան[1] Ռիբնիկովը հետևյալ հեռագիրն ստացավ Իրկուտսկից.

«Անհապաղ ուղարկեք թերթերը խնամեք հիվանդին վճարեք ծախսերը»։

[1] Զինվորական աստիճան ցարական բանակում, այսպես կոչված փոխ-կապիտան (ծան. թարգմ.)։

Շտաբս-կապիտան Ռիբնիկովն անմիջապես հայտնեց տանտիրուհուն, որ մեկ-երկու օրով պիտի մեկնի Պետերբուրգից, այնպես որ իր բացակայությունը թող չանհանգստացնի։ Ապա հագնվեց, դուրս ելավ տնից ու այլևս երբեք չվերադարձավ։

Եվ միայն հինգ օր անց տանտիրուհուն կանչեցին ոստիկանատուն՝ անհետացած կենվորի մասին ցուցմունքներ ստանալու։ Ուղղամիտ, գիրուկ, քառասունհինգամյա այդ կինը՝ եկեղեցական պաշտոնյայի այրին, ազնվորեն պատմեց իրեն հայտնի ամեն ինչ. կենվորը սուսուփուս, չքավոր, հիմարավուն մարդ էր, ուտելու մեջ չափավոր, քաղաքավարի, չէր խմում, չէր ծխում, տնից հազվադեպ էր դուրս գալիս, ոչ ոք էլ նրա մոտ չէր գալիս։

Ավելին ոչինչ չկարողացավ ասել, թեև ակնածալից սարսափ էր տածում ժանդարմ ոստմիստրի հանդեպ, որը կատաղորեն շարժում էր բեղատակի մազերն ու ատամի տակ անհամար այլանդակ խոսքեր ուներ։

Իսկ այդ հնգօրյա ժամանակահատվածում շտաբս-կապիտան Ռիբնիկովը ոտքի տակ տվեց ամբողջ Պետերբուրգը։

Ամենուրեք՝ փողոցներում, ռեստորաններում, թատրոններում, ձիաքարշի վագոններում, կայարաններում երևում էր կարճլիկ, թխադեմ, կաղ, զարմանալի շատախոս, գզգզված ու թեթևակի խմած այդ սպան, կարմիր օձիքով համաբանակային մունդիրը հագին՝ հոսպիտալային, զինվորական գրասենյակային կամ համբարակային առնետի իսկական մի տիպար։ Մի քանի անգամ նա երևաց նաև գլխավոր շտաբում, վիրավորների մասին տեղեկությունների կոմիտեում, ոստիկանատներում, պարետային վարչությունում, կազակական զորքերի վարչությունում և տանջակ այլ պաշտոնական վայրերում ու վարչություններում, ծառայողներին զայրացնելով իր անկապ բողոքներով ու պահանջներով, իր նվաստացուցիչ մուրացկանությամբ, բանակային կոպտությամբ ու ճղճղան հայրենասիրությամբ։ Բոլորն արդեն անգիր գիտեին, որ նա ծառայել է կորպուսի գումակում, Լյաոյանի տակ կոնտուզիա է ստացել, իսկ Մուկդենյան նահանջի ժամանակ վիրավորվել ոտքից։ Մինչև հիմա ինչու՞ նպաստ չի ստանում, գրողը տանի։ Մինչև հիմա ինչո՞ւ ճանապարհածախս ու օրավարձ չեն տալիս իրեն։ Իսկ անցած երկու ամիսների աշխատավա՞րձը։ Ինքը լիովին պատրաստ է գրողի բաժին իր վերջին կաթիլ արյունը տալ հանուն ցարի, գահի և հայրենիքի, և վիրավոր ոտքն ապաքինվելուն պես անմիջապես Հեռավոր արևելք կվերադառնա։ Բայց,

անտե՞ր մնա, անիծած ոտքը չի ուզում լավանալ... Պատկերացնում եք՝ թարախակալե՞լ է։ Ըհը՛, ձեր աչքով տեսեք։ Եվ նա հիվանդ ոտքը դնում էր աթոռին ու արդեն հոժարակամ ըսկըսում վեր քշտել շալվարը, բայց ամեն անգամ նրան կանգնեցնում էին զզվանքախառն ու կարեկից ամաչկոտությամբ։ Նրա փութագար և նյարդային լկտիությունը, ամբարտավանության հասնող նրա տարօրինակ ահաբեկվածությունը, հիմարությունն ու պարապ-սարապ, աներես հետաքրքրասիրությունը հավասարակշռությունից հանում էին գրասենյակային կարևոր ու խիստ պատասխանատու գործով զբաղված մարդկանց։

Զուր տեղն ամենայն նրբությամբ բացատրում էին նրան, որ համապատասխան տեղ չի դիմում, որ պետք է գնա այսինչ տեղը, որ հարկ է ներկայացնել այս-այս և այս-այս թղթերը, որ նրան կհայտնեն արդյունքը, սակայն նա ոչինչ, բացարձակապես ոչինչ չէր հասկանում։ Բայց և շատ բարկանալ էլ չէր լինում նրա վրա, այնքան որ անպաշտպան էր, երկչոտ ու միամիտ, և եթե զայրացած կիսատ էին թողնում խոսքը, նա սոսկ ժպտում էր, ապուշի նման մերկացնելով լնդերը, շտապ-շտապ ու վրավրա գլուխ էր խոնարհում և շփոթված՝ ձեռքերն էր շփում։ Կամ հանկարծ ասում էր շողոմ ու խոպոտ ձայնով։

— Շատ եմ խնդրում... մի պապիրոս չե՞ք տա։ Մեռնում եմ ծխելու համար, բայց ինչո՞վ առնեմ։ Տի՛պ-տկլոր եմ... Ոնց որ ասում են, չունևորությունը արատ չէ, այլ մեծ ախմախություն։

Դրանով նա զինաթափ էր անում ամենաբծախնդիր ու մռայլ աստիճանավորներին։ Նրան գլանակ էին տալիս և թույլատրում նստել սեղանի ծայրին։ Ակամա և, իհարկե, արհամարհանքով, նույնիսկ պատասխանում էին ռազմական դեպքերի ընթացքի մասին նրա ձանձրացնող հարցերին։ Ի դեպ, հուզիչ, մանկականորեն անկեղծ շատ բան կար հիվանդագին այն հետաքրքրասիրության մեջ, որով այդ տարաբախտ, գլլոտած, աղքատացած վիրավոր զինվորականը հետևում էր պատերազմին։ Պարզապես, ուղղակի մարդկայնորեն ցանկություն էր առաջանում հանգստացնել, տեղեկացնել ու քաջալերել նրան, դրա համար էլ նրա հետ ավելի անկեղծ էին խոսում, քան մյուսների։

Ռուս-ճապոնական իրադարձություններին վերաբերող ամեն ինչի նկատմամբ նրա հետաքրքրությունը հասնում էր այնտեղ, որ երբ նրա համար այս կամ այն խճճված գործնական տեղեկությունն էին հայթայթում, նա թափառում էր սենյակից սենյակ,

սեղանից սեղան և հենց որևէ տեղ մի երկու խոսք էր լսում պատերազմի մասին, իսկույն մոտենում ու ականջ էր դնում՝ լարված ու հիմարավուն ժպիտը դեմքին։

Վերջապես երբ հեռանում էր, իրենից հետո թեթևության զգացման հետ մեկտեղ թողնում էր մի տեսակ տարտամ, ծանր ու խռովահույզ խղճահարություն։ Շտաբային կոկիկ, հղփացած սպաները հաճախ նրա մասին խոսում էին վեհանձն դառնությամբ։

— Եվ ահա սրանք ռուս սպաներ են։ Նայեցեք հապա այդ տիպարին։ Մի՞թե պարզ չէ, թե ինչու ենք ճակատամարտ ճակատամարտի վրա տանուլ տալիս։ Բթություն, անճարակություն, սեփական արժանապատվության գիտակցման լիակատար բացակայություն... Խե՜ղճ Ռուսաստան...

Ծոուզեռով լի այդ օրերին շտաբս-կապիտան Ռիբնիկովը սենյակ վարձեց կայարանամերձ մի անմաքուր հյուրանոցում։ Թեև պահեստի սպայի սեփական անձնագիր ուներ, բայց չգիտես ինչու հարկ համարեց հայտնել, որ փաստաթղթերը դեռևս պարեստային վարչությունում են։ Հյուրանոց տեղափոխեց նաև իրերը՝ պորտպլեդը[1] վերմակով ու բարձով, ճամփորդական պայուսակը և նոր ու էժանագին մի ճամպրուկ, որի մեջ սպիտակեղենն էր և մի լրիվ ձեռք քաղաքացիական հագուստ։

Հետագայում սպասուհին ցուցմունք տվեց, որ նա հյուրանոց էր գալիս ուշ ու կարծես խմած, բայց դուռը բացող բարապանին միշտ տասը կոպեկանոց էր տալիս։ Երեք-չորս ժամից ավելի չէր քնում, երբեմն բոլորովին չհանվելով։ Արթնանում էր վաղ և երկար, ժամերով ետուառաջ քայլում սենյակում։ Կեսօրին գնում էր։

Ժամանակ առ ժամանակ շտաբս-կապիտանը փոստային զանազան բաժանմունքներից հեռագրեր էր ուղարկում Իրկուտսկ, և այդ բոլոր հեռագրերը խորունկ հոգածություն էին արտահայտում ինչ-որ մի վիրավոր, ծանր հիվանդ մարդու նկատմամբ, որը հավանաբար շատ էր հարազատ շտաբս-կապիտանի սրտին։

Եվ ահա մի անգամ այդ ծիծաղելի, անհեթեթ, անհանգիստ մարդու հետ հանդիպեց պետերբուրգյան խոշոր մի լրագրի ֆելիետոնիստ Վլադիմիր Իվանովիչ Շչավինսկին։

---

[1] Ճանապարհորդական պայուսակ՝ անկողին տեղափոխելու համար (ծաե. բարզմ.)։

2.

Նախքան ձիարշավարան գնալը Շչավինսկին ճանապարհը թեքեց ու մտավ «Պետրոգրադի փառքը» փոքր ու խավար ռեստորանը, ուր ցերեկվա ժամը երկուսին մոտ սովորաբար հավաքվում էին թերթերի ռեպորտյորները՝ մտքեր ու տեղեկություններ փոխանակելու։ Բավականաչափ անտակտ, ուրախ, լկտի, ամենագետ ու քաղցած հասարակություն էր հավաքվում, և Շչավինսկին՝ որոշ առումով լրագրային աշխարհի արիստոկրատը, իհարկե, նրանց շարքերին չէր պատկանում։ Նրա փայլուն ու զվարճալի, բայց ոչ խորը կիրակնօրյա ֆելիետոնները որոշակի հաջողություն ունեին հասարակության մեջ։ Խոշոր գումարներ էր վաստակում, հիանալի հագնվում և ծանոթությունների լայն շրջան ուներ։ Բայց նրան լավ էին ընդունում նաև «Պետրոգրադի փառքը» ռեստորանում՝ սանձարձակ կծու լեզվի համար և հանուն այն սիրալիր առատաձեռնության, որով գրչակից եղբայրներին փոքրիկ գումարներ էր պարտք տալիս։ Այսօր ռեպորտյորները խոսք էին տվել նրա համար ձիարշավի ծրագիր ձեռք բերել՝ ախոռում կատարված խորհրդավոր նշումներով։

Բարապան Վասիլին, հարգալիր և հոժարակամ ժպտալով, վերցրեց Շչավինսկու վերարկուն։

— Համեցեք, Վլադիմիր Իվանովիչ։ Բոլորը հավաքվել են։ Մեծ սենյակում են, Պրոխորի մոտ։

Եվ հաստլիկ, կարճ կտրած մազերով, շիկաբեղ Պրոխորը նույնպես ընտանեվարի, սիրալիր ժպտաց, ըստ սովորության նայելով հարգարժան այցելուի ոչ թե աչքերին, այլ ճակատից վեր։

— Վաղուց չէիք բարեհաճում, Վլադիմիր Իվանովիչ։ Համեցեք։ Բոլորը մերոնք են։

Ինչպես միշտ, գրչակիցները նստած էին երկարուկ սեղանի շուրջը և, գրիչները ստեպ-ստեպ միակ թանաքամանի մեջ թաթախելով, արագ-արագ գրում էին թղթի երկար շերտերի վրա։ Այդ ընթացքում, առանց գործն ընդհատելու, հասցնում էին կարկանդակներ, կարտոֆիլի պյուրեով տապակած երշիկ կուլ տալ, օղի և գարեջուր խմել, ծխել ու քաղաքային թարմ նորություններ, հրապարակման ոչ ենթակա խմբագրական ասեկոսեներ փոխանակել։ Ինչ-որ մեկը մեռելի պես քնել էր բազմոցի վրա, թաշ-

կինակը գլխատակին փռած։ Առանձնասենյակի օդը կապույտ էր, թանձր, ծխախոտի ծխից շերտատված։

Ողջունելով ռեպորտյորներին, Շչավինսկին նրանց մեջ նկատեց համաբանակային մունդիր հագած շտաբս-կապիտանին։ Նա նստած էր ոտքերը չռած, ձեռքերն ու ծնոտը հենած հսկայական թրի երախակալին։ Շչավինսկին չզարմացավ նրան տեսնելով, ինչպես և վարժվել էր ռեպորտյորների կյանքում ոչ մի բանից չզարմանալ։ Նա տեսել էր, թե ինչպես այդ խառնիխուռն անհոգ հասարակության մեջ շաբաթներով ընկնում-մնում էին տամբովցի կալվածատերեր, ոսկերիչներ, երաժիշտներ, պարուսույցներ, դերասաններ, գազանանոցի տերեր, ձկան վաճառականներ, կաֆեշանտանների կարգադրիչներ, ակումբային խաղամոլներ և ամենաանսպասելի մասնագիտությունների տեր այլևայլ անձինք։

Երբ հերթը սպային հասավ, սա տեղից ելավ, ուսերը վեր քաշեց, արմունկները կողք տարավ և ներկայացավ խոպոտ, իսկական բանակային հարբեցողի ձայնով.

— Հէ՛մ-մ... Շտաբս-կապիտան Ռիբնիկով։ Շատ հաճելի է։ Դուք էլ եք գրող։ Շատ, շատ հաճելի է։ Հարգում եմ գրող մարդկանց։ Մամուլը վեցերորդ մեծ տերությունն է։ Ի՞նչ կա։ Ճիշտ չի՞։

Խոսելիս ատամները բաց էր անում, կրունկներն իրար խփում, պինդ-պինդ թափահարում էր Շչավինսկու ձեռքը և անընդհատ, մի տեսակ ծիծաղելի գլուխ էր տալիս, վրա-վրա ծռելով և ուղղելով մարմնի վերին մասը։

«Որտե՞ղ եմ սրան տեսել,— անհանգիստ մի միտք անցավ Շչավինսկու գլխով։— Զարմանալի կերպով հիշեցնում է մեկին։ Ու՞մ»։

Այստեղ՝ առանձնասենյակում էին գտնվում պետերբուրգյան ռեպորտաժի բոլոր մեծանունները։ Երեք հրացանակիրները՝ Կոյդուբցևը, Ոյաժկինը և Պոպովը։ Միմյանցից անջատ երբեք չէին լինում, նույնիսկ հաջորդաբար արտասանված նրանց ազգանունները քառոտնյա շատ հարմար յամբ էին կազմում։ Դա չէր խանգարում նրանց մշտապես գժտվել ու մեկը մյուսի մասին անհավանական շորթումների, քրեական կեղծիքների, զրպարտության և շանտաժի դեպքեր հորինել։ Ներկա էր նաև Սերգեյ Կոնդրաշովը, որին անդուսպ հեշտասիրության համար կոչում էին «ոչ թե մարդ, այլ պաթոլոգիական դիպված»։ Մեկն էլ կար, ազգանունը ժամանակից մաշվել էր, ինչպես անպետք մետաղադրամի

երեսը, և մնացել էր լոկ «Մատանյա» տարածված մականունը, որով նրան ճանաչում էր ողջ Պետերբուրգը։ Մոայլ Սվիշչևի մուսին, որը փոքրիկ, «Հաշտարար դատավորների խցերով» ֆելիետոններ էր գրում, ընկերական կատակի ձևով ասում էին. «Սվիշչևը խոշոր շանտաժիստ է, երեք ռուբլուց պակաս չի վերցնում»։ Իսկ բազմոցին քնած երկարամազ բանաստեղծ Պետրուխինը իր խղճուկ ու հարբած գոյությունն էր քարշ տալիս՝ ցարական օրերն ու տասներկու տոները[1] քնարական բանաստեղծություններով գովերգելով։ Կային ոչ պակաս խոշոր անուններ ևս, քաղաքային գործերի, հրդեհների, դիակների, զբոսայգիներ բացելու և փակելու մասնագետներ։

Լողլող, գիսախռիվ, պղուկոտ Մատանյան ասաց.

— Վլադիմիր Իվանովիչ, ծրագիրը հիմա կբերեն։ Իսկ մինչ այդ ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր քաջարի շտաբս-կապիտանին։ Հենց նոր է վերադարձել Հեռավոր արևելքից, որտեղ, կարելի է ասել, ջարդուփշուր է արել դեղնադեմ, շեղաչ և նենգ թշնամուն։ Դե՛, գեներալ, շարունակիր տեսնենք։

Սպան հազաց և ուսի վրայով թքեց հատակին։

«Բոի մարդ է»,— մտածեց Շչավինսկին, դեմքը կնճռոտելով։

— Ռուս զինվորը, ախպերս, հանաք բան չի,— խոպոտ բացականչեց Ռիբնիկովը, շխկշխկացնելով թուրը։— Անմահ Սուվորովի ասած՝ հրաշք-դյուցազուններ են։ Ի՞նչ կա։ Ճիշտ չեմ ասո՞ւմ։ Մի խոսքով... Բայց մի անկեղծ բան ասեմ ձեզ. մեր ղեկավարությունը բանի պետք չի Արևելքում։ Մեր հայտնի առածը գիտեք, չէ՞, ձուկը գլխից կհոտի։ Ի՞նչ կա։ Ճիշտ չի՞։ Գողանում են, թուղթ են խաղում, սիրեկան են պահում... Բայց հայտնի բան է, չէ՞, կնկա քանդածը ոչ ոք չի սարքի։

— Գեներալ, գծանկարահանումների մասին էիք սկսել,— հիշեցրեց Մատանյան։

— Հա՛, դրանց մասին։ Մերսի։ Գլուխս ոնց որ... Հո չե՞մ լ-լակել էսօր։— Ռիբնիկովն արագ ու սուր մի հայացք նետեց Շչավինսկու վրա։— Հա՛, ուրեմն էսպես... Գլխավոր շտաբի մի գնդապետի նշանակեցին, որ ճանապարհի տեղազննում անի։ Սա իր հետ մի դասակ կազակ վերցրեց. քաջ կովողներ են, գրողը դրանց տանի... Ի՞նչ կա։ Ճիշտ չի՞... Թարգմանիչ էլ վերցրեց, ու գնում են։ Հասնում են մի գյուղ։ «Սա ո՞ր գյուղն է»։ Թարգմանիչը ձեն չի հանում։ «Դե մի ձեզ տեսնեմ, տղերք»։ Կազակները տեղնուտեղը սկսում են դրան մտրակով հասցնել։ Թարգմանիչն ասում է. «Բութունդու»։ Չինարեն էլ «բութունդու» նշանակում է «չեմ հասկանում»։ «Հը՛, լեզուդ բացվե՞ց, շան որդի»։ Գնում են, գնում, էլի մի գյուղ են հասնում։ «Ո՞ր գյուղն է»։ «Բութունդու»։ «Ո՞նց թե։ էլի՞ Բութունդու»։ «Բութունդու»։ Գնդապետն էլի գրում է. «Բութունդու»։ Էսպես, ուրեմն, սա մի տասը գյուղի «Բութունդու» է ասում, ու ստացվում է ոնց որ Չեխովի մոտ. «Չնայած, ասում է, դու յոթերորդ Իվանովն ես, բայց է՛լի հիմար ես»։

— Ա-ա՛։ Չեխովին գիտե՞ք,— հարցրեց Շչավինսկին։

— Ո՞ւմ։ Չեխովի՞ն։ Անտո՛ղկային։ էն էլ ոնց, գրողը տանի... Ընկերներ ենք։ Իրար հետ լավ խմել ենք... Չնայած, ասում է, դու յոթերորդն ես, բայց էլի հիմար ես...

— Նրա հետ այնտեղ՝ Արևելքու՞մ եք հանդիպել,— արագ հարցրեց Շչավինսկին։

— Բա ոնց, Արևելքում, ինչ խոսք։ Ախպերս, պատահել է, որ Անտոն Պետրովիչի հետ... Չնայած յոթերորդն ես, բայց...

Քանի դեռ նա խոսում էր, Շչավինսկին ուշադիր հետևում էր նրան։ Ամեն ինչը սովորական էր, զուտ բանակային. ձայնը, շարժուձևը, մաշված մունդիրը, աղքատիկ ու կոպիտ լեզուն։ Շչավինսկուն վիճակվել էր նրա նման հարյուրավոր կոնծաբան կապիտաններ տեսներ։ Ճիշտ նույն կերպ նրանք մերկացնում էին ատամները և հայհոյում, կտրիճավարի ուղղում էին բեղերն աջուձախ, ճիշտ նույնպես վեր էին քաշում ուսերը, կողք տարածում արմունկները, պատկերավայել հենվում թրի վրա ու շրջիկացնում երևակայական խթանները։ Բայց նրա մեջ խիստ յուրահատուկ, թաքնված մի բան կար, որը Շչավինսկին երբեք չէր տեսել ու չէր կարող բնորոշել՝ ներքին, մի տեսակ լարված, նյարդային ուժ։ Տպավորությունն այն էր, որ Շչավինսկին ամենևին չէր զարմանա, եթե հանկարծ այդ խոխոռացնող ու հարբած դմբոն սկսեր խոսել նուրբ ու իմաստի բաների մասին, անկաշկանդ ու պարզ, գեղեցիկ լեզվով, բայց չէր զարմանա նաև շտաբս-կապիտանի մի որևէ խելահեղ, հանկարծակի, տաքգլուխ, անգամ արյունարբու արարմունքին ի տես։

Նրա դեմքը զարմացնում էր Շչավինսկուն այն տարբեր տպավորությամբ, որ թողնում էր կողքից ու դիմացից նայելիս։ Կողքից դա սովորական ռուսական, փոքր-ինչ կալմիկականին խփող

[1] Ռուսական ուղղափառ եկեղեցու գլխավոր տասներկու տոները (ծան. բարգմ.)։

դեմք էր. նեղ, ուռած ճակատ, որն անմիջապես գանգ էր դառնում, ռուսական տձև, դամբուլի պես քիթ, ցանցառ, չոր ու սև բեղեր ու պստիկ մորուք, կարճ խուզած, լավ ճերմակած գլուխ, արևահար, մուգ դեղին դեմք... Բայց դեմքով շրջվելով Շչավինսկու կողմը, նա իսկույն սկսում էր ինչ-որ մեկին հիշեցնել։ Զափազանց ծանոթ, սակայն ոչ մի կերպ չընկալվող մի բան էր զգացվում այդ նեղլիկ, սթափ, շեղակի, վառ սրճագույն աչքերի, քթարմատից վեր ձգվող սև հոնքերի անհանգիստ կորագծի, խոշոր այտոսկրերի պիրկ ձգված մաշկի չորության, գլխավորը՝ այդ քինոտ, ծաղրական, խելոք, անգամ զոռոզ, բայց՝ ոչ մարդկային, այլ ավելի շուտ գազանային, իսկ ավելի ճիշտ՝ այլ մոլորակից եկած էակի պատկանող դեմքի ընդհանուր արտահայտության մեջ։

«Կարծես երազում տեսած լինեմ»,— մտածեց Շչավինսկին։ Կապիտանին զննելով, նա ակամա կկոցեց աչքերն ու գլուխը կողք թեքեց։

Ռիբնիկովն իսկույն շրջվեց նրա կողմն ու սկսեց քրքշալ նյարդային ու բարձրաձայն։

— Էդ ի՞նչ եք հիանում ինձանով, պարոն գրող։ Հետաքրքի՞ր է։ Ես... — նա բարձրացրեց ձայնը և զավեշտական հպարտությամբ բռունցքով հարվածեց կրծքին։— Ես շտաբս-կապիտան Ռիբնիկովն եմ։ Ռի՛բ-նի՛-կո՛վը։ Ուղղափառ ռուս զինվոր, որն անխնա կոտորում է թշնամուն։ Ռուս զինվորներն էսպիսի մի երգ ունեն։ Ի՞նչ կա։ Ճիշտ չի՞։

Արագ-արագ գրելով և առանց Ռիբնիկովին նայելու՝ Կոլդուբցևը անփութորեն նետեց։

— Եվ անխնա էլ գերի է հանձնվում։

Ռիբնիկովը մի պահ հայացքը նետեց Կոլդուբցևի վրա, և Շչավինսկին նկատեց, թե ինչպես նրա դարշնագույն աչքերի մեջ տարօրինակ, դեղնականաչ կրակներ պպզացին։ Բայց միայն մեկ ակնթարթ։ Շտաբս-կապիտանն անմիջապես սկսեց քրքշալ, ձեռքերը տարածեց և շրխկոցով խփեց ազդրերին.

— Ինչ կարաս անես՝ աստծու կամքն է։ Լավ առած կա՝ խոփը քարին դեմ առավ։ Ի՞նչ։ Ճիշտ չի՞։— Նա հանկարծ դիմեց Շչավինսկուն, ձեռքը թեթևակի տարավ նրա ծնկի վրայով ու շրթունքներով անհուսալի մի հնչյուն արձակեց՝ ֆյուի՛թ։— Մենք մի գլուխ ասում ենք՝ վայ թե, ոնց որ թե, կամ՝ մի կերպ։ Տեղանքին չենք կարենում հարմարվել, ռումբերը զենքերի չափսերին չեն բռնում, դիրքերում մարդիկ չորս օրով սոված են մնում։ Իսկ ճապոնացիները, գրողը դրանց տանի, մեքենայի պես են աշխատում։ Մակակա կապիկներ են, բայց քաղաքակրթությունն իրենց կողմն է, գրողը տանի դրանց։ Ի՞նչ կա։ Ճիշտ բաներ չեմ ասո՞ւմ։

— Ուրեմն, ըստ ձեզ, ստացվում է, որ գուցեև մեղ հաղթե՞ն,— հարցրեց Շչավինսկին։

Ռիբնիկովի շրթունքները դարձյալ ցնցվեցին։ Այդ սովորությունը Շչավինսկին արդեն նկատել էր։ Խոսակցության ամբողջ ընթացքում, հատկապես երբ շտաբս-կապիտանը հարցեր էր տալիս և ականջները սրած պատասխանի սպասում կամ նյարդայնորեն շրջվում էր մեկնումեկի ակնապիշ հայացքի կողմը, նրա շրթունքներն արագ-արագ ծռմռվում էին մեկ այս, մեկ այն կողմ տարօրինակ ցնցումներով, որոնք նման էին ջղաձիգ, քինախընդիր ժպիտների։ Եվ միաժամանակ նա շտապ-շտապ, լեզվի ծայրով լպստում էր ճաքճքած, չորացած շրթունքները՝ բարակ, կապտավուն, մի տեսակ կապկային կամ այծային շրթունքները։

— Ո՞վ գիտի,— բացականչեց շտաբս-կապիտանը։— Մենակ աստված գիտի։ Ոնց որ ասում են. աստծու տված, աստծու վերցրած։ Ի՞նչ կա։ Էդպես չի՞։ Կռիվը չի պրծել։ Ամեն բան առաջներումս է։ Ռուս զինվորը հաղթելու սովոր է։ Հիշեցեք Պոլտավան, անմոռանալի Սուվորովին... Բա Սևաստոպո՞լը։ Բա տասներկու թվին ո՞նց քշեցինք աշխարհի ամենամեծ զորավար Նապոլեոնին։ Մեծ է ռուսական հողի աստվածը։ Ի՞նչ։

Նա սկսեց խոսել, իսկ շրթունքների անկյունները թրթռացին տարօրինակ, չարախինդ, ծաղրական, անմարդկային ժպիտով, և չարագույժ դեղին փայլն էր խաղում նրա աչքերի մեջ, սև ու խոժոռ հոնքերի տակ։

Այդ ժամանակ Շչավինսկուն սուրճ բերեցին։

— Մի գավաթ կոնյակ չէի՞ք կամենա,— առաջարկեց նա շտաբս-կապիտանին։

Ռիբնիկովը դարձյալ թեթևակի խփեց նրա ծնկին։

— Չէ, հոգիս, շնորհակալ եմ։ Էսօր, սատանեն գիտի, թե ինչքան եմ խմել։ Գլուխս ճաքում է։ Գրողը տանի, առավոտից սկսեցի լակել։ Ռուսի ուրախությունը՝ բաժակի մեծությունը։ Ի՞նչ կա։ Ճիշտ չի՞,— հանկարծ բացականչեց նա կտրիճ տեսքով ու անսպասելի հարբած ձայնով։

«Զևացնում է»,— մտածեց Շչավինսկին։

Բայց չգիտես ինչու չէր ուզում ձեռք քաշել և շարունակեց հյուրասիրել շտաբս-կապիտանին։

— Գուցե գարեջու՞ր։ Կարմիր գինի՞։

— Չէ, հոգաչափ շնորհակալ եմ։ Առանց էդ էլ խմած եմ։ Գրան մերսի[1]։

— Զելթերյան չու՞ր։

Շտաբս-կապիտանն աշխուժացավ։

— Հա՛, էդ մեկը՝ հա՛։ Մենակ... մենակ զելթերյան... մի բաժակ կխմեմ։

Սիֆոն բերեցին։ Ռիբնիկովը մի բաժակ խմեց մեծ-մեծ, անհագ կումերով, նույնիսկ ձեռքերն սկսեցին դողալ ագահությունից։ Եվ տեղնուտեղը մի բաժակ էլ լցրեց։ Իսկույն նկատվեց, որ ծարավը վաղուց էր նրան տանջում։

«Զևացնում է,— դարձյալ մտածեց Շչավինսկին։— Ի՞նչ զարմանալի մարդ է։ Նա դժգոհ է, հոգնած, բայց ոչ ամենևին հարբած»։

— Շոգ է, գրողը տանի,— խռպոտ ձայնով ասաց Ռիբնիկովը։— Պարոնայք, բայց կարծես թե ձեզ խանգարում եմ աշխատել։

— Չէ, ոչինչ։ Վարժվել ենք,— մոթմոթաց Ռյաժկինը։

— Իսկ պատերազմից ոչ մի թարմ լուր չունե՞ք,— հարցրեց Ռիբնիկովը։— Է՛հ, պարոնայք,— բացականչեց հանկարծ ու շրխկշրխկացրեց թուրը։— Պատերազմի մասին էնքան հետաքրքիր նյութ կարող էի տալ ո՞ր։ Ուզում եք, ես ձեզ թելադրեմ, իսկ դուք մենակ գրեք։ Մենակ թե գրեք։ Վերնագիրն էլ կդնեք «Պատերազմից վերադարձած շտաբս-կապիտան Ռիբնիկովի հուշերը»։ Չէ, ուրիշ բան չկարծեք, ես առանց փող, հենց էնպես, ձրի։ Ո՞նց եք կարծում, պարոնայք գրողներ։

— Ինչ կա որ, կարելի է,— ծուլորեն արձագանքեց Մատանյան,— ինտերվյուի պես մի բան կսարքենք... Վլադիմիր Իվանովիչ, մեր նավատորմի մասին ոչինչ չգիտե՞ք։

— Չէ, ոչինչ, մի՞թե բան կա։

— Անհավատալի բաներ են պատմում։ Կոնդրաշովն է լսել ծովային շտաբի իր ծանոթից։ Է՛յ, Պաթոլոգիական դիպված, պատմի՛ր Շչավինսկուն։

«Պաթոլոգիական դիպվածը»՝ սև, ողբերգական մորուքով և ճմռթված դեմքով մի մարդ, քթի մեջ ասաց.

— Վլադիմիր Իվանովիչ, ՛երաշխավորել չեմ կարող։ Բայց

[1] Խորին շնորհակալություն (ֆր.)։

աղբյուրը կարծես թե հավաստի է։ Շտաբում գաղտնի լուրեր են պտտվում, որ մեր էսկադրիլիայի մեծ մասն առանց կռվի գերի է հանձնվել։ Որ իբր թե նավաստիները կապկպել են սպաներին ու սպիտակ դրոշակ բարձրացրել։ Համարյա թե մի քսան նավ։

— Դա իսկապես սարսափելի է,— կամացուկ ասաց Շչավինսկին։— Գուցե դեռևս ճշմարիտ չէ՞։ Ասենք, հիմա այնպիսի ժամանակներ են, որ ամենաանհնարինը հնարավոր է դարձել։ Ի դեպ, գիտե՞ք, թե ինչ է կատարվում ծովային նավահանգիստներում։ Բոլոր անձնակազմերում խուլ, սարսափելի խմորումներ են գնում։ Ծովային սպաները վախենում են ափի վրա հանդիպել իրենց ստորաբաժանման մարդկանց։

Խոսակցության մեջ մտան բոլորը։ Այդ ճարպիկ, մտնողելնող, լկտի մարդիկ յուրօրինակ ընդունիչն էին քաղաքային ամեն կարգի լուրերի և ասեկոսեների, որոնք ավելի շուտ էին հասնում «Պետերբուրգի փառքի» առանձնասենյակը քան մինիստրական աշխատասենյակները։ Դա այնքան հետաքրքիր էր, որ նույնիսկ երեք հրացանակիրները, որոնց համար, թվում է, թե աշխարհում ոչ մի սուրբ կամ նշանակալից բան չկար, սկսեցին արտակարգ կրքոտությամբ խոսել՝

— Լուրեր են պտտվում, թե բանակի թիկունքում պահեստայինները հրաժարվում են ենթարկվել։ Որ իբր զինվորները հենց սպաների ատրճանակներից կրակում են սպաների վրա։

— Ես լսել եմ, որ գլխավոր հրամանատարը հիսուն գթության քույր է կախել տվել։ Իհարկե, դրանց միայն անունն էր քույր։

Շչավինսկին նայեց Ռիբնիկովին։ Հիմա արդեն շատախոս շտաբս-կապիտանը լուռ էր։ Աչքերը կկոցած, կրծքով ընկած թրի երախակալին, նա լարված, մեկ առ մեկ հետևում էր յուրաքանչյուր խոսողի, և ձգված մաշկի տակ նրա այտոսկրերի վրա արագարագ ցնցվում էին ջղերը, իսկ շրթունքները շարժվում էին, ասես ինքն իրեն կրկնում էր լսած ամեն մի բառը։

«Տեր աստված, վերջիվերջո ու՞մ է նա հիշեցնում»,— տասներորդ անգամ անհամբերությամբ մտածեց ֆելիետոնիստը։

Դա այնպես էր տանջում նրան, որ փորձեց դիմել ամենածանոթ միջոցին։ Ինքն իրեն ձևացնել, իբր ամենևին մոռացել է շտաբս-կապիտանի մասին, իսկ հետո հանկարծ նայել նրան։ Սովորաբար, նման հնարը նրան բավականաչափ արագ օգնում էր

վերհիշել ազգանունը կամ հանդիպման վայրը, բայց այժմ դա բոլորովին չօգնեց։

Նրա համառ հայացքի ներքո Ռիբնիկովը վերստին շրջվեց, խորը հոգոց հանեց և տրտմագին օրորեց գլուխը։

— Սարսափելի լուր է։ Դուք հավատու՞մ եք։ Ի՞նչ։ Ասենք, եթե ճիշտ էլ է, պետք չի հուսահատվել։ Մենք՝ ռուսներս՝ գիտեք ինչ ենք ասում. աստված մեծ է, չի թողնի շուն ու գելի բաժին դառնանք։ Այսինքն, ուզում եմ ասել, որ շուն ու գելը, իհարկե, ճապոնացիներն են։

Հիմա նա համառորեն դիմանում էր Շչավինսկու ակնդետ հայացքին, և նրա շիկավուն, գազանային աչքերի մեջ ֆելիետոնիստը տեսավ անողոք, անմարդկային ատելության կրակներ։

Այդ պահին հանկարծ վեր կացավ բազմոցին քնած բանաստեղծ Պեստրուխինը, շրթունքները ճպճպացրեց և պղտոր հայացքը հառեց սպայի վրա։

— Ա՜, ճապոնական մռութ, դեռ էստե՞ղ ես,— ասաց նա հարբած ձայնով, բերանը հազիվ շարժելով։— Մի քիչ էլ խոսիր տեսնեմ։

Եվ դարձյալ ընկավ բազմոցին, շրջվելով մյուս կողքին։

«Ճապոնացի է,— ահավոր հետաքրքրասիրությամբ մտածեց Շչավինսկին։— Ահա թե ում է նման»։ Եվ Շչավինսկին, բազմանշանակ ծանրակշռությամբ, ձիգ տվեց.

— Բայց համա թե պտու-ո՞ւղն եք, հա՜, պարոն շտաբս-կապիտան։

— Ե՞ս,— բղավեց սա։ Աչքերի կրակները հանգան, բայց շրթունքները դեռևս ջղաձգվում էին։— Ես շտաբս-կապիտան Ռիբնիկովն եմ։— Ծիծաղելի գոռոզությամբ նա դարձյալ բունցքով խփեց կրծքին։— Ռուս մարդու իմ սիրտը ցավում է։ Թույլ տվեք սեղմել ձեր աջ ձեռքը։ Լյաոյանի տակ կոնտուզիա եմ ստացել, իսկ Մուկդենի տակ ոտքից վիրավորվել։ Ի՞նչ։ Ջնո՞ք հավատում։ Էս է, հիմա ցույց կտամ։

Նա ոտքը դրեց աթոռին ու սկսեց վեր քշտել տաբատը։

— Դե լավ, լավ, շտաբս-կապիտան, վերջ տվեք։ Հավատում ենք,— կնճռոտվելով ասաց Շչավինսկին։

Բայց և այնպես սովորություն դարձած հետաքրքրասիրությունից հասցրեց արագ նայել Ռիբնիկովի ոտքին ու նկատեց, որ հետևակի այդ շտաբս-կապիտանը հիանալի տրիկոյի սպիտակեղեն է հագնում։

Այդ ժամանակ առանձնասենյակ մտավ թղթատար տղան, մի նամակ բերելով Մատանյային։

— Վլադիմիր Իվանովիչ, սա ձեզ համար է,— ասաց Մատանյան, պատռելով ծրարը։— Տրագիրն է, ախորժ։ Խնդրում եմ, իմ փոխարեն Զենիթի վրա կրկնակի մի տոմս դրեք։ Երկուշաբթի փողը կտամ։

— Կապիտան, ինձ հետ կգա՞ք ձիարշավի,— առաջարկեց Շչավինսկին։

— Ո՞ւր։ Ձիարշավի՞։ Մեծ հաճույքով։— Ռիբնիկովն աղմուկով վեր ելավ, աթոռը շրջելով։— Դա էն տեղն է, ուր ձիերով մրցո՞ւմ են։ Շտաբս-կապիտան Ռիբնիկովի՞ն ինչ, ուր ասես կգնա։ Կովի՛, կրակի՛, գրողի մոր ծո՞ցը։ Հա՜-հա՜-հա՜։ Էդպե՞ս։ Ի՞նչ կա։ Ճիշտ չի՞։

Երբ արդեն կառք էին նստել և գնում էին Կաբինետսկի փողոցով, Շչավինսկին թևանցուկ արեց սպային, թեքվեց ականջին ու հազիվ լսելի ասաց.

— Մի վախեցեք, ես ձեզ չեմ մատնի։ Դուք նույնքան Ռիբնիկով եք, որքան ես՝ Վանդերբիլդտ։ Դուք ճապոնական գլխավոր շտաբի սպա եք, կարծում եմ, գնդապետից ոչ պակաս աստիճանով, իսկ հիմա ռազմական լրտես եք Ռուսաստանում...

Բայց Ռիբնիկովը չլսեց նրա խոսքերը անիվների աղմուկից կամ չհասցացավ նրան։ Թեթևակի կողքից կողք ճոճվելով, նա խոսում էր խռպոտ ձայնով, մի նոր հարբած զմայլանքով։

— Ա՜-սել է թե իրար հետ քե՞ֆ-ֆ ենք անում։ Սիրում եմ, էլի, գրողը տանի։ Շտաբս-կապիտան ռուս զինվոր Ռիբնիկովը չինեմ, թե որ չեմ սիրում ռուս գրողներին։ Շատ լավ ժողովուրդ են։ Լավ խմում են ու կյանքը տակից գլուխ գիտեն։ Ռուսի ուրախությունը՝ բաժակի մեծությունը։ Իսկ ես, ախպերս, առավոտից կարգին լակել եմ։

3

Թե զբաղմունքի բերումով, թե բնավորության հակումով Շչավինսկին մարդկային փաստեր հավաքող էր, մարդկային հոգու հաղվադեպ ու արտառոց դրսևորումների կոլեկցիոներ։ Հաճախ շաբաթներով, երբեմն նույնիսկ ամիսներով նա զննում էր իրեն հետաքրքրող անձնավորությանը մոլի որ-

սորդի կամ թե կամավոր լրտեսի համառությամբ։ Լինում էին դեպքեր, երբ այդպիսի որս էր դառնում, ըստ նրա արտահայտության, «խավար աստղի տակ ծնված մի որևէ ասպետ»՝ խաղանենգ, հայտնի գրագող, կավատ, ալֆոնս[1], բոլոր խմբագրությունների սարսափ մի գրամոլ, վատնումների մեջ խրված, ռեստորաններում, ձիարշավարաններում և խաղասրահներում անդունդ գլորվող մարդու խելահեղությամբ պետական դրամը վատնող գանձապահ կամ արտելական։ Բայց նրա սպորտային հափշտակության առարկան էին դառնում նաև տվյալ շրջանի համբավավորներ՝ դաշնակահարներ, երգիչներ, գրողներ, շափազանց բախտավոր խաղամոլներ, ժոկեյներ, մարզիկներ, հաջողության ալիքի կատարը ելնող պշրուհիներ։ Ինչ գնով էլ լինի ծանոթություն ձեռք բերելով, Շչավինսկին մեղմ ու սիրով, մի տեսակ սարդային, պարուրող եղանակով գրավում էր իր զոհի ուշադրությունը։ Այստեղ արդեն նա պատրաստ էր ամեն ինչի. գիշերներ շարունակ անքուն կնստեր տափակ, սահմանափակ մարդկանց հետ, որոնց մտավոր ողջ պաշարը, ճիշտ ինչպես բուշմեններինը, մի երկու տասնյակ կենդանական հասկացություններ էին ու ծեծված խոսքեր, ռեստորաններում կխմեցներ անհույս հիմարների և սրիկաների, համբերությամբ սպասելով, մինչև որ հարբած վիճակում, փարթամ ու բազմաթերթ ծաղկի պես, նրանք կբացեին իրենց ողջ այլանդակությունը։ Աջուձախ շողոքորթում էր մարդկանց, հստակ աչքերով, ահավոր չափերով, հաստատապես հավատալով, որ շողոքորթությունը բոլոր փականքների բանալին է, շռայլորեն պարտք էր տալիս, նախապես գիտենալով, որ երբեք ետ չի ստանա։ Ի արդարացումն այդ մարդանքների վատնավորության, նա կարող էր ասել, որ հոգեբանական ներքին հետաքրքրությունն իր մեջ նշանակալի չափով գերազանցում էր այն օգուտներին, որոնք հետագայում նա ձեռք էր բերում որպես կենցաղագիր։ Տարօրինակ, իր իսկ համար շատ տարտամ հաճույք էր պատճառում նրան՝ թափանցել մարդկային հոգու գաղտնի, անթույլատրելի անկյունները, տեսնել արտաքին գործողությունների ծածուկ, երբեմն մանր-մունր, երբեմն խայտառակ, ավելի հաճախ ծիծաղելի, քան հուզիչ զսպանակները, այսպես ասած ձեռքով բռնել մարդկային կենդանի, տաք սիրտն ու զգալ նրա բաբախումը։ Հաճախ տքնախույզ նման աշխատանքի դեպքում նրան թվում

[1] Սիրուհու հաշվին ապրող աղամարդ (ծան. թարգմ.)։

էր, թե բացարձակապես կորցնում էր իր «ես»ը, այն աստիճան, որ մտածել ու գործել էր սկսում ուրիշ մարդու հոգով, անգամ խոսում նրա լեզվով ու բնորոշ բառերով, վերջապես նույնիսկ տեսնում, որ օգտագործում է ուրիշի շարժումները և ուրիշի ձայնի ելևէջները։ Բայց հագենալով մեկով, թողնում էր նրան։ Ճշմարիտն ասած, երբեմն հափշտակության բոպեի դիմաց ստիպված էր լինում երկար ու ծանր հատուցել։

Բայց արդեն վաղուց ոչ ոք այդքան խորը, անհանգստության աստիճան չէր հետաքրքրել նրան, որքան այդ բզկտված, խոպոտաձայն, կիսահարբած շտաբս-կապիտանը։ Ամբողջ օրը Շչավինսկին բաց չէր թողնում նրան, կառքի մեջ կողք-կողքի նստած և աննկատելիորեն զննելով նրան, Շչավինսկին մեկ-մեկ վճռականորեն մտածում էր.

«Ոչ, չի կարող պատահել, որ ես սխալվեմ՝ այս դեղին, շեղաչ, այտոսկրերով դեմքը, այդ մշտական, թեթևակի գլուխ տալը և ձեռքերը շփելը և, դրա հետ մեկտեղ, այդ լարված, նյարդային, զարհուրելի լկտիությունը... Բայց եթե այս ամենը ճիշտ է, և շտաբս-կապիտան Ռիբնիկովն իրոք ճապոնական լրտես է, ապա ի՞նչ աներևակայելի սառնասրտության տեր մարդ պիտի լինի, որ թշնամական ազգի մայրաքաղաքում օրը ցերեկով հոյակապ հանդգնությամբ, գլխից ձեռ քաշած ռուս բանակայինի այդչափ շար ու ճշգրիտ ծաղրանկարը խաղա։ Ի՞նչ սարսափելի զգացումներ պիտի ապրի նա, ամբողջ օրը, ամեն բոպե՝ համարյա անխուսափելի մահվան դեմ-հանդիման»։

Սա արդեն Շչավինսկուն համարյա անհասկանալի, հմայիչ, խենթ ու միաժամանակ սառնարյուն քաջագործություն էր, հայրենասիրական հերոսության բոլոր տեսակներից թերևս բարձրագույնը։ Եվ սուր հետաքրքրությունը, գումարված ինչ-որ հարգալից մի երկյուղի, ավելի ու ավելի ուժեղ էր ձգում ֆելիետոնիստի միտքը դեպի այդ արտառոց շտաբս-կապիտանի հոգին։

Բայց երբեմն մտովի սանձում էր իրեն.

«Իսկ եթե ինքս եմ գլուխս մտցրել ծիծաղելի ու կանթակալ այդ միտքը։ Իսկ եթե ես՝ փորձառու սրտագետս, պարզապես ինքս ինձ հիմարացրել եմ գոգոլյան քեֆչի կապիտան Կոպեյկինով։ Չէ որ Ուրալում և օրենբուրգցի կազակների մեջ շատ կան հենց այսպիսի մոնղոլական զաֆրանագույն դեմքեր»։ Ու այդ ժամանակ նա ավելի ուշադիր է հետևում շտաբս-կապիտանի յուրաքանչյուր շարժումին ու արտահայտությանը, ականջ սրած ունկնդրում նրա ձայնի հնչյուններին։

Իրեն պատիվ տվող և ոչ մի զինվորի բաց չէր թողնում Ռիբնիկովը, ու ինքը ևս ձեռքը գլխարկի հովարին էր տանում հատկապես երկարատև, բռնազբոսիկ բծախնդրությամբ։ Երբ անցնում էին եկեղեցիների մոտով, ամպայման հանում էր գլխարկն ու խաչակնքում երեսը լայն ու հանգամանալից, ընդ որում աչքը թեթևակի ծռած հարևանի կողմը՝ տեսնու՞մ է, թե ոչ։

Մի անգամ Շչավինսկին չդիմացավ ու ասաց.

— Բայց հավատացյալ եք, հա՞, կապիտան։

Ռիբնիկովը տարածեց ձեռքերը, ծիծաղելի կերպով գլուխը ներս քաշեց ուսերի մեջ ու ասաց խոպոտ ձայնով.

— Ինչ արած, ախպեր։ Կռվի մեջ եմ վարժվել։ Ով կռիվ չի գնացել, աստծուն չի աղոթել։ Գիտե՞ք Ռուսական հիանալի ասացվածք է։ Այնտեղ ուզած-չուզած կսովորես աղոթել, հոգիս։ Մեկ-մեկ գնում ես դիրքերը՝ գնդակները վզվզում են, շրապնելներ, նռնակներ... էդ անիծած շիմոզաները[1]... Բայց ինչ անես՝ պարտականություն կա, երդում կա, գնո՞ւմ ես։ Ու ինքդ քեզ աղոթում. «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քոյ, եկեսցե արքայութիւն քոյ, եղիցի կամս քոյ, որպես յերկինս և յերկրի...»

Եվ նա մինչև վերջ կարդաց ամբողջ աղոթքը, բարեխղճությամբ ընդգծելով յուրաքանչյուր հնչյունը։

«Լրտե՛ս է»,— վճռեց Շչավինսկին։

Բայց նա իր կասկածը չէր ուզում կիսատ թողնել։ Մի քանի ժամ շարունակ փորձում ու շարչարում էր շտաբս-կապիտանին։ Ճաշելիս, առանձնասենյակում, սեղանի վրա կռացած, գինու բաժակը ձեռքին և ուղիղ Ռիբնիկովի բիբերին նայելով, ասում էր.

— Ինձ լսեք, կապիտան, հիմա մեզ ոչ ոք չի լսում և... ես չգիտեմ, թե ինչ ազնիվ խոսք տամ ձեզ, որ աշխարհում ոչ ոք մեր խոսակցության մասին չի իմանա։ Ես միանգամայն անվերադարձ, խորապես համոզված եմ, որ դուք ճապոնացի եք։

Ռիբնիկովը դարձյալ բռունցքով խփեց կրծքին։

— Ես շտաբս...

— Չէ, չէ, չէ, թողնենք այդ օյինները։ Որքան էլ խելոք լինեք, մեկ է, ձեր դեմքը թաքցնել չեք կարող։ Այտոսկրերի գծագրությունը, աչքերի կտրվածքը, այդ բնորոշ գանգը, մաշկի գույնը, դեմքի ցանցառ ու կոշտ մազերը, ամեն, ամեն ինչ անկասկած մատնացույց է անում ձեր պատկանելությունը դեղին ցեղին։ Բայց դուք վտանգից դուրս եք։ Ես ձեզ չեմ մատնի, ինչ էլ խոստանան դրա համար, լռելուս համար ինչով էլ սպառնան։ Լոկ մի պատճառով արդեն ձեզ չարիք չեմ պատճառի, քանի որ սիրտս անսահման հարգանքով է լի ձեր զարմանալի խիզախության հանդեպ, ավելին կասեմ՝ լի է ակնածանքով, երկյուղով, եթե կուզեք։ Ես նույնիսկ չեմ կարող... իսկ չէ որ ես գրող եմ, նաև երևակայություն ունեմ, չեմ կարող պատկերացնել, թե ինչպես կարելի է սիրտ անել.տասնյակ-հազարավոր վերստեր հեռու հայրենիքից, ատելությամբ լի թշնամիներով լցված քաղաքում, ամեն վայրկյան կյանքը վտանգելով, չէ՞ որ ձեզ կկախեն առանց որևէ դատի, եթե բռնվեք, այդպես չէ՞, ու հանկարծ սպայի մունդիր հագած դեսուդեն եք թափառում, ամեն տեսակ մարդկանց հետ անխտիր շփվում, ամենավտանգավոր խոսակցությունները վարում։ Չէ՞ որ աննշան սխալը, վրիպումը մի վայրկյանում կկործանեն ձեզ։ Այ, օրինակ, կես ժամ առաջ ձեռագրի փոխարեն ասացիք մագաղաթ։ Ինչին բան է, բայց շատ բնորոշ։ Բանակի շտաբս-կապիտանն այդ բառը երբեք չի գործածի ժամանակակից ձեռագրի մասին, այլ միայն արխիվային կամ հատկապես հանդիսավոր փաստաթղթի մասին կասի, այն էլ նույնիսկ ոչ թե ձեռագիր, այլ թուղթ։ Բայց դրանք դատարկ բաներ են։ Գլխավորը, որ չեմ կարող ըմբռնել, մտքի և կամքի այդ մշտական լարումն է, հոգեկան ուժերի այդ դիվական վատնումը։ Ճապոներեն մտածելուց ետ սովորել, լիովին մոռանալ իր անունը, նույնանալ մեկ ուրիշ անձնավորության հետ։ Ոչ, ոչ, դա կատարելապես վեր է ամենայն հերոսությունից, որի մասին մեզ պատմել են դպրոցներում։ Սիրելիս, ինձ հետ խաղ մի արեք։ Երդվում եմ, ձեր թշնամին չեմ։

Շչավինսկին սա ասում էր միանգամայն անկեղծորեն, ամբողջովին բորբոքված ու հուզված հերոսական այն կերպարով, որ իր երևակայությունն էր գծագրել։ Բայց շտաբս-կապիտանը շողոքորթության էլ հակված չէր։ Նա լսում էր դիմացինին, փոքրինչ կկոցած աչքերով նայելով գավաթին, որը կամացուկ շարժում էր սփռոցի վրայով, և նրա կապույտ շրթունքների ծայրերը նյարդայնորեն ցնցվում էին։ Ու նրա դեմքին Շչավինսկին տեսավ միևնույն գողունի քմծիծաղը, միևնույն անկոտրում, խորունկ

[1] Շրապնել— կլոր գնդակներով լցված հրետառումբ, շիմոզա—պայթուցիկ նյութ, ճապոնացի գյուտարար Շիմոնոզեի անունով (ծան. բարգմ.)։

և անմարելի ատելությունը, խելացի, մարդկայնացած, բարեկիրթ գազանի՝ եվրոպացի մարդու համար գուցեև երբեք չընկալվող մի առանձնահատուկ ատելություն այլացեղ էակի նկատմամբ։

— Է՜, վերջ տվեք,— անփութորեն առարկեց Ռիբնիկովը։ —Գրողը տանի դրանց։ Գնդում էլ էին ինձ ձեռ առնում ճապոնացի կանչելով։ Եղա՞ծն ինչ է։ Ես շտաբս-կապիտան Ռիբնիկովն եմ։ Գիտեք, չէ՞, ռուսական մի առած կա, ասում է՝ երեսը գեշ, հոդին սիրուն... Բայց մի բան պատմեմ ձեզ. մի անգամ մեր գընդում...

— Իսկ դուք ո՞ր գնդում էիք ծառայում,— հանկարծակի հարցրեց Շչավինսկին։

Բայց շտաբս-կապիտանը կարծես թե չլսեց նրան։ Սկսեց պատմել այն հին, մաշված, լկտի անեկդոտներից, որոնք պատմվում են ճամբարներում զորավարժությունների ժամանակ, զորանոցներում։ Եվ Շչավինսկին ակամա վիրավորանք զգաց։

Եղավ մի պահ, երբ արդեն երեկոյան կառքով դնալիս Շչավինսկին գրկեց կապիտանի իրանը, մոտ քաշեց ու կիսաձայն ասաց.

— Կապիտան... չէ, ոչ թե կապիտան, այլ հավանորեն, գնդապետ, այլապես նման լուրջ առաջադրանք ձեզ չէին տա։ Ասենք, գնդապե՛տ։ Ես խոնարհվում եմ ձեր խիզախության առջև, այսինքն՝ ուզում եմ ասել՝ ճապո՛նական ժողովրդի անսահման արիության առաջ։ Մեկ-մեկ, երբ կարդում կամ մտածում եմ ձեր դիվային քաջության և մահվան նկատմամբ արհամարհանքի առանձին դեպքերի մասին, հրճվանքի սարսուռ եմ զգում։ Օրինակ, ի՜նչ անսահման գեղեցկություն և աստվածային հանդգնություն կա գնդակոծված նավի այդ նավապետի արարքում. գերի հանձնվելու առաջարկին ի պատասխան նա գլանակ է վառել և գլանակը ատամների արանքում խորտակվել նավի հետ։ Ինչպիսի՜ անընդգրկելի ուժ և թշնամու նկատմամբ ի՜նչ ապշեցուցիչ արհամարհանք։ Հապա ծովային կադետները, որոնք հրկիզանավերով անխուսափելի մահվան գնացին այնպիսի ուրախությամբ, ասես պարահանդես լիներ։ Իսկ հիշո՞ւմ եք, թե ինչպես մի լեյտենանտ, մեն-մենակ, նավակով տորպեդոն քաշեց հասցրեց պորտարթուրյան ծովապատնեշի եզրը։ Լուսարձակները գցեցին նրա վրա, նրանից ու տորպեդոյից միայն մի մեծ արնահեղ մնաց բետոնե պատի վրա, բայց հաջորդ օրն իսկ ճապոնական նավատորմի բոլոր միջմաններն ու լեյտենանտ-

ները ծովակալ Տոգոյի հասցեով խնդրագրեր ուղարկեցին, այդ նույն խելագար խիզախությունը կրկնելու պատրաստակամությամբ։ Այդ ի՜նչ հերոսներ են։ Բայց առավել հոյակապը Տոգոյի հրամանն է, ըստ որի՝ ենթակա սպաները չպետք է համարձակվեն վտանգի ենթարկել իրենց կյանքը, որն իրենցը չէ, այլ հայրենիքինը։ Ա՜հ, սատանան տանի, որքա՜ն գեղեցիկ է։

— Ես որ փողոցով ենք գնում,— ընդհատեց Ռիբնիկովը և հորանջեց։— Մանջուրիայի բլուրներից հետո լրիվ մոռացել եմ փողոցներից գլուխ հանելը։ Խարբինում...

Բայց ոգևորված Շչավինսկին շարունակեց, առանց նրան լսելու։

— Այդ դեպքը հիշո՞ւմ եք, երբ գերի ընկած սպան փնքն իր գլուխը ջախջախեց, խփելով քարին։ Բայց ամենից զարմանալին սամուրայների ստորագրություններն են։ Դուք, ինչ խոսք, այդ մասին չեք լսել, չէ՞, պարոն շտաբս-կապիտան Ռիբնիկով,— հարցրեց Շչավինսկին կծու շեշտով։— Դե հա՜, հասկանալի է, չեք լսել... Գիտեք ինչ, ուրեմն գեներալ Նոգին կամավորներ պահանջեց պորտարթուրյան ամրությունները գիշերով զրոհողների առաջին շարասյան համար։ Համարյա ամբողջ ջոկատը այդ գործին, այդ պատվարժան մահվան գնալու պատրաստակամություն հայտնեց։ Եվ քանի որ նրանք չափազանց շատ էին ու այնպես էին մեկը մյուսից առաջ ընկնում, մահին ընդառաջ, որ այդ մասին գրավոր խնդրեցին, և նրանցից ոմանք, հին սովորությամբ, ձախ ձեռքի ցուցամատերը կտրեցին և, որպես արնաներկ կնիք, թղթին հպեցին ստորագրության փոխարեն։ Այդպես վարվեցին սամուրայնե՛րը։

— Սամուրայնե՛րը,— կրկնեց Ռիբնիկովը խլաձայն։

Ասես ինչ-որ բան կտրվեց ու դեմ առավ նրա կոկորդին։ Շչավինսկին արագ նայեց նրա կիսադեմին։ Շտաբս-կապիտանի բերանի շուրջը և ցնցվող կզակին անսպասելի, մինչ այդ չտեսնված մեղմ քնքշության արտահայտություն էր իջել, և աչքերը փայլում էին այն ջերմ, դողդոջ լույսով, որն առկայծում է հանկարծակի, չթափվող արցունքների միջից։ Բայց նա տեղնուտեղը տիրապետեց իրեն, մի պահ կկոցեց աչքերը, ապա Շչավինսկու կողմը դարձրեց բարեհոգի, անմիտ դեմքը և հանկարծ մի այլանդակ, ռուսական երկարուձիգ հայհոյանք արձակեց։

— Կապիտան, կապիտան, ձեզ ի՞նչ պատահեց,— բացականչեց Շչավինսկին համարյա սարսափած։

— Էդ բոլորը թերթերի փչոցներն են,— անփութորեն ասաց Ռիբնիկովը,— մեր ռուս զինվորը ոչնչով վատը չի։ Բայց, խոսք չկա, սարքերություն կլինի։ Նրանք կռվում են իրենց կյանքի, փառքի, ինքնուրույնության համար, իսկ մեր ցա՞վն ինչ էր։ Ոչ ոք չի իմանում։ Սատանան գիտի, թե ինչ էր։ Ոնց որ ասում են, շատ սիրուն էինք, ծաղիկ էլ հանեցինք։ Ի՞նչ։ Ճիշտ չի՞։ Հա՛-հա՛-հա՛։

Ձիարշավարանում Շչավինսկուն որոշ չափով գրավեց խաղը, և նա չէր կարող անընդհատ հետևել շտաբս-կապիտանին։ Բայց ընդմիջումներին թուցիկ տեսնում էր նրան մեկ այս, մեկ այն տրիբունայում. վերևում, ներքևում, բուֆետում և տոմսարկղների մոտ։ Այդ օրը «Ցուսիմա» բառը բոլորի՝ խաղացողների, հեծյալների, բուքմեյքերների[1] շուրթերին էր, նույնիսկ գշլոտ ու հանելուկային բոլոր այն անձնավորությունների, որոնք սովորաբար անխուսափելի են ձիարշավարաններում։ Այդ բառն արտասանում էին թե՛ ծաղրելով ուժասպառ ձիուն, թե՛ զայրացած տանուլ տվածից, թե՛ անտարբեր ծիծաղով, թե՛ դառնությամբ։ Տեղ-տեղ տաքացած էին խոսում։ Եվ Շչավինսկին հեռվից տեսնում էր, թե ինչպես շտաբս-կապիտանն իր գյուրահավատ, աներես ու կիսահարբած շարժմունքով ինչ-որ մեկի հետ վեճի էր բռնվում, մեկ ուրիշի ձեռքը թափահարում, երրորդի ուսին թմփթմփացնում։ Նրա փոքրիկ, կաղին տվող մարմինը երևում էր ամենուրեք։

Ձիարշավարանից գնացին ռեստորան, այդտեղից էլ Շչավինսկու բնակարանը։ Ֆելիետոնիստը փոքր-ինչ ամաչում էր կամավոր լրտեսի իր դերից, բայց զգում էր, որ ի զորու չէ թողնել դա, թեև սկսել էր հոգնել, գլուխն էլ ցավում էր օտար մեկի հոգու հետ այդ գաղտնի, լարված պայքարից։ Համոզվելով, որ շողոքորթությունն իրեն չօգնեց, այժմ փորձում էր շտաբս-կապիտանին հասցնել անկեղծության, ծանակելով ու բորբոքելով նրա հայրենասիրական զգացմունքները։

— Այո, բայց և այնպես խղճում եմ այդ թշվառ մակականերին,— խոսում էր նա հեգնական ափսոսանքով։— Ինչ ուզում են թող պատմեն, բայց այս պատերազմում Ճապոնիան մսխեց իր ազգային ողջ հանճարը։ Իմ կարծիքով, երկիրը նման է լզարիկ, վտիտ մի մարդու, որը, ցնորքի մեջ, հարբած կամ պարծենկոտությունից, բռնել ու շալակով քսան փութ է բարձրացրել, փորը պատռել, հիմա էլ մեռնում է դանդաղ մահով։ Ռուսաստանը, որ ճիշտն ասենք, միանգամայն առանձնահատուկ երկիր է՝ հսկա։ Մանջուրյան պարտությունները նրա համար նույնն են, ինչ, ասենք, տզրուկները լիարյուն մարդու համար։ Այ, կտեսնենք, թե պատերազմից հետո ինչպես կկաղդուրվի ու կծաղկի։ Իսկ Ճապոնիան կսմքի ու կմեռնի։ Նա հայից ընկել է։ Թող չասեն, թե այնտեղ մշակույթը բարձր է, համընդհանուր գրագիտություն է, եվրոպական տեխնիկա։ Համենայն դեպս, վերջ ի վերջո ճապոնացին ասիացի է, կիսակապիկ, կիսամարդ։ Տիպարով էլ է մերձենում կապկին, ճիշտ այնպես, ինչպես բուշմենը, տուարեգը և բոտոկուդը։ Արժե ուշադրություն դարձնել սոսկ նրա դեմքի Կամպերի անկյանը[1]։ Մի խոսքով, մակակա է։ Եվ մեզ հաղթել է ամենևին ոչ ձեր մշակույթը կամ քաղաքական ջահելությունը, այլ ուղղակի ինչ-որ խելագար բռնկում, ընկնավորության պես մի բան։ Դուք գիտե՞ք, թե ինչ ասել է raptus, կատաղության նոպա։ Թուլակազմ կինը կտրատում է շղթաները և տաշեղի պես դեսուդեն շպրտում ուժեղ տղամարդկանց։ Հաջորդ օրը ձեռքը չի կարողանում բարձրացնել։ Այդպես էլ Ճապոնիան է։ Հավատացեք, նրա հերոսական նոպայից հետո վրա է հասնելու անուժությունը, զառամությունը։ Բայց, ինչ խոսք, դրանից առաջ նա կունենա ազգային պարծենկոտության, վիրավորական ռազմատենչության և խելագար շովինիզմի շրջան։

— Ճի՞-շշ-շտ է,— ի պատասխան բղավեց շտաբս-կապիտան Ռիբնիկովը հիմարավուն զմայլանքով։— Ինչ ճիշտ է, ճիշտ։ Տվեք ձեր ձեռքը, մսյո գրող։ Խելացի մարդն իսկույն երևում է, էլի։

Նա խոպոտ քրքջում էր, թքոտում, խփում Շչավինսկու ծնկներին, ցնցում նրա ձեռքը։ Ու հանկարծ Շչավինսկին ամաչեց ինքն իրենից և խորաթափանց սրտագետի իր ծածուկ հնարներից։

«Իսկ եթե սխալվում եմ, ու այս Ռիբնիկովն իրոք հետևազորի ամենաիսկական, ուղնուծուծով հարբեցողի մեկն է։

---

1 Ձիարշավարաններում հասարակությունից գրավները հավաքող ու արձանագրող անձնավորություն (ծան. բարգմ.)։

1 Հոլանդացի անատոմ Պյոտր Կամպերը (1722—1789) կիսադեմի բնորոշ հատկությունները որոշելու համար օգտագործում էր դեմքի անկյունը (ծան. ռուս. հրատ.)։

Թյո՛ւհ, գրողը տանի։ Բայց չէ, դա անհնար է։ Իսկ եթե հնարավոր է, ապա, տեր աստված, ինչ հիմարավարի եմ ինձ պահում»։

Բնակարանում նա շտաբս-կապիտանին ցույց տվեց իր գրադարանը, հնագույն ճենապակու հավաքածուն, հազվագյուտ փորագրությունները և սիբիրյան երկու ցեղական լայկաներին։ Շշավինսկու կինը՝ օպերետային փոքրիկ-մոքրիկ մի երգչուհի, քաղաքից բացակայում էր։

Ռիբնիկովն այդ ամենին նայում էր քաղաքավարի, բայց անհաղորդ հետաքրքրությամբ, որը թեթևակի ձանձրույթի, նույնիսկ սառն արհամարհանքի պես մի բան թվաց տանտիրոջը։ Ի միջի այլոց, Ռիբնիկովը մի ինչ-որ ամսագիր բաց արեց ու բարձրաձայն մի քանի տող կարդաց։

«Բայց և այնպես, այս մի բանը նա սխալ արեց»,— մտածեց Շշավինսկին, երբ լսեց նրա ընթերցումը, որ չափազանց ճիշտ էր, բայց անկենդան, յուրաքանչյուր տառի արտակարգ ստույգ արտասանությամբ, որով հպարտանում են օտար լեզուն ուսումնասիրող առաջին աշակերտները։ Բայց ըստ երևույթին Ռիբնիկովը ևս դա նկատեց, որովհետև շուտով փակեց ամսագիրն ու հարցրեց.

— Դուք էլ եք գրող, չէ՞։

— Այո... Շատից-քչից։

— Իսկ ո՞ր թերթերում եք գրում։

Շշավինսկին թվարկեց։ Այդ օրվա ընթացքում Ռիբնիկովը վեցերորդ անգամ էր այդ հարցը տալիս նրան։

— Ա՛հ, հա, հա, հա... Մոռացա, հարցրել եմ արդեն։ Գիտե՞ք ինչ, պարոն գրող։

— Ի՞նչ։

— Էսպես անենք. դուք գրեք, իսկ ես կթելադրեմ... Այսինքը՝ ոչ թե կթելադրեմ... օ՜ ոչ, ես երբեք չեմ համարձակվի։— Ռիբնիկովը շփեց ձեռքերը և շտապ-շտապ գլուխ խոնարհեց։ —Իհարկե, դուք ինքներդ կշարադրեք, իսկ ես ձեզ մենակ մտքեր կտամ և որոշ... ոնց ասեմ, հուշեր պատերազմի մասին։ Ա՛հ, ինչքան հետաքրքիր նյութ ունեմ...

Շշավինսկին կողքանց նստեց սեղանին ու նայեց շտաբս-կապիտանին, մի աչքը խորամանկորեն կկոցած։

— Եվ իհարկե, հիշատակեմ ձեր ազգանունը։

— Բա ո՞նց։ Կարող եք։ Դեմ ոչինչ չունեմ։ Էդպես էլ կնշեք.

այս տեղեկությունները սիրահոժար տրամադրեց շտաբս-կապիտան Ռիբնիկովը, որը հենց նոր է վերադարձել ռազմաճակատից։

— Ուրեմն այդպես, հրաշալի է։ Իսկ դա ձեր ինչի՞ն է պետք։

— Ի՞նչ։

— Որ անպայման ձեր ազգանունը լինի՞։ Թե՞ դա ձեզ հետագայում պետք կգա հաշվետվության համար։ Իբր, տեսեք, ահա, սադրել եմ ռուսական թերթե՞րը... Ի՞նչ ճարպիկ մարդ եմ, հը՞։

Բայց շտաբս-կապիտանը, ըստ իր սովորության, խուսափեց ուղղակի պատասխանից։

— Իսկ գուցե ժամանա՞կ չունեք։ Ուրիշ գործո՞վ եք զբաղված։ Է՛, ուրեմն, գրողի ծոցն էդ հուշերը։ Եղած-չեղածը գրելով չի պրծնի։ Ոնց որ ասում են՝ թթու է, թան չի, ամեն մարդու բան չի։ Ի՞նչ կա։ Ճիշտ չեմ ասո՞ւմ։ Հա՛-հա՛-հա՛։

Այդ ժամանակ Շշավինսկու գլխով մի միտք անցավ։ Նրա աշխատասենյակում հացենու չներկած փայտից մի մեծ սեղան էր դրված, որի մաքուր ու հարթ երեսին Շշավինսկու բոլոր ծանոթները աֆորիզմներով, ոտանավորներով, նկարներով, անգամ երաժշտական նոտաներով ինքնագրեր էին թողնում։ Նա ասաց Ռիբնիկովին։

— Տեսեք, պարոն կապիտան, ահա իմ ալբոմը։ Որևէ բան չե՞ք գրի ի հիշատակ մեր հաճելի (Շշավինսկին հարգանքով գլուխ տվեց) և, համարձակվում եմ ինձ հուսադրել, ոչ կարճատև ծանոթության։

— Ինչի՞ չէ, հաճույքով,— տեղնուտեղը համաձայնեց Ռիբնիկովը։— Պուշկինից կամ Գոգոլից մի բա՞ն։

— Ոչ... ավելի լավ է ինքներդ։

— Ինքս։ Շատ լավ։

Նա վերցրեց գրիչը, թաթախեց, մտածեց ու պատրաստվեց գրել։ Բայց Շշավինսկին հանկարծ ընդհատեց նրան.

— Ավելի լավ կլինի այսպես անենք։ Վերցրեք այս թղթի կտորը, իսկ այս տուփի մեջ քորոցներ կան։ Խնդրում եմ, հատկապես հետաքրքրական մի բան գրեք, հետո թղթով ծածկեք ու քորոցներով ամրացրեք։ Ես ձեզ ազնիվ խոսք եմ տալիս, գրողի ազնիվ խոսք, որ երկու ամիս ձեռք չեմ տա թղթին ու

չեմ նայի, թե ինչ եք գրել։ Եղա՞վ է՛, ուրեմն, գրեցեք։ Ես դուրս կգամ, որ չխանգարեմ ձեզ։

Հինգ բոպե անց Ռիբնիկովը ձայն տվեց.

— Հրամեցեք։

— Պատրա՞ստ է,— ներս մտնելով՝ հարցրեց Շչավինսկին։ Ռիբնիկովը ձգվեց, ձեռքը տարավ քունքին, ինչպես պատվի առնելիս, և բղավեց զինվորավարի.

— Ճիշտ այդպես, ձերդ բարեծնություն։

— Շնորհակալ եմ։ Իսկ հիմա գնանք Բուֆֆ կամ որևիցե այլ տեղ,— ասաց Շչավինսկին։— Հետո կտեսնենք։ Կապիտան, այսօր մինչև լույս ես ձեզ բաց չեմ թողնելու։

— Մեծագույն հաճույքով,— խոպոտ ու թավ ձայնով ասաց Ռիբնիկովը, շրխկացնելով կրունկները։

Եվ ուսերը վեր քաշելով, կտրիճ տեսքով բեղերը սղալեց։ Բայց Շչավինսկին ակամա խաբեց շտաբս-կապիտանին և խոսքի տերը չեղավ։ Տնից ելնելու վերջին պահին ֆելիետոնիստը հիշեց, որ աշխատասենյակում է թողել ծխախոտատուփը և գնաց բերելու, իսկ Ռիբնիկովը մնաց նախամուտքում։ Քորոցներով ամրացրած սպիտակ թուղթը բորբոքեց նրա հետաքրքրասիրությունը։ Նա չդիմացավ գայթակղությանը, գողունի ետ շրջվեց ու, թուղթը ծալելով, կարդաց նուրբ, հստակ, արտակարգ գեղեցիկ ձեռագրով գրված բառերը։

«Զնայած յոթերորդ Իվանովն ես, բայց էլի հիմար ես...»։

4

Կեսգիշերից բավական անց քաղաքամերձ կաֆեշանտանից նրանք դուրս եկան օպերետային հայտնի ծաղրածու Ժենին-Լիրսկու, դատախազի երիտասարդ օգնականի՝ օրվա հրատապ խնդիրների շուրջ ծիծաղաշարժ բաներ պատմելու աննման ձիրքով ամբողջ Պետերբուրգին հայտնի Սաշկա Շտրալմանի և արվեստների հովանավոր, վաճառականի որդի Կարյուկովի հետ։

Դեռ չէր լուսացել, բայց մութ էլ չէր։ Տաք, սպիտակ, թափանցիկ գիշեր էր։ Երփներանգ, նուրբ գույներով, հանդարտահոս ջրանցքների սադափե ջրերի վրա առափնյա քարերի հստակ պատկերն էր ընկած և ծառերի անշարժ կանաչը, դժգույն, ասես, անքնությունից տանջահար երկնքում երկար, բարալիկ, ծվեն-ծվեն բամբակի փաթիլների պես փամփլիկ ամպեր էին ննջում։

— Ո՞ւր ենք գնալու,— այգու դարպասի մոտ կանգ առնելով, հարցրեց Շչավինսկին։— Մարշա՛լ Օյամա, ձեր լուսավորյալ կարծիքը ո՞րն է։

Հինգն էլ կանգնել-մնացել էին մայթի վրա։ Նրանց պաշարել էր մինչլուսաբացի սովորական անվճռականությունը, երբ կերած-խմած մարդկանց ֆիզիկական հոգնությունը կռիվ է տալիս նոր, թունդ տպավորությունների անդիմադրելի, գրգռիչ ձգտման հետ։ Այգուց անընդմեջ դուրս էին ելնում այցելուները, ծիծաղելով, երգելով, կրունկներն աղմուկով կտկտացնելով չոր, սպիտակ սալարկի վրա։ Փութկոտ քայլերով, ներքնագգեստների մետաքսը համարձակորեն խշխշացնելով, դուրս էին վազում կաֆեշանտանի երգչուհիները՝ վիթխարի գլխարկներով, թրթռացող շողակները ականջներին, ծաղիկը մերակը խրած՝ բաց գույնի կոստյումներ հագած պճնամոլ տղամարդկանց ուղեկցությամբ։ Այդ տիկնայք, որոնց ակնածանքով օգնում էին բարապանները, թեթև-թեթև նստում էին կառքերն ու փրթփրթացնող ավտոմոբիլները, անբռնազբոս շարժումներով ուղղում զգեստները ծնկներից ցած և առաջ սլանում՝ մի ձեռքով գլխարկների եզրերը բռնած։ Երգչախմբի և այգու բարձր կարգի երգչուհիները գնում էին հասարակ կառքերով, մեկ-մեկ կամ երկու-երկու, նստելով տղամարդու հետ։ Մյուսները՝ սովորական, փողոցային պոռնիկները, փայտյա ցանկապատի մոտ իրար անցած, կպչում էին այն տղամարդկանց, հատկապես հարբածներին, որոնք ոտքով էին գնում։ Մայիսյան գիշերվա լուսավոր, ճերմակ աղջամուղջի մեջ նրանց դեմքերը՝ ասես կոպիտ դիմակներ, երկնագույն էին թվում սպիտակ դիմաներկից, ալ կարմրին տալիս և աչք ծակում հոնքերի սևությամբ, հաստությամբ ու արտասովոր կլորությամբ։ Բայց միամտորեն վառ այդ գույների տակից առավել թշվառությամբ էր ի հայտ գալիս նրանց կնճռապատ քունքերի դեղնությունը, երակները դուրս պրծած պարանոցների նիհարությունն ու թոշնած կզակների ճարպակալությունը։ Հեծյալ երկու ոստիկան անպարկեշտ հիշոցներով վրա էին քշում, ձիերի փրփրակալած մռութներն առաջ տված, և կանայք ծղրտում, դեսուդեն էին ընկնում ու կառչում անցորդների թևքերից։ Ջրանցքը պատնեշող ճաղաշարի մոտ մի քանի մարդ էր խոնվել՝ առավոտյան սովորական վեճուկռիվ էր։ Սաստիկ հարբած, անբեղ-անմորուք մի սպա հարայ-հրոցը գցել ու ձևացնում էր, թե ուզում է դուրս քաշել թուրը, իսկ ոստիկանն ինչ-որ բան էր

հորդորում համոզիչ բարակ ձայնով, ձեռքը սրտին դրած։ Մի ժիր, մութ ու հարբած տիպ, պատռված հովարով գլխարկը գլխին, շողում ու քաղցր-մեղցր ասում էր. «Ձերդ բարեծնություն, թքեք դրանց վրա, չարժի որ ուշ դարձնեք։ Լավ կլլնի, մի հատ ինձ զարկեք, թող արեք ձեր ձեռը պաչեմ, ձերդ բարեծնություն»։ Հավաքվածների ետևից մի չորչորուկ և խստահայաց պարոն, որի միայն հաստ ու սև բեղերն էին երևում մինչև քիթը քաշած գլխարկի տակից, թավաձայն ու անհասկանալի բոբոում էր. «Ի՞նչ եք դրա ռեխին նայում։ Գցեք ջուրն ու պրծեք»։

— Բայց, Ֆսկապես, մայոր Ֆուկուշիմա,— ասաց դերասանը։ — Հարկ է, որ արժանավայել ավարտենք մեր հաճելի ծանոթության օրը։ Գնանք աղջիկների մոտ։ Սաշկա, ո՞ւր գնանք։

— Բերտայի մո՞տ,— հարցին հարցով պատասխանեց Շտրալմանը։

Ռիբնիկովը քրքջաց և իրար անցած ուրախ-ուրախ շփեց ձեռքերը։

— Կանանց մո՞տ։ Ի՞նչ կա որ, ոնց որ ռուսական առածն է ասում, ջհուդն էլ կախվեց ընկերոջի, որտեղ մարդիկ, էնտեղ էլ մենք։ Ի՞նչ կա, ճիշտ չի՞։ Թե գնալ կա գնացինք, ասաց թութակը։ Ի՞նչ։ Հա՛-հա՛-հա՛։

Այս երիտասարդների հետ նրան ծանոթացրել էր Շչավինսկին, և բոլորը միասին ընթրել էին կաֆեշանտանում. լսել ռումինացիներին և շամպայն ու լիկյորներ էին խմել։ Մի որոշ ժամանակ նրանց ծիծաղելի էր թվում Ռիբնիկովին ճապոնական զանազան զորավարների ազգանուններ տալը, առավել ևս, որ շտաբս-կապիտանի բարեսրտությունը, ըստ երևույթին, անսահման էր։ Այդ կապիտ և ընտանեվարի խաղն սկսեց Շչավինսկին։ Ճիշտ է, մերթ-մերթ նա զգում էր, որ Ռիբնիկովի նկատմամբ տգեղ, նույնիսկ, ասենք, դավաճանորեն է վարվում։ Բայց իր խիղճը նա հանգստացնում էր, որ ոչ մի անգամ բարձրաձայն չի արտահայտել կասկածները, իսկ իր ծանոթների մտքով նման բան չէր էլ անցնում։

Երեկոյի սկզբում նա հետևում էր Ռիբնիկովին։ Շտաբս-կապիտանը բոլորից ավելի աղմկոտն ու շատախոսն էր. բոպեն մեկ բաժակ էր շիկացնում, վեր թռչում, նստում, գինին թափում էր սփռոցին ու գլանակը վառում հակառակ ծայրից։ Բայց Շչավինսկին նկատեց, որ նա շատ քիչ է խմում։

Ռիբնիկովն ու ֆելդֆեբելը զարձյալ կառք նստեցին։

Շչավինսկին համարյա խմած չէր։ Նա ընդհանրապես աչքի էր ընկնում կերուխումներին մասնակցելու մեծ դիմացկունությամբ, բայց գլուխը մի տեսակ թեթև ու աղմկոտ էր, ասես մեջը շամպայնի փրփուր էր թրթռում։ Նա կողքից նայեց շտաբս-կապիտանին։ Սպիտակ գիշերի անիրական, քնեած լույսի տակ Ռիբնիկովի դեմքը գորշ, կավի երանգ էր ստացել։ Բոլոր խոռոչները դարձել էին ընդգծված ու սև, քունքի կնճիռները և քթարմատի ու բերանի ծայրերի խորշումները խորացել էին։ Շտաբս-կապիտանը նստած էր կորացած, գլխահակ, ձեռքերը խրած շինելի թևքերի մեջ, և ծանր-ծանր շնչում էր բաց բերանով։ Այդ ամենը միասին նրան տալիս էր տանջված, տառապած տեսք։ Շչավինսկին նույնիսկ նրա շնչառության հոտն առավ ու մտածեց, որ այդպիսի ծանրահոտ, կծու շունչ են ունենում խաղամոլները մի քանի գիշեր խաղալուց հետո և անքնությունից կամ ուղեղի լարված աշխատանքից ուժասպառ եղած մարդիկ։ Բարեմիտ գորովանքի և խղճահարության մի ալիք հորձանք տվեց Շչավինսկու սրտում։ Շտաբս-կապիտանը հանկարծ նրան երևաց որպես փոքրիկ, հալածված, գթաշարժ ու խեղճ մեկը։ Նա գրկեց Ռիբնիկովին, իր կողմը քաշեց ու փաղաքշանքով ասաց.

— Դե լավ, կապիտան։ Ես անձնատուր եմ լինում։ Ձեզանից գլուխ հանել չեմ կարող և ներողություն եմ խնդրում, եթե տհաճ բոպեներ եմ պատճառել ձեզ։ Տվեք ձեր ձեռքը։

Նա իր այցեզգեստի մերակից հանեց վարդափունջը և հագցրեց կապիտանի շինելի կոճկադին։

— Ի նշան խաղաղության, կապիտան։ Այլևս միմյանց հոգի չհանենք։

Կառապանը կանգ առավ երկհարկանի, քարաշեն մի առանձնատան մոտ՝ արժանավայել շքամուտքով, ծայրեծայր փակ լուսամուտներով։ Մյուսներն ավելի շուտ էին հասել ու նրանց էին սպասում։ Անմիջապես ներս չթողեցին։ Նախ, ծանր դռան մյուս կողմից բռաչափ մի քառանկյուն անցք բացվեց, որի մեջ մի քանի ակնթարթ երևաց ինչ-որ մեկի սառը և ուշադիր, մոխրագույն աչքերը։ Հետո դուռը բացվեց։

Այդ հաստատությունը թանկարժեք պոռնկատան և պերճաշուք ակումբի նման մի բան էր՝ հոյակապ նախամուտքով, արջի խրտվիլակով, գորգերով, մետաքսյա վարագույրներով ու ջահերով, ֆրակ ու ձեռնոց հագած սպասավորներով։ Այստեղ էին գալիս տղամարդիկ՝ դեստորանները փակվելուց հետո,

գիշերն անցկացնելու։ Այստեղ նաև թուղթ էին խաղում, թանկարժեք գինիներ ունեին և միշտ մեծ թվով գեղեցիկ, թարմ կանայք կային, որոնք հաճախ էին փոփոխվում։

Հարկ եղավ երկրորդ հարկ բարձրանալ։ Վերևում մի լայն սրահ էր սարքված, տակառիկների մեջ աճող բույսերով ու բազմոցով, ճաղաշարով անջատված աստիճաններից։ Շչավինսկին վեր բարձրացավ՝ թևանցուկ արած Ռիբնիկովին։ Թեև ներքուստ խոսք էր տվել այլևս չբարկացնել նրան, բայց այստեղ չկարողացավ իրեն զսպել ու ասաց.

— Ելնենք կառափնարան, կապիտան։

— Ես չեմ վախենում,— ասաց նա ծուլորեն։— Առանց դրա էլ ամեն օր մահին ընդառաջ եմ գնում։

Ռիբնիկովը թույլ-թույլ թափ տվեց ձեռքն ու հարկադրված ժպտաց։ Դրանից նրա դեմքը հանկարծ հոգնած, մի տեսակ գորշ ու ծերունական դարձավ։

Շչավինսկին նրան նայեց լուռ զարմանքով։ Նա ամաչեց իր պնդերեսությունից։ Բայց Ռիբնիկովն իսկույն տակից դուրս եկավ։

— Հա՛ էլի, մահին ընդառաջ։ Զինվորը միշտ պատրաստ պիտի լինի դրան։ Ի՞նչ արած։ Մեռնելը մի փոքրիկ անհարմարություն է մեր մասնագիտության մեջ։

Շչավինսկին և մեկենաս Կարյուկովն այստեղ տանու մարդիկ էին և պատվարժան, մշտական այցելուներ։ Նրանց դիմավորում էին ուրախ ժպիտով և խորը գլուխ տալով։

Մի մեծ, տաքուկ առանձնասենյակ տրամադրեցին նրանց՝ կարմիր, ոսկեգույն պատեր, բաց կանաչ հաստ գորգը՝ հատակին, անկյուններում և սեղանի վրա՝ աշտանակներ։ Շամպայն, մրգեր ու անուշեղեն մատուցեցին։ Եկան կանայք, նախ երեքը, ապա ևս երկուսը, հետո անընդհատ գնում, գալիս էին, բոլորն էլ անխբտիր սիրունիկ, չափից դուրս շպարված, ճերմակ ձեռքերը, պարանոցներն ու կրծքերը բաց, փայլփլուն, վառ, թանկարժեք զգեստներ հագած, ոմանք ծնկին հասնող հագուստով, մեկը՝ գիմնազիստուհու դարչնագույն համազգեստով, մյուսը՝ նեղ անդրավարտիքով , ժոկեյի գլխարկով։ Ներս եկավ նաև տարեց ու գիրուկ, սևազգեստ մի տիկին, տիրուհու կամ կառավարչուհու նման մի բան, արտաքնապես խիստ վայելուչ, կիտրոնի պես դեղին ու թոշնած դեմքով։ Սա ամբողջ ժամանակ ծիծաղում էր պառավական հաճելի ծիծաղով, բոպեն մեկ հաղում և մի գլուխ

ծխում էր։ Շչավինսկու, մեկենասի և դերասանի հետ վարվում էր նրանց մոր տարիքին հասած տիկնոջ սիրալիր, անբռնազբոս պչրանքով, թաշկինակով խփում էր ձեռքներին, իսկ Շտրալմանին, որին հավանորեն բոլորից շատ էր սիրում, կոչում էր Սաշկա։

— Է՛, գեներալ Կուրոկի, խմենք մանչուրյան փառապանծ բանակի փայլուն հաջողությունների կենացը։ Թե չէ թթվել նստել եք,— ասաց Կարյուկովը։

Շչավինսկին ընդհատեց նրան, հորանջելով.

— Վերջ տվեք, պարոնայք։ Կարծես թե արդեն ձանձրացած պիտի լինեինք։ Դուք չարաշահում եք կապիտանի բարեսրտությունը։

— Չէ, ես չեմ բարկանում,— առարկեց Ռիբնիկովը,— պարոնայք, խմենք մեր գեղեցիկ տիկնանց կենացը։

— Լիրսկի, մի բան երգիր,— խնդրեց Շչավինսկին։

Դերասանը հաճույքով նստեց դաշնամուրի մոտ ու գնչուական մի ռոմանս երգեց։ Ճշմարիտն ասած, չերգեց, ավելի շուտ պատմեց, առանց սիգարը բերանից հանելու, առաստաղին նայելով ու ջինծու ճոճվելով։ Կանայք ձայնակցում էին նրան բարձր ու սխալ, աշխատելով մեկը մյուսից շուտ արտասանել բառերը։ Սաշկա Շտրալմանը հետո շատ հաջող նմանեցրեց ֆոնոգրաֆը, գործող անձանցով ներկայացրեց իտալական օպերան ու կենդանիների ձայներ հանեց։ Կարյուկովը ֆանդանգո[1] պարեց, և նորանոր շշեր էր պահանջում։

Նա առաջինն անհետացավ սենյակից՝ շիկահեր, լուռումունջ մի լեհուհու հետ, նրան հետևեցին Շտրալմանն ու դերասանը։ Մնացին միայն Շչավինսկին, որի ծնկներին մի թուխ, ճերմակատամ հունգարուհի էր նստած, և Ռիբնիկովը, որը նստել էր կապույտ ատլասե, մինչև կրծքի կեսը քառանկյուն կտրվածքով կոֆտա հագած, շիկահեր, գիրուկ մի կնոջ կողքին։

— Ինչ արած, կապիտան, մի պահ հրաժեշտ տանք միմյանց, —ասաց Շչավինսկին, տեղից ելնելով ու ձգմզվելով։— Ուշ է։ Ավելի ճիշտ, պետք է ասել՝ վաղ է։ Կապիտան, ժամը մեկին եկեք ինձ մոտ՝ նախաճաշի։ Մամաշա, գինու փողը Կարյուկովից կստանաք։ Թե որ սիրում է սրբազան արվեստը, թող վճարի ուրեմն նրա ծառաների հետ ընթրելու պատվին արժանանալու դիմաց։ Հարգանքներս։

---

[1] Իսպանական ժողովրդական պար (ծան. բարգմ.)։

Շիկահեր կինը մերկ թևով գրկեց կապիտանի վիզը և պարզ ու հասարակ ասաց.

— Մենք էլ գնանք, սիրունս։ Ճիշտ որ ուշ է։

5

Նա մի փոքրիկ, ուրախ-զվարթ սենյակ ուներ, երկնագույն պաստառներով, բաց երկնագույն կախովի լապտերով։ Ջարդասեղանի վրա կլոր հայելի կար, երկնագույն, շղարշե շրջանակով, մի պատի վրա՝ օլեոգրաֆիաներ, մյուսին՝ գորգ, դրա տակ՝ մետաղյա լայն մահճակալ։

Կինը հանվեց ու թեթևացման հաճույքի զգացումով շփեց կողերը, որոնց վրա շապկի ծալքերն էին մնացել սեղմիրանից։ Ապա իջեցրեց լամպի պատրույգը և, նստելով մահճակալին, սկսեց կամաց-կամաց արձակել կիսակոշիկների կապերը։

Ռիբնիկովը նստել էր սեղանի մոտ, արմունկները տարածած ու գլուխը ձեռքերին դրած։ Անթթիթ նայում էր կնոջ խոշոր, բայց գեղեցիկ ոտքերին, լիքը-լիքը սրունքներին՝ կիպ գրկված սև, ցանցկեն գուլպաներով։

— Էդ ինչի՞ չեք հանվում, պարոն սպա,— հարցրեց կինը։

— Սիրունս, էդ ինչի՞ են ձեզ ճապոնական գեներալ ասում։

Ռիբնիկովն սկսեց ծիծաղել, աչքերը չկտրելով նրա ոտքերից։

— Հենց էնպես, հիմար բան է։ Իրենց համար կատակ են անում։ Էն ոտանավորը գիտե՞ս. մեղք չէ ծիծաղելը ծիծաղելի բանի վրա...

— Սիրունս, էլի շամպայն կհյուրասիրե՞ք։ Լավ, եթե էդքան ժլատ եք, գոնե մենակ նարինջ ասեմ բերեն։ Մի ժամո՞վ։ Թե գիշերը մնալու եք։

— Մնալու եմ։ Արի մոտս։

Կինը պառկեց կողքին, շտապ-շտապ, գլխի վրայով հատակին շպրտեց գլանակն ու իրար անցավ վերմակի տակ։

— Դու պատի մո՞տ ես սիրում,— հարցրեց նա։— Լավ, պառկի, պառկի։ Ու՜յ, էս ինչ սառն են ոտքերդ։ Գիտե՞ս, ես պաշտում եմ զինվորականներին։ Անունդ ի՞նչ է։

— Ի՞մ,— նա հազաց ու պատասխանեց անհաստատ տոնով։

— Ես շտաբս-կապիտան Ռիբնիկովն եմ, Վասիլի Ալեքսանդրովիչ Ռիբնիկովը։

— Ա՜, Վասյա։ Մի ծանոթ լիցեյիստ ունեմ, նրա անունն էլ է Վասյա, այնքա՜ն լա՜վն է։

Եվ վերմակի տակ սրթսրթալով, ծիծաղելով, սկսեց երգել.

Վասյա, Վասենկա, Վասյա,
Ջեղած ստեր մի ասա։

— Բայց, աստված վկա, որ նման ես ճապոնչիկի։ Էն էլ գիտե՞ս ում։ Միկադոյի։ Մենք մի նկար ունենք։ Ափսոս, հիմա ուշ է, թե չէ ցույց կտայի։ Ոնց որ կիսած խնձոր։

— Ինչ կա որ, շատ հաճելի է,— ասաց Ռիբնիկովը և կամացուկ գրկեց նրա հարթ ու կլոր ուսը։

— Գուցե դու իսկականի՞ց ճապոնացի ես։ Նրանք ասում էին, որ դու եղել ես կովում, ճի՞շտ է։ Օ՜յ, անուշիկս. ես խուտուտ ունեմ։ Կռվի դաշտում սարսափելի է, չէ՞։

— Սարսափելի է... Չէ, էնքան էլ չէ։ Թողնենք, հա՞,— ասաց կապիտանը հոգնած։— Քո՞ անունն ինչ է։

— Կլոթիլդա։ Չէ, քեզ ասեմ, մեր մեջ մնա, անունս Նաստյա է։ Կլոթիլդա անունն էստեղ տվեցին ինձ։ Որովհետև իսկական անունս էնքան գեշ է... Նաստյա, Նաստասյա, ոնց որ լվացք անող։

— Նա՞ստյա,— հարցրեց նա մտազբաղ և զգուշորեն համբուրեց կնոջ կուրծքը։— Չէ, լավ անուն է Նաստ-յա,— կրկնեց նա դանդաղ։

— Չէ մի, դրա լավը ո՞րն է։ Այ, լավ անուններ են, ասենք, Մալվինա, Վանդա, Ժենյա, կամ թե չէ՝ Իրմա... Ո՜ւհ, սիրունս։ — Կինը սեղմվեց նրան։— Դուրեկան մարդ եք... Սև մազերով։ Ես սիրում եմ սև մազեր։ Դուք երևի պսակված եք, չէ՞։

— Չէ, պսակված չեմ։

— Լավ, հա, հիմա կսկսեք։ Էստեղ բոլորն էլ չպսակված են ձևանում։ Վայ թե մի վեց հատ էլ երեխա ունեք, չէ՞։

Քանի որ պատուհանի փեղկերը գոց էին, իսկ լամպը հազիվ էր վառվում, սենյակում մութ էր։ Կապիտանին շատ մոտ պառկած կնոջ դեմքը բարձի խավար սպիտակության վրա առանձնանում էր արտառոց ու փոփոխական երանգով։ Արդեն նման չէր նախկին՝ պարզ ու գեղեցիկ, խաժաչ, ռուսական կլոր դեմքին, այժմ ասես ավելի նիհար էր դարձել և բոպե առ բոպե, տարօրինակ կերպով փոփոխելով արտահայտությունը, թվում էր նուրբ, սիրելի, հանելուկային և Ռիբնիկովին հիշեցնում էր ինչ-

որ մեկի անսահմանորեն ծանոթ, վաղուց սիրելի, հմայիչ ու գեղեցիկ դեմքը։

— Ինչ լա՜վն ես,— շշնջում էր կապիտանը։— Ես քեզ սիրում եմ... ես քեզ սիրում եմ...

Նա հանկարծ անհասկանալի, կնոջ ականջին բացարձակապես օտար մի բառ ասաց։

— Ինչ ասացի՞ր,— հարցրեց կինը զարմացած։

— Ոչինչ... ոչինչ։ Հենց էնպես։ Սիրելի՜ս։ Կի՜ն ես դու։ Դու կի՜ն ես... Ես քեզ սիրում եմ...

Նա համբուրում էր կնոջ ձեռքերը, պարանոցը, մազերը, դողալով անհամբերությունից, որը զսպելը հենց նրան հրաշալի հաճույք էր պատճառում։ Բուռն և քնքուշ մի կիրք պաշարեց նրան այդ կուշտ, անզավակ էգի նկատմամբ, նրա խոշոր, ջահել, խնամված, գեղեցիկ մարմնի նկատմամբ։ Ճգնավորի խստակյացությամբ, ֆիզիկական մշտական հոգնածությամբ, մտքի և կամքի լարված աշխատանքով ճնշված ձգտումը կնոջ հանդեպ հանկարծ անդիմադրելի, արբեցնող ջոցով բռնկվեց նրա մեջ։

— Ձեռքերդ էլ են պաղ,— ասաց կինը ամոթխած շփոթմունքով։ Այդ մարդու մեջ մի տեսակ անսպասելի, խռովահույզ, իր համար լիովին անհասկանալի մի բան կար։— Ձեռքերդ՝ պաղ, սիրտդ՝ տաք։

—Այո, այո, այո... Սիրտս,— կրկնում էր կապիտանը խելագարի պես, հևասպառ և դողալով։— Սիրտս տաք է... սիրտս...

Կինը վաղուց արդեն վաբժվել էր սիրո արտաքին արարողություններին ու ամոթալի մանրուքներին և օրական մի քանի անգամ կատարում էր այդ ամենը մեխանիկորեն, անտարբեր, հաճախ լուռ խորշանքով։ Հարյուրավոր տղամարդիկ՝ գիշերն իրենց դնովի ատամները ջրով լի բաժակի մեջ գցող զառամյալ ծերուկներից մինչև տղեկները, որոնց ձայնի մեջ բասը խառնվում է դիսկանտին, քաղաքացիներ, զինվորականներ, քաչալ կամ կապկի պես, ոտից գլուխ բրդի մեջ կորած մարդիկ, հուզմունքից դողացող և անուժ մարդիկ, նրա մոտ իրենց արատը չկոծկող թմրամոլներ, գեղեցկատեսներ և անդամալույծներ, որոնցից երբեմն նրա սիրտն էր խառնում, առաջին անկման տրտմությունից արտասվող պատանյակներ՝ այդ բոլորը զրկում էին նրան անամոթ խոսքերով, երկարատև համբույրներով, արտաշնչում ուղիղ դեմքին, տնքում էին շնական կրքի մոլուցքից, որը վայրկենապես վերածվում էր ակնհայտ, անդիմադրելի զզվանքի՝ նա արդեն վաղօրոք գիտեր դա։ Եվ վաղուց արդեն արական բոլոր դեմքերը նրա աչքին կորցրել էին անհատական ամեն տեսակի գծերը, և ասես ձուլվել, դարձել էին գարշելի, բայց անխուսափելի, մշտապես իր վրա խոնարհվող մեկ դեմք, տղամարդու պագշոտ, այծային դեմք, ծակծկող, լորձոտ բերանով, մշուշված փայլարի պես պղտոր աչքերով, ծռմռված, այլայլված դեմք, հեշտասիրության կնիքը վրան, հեշտասիրություն, որն ատելի էր իրեն ու երբեք փոխադարձ չէր։

Բացի այդ, նրանք բոլորն էլ կոպիտ էին, պահանջկոտ ու զուրկ պարզագույն ամոթից անգամ, մեծ մասամբ անճոռնի, ծիծաղաշարժ էին, որքան անճոռնի ու ծիծաղաշարժ կարող է լինել ժամանակակից տղամարդը շապիկ-վարտիքով։ Բայց այս կարճահասակ, տարեց սպան մի առանձնահատուկ, նոր, դյուրիչ տպավորություն էր թողնում։ Նրա բոլոր շարժումներին հատուկ էր մեղմ ու փաղաքուշ զգուշություն։ Նրա գգվանքը, համբույրներն ու հպումները չտեսնված նուրբ էին։ Եվ այնուհանդերձ, նա աննկատելիորեն պարուրում էր կնոջը իսկական, լարված, գազանային կրքի այն նյարդային մթնոլորտով, որը նույնիսկ տարածության վրա, նույնիսկ կամքին հակառակ, խռովում է կնոջ զգայականությունը, նրան հնազանդեցնում, հպատակեցնում արուի ցանկություններին։ Բայց Կլոթիլդայի խեղճուկրակ ուղեղը, որը հասարակաց տան նիստուկացի նեղ շրջանակներից դուրս չէր եկել, չկարողացավ ընկալել այդ տարօրինակ, զգլխիչ հմայքը։ Ամաչելով, երջանիկ ու զարմացած, նա կարողացավ սոսկ շշնջալ սովորական տափակ խոսքերը.

— Ի՜նչ հետաքրքիր տղամարդ եք։ Իմ սիրունիկ-գնդիկ՝ բալիկն եք, հա՞։

Նա վեր կացավ, լամպը հանգցրեց ու նորից պառկեց կապիտանի կողքին։ Փեղկերի ու պատի միջև եղած ճեղքերից բարալիկ շերտերով ճերմակին էր տալիս այգաբացը, սենյակը լցնելով կապույտ, մշուշոտ ցայգալույսով։ Միջնորմից այն կողմ, ինչ-որ տեղ արագ-արագ զրնգաց զարթուցիչը։ Հեռուներում մեկը երգում էր տխուր-տրտում։

— Մեկ էլ ե՞րբ կգաս,— հարցրեց կինը։

— Ի՞նչ,— կիսաքուն հարցրեց Ռիբնիկովն, աչքերը բացելով։— Երբ կգա՞մ։ Շուտով... Վաղը...

— Լա՜վ, հա... խաբում ես։ Չէ, ճիշտն ասա, ե՞րբ։ Առանց քեզ կտխրեմ։

— Ըմմ։ Մենք կգանք տխրելու... Մենք կգրենք նրանց... Նրանք կանգ կառնեն լեռներում...— անկապ շշնջում էր կապիտանը։

Ծանր քունը շղթայել ու տանջում էր նրա մարմինը։ Բայց ինչպես քնից վաղուց կտրված բոլորը, նա ևս չէր կարողանում միանգամից քնել։ Հազիվհազ գիտակցությունը վարագուրվում էր մոռացության մթին, փափուկ ու դյութիչ շղարշով, երբ ներքին սարսափելի մի հարված հանկարծ վեր էր շպրտում նրա մարմինը։ Տնքալով ցնցվում էր, վայրի երկյուղով չռում աչքերն ու անմիջապես վերստին ընկղմվում քնի և արթնության բորբոքուն, անցողիկ վիճակի մեջ, որ նման է ահարկու տեսիլքներով լի ցնորքի։

Կնոջ քունը չէր տանում։ Շապկանց նստել էր մահճակալին, ծալած ծնկները մերկ թևերով գրկած, և վախվորած հետաքրքրությամբ նայում էր Ռիբնիկովին։ Երկնագույն կիսախավարում սպայի դեմքը ավելի էր դեղնել, սրվել ու դիակի էր նմանվում։ Բերանը մնացել էր բաց, բայց շնչառությունը չէր լսվում։ Եվ ամբողջ դեմքին, հատկապես աչքերի շուրջն ու բերանի մոտ, մարդկային խորը տառապանքի և այնպիսի տանջահարության արտահայտություն կար, որպիսին նա երբեք չէր տեսել ամբողջ կյանքի ընթացքում։ Ձեռքը կամացուկ տարավ նրա կոշտ մազերի ու ճակատի վրայով։ Մաշկը սառն էր և ամբողջովին ծածկված լպրծուն քրտինքով։ Այդ հպումից Ռիբնիկովն սկսեց դողալ, բղավեց ու ընդոստ շարժումով գլուխը պոկեց բարձերից։

— Ա՜... Ո՞վ է։ Ո՞վ,— ասաց նա ընդհատ- ընդհատ, շապկի թևքով երեսը սրբելով։

— Քեզ ի՞նչ եղավ, փիսիկս,— կարեկցանքով հարցրեց կինը։ — Վատ ես զգո՞ւմ։ Գուցե մի քիչ ջո՞ւր տամ։

Բայց Ռիբնիկովն արդեն տիրապետել էր իրեն ու նորից պառկեց։

— Չէ՛, շնորհակալ եմ... Հիմա լավ է... Երազի մեջ էի... Սիրուն աղջիկս, պառկիր քնիր, խնդրում եմ։

— Քեզ ե՞րբ վեր կացնեմ, անուշս,— հարցրեց կինը։

— Վեր կացնես... Առավոտը... Արևը շուտ կծագի, ու դրագունները կգան... Մենք լող կտանք... Գիտե՞ք։ Կլողանք, գետը կանցնենք։

Նա սսկվեց ու մի քանի րոպե լուռ պառկած էր։ Բայց հանկարծ նրա անշարժ ու անկենդան դեմքը ջղաձգվեց տանջալի ցավով։ Տնքալով շուռ եկավ մեջքի վրա, և օտար լեզվի տարօրինակ, օտարոտի հնչող բառերն արագ-արագ դուրս պրծան նրա բերանից։

Կինը լսում էր շունչը պահած, պաշարված այն սնահավատ երկյուղով, որը միշտ առաջանում է քնած մարդու զառանցանքից։ Տղամարդու դեմքը երկու վերշոկ[1] էր հեռու նրանից, և կինը աչքը չէր կտրում նրանից։ Մի րոպե էլ լռեց. ապա սկսեց երկար ու անհասկանալի խոսել։ Դարձյալ լռեց, ասես ականջ էր դրել մեկ ուրիշի ասածին։ Ու հանկարծ կինը լսեց հրստակ, հաստատ ու բարձրաձայն ասված, թերթերից իրեն միակ ծանոթ ճապոներեն բառը.

— Բանզա՛յ[2]։

Նրա սիրտն այնպես արագ սկսեց բաբախել, որ հարվածներից վրա-վրա և համաչափ ցնցվում էր թավշե վերմակը։ Հիշեց, թե ինչպես այսօր կարմիր առանձնասենյակում Ռիբնիկովին կոչում էին ճապոնական գեներալների անուններով, և աղոտ ու հեռավոր մի կասկած սկսեց փորփրել նրա խավար ուղեղը։

Ինչ-որ մեկը կամացուկ ճանկռտեց դուռը։ Նա վեր կացավ ու բաց արեց։

— Կլոթիլդոչկա, դո՞ւ ես,— լսվեց կանացի կամացուկ մի ձայն։— Քնած չե՞ս։ Մի րոպեով արի ինձ մոտ։ Լյոնկան մոտս է, աբրիկոտին[3] է պատվում։ Արի, քաղցրս։

Կարայիմ[4] Սոնկան էր, Կլոթիլդայի հարևանուհին, իսկ նրանք կապված էին միմյանց հիստերիկ և քաղցր-մեղցր այն սիրահարությամբ, որը միշտ երկու-երկու միավորում է նման հաստատությունների կանանց։

— Լավ։ Հիմա կգամ։ Ա՜հ, էնպիսի հետաքրքիր բա՜ն ունեմ պատմելու։ Սպասիր, հագնվեմ։

— Պետք չի։ Ումի՞ց ես ամաչում, Լյոնկայի՞ց։ Ոնց որ կաս, Կլոթիլդան հագավ շրջազգեստը։

Ռիբնիկովն արթնացավ։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց նա քնաթաթախ։

— Հիմա կգամ, պետք ունեմ,— պատասխանեց կինը, շտապ-շտապ քունը կապելով կոնքերից վեր։— Դու քեզ հանգիստ քնիր։ Էս րոպեիս գալիս եմ։

---

1 Երկարության հին չափ, շուրջ 4,5 սմ (ծան. թարգմ.)։
2 Կեցցե (նապ.)։
3 Միրանի լիկյոր (ծան. թարգմ.)։
4 Աղգություն (ծան. թարգմ.)։

Բայց Ռիբնիկովն այլևս չլսեց նրա վերջին խոսքերը, քանի որ թանձր ու խավար քունը իսկույն մթագնեց նրա գիտակցությունը։

6

Լյոնկան այդ ամբողջ տան կուռքն էր, տիրուհուց սկսած մինչև վերջին սպասուհին։ Նման հաստատություններում, ուր ձանձրույթը, անգործությունը և ցածրակարգ գրականությունը սերմանում են խիստ ռոմանտիկ ճաշակներ, գողերն ու լրտեսները վայելում են առավելագույն երկրպագությունը, շնորհիվ գրավիչ արկածներով, վտանգով ու համարձակությամբ լի իրենց հերոսական գոյության։ Լյոնկան հայտնվում էր այստեղ ամենատարբեր հագուստներով, համարյա թե գրիմ արած, որոշ դեպքերում բազմանշանակ ու խորհրդավոր լռություն էր պահպանում և, գլխավորը (բոլորն էլ լավ հիշում են), բազմիցս ապացուցել էր, որ տեղական ոստիկանները նրա նկատմամբ անսահման հարգանք ունեն և կուրորեն կատարում են նրա հրամանները։ Մի դեպք եղավ, երբ նա հանելուկային ժարգոնով ասված երկու-երեք խոսքով մեկ վայրկյանում հարբած գողերի կողմից սկսված ահավոր տուրուդմփոցը կանխեց ու ստիպեց նրանց հլու-հնազանդ հեռանալ հաստատությունից։ Բացի այդ, ժամանակ առ ժամանակ նրա մոտ մեծ գումարներ էին հայտնվում։ Դրա համար էլ հասկանալի է, որ բոլորը նախանձոտ հարգանք ունեին Հենրիետտայի, կամ ինչպես Լյոնկան էր ասում, Գենկայի նկատմամբ, ում հետ նա «սեր էր խաղում»։

Թուխ, պևպենոտ դեմքով մի երիտասարդ էր նա, սև, մինչև աչքերի տակը վեր ցցված բեղերով, կախ ընկած ու լայն ծնոտով և մուգ, գեղեցիկ, լկտի աչքերով։ Հիմա նա նստած էր բազմոցին, առանց սերթուկի, արձակած ժիլետով ու քանդած փողկապով։ Նա բարեկազմ էր ու ցածրահասակ, բայց դուրս պրծած կուրծքը և ուսագլխի վրա, շապկի տակից ցցված մկանները վկայում էին, որ շատ ուժեղ է։ Նրա կողքին, ոտքերը բազմոցի վրա, նստած էր Գենկան, դիմացը՝ Կլոթիլդան։ Լիկյորը դանդաղ մոտեցնելով կարմիր շրթունքներին, Լյոնկան պատմում էր անփույթ, շինծու սեթևեթ տոնով.

— Դրան բերեցին քաղաքաման։ Անձնագիրը մոտն էր՝ Կոռնեյ Սապետով, կոլպինյան քաղքենի, թե ինչ։ Իհարկե, պարտադիր կարգով խմած էր սրիկան։ «Սառը տեղ դրեք, թող ուշքի գա»։ Սովորական... Բայց հենց էդ րոպեին պատահական մտա պրիստավի գրասենյակը։ Նայում՝ տեսնեմ՝ պա՛հ-պա՛հ-պա՛հ։ Հին ծանոթ է Ղասաբ Սանկան։ Եռակի սպանություն և սուրբ տաճարի թալան։ Իսկույն աչքով նշան արեցի հերթապահ վերակացուին ու, ոնց որ թե հեշ բան չկա։ դուրս եկա։ միջանցք։ Վերակացուն էլ դուրս եկավ հետևիցս։ «Ի՞նչ եք ասում, Լեոնտի Սպիրիդոնովիչ»։ «Հապա էդ գյոզալին մի բոպեով ուղարկեք խուզարկու ոստիկանատուն»։ Բերեցին դրան։ Սրիկայի դեմքի վրա մի մկան էլ չշարժվեց։ Մի հատ էսպես նայեցի դրա աչքերի մեջ ու ա-սա-ցի. «Սանեչկա, վաղո՞ւց եք մեզ մոտ բարեհաճել Օդեսայից»։ Ինչ ասեմ, իրեն անտարբեր էր պահում, հիմարի տեղ դնում։ Ոչ մի կերպ։ Տիպ է, հա՜։ «Չգիտեմ, թե էդ ինչ Ղասաբ Սանկա է։ այսինչ-այնինչն եմ»։ Էստեղ մոտեցա դրան, բռնեցի մորուքն ու՝ ա՜ռ հա՜։ Մորուքը մնաց ձեռքումս։ Դնովի էր... «Հիմա կխոստովանե՞ս, շան որդի»։ «Չգիտեմ դա ով է»։ Խարդախի քթարմատին մ-մի՜ հատ, ուղիղ շտոսով, ա՜ռ հա՜։ Հետո մի հատ էլ։ Արյունը չոռաց։ «Հիմա կխոստովանե՞ս»։ «Չգիտեմ»։ «Ես քո ըսենց-ընենցը։ Մինչև հիմա մարդավարի խնայում էի քեզ։ Իսկ հիմա գլխիդ ճարը տես։ Էստեղ կանչեք Ոչիլ Արսենտիին»։ Էդ անունով մի բանտարկյալ ունեինք, մահու չափ ատում էր Սանկային։ Ես հո լա՜վ գիտեմ դրանց փոխադարձ հաշիվ-մաշիվը։ Ոչիլին բերեցին։ «Էհ, Ոչիլ, ըսենց-ըսենց։ Ո՞վ է սույն անհատը»։ Ոչիլը ծիծաղում է։ «Էլ ո՞վ պըտի ըլնի, որ Ղասաբ Սանկան չըլնի։ Սանեչկա, ինչպե՞ս է ձեր ողջությունը։ Վաղո՞ւց եք պատիվ բերել մեր կողմերը։ Բախտներդ ո՞նց էր բերում Օդեսաներում»։ Դե, էստեղ Ղասաբս հանձնվեց։ «Ծղա՜վ, ասում է, Լեոնտի Սպիրիդոնովիչ, ձեր ասածն է, ձեր ձեռքից պրծում չկա։ Մի պապիրոս չե՞ք տա»։ Իհարկե, պապիրոս տվեցի դրան։ Ես նրանց երբեք նման բաներ չեմ մերժում, մարդասիրությունից։ Էս մեր աստծո ծառային տարան։ Ու նա մենակ մի հատ նայեց Ոչիլին։ Ես մտածեցի. «Ոնց որ թե մեր Ոչիլի բանը բուրդ է։ Անպայման Ղասաբը նրա վերջը կտա»։

— Վերջը կտա՞,— շշնջոցով, սարսափած, կեղծավորությամբ ու վստահ հարցրեց Գենկան։

— Էն էլ ո՞նց կտա։ Մաքու՜ր։ Վերջ տվողներից է։

Լյոնկան ինքնագոհ՝ մի կում արեց ըմպանակից։ Գենկան, որ նրան էր նայում անշարժացած, վախեցած աչքերով ու այնպիսի ուշադրությամբ, որ նույնիսկ բերանն էր բաց մնացել ու թքով լցվել, ձեռքերը շրխկացրեց ազդրերին։

— Վա՜խ, վա՜խ, տե՛ր աստված։ Էս ի՞նչ սարսափելի բաներ կան աշխարհում։ Հլա մի պատկերացրու, Կլոթիլդոչկա։ Լյոնյա, բա չվախեցա՞ր։

— Չէ՛ մի, հա՛։ Էդ էր պակաս ամեն փալասից վախենայի։

Կանանց խանդավառ ուշադրությունից բորբոքված, նա սկսեց ստեր մոգոնել, որ Վասիլևսկի կղզու ինչ-որ անկյուններում ուսանողները ռումբեր էին պատրաստում, և թե ինչպես քաղաքապետն իրեն հանձնարարեց ձերբակալել այդ չարագործներին։ Իսկ ինչպես հետո պարզվեց, այնտեղ մի տասներկու հազար ռումբ կար։ Եթե բոլորը միասին պայթեին, ոչ միայն այդ շենքը, այլ Պետերբուրգի կեսն էլ չէր մնա...

Դրան հետևեց Լյոնկայի արտակարգ հերոսության մասին մի հափշտակիչ պատմություն, թե ինչպես ուսանողի հագուստով թափանցեց «դժոխային լաբորատորիան», ինչ-որ մեկին նշան արեց պատուհանից և մի վայրկյանում զինաթափ արեց ռմբագործներին։ Նույնիսկ մեկի թևքից բռնեց հենց այն պահին, երբ սա պատրաստվում էր մի խուրձ ռումբ պայթեցնել։

Գենկան ախ էր քաշում, զարհուրում, շրմփացնում էր աղդբերին ու անվերջ դիմում Կլոթիլդային, բացականչելով.

— Ա՜խ, տեր աստված, ախր սա ի՞նչ բան է։ Մարդ լսելուց էլ է զարզանդում։ Չէ, դու մենակ պատկերացրու, Կլոթիլդոչկա, ինչ սրիկաներ են, հը՞, էդ ուսանողները։ Ես որ դրանց էն գըլխից էլ չեմ հարգել։

Վերջ ի վերջո, լիովին զգացված, հմայված իր սիրեկանով, կախվեց նրա վզից ու սկսեց աղմուկով համբուրել։

— Լյոնեչկա, հոգի՛ս։ Լսելուց էլ է զարզանդս գալիս։ Էդ ո՞նց է, որ ոչինչից չես վախենում։

Լյոնկան ինքնագոհ ոլորեց ձախ բեղն ու անփութորեն նետեց.

— Ինչի՞ց վախենամ։ Մարդս մի անգամ է մեռնում։ Դրա համար էլ փող եմ ստանում։

Կլոթիլդային տընդհատ տանջում էր նման հոյակապ սիրեկան ունեցող ընկերուհու նկատմամբ խանդոտ մի նախանձ։ Նա աղոտ կերպով կասկածում էր, որ Լյոնկայի պատմածներում փչոց շատ կա, այնինչ ինքը հիմա այնքան արտակարգ մի բան ուներ ասելու, որպիսին ոչ մեկի հետ չէր պատահել, և որն իսկույն դժգունել կստիպեր Լյոնկայի քաջագործություններից ստացված տպավորությունը։ Նա մի քանի բոպե տատանվեց։ Ռիբնիկովի հանդեպ եղած նուրբ խղճահարության մի փոքրիկ

ձայն դեռևս զսպում էր նրան։ Բայց ռոմանտիկ արկածով փայլելու հիստերիկ ձգտումը գերակշռեց, և նա ասաց խուլ ու ցածրաձայն։

— Լյոնյա, գիտե՞ս ինչ էի ուզում ասել։ Էսօր մի տարօրինակ հյուր ունեմ։

— Ը՞մմ։ Կարծում ես, խարդա՞խ մարդ է,— ներողամտորեն հարցրեց Լյոնկան։

Գենկան վիրավորվեց.

— Ի-ի՞նչ։ Քո կարծիքով, խարդա՞խ է։ Է՛լ ինչ կասես։ Խմած սպա է, էլի։

— Չէ, մի ասա,— գործնական ծանրակշռությամբ ընդհատեց Լյոնկան,— լինում է, որ խարդախները սպայի շորեր են հագնում։ Է՛, Կլոթիլդա, ի՞նչ էիր ուզում ասել։

Այդ ժամանակ կինը մանրամասն Ռիբնիկովին վերաբերող ամեն բան պատմեց, հանդես բերելով բծախնդիր, զուտ կանացի դիտողականություն. թե ինչպես նրան գեներալ Կուրոկի էին ասում, նրա ճապոնական դեմքի մասին, նրա արտասովոր քնքշության և կրքոտության մասին, նրա զառանցանքի և վերջապես այն մասին, թե ինչպես նա ասաց «բանզայ» բառը։

— Լսիր, հո սուտ չե՞ս ասում,— արագ հարցրեց Լյոնկան, և նրա սև աչքերի մեջ սուր-սուր կայծեր բռնկվեցին։

— Ը՞հը, աստված վկա։ Տեղիցս չվերկենամ։ Արի ինքդ տես անցքից, ես փեղկը կբացեմ։ Ինչ ասեմ, կիսած խնձորի պես, ճապոնացի է որ կա։

Լյոնկան անշտապ վեր կացավ, լուրջ տեսքով հագավ սերթուկը և խնամքով շոշափեց ձախ ծոցագրպանը։

— Գնա՛նք,— ասաց նա վճռական։— Ո՞ւմ հետ է եկել։

Գիշերային այդ ամբողջ խմբից մնացել էին միայն Կարյուկովն ու Շտրալմանը։ Բայց Կարյուկովին չկարողացան արթնացնել, իսկ Շտրալմանը դեռևս կիսահարբած, ուռած կարմրած աչքերով, քթի տակ փնթփնթաց.

— Ի՞նչ սպա։ Հա, գրողը տանի դրան։ Մեզ միացավ Բուֆֆում, որտեղից հայտնվեց, մարդ չիմացավ։

Նա տեղնուտեղը սկսեց հագնվել, բարկացած փնչացնելով։ Լյոնկան ներողություն խնդրեց ու դուրս եկավ։ Նա արդեն հասցրել էր դռան ճեղքից տեսնել Ռիբնիկովի դեմքը, ու թեև ինչ-որ երկմտություններ ուներ, բայց լավ հայրենասեր էր, աչքի էր ընկնում հանդգնությամբ և զուրկ չէր երևակայությունից։ Նա

որոշեց գործել իր պատասխանատվությամբ։ Մեկ բոպե անց նա արդեն մուտքի սանդուղքի վրայից տագնապալի սուլոցներ էր տալիս։

7

Ռիբնիկովը հանկարծ արթնացավ. ասես տիրական մի ձայն հնչեց ներսում՝ վե՛ր կաց։ Մեկուկես ժամվա քունը կատարելապես թարմացրել էր նրան։ Ամենից առաջ կասկածով լի հայացքը հառեց դռանը. նրան թվաց, թե ինչ-որ մեկն այնտեղ ուշադիր իրեն է հետևում։ Հետո չորս կողմը նայեց։ Փեղկը կիսաբաց էր, դրա համար էլ սենյակում կարելի էր տեսնել յուրաքանչյուր մանրուք։ Կինը նստած էր մահճակալի դիմաց, սեղանի մոտ, մունջ ու գունատ, և իրեն էր նայում հսկայական, ջինջ աչքերով։

— Ի՞նչ է եղել,— հարցրեց Ռիբնիկովը տագնապած։— Լսի՛ր, այստեղ ի՞նչ է կատարվել։

Կինը չպատասխանեց։ Բայց նրա կզակը դողդողաց, և ատամները իրար զարկվեցին։

Կասկածամիտ ու դաժան մի փայլ առկայծեց սպայի աչքերում։ Նա ամբողջ մարմնով առաջ թեքվեց մահճակալի վրա և ականջը ուղղեց դռան կողմը։ Հավանաբար զգուշությանն անսովոր բազմաթիվ քայլեր միջանցքով մոտ եկան ու հանկարծ ընդհատվեցին դռան մոտ։

Ռիբնիկովը փափուկ, անաղմուկ շարժումով ցած ցատկեց մահճակալից և երկու անգամ պտտեց բանալին։ Եվ իսկույն դուռը թակեցին։ Կինը բղավոցով, բերանքսիվայր ընկավ սեղանին, դեմքը ծածկելով ձեռքերով։

Մեկ-երկու բոպեում շտաբս-կապիտանը հագնվեց։ Դուռը կրկին թակեցին։ Սպայի գլխարկն էր միայն այստեղ։ Թուրը և վերարկուն թողել էր ներքևում։ Նա գունատ էր, բայց միանգամայն հանգիստ, նույնիսկ ձեռքերը չէին դողում հագնվելիս, և բոլոր շարժումները ճշգրիտ էին, անշտապ ու ճարպիկ։ Կոճկելով վերջին կոճակը, մոտեցավ Կլոթիլդային և այնպիսի ահավոր ուժով սեղմեց նրա դաստակը, որ կնոջ դեմքը վայրկենապես կաս-կարմիր կտրեց գլուխը ներխուժած արյունից։

— Լսի՛ր,— ասաց նա կամաց, ցասկոտ շշունջով, ատամները փակ։— Եթե տեղիցդ շարժվես կամ բղավես, կսպանեմ...

Դուռը դարձյալ թակեցին։ Եվ մի խուլ ձայն ասաց.

— Պարոն, խնդրեմ, բարեհաճեք դուռը բանալ։

Շտաբս-կապիտանն այլևս չէր կաղում։ Արագ ու անաղմուկ մոտ վազեց պատուհանին, փափուկ, կատվի պես թռավ լուսամուտագոգին, դեն տարավ փեղկերը և միանգամից բացեց պատուհանը։ Ներքևում ճերմակին էր տալիս սալապատ բակը, ցանցառ խոտն էր երևում քարերի արանքում և նոսր ծառերի ճյուղերը։ Ոչ մի վայրկյան չտատանվեց։ Բայց հենց այն պահին, երբ կապիտանը, նստած լուսամուտագոգի երկաթյա կողին, ձախ ձեռքով դրան կոթնած ու մի ոտքը արդեն ցած կախած, պատրաստվում էր ամբողջ մարմնով սլոկվել տեղից, կինը խլացուցիչ գոռոցով նետվեց նրա կողմը և կառչեց ձախ ձեռքից։ Դուրս սլոկվելով, Ռիբնիկովն անհարմար մի շարժում արեց և հանկարծ թույլ, ասես զարմացած ճիչով, անվարժ, առանց հարմարվելու ընկավ ցած, քարերի վրա։

Համարյա միաժամանակ ֆարխուլ դուռը պոկվեց ու սենյակ ընկավ։ Առաջինը ներս վազեց Լյոնկան՝ հևասպառ, բերանն ու ատամները բաց, աչքերը կրակ կտրած։ Նրանից հետո դոփդոփելով ու ձախ ձեռքով թրերը բռնած սենյակ լցվեցին վիթխարահասակ ոստիկանները։ Տեսնելով բաց պատուհանն ու կնոջը, որը լուսամուտի փեղկը բռնած ծղրտում էր անընդմեջ, Լյոնկան իսկույն հասկացավ, թե ինչ էր կատարվել։ Նա, անշուշտ, համարձակ մարդ էր, դրա համար էլ առանց մտածելու, առանց մի խոսք ասելու, կարծես դա վաղորոք նրա գործողությունների ծրագրի մեջ էր մտնում, թափ առավ ու դուրս նետվեց լուսամուտից։

Նա ընկավ Ռիբնիկովից երկու քայլ հեռու, որն անշարժ պառկած էր կողքի վրա։ Չնայած ընկնելուց դժժում էր Լյոնկայի գլուխը, չնայած սարսափելի ցավին, որ զգում էր որովայնում ու կրունկների տակ, իրեն չկորցրեց և մի ակնթարթում ծանրածանր, ամբողջ մարմնով ընկավ շտաբս-կապիտանի վրա։

— Ա-ա՜։ Ջե՜ս փախչի,— խռխռոցով ասաց նա, կատաղի չարությամբ սեղմելով իր զոհին։

Շտաբս-կապիտանը չէր դիմադրում։ Նրա աչքերն այրվում էին անհաշտ ատելությամբ, բայց մահու չափ գունատ էր, և վարդագույն փրփուրը մանր պղպջակներով դուրս էր տվել շրթունքների արանքից։

— Մի սեղմեք ինձ,— ասաց նա շշնջալով,— ոտքս եմ կոտրել։

1905

ԽԼԱՀԱՎԻ ՈՐՍԸ

Ես չեմ կարող պատկերացնել, թե աշխարհում էլ ինչ զգացումներ կարող են համեմատվել մարդու զգացածի հետ խլահավի որսի ընթացքում։ Այնքա՜ն անսպասելի, գրգռիչ, խորհրդավոր, դժվարին ու հրաշալի բան կա, որ այդ տպավորությունները չեն մոռացվում մինչև մահ։

Արթնանում ես մարտյան խավար, անլուսին գիշերով և սկզբում ոչ մի կերպ գլխի չես ընկնում, թե որտեղ ես։

Պառկած ես հողե հատակին, շիկացած խանձողների մի մեծ կույտի մոտ, որոնց վրայով մերթընդմերթ թրթռալով անցնում են կրակի վերջին լեզվակները։ Գերանակապ պատերը և գերանակապ ցածլիկ առաստաղը մի մատնաչափից ավելի ծածկված են սև, ծոպքերի պես կախվված մրով։ Կես խորանարդ սաժենի՝ չափ մի տարածություն։ Դռան փոխարեն նեղ անցք է, որից ներս է նայում այդ մրոտած պատերից առավել խավար գիշերը։

Բայց խարույկի մյուս կողմը պառկած մարդու թունդ խռոցը իսկույն տեղն է բերում հիշողությունդ դեռ ինչպես հարկն է չարթնացած գիտակցությանդ մեջ։ Մենք գտնվում ենք մի հին, անտեր «ածխանոցում», Պոլեսյեի ճիշտ կենտրոնում, որևէ բնակավայրից ջարդուսուն վերստ հեռու, չհաշված անանցանելի թավուտների մեջ կորած, անտառապահների միայնակ տնակները։ Բոլոր կողմերից մեզ շրջապատում է համատարած դարավոր անտառը, մեծությամբ հավասար գերմանական մի ամբողջ իշխանության։

Հիշողության մեջ արթնանում է երեկվա ամբողջ օրը. վաղ, հապշտապ մեկնումը և անտառի նեղ, ծառերի արանքներով անսպասելի զիգզագներ տվող, ոլոր-մոլոր արահետը, որով կարողանում են գնալ միայն արդեն սովոր, փոքր-մոքր, բայց ժիր ու տաքարյուն պոլեսյան ձիուկները։ Ամբողջ օրը մերթ կտրում անցնում էինք փուխր, կեղտոտ ձյան թմբերի միջով, մերթ խրվում թանձր ցեխը, մերթ սայլի մեջ թափահարվում ու ցնցվում էինք ճանապարհը հատող ելուստաշատ կոճղարմատների վրա, մերթ ցած իջնում ավազոտ, արդեն չորացած լանջերին և հարայ-հրոցով քաշալերում հոգնած, քրտինքից սևացած ձիերին, մերթ անցնում վարարումից տեղահան կամուրջների մոտով, ոչ խոր, բայց լայն ու արագահոս, ցեխից դարչնագույն դարձած անտառային վտակների միջով... Վերջապես մի տնակի մոտ ճանապարհն իսպառ վերացավ, և ածխանոց հասանք ոտքով, արագահաս մթնշաղի հետ, հազիվ նկատելի կածաններով՝ շարացած, սոված, բոպեն մեկ ճամփից շեղվելով և մեկս մյուսին չվստահելով...

Անշարժ, վրաս հառված հայացքը ստիպում է ինձ շրջվել։ Ուղեկիցս արդեն քնած չէ։ Նա հանգիստ ինձ է նայում քնատ, ոչինչ չարտահայտող աչքերով և փութով փստփստացնում հանկած կարճիկ ծխամորճը։ Տեսնելով, որ արդեն արթուն եմ, ծխամորճը լեզվով տանում է բերանի մի անկյունն ու խուլ ձայնով ասում.

— Էհե՜... Քնած չե՞ք, պարոն։ Իսկ ես ամբողջ գիշերը քնած չէի։ Անընդհատ ձեզ էի հսկում։

— Դրա համա՞ր էիր այդպես խռռացնում։

— Հա դե... Ես մի ականջով քնում, մյուսով ամեն բան լսում եմ... Ես խորամանկ մարդ եմ... Լավ, պարոն, մի ասեք տեսնենք, հիմա ժամը քանի՞սը կլինի։

Նայում եմ ժամացույցին։

— Մեկին քառորդ պակաս... Գուցե պատրաստվե՞նք։

Տրոֆիմը ծուլորեն նայում է հանգչող ածուխներին, մտազբաղ քորում է ծոծրակը, գլխարկը քաշելով ուղիղ աչքերին, հետո քորում գոտկատեղը։

— Բա ինչ,— հանկարծ բացականչում է անսպասելի եռանդով։— Պատրաստվենք, պատրաստվենք։ Ավելի լավ է մեզ համար կամաց-կամաց գնանք, չվռազենք...

Պատրաստվելու համար երկար ժամանակ պետք չէ։ Մեջքիս վրա ամուր ձգում եմ փամփշտակալի գոտին ու դրա տակից մի քիչ դուրս քաշում գործած վերնաշապկիս փեշերը, որպեսզի ձեռքերս ավելի ազատ շարժվեն, ամբողջ մարմնով մի լավ թափահարվում եմ՝ համոզվելու համար, որ վրաս ոչ մի բան չի զնգզնգում կամ թափահարվում, ոտքերիս եմ քաշում կաշվե բախիլները[1] ու պինդ կապում ծնկից վեր, իսկ այդ

---

[1] Երկարության հին չափ, հավասար է 2,134 մետրի։

[1] Կաշվե հաստ գուլպայի տեսակ։ Բախիլները պատրաստում են կաշվի

ընթացքում Տրոֆիմը վերջին խրատներն է տալիս ինձ, ու թեև առնվազն մի տասն անգամ լսել եմ, մեկ անգամ էլ եմ լսում ուշադրությամբ և նոր հետաքրքրությամբ։

Ջեչոտ Տրոֆիմը պետական անտառապահ է, ում բարեհաճ ուշադրությանն է ինձ հանձնարարել անտառապետը՝ իմ բարեկամը, իսկ նրա անմիջական պետը։ Տրոֆիմն անփույթ է, կոպիտ, մի քիչ գլուխգովան, ծույլ և թաքուն վաճառում է պետական որսը։ Սրանք նրա բացասական հատկանիշներն են։ Բայց փոխարենը համարձակ է, անտառը գիտե ցանկացած գաղանից ոչ պակաս, հրաշալի կրակող է և անխոնջ որսորդ։ Իմ նկատմամբ հովանավորողի վերաբերմունք ունի։

— Սկզբից խլահավը վախվխելով է երգում— խրատական տոնով ասում է Տրոֆիմը։— Ջո՛կ, ու լռեց։ Իր համար ճյուղին նստած, չորս կողմն ականջ է դնում։ Հետո նորից, չո՛կ, չո՛կ, ու էլի՝ սուս։ Այ էդտեղ, պարոն, աստված չանի, թե որ շարժվեք կամ մի ճյուղ կոտրեք, հենց էն կլսեք, որ թևերը թափ տվեց ու անտառով մեկ չքվեց։ Որովհետև՝ չնայած անունը խլահավ են դրել, բայց աշխարհում նրանից ավելի զգույշ հավք չկա... Հետո հանկարծ հո չի՞ ֆշշացնի։ Այ էստեղ էլ պիտի ինչքան ուժ ունեք, առաջ պոկվեք։ Թափով... Մի հինգ լոք արեցիք՝ քարացեք մնացեք։ Ու ոչ մի ձեն։ Ոչ թե հինգ, այլ չորս, գուցե սկզբից՝ երեք։ Ու կանգնի... նորից սպասի երգին։ Էստեղ նա շուտով էլի կսկսի՝ չոկ-չոկ... չոկ-չոկ... չոկ-չոկ... ու նորից կֆշշացնի... Դուք էլի առաջ պոկվեք ու նորից կանգնեք, երգին սպասեք։ Մեկ-մեկ խլահավեր են լինում, էնպես են ոգևորվում, որ առանց շունչը ետ բերելու մի երեսուն երգ երգում են, իսկ ձեր գործը մենակ առաջ վազելն է, ուրիշ ոչինչ։ Իսկ հետո մեկ էլ տեսար ձենը կտրեց ու էլ ոչ մի բան, ոնց որ դանակով՝ քը՛րթ։ Կես ժամի չափ սրիկան ականջ կդնի։ Է, էստեղ էլ բան չես կարա անի, ոնց որ կանգնել ես, էդպես էլ մնա։ Սպասիր։ Կպատահի, որ մինչև գոտկատեղդ կխրվես ճահճուտի մեջ, կսրթսրթաս, բայց դիմացի՞ր։ Ոտներդ կթմբեն, մեջքդ կտնքա, ձեռներդ կցավեն, բայց մեկ է՝ սպասիր.. Բայց հենց որ սկսի նորից երգել, պարոն, մի երգ բաց կթողնեք։ Դրանց մեջ էն տեսակ

ամբողջական կտորներից, որի համար էլ բոլորովին ջուր չեն ներծծում (ծան. հեղ.)։

խարդախներն են լինում, որ որսկանին հիմարի տեղ են դրնում։ Դրանց խոկող են ասում։ Ջոկ-չոկ կանի, չոկ-չոկ կանի... տեղիցդ կպոկվես, իսկ նա ձենը կկտրի։ Մի քիչ կըսպասի ու էլի կսկսի խոկալը՝ խոռ... խոռ... Մեկելներին իմաց կտա, թե զգույշ կացեք, որսկանը գալիս է։ Ու բան է, թե էդ տեսակի մի հատ խոկող երևաց, ուրեմս, կտղունքատեղը լրիվ մի քոռ կոպեկ էլ չարժի։ Էլ բան ու գործ չունի չորը տարածը. նստի ճյուղին ու մտիկ տա, թե մարդ-մուրդ չի՞ գալիս։

Մենք բարձրանում ենք հողե երեք աստիճաններով, կողքանց դուրս գալիս ածխանոցի նեղ անցքից և իսկույն մի այնպիսի խորունկ խավարի մեջ ենք ընկնում, ոչ թվում է, թե մեզ հանկարծակի ընկղմեցին մի վիթխարի թանաքամանի մեջ։ Կրկին կանգ եմ առնում անվճռականությամբ, համարյա սարսափով պարուրված։ Ինքս ինձ խաբելու համար դիտմամբ մի քանի վայրկյան փակում եմ աչքերս, ապա արագ բաց անում։ Ո՞չ, գիշերն առաջվա պես սև է ու սարսափելիության աստիճան անթափանց։ Գլուխս վեր եմ բառձրացնում։ Բայց երկնքում ոչ մի աստղ չկա. և հանկարծ առեղծվածային, տագնապալի միտք է անցնում գլխովս. մի՞թե ամենայն կենդանի բան մահից հետո դատապարտվում է այսպիսի անհաղթահարելի, հավերժական, զարհուրելի խավարի։

— Հը՞, ինչ է եղել, պարոնս։ Եկեք ինձ հետ,— իմ առջևում լսում եմ Ջեչոտի խուլ ձայնը։

Ու գնում եմ, ականջս՝ նրա ոտնաձայներին, վախվխելով առաջ պարզած ձեռքերս ու ոտքերս զգուշորեն գետինը շոշափելով։ Ոչ մի վայրկյան ինձ չի լքում այն սպասումը, որ ուր որ է դեմքս խփելու եմ մի չոր ճյուղի, և այդ սպասումից տարօրինակ, բութ ցավ եմ զգում աչքերիս մեջ, ասես ինչ-որ մեկը ներսից սեղմում է դրանք։

Գնում ենք հենց այնպես, ճանապարհ-բան չկա։ Մինչև ծնկներս թաղվում ենք ջիլայի պես ջրիկ, հատիկ-հատիկ սառը ձյան մեջ, որի տակ ամեն քայլափոխի աղմուկով ճլզմփում է ջուրը։ Մեկ գնում ենք համատարած ցեխի միջով, դժվարությամբ դուրս քաշելով ոտքներս, մեկ ելնում չոր ու պինդ բլրակներ, մեկ քայլում մամոտ գուղձերի վրայով, որոնք փափուկ ու սահուն ցած են գլորվում՝ ոտքով դիպչելիս։ Բայց որտե՞ղ ենք մենք։ Ո՞ւր ենք գնում՝ ես չգիտեմ։ Առաջին

իսկ քայլերից դադարեցի կողմնորոշվել, և հիմա մեր երթն ինձ պատկերվում է որպես անհեթեթ, ծանր ու մղձավանջի պես երևակայական մի բան։ Երբեմն ինչ-որ ծառերի ճյուղեր մտրակում են դեմքս ու անտեսանելի երկար ձեռքերի նման կառչում ուսերիցս։ Երբեմն ուղիղ իմ դիմաց, դեմքիցս մեկ արշին[1] հեռու, հանկարծ բսնում է ծառի սև ու հաստ բույնը։ Կանգ եմ առնում, վախեցած ետ ընկնում ու ձեռքերս առաջ պարզում... բայց մատներս դարձյալ հանդիպում են աչքի համար անթափանց խավարով տոգորված միևնույն օդին։

— Եկեք, եկեք, պարոնս,— ինձ քաջալերում է Զեչոտը։— Քիչ մնաց... մեկուկես վերստ... Կարելի էր... Օ՛յ, գրողը տանի...

Ես լսում եմ, թե ինչպես նա, չոր ճյուղերը ջարդոտելով դլորվում է ցած, և թե ինչպես հետո նրա մարմինն ամբողջ թափով, շրմփում է ջրի մեջ։ Ինձ պաշարում է վայրի, եսասիրական երկյուղ և մի տեսակ շփոթված, անօգնական, տրտմալի չարացածություն։ Ինձ թվում է, որ եթե թեկուզ մի քայլ գցեմ այդ ահռելի մթության մեջ, ինքս նույնպես կընկնեմ խորը, ցուրտ և կեղտոտ ճահճուտը։

— Փոսն ընկա,— ներքևներից ասում է Զեչոտը, ու ես լսում եմ, թե ինչպես ջրից դուրս գալով փնչացնում է ու ոտքերով դոփդոփում ցեխը։— Ձախի վրա եկեք, պարոն, ձախի վրա... Եկեք իմ կողմը... այ էդպես ... Ոնց էլ էդպես ճիշտ նշան բռնեցի։ Կարգին էլ գիտեմ, հը՞, ոնց որ թե։ Հենց էս նույն փոսը նախանցյալ տարի մի իշայծյամ էր ընկել գարնանը։ Էդպես էլ մնաց, սատկեց, դուրս գալ չկարեցավ...

Նրա հանգստությունը փոխանցվում է ինձ, ու կրկին խարխափում եմ, կույրի պես ձեռքերով օդը շոշափելով, ականջս՝ անտառապահի ոտնաձայնին։

— Տրոֆիմ, շատ կա՞ դեռ։

— Շա՞տ։ Մի վերստի չափ մնացած կլինի։ Չէ, մի վերստ չի լինի... Քիչ... մի երեք քառորդի չափ։

Անհամբերությունս հաղթահարելու համար սկսում եմ քայլերս հաշվել։ «Թեկուզ հինգ հարյուր քայլ էլ կհաշվեմ,— մտածում եմ ես,— արդեն շատ անշան գան կմնա»։ Երկու

1 Երկարության հին ռուսական չափ, հավասար է 0,711 մ։

հարյուրից ավելի եմ հաշվում, երբ հանկարծ դեմ եմ առնում կանգ առած Զեչոտին։

— Ինչո՞ւ կանգնեցիր, Տրոֆիմ։

— Էստեղ զգույշ է պետք, պարոն։ Մի գետակ պիտի անցնենք։

Լսում եմ, ինչպես արագահոս ջուրը քլթքլթում ու ճողփում է Տրոֆիմի սապոգների շուրջը, և տեղնուտեղը զգում եմ, թե ինչպես ինքս էլ եմ աստիճանաբար մտնում ջրի մեջ, որն ուժգնորեն ու մոլեգնած զարնվում է ոտքերիս։ Անտառային հորդացած գետակը խոր չէ, բայց այնքան թափով է ցած սլանում շեղ սարալանջով, որ ես ստիպված եմ ոտքերս քարշ տալ գետակի հատակով, հոսանքից ցած տապալվելու երկյուղից դրդված։ Մեկ-մեկ առավել խոր տեղեր եմ ընկնում և ամեն անգամ, հանկարծակի ընկղմվելով ջրի մեջ, զգում եմ, թե ինչպես վախից շունչս ընդհատվում է արագ ու կարճ հառաչով։ Մի քիչ զարհուրելի է, որովհետև մթան մեջ ջուրը չեմ տեսնում, բայց բոլոր կողմերից, հեռուներից լսում եմ ջրի հապշտապ քչփչոցը, խորհրդավոր ծփանքն ու ահարկու քրթմնջյունը...

Ի վերջո, դուրս ենք ելնում կարծր ավազով պատած ափը։ Եվ միայն հիմա եմ նկատում, որ գիշերը մի քիչ լուսացել է։ Նկատում եմ, որովհետև աղոտ կերպով տեսնում եմ առջևից քայլող Տրոֆիմի մեջքը և սոճիների տարտամ ուրվագծերը։ Առանց կանգ առնելու, Տրոֆիմը ետ է շրջում գլուխն ու շշնջում.

— Դե, պարոն, կամաց եկեք, ձեն-ձուն չանեք։ Հիմա կըհասնենք կտղուցատեղ։ Դեռ իրիկվանից «նա» տեղում թառել, հիմա էլ զարթնել ու ականջ է դրել...

— Իսկ նա շուտո՞վ կսկսի,— հարցնում եմ նույնպես շըշունջով։

— Սս՜ս... կամա՜ց... Սկզբում կռունկները կսկսեն։

Այժմ մենք դանդաղ ենք առաջանում, քայլ առ քայլ։ Ոտքերիս տակ անտառային նեղլիկ կածան է, սառցակալած ու սայթաքուն։ Տրոֆիմը բոլորովին անձայն է գնում իր թեթև, քրծենու ոտնամաններով, բայց ես մեկ-մեկ ոտքս դնում եմ ինչ-որ ճյուղերի ու ոստերի վրա, ու ինձ թվում է, թե դրանց ճռճռոցը խլացուցիչ կերպով տարածվում է անտառով մեկ։

Տրոֆիմը կանգ է առնում և, առանց շրջվելու, ձեռքով ինձ իր մոտ է կանչում։ Մոտենում եմ։ Թեքվում է ականջիս ու

շշնջում այնպես կամացուկ, որ դժվարությամբ եմ զանազանում բառերը.

— Էստեղ կանգնենք։ Իրար չգաք, պարոն։

Գիշերն ավելի դալկացավ։ Գետնից թանձր մառախուղ բարձրացավ։ Ես զգում եմ նրա թաց հպումն իմ դեմքին, առնում նրա խոնավ հոտը։ Նրա գորշ-սպիտակ ֆոնի վրա մերձակա սոճիները միապաղաղ, ճապաղ ու տարտամ գծագրվում են իրենց ուղիղ, մերկ ընթերով։ Այս խորունկ լռությամբ, այս սառն ու թաց մառախուղով պարուրված նրանց անշարժության մեջ խիստ, գիտակցորեն տխրագին ու հնազանդ ինչ-որ բան է զգացվում։

Ես չգիտեմ, որքան ժամանակ անցավ. գուցե հինգ րոպե, գուցե և կես ժամ։ Հանկարծ ականջս այնպիսի տարօրինակ հնչյուններ ծակեցին, որ ես ակամա ցնցվեցի անսպասելիությունից։ Մի տեսակ բարձր, արտասովոր հնչեղ ու ներդաշնակ հառաչներ, որ տասնյակ-տասնյակ ձայներ էին արձակում։ Ոչ մի կերպ չկարողացա կռահել, թե որ կողմից են գալիս. աջի՞ց, ձախի՞ց, առջևի՞ց, թե՞ ետևից։ Ձայները շտապում էին, արձագանքում միմյանց, միահյուսվում ու կրկին բաժանվում, ստեղծելով յուրօրինակ չափ ու ինքնատիպ մեղեդի, և արթնացված անտառը արձագանքում է դրան զրնգուն ու զուլալ անդրադարձով։

— Կռունկնե՞րն են,— հազիվ լսելի ասաց Տրոֆիմը։

— Ուու-ուլի՜, ուուլու-ուլի՜, ուուլու-ուլի՜— անտառով մեկ հառաչում էր անտեսանելի երգչախումբը ու հենց լռում էր, անտառի մյուս ծայրերից ի պատասխան հնչում էին արթնացած կռունկների մեկ ուրիշ երամի ներդաշնակ հառաչները, ապա ձայն էր տալիս երրորդ երամը, նրան հետևում էր չորրորդը... Այս վաղորդյան փոխկանչն ամբողջ անտառի համար ազդանշան էր ծառայում։ Նապաստակն սկսեց ճչալ իր դողդոջ, ռնգային ու կերկեր սոպրանոյով, մեր մոտերքում ժիր ու հատու չուֆ-չուֆ արեց ցախաքլորը, բարձր ծառի կատարին քրքջաց բուն... Ու կրկին ամեն բան լռեց, ընկղմվեց նախկին նրբազգաց նիրհի մեջ, ու կրկին լռեց ու անշարժ կանգնել, հազիվ շնչելով, ժամանակի հաշիվը կորցրած, ականջ ենք դրել անտառի գաղտնիքներին։

Հանկարծ Տրոֆիմը ցնցվեց, վիզը ձգեց, ամբողջ իրանով առաջ մղվեց ու այդպես էլ անշարժացավ լարված, սպասողական դիրքով։ Հավանորեն, նրա սուր լսողությունը որսացել էր ինչ-որ հեռավոր, թույլ հնչյուններ, բայց ես որքան էլ լարեցի լսողությունս, որքան էլ լարեցի ուշադրությունս, ոչինչ չկարողացա զանազանել, բացի ականջներիս մեջ հնչող խուլ և անդադար խշշոցից։

— Ծրգում է,— շշնջաց Տրոֆիմը։— Լսո՞ւմ եք։

— Ոչ։

— Բան չկա, ետևիցս եկեք։ Հենց որ պոկվեցի, ուրեմն դուք էլ։ Ճիշտ ու ճիշտ ինձ նման... Հենց որ լավ-լավ լսեք, կասեք... էդ ժամանակ ես հետ կմնամ... Օ՜, լսեցի՞ք։ Էլի երգեց։

Բայց առաջվա պես ոչինչ չէի լսում։ Հանկարծ Տրոֆիմը, ասես զորեղ զսպանակից շպրտված, պոկվեց տեղից, խոր ձյան մեջ երեք մեծ թռիչք գործեց ու քարացածի պես կանգ առավ։ Չհասցրեցի հետևել նրան ու մի ավել քայլ արեցի։

Տրոֆիմն իմ կողմը դարձրեց այլայլված, շարացած ու հուզված դեմքն ու լուռ մատ թափ տվեց վրաս։

Մեկ րոպե անց զսպանակը վերստին առաջ շպրտեց նրան։ Հիմա արդեն հնարքը գտել էի, և ոտքերս գցելով նույն այն տեղերը, որ վայրկյան առաջ Տրոֆիմի ոտքերն էին թողել, հասցրեցին կանգ առնել նրա հետ։ Տրոֆիմը, հավանություն տալով, գլխով արեց։

Նման եղանակով շուրջ քսան անգամ վազել-կանգնել էինք, երբ ես ի վերջո լսեցի երգող խլահավին։ Ջոր, ընդհատ-ընդհատ, մետաղյա երանգով հնչյուններ էին, նման եղունգով թիթեղյա տուփին հարվածելու ձայներին։ Հնչյունները միմյանց էին հաջորդում զույգ-զույգ, սկզբում բավական սակավ, մի քանի վայրկյան տևող ընդմիջումներով, բայց հետո կրկնվում էին ավելի ու ավելի հաճախ, մինչև որ վերածվում էին մանրիկ, միաձույլ կափկափյունի։ Այդ պահին Տրոֆիմի հետ գլխապատառ նետվում էինք առաջ, ոտքերս բարձր-բարձր գցելով ու հալած ձյունը շորս կողմ ցրիվ տալով։

— Տրոֆիմ,— շշնջացի ես, ցնցելով անտառապահի թևքը,— հիմա ես էլ...

Բայց նա կոպտությամբ թափ տվեց ձեռքս ու կշտամբանքով գլուխն օրորեց։ Եվ միայն այն ժամանակ, երբ խլահավը դարձյալ արագացրեց ու անցավ կափկափյունի, Տրոֆիմը կտրուկ շրջվեց դեպի ինձ ու բղավեց.

— Մենակ երգի տակ կարելի է խոսել։ Սպասե՛ք։

Սպասելով ևս մի կափկափյունի, ավելացրեց նույնքան բարձրաձայն ու շտապ.

— Լա՛վ հիշեք. նշան բռնեք երգի տակ, հրացանդ լցրեք երգի տակ, կրակեք երգի տակ...

Վերջապես երրորդ կափկափյունի ժամանակ նա ավելի հանգիստ ասաց.

— Թե որ հազալ ուզենաք, սպասեք երգի։ Դե... գնացեք։

Խլահավը տեղնուտեղը երգեց չորրորդ անգամ։ Ես առաջ սլացա։ Միևնույն ժամանակ վազեց նաև Տրոֆիմը, բայց ոչ թե իմ ետևից, այլ հակառակ կողմը։ Այսպիսով, հինգ երգի ընթացքում կորցրեցինք միմյանց, ու ես մենակ մնացի։

Սիրտս այնպես ուժեղ էր բաբախում, ոտքերս այնպես էին դողում, որ վճռեցի մի քանի երգ բաց թողնել, մինչև ուշքի գամ։ Այդ ժամանակ միանգամայն հստակ լսեցի նաև երկրորդ գեղգեղանքը։ Մաքուր կափկափյունը արագ ու աննկատելիորեն անցնում էր կոշտ ու չոր, անընդմեջ ձայնի, ավելի շուտ նման կրճտոցի, քան ֆշշոցի, և հիշեցնում մետաղյա երկու մակերեվույթները միմյանց շփելու ձայնը։ Այդ կրճտոցը երկար չի տևում՝ մի չորս վայրկյան, բայց այդ վայրկյանների ընթացքում խլահավը բացարձակապես ոչինչ չի տեսնում ու չի լսում, որովհետև ամուր փակում է աչքերը, իսկ նրա ականջները հերմետիկ կերպով գոցվում են ծնոտոսկրի ելուններով։ Այդ վայրկյաններին կարելի է թնդանոթ արձակել թռչնի գլխից քառորդ արշինի վրա, նա ոչ մի ուշադրություն չի դարձնի կրակոցին և, միևնույն է, կավարտի իր գեղգեղանքը։ Շատ ժամանակ անց ես իմացա, որ խլահավն այդ բոլոր ձայները հանում է իր կեռ ու սմուր կտուցով։ Խլահավը միակ թռչունն է, որը լեզու չունի, բայց դրա փոխարեն նրա բերանի մեծ խոռոչն իրենից հիանալի ռեզոնատոր է ներկայացնում։ Սկսելով երգը, նա վերին կտուցով հարվածում է ներքևինին։ Հարվածում է ու ականջ դնում։ Ապա դարձյալ հարվածում է ու դարձյալ ականջ դնում, և ավելի ու ավելի հաճախ է հարվածում, մինչև որ անցնում է կափկափյունի։ Այդ ժամանակ արդեն խլահավն անզոր է կանգ առնել։ Սիրո վայրի զմայլանքով բռնված, ծնոտները քսում է միմյանց, մոլեգնությամբ կրճտացնում է ու այդ պահերին մոռանում և՛ վտանգը, և՛ բազմաթիվ թշնամիներին, և՛ խելացի ողջամտությունը, և՛ բացարձակապես ամեն ինչ աշխարհի երեսին։

Այն ժամանակ, երբ ես հանգստանում էի, խլահավը հան-

կարծ դադարեց երգել ու մի տասը րոպեի չափ լուռ էր։ Ապա նա մի անգամ ճրկացրեց, բայց կամացուկ, զգուշությամբ, կարծես թե չուզենալով, և կրկին մի քանի րոպե լռեց, հետո երկրորդ անգամ ճրկացրեց, արդեն ավելի ուժգին ու բարձր, քիչ անց երկու անգամ էլ ճրկացրեց, ևս երկու անգամ, արագացրեց, իրար անցավ և անուժ՝ դադար տալու՝ անցավ երկրորդ գեղգեղանքին։ Համաձայն Զեչոտի խրատների, առաջին երգը բաց թողեցի։ Խլահավը, տեղնուտեղը, համարյա առանց դադարի, երկրորդ երգը երգեց, ու ես առաջ վազեցի։

Հարթ զառիվայրը, որով մինչ այդ վազում էի, փոխարինվեց ցածրադիր ջրառատ ճահճով, որի վրա սոճու նոր անտառ էր աճում։ Հազվադեպ հանդիպում էին ցանցառ լաստենիներ, կաղամախիներ և գիհու գետնատարած թփեր։ Գիշերով ճահիճը պատած բարակ ու փխրուն սառույցի տակից տեղ-տեղ ցցված էին փափուկ մամուռով և հապալասով ծածկված գուղձեր։ Ամեն անգամ ինձ չէր հաջողվում ոտքս այդ գուղձերի վրա դնել, ու ես մինչև գոտկատեղս խրվում էի տիղմի մեջ։ Բախիլներս ջրով լցվել ու չափազանց ծանրացել էին։ Մի անգամ, ոտքերս ճահճից դուրս քաշելով, հավասարակշռությունս չկարողացա պահել և, մարմնով կոտրելով բարակ սառույցը, բերանքսիվայր ընկա ուղղակի կպչուն ու սառը տիղմի մեջ։ Սակայն քաջություն ունեցա նման անհարմար դիրքով պառկած մնալ, խլահավին խուճապ չպատճառելու համար։ Պառկած լսում էի, թե ինչպես են իմ վրա գլթգլթում ճահճից ելնող պղպջակները, զգում էի, թե ինչպես գարշահոտ խոնավությունը դանդաղորեն ներծծվում է բաճկոնիս լանջերով ու թևքով... Բարեբախտաբար, խլահավը հաճերությունս փորձեց ոչ շատ երկար։ Երբ սկսեց երգել, արագ վեր թռա ու կանգնեցի մի գուղձի վրա։ Հաջորդ երգի ժամանակ առաջ վազեցի։

Յուրաքանչյուր կարճ վազքից հետո երգն ավելի ու ավելի հստակ էր դառնում։ Հիմա ոչ միայն երկու գեղգեղանքն էի լավ լսում, այլ նույնիսկ դրանց միջև զանազանում էի մի տեսակ նոր, տարօրինակ հնչյուն, ինչ-որ խուլ ու արագ-արագ փնչփնչոց։ Վերջապես կանգ առա։ Լսեցի, որ խլահավը երգում է շատ մոտ մի տեղ, ճիշտ իմ գլխավերևը, համարյա իմ կանգնած գուղձը ուղիղ շրջանով շրջապատած վեց թե յոթ սոճիներից մեկնումեկի վրա։ Երգի տակ գլուխս վեր բարձրաց-

բեցի ու սկսեցի լարված ուշադրությամբ նայել սոճիների խիտ կատարներին։ Բայց կամ գիշերն էր դեռևս բավական խավար, կամ աչքս էր ոչ այնքան սուր՝ ոչինչ չկարողացա զանազանել միմյանց խառնված ճյուղերի այդ սև զանգվածների մեջ։

Իսկ խլահավը անընդհատ երգում ու երգում էր, մեկը մյուսի վրա։ Նա այնպես էր բորբոքվել, որ վերջնականապես մոռացել էր ամենայն զգուշություն, այլևս չէր ճրկացնում, այլ սկսում էր ուղղակի կափկափյունից, ու հազիվ ավարտելով մի երգը, տեղնուտեղը անցնում էր հաջորդին։ Կյանքումս երբեք, ոչ մինչ այդ, ոչ հետագայում, առավել տարօրինակ, հանելուկային ու հուզիչ ոչինչ չեմ լսել, քան այդ մետաղյա, կոշտ հնչյունները։ Դրանց մեջ զգացվում էր անդրշիրհեղեղյան, վաղուց անհետացած դարաշրջանների պատկանող ինչ-որ մի բան, երբ հրեշավոր արտաքինով թռչուններն ու գազանները սարսափազդու ձայներով թնդացնում էին նախնադարյան խորհրդավոր անտառները...

Ինձ թվաց, որ մերձակա ծառի ճյուղերի մեջ մի սև բան շարժվեց։ Այդ «մի բանը» կարող էր և՛ ոստ լինել, և՛ թռչուն, բայց երևակայությունս ինձ հավատացնում էր, որ դա խլահավն է։ Սպասելով երգին, դողդողացող ձեռքերով հրահանը բարձրացրեցի ու նշան բռնեցի... Ոտքերս դողում էին հուզմունքից, սիրտս կրծքիս տակ թպրտում էր այնպես, որ թվում էր, թե զարկերը տարածվում են անտառով մեկ։

Խլահավը կրկին երգեց։ Ձգանը քաշեցի։ Իմ կրակոցից հետո ինչպե՞ս դղրդաց, ինչպե՞ս թնդաց արթնացած անտառը... Նրա վիթխարի ողջ տարածքով սփռվեց արձագանքը, ծառերի ոներին փշրվելով-դառնալով դանդաղորեն մարող հաղարավոր անդրադարձումներ, ու դեռ երկար-երկար խուլ կերպով բվվում ու շառաչում էր հեռուներում, մի որևէ բացատում... Ծառից անձրևի պես թափվեցին կրակոցից պոկված փշե տերևները։ Հավանորեն, դրանք ընկան նաև խլահավի վրա, որովհետև սա մի քանի վայրկյան ընդհատեց երգը, բայց հետո, ասես զայրացած հանկարծակի խանգարումից, սկսեց մի նոր մոլուցքով։

Իմ կրակոցից անմիջապես հետո իմ ետևում, շատ հեռվում, լսեցի Տրոֆիմի վեցգծանի միափող հրացանի բնորոշ, երկար, թնդանոթի պես խուլ կրակոցը։ «Նա որ հաստատ

վրիպած չի լինի»,— մտածեցի ես ու զգացի, որ սրտիս մեջ որսորդական նախանձը շարժվեց։

Լուսաբացը մոտենում էր։ Օդն ավելի ցրտեց ու խոնավացավ։ Կրկին կանչեցին կռունկները և կրկին նրանց արձագանքեցին անտառի բնակիչները. զիլ ճռճռաց փայտփորիկը, մելամաղձոտ տնքաց տատրակը, ինչ-որ տեղից լսվեց ցախաքլորի երկչոտ ու քնքուշ բլբլոցը, թփուտների մեջ մանրիկ ծլվլոցով իրար եկան ճնճղուկները։

Իսկ ես կանգնել մնացել էի, չհամարձակվելով երկրորդ անգամ կրակել, և արդեն ձանձրույթ ու հոգնածություն էր պաշարել ինձ։ Հանկարծ Տրոֆիմի կողմից երկրորդ կրակոցը լսվեց։ Մի բան շարժվեց իմ գլխավերևում։ Աչքերս վեր բարձրացրեցի ու համարյա նույն տեղում, դեպի ուր կրակել էի, լիակատար հստակությամբ տեսա խլահավին։

Ինձնից մինչև թռչունը ուղիղ գծով տասը-տասնհինգ քայլից ավելի չէր լինի, բայց ինձ թվաց, թե տնական աղավնու մեծությամբ մի բան է դա։ Երգելիս նա մերթ առաջ էր պարզում վիզը, մեկ ետ քաշում, ճիշտ ու ճիշտ այնպես, ինչպես ճղլզացնող հնդուհավը, իսկ երկրորդ գեղգեղանքին անցնելիս ամբողջովին փռվում էր ճյուղի վրա, ցած իջեցնում թևերն ու աղմուկով, հովհարաձև բաց անում պոչը (փնչփնչոցի նմանվող այդ աղմուկն էլ հենց լսել էի քիչ առաջ, առանց հասկանալու, թե ինչ է դա)։ Նրա բոլոր շարժումների մեջ մի տեսակ փքուն, խորապես գոռոզ ու ծիծաղաշարժ մի բան կար։

Այս անգամ չվրիպեցի։ Խլահավը քարի պես ցած ընկավ, խուլ ու պինդ շրմփալով գետնին։ Վազեցի դեպի թռչունը։ Նա կենդանի էր, ջղաձգվում ու իրեն գետնով էր տալիս, կատաղորեն թափահարելով զորեղ թևերը։ Սակայն նրա չարչարանքը երկար չտևեց։ Մեջքի վրա ընկավ փոքրիկ ջրափոսն ու այլևս չկարողացավ վեր բարձրանալ։ Մի քանի անգամ նրա վիզը արագ-արագ տնկվեց ջրի միջից ու ցած ընկավ, ապա ոտքերով մանրիկ, արագ դող անցավ, ու ամեն բան վերջացավ։

Բարձրացրեցի նրան։ Մի տասնհինգ ֆունտ քաշ ուներ, իսկ մեծությամբ հավասար էր միջին չափի հնդուհավի։ Վիզն ու փորը՝ սև, մեջքը՝ բաց դարչնագույն, գորշ պուտերով, հոնքերը՝ կարմիր, թավշյա, թաթերը՝ մոխրագույն փե-

տուրներով, իսկ ճանկերը՝ ոսկրյա երիզներով ծածկված, աչքը կլոր էր, դարչնագույն, կլոր ու խոշոր, սև բիբերով։

Շուտով լսեցի ինձ կանչող Տրոֆիմի ձայնը, և մենք հանդիպեցինք մեր նախկին կացանի վրա։ Մեջքից կախ էր արած երկու խլահավ, որոնց միմյանց էր կապել կտուցների միջից թել անցկացնելով։

— Խորամանկություն արեցի,— ասում էր նա պարծենալով։— Հենց որ մոտեցա իմ աքլորիս, տեսնեմ, մեկ ուրիշն էլ եկավ, էնքան էլ մո՜տ, եղած-չեղածը մի երեսուն քայլ... ու սկսեցին երգել հա երգել։ Է՛, մտածեցի, թե որ իմիս խփեմ, մյուսը կլսի ու կթռչի կգնա։ Ինչ անեմ, որ լավ լինի։ Նշան բռնեցի իմիս ու սպասեցի մինչև էն մյուսը երգի։ Հենց սա սկսեց, տեղնուտեղը՝ թրա՜խկ, ու պատրաստ է։ Հետո էլ մյուսին՝ թրա՜խկ, սա էլ է պատրաստ։ Մերն էդպես է, պարոն...

Ապա ծանր ու թեթև արեց իմ խլահավն ու գովեց.

— Լավ խորոզ է... կարգին խորոզ է... է, որդ շնորհավոր, պարոն։

Երբ ետ էինք դառնում, անտառն ամբողջովին արթնացել, կենդանացել էր և ծայրեծայր լցվել թռչունների զվարթ ծլվլոցով։ Գարնան, հալչող ձյան և անցյալ տարվա փտած սաղարթի հոտ էր գալիս։ Կապույտ երկինքը ջինջ էր, ցուրտ ու բերկրալից, իսկ սոճու կատարներն, ասես ոսկեփոշով ցողված, արդեն ջերմանում էին գարնան արևի առաջին ճառագայթներով։

1906

ԳԱՄԲՐԻՆՈՒՍ

1

Այսպես էր կոչվում գարեջրատունը Ռուսաստանի հարավում ընկած նավահանգստային բանուկ մի քաղաքում։ Թեև ամենամարդաշատ փողոցներից մեկում էր, բայց, ստորերկրյա դիրքի պատճառով, տեղը գտնելը բավական դժվար էր։ Գամբրինուսին քաջ ծանոթ ու այնտեղ լավ վարկ ունեցող այցելուն անգամ հաճախ անցնում էր այդ հիանալի հաստատության մոտով

ու ետ դառնում հարևան երկու-երեք կրպակները ետևում թողնելուց հետո միայն։

Ցուցանակ ամենևին չկար։ Ուղղակի մայթի վրայից մարդիկ ներս էին մտնում նեղլիկ, միշտ բաց թողած դռնով։ Դեպի ցած տանում էր ճիշտ նույնպիսի նեղ սանդուղքը, կազմված միլիոնավոր ծանր սապոգներից՝ ջարդրդված ու ծռմռված քարե քսան աստիճաններից։ Սանդուղքի դիմացի միջնորմը զարդարում էր գարեջրագործների փառապանծ հովանավոր Գամբրինուս արքայի բարձրաքանդակ, ներկված, մոտավորապես երկու մարդաբոյ պատկերը։ Հավանորեն այդ քանդակը սկսնակ սիրողի առաջին գործն էր եղել, ու թվում էր, թե կոպիտ կերպով տաշված է ծակոտկեն սպունգի քարացած կտորներից, բայց կարմիր բաճկոնակը, կզաքիսի պատմուճանը, ոսկե թագը և բարձր բռնած գավաթը՝ վրայից թափվող սպիտակ փրփուրով, ոչ մի կասկած չէին թողնում, որ այցելուների դիմաց հենց ինքն է՝ գարեջրագործության մեծ խնամակալը։

Գարեջրատունը բաղկացած էր երկու երկար, բայց չափազանց ցածր, կամարակապ սրահներից։ Քարե պատերից մշտահոս շիթերով դուրս էր տալիս ստորգետնյա խոնավությունը և փայլփլում գազի լապտերների լույսի տակ, որոնք գիշեր-ցերեկ վառվում էին, քանի որ գարեջրատունը ոչ մի լուսամուտ չուներ։ Բայց և այնպես կամարների վրա դեռևս կարելի էր բավական հստակ զանազանել հետաքրքրաշարժ որմնանկարչության հետքեր։ Նկարներից մեկը պատկերում էր որսորդական կանաչ բաճկոններով, ցախաքլորի փետուրները գլխարկները խրած, հրացաններն ուսած, խրախճանքի նստած գերմանացի կտրիճների։ Նրանք բոլորը, դեմքները դարձրած գարեջրատան սրահի կողմը, հասարակությանը ողջունում էին առաջ պարզած գավաթներով, ընդ որում երկուսը նաև գրկել էին հաստամարմին երկու աղջկա գոտկատեղերը՝ գյուղական պանդոկի սպասուհիներ էին կամ գուցե մի բարի ֆերմերի դուստրեր։ Մյուս պատին պատկերված էր XVIII հարյուրամյակի առաջին կեսի ժամանակներից բարձրաշխարհիկ մի բացօթյա խնջույք. պուդրայած կեղծամներով կոմսուհիներն ու վիկոնտները ջարդուփշուր լինելով վազվզում են կանաչ մարգագետնով, գառնուկների հետ, իսկ մոտակայքում, ճյուղատարած ուռենիների տակ

լճակն էր սփռված, մեջը՝ կարապներ, որոնց վայելչագեղորեն կերակրում են ինչ-որ ոսկե կեղևի մեջ նստած տիկնայք ու պարոնայք։ Հաջորդ նկարը պատկերում էր ուկրաինական խրճիթի ներսը և երջանիկ մալոռուսների մի ընտանիք, որոնք հոպակ էին պարում՝ շտոֆները ձեռքներին։ Մի քիչ էլ այն կողմ երևում էր մի մեծ տակառ, որի վրա խաղողի որթերով ու գայլուկի տերևներով փաթաթված, այլանդակ գեր երկու ամուր՝ կարմիր դեմքերով, յուղոտ շրթունքներով ու անամոթ-անպատկառ աչքերով, շրխկացնում էին սաղր գավաթները։ Երկրորդ սրահում, որն առաջինից բաժանվում էր կիսակլոր կամարով, պատկերներ էին գորտերի կյանքից. գորտերը գարեջուր են խմում կանաչ ճահճուտում, գորտերը ճպուռներ են որսում խիտ եղեգնուտի մեջ, լարային քառյակ կազմած՝ նվագում են, սուսերամարտում են ու նման բաներ։ Ակներև էր, որ օտարերկրացի վարպետ էր նկարազարդել պատերը։

Սեղանների փոխարեն, առատորեն թեփ լցրած հատակին դրված էին կաղնեփայտե ծանր տակառներ, աթոռների փոխարեն՝ փոքրիկ տակառիկներ։ Մուտքից դեպի աջ փոքր մի բեմահարթակ կար, վրան՝ դաշնամուր։ Այստեղ ամեն երեկո, արդեն տարիներ շարունակ, հյուրերին զբաղեցնելու և հաճույք պատճառելու համար ջութակ էր նվագում երաժիշտ Սաշկան՝ խոնարհ ու հեզ, զվարթ, հարբած, ճաղատ մի հրեա, բուրդը թափած կապկի նման, անորոշ տարիքի մի մարդ։ Տարիներն անցնում էին, փոփոխվում էին կաշվե թևնոց հագած սպասավորները, փոփոխվում գարեջուր մատակարարողներն ու բաժանողները, փոփոխվում էին գարեջրատան տերերը, բայց Սաշկան անփոփոխ, ամեն երեկո ժամը վեցի մոտ արդեն նստած էր իր բեմի վրա, ջութակը ձեռքին, փոքրիկ, ճերմակ շնիկը ծնկներին, իսկ գիշերվա ժամը մեկին մոտ գնում էր Գամբրինուսից, այդ նույն Բելոչկա շնիկի ուղեկցությամբ, խմած գարեջրից ոտքերի վրա հազիվ կանգնելով։

Ասենք, Գամբրինուսում անփոփոխ մեկ ուրիշ դեմք էլ կար՝ բուֆետապան մադամ Իվանովան, գիրուկ, գունատ, ծեր մի կին, որը գարեջրային խոնավ նկուղում իր անընդմեջ ներկայությամբ նմանվում էր գունազուրկ, ծույլ այն ձկներին, որոնք բնակվում են ծովային անձավների խորքերում։

Ինչպես նավապետն իր խցիկից, նա էլ իր վաճառասեղանի բարձունքից լուռումունջ ղեկավարում էր ծառաներին ու ամբողջ ժամանակ ծխում, գլանակը բերանի աջ անկյունում, աց աչքը ծխից կկոցած։ Հազիվ թե մեկնումեկը նրա ձայնը լսած լիներ, իսկ ողջույններին միշտ պատասխանում էր միօրինակ դժգույն ժպիտով։

2

Վիթխարի նավահանգիստը՝ աշխարհի առևտրական ամենամեծ նավահանգիստներից մեկը, մշտապես լեփ-լեցուն էր նավերով։ Այստեղ էին գալիս հսկայական մուգ ժանգագույն զրահանավեր։ Հեռավոր արևելքի ճամփան բռնած, այստեղ էին բեռնվում Կամավոր նավատորմի դեղին, հաստափող շոգենավերը, որոնք ամեն օր կլանում էին երկար ապրանքագնացքներ կամ հազարավոր աքսորականներ։ Գարնանը և աշնանն այստեղ ծածանվում էին հարյուրավոր դրոշներ երկրագնդի բոլոր ծայրերից, և առավոտից երեկո հրամաններ ու զանազան լեզուներով հայհոյանքներ էին հընչում։ Նավերից դեպի անթիվ-անհամար բեռնամբարները տանող ճոճվող կամրջակներով գնում-գալիս էին բեռնակիրները. ցնցոտիապատ, համարյա մերկացած, հարբած, ուռած դեմքերով ռուս բոսյակներ, կեղտոտ չալմաներով, մինչև ծնկները փոթ բռնած ու սրունքներին փաթաթած լայն փոխաններով թուրքեր, պնդակազմ, մկանուտ պարսիկներ, որոնց մազերին ու եղունգներին մուգ գազարագույն հինա էր դրված։ Հաճախ նավահանգիստ էին մտնում հեռվից սքանչելի տեսք ունեցող իտալական երկկայմ ու եռակայմ առագաստանավերը, ջահել կնոջ ստինքների պես մաքուր, ճերմակ ու ձիգ առագաստների իրենց կանոնավոր հարկերով։ Փարոսի հետևից դուրս լողալով, հատկապես գարնան պայծառ առավոտներին, այդ սլացիկ նավերը ներկայանում էին որպես հրաշալի սպիտակ տեսիլքներ, որոնք լողում էին ոչ թե ջրի վրա, այլ օդի մեջ, հորիզոնից վեր։ Նավահանգստի կեղտոտ-կանաչ ջրի, աղբի, հավկիթի կճեպների, ձմերուկի կեղևի մեջ, սպիտակ ծովորորների երամների արանքում ամիսներով ճոճվում էին անատոլիական բարձրաքիթ կաչբրմաներ և տրապիզոնյան ֆելյուգներ՝ տարօրինակ ներկված, փորա-

գրված ու պաճուճազարդ։ Մեկ-մեկ էլ այստեղ էին գալիս ինչ-որ արտառոց նեղլիկ, կպրած նավեր, սև առագաստներով, դրոշակի փոխարեն՝ մի կեղտոտ լաթ։ Շրջանցելով ծովապատնեշն ու կողը մի կերպ փախցնելով, այդպիսի նավը, ամբողջովին կողքի ծռված ու ընթացքը չդանդաղեցնելով, ներս էր խցկվում ցանկացած նավահանգիստը և բազմալեզու հայհոյանքի, նզովքների ու սպառնալիքների միջով դեմ առնում առաջին պատահած պատնեշին, իսկ այնտեղ այդ նավի նավաստիները՝ բոլորովին մերկ, բրոնզագույն, կարճլիկ մարդիկ, կոկորդային կոմնչներ արձակելով, անընմբռնելի արագությամբ իջեցնում էին պատառոտված առագաստները, և կեղտոտ, խորհրդավոր նավը մեկ վայրկյանում կարծես մեռած էր դառնում։ Հենց այդպես էլ առեղծվածային, մութ գիշերով, առանց լույսերը վառելու, նավն անաղմուկ անհետանում էր նավահանգստից։ Գիշերներն ամբողջ ծովածոցով մեկ վխտում էին մաքսանենգների թեթև մակույկները։ Մերձակա և հեռավոր վայրերի ձկնորսներն իրենց որսն էին բերում քաղաք. գարնանը՝ մանրիկ խամսա, միլիոններով, բերներբերան լցված բարկասների մեջ, ամռանը՝ անճոռնի տափակաձուկ, աշնանը՝ թյունիկ, յուղոտ կեֆալ ու ոստրե, իսկ ձմռանը՝ տասը կամ քսանփթանոց թառափ, որը որսում էին ափից շատ վերստեր հեռու, հաճախ կյանքը մեծ վտանգի ենթարկելով։

Բոլոր այդ մարդիկ՝ տարբեր ազգությունների նավաստիներ, ձկնորսներ, հնոցապաններ, ուրախ-զվարթ յունգաներ, նավահանգստային գողեր, մեքենավարներ, բանվորներ, մակույկավարներ, բեռնակիրներ, ջրասուզակներ, մաքսանենգներ, բոլորն էլ ջահել էին, առողջ ու ներծծված ծովի և ձկան թունդ հոտով, գիտեին աշխատանքի ծանրությունը, սիրում էին ամենօրյա վտանգման հմայքն ու սարսափը, ամեն ինչից վեր գնահատում էին ուժը, կտրիճությունը, տաքարյունությունը և թունդ խոսքով դաղելը, իսկ ցամաք իջնելիս վայրենի հաճույքով անձնատուր էին լինում շվայտության, գինարբուքի և ծեծկռտուքի։ Երեկոները մեծ քաղաքի կրակները, որոնք վեր ու վեր էին բարձրանում, կախարդական փայլփլուն աչքերի պես ձգում էին նրանց, մշտապես խոստանալով ինչ-որ նոր, բերկրալի, դեռևս չվայելած մի բան ու միշտ էլ խաբում։

Քաղաքը նավահանգստին էր միանում նեղ, զառիվեր, ծուռումուռ փողոցներով, ուր օրինավոր մարդիկ խուսափում էին գիշերով ման գալ։ Ցուրաքանչյուր քայլափոխին կհանդիպեիր օթևանատների՝ կեղտոտ, վանդակապատ լուսամուտներով, ներսում միայնակ լամպի մռայլ լույսը։ Առավել հաճախ կհանդիպեիր կրպակների, ուր հնարավոր էր վաճառել վրայիդ հագուստը, մինչև վերջին սպիտակեղենն, ու հաքնել ծովային ցանկացած զգեստը։ Այստեղ նաև բազմաթիվ գարեջրատներ, պանդոկներ, ճաշարաններ ու գինետներ կային, բոլոր լեզուներով գրված արտահայտիչ ցուցանակներով, ու բացահայտ կամ գաղտնի ոչ քիչ հասարակաց տներ, որոնց շեմերից նավաստիներին ներս էի կանչում անճաշակ քսմսված, խռպոտ ձայներով կանայք։ Հունական սրճարաններ կային, ուր դոմինո և վաթսունվեց էին խաղում, և թուրքական սրճարաններ՝ նարգիլե ծխելու սարքերով ու հինգկոպեկանոց օթևանով։ Արևելյան փոքրիկ գինետներ կային, ուր վաճառում էին խրխունջ, պետալիզի, մանր ծովախեցգետին, միդիաներ, գորտնուկապատ, թանաքագույն մեծ-մեծ սիպե ու ծովային այլևայլ զիբիլ։ Ձեղնահարկերում ու նկուղներում, խուլ խցանած փեղկերի ետևներում տեղավորված էին խաղատներ, ուր շտոսսը և բակկարան հաճախ ավարտվում էին պատռված որովայնով ու ջարդված գանգով, և հենց նույն տեղում, երբեմն հարևան մի որջում կամ անկյունադարձից այն կողմ հնարավոր էր ծախել ցանկացած գողացված ապրանքը, շոգակնե ապարանջանից մինչև արծաթյա խաչ, լիոնյան թավշե հակից մինչև նավաստու պետական շինելը։

Այդ թեք ու նեղ, ածխափոշուց սևացած փողոցները գիշերվա դեմ միշտ լպրծուն ու գարշահոտ էին դառնում, ասես քրտնած՝ մղձավանջային երազի մեջ։ Ու նմանվում էին կեղտաջրի առուների կամ աղտոտ աղիների, որոնցով միջազգային այդ մեծ քաղաքը ծովն էր շպրտում իր բոլոր թափթփուկները, իր ողջ նեխածությունը, գարշանքն ու արատները, վարակելով մկանուտ, ամրակազմ մարմինները ու միամիտ հոգիները։

Այստեղի վայրագ բնակիչները սակավ էին բարձրանում վեր, դեպի շքեղ, միշտ տոնական քաղաքն՝ իր հայելափայլ ապակիներով, հպարտ հուշարձաններով, էլեկտրականության ճաճանչներով, սպիտակ ակացիայի ծառուղիներով, փառա-

հեղ ոստիկաններով, ցուցադրելի իր ողջ մաքրությամբ ու քարեշնությամբ։ Բայց նրանցից յուրաքանչյուրը, նախքան գառը դատած, յուղոտված, պատռված, փոթ-փոթ եղած ռուբլիանոցները քամուն տալը, անպայման մտնում էր Գամբրինուս։ Դա նվիրագործված էր վաղեմի սովորությամբ, թեև դրա համար ստիպված էին լինում իրիկնային խավարի միջով գնալ-հասնել ճիշտ քաղաքի կենտրոնը։

Շատերը, ճիշտն ասած, ամենևին չգիտեն գարեջրի փառապանծ արքայի անհասկանալի անունը։ Պարզապես մեկնումեկն առաջարկում էր.

— Գնա՞նք Սաշկայի մոտ։

Մյուսներն էլ պատասխանում էին.

— Գնանք։ Ճամփան ուղիղ բռնիր, գնացի՞նք։

Եվ արդեն միահամուռ գոչում էին.

— Առա՞ջ։

Զարմանալի ոչինչ չկա, որ Նավահանգստի մարդկանց ու ծովայինների շրջապատում Սաշկան ավելի մեծ հարգանք ու հռչակ ուներ, քան, ասենք, տեղի արքեպիսկոպոսը կամ նահանգապետը։ Եվ, անկասկած, եթե ոչ նրա անունը, ապա նրա կայտառ, կապկային դեմքն ու նրա ջութակը երբեմն-երբեմն հիշվում էին Սիդնեյում և Պլիմուտում, ինչպես նաև Նյու Յորքում, Վլադիվոստոկում, Կոստանդնուպոլսում և Ցեյլոնում, էլ չհաշված Սև ծովի բոլոր ծոցերն ու խորշերը, ուր անվախ ձկնորսներից շատերը նրա տաղանդի երկրպագուներն էին։

3

Սովորաբար Սաշկան Գամբրինուս էր գալիս այն ժամերին, երբ այնտեղ ոչ ոք չէր լինում, պատահական մեկ-երկու այցելուներից բացի։ Այդ ժամանակ սրահներում կանգնած-մնացած էր լինում երեկվա գարեջրի թանձր ու կծու հոտը, նաև մութ էր լինում, որովհետև ցերեկները գազը խնայում էին։ Հուլիսյան շոգ օրերին, երբ քարեղեն քաղաքը տառապում էր արևից ու խլանում փողոցի աղմուկից, այստեղ հաճելի լռություն ու զով էր տիրում։

Սաշկան մոտենում էր վաճառասեղանին, բարևում մադամ Իվանովային ու խմում առաջին գավաթ գարեջուրը։ Բուֆետապանուհին մեկ-մեկ խնդրում էր.

— Սաշա, մի որևէ բան նվագեք։

— Ի՞նչ կհրամայեք նվագել ձեզ համար, մադամ Իվանովա,— սիրալիր հարցնում էր Սաշկան, որը միշտ ընդգծված սիրալիր էր նրա հետ։

— Ձեր եղանակներից մեկը...

Սաշկան նստում էր իր սովորական տեղը, դաշնամուրից ձախ, և նվագում մի տեսակ արտասովոր, երկարուձիգ տրրտմագին պիեսներ։ Քնած ու լուռ մի բան էր իջնում ենկուղի վրա, միայն փողոցից էր լսվում քաղաքի խուլ թնդյունը, մեկ-մեկ էլ ծառաներն էին անզգուշորեն չխկչխկացնում ամանեղենը խոհանոցում, պատից այն կողմ։ Սաշկայի ջութակի լարերից հոսում-արտասվում էր երկրի պես հինավուրց հրեական վիշտը, ամբողջովին հյուսված ու պարուրված ազգային մեղեդիների տրտում ծաղիկներով։ Սաշկայի դեմքը՝ սեղմված կզակը, ցած խոնարհված ճակատը, ծանրացած կոպերի տակից վեր նայող խոժոռ աչքերը, մթնշաղի այդ ժամին բոլորովին նման չէր լինում Գամբրինուսի բոլոր հյուրերին ծանոթ Սաշկայի՝ բերանը բաց, աչքով անող, խաղացկուն դեմքին։ Բելոչկա շնիկը նստած էր նրա ծնկներին։ Նա վաղուց արդեն վարժվել էր վնգստոցով չձայնակցել երաժշտությանը, բայց չափազանց տրտում, լալագին ու նզովախառը հնչյուններն ակամա բորբոքում էին նրան. ջղաձիգ հորանջելով, շնիկը լայն բաց էր անում բերանը, ետ ոլորելով վարդագույն, բարակ լեզուն, ընդ որում մի պահ դողացնում էր ամբողջ մարմինն ու սևաչ, փոքրիկ մռութը։

Բայց ահա քիչ-քիչ հավաքվում էին մարդիկ, գալիս էր ցերեկը դերձակի կամ ժամագործի մոտ իր որևէ կողմնակի գործը վերջացրած նվագակցողը, բուֆետում շարվում էին տաք ջրի մեջ լցված նրբերշիկներն ու պանրով բուտերբրոդները, և վերջապես վառվում էին մնացած բոլոր լապտերները։ Սաշկան խմում էր իր երկրորդ գավաթը, ընկերոջը հրահանգ տալիս. «Մայիսյան շքերթ, այն, ցվայ, դրայն», ու մի թափով քայլերգ սկսում։ Այդ իսկ բոպեից նա հազիվ էր հասցնում գլխով ողջունել նոր եկածներին, որոնցից յուրաքանչյուրն իրեն համարում էր Սաշկայի առանձնահատուկ մտերիմ ծանոթն ու նրա ողջույնից հետո հպարտորեն նայում մնացածներին։ Միև-

նույն ժամանակ Սաշկան կկոցում էր մեկ այս, մեկ այն աչքը, երկարուկ կնճիռները կուտակում իր լերկ, ետ ընկած գանգի վրա, շրթունքներն էլ ծռմռում ծիծաղաշարժ ու ժպտում չորս բոլորը եղածներին։

Ժամը տասի-տասնմեկի կողմերն իր սրահներում երկու հարյուր ու ավելի մարդ տեղավորող Գամբրինուսը ծայրեծայր լցված էր լինում։ Շատերը, համարյա կեսը, գալիս էին գլխաշոր կապած կանանց հետ, ոչ ոք չէր վրդովվում նեղվածքի, սեղմված ոտքի, տրորված գլխարկի, շալվարին թափված ուրիշի գարեջրի պատճառով։ Թե նեղանում էլ էին, ապա միայն գինովությունից «խորոզացած»։ Նկուղային խոնավությունը՝ աղոտ փայլով, ավելի շատ հոսում յուղաներկ պատերից, իսկ ամբիոնից բարձրացող գոլորշիները առաստաղից ցած էին կաթում որպես հազվագյուտ, ծանր ու տաք անձրև։ Գամբրինուսում կարգին էին խմում։ Այդ գարեջրատան բարքերում առանձնահատուկ շուք էր համարվում երկու-երեք հոգով նստած՝ սեղանին այնքան դատարկ շիշ շարելը, որպեսզի դիմացինին հնարավոր չլիներ տեսնել, ինչպես ապակյա կանաչ անտառում։

Երեկոյի ամենաեռուն շրջանում հյուրերը կարմրատակում էին, խոպոտում ու դառնում ոտից գլուխ թրջված։ Ծխախոտի ծուխն աչք էր կուրացնում։ Հարկ էր լինում բղավել կամ սեղանի վրա կռանալ՝ ընդհանուր ժխորի մեջ մեկը մյուսին լսելու համար։ Եվ միայն իր բարձունքում նստած Սաշկայի անխոնջ ջութակն էր ցնծում հեղձուկի, շոգի, ծխախոտի, գազի, գարեջրի հոտերի և անպարկեշտ հասարակության բղավոցների վրա։

Բայց այցելուները շուտով հարբում էին գարեջրից, կանանց մոտիկությունից, գաղջ օդից։ Յուրաքանչյուրն ուզում էր լսել իր սիրած, ծանոթ երգերը։ Սաշկայի կողքին մշտապես ցցված էին լինում բութ աչքերով ու անհաստատ շարժուձևերով երկու-երկու, երեք-երեք մարդ, որոնք ցնցում էին նրա թևքն ու խանգարում նվագել։

— Սա՜ՀՀՀ... էն մղ-ըղկը-տացնող բա՜նը... Հո...— խընդրողը զկոտում էր,— հոգի-իս քաղցրա-ցրո՜ւ...

— Հիմա, հիմա,— կրկնում էր Սաշկան, արագ-արագ գլխով անելով, և բժշկի ճարպկությամբ ու անձայն կողքի գրպանը գցում արծաթ դրամը։— Հիմա, հիմա։

— Սաշկա, էս մեկն արդեն ստորություն է։ Փողը տվել եմ ու էս քսան անգամ խնդրում եմ՝ «Սովով եկա Օդեսա»

— Հիմա, հիմա...

— Սաշկա, «Սոխա՜կը»։

— Սաշկա, «Մարուսյան»։

— «Ձեց-ձեցը», Սաշկա, «Ձեց-ձեցը»։

— Հիմա, հիմա...

— «Ձա՜-բա՜-նա՜»— սրահի մյուս ծայրից որոտում էր ոչ թե մարդկային, այլ մի տեսակ հովատակային ձայն։

Ու համընդհանուր քրքիջի տակ Սաշկան աքլորավարի կանչում էր ի պատասխան.

— Հի-իմա-ա՜...

Եվ նա, առանց հանգստանալու, նվագում էր պատվիրված բոլոր երգերը։

Հավանաբար այդպիսի մի բան չկար, որը նա անգիր չիմանար։ Չորս կողմից նրա գրպանն էին լցվում արծաթ դրամներ և բոլոր սեղաններից նրան գարեջրի զավաթներ էին ուղարկում։ Երբ իջնում էր իր բեմահարթակից, բուֆետին մոտենալու համար, կտոր-կտոր էին անում նրան։

— Սաշենկա՜.. Հոգո՜ւդ մեռնեմ... մի՜ բաժակ...

— Սաշենկա, կենացդ։ Դե արի էստեղ, որ ասում են, գրողի տարած, ես քո սիրտ ու հոգին...

— Սա՜-աշկա՜, արի գարեջու-ո՜ւր խմե-ե՜նք,— վրնջում էր հովատակի նույն ձայնը։

Կանայք, ինչպես և բոլոր կանայք, որոնք հակված են զմայլվել բեմի մարդկանցով, սեթևեթել, քծնել նրանց ու աչքի ընկնել ամեն կերպ, կանչում էին նրան ղունղունացող ձայներով, խաղացկուն, կոտրատվող ծիծաղով.

— Սաշենկա, անպայման պետք է ինձ հետ խմեք... Չէ, չէ, չէ, ես ձեզ կինդրեմ։ Իսկ հետո «Կուկու-վոկ»[1] կնվագեք։

Սաշկան ժպտում էր, ծամածռություններ անում և աջ ու ձախ գլուխ տալիս, ձեռքը սրտին էր սեղմում, օդային համբույրներ ուղարկում, բոլոր սեղաններից գարեջուր խմում և, վերադառնալով դաշնամուրի մոտ, որի վրա նրան էր սպասում գարեջրի հերթական զավաթը, սկսում էր մի որևէ «Բաժանում» նվագել։

---

[1] «Քեյք-ուոք» ամերիկյան նեգրերի պարի աղավաղված անվանումը (ծան. թարգմ.)։

Երբեմն իր ունկնդիրներին ծիծաղեցնելու համար, եղանակին համապատասխան ստիպում էր ջութակին, շան թուլայի պես վնգստալ, խոզի պես խռնչալ կամ խռխռացնել բասային աղեկտուր հնչյուններով։ Եվ այդ կատակները ունկնդիրներն ընդունում էին անխռով հավանությամբ.

— Հո՜-հո՜-հո՜-հոո՜,

Շոգը գնալով սաստկանում էր։ Առաստաղից ջուր էր կաթում։ Հյուրերից ոմանք արդեն լաց էին լինում կրծքներին զարկելով, ոմանք էլ, արնակոխ աչքերով վրա պրծնելով միմյանց, կռվշտում էին կանանց կամ հին-հին վիրավորանքների պատճառով, զսպվելով առավել սթափ հարևանների, մեծ մասամբ հացկատակների կողմից։ Սպասավորները հրաշքով էին սողոսկում-անցնում տակառների, տակառիկների, ոտքերի ու մարմինների արանքներով, նստածների գլուխներից բարձր պահած ձեռքերը, գարեջրի գավաթները մատներով բռնած։ Մադամ Իվանովան, առաջվանից ավելի գունատ, անխռով և լուռումունջ, վաճառասեղանի ետևից տնօրինում էր սպասավորների գործողությունները, ինչպես նավապետը փոթորկի պահին։

Բոլորին համակում էր խմելու ցանկությունը։ Գարեջրից, իր սեփական բարությունից և այն կոպիտ հրճվանքից, որ ուրիշներին էր պատճառում նրա երաժշտությունը, այս ամենից հեղգացած Սաշկան պատրաստ էր ինչ ասես նվագել։ Ու նրա ջութակի հնչյունների տակ խոպոտած մարդիկ անճոռնի, բութ ձայներով ոռնում էին միալար, մեկը մյուսին նայելով անիմաստ լրջությամբ լի աչքերով.

Իզուր ինչի՞ բա-նաժա-անվենք,
Ար-ռով մնանք իրա-րից.
Արի գնա-անք պսա-կվե-նք,
Ու լիանանք աշխարքից։

Դրանց կողքին մեկ ուրիշ խումբ, հավանորեն թշնամաբար տրամադրված, աշխատելով խլացնել հարևաններին, արդեն լիովին խառնիխուռն ոռնում էր.

Լավ ծանոթ են ինձ քայլերը,
Հագի շորն է պպզում,
Ոսկու պես են շեկ մազերը,
Սապոգներն են պլպլում։

Հաճախ Գամբրինուս էին այցելում փոքրասիական «դոպգոլակի» հույները, որոնք ռուսական նավահանգիստներն էին մտնում ձկնորսական գործերով։ Նրանք նույնպես Սաշկային պատվիրում էին իրենց արևելյան երգերը՝ միալար, ռնգաձայն, երկու-երեք նոտայից կազմված միապաղաղ մի վայնասուն, և մռայլ դեմքերով, կրակվող աչքերով պատրաստ էին ժամեր շարունակ երգել։ Սաշկան նվագում էր և իտալական ժողովրդական քառյակներ, և՛ ուկրաինական դումկաներ, և՛ հրեական հարսանեկան պարեր, և՛ ուրիշ շատ բան։ Մի անգամ Գամբրինուս մտավ նեգր նավաստիների մի խումբ, որոնք մյուսներին նայելով, նույնպես շատ ցանկացան երգել։ Սաշկան լսողությամբ արագ որսաց նեգրական թռչկոտուն մեղեդին, տեղնուտեղը դաշնամուրի նվագակցությունն էլ հարմարեցրեց, և ահա, ի մեծ հրճվանք ու զվարճություն Գամբրինուսի մշտական հաճախորդների, գարեջրատունը լցվեց երգի տարօրինակ, քմահաճ կոկորդային հնչյուններով։

Տեղական թերթի մի ռեպորտյոր, Սաշկայի ծանոթը, մի առիթով համոզեց երաժշտական ուսումնարանի պրոֆեսորին գնալ Գամբրինուս՝ տեղի հռչակավոր ջութակահարին լսելու։ Բայց Սաշկան գլխի ընկավ ու դիտմամբ ստիպեց ջութակին սովորականից ավելի մլավել, մկկալ ու ոռնալ։ Գամբրինուսի հյուրերը կոտորվում էին ծիծաղից, իսկ պրոֆեսորն արհամարհանքով ասաց.

— Խեղկատակությո՛ւն է։

Ու գնաց, գավաթն էլ մինչև վերջ չիմելով։

4

Բարեկիրթ մարքիզները և քեֆ անող գերմանացի որսորդները, գիրուկ ամուրները և գորտերն իրենց պատերից հաճախ ականատես էին լինում այնպիսի թափով խրախճանքների, որպիսիք հազիվ թե մեկ ուրիշ տեղ հնարավոր լիներ տեսնել, Գամբրինուսից բացի։

Օրինակ, հայտնվում էր հաջող գործին հաջորդած կերուխումից վեր կացած գողերի մի խումբ, յուրաքանչյուրն իր սիրած աղջկա հետ, յուրաքանչյուրի գլխին բավական թեք դրած գլխարկ, լաքապատ երկարաճիտ կոշիկներով, պանդոկային ընտիր շարժուձևով, արհամարհական տեսքով։ Սաշ-

կան նրանց համար հատուկ, գողական երգեր էր նվագում՝ «Ներա ես, տղերք», «Լաց մի լինի, Մարուսյա», «Գարունն անցավ» և այլն։ Նրանք իրենց արժանապատվությունից ցած էին համարում պարել, բայց ընկերուհիները, բոլորն էլ լավիկ, ջահել, երբեմն համարյա աղջնակներ, «Ջաբանա» էին պարում ճվճվալով ու կրունկները շխկշխկացնելով։ Թե կանայք, թե տղամարդիկ շատ էին խմում, միայն թե վատն այն էր, որ գողերն իրենց քեֆը միշտ ավարտում էին դրամական հին-հին թյուրիմացություններով ու սիրում էին չքվել առանց վճարելու։

Ամբողջ տրտելով՝ մի երեսուն մարդ, ձկնորսներն էին գալիս հաջող որսից հետո։ Ուշ աշնանն այնպիսի բախտավոր շաբաթներ էին լինում, երբ յուրաքանչյուր որսատեղ մի քառասուն հազար թյունիկ կամ կեֆալ էր լցվում։ Այդ ժամանակաընթացքում ամենաանշան փայատերն էլ երկու հարյուր ռուբլուց ավելի էր վաստակում։ Բայց ձկնորսներին ավելի շատ էր հարստացնում թառափի որսը ձմռանը, թեև դա բավական դժվարությունների հետ էր կապված։ Ստիպված էին լինում շատ ծանր աշխատել, ափից երեսուն-քառասուն վերստ հեռու, գիշերով, երբեմն վատ եղանակին, երբ ջուրը լցվում էր բարկասն ու անմիջապես սառույց կտրում հագուստի, թիերի վրա, իսկ եղանակը երկու-երեք օրով նրանց պահում էր ծովում, մինչև մի երկու հարյուր վերստ հեռու Անապայի կամ Տրապիզոնի կողմերը ափ շպրտելը։ Ամեն ձմեռ շուրջ մեկ տասնյակ նավակ էր անհետ կորչում, և սոսկ գարնանը այստեղ-այնտեղ ալիքները օտար ափեր էին հանում անվախ ձկնորսների դիակները։

Այդ պատճառով էլ, երբ նրանք ծովից բարեհաջող էին վերադառնում, ցամաքի վրա տոչորվում էին կյանքի կատաղի ծարավից։ Մի քանի հազար ռուբլի երկու-երեք օրվա ընթացքում մսխվում էր ամենաբուռն, շշմեցնող ու հարբած կերուխումի մեջ։ Ձկնորսները մտնում էին պանդոկ կամ մի որևէ ուրիշ զվարճավայր, դուրս շպրտում կողմնակի բոլոր հյուրերին, պինդ-պինդ փակում էին դուռ-լուսամուտ և օրերով, գիշերներով խմում, անձնատուր լինում սիրո, ոռնաձայն երգում, ջարդուփշուր անում հայելիները, ամանեղենը, կանանց, հաճախ էլ միմյանց, մինչև որ քունը հաղթում էր նրանց ուր պատահեր՝ սեղանների վրա, հատակին, մահճակալների լայնքով փռված, թուք ու փսխուքի, ծխախոտի մնացորդների, ապակու փշուրների, թափված գինու և լեբդացած արյան մեջ։ Այսպես էին զվարճանում ձկնորսները մի քանի օր շարունակ, երբեմն տեղից տեղ փոխվելով, երբեմն էլ մնալով միևնույն վայրում։ Մինչև վերջին կոպեկը մսխելուց հետո, դրմբացող գլուխներով, երեսներին՝ ծեծկոտուքի հետքեր, խումհարից դողդողալով, լուռումունջ, ընկճված ու ապաշխարած, նրանք գնում էին ափ, որպեսզի նորից անցնեն իրենց սիրելի ու նեղվյալ, ծանր ու գրավիչ արհեստին։

Նրանք երբեք չէին մոռանում Գամբրինուս մտնել։ Վիթխարի-վիթխարի և խոպոտած, ներս էին խուժում կարմրատակած, ձմեռային դաժան, հյուսիս-արևելյան քամուց խանձված, անջրանցիկ բաճկոններով, կաշվե շալվարներով ու եղան կաշվից մինչև կոնքերը հասնող սապոգներով, նույն այն սապոգներով, որոնցով նրանց ընկերները խոովահույզ գիշերով ծովի հատակն էին ընկնում քարի պես։

Սաշկայի նկատմամբ տածած հարգանքից նրանք դուրս չէին քշում կողմնակի մարդկանց, թեև գարեջրատան տերերն էին զգում իրենց ու գետնով տալիս ծանր գավաթները։ Սաշկան նրանց համար իրենց ձկնորսական՝ երկարուձիգ, պարզ և ծովի աղմուկի պես ահեղ երգերն էր նվագում ու բոլորով երգում էին միաձայն, ծայր աստիճան լարելով իրենց առողջ կրծքավանդակներն ու կոփված կոկորդները։ Սաշկան նրանց վրա ներգործում էր ալիքները սանձող Օրփեոսի պես, ու պատահում էր, որ բեռնանավի որևիցե քառասնամյա պարագլուխ՝ մորուքավոր, ամբողջովին քամահար, գազանակերպ մի ածդահա, արցունքախեղդ էր լինում, բարակ ձայնով արտաբերելով երգի խոսքերը.

Ախ, մի անբախտ տղա եմ ես,
Որ ձկնորս եմ ծնվել կյանքում։

Երբեմն էլ նրանք պարում էին՝ տեղում դոփդոփելով, քարացած դեմքերով, փթանոց սապոգները գոգդացնելով, գարեջրատնով մեկ տարածելով ձկան ոդի բույրը, որով ծայրեծայր տոգորված էին նրանց մարմիններն ու հագուստները։ Սաշկայի նկատմամբ հատկապես առատաձեռն էին ու երաժշտին երկար ժամանակ պահում էին իրենց սեղանների մոտ։ Նա շատ լավ գիտեր ձկնորսների ծանր, հանդուգն ապրելակերպը։ Հաճախ

նրանց համար նվագելիս մի տեսակ ներքին, ակնածալի տրտմություն էր զգում դիմացիների նկատմամբ։

Բայց Սաշկան հատկապես սիրում էր նվագել առևտրական նավերի անգլիացի նավաստիների համար։ Սրանք գալիս էին խմբով, ձեռք-ձեռքի, բոլորը կարծես ջոկովի՝ լայնակուրծք, թիկնեղ, ջահել, ճերմակատամ, առողջ, կարմիր երեսներով, ուրախ, համարձակ, երկնագույն աչքերով։ Պինդ մկանները դուրս էին պրծնում նրանց բաճկոնների տակից, իսկ խորը կտրած օձիքների արանքից վեր էին ելնում ուղիղ, հուժկու գեղեցիկ պարանոցները։ Ոմանք ճանաչում էին Սաշկային նույն այս նավահանգստում նախորդ կանգառներից, ճանաչում էին և, սիրալիրությամբ մերկացնելով ճերմակ ատամները, ողջունում էին, աղավաղելով.

— Բարիև, բարիև։

Սաշկան, առանց խնդրելու, նրանց համար «Rule Britania»[1] էր նվագում։ Այն գիտակցությունը, որ իրենք այժմ գրտնվում են հավերժական ճորտությամբ ճնշված մի երկրում, հավանորեն առանձնահատուկ, հպարտ հանդիսավորություն էր հաղորդում անգլիական ազատության այդ հիմնին։ Եվ երբ նրանք գլխաբաց երգում էին վերջին հոյակապ բառերը.

Եվ երբեք, երբեք անգլիացին
Չի դառնա ստրուկ աշխարհում,—

ապա նույնիսկ ամենամոլեգին հարևաններն ակամա հանում էին գլխարկները։

Գինդն ականջին և ծոպքերի պես ուղղակի վզից աճող մորուքով պնդակազմ բոցմանը Սաշկային էր մոտենում գարեջրի զույգ գավաթով, լայն-լայն ժպտում, բարեկամաբար թրփթրփացնում ուսին ու խնդրում ժիգա նվագել։ Ծովային այդ կորովի պարի առաջին իսկ հնչյուններից անգլիացիները վեր էին թռչում և տեղ բացում, տակառիկները քաշելով պատերի տակ։ Կողմնակի մարդկանց խնդրում էին ձեռքի շարժումով, ուրախ ժպիտներով, բայց եթե մեկնումեկը հապաղում էր, առանց այլևայլության մի լավ աքացիով նրան տակից խրփում-թռցնում էին աթոռը։ Բայց նման քայլի սակավ էին դիմում, որովհետև Գամբրինուսում բոլորն էլ պարերի գիտակ էին ու հատկապես սիրում էին անգլիական ժիգան։ Նույնիսկ ինքը՝ Սաշկան, նվագը չդադարեցնելով, կանգնում էր աթոռին, որպեսզի ավելի լավ տեսնի։

Նավաստիները շրջան էին կատարում և արագ պարի տակտով ծափ զարկում, իսկ երկուսը մեջտեղ էին գալիս։ Պարը պատկերում էր նավաստու կյանքը նավարկության ժամանակ։ Նավը պատրաստ է ծով դուրս գալու, հիանալի եղանակ է, ամեն բան՝ կարգին։ Պարողների ձեռքերը կրծքերի վրա է խաչաձև, գլուխները ետ է գցած, իրանը հանգիստ է, թեև ոտքերը կատաղի կոփտացնում են հատակին։ Բայց ահա թույլ քամի բարձրացավ, թեթևակի ճոճում սկսվեց։ Նավաստու համար դա սոսկ զվարճություն է, միայն թե պարաքայլերն ավելի բարդ ու խրթին են դառնում։ Փչեց հով քամին՝ տախտակամածի վրա քայլելն այնքան էլ հարմար չէ, նավաստիները կողքից կողք են ճոճվում թեթևակի։ Ի վերջո ահա և իսկական փոթորիկը՝ նավաստիները մի նավակողից մյուսն են շպրտվում, գործը լրջանում է. «Բոլորը վե՜ր, հավաքե՛լ առագաստները»։ Պարողների շարժումներից ծիծաղելիորեն հասկանալի է, որ ձեռքերով ու ոտքերով մագլցում են կայմապարաններով, ձգում են առագաստներն ու ամրացնում թոկերով, իսկ փոթորիկն այդ միջոցին ավելի ուժեղ է տարուբերում նավը։ «Կա՜նգ առ, մարդ կա ծովում»։ Նավակ են իջեցնում։ Պարողները՝ եռացած, մերկ ու հուժկու պարանոցները պրկած, թիավարում են թափով, մեկ թեքելով, մեկ ուղղելով մեջքները։ Փոթորիկը մինչդեռ անցնում է, կամաց-կամաց մեղմանում է ճոճումը, երկինքը պարզվում է, և ահա նավը կրկին սահուն սլանում է համընթաց քամու տակ ու պարողները՝ դարձյալ անշարժ մարմիններով, խաչաձև ձեռքերով ուրախ ու սրընթաց ժիգա են պարում ոտքերով։

Պատահում էր, Սաշկան երբեմն լեզգինկա էր նվագում վրացիների համար, որոնք քաղաքի արվարձաններում գինեգործությամբ էին զբաղվում։ Սաշկայի համար անծանոթ պարեր չկային։ Այն ժամանակ, երբ պարողներից մեկը՝ փափախով ու չերքեզով, սուրում էր տակառների արանքով, գլուխի ետև տանելով մեկ այս, մեկ մյուս ձեռքը, իսկ նրա ընկերները ծափ էին զարկում ու ձայնարկում, Սաշկան նույնպես չէր դիմանում և նրանց հետ միասին բղավում էր ոգե-

1 «Կառավարիր, Բրիտանիա» (անգլ.)։

վորված. «Ա՛ս։ Ա՛ս։ Ա՛ս։ Ա՛ս»։ Պատահում էր, մոլդավական ջոկ էր նվագում, իտալական տարանտելա, վալս՝ գերմանացի նավաստիների համար։

Պատահում էր՝ Գամբրինուսում կռվում էին, այն էլ բավական դաժան։ Հին հաճախորդները սիրում էին պատմել ինչոր հածանավից զորացրված ռուս զինվորական նավաստիների և անգլիացի նավաստիների միջև եղած մի լեգենդար տուրուդմփոցի մասին։ Այն ժամանակ կռվում էին բռունցքներով, կաստետներով, գարեջրի գավաթներով, նույնիսկ մխմյանց վրա շպրտում նստելու տակառիկները։ Ոչ ի պատիվ ռուս զինվորների, հարկ է ասել, որ նրանք առաջինն սկսեցին ծեծուկռիվը, առաջինը դանակներ քաշեցին ու անգլիացիներին դուրս քշեցին գարեջրատնից կեսժամյա կռվից հետո միայն, թեև եռապատիկ էլ շատ էին։

Շատ հաճախ Սաշկայի միջամտությունը կանգնեցնում էր վեճը, որի ժամանակ մազից կախված պիտի լիներ արյունահեղությունը։ Նա մոտենում էր, կատակում, ժպտում, ծամածռություններ անում, և տեղնուտեղը բոլոր ծայրերից գարեջրի գավաթներն էին մեկնվում նրա կողմը։

— Սաշկա, մի բաժակ... Սաշկա, ինձ հետ... Ես քու հավատը, սիրտն ու թոքը...

Գուցե հասարակ, վայրենի բարքերի վրա ազդում էր այդ հեզ ու ծիծաղելի բարությո՞ւնը, որը զվարթ ճառագում էր կոր գանդի տակ թաքնված նրա աչքերից։ Գուցե տաղանդի հանդեպ յուրօրինակ հարգա՞նք էր և երախտապարտության նման մի բա՞ն։ Իսկ գուցեև այն հանգամանքը, որ Գամբրինուսի մշտական այցելուների մեծամասնությունը Սաշկայի հավերժական պարտապանն էր։ «Դեկոխտայի» ծանր պահերին, որը ծովային և նավահանգստային ժարգոնով նշանակում է լիակատար փողազրկություն, ազատ ու առանց մերժման Սաշկային էին դիմում մանր պարտքերի կամ բուֆետում փոքրիկ ապառիկ ունենալու խնդրով։

Իհարկե, պարտքերը չէին վերադարձնում, ոչ թե չարամտորեն, այլ մոռացկոտության պատճառով, բայց հենց նույն այդ պարտապանները քեֆ-ուրախության պահին պարտքը տասնապատիկ ետ էին տալիս Սաշկայի երգերի համար։

Բուֆետապանուհին երբեմն հանդիմանում էր նրան.

— Սաշա, զարմանում եմ, ինչպե՞ս չեք խնայում ձեր փողերը։

Սաշկան համոզիչ առարկում էր.

— Ախր, մադամ Իվանովա, ախր հետս հո գերեզման չեմ տանելու։ Ինձ ու Բելոչկային հերիքում է։ Բելինկա, շնիկս, մի էստեղ արի։

5

Գամբրինուսն ունենում էր նաև իր մոդային, սեզոնային երգերը։

Անգլո-բուրական պատերազմի ժամանակ տարածված էր «Բուրական քայլերգը» (հավանորեն հենց այդ ժամանակ էր եղել ռուս և անգլիացի ծովայինների նշանավոր կռիվը)։ Ամեն երեկո առնվազն մի քսան անգամ Սաշկային ստիպում էին նվագել այդ հերոսական պիեսը, վերջում անպայման թափահարում էին գլխարկները, «ուռա» գոռում, իսկ անտարբեր նստածների վրա խեթ-խեթ էին նայում, որը Գամբրինուսում այնքան էլ բարի նախանշան չէր։

Ապա վրա հասան ֆրանս-ռուսական հանդիսությունները։ Քաղաքապետը թթված տեսքով թույլ տվեց «Մարսելյեզ» նվագել։ Ամեն օր սա՛ էլ էին պահանջում կրկնել, բայց ոչ այնքան հաճախ, որքան բուրական քայլերգը, ընդ որում «ուռա»-ն ավելի նվազ էին գոռում ու բոլորովին չէին թափահարում գլխարկները։ Դա նրանից էր, որ, մի կողմից, սրտագին զգացումներ խաղալու շարժառիթներ չկային, մյուս կողմից, Գամբրինուսի հաճախորդները բավարար չափով չէին հասկանում դաշինքի քաղաքական կարևորությունը, բացի դրանից նկատվել էր, որ ամեն երեկո «Մարսելյեզ» են պահանջում և «ուռա» բղավում միշտ միևնույն անձինք։

Մի կարճ ընթացք այն է մոդային պիտի դառնար քեյքուրի եղանակը, և նույնիսկ մի պատահական, զվարճացող վաճառական, առանց ջրարջի մորթու մուշտակը, բարձրաճիտք կրկնակոշիկները և աղվեսի մորթու փափախը հանելու, մի անգամ պար եկավ տակառների արանքում։ Սակայն նեգրական այդ պարը շուտով մոռացվեց։

Բայց ահա վրա հասավ ճապոնական մեծ պատերազմը։ Գամբրինուսի հաճախորդների կյանքը փութկոտ բնույթ ընդունեց։ Տակառիկների վրա թերթեր երևացին, երեկոները վի-

ճում էին պատերազմի մասին։ Ամենախաղաղ, սովորական մարդիկ դարձան քաջաքաջետներ ու ստրատեգներ, բայց նրանցից յուրաքանչյուրը հոգու խորքում դող էր ապրում, նթե ոչ իր, ապա եղբոր կամ ավելի ճիշտ՝ մոտ ընկերոջ համար. այդ օրերին հստակորեն դրսևորվեց աննկատելի և ամուր այն կապը, որը միաձուլում է երկար ժամանակի աշխատանքը, վտանգը և մահվան ամենօրյա մոտալուտ լինելը կիսած մարդկանց։

Սկզբում ոչ ոք չէր կասկածում, որ մենք կհաղթենք։ Սաշկան ինչ-որ տեղից գտավ «Կուրոպատկին-քայլերգը» և մի քսան օր անընդմեջ նվագում էր որոշ հաջողությամբ։ Բայց մի երեկո էլ «Կուրոպատկին-քայլերգը» ընդմիշտ փոխարինվեց մի երգով, որ բալակլավցի ձկնորսները՝ «աղ դրած հույները», կամ ինչպես այստեղ էր ասում էին նրանց՝ «պինդոսներն» էին բերել։

Ա՜խ, ինչի՞, ինչի՞ մեզ զինվոր տարան,
Հմի էլ քշում են հեռու Արևելք,
Մեղավո՞ր ենք մենք, որ էս աշխարքում,
Մի թիզ ու մի մատ ավել ենք ծնվել։

Այդ օրից ի վեր Գամբրինուսում ուրիշ ոչ մի բան չէին ուզում լսել։

Բոլոր երեկոները հենց մենակ լսվում էր.

— Սաշա, էն դարդիմա՜նը։ Բալակլավցիների՜նը։

Երգում ու լալիս և խմում էին սովորականից երկու անգամ ավելի, ինչպես, ի դեպ, այն ժամանակ խմում էր ամբողջ Ռուսաստանը՝ համատարած։ Ամեն երեկո մեկնումեկը գալիս էր հրաժեշտ տալու, կտրիճ էր կտրում, աքլորանում, գդակը գետնովն էր տալիս, սպառնում մեն-մենակ կոտորել բոլոր ճպճպանճապոններին ու բանն ավարտում արցունքախառը դարդիման երգով։

Մի անգամ Սաշկան գարեջրատուն եկավ սովորականից ավելի շուտ։

Բուֆետապանուհին նրա առաջին գավաթը լցրեց ու ինչպես միշտ ասաց.

— Սաշկա, նվագեք ձեր էն եղանակներից մեկը։

Հանկարծ Սաշկայի շրթունքները ծռմռվեցին, ու գավաթն իրար եկավ նրա ձեռքի մեջ։

— Գիտե՞ք ինչ, մադամ Իվանովա,— ասաց նա կարծես վարանած։— Ախր ինձ զինվոր են տանում։ Կռվի։

Մադամ Իվանովան ձեռքերն իրար զարկեց.

— Չի կարող պատահել, Սաշա։ Հանաք եք անո՞ւմ։

— Չէ,— վհատված ու խոնարհ գլուխն օրորեց Սաշկան,— հանաք չեմ անում։

— Բայց ախր ձեր տարիքն անցած է, Սաշա։ Քանի՞ տարեկան եք։

Այդ հարցով մինչ այժմ ոչ ոք կարգին չէր հետաքրքրվել։ Բոլորը կարծում էին, թե Սաշկայի տարիքը նույնն է, ինչ գարեջրատան պատերի մարքիզների, ուկրաինացիների, գորտերի և մուտքը պահպանող, գույնզգույն ներկած Գամբրինուս արքայի տարիքը։

— Քառասունվեց,— Սաշան մտածեց։— Գուցե և քառասունինը։ Ես որը եմ եղել,— ավելացրեց նա տրտմած։

— Բայց դե գնացեք, բացատրեք ում որ պետք է։

— Արդեն գնացել եմ, մադամ Իվանովա, արդեն բացատրել եմ։

— Հետո՞...

— Հետո՝ ինձ ասացին. ջհուդ անտեր, ջհուդ ոեխ, մեկ էլ թե խոսեցիր, բանտ կգցենք... Ու մի հատ էլ հասցրին էստեղիս։

Երեկոյան նորությունը հայտնի դարձավ ամբողջ Գամբրինուսին, և կարեկցանքից Սաշկային մեռելի պես խմեցրին։ Նա փորձում էր առաջվա պես ծռմռվել, ծամածռություններ անել, աչքերը կկոցել, բայց նրա խոնարհ ու ծիծաղելի աչքերից թախիծ ու սարսափ էր կաթում։ Մի աժդահա բանվոր, կաթսայագործ արհեստավոր, հանկարծ հանձն առավ Սաշկայի փոխարեն կռիվ գնալ։ Բոլորի համար պարզ էր նման առաջարկի ակներև հիմարությունը, բայց Սաշկան զգացվեց, արտասվեց, գրկեց կաթսայագործ վարպետին և տեղնուտեղը նրան նվիրեց իր ջութակը։ Իսկ Բելոչկային թողեց բուֆետապանուհուն։

— Մադամ Իվանովա, կնայեք, հա՞, շնիկին։ Գուցեև ետ չգամ, թող ձեզ հիշատակ մնա Սաշկայից։ Բե՜լինկա, շնիկս։ Տեսեք, է՜, լպստում է։ Էհ,էհ, խեղճ շնիկս... Մի բան էլ կխնդրեմ, մադամ Իվանովա։ Տիրոջ մոտ փող ունեմ ստանալիք, ինքներդ ստացեք և ուղարկեք։ Հասցեները կգրեմ կտամ։ Գոմելում հոբեղբոր տղա ունեմ, ընտանիքատեր է, մեկ էլ Ժմերինկայում ապրում է ազգականիս այրին։ Ամեն ամիս ես նրանց... Ինչ

արած, էդպիսի ժողովուրդ ենք մենք՝ հրեաներս... սիրում ենք մեր հարազատներին։ Իսկ ես որբ եմ, մեն-մենակ։ Դե, մնաք բարով, մադամ Իվանովա։

— Գնաք բարով, Սաշա։ Եկեք գոնե մնաս բարովին մի պրոշտի անենք։ Քանի՞ տարի է... Համ էլ, չզղայնանաք, ճամփի վրա եք, խաչակնքեք ձեզ։

Սաշկայի աչքերում խորունկ տխրություն կար, բայց չկարողացավ իրեն զսպել, որ վերջում մի խեղկատակություն չանի.

— Իսկ ի՞նչ կլինի, մադամ Իվանովա, ռուսական խաչից ես չե՞մ սատկի։

6

Գամբրինուսը դատարկվեց ու ամայացավ, ասես որբացավ առանց Սաշկայի ու նրա ջութակի։ Գարեջրատան տերը փորձեց որպես խայծ հրավիրել շրջիկ մանդոլինահարների մի քառյակ, որոնցից մեկը, օպերետայի անգլիացի դերասանի պես հագնված, շեկ այտմորուսներով ու դնովի քթով, վանդականախշ շալվարով ու ականջներից վեր տնկված օձիքով, բեմից զվարճալի քառյակներ էր երգում՝ անպատկառ շարժումներ անելով։ Բայց քառյակը և ոչ մի հաջողություն չունեցավ։ Ընդհակառակն, մանդոլինահարներին սուլեցին ու նրանց վրա նրբերշիկի կտորներ շպրտեցին, իսկ գլխավոր ծաղրածուին տենդերցի ձրկնորսները մի անգամ դնգստեցին Սաշկայի մասին ոչ հարգալից կարծիք հայտնելու համար։

Բայց և այնպես, հին սովորությամբ դեռևս Գամբրինուս էին հաճախում ծովային ու նավահանգստային այն քեֆչիները, որոնց դեռևս մահ ու տանջանքի չէր տարել պատերազմը։ Սկզբում հիշում էին ամեն երեկո.

— Է՛հ, հիմա Սաշկան էստեղ լիներ։ Առանց նրա մարդու հոգին նեղվում է...

— Հա-ա՜... Որտե՞ղ ես հիմա թափառում, մեր ազիզ ընկեր, մեր աթպեր Սաշկա։

Մանչուրիայի հեռու-ու բլու-ուրներում...—

ձգում էր մեկնումեկը սեզոնային նոր երգը, շփոթված լռում, իսկ մեկ ուրիշը անսպասելի ասում էր.

— Վերքերը լինում են թափանցիկ, խոցովի և կոտրած։ Մեկ էլ լինում են պատռած...

Իմ հաղթանակը շնորհավոր,
Քո էլ ձեռքը կտրված...

— Սպասի, մի վնգստա... Մադամ Իվանովա, Սաշկայից լուր բան չկա՞։ Նամակ կամ բացիկ։

Մադամ Իվանովան ամբողջ երեկո թերթ էր կարդում, թերթը բռնած ուղիղ պարզած ձեռքերով, գլուխը ետ գցած ու շրթունքները շարժելով։ Բելոչկան պառկում էր նրա ծնկներին ու խաղաղ ֆսֆսում։ Բուֆետապանուհին արդեն բոլորովին նման չէր իր տեղը կանգնած առույգ նավապետի, իսկ նրա անձնակազմը գարեջրատնով մեկ գնում-գալիս էր ծույլ-ծույլ և քնկոտ։

Սաշկայի ճակատագրին վերաբերվող հարցի վրա դանդաղ շարժում էր գլուխը։

— Ոչինչ չեմ իմանում... Ոչ նամակ կա, ոչ էլ թերթերից է մի բան հայտնի։

Ապա դանդաղ հանում էր ակնոցը, թերթն ու ակնոցը դընում տաքացած, ընդարմացած Բելոչկայի կողքն ու, երեսը թեքած, կամացուկ հեծկլտում։

Ցրբեմն էլ, կռանալով շնիկի վրա, աղիողորմ, սիրտ մաշող ձայնով ասում էր.

— Ի՞նչ է եղել, Բելինկա, ի՞նչ, շնիկս։ Ո՞ւր է մեր Սաշան։ Հը՞։ Ո՞ւր է մեր տերը։

Բելոչկան վեր էր տնկում իր քաղաքավարի մռութիկը, ճրպճրպացնում խոնավ ու սև աչքերն ու բուֆետապանուհու տոնին համապատասխան սկսում էր կամացուկ վնգստալ.

— Ա-ու-ու-ու... Աու-ֆ... Ա-ու-ու...

Բայց ժամանակն ամեն բան հարթեցնում ու քշում-տանում է։ Մանդոլինահարներին փոխարինեցին բալալայկա նվագողները, սրանց՝ ռուսական-մալոռուսական երգչախումբն՝ աղջիկներով և վերջապես Գամբրինուսում մյուսներից ավելի ամուր հաստատվեց հայտնի լյրշկա-հարմոնահարը։ Մասնագիտությամբ գող էր, բայց ամուսնանալուց հետո վճռել էր արդար ուղիներ որոնել։ Նրան վաղուց էին ճանաչում զանազան գինետներից, դրա համար այստեղ էլ էին հանդուրժում, ասենք, նաև պետք էր հանդուրժել. Գամբրինուսի գործերը շատ վատ էին։

Ամիսներ անցան, տարի անցավ։ Սաշկայի մասին այժմ ոչ

ոք չէր հիշում, բացի մադամ Իվանովայից, թեև նա էլ այլևս չէր արտասվում անունը տալիս։ Մի տարի էլ անցավ։ Հավանորեն, Սաշկային մոռացավ նույնիսկ սպիտակ շնիկը։

Բայց, հակառակ Սաշկայի երկմտության, նա ոչ միայն շանսատակ չեղավ ռուսական խաչից, այլև ոչ մի անգամ չվիրավորվեց, չնայած մասնակցեց երեք խոշոր ճակատամարտերի, մի անգամ էլ վաշտի առջևից գրոհի գնաց երաժշտախմբի կազմում, ուր նրան ֆլեյտա նվագելու էին կարգել։ Վաֆանգոուի տակ գերի ընկավ, և պատերազմն ավարտվելուց հետո գերմանական շոգենավով նրան բերեցին այն նույն նավահանգիստը, ուր աշխատում ու անկարգություններ էին անում նրա ընկերները։

Նրա գալստյան լուրը էլեկտրական հոսանքի նման տարածվեց բոլոր նավահանգիստներով ու ծովապատնեշներով, նավակայաններով ու արհեստանոցներով... Երեկոյան Գամբրինուսում այնքան շատ մարդ կար, որ մեծ մասն ստիպված էր ոտքի վրա մնալ, գարեջրի գավաթները գլխների վրայով ձեռքից ձեռք էին անցնում, ու թեև շատերն այդ օրը ծլկեցին առանց վճարելու, Գամբրինուսն առատուր արեց ինչպես երբեք։ Կաթսայագործ վարպետը բերեց կնոջ գլխաշորի մեջ խնամքով փաթաթած Սաշկայի ջութակը, իսկ գլխաշորը տեղնուտեղը ծախեց ու խմեց։ Մի տեղից գտան բերեցին Սաշկայի վերջին նվագակցողին։ Հարմոնահար Յոշկան՝ ինքնասեր ու ինքնահավան մի մարդ, սկսեց պատվախնդրություն խաղալ. «Ես օրավարձով եմ աշխատում, պայմանագիր ունեմ»,— համառորեն կրկնում էր նա։ Բայց տղային պարզապես դռնից դուրս շպրտեցին ու երևի կքոթակեին, եթե Սաշկան պաշտպան չկանգներ։

Հավանորեն, ճապոնական պատերազմի ժամանակների հայրենական հերոսներից և ոչ մեկը նման սրտագին ու բուռն հանդիպում չէր տեսել, ինչպիսին Սաշկային վիճակվեց։ Ուժեղ, կոշտուկապատ ձեռքերը բռնում, օդ էին հանում նրան և այնպիսի ուժով էին վեր-վեր գցում, որ քիչ մնաց Սաշկան ջարդուփշուր լիներ առաստաղին դիպչելով։ Եվ այնպես խլացուցիչ էին բղավում, որ գազի լեզվակները հանդչում էին, իսկ ոստիկանը մի քանի անգամ մտավ գարեջրատուն ու խնդրեց «մի քիչ կամաց, որովհետև փողոցում շատ է բարձր»։

Այդ երեկո Սաշկան նվագեց Գամբրինուսի բոլոր սիրելի երգերն ու պարերը։ Նվագեց նաև գերի ժամանակ սովորած ճապոնական երգերը, բայց դրանք ունկնդիրներին դուր չեկան։ Մադամ Իվանովան, ասես վերակենդանացած, դարձյալ առույգ ու ձգված կանգնած էր նավապետի իր կամրջակին, իսկ Բելկան նստել էր Սաշկայի ծնկներին ու ծղրտում էր ուրախությունից։ Մեկ-մեկ, երբ Սաշկան դադարում էր նվագել, մի որևէ պարզամիտ ձկնորս, նոր միայն ըմբռնելով Սաշկայի վերադարձի հրաշքը, հանկարծ բացականչում էր միամիտ ու բերկրալի զարմանքով.

— Տղե՜րք, ախր Սաշկան է, չէ՞։

Գամբրինուսի սրահները թնդում էին թավաձայն խրխնջոցից և ուրախ հիշոցներից, և Սաշկային կրկին բռնում, գըցում էին մինչև առաստաղ, գոռում էին, խմում, գավաթ զարկում և իրար վրա գարեջուր թափում։

Թվում էր, թե Սաշկան ամենևին չի փոխվել ու չի ծերացել բացակայության ընթացքում. ժամանակն ու պատուհասները չէին ազդում նրա արտաքինի, ինչպես նաև գարեջրատան պահապան ու հովանավոր ծեփածո Գամբրինուսի վրա։ Բայց մադամ Իվանովան, սրտագին կնոջ զգայունությամբ նկատեց, որ Սաշկայի աչքերից ոչ միայն չի անհետացել սարսափի և թախծի այն արտահայտությունը, որ ինքը տեսավ հրաժեշտ տալիս, այլև ավելի խորացել ու զգալի է դարձել։ Սաշան առաջվա պես ծաղրածու էր խաղում, աչքով անում, ճակատի կնճիռներն էր կուտակում իրար վրա, բայց մադամ Իվանովան զգում էր, որ նա ձևացնում է։

7

Ամեն ինչ ընկավ հունի մեջ, ասես ամենևին չէր եղել ոչ մի պատերազմ, ոչ էլ Սաշկան էր գերի ընկել Նագասակիում։ Ճիշտ նույն ձևով՝ հսկա սապոգներով ձկնորսները տոնում էին թառափ և լոքան ձկան հաջող որսը, ճիշտ նույն ձևով պարում էին գող տղերքի ընկերուհիները, և առաջվա նման Սաշկան նվագում էր երկրագնդի բոլոր նավահանգիստներից բերած նավաստիական երգերը։

Բայց արդեն մոտենում էին խառնիխուռն, փոփոխական, բուռն ժամանակները։ Մի երեկո ամբողջ քաղաքը, ասես ահազանգից խռովված, թնդաց, իրար անցավ, ու ոչ սովորական ժամին փողոցները սնացան մարդկանց առատությունից։ Փոքրիկ,

սպիտակ թերթիկները, «ազատություն» հրաշալի բառով հանդերձ, ձեռքից ձեռք էին անցնում, բառ, որն այդ երեկո անթիվ-անհամար անգամներ կրկնում էր անծայրածիր, դյուրահավատ երկիրը։

Վրա հասան մի տեսակ պայծառ, տոնական, ցնծագին օրեր, ու դրանց ճառագումը լուսավորեց անգամ Գամբրինուսի նկուղը։ Գալիս էին ուսանողներ, բանվորներ, ջահել, գեղեցիկ աղջիկներ։ Վառվռուն աչքերով մարդիկ կանգնում էին շատ բան լսած-տեսած տակառների վրա և խոսում էին։ Նրանց ոչ բոլոր ասածներն էին հասկանալի, սակայն խոսքի մեջ հնչող բոցավառ հավատից ու մեծ սիրուց մարդու սիրտն էր թրթռում ու բացվում։

— Սաշկա՜, Մարսելյե՜զ։ Քաշ-շի՜։ Մարսելյե՜զ։

Ոչ, դա ամենևին նման չէր այն «Մարսելյեզին», որ հաղիվ-հազ թույլ տվեց նվագել քաղաքապետը ֆրանս-ռուսական ցնծության շաբաթի ընթացքում։ Փողոցներով անվերջանալի շարքեր էին անցնում կարմիր դրոշներով, երգերով։ Կարմիր ժապավեններ ու կարմիր ծաղիկներ էին հուրհրատում կանանց վրա։ Բոլորովին անծանոթ մարդիկ հանդիպում էին և պայծառ ժպտալով հանկարծ միմյանց ձեռք էին սեղմում...

Բայց այդ ողջ բերկրանքը վայրկենապես չքացավ, ասես սրբվեց, ինչպես մանկան ոտնահետքերը ծովափի ավազից։ Մի անգամ Գամբրինուս ներս ընկավ պրիստավի՝ հաստլիկ, շնչակրտուր, դուրս պրծած աչքերով, շատ հասած լոլիկի պես մուգ կարմիր օգնականը։

— Ի՞նչ։ Ո՞վ է էստեղ տերը,— խռխռացրեց նա։— Բերեք էստե՛ղ տիրոջը։

Նա տեսավ Սաշկային, որը կանգնած էր ջութակը ձեռքին։

— Դո՞ւ ես տերը։ Լռեցե՛ք։ Ի՞նչ։ Հիմնե՞ր եք նվագում։ Էլ ոչ մի հիմն չտեսնեմ։

— Ոչ մի հիմն էլ չի լինի, ձերդ գերազանցություն,— հանգիստ պատասխանեց Սաշկան։

Ոստիկանը կաս-կարմիր կտրեց, ուղիղ Սաշկայի քթին մոտեցրեց վեր տնկած ցուցամատը և սպառնագին թափ տվեց։

— Ոչ մի հի՛մն։

— Լսում եմ, ձերդ գերազանցություն, ոչ մի։

— Ես ձեզ հեղափոխություն ցույց կտամ, ես ձեզ ցո՛ւ-ու-ցույց կտա՜մ։

Պրիստավի օգնականը ռումբի պես դուրս թռավ գարեջրատնից, և նրա գնալուց հետո բոլորի վրա վհատություն ծանրացավ։

Եվ ամբողջ քաղաքի վրա խավար իջավ։ Մռայլ, տագնապալի, նողկալի լուրեր էին պտտվում։ Խոսում էին զգուշությամբ, վախենում էին մատնել իրենց հայացքով, խրտնում իրենց ստվերից, սարսափում սեփական մտքերից։ Առաջին անգամ քաղաքը սարսափով մտածեց այն կոյանոցի մասին որը խոր ու խուլ հորձանք էր տալիս ոտքերի տակ, այնտեղ՝ ներքևում, ծովափին, և ուր այդքան տարիներ քաղաքը շպրտում էր իր թունավոր արտաթորությունները։ Քաղաքը տախտակներ էր փակցնում իր հոյակապ խանութների հայելաշող պատուհաններին, պարեկներ կարգում հպարտ հուշարձանների մոտ և, համենայն դեպս, սքանչելի տների բակերում հրետանի տեղավորում։ Իսկ ծայրամասերում, գարշահոտ խցերում և խարխուլ ձեղնահարկերում սարսռում, աղոթում ու սարսափից լաց էր լինում աստծո ընտրյալ ժողովուրդը՝ բիբլիական բարկացած աստծուց լքյալ, բայց մինչև այժմ էլ հավատացող, որ իր ծանր փորձությունների բաժակը դեռ չի ըմպել մինչև մրուրը։

Ներքևում, ծովի մոտ, գորշ ու լպրծուն աղիների նմանվող փողոցներում գաղտնի աշխատանք էր գնում։ Գիշերները մինչև լույս կրնկի վրա բաց էին գինետների, թեյարանների և օթևանատների դռները։

Առավոտյան ծայր առան ջարդերը։ Այն մարդիկ, որոնք մի օր, համընդհանուր անեղծ բերկրանքից զգացված և գալիք եղբայրության լույսից հուզված, երգելով քայլում էին փողոցներով, նվաճած ազատության խորհրդանիշերի ներքո, այդ նույն մարդիկ գնում էին տպանելու։ Գնում էին ոչ այն պատճառով, որ հրաման ունեին, ոչ էլ որ թշնամանք էին տածում հրեաների նկատմամբ, որոնց հետ հաճախ սերտ մտերմություն էին անում, նույնիսկ ոչ էլ շահախնդրությունից, որ կասկածելի էր, այլ այն պատճառով, որ յուրաքանչյուր մարդու մեջ բուն դրած կեղտոտ, խորամանկ դևը շշնջում էր նրանց ականջին. «Գնացեք։ Ամեն բան անպատիժ կմնա. սպանության արգելված հետաքրքրությունը, բռնության վայելքը, ուրիշի կյանքի վրա ունեցած իշխանությունը»։

Ջարդերի օրերին Սաշկան ազատ-ազատ շրջում էր փողոցներում, իր ծիծաղելի, կապկային, զուտ հրեական արտաքինով։

Նրան ձեռք չէին տալիս։ Նրա մեջ կար հոգեկան այն անհողդողդ համարձակությունը, այն վախի անվախությունը, որն ամեն տեսակ բրաունինգից էլ լավ պաշտպանում է անգամ թուլակազմ մարդուն։ Բայց մի անգամ, երբ տան պատին սեղմված, մի կողմ էր քաշվել փոթորկի պես փողոցի լայնքով մեկ սուրացող ամբոխից, կարմիր շապիկով, սպիտակ գոգնոցով մի քարտաշ հատիչը քաշեց նրա վրա ու ոռնաց.

— Ջհուդ-ո՜ւդ։ Ջա՜րկ ջհուդներին։ Սպանի՜ր...

Սակայն ետևից ինչ-որ մեկը բռնեց նրա ձեռքը.

— Սպասի, գրողի տարած, չե՞ս տեսնում, Սաշկան է։ Հայվանի մինը, ես քու մոր սիրտն ու թոքը...

Քարտաշը կանգ առավ։ Այդ արբեցած, խելագար, զառանցագին պահին նա պատրաստ էր ում ասես սպանել՝ հորը, քրոջը, տերտերին, նույնիսկ ամենաուղղափառ աստծուն, բայց նաև երեխայի պես պատրաստ էր ենթարկվել ամուր կամքի յուրաքանչյուր հրամանի։

Ապուշի պես ատամները բաց ժպտաց, թքեց ու քիթը մաքրեց թևքով։ Բայց հանկարծ աչքովն ընկավ սպիտակ, նյարդային շնիկը, որը դողդողալով Սաշկայի ոտքերին էր կպել։ Արագ կռանալով, բռնեց նրա ետևի թաթերից, բարձրացրեց, գլուխը տվեց մայթի սալերին ու վազեց։ Սաշկան լուռ նրան էր նայում։ Նա վազում էր, ամբողջ մարմնով առաջ ընկած, ձեռքերը պարզած, գլխաբաց, բերանը բաց, խելագարությունից կլորացած ու սպիտակած աչքերով։

Սաշկայի կոշիկները պատած էին Բելոչկայի գլխուղեղի ցայտերով։ Սաշան թաշկինակով մաքրեց ցայտերը։

8

Ապա վրա հասան տարօրինակ ժամանակներ, նման կաթվածահար մարդու երազի։ Երեկոներն ամբողջ քաղաքի և ոչ մի լուսամուտից լույս չէր երևում, բայց փոխարենը վառվում էին կաֆեշանտանների հրեղեն ցուցանակներն ու պանդոկների պատուհանները։ Հաղթողները ստուգում էին իրենց իշխանությունը, դեռևս լիովին չհագեցած անպատիժ կացությունից։ Մանջուրյան փափախներով, բաճկոնակների լամբակներին գեորգիևյան ժապավեններ կպցրած ինչ-որ սանձարձակ մարդիկ շրջում էին ռեստորանից ռեստորան և համառ լկտիությամբ պա-

հանջում ազգային հիմնը նվագել ու հետևում էին, որպեսզի բոլորը ոտքի կանգնեն։ Նմանապես ներխուժում էին մասնավոր բնակարաններ, պրպտում մահճակալների և պահարանների մեջ, պահանջում էին օղի, դրամ ու հիմն, օդը հագեցնելով հարբած զկուտցով։

Մի անգամ տասը հոգով եկան։ Գամբրինուս և երկու սեղան զբաղեցրին։ Իրենց պահում էին ամենաանպատկառ ձևով, սպասավորների հետ խոսում հրամայական, թքում անծանոթ հարեվանների ուսերի վրայով, ոտները դնում էին ուրիշների աթոռներին, գարեջուրը թափում հատակին, պատճառ բռնելով, թե թարմ չէ։ Նրանց ոչ ոք ձեռք չէր տալիս։ Բոլորը գիտեին, որ խուզարկուներ են, և նրանց էին նայում այն գողունի սարսափով ու խորշագին հետաքրքրությամբ, որով հասարակ ժողովուրդը դահիճներին է նայում։ Նրանցից մեկը ակնհայտ պարագլուխ էր խաղում։ Խնթուք Մոտկան էր, շիկամազ, կոտրած քթով ռնգախոս մեկը, որն, ինչպես պատմում էին, ֆիզիկական մեծ ուժի տեր էր, նախկինում՝ գող, ապա՝ հասարակաց տանը անկարգ հյուրերին դուրս շպրտող, ապա՝ սուտենյոր ու խուզարկու, մրկերտված մի հրեա։

Սաշկան «Հողմապարն» էր նվագում։ Հանկարծ Խնթուքը մոտեցավ նրան, ամուր բռնեց աջ ձեռքն և, շրջվելով դեպի սրահը, բղավեց.

— Հի՜մնը։ Ժողովրդական հի՜մնը։ Տղե՜րք, մեր պաշտելի թագավորի պատվին... Հի՜մն։

— Հի՜մնը։ Հի՜մնը,— բուբռացին փափախավոր սրիկաները։

— Հիմնը,— հեռվից միայնակ, անվստահ մի ձայն հնչեց։

Բայց Սաշկան ետ քաշեց ձեռքը ու հանգիստ ասաց.

— Ոչ մի հիմն։

— Ի՞նչ,— ոռնաց Խնթուքը։— Չե՞ս ենթարկվում։ Ա՜խ ես քու, հոտած ջհուդ։

Սաշկան առաջ կռացավ, շատ մոտ Խնթուքին, և ամբողջովին կնճռոտված, ցած իջեցրած ջութակի կոթը բռնած, հարցրեց.

— Իսկ դո՞ւ։

— Ի՞նչ իսկ դու։

— Ես հոտած ջհուդ եմ։ Լավ։ Իսկ դո՞ւ։

— Ես ուղղափառ եմ։

— Ուղղափա՞ռ։ Քանիսո՞վ։

Ամբողջ Գամբրինուսը քրքջաց, իսկ զայրույթից ճերմակ կարած Խնթուքը դարձավ դեպի ընկերները.

— Տղե՜րք,— դողդոջ, արտասվագին ձայնով ասաց մեկ ուրիշի, լսած-սովորած խոսքերը։— Տղե՜րք, մինչև ե՞րբ պիտի տանենք ջհուդների անպատվությունը գահի և սուրբ եկեղեցու հասցեին...

Բայց Սաշկան, կանգնելով իր բարձունքին, մի հնչունով ստիպեց նրան կրկին շրջվել իր կողմը, և Գամբրինուսի հաճախորդներից ոչ մեկը երբեք չէր հավատա, թե այդ ծիծաղելի, ծամածռվող Սաշկան կարող է խոսել այդպես ծանրակշիռ ու ազդու։

— Լսի՜ր,— բղավեց Սաշկան։— Լսիր, շուն շան որդի... Մի երեսդ ցույց տուր տեսնեմ, մարդասպա՜ն... Ինձ նայիր... Դե՜...

Ամեն ինչ ակնթարթի պես արագ կատարվեց։ Սաշկայի ջութակը վեր բարձրացավ, թափով փայլ տվեց օդի մեջ և՝ թրա՜խկ, բարձրահասակ, փափախավոր մարդը իրար եկավ քունքին հասցված զրնգուն հարվածից։ Ջութակը ջարդուփշուր եղավ։ Սաշկայի ձեռքին մնաց միայն կոթը, որը հաղթական պահել էր ամբոխի գլուխներից վեր։

— Տղե՜րք, հաս-սե՜ք,— ոռնաց Խնթուքը։

Բայց հասնելու համար ուշ էր արդեն։ Հուժկու մի պատ շրջափակեց Սաշկային ու ծածկեց նրան։ Միևնույն պատն էլ փափախ դրած մարդկանց փողոց հանեց։

Բայց մեկ ժամ անց, երբ, գործը վերջացնելով, Սաշկան գարեջրատնից մայթ ելավ, մի քանի մարդ հարձակվեցին նրա վրա։ Դրանցից մեկը խփեց Սաշկայի աչքին, սուլեց ու վազեվազ վրա հասած ոստիկանին ասաց.

— Բուլվարնի տեղամաս։ Քաղաքական է։ Հրես նշանս։

9

Այժմ արդեն կրկին ու վերջնականապես Սաշկային թաղված համարեցին։ Ինչ-որ մեկը գարեջրատան մայթին կատարվող ամբողջ տեսարանին ներկա էր եղել ու հայտնել մյուսներին։ Իսկ Գամբրինուսում նստողները փորձված մարդիկ էին, որոնք գիտեին, թե ինչ ասել է Բուլվարնի տեղամաս, և թե ինչ բան է խուզարկուների վրիժառությունը։

Բայց այժմ Սաշկայի ճակատագրով ավելի քիչ էին անհանգստանում, քան առաջին անգամ, և շատ ավելի շուտ մոռացան նրան։ Երկու ամիս անց նրա տեղը նոր ջութակահար էր նստած (իմիջիայլոց, Սաշկայի աշակերտը), որին փնտրել-գտել էր նվագակցողը։

Եվ ահա մի անգամ, երեք ամիս անց, գարնանային խաղաղ մի երեկո, այն ժամանակ, երբ երաժիշտները «Սպասում» վալսն էին նվագում, ինչ-որ բարակ ձայն վախեցած բացականչեց.

— Տղե՜րք, Սաշկան։

Բոլորը շրջվեցին ու վեր ելան տակառիկներից։ Այո, նա էր, կրկնակի հարություն առած Սաշկան, բայց այս անգամ մորուքով, նիհարած, գունատ։ Վրա պրծան նրան, շրջապատեցին, քաշքշեցին, տրորեցին, գարեջրի գավաթներ դեմ տվեցին։ Բայց հանկարծ նույն այն ձայնը բղավեց.

— Տղերք, ձեռքը...

Բոլորը մեկեն սսկվեցին։ Սաշկայի ձախ ձեռքը՝ ոլորված ու ասես ճմռթված, արմունկով հենած էր կողին։ Հավանորեն չէր ծալվում, իսկ մատներն ընդմիշտ շոված էին մնացել կզակի տակ։

— Էդ ի՞նչ է եղել, մեր հարազատ Սաշկա,— վերջապես հարցրեց «Ռուսական հասարակություն» նավի մազախռիվ բոցմանը։

— Է, դատարկ բան է... ջլերն են, թե ինչ է, չգիտեմ,— անհոգ պատասխանեց Սաշկան։

— Հա-ա-ա՜...

Դարձյալ բոլորը լռեցին։

— Ուրեմն, սրանից հետո «Զաբանային» վե՞րջ, — կարեկցանքով հարցրեց բոցմանը։

— «Զաբանայի՞ն»,— հարցը կրկնեց Սաշկան ու աչքերը պայծառացան։— Է՜յ, լսիր,— սովորական վստահությամբ հրամայեց նվագակցողին։— «Զաբանա»։ Այն, ցվայ, դրայն...

Դաշնակահարն արագացրեց ուրախ պարը, անվստահորեն ետ նայելով։ Բայց Սաշկան առողջ ձեռքով գրպանից հանեց մի փոքրիկ, թզաչափ, երկարուկ սև գործիք՝ լեզվակով, լեզվակը բերանը դրեց և ամբողջովին, որքան հնարավորություն էր տալիս նրան խեղանդամված, անշարժ ձեռքը, դեպի ձախ թեքված, այդ սրնգի վրա հանկարծ խլացուցիչ հնչեցրեց «Զաբանան»։

— Հո-հո-հո,— ուրախ քրքիջով արձագանքեցին հանդիսականները։

— Գրողը տանի,— բացականչեց բոցմանը և իր համար միանգամայն անսպասելիորեն, ճարպիկ շարժումով առաջ եկավ ու սկսեց պար գալ, ոտքերը կոկոտացնելով։ Նրա թափից ոգևորված, շրջան մտան այցելուները, կանայք և տղամարդիկ, նույնիսկ սպասավորները, չանալով չկորցնել արժանապատվությունը, ժպիտը դեմքներին դոփդոփում էին տեղները կանգնած։ Նույնիսկ մադամ Իվանովան, մոռացած նավապետի իր պարտավորությունները, գլուխն էր ճոճում սրընթաց պարի տակտով և թեթևակի ճրթացնում մատներով։ Եվ գուցե նույնիսկ ինքը՝ ծեր, հաստաշուրթ, ժամանակից խունացած Գամբրինուսը շարժում էր հոնքերը, ուրախ-ուրախ փողոցի կողմը նայելով, և թվում էր, թե խեղանդամված, կծկված Սաշկայի ձեռքերում խղճուկ, հասարակ այդ շվին երգում էր մի լեզվով, որը, ցավոք, դեռ հասկանալի չէր ոչ Գամբրինուսի բարեկամներին, ոչ էլ իրեն՝ Սաշկային.

— Ոչի՞նչ։ Մարդուն կարելի է հաշմանդամ դարձնել, բայց արվեստն ամեն ինչի կդիմանա ու ամեն բան կհաղթի։

1936

ԻԶՈՒՄՈՒՐԴԸ

Աննման վարգանի, խայտախարիվ խոլստոմերի հիշատակին եմ նվիրում։

1

Չորս տարեկան հովատակ Իզումոուրդը՝ ամերիկյան վազքի վարժեցված, մոխրա-արծաթա-պողպատի համաչափ գույնի խոշոր, վարգարշավի ձին, սովորության համաձայն, կեսգիշերվա մոտ արթնացավ իր փակ մսուրում։ Նրանից աջ և ձախ, և դիմացը, միջանցքից այն կողմ, ձիերը միանման ու վրա-վրա, ապես մեկ տակտով շոր խոտ էին ծամում, ատամներն ախորժաբեր ղրճացնելով ու հազվադեպ փռնչացնելով փոշուց։ Անկյունում, ծղոտի կիտուկի վրա խոմփացնում էր հերթապահ ձիապանը։ Օրերի հաջորդումից և խոմփոցի առանձնահատուկ հընչյուններից Իզումոուրդը գիտեր, որ դա Վասիլին է՝ մի ջահել, որին ձիերը չէին սիրում, որովհետև ախոռում գարշահոտ ծխախոտ էր ծխում, հաճախ հարբած էր մտնում մսուրները, ծնկով փորերին էր խփում, բռունցքը թափահարում էր աչքերի առաջ, կոպտորեն ձգում պախուրցներն ու միշտ բղավում էր ձիերի վրա անբնական, խռպոտ, սպառնագին բասով։

Իզումոուրդը մոտեցավ դռան վանդակին։ Նրա դիմաց, դուրը դռան, իր մսուրում էր կանգնած ջահել, սևաթույր, դեռևս չհասունացած զամբիկ Շչեգոլիխան։ Մթության մեջ Իզումոուրդը չէր տեսնում նրա մարմինը, սակայն ամեն անգամ, երբ նա, խոտից կտրվելով, ետ էր դարձնում գլուխը, նրա խոշոր աչքը մի քանի վայրկյան շողում էր մանուշակագույն գեղեցիկ ցոլանքով, լայնացնելով նուրբ ռունգերը, Իզումոուրդը խորը ներշնչեց, մատակի մաշկի հաղիվ զգալի, բայց թունդ հոտն առավ ու կարճ վրնջաց։ Արագ ետ շրջվելով, զամբիկը պատասխանեց բարալիկ, դողդողացող, քնքուշ ու խաղացկուն խրխինջով։

Տեղնուտեղն իր կողքից, աջից Իզումոուրդը խանդոտ, զայրագին շնչառություն լսեց։ Այդտեղ Օնեգինն էր՝ ծեր, կամակոր ու թխաթույր հովատակը, որը դեռ մեկ-մեկ վազում էր մենարշավների մրցանակների համար։ Երկու ձիերն իրարից բաժանված էին տախտակե բարակ միջնապատով ու չէին կարող մեկը մյուսին տեսնել, բայց քթարմատը դիպցնելով վանդակի աջ եզրին, Իզումոուրդը պարզորոշ զգաց Օնեգինի հաճախակի շնչող այնչերից ելնող, ծամծմած խոտի տաք հոտը... Հովատակներն այսպես որոշ ժամանակ հոտոտեցին միմյանց մթության մեջ, ականջները կիպ կպցրած գլուխներին, վզներն առաջ մեկնած և ավելի ու ավելի զայրանալով։ Եվ հանկարծ երկուսն էլ միանդամից չարացած վրնջացին, խրխնջացին ու դոփդոփեցին սըմբակներով։

— Հան-գի՞ստ, սատանա՛,— քնաթաթախ, սովորական սպառնալիքով բղավեց ձիապանը։

Ձիերը ետ ցատկեցին վանդակից ու զգուշացան։ Վաղուց արդեն նրանք տանել չէին կարողանում միմյանց, բայց հիմա, երբ երեք օր առաջ նույն ախոռը բերեցին նրբակազմ սևաթույր զամբիկին, ինչ սովորաբար չեն անում և ինչ կատարվել էր սոսկ ձիարշավային իրարանցման մեջ՝ տեղ չլինելու պատճառով, օր չէր անցնում առանց մի քանի խոշոր ընդհարումների։ Թե այս-

տեղ, թե շրջանի վրա, թե ջրելատեղը կռվի էին հրավիրում միմյանց։ Սակայն Իզումոուդը ներքուստ որոշ երկյուղ ուներ այդ երկարամարմին, ինքնավստահ հովատակից, շար ձիու նրա սուր հոտից, ուղտային պինդ ադամախնձորից, ներս ընկած մրոայլ աչքերից, հատկապես նրա ամուր, ասես քարե, տարիներից թրծված, վազքից ու նախկին կռիվներից ուժեղացած ոսկորներից։

Ինքն իրեն ձևացնելով, թե ամենևին էլ չի վախենում և որ հիմա ոչինչ տեղի չունեցավ, Իզումոուդը շրջվեց, գլուխն իջեցրեց մսուրի մեջ և սկսեց խոտը խառնշտորել փափուկ, շարժուն ու պիրկ պռոշներով։ Սկզբում նա միայն քմահաճորեն պռանձին խոտեր էր պոկոտում, սակայն շուտով որոճքի համը բերանում հափշտակեց նրան, և նա իսկապես սկսեց կերը վայելել։ Եվ միաժամանակ նրա գլխով դանդաղ ու անտարբեր մտքեր էին անցնում, կերպարների, բույրերի և հնչյունների հուշերով կապակցվելով և հավերժորեն չքանալով այն սև անդունդում, որը տվյալ ակնթարթի առջևում էր ու ետևում։

«Չոր խոտ»,— մտածեց նա և հիշեց ավագ ձիապան Նազարին, որը երեկոյան խոտը բերեց։

Լավ ծերուկ է Նազարը, նրանից միշտ շատ տնավարի՝ սև հացի, մի քիչ էլ խմիչքի հոտ է գալիս, շարժումները թեթև են ու անշտապ, վարսակն ու չոր խոտը նրա օրերին ավելի համեղ են թվում, և հաճելի է լսել, երբ նա, ձին մաքրելիս, կիսաձայն խոսում է իր հետ սիրալիր հանդիմանանքով ու տնքտնքում է շարունակ։ Բայց նրա մեջ մի կարևոր, ձիական բան չկա, և կշռելու տանելիս, սանձերից է զգացվում, որ ձեռքերն անվստահ են և անստույգ։

Վասկան էլ չունի դրանից, ու թեև բղավում, կռվշտում է, բայց բոլոր ձիերն էլ գիտեն, որ վախկոտ է, ու չեն վախենում նրանից։ Չի քշել էլ չգիտե, քաշքշում է, իրար անցնում։ Երրորդ ձիապանը, որի մի աչքը կույր է, լավն է երկուսից էլ, սակայն ձի չի սիրում, դաժան է և անհամբեր, ձեռքերն էլ ճկուն չեն, ասես փայտից լինեն։ Իսկ չորրորդը՝ Անդրիյաշկան, դեռ բոլորովին երեխա է, կաթնակեր մտրուկի պես խաղ է անում ձիերի հետ, գողունի համբուրում ձիերի վերին պռոշն ու ռունգերի արանքը՝ դա առանձնապես հաճելի չէ ու ծիծաղելի է։

Իսկ այն բարձրահասակ, նիհար ու կորամեջքը, որ սափրում է երեսը և ոսկյա շրջանակով ակնոց դնում, օ՜, բոլորովին

ուրիշ է։ Ամբողջովին ասես մի արտակարգ տեսակի ձի լինի՝ իմաստուն, ուժեղ ու անվախ։ Նա երբեք չի բարկանում, երբեք մտրակով չի խփում, անգամ չի սպառնում, այնինչ, երբ նստում է ամերիկյան կառքին, ապա որքա՜ն բերկրալի, հպարտ ու հաճելի-վախենալի է լինում նրա ուժեղ, խելացի, ամեն բան հասկացող մատների յուրաքանչյուր նշանին ենթարկվելը։ Միայն նա է կարողանում Իզումոուդին հասցնել երջանիկ այն ներդաշնակության վիճակին, երբ մարմնի բոլոր ուժերը լարվում են՝ վազքի արագության մեջ, ու դա շատ-ուրախ, շատ թեթև բան է։

Եվ անմիջապես Իզումոուդը երևակայությամբ տեսավ ձիարշավարան տանող կարճ ճանապարհը և այդ ճանապարհին ընկած համարյա յուրաքանչյուր տունը և յուրաքանչյուր թումբը, տեսավ ձիարշավների ավաղը, տրիբունաները, վազող ձիերին, խոտի կանաչությունը և ժապավենի դեղնությունը։ Հանկարծ հիշեց եռամյա մուգ շագանակագույն ձիուն, որի ոտքն օրերս, մարզավազքի ժամանակ դուրս ընկավ, ու նա սկսեց կաղալ։ Եվ մտածելով նրա մասին, Իզումոուդը մտովի փորձեց ինքն էլ կաղալ։

Խոտի մի փունջ Իզումոուդի բերանում առանձնահատուկ, անսովոր նուրբ համով զանազանվեց։ Հովատակը երկար ծամեց այդ խոտը, և երբ կուլ տվեց, որոշ ժամանակ դեռ բերանի մեջ զգում էր թառամած ինչ-որ ծաղիկների և բուրավետ չոր խոտի նուրբ հաճելի հոտը։ Տարտամ, լիովին անորոշ, հեռավոր մի հուշ անցավ ձիու գլխով։ Դա նման էր այն դեպքերին, ինչ երբեմն պատահում է ծխող մարդկանց, երբ գլանակի պատահական ումպը փողոցում հանկարծ անզսպելի ակնթարթով վերականգնում է երևակայության մեջ կիսախավար միջանցքը՝ հնամենի պաստառներով և միայնակ մոմը ամանեղենի պահարանի վրա, կամ գիշերային երկար ճանապարհը, զանգակների համաչափ զրնգոցն ու անուշ նիրհը, կամ կապույտ անտառը՝ մոտերքում, աչք կուրացնող ձյունը, մոտեցող հետապնդման աղմուկը, մոլեգին անհամբերությունը, որ ստիպում է ծնկները դողալ, և ահա մի պահ քնքշորեն, տխրալի և անհաստատ շոյելով հոգին, գալիս-անցնում են վաղեմի, մոռացված, հուզիչ ու այժմ անորսալի զգացումներ։

Մինչ այդ մսուրների վերևի սև ու փոքրիկ պատուհանը, որ մինչև հիմա չէր երևում, սկսեց մոխրագույն դառնալ և աղոտ կերպով գծագրվել մթության մեջ։ Ձիերն ավելի ու ավելի ծուլորեն

լին ծամում և մեկը մյուսի ետևից տնքում՝ ծանր ու փափուկ։ Բակում ծանոթ ձայնով կանչեց աքաղաղը՝ շեփորի պես զրնգուն, կայտառ ու հատու։ Եվ դեռ երկար ու շորս բոլորը՝ այստեղ-այնտեղ, առանց ընդհատվելու տարածվեց մյուս աքաղաղների հերթական կանչը։

Գլուխն իջեցնելով մսուրի մեջ, Իզումոուդը ջանում էր բերանի մեջ պահել, նորից ստեղծել ու բորբոքել տարօրինակ այն համը, որ իր մեջ արթնացրեց անմոռանալի հիշողության նուրբ, հմայիչ ֆիզիկական արձագանքը։ Սակայն վերակենդանացնել չհաջողվեց, և իր համար աննկատելիորեն, Իզումոուդը նիրհեց։

2

Նրա ոտքերն ու մարմինը անթերի էին, կատարյալ ձև ունեին, դրա համար էլ միշտ կանգնած էր քնում, թեթևակի ետուառաջ ճոճվելով։ Երբեմն նա ցնցվում էր, և այդ ժամանակ նրա խոր քունը մի քանի վայրկյանով թեթև ու զգայուն նիրհի էր փոխվում, բայց քնի ոչ երկարատև բոպեներն այնքան խորն էին, որ այդ ընթացքում հանգստանում ու թարմանում էին բոլոր մկանները, նյարդերն ու մաշկը։

Հենց լուսաբացից առաջ երազում նա տեսավ գարնան վաղ առավոտը, կարմիր արշալույսը հողի վրա և բուրավետ ցածրիկ մարգագետինը։ Խոտն այնքան խիտ ու հյութեղ էր, այնպես վառ, հելիոթային-սքանչելի կանաչ և այնպես նուրբ վարդագույնով էր պատած արշալույսից, ինչպես մարդիկ ու կենդանիները շատ վաղ հասակում են տեսնում միայն, և ամենուրեք դողդոջ կրակների պես ցողն էր շողշողում։ Թեթև ու նոսր օդի մեջ զանազան բույրերը զարմանալի հստակ են բուրում։ Վաղորդյան զովի միջով ծխի հոտն է հասնում, որ կապույտ ու թափանցիկ ելնում է գյուղական ծխնելույզից, մարգագետնի բոլոր ծաղիկները տարբեր են բուրում, ցանկապատից այն կողմ անվահետքերով գծագրված խոնավ ճանապարհի վրա բազմաթիվ հոտեր են խառնվել. թե մարդու հոտ կա, թե կուպրի, թե ձիու թրիքի, թե փոշու, անցնող նախրից նոր կթած կաթի հոտ է գալիս, ցանկապատի եղևնափայտի ձողաններից՝ բուրավետ խեժի հոտ։

Իզումոուդը՝ յոթամսական մի քուռակ, աննպատակ սլանում է դաշտով, գլուխը ցած կախած ու ետևի ոտներով տրտինգ տալով։ Ամբողջովին կարծես օդեղեն լինի և ամենևին չի զգում իր

մարմնի քաշը։ Երիցուկի ճերմակ բուրավետ ծաղիկները ետ-ետ են փախչում նրա ոտքերի տակ։ Նա սլանում է ուղիղ դեպի արևը։ Թաց խոտը մտրակում է կոճերը, հոդերը և մռացնում է դրանք, մրսեցնում։ Կապույտ երկինք, կանաչ խոտ, ոսկե արեգակ, սքանչելի օդ, ջահելության, ուժի և արագ վազքի արբեցած զմայլանք։

Բայց ահա լսում է Գարճ, անհանգիստ, փաղաքուշ ու կանչող խրխինջ, որն այնպես ծանոթ է իրեն, որ միշտ ճանաչում է հեռվից, հաղարավոր այլ ձայների միջից։ Գլխապատառ վազքն ընդհատվում է, մի վայրկյան ականջ դնում, գլուխը ցից պահած, բարակ ականջները շարժելով, թավ ու կարճ պոչը ավելի պես բացած, ապա պատասխանում է երկար ու կլկլան վրնջոցով, որից ցնցվում է նրա բարեկազմ, նիհար, երկարոտն մարմինն ամբողջովին, ու սլանում է մոր մոտ։

Մայրը՝ ոսկրոտ, ծեր ու հանգիստ մի մատակ, թաց մռութը բարձրացնում է խոտի միջից, արագ և ուշադիր հոտոտում քուռակին ու անմիջապես սկսում նորից ուտել, ասես շտապում է անհետաձգելի գործն ավարտել։ Ճկուն վիզը թեքելով նրա փորի տակ, քուռակը սովորականի պես պոչներով ետևի ոտների արանքն է շոշափում, գտնում է տաք ու ձիգ պտուկը, ամբողջովին լի քաղցը, մի քիչ էլ թթվաշ կաթով, որը բարակ, ջերմ շիթերով բերանի մեջ է ցայտում, և խմում է անդադար, չկարողանալով կտրվել։ Մայրն ինքն է նրանից պոկում գավակը՝ և ձեվացնում, թե կամենում է կծել քուռակի աճուկը։

Ախոռում լիովին լուսացավ։ Մորուքավոր, ծեր ու գարշահոտ այծը, որ ձիերի մեջ էր ապրում, մոտեցավ ներսից ձողով փակած դռանը, և ետ՝ ձիապանին նայելով, մկկաց։ Ոտաբոբիկ Վասկան, փոչոտ գլուխը քորելով, գնաց դուռը բացելու։ Թեթևակի ցուրտ, աշնանային կապույտ, թունդ առավոտ էր։ Բաց արած դռան ուղղակիորեն քառակուսին անմիջապես պարուրվեց ախոռից ելնող տաք գոլորշիով։ Եղյամի և թափված տերևների հոտը կամացուկ անցավ մսուրների վրայով։

Ձիերը լավ գիտեին, որ հիմա վարսակ պիտի բերեն, և անհամբերությունից ցածրաձայն ֆռչացնում էին վանդակների մոտ։ Անկշտում ու կամակոր Օնեգինը սմբակով խփում էր փայտամածին և իր գեշ սովորությամբ կրծոտում մսուրի երկաթապատ ծամծմված կողը, ձգում էր վիզը, օդ կուլ տալիս և զկրոտում։ Իզումոուդը մռութն էր քորում ցանկապատի վրա։

Եկան մյուս ձիապանները՝ չորսն էին, և երկաթյա չափման-

ներով սկսեցին վարսակ բաժանել։ Մինչ Նազարը ծանր, խշխշան վարսակը Իզումոուդի մսուրը կլցներ, հովատակն իրար անցած, մռուին էր խոթում մեկ ծերուկի ուսի վրայով, մեկ ձեռքերի տակով, տաք ռունգերը թրթռացնելով։ Ձիապանը, որին հավանորեն դուր էր գալիս հեզաբարո այդ ձիու անհամբերությունը, դիտմամբ չէր շտապում, մսուրը պատնեշում էր արմունկներով և բարեսիրտ կոպտությամբ փնթփնթում.

— Մի տես է՛, անկշտում գազան... Փը՛ռռ, համբերի... Ես քու... Մի հատ էլ մոթովդ տուր։ Ես քեզ տալ ցույց կտամ։

Մսուրների վերևի փոքր պատուհանից շեղորեն ցած ձգվեց արեգակի քառանկյուն զվարթ սյունը, որի մեջ միլիոնավոր ոսկե փոշեհատիկներ էին պարսվում, բաժանված պատուհանի շրջանակի երկարուկ ստվերներով։

3

Իզումոուդը նոր էր վերջացրել վարսակը, երբ եկան նրան բակ հանելու։ Արդեն տաքացել էր, և հողը փոքր-ինչ փափկել էր, բայց ախոռի պատերը դեռ ճերմակ էին եղյամից։ Ախոռից հենց նոր հանած թրիքի կույտերից թանձր գոլորշի էր ելնում, և թրիքի մեջ քջուջ անող ճնճղուկները բորբոքված ծլվլում էին, ասես իրար հետ կռվշտելով։ Դռան մեջ գլուխն իջեցնելով և զգուշությամբ շեմն անցնելով, Իզումոուդն ուրախացած, խորը ներշնչեց բարկ օդը, ապա թափ տվեց վիզն ու ամբողջ մարմինը և հնչեղ փռշտաց։ «Առողջություն»,— լրջորեն ասաց Նազարը։ Իզումոուդը տեղում դադար չէր առնում։ Թափով շարժումներ էր ուզում, աչքերին ու ռունգերին սրընթաց խփող օդի խտղտացնող զգացողություն, սրտի տաք բաբախ էր ուզում, խոր շնչառություն։ Պարանով կապված, նա խրխնջում էր, պար գալիս ետևի ոտների վրա, և վիզը կողք թեքելով, ետ, սևաթույր զամբիկի կողմն էր խեթում իր խոշոր, սև, սպիտակուցների վրա կարմիր երակներ ունեցող աչքը։

Ուժ տալուց շնչահեղձ, Նազարը գլխից վեր բարձրացրեց ջրով լի դույլը և լցրեց հովատակի մեջքին, վզակոթից մինչև պոչը։ Իզումոուդին ծանոթ, առույգացնող, դուրեկան և իր մըշտական անսպասելիությամբ վախենալի զգացողություն էր դա։ Նազարն էլի ջուր բերեց ու շփեց նրա կողերի, ոտների ու կրծքի վրա և պոչարմատի տակ։ Ու ամեն անգամ նա կոշտությամբ

ափով ամուր քսում էր բրդի ուղղությամբ, ջուրը քամելով։ Ետ նայելով, Իզումոուդը տեսնում էր իր բարձր, մի քիչ կախ ընկած գավակը, որ հանկարծ մգացել ու փայլ էր բռնել արևի տակ։

Մրցարշավի օր էր։ Իզումոուդը դա գիտեր առանձնահատուկ նյարդային շտապողականությունից, որով ձիապաններն իրար էին անցել ձիերի մոտ։ Որոշ ձիերի, որոնք իրանի կարճության պատճառով սովորություն ունեին ոտքերը պայտերով վիրավորել, կոճերին կաշվե սոնապաններ էին հագցնում, մյուսների ոտքերը փաթաթում էին քաթանե շերտերով, վերսմբակային հոդից մինչև ծունկը, կամ առջևի ոտներից ետ, կրծքի տակ լայն, եզրակար մորթիով քրտնակալներ կապում։ Կառասրահից հանում էին երկանիվ, թեթև, բարձր նստիքներով ամերիկյան վարգակառքերը, որոնց մետաղյա ճաղերը զվարթորեն շողշողում էին պտտվելիս, իսկ կարմիր անվակալներն ու կարմիր, լայն առեղները փայլում էին նոր քսած լաքից։

Իզումոուդն արդեն մաքուր շորացված, խոզանակներով մաքրված ու բրդյա թաթպանով շփված էր, երբ եկավ ախոռի գլխավոր ձիավարը՝ անգլիացին։ Այդ բարձրահասակ, նիհար, քիչ կուզիկ, երկարաբազուկ մարդուն միակերպ հարգում ու նրանից վախենում էին թե ձիերը, թե մարդիկ։ Դեմքը սափրված էր, արևառ, պինգ ու բարակ, ծաղրական երանգի կեռ շրթունքներ ուներ։ Ոսկյա շրջանակով ակնոց էր կրում, որի տակից երկնագույն աչքերը նայում էին սևեռ, համառ ու հանգիստ։ Ձիերի խնամքին հետևում էր՝ բարձրաձիտք սապոգներով երկար ոտքերը չոած, ձեռքերը խոր թաղած շալվարի գրպանների մեջ, սիգարը ծամելով բերանի մեկ այս, մեկ մյուս անկյունում։ Մորթե օձիքով մոխրագույն բաճկոնակ էր հագել, նեղ եզրերով քառանկյուն, երկար շքոցով սև կարտուզ դրել գլխին։ Երբեմն նա հատու, անփույթ տոնով կարճ դիտողություններ էր անում, և անմիջապես բոլոր ձիապաններն ու աշխատողները գլուխները նրա կողմն էին դարձնում, իսկ ձիերը ականջները լարում դեպի նա։

Նա հատկապես հետևում էր Իզումոուդի լծելուն, զննելով ձիու մարմինը՝ մազափնջից մինչև սմբակները, և Իզումոուդը, իր վրա զգալով այդ ստույգ, ուշադիր հայացքը, հպարտությամբ ցցում էր գլուխը, մի թեթև թեքում ճկուն վիզն ու տնկում բարակ, թափանցիկ ականջները։ Հեծյալն ինքը փորձեց փորքաշի ամրությունը, մատը մտցնելով դրա ու փորի արանքը։ Հետո ձիերի վրա մոխրագույն, կտավե տապաստներ գցեցին, կարմիր եզ-

բերով, աչքերի մոտ կարմիր անցքերով ու ետևի ոտների մոտ կարմիր անվանագրերով։ Երկու ձիապան՝ Նազարը և միաչքանին, երկու կողմից առան Իզումոուդի սանձերն ու տարան ձիարշավարան, լավ ծանոթ սալահատակի վրայով, քարաշեն մեծ շենքերի ցանցառ երկու շարքերի արանքով։ Մինչև վարգաշրջան քառորդ վերստ ճանապարհ էլ չէր մնացել։

Ձիարշավարանի բակում արդեն շատ ձիեր կային, նրանց ման էին ածում շրջանով, բոլորին մեկ ուղղությամբ, այն ուղղությամբ, որով նրանք վազում են արշավի ժամանակ, այսինքն ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ։ Բակի խորքում ման էին ածում ուղեկցող ձիերին, որոնք խոշոր չէին, ամուր ոտքեր ունեին, կարճ խուզած պոչեր։ Իզումոուդն իսկույն ճանաչեց սպիտակ փոքրիկ հովատակին, որը միշտ իր կողքով էր սլանում, և երկու ձիերն էլ մեղմ ու քնքուշ վրնջացին, ի նշան ողջույնի։

4

Ձիարշավարանում զանգերը զարկեցին։ Ձիապանները Իզումոուդի վրայից վերցրեցին տապաստը։ Անգլիացին, աչքերն ակնոցի տակ կկոցելով արևից և երկար ու դեղին, ձիու ատամները մերկացրած, մոտեցավ, ձեռնոցները կոճկելով, մտրակը թևատակին։ Ձիապաններից մեկը Իզումոուդի համար փարթամ, մինչև կոճերը հասնող փետրապոչ ընտրեց ու խնամքով դրեց ամերիկյան վարգակառքի նստիքին, այնպես որ դրա բացգույն վերջավորությունը կախվեց ետևից։ Դյուրաթեք առեղը ձիգ ճոճվեց մարմնի ծանրության տակ։ Իզումոուդը ետ նայեց ու տեսավ ձիավարին, որը նստած էր համարյա իր գավակին կպած, ոտքերն առաջ մեկնած ու առեղի երկայնքով շոռած։ Ձիավարն անշտապ առավ սանձերը, միավանկ բղավեց ձիապաններին, ու նրանք միանգամից թողեցին ձեռքերը։ Առաջիկա վազքից ուրախացած Իզումոուդն առաջ նետվել էր ուզում, սակայն ուժեղ ձեռքերով զսպված, մի թեթև բարձրացավ առջևի ոտների վրա, վիզը թափ տվեց ու լայն, նոսր վարգով դարպասից ձիարշավարան ելավ։

Փայտյա պատնեշի երկայնքով, վերստանոց ձվածիր կազմած, փռված էր լայն վազքուղին, ծածկված դեղին ավազով, որը թեթևակի խոնավ էր ու խիտ, դրա համար էլ դուրեկան զսպանակվում էր ոտների տակ, ետադարձ ճնշում հաղորդելով դրանց։

Սմբակների սուր հետքերը և դոդերի գուտապերչի թողած հավասար, ուղիղ շերտերը ակոսել էին ժապավենը։

Կողքից ձգվում էր տրիբունան՝ փայտյա բարձր մի շինություն, ձիու երկու հարյուր մարմնաչափ երկարությամբ, որտեղ գետնից մինչև բարակ գերանների վրա պահվող տանիքը, սարի պես շարժվում ու աղմկում էր մարդկային սև ամբոխը։ Սանձերի թեթև, հաղիվ որսալի շարժումից Իզումոուդը հասկացավ, որ կարող է ընթացքն արագացնել ու երախտագիտորեն ֆնչացրեց։

Նա գնում էր համաչափ, թափ առած վարգով, համարյա մեջքը չշարժելով, վիզն առաջ ձգած ու փոքր-ինչ ձախ առեղին մոտեցրած, մոութն ուղիղ պարզած։ Նոսր, թեև արտասովոր երկար քայլքի պատճառով նրա վազքը հեռվից սրագության տպավորություն չէր թողնում, թվում էր, թե վարգաձին առանց շտապելու ճանապարհն է չափում առջևի՝ կարկինի պես ուղիղ ոտներով, սմբակների ծայրերը դիպցնելով գետնին։ Դա իսկական ամերիկյան վարգաձև էր, ըստ որի ամեն ինչ հանգեցվում է նրան, որպեսզի հեշտացվի ձիու շնչառությունը և նվազեցվի օդի դիմադրությունը՝ ծայր աստիճան, ըստ որի վերացվում են վազքի համար անհարկի, ուժերն ապարդյուն սպառող բոլոր շարժումները և համաձայն որի ձևի արտաքին գեղեցկությունը զոհաբերվում է թեթևությանը, չորությանը, երկարատև շնչառությանն ու վազքի եռանդին, ձիուն վերածելով կենդանի ու անթերի մի մեքենայի։

Հիմա, երկու վարգարշավների ընդմիջմանը, ձիերի նախապատրաստումն էր ընթանում, որը միշտ արվում է նրա համար, որպեսզի կենդանիների շնչառությունը բացվի։ Շատ ձիեր էին վազում դրսի շրջանով, Իզումոուդի հետ մեկ ուղղությամբ, իսկ ներսի շրջանում՝ հանդիպակաց։ Մոխրագույն, խալ-խալ, բարձրահասակ ու ճերմակամորթ, զտարյուն օլովյան վարգաձին, վիզը թեք ու կոր, պոչը փողի պես ցցած և նման տոնավաճառային ձիու, անցավ Իզումոուդից։ Նա ցնցվում էր ամբողջ ճարպոտ, լայն, քրտինքից արդեն մգած կրծքով և խոնավացած աճուկներով, առջևի ոտները ծնկներից ցած կողք շպրտելով, և ամեն քայլափոխին նրա փայծաղը բիկբիկում էր բարձրաձայն։

Ապա ետևից մոտեցավ նրբակազմ, երկարամարմին, խառնածին աշխետ զամբիկը, մուգ ու ցանցառ բաշով։ Նա նույնպես սքանչելի վարժեցված էր ամերիկյան նույն սիստեմով, ինչպես Իզումոուդը։ Կարճ ու խնամված բուրդը փայլ էր տալիս վրան,

երանգներ ընդունելով մաշկի տակ՝ մկանների շարժումներից։ Մինչ ձիավարները ինչ-որ բանի մասին կխոսեին, ձիերը որոշ ժամանակ կողք-կողքի էին վազում։ Իզումոուդը հոտոտեց զամբիկին և արդեն հետը խաղ անել էր ուզում, սակայն անգլիացին թույլ չտվեց, և նա հնազանդվեց։

Նրանց ընդառաջ կատարյալ վարգով սլացավ-անցավ հսկայամարմին սևաթույր մի հովատակ, ամբողջովին փաթաթված վիրակապերով, ծնկապաններով ու քրտնակալներով։ Զախ առեղն առաջ էր մղված, կես արշինով աջինից երկար, իսկ գլխավերևում ամրացված օղի միջով մետաղյա զսպիչ գոտին էր անցնում, որը վերևից ու երկու կողմերից անգթորեն օղակել էր ձիու նյարդային քթարմատը։ Իզումոուդը և զամբիկը միաժամանակ նայեցին նրան, և երկուսն էլ վայրկենապես գնահատեցին անսովոր ուժի, արագության և դիմացկունության տեր, բայց սարսափելի կամակոր, ինքնասեր ու նեղացկոտ հովատակին։ Հովատակի ետևից անցավ ծիծաղելիորեն փոքրամարմին, բաց մոխրագույն ու զարդարված ջահել մի հովատակ։ Կողքից կարող էր թվալ, թե նա սլանում է անհավանական արագությամբ. այնքան հաճախակի էր դոփդոփում, այնքան էր բարձրացնում ծնկները և այնպիսի ջանադիր, գործնական արտահայտություն կար նրա գեղեցիկ ու փոքր գլխի և կորացրած վզի մեջ։ Իզումոուդը լոկ արհամարհանքով խեթեց նրան ու շարժեց նրա կողմի ականջը։

Մյուս ձիավարը խոսակցությունն ավարտեց, բարձրաձայն ու կարճ ծիծաղեց, ասես խրխնջաց, և զամբիկին թողեց ազատ վարգի։ Զին առանց որևէ ճիգի, հանգիստ, կարծես վազքի արագությունն ամենևին իրենից կախված չէր, պոկվեց Իզումոուդից ու առաջ վազեց, սահուն տանելով իր հարթ, փայլուն մեջքը՝ ողնաշարի ուղղությամբ ձգված հալիվ նկատելի մուգ փոկով։

Բայցև իսկույն թե՛ Իզումոուդից, թե՛ նրանից անցավ ու շուտով ետ թողեց քառատրոփ սլացող բոցագույն դեղին մի վարգաձի, մեծ ու սպիտակ բիծը քթարմատին։ Նա վազում էր հաճախակի երկար ցատկերով, մեկ ձգվելով ու հակվելով գետնին, մեկ օդի մեջ համարյա միացնելով առջևի ու ետևի ոտները։ Ձիավարը, որ ամբողջ մարմնով ետ էր ընկել, ոչ թե նստած, այլ պառկած էր նստիքին, ձգված երասաններից կախված։ Իզումոուդը բորբոքվեց ու տաքացած մի կողմ շպրտվեց, բայց անգլիացին աննկատելիորեն քաշեց սանձերը, և նրա ձեռքերը, ճկուն և ձիու յուրաքանչյուր շարժման նկատմամբ զգայուն ձեռքերը հանկարծ

ասես երկաթյա դարձան։ Տրիբունայի մոտ շեկ հովատակը, որ մի շրջան էլ էր հասցրել վազել, նորից անցավ Իզումոուդից։ Մինչ այժմ սլանում էր քառատրոփ, բայց արդեն փրփուրի մեջ կորած էր, աչքերն արյունակալած էին ու շնչում էր խռպոտ։ Առաջ թեքված ձիավարն ամբողջ ուժով մտրակում էր նրան՝ մեջքի երկարությամբ։ Վերջապես ձիապաններին հաջողվեց դարպասի մոտ կտրել նրա ճանապարհն ու բռնել երասանները՝ մոթի մոտ։ Ձիարշավարանից նրան տարան ամբողջապես թրջված, շնչահեղձ, նա դողացնում էր և պառավել էր մի բոպեում։

Իզումոուդը ևս կես շրջան արեց կատարյալ վարգով, ապա թեքվեց վազքահրապարակը լայնքով հատող նեղ ճանապարհը և դարպասով մտավ բակ։

5

Ձիարշավարանում մի քանի անգամ զանգ զարկեցին։ Բաց դարպասի մոտով մեկ-մեկ կայծակի պես սլանում էին վարգաձիերը, տրիբունայի վրա մարդիկ հանկարծ սկսում էին բղավել ու ծափ տալ։ Իզումոուդը մյուս վարգաձիերի շարքում արագարագ քայլում էր Նազարի կողքով, թափահարելով ցած իջեցրած գլուխը և շարժելով ականջները՝ քաթանե պատյանների մեջ։ Վարժավազքից արյունը կայտառ ու ջերմ բաբախում էր նրա երակներում, շնչառությունն ավելի խորն ու ազատ էր դառնում, մարմնի հանգստանալուն ու սառելուն զուգընթաց, բոլոր մկանների մեջ կրկին վազելու անհամբեր ցանկություն էր զգացվում։

Կես ժամի չափ անցավ։ Ձիարշավարանում դարձյալ զանգ զարկեցին։ Հիմա ձիավարը վարգակառք նստեց առանց ձեռնոցների։ Նա ճերմակ, լայն, կախարդական ձեռքեր ուներ, որոնք Իզումոուդին կապվածություն և վախ էին ներշնչում։

Անգլիացին անշտապ մտավ ձիարշավարան, որտեղից իրար վրա բակ էին մտնում վարժավազքն ավարտած ձիերը։ Շրջանի վրա մնացին մենակ Իզումոուդը և այն հսկայական սևաթույր հովատակը, որը հանդիպակաց էր վազել քիչ առաջ։ Տրիբունան վարից վեր սկսեց էր տալիս մարդկային սև զանգվածով, և այդ սև զանգվածի մեջ անհամար քանակությամբ, ուրախ ու խառնիխուռն ցոլցլում էին դեմքեր ու ձեռքեր, պեսպիսի հովանոցներ ու գլխարկներ, և թեթևությամբ տատանվում էին ծրագրերի սպիտակ թերթիկները։ Աստիճանաբար արագացնելով վազքը և

վազելով տրիբունայի մոտով, Իզումոուդը զգում էր, որ հազարավոր աչքեր անթարթ իրեն են հետևում, ու նա հաստատ հասկանում էր, որ այդ աչքերն իրենից սպասում են արագ շարժումներ, ուժերի լիակատար լարում, սրտի հուժկու բաբախ, այդ ըմբռնումը նրա մկաններին երջանիկ թեթևություն ու սեթևեթ պրկություն էր հաղորդում։ Ծանոթ ճերմակ փոքրիկ հովատակը, որին մի տղա էր հեծնել, սեղմ քառատրոփով վազում էր աջ կողքից։

Համաչափ, սահուն վարգով, մարմինը թեթևակի ձախ թեքած, Իզումոուդը կտրուկ շրջադարձ կատարեց ու գնաց մոտենալու կարմիր օղակով սյունին։ Ձիարշավարանում կարճ զանգ զարկեցին։ Անգլիացին քիչ նկատելի ուղղվեց նստիքի վրա, և նրա ձեռքերը մեկեն ամրացան։ «Հիմա գնա, բայց ուժերդ խնայիր։ Դեռ շուտ է»,— հասկացավ Իզումոուդը և ի նշան այն բանի, որ հասկացել է, մի վայրկյան ետ շրջվեց ու նորից ուղիղ տնկեց իր բարակ, զգայուն ականջները։ Ճերմակ փոքրիկ հովատակը համաչափ վազում էր կողքով, քիչ ետևում։ Իզումոուդն իր հետնաբաշի մոտ լսում էր նրա թարմ, համաչափ շնչառությունը։

Կարմիր սյունը մնացել էր ետևում, ևս մի կտրուկ շրջադարձ, վազքուղին ուղղվում է, երկրորդ տրիբունան, մոտենալով, սևանում ու հեռվից խայտաբղետ է դառնում՝ աղմկող ամբոխով և արագորեն աճում է ամեն քայլափոխի հետ։ «Էլի՛,— թույլ է տալիս ձիավարը,— էլի՛, էլի՛»։ Իզումոուդը փոքր-ինչ տաքանում և ուզում է ամբողջ ուժերը լարել վազքի մեջ։ «Կարելի՞ է արդյոք»,— մտածում է նա։ «Ոչ, դեռ շուտ է, մի անհանգստացիր,— հանգստացնելով պատասխանում են կախարդական ձեռքերը։— Հետո»։

Երկու հովատակն էլ մրցանակային սյուներն անցնում են վայրկյանը վայրկյանին, բայց երկու տրիբունաները միացնող տրամագծի հակադիր կողմերից։ Ձիգ կապած թելի թեթև դիմադրությունն ու դրա արագ պոռթկումը մի պահ ստիպում են Իզումոուդին խլշել ականջները, սակայն իսկույն ևեթ մոռանում է դրա մասին, ամբողջովին համակված ուշադրությամբ՝ հանդեպ կախարդական ձեռքերի։ «Մի քիչ էլ։ Ջտաքանաս։ Հավասար գնա»,— հրամայում է ձիավորը։ Սև, ալեկոծվող տրիբունան լողոմանցնում է մոտով։ Մի քանի տասնյակ սաժեն ևս, ու չորսն էլ՝ Իզումոուդը, ճերմակ փոքրիկ հովատակը, անգլիացին և կարճ ասպանդակների վրա կանգնած, ձիու բաշին ընկած օժանդակող

տղան, երջանիկ կերպով միավորվում, կուռ, արագընթաց մեկ մարմին են դառնում, ոգեշնչված մեկ կամքով, հուժկու շարժումների մեկ գեղեցկությամբ, երաժշտության պես հնչող մեկ ռիթմով։ Ցա՛-տա՛-տա՛-տա՛՝ համաչափ ու սահուն ոտքերն է դոփում Իզումոուդը։ Տա՛-տա՛, տա՛-տա՛՝ կարճ ու հատու կրկնում է օժանդակողը։ Եվս մի շրջադարձ, ու ընդառաջ է վազում երկրորդ տրիբունան։ «Ես ավելացնե՞մ»,— հարցնում է Իզումոուդը։ «Այո՛,— պատասխանում են ձեռքերը,— բայց հանգիստ»։

Երկրորդ տրիբունան ետ է սլանում աչքերի մոտով։ Մարդիկ ինչ-որ բան են բղավում։ Դա զվարճացնում է Իզումոուդին, նա տաքանում է, կորցնում սանձերի զգացողությունը, և մի պահ դուրս գալով ընդհանուր, կարգավորված տակտից, աջ ոտքից չորս քմահաճ ոստյուն է կատարում։ Բայց երասաններն իսկույն դառնում են չոր, և նրա բերանը պատռելով, վիզը թեքում են ցած և գլուխը շրջում աջ։ Հիմա արդեն հարմար չէ արշավել աջ ոտքից։ Իզումոուդը ջղայնանում է և չի ուզում ոտքը փոխել, սակայն ձիավարը, պահը որսալով, տիրաբար ու հանգիստ վարդի է գցում ձիուն։ Տրիբունան շատ է ետ մնացել։ Իզումոուդը նորից տակտի մեջ է ընկնում, և ձեռքերը նորից բարեկամական-փափուկ են դառնում։ Իզումոուդն իր մեղքը զգում է և ցանկանում կրկնակի ուժգնացնել վարգը։ «Ոչ, ոչ, դեռ շուտ է,— բարեսրտությամբ նկատում է ձիավարը։— Կհասցնենք սրա տեղը հանել։ Ոչինչ»։

Այսպես, գերազանց համերաշխությամբ ու անխաթար մի շրջան էլ են անցնում, հետո՝ կես շրջան։ Սակայն այսօր սեաթույրն էլ է հոյակապ վիճակում։ Այն ժամանակ, երբ Իզումոուդը խառնեց, նա հասցրեց վեց մարմնաչափ ետ թողնել, բայց հիմա Իզումոուդը կորցրածը կրճատում է և նախավերջին սյան մոտ երեք ու մեկ քառորդ վայրկյան առաջ է անցնում։ «Հիմա կարելի է։ Գնա՛»,— հրամայում է ձիավարը։ Իզումոուդը սեղմում է ականջները և մի հատիկ փութկոտ հայացք է նետում ետ։ Անգլիացու դեմքն ամբողջովին վառվում է սուր, վճռական, նշանառու արտահայտությամբ, բարակ շրթունքները հավաքվում են անհամբեր և մերկացնում դեղին, խոշոր, ամուր սեղմած ատամները։ «Ինչքան կարող ես հուպ տուր,— հրամայում են երասանները բարձր բռնած ձեռքերի մեջ։— էլի՛, էլի՛»։ Եվ անգլիացին հանկարծ բղավում է զիլ թրթռուն ձայնով, որ բարձրանում է շչակի պես.

— Ո-է-է-է-է՛։

— Է՛դ է, է՛դ է, է՛դ է, է՛դ է...— խլացուցիչ ու զրնգուն, վազքի տակտով բղավում է օժանդակող տղան։

Այժմ տեմպի զգացումը հասնում է բարձրագույն լարվածությանը և կախվում՝ մի բարակ մազից, ուր որ է՝ պատրաստ կտրվելու։ Տա՛-տա՛-տա՛-տա՛,— գետնի վրա համաչափ դաջում են Իզումոուդի ոտները։ Տռռա՛-տռռա՛-տռռա՛,— առջևից լսվում է ճերմակ փոքրիկ հովատակի քառատրոփը, որն իր ետևից տանում է Իզումոուդին։ Վազքի տակտով օրորվում են ճկուն անվակալները, և քառատրոփի տակտով թամբի վրա ելնում-իջնում է տղան, որ համարյա պառկած է ձիու պարանոցին։

Ընդառաջ վազացող քամին սուլում է ականջների մեջ ու խուտուտ տալիս ոունգերը, որոնցից հաճախակի ու մեծ շիթերով ժայթքում է գոլորշին։ Շնչելը դժվարանում է, մաշկը շոգում։ Իզումոուդը վերջին ոլորանն է շրջանցում, ամբողջ մարմնով թեքվելով ոլորանի ներսի կողմը։ Տրիբունան որպես կենդանի մարմին, ահագնանում է, ու նրանից ընդառաջ է պոկվում հազարաձայն ոռնոցը, որը վախեցնում, հուզում և ուրախացնում է Իզումոուդին։ Վարգն այլևս չի բավականացնում նրան, ու նա արդեն ուզում է արշավել, բայց այդ զարմանալի ձեռքերը նտևում թե աղաչում են, թե հրամայում, թե հանգստացնում. «Սիրելիս, մի՛ արշավիր... Միայն թե ոչ քառատրոփ... Այ այդպե՛ս, այ այդպե՛ս, այ այդպե՛ս»։ Եվ Իզումոուդը, սրընթաց անցնելով սյան մոտով, պոկում է ստուգիչ թելը, անգամ չնկատելով դա։ Բղավոց, ծիծաղ, ծափահարություններ՝ ջրվեժի պես թափվում են տրիբունայից։ Ազդագրերի սպիտակ թերթերը, հովանոցները, ձեռնափայտերը, շլյապաները պտտվում ու խառնվում են շարժվող դեմքերին ու ձեռքերին։ Անգլիացին փափուկ թողնում է սանձերը։ «Վերջացա՞վ։ Շնորհակալ եմ, սիրելիս»,— Իզումոուդին ասում է այդ շարժումը, և նա, դժվարությամբ զսպելով վազքի իներցիան, քայլի է անցնում։ Այդ պահին սևաթույր հովատակը նոր-նոր է մոտենում իր սյանը՝ հակադիր կողմում, յոթ վայրկյան ուշացած։

Անգլիացին, դժվարությամբ բարձրացնելով ընդարմացած ոտքերը, ծանր-ծանր ցած է ցատկում վարգակառքից, և թավ-շյա նստելատեղն առած, գնում է դեպի կշեռքը։ Մոտ վազած ձիապանները Իզումոուդի տաք մեջքը ծածկում են տապաստով ու տանում են բակ։ Նրանց ետևից թնդում է մարդկային ամբոխի ժխորը և զանգի երկարատև զնգոցը հանձնաժողովի տաղավարից։ Դեղնավուն թեթև փրփուրը ձիու մռութից պոկվում և ընկնում է գետին ու ձիապանների ձեռքերին։

Մի քանի րոպե անց արդեն լծարձակ Իզումոուդին նորից են բերում տրիբունայի մոտ։ Երկար վերարկուով և նոր, փայլուն շլյապայով բարձրահասակ մի մարդ, որին Իզումոուդը հաճախ է տեսնում իրենց ախոռում, թփթփացնում է նրա վզին և ափի մեջ մի կտոր շաքար խոթում բերանը։ Անգլիացին էլ է այդտեղ կանգնած, ամբոխի մեջ ու ժպտում է, կնճռոտվելով ու մերկացնելով երկար ատամները։ Իզումոուդի վրայից վերցնում են տապաստը և կանգնեցնում նրան եռոտանի, սև շորով ծածկված մի արկղի դիմաց, որի տակ թաքնված ինչ-որ բաներ է անում մեխրագույն զգեստով մի պարոն։

Բայց ահա տրիբունայից գահավիժում են մարդիկ՝ սև ու ցրիվ զանգվածի պես։ Նրանք սեղմ օղակում են ձիուն բոլոր կողմերից և բղավում ու ձեռքերն են թափահարում, միմյանց մոտեցնելով կարմրատակած, բորբոքված, փայլող աչքերով դեմքերը։ Ինչ-որ բանից նրանք դժգոհ են, մատներով ոտներն են ցույց տալիս, գլուխն ու կողերը, գավակի ձախ կողմում զզզում բուրդը, այնտեղ, ուր խարանադրոշմն է, ու նորից բղավում են՝ բոլորը մեկտեղ։ «Կեղծած ձի է, կեղծ վարգաձի է, խաբեություն, խարդախություն, փողերը ետ տվեք»,— լսում է Իզումոուդը և չի հասկանում այդ խոսքերը և անհանգիստ շարժում է ականջները։ «Ի՞նչ են գոռում սրանք,— մտածում է նա զարմացած։— Չէ՞ որ ես այնպես լավ վազեցի»։ Եվ մի վայրկյան աչքին է ընկնում անգլիացու դեմքը։ Միշտ այնքան հանգիստ, փոքր-ինչ ծաղրական ու սևեռ, հիմա այրվում էր զայրույթից։ Ու հանկարծ անգլիացին ինչ-որ բան է բղավում զիլ ու կոկորդային ձայնով, արագ թափահարում է ձեռքն, ու ապտակի ձայնը կտրուկ ընդհատում է համընդհանուր ժխորը։

6

Իզումոուդին տուն տարան, երեք ժամ անց վարսակ տվեցին, իսկ երեկոյան, երբ նրան ջրում էին ջրհորի մոտ, նա տեսավ, թե ինչպես ցանկապատի ետևից ելնում է իրեն մութ սարսափով պատող խոշոր լուսինը։

Իսկ հետո ձգվեցին տրտում օրերը։

Այլևս նրան չէին տանում ոչ վարժավազքի, ոչ էլ մրցարշավի։ Բայց ամեն օր անծանոթ մարդիկ էին գալիս, շատ մարդիկ, և նրանց համար Իզումոուդին բակ էին դուրս բերում, ուր նրանք գնում ու քստ ամենայնի տնտղում էին իրեն, ձեռքերը բերանն էին խոթում, պեմզայով քերում բուրդը և շարունակ բղավում էին միմյանց վրա։

Հետո հիշում էր, թե ինչպես մի անգամ, ուշ երեկոյան, հանեցին ախոռից ու բավական ժամանակ տարան երկար, քարե ամայի փողոցներով, լուսավոր պատուհաններ ունեցող տների մոտով։ Ապա՝ կայարանը, մութ ու թափահարվող վագոնը, երկարատև տեղափոխումից առաջացած հոգնությունն ու դողը ոտքերի մեջ, շոգեքարշերի սուլոցները, ռելսերի դղրդոցը, ծխի խեղդող հոտը, ճոճվող լապտերի տխուր լույսը։ Կայարաններից մեկում նրան իջեցրին վագոնից և երկար տանում էին անծանոթ ճանապարհով լայնարձակ, աշնանային մերկացած դաշտերի միջով, գյուղերի մոտով, մինչև որ հասցրեցին անծանոթ մի ախոռ ու փակեցին առանձին, մյուս ձիերից հեռու։

Սկզբում նա շարունակ հիշում էր մրցարշավները, իր անգլիացուն, Վասկային, Նազարին և Օնեգինին, ու հաճախ էր նրանց տեսնում երազում, բայց որոշ ժամանակ անց մոռացավ ամեն ինչի մասին։ Նրան թաքցնում էին ինչ-որ մեկից, և նրա ջահել, հիանալի մարմինն ամբողջովին տանջվում էր, կարոտում ու փչանում էր անգործությունից։ Շարունակ նոր, անծանոթ մարդիկ էին հավաքվում ու դարձյալ խռնվում Իզումոուդի շուրջը, շոշափում, տնտղում էին նրան և բարկացած կովշտում իրար հետ։

Իզումոուդը երբեմն, պատահմամբ բացվող դռան արանքից տեսնում էր արձակ քայլող ու վազող ուրիշ ձիերի, և այդ ժամանակ նա կանչում էր նրանց, զայրանալով ու բողոքելով։ Սակայն անմիջապես փակում էին դուռը, և նորից ձանձրալի ու միալնակ ձգվում էր ժամանակը։

Այդ ախոռում գլխավորը մեծագլուխ, քնատ, մանրիկ ու սև աչքերով, ճաքոտ դեմքի վրա բարակ սև բեղերով մի մարդ էր։ Նա միանգամայն անտարբեր էր թվում Իզումոուդի նկատմամբ, բայց ձին նրա հանդեպ անհասկանալի սարսափ էր տածում։

Եվ ահա մի անգամ, վաղ առավոտյան, երբ բոլոր ձիապանները քնած էին, այդ մարդը կամացուկ, առանց նվազագույն աղմուկի, ոտնաթաթերի վրա մոտեցավ Իզումոուդին, ինքը վարսակ լցրեց նրա մսուրն ու գնաց։ Իզումոուդը մի քիչ զարմացավ

դրա վրա, բայց հնազանդորեն սկսեց ուտել։ Վարսակը քաղցր էր, թեթևակի դառնավուն ու կծվահամ։ «Տարօրինակ է,— մտածեց Իզումոուդը,— այսպիսի վարսակ երբեք չեմ կերել»։

Եվ հանկարծ թեթևակի ցավ զգաց փորի մեջ։ Ցավն անցավ, հետո ընդհատվեց ու նորից սկսվեց նախկինից ավելի սաստիկ, բոպե առ բոպե սաստկանալով։ Վերջապես ցավն անտանելի դարձավ։ Իզումոուդը խուլ տնքում էր։ Հրեղեն օղակներ պտտվեցին նրա աչքերի առաջ, հանկարծակի թուլությունից ամբողջ մարմինը թրջվեց ու թալկացավ, ոտքերը դողացին, ծալվեցին, և հովատակը գետին տապալվեց։ Նա դեռ փորձում էր ոտքի ելնել, բայց միայն առջևի ոտների վրա էր կարողանում կանգնել ու նորից ընկնում էր կողքի։ Թնդացող մի հողմ պատույտ եկավ նրա գլխում։ Լողաց-անցավ անգլիացին, մերկացնելով ձիու պես երկար ատամները, Օնեգինը վազելով անցավ մոտով, դուրս ցցած իր ուղղային ադամախնձորն ու բարձրաձայն խրխնջալով։ Ինչ-որ մի ուժ անխնա կերպով Իզումոուդին սրընթաց տանում էր ցած, խավար ու ցուրտ փոսի խորքը։ Նա այլևս չէր կարողանում շարժվել։

Ջղաձգումը հանկարծ միացրեց նրա ոտներն ու վիզը և կորացրեց մեջքը։ Ձիու ամբողջ մաշկը մանրիկ ու արագ դող կապեց և ծածկվեց սուր հոտ արձակող փրփուրով։

Լապտերի դեղին շարժվող լույսը մի պահ կուրացրեց նրա աչքերը և հանգավ անհետացած տեսողության հետ։ Նրա ականջը դեռևս որսաց մարդու կոպիտ բղավոցը, սակայն արդեն չզգաց, թե ինչպես կրունկով հրեցին իր կողը։ Հետո ամեն ինչ չքացավ հավիտյան։

1907

ԼԵՆՈՉԿԱ

Պետերբուրգից Ղրիմ մեկնելու ճանապարհին գլխավոր շտաբի գնդապետ Վոզնիցինը երկու օրով դիտավորյալ կանգ առավ Մոսկվայում, ուր անցել էին նրա մանկությունն ու պատանեկությունը։ Ասում են, թե խելացի կենդանիները, մահը կանխազգալով, շրջում են տան ծանոթ, սիրելի տեղերով, ասես հրաժեշտ տալով դրանց։ Մոտալուտ մահը չէր սպառնում Վոզնիցինին՝

քառասունհինգ տարեկան ամրակազմ, դեռևս երիտասարդ տղամարդ էր։ Բայց նրա հակումների, զգացմունքների, աշխարհի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ դեպի ծերությունը տանող ինչ-որ աննկատելի շեղում էր կատարվում։ Ինքնաստինքյան նեղանում էր ուրախությունների և հաճույքների շրջանակը, երևան էին եկել շրջահայացություն և բոլոր արարքների հանդեպ կասկածամիտ անվստահություն, չքացել էր անբարբաո գազանային, չգիտակցված սերը բնության նկատմամբ, փոխարինվելով գեղեցկության նրբին վայելումով, տագնապախռով ու սուր թրթիռով դադարել էր հուզել կնոջ հմայիչ սքանչելիությունը, իսկ գլխավորը՝ հոգեկան թոշնումի առաջին հատկանիշը, սեփական մահվան միտքը պաշարում էր նրան ոչ նախկին անհոգ ու թեթև վաղանցիկությամբ, ինչպես առաջ էր լինում, ասես վաղ թե ուշ Վոզնիցին ազգանունով մեկ ուրիշը պիտի մեռներ, և ոչ թե ինքը, այլ ծանր, կտրուկ, դաժան, անդառնալի և անխնա հստակությամբ, որից գիշերները բիզ-բիզ էին կանգնում մազերն, ու սիրտը նվազում էր վեհերոտ։ Եվ ահա նա մեծ ցանկություն ունեցավ վերջին անգամ նախկին վայրերը շրջել՝ հիշողության մեջ թանկագին, տանջալի քնքուշ, մանկության՝ բանաստեղծական այնպիսի տրտմությամբ համակված հուշերը արթնացնել, կյանքի և առհավետ անցած, անվերադարձ մաքրությամբ ու պայծառությամբ պարուրված առաջին տպավորությունների անուշ ցավով իր հոգին խոցոտել։

Այդպես էլ արեց։ Երկու օր շրջագայեց Մոսկվայում, այցելելով հին բները։ Մտավ Գորոխովոյե Պոլեի գիշերօթիկը, որտեղ մի ժամանակ, վեց տարեկանից, կրթվում էր դաստիարակչուհիների ղեկավարությամբ, ֆրեբելյան սիստեմով։ Այնտեղ ամեն ինչ վերափոխված ու վերակառուցված էր։ Տղաների բաժանմունքներն այլևս չկային, բայց աղջիկների դասասենյակներից առաջվա պես հացենու սեղանների ու նստարանների թարմ լաքի հաճելի ու գրավիչ հոտն էր գալիս, նաև հրաշալի, խառը մի բույր քաղցրավենիքի, հատկապես խնձորի, որ առաջվա նման պահում էին հատուկ պահարանում, փակի տակ։ Ապա մտավ կադետական դպրոց և զինվորական ուսումնարան։ Եղավ նաև Կուդրինում, տնական մի եկեղեցում, որտեղ կադետ ժամանակ սրբասավորում էր բեմի վրա, բուրվառ մատուցում և պատարագի ընթացքում ժամաշապիկով ու մոմով ավետարանին մոտենում։ Բայց նաև գողանում էր մեղրամոմի մնացորդները, հաղորդվողներից հետո «ջերմությունը» խմում ու զանազան ծամածռություններով ստիպում փոթկացնել ծիծաղկոտ սարկավագին, որի համար էլ մի անգամ բեմից նրան հանդիսավորապես արտաքսեց տեր հայրը՝ վեհապանծ, ծանրամարմին մի ծերուկ, զարմանալիորեն նման բեմի ետևի Սաբաավոթ աստծուն։ Դիտավորյալ անցավ բոլոր այն տների մոտով, ուր մի ժամանակ սիրո անդրանիկ, անմեղ, կիսամանկական տվայտանքներ էր զգացել, մտավ բակերը, բարձրացավ սանդուղքներով ու համարյա ոչինչ չճանաչեց՝ այնքան վերակառուցվել ու փոխվել էր ամեն ինչ մի ամբողջ քառորդ դարի ընթացքում։ Բայց զարմանքով ու դառնությամբ նկատեց, որ կյանքից ամայացած, կարծրացած իր հոգին սառն ու անհաղորդ մնաց ու իր մեջ չարտացոլեց անցյալի նկատմամբ նախկին, ծանոթ թախիծը, այնքան լուսավոր, հանդարտ, մտածկոտ ու խոնարհ թախիծը...

«Այո, այո, այո, ծերությունից է,— կրկնում էր ինքն իրեն և տրտում գլխով անում։— Ծերություն, ծերություն, ծերություն... Ինչ կարող ես անել...»։

Մոսկվայից հետո գործերը նրան ստիպեցին մեկ օր մնալ Կիևում, իսկ Օդեսա եկավ չարշաբանաց շաբաթվա սկզբին։ Բայց ծովի վրա գարնանային տևական փոթորիկ բարձրացավ, և Վոզնիցինը, որի սիրտը թեթևակի ալեկոծությունից անգամ խառնում էր, չհանդգնեց շոգենավ նստել։ Միայն չարշաբանաց շաբաթ օրվա առավոտյան հանդարտ, առանց քամու եղանակ բացվեց։

Կեսօրվա ժամը վեցին «Մեծն իշխան Ալեքսեյ» շոգենավը հեռացավ Պրակտիչեսկայա նավահանգստի ծովապատնեշից։ Վոզնիցինին ոչ ոք չէր ուղեկցում, և նա գոհ էր դրանից, որովհետև տանել չէր կարողանում ճանապարհելու միշտ փոքր-ինչ երեսպաշտ և միշտ ճնշող այդ կատակերգությունը, երբ, աստված գիտե թե ինչու, ամբողջ կես ժամ կանգնում ես նավեզրի մոտ ու լարված ժպտում ներքևում, նավահանգստում կանգնած տրտմած մարդկանց, երբեմն թատերական ձայնով բղավում ես աննպատակ ու անմիտ խոսքեր, ճիշտ ասես նախատեսված շրջապատող հասարակության համար, օդային համբույրներ ուղարկում ու վերջ ի վերջո թեթևացած շունչ քաշում, զգալով, թե ինչպես շոգենավն սկսում է ծանր ու դանդաղ հեռանալ ափից։

Այդ օրն ուղևորներ շատ քիչ կային, այն էլ մեծ մասամբ՝ երրորդ կարգում։ Առաջին կարգում, ինչպես նրան զեկուցի

սպասավորը, Վոզնիցինից բացի մի տիկին էր գնում միայն՝ դատեր հետ։ «Եվ շատ էլ լավ է»,— թեթևացած մտածեց սպան։

Ամեն ինչ հանգիստ և հարմար ուղևորություն էր խոստանում։ Հիանալի նավասենյակ էր բաժին ընկել՝ մեծ, լուսավոր, ուղղանկյուն դրված երկու բազմոցով, առանց վերին տեղերի։ Գիշերվա ընթացքում անհողմ ծփանքից հանգստացած ծովը դեռևս խլրտում էր մանրիկ ու արագասահ կոհակներով, բայց այլևս չէր ճոճում։ Սակայն երեկոյան դեմ տախտակամածի վրա ցրտեց։

Այդ գիշեր Վոզնիցինը քնեց լուսանցույցը բաց, և այնպես խորը, ինչպես չէր քնել արդեն շատ ամիսներ, եթե չասենք՝ տարիներ։ Եվպատորիայում նրան արթնացրեց շոգեվերհանների դղրդոցն ու տախտակամածով մեկ վազվզոցը։ Նա արագ-արագ լվացվեց, թեյ պատվիրեց ու վեր բարձրացավ։

Շոգենավը կանգնած էր նավակայանում, ծագող արեգակի ոսկով բեկված կաթնավարդագույն, կիսաթափանցիկ մշուշի մեջ։ Հեռվում հազիվ նկատելի դեղնին էր տալիս հարթ ափը։ Ծովը հանգիստ ճլմփում էր նավակողին։ Ձկան, ջրիմուռների և ձյութի հրաշալի հոտ էր գալիս։ «Ալեքսեյին» կիպ կպած մեծ բարկասից վեր էին բարձում ինչ-որ հակեր ու տակառներ։ «Իջեցրո՛ւ, կամա՛ց, տո՛ւր թող գա, տո՛ւր, ստո՛պ»,— վաղորդյան զուլալ օդի մեջ զրնգում էին հրահանգները։

Երբ բարկասը ետ լողաց, ու շոգենավը շարժվեց առաջ, Վոզնիցինը ճաշարան իջավ։ Այստեղ նրան տարօրինակ տեսարան էր սպասում։ Պատերի երկայնքով «ո»-աձև շարված սեղանները դվարթ ու խայտաբղետ զարդարված էին թարմ ծաղիկներով ու Ջատկի ուտելիքներով։ Ամբողջովին տապակած գառներն ու հընդուհավերը բարձր-բարձր վեր էին տնկել իրենց անճոռնի, լերկ, գանգերը, ներսից մետաղալարի չերևացող ձողիկներով ամրացված երկար վզերով։ Այդ բարալիկ, հարցական նշանի պես ճկված վզերը ճոճվում ու ցնցվում էին ընթացող շոգենավի ցնցումներից, ու թվում էր, թե ինչ-որ տարօրինակ, բրոնտոզավրերի կամ իխտիոզավրերի նման անդրջրհեղեղյան չտեսնված կենդանիներ, ինչպես պատկերում են նրանց նկարների մեջ, ոտքերը տակները ծալած, պառկած են մեծ մատուցարանների վրա և անհանգիստ ու ծիծաղաշարժ զգուշությամբ չորս դին են նայում՝ գլուխները ցած կռացնելով։ Իսկ արևի ճառագայթները կլոր ու վառ այուներով ներս էին հորդում լուսանցույցներից, տեղ-տեղ ոսկեզօծում սփոցը, Ջատկի ձվերի գույները վերածում ծիրանի և

շափյուղայի ու կենդանի կրակներ վառում հիացինտների, անմոռուկների, մանուշակների, ջահրակների և վարդակաչների վրա։

Սրահ՝ թեյելու մտավ նաև առաջին կարգով մեկնող միակ տիկինը։ Վոզնիցինը թոուցիկ ու արագ նրան նայեց։ Ոչ գեղեցիկ էր, ոչ էլ երիտասարդ, բայց լավ էր պահպանված, բարձրահասակ, փոքր-ինչ լիքը կազմվածք ուներ, պարզ և լավ էր հագնված, բաց մոխրագույն ազատ սակ[1], օձիքի և թևքերի վրա մետաքսյա զարդակարերով։ Գլխին գցել էր կապույտ, թեթև, համարյա թափանցիկ շղարշե գլխաշոր։ Նա թեյ էր խմում, միաժամանակ գիրք կարդում, առավել հավանական է՝ ֆրանսերեն գիրք, ինչպես վրճռեց Վոզնիցինը, դատելով գրքի հավաք տեսքից, ոչ մեծ չափից և կազմի վառ դեղին գույնից։

Չափազանց ծանոթ, շատ վաղեմի մի բան առկայծեց Վոզնիցինի մտքում ոչ այնքան կնոջ դեմքից, որքան վիզը դարձնելու ու կոպերը բարձրացնելու եղանակից, երբ նա շրջվեց իր հայացքի վրա։ Բայց անգիտակցական այդ տպավորությունն իսկույն չքացավ ու մոռացվեց։

Շուտով շոգը նեղեց, ու տախտակամած բարձրանալու ցանկություն առաջացավ։ Ուղևորուհին վեր ելավ ու նստեց նստարանին, այն կողմը, ուր քամի չէր փչում։ Նա մեկ կարդում էր, մեկ գիրքը ծնկներին դնելով՝ նայում էր ծովին, գլխկոնծի տվող դելֆիններին, հեռավոր, կարմրավուն, շերտ-շերտ ու զառիթափ, ցանցառ կանաչով պատած ափին։

Վոզնիցինը քայլում էր տախտակամածի վրա, կողերի երկայնքով, առաջին կարգի նավախցերը շրջանցելով։ Մի անգամ, երբ անցնում էր տիկնոջ կողքով, վերջինս դարձյալ ուշադիր նայեց սպային, նայեց մի տեսակ հարցական հետաքրքրությամբ, ու Վոզնիցինին կրկին թվաց, որ իրենք հանդիպել են ինչ-որ տեղ։ Կամաց-կամաց այդ զգացումը դարձավ անհանգիստ ու հետամուտ։ Եվ գլխավորը՝ սպան այժմ գիտեր, որ տիկինը միևնույն բանն է զգում, ինչ և ինքը։ Բայց որքան էլ ջանում էր լարվել, հիշողությունը չէր ենթարկվում նրան։

Ու հանկարծ, արդեն քսաներորդ անգամ հավասարվելով նստած տիկնոջը, նա մեկեն, իր համար համարյա անսպասելի կանգ առավ տիկնոջ մոտ, զինվորական ձևով մատները կպցրեց գլխարկին և, թեթևակի զրնգացնելով խթանները, ասաց.

[1] Կանացի լայն ու երկար թիկնոց (ծան. բարգմ.)։

— Ներեցեք իմ հանդգնությունը... բայց ինձ անընդհատ հանգիստ չի տալիս մի միտք, որ մենք ծանոթ ենք կամ, ավելի ճիշտ... որ մի ժամանակ, շատ վաղուց ենք ծանոթ եղել։

Ամենևին գեղեցիկ չէր՝ նոսր հոնքերով, խարտյաշ, համարյա շեկ մազերով, մազերի դույնի շնորհիվ միայն հեռվից՝ նկատվող ալեխառնությամբ, կապույտ աչքերի վրա սպիտակ արտևանունքներով, դեմքի պեպենոտ ու թորշոմած մաշկով մի կին։ Թարմ էր միայն բերանը, վարդագույն ու լիաշուրթ, սքանչելի կորությամբ գծագրված։

— Պատկերացրեք՝ ես ևս։ Նստած անընդհատ մտածում եմ, թե որտեղ ենք միմյանց հանդիպել,— պատասխանեց նա։— Իմ ազգանունը Լվովա է։ Դա ձեզ ոչի՞նչ չի ասում։

— Ցավոք սրտի, ոչ... Իսկ իմ ազգանունը Վոզնիցին է։

Տիկնոջ աչքերը հանկարծ ուրախ և այնքան ծանոթ ծիծաղով առկայծեցին, որ Վոզնիցինին թվաց, թե ուր որ է կճանաչի նրան։

— Վոզնիցի՞ն։ Կո՞լյա Վոզնիցին,— ուրախացած բացականչեց նա ձեռքը մեկնելով։— Մի՞թե հիմա էլ չեք ճանաչի։ Լվովան ամուսնական ազգանունս է... Բայց ոչ, ոչ, վերջապես հիշեցեք... Հիշեցեք՝ Մոսկվա, Պովարսկայա, Բորիսոգլեբսկի նրբանցք, եկեղեցական տուն... Դե՞։ Հիշեցեք դպրոցական ձեր ընկերոջը... Արկաշա Յուլովին...

Տիկնոջ ձեռքը բռնած Վոզնիցինի ձեռքը դողաց ու սեղմվեց։ Հիշողության ակնթարթային լույսը ասես կուրացրեց նրան։

— Տե՜ր աստված... Մի՞թե Լենչկան եք... Ներեցեք... Ելենա... Ելենա...

— Վլադիմիրովնա։ Մոռացել եք... Իսկ դուք Կո՞լյան եք, այն նույն Կո՞լյան, անճոռնի, ամաչկոտ ու նեղացկոտ Կո՞լյան... Ի՜նչ տարօրինակ է։ Ի՜նչ տարօրինակ հանդիպում... Նստեցեք, խընդրեմ։ Որքան ուրախ եմ...

— Այո, վերջ ի վերջո աշխարհն այնքան նեղ է, որ մեկը մյուսին անպայման կհանդիպի,— ասաց Վոզնիցինն ինչ-որ մեկ ուրիշի նախադասությունը։— Դե, պատմեք ձեր մասին։ Ինչպե՞ս է Արկաշան։ Ինչպե՞ս է Ալեքսանդրա Միլիևնան։ Իսկ Օլեչկա՞ն։

Դպրոցում Վոզնիցինը սերտորեն բարեկամացել էր ընկերներից մեկի՝ Յուլովի հետ։ Յուրաքանչյուր կիրակի, եթե քաղաք գնալուց զրկված չէր լինում, գնում էր նրանց տուն, իսկ Ջատկին և Ծննդյան տոներին մեկ-մեկ այնտեղ էր անցկացնում ամբողջ արձակուրդը։ Ջինվորական ուսումնարան ընդունվելուց առաջ

Արկաշան ծանր հիվանդացավ։ Յուլովները պետք է գյուղ մեկնեին։ Այդ ժամանակից ի վեր Վոզնիցինը կորցրեց նրանց տեսադաշտից։ Շատ տարիներ առաջ ինչ-որ մեկից թուղթիկ լսեց, որ Լենչկան երկար ժամանակ մի սպայի հարսնացուն է եղել, և որ տարօրինակ ազգանունով (ժե՛նիշեկ, շեշտն առաջին վանկի վրա) այդ սպան մի տեսակ անհեթեթ ու անսպասելի ինքնասպան է եղել...

— Արկաշան մահացավ մեր գյուղում, իննսուն թվականին,— ասում էր Լվովան։— Պարզվեց, որ գլխի սարկոմա ունի։ Մայրիկը միայն մի տարի ավել ապրեց։ Օլեչկան ավարտեց բժշկական դասընթացը և հիմա զեմստվոյի բժիշկ է Սերդոբսկի գավառում։ Իսկ մինչ այդ բուժակուհի էր մեզ մոտ՝ ծմակինոյում։ Ոչ մի կերպ չուզեց ամուսնանալ, թեև թեկնածուներ կային, այն էլ շատ կարգին։ Իսկ ես քսան տարի ամուսնացած եմ,— նա ժպտաց թախծոտ, շրթունքները սեղմած, բերանի մի անկյունով,— պառավել եմ արդեն... Ամուսինս կալվածատեր է, զեմստվոյի վարչության անդամ։ Երկնքից աստղեր ցած չի բերում, բայց ազնիվ մարդ է, ընտանիքի լավ հայր, ոչ հարբեցող է, ոչ էլ այլասերված, ինչպես չորս բոլորն են... այդքանի համար էլ՝ աստծուն փառք...

— Ելենա Վլադիմիրովնա, իսկ հիշո՞ւմ եք, թե ինչպես էի մի ժամանակ սիրահարված ձեզ,— հանկարծ նրան ընդհատեց Վոզնիցինը։

Կինը ծիծաղեց, և դեմքն ասես մեկեն ջահելացավ։ Վոզնիցինը վայրկենապես հասցրեց նկատել նրա բազմաթիվ լցրած ատամների ոսկե փայլը։

— Ի՜նչ հիմարություն։ Հենց այնպես... տղայական սիրահետում։ Ասենք, ճիշտ էլ չէ։ Դուք ամենևին էլ ինձ չէիք սիրահարված, այլ Սինելնիկովա օրիորդներին, չորսին էլ հերթով։ Երբ ավագ քույրն ամուսնանում էր, ձեր սիրտը նրա հաջորդի ոտքերի առաջ էիք գցում...

— Ը՜հը, այնուամենայնիվ, դուք մի քիչ խանդո՞ւմ էիք ինձ,— նկատեց Վոզնիցինը կատակախառն ինքնահավանությամբ։

— Ամենևին էլ ոչ... Դուք ինձ համար եղբոր, Արկաշայի պես էիք։ Հետո, ավելի ուշ, երբ արդեն երկուսս էլ տասնյոթ տարեկան էինք, այն ժամանակ, ինչ ասեմ... մի քիչ վշտանում էի, որ ինձ դավաճանել էիք... Գիտեք, ծիծաղելի բան է, բայց փոքրիկ աղջիկները նույնպես կանացի սիրտ ունեն։ Մենք կարող ենք

բոլորովին չսիրել անխոս երկրպագուին, բայց խանդում ենք նրան՝ ուրիշների հանդեպ... Ասենք, դատարկ բաներ են դրանք... Ավելի լավ է, պատմեք, թե դուք ինչպես եք և ինչ եք անում։

Ժողնիցինը պատմեց իր մասին, ակադեմիայի, շտաբային կարիերայի մասին, պատերազմի, ներկայիս ծառայության մասին։ Ոչ, ինքը չի ամուսնացել, առաջ վախեցնում էր չքավորությունն ու ընտանիք պահելու պատասխանատվությունը, իսկ հիմա այլևս ուշ է։ Իհարկե, եղել են զանազան հափշտակություններ, լուրջ սիրավեպեր էլ են եղել։

Հետո խոսակցությունն ընդհատվեց, և նրանք լուռ նստած էին, միմյանց նայելով քնքուշ, մշուշված աչքերով։ Ժողնիցինի հիշողության միջով արագ-արագ անցնում էր երեսուն տարիներով բաժանված անցյալը։ Լենոչկայի հետ ծանոթացել էր այն ժամանակ, երբ իրենց տասնմեկ տարին էլ չէր լրացել։ Նիհար, ու կամակոր աղջիկ էր, կովարար ու խոսք տանող-բերող, տգեղ՝ իր պեպեններով, երկար ձեռքերով ու ոտքերով, բաց գույնի արտևանունքներով ու շեկ մազերով, որոնց երկու բարակ, ուղիղ փնջերը միշտ կախ էին ընկած այտերի վրա։ Օրական մի տասն անգամ Ժողնիցինի և Արկաշայի հետ կվիճեր ու կհաշտվեր։ Մեկմեկ էլ կճանկռոտվեին... Օլեչկան հեռու էր պահում իրեն, նա միշտ աչքի էր ընկնում իր բարի բարքով ու խոհեմությամբ։ Տոն օրերին բոլորով միասին պարելու էինք գնում Ազնվականների ակումբ, կամ՝ թատրոններ, կրկես, սահադաշտ։ Միասին տոնածառեր ու մանկական ներկայացումներ էինք սարքում. Ջատկին ձու ներկում և դիմակավորվում Ննդյան տոներին։ Հաճախ կրռվըշտում ու գզվռտվում էին շան թուլաների պես։

Այսպես անցավ երեք տարի։ Ինչպես միշտ, ամռանը Լենոչկան ընտանիքի հետ ժամկինո գնաց, իսկ երբ աշնանը Մոսկվա վերադարձավ, Ժողնիցինն առաջին անգամ նրաս տեսնելով, զարմանքից չռեց աչքերն, ու բերանը բաց մնաց։ Առաջվա պես տգեղ էր մնացել Լենոչկան, բայց նրա մեջ գեղեցկությունից առավել հմայիչ մի բան կար, նախասկզբնական օրիորդության այն վարդագույն ճառագուն փթթումը, որն աստված գիտե, թե ինչ հրաշքով վրա է հասնում հանկարծակի, և մի քանի շաբաթվա ընթացքում երեկվա՝ հասակ առնող դոգ շան նման անճոռնի, մեծաբազուկ, մեծոտն աղջնակին մեկեն սքանչելի օրիորդ դարձնում։ Լենոչկայի դեմքը դեռևս գյուղական ուժեղ արևայրուքով էր պատած, որի տակ զգացվում էր տաք, եռ եկող արյան հոսքը, ուսերը կլորացել էին, զծագրվել էին աղդրերն, ու կրծքերի հստակ, ձիգ ուրվագիծը կար, մարմինն ամբողջապես դարձել էր ճկուն, ճապուկ ու նազելի։

Եվ հարաբերություններն իսկույն մի տեսակ փոխվեցին։ Փոխվեցին այն բանից հետո, երբ շաբաթ մի երեկո, իրիկնային ժամերգությունից առաջ, Լենոչկան ու Ժողնիցինը, կիսախավար սենյակում շարություններ անելուց հետո, կովի բռնվեցին։ Այն ժամանակ պատուհանները դեռևս բաց էին, պարտեզից աշնանային զուլալ թարմություն և թափված տերևների նուրբ գինեհոտ էր բուրում, ու դանդաղ, հարված հարվածի ետևից լողում էր Բորիսոգլեբսկի եկեղեցու մեծ զանգի հազվագույտ մելամաղձոտ ղողանջը։

Ձեռքերը խաչաձև միացրած մեջքներին, նրանք ամուր փաթաթվել էին միմյանց ու շնչում էին իրար երեսի։ Ու հանկարծ, այնպես ուժեղ կարմրելով, որ նկատելի էր նույնիսկ երեկոյի կապույտ աղջամուղջի մեջ, աչքերը ցած գցած, Լենոչկան շշնջաց ընդհատ-ընդհատ, բարկացած ու շփոթված.

— Թողեք ինձ... թողեք... ես չեմ ուզում...

Եվ ավելացրեց խոնավ, փայլփլող աչքերի չար հայացքով.

— Անպիտա՛ն տղա։

Անպիտան տղան կանգնել էր դողացող ձեռքերը ցած թողած ու անհեթեթ կերպով չռած։ Իմիջիայլոց, նրա ոտքերն էլ էին դողում, և ճակատը թրջվել էր հանկարծակի քրտնելուց։ Հենց նոր ձեռքերի մեջ զգացել էր աղջկա բարակ, հնազանդ, կանացի իրանը, որ այնպես սքանչելիորեն լայնանում էր բարեկազմ կոնքերի վրա, իր կրծքին զգացել էր նրա օրիորդական ձիգ ու բարձր կրծքերի առաձգական, հլու հպումը, առել նրա մարմնի բույրը՝ բարդենու ծաղկող բողբոջների և սև հաղարջի ջահել ընձյուղների այն բերկրալից ու արբեցնող բուրմունքը, որը սփռվում է գարնան պարզ, բայց և խոնավ երեկոներին, հանկարծակի անձրևից հետո, երբ երկինքն ու ջրափոսերը հրդեհվում են վերջալույսից, և օդում բվվում են մայիսյան բզեզները։

Ժողնիցինի համար այսպես սկսվեց սիրո տվայտանքների, բուռն ու դառն անրջանքների, մեկ գնահատականների ու գաղտնի արցունքների այդ տարին։ Նա խորթացավ, անշնորհք ու կոպտավուն դարձավ տանջալի ամոթխածությունից, բոպեն մեկ ոտքերով աթոռներ էր՝ շուռ տալիս, փոցխի նմանվող ձեռքերով կպչում

էր շարժուն ամեն մի առարկայի, սեղանի շուրջ թեյով ու կաթով լի բաժակներ շրջում։ «Մեր Կոլենկան լրիվ ձեռքից գնացել է»,— բարեսրտորեն ասում էր Ալեքսանդրա Միլիևնան։

Լենոչկան նրան ձեռ էր առնում։ Իսկ Կոլյայի համար ավելի տանջալի ու ավելի երջանիկ բան չկար, քան լուռումունջ նրա ետևում կանգնելը, երբ աղջիկը նկարում էր, գրում կամ որևէ բան ասեղնագործում, զմայլելի ճերմակ մաշկ ունեցող նրա կռացրած վզին, ծոծրակի վրայի փափուկ, ոլոր-մոլոր ոսկե մազերին նայելը, տեսնելը, թե ինչպես նրա կրծքի վրա գիմնազիստուհու դարչնագույն իրանակալը մեկ կծկվում է շեղ ու բարակ ծալքերով, լայնանում, երբ Լենոչկան արտաշնչում է, մեկ կրկին լցվում, նեղանում ու դառնում այնքան պիրկ, այնքան ձիգ ու կլոր։ Իսկ նրա օրիորդական ճերմակ ձեռքերի անմեղ ենթադաստակների տեսքը և ծաղկող բարդենու բուրմունքը հետապնդում էին տղայի երևակայությունը դասարանում, եկեղեցում և կարցերում։

Իր բոլոր տետրերն ու կազմերը Վոզնիցինը լցրել էր գեղեցիկ միահյուսվող Ե և Յու անվանատառերով ու դանակով փորագրել նստարանի երեսին, խոցված ու բոցավառվող սրտի մեջ։ Աղջիկը, իհարկե, կանացի իր բնազդով կռահում էր նրա լուռումունջ երկրպագությունը, բայց Լենոչկայի աչքին նա չափազանց յուրային էր, չափազանց ամենօրյա։ Կոլյայի համար աղջիկը հանկարծ վերածվեց ինչ-որ ծաղկող, շլացուցիչ, բուրումնավետ հրաշքի, իսկ Վոզնիցինը Լենոչկայի համար մնաց թավաձայն, կոշտուկապատ ու փշփշոտ ձեռքերով, նեղլիկ մունդիրով ու լայն-լայն տաբատով միևնույն գիսախիվ տղեկը։ Նա անմեղանմեղ սեթևեթում էր ծանոթ գիմնազիստների և եկեղեցու տերտերների ջահել տղաների հետ, բայց, ճանկերը սրող կատվի նման, երբեմն նրան հաճույք էր պատճառում Վոզնիցինին ևս խանձելը կտրուկ, ջերմ ու չարաճճի հայացքով։ Բայց եթե իրեն կորցրած տղան չափից դուրս պինդ էր սեղմում նրա ձեռքը, աղջիկը վարդագույն մատիկը թափ էր տալիս ու բազմանշանակ ասում.

— Տեսեք, հա՜, Կոլյա, ամեն ինչ կասեմ մայրիկին։

Եվ Վոզնիցինը սառույց էր կտրում անկեղծ սարսափից։ Իհարկե, այդ տարի Կոլյան մնաց վեցերորդ դասարանում և, իհարկե, հենց այդ ամռանը հասցրեց սիրահարվել Սինեզնիկովա

ավագ քրոջը, ում հետ պարել է Բոգորոդսկում, ամառանոցում։ Բայց Զատկին սիրով լեփ-լեցուն նրա սիրտը զգաց նաև դրախտային երանության պահը...

Զատկի առավոտյան ժամերգությունը Յուլովների հետ մինչև վերջ լսեց Բորիսոգլեբսկի եկեղեցում, որտեղ Ալեքսանդրա Միլևնան նույնիսկ իր պատվավոր տեղն ուներ, հատուկ փոքրիկ գորգով և ծալովի փափուկ աթոռով։ Բայց, չգիտես ինչու, տուն վերադարձան ոչ միասին։ Ալեքսանդրա Միլիևնան և Օլեչկան կարծես թե մնացին օրհնելու կուլիչներն ու պասքաները[1], իսկ Լենոչկան, Արկաշան ու Կոլյան եկեղեցուց առաջինը դուրս եկան։ Բայց ճանապարհին Արկաշան հանկարծակի, և հավանաբար դիվանագիտորեն, չքվեց, ճիշտ ասես գետնի տակն անցավ։ Դեռահասները մնացին երկուսով։

Նրանք քայլում էին թևանցուկ, արագ ու ճարպկորեն ճամփա բացելով ամբոխի միջով, առաջ անցնելով մյուսներից, թեթև ու համաքայլ գցելով ջահել, հնազանդ ոտքները։ Ամեն ինչ արբեցնում էր նրանց այդ սքանչելի գիշեր. բերկրալից երգեցողությունը, կրակների առատությունը, համբույրները, ծիծաղն ու շարժումը եկեղեցում, իսկ փողոցում՝ անսովոր կերպով արթուն մնացած մարդկանց այդ բազմությունը, մութ ու տաք, գարնանային մեծ, կայծկլտուն աստղերով լի երկինքը, ցանկապատած այգիների խոնավ ու մատղաշ տերևների բույրը, այդ անսպասելի մոտիկությունն ու մոռացվածությունը փողոցում, բազմության մեջ, նախառավոտյան ուշ ժամին։

Զևացնելով, թե դիտավորյալ չի անում, Վոզնիցինն իրեն սեղմեց Լենոչկայի բազուկը։ Աղջիկը պատասխանեց հազիվ զգալի սեղմումով։ Նա կրկնեց այդ գողունի քնքշանքը, և աղջիկը դարձյալ արձագանքեց։ Այն ժամանակ տղան շատ կամացուկ, խավարի մեջ շոշափեց նրա բարակ մատների ծայրերը և քնքշությամբ շոյեց, ու մատները չդիմադրեցին, չբարկացան, ետ չքաշվեցին։

Այսպես մոտեցան նրանք տան դարպասին։ Արկաշան նրանց համար բաց էր թողել այգու դռնակը։ Տուն մտնելու համար պետք է անցնեին փայտյա նեղլիկ կամրջակների վրայով, որոնք ցեխի պատճառով գցված էին հարյուրամյա հսկա լորենիների երկու

[1] Զատկի ռուսական թխվածքներ (ծան. թարգմ.)։

ջարքերի միջև։ Բայց երբ նրանց ետևից շրխկաց փակվող դռնակը, Վոզնիցինը բռնեց Լենոչկայի ձեռքը և սկսեց համբուրել մատները՝ այնպես ջերմ, քնքուշ ու թրթռուն մատները։

— Լենոչկա, ես սիրում եմ, սիրում եմ ձեզ...

Նա գրկեց աղջկա գոտկատեղն ու մթության մեջ համբուրեց, կարծես թե ականջից ներքև։ Դրանից գլխարկը թեքվեց ու ընկավ գետնին, բայց Կոլյան չփնտրեց էլ։ Նա մի գլուխ համբուրում էր աղջկա սառած այտերն ու շշնջում, ասես զառանցանքի մեջ.

— Լենոչկա, սիրում եմ, սիրում եմ...

— Պետք չէ,— ասաց աղջիկը նույնպես շշնջալով, և տղան այդ շշնջոցի հետ գտավ նրա շուրթերը։— Պետք չէ... Թողեք ինձ... Թող...

Քնքուշ, այնպես կրակվող, կիսամանկական, միամիտ, անփորձ շուրթե՛րը։ Երբ տղան համբուրում էր, նա չէր դիմադրում, բայց և չէր պատասխանում համբուրով ու մի տեսակ հատկապես հուզիչ հոգոցներ էր հանում՝ ստեպ-ստեպ, խորն ու հնազանդ։ Իսկ Կոլյայի այտերը սառեցնելով, գլորվում էին հիացմունքի արցունքները։ Եվ երբ նա, պոկվելով աղջկա շուրթերից, աչքերը երկինք էր բարձրացնում, լորենու ճյուղերին սփռված աստղերը պար էին բռնում, զուգ-զուգ դառնում ու արծաթյա կետերով ցրիվ գալիս, բեկվելով արցունքների միջով։

— Լենոչկա... Սիրում եմ...

— Թողեք ինձ...

— Լենոչկա...

Եվ հանկարծ աղջիկը բացականչեց անսպասելի բարկացած.

— Դե, թողեք ինձ, անպիտան տղա։ Ա՛յ, կտեսնեք, ա՛յ, ամեն, ամեն բան մայրիկին կպատմեմ, անպայման։

Նա ոչինչ էլ չպատմեց մայրիկին, բայց այդ գիշերից հետո այլևս երբեք մենակ չմնաց Վոզնիցինի հետ։ Հետո էլ վրա հասավ ամառը...

— Ելենա Վլադիմիրովնա, իսկ հիշո՞ւմ եք, թե ինչպես Զատկի մի սքանչելի գիշեր երկու ջահելներ համբուրվում էին այգու դռնակի մոտ,— հարցրեց Վոզնիցինը։

— Ոչինչ էլ չեմ հիշում... Անպիտան տղա,— պատասխանեց նա քնքշորեն ծիծաղելով։— Բայց մի տեսեք, այստեղ է գալիս աղջիկս։ Հիմա ձեզ կծանոթացնեմ... Լենոչկա, Նիկոլայ Իվանովիչ Վոզնիցինն է, իմ հին, հին ընկերը, մանկությանս ընկերը։ Իսկ սա իմ Լենոչկան է։ Հիմա հենց նույն այն տարիքին է, ինչ ես էի Զատկի մի գիշեր։

— Մեծ Լենոչկան և փոքր Լենոչկան,— ասաց Վոզնիցինը։

— Ոչ։ Պառավ Լենոչկան և ջահել Լենոչկան,— հանգիստ, առանց դառնության առարկեց Լվովան։

Լենոչկան շատ էր նման մորը, բայց ավելի խոշոր էր ու գեղեցիկ։ Մոր շեկ մազերը նրա գլխին մետաղյա երանգով, բոված ընկույզի գույն էին ընդունել։ Մուգ հոնքերը բարակ ու համարձակ ուրվագիծ ունեին, բայց բերանը զգայական ու կոպտավուն դրոշմ ուներ, թեև թարմ էր ու սքանչելի։

Աղջկան հետաքրքրեցին լողացող փարոսները, և Վոզնիցինը բացատրեց դրանց կառուցվածքն ու նպատակը, ապա սկսեց խոսել անշարժ փարոսների, Սև ծովի խորության, ջրասուզակների աշխատանքի, նավերի խորտակման մասին։ Վոզնիցինը կարողանում էր հիանալի պատմել, և աղջիկը լսում էր բերանը կիսաբաց, աչքը նրա դեմքից չկտրելով։

Իսկ նա... Ինչքան շատ էր նայում աղջկան, սիրտն այնքան ավելի էր պարուրվում մեղմ ու լուսավոր թախիծով. կարեկցագին՝ իր, բերկրալից՝ նրա, այդ նոր Լենոչկայի նկատմամբ, և լուռ երախտագիտությամբ նախկինի հանդեպ։ Դա հենց այն զգացումն էր, որ այնպես տենչում էր Մոսկվայում, միայն թե լուսավոր էր, համարյա լիովին գտնված անձնասիրությունից։

Եվ երբ աղջիկը հեռացավ նրանից՝ ներսոնեսի մենաստանին նայելու, Վոզնիցինը բռնեց ավագ Լենոչկայի ձեռքն ու զգուշորեն համբուրեց։

— Չէ, այնուամենայնիվ, կյանքն իմաստուն բան է, և պետք է ենթարկվել նրա օրենքներին,— ասաց նա մտազբաղ։— Ու, բացի դրանից, կյանքը գեղեցիկ է։ Կյանքը մեռածների հավերժական հարություն է։ Ահա ես և դուք կգնանք, կփտենք, կանհետանանք, բայց մեր խելքից, ոգեշնչումից ու տաղանդից, ինչպես մոխրից, ծիլ կտան նոր Լենոչկա և նոր Կոլյա Վոզնիցին։ Ամեն ինչ կապակցված է, ամեն բան միահյուսված։ Ես կգնամ, բայց և կմնամ ես։ Պետք է միայն սիրել կյանքն ու հնազանդվել նրան։ Մենք բոլորս միասին ենք ապրում՝ և՛ մեռածները, և՛ հարություն առնողները։

Նա մի անգամ ևս կռացավ տիկնոջ ձեռքը համբուրելու, իսկ

կինը քնքշորեն համբուրեց նրա արծաթափայլ քունքը։ Ու երբ դրանից հետո նայեցին միմյանց, նրանց աչքերը խոնավ էին ու ժպտում էին մեղմ, հոգնած ու տխուր։

1910

ՆՈՒՆԱՔԱՐԵ ԱՊԱՐԱՆՋԱՆԸ

L. van Beethoven, 2 son. (op. 2, № 2).
Largo Appassionato

1

Օգոստոսի կեսին, նորալուսնից առաջ, հանկարծ գարշելի եղանակներ սկսվեցին, որ այնքան հատուկ են Սև ծովի հյուսիսային ափին։ Մերթ օրեր շարունակ ծանրորեն թանձր մառախուղ էր նստում ցամաքի ու ծովի վրա, և այնժամ փարոսի հսկա շչակը մռնչում էր օր ու գիշեր՝ կատաղած ցուլի պես։ Մերթ ծեգից ծեգ ջրափոշու նման մանրիկ անձրև էր մաղում միալար՝ կավահող ճանապարհներն ու արահետները համատարած խրուտ ցեխաշաղախի վերածելով, որի մեջ թաղվում մնում էին սայլերն ու կառքերը։ Մերթ հյուսիս-արևմուտքից, տափաստանի կողմից, կատաղի մրրկահողմ էր սկսում փչել, և օրորվում էին ծառերի կատարները՝ կորանալով ու շտկվելով փոթորկված ծովի ալիքների պես, գիշերները դղրդում էին ամառանոցատների թիթեղյա ծածկերը, ասես ինչ-որ մեկը պայտած ծանր կոշիկներով վազում դոփդոփում էր տանիքներին. ցնցվում էին պատուհանների շրջանակները, շրխկալով բացուխուփ էին լինում դռները, և քամին վայրագ ոռնում էր ծխնելույզներում։ Մի քանի ձկնորսանավ մոլորվել էին ծովում, իսկ երկուսն էլ բնավ չվերադարձան. միայն մի շաբաթ անց ձկնորսների դիակներն ափ նետվեցին տարբեր տեղերում։

Քաղաքամերձ ծովափնյա առողջարանի բնակիչները, մեծ մասամբ հույներ ու հրեաներ՝ բոլոր հարավցիների նման կենսասեր ու կասկածոտ մարդիկ, շտապով տեղափոխվում էին քաղաք։ Խմած խճուղով անվերջ ձգվում էին տնային ամեն տեսակ իրերով՝ ներքնակներով, բազմոցներով, սնդուկներով, աթոռներով, լվացարաններով, ինքնաեռներով ծանրաբեռն սայլերի ջարաններ։ Մարդ խղճում և տխրում, և զզվանք էր զգում, երբ տմույն անձրևաքողի միջից տեսնում էր այդ ողորմելի կահ-կարասին, որ այնպես հնամաշ, կեղտոտ ու աղքատիկ էր թվում, երբ նայում էր ձեռքները մի արդուկ, մի թիթեղե աման կամ զամբյուղ առած, բեռան գլխին, թաց բրեզենտի վրա նստած աղախիններին ու խոհարարուհիներին, քրտնակոխ, ուժասպառ ձիերին, որ մի գլուխ կանգ էին առնում դողդողուն ոտքերով, քուլա-քուլա գոլորշի արձակելով ու խոր հևհևալով, ռագոժե անձրևոցների մեջ փաթաթված, խոպաձայն հայհոյող սայլապաններին։ Ավելի տխուր էր տեսնել լքված ամառանոցներն իրենց հանկարծահաս լայնաղատության, ամայության ու մերկության մեջ, ավերված ծաղկաթմբերով, ջարդված ապակիներով, անտեր թողնված շներով և ամառանոցների ամեն տեսակ աղբով՝ ծխախոտի մնացորդներ, թղթի կտորտանք, խեցեբեկորներ, տուփեր, դեղասրբվակներ։

Բայց սեպտեմբերի սկզբին եղանակը լրիվ ու միանգամայն անսպասելիորեն փոխվեց։ Մեկեն այնպիսի խաղաղ ու անամպ, այնպիսի պայծառ, արևոտ ու տաք օրեր սկսվեցին, որոնց նմանը հուլիսին էլ չէր եղել։ Զորացած, հնձած արտերում, ծակոտուղ դեղին խոզանի վրա փայլարացող փայլկտաց աշնանային ոստայնը։ Հանդարտված ծառերն անաղմուկ ու հեզ թափում էին դեղձան տերևները։

Իշխանուհի Վերա Նիկոլաևնա Շեինան՝ ազնվականության պարագլխի կինը, չկարողացավ հեռանալ ամառանոցից, որովհետև քաղաքի նրանց տան վերանորոգումը դեռ ավարտված չէր։ Ու հիմա նրան անասելի բերկրանք էին պատճառում հրաշալի եղանակը, անդորրը, միայնությունը, ջինջ օդը, հեռագրալարերի վրա թառած ծիծեռնակների ճռվողյունը, որ երամներ լինն կազմում չվելու համար, և ծովից թույլ-թույլ փչող աղաբուր փաղաքուշ սյուքը։

2

Այս ամենից զատ, այդ օրը՝ սեպտեմբերի տասնյոթը, նրա անվանակոչության օրն էր։ Մանկության հեռավոր, քաղցր հուշերով նա միշտ էլ սիրում էր այդ օրը և միշտ էլ երջանկարար ինչ-որ հրաշք էր սպասում դրանից։ Ամուսինն առավոտյան շտապ

գործով քաղաք գնալուց առաջ նրա գիշերասեղանին տանձաձև հիասքանչ մարգարտագինդերի մի տուփ էր դրել, և այդ նվերից ավելի էր մեծացել կնոջ ուրախությունը։

Մենակ էր ամբողջ տանը։ Ամուրի եղբայրը՝ Նիկոլայը, որ դատախազի օգնական էր և ընդհանրապես իրենց հետ էր ապրում, նույնպես գնացել էր քաղաք, դատարան։ Ամուսինն ասել էր, թե ճաշին կբերի մի երկու մարդու և ամենամոտ ծանոթներին միայն։ Լավ էր, որ անվանակոչության տոնը համընկնում էր ամառանոցային շրջանին։ Քաղաքում ստիպված պիտի լիներին տոնական փառավոր ճաշկերույթ սարքել, գուցե նույնիսկ պարահանդես տալ, իսկ այստեղ՝ ամառանոցում կարելի էր յոլա գնալ ամենահամեստ ծախսերով։ Իշխան Շեինը, չնայած հասարակության մեջ իր երևելի դիրքին, իսկ գուցե և դրա պատճառով, հազիվ էր ծայրը ծայրին հացնում։ Նրա նախնիները համարյա լրիվ քայքայել էին տոհմական վիթխարի կալվածքը, մինչդեռ իրենք հարկադրված էին ապրել իրենց կարողություններից վեր՝ ընդունելություններ սարքել, բարեգործություն անել, լավ հագնվել, ձիեր պահել ու նման բաներ։ Իշխանուհի Վերան, որի նախկին բուռն սերը ամուսնու հանդեպ վաղուց արդեն փոխվել էր հաստատուն, հավատարիմ, ճշմարիտ բարեկամության, ամեն կերպ ջանում էր օգնել իշխանին, որ նա լիակատար քայքայման չհասնի։ Ամուսնու համար աննկատ, նա իրեն զրկում էր շատ ու շատ բաներից և հնարավորին չափ խնայողություններ անում տնային տնտեսության մեջ։

Հիմա նա պտտում էր պարտեզում և մկրատով զգուշորեն ծաղիկներ կտրում-փնջում ճաշի սեղանի համար։ Ծաղկաթմբերը նոսրացել էին ու խառնակ տեսք ունեին։ Վերջին ծաղիկներն էին տալիս երփներանգ, բազմաթերթ մեխակները, ինչպես և շահպրակը՝ կիսով չափ բացված, կիսով չափ՝ կաղամբի հոտ արձակող բարակ կանաչ պատիճներով, վարդենիները դեռ տալիս էին,— այդ ամառվա մեջ երրորդ անգամ,— կոկոններ ու վարդեր, բայց արդեն՝ նվազ, հատուկենտ, ասես հոռացած։ Սակայն ահա իրենց պաղ, գոռոզ գեղեցկությամբ ճոխ փթթել էին գեորգինները, քաջվարդերն ու աստղածաղիկները՝ աշնանային խոտաբույր, թախծաբեր հոտ տարածելով դյուրընկալ օդում։ Մնացած ծաղիկներն իրենց շռայլ սիրուց և ամառային չափազանց բեղուն մայրությունից հետո հուշիկ հողին էին շաղում ապագա կյանքի անհամար սերմեր։

Քիչ հեռվից՝ խճուղուց լսվեց ավտոմոբիլի եռատոն շչակի ծանոթ ձայնը։ Ուրեմն գալիս էր իշխանուհի Վերայի քույրը՝ Աննա Նիկոլաևնա Ֆրիեսեն, որ առավոտյան հեռախոսով խոստացել էր գալ օգնել քրոջը հյուրերին ընդունելու և տան գործերում։

Նուրբ լսողությունը չխաբեց Վերային։ Գնաց ընդառաջ՝ դիմավորելու։ Մի քանի րոպեից ամառանոցի դարպասի մոտ կտրուկ կանգ առավ ծածկավոր շքեղ մի ավտոմոբիլ, և վարորդը, ճարպիկ ցած թռչելով նստատեղից, բացեց մեքենայի դռնակը։

Քույրերը համբուրվեցին բերկրանքով։ Դեռ ամենավաղ մանկությունից նրանք կապված էին միմյանց ջերմ ու հոգատար բարեկամությամբ։ Արտաքինով ապշեցնելու չափ նման չէին իրար։ Ավագը՝ Վերան, անգլուհի գեղատես մորն էր քաշել սլացիկ, ճկուն մարմնով, նրբին, բայց պաղ ու հպարտ դեմքով, գեղեցիկ, թեև բավական մեծ ձեռքերով և ուսերի մի թովիչ սահուն թեքությամբ, որ հին մանրանկարներում կարելի է տեսնել։ Կրտսերը՝ Աննան, ընդհակառակը, ժառանգել էր թաթար իշխան հոր մոնղոլական արյունը. հոր պապը մկրտություն էր ընդունել տասնիններորդ դարի սկզբին միայն, և նրա-վաղնջական տոհմը սերում էր հենց Թամերլանից կամ Լենկ-Թեմուրից, ինչպես հայրը թաթարի լեզվով հպարտորեն հորջորջում էր այդ արյունարբու մեծ վանդալին։ Աննան մի կես գլուխ ցած էր քրոջից, փոքր-ինչ ավելի լայն թիկունքով, աշխույժ ու թեթևամիտ, հեգնասեր։ Ակնհայտորեն մոնղոլական տիպի նրա դեմքը՝ բավական նկատելի այտոսկրերով, նեղ աչքերով, որ հետն էլ կկոցում էր կարճատեսությունից, փոքրիկ, պագշոտ բերանի, հատկապես թեթևակի առաջ մղված ուռուցիկ ստորին շրթունքի ամբարտավան արտահայտությամբ,— այդ դեմքը, այնուհանդերձ, առինքնում էր անորսալի և անմեկնելի ինչ-որ հրապույրով, որ թերևս ժպիտի մեջ էր, թերևս բոլոր դիմագծերի խիստ կանացիության կամ գրգռիչ, հանդուգն-պչրոտ դիմախաղի մեջ։ Նրա գեղանի անգեղությունը տղամարդկանց հետաքրքրությունը շարժում և ուշադրությունը գրավում էր շատ ավելի հաճախ ու սաստիկ, քան քրոջ ազնվական գեղեցկությունը։

Ամուսնացած էր մի շատ հարուստ և շատ ծանծաղ մարդու հետ, որը կատարելապես ոչինչ չէր անում, սակայն բարեգործական ինչ-ինչ հաստատության պաշտոնատար էր համարվում

և կամեր-յունկերի տիտղոս ուներ։ Աննան ամուսնուն տանել չէր կարողանում, բայց նրանից երկու զավակ էր ունեցել՝ տղա ու աղջիկ, հետո որոշել էր այլևս երեխա չունենալ և չէր ունենում։ Ինչ վերաբերում էր Վերային, ապա նա տենչալով տենչում էր երեխա ունենալ, և նույնպես նրան թվում էր ինչքան շատ՝ այնքան լավ, բայց, չգիտես ինչու, երեխա չէր լինում, և նա հիվանդագին ու ջերմեռանդորեն պաշտում էր կրտսեր քրոջ սիրունիկ, սակավարյուն, միշտ բարեկիրթ ու խելոք, ալյուրաճերմակ դրժգույն դեմքերով և տիկնիկի վուշանման գանգուր մազերով երեխաներին։

Աննան ամբողջովին բաղկացած էր կենսախինդ խառնափընթորությունից և սրտագրավ, երբեմն արտառոց հակասություններից։ Նա հաճույքով ամենավտանգավոր սիրախաղերի մեջ էր նետվում Եվրոպայի բոլոր մայրաքաղաքներում ու առողջարաններում, բայց երբեք չէր դավաճանում ամուսնուն, թեև նրան քամահրանքով ծաղրում էր թե՛ երես առ երես, թե՛ ետևից. շռայլող էր, անասելի սիրում էր բախտախաղեր, պարեր, սուր տպավորություններ, զգայացունց տեսարաններ, արտասահմանում հաճախում էր կասկածելի սրճարաններ, բայց միաժամանակ աչքի էր ընկնում առատաձիր բարությամբ ու խորին, անկեղծ աստվածավախությամբ, որ նրան հարկադրել էր նույնիսկ գաղտնաբար կաթոլիկություն ընդունել։ Հազվագյուտ գեղեցիկ թիկունք, կուրծք և ուսեր ուներ։ Մեծ պարահանդեսներ գնալիս նա շատ ավելի էր բացում լանջն ու թիկունքը, քան թույլ էին տալիս պատշաճությունն ու մոդան, բայց ասում էին, թե ցածր դեկոլտեի տակ միշտ էլ մազահյուս ներքնահանդերձ էր հագնում։

Իսկ Վերան խստաբարո պարզ էր, ամենքի հետ՝ սառն ու փոքր-ինչ բարձրամտորեն հարգալիր, ինքնակամ և վեհորեն անվրդով։

3

— Աստված իմ, ինչ լա՜վ է այստեղ։ Ինչ լա՜վ է ձեզ մոտ, — ասում էր Աննան՝ քրոջ հետ արագ ու մանրաքայլ գնալով արահետով։— Եթե կարելի է՝ մի քիչ նստենք դարափի գլխի նստարանին։ Այնքան վաղուց է՝ ծով չեմ տեսել։ Ու ի՜նչ հրաշալի օդ է,— շնչում ես, ու սիրտդ բացվում է։ Անցած ամառ Ղրիմում, Մեխսորում մի զարմանալի հայտնագործություն արեցի։ Գիտե՞ս ինչ հոտ ունի ծովի ջուրն ալեկոծության ժամանակ։ Պատկերացրու, հափրուկի՛։

Վերան բարեհամբույր քմծիծաղեց.

— Ֆանտազյո՛ր ես, հա՜։

— Չէ՛, չէ՛։ Մի անգամ էլ, հիշում եմ, ծիծաղեցին վրաս, երբ ասացի, թե լուսնի լույսի մեջ մի տեսակ վարդագույն երանգ կա։ Իսկ, այ, վերջերս նկարիչ Բորիցկին,— նա՜, էլի, որ նկարում է ինձ,— ընդունեց, որ ես իրավացի եմ եղել, և որ նկարիչները վաղուց գիտեն դա։

— Այդ նկարիչը քո նոր հրապուրա՞նքն է։

— Միշտ մի բան կհնարես՜,— ծիծաղեց Աննան և, արագ գնալով դեպի ուղղաբերձ պարսպի պես խորընկա ծովն իջնող դարափի եզրը, ցած նայեց, հանկարծ ճչաց սոսկումով և գույնը գցած ետ քաշվեց իսկույն։

— Օ՜, ինչ բա՜րձր է,— ասաց նվաղուն ու դողացող ձայնով։— Երբ ցած եմ նայում այսպիսի բարձր տեղից, մի տեսակ քաղցր ու զզվելի խուտուտ եմ զգում կրծքիս տակ... ու ոտքերիս մատները մզմզում են... Եվ, այնուամենայնիվ, քաշում է, քաշում...

Ուզում էր էլի կռանալ դարափի վրա, բայց քույրը ետ պահեց նրան։

— Աննա, սիրելիս, ի սե՛ր աստծու։ Իմ գլուխն էլ է պտտվում, երբ նայում ես ցած։ Նստիր, խնդրում եմ։

— Լա՜վ, լա՜վ, ըհը, նստեցի... Բայց մի նայիր, տես՝ ի՜նչ գեղեցկություն է, ի՜նչ երանություն, ուղղակի մարդու աչք չի կշտանում։ Թե իմանայիր՝ որքան երախտապարտ եմ աստծուն բոլոր այն հրաշալիքների համար, որ արարել ու պարգևել է մեզ։

Երկուսն էլ մի պահ մտածմունքի մեջ ընկան։ Վարը՝ խորունկ խորքերում հանգչում էր ծովը։ Նստած տեղից ափը չէր երևում, և դրանից ավելի էր սաստկանում ծովատարածքի անսահմանության ու վեհության զգացողությունը։ Ջուրը փաղաքուշ-հանդարտ էր և ծիծղուն-կապուտակ, ավելի բացերանգ էր հոսքատեղերում միայն՝ շեղակի հարթ շերտերով, և թանձրակապույտ էր դառնում հորիզոնի մոտ։

Հազիվ նկատելի լինելու աստիճան պստլիկ երևացող ձկնորսական նավակներն անշարժ նիրհում էին ծովի հարթության վրա, ափից ոչ հեռու։ Իսկ քիչ այն կողմ ասես օդում կանգնել

մնացել էր եռակայմ մի նավ՝ վերից վար պատված միանման, քամուց փքված, սպիտակ գեղաշար առագաստներով։

— Ես հասկանում եմ քեզ— ասաց ավագ քույրը մտախոհ, —բայց իմ զգացողությունը մի տեսակ այն չէ, ինչ քոնը։ Երբ ես երկար ընդմիջումից առաջին անգամ ծով եմ տեսնում՝ ինձ և՛ հուզում է, և՛ ուրախացնում, և՛ ապշեցնում։ Կարծես առաջին անգամ հայտնվում եմ վիթխարի, վեհասքանչ հրաշքի առջև։ Բայց հետո, երբ վարժվում եմ արդեն, սկսում է ինձ ճնշել իր տափակ ամայությամբ... Հոգնում եմ դիտելուց և աշխատում եմ այլևս չնայել։ Զանձրացնում է։

Աննան ժպտաց։

— Ինչու՞ ես ժպտում— հարցրեց քույրը։

— Անցած ամառ,— ասաց Աննան խորամանկ շեշտով,— մի մեծ խումբ կազմած, ձիերով Ցալթայից գնում էինք Ուչ-Կոշ։ Անտառապետությունից դենն է, ջրվեժից վեր։ Նախ մշուշի մեջ ընկանք, սարսափելի խոնավ էր ու շուրջը համարյա բան չէր երևում, իսկ մենք բարձրանում էինք հա բարձրանում սոճիների միջև ձգվող կածանով։ Ու մեկ էլ մի տեսակ կտրվելու պես, վերջացավ անտառը, և դուրս եկանք մշուշի միջից։ Պատկերացրու՝ նեղլիկ հրապարակ ժայռի գլխին, ու ոտքներիս տակ՝ անդունդ։ Ցածում գյուղերը համարյա լուցկու տուփերի չափ էին երևում, անտառներն ու այգիները՝ մանրիկ խոտի պես։ Տեղանքն ամբողջ դեպի ծովն էր իջնում աշխարհագրական քարտեզի նման։ Իսկ հետո ծո՞վն էր։ Մի հիսուն-հարյուր վերստ այն կողմ։ Ինձ թվաց՝ կախված եմ օդում ու ահա-ահա կթռչեմ։ Ի՞նչ գեղեցկություն, ի՞նչ թեթևություն։ Շուռ եկա ու մեր ուղեկցորդին ասացի հիացմունքով. «Հը, լավ է, չէ՞, Սեյիդ օղլի»։ Իսկ սա լեզվով ծպպացրեց միայն. «Է՛, խանում, թե իմանա՝ ո՞նց է էս բոլորը ձանձրացրել ինձի։ Ա՛-ամեն օր տեսնում ենք»։

— Շնորհակալություն համեմատության համար,— ծիծաղեց Վերան,— ոչ, իմ միտքն այն է միայն, որ մենք՝ հյուսիսցիներս, երբեք չենք հասկանա ծովի հմայքը։ Ես անտառ եմ սիրում։ Հիշո՞ւմ ես Եգորովսկի մեր անտառը... Մի՞թե կարող է երբևէ ձանձրացնել։ Սոճինե՛րը... Եվ ի՞նչ մամուռ... Հապա սունկե՛րը։ Կարծես ալ կերպասից լինեն՝ նախշված ճերմակ ուլունքով։ Ու անդորր... զովություն։

— Ինձ համար մեկ է, ես դրանք բոլորն էլ սիրում եմ,—

պատասխանեց Աննան։— Իսկ ամենից ավելի սիրում եմ իմ քույրիկին, իմ լուրջ ու խելոք Վերենկային։ Չէ՞ որ ընդամենը երկու քույր ենք՝ ամբողջ աշխարհում։

Նա գրկեց ավագ քրոջն ու սեղմվեց նրան— այտը՝ այտին։ Եվ հանկարծ սթափվեց։

— Չէ, հիմարի մեկն եմ ես։ Նստել երկար-բարակ խոսում ենք բնության մասին՝ ինչպես վեպերում, ու բոլորովին մոռացել եմ, որ քեզ նվեր եմ բերել։ Այ, տես։ Վախենում եմ միայն՝ կհավանե՞ս արդյոք։

Ձեռնաքսակից հանեց փոքրիկ մի ծոցատետր՝ զարմանալի կազմով. հնամաշ, ժամանակից գորշացած կապույտ թավշի վրա ոլորվում էր փայլատ ոսկեհյուս, եզակիորեն բարդ, նրբին ու գեղեցիկ ցանցկեն մի դրվագանախշ՝ ակնհայտորեն հմուտ ու համբերատար արվեստագետի ձեռքի խնամքոտ գործ։ Գրքույկը կախվում էր թելի պես բարակ ոսկե շղթայից, իսկ թերթիկները փղոսկրից էին։

— Ի՞նչ սքանչելի բան է։ Ուղղակի հրաշք,— ասաց Վերան ու համբուրեց քրոջը։— Շնորհակալություն։ Որտեղի՞ց ես ճարել այս գանձը։

— Անտիկվարային մի խանութից։ Գիտես, չէ՞, որ հնոտիներ քրքրելու թուլություն ունեմ։ Ու, ըհը, մեկ էլ աչքիս ընկավ այս աղոթագիրքը։ Այ, տեսնո՞ւմ ես՝ ինչպես է զարդանախշն այստեղ խաչ կազմում։ Ճիշտ է, ես միայն կազմը գտա, մնացածը՝ թերթիկներ, ճարմանդներ, մատիտ, հարկ եղավ ավելացնել։ Բայց Մոլինեն ամենևին չէր ուզում ինձ հասկանալ, ինչքան էլ բացատրում էի։ Ճարմանդները պետք է լինեին նույն ոճով, ինչ որ ամբողջը նախշը՝ փայլատ, հնացած ոսկուց, նուրբ զարդաքանդակներով, իսկ նա աստված գիտի, թե ինչ է արել։ Բայց շղթան որ արդեն իսկական վենետիկյան է, շատ հին։

Վերան քնքշորեն շոյեց հրաշագեղ կազմը։

— Ի՞նչ խոր հնություն... Ո՞ր ժամանակներից կարող է լինել,— հարցրեց։

— Վախենում եմ՝ չկարողանամ ստույգ որոշել։ Մոտավորապես տասնյոթերորդ դարի վերջ, տասնութերորդի կեսեր...

— Տարօրինակ է,— ասաց Վերան խոհուն ժպիտով։— Ահա ձեռքիս է մի բան, որին գուցե մարկիզուհի Պոմպադուրի կամ հենց Անտուանետ թագուհու ձեռքն է դիպել... Բայց գիտես, Աննա, քեզ նման խենթուկի գլխում միայն կարող էր ծագել

աղոթագիրքը կանացի carnet[1] դարձնելու միտք։ Լավ, ինչ որ է, գնանք տեսնենք տանն ինչ են անում։

Նրանք անցան քարաշեն մեծ պատշգամբով, որ բոլոր կողմերից պարուրված էր «Իզաբելա» խաղողի հոծ թառամաներով։ Ելակի թույլ բույրը արձակող սև, ճոխ ողկույզները ծանրորեն կախված էին թխաթույր, տեղ-տեղ արևից ոսկեվառ թփերի մեջ։ Պատշգամբն ամբողջ ողողված էր աղոտ-կանաչավուն լույսով, որից կանանց դեմքերը մեկեն դժգունեցին։

— Ուզում ես՝ սեղանն այստե՞ղ գցեն,— հարցրեց Աննան։

— Այո, սկզբում ինքս էլ էի այդպես որոշել... Բայց հիմա երեկոները ցուրտ են այնքան։ Ավելի լավ է սեղանատանը նստենք։ Իսկ տղամարդիկ թող դուրս գան այստեղ ծխելու։

— Հետաքրքիր մեկնումեկը լինելո՞ւ է։

— Առայժմ չգիտեմ։ Գիտեմ միայն, որ գալու է մեր պապիկը։

— Ախ, մեր անուշիկ պապի՜կը։ Ինչ լա՜վ է,— կանչեց Աննան՝ ձեռքերն իրար զարկելով։— Թվում է հարյուր տարի չեմ տեսել նրան։

— Վասյայի քույրը կլինի ու երևի պրոֆեսոր Սպեշնիկովը։ Երեկ, Աննենկա, ուղղակի գլուխս կորցրել էի։ Դու գիտես, որ նրանք երկուսն էլ՝ պապիկն էլ, պրոֆեսորն էլ, լավ ուտել են սիրում։ Բայց ոչ այստեղ, ոչ էլ քաղաքում ոչ մի գնով լավ բան չես գտնի։ Լուկան մի տեղից լորեր է ճարել,— պատվիրել էր մի ծանոթ որսորդի,— ու հիմա խելքին զոռ է տալիս, որ մի բան սարքի դրանցից։ Ռոստբիֆ բերեցին, ոչինչ, համեմատաբար լավն է... ավաղ, էլի ու էլի ռոստբիֆ։ Շատ լավ խեցգետիններ ունենք։

— Էհ, այնքան էլ վատ չէ։ Մի անհանգստանա։ Ի միջի այլոց, խոսքը մեր մեջ, դու էլ համեղ բաներ ուտելու թուլություն ունես։

— Բայց հազվագյուտ բան էլ կլինի։ Այս առավոտ ձկնորսը ծովաքլոր բերեց։ Իմ աչքով տեսա։ Ուղղակի՜ հրեշ։ Մարդ նույնիսկ սարսափում է նայելիս։

Աննան, որ անհագորեն հետաքրքրվում էր ամեն ինչով՝ երեն վերաբերեր թե չվերաբերեր, անմիջապես պահանջեց, որ բերեն ծովաքլորն ու ցույց տան իրեն։

[1] Տոմատետր (ֆրանս.)։

Եկավ բարձրահասակ, սափրված, դեղնադեմ խոհարար Լուկան՝ մի մեծ, երկարավուն, սպիտակ լագան բերելով, դժվարությամբ, զգույշ բռնած կանթերից, վախենալով, որ ջուրը հանկարծ կթափվի պարկեշին։

— Տասներկուսուկե՜ս ֆունտ, ձերդ պայծառափայլություն,— ասաց խոհարարական մի առանձին հպարտությամբ։— Քիչ առաջ կշռեցինք։

Ջուկը շատ մեծ էր լագանի համար և պառկել էր հատակին՝ պոչը վեր ծալված։ Թևուկները ոսկեհուռ էին, լոտակները՝ ալկարմիր, իսկ վիթխարի գիշատիչ մռութից աջ ու ձախ երկու նուրբ երկնագույն, հովհարի պես ծալքավոր, երկար թևաձևեր էին ձգվում։ Ծովաքլորը դեռ կենդանի էր ու ճիգով վերուվարում էր խոիկները։

Կրտսեր քույրը ճկույթն զգույշ դիպցրեց ձկան գլխին։ Սակայն ծովաքլորն անսպասելիորեն ճղփյունով թափահարեց պոչը, և Աննան ճիչով ձեռքը ետ քաշեց։

— Բարեհաճեցեք չանհանգստանալ, ձերդ պայծառափայլություն, ամեն ինչ կանենք լավագույն ձևով,— ասաց խոհարարը՝ ակներևաբար հասկանալով Աննայի անհանգստությունը։ —Հենց նոր բուլղարացին երկու սեխ բերեց։ Անանասային։ Տեսքով կարծես կանտալուպայի լինեն, բայց անուշաբույր են ավելի։ Եվ նմանապես համարձակվում եմ հարցնել ձերդ պայծառափայլությանը՝ ի՞նչ սոուս կհրամայեք մատուցել ծովաքլորի հետ— տարտա՞ր, թե լեհական կամ գուցե պարզապես յուղով շորահացի փոշու խյո՞ւս։

— Արա՝ ինչ կուզես։ Գնա՛,— հրամայեց իշխանուհին։

4

Ժամը հինգից հետո հյուրերն սկսեցին հավաքվել։ Իշխան Վասիլի Լվովիչը հետը բերեց այրի քրոջը՝ Լյուդմիլա Լվովնային, ամուսնու ազգանվամբ՝ Դոպասովա, որ լիքը-լիքը, բարեսիրտ ու արտակարգ քչախոս կին էր, մի աշխարհիկ երիտասարդի՝ հարուստ, դատարկապորտ ու խրախճասեր Վասյուչոկին, որին ամբողջ քաղաքը ճանաչում էր այդ մտերմական անունով, և որը հասարակության մեջ շատ հաճելի՝ մարդ էր երգելու և արտասանելու իր ճարտարությամբ, ինչպես նաև կենդանի պատկերներ, ներկայացումներ ու բարեգործական վա-

ճառք կազմակերպելու շնորհքով, նշանավոր դաշնակահարուհի Ժենի Ռեյտերին, որ իշխանուհի Վերայի դասընկերուհին էր եղել Սմոլնիի ինստիտուտում, ինչպես նաև աներորդի Նիկոլայ Նիկոլաևիչին։ Այնուհետև ավտոմոբիլով եկավ Աննայի ամուսինը՝ մաքուր սափրված, թանձրամարմին, անճոռնիորեն վիթխարի պրոֆեսոր Սպեշնիկովի և տեղի փոխնահանգապետ ֆոն Զեկի հետ։ Ամենավերջում եկավ գեներալ Անոսովը՝ վարձու սիրուն լանդոյով, երկու սպայի ուղեկցությամբ. մեկը շտաբի գնդապետ Պոնամարյովն էր՝ ժամանակից շուտ ծերացած, չորչորուկ, մաղձոտ, գրասենյակային տաժանելի աշխատանքից հյուծված մի մարդ, մյուսը գվարդիական հուսար-պորուչիկ Բախտինսկին, որ Պետերբուրգում հռչակված էր իբրև լավագույն պարող և պարահանդեսների անզուգական կարգադրիչ։

Գեներալ Անոսովը՝ մարմնեղ, բարձրահասակ, արծաթահեր մի ծերունի, ծանր-ծանր իջավ ոտնակից՝ մի ձեռքով կոթնած նստատեղի բռնակին, մյուսով՝ կառքի եռնամասին։ Ձախ ձեռքում պահել էր լսափողակը, աջում՝ ռետինե ծայրակալով ձեռնափայտը։ Դեմքը խոշոր էր, կոպիտ, կարմիր, մսեղ քթով և ճառագայթաձև դասավորությամբ, թեթևակի ուռած կիսաշրջաններ հիշեցնող կկոցուն աչքերի բարեմիտ-վսեմ, փոքր-ինչ քամահրական մի արտահայտությամբ, որ հատուկ է հաճախակի և դեմառդեմ վտանգ ու մահ տեսած կորովի և պարզ մարդկանց։ Քույրերը, որ հեռվից ճանաչել էին նրան, կառքի մոտ վազեցին ճիշտ ժամանակին՝ երկու կողմից կեսկատակ-կեսլուրջ թևատակերից պահելու համար։

— Արքեպիսկոպոս էլ... դարձանք,— ասաց գեներալը փաղաքուշ՝ խոպոտավուն թավ ձայնով։

— Պապիկ, սիրելի՜ս, անգի՜նս,— ասաց Վերան թեթև կըշտամբանքի շեշտով,— ամեն օր ձեզ ենք սպասում, իսկ դուք աչք էլ չեք ուզում գցել մեր կողմը։

— Մեր պապիկն ինչ եկել է հարավ՝ խիղճը լրիվ կորցրել է,— ծիծաղեց Աննան։— Կարելի էր գոնե հիշել, չէ՞, հարազատ սանիկին։ Բայց ո՜չ, դուք ձեզ դոնժուանավարի եք պահում, անամո՜թ մարդ, ու բոլորովին մոռացել եք՝ կանք, չկանք...

Գեներալը, գլխարկը հանելով փառահեղ գլխից, հերթով համբուրեց քույրերի ձեռքերը, ապա՝ այտերն ու նորից ձեռքերը։

— Համբերեք... աղջիկներ... մի՛ նախատեք,— ասում էր նա՝ ամեն բառից հետո խոր շունչ առնելով, որ վաղուց սկսված

շնչարգելությունից էր։— Ազնիվ խոսք... երիցս նզովյալ բժիշկները... ամբողջ ամառ իմ ռևմատիզմն էին լողացնում... իրենց այդ գարշելի... կիսելի մեջ... սոսկալի հոտ ունի... Ու բաց չէին թողնում... Դուք առաջինն եք... ում այցելում եմ... Անչափ ուրախ եմ... որ տեսնում եմ ձեզ... Ինչպե՞ս եք, թովչիկներ... Վերոչկա, դու... կատարյալ լեդի ես դարձել... շատ ես նմանվել ... լուսահոգի մորդ... Ե՞րբ կկանչես կնքելու։

— Օ՜, պապիկ, վախենամ թե՝ երբեք...

— Մի հուսահատվիր... ամեն ինչ առջևումն է... Աղոթիր աստծուն... Իսկ դու, Անյա, ամենևին չես փոխվել... Դու վաթսուն տարեկանում էլ... նույն թոռ-վոռ ճպուռը կմնաս։ Հապա սպասեցեք։ Ձեզ ներկայացնեմ պարոնայք սպաներին։

— Ես վաղուց արդեն այդ պատիվն ունեմ,— ասաց գնդապետ Պոնամարյովը՝ գլուխ տալով։

— Ինձ Պետերբուրգում են ծանոթացրել իշխանուհու հետ,—վրա բերեց հուսարը։

— Ուրեմն ներկայացնեմ քեզ, Անյա, պորուչիկ Բախտինսկուն։ Պարող ու կովազան է, բայց լավ հեծելակ։ Հապա, Բախտինսկի, սիրելիս, կառքից բեր այն բանը... Գնա՛նք, աղջիկներ ... Ուտելու ի՞նչ կտաս մեզ, Վերոչկա։ Ցեխերի մեջ... այդքան ծոմ պահելուց հետո... ախորժակս ազատ արձակված պրապորշչիկի... ախորժակ է դարձել։

Գեներալ Անոսովը հանգուցյալ իշխան Միրզա-Բուլատ-Տուգանովսկու մարտական ընկերն էր ու հավատարիմ բարեկամը։ Իշխանի մահից հետո նա իր ողջ գորովագին բարեկամությունն ու սերը փոխադրեց նրա դուստրերի վրա։ Աղջիկներին գիտեր, երբ սրանք դեռ շատ փոքր էին, իսկ կրտսերին՝ Աննային նույնիսկ կնքահայր էր դարձել։ Այն ժամանակ, ինչպես և մինչև օրս, նա Կ. քաղաքի մեծ, սակայն համարյա լքված ամրոցի պարետն էր և ամեն օր լինում էր Տուգանովսկիների տանը։ Երեխաներն ուղղակի պաշտում էին նրան գորովանքի, նվերների համար, կըրկեսի ու թատրոնի օթյակներում տեղեր ապահովելու և այն բանի համար, որ ոչ ոք չէր կարողանում այնպես հետաքրքիր խաղալ իրենց հետ, ինչպես Անոսովը։ Սակայն ամենից ավելի նրանց գրավում ու հիշողության մեջ առավել ամուր տպավորվում էին գեներալի պատմությունները ռազմարշավների, ճակատամարտերի և գիշերային դաղարների մասին, հաղթանակների ու նահանջների, մահվան վերքերի ու դաժան սառնամանիքների մա-

սին՝ անշտապ, վիպականորեն հանդարտընթաց, անկեղծ պատմություններ, որ անում էր նա երեկոյան թեյի և այն տխուր պահի միջև, երբ երեխաներին քնելու են կանչում։

Ըստ ներկա բարքերի, հնության այդ բեկորը տիտանական և արտակարգ վառ անհատականության երևույթ ուներ։ Նրա մեջ մեկտեղվում էին հենց այն պարզ, սակայն սրտառուչ ու խոր հատկանիշները, որ իր ժամանակներում անգամ շատ ավելի հաճախ պատահում էին շարքայիններին, քան սպաների մեջ՝ այն զուտ ռուսական, մուժիկական գծերը, որոնք, միանալով, գոյացնում են մի վեհ նկարագիր, որ երբեմն մեր զինվորներին դարձնում է ոչ միայն անպարտ, այլև մեծ նահատակ, համարյա թե սուրբ,— հատկանիշներ, որ կազմված են միամիտ, անխարդախ հավատից, կյանքի հանդեպ պարզ, բարեմիտ-կենսուրախ հայացքից, սառնասիրտ ու գործնական խիզախությունից, մահվան առջև խոնարհությունից, պարտվածի հանդեպ խղճահարությունից, անսահման համբերատարությունից և ֆիզիկական ու բարոյական ապշեցուցիչ տոկունությունից։

Լեհականից սկսած, Անոսովը մասնակցել էր բոլոր պատերազմներին, բացի ճապոնականից։ Նա այդ պատերազմին էլ կմասնակցեր առանց տատանվելու, բայց չկանչեցին, իսկ նա միշտ հետևում էր իր համեստությամբ մեծ մի սկզբունքի— «Մի խցկվիր մահվան երախը՝ քանի չեն կանչել»։ Ամբողջ ծառայության ընթացքում նա ոչ միայն չէր գանահարել որևէ զինվորի, այլև մի հարված չէր հասցրել նույնիսկ։ Լեհական խռովության ժամանակ մի անգամ նա հրաժարվել էր գերիներին գնդակահարել, չնայած անձամբ գնդի հրամանատարի տված հրամանին։ «Լրտես լինեին՝ ոչ միայն գնդակահար անել կտայի,— ասել էր նա,— այլև, թե հրամայեիք, իմ ձեռքո՞վ կսպանեի։ Իսկ սրանք գերիներ են, ու ես չեմ կարող»։ Եվ այդ խոսքն ասել էր այնքան պարզ ու հասարակ, այնպես հարգանքով, առանց մարտահրավերի կամ ձևացման՝ որևէ նշույլի, ջինջ ու անթթիթ աչքերով ուղիղ նայելով պետի աչքերի մեջ, որ հենց իրեն էլ գնդակահարելու փոխարեն հանգիստ էին թողել։

1877—1879 թվականների պատերազմին նա շատ արագ հասավ գեներալի աստիճանի, չնայած կրթությունը թերի էր կամ, ինչպես ինքն էր ասում, «արջերի ակադեմիան» էր ավարտել։ Մասնակցել էր Դանուբի գետանցին, կտրել անցել Բալկանները, եղել էր Շիպկայի պաշարման մեջ, Պլևնայի վերջին գրոհին մասնակցել։ վիրավորվել էր մի անգամ՝ ծանր, չորս անգամ՝ թեթև ու, բացի այդ, նոնակի բեկորներից գլխի ուժեղ կոնտուզիա էր ստացել։ Ռադեցկին և Սկոբելևն անձամբ ճանաչում էին նրան ու բացառիկ հարգանք էին տածում նրա հանդեպ։ Հենց նրա մասին էր մի առիթով Սկոբելևն ասել. «Ես գիտեմ մի սպայի, որ շատ ավելի քաջ է ինձնից՝ մայոր Անոսովն է դա»։

Պատերազմից նա եկավ համարյա խլացած, նոնակի բեկորից խեղված ոտքով,— կտրել էին Բալկաններն անցնելու ժամանակ ցրտահարված երեք մատը, և Շիպկայի վրա ստացած սուր հոդացավով։ Երկու տարվա խաղաղ ծառայությունից հետո ուզում էին պաշտոնաթող անել, բայց Անոսովը համառեց։ Այդ բանում նրան խիստ տեղին ու ժամանակին իր հեղինակությամբ օգնեց երկրամասի պետը՝ Դանուբն անցնելիս նրա ցուցաբերած սառնասիրտ արիության կենդանի վկան։ Պետերբուրգում որոշեցին չվշտացնել մեծավաստակ գեներալին և նրան ցմահ նշանակեցին Կ. քաղաքի պարետ՝ ավելի շուտ պատվո, քան պետական պաշտպանության համար անհրաժեշտ մի պաշտոն։

Քաղաքում մեծից փոքր ճանաչում էին նրան և բարեսրտորեն ծիծաղում էին նրա թուլությունների, սովորույթների և հագվելկապվելու ձևի վրա։ Միշտ ման էր գալիս անզեն, հնատարազ սերթուկով, լայնաբոլորք և հսկայական ուղիղ հովար ունեցող գլխարկով, աջ ձեռքին՝ գավազանը, ձախում՝ լսափողակը, և անպայման երկու պարարտ, ալարկոտ, խոպաձայն մոպսերի ուղեկցությամբ, որ լեզուները միշտ դուրս էին գցում՝ ատամների արանքում պահած։ Եթե առավոտվա սովորական զբոսանքի ժամանակ հանկարծ ծանոթի էր հանդիպում, անցորդները մի քանի թաղ այն կողմ լսում էին, թե ինչպես է գոռում պարետը, և թե ինչպես նրան հետևելով, միաձայն հաչում են նրա մոպսերը։

Խուլ մարդկանցից շատերի նման օպերայի մոլի սիրահար էր, և երբեմն, որևէ քնքշանվաղ զուգերգի ժամանակ հանկարծ թատրոնո՞վ մեկ թնդում էր նրա կտրական բասը. «Տես, է՛, ի՞նչ մաքուր վերցրեց դո-ն, գրողը տանի։ Ոնց որ ատամներով, չը՛խկ, ընկույզ ջարդեր»։ Զսպված ծիծաղ էր անցնում դահլիճով, բայց գեներալը չէր էլ նկատում այդ բանը, միամտորեն կարծում էր, թե ընդամենը շշուկով թարմ տպավորություն է հաղորդել իր հարևանին։

Պարետի պարտականության բերումով նա բավական հաճախ, իր խոպաձայն մոպսերի հետ, լինում էր գլխավոր հաուպտվախ-

տում, ուր զինվորական ծառայության նեղություններից հետո փառավորապես հանգստանում էին կալանավորված սպաները՝ թուղթ խաղալով, թեյ խմելով ու անեկդոտներ պատմելով։ Նա ուշի-ուշով հարցուփորձում էր յուրաքանչյուրին. «Ազգանունդ ի՞նչ է։ Ո՞վ է նստեցրել։ Ինչքա՞ն ժամանակով։ Ինչի՞ համար»։ Երբեմն միանգամայն անսպասելիորեն որևէ սպայի գովում էր խիզախ, թեև հակաօրինական արարքի համար, երբեմն էլ սրան կամ նրան սկսում էր թուք ու մուր տալ՝ բղավելով այնպես, որ ձայնը հասնում էր փողոց։ Բայց մի կուշտ գոռգոռալուց հետո, առանց որևէ անցումի կամ դադարի, հարցում էր անում նույն սպային, թե որտեղից են նրան ճաշ բերում, և թե որքան է վճարում դրա համար։ Պատահում էր՝ մոլորյալ մի փոխ-պորուչիկ, որին երկարատև բանտարկության էին ուղարկել այնպիսի ետ ընկած վայրից, ուր նույնիսկ սեփական հաուպտվախտ չկար, խոստովանում էր, թե փող չունենալու պատճառով բավարարվում է զինվորական խոհանոցից օգտվելով միայն։ Անոսովն անհապաղ կարգադրում էր՝ այդ խեղճ մարդուն կերակուր բերեն պարետատնից, որ հաուպտվախտից մի երկու հարյուր քայլի վրա էր։

Կ. քաղաքում էլ հենց նա բարեկամացավ Տուգանովսկիների ընտանիքի հետ և այնպես սերտորեն կապվեց երեխաներին, որ նրա համար հոգեկան պահանջմունք դարձավ ամեն երեկո նրանց տեսնելը։ Թե պատահում էր, որ օրիորդները մեկնում էին քաղաքից կամ ծառայությունը խանգարում էր իրեն, կարոտում էր նրանց անկեղծորեն և իր համար տեղ չէր գտնում պարետատան ընդարձակ սենյակներում։ Ամեն ամառ արձակուրդ էր վերցնում և մի ամբողջ ամիս անցկացնում Տուգանովսկիների կալվածքում՝ Եգորովսկում, որ Կ. քաղաքից հիսուն վերստ հեռու էր։

Նա հոգու ողջ թաքուն քնքշանքն ու սրտագին սիրո պահանջը տարածել էր այդ երեխաների, մասնավորապես աղջիկների վրա։ Ինքն էլ ժամանակին ամուսնացած էր եղել, բայց այնքան վաղուց, որ մտքից ընկել էր նույնիսկ։ Դեռ պատերազմից առաջ կինը փախել էր մի շրջիկ դերասանի հետ՝ հափշտակված նրա թավշե բաճկոնով ու ժանեկազարդ թեզանիքներով։ Գեներալը կնոջը թոշակ էր ուղարկում մինչև նրա մահը, բայց տուն չթողեց՝ չնայած զղջման տեսարաններին ու արտասվահեղ նամակներին։ Իսկ երեխաներ չէին ունեցել։

5

Սպասվածին հակառակ, երեկոն այնպես խաղաղ էր ու տաք, որ պատշգամբում ու սեղանատանը մոմերը վառվում էին անշարժ բոցով։ Ճաշի ընթացքում ամենքին զվարճացնում էր իշխան Վասիլի Լվովիչը։ Նա պատմելու արտասովոր և խիստ յուրօրինակ ձիրք ուներ։ Պատմության հիմք էր դարձնում իրական մի դեպք, ուր գլխավոր գործող անձը ներկաներից կամ ընդհանուր ծանոթներից մեկնումեկն էր լինում, բայց գույները թանձրացնում էր այնպես և հետն էլ խոսում էր դեմքի այնպիսի լարված արտահայտությամբ և այնպիսի գործնական տոնով, որ լսողները թուլանում էին ծիծաղից։ Այսօր նա պատմում էր մի հարուստ ու գեղեցիկ տիկնոջ՝ Հոտ Նիկոլայ Նիկոլաևիչի ձախողված ամուսնության մասին։ Իրականն այն էր միայն, որ տիկնոջ ամուսինը չէր ցանկացել ապահարզան տալ նրան։ Բայց իշխանի պատմության մեջ իսկությունը հիանալիորեն միահյուսվում էր հորինվածի հետ։ Լուրջ, միշտ փոքր-ինչ խստաբարո Նիկոլային նա հարկադրեց գիշերը վազ տալ փողոցում միայն գուլպանելով, կոշիկները թևատակին։ Ահա անկյունում երիտասարդին բռնեց ոստիկանը, և երկար ու հախուռն բացատրություններից հետո միայն Նիկոլային հաջողվեց ապացուցել, որ ինքը դատախազի օգնական է և ոչ թե գիշերահեն։ Հարսանիքը, ըստ այդ պատմության, քիչ էր մնում կատարվեր, բայց ամենավճռական պահին դատական գործին մասնակցող կեղծ վկաների կատաղի հրոսախումբը մեկ էլ գործադուլ արեց՝ վարձի հավելում պահանջելով։ Նիկոլայը ժլատությունից (նա իսկապես էլ մի քիչ կծծի էր), ինչպես նաև խռովությունների ու գործադուլների սկզբունքային հակառակորդ լինելով, կտրականապես հրաժարվեց լրացուցիչ վճարումից՝ վկայակոչելով օրենսգրքի համապատասխան հոդվածը, որ հաստատված էր վճռաբեկ դեպարտամենտի հայեցակետով։ Այնժամ գազազած կեղծ վկաներն այն ընդունված հարցին, թե՝ «ներկաներից որևէ մեկին հայտնի՞ են արդյոք ամուսնությանը խոչընդոտող շարժառիթները», միաբերան պատասխանեցին. «Այո, հայտնի են։ Դատարանում երդման տակ մեր տված բոլոր ցուցմունքները ծայրեծայր սուտ են, և սպառնալիքով ու բռնությամբ նման բան անել մեզ հարկադրեց պարոն դատախազը։ Իսկ այդ տիկնոջ ամուսնու մասին մենք, իբրև իրազեկ մարդիկ, կարող ենք ասել միայն, որ դա ամենա-

հարգարժան անձնավորությունն է աշխարհիս երեսին, Հովսեփի պես առաքինի և հրեշտակի պես բարի»։

Ամուսնական պատմությունների թելից բռնելով ու առաջ գընալով, իշխան Վասիլին չխնայեց նաև Աննայի ամուսնուն՝ Գուստավ Իվանովիչ Ֆրիեսեին. հարսանիքի հաջորդ օրը, ուրեմն, սա ներկայացավ՝ ոստիկանության օգնությամբ պահանջելով ինքնուրույն անձնագիր չունենալու պատճառով նորահարսին վտարել ծնողների տնից և բնակեցնել օրինավոր ամուսնու տանը։ Այս անեկդոտում ճիշտն այն էր միայն, որ ամուսնական կյանքի առաջին օրերին Աննան ստիպված էր շարունակ մնալ հիվանդ մոր մոտ, որովհետև Վերան շտապով մեկնել էր հարավ՝ իրենց տուն, իսկ խեղճ Գուստավ Իվանովիչն անձնատուր էր եղել լքվածության ու հուսահատության։

Բոլորը ծիծաղում էին։ Ժպտում էր և Աննան կկոցուն աչքերով։ Գուստավ Իվանովիչը քրքջում էր բարձր ու հրճվագին, և նրա հարթ ու պիրկ փայլուն մաշկով չորուցամաք դեմքը՝ սղալված ցանցառ բացերանգ մազերով ու փոս ընկած ակնախոռոչներով, նման էր զազրելի ատամները ծիծաղակերպ քշտած գանգի։ Նա մինչև հիմա էլ պաշտում էր Աննային, ինչպես ամուսնության առաջին օրը, միշտ աշխատում էր նստել նրա կողքին, աննկատ հպվել նրան, և խնամարկում էր կնոջն այնպես սիրահմա ու ինքնագոհ, որ մարդ հաճախ թե՛ խղճում էր, թե՛ անհարմար զգում նրա փոխարեն։

Սեղանից ելնելուց առաջ Վերա Նիկոլաևնան մեքենաբար հաշվեց հյուրերին։ Պարզվեց՝ տասներեքն են։ Սնահավատ էր նա, և ինքն-իրեն մտածեց. «Այ սա լավ չէ... Ինչպես նախօրոք մտքովս չանցավ՝ հաշվեմ։ Վասյան էլ է մեղավոր, ոչինչ չասաց հեռախոսով»։

Երբ Շեհինների կամ Ֆրիեսեների տանը մոտ ծանոթներ էին հավաքվում, ճաշից հետո սովորաբար սկսում էին պոկեր խաղալ, որովհետև երկու քույրն էլ ծիծաղելի դառնալու աստիճան սիրում էին մոլեխաղեր։ Երկու տներում էլ, այդ բանը հաշվի առնելով, նույնիսկ սեփական կանոններ էին մշակել. բոլոր խաղացողներին հավասարապես բաժանում էին որոշակի արժեք ունեցող ոսկրե փոքրիկ ժետոններ, և խաղը տևում էր այնքան, մինչև բոլոր խաղանիշերն անցնում էին մեկնումեկի ձեռքը. այնժամ այդ իրիկվա խաղն ավարտվում էր, որքան էլ խաղացողները համառեին, պահանջեին շարունակել։ Գանձարկղից

երկրորդ անգամ ժետոններ վերցնելն արգելված էր խստիվ։ Փորձն էր կյանքի կոչել այդ դաժան օրենքները՝ իշխանուհի Վերային ու Աննա Նիկոլաևնային զսպելու համար, որոնք խաղի թունդ պահին ոչ մի չափ ու սահման չէին ճանաչում։ Տանուլ տված ընդհանուր գումարը հազվադեպ էր հասնում հարյուր-երկու հարյուր ռուբլու։

Այս անգամ էլ նստեցին պոկեր խաղալու։ Վերան, որ չէր մասնակցում խաղին, ուզում էր դուրս գալ պատշգամբ, ուր թեյի սեղանն էին գցում, երբ հանկարծ հյուրասենյակից նրան կանչեց աղախինը՝ դեմքի փոքր-ինչ խորհրդավոր արտահայտությամբ։

— Ի՞նչ է պատահել, Դաշա,— հարցրեց իշխանուհի Վերան անբավականությամբ՝ մտնելով իր փոքրիկ առանձնարանը, որ ննջարանի կողքին էր։— Ինչո՞ւ եք այդպիսի հիմար կերպարանք առել։ Եվ ի՞նչ եք այդպես ձեռքերի մեջ խաղացնում։

Դաշան սեղանին դրեց սպիտակ թղթով կանոնավոր փաթաթված և վարդագույն բարակ ժապավենով խնամքով կապկապված մի փոքրիկ քառակուսի առարկա։

— Աստված վկա, ես մեղք չունեմ, ձերդ պայծառափայլություն,— թոթովեց նա՝ վիրավորանքից կաս-կարմիր կտրելով։ —Նա եկավ ու ասաց...

— Ո՞վ է նա։

— Կարմիր գլխարկավորը, ձերդ պայծառափայլություն... հանձնակատարը։

— Լավ, հետո՞։

— Մտավ խոհանոց ու ահա սա դրեց սեղանին։ «Հանձնեք, ասաց, ձեր տիրուհուն։ Միայն թե, ասաց, ուղղակի նրա ձեռքը կտաք, ուրիշ ոչ մեկի»։ Ումի՞ց է, հարցրի։ Նա թե՝ «Ամեն ինչ գրված է այստեղ». Ասաց ու չքվեց։

— Վազեք հասեք նրան։

— Էլ ո՞ւր հասնեմ, ձերդ պայծառափայլություն։ Ճաշի կեսին էր նրա գալը, ու ես սիրտ չարի ձեզ անհանգստացնել, ձերդ պայծառափայլություն։ Մի կես ժամ կլինի։

— Լավ, գնացեք։

Նա մկրատով կտրեց ժապավենն ու զամբյուղը նետեց այն թղթի հետ, որի վրա գրված էր իր հասցեն։ Թղթի միջինն ակնեղենի կարմիր թավշապատ փոքրիկ տուփ էր՝ ըստ երևույթին հենց նոր խանութից գնված։ Վերան բացեց դուլուկ երկնագույն մե-

տաքսե աստառով կափարիչն ու տեսավ սև թավշի մեջ ամփոփված ոսկե ձվածիր մի ապարանջան, ներսում՝ խնամքով ծալված-գեղեցիկ ութանկյուն արած երկտող։ Արագ բացեց թուղթը։ Ձեռագիրը ծանոթ թվաց, սակայն, որպես ճշմարիտ կին, իսկույն էլ երկտողը մի կողմ դրեց՝ ապարանջանը զննելու համար։

Ապարանջանը ցածրահարգ ոսկուց էր, շատ հաստ, բայց սնամեջ և դրսի կողմից լրիվ պատված հնամենի, վատ հղկված մանր նռնաքարերով։ Բայց, փոխարենը, ապարանջանի կենտրոնում, ինչ-որ տարօրինակ փոքրիկ կանաչ քար շրջապատած, վեր էին բարձրանում հինգ հրաշալի նռնաքար-կաբոշոններ՝ յուրաքանչյուրը սիսեռահատիկի մեծության։ Երբ Վերան պատահական շարժումով ապարանջանը հաջողակի շրջեց դեպի էլեկտրական լամպի լույսը, դրանց ձվաձև ողորկ մակերեսների ներքո խորունկ խորքերում հանկարծ դյութիչ ալ կարմիր, թրթռուն բոցեր բռնկվեցին։

«Կարծես արյուն լինի»,— անակնկալ տագնապով մտածեց Վերան։

Հետո հիշեց նամակն ու բացեց։ Կարդաց մանրիկ, գեղագրական հրաշալի ձեռագրով գրված այս տողերը.

«Ձերդ Պայծառափայլություն,
Մեծարգո Իշխանուհի·
Վերա Նիկոլաևնա.

Հարգանոք շնորհավորելով Ձեզ՝ Ձեր անվանակոչության պայծառ ու բերկրալի տոնի առթիվ, հանդգնում եմ հղել Ձեզ հավատարմահպատակի համեստ իմ ընծան»։

«Ա՜հ, նա է»,— մտածեց Վերան դժգոհությամբ, բայց և այնպես կարդաց մինչև վերջ...

«Ես երբեք ինձ թույլ չէի տա Ձեզ մատուցել անձամբ ընտրած որևիցե բան. դրա համար ես ոչ իրավունք ունեմ, ոչ նուրբ ճաշակ և ոչ էլ, խոստովանեմ, փող։ Ասենք, իմ կարծիքով, արար-աշխարհում անկարելի է գտնել մի գանձ, որ արժան լինի զարդարելու Ձեզ։

Բայց այս ապարանջանը պատկանել է դեռ իմ նախատատին, իսկ, ըստ ժամանակի, վերջին կրողը եղել է հանգուցյալ մայրս։ Կենտրոնում, խոշոր քարերի միջև, կտեսնեք մի կանաչը։ Դա նռնաքարի խիստ հաղվագյուտ տեսակ է՝ կանաչ նռնաքար։ Ըստ

մեր ընտանիքում պահպանված վաղեմի ավանդության, այդ քարն օժտված է իր տիրուհուն կանխատեսության շնորհ պարգևելու և նրա ծանր մտածումները վանելու ունակությամբ, իսկ տղամարդկանց պահպանում է բռնի մահից։

Բոլոր քարերը ճշտությամբ այստեղ են փոխադրված. հին արծաթե ապարանջանից, և Դուք կարող եք վստահ լինել, որ Ձեզանից առաջ ոչ ոք չի կրել այս ապարանջանը։

Դուք կարող եք իսկույն դեն նետել այս ծիծաղելի խաղալիքը կամ նվիրել որևէ մեկին. այնուհանդերձ ես ինձ երջանիկ կզգամ թեկուզ այն բանից, որ Ձեր ձեռքերը դիպել են դրան։

Խնդրում եմ աղերսագին՝ մի զայրացեք ինձ վրա։ Ես կարմրում եմ՝ հիշելով իմ հանդգնությունը յոթ տարի առաջ, երբ Ձեզ՝ օրիորդիդ, համարձակվում էի խենթ ու անհեթեթ նամակներ գրել և նույնիսկ սպասել պատասխանների։ Այժմ իմ մեջ մնացել են սոսկ երկյուղածություն, հավիտենական հնազանդություն և ստրկական անձնվիրություն։ Ես կարող եմ այժմ՝ սոսկ ամեն րոպե Ձեզ երջանկություն ցանկալ և ուրախանալ Ձեր երջանկությամբ։ Մտովի մինչև գետին խոնարհվելով երկրպագում եմ այն կահույքին, որի վրա նստում եք Դուք, այն հատակին, որի վրա քայլում եք Դուք, այն ծառերին, որոնց անցողակի դիպչում եք Դուք, այն ծառային, որի հետ խոսում եք Դուք։ Ես նույնիսկ նախանձ չունեմ ոչ մարդկանց, ոչ իրերի դեմ։

Վերստին ներումն եմ խնդրում, որ անհանգստացրի Ձեզ երկար, անհարկի իմ նամակով։

Մինչև մահ և մահվանից հետո Ձեր խոնարհ ծառա՝

Գ. Ս.Ժ.։

«Ցույց տա՞մ Վասյային, թե ցույց չտամ։ Եվ եթե ցույց տամ՝ ե՞րբ։ Հիմա՞, թե հյուրերի գնալուց հետո։ Չէ, ավելի լավ է՝ հետո. հիմա ոչ միայն այս թշվառականը, այլև ես էլ նրա հետ ծիծաղի առարկա կդառնամ»։

Այսպես էր խորհում իշխանուհի Վերան և չէր կարողանում աչքը կտրել հինգ նռնաքարերի խորքում թրթռացող հին, աղարնագույն բոցերից։

Դժվարությամբ հաջողվեց գնդապետ Պոնամարյովին ստիպել, որ նստի պոկեր խաղալու։ Նա ասում էր, թե չգիտի այդ խաղը, թե ընդհանրապես ազարտ ասված բանը չի ընդունում նույնիսկ կատակով, թե սիրում և համեմատաբար լավ է խաղում միայն վինտ։ Բայց և այնպես չկարողացավ ընդդիմանալ խնդրանքներին և ի վերջո համաձայնեց։

Սկզբում հարկադրված եղան սովորեցնել նրան և սխալներն ուղղել, բայց նա արագորեն յուրացրեց պոկերի կանոններն ու մի կես ժամ էլ չանցած՝ մեկ էլ տեսան բոլոր խաղանիշերը նրա առջև են։

— Այդպես չի՞ կարելի,— ասաց Աննան զավեշտական խռովկանությամբ։— Գոնե թողնեիք մի քիչ տաքանայինք։

Հյուրերից երեքը՝ Սպեշնիկովը, գնդապետը և փոխնահանգապետը՝ փոքր-ինչ թանձրամիտ, բարեկիրթ ու տաղտկալի մի գերմանացի, այն կարգի մարդիկ էին, որ Վերան կատարելապես չգիտեր, թե ինչպես զբաղեցնի, ինչպես վարվի հետները։ Նրանց համար վինտ կազմակերպեց՝ որպես չորրորդ խաղացող հրավիրելով Գուստավ Իվանովիչին։ Աննան հեռվից, ի նշան երախտագիտության, ցած թողեց կոպերը, և քույրն իսկույն հասկացավ նրան։ Բոլորն էլ գիտեին, որ եթե Գուստավ Իվանովիչին չնստեցնեն թուղթ խաղալու. ամբողջ երեկո պտույտ-պտույտ պիտի գա կնոջ շորսբոլորը՝ նրա փեշից կպած, գանգակերպ դեմքին փտած ատամները քշտելով և կնոջ տրամադրությունը փչացնելով։

Հիմա արդեն երեկոն ընթանում էր հարթ, անբռնադատ ու աշխույժ։ Վասյուչոկը, Ժեննի Ռեյտերի նվագակցությամբ, իտալական ժողովրդական կանցոնետներ ու Ռուբինշտեյնի արևելյան երգերն էր երգում կիսաձայն։ Նրա ձայնը փոքր էր, բայց հաճելի տեմբրով, ճկուն ու անսխալ։ Ժեննի Ռեյտերը՝ այդ խստապահանջ երաժիշտը, միշտ հաճույքով էր նրան նվագակցում։ Ի դեպ, ասում էին, թե Վասյուչոկը սիրահետում է նրան։

Անկյունում, օթոցին նստած, Աննան թունդ սեթևեթում էր հուսարի հետ։ Վերան մոտեցավ ու սկսեց ականջ դնել ժպիտով։

— Ոչ, ոչ, մի ծիծաղեք, խնդրեմ,— ասում էր Աննան ուրուխուրախ՝ սպայի վրա կկոցելով թաթարական գրավիչ, պչրալի աչքերը։— Դուք, իհարկե, գործ եք համարում այն, որ հեծելավաշտի գլուխն անցած սուրում եք խելահեղ կամ արգելապատնեշներ հաղթահարում ձիարշավներում։ Բայց գոնե փորձեք տեսնել նաև, թե մե՛նք ինչ գործ ենք անում։ Այ, նոր միայն վերջացրինք վիճակախաղ-ալեգրին։ Կարծում եք՝ հե՞շտ գործ է։ Փի-ի՜հ։ Հրսկայական բազմություն, ծխախեղդ սենյակներ, ինչ-որ դոնապաններ, կառապաններ, չգիտեմ ինչեր... Ու բոլորը գլուխ են տանում բողոքներով, սկսում ոչ դես-ոչ դեն վիրավորել... Եվ առավոտից երեկո, ամբողջ օրը՝ ոտքի վրա։ Ու դեռ առաջիկայում համերգ է լինելու հօգուտ կարիքավոր մտավորական աշխատավորուհիների, հետո էլ՝ սպիտակ պարահանդես...

— Ուր, հանդգնում եմ հուսալ, չեք մերժի մազուրկան ինձ հետ պարել,— վրա բերեց Բախտինսկին և, թեթևակի խոնարհվելով, խթանները շրխկացրեց թիկնաթոռի տակ։

— Շնորհակալություն... Սակայն իմ ամենա-ամենացավոտ տեղը մեր ապաստանն է։ Հասկանում եք, արատավոր երեխաների ապաստանը...

— Օ՜, հասկանում եմ միանգամայն։ Դա հավանաբար մի շատ զվարճալի տեղ է, այո՞։

— Վե՛րջ տվեք, ինչպես չեք ամաչում՝ ծիծաղում եք նման բաների վրա։ Բայց հասկանո՞ւմ եք, թե որն է մեր դժբախտությունը։ Մենք ուզում ենք ապաստան տալ այն թշվառ մանուկներին, որոնց հոգին լի է ժառանգական ու վատ օրինակներով, ուզում ենք ջերմացնել նրանց, փայփայել...

— Հըմ...

— ...Բարձրացնել նրանց բարոյական մակարդակը, նրանց հոգում պարտքի զգացում արթնացնել... Դուք հասկանո՞ւմ եք ինձ։ Եվ ահա ամեն օր մեզ մոտ են բերում հարյուրավոր, հազարավոր երեխաների. բայց նրանց մեջ ոչ մի արատավոր չկա... Երբ հարցնում ես ծնողին՝ արատավոր չի՞ արդյոք երեխադ, պատկերացրեք, վիրավորվում է նույնիսկ։ Եվ ահա ապաստանը բացված է, օծված, ամեն ինչ պատրաստ է, բայց՝ ոչ մի սան, ոչ մի սանուհի։ Թեկուզ մրցանակ առաջարկես բերված ամեն մի արատավոր երեխայի համար...

— Աննա Նիկոլաևնա,— նրա խոսքն ընդհատեց հուսարը լուրջ ու շողոմաձայն։— Ի՞նչ կարիք կա մրցանակ տալու։ Վերցրեք ինձ ձրի։ Ազնի՜վ խոսք, ավելի արատավոր երեխայի դժվար թե ճարեք։

— Վե՛րջ տվեք, ձեզ հետ չի կարելի լրջորեն խոսել,— քըր-

քրջաց Աննան՝ ետ ընկնելով օթոցի թիկնակին կայծկլտուն աչքերով։

Իշխան Վասիլի Լվովիչը, մեծ բոլորակ սեղանի մոտ նստած, քրոջը, Անոսովին ու աներորդուն ընտանեկան հումորիստական ալբոմն էր ցույց տալիս՝ իր ձեռքով արած ծաղրանկարներով։ Բոլոր չորսն էլ ծիծաղում էին սրտանց, և այդ բանը հետզհետե այստեղ էր քաշում բերում թղթախաղով զբաղված հյուրերին։

Ալբոմն ասես իշխան Վասիլիի պատմությունների լրացումը, պատկերազարդումը լիներ։ Իր անսասան անխռովությամբ նա ցույց էր տալիս, օրինակ, «Քաջ գեներալ Անոսովի սիրային արկածները Թուրքիայում, Բուլղարիայում ու այլուր»։ «Պետիմետրը՝ իշխան Նիկոլայ Բուլատ-Տուգանովսկու արկածները Մոնտե Կառլոյում» և նման բաներ։

— Հիմա կտեսնեք, պարոնայք, մեր սիրեցյալ քրոջ՝ Լյուդմիլա Լվովնայի համառոտ վարքագրությունը,— ասաց նա՝ հապճեպ ծիծաղկոտ հայացք նետելով քրոջ կողմը։— Մասն առաջին՝ մանկություն։ «Երեխան մեծացավ, և անունը Լիմա դրին»։

Ալբոմի թերթի վրա դիտումնավոր մանկայնորեն պատկերված էր մի աղջնակ՝ կիսադեմով, բայց երկու աչքով, շոգի տակից իբրև ոտքեր դուրս պրծած բեկբեկուն գծիկներով, մատները չռած ու կողքերը պարզած ձեռքերով։

— Ինձ ոչ ոք երբեք Լիմա չի ասել,— ծիծաղեց Լյուդմիլա Լվովնան։

— Մասն երկրորդ՝ առաջին սեր։ Հեծելազորային յունկերը ծնկաչոք օրիորդ Լիմային մատուցում է սեփական ձեռքով արդյունահանված ոտանավորը։ Այս ոտանավորում հիբրավի մարգարտագեղ տողեր կան.

Գեղահրաշ քո ոտիկը
Կրքի գոյ է գիրերկրային...

Ահա և ոտքի անեղծ պատկերը։

Իսկ այստեղ յունկերն անմեղ Լիմային հորդորում է փախչել հայրական տնից։ Այստեղ բուն փախուստն է։ Իսկ ահա սա՝ կրիտիկական վիճակը. գազազած հայրը հասնում է փախստականներին։ Փոքրոգի յունկերը լքում է հեզիկ Լիմային՝ թողնելով փորձանքի մեջ.

Մի ամբողջ ժամ ձեռքից թողիր՝ պուղրայվելով էլի, էլի,
Եվ, տես ընկավ մեր ետևից հալածիչն այն զարհուրելի...
Դու նրանից գլուխդ ազատիր՝ ինչպես կուզես,
Թփերի մեջ կպահվեմ ես։

Օրիորդ Լիմայի պատմությանը հաջորդեց մի նոր պատում՝ «Իշխանուհի Վերան և սիրակեզ հեռագրիչը»։

— Այս սրտակեզեք պոեմը պատկերազարդված է սոսկ գրչով և գունավոր մատիտներով,— բացատրում էր Վասիլի Լվովիչը լուրջ-լուրջ։ — Տեքստը դեռ պատրաստվում է։

— Նոր բան է դա կարծես,— ասաց Անոսովը,— ես դեռ չեմ տեսել։

— Ամենավերջի՛ն հրատարակությունը։ Գրաշուկայի ամենաթարմ նորույթը։

Վերան մեղմորեն ձեռքը դիպցրեց նրա ուսին։

— Պետք չի, լա՞վ,— ասաց։

Սակայն Վասիլի Լվովիչը կամ չլսեց նրա ասածը, կամ լուրջ բանի տեղ չդրեց։

— Սկիզբը վերաբերում է նախապատմական ժամանակներին։ Մայիսյան մի գեղեցիկ օր Վերա անունով մի օրիորդ փոստով առաքված նամակ է ստանում՝ համբուրվող աղավնիների պիկազարդ-պատկերով։ Ահա նամակը, ահա և աղավնիները։

Նամակը բովանդակում է սիրո ջերմաջերմ խոստովանություն՝ գրված ուղղագրական բոլոր կանոններին հակառակ։ Սկսվում է այսպես. «Խարտյաշ Գեղուհի, դու, որ... կրծքիս տակ եռացող ծով ես մրրկածուփ։ Քո հայացքն օձի պես թունոտ ատամը մխրճել է իմ բզկտված հոգու մեջ» և այլն։ Վերջում՝ համեստ ստորագրություն. «Ըստ զենքի ու զորքի տեսակի ես մի աննշան հեռագրիչ եմ, սակայն իմ զգացմունքները միլորդ Գեորգին արժանի զգացմունքներ են։ Չեմ հանդգնում հայտնել իմ լրիվ ազգանունը՝ անվայելուչ է չափազանց։ Ստորագրում եմ միայն սկզբնատառերով՝ Պ. Պ. Ժ.։ Խնդրում եմ պատասխանեք ինձ փոստատան հասցեով— պոստե ռեստանտե»։ Այստեղ դուք, պարո՛նայք, կարող եք տեսնել և հենց իր՝ հեռագրիչի դիմանկարը, խիստ հաջող սրված գունավոր մատիտներով։

---

1 Ֆրանսիացի սքնամոլ երիտասարդի կամ նրան ընդօրինակող ոուս երիտասարդ ազնվականի սատիրական կերպար (ծան. թարգմ.)։

Վերայի սիրտը խոցված է (ահա՛ սիրտը, ահա՛ նետը)։ Սակայն որպես հեզաբարո և բարեկիրթ օրիորդ, նա ցույց է տալիս նամակը հարգարժան ծնողներին, ինչպես և մանկության իր ընկերոջն ու փեսացուին՝ գեղեցկատես երիտասարդ Վասյա Շեինին։ Ահա և համապատասխան պատկերը։ Իհարկե, ժամանակի ընթացքում կավելանան նաև նկարների չափածո մեկնությունները։

Վասյա Շեինը, հեկեկալով, Վերային է վերադարձնում նրջանի մատանին։ «Ես չեմ համարձակվի խանգարել քո երջանկությանը,— ասում է նա,— սակայն, աղաչում եմ, վճռական քայլի մի դիմիր իսկույն։ Մտածիր, լավ դատիր, ստուգիր թե՛ քեզ, թե՛ նրան։ Դուք կյանքը չես ճանաչում, մանկիկս, և դեպի փայլփլուն բոցն ես թռչում թիթեռնիկի պես։ Իսկ ես, ավա՜ղ, ծանոթ եմ պաղ ու երեսպաշտ աշխարհին։ Գիտցի՛ր, հեռագրիչները թովիչ, սակայն նենգ արարածներ են։ Նրանք անասելի հաճույք են ստանում՝ իրենց հպարտ գեղեցկությամբ և շինծու զգացմունքներով մոլորեցնելով անփորձ զոհին և դաժանորեն ծիծաղելով վրան»։

Անցնում է մի կես տարի։ Կյանքի մեծ վալսի հողմապտույտում Վերան մոռանում է իր երկրպագուին և ամուսնանում գեղեցկատես երիտասարդ Վասյայի հետ։ Ահա նա ծպտվել է ծխնելույզ մաքրողի շորերով և, երեսին մուր քսած, սպրդում է իշխանուհի Վերայի զարդասենյակը։ Ինչպես տեսնում եք, հինգ մատների և երկու շրթունքների հետքերը մնացել են ամենուր՝ գորգերի, բարձիկների, պատերի և նույնիսկ հատակի վրա։

Ահա նա գյուղացի կնկա շորերով գործի է մտնում մեր խոհանոցը որպես հասարակ ման լվացող։ Բայց խոհարար Լուկայի անչափավոր բարեհաճությունը նրան ստիպում է փախուստի դիմել։

Ահա նա գժանոցում է։ Իսկ ահա այստեղ արդեն աբեղա է ձեռնադրվել։ Բայց և այնպես, ամեն օր անշեղորեն սիրատենչ նամակներ է հղում Վերային։ Եվ թղթի վրա, այնտեղ, ուր կաթկթում են նրա արցունքները, թանաքը ճապաղվում է՝ կղզյակներ կազմելով։

Վերջապես մեռնում է նա, սակայն մահից առաջ կտակ է թողնում, որ Վերային հանձնեն հեռագրիչի իր համազգեստի

երկու կոճակն ու օծանելիքի մի սրվակ՝ իր արցունքներով լի...։

— Պարոնայք, ո՞վ է թեյ ուզում.— հարցրեց Վերա Նիկոլաևնան։

7

Մարմրեց-անցավ աշնանային երկայնատև վերջայույսը։ Հանգավ վերջին բոսոր, ճեղքի նման նեղլիկ շերտը, որ կարմրին էր տալիս հորիզոնի եզրին, թխակապույտ ամպերի ու երկրի միջև։ Այլևս չէին երևում ոչ գետինը, ոչ ծառերը և ոչ էլ երկինքը։ Միայն գլխավերևում մեծ-մեծ աստղերն էին իրենց թարթիչները թրթռուն թարթում սև գիշերվա մեջ, մեկ էլ փարոսի կապուտակ լույսն էր բարակ սյունի պես ուղիղ ձգվում վեր և այնտեղ ասես ցայտքում —. շաղ էր գալիս երկնային գմբեթի վրա դժգույն, աղոտ լուսաշրջանով։ Գիշերային թիթեռնիկները զարկվում էին մոմերի ապակե թասակներին։ Նախասարտեզում սպիտակ ծխախոտի աստղաձև ծաղիկներն սկսեցին ավելի սուր բուրել խավարի ու զովության մեջ։

Սպեշնիկովը, փոխնահանգապետն ու գնդապետ Պոնամարյովը վաղուց արդեն գնացել էին՝ խոստանալով պարետին տանելու համար ձիերը ետ ուղարկել տրամվայի կայանից։ Մնացած հյուրերը նստած էին պատշգամբում։ Ջնայած գեներալ Անոսովի բողոքներին, քույրերը նրան ստիպեցին հագնել վերարկուն ու ոտքերը փաթաթեցին տաք շալով։ Գեներալի առջև իր սիրած Pommard կարմիր գինու շիշն էր, իսկ երկու կողքին նստած էին Վերան ու Աննան։ Նրանք հոգածությամբ խնամարկում էին գեներալին, մուգ ու թանձր գինի լցնում նրա նուրբ բաժակը, լուցկի վառում նրա համար, պանիր կտրատում և նման բաներ։ Մեր պարետի աչքերը կկոցվում էին երանությունից։

— Այո՜-ո՜... Աշուն է, աշուն, աշուն,— խոսում էր ծերուկը՝ նայելով մոմի բոցին և մտախոհ գլուխն օրորելով։— Աշուն է։ Ժամանակն է, որ ես էլ պատրաստվեմ այստեղից մեկնելու։ Է՜, ափսոս, ափսոս։ Նոր են միայն սկսվել լավ-լավ օրերը։ Մարդ ապրեր ու ապրեր այստեղ՝ ծովափին, անդորրի մեջ, հանգիստ...

— Ուրեմն մեզ մոտ մնացեք, էլի, պապիկ,— ասաց Վերան։

— Անկարելի է, սիրելիս, անկարելի է։ Ծառայություն կա, բան կա... Արձակուրդս վերջացել է... Ի՞նչ ասել կուզի, շատ լավ կլիներ։ Հենց թեկուզ այդ վարդերի համար, տես ինչպե՞ս են բուրում... Այստեղից էլ հոտն առնում եմ։ Իսկ ամառը, շո-

գին ոչ մի ծաղիկ չէր բուրում, սպիտակ ակացիայից բացի... Դա էլ՝ մի տեսակ կոնֆետի հոտով։

Վերան ծաղկամանից երկու փոքրիկ վարդ հանեց՝ բաց ու վառ կարմիր, և մտցրեց գեներալի վերարկուի կոճգամերի մեջ։

— Շնորհակալություն, Վերոչկա։— Անոսովը գլուխը թեքեց շինելի դարձածալի կողմը, հոտոտեց վարդերն ու հանկարծ ժպտաց ծերունական հաճելի ժպիտով։

— Մտել էինք, հիշում եմ, Բուկարեստ և տեղավորվել տներում։ Ու ահա մի անգամ գնում էի փողոցով։ Հանկարծ վարդի ուժեղ հոտ փչեց քթիս, կանգ առա ու տեսա, որ երկու զինվորների արանքում վարդայուղով լի բյուրեղապակյա գեղեցիկ մի սրվակ է դրված։ Նրանք այդ վարդայուղով օծել էին արդեն իրենց սապոգներն ու հրացանների փականները։ «Դա ի՞նչ բան է»,— հարցրի։ «Ինչ-որ յուղ է, ձերդ բարեծնություն, լցրինք շիլայի մեջ՝ մի բան չէր, բերաններս մենակ կսկծացրեց, բայց լավ հոտ ունի»։ Մի ռուբլի տվի զինվորներին, ու նրանք սրվակն ինձ բաշխեցին. սիրով։ Սրվակի համարյա կեսից էր մնացել յուղը, բայց, ելնելով դրա թանկությունից, որոշեցի, որ դեռ առնվազն մի քսան չերվոնեցի բան կլիներ մեջը։ Գոհ մնացած զինվորներն ավելացրին. «Ահա սա էլ, ձերդ բարեծնություն, ինչ-որ տաճկական սիսեռ է, եփեցինք-եփեցինք՝ չփափկեց անիծվածը»։ Սուրճ էր։ «Սա Թուրքերին է մենակ պետք գալիս,— ասացի,— զինվորի բան չէ»։ Բարեբախտաբար, նրանք դեռ ափիոն կերած չկային։ Ես մի քանի տեղ տեսա ափիոնի բլիթներ՝ ցեխի մեջ ընկած ու կոխոտված։

— Պապիկ, անկեղծորեն ասեք,— խնդրեց Աննան.— մարտերի ժամանակ ահ զգո՞ւմ էիք։ Վախենո՞ւմ էիք։

— Ինչ տարօրինակ բաներ ես հարցնում, Անեչկա, վախենում էի-չէի վախենում։ Պարզ բան է՝ վախենում էի։ Դու չհավատաս, խնդրեմ, այն մարդուն, որ քեզ կասի, թե չի վախեցել, և թե գնդակների սուլոցն ամենաքաղցրալուր երաժշտությունն է եղել իր համար։ Նման մարդը կամ խելապակաս է, կամ պարծենկոտ։ Ամենքն էլ հավասարապես վախենում են։ Միայն թե մեկը վախից լրիվ նվաղում է, իսկ մի ուրիշն էլի տիրապետում է իրեն։ Ու տեսնում ես՝ վախը միշտ մնում է նույնն ու նույնը, այնինչ իրեն տիրապետելու կարողությունը փորձառության հետ մեծանում է ու մեծանում, այստեղից էլ՝ հերոսները, քաջերը։ Հապա՛։ Բայց մի անգամ վախեցա համարյա մահու չափ։

— Պատմեք, պապիկ, պատմեք,— խնդրեցին քույրերը միաձայն։

Նրանք մինչև օրս էլ Անոսովի պատմությունները լսում էին նույն հիացումով, ինչ որ իրենց մանուկ օրերին։ Աննան նույնիսկ ակամա, կատարելապես մանկայնորեն, արմունկները լայնլայն դրեց սեղանին և կզակն իջեցրեց իրար ագուցած ափերի մեջ։ Ինչ-որ հանգստավետ հրապույր կար գեներալի անշտապ ու անմիջական պատմելաձևում։ Նախադասությունների դարձվածքներն իսկ, որոնցով նա հաղորդում էր իր ռազմական հիշողությունները, ակամա արտասովոր, անճարտար, փոքր-ինչ գրքային բնույթ էին ստանում։ Կարծես պատմում էր ըստ հին ու ընտիր ինչ-որ ստերեոտիպի։

— Պատմությունս շատ կարճ է,— արձագանքեց Անոսովը։ —Շիպկայի վրա էր, ձմեռը, երբ արդեն գլխի կոնտուզիա էի ստացել։ Մնում էինք գետնահյուղում, շորսով։ Եվ ահա այստեղ էլ մի ահավոր բան պատահեց ինձ։ Մի առավոտ, երբ վեր կացա անկողնուց, հանկարծ ինձ թվաց, թե ես Ցակովը չեմ, այլ ինչ-որ Նիկոլայ,ու ոչ մի կերպ չէի կարողանում հակառակը համոզել ինքս ինձ։ Նկատելով, որ ուղեղս սկսում է մթագնել, գոռացի, որ ջուր տան, թրջեցի գլուխս, ու խելքս ետ եկավ։

— Երևակայում եմ, Ցակով Միխայլովիչ, թե դուք այնտեղ ինչքան հաղթանակներ եք տարել կանանց նկատմամբ,— ասաց դաշնակահարուհի Ժենի Ռեյտերը։— Դուք հավանաբար շատ գեղեցիկ եք եղել երիտասարդ հասակում։

— Օ՜, մեր պապիկը հիմա էլ գեղեցիկ տղամարդ է,— բացականչեց Աննան։

— Գեղեցիկ չեմ եղել,— ասաց Անոսովը խաղաղ ժպտալով,— բայց չէին էլ խորշում ինձնից։ Այ, հենց նույն Բուկարեստում մի շատ հուզիչ դեպք պատահեց։ Երբ քաղաք մտանք, բնակիչները մեզ հրապարակում դիմավորեցին թնդանոթաձգությամբ, որից շատ պատուհանների ապակիներ տուժեցին, բայց անվնաս մնացին այն պատուհանները, որոնց գոգերին բաժակներով ջուր էր դրված։ Եվ ինչպե՞ս իմացա այդ բանը։ Ահա թե ինչպես։ Գալով ինձ հատկացրած բնակարանը, պատուհանի գոգին տեսա ցածրիկ մի վանդակ, վանդակի վրա՝ բյուրեղապակյա մի մեծ շիշ, լի մաքուր ջրով, որի մեջ ոսկի ձկնիկներ էին լողում, իսկ դրանց միջև, կամրջակի վրա թառած նստել էր մի դեղձանիկ։ Դեղձանիկը ջրում... դա զարմացրեց ինձ, բայց,

ուշադիր նայելով, տեսա, որ 22ի հատակը լայն է և կենտրոնում խոր փոս է ընկած, այնպես որ դեղձանիկն ազատ կարող էր թռչել այնտեղ ու թառել։ Դրանից հետո խոստովանեցի ինքս ինձ, որ չափից դուրս ուշ գլխի ընկնող մարդ եմ։

Մտա տուն ու տեսա մի շատ սիրունիկ բուլղարուհու։ Ներկայացրի օթևանելու անդորրագիրն ու, օգտվելով առիթից, հարցրի, թե ինչպես է, որ նրանց պատուհանների ապակիներն անվնաս են մնացել թնդանոթաձգությունից հետո, և նա ինձ բացատրեց, որ պատճառը ջուրն է։ Ու բացատրեց նաև դեղձանիկի պարագան. ի՞նչ անխելահաս մարդ էի եղել... Եվ ահա խոսելու ժամանակ մեր հայացքները հանդիպեցին, մեր միջև էլեկտրական կայծի պես կայծ անցավ, ու ես զգացի, որ սիրահարվեցի մեկն՝ բուռն ու վերջնական։

Ծերունին լռեց ու հուշիկ կում արեց սև գինին։

— Բայց հետո, այնուամենայնիվ, բացատրվեցիք, չէ՞,— հարցրեց դաշնակահարուհին։

— Հըմ... իհարկե, բացատրվեցինք... Միայն թե առանց խոսքի։ Դա եղավ այսպես...

— Հուսով եմ, պապիկ, որ մեզ չեք ստիպի կարմրել,— ներկատեց Աննան խորամանկ ծիծաղով։

— Ոչ,ոչ, շատ անմեղ սիրավեպ է։ Հասկանում եք, որտեղ էլ իջևանում էինք՝ այդ քաղաքի բնակիչներն ունենում էին իրենց լավ կամ վատ, տարբեր սովորությունները, այնինչ Բուկարեստում բնակիչներն իրենց այնպես մոտ էին պահում մեզ, որ երբ մի անգամ սկսեցի ջութակ նվագել, աղջիկներն իսկույն զուգվեցին-զարդարվեցին ու եկան պարելու, և դա ամենօրյա սովորություն դարձավ։

Մի անգամ, պարերի ժամանակ, երեկոյան, լուսնի լույսով մտա հաշտը, ուր անհետացել էր իմ բուլղարուհին։ Ինձ տեսնելուն պես նա ձևացրեց, թե վարդի շոր թեր է իստակում, որ, պիտի ասեմ, այնտեղի ապրողները հավաքում են ամբողջ պարկերով։ Բայց ես գրկեցի նրան, սեղմեցի կլծքիս ու համբուրեցի մի քանի անգամ։

Այդ օրվանից, հենց որ դուրս էին գալիս լուսինն ու աստղերը, շտապում էի իմ սիրեցյալի մոտ և նրա հետ միառժամանակ մոռացության տալիս առօրյա բոլոր հոգսերը։ Իսկ երբ արդեն պիտի հեռանայինք այդ կողմերից, մենք հավերժ փոխադարձ սիրո երդում արինք միմյանց և հրաժեշտ տվինք ընդմիշտ։

— Եվ վե՞րջ,— հարցրեց Լյուդմիլա Լվովնան հիասթափված։

— Հապա էլ ի՞նչ կուզեիք, որ լիներ.— առարկեց պարետը։

— Ոչ, Յակով Միխայլովիչ, ներեցեք ինձ, բայց դա սեր չէ, այլ պարզապես զինվորական սպայի ճանապարհային արկած։

— Չգիտեմ, սիրելիս, աստված վկա, չգիտեմ՝ սե՞ր էր դա, թե մի այլ զգացմունք...

— Չէ, չէ... ասացեք... մի՞թե իսկապես դուք երբեք չեք սիրել ինկական սիրով։ Գիտեք, այնպիսի սիրով, որը... որը... մի խոսքով... սրբազան, մաքուր, հավերժական սիրով... աներկրային սիրով... Մի՞թե չեք սիրել։

— Ճիշտն ասած, չեմ կարող ձեզ պատասխանել,— տատամսեց ծերունին՝ ելնելով թիկնաթոռից։— Երևի չեմ սիրել։ Սկզբում ժամանակ չկար ու չկար՝ ջահելություն, կերուխում, թղթախաղ, պատերազմ... Թվում էր՝ կյանքը, ջահելությունն ու առողջությունը վերջ չեն ունենալու։ Իսկ հետո սթափվեցի ու տեսա ավերակ եմ արդեն... Էհ, իսկ հիմա, Վերոչկա, էլ մի պահիր ինձ։ Հրաժեշտ տամ ձեզ... Հուսա՛ր,— դարձավ նա Բախտինսկուն,— տաք գիշեր է, արի ոտքով գնանք մեր կառքին ընդառաջ։

— Ես էլ կգամ ձեզ հետ, պապիկ,— ասաց Վերան։

— Ես էլ,— վրա բերեց Աննան։

Գնալուց առաջ Վերան մոտեցավ ամուսնուն ու ասաց կամացուկ.

— Գնա տես... սեղանիս դարակում մի կարմիր տուփ կա, մեջը՝ նամակ։ Կարդա։

8

Առջևից գնում էին Աննան ու Բախտինսկին, նրանց ետևից, մի քանի քայլի վրա՝ պարետը Վերային թևանցուկ արած։ Գիշերն այնպես սև էր, որ առաջին բոպեներին, քանի նրանց աչքերը լույսից հետո չէին վարժվել խավարին, ստիպված էին ոտքերի խարխափումով գտնել ճանապարհը։ Անոսովը, որ չնայած տարիքին՝ զարմանալի սրատես էր մնացել, հարկադրված էր օգնել իր ուղեկցուհուն։ Նա ժամանակ առ ժամանակ խոշոր պաղ ձեռքով քնքշորեն շոյում էր Վերայի ձեռքը, որ թեթև հանգչում էր իր թևքի ծալատեղի վրա։

— Ծիծաղելի արարած է այդ Լյուդմիլա Լվովնան,— հանկարծ ասաց գեներալը՝ կարծես շարունակելով մտածել բարձ-

բաձայն։— Քանի՞-քանի անգամ կյանքում նկատել եմ՝ հենց որ կինը մոտենում է հիսունին, մանավանդ եթե այրի է կամ պառաված աղջիկ, անընդհատ ձգտում է պտույտ գալ ուրիշի սիրո շուրջը։ Կամ լրտեսում է, չարախնդում ու բամբասում, կամ քիթը խոթում է ուրիշի երջանկությունը գլուխ բերելու գործի մեջ, կամ՝ դատարկ-մատարկ շաղակրատում վեհ սիրո մասին։ Իսկ ես ուզում եմ ասել, որ մարդիկ մեր օրերում մոռացել են սիրելը։ Իսկական սեր չեմ տեսնում։ Եվ իմ ժամանակներում էլ չեմ տեսել։

— Է՜, ինչու՞ եք այդպիսի բաներ ասում, պապիկ,— առարկեց Վերան մեղմորեն՝ թեթևակի նրա ձեռքը սեղմելով։— Ի՞նչ կարիք կա զրպարտելու։ Չէ՞ որ դուք ինքներդ էլ եք ամուսնացած եղել։ Նշանակում է, այնուամենայնիվ, սիրել եք, չէ՞։

— Դա բացարձակապես ոչինչ չի նշանակում, թանկագին Վերոչկա։ Գիտե՞ս, թե ինչպես ամուսնացա։ Տեսնեմ՝ մի մատաղ աղջիկ է նստած կողքիս։ Շնչելու հետ կուրծքը վերուվար է անում կոֆտայի տակ։ Խոնարհում է թարթիչները՝ երկա՜ր-երկար, և հանկարծ կաս-կարմիր է կտրում։ Ու այտերի մաշկը նուրբ է, պարանոցը՝ այնպե՜ս ճերմակ, անաղարտ, ձեռքերը՝ փափլիկ, տաքուկ։ Ա՜խ, սատանա... Իսկ այդ միջոցին հայրիկն ու մայրիկը պտտվում են չորսբոլորդ, դռների ետևից ականջ դնում, նայում մի տեսակ թախծոտ, հավատարիմ շան աչքերով։ Իսկ հեռանալիս դռան ետևից՝ արագ-արագ պաչպչոցներ... Թեյելիս ոտիկն իբր պատահմամբ սեղանի տակ դիպչում է ոտքիդ... Ու՝ վերջ։ «Թանկագին Նիկիտա Անտոնիչ, ես եկել եմ ձեր դստեր ձեռքը խնդրելու։ Հավատացեք, որ սուրբ էակ է նա»... Իսկ հայրիկի աչքերը խոնավ են արդեն, հետն էլ ձգվում է, որ համբուրի... «Սիրելիս.. Ես վաղուց էի գլխի ընկել... է՜հ, աստված բարետավոր անի... Միայն տես, հա՜, լավ պահիր-պահպանիր այս գանձը»... Եվ ահա երեք ամսից սուրբ գանձը ման է գալիս տան հնամաշ շորով, կոշիկները՝ բոբիկ ոտքերին, մազերը ծվենծվեն, չսանրված, խոպոպաթղթերով փաթաթված, սպասյակների հետ կովշտում է խոհարարուհու պես, ջահել սպաների հետ ծեքծեքվում է, սվսվախոսում, վնկվնկում, աչքերը ճակատը թռցնում։ Ամուսնուն, չգիտես ինչու, ժակ է անվանում ուրիշների ներկայությամբ։ Կանչում է, այսպես, քթի մեջ, ծոր տալով, քնքշանվաղ՝ «Ժա-ա՜-ա՜կ»... Վատնիչ, երեսպաշտ, փնթի, աչքածակ։ Ու աչքերն

էլ միշտ կե՜ղծ-կե՜ղծ... Հիմա ամեն ինչ անցել է, հանդարտվել, հարթվել։ Ես նույնիսկ հոգուս խորքում շնորհակալ եմ այն թըշվառական դերասանին... Փառք աստծու, որ երեխաներ չեղան...

— Դուք ներե՞լ եք նրանց, պապիկ։

— Ներելն այն բառը չէ, Վերոչկա։ Սկզբում կարծես կատաղած լինեի։ Եթե այն ժամանակ բռնացնեի նրանց, իհարկե, կսպանեի երկուսին էլ։ Բայց հետո քիչ-քիչ այդ ամենն անցավ և ոչինչ չմնաց արհամարհանքից բացի։ Ու լավ եղավ։ Աստված փրկեց անտեղի արյուն թափելուց։ Եվ, բացի այդ, ես խուսափեցի ամուսինների մեծ մասի ճակատագրից։ Ի՞նչ էի լինելու ես, եթե այդ նողկալի դիպվածը չլիներ,— բեռնակիր ուղտ, խայտառակ համակերպվող, պարտակիչ, կթան կով, շիրմա, տնային մի ինչ-որ անհրաժեշտ իր... Չէ՜։ Ինչ եղավ՝ լավ եղավ, Վերոչկա։

— Ոչ, ոչ, պապիկ, այնուամենայնիվ ձեր մեջ, ներեցեք, առաջվա վիրավորանքն է խոսում... Իսկ դուք ձեր դժբախտ փորձը տարածում եք ողջ մարդկության վրա։ Օրինակ, թեկուզ ես ու Վասյան։ Մի՞թե կարելի է մեր ամուսնությունը դժբախտ համարել։

Անոսովը լռեց բավական երկար։ Հետո դժկամորեն ծոր տվեց.

— Լա-ա՜վ... ասենք՝ բացառություն է դա... Բայց, այ, մեծ մասամբ ինչու՞ են մարդիկ ամուսնանում։ Օրինակ, կինը։ Որովհետև ամոթ է աղջիկ մնալ, մանավանդ երբ ընկերուհիներն արդեն մարդու են գնացել։ Ծանր բան է ընտանիքում ավելորդ բերան լինելը։ Ուզում է տանտիրուհի դառնալ, տան գլխավոր, տիկին, ինքնուրույն մարդ... Հետն էլ մայրության պահանջը, ուղղակի ֆիզիկական պահանջը կա, սեփական բույնը հյուսելու պահանջը։ Իսկ ամուսնության համար տղամարդն ուրիշ պատճառներ ունի։ Նախ՝ հոգնում ես ամուրի կյանքից, սենյակներում տիրող անկարգությունից, պանդոկի ճաշերից, կեղտից, ծխախոտի մնացուկներից, մաշված ու այստեղ-այնտեղ ընկած սպիտակեղենից, պարտքերից, անփափկանկատ ընկերներից և շատ ու շատ բաներից։ Երկրորդ՝ զգում ես, որ ընտանիքով ապրելն ավելի շահեկան է, առողջության համար ավելի նպաստավոր ու տնտեսապես խնայողական։ Երրորդ՝ մտածում ես—երեխաներ կլինեն, ու մեռնելուց հետո, այնուամենայնիվ, իմ մի մասնիկը կմնա աշխարհում... անմահության պատրանքի պես մի բան։ Չորրորդ՝ անաղարտության գայթակղությունը, ինչպես իմ դեպքում։ Բացի այդ, երբեմն մտածում ես և օժիտի մասին։ Իսկ ո՞ւր մնաց սեռ։

Անշահախնդիր, անձնուրաց, փոխհատուցման չսպասող սերը։ Այն սերը, որի մասին ասված է՝ «մահվան պես զորեղ»։ Հասկանու՞մ ես, այնպիսի սերը, որի համար ամեն տեսակ սխրանք գործելը, կյանքը զոհելը, նահատակվելը բնավ էլ նեղություն չեն, այլ միայն բերկրանք։ Սպասիր, սպասիր, Վերա, դու հիմա նորի՞ց ես ուզում քո Վասյայի մասին խոսել։ Ճիշտն ասած, ես սիրում եմ նրան։ Լավ տղա է։ Ի՜նչ իմանաս, գուցե և ապագան նրա սերը կցուցադրի մեծ գեղեցկության լույսի տակ։ Բայց դու հասկացիր, թե ես ինչ սիրո մասին եմ խոսում։ Սերը պետք է ողբերգություն լինի։ Մեծագույն խորհրդի՞ն աշխարհում։ Առօրյա ոչ մի հարմարավետություն, ոչ մի հաշիվ ու փոխգիջում գործ չպիտի ունենան նրա հետ։

— Դուք երբևիցե տեսե՞լ եք այդպիսի սեր, պապիկ,— հարցրեց Վերան կամացուկ։

— Ո՛չ,— պատասխանեց ծերունին հաստատուն շեշտով։— Ճիշտ է, նման մի երկու դեպք գիտեմ։ Բայց մեկը գալիս էր հիմարությունից, իսկ մյուսը... ինչ ասեմ... խակ-մակ բան էր... խղճահարության արժանի, ուրիշ ոչինչ... Թե կուզես՝ պատմեմ։ Երկար չէ։

— Ինդրում եմ, պապիկ։

— Հա, ուրեմն լսիր։ Մեր դիվիզիայի մի գնդում (միայն թե ոչ մեր), գնդի հրամանատարի կինն էլ էր մնում ամուսնու հետ։ Ի՜նչ կին, դերբնական այլանդակ մի արարած, Վերոչկա, հավատացնում եմ քեզ։ Ոսկրուտ դեմքով, շիկակարմիր մազերով, երկայնահասակ, չորուկ-մորուկ, բերանը՝ մեծ... Ծեփը վրայից ուղղակի թափվել էր, ինչպես Մոսկվայի հին տների պատերից։ Բայց, հնչկանում ես, մի տեսակ գնդի Մեսալինան էր նա՝ կիրք ու եռանդ, իշխելու կամք, քամահրանք մարդկանց հանդեպ, բազմազանության խելահեղ ձգտում։ Հետն էլ՝ մորֆիամոլ։

Եվ ահա մի անգամ, մեր գունդն ուղարկեցին նորաթուխ մի պրապորշչիկի՝ ռազմական ուսումնարանը նոր-նոր ավարտած կատարյալ մի դեղնակտուցի։ Մի ամսից այն պառավ զամբիկը ոտքից գլուխ տիրացավ նորեկին։ Սա դարձավ նրա մանկլավիկը, ծառան, ստրուկը, պարի մշտական կավալերը, նրա հովհարն ու թաշկինակն էր տանում ետևից, մեն-մի թեթև համազգեստով ցուրտ-սառնամանիքին դուրս էր թռչում՝ նրա ձիերը բերել տալու համար։ Ահավոր բան է, երբ մատաղ ու անարատ պատանին իր առաջին սերը դնում է տարեց, փորձառու և իշխելու մարմաջով բռնված անառակ կնոջ ոտքերի տակ։ Եթե նա այս անգամ նույնիսկ դուրս պրծնի անվնաս, միևնույն է, հետագայում նրան կորած կարելի է համարել։ Դա իր կնիքն է դնում ամբողջ կյանքի վրա։

Ենդյան տոների մոտերքը պրապորշչիկն արդեն ձանձրացրել էր այդ կնոջը։ Սա վերադարձավ իր նախկին, փորձված սիրեկաններից մեկի մոտ։ Իսկ տղան չկարողացավ պոկվել։ Հետևում էր նրան ուրվականի պես։ Տառապանքից հյուծվեց, նիհարեց, սևացավ։ Բարձր ոճով ասած՝ «մահն արդեն իջել էր նրա վեհ ճակատին»։ Անասելի խանդում էր այդ կնոջը։ Ասում են՝ գիշերները մինչև լույս կանգնում էր նրա պատուհանների տակ։

Եվ ահա մի անգամ, գարնանը, նրանց գնդում ինչ-որ դաշտահանդես թե զբոսախնջույք կազմակերպեցին։ Ես անձամբ ճանաչում էի կնոջն էլ, պրապորշչիկին էլ, բայց այդ իրադարձությանը ներկա չէի։ Ինչպես միշտ նման դեպքերում՝ շատ են խմած լինում։ Ետ են գալիս գիշերը, ոտքով, երկաթուղու թմբի վրայով։ Հանկարծ դեմից ապրանքատար գնացք է երևում։ Գալիս է շատ դանդաղ՝ բավական թեք զառիվերով։ Սուլում-ազդանշան է տալիս։ Եվ ահա հենց որ շոգեքարշի լույսերը հավասարվում են նրանց խմբին, կինը հանկարծ շշնջում է պրապորշչիկի ականջին. «Դուք անվերջ ասում եք, թե սիրում եք ինձ։ Բայց, այ, թե հրամայեմ՝ գնացքի տակ նետվեք, չեք նետվի, իհարկե»։ Ու մեկ էլ սա, առանց մի բառ պատասխանելու, վազում է ու՝ գնացքի տակ։ Նա, ասում են, ճիշտ է հաշված եղել՝ ուղիղ առջևի ու ետևի անիվների միջև. այդ դեպքում ճիշտ երկու կես կլիներ։ Սակայն ապուշի մեկի խելքին փչել է բռնել նրան ու ետ քաշել։ Բայց ուժը չի պատել։ Դելսից կառչելուն պես՝ պրապորշչիկի երկու ձեռքն էլ դաստակից կտրվում ընկնում են։

— Օ՜, ինչ սոսկալի է,— բացականչեց Վերան։

— Պրապորշչիկն ստիպված էր թողնել ծառայությունը։ Ընկերները քիչ-միչ փող հավաքեցին, տվին նրան, որ մեկնի։ Անհարմար էր՝ մնար քաղաքում. կենդանի կշտամբանք էր նա թե այդ կնոջ և թե ամբողջ գնդի համար։ Ու կորավ մարդը... ամենաանարգ ձևով... դարձավ մուրացկան... ցրտամահ եղավ Պետերբուրգի նավահանգստի ինչ-որ խորշում...

Իսկ մյուս դեպքը խղճալի էր կատարելապես։ Էլի նախորդի պես կին էր, միայն թե ջահել ու գեղեցիկ։ Շատ ու շատ վատ էր

պահում իրեն։ Ինչքան էլ թեթև էինք նայում ընտանեկան այդ սիրավեպերին, այնուամենայնիվ մեզ համար էլ նույնիսկ տհաճ էր։ Իսկ ամուսնու պետքն էր չէր իսկի։ Ամեն ինչ գիտեր, ամեն ինչ տեսնում էր ու լռում։ Բարեկամներն ակնարկում էին, բայց նա ձեռքերն էր թափ տալիս միայն. «Թողե՛ք, թողե՛ք... Իմ գործը չի, իմ գործը չի... Մենակ թե Լենոչկան իրեն երջանիկ զգա»... Ցտեսնվա՜ծ ապուշ։

Վերջը այդ կինը պինդ-պինդ կապվեց իրենց վաշտի ենթասպա, պորուչիկ Վիշնյակովի հետ։ Եվ այդպես երեքով ապրում էին երկամուսնությամբ, կարծես դա ամուսնության ամենաօրինական ձևն էր։ Ու այդ ժամանակ էլ մեր գունդը կռվի հանեցին։ Մեր տիկնայք ճանապարհում էին մեզ, ճանապարհում էր նաև այդ կինը, և, ճիշտն ասած, անհարմար էիր զգում նույնիսկ նայելիս. գոնե ձևի համար մի անգամ աչք դցեր ամուսնուն, բայց չէ՞, կախ էր ընկել պորուչիկի վզից, ինչպես սատանան՝ ուռենու շոր ճյուղից, ու ետ չէր քաշվում։ Հրաժեշտի պահին, երբ մենք արդեն վագոններում էինք և գնացքը շարժվեց, այդ լիրբ-անամոթը դեռ ամուսնու ետևից էլ կանչեց. «Ցմոռանաս, հա՞, լավ պահիր Վոլոդյային։ Թե նրան մի բան պատահեց՝ կգնամ տնից ու էլ երբեք չեմ վերադառնա։ Ու երեխաներին էլ հետս կտանեմ։

Դու երևի մտածում ես, թե այդ կապիտանը փալասի մեկն էր, անողնաշար, ճնճղուկի սրտով։ Ամենևի՜ն։ Նա քաջ զինվոր էր։ Ջելյոնիե Գորիի մոտ նա վեց անգամ իր վաշտը տարավ թուրքական ամրությունների վրա, և նրա երկու հարյուր մարդուց ընդամենը տասնչորսը մնացին։ Երկու տեղից վիրավորված՝ հրաժարվեց գնալ վիրակապման կայան։ Ա՛յ թե ինչպիսին էր նա։ Զինվորները երդում էին ուտում նրա անունով։

Սակայն նա հրամայել էր... Հրամայել էր իր Լենոչկան։

Եվ կապիտանը դայակի պես, մոր պես հոգ էր տանում այդ երկչոտ ու անբան Վիշնյակովին, այդ ձրիակեր բոռին։ Գիշերն անձրևի տակ, ցեխերի մեջ հանգրվանելիս ծածկում-փաթաթում էր նրան իր շինելով։ Նրա տեղ գնում էր սակրավորական աշխատանքներ կատարելու, իսկ պորուչիկն իր քեֆին պառկում մնում էր գետնահյուղում կամ թուղթ խաղում։ Գիշերները նրա փոխարեն ստուգում էր պահակետերը։ Իսկ դա, նկատի ունեցիր, Վերունյա, այնպիսի ժամանակ էր, երբ բաշիբոզուկները մեր ուղեկալների պահակներին մորթոտում էին այնպես հեշտ ու հասարակ, ինչպես յարոսլավցի գեղջկուհին է բանջարանոցում

կտրում թափում կաղամբի գլուխները։ Ասված վկա, թեև մեղք է հիշելը, բայց բոլորս էլ ուրախացանք՝ իմանալով, որ Վիշնյակովը հոսպիտալում մեռել է տիֆից...

— Լավ, իսկ կանանց, պապիկ, սիրող կանանց պատահե՞լ եք կյանքում։

— Օ, իհարկե, Վերոչկա։ Նույնիսկ ավելին կասեմ՝ համոզված եմ ես, որ համարյա յուրաքանչյուր կին սիրո մեջ ընդունակ է ամենավեհ հերոսության։ Հասկացիր, երբ համբուրում է, գբրկում, նվիրվում՝ արդեն մայր է նա։ Նրա համար, եթե սիրում է, սերն իր մեջ ամփոփում է կյանքի ողջ իմաստը, ամբողջ տիեզերքը։ Բայց ամենևին էլ մեղավորը նա չէ, որ սերը մարդկանց մոտ այդպիսի գռեհիկ ձևեր է ընդունել և իջել հասել պարզապես ինչ-որ կենցաղային հարմարավետության, մանր-մունր հաճույքների։ Մեղավոր են քսան տարեկանում արդեն հագեցած, ճտի մարմնով ու նապաստակի սրտով տղամարդիկ, որոնք ընդունակ չեն զորեղ ցանկությունների, հերոսական արարքների, սիրո հանդեպ գորովանքի ու պաշտամունքի։ Ասում են, թե առաջներում եղել է այս ամենը։ Իսկ թե չի եղել, մի՞թե այդ չեն երազել ու անձկացել մարդկության լավագույն մտքերն ու հոգիները՝ բանաստեղծներ, վիպասաններ, երաժիշտներ, նկարիչներ։ Վերջերս կարդացի Մաշենկա Լեսկոյի և կավալեր դե Գրիեի պատմությունը... կհավատա՞ս, աղի արցունքներ էի թափում... Դե հիմա անկեղծորեն ասա, սիրելիս, մի՞թե ամեն կին հոգու խորքում չի երազում այդպիսի սեր՝ եզակի, ամենաներող, ամեն ինչի պատրաստ, Ֆամեստ ու անձնուրաց։

— Օ, իհա՞րկե, իհա՞րկե, պապիկ...

— Իսկ քանի որ դա չկա՝ կանայք էլ վրեժ են լուծում։ Կանցնի էլի մի երեսուն տարի... ես չեմ տեսնի, բայց դու երևի կտեսնես, Վերոչկա։ Հիշիր խոսքս, որ մի երեսուն տարի հետո կանայք չտեսնված-չլսված իշխանության կհասնեն աշխարհում։ Նրանք կհագնվեն հնդկական կուռքերի պես։ Նրանք կոտնահարեն մեզ՝ տղամարդկանցս, քամահրելի, գետնաքարշ ստրուկների նման։ Նրանց խելացնոր կամայականություններն ու քմահաճույքները տանջալի օրենքներ կդառնան մեզ համար։ Եվ այդ ամենն այն պատճառով, որ մենք սերունդներ շարունակ չենք կարողացել պատկառանք տածել ու երկրպագել սիրուն։ Դա վրիժառություն կլինի։ Ըստ մեր իմացած օրենքի՝ ազդեցությունը հավասար է հակազդեցության։

Մի քիչ լռելուց հետո նա հանկարծ հարցրեց.

— Ասա, Վերոչկա, թե դժվար չէ քեզ համար, դա ի՞նչ հեռագրիչի պատմություն է, որ արեց այսօր իշխան Վասիլին։ Այստեղ ի՞նչն է ճիշտ, ինչը՝ հնարովի,, ըստ նրա սովորության։

— Ձեզ համար հետաքրքի՞ր է որ, պապիկ։

— Դու՛ գիտես, դու՛ գիտես, Վերա։ Թե ինչ-որ պատճառով տհաճ է քեզ համար...

— Բոլորովին։ Հաճույքով կպատմեմ։

Եվ նա ամենայն մանրամասնությամբ պարետին պատմեց ինչ-որ խենթի մասին, որ իր սիրով սկսել է հետապնդել իրեն ամուսնությունից դեռ երկու տարի առաջ։

Ինքը երբեք չի տեսել նրան և չգիտի ազգանունը։ Նա միայն նամակներ է գրել Գ. Ս. Ժ. ստորագրությամբ։ Մի անգամ նամակում հիշել է, թե մանր պաշտոնյա է ինչ-որ պետական հիմնարկում. հեռագրատան մասին՝ ոչ մի խոսք։ Անկասկած մշտապես հետևել է իրեն՝ Վերային, որովհետև նամակներում տեղը տեղին հիշել է, թե ինքը Վերան, որ երեկույթներում է եղել, ինչ հասարակության մեջ և ինչպիսի հագուստով։ Սկզբում նամակները անճաշակ ու ծիծաղելիորեն խանդաբորբոք բնույթ են ունեցել, թեև՝ միանգամայն ողջախոհ։ Բայց մի անգամ Վերան գրավոր խնդրել է նրան (ի միջի այլոց, այս մասին, պապիկ, հանկարծ չասեք մերոնց՝ նրանցից ոչ ոք չգիտի), որ իրեն այլևս չանհանգստացնի իր սիրային զեղումներով։ Այդ ժամանակվանից նա լռության է տվել իր սերը և սկսել է գրել դեպքից-դեպք՝ Զատկին, Նոր տարուն և Վերայի անվանակոչության օրը։ Իշխանուհին պատմեց նաև այսօրվա նվերի մասին և նույնիսկ համարյա բառացի վերարտադրեց իր խորհրդավոր երկրպագուի արտառոց նամակը...

— Այո-ո՛,— ծոր տալով ասաց գեներալը վերջապես։— Գուցե աննորմալի, մոլագարի մեկն է, բայց, ի՛նչ իմանաս. գուցե և քո կյանքի ճամփան, Վերոչկա, խաչվել է հենց այնպիսի սիրո հետ, որ երազում են կանայք, և որին այլևս անընդունակ են տղամարդիկ։ Բայց կանգնիր հապա։ Տեսնու՞մ ես, դեմը լապտերներ են շարժվում։ Հավանաբար իմ կառքն է։

Նույն պահին ետևից ավտոմոբիլի զիլ դռոց լսվեց, և անիվներից մաշված ճանապարհը շողշողաց ացետիլենի սպիտակ լույսով։ Մեքենայով մոտենում էր Գուստավ Իվանովիչը։

— Ես վերցրել եմ քո իրերն, Աննոչկա։ Նստիր,— ասաց նա։— Ձերդ գերազանցություն, թույլ չե՞ք տա ձեզ տեղ հասցնեմ։

— Ոչ, շնորհակալ եմ, սիրելիս,— պատասխանեց գեներալը։— Ձեմ սիրում այդ մեքենա կոչվածը։ Ցնցվում է միայն ու վատ հոտ հանում, իսկ հաճույք՝ իսկի՛։ Էհ, մնաս բարով, Վերոչկա։ Հիմա արդեն շուտ-շուտ կգամ,— ասաց՝ համբուրելով Վերայի ճակատն ու ձեռքերը։

Բոլորը հրաժեշտ տվին իրար։ Ֆրիեսեն Վերա Նիկոլաևնային հասցրեց նրանց ամառանոցի դարպասի մոտ և, արագ պտույտ գործելով, կորավ խավարում իր դռռացող ու փնչփնչացող ավտոմոբիլով։

9

Իշխանուհի Վերան անախորժության զգացումով բարձրացավ պատշգամբ ու մտավ տուն։ Նա դեռ հեռվից լսեց եղբոր՝ Նիկոլայի բարձր ձայնը և տեսավ նրա երկայն, շորուցամաք կերպարանքը՝ անկյունից անկյուն արագորեն ետուառաջ անելիս։ Վասիլի Լվովիչը նստած էր թղթախաղի սեղանի մոտ, բաց շիկահեր խուզած մեծղի գլուխը խոր խոնարհած, կավճի կտորով գծմծում էր կանաչ մահուդի վրա։

— Ես վաղուց եմ պահանջել,— ասաց Նիկոլայը գրգռված և աջ ձեռքով այնպիսի շարժում անելով, կարծես ինչ-որ աներևույթ ծանրություն էր ցած նետում,— ես վաղուց եմ պահանջել, որ վերջ տրվեն այդ հիմար նամակներին։ Վերան դեռ չէր ամուսնացել քեզ հետ, երբ աշխատում էի հավատացնել ինքս ինձ, թե դու ու Վերան երեխաների պես զվարճանում եք այդ նամակներով՝ միայն ծիծաղելի բան տեսնելով դրանց մեջ... Ահա, ի դեպ, և ինքը՝ Վերան... Մենք, Վերոչկա, խոսում ենք քո այդ խելագարի, քո Պե Պե ժեի մասին։ Ես այդ նամակագրությունը հանդուգն ու գռեհիկ մի բան եմ համարում։

— Ոչ մի նամակագրություն էլ չի եղել,— նրա խոսքն ընդհատեց Շեինը պաղ շեշտով։— Գրել է միայն այն մյուսը...

Վերան շիկնեց այդ խոսքից և նստեց բազմոցին, փարթամ լատանիայի ստվերում։

— Ներողություն արտահայտությանս համար,— ասաց Նի-

կոլայ Նիկոլաևիչը և, կարծես կրծքից պոկելով, ցած նետեց անբերեկրթ ծանր մի առարկա։

— Իսկ ես չեմ հասկանում, թե ինչու ես նրան իմը համարում,— վրա բերեց Վերան՝ ուրախացած ամուսնու աջակցությունից։— Նա իմն է այնպես, ինչպես քոնը...

— Լավ, նորից՝ ներողություն։ Մի խոսքով, ես ուզում եմ ասել միայն, որ հարկավոր է վերջ դնել նրա հիմարություններին։ Կարծում եմ, բանն անցնում է այն սահմաններից, ուր կարելի է ծիծաղել ու զվարճալի նկարներ անել... Հավատացեք, եթե այստեղ ինձ մտահոգում ու հուզում է մի բան, ապա դա միայն ու միայն Վերայի և քո, Վասիլի Լվովիչ, բարի անունն է։

— Է՞, կարծես թե արդեն շատ հեռու գնացիր, Կոլյա,— առարկեց Շեինը։

— Երևի, երևի... Բայց դուք հեշտությամբ ձեզ ենթարկում եք ծիծաղելի վիճակի մեջ ընկնելու վտանգին։

— Չեմ տեսնում, թե ինչպես,— ասաց իշխանը։

— Պատկերացրու, որ այս ապուշ ապարանջանը...— Նիկոլայը սեղանից մի փոքր բարձրացրեց կարմիր տուփը և իսկույն էլ զզվանքով տեղը գցեց,— որ այս տերտերական այլանդակությունը մնա մեզ մոտ, կամ դեն նետենք, կամ նվիրենք Դաշային։ Գիտե՞ս ինչ կլինի։ Նախ՝ Պե Պե Ժեն կարող է ծանոթների, ընկերների մոտ պարծենալ, թե իշխանուհի Վերա Նիկոլաևնա Շեինան ընդունում է իր նվերները, և հետո՝ առաջին իսկ հաջողությունը կթևավորի նրան ու կմղի հետագա քաջագործությունների։ Վաղը ադամանդակուռ մատանի կուղարկի, մյուս օրը՝ մարգարտաշար մանյակ, ու մեկ էլ տեսար՝ մեղադրյալի աթոռին է նստել վատնումի կամ զեղծարարության համար, իսկ իշխան և իշխանուհի Շեինները դատարան են կանչվում որպես վկաներ... Չտեսնվա՞ծ հաճելի վիճակ։

— Ո՛չ, ո՛չ, պետք է անպայման ապարանջանը ետ ուղարկել,— բացականչեց Վասիլի Լվովիչը։

— Ես էլ եմ այդ կարծիքին,— համաձայնեց Վերան,— և հնարավորին չափ՝ շուտ։ Բայց ինչպե՞ս ուղարկենք՝ ոչ անունը գիտենք, ոչ ազգանունը, ոչ հասցեն։

— Օ՞, միանգամայն դատարկ բան է դա,— առարկեց Նիկոլայ Նիկոլաևիչը քամահրանքով։— Մեզ հայտնի են այդ Պե Պե Ժեի... Ի՞նչ էին, Վերա, սեռբնատառերը։

— Գե Էս Ժ։

— Ըհը, դա իմացանք։ Բացի այդ, մեզ հայտնի է, որ նա ծառայում է ինչ-որ տեղ։ Լրիվ բավական է այդքանը։ Վաղն ևեթ կվերցնեմ քաղաքային տեղեկատուն ու կսկսեմ փնտրել անունազգանվան այդ սկզբնատառերն ունեցող պաշտոնյային կամ ծառայողին։ Եթե չգտնեմ ինչ-ինչ պատճառով, պարզապես կկանչեմ ոստիկանական խուզարկու գործակալին և կկարգադրեմ փնտրել գտնել։ Դժվարության դեպքում ձեռքիս կլինի այս թուղթը՝ նրա ձեռագիրը։ Մի խոսքով, վաղը մինչև ժամը երկուսը ճիշտ ու ճիշտ կիմանամ այդ կտրիճի հասցեն ու ազգանունը և նույնիսկ այն, թե որ ժամերին է տանը լինում։ Իսկ իմանալուց հետո մենք ոչ միայն վաղն իսկ կվերադարձնենք նրա այս գանձը, այլև միջոցներ ձեռք կառնենք, որ նա էլ երբեք մեզ չհիշեցնի իր գոյությունը։

— Ի՞նչ ես մտադիր անել,— հարցրեց իշխան Վասիլին։

— Ի՞նչ։ Կգնամ նահանգապետի մոտ ու կխնդրեմ...

— Չէ, միայն թե ոչ նահանգապետի մոտ։ Դու գիտես, թե ինչպես են մեր հարաբերությունները.. Այդտեղ ծիծաղելի դրության մեջ ընկնելու անմիջական վտանգ կա։

— Լավ, ոչինչ։ Կգնամ ժանդարմերիայի գնդապետի մոտ։ Ակումբի իմ բարեկամն է։ Թող կանչի այդ Ռոմեոյին ու մատը թափ տա քթի տակ։ Գիտե՞ս ինչպես է անում այդ բանը։ Մատը կիպ մոտեցնում է դիմացինի քթին ու ձեռքը բոլորովին չի շարժում, այլ միայն մատն է վերուվար անում, և գոռում է. «Ես, ողորմա՞ծ տեր իմ, այդպիսի բաներ չեմ հանդուրժու-ու՞-ու՞մ»։

— Փուհ... ժանդարմների միջոցով,— դեմքը կնճռոտեց Վերան։

— Ճիշտ է, Վերա, այո,— օգնության հասավ իշխանը։— Ավելի լավ է կողմնակի ոչ մի մարդու չխառնել այս գործին։ Կխոսեն այստեղ-այնտեղ, կրամբասեն... Մենք ամենքս էլ բավական լավ գիտենք մեր քաղաքը։ Բոլորը կարծես ապակե թափանցիկ անոթների մեջ են ապրում... Ավելի լավ է հենց ինքս գնամ այդ... երիտասարդի մոտ... թեև, ի՞նչ իմանաս, երևի մի վաթսուն տարեկան է... Ապարանջանը կտամ նրան ու մի լավ, խիստ խրատ կկարդամ։

— Որ այդպես է՝ ես էլ կգամ հետդ,— արագ ընդհատեց Նիկոլայ Նիկոլաևիչը։— Դու չափից դուրս մեղմ ես։ Թույլ տուր, որ ես խոսեմ հետը... Իսկ հիմա, բարեկամներս,— հանեց գրպանի ժամացույցն ու նայեց,— ներեցեք ինձ, մի բոպեով ուզում եմ

գնալ իմ սենյակը։ Հազիվ եմ ոտքի վրա մնում, այնինչ մի երկու գործ պիտի աչքի անցկացնեմ։

— Չգիտես ինչու, հանկարծ սկսեցի խղճալ այդ թշվառ մարդուն,— ասաց Վերան անվճռականորեն։

— Չարժե խղճալ դրան,— կտրուկ արձագանքեց Նիկոլայը՝ շրջվելով դռան մեջ։— Եթե ապարանջանի ու նամակի այս այլանդակ իրողությունը մեր շրջանի մարդկանցից որևէ մեկն իրեն թույլ տված լիներ, ապա իշխան Վասիլին մենամարտի հրավեր կուղարկեր նրան։ Եվ եթե նա չաներ այդ բանը, ապա ե՛ս կանեի։ Իսկ թե առաջվա ժամանակները լինեին՝ պարզապես կհրամայեի տանել նրան ախոռ ու մի լավ ճիպոտածեծ տալ։ Վաղը, Վասիլի Լվովիչ, ինձ սպասիր քո գրասենյակում, ես քեզ ամեն ինչ կհայտնեմ հեռախոսով։

10

Թքոտ սանդուղքը մկան, կատվի, նավթի ու լվացքի հոտ էր արձակում։ Վեցերորդ հարկից առաջ իշխան Վասիլի Լվովիչը կանգ առավ։

— Սպասիր մի քիչ,— ասաց աներորդուն։— Թող շունչ առնեմ։ Ախ, Կոլյա, կարիք չկար այս բանն անելու...

Բարձրացան ևս երկու սանդղաբազուկ։ Հարթակում այնպես մութ էր, որ Նիկոլայ Նիկոլաևիչն ստիպված երկու անգամ լուցկի վառեց, մինչև կարողացավ ջոկել բնակարանի համարը։

Նրա զանգի վրա դուռը բացեց լիքը-լիքը, ալեհեր, գորշավուն աչքերով ակնոցավոր մի կին՝ հավանաբար ինչ-որ հիվանդությունից փոքր-ինչ առաջ թեքված իրանով։

— Պարոն Ժյոլտկովը տա՞նն է,— հարցրեց Նիկոլայ Նիկոլաևիչը։

Կինը տագնապահար նայեց նախ՝ մեկ, ապա՝ մյուս տղամարդու աչքերին և նորից՝ առաջինին։ Ըստ երևույթին այն, որ երկուսն էլ վայելչատես էին, հանգստացրեց նրան։

— Տանն է, խնդրեմ,— ասաց՝ դուռը ետ տանելով։— Ձախից առաջին դուռը։

Բուլատ-Տուգանովսկին բախեց երեք անգամ՝ կարճ ու վճռական։ Շրշյուն լսվեց ներսից։ Բախեց մի անգամ էլ։

— Մտեք,— արձագանքեց մի թույլ ձայն։

Սենյակը շատ ցածրիկ էր, բայց և շատ էր լայն ու երկար, համարյա քառակուսաձև։ Ճիշտ և ճիշտ շոգենավի լուսանցույցներ հիշեցնող երկու բոլորակ-պատուհանները հազիվ էին սենյակը լուսավորում։ Մի պատի կողքին նեղլիկ մահճակալ էր, մյուսի կողքին՝ շատ մեծ ու լայն բազմոց, ծածկված թեքենական հնամաշ գեղեցիկ գորգով, սենյակի կենտրոնում՝ մալոռուսական երփներանգ սփռոցով սեղան։

Տանտիրոջ դեմքն սկզբում չէր երևում, կանգնել էր թիկունքը լույսին դարձած և շփոթմունքի մեջ ձեռքերը շփում էր իրար։ Բարձրահասակ էր, նիհար, երկար ու փափուկ մազերով։

— Եթե չեմ սխալվում, պարոն Ժյոլտ-կովն եք, այո՞,— հարցրեց Նիկոլայ Նիկոլաևիչը գոռոզ-գոռոզ։

— Ժյոլտկովն եմ, այո։ Շատ հաճելի է։ Թույլ տվեք ներկայանալ։

Նա երկու քայլ արեց Տուգանովսկու կողմը՝ ձեռքը պարզած։ Սակայն նույն պահին, ասես չնկատելով ողջույնի համար նրա մեկնած ձեռքը, Նիկոլայ Նիկոլաևիչն ամբողջ մարմնով Շեինի կողմը դարձավ։

— Քեզ ասում էի, չէ՞, որ չենք սխալվել։

Ժյոլտկովի բարակ, նյարդային մատները սահեցին դարշնագույն կարճփեշ բաճկոնի լանջեզրի վրայով՝ մեր գցելով ու արձակելով կոճակները։ Վերջապես, ցույց տալով բազմոցն ու անճարտար խոնարհվելով, ասաց դժվարությամբ.

— Խնդրում եմ խոնարհաբար։ Նստեցեք։

Հիմա նա տեսանելի էր լրիվ՝ խիստ դժգույն, աղջկական նուրբ դեմքով, երկնագույն աչքերով և մեջտեղը փոսիկ ունեցող երեխայական համառ կզակով. հավանաբար կլիներ մոտ երեսուն-երեսունհինգ տարեկան։

— Շնորհակալություն,— պարզապես ասաց իշխան Շեինը, որ խիստ ուշադիր զննում էր նրան։

— Mersi,— կարճ պատասխանեց Նիկոլայ Նիկոլաևիչը։ Եվ երկուսն էլ մնացին կանգնած։— Մենք ընդամենը մի քանի բոպեով ենք եկել։ Սա իշխան Վասիլի Լվովիչ Շեինն է, նահանգի ազնվականության պարագլուխը։ Իմ ազգանունը Միրզա-Բուլատ Տուգանովսկի է։ Դատախազի օգնական եմ։ Այն գործը, որի մասին պատիվ պիտի ունենանք խոսելու ձեզ հետ, հավասարապես վերաբերում է թե՛ իշխանին, թե՛ ինձ, կամ, ավելի ճիշտ, իշխանի կնոջը, իսկ իմ՝ քրոջը։

Ժյոլտկովը, բոլորովին գլուխը կորցնելով, հանկարծ թույլ-

ցած նստեց բազմոցին և թոթովեց ընդարմացած շրթունքներով. «Խնդրեմ, պարոնայք, նստեցեք»։ Բայց երևի հիշեց, որ նույն բանն արդեն մինչ այդ առաջարկել էր ապարդյուն, վեր թռավ տեղից, հապճեպ գնաց դեպի պատուհանը՝ մազերը խառնշտորելով, ու նորից ետ եկավ իր տեղը։ Եվ կրկին նրա դողդողացող ձեռքերը վերուվար սահեցին՝ քաշքշելով կոճակները, փետփետելով բաց շիկակարմրավուն բեղերը, անհարկի շփելով երեսը։

— Ես ձեր տրամադրության տակ եմ, ձերդ պայծառափայլություն,— ասաց նա խուլ ձայնով՝ աղերսական հայացքը հառած Վասիլի Լվովիչին։

Բայց Շեհինը լռում էր։ Խոսեց Նիկոլայ Նիկոլաևիչը.

— Նախ՝ թույլ տվեք վերադարձնել ձեզ պատկանող այս բանը,— ասաց նա և, գրպանից կարմիր տուփը հանելով, խնամքով դրեց սեղանին։— Սա, իհարկե, պատիվ է բերում ձեր ճաշակին, բայց մենք շատ կխնդրեինք ձեզ, որ այլևս չկրկնվեին նման սյուրպրիզներ։

— Ներեցեք... Ինքս էլ գիտեմ, որ շատ եմ մեղավոր,— մրմնջաց Ժյոլտկովը՝ նայելով ցած, հատակին ու կարմրելով։— Գուցե թույլ կտաք մի-մի բաժակ թե՞յ առաջարկել։

— Ահա թե ինչ կասեմ, պարոն Ժյոլտկով,— շարունակեց Նիկոլայ Նիկոլաևիչը՝ կարծես Ժյոլտկովի վերջին բառերը չլսելով։— Ես շատ ուրախ եմ, որ հանձին ձեզ գտա օրինավոր մարդու, ջենտլմենի, դիմացինին կես խոսքից հասկանալու ընդունակ անձնավորության։ Եվ ես կարծում եմ, որ մենք համաձայնության կգանք անմիջապես։ Եթե չեմ սխալվում, արդեն յոթ-ութ տարի կլինի, ինչ դուք հետամտում եք իշխանուհի Վերա Նիկոլաևնային, այնպես չէ՞։

— Այո,— պատասխանեց Ժյոլտկովը՝ կամացուկ և թարթիչները խոնարհեց երկյուղածորեն։

— Եվ մենք մինչև այսօր ձեր դեմ ոչ մի միջոց ձեռք չենք առել, թեև, համաձայնեք, ոչ միայն կարելի էր, այլև նույնիսկ անհրաժեշտ էր անել այդ բանը։ Ճիշտ չէ՞։

— Այո։

— Այո։ Սակայն ձեր վերջին արարքով, այսինքն՝ ահա այս նոնսենսարեն ապարանջանն ուղարկելով, դուք անցաք այն սահմանը, որտեղ սպառվում է մեր համբերությունը։ Հասկանո՞ւմ եք՝ սպառվո՞ւմ։ Ձեզնից չեմ թաքցնի, սկզբում մտածում էինք դիմել իշխանության աջակցությանը, բայց մենք այդ քայլը չարինք, և

շատ ուրախ եմ, որ չարինք, որովհետև, կրկնում եմ, իսկույն կռահեցի, որ ազնիվ մարդ է մեր դեմ։

— Ներեցեք, ինչ ասացի՞ք,— հանկարծ ուշադիր հարցրեց Ժյոլտկովն ու ծիծաղեց։— Ուզում էիք դիմել իշխանությա՞նը... Ներեցեք, իշխան, նստելուս համար,— դարձավ նա Շեհինին։— Լավ, հետո՞։

Իշխանն աթոռը մոտեցրեց սեղանին ու նստեց։ Նա տարակուսանքով ու անհագ, լուրջ հետաքրքրությամբ անթթիթ նայում էր այդ տարօրինակ մարդուն։

— Գիտեք ինչ, սիրելիս, այդ միջոցը երբեք չի փախչի ձեզնից,— շարունակեց Նիկոլայ Նիկոլաևիչը թեթև լկտիությամբ։— Ներխուժել ուրիշի ընտանիք...

— Ներեցեք, ուզում եմ ձեզ ընդհատել...

— Ոչ, կներեք, հիմա արդեն ե՛ս պիտի ընդհատեմ ձեզ...— համարյա գոռաց ղատախաղը։

— Ինչպես կամենաք։ Խոսեք։ Ես ձեզ լսում եմ։ Բայց ես մի երկու խոսք ունեմ ասելու իշխան Վասիլի Լվովիչին։

Եվ, այլևս ուշադրություն չդարձնելով Տուգանովսկու վրա, ասաց.

— Հասել է իմ կյանքի ամենածանր պահը։ Եվ ես, իշխան, պետք է խոսեմ ձեզ հետ առանց որևէ պայմանականության... Կլսե՞ք ինձ։

— Լսում եմ.— ասաց Շեհինը։— Ախ, Կոլյա, լուռ կաց մի բուրն,— ասաց անհամբեր՝ նկատելով Տուգանովսկու ձեռքի զայրալից շարժումը։— Խոսեք։

Ժյոլտկովը մի քանի վայրկյան օդ էր կուլ տալիս բերանով, կարծես շնչահեղձ էր լինում, և մեկ էլ ասես պոկվեց ու սլացավ թավալգլոր, ինչպես զառիթափից։ Խոսում էր միայն ծնոտներով, շրթունքները սպիտակ էին ու անշարժ՝ մեռելի շրթունքների պես։

— Դժվար է արտասանել մի այնպիսի ... նախադասություն... թե ես սիրում եմ ձեր կնոջը։ Սակայն անհույս ու հարգալիր սիրո յոթ տարիներն ինձ տալիս են այդ իրավունքը։ Համաձայն եմ, որ սկզբում, երբ Վերա Նիկոլաևնան օրիորդ էր դեռ, հիմար նամակներ էի գրում նրան և նույնիսկ սպասում պատասխանի։ Համաձայն եմ նաև որ իմ վերջին արարքը, այն է՝ ապարանջանն ուղարկելու պարագան, ավելի մեծ հիմարություն էր։ Բայց... ահա ուղիղ նայում եմ ձեր աչքերի մեջ ու զգում, որ դուք կհասկանաք ինձ։

Ես գիտեմ, որ այլևս ուժերիցս վեր է նրան չսիրելը... Ասացեք, իշխան... թեև անհաճո է դա ձեզ... ասացեք, ի՞նչ կանեիք դուք՝ այդ զգացմունքն ընդհատելու համար։ Ինձ ուրիշ քաղաք կաքսորեիք, ինչպես ասաց Նիկոլայ Նիկոլաևիչը։ Միևնույն է, ես այնտեղ էլ կսիրեմ Վերա Նիկոլաևնային այնպես, ինչպես այստեղ։ Բա՞նտ դնել կտայիք։ Բայց ես այնտեղ էլ հնար կգտնեմ՝ նրան իմ գոյության մասին լուր տալու համար։ Մնում է միայն մի բան՝ մահը... Թե կուզեք՝ մահ ընդունեմ ինչ ձևով կամենաք։

— Գործի փոխարեն ինչ-որ մելոդեկլամացիա ենք սարքում։ —ասաց Նիկոլայ Նիկոլաևիչը՝ գլխարկը դնելով։— Հարցը կարճ է ու որոշակի՝ ձեզ առաջարկում են երկուսից մեկը— կամ լիովին կհրաժարվեք իշխանուհի Վերա Նիկոլաևնային հետամտելուց, կամ, եթե չհամաձայնեք դրան, ձեռք կառնենք այնպիսի միջոցներ, որ թույլ են տալիս մեր դիրքը, ծանոթությունները և այլն։

Բայց Ժյոլտկովը նույնիսկ չնայեց նրան, թեև լսում էր նրա ասածը։ Դիմելով իշխան Վասիլի Լվովիչին, հարցրեց.

— Թույլ կտա՞ք բացակայեմ մի տասը րոպեով։ Չեմ թաքցրնում ձեզնից, գնում եմ հեռախոսով խոսելու իշխանուհի Վերա Նիկոլաևնայի հետ։ Հավատացնում եմ, որ ինչ հնարավոր լինի հաղորդել ձեզ՝ կհաղորդեմ։

— Գնացեք,— ասաց Շեինը։

Երբ Վասիլի Լվովիչն ու Տուգանովսկին մնացին երկուսով, Նիկոլայ Նիկոլաևիչն անմիջապես հարձակվեց փեսայի վրա։

— Այդպես չի՞ կարելի,— գոռում էր նա՝ կարծես աջ ձեռքով կրծքից պոկելով ու ցած նետելով աներևույթ մի բան։ — Ամենևին չի կարելի այդպես։ Ես քեզ նախազգուշացրի, որ խոսակցության ամբողջ գործնական մասը վերցնելու եմ ինձ վրա։ Այնինչ դու փափկեցիր ու թույլ տվիր, որ նա երկար-բարակ խոսի իր զգացմունքների մասին։ Իսկ ես ամեն ինչ կվերջացնեի երկու խոսքով։

— Սպասիր,— ասաց իշխան Վասիլի Լվովիչը,— հիմա կըպարզվի այդ ամենը։ Գլխավորն այն է, որ ես տեսնում եմ նրա դեմքն ու զգում, որ այդ մարդն ընդունակ չէ պարզապես խաբելու և ստելու։ Եվ, իսկապես, հապա մտածիր, Կոլյա, մի՞թե նա հանցավոր է, որ սիրում է, և մի՞թե հնարավոր է իշխել այնպիսի զգացմունքի վրա, ինչպիսին սերն է, մի զգացմունք, որ մինչև օրս դեռ չի գտել իր մեկնաբանին։— Փոքր-ինչ մտածելուց հետո իշխանը շարունակեց.— Ես խղճում եմ այդ մարդուն։ Եվ ոչ միայն խղճում եմ, այլև, ահա, զգում, որ ներկա եմ հոգու ահռելի մի ողբերգության, և չեմ կարող այստեղ խեղկատակություն անել։

— Դեկադենտություն է դա,— ասաց Նիկոլայ Նիկոլաևիչը։

Տասը րոպեից Ժյոլտկովը վերադարձավ։ Աչքերը փայլում էին և ներհուն էին, խորունկ, ասես լի չհեղված արցունքներով։ Եվ երևում էր, որ բոլորովին մոռացել է աշխարհիկ վայելչությունները, այն, թե ով որտեղ պետք է նստի, և դադարել է իրեն որպես ջենտլմեն պահել։ Եվ նորից հիվանդագին, դյուրաբորբոք նրբազգացությամբ այդ բանը հասկացավ իշխան Շեինը։

— Ես պատրաստ եմ,— ասաց Ժյոլտկովը,— և վաղը դուք իմ մասին չեք լսի ոչինչ։ Ես մեռածի պես կլինեմ ձեզ համար։ Բայց մի պայման,— ես սա ձեզ եմ առում, իշխան Վասիլի Լվովիչ,— գիտեք, ես պետական գումարներ եմ վատնել և, այսպես թե այնպես, ստիպված եմ փախչել այս քաղաքից։ Թույլ կտա՞ք էլի մի վերջին նամակ գրեմ իշխանուհի Վերա Նիկոլաևնային։

— Ոչ։ Վերջացրիր՝ ուրեմն վերջացրիր։ Էլ ո՛չ մի նամակ —բղավեց Նիկոլայ Նիկոլաևիչը։

— Լավ, գրեք,— ասաց Շեինը։

— Ահա և բոլորը,— ասաց Ժյոլտկովն ինքնահաճորեն ժըպտալով։— Դուք իմ մասին այլևս չեք լսի և, իհարկե, այլևս երբեք չեք տեսնի ինձ։ Իշխանուհի Վերա Նիկոլաևնան ամենևին չցանկացավ խոսել հետս։ Երբ հարցրի նրան, թե կարելի՞ է՝ մնամ քաղաքում, որ գոնե մեկ-մեկ տեսնեմ իրեն, իհարկե, չերեվալով իր աչքին, նա պատասխանեց. «Ախ, թե իմանայիք՝ ինչքա՞ն է ինձ ձանձրացրել այս ողջ պատմությունը։ Խնդրում եմ, որքան կարելի է շուտ վերջ տվեք դրան»։ Եվ ես ահա վերջ եմ տալիս այս ողջ պատմությանը։ Կարծես թե արեցի այն ամենը, ինչ կարող էի, այնպես չէ՞։

Իրեկոյան, ամառանոց գալով, Վասիլի Լվովիչը բացարձակապես տեղը-տեղին կնոջը պատմեց Ժյոլտկովի հետ հանդիպման բոլոր մանրամասնությունները։ Նա ասես իրեն պարտավորված էր զգում անել այդ բանը։

Վերան թեև անհանգստացած էր, բայց չզարմացավ ու իրեն չկորցրեց։ Գիշերը, երբ ամուսինը նրա անկողինը եկավ, նա, պատի կողմը շուռ գալով, ասաց անսպասելիորեն.

— Թող ինձ... ես գիտեմ, որ այդ մարդը վերջ կտա իր կյանքին։

11

Իշխանուհի Վերա Նիկոլաևնան երբեք թերթ չէր կարդում, որովհետև, նախ՝ թերթերից կեղտոտվում էին նրա ձեռքերը, և ապա՝ ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ այն լեզուն, որով գրում էին հիմա։

Սակայն ճակատագիրը նրան հարկադրեց բացել հենց այն էջը և աչք գցել հենց այն սյունակին, ուր տպված էր.

«Առեղծվածային մահ։ Երեկ երեկոյան, ժամը յոթի մոտ, ինքնասպան եղավ վերահսկողության ատյանի պաշտոնյա Գ. Ս. Ժյոլտկովը։ Դատելով հետաքննության տվյալներից, հանգուցյալի մահվան պատճառը պետական գումարների վատնումն է եղել։ Համենայն դեպս, ինքնասպանն այդպես է գրում իր նամակում։ Նկատի առնելով, որ վկաների ցուցմունքներով հաստատված է այդ գործողությունը սեփական կամեցողությամբ կատարված լինելու պարագան, որոշված է դիակը հերձարան չուղարկել»։

Վերան մտածեց.

«Ի՞նչն է պատճառը, որ ես նախազգացի այս բանը։ Հենց այս ողբերգական վախճանը։ Եվ ի՞նչ էր դա՝ սե՞ր, թե խելագարություն»։

Ամբողջ օրը նա շրջշրջում էր ծաղկանոցում ու այգում։ Նրա մեջ բոպե առ բոպե աճող անհանգստությունն ասես թույլ չէր տալիս, որ մի տեղ նստի։ Եվ նրա բոլոր մտքերը բևեռված էին անհայտ-անծանոթ այն մարդուն, որին երբեք չէր տեսել և հազիվ թե տեսներ երբևէ՝ այն ծիծաղելի Պե Պե Ժե-ին։

«Ինչ իմանաս, գուցե կյանքիդ ուղին խաչվել է անկեղծ, անձնուրաց, ճշմարիտ սիրո հետ»,— հիշեց նա Անոսովի խոսքը։

Ժամը վեցին եկավ փոստատարը։ Այս անգամ Վերա Նիկոլաևնան ճանաչեց Ժյոլտկովի ձեռագիրն ու բացեց նամակը մի քնքշությամբ, որ չէր սպասում իրենից։

Ժյոլտկովը գրում էր.

«Ես մեղավոր չեմ, Վերա Նիկոլաևնա, որ աստծուն հաճո եղավ առաքել ինձ սերն առանձը Ձեր՝ որպես մեծագույն երջանկություն։ Եղավ այնպես, որ ինձ կյանքում այլևս չի հետաքրքրում ոչինչ՝ ոչ քաղաքականությունը, ոչ գիտությունը, ոչ փիլիսոփայությունը, ոչ մարդկանց ապագա երջանկության հոգսը. ինձ համար ողջ կյանքը Ձեր մեջ է ամփոփված միայն ու միայն։ Ես զգում եմ հիմա, որ անպատեհ մի սեպի պես Ձեր կյանքի մեջ խրվեցի։ Եթե կարող եք, ներեցեք ինձ այդ բանի համար։ Այսօր մեկնում եմ և երբեք չեմ վերադառնա, և ոչինչ այլևս չի հիշեցնի ինձ։

Ես անսահման շնորհապարտ եմ Ձեզ հենց այն բանի համար միայն, որ Դուք գոյություն ունեք։ Ես ստուգել եմ ինձ՝ սա հիվանդություն չէ, մոլական սևեռուն գաղափար չէ, սեր է սա, որով աստված հաճեց վարձատրել ինձ ինչ-որ բանի համար։

Թող որ ես ծիծաղելի եմ եղել Ձեր աչքում և Ձեր եղբոր՝ Նիկոլայ Նիկոլաևիչի աչքում։ Հեռանալով՝ ասում եմ ես սքանչացմամբ. «Սուրբ եղիցի անուն Քո»։

Ութ տարի առաջ Ձեզ տեսա կրկեսի օթյակում, և այնժամ առաջին իսկ վայրկյանին ասացի ինքս ինձ՝ ես սիրում եմ նրան, քանզի աշխարհիս երեսին ոչինչ չկա նրա նման, չկա ոչինչ առավել լավ, չկա մի կենդանի, մի բույս, աստղ կամ մարդ, որ ավելի գեղեցիկ լինի Ձեզանից և ավելի քնքուշ։ Ասես Ձեր մեջ է մարմնավորվել աշխարհի ողջ գեղեցկությունը...

Մտածեք հապա, թե ես ի՞նչ պետք է անեի։ Ուրիշ քաղա՞ք փախչեի։ Միևնույն է, սիրտս միշտ Ձեզ մոտ էր, Ձեր ոտքերի տակ, օրվա ամեն մի ակնթարթը լցված էր Ձեզնով, Ձեր մասին մտածելով, Ձեզ երազելով... անուշ ցնորքներով։ Ես խիստ ամաչում և մտովի կարմրում եմ իմ անհեթեթ ապարանջանի համար. էհ, ի՞նչ արած, սխալ էր։ Երևակայում եմ, թե ինչ տպավորություն թողեց Ձեր հյուրերի վրա։

Տասը բոպեից մեկնելու եմ. այդ ընթացքում կհասցնեմ միայն դրոշմանիշը փակցնել և նամակը փոստարկղ գցել, որ այդ բանը չհանձնարարեմ ուրիշ ոչ մեկին։ Այրեք այս նամակը։ Ահա ես վառեցի վառարանն ու հիմա այրում եմ այն ամենաթանկ ես վառեցի վառարանն ու հիմա այրում եմ այն ամենաթանկ ես վառեցի վառարանն ու հիմա այրում եմ այն ամենաթանկ բառերը, որ եղել են իմ կյանքում։ Ձեր թաշկինակը, որ, խոստովանեմ, գողացել եմ։ Մոռացել էիք աթոռի վրա, Ազնվականաց ժողովարանի պարահանդեսում։ Ձեր երկտողը,— օ՜ ինչքան եմ համբուրել,— որով արգելում էիք նամակ գրել Ձեզ։ Նկարչական ցուցահանդեսի ծրագիրը, որ մի անգամ պահել էիք Ձեր ձեռքում և հետո, դուրս գալիս, մոռացաք թողեցիք աթոռի վրա ... Վերջացավ։ Ես խզեցի ամեն ինչ, բայց և այնպես կարծում

եմ և նույնիսկ հավատացած եմ, որ Դուք կհիշեք ինձ։ Եթե ինձ հիշեք, ապա... ես գիտեմ, որ Դուք խիստ երաժշտական եք, ես համերգներում Ձեզ ամենից ավելի հաճախ տեսել եմ բեթհովենյան կվարտետների կատարման օրերին, այնպես որ, եթե հիշեք ինձ, նվագեք կամ պատվիրեք նվագել D-dur №2 op. 2 սոնատը։

Չգիտեմ ինչպես ավարտեմ նամակս։ Ի խորոց սրտի երախտապարտ եմ Ձեզ այն բանի համար, որ Դուք իմ միակ ուրախությունն եք եղել կյանքում, միակ սփոփանքը, միակ խորհուրդը։ Թող Ձեզ երջանկություն պարգևի աստված, և թող ոչ մի անցողիկ ու առօրեական բան չխռովի Ձեր հրաշագեղ հոգին։ Համբուրում եմ Ձեր ձեռքերը։ Գ. Ս. Ժ.»

Վերան ամուսնու մոտ մտավ արցունքներից կարմրած աչքերով ու ուռած շուրթերով և, ցույց տալով նամակը, ասաց.

— Ես ոչինչ չեմ ուզում թաքցնել քեզնից, բայց զգում եմ, որ մի սարսափելի բան խառնվեց մեր կյանքին։ Հավանաբար դու և Նիկոլայ Նիկոլաևիչն ինչ-որ բան այնպես չեք արել, ինչպես որ պետք էր։

Իշխան Շեհինն ուշադիր կարդաց նամակը, խնամքով ծալեց և, երկար լռելուց հետո, ասաց.

— Ես չեմ կասկածում այդ մարդու անկեղծությանը, և նույնիսկ ավելին, չեմ համարձակվում քննել քո հանդեպ նրա զգացմունքները։

— Նա մեռե՞լ է,— հարցրեց Վերան։

— Այո, մեռել է։ Ես կասեմ, որ նա սիրում էր քեզ և ամենևին էլ խելագար չէր։ Ես աչքս չէի կտրում նրանից և տեսնում էի նրա յուրաքանչյուր շարժումը, դեմքի յուրաքանչյուր փոփոխությունը։ Եվ նրա համար կյանք գոյություն չուներ առանց քեզ։ Ինձ թվում էր, թե ականատես եմ ահռելիորեն մեծ մի տառապանքի, որից մեռնում են մարդիկ, և նույնիսկ համարյա կրոահեցի, որ իմ առջև մեռյալ մարդ է։ Հասկանում ես, Վերա, չէի իմանում ինչպես պահեմ ինձ, ինչ անեմ...

— Ահա թե ինչ, Վասենկա,— նրա խոսքն ընդհատեց Վերա Նիկոլաևնան, — քեզ ցավ պատճառած չե՞մ լինի, եթե գնամ քաղաք ու տեսնեմ նրան։

— Ոչ, ոչ, Վերա, խնդրեմ, ի՞նչ կա որ։ Ես էլ կգնայի, բայց Նիկոլայն ամբողջ գործս փչացրեց։ Վախենում եմ՝ ինձ անբնական վիճակում զգամ։

12

Վերա Նիկոլաևնան իր կառքը թողեց Լյութերական փողոցից երկու փողոց այս կողմ։ Առանց մեծ դժվարության գտավ Ժյոլտկովի բնակարանը։ Նրա առջև դուռը բացեց գորշավուն աչքերով, խիստ մարմնեղ, արծաթաշրջանակ ակնոցով տարեց կինն ու նախորդ օրվա պես հարցրեց.

— Ո՞ւմ եք ուզում։

— Պարոն Ժյոլտկովին,— ասաց իշխանուհին։

Հավանաբար նրա հագուստ-կապուստը՝ գլխարկը, ձեռնոցները, և փոքր-ինչ տիրական խոսելակերպը մեծ տպավորություն գործեցին տանտիրուհու վրա։ Եվ լեզուն բացվեց։

— Համեցեք, համեցեք, ա՜յ ձախից առաջին դուռն է, իսկ այնտեղ... հիմա... Նա այնքան շուտ հեռացավ մեզնից։ Լավ, ասենք, վատնում էր թույլ ավելի։ Կարող էր ասել ինձ, չէ՞։ Դուք գիտեք, թե ինչ կարող է լինել մեր եկամուտը, երբ բնակարանները վարձով ենք տալիս ամուրի մարդկանց։ Բայց վեց-յոթ հարյուր ռուբլի հո կարող էի հավաքել ու նրա հաշիվը փակել։ Թե իմանայիք՝ ի՜նչ հրաշալի մարդ էր, պանի։ Ութ տարի ապրում էր իմ բնակարանում, բայց ինձ համար իսկի կենվորի պես չէր, հարազատ որդիս լիներ կարծես։

Հենց այդտեղ՝ նախասենյակում աթոռ կար, և Վերան նստեց թուլացած։

— Ես ձեր հանգուցյալ կենվորի բարեկամն եմ,— ասաց նա՝ դժվարությամբ բառեր գտնելով։— Եթե հնարավոր է՝ պատմեք նրա կյանքի վերջին բոպեների մասին, թե ինչ էր անում և ինչ էր ասում։

— Երկու պարոն եկան մեզ մոտ, պանի, ու խոսում էին շատ երկար։ Հետո նա բացատրեց, թե իրեն կառավարչի պաշտոն են առաջարկում կալվածային տնտեսությունում։ Հետո պան Եժին վազեց հեռախոսով խոսելու և վերադարձավ այնպես ուրախ տրամադրությամբ։ Դրանից հետո այն երկու պարոնները գնացին, ու նա նստեց ու սկսեց նամակ գրել։ Հետո գնաց ու նամակը փոստարկղը գցեց, իսկ դրանից հետո մի ձայն լսեցինք՝ կարծես մանկական ատրճանակ կրակեցին։ Ուշք էլ չդարձրինք։ Ժամը յոթին նա միշտ թեյ էր խմում։ Լուկերյան՝ մեր աղախինը գնաց, դուռը ծեծեց, ներսից՝ ոչ մի ձայն-ծպտուն, հետո ծեծեց էլի ու էլի։ Վերջը ստիպված եղանք դուռը ջարդել, մտանք՝ մեռած էր արդեն։

— Պատմեք՝ ինչ գիտեք ապարանջանի մասին, — կարգադրեց Վերա Նիկոլաևնան։

— Ա՜խ, ա՜խ, ա՜խ, ապարանջանը... ինչպե՜ս մտքիցս ընկավ։ Բայց դո՞ւք որտեղից գիտեք։ Նամակը գրելուց առաջ եկավ մոտս, թե՝ «Դուք կաթոլի՞կ եք»։ «Կաթոլիկ եմ»,— ասացի։ Նա էլ թե՝ «Դուք մի հաճելի սովորություն ունեք,— այդպես էլ ասաց՝ հաճելի սովորություն,— աստվածամոր պատկերից թանկարժեք մատանիներ, մանյակներ, հարսանիքի ընծա ոսկեզրամներ եք կախում։ Ուրեմն կատարեք իմ խնդրանքը՝ եթե կարելի է, այս ապարանջանը կախեք սրբապատկերից»։ Խոստացա կախել։

— Ցույց կտա՞ք՝ տեսնեմ նրան,— հարցրեց Վերան։

— Խնդրե՛մ, խնդրե՛մ, պանի։ Նրա դուռը, այ, սա է՝ ձախից առաջինը։ Ուզում էին այսօր հերձարան տանել, բայց նա եղբայր ունի, խնդրեց, որ հանգուցյալին թաղեն քրիստոնավայել։ Խնդրեմ, պանի, խնդրեմ։

Վերան հավաքեց ուժերն ու դուռը բացեց։ Սենյակում խնկի հոտ էր տարածված, և երեք մեղրամոմ էր վառվում։ Սենյակին առիշեղ, սեղանի վրա մեկնված էր Ժյուլկովի մարմինը։ Գլուխը հանգչում էր խիստ ցածրիկ բարձի վրա, կարծես դիտումնավոր էին նման փոքրիկ փափուկ բարձիկը խաբել-խոթել գլխի տակ՝ մտածելով, որ ամեն ինչ միևնույն է դիակի համար։ Խոր վեհություն կար նրա գոց աչքերում, և շրթունքները ժպտում էին երանավետ ու անխռով, ասես կյանքին հրաժեշտ տալուց առաջ նա հասու էր եղել խորախորհուրդ ու սրբանվեր մի գաղտնիքի, որ մեկնել էր նրա մարդկային ողջ կյանքը։ Վերան հիշեց, որ նույն խաղաղաշունչ արտահայտությունն ինքը տեսել էր մեծ տառապյալների՝ Պուշկինի և Նապոլեոնի մահադիմակների վրա։

— Գուցե գնա՞մ, պանի, թե կհրամայեք,— հարցրեց ծեր կինը, և նրա ձայնի մեջ ինչ-որ խիստ մտերմիկ մի շեշտ զգացվեց։

— Այո, ես ձեզ հետո կկանչեմ,— ասաց Վերան և անմիջապես կոֆտայի փոքրիկ կողագրպանից հանեց մի մեծ կարմիր վարդ, ձախ ձեռքով փոքր-ինչ բարձրացրեց ննջեցյալի գլուխը, իսկ աջով վարդը դրեց պարանոցի տակ։ Եվ այդ պահին նա հասկացավ, թե այն սերը, որ երազում է ամեն մի կին, անցել է իր կողքով։ Հիշեց գեներալ Անոսովի խոսքերը հավերժական անկրկնելի սիրո մասին՝ գրեթե մարգարեական խոսքեր։ Եվ, ննջեցյալի ճակատից այս ու այն կողմ տանելով մազերը, ամուր սեղմեց նրա քունքերն ու համբուրեց պաղ, խոնավ ճակատը բարեկամական երկար համբույրով։

Երբ գնում էր, տանտիրուհին նրան դիմեց ձայնի լեհական ջողոմ արտահայտությամբ.

— Պանի, ես տեսնում եմ, որ դուք նման չեք մյուսներին, եկել եք ոչ միայն հետաքրքրությունից մղված։ Հանգուցյալ պան Ժյուլկովը մահվանից առաջ ասաց ինձ. «Թե պատահի, որ ես մեռնեմ, և մի տիկին գա ինձ տեսնելու, ապա ասացեք նրան, որ Բեթհովենի ամենալավ գործը»...— Նույնիսկ հատուկ գրեց, որ հիշեմ։ Ահա, նայեք...

— Ցույց տվեք,— ասաց Նիկոլաևնան և հանկարծ փղձկաց։ —Ներեցեք, մահվան այս տպավորությունն այնքան ծանր է, որ չեմ կարող ինձ զսպել։

Եվ նա կարդաց ծանոթ ձեռագրով գրված այս բառերը.

L. van Beethoven. Son. № 2, op. 2. Largo Appasionato.

13

Վերա Նիկոլաևնան տուն եկավ ուշ երեկոյան և ուրախացավ՝ տեսնելով, որ ոչ ամուսինն էր տանը, ոչ էլ եղբայրը։

Սակայն վաղուց նրան էր սպասում դաշնակահարուհի Ժեննի Ռեյտերը, և իր տեսածից ու լսածից խռովված Վերան նետվեց նրա կողմն ու, համբուրելով նրա գեղեցիկ խոշոր ձեռքերը, բացականչեց.

— Ժե՜ննի, սիրելիս, խնդրում եմ, մի բան նվագեք ինձ համար,— և իսկույն էլ սենյակից ելավ գնաց ծաղկանոց ու նստեց նստարանին։

Նա գրեթե ոչ մի վայրկյան չէր կասկածում, որ Ժեննին կընվագի Երկրորդ սոնատի հենց այն մասը, որ Ժյուլկով ծիծաղելի աղգանվամբ ննջեցյալն էր խնդրել։

Այդպես էլ եղավ։ Նա առաջին իսկ ակորդներից ճանաչեց խորությամբ բացառիկ, եղակի այդ երկը։ Եվ նրա հոգին ասես երկփեղկվեց։ Լսելու հետ մեկտեղ, նա մտածում էր, թե իր կողքից անցավ մեծ սերը, որ հազար տարին մեկ է կրկնվում։ Հիշեց գեներալ Անոսովի խոսքերն ու հարց տվեց ինքն իրեն, թե ինչու անծանոթ այն մարդն իրեն ստիպեց լսել բեթհովենյան հենց այդ երկը, և դեռ իր՝ Վերայի ցանկությանը հակառակ։ Եվ նրա մտքում խոսքեր շարահյուսվեցին։ Այդ խոսքերը նրա գի-

ակցության մեջ այնպես էին զուգորդվում երաժշտությանը, որ ասես երգասեր լինեին՝ «Սուրբ եղիցի անուն քո» *բառերով ավարտվող։*

«Ես հիմա զոլտրիկ հնչյուններով ձեզ կներկայացնեմ մի կյանք, որ խոնարհաբար և բերկրանքով դատապարտել է իրեն շարչարանաց, լկանքի ու մահվան։ Ոչ տրտունջ, ոչ կշտամբանք, ոչ ինքնասիրության ցավ,— անծանոթ են եղել ինձ այդ ամենը։ Ես քո առջև աղոթել եմ միայն. «Սուրբ եղիցի անուն քո»:

Այո, տառապանք, արյուն ու մահ եմ կանխատեսում ես։ Եվ խորհում եմ, մարմնի համար դժվար է բաժանվել հոգուց, սակայն, ո՜վ Գեղեցիկ, փառք քեզ, փառք խանդաբորբոք և սեր խաղաղավետ։ «Սուրբ եղիցի անուն քո»:

Վերհիշում եմ քո ամեն քայլը, ժպիտը, նայվածքը, քո ոտնաձայնը։ Մեղմանուշ թախծով, հեզահամբույր, հիասքանչ թախծով են համակված իմ վերջին հիշողությունները։ Բայց ես քեզ վիշտ չեմ պատճառի։ Ես հեռանում եմ մենակ, անբարբառ՝ այդպես էր հաճո աստծուն ու ճակատագրին։ «Սուրբ եղիցի անուն քո»:

Մահառաջքի տխուր այս պահին քեզ եմ աղոթում միայն։ Կյանքն ինձ համար էլ կարող էր գեղեցիկ լինել։ Մի՛ տրտնջա, տարաբախտ իմ սիրտ, մի՛ տրտնջա։ Հոգուս մեջ մահվանն եմ կանչում, բայց սիրտս լի է փառաբանությամբ. «Սուրբ եղիցի անուն քո»

Դու, դու և այն մարդիկ, որ շրջապատում էին քեզ,— ձեզանից ոչ մեկդ էլ չգիտի, թե ինչ սքանչելի էիր դու։ Զարկում է ժամացույցը։ Ժամանակն է։ Եվ, մեռնելով, կյանքից բաժանվելու այս վշտալի պահին այնուհանդերձ օրհներգում եմ՝ փա՜ռք քեզ։

Ահա մոտենում է նա՝ ամենահաշտ մահը, իսկ ես ասում եմ՝ փա՜ռք քեզ»...

Իշխանուհի Վերան գրկեց ակացիայի բույնը, սեղմվեց նրան ու լաց եղավ։ Ծառը մեղմ ցնցվում էր։ Թեթև այուք եկավ և, ասես վշտակցելով իշխանուհուն, սրսփացրեց տերևները սոսափյունով։ Ավելի սուր բուրեցին ծխախոտի աստղ-ծաղիկները... Եվ այդ ժամանակ զարմանահրաշ երաժշտությունը, ասես նրա վշտին ենթարկվելով, շարունակեց.

«Հանգստացիր, սիրելիս, հանգստացիր, հանգստացիր։ Դու հիշո՞ւմ ես ինձ։ Հիշո՞ւմ ես։ Չէ՞ որ իմ միակ ու վերջին սերն ես դու։ Հանգստացիր, ես քեզ հետ եմ։ Մտածիր իմ մասին, և քեզ հետ կլինեմ, քանզի մենք սիրեցինք իրար լոկ մի ակնթարթ, սակայն առհավետ։ Դու հիշո՞ւմ ես ինձ։ Հիշո՞ւմ ես։ Հիշո՞ւմ ես։ Ահա ես զգում եմ քո արցունքները։ Խաղաղվիր։ Ինձ համար քնելն այնքա՜ն քաղցր է, քաղցր, քաղցր»։

Ժեննի Ռեյտերը, նվագն ավարտելով, դուրս եկավ սենյակից և տեսավ իշխանուհուն նստած արտասվելիս։

— Ի՞նչ պատահեց քեզ,— հարցրեց դաշնակահարուհին։

Վերան, արցունքներից փայլող աչքերով, հուզված, տենդագին սկսեց համբուրել նրա երեսը, շրթունքները, աչքերը՝ ասելով.

— Ոչ, ոչ... ոչինչ... նա ներեց ինձ արդեն։ Ամեն ինչ լավ է։

1910

ՕՐՀՆՎԱԾ ՍՈՒՏԸ

Իվան Իվանովիչ Սեմենյուտան ամենևին էլ վատ մարդ չէ։ Ժուժկալ է, եռանդուն, բարեպաշտ, չի խմում, չի ծխում, հակում չունի ոչ թղթախաղի, ոչ կանանց նկատմամբ։ Սակայն ամենատիպականն է նա ձախորդների մեջ։ Նրա ամբողջ էության վրա մի տեսակ շշկլված վախվորածության ճակատագրական գիծ է դաջված ու թերևս հենց այդ գծի պատճառով դաժան ճակատագիրը, որն, ինչպես հայտնի է, քմահաճ կնոջ նման սիրում ու հնազանդ է սոսկ իշխողատենչ և վճռական մարդկանց, մշտապես հասցնում է մեկ նրա ճակատին, մեկ ծոծրակին։ Դեռևս դպրոցական տարիներին Սեմենյուտան միշտ քավության նոխազ էր ամբողջ դասարանի համար։ Դասի ժամանակ որևէ թոկից փախած մի մեծ թերթ թուղթ կծամեր, բլիթ կդարձներ ու ճարպկորեն կշպպացներ ֆրանսերենի ուսուցչի փառահեղ ճակատին։ Ու հենց այդ պահին Սեմենյուտան կքշեր ճակատին նստած ճանճը։ Զայրույթից կարմրատակած ֆրանսիացին կբղավեր.

— Օ՜, Զեմնյուտ, անպիտան տղա։ Au mur. *Պատի տակ։*

Եվ խեղճ, բոլորովին անմեղ Սեմենյուտային դասամիջոցին քարշ կտային տեսուչի մոտ, որը թափահարելով ալեխառն այծամորուքը, ոսկե ակնոցի տակից կփայլեցներ մոխրագույն ու չար աչքերը, ծերունական, ոսկրացած մատով հավասարաչափ թխկթխկացնելով Սեմենյուտայի կատարին։

— Անառակ աշակերտ։ Գաղ-թա-կա՛ն... Հաստատության խայտառակությո՛ւն... Այ-լան-դա՛կ... Դան-դա-ղո՛շ...

Եվ գործնական չոր տեսքով կեզրափակեր.

— Ճաշից հետո երեք օրով արգելարան։ Մինչև Ծննդյան տոները արձակուրդ չտալ (փակ հաստատություն էր), իսկ եթե էլի կրկնվեց, ապա կծեծենք ու դուրս կշպրտենք ուսումնարանից։

Ապա՝ շրխկան մի կտտոց ճակատին, և ահեղաձայն... «Դե՛, կորի՛։ Նո-խա՛զ»։

Եվ այսպես էր շարունակ։ Տեսուչի տան ապակիները ջարդեին քարով, թե ոտնատակ տային հարևան բանջարանոցները՝ վճռական պահին փոքրիկ ավազակները միշտ կհասցնեին ցրիվ գալ ու թաքնվել, իսկ համեստ, սուսուփուս Սեմենյուտան, այդ արարմունքներին անմասնակից, ճակատագրական մի եղանակով հանցանքի վայրի մոտերքում կլիներ անպայման։ Ու նորից նրան քարշ կտային հաշվեհարդարի, նորից՝ ռիթմիկ բղավոցներ.

— Այ-լան-դա՛կ... Գաղ-թա-կա՛ն... Դան-դա-ղո՛շ...

Այսպես դժվարությամբ նա հասավ վեցերորդ դասարան։ Եթե մինչ այդ նրան չվռնդեցին ուսումնարանից, անբարեհուսության վկայականով, պատճառն ավելի շատ այն էր, որ մայրը՝ խեղճ ու ողորմելի մի պառավ, քաղաքի մյուս ծայրից գալիս էր տեսուչի, տնօրենի կամ ուսումնարանի քահանայի մոտ, գետնին փռվում նրանց առաջ, ոտքներն էր ընկնում, մայրական առատ արցունքներով ցողելով նրանց ծնկները, որդու համար աղերս անելով.

— Մի կործանեք երեխային։ Աստված վկա, շատ լսող ու փափուկ տղա է։ Միայն թե ամաչկոտ է շատ ու աչքը վախեցած։ Դրա համար էլ ամեն թոկից փախած նրան նեղացնում է։ Ավելի լավ է ծեծեք։

Սեմենյուտային ծեծում էին բավական հաճախ ու հիմնավորապես, սակայն այդ փորձված միջոցը չէր օգնում նրան։ Յոթերորդ դասարան ընկնելու երկու անհաջող փորձերից հետո այնուամենայնիվ նրան հեռացրեցին, թեև մոր արցունքները հարգելով, վեցերորդ դասարանն ավարտելու վկայական տվեցին։

Բազում զոհողությունների և ստորացումների գնով մայրը մի փոքրիկ գումար հավաքեց, որ քաղաքացիական զգեստ գնել կարողացան որդու համար։ Մի լրիվ կոստյում, «կիսասեզոն» կանաչ

վերարկու, կարկատած սապոգներ ու կոտելոկ գնեցին սև շուկայում, «ձեռի վրա» առևտուր անողներից։ Իսկ սպիտակեղենը մայրն իր շրջազգեստից ու գիշերանոցներից կարեց։

Մնում էր տեղ որոնելը։ Բայց տեղը «չէր գալիս», Սեմենյուտայի բախտն իր հետ էր։ Թեև հարկ է ասել, որ մի կլոր տարի առավոտից երեկո նա արտակարգ փութաջանությամբ չափչփում էր վիթխարի քաղաքի փողոցները, որևիցե աննշան գործ որոնելով։ Ճաշում ու ընթրում էր այրիների ծերանոցում. ընդհանուր ճաշարանից ետ գալուց մայրն իր խղճուկ բաժնի կեսը նրան էր բերում։ Ավելի դժվար էր գիշերելու խնդիրը, քանի որ այրիներն ընդհանուր սենյակում էին ապրում, յուրաքանչյուրում հինգ-վեց հոգի։ Բայց մայրն աղաչանք արեց տիրացուին, աղաչանք արեց հանդերձապահուհուն, ու սրանք ողորմածաբար թույլատրեցին Սեմենյուտային՝ քնել ընդհանուր խոհանոցում, փայտյա սեղանի և միացրած երկու աթոռակների վրա։

Վերջապես մեկ տարի ու մի քիչ էլ անց պետական պալատում գրագրի տեղ ճարվեց, քսաներեք ռուբլի տասնմեկ ու քառորդ կոպեկ ամսականով։ Սեմենյուտայի համար այդ տեղը գտավ փաստաբան Յուվենալի Եվպսիխիևիչ Անտոնովը, որը մոր երիտասարդ ու ապահով տարիների ծանոթն էր եղել։

Սեմենյուտան համակ ջանասիրությամբ ու անխոնջությամբ, որը հատուկ էր նրան, լծվեց ծանր ու ձանձրալի ծառայությանը։ Առաջինն էր գալիս պալատ ու վերջինը գնում, երբեմն էլ աշխատելու էր գալիս նույնիսկ երեկոները, քանի որ մի քանի կոպեկի համար ընկերների շտապ գործերն էր անում։ Մնացած գրագիրները սառն էին նրա նկատմամբ, մի քիչ՝ բարձրից, մի քիչ էլ արհամարհական։ Ծանոթություններ չէր փնտրում, բիլիարդ չէր խաղում, ծանոթ օրիորդների հետ այդում չէր զբոսնում՝ նվագախումբը նվագելիս։ «Անապատի ճգնավոր» անունը դրեցին։

Սեմենյուտան երջանիկ էր. համեստ մի սենյակ, սարեկարնի նման՝ ձեղնահարկի ծայրին, քսան կոպեկով ճաշ՝ հունական ճաշարանում, տանն էլ՝ իր թեյն ու շաքարը։ Հիմա նա ոչ միայն մեկ-մեկ կարող էր մորն ուրախացնել կամ խնձորով, կամ մի տասնյակ անուշով, կամ մի տուփ հալվայով, այլ տարվա վերջին նույնիսկ բավականին վայելուչ կոստյում գնեց իր համար և ամուր ու ճոճռան կիսակոշիկներ։ Ղեկավարությունն, ըստ երևույթին, գնահատեց նրա ջանասիրությունը։ Ծառայության

երկրորդ տարում նա ստացավ մատենավարի պաշտոն, ոտքիկը հինգ ռուբլով ավելացավ, իսկ երկրորդ տարվա վերջին համարվում էր հաստիքային ու հազվադեպ փոքր գումարներ էր գցում խնայողական դրամարկղ։ Սակայն հենց երանավետ բարեկեցության այդ ընթացքում ճակատագիրը նրան իր ահեղ դեմքը ցույց տվեց։

Մի անգամ Սեմենյուտան գրասենյակում աշխատեց մինչև ուշ գիշեր։ Դրանից բացի, տանը շտապ արտագրության գործ ուներ։ Պառկեց քնելու առավոտյան շորսն անց, սովորության համաձայն արթնացավ յոթին՝ հոգնած, ջարդված, գունատ, կոպերը կարմիր և ուռած։ Այս անգամ վարչություն եկավ ոչ թե բոլորից շուտ, այլ վերջինների հետ։

Դեռ չէր հասցրել տեղը նստել ու թղթերն իր դիմաց դասավորել, երբ հանկարծ անորոշ կերպով հոգում մի տեսակ տարօրինակ, տագնապալի և զարհուրելի զգացում ունեցավ։ Ընկերներից ոմանք նրան էին նայում խեթելով ու անբարյացակամորեն, ոմանք թռուցիկ հետաքրքրությամբ, ոմանք էլ փախցնում էին աչքերն ու շրջվում, նրա աչքերը տեսնելով։ Նա ոչինչ չէր հասկանում, սակայն մի սառը ցավ տակնուվրա էր անում սիրտը։

Բոպե առ բոպե աճում էր նրա տագնապը։ Ժամը տասնմեկին, սովորականի պես բարձր զանգ հնչեց, որն ազդարարում էր տնօրենի գալուստը։ Սեմենյուտան ցնցվեց և այդ իսկ պահից դողէրոցքի մանրիկ դողը չթողեց նրան։ Ու նա թերևս ամենևին չզարմացավ նույնիսկ, այլ ճռճվեց սոսկ, ինչպես եզը կացնի հարվածից, երբ քարտուղարը, կռանալով նրա սեղանի վրա, խստորեն ու կիսաձայն ասաց. «Նորին գերազանցությունը ձեզ իր աշխատասենյակն է կանչում»։ Նա վեր կացավ կապարե ոտքերով, ասես մղձավանջի մեջ քարշ եկավ ամբողջ գրասենյակով, բոլոր պաշտոնակիցների ուղեկցող հայացքի տակ։

Նա երբեք չէր եղել այդ սրբավայրում, և դա իր վիթխարի չափերով, խիստ ու սառը ոճի փառահեղ կահույքով, մորեգույն ծանր վարագույրներով այնպես ապշեցրեց, որ միանգամից չնկատեց փոքրամարմին տնօրենին, որը նստած էր շքեղ գրասեղանի առաջ, ինչպես ճնճղուկը մեծ մատուցարանի վրա։

— Սեմենյուտա, մոտ եկեք,— ասաց տնօրենը, երբ Սեմենյուտան խորը գլուխ խոնարհեց։— Ասացեք, ինչի՞ համար եք դա արել։

— Ի՞նչ, ձերդ գեր-զնցություն։

— Դուք ինձնից ավելի լավ գիտեք, թե ինչ։ Ինչո՞ւ եք կոտրել տնտեսվարի սեղանի դարակն ու այնտեղից հափշտակել գերբակիր դրոշմանիշեր և դրամ։ Չհամարձակվեք ժխտել։ Մեզ ամեն ինչ հայտնի է։

— Ես... ձերդ գեր-զնցություն... Ես... ես... ես, աստված վկա...

Տնօրենը, որ շատ լիբերալ, զուսպ ու մարդկային անձնավորություն էր, համալսարանի պրոֆեսոր՝ ֆինանսական իրավունքի գծով, հանկարծ բռունցքը զայրագին խփեց սեղանին.

— Չհամարձակվեք աստծո անունը տալ։ Նախորդ գիշեր մենակ եք եղել այստեղ։ Մնացել եք մինչև ժամը մեկը։ Զեզնից բացի, ամբողջ վարչությունում միայն պահակ Անկուդինն է եղել, բայց նա ավելի քան քառասուն տարի այստեղ է աշխատում, և ես ավելի շուտ պատրաստ եմ ինքս ինձ կասկածել, քան նրան։ Եվ այսպես, խոստովանեք, ու ես ձեզ ազատ կարձակեմ ծառայությունից, ուրիշ որևէ վնաս չհասցնելով ձեզ։

Սեմենյուտայի ոտքերն այնքան սաստիկ դողացին, որ նա ակամա ծնկի իջավ։

— Ձերդ... Աստված վկա, ազնիվ խոսք... ձերդ... Թող տիրամայրը, սուրբ Նիկոլայն ինձ... եթե ես... ձերդ գեր-զնցություն։

— Վեր կացեք,— խորշանքով ասաց տնօրենը, ոտքերն աթոռի տակ քաշելով։— Մի՞թե ձեր դեմքից ու աչքերից ես չեմ տեսնում, որ գիշերն անառականոցում եք անցկացրել։ Չէ որ գիտեմ, որ դուք վատնումից կամ գողությունից (տնօրենը դաժանորեն ընդգծեց այս բառը) հետո առաջին հերթին պանդոկ եք գնում կամ հասարակաց տուն։ Չկամենալով արատավորել իմ հաստատության վարկը, ես ոստիկանությանը տեղյակ չեմ պահի, սակայն հիշեք, որ եթե մեկնումեկն ինձ դիմի ձեր մասին տեղեկություն իմանալու, ոչ մի լավ բան չեմ ասի։ Հեռացեք։

Եվ նա սեղմեց էլեկտրական զանգի կոճակը։

Ահա արդեն երեք տարի Սեմենյուտան մի անհեթեթ, հիվանդագին ու սարսափելի կյանք է վարում։ Կիսախավար նկուղում է պատսպարվել, ուր վարձել է ամենախավար, խոնավ ու ցուրտ անկյունը։ Մյուս անկյունում ապրում է առևտրական Միխեևնան, որը ձկնորսներից զամբյուղներով սպիտակ մանրաձուկ է գնում, կոտլետ պատրաստում ու հատը մի կոպեկով ծախում է շուկայում։ Երրորդ, առավել լուսավոր անկյունում, իր կոճղին նստած օրն-

իրուն մուրճով թխկթխկացնում է կոշկակար Իվան Նիկոլաևիչը՝ սովորական օրերին մեղմ, քաղցրալեզու, ուրախ մի մարդ, իսկ տոն օրերին ամբարիշտ ու կռվարար, նա ապրում է իր բազմաթիվ փոքրիկների ու հավերժորեն հղի կնոջ հետ։ Վերջապես չորրորդ անկյունում առավոտից երեկո փայտյա հսկայական տաշտըն է դխկդխկացնում նկուղի տերը՝ լվացարարուհի Իլյինիչնան՝ կռվազան բնավորությամբ ու հարբեցող մի կին։

Թե ինչով է գոյությունը պահպանում Սեմենյուտան, ինքն էլ չի կարող բացատրել։ Կոշկակարի ավագ երեխաներին՝ Կոլկային և Վերկային գրել կարդալ է սովորեցնում, որի դիմաց առավոտները սև հացով կծովի թեյ է ստանում։ Հայցագիմումներ է գրում ռեստորաններում ու գարեջրատներում, ինչպես նաև առավոտները փոստում հասցեներ է գրում ծրարների վրա, նամակներ գրում անգրագետների համար, ամսական երեք ռուբլով դասեր է տալիս քաղաքի ծայրամասում, մի վաճառականի տանը։ Հազվադեպ՝ արտագրության գործ է լինում։ Իսկ նրա գլխավոր զբաղմունքը քաղաքով մեկ վազվզելն է, գործատեր փնտրելը։ Սակայն արտաքինը ոչ մեկին վստահություն չի ներշնչում։ Սափրված չէ, զզվզված խոտի պես մազերը ցցված են գլխին, գունատ դեմքին՝ նկուղային վատառողջ ուռածություն, սապոգների քթերը բացվել են։ Դեռևս հարբեցող չէ, բայց սկսել է խմել։

Բայց տարվա մեջ չորս օր կա, երբ նա ջանում է թափ տալ իրեն ու կարգի բերել արտաքինը։ Նոր տարուն, Զատկին, հոգեգալստյան տոնին ու օգոստոսի տասներեքին։

Այդ օրերի նախօրեին բազում ջանքերի և ստորացումների գնով նա գտնում է տասնհինգ կոպեկ, հինգ կոպեկով բաղնիք է գնում, հինգ կոպեկը տալիս նման մի նկուղում, առանց ցուցանակ գործ անող վարսավիրին, մնացածով էլ շոկոլադի սալիկ է գնում կամ նարինջ։ Հետո գնում է նախկին երկու ընկերներից մեկի մոտ, որոնք թեև նեղվում են նրա այցելություններից, բայց և այնպես ընդունում են նրան՝ սրտերում սուր և խորշագին խղճահարությամբ։ Մեկի ազգանունը Պշոնկին է, մյուսինը՝ Մասատ։ Ջանձրացնելուց վախենալով, Սեմենյուտան հերթով է այցելում նրանց։

Խմում է իրեն առաջարկած թեյը, թնչացնում է, հոգոց հանում և տրտում, ծերունավարի օրորում է գլուխը։

— Ի՞նչ կա։ Վա՞տ է, եղբայր Սեմենյուտա,— հարցնում է Մասսան։

— Մեղք բան է աստծուց տրտնջալը, բայց վատ է, վատ, Նիկոլայ Ստեպանովիչ։

— Դու էլ արգելված բաներ չանեիր։

— Նիկոլայ Ստեպանովիչ... աստված տեսնում է... ես չեմ արել... ոնց որ աստծու առաջ՝ ես չեմ։

— Դե, լավ, լավ, լաց մի եղիր։ Ես կատակով ասացի։ Հավատում եմ։ Ո՞ւմ չի պատահում։ Սեմենյուտա, քեզ փող պետք չէ՞։ Քսանհինգ կոպեկ կարող եմ տալ։

— Չէ, չէ, Նիկոլայ Ստեպանովիչ, փող պետք չէ ու չեմ էլ վերցնի, բայց եթե այդքան մեծահոգի եք՝ մի երկու ժամով տվեք ձեր պիջակը։ Մաշվածներից թող լինի։ Մի մերժեք, հոգիս, մի մերժեք, սիրելիս։ Մի անհանգստացեք, երեկ եմ բաղնիք գընացել։ Մաքուր եմ։

— Ցանցառ մարդ դուրս եկար, Սեմենյուտա։ Ինչի՞դ է պետք կոստյումը։ Երեք տարի է ինձնից մի քանի ժամով պիջակ ես վերցնում։ Ինչի՞դ է պետք։

— Մի գործ կա, Նիկոլայ Ստեպանովիչ։ Հորաքույր ունեմ... պառավ կին է։ Մեկ էլ տեսար, մեռավ, իսկ ես միակ ժառանգն եմ։ Մոտը գնալ, շնորհավորել է պետք։ Եղածը մի դումար չի, բայց դե հինգ հարյուր ռուբլին... Փողոցում դրված հո չի։

— Լավ, լավ, վերցրու, աստված քեզ հետ։

Եվ ահա, հայելու պես փայլեցնելով սապոգները, ծակ տնդերը թանաքով ներկելով, շալվարի տակերի կախկխված թելերը խնամքով կտրելով, ամբողջ տարին լրագրի մեջ փաթաթված ու պահված բամբակյա օձիքն ու կրծքակալը հագնելով, փողկապը՝ կարմիր, Սեմենյուտան քաղաքը կտրում-հասնում է այրիների ծերանոց, մորն այցելելու։ Տաքուկ, պաշտոնականորեն վեհապանծ նախասրահում, կարմիր ու սև արծիվներով լիվրեյը հագին, մոնումենտի պես կանգնած է լինում գիրուկ ու ալեհեր բարապան Նիկիտան, որը Սեմենյուտային հինգ տարեկան հասակից է ճանաչում։ Սակայն բարապանը Սեմենյուտային բարձրից է նայում և նույնիսկ չի պատասխանում նրա ողջույնին։

— Նիկիտուշկա, բարև։ Հը՞, առողջությունդ ինչպե՞ս է։

Հպարտ Նիկիտան լուռ է, ասես քարացել է։

— Մայրիկի առողջությո՞ւնն ինչպես է,— երկչոտ հարցնում է շշկլված Սեմենյուտան, վերարկուն կախիչից կախելով։

Բարապանը հայտարարում է.

— Ի՞նչ պիտի լինի նրան։ Պինդ պառավ է։ Էնքա՜ն տրնջ-քա որ...

Սեմենյուտան սովորաբար աշխատում է երեկոյան գալ, երբ այնքան էլ նկատելի չեն նրա կոստյումի արատները։ Անլսելի քայլերով նա անցնում է հսկայական կամարակապ սենյակների շարքերի միջով, որոնց պատերը հանգիստ կանաչ գույնով են ներկված, ուռեցրած վերմակներով ու բարձերի կույտերով ճերմակաթույր անկողինների մոտով, պառավների մոտով, որոնք հետաքրքրությամբ ուղեկցում են նրան ակնոցների վրայից նետած հայացքներով։ Փոքրուց ծանոթ հոտերը՝ պաշուլի խոտի, անանուխի ծխի, մեղրամոմի և հատակի մաստիկայի հոտերը ու էլի ինչ-որ տարօրինակ, անորոշ, մաքուր, կոկ, ծերության թառամած հոտը, հողի հոտը՝ այս բոլորը Սեմենյուտայի գլուխն են խուժում և սեղմում նրա սիրտը մեղմ ու ծակող խղճահարությամբ։

Վերջապես, ահա այն սենյակը, ուր մայրն է ապրում։ Վեց բարձր մահճակալ, գլուխները դեպի պատը, ոտքերը սենյակի մեջտեղ, և յուրաքանչյուրի կողքին ծերանոցի պահարանիկներն են, խեցեպատ շրջանակների մեջ հին-հին դիմանկարներով զարդարված։ Սենյակի մեջտեղում, առաստաղից ճախարակով կախ է արած հսկայական լամպը, որը լուսավորում է սեղանը, իսկ դրա շուրջ նստած երեք պառավ իրենց անվերջանալի պրեֆերանսն են խաղում, մյուս երկուսը հենց այդտեղ ինչ-որ բան են հյուսում և մեկ-մեկ կրքոտությամբ խառնվում ավարտված փուլի վերլուծմանը։ Օ՜, այս ամենը հիվանդագին կերպով ինչքան ծանոթ է Սեմենյուտային։

— Կոնկորդիա Սերգեևնա, ձեզ մոտ են եկել։

— Չլինի՞ Վանեչկան է։

Մայրն արագ վեր է կենում, ակնոցը ճակատին բարձրացնելով։ Բրդյա թելի կծիկն ընկնում է հատակին ու գլորվում, քանդելով հյուսվածքի հանգույցները։

— Վանյո՜չկա։ Սիրելի՜ս։ Սպասեցի, սպասեցի, կարծում էի էլ չեմ տեսնի արծիվ տղիս։ Գնանք, գնանք։ Այսօր երազումս էլ եմ քեզ տեսել։

Դողդոջուն ձեռքով նրան տանում է իր մահճակալի մոտ, ուր պատուհանի տակ նրա սեփական առանձին սեղանիկն է դրված, սփոռոց է գցում, վառելով եկեղեցու մեղրամոմի կտորը,

պահարանից հանում է թեյնիկը, գավաթները, թնջուկը և շաքարամանը ու ամբողջ ժամանակ՝ ձեռուտ ընկած, իրար անցած, և նրա ծեր, սմքած, ոսկրացած ձեռքերը դողվում են։

Նրանց մոտով անցնում է պատկառելի ու պատռված աղախինը՝ «հարկի աղջիկը», հիսուն տարեկան, գործատեղի կապույտ զգեստով ու սպիտակ գոգնոցով։

— Դոմնուշկա,— փոքր-ինչ հայցողական ասում է Կոնկորդիա Սերգեևնան։— Մի քիչ եռջուր չե՞ս բերի մեզ, հոգիս։ Տես, Վանյուշկան է ինձ հյուր եկել։

Դոմնան խոր, արժանապատիվ, հին ձևով, մոսկովյան ձևով գլուխ է տալիս Սեմենյուտային։

— Բարև ձեզ, սիրելի Իվան Իվանովիչ։ Վաղուց չեք գալիս։ Իսկ մայրիկը ձեզ կարոտում է։ Հիմա կբերեմ, տիրուհի, էս բոպեիս։

Մինչ Դոմնան գնում է եռջուր բերելու, մայր ու որդի լռում են և արագ, թափանցող հայացքով ասես շոշափում են մեկը մյուսի հոգու խորքը։ Այո, միայն երկար ժամանակ բաժանվելուց հետո ես սիրելի դեմքի վրա նկատում քայքայման և թոշնումի այն գծերը, որ անողորմ ժամանակն է դնում շարունակ և որոնք աննկատ են մնում ամենօրյա համատեղ կյանքի ընթացքում։

— Տեսքդ լավ չի, Վանյոկ,— ասում է պառավը և չոր ու սմքած ձեռքով շոյում որդու՝ սեղանին դրված ձեռքը։— Գունատվել ես, մի տեսակ հոգնած ես։

— Ինչ արած, մաման, ծառայություն է։ Հիմա, կարելի է ասել, երևացող գործի եմ։ Պաշտոնս աննշան է, բայց ամբողջ գրասենյակն իմ վրա է։ Տառացիորեն առավոտից երեկո աշխատում եմ։ Եզան պես։ Համաձայն չե՞ք, մաման, որ պետք է կարիերա անել։

— Քեզ շատ մի հոգնեցրու, Վանյուշա։

— Ոչինչ, մաման, ես շատ դիմացկուն եմ։ Փոխարենը Զատկին կոլեգիականը կստանամ, ոոճիկս էլ կավելանա, պարգևատրում էլ կլինի։ Այն ժամանակ՝ վերջ այստեղ մնալուն։ Բնակարան կվարձեմ ու քեզ կտանեմ մոտս։ Հո չե՞նք ապրի, դրախտի պես։ Ես կգնամ ծառայության, դուք կմնաք տանտիրուհի։

Պառավի աչքերից գորովանքի արցունքներ են ելնում ու տարածվում խորը կնճիռների մեջ։

— Տա աստված, տա աստված, Վանիչկոյ։ Միայն թե աստված քեզ առողջություն ու համբերություն տա։ Տեսքդ այնքան էլ...

Այդ երկչոտ, կյանքից ծեծված մարդը կարճատև ու հազվադեպ այցելությունների ժամանակ մոր առաջ միշտ շատ համարձակ ու անկախ տոն էր վերցնում, անգիտակցաբար նմանեցնելով «գործուղված» աշխարհիկ այն ավարաներին, որոնց նախկինում տեսել էր գրասենյակում։ Այստեղից էլ՝ այդ տխմար «մաման» բառը։ Նա միշտ էլ, հիմա էլ մտքի մեջ մորը «մամա» էր ասում, «մամուսենկա», «մամոչկա», միշտ էլ «դու»-ով։ Սակայն «մաման»-ի մեջ մի տեսակ անհոգ ու արիստոկրատական բան կար։ Եվ նույն այդ բոպեներին, նայելով մոր տանջահար թոռոմած, կնճռապատ դեմքին, նա միաժամանակ սարսափ է զգում, գորով, ամոթ ու խղճահարություն։

Դոմնան բերում է եռջուրը, իր խորունկ խոնարհումով դնում է սեղանին և սահուն հեռանում։

Կոնկորդիա Սերգեևնան թեյ է թրմում։ Նրանց սեղանիկի մոտով պատեհ-անպատեհ գնում-գալիս են հնամենի, հետաքրքրասեր, մկան աչքերով պառավներ, որոնք հենց մոխրագույն մկների են նման։ Բոլորն էլ հիշում են Սեմենյուտային, երբ նա դեռ հինգ տարեկան էր։ Նրանք կանգ են առնում, ձեռքերն իրար զարկում, օրորում են գլուխներն ու զարմանում.

— Տե՜ր աստված։ Վանեչկան է։ Ճանաչել չի լինի՝ ինչքա՜ն է մեծացել։ Իսկ ես ձեզ ա՛յ էսքանից, էսքանից եմ հիշում։ Սրտոտ-տղա էիք, հերոս։ Ձեզ հենց այդպես էլ ասում էինք՝ գեներալ Սկոբելև։ Ինձ միշտ բարկացնում էիք, «Պերպետույա Իզմեգուլնա» էիք ասում, իսկ հանգուցյալ Գոլոլոբովային, Նադեժդա Ֆյոդորովնային, ասում էիք՝ «մոխրագույն ու պոչավոր տատիկ»։ Այսօրվա պես եմ հիշում։

Կոնկորդիա Սերգեևնան, առանց ձևականությունների, ձեռքը թափ է տալիս նրա վրա։

— Եվ շնորհակալ ենք... Տղայիս հետ մի կարևոր խոսակցություն ունենք։ Շնորհակալ եմ։ Գնացեք, գնացեք։

— Ձեր գործե՞րն ինչպես են, մաման,— հարցնում է Սեմենյուտան, ֆոթացնելով գցովի թեյը։

— Ինձ ի՞նչ կա որ։ Իմ ծերությունն ու ես։ Վաղուց էն աշխարհ գնալուս ժամանակն է... Աղջիկներն են վատ։ Դու հո՝

փառք աստծո, քո ճամփի վրա ես, երևացող տեղ ես, նրանց քանի՞ դժվար։ Կատյուշայի մարդը լրիվ կտրվել է տնից։ Խաղում է, խմում, ամեն օր հարբած է տուն գալիս։ Սեծում է Կատենկային։ Երևում է, շուտով նրան կհանեն երկաթուղուց, իսկ Կատենկան նորից հղի է։ Մենակ մի գործ գիտի սրիկան։

— Այո, այո, մաման, իրավացի եք՝ սրիկա է։

— Սը՜սս... կամաց... Այդքան բարձր մի խոսիր...— շշնջում է մայրը։— Այստեղ բոլորն ականջ են դնում, հետո էլ կսկսեն բամբասելը։ Հա՛, իսկ Զոյենկան... չգիտեմ լավ է, թե վատ։ Նրա Ստասենկան թե՛ բարի է, թե՛ սիրով... Ախր բոլոր լեհերն էլ սիրով են, իսկ ինչ վերաբերում է կանանց, ոնց որ շուն լինի, մեղա քեզ, աստված։ Փողերը լրիվ նրանց վրա է ծախսում անամոթը։ Կառքերով է ման գալիս, տեսակ-տեսակ նվերներ... Իսկ Զոյան, հիմարը, մինչ հիմա սիրահարված է կատվի նման։ Չեմ հասկանում, թե դա ինչ հիմարություն է։ Մի քանի օր առաջ բանալին հարմարեցրել ու նրա գրասեղանի մեջ նկարներ էր գտել, իր Դուլցինեաներին նկարել էր մի տեսքով, որ... գիտես... առանց ոչնչի։ Զոյան էլ բռնել ու հաշիշով թունավորել էր իրեն... Հազիվ ետ էին բերել։ Ասենք, ինչ եմ մի գլուխ տհաճ բաներ ասում։ Ավելի լավ է քո մասին մի բան պատմիր։ Մենակ թե սը՜սս... կամաց, այստեղ պատերն էլ ականջ ունեն։

Սեմենյուտան օգնության է կանչում իր ամբողջ երևակայությունն ու ակսում ստել, սանձարձակ ու անփութորեն։ Ճիշտ է, երբեմն նա հակասում է նախորդ այցելությանը ասածներին։ Միևնույն է, նա դա չի նկատում։ Մայրն է նկատում, բայց լռում է։ Միայն թե նրա պառավական աչքերը գնալով ավելի տրտում ու քննող են դառնում։

Ծառայությունը շատ լավ է գնում։ Ղեկավարությունը գնահատում է Սեմենյուտային, ընկերները սիրում են։ Ճիշտ է, Տրակտատովը և Պրոբրաժենսկին նախանձում են ու դավեր նյութում։ Բայց ի՞նչ կարող են անել։ Ոչ գիտելիք ունեն, ոչ պատկերացում։ Ու ի՞նչ կրթություն՝ մեկը հեռացված է ճեմարանից, իսկ մյուսը պարզապես խուլիգան է։ Իսկ Սեմենյուտայի տակն այնքան էլ հեշտ չէ քանդելը։ Գրասենյակային գործի բոլոր գաղտնիքներն ուսումնասիրել է կատարելապես։ Սեղանապետը ձեռքով է ողջունում։ Վերջերս ընթրիքի էր հրավիրել իրենց տուն։ Պարեցին։ Սեղանապետի աղջիկը՝ Լյուբոչկան մի ուրիշ օրիորդի հետ մո-

տեցան իրեն։ «Ի՞նչ եք ուզում. վա՞րդ, թե շուշան»։ «Շուշան»։ Լյուբոչկան կարմրեց մինչև ականջների ծայրը։ Իսկ հետո հարցրեց, «Ինչի՞ց իմացաք, որ դա ես եմ»։ «Ինձ սիրտս հուշեց»։

— Քեզ պսակվել է պետք, Վանեչկա։

— Սպասեք։ Դեռ շուտ է, մաման։ Թողեք մի քիչ պնդանամ։ Բայց լավիկն է։ Կատարյա՞լ լավիկն է։

— Ա՜խ, խենթի մեկը։

— Թյուհ, թյուհ, աչքով չտամ։ Գործերս առայժմ կարգին են, դժգոհել չի. լինի։ Օրերս տնօրենն անցնում էր, թփթփացրեց ուսիս ու ասաց խրախուսանքով. «Աշխատեք, երիտասարդ, աշխատեք։ Ես հետևում եմ ձեզ ու միշտ կաջակցեմ ձեզ։ Եվ ընդհանրապես ձեզ նկատի ունեմ»։

Եվ նա խոսում, խոսում է անվերջ, բորբոքվելով սեփական երևակայությունից, թեթևամտորեն ոտքը ոտքին գցած, բեղերն ոլորելով և աչքերը կկոցելով, իսկ մայրը նրա բերանին է նայում՝ կախարդական հեքիաթով զմայլված։ Բայց ահա հեռվում, հեռագրհետե մոտենալով, զանգ է հնչում։ Զանգակը ձեռքին ներս է մտնում Դոմնան։ «Տիկիններ, ընթրելու»։

— Սպասիր ինձ,— շշնջում է մայրը։— Էլի եմ ուզում քեզ նայել։

Քսան րոպե անց վերադառնում է։ Ձեռքին՝ փոքրիկ մի ափսե, մեջը աղ դրած թառափի մի կտոր կամ դոնդող, կամ ձկով վինեգրեդ ու մի քանի կտոր համեղ սև հաց։

— Կեր, Վանեչկա, կեր,— քնքշությամբ խնդրում է մայրը։ — Որբևայրու մեր ուտելիքը մի արհամարհիր։ Փոքր ժամանակ թառափ շատ էիր սիրում։

— Աստված սիրեք, մաման, կուշտ-կուշտ եմ, ինչպե՞ս ուտեմ։ Այսօր, «Պրագայում» ենք ճաշել, տնտեսվարին էինք մեծարում։ Ի դեպ, մաման, այնտեղից ձեզ նարինջ եմ բերել։ Վերցրեք...

Սակայն նա, այնուամենայնիվ, գայլի ախորժակով ուտում է բերած բաժինը և չի նկատում, թե ինչպես մոր դեմքի կնճռապատ այտերի վրայով, լեռնային բարալիկ առվակների պես անաղմուկ արցունքներ են տարածվում։

Վրա է հասնում գնալու ժամանակը։ Մայրն ուզում է որդուն ուղեկցել մինչև նախասրահ, բայց որդին հիշում է իր աներևակայելի մաշված վերարկուի տեսքը, և մերժում է այդ սիրալիր քայլը։

— Ի՞նչ եք ասում, մաման։ Երկար ուղեկցելն ավելորդ արցունք է։ Դեռ չհաշված, որ կմրսեք, աստված չանի։ Տեսեք, հա, ձեզ լավ պահեք։

Նախասրահում հպարտ Նիկիտան անասելի ճնշող վեհապանծությամբ նայում է, թե Սեմենյուտան ինչպես է շտապ-շտապ հագնում հնամաշ վերարկուն և ինչպես գլխին դնում կիսաքանդված գլխարկը։

— Էս տեսակ բաներ, Նիկիտուշկա,— քաղցրությամբ ասում է Սեմենյուտան։— Ապրել դեռ կարելի է... Միայն թե պետք չէ հուսահատվել... Է՜հ, մի տասը կոպեկանոց պետք էր քեզ տալ, բայց մանր չունեմ։

— Ինչ կարիք կա,— արհամարհանքով ասում է բարապանը։ —Ես գիտեմ, ձեր ունեցածը մեծ թղթեր են։ Դե, գնացեք, գնացեք։ Սենյակս կսառեցնեք։

Իսկ ճակատագիրը ե՞րբ է Սեմենյուտային ցույց տալու ոչ վայրագ, այլ ողորմած դեմքը։ Եվ ցույց կտա՞ արդյոք։ Կարծում եմ՝ այո։

Ի՞նչ կլինի որ, եթե այդ երես առած ու անհավատարիմ գեղեցկուհին բռնի և իր բոլոր սիրեցյալների ջղրու, քնքշորեն գուրգուրի ամենավերջին ստրուկին։

Եվ ահա ծեր, ազնիվ պահակ Անկուդինը, հիվանդանալով ու մոտալուտ մահը զգալով, պետական պալատի տնօրենի մոտ է ուղարկում թոռանը՝ Գրիշկային.

— Էդպես էլ կասես նորին գերազանցությանը. Անկուդինը պատրաստվում է մեռնել ու մահվանից առաջ նորին գերազանցությանը մի շատ կարևոր գաղտնիք է ուզում ասել։

Գեներալը կգա Անկուդինի նկուղային բնակարանը։ Այդժամ, հավաքելով վերջին ուժերը, Անկուդինը անկողնից կսահի ու կընկնի գեներալի ոտքերը։

— Ձերդ գերազանցություն, խիղճս ինձ տանջամահ արեց.. Մեռնում եմ... Ուզում եմ հոգուս մեղք չանեմ... Էն փողերը ու դրոշմանիշերը... Ախր ես եմ գողացել... Սատանա էր մտել մեջս... Ի սեր Քրիստոսի, ներեք, անմեղ մարդուն պատճառ դարձա, փողն ու բաներն էլ այ էստեղ են... Պահարանի մեջ, վերևի աջ դարակի մեջ։

Հաջորդ իսկ օրը տնօրենը Պշոնկովին կամ Մասսային կուղարկի Սեմենյուտային կանչելու, ձեռքը բռնած կկանգնեցնի ամ-

բողջ գրասենյակի առաջ, ամեն ինչ կպատմի Անկուգինի մասին, գողացված դրամի և դրոշմանիշերի մասին, տարաբախտ Սեմենյուտայի տառապանքի մասին, հրապարակով ներողություն կխնդրի նրանից, ձեռքը կսեղմի և հուզված ու արտասված կհամբուրի նրան։

Եվ Սեմենյուտան մայրիկի հետ դեռ շատ երկար կապրի խաղաղ, համեստ ու տաք, հարմարավետ տան մեջ։ Սակայն պառավը երբեք որդուն չի ակնարկի, որ ինքը գիտեր նրա խաբեությունը, որդին նույնիսկ խոսք անգամ չի ասի, թե ինքը գիտեր, որ մայրը գիտե։ Այս սուր տեղը միշտ զգուշորեն կշրջանցեն։ Օրհնված սուտը մի այնպիսի փխոռն ու ամաչկոտ ծաղիկ է, որը թառամում է հպումից։

Բայց իսկապես, չէ որ կյանքում հրաշքներ լինում են։ Թե՝ միայն զատկական հեքիաթներում։

1914

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիպակներ

Մոլոք 5
Օլեսյա 91
Մենամարտ 171
Սուլամիթ 426

Պատմվածքներ

Հետաքննություն 487
Անվերնագիր 501
Շտաբս-կապիտան Ռիբնիկովը 512
Խլահավի որսը 554
Գամբրինուս 596
Իզումռուդը 596
Լենոչկա 613
Նոնաքարե ապարանջանը 626
Օրհնված սուտը 679

Ալեքսանդր Իվանովիչ Կուպրին

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Александр Иванович Куприн

ИЗБРАННЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ

(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1985

Խմբագիր՝ Գ. Գ. Խաչատրյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջուլճակյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Է. Հ. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ք. Վ. Բարսեղյան

ИБ 4570

Հանձնված է շարվածքի 23. 07. 1984 թ.։ Ստորագրված է տպագրության 1. 1. 1984 թ.։ Չորմատ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր. 38,54։ Պայմ. տպ. մամ. 38,85 պայմ. ներկ. թերթ., 34,4 հրատ. մամ.։
Տպաքանակ 50000։ Պատվեր 2203։ Գինը՝ 3 ռ. 20 կոպ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան, 65։
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.

1985 թ. «Սովետական գրող» հրատարակչությունը լույս կընծայի

Ա. Պուշկին—*Ընտիր երկեր*
Ի. Տուրգենև—*Ընտիր երկեր*
Մ. Բուլգակով—*Վարպետը և Մարգարիտան*
Լ. Սոլովյով—*Խոջա Նասրեդինի պատմությունը*
Յու. Տրիֆոնով—*Տեղը և ժամանակը*
Յո. Միներիկ—*Սլովակյան դեկամերոն*
Կոբո Աբե—*Ավազուտների կինը*
Ս. Մոեմ—*Թատրոն*